Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(1801—1879 թթ.)

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

Т. Х. АКОПЯН

ИСТОРИЯ ЕРЕВАНА

(1801—1879 гг.)

ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ЕРЕВАН—1959

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

9(h)
Պ-17

Թ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(1801—1879 ԹԹ.)

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1959

Տպագրվում է
Երևանի Պետական համալսարանի
խմբագրական հրատարակչական խորհրդի
որոշմամբ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Մոտ երեքհազարամյա պատմություն ունի մեր սիրելի մայրաքաղաք Երևանը։ Նա դարեր շարունակ սովորական բնակավայր էր և աննկատելի էր մնացել Հայաստանի քարտեզի վրա։ Միայն XV դարից, երբ մոնղոլական ու թուրք-թաթարական ծանր տիրապետության մղձավանջային շրջանում քարտեզի վրայից անհետացել էին միջնադարյան Հայաստանի հռչակված Դվին և Անի քաղաքները, իսկ Վաղարշապատը վերածվել մի անշուք ավանի, Արարատյան աշխարհում բարձրանում է Երևանը, դառնալով Արևելյան Հայաստանի մեծ մասի վարչական հիմնական կենտրոնը։ Երևանն իր վարչական դերը շարունակեց նաև պարսկական լծից ազատագրվելուց հետո, լինելով սկզբում Հայկական մարզի, ապա Երևանի գավառի և Երևանի նահանգի կենտրոնը, ընդհուպ մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը, երբ հայ ժողովուրդը ձեռք բերեց պետականություն, և Երևանն էլ դարձավ նրա սովետական ռեսպուբլիկայի ծաղկող մայրաքաղաքը։

XIX դարը Երևանի պատմության ամենաուշագրավ շրջաններից մեկն է։ Այդ դարում նա վերջնականապես ազատագրվեց պարսկական լծից՝ փրկվելով թուրք-պարսկական հարատև պատերազմների կռվածաղիկը լինելուց և պարսկական խանների բռնություններից. այդ դարում նա զգալի չափով առաջադիմեց տնտեսական ու կուլտուրական առումով և 70-ական թվականներից երկրի հետ միասին թևակոխեց կապիտալիզմի ժամանակաշրջանը։

Ժամանակագրական առումով աշխատությունը ընդգրկում է 79 տարի՝ 1801—1879 թվականները։ Երևանի պատմության այդ հատվածը առանձնացնելու և իբրև մի առանձին ժամանակաշրջան դիտելու համար, որպես ներքին սահմանաթիվ, նկատի ենք ունեցել Վրաստանի միացումը Ռուսաստանին, որով սկսվեց նաև Անդրկովկասի մյուս երկրների, շրջանների ու քաղաքների՝ պարսկական լծից ազատագրելու շրջանը։ Վերին սահմանաթիվն ընդունել ենք ոչ թե 1870 թվականը՝ Հայաստանում գյուղացիական ռեֆորմի անցկացման տարին, այլ 1879 թվականը, երբ Երևանում անցկաց-

վեց բուրժուական քաղաքային ռեֆորմը և կիրառվեց 1870 թվականի քաղաքային կանոնադրությունը (Պոլոժենիեն), որի հիման վրա քաղաքում ստեղծվեց ոչ դասային բնույթ կրող դուման և քաղաքային վարչություն։ 1879 թվականը Երևանի պատմության մեջ պայմանական կետով սահմանագծային տարեթիվ կարելի է համարել նաև տնտեսական առումով։ Մինչ այդ՝ Երևանում կապիտալիստական արդյունաբերական ոչ մի օբյեկտ գոյություն չուներ, իսկ դրանից հետո՝ 80-ական թվականներից քաղաքում արդեն հանդես են գալիս այդ տիպի մի քանի ձեռնարկություններ։ 80-ական թվականներից ծնունդ առնող կապիտալիստական արդյունաբերության հետ միասին, Երևանում աստիճանաբար ձևավորվում է և բանվոր դասակարգը, որը, չնայած փոքրաթիվ, համեմատաբար թույլ լինելուն, ուսական մարտնչող պրոլետարիատի օրինակով պայքարի դրոշ է բարձրացնում տիրող կարգերի դեմ։

Աշխատությունը բաղկացած է երկու բաժնից, որոնցից առաջինը ընդգրկում է 1801—1828 թթ., իսկ երկրորդը՝ 1828—1879 թթ.։ Յուրաքանչյուր բաժնի տակ իբրև առանձին գլուխներ տրված են՝ քաղաքի (և այն վարչատերիտորիալ միավորի, որի կենտրոնը հենց ինքը Երևանն էր) վարչական կարգը, տնտեսական կյանքն ըստ ճյուղերի (արհեստագործություն, առևտուր և գյուղատնտեսական զբաղմունքներ), բնակչությունը, քաղաքի նկարագիրը, ներքին կյանքն ու կուլտուրան։ Դրանցից բացի, երկրորդ բաժնում իբրև մի առանձին ընդարձակ գլուխ տրված է պարսկական լծից Երևանի ազատագրման պատմությունը։ Երևանի պատմությունը՝ ընդարձակ էքսկուրսների միջոցով, ներկայացվել է Արևելյան Հայաստանի կենտրոնական մասի պատմության հետ սերտորեն կապված։ Քաղաքի պատմության առանձնահատուկ կողմերը նկատի ունենալով՝ նրա հասարակության դասակարգային կազմը, դասակարգային հարաբերությունները, հարկային սիստեմը, բնակչության թվի, ազգային կազմի և մի քանի այլ հարցերի հետ միասին, ըստ բաժինների տրված են «Բնակչությունը և նրա հասարակական կյանքը» վերնագրի տակ, իսկ հողային հարաբերությունները՝ գյուղատնտեսական զբաղմունքների հետ միասին։

Աշխատության համար օգտագործված են բազմաթիվ ու բազմատեսակ սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ։ Սկզբնաղբյուրների թվումն են արխիվային մեծաթիվ փաստաթղթերը, որոնցից շատերը ընդհանրապես հրապարակվում են առաջին անգամ։ Աշխատության մեջ տրված են տարբեր բնույթի տասնյակ նկարներ, որոնք վերցված են արխիվներից ու թանգարաններից և յուրօրինակ կերպով լրացնում են բուն տեքստում արծարծված մի շարք հարցեր։

Թե ինչպես և ինչքանով է հաջողվել ճիշտ լուսաբանել և ամբողջական ներկայացնել մեր քաղաքի նշված տասնամյակների պատմական կյանքը, կարող է ասել անկողմնակալ քննադատական խոսքը։ Անկախ դրանից, մենք չենք կարող երախտապարտ չլինել և մեր խորին շնորհակալությունը չհայտնել Հայկական ՍՍՌ ՊԿՊԱ-ի, Մատենադարանի, Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան Հանրային գրադարանի, Երևանի պատմության թանգարանի, Երևանի Պետական համալսարանի գրադարանի, Վրացական ՍՍՌ ՊԿՊԱ-ի, ՍՍՌՄ Կենտրոնական Պետական Ռազմա-պատմական արխիվի, Մոսկվայի Կենտրոնական Պետական Պատմական արխիվի և ՍՍՌՄ վ. Ի. Լենինի անվան գրադարանի աշխատակիցներին, որոնք իրենց բարեխիղճ աշխատանքով մեծապես նպաստել են աշխատության համար անհրաժեշտ նյութերի հավաքմանը։

Հոկտեմբեր, 1958 թ.
Երևան

ԵՐԵՎԱՆԸ 1801—1828 ԹԹ.

1. ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԿԵՆՏՐՈՆ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՐԳԸ

Երևանի խանության սահմաններն ու տերիտորիան: Նրա վարչական բաժանումը և մանալների կառավարման սիստեմը: Երևանի խանը որպես ինքնուրույն բռնակալ: Խանի եկամուտները և նրա գործադրած բռնություններ: Խանական վարչական-դատական ապարատը և դրա գործունեությունը: Խանության գինված ուժերը: Խանության կենտրոն Երևանը որպես մի առանձին վարչական միավոր:

Երևանի խանությունը Պարսկական պետության այն ամենակարևոր մարզն էր, որը XIX դ. առաջին քառորդում սահմանակից էր երկու պետության՝ Ռուսաստանին և Թուրքիային: Նա իր մեջ էր ընդգրկում Արևելյան Հայաստանի հիմնական մասը և կենտրոնական դիրք էր գրավում բովանդակ Հայաստանում: XVI—XVIII դդ. Թուրքիայի և Պարսկաստանի միջև մղվող պատերազմների հիմնական թատերաբեմը լինելով՝ Երևանի խանությունը բազմաթիվ անգամ ավերվել ու ձեռքից ձեռք է անցել, սակայն նա հիմնականում մնացել է պարսից տիրապետության տակ և այդ վիճակը իրավական առումով ճանաչվել է նշված պետությունների միջև կնքված 1555 և 1639 թթ. պայմանագրերով:

Տարբեր ժամանակներում Երևանի խանությունը ունեցել է տարբեր մեծություն: XVIII դ. 70-ական թվականների վերջերին նրա տերիտորիան ավելի ընդարձակ է եղել, որովհետև մինչ այդ նրան էր պատկանում նաև Շորագյալը[1]: Հետագայում Երևանի

[1] *Տե՛ս* АКАК (Акты, собранные Кавказскою Археографическою Комиссиею), т. I, Тифлис, 1866, *էջ* 158:

խանության տերիտորիան զգալի չափով կրճատվեց: Երևանի խանները փորձեցին նորից իրենց տիրապետությանը միացնել Շորագյալը, ինչպես և հյուսիսում խանության տերիտորիան ընդարձակել ի հաշիվ Փամբակի, Ղազախի և Բորչալուի գավառների[1]: Նրանց հաջողվում է միայն գրավել Շորագյալը, այն էլ շատ կարճ ժամանակով (1801—1805 թթ.):

1805—1827 թթ. Երևանի խանության տերիտորիան մնում է հաստատուն՝ որոշակի բնագծերով անցնող սահմաններով[2]: Այդ ժամանակ նրա սահմանները ձգվում էին Արևմտյան Արփաչայից (Ախուրյան) մինչև Շահ-դաղի (Սևանի) լեռները և Արագածի հյուսիսային լանջերից մինչև Աղրի-դաղ (Հայկական Պարս) լեռնաշղթան: Խանության սահմանն արևմուտքում անցնում էր Արևմտյան Արփաչայ գետով՝ մինչև նրա ստորին հոսանքի վրա գտնվող Հաջիբայրամլու գյուղը, որտեղից թեքվում էր դեպի արևմուտք և, Արաքսի ձախ ափից մոտ 15—17 կմ երկարությամբ մի նեղ շերտ իր մեջ ընդգրկելով, կտրում էր Արաքսը և դիմում նախ դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք ու հասնում Աղրի-դաղի Սեհակ գագաթը (Բալըղ-գյոլ լճից արևմուտք): Սինակից մինչև Մեծ և Փոքր Մասիսները Երևանի խանության սահմանն անցնում էր Աղրի-դաղի ջրբաժան բարձրություններով, ապա Փոքր Մասիսից դեպի արևելք շարունակվելով, հասնում էր Արաքս: Արևելքում նրա սահմանն անցնում էր նախ այն լեռնաճյուղով, որը Շարուրի դաշտը բաժանում է Բևյուկ-դյուզից (Նախիջևանի դաշտը), ապա Գյոդալդարայի (Վարդենիսի) լեռնաշղթայով և Ջանգեղուրի լեռների հյուսիսային հատվածով ու Շահ-դաղի լեռներով, իսկ հյուսիսային կողմում նրա սահմանն անցնում էր Փամբակի լեռներով և Արագածի հյուսիսային լանջերը Արփաչայի հետ միացնող գծով, ընդ որում, Արագածից մինչև Արփաչայ սահմանային գիծն ուներ հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք ուղղություն[3]:

Անգլիացի նկարիչ, հնէաբան և ճանապարհորդ Ռոբերտ Կեր Փորտերը, որը երկու անգամ եղել է Երևանում (1817 թ. և 1819 թ.), հաղորդում է, որ Երևանի խանության երկարությունը 200 մղոն է,

[1] *Տե՛ս* Н. Ф. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, СПБ, т. III, 1885, *էջ* 65—207:

[2] И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, С. Петербург, 1852, *էջ* 351—353:

[3] *Ռ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, պրակ երրորդ, Երևան, 1953, էջ 238:*

իսկ լայնությունը՝ 100[1]։ Նկարագրված սահմաններում՝ Երևանի խանության տերիտորիան կազմել է մոտ 24 հազար քառ. կմ։

Երևանի խանությունը վերջին սարդարի օրոք վարչականորեն բաժանված էր 15 մահալների[2]։ Խանության մասնատումը մահալների, հիմնականում կատարված էր ըստ գետային ցանցի և, ելնելով դրա հետ կապված այս կամ այն շրջանի ոռոգման հնարավորություններից։ Այդ էր պատճառը, որ խանության մահալների մի զգալի մասը կրում էր այն գետի անունը, որով ոռոգվում էր («Վեդի-բասար», «Գառնի-բասար», «Զանգի-բասար» և այլն)։ Ի. Շոպենը թվարկում և բավական մանրամասնությամբ նկարագրում է Երևանի խանության 15 մահալները հետևյալ հաջորդականությամբ[3].

1. Կրբխբուլաղի մահալ, որը տարածվում էր Երևան քաղաքից հյուսիս՝ Աղմաղանի (Դեղամա) լեռների և Զանգու (Հրազդան) գետի միջև։

2. Զանգիբասարի մահալը տարածվում էր Երևան քաղաքի բերդից անմիջապես հարավ, Զանգու գետի երկու ափերին՝ Կարբիբասար և Գառնիբասար մահալների միջև։

3. Գառնիբասարն ընկած էր Գառնի (Ազատ) գետի ավազանում, արևելքում սահմանակցվելով Գյոգչայ մահալին, իսկ հարավում՝ Արաքսին։

4. Վեդիբասարը տարածվում էր Շարուրի և Գառնիբասարի միջև՝ Արաքսի ձախ ափի երկայնքով և հիմնականում ոռոգվում էր Վեդի-չայ (Վեդի) գետով։

5. Շարուրի մահալը Երևանի խանության հարավ-արևելյան ծայրաշրջանն էր։ Նա ընկած էր Նախիջևանի խանության և Երևանի խանության Վեդիբասարի մահալի միջև, Արևելյան Արփաչայ գետի ստորին հոսանքում։

6. Սուրմալուի մահալն ընկած էր Արաքսի աջ կողմում՝ նրա և Ադրի-դաղ լեռնաշղթայի միջև։ Այս մահալը ոռոգվում էր Արաքսից հանված առուներով, իսկ նրա հարավային, լեռնային շրջանները ոռոգման կարիք գրեթե չէին զգում։

---

[1] Տե՛ս Հ. Հ. Հ ա կ ո բ յ ա ն, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, ուղեգրություններ, հատոր Զ, Երևան, 1934, էջ 769։

[2] XVIII դարի վերջին քառորդում Երևանի խանությունը բաժանված էր 12 մահալների։

[3] И. Ш о п е н, Исторический памятник Армянской области, էջ 441—446։ Տե՛ս նաև Ք. Ռ. Հ ա կ ո բ յ ա ն, Հայաստանի պատմական աշխարհագրություն, պրակ III, էջ 242—244։

7. Դարամեղ-Փարչենի մահալը գտնվում էր Արաքսի աջ ափին, Սուրմալուի մահալից արևմուտք, նրա և Ղարսի փաշայության միջև։

8. Սառթլիները Երևանի խանության ամենափոքր մահալներից մեկն էր։ Նա ընկած էր Արևմտյան Արփաչայի և Արաքսի կազմած անկյունում, նեղ շերտով տարածվելով նաև նշված գետերի ափերին՝ 15—20 կմ երկարությամբ։ Արևելքում նա սահմանակցվում էր Թալինի և Սարդարաբադի մահալներին։

9. Արագածի և Արփաչայի միջև գտնվում էր Թալինի մահալը, որը արևմուտքում հարևան էր Ղարսի փաշայությանը, իսկ արևելքում՝ Երևանի խանության Սարդարաբադի և Սառթլինի մահալներին։

10. Սեիդլի-Ախսախլիի մահալը գրավում էր Արագած լեռան հարավային և արևելյան լանջերը, գտնվելով Ապարանի, Կարբիբասարի և Սարդարաբադի մահալների միջև։

11. Սարդարաբադի մահալը գրավում էր այժմյան Հայկական ՍՍՌ Հոկտեմբերյանի դաշտը, որն ընկած է Արաքսի ձախ կողմում և կազմում է Արարատյան դաշտի բաղկացուցիչ մասը։ Նրա արևմտյան հարևանը Սառթլինի մահալն էր, արևելյանը՝ Կարբիբասարն ու Զանգիբասարը, իսկ հարավում Սուրմալուի մահալից բաժանված էր Արաքս գետով։ Սարդարաբադի մահալի զգալի մասը մինչև Երևանի վերջին խանի ժամանակները անբնակ էր և գերազանցապես ծառայում էր որպես ձմեռային արոտատեղի՝ Արագածի լանջերում բնակվող և քոչվորական ու կիսաքոչվորական անասնապահությամբ զբաղվող քրդերի անասունների համար։ Վերջին սարդարի ժամանակ այստեղ կառուցվեց Սարդարաբադ բերդը և մահալի բնակչության թիվը մեծապես ավելացավ այլ տեղերից բերված բնակիչների շնորհիվ։

12. Կարբիբասարի մահալը ամենախիտ բնակեցված և հարուստ մահալներից մեկն էր։ Այս մահալը ընկած էր Զանգիբասարի (արևելքից), Սարդարաբադի (արևմուտքից) և Արագածի, Գառնի-յարբխի (Արայի լեռ) ու Սեիդլի-Ախսախլիի (հյուսիսից) միջև, հարավում հասնելով Կարա-սու (Սև ջուր) գետին։

13. Ապարանի մահալը խանության ամենաբարձրադիր շրջաններից մեկն էր։ Նա իր մեջ ընդգրկում էր Արագած լեռնազանգվածի հյուսիս-արևելյան ու հյուսիսային լանջերը և Ապարանի սարահարթը, հյուսիսում հասնելով մինչև Փամբակի լեռնաշղթան։

14. Դարաշիշակի մահալը իր համեմատաբար մեղմ կլիմայական պայմանների շնորհիվ ծառայում էր իբրև ամառանոց՝ խա-

նության բարձր պաշտոնյաների, իսկ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո, Հայկական մարզի ու Երևանի նահանգի ցարական աստիճանավորների համար: Նա տարածվում էր Միսխանա (Համքալան) գետի անտառապատ հովտում, սահմանակցելով՝ հյուսիսում Փամբակի լեռնաշղթային, հարավում Կըրխբուլաղի, արևելքում Գյոգչայի, իսկ արևմուտքում Ապարանի մահալներին:

15. Գյոգչան Երևանի խանության ամենաբնդարձակ մահալն էր: Նա իր մեջ ընդգրկում էր Սևանա լճի ամբողջ ավազանը: Մինչև վերջին սարդարի ժամանակները, թուրք-պարսկական և դրանց նախորդած պատերազմների հետևանքով, այս մահալի մեծագույն մասը եղել է անմարդաբնակ: Հուսեյն խան սարդարը 1814 թ. այստեղ բնակեցնում է անասնապահ բազմաթիվ բնակիչներ, բայց տերիտորիայի մի զգալի մասը, այնուամենայնիվ, մնում է անմարդաբնակ, իսկ ավելի քան 40 գյուղեր՝ ավերակ ու ամայի վիճակում[1]:

Ռոբերտ Կեր Փորտերի հաղորդած տեղեկությունների համաձայն, Երևանի խանությունը Հուսեյն խան սարդարի ժամանակ ունեցել է ոչ թե 15 մահալ, ինչպես հաղորդել է Հայկական մարզի քաջագիտակ առաջին ուսումնասիրողը՝ Շոպենը, այլ՝ 9 մահալ[2]: Սակայն անգլիացի ճանապարհորդը, կարճ ժամանակով լինելով Երևանում, չէր կարող ստույգ տեղեկություններ հաղորդել նրա մահալների վերաբերյալ: Նա իրար հետ շփոթել է լոկ աշխարհագրական հասկացողություններն ու վարչա-տերիտորիալ միավորները՝ մահալները, ինչպես և Երևանի խանության կազմում է դասել Մակուն, որը վարչական առումով միանգամայն այլ միավոր էր: Այնպես որ, այս հարցում Շոպենը մնում է իբրև ամենահավատարժան աղբյուրը:

Մահալների կառավարիչները նշանակվում էին սարդարի կողմից և կոչվում էին միրբոլուկներ: Պատահում էին դեպքեր, երբ երկու, երեք և ավելի մահալների կառավարչությունը հանձնարարվում էր մեկ միրբոլուկի[1]: Դա կախված էր լինում տվյալ մահալների իրար նկատմամբ ունեցած աշխարհագրական դիրքից և ոռոգման պայմաններից: Հայաբնակ մահալների կառավարիչները նշանակվում էին հայերից և սովորաբար կոչվում էին մելիք:

Մահալների կառավարիչների պարտականությունները բազմազան էին: Նրանք խանի կողմից սահմանված կորը և բահրան բաշխում էին ըստ գյուղերի, հսկում, որպեսզի հարկերն ու տուրքերը ժամանակին հավաքվեն և հանձնվեն խանական գանձարանին ու պահեստներին, պարտավոր էին սահմանային մահալները պաշտպանել թալանի ու կողոպուտի նպատակներով կազմակերպվող հարձակումներից, քննում էին գյուղացիների միջև ծագած վեճերը և «համապատասխան վճիռ» կայացնում, հսկում էին միրաբներին, դատ ու դատաստան տեսնում մի քանի հանցանքների (գողություն, ծեծ և այլն) դեպքում, որոնց պարսիկ խաները դիտում էին որպես ոչ ծանր հանցանքներ, ժամանակին ի կատար էին ածում դատական վճիռները և այլն[2]:

Մահալների կառավարիչները միաժամանակ ֆեոդալ կալվածատերեր էին: Նրանք, ինչպես և առհասարակ համապետական ու խանական բոլոր պաշտոնյաները, իրենց ծառայության դիմաց, աշխատավարձի փոխարեն սովորաբար ստանում էին այս կամ այն գյուղի, կալվածքի թիուլի իրավունքը[3]:

Գյուղերում նշանակված կառավարիչները կոչվում էին ճեդխուդաներ կամ մելիքներ: Նրանց վրա գյուղերում դրված էին այն պարտականությունները, ինչ պարտականություններ որ մահալի կառավարիչները կատարում էին իրենց մահալների սահմաններում:

Երևանի խանության բնակչությունն ուներ ազգային խառը կազմ: Իրենց թվով առաջին տեղը գրավում էին հայերը, երկրորդ տեղը՝ ադրբեջանցիները, երրորդը՝ քրդերը, իսկ չորրորդը՝ թուրքերը: Կային նաև պարսիկներ, որոնց թիվը չնչին էր: Վերջիններս գերազանցապես վարում էին խանական բարձր պաշտոններ և կատարում էին զինվորական ծառայություն: Պարսիկներից էր բաղկացած սարդարի զորքերի կորիզը, ինչպես և նրա թիկնապահ ջոկատը:

---

1 Տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 445—446:

2 Ռոբերտ Կեր Փորտերը գրում է. «Նրա (Հուսեյն խան սարդարի— Բ. Հ.) իշխանության տակ գտնվող Երևանի նահանգի շրջաններն են՝ Գյոգչա (Gookchah), Սևան (Sevan), Գառնի (Gurney), Շարգիլ (Shargill), Շարուր (Sherroor), Մակու (Makoo), Սաութ (?) (Saut) (Ղուրդուղուլու շրջանի մեկ մասը)» (տե՛ս Հ ո վ հ. Հ ա կ ո բ յ ա ն, Ուղեգրություններ, հատոր 2, էջ 768—769):

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 448:

2 Հ ո վ հ. Հայոց պատմություն, հ. երրորդ, Երևան, 1946, էջ 61:

3 И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Ленинград, 1949, էջ 208—221:

Երևանում, որը խանության կենտրոնն ու կարևոր բերդաքաղաքն էր, կենտրոնացված էին խանության վարչական ապարատն ու զորքերը։

1805—1827 թթ. ընթացքում Երևանում իշխել են երեք խաներ՝ Մեհտի-Ղուլի խանը[1], Ահմադ-խան Մարաղացին և վերջին խանը՝ Հուսեյն խան Ղաջարը, որը իշխել է բավական երկար ժամանակ (1807—1827 թթ.)[2]։ Երևանի խանները իրենց խանության կատարյալ տեր ու տնօրենն էին, իսկական շահ, ինքնակալ իրենց խանության սահմաններում։ Ռոբերտ Կեր Փորտերը Հուսեյն խանի գրաված դիրքի վերաբերյալ գրում է. «Սարդարի կառավարությունը տարբերվում է կայսրության մյուս մեծատուն մասերից։ Նա տուրք չի վճարում թագավորին. ունի մի տեսակ դինվորական ավատ, պարտավոր լինելով պատերազմի ժամանակ արքայական բանակին հայթայթել որոշ թվով զինվոր։ Եվ նրան են վստահացել Երևանի նահանգի ամբողջ սահմանների պաշտպանությունը, միայն իր սեփական ծախքով։ Կարճ խոսքով կարելի է նրան անվանել Երևանի իշխանը, քան նշանակված մի կառավարիչ, որովհետև բնիկները նրան վերաբերվում են որպես հպատակի, և նա վայելում է (այն — Թ. Հ.) իրավունքները, որոնք միայն արքայական են։ Նրա կանայք ճամփորդում են ծիրանի հագած, մի գերազանց տեսակի պատմուճան, որ չի թույլատրվում Պարսկաստանում ոչ մի կնոջ, բացի թագավորի և նրա որդիների ընտանիքից։ Նա նույնպես արտոնություն ունի իր ջորիների բեռները ծածկել նուրբ ասեղնագործված կապույտ կամ կարմիր կտորով, որ արքայական գնացքների նշաններն են։ Նրա հավաքած հարստությունը անսահման է, և նա հողային կալվածներ ունի շատ նահանգներում, բայց մասնավորապես Դիլանում, որտեղ նա ունի բազմաթիվ գյուղեր»[1]։

Երևանի խանին տրված էր «սարդար» (զորագլուխ, զորահրամանատար) տիտղոսը։ Նա համարվում էր պարսկական ամբողջ պետության ամենագլխավոր պաշտոնյաներից մեկը։

Ռուսական ծառայության մեջ գտնվող գերմանացի դիվանագետ ու խորհրդական Մ. Ֆրեյգանը, 1811 և 1812 թթ. հատուկ միսիայով Պարսկաստան գնալու ժամանակ, կողմնակի կերպով ծանոթանալով Երևանի խանության գործերի դրվածքին, Հուսեյն խանի պաշտոնի կարևորության ու արքունիքում նրա ունեցած դիրքի մասին հետևյալն է հաղորդում. «...նա այն [մարդն] է, որի հանդգնությունը իշխող շահին զահ բարձրացրեց. նա պարսկական ուժերի գլուխն է և վայելում է իր տիրոջ կատարյալ վստահությունը»[2]։

Երևանի խանը (սարդարը) իր խանության սահմաններում համարվում էր մի կատարյալ բռնակալ և նշանակվում էր շահի կողմից։ Եղել են դեպքեր, երբ Երևանի խանները իրար հաջորդել են ժառանգական կարգով, սակայն յուրաքանչյուր դեպքում հաստատվելով շահի կողմից։ Ինչպես հաղորդում է XIX դարի առաջին քառորդի անգլիական դիվանագետ Ջեմս Մորիերը, Երևանի վերջին խան Հուսեյնը այդ պաշտոնում էր նշանակվել շահի կողմից, վերջինիս տալով մեծ գումար։ Նա հաղորդում է, որ Հուսեյն-Ղուլի խան սարդարը «իր կառավարության մեջ ունի ամենաբացարձակ իշխանություն, ամենքի կյանքն ու մահը իր ձեռքումն է, հանցավորներին պատժում է ամենակարուկ կերպով։ Հիրավի, նրա ունեցած իշխանությունը քիչ պակաս է թագավորից և [արքայազուն] իշխաններից»[3]։

Պարսկաստանի ներքին կյանքին, նրա կառավարչական սիստեմին և, հատկապես, Անդրկովկասում ունեցած տիրապետությունների վարչա-քաղաքական ու տնտեսական վիճակին քաջածանոթ Ա. Գրիբոյեդովը նշում է, որ Երևանի սարդար Հուսեյն խանը իր տիրապետության սահմաններում համարվում է «աստծուց հետո առաջին» մարդը, որ նա ամբողջ պետության մեջ «երրորդ մարդն է համարվում» և որ «նրա իշխանությունն ավելի

---

[1] «Խան» մոնղոլերեն բառ է և նշանակում է «տեր, թագավոր»։ Պարսկաստանում այդ տիտղոսը մուտք է գործել մոնղոլական արշավանքների ժամանակներից (XIII դարից)։ Ընդ որում, այստեղ եղել են երկու կարգի խաններ՝ այսպես կոչված ինքնուրույն խաներ և տիտղոսավոր խաներ։ Տիտղոսավոր խաները իշխանություն չունեին, նրանց այդ տիտղոսները տրվում էին վերջին շահերի ժամանակ և ժառանգաբար չէին անցնում։ Անդրկովկասում տիտղոսավոր խաներ կային միայն Երևանի և Նախիջևանի խանություններում (С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. I, Тифлис, 1907, էջ 610)։

[2] Հովհ. Շահխաթունյանց, Տառագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջմիածին, 1842, էջ 139—140։ Տե՛ս նաև՝ Դ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 307—308։ С. Зелинский, Город Эривань (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. I, Тифлис, 1881, отдел I, էջ 5)։

[1] Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 768։

[2] Նույն տեղը, էջ 406։

[3] Նույն տեղը, էջ 324։

հաստատ է, քան թուրքական փաշաների իշխանությունը»[1]։ Նրա դիրքը մասամբ ամրանում էր նաև այն բանի շնորհիվ, որ նա թագավորող Ղաջարյան տոհմից էր[2] և խնամության կապերով կապված էր Ֆաթհ-Ալի-Շահի և նրա որդի՝ թագաժառանգ Աբբաս-Միրզայի հետ։

Հուսեյն խան սարդար (Երևանի պատմության թանգարան)։

Պարսկական պետության մյուս բոլոր մարզերի համեմատությամբ՝ Երևանի խանության այդ հատուկ, եթե կարելի է ասել, արտոնյալ վիճակը հիմնականում պայմանավորված էր նրանով, որ նա սահմանային դիրք էր գրավում[3] Թուրքիայի կողմում։ Իսկ XIX դարի սկզբից, երբ Վրաստանը միացավ Ռուսաստանին, Երևանի խանությունը սահմանային դարձավ նաև ռուսական պետության հետ։

Սարդարը իր հայեցողությամբ նշանակում և հավաքել էր տալիս հարկերն ու տուրքերը, հատում էր դրամ, դատ ու դատաստան էր տեսնում հանցավորների հետ՝ զրկելով նրանց աչքերից, լեզվից, ձեռքից և կամ դատապարտելով մահվան[4]։ Նա օրենքներ հրապարակելու իրավունքներ չուներ, բայց նրա կարգադրությունները խանության սահմաններում ունեին օրենքի ուժ, ենթակա չէին վիճարկման և նույնու-

Ընդհանուր տեսարան Երևանի (դիմացի մասը)։ XIX դ.

[1] А. С. Грибоедов, Полное собрание сочинений, под ред. приват-доцента Импер. С.-Петербургского университета И. А. Шляпкина, т. I, С.-Петербург, 1889, էջ 42։

[2] Նույն տեղը։

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 449—450։ «Записки Кавказского отделения русского технического общества», т. IV, 1871—1872 гг., Тифлис, 1872, էջ 260—261։

[4] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 449։

Թյամբ կատարվում էին առանց հապաղելու։ Շահը Երևանի սարդարի ներքին գործերին չէր խառնվում, վերջինս միայն ձևականորեն էր ենթարկվում շահի գերագույն իշխանությանը, իսկ կենտրոնում խառնակ դրություն ստիրելու ժամանակ նա գրեթե դադարում էր շահին ճանաչել որպես սյուզերեն։ Երևանի սարդարը ոչ միայն չէր տալիս պետական հարկեր, եթե չհաշվենք նվերների ձևով կրոնական տոներին և ծննդյան օրվա առթիվ շահին տրվող մեծամեծ «փեշքեշները», այլև իր զորքը պահելու համար պարսից արքունիքից ամեն տարի ստանում էր մի պատկառելի գումար։ Այլ կերպ ասած, սարդարը հանդես էր գալիս ոչ իբրև սոսկ կառավարիչ, այլ խանության տեր, վերջինս դիտելով որպես իր սեփական կալվածք։ Բոլոր սառրադրյալները համարվում էին նրա կատարյալ ստրուկները։ Մեծ իրավունքներ ուներ Երևանի մանավանդ վերջին սարդարը՝ Հուսեյն-Ղուլի խանը։ Նա, նշված արտոնություններից ու մենաշնորհումներից բացի՝ իրավունք ուներ նույնիսկ դիվանագիտական որոշ հարաբերությունների մեջ մտնել հարևան պետությունների ու դրանց կազմի մեջ մտնող վարչական միավորների հետ։ Այդ բոլորի փոխարեն, Երևանի սարդարը պարտավոր էր պաշտպանել պետական սահմանները։

Հսկայական եկամուտներ ուներ սարդարական գանձարանը։ Վերջին սարդար Հուսեյն-Ղուլի խանի օրոք, ինչպես հաղորդում է Ջեմս Մորիերը, խանական եկամուտը տարեկան կազմում էր 180.000 թուման[1] (640.000 ռուբլի) կամ 135.000 ֆունտ ստեռլինգ[2]։ Այդ գումարը ստացվում էր բազմազան հարկերից ու տուրքերից, մաքսերից, Կողբի աղահանքերը և այլ օբյեկտներ վարձակալության տալուց, պարսից արքունիքից ստացվող դոտացիոն գումարներից, շահից ստացած սարդարի ռոճիկից և կենցաղ դարձած կաշառակերությունից։ Ընդ որում, ուղղակի և անուղղակի հարկերից ու տուրքերից ստացվում էր 150.000 թուման, մաքսերից՝ 12.000 թուման, Կողբի աղահանքերի վարձակալությունից՝ 6000 թուման, պարսից կառավարությունից արտակարգ ծախսերի համար տրամադրվող գումարը՝ 6000 թուման, իսկ սարդարին տրվող ռոճիկը՝ 600 թուման, որոնք բոլորը միասին կազմում են 176.600 թուման։ Մյուս 6000 թումանը սարդարը ստանում էր պարտադիր դարձած նվերների (փեշքեշ) և լայն տարածում ստացած կաշառք-

---

[1] Երևանի մեկ թուման այդ ժամանակ արժեր 4 ռուբլի։

[2] Տե՛ս Հ ո վ հ. Հ ա կ ո բ յ ա ն, Ուղեգրություններ, հ. 2, էջ 325։

ների միջոցով[1]։ Սարդարի եկամուտների մասին ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում Ի. Շոպենը։ Ըստ նրա հաշիվների, պարսկական տիրապետության վերջին տարում Երևանի խանության եկամուտները կազմել են 653.150 ռուբլի, որի մեծագույն մասը ստացվում էր գյուղատնտեսությունից[2]։ Ինչպես տեսնում ենք, Մորիերի և Շոպենի հաղորդած տվյալների միջև տարբերությունը մեծ չէ, ընդամենը կազմում է 13.150 ռուբլի։ Անշուշտ, առաջնությունը պետք է տալ Շոպենի տվյալներին, որովհետև վերջինիս տվյալները արդյունք են երկարատև, մանրազնին և փաստական նյութերի հիման վրա կատարված ուսումնասիրության[3], մինչդեռ Մորիերին այդ թվերը հաղորդել են ուրիշները, ինչպես խոստովանում է հենց ինքը հեղինակը[4]։ Թե ինչպիսի եղանակներով ու կարգով են հավաքվել այդ հսկայական միջոցները, թե դրանց հավաքման ժամանակ ինչպիսի խարդախություններ, կամայականություններ ու չարաշահումներ են կատարվել և ինչպիսի բռնություններ գործադրել, դրանց կանդրադառնանք հետագայում, Երևան քաղաքի բնակչությունից վերցվող հարկերի, տուրքերի, «փեշքեշ»-ների և կաշառքների մասին խոսելիս։

Խանը երկրի խոշորագույն ֆեոդալն էր։ Նա ուներ սեփական ընդարձակ կալվածքներ ոչ միայն բուն Երևանի խանությունում, այլև պարսից պետության մի քանի այլ շրջաններում[5]։ Խանի տեր ունական խոշոր տնտեսությունները, սեփական այգիները, բանջարանոցները, խոհարքները և այլն, մշակվում և խնամվում էին ամբողջապես կոռ ու բեգարի կարգով։ Խանները զանազան միջոցներով կարողանում էին ուրիշ տեղերից դյուղացիներ գրավել և

[1] Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 325-ի առաջաբանի ծանոթագրությունը։

[2] Տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области. Приложение (Ведомость бывшего сардарского Визиря...)։

[3] Ինքներս կենք Փորտրերի հաղորդած տեղեկությունների համաձայն, Երևանի սարդարի եկամուտները (1817—1820 թթ.) տարեկան կազմել են 150.000 թուման, չհաշված Մակուի շրջանից ստացվող եկամուտները (տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 769), իսկ Ալեքսանդր Երիցյանցը հաշվել է 90.000 ռուբլի (ոսկով) (տե՛ս Ալեքսանդր Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա., Թիֆլիս, 1894, էջ 172)։ Ըստ արխիվային նյութերի, խանական եկամուտները կազմել են Երևանյան 114.633 թուման կամ ռուսական արծաթ դրամով 458.533 ռ. 26 կ. (տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 1, թ. 80)։

[4] Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ., էջ 325։

[5] Նույն տեղը, էջ 768։

նրանց բնակեցնել իրենց անմշակ հողերում[1]։ Նրանք տեր էին հսկայական հարստությունների։ Մորից ֆոն Կոցեբուն գրում է, որ այդ «սատրապը իր իշխանության շրջանում հավաքել էր այնքան «անսահման հարստություն, որ» չէր «կարող վայելել իր ծերության պատճառով»[2]։

Խանն ուներ իր շքեղ պալատը, որի վրա ծախսված էին հսկայական միջոցներ։ Ականատեսներից շատերը վկայում են, որ Երևանի սարդարի պալատն իր շքեղությամբ ու հարմարանքներով դրեթե ոչնչով չէր զիջում շահի պալատին, որ տարբերությունն այդ երկուսի միջև միայն չափերն են, որ սարդարի պալատը շահի պալատի պատճենն է՝ միայն նրանից ավելի փոքր։ Նրա պալատն ուներ մարմարակերտ շատրվաններ, բազմաթիվ հարկաբաժիններ, զանազան նկարներ։ Սարդարը վարում էր ցուփ ու շռայլ կյանք։ Չնայած մուսուլմանական օրենքով արգելվում էր խմիչքի գործածությունը, սակայն Հուսեյն-Ղուլի խանը մեկ օր չէր անցկացնում առանց խմելու և հաճախ այնքան էր խմում, որ կորցնում էր իր լրջությունը[3]։ Նա ամբողջ խանության ամենատխրահռչակ հարբեցողն էր[4]։ Չնայած պատկառելի տարիքին, նա հարեմում պահում էր 60 հարճ[5], որոնց բռնությամբ հավաքել էր խանության զանազան մասերից։

Հասկանալի է, որ անսահման իրավունքներով օժտված և չափ ու սահման չճանաչող սարդարի կատարած կամայականություններն ու բռնությունները պետք է հասնեին և իրոք հասնում էին անասելի չափերի։ Խանների «կամքն ու քմահաճույքն օրենք է եղել, և ոչ ոք ի վիճակի չի եղել, մտքովն էլ չի անցկացրել հակառակել նրանց անսահման կամայականությանը»[6]։ Կամայականությունը հասել է այն աստիճանի, որ, ինչպես հաղորդում է Զ. Մորիերը, սարդար Հուսեյն-Ղուլի խանը հրաձգության մեջ իր վարպետությունը փորձում էր խանական պալատի լուսամուտից գնդակոծելով Զանգու գետի աջ կողմի ճանապարհով անցնող գյուղացիների

[1] В. Иваненко, Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, էջ 136։

[2] Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 529։

[3] Նույն տեղը, էջ 535 և 542—543։

[4] Նույն տեղը, էջ 529։

[5] Նույն տեղը, էջ 543 և 766։ Ըստ Շոպենի՝ Հուսեյն-Ղուլի խանի հարեմում կար ոչ թե 60, այլ 36 հարճ (Исторический памятник Армянской области, էջ 451)։

[6] Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 96։

էշերին[1]։ Մորից ֆոն Կոցեբուն, նկարագրելով էջմիածնի վանքի նկատմամբ սարդարի կամայականություններն ու բռնություններ, նրան կոչում է հրեշ։ Նա գրում է, թե էջմիածինը «վաղուց մի ծաղկյալ քաղաք պիտի դառնար, եթե պարսկական կառավարություն թույլ չտար Երևանի նահանգի կառավարչին բան կամս կողոպտելու վանքը։ Ես համոզված եմ, որ թագավորը, որ մեծ ու պատվավոր մարի տեր է, անտեղյակ է այս հրեշի [Երևանի սարդարի]

Երևանի սարդարը որսի ժամանակ, նկար՝ Դագարինի (Երևանի պատմության թանգարան)։

արարքներին, եթե ոչ, մինչև հիմա նա այս շրջանի խեղճ բնակիչներին ազատած էր նրա կամակոր բռնություններից»[2]։ Միանգամայն ճիշտ նկարագրելով սարդարի բռնությունները, դրա հետ միաժամանակ Մ. Կոցեբուն սխալ պատկերացում է ունեցել պարսից պետության և նրա բռնակալի մասին, նախ կերպով ենթադրելով, որ շահը իբր անտեղյակ է սարդարի կատարած բռնություններին ու կողոպուտներին և իբր այդ մասին եթե նա իմանար, ապա կփոխեր դրությունը։

Խանի և նրա գլխավորած պարսից աստիճանավորների բռնությունների ու կամայականությունների ամենալավ նկարագրությունը տվել է հայ ժողովրդի վերքի երդիչ, մեծ լուսավորիչ և հումանիստ Խաչատուր Աբովյանը։ Պարսից սատրապների մարդասպան ու կողոպտիչ քաղաքականությունը, եթե կատարյալ քմահաճույքով ու կամայականությամբ կառավարելը կարելի է քաղաքականություն համարել, Աբովյանի մոտ հաճախ տրված է այլաբանորեն, սարդարի աթոռանիստին՝ Երևանի բերդին ուղղված խոսքերով։ Ահա՛ թե ինչպես է ողբում մեծ հումանիստը.

«Երևանո՛ւ բերդն, Երևանո՛ւ բերդն՝ ա՛խ՝ որ առավոտը բացվելիս՝ նրա էն լաչար գլուխը մարդի աչքով չէ՛ր ընկնում, հենց իմանաս՝ թե դժոխքն ա իր բերանը բաց անում, ատամները ղրճատացնում ու իր ապականյալ, թունավոր դառը շունչը չորս կողմը փրփրալով փչում, ցրվում, փոնչացնում, որ կարևնա՝ իր... լափած արդար ջանը մարսի, էլի չանգերը դուբարա գցի, էլի հազար անմեղ, արդար հոգի՝ անծամ կուլ տա, իր անկուշտ փորին մատաղ անի...։

Երևանո՛ւ բերդը, Երևանո՛ւ բերդը, ա՛խ՝ աչքս դուրս գա, քանի՞ քանի ողորմելի հայի միս ա կերել, քանի՞ քանի անմեղ հոգի՝ տարիքներով շարշարվելուց, տանջվելուց, կենդանի նահատակ լինելուց, կրակի, բոցի, երկաթե շամփրի, թոխմախի, կրակած քարփջի տանելուց, համբերելուց եղը, կամ թոփի գյուլլի հետ ա թռել, հազար կտոր եղել, տարաղաջի (կախաղանի) վրա յա՝ դռռալով... հոգին ավանդել... որ պրծնի... էն կատաղի դազանների ձեռքից։ Քանի՞ քանի ջահել երիտասարդ՝ մեկ սաղ օջախի մեն մենակ որդի, մի աղքատ, չքավոր տան սին..., մեկ տասը գլուխ քյուլֆաթի տեր ու ապավեն, իր ծաղկած դալար հասակին... կամ սաղ-սալամ թերթվել ա, կամ իր պատվական գլուխը դառան պես թրին դեմ արել...»[1]։

Հազիվ թե հարկ լինի Աբովյանի գրածը մեկնաբանելու։ Նա, իբրև ականատես պարսից սատրապների կատարած բռնությունների՝ գրում է, թե Երևանի բերդը դժոխք է, հազարավոր մարդկանց բանտն ու գոհարանը, շատ երիտասարդների, բազմանդամ ընտանիքների միակ խնամողների տանջարանն ու գլխատման վայրը։ Նա Երևանի բերդն ուղղակի անվանում է «մարդակեր բերդ»[2]. «դժոխի և ավազակի բնակարան»[3]։ Վատ խաների հետ միա-

1 Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ջ, էջ 323։
2 Նույն տեղը, էջ 329։

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. III, Երևան, 1948, էջ 58—60։
2 Նույն տեղը, էջ 53։
3 Նույն տեղը, էջ 54։

սին, հակառակ Երվանդ Շահազիզի, չեն եղել նաև «լավ» խաներ, չնայած Շահազիզը նրանց լավն ու վատը իրարից տարբերում է ոչ թե կառավարման ու գործունեության ընդհանուր սիստեմով, այլ՝ «հպատակների վերաբերմամբ ունեցած անհատական» վերաբերմունքով, նրանց «շար ու բարի լինելու» հատկությամբ, «նրանց վարած անգործ և գործունյա կյանքի» եղանակով[1]: Այս կամ այն խանի գործունյա կամ անգործունյա լինելը, բնակչության նկատմամբ նրա անհատական վերաբերմունքի բնույթը ամենևին չէին փոխում պարսից բռնապետության և նրա կատարյալ պատճենը կազմող Երևանի խանության դաժան կարգերը, չէ՛ որ, ինչպես հենց ինքը Երվանդ Շահազիզն է գրում, բոլոր խաներն էլ «բոնի աղջիկներ են հավաքել իրենց հարեմի համար, ամենքն էլ սիրել են նվերներ ստանալ և ամենքն էլ ձգտել են հարստացնելու իրենց դանձարանը, միջոցների մեջ խորուբյուն չդնելով»[2]:

Ի դեպ է նշել, որ անցյալ դարի ճանապարհորդներից և պատմագիտներից շատերը Երևանի վերջին սարդար Հուսեյն-Ղուլի խանին, նրա կատարած դաժանությունների հետ միասին, ներկայացնում են իբրև «շինարար», «ոռոգման ցանցի համար հոգացող» կառավարիչ: Նրա տնտեսական գործունեության մասին հարկ կլինի անդրադառնալ հետագայում՝ Երևան քաղաքի տնտեսական կյանքը ներկայացնելիս: Սակայն մի՞թե նույն Հուսեյն-Ղուլի խանը չէր, որ միջոցների մեջ խորուբյուն չդնելով, Երևանի խանությունից տարեկան կողոպտում էր ավելի քան 650 հազար ռուբլի, մի՞թե այդ նա չէր, որ իր զառամյալ հասակում պահում էր 60 հարճերից բաղկացած հարեմ, մի՞թե նա չէր, որ իր հաճույքի համար խանական պալատի լուսամուտից գնդակոծում էր իրենց օրվա հացը վաստակելու համար Երևան եկող ու գնացող գյուղացիների էշերը, մի՞թե նույն Հուսեյն-խանը չէր, որի կամայական հրամաններով մահապատժի էին ենթարկվում հազարավոր անմեղներ, որոնց մասին այդքան թախիծով պատմում է Խ. Աբովյանը:

Հուսեյն-Ղուլի խանի օրոք, նրա գիտությամբ ու հովանավորությամբ անասելի բռնություններ ու չարիքներ էր գործում նրա եղբայրը՝ Հասան-խանը, որը համարվում էր Երևանի խանության ռազմական գործի գլուխը: Նա «ագահ», «անգութ» և «ահարկու» մի մարդ էր[3], ժողովրդի համար կատարյալ մի պատուհաս: Խ.

[1] Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 97:
[2] Նույն տեղը:
[3] Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 308:

Աբովյանը գրում է, որ Հուսեյն սարդարի փոքր եղբայր Հասան-խանը «հազար անմեղ գլուխ» է «կերել», «հազար տուն քանդել, քաղաք, գեղ ավերել»[1]: Նա պատմում է, որ ռուս-պարսկական պատերազմի նախօրեին ոմն Երևան մտներ «հենց կիմանար՝ թե ջրհեղեղը նոր ա եկել աշխարհս քանդել: Ապարան դառել էր գաղթականաց: Օր չէր ըլում՝ որ սարից, ձորից մարդ չբռնեն ու Հասան-խանի առաջը չբերեն: Ամեն գլուխ բերող՝ նրա աջու ձեռն էր դառնում, փեշքեշի տուրը Ղարս էր հասել: Առանց մարդ սպանելու մեկ օր աշքը չէր կպցնում: Տեղիցը վեր կենալիս՝ նամազը պրծածին պես՝ առաջին գործն էն էր՝ որ ջրատար, մոլորած եսրների՝ որ էստեղ էնտեղ ճանկում, բերում էին՝ կամ աշքները հանի, քիթ ու պռունկը կտրի կամ ոտն ու ձեռները կտրել տա, կամ կտրած ձեռները դաղած եղի պղնձի մեջը կոխել տա, որ արինը կտրվի կամ նրանց սաղ-սալամ փարշամիշ անի»[2]:

Երևանի խանությունը, լինելով արևելյան տիպի մի փոքրիկ պետություն պարսկական պետության մեջ, ուներ վերջինիս կառուցվածքը: Իսկ արևելյան կառավարություններ «միշտ ունեին մի հատուկ եղանակ՝ ֆինանսական (կողոպուտ երկրի միայն երեք գերատեսչություններ՝ ֆինանսական (կողոպուտ երկրի ներսում), պատերազմ (կողոպուտ երկրի ներսում և ուրիշ երկրների) և համայնական աշխատանքներ (հոգատարություն վերարտադրության մասին)»[3]:

Երևանի սարդարի դիվանը բաղկացած էր վեզիրից կամ գլխավոր մինիստրից (կամ գլխավոր միրզայից) և մի քանի միրզաներից, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր հատուկ մասը կառավարության մեջ[4]: Դիվանը բաղկացած է եղել չորս բաժանմունքից՝ պալատի կամ սարդարի տան կառավարչությունից, դիվանական բաժանմունքից, ֆինանսական բաժանմունքից և կատարողական կամ ոստիկանական բաժանմունքից[5]: Ֆինանսական և ոստիկանական բաժանմունքները գրեթե ձուլված էին իրար հետ՝ փաստորեն կազմելով մի բաժանմունք՝ ֆինանսական բաժանմունքը[6]:

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. III, էջ 89:
[2] Նույն տեղը, էջ 90:
[3] К. Маркс и Ф. Энгельс, Письма о «Капитале», Москва, 1948, էջ 43:
[4] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 451:
[5] Նույն տեղը:
[6] Նույն տեղը, էջ 452:

Պալատի բաժանմունքը դեկավարել է կամ ինքը սարդարը, կամ նրա սիրելիներից որևէ մեկը։ Ռազմական բաժանմունքը վերջին սարդարի օրոք գլխավորում էր նրա փոքր եղբայրը՝ Հասան-խանը, որը համարվում էր խանության զինված ուժերի գլխավոր հրամանատարը։ Երևանի խանության զինված ուժերի մեջ էին մտնում երկու գումարտակ սարբազներ, հեծյալ զորամասեր, որոնց թիվը տարբեր ժամանակներում, նայած երկրի դրությանը, տարբեր էր, մի քանի դաշտային հրանոթներ, ֆալկոնետներ[1], որոնք տեղից տեղ էին տարվում ուղտերին բարձելով։ Դրանցից բացի, խանական զինված ուժերի մեջ էր մտնում և բերդապաշտպան հրետանին, որն անմիջապես ենթարկվում էր քաղաքի պարետին։ Զինվորական մասերի ցուցակները պահելու և անձնակազմը միշտ ստուգելու համար դիվանում նշանակված էր մի միրզա[2]։ Խաղաղ ժամանակներում զորքի թիվը կրճատվում էր, իսկ պատերազմի ժամանակ այն հասցվում էր առավելագույն թվի։ Խանական դիվանի բաժանմունքների մեջ ամենագլխավորը ֆինանսականն էր, որը և գտնվում էր սարդարի ուշադրության կենտրոնում։ Ֆինանսական բաժանմունքի գլխավոր պարտականությունը հարկերի ու տուրքերի նշանակումը և դրանց հավաքումն էր։ Կատարողական կամ ոստիկանական բաժանմունքը, ինչպես ասվեց, միշտ «ձուլված էր ֆինանսականի մեջ, որովհետև իշխանությունը, ինչպես գրում է Ի. Շոպենը, դրեթե միայն անհրաժեշտ էր նրա համար, որպեսզի կատարի տուրքերը», «սակայն» դրա հետ միասին «նա պարտավոր էր նաև ի կատար ածել շարիաթի, կամ հոգևոր դատարանի, դատավճիռները»[3]։

Երևանի խանությունում, արևելյան մահմեդական մյուս բոլոր պետությունների նման, օրենսդիր օրգան իրականում չի եղել, որովհետև, ըստ գոյություն ունեցող դրության, մահմեդական պետություններում բոլոր հիմնական օրենքները համարում էին իրենց մարգարեի՝ Մուհամեդի կողմից արդեն տրված, այլևս ոչինչ չէր մնում դրանց վրա գումարելու[4]։ Առավելագույն դեպքում դրանք ենթակա էին միայն մեկնությունների, որոնք կարող էին տարբեր տեղերում ու տարբեր պայմաններում միանգամայն հա-

[1] Փոքր հրանոթներ, որոնք Եվրոպայում ավելի շատ տարածված էին XVI—XVII դդ.։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 452։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը։

կառակ իմաստով «հասկացվել»։ Իսկ ռազմական, տնտեսական և ոստիկանական կառավարչություններին վերաբերող բոլոր կարգի միջոցառումները և կարգ ու կանոնը սահմանվում էին իշխողի, տվյալ դեպքում՝ սարդարի կողմից։ Սարդարից և նրա դիվանից էին կախված այդ երեք կառավարչություններում գործող կարգ ու կանոնները, «օրենքները», եթե կարելի է կամայական և պատեհ առիթներով արած կարգադրությունները ընդունել օրենքի տեղ։ «Ամեն ինչ կախված էր իշխողի բոպեական ներշնչումից և նրա դիվանի շատ քիչ իմաստությունից»[1]։ Իշխողի և նրա դիվանի կարգադրությունները փոխարինում էին օրենքներին, նրանց իրավունքները սահմանափակ չէին և նրանք ենթակա չէին վերահսկողության։ Սակայն դրանց կողքին գոյություն ուներ և մահմեդական հոգևոր իշխանությունը, որն ուներ երեք բաժին՝ ա) բուն հոգևորական, բ) իրավաբանական՝ քրեական ու քաղաքացիական և գ) ժողովրդական կրթության[2]։ Մահմեդական իրավարանները ճանաչում էին միայն երկու իշխանություն՝ աշխարհիկ պետերին պատկանող հարկադրիչ կառավարությունը (հյուքյումաթի-ջաբարի) և արդարադատության կառավարությունը (հյուքյումաթի-ադլի), որը պատկանում է հոգևորականությանը[3]։

Դատական գործը կենտրոնացված էր մահմեդական հոգևորականության ձեռքում։ Մահմեդական հոգևոր դատարանում նախագահում էր ամբողջ խանության իսլամականության հոգևոր պետը՝ շեյխ-ուլ-իսլամը (կաղին), իսկ անդամակցում էին մի քանի ախունդներ ու մոլլաներ, որոնցից մի մասը վճռական, մյուս մասը խորհրդակցական ձայնով[4]։ Բոլոր կարգի հայցերը լուծվել են շարիաթի հիման վրա, որն իրենից ներկայացնում էր դուրանի և ավանդության հիման վրա կազմված քաղաքացիական և կրոնական օրենքների ժողովածու։ Քննությունը կատարվել է դատարանի անդամների ներկայությամբ։ Դատարանում լսել են երկու կողմերին և վկաներին։ Վկաներ չլինելու դեպքում, երբ հնարավոր չի եղել պարզել գանգատի արդարացի կամ անարդարացի լինելը, առաջարկվել է երկու կողմերին երդվել։ Ընդ որում, երդում տալու դեպքում առավելությունը տրվել է պատասխանատուին[5]։ Հար-

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 452։

[2] Նույն տեղը, էջ 452—453։

[3] Նույն տեղը, էջ 453։

[4] Նույն տեղը, էջ 454։

[5] Նույն տեղը։

ցաքննությունն ավարտելուց հետո ատյանի անդամները խորհրդակցել են վճիռ կայացնելու համար։ Վճիռը կայացվել է ղորանի հիման վրա, իսկ նրանում տվյալ գործին վերաբերող համապատասխան հոդվածի բացակայության դեպքում դիմել են ավանդության (հադիս), սովորություններին, օգտվել նախկինում նույնատիպ հայցերի համար կայացրած վճիռներից և կամ լուծել իրենց հայեցողությամբ[1]։ Վճիռները գրվել են արձանագրության ձևով, որ կոչվել է «յարլըխ» և որը կնքվել է դատավորների կողմից ու հանձնվել արդարացված կողմին։ Վերջինիս իրավունք է տրվել մեղադրյալի կողմից վճիռը չկատարելու դեպքում դիմել ոստիկանական իշխանության օգնությանը։ Հոգևոր դատարանը զբաղվել է ամենաբազմազան հայցերի դատով։ Նրա իրավասությանն էին պատկանում ամեն տեսակի պայմանագրերի կնքման, կատարման և խախտման բոլոր գործերը, ամուսնության, խնամակալության և ամեն կարգի ունեցվածքների վերաբերյալ եղած բոլոր հայցերը[2]։

Քրեական հայցերի քննարկման և մեղավորին պատժելու գործում, որը պատկանում էր կատարողական իշխանության իրավասությանը, ղեկավարվում էին ղուրանի 4-րդ գլխում արյան վրիժառության մասին գրված այն հասարակ դրույթով, թե «արյան դիմաց արյուն», թե «ազատ մարդը զրկվում է կյանքից ազատ մարդու համար, ստրուկը՝ ստրուկի, կինը՝ կնոջ։ Ով ներում է իր եղբոր սպանողին, նա իրավունք ունի պահանջել հատուցում»[3], նրա արյան գինը։ Մարդասպանության դեպքում սովորաբար սպանողին տալիս էին սպանվողի հարազատների ձեռքը և վերջիններս իրավունք ոմանին նրա հետ վարվել իրենց հայեցողությամբ. նրանք կամ կարող էին սպանել, կամ նրանից առնել իրենց հարազատի արյան գինը[4]։

Դատական գործերի համար գրասենյակային աշխատանքներ չէին տարվում։ Դրանք գրավոր կերպով չէին պահվում։ Հոգևոր դատարանից բացի, բողոքներ ու հայցեր էր ընդունում նաև ինքը սարդարը, որը փաստորեն հանդիսանում էր ամբողջ խանության գերագույն դատավորը։ Նա վճիռներ էր կայացնում անմիջապես, բողոքները բանավոր լսելուց հետո։ Սարդարի կայացրած վճիռը ի կատար էր ածվում ֆարաշների կողմից հենց նույն րոպեին,

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 454—455։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 456։

[4] Նույն տեղը։

առանց հապաղելու[1]։ Սարդարն ուներ կյանքի ու մահվան իրավունք, և իբրև նշան այդ բանի, նրան ուղեկցող զինված մարդկանցից մեկը՝ մի սպա, իր ուսին կրում էր տապար[2]։ Խանի վճռով կարող էին մեղադրյալին պատժել ֆալախկայով, նրան ճիպոտա-

Ֆալախկա-պատիժ, նկար՝ Գ. Միանասյանի (Երևանի պատմության թանգարան)։

հարելով մինչև մերձ ի մահ, նրան պատուհասել ֆիզիկապես՝ կտրելով ձեռքը, ոտքը, մեկ կամ երկու ականջը, լեզուն, հանել մեկ կամ երկու աչքը և, նույնիսկ, երբեմն բերդի բարձունքից նետել Զանգու գետի ձորը։ Գրավոր կարգադրության կամ վճռի անհրաժեշտության դեպքում միրզաներից մեկը անմիջապես դրի է առնում սարդարի կամքը։ Նա լրացնում է սահմանված ձևի թուղթը, բաց թողնելով միայն սարդարի ստորագրության և կնիքի տեղերը։ Երբեմն սահմանված ձևերի վրա նախօրոք գրված էին լինում սարդարի բլանկը, իսկ կնիքն էլ տրվում էր վեզիրին՝ գործավարությունը «ավելի հեշտացնելու» նպատակով։ Այդ դեպքում վեզիրը հանդես էր գալիս և գործում սարդարի անունից[3]։

Ի. Շոպենը վկայում է, որ նկարագրված կարգերը կարող էին սարդարի կամքով ամեն դեպքում ենթարկվել փոփոխության,

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 456։

[2] Տե՛ս Հ ո վ հ. Հ ա կ ո բ յ ա ն, Ուղեգրություններ, հ. 2, էջ 532։

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 456—457։

որ սարդարը իր ձեռքում է պահում խանության ներքին գործերի բոլոր թելերը։ Սարդարը իր աստիճանավորների չարաշահություններին նայում էր մատների արանքով, որովհետև նա այդ չարաշահումներից ուներ իր մեծածավալ օգուտները[1]։

Թե՛ սարդարի և թե՛ հոգևոր դատարանի վճիռները շատ դեպքերում չէին համապատասխանում գործած հանցագործության մեծությանը։ Հաճախ դեպքեր էին լինում, երբ միևնույն չափի ու բնույթի հանցանքի համար կայացվում էին իրարամերժ դատավճիռներ։ Լայն տարածված էին կաշառակերությունն ու չարաշահումները։ Բավական էր, որպեսզի սարդարը կամ նրա մտերիմներից որևէ մեկը հասկացնել տար հոգևոր դատավորին, որ դատարան դիմած այս կամ այն կողմին ինքը պաշտպանում կամ հովանավորում է, ապա դատի ընթացքում հանցավորը կդառնար արդար, արդարը՝ հանցավոր[2]. իրավունքը իշխում էր արդարադատության վրա։ Դատարանը խիստ դասային բնույթ ուներ, ինչպես նաև մեծ տարբերություն էր դրվում ազգությունների միջև։

Խանական քաղաքացիական ղեխավոր բոլոր պաշտոնները վարում էին մեծ մասամբ խանները, բեկերը և միրզաները։ Վերջիններս կարող էին ամենացածր աստիճանի գրասենյակալին աշխատակցի վիճակից բարձրանալ մինչև սարդարի դիվանը։ Ռազմական, քաղաքացիական և հոգևոր ծառայությունների միջև գոյություն չուներ խիստ սահմանազատում. «միրզան հեշտությամբ կարող էր դառնալ յուզբաշի, բեկ կամ խան, ճիշտ այնպես, ինչպես կարող էր դառնալ մոլլա կամ ախունդ»[3]։

Չնայած խանական կառավարչական սիստեմը չուներ առանձին բարդություն, սակայն ստեղծվել էր խանական բազմամարդ բյուրոկրատիա։ Ըստ Լեոի հաշիվների, յուրաքանչյուր խանությունում՝ խանական դիվանում, պաշտոնյաների և զանազան կարգի ծառայողների թիվը հասնում էր 100-ի։ Նրանք զբաղված էին տնտեսական, դինվորական, վարչական գործերով, հետախուզությամբ և այլն[4]։ Սարդարից և նրա վեզիրից բացի, խանության գլխավոր պաշտոնյաներից էին՝ խազնա-աղասին (գանձապետ), սանդուխտար-աղասին (ծախսարար), ամբարդար-աղասին (շտեմարանապետ), սերաֆյուլ-բեկը (զորապետ), մուհասիլը (խանական և զատաստանական հրամանները կատարողը), դարուղան (ոստիկանապետ)[1]։ Դրանց վրա գումարվում էին նաև՝ ախոռապետությունը, բազեկրությունը, մահալների կառավարչությունները և այլն։

Իբրև ընդհանուր կանոն, բոլոր պաշտոնյաները նշանակվում էին սարդարի կողմից։ Ինչպես ասվեց, բարձր պաշտոնները տրվում էին խաներին, բեկերին, միրզաներին, «պատվավոր մարդկանց»։ Պաշտոնի նշանակելիս սարդարը առաջին հերթին նկատի էր ունենում մանավանդ իր հավատարիմ ծառաներին՝ ախոռապետներին, բազեկիրներին, ծաղրածուներին[2] և, հատկապես, պալատում մեծացած մարդկանց, որոնք իրենց փոքր հասակում մեծ մասամբ սարդարի շիբուխչիներն էին, այսինքն՝ նրան ղալիան մատուցողները[3]։

Ինչպես ասվեց, Հուսեյն-Ղուլի խանի օրոք խանության զինված ուժերը բաղկացած էին երկու գումարտակ կանոնավոր հետևակային զորամասերից (սարբազներից), հեծյալներից, մի քանի դաշտային հրանոթներից, ֆալկոնետներից և բերդապաշտպան հրետանուց։ Սակայն տարբեր ժամանակներում սարդարի զորքի թիվը եղել է տարբեր։ Եղած աղբյուրները ցույց են տալիս, որ հենց նույն Հուսեյն-Ղուլի խանի օրոք զորքի թիվը տարբեր տարիներում տվել է մեծ տատանումներ։ Դա կախված է եղել երկրի քաղաքական դրությունից. պատերազմների և խառնակ դրության ժամանակ խանական զորքը մեծապես ավելացել է։ Պատերազմի ժամանակ խանության զենք կրելու ընդունակ արական սեռի բնակիչները պարտավոր էին իրենց ձիերով և զենքով ներկայանալ ընդհանուր հրամանատարին։ Ջրեչգանի հիշատակության համաձայն, որն իր ուղևորության ընթացքում եղել է Երևանում և ծանոթացել նրա դրությանը, սարդարի հեծյալների թիվը ութ հազարից ավել չի եղել, սարբազների թիվը հասել է վեց հազարի, իսկ թեթև հրետանին բաղկացած է եղել 12 միավորից[4], չհաշված դաշտային և բերդապաշտպան հրետանին։ Սարդարի զորքի բազմա-

---

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 558։

[2] Նույն տեղը, էջ 455։

[3] Նույն տեղը։

[4] Լ ե ո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս I, Երևան, 1926, ձեռագրի իրավունքով, էջ 31։

[1] Լ ե ո, Հայոց պատմություն, հ. երրորդ, էջ 61։

[2] С. Егиазаров, Администр. экономич. стр. сельск. общ. в Эриванской губернии («Свод мат. по изуч. экон. быта гос. крест. Кавказского края», Тифлис, 1887, էջ 2—3).

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 459։

[4] Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, էջ 407։

թիվությունը բացատրվում է նրանով, որ Պարսկաստանը այդ ժամանակ պատերազմի մեջ էր գտնվում Ռուսաստանի հետ (1804—1813 թթ. ռուս-պարսկական պատերազմը, որը ավարտվեց Գյուլիստանի հաշտությամբ)։ Իսկ 1817 թ. Պարսկաստան գնացող երկոլովի դեսպանության անդամ Կոցեբուն գրում է, որ Երևանի բերդի պարիսպներից դուրս իրենց դիմավորելու համար դուրս բերված զորամասերը բաղկացած են եղել երկու հազար սարբազներից և մի այլ զորամասից՝ վեց հազար ձիավոր հրետանու հետ[1]։ Խանության զորքերի մի զգալի մասը դուրս էր գտնվում Երևանից, տեղաորված էր ռուսական և, մասամբ, թուրքական սահմանի ուղղությամբ ընկած մահալներում[2], ինչպես և Սարդարաբադի բերդում։ Հետևապես Ջրեյգանի և Կոցեբուի հաղորդումների միջև չկա աղաղակող տարբերություն, իսկ նրանց այդ հաղորդումներից երևում է, որ Երևանի խանության զորքերի թիվը, չհաշված դաշտային և բերդապաշտպան հրետանին, հասել է ավելի քան 16 հազարի։ Դա, անշուշտ, ամբողջովին մշտական զորք չէր, նրա մեծ մասը հավաքված էր ժամանակավոր ծառայության համար, որովհետև Հուսեյն-խանը իր իշխանության ընթացքում հաճախ ռուսական սահմանի երկայնքով հրահրում էր միջադեպեր և այդ գործողությունների համար նրան անհրաժեշտ էին բավական թվով զինվորներ։ Պատերազմի ժամանակ խանությունից դուրս բերվելիք զորքի քանակը որոշելու համար ժամանակ առ ժամանակ կատարվում էր զննք կրելու ընդունակ արական բնակչության հաշվառում՝ մարդահամար։ Ռոբերտ Կեր Փորտըրի հաղորդման համաձայն, Հուսեյն-Ղուլի խանի հրամանով մի այդպիսի մարդահամար է կատարվել 1814 թ., ըստ որի պարզվել է, որ զենք կրելու ընդունակ մարդկանց թիվը 18.000 է[3]։

Երևանի խանության բնակչությունը, ինչպես նշվեց, բաղկացած էր հայերից, ադրբեջանցիներից, քրդերից և այլն։ Ուստի առօրյա խոսակցական լեզուներն էլ եղել են հայերենը, ադրբեջաներենը և այլն։ Սակայն խանության պաշտոնական լեզուն համարվում էր պարսկերենը։ Պարսից պետությունը իր սատրապների միջոցով նվաճված ժողովուրդներին հարկադրում էր պարսկերեն լեզուն, վարում էր պարսկացման քաղաքականություն։ Սարդարները ժամանակի ընթացքում հասել էին նույնիսկ այն բանին, որ

[1] Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, էջ 532։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 449—450։

[3] Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, էջ 769։

ադրբեջանցիների մեծագույն մասը հարկադրված էր ոչ միայն պետական, այլև անձնական բնույթի ամբողջ թղթակցությունները կատարել պարսկերենով։ Այդ տեսակետից բարվոք վիճակում չէր գտնվում և հայերենի գործածությունը։ Նրա գործածությունն էլ սահմանափակվում էր միայն անձնական թղթակցություններով։ Խանության բոլոր գործերը, բոլոր կարգի պաշտոնական գրությունները կատարվում էին պարսկերեն։ Ամեն մի շատ թե քիչ բարեկիրթ մարդ պետք է իմանար պարսկերենը կամ, համենայն դեպս, գաղափար ունենար նրա մասին[1]։

Ամբողջ Երևանի խանության մեջ միակ քաղաքը Երևանն էր, խանության կենտրոնը։ Նրա մյուս բազմաթիվ բնակավայրերից և ոչ մեկը, այդ թվում և Կողբի աղահանքերն ու բազմամարդ բնակչություն ունեցող մահալային կենտրոնները, քաղաքային բնույթ չունեին։ Նրանք իրենց էկոնոմիկայով կազմում էին գյուղատնտեսության բաղկացուցիչ մասը։

Երևանը որպես խանության կենտրոն վարչականորեն կազմում էր մի առանձին միավոր, նա չէր մտնում որևէ մահալի մեջ։

Քաղաքը կառավարում էր ոստիկանապետը, որը կոչվում էր դարուղա։ Նա նշանակվում էր սարդարի կողմից և պարտավոր էր զբաղվելու քաղաքի կարգ ու կանոնով, հսկում էր, որպեսզի հարկերն ու տուրքերը ժամանակին հավաքեն և այլն։ Դարուղան իր իշխանությունը գործադրում էր յուզբաշիների (հարյուրապետների) և չաուշների (տասնապետների) միջոցով։ Քաղաքի կառավարմանը մասնակցում էին թաղային ավագները՝ մելիքները, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու էր իր թաղի կարգ ու կանոնի պահպանման և հարկերի բաշխման ու հավաքման համար։ Դրանցից բացի, քաղաքի վարչական պաշտոնություններին էին պատկանում նաև՝ բազարբաշին (շուկայի պետը), միզանդարը (կշռապետը), միրաբը և այլն։ Քաղաքի ներքին կյանքում կարևոր դեր էին խաղում համքարությունները, որոնք, հանձինս իրենց ավագների, որոշ մասնակցություն ունեին քաղաքի ներքին վարչական և հասարակական գործերին։ Քաղաքի վարչական ապարատի և նրա կազմի մեջ մտնող պաշտոնների բնույթի ու պարտականությունների մասին բավարար մանրամասնությամբ կխոսվի հետագայում, քաղաքի ներքին կյանքը ներկայացնելու հետ միասին։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 459, 906, 911։

2. ՔԱՂԱՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Երևանի տնտեսության ճյուղերը կազմում էին՝ արհեստագործությունն ու արդյունագործությունը, առևտուրը, այգեգործությունն ու բանջարաբուծությունը և, նույնիսկ, երկրագործությունն ու անասնապահությունը: Քաղմունքի վերջին չորս տեսակները ցույց են տալիս, որ Երևանի էկոնոմիկան այդ ժամանակներում սերտորեն կապված էր և միահյուսվում էր գյուղատնտեսության հետ: Ռոբերտ Կեր Փորտերը իր ապավորությունը Երևանի մասին հետևյալ կերպ է արտահայտում. «Արդարև, ա՛յնքան ընկած է նրա (Երևանի—Թ. Հ.) մեծությունը, որ կարելի է համարել այն որպես ավելի պարզ սահմանային մի բերդ, քան մի մեծ նահանգի մայրաքաղաք»[1]: Սակայն այդ մեզ թույլ չի տալիս Երևանը դասելու Արևելյան Հայաստանի այն քաղաքների շարքում, որոնք գյուղերից տարբերվում էին միայն կոչմամբ և վարչական նշանակությամբ: Երևանը թե՛ իր վարչական նշանակությամբ, թե՛ բնակչության կազմով և թե՛ էկոնոմիկայով XIX դ. առաջին քառորդում ներկայացնում էր տիպիկ ֆեոդալական քաղաք: Իրական դրության գոհկացում պետք է համարել գրող Ստ. Կուրտիկյանի այն հայտարարությունները, թե Երևանը նույնիսկ XX դ. երկրորդ տասնամյակի սկզբներին «մնում» էր «հետամնաց մեծ գյուղ», «շարունակում էր մնալ կավաշեն մի մայրագյուղ»[2] և այլն: Նրա այդ հայտարարության համար պարզապես «հիմք են ծառայել» հին Երևանի կավակերտ տներն իրենց հողն կտուրներով, փոշոտ, ծուռումուռ փողոցները և «հակասանիտարական պայմանները»: Սակայն ֆեոդալական ո՞ր քաղաքը իշխանական կամ արքունական պալատից զատ, ուներ բազմահարկ շենքեր, ընդարձակ հրապարակներ և լայն փողոցներ, որոնցից զուրկ էր հին Երևանը: Ճիշտ է, հին Երևանը առաջնակարգ քաղաք չէր, նրա բնակչությունը մեծաթիվ չէր, քաղաքային էկոնոմիկան (արհեստներն ու առևտուրը) զերազանցապես ուներ տեղական նշանակություն, իսկ արտաքին տեսքով քիչ էր տարբերվում սովորական գյուղից, այնուամենայնիվ, նա մի ընդարձակ մարզի (կիսանկախ խանության) կենտրոն էր, կարևոր բերդ, տարանցիկ առևտրի կայան: Նա ուներ մի քանի տասնյակի հասնող արհեստներ, հարյուրավոր առևտրական կրպակներ, բազմաթիվ այգիներ ու բանջարանոցներ: Չպետք է չափազանցնել, սակայն, և չպետք է անտեսել հին Երևանի այն դերն ու նշանակությունը, որ նա խաղացել է Արևելյան Հայաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքում:

[1] Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, էջ 764:
[2] «Երևան» թերթ, 1958 թ. ապրիլի 29, № 84 (149):

Ա) ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Արհեստագործության ու արդյունաբերության ճյուղային բազան: Արհեստների տեսակներն ու արհեստավորների թիվը: Արհեստավորական արտադրանքների չափը: Ծառագործություն, կաշեգործություն, ներկարարություն: Ջրաղացներն ու դինգեր: Վարսավիրություն, ջուլհակություն, մանածագործություն: Արհեստների կատարելության աստիճանը: Արհեստավորական գործիքները: Աշխատանքի բաժանումը: Համքարությունները. դրանց կազմը, բնույթը. սովորություններ, եղբայրական հիմունքներ, դեկավարումը. պատժի միջոցներ, համքարություն ընդունվելու կարգը, վարպետները, վարպետուհիները ու աշակերտները, արտադրության ու վաճառքի կազմակերպումը: Համքարությունների թիվը: Համքարություններից դուրս գտնվող արհեստավորներն ու առևտրականները: Արդյունաբերությունը. նրա բնույթն ու օբյեկտները (ապակու «գործարան»-ը, բնդանոթածուլական «գործարան»-ը և վառոդարանը):

XIX դարի առաջին քառորդում, ինչպես և դրան հաջորդած տասնամյակներում, ընդհուպ մինչև նույն դարի 80-ական թվականները, Երևանում չի եղել որևէ գործարան: Այնտեղ եղած բոլոր ձեռնարկությունները եղել են մանր տիպի ձեռնարկություններ, որոնցում աշխատանքը կատարվել է ձեռքով: Մի քանի տասնյակի հասնող այդ ձեռնարկությունները բոլորն էլ իրենցից ներկայացնում էին սովորական արհեստանոցներ: Դրանք առաջացել էին տեղական բնակչության կարիքների և հումքի բազայի առկայության հիման վրա:

Արհեստագործության համար Երևանում կային հումքի մի շարք տեսակներ: Ի. Շոպենի հաշիվներով, Հայկական մարզում, որը կազմվել էր նախկին Երևանի և Նախիջևանի խանություններից, ամեն տարի ստացվում էր մինչև 20.000 հատ խոշոր և 70.000

հատ մանր կաշի և մորթի[1]։ Անշուշտ, դրանց մի զգալի մասը առանց մշակման օգտագործվում էր գյուղական վայրերում տրեխաններ, պարկեր և այլ իրեր պատրաստելու համար, իսկ մնացած մասը վերամշակման էր ենթարկվում քաղաքներում, հատկապես՝ Երևանում, որտեղ, ինչպես կտեսնենք քիչ հետո, կաշեգործական արհեստանոցների թիվը հասնում էր տասնյակների։ Տեղական հումքից բացի, Երևանում մշակվում էին նաև Մակուից և Բայազետից բերվող մեծ քվով կաշիներն ու մորթիները։

Երևանի խանությունն ուներ բնական ներկանյութեր։ Առանձնապես հայտնի էր կոշենիլը, որը, ըստ Շոպենի հիշատակության, ստացվում էր Մասիսի փեշերին և Արաքսի ձախ կողմում տարածված սեղախոտերի վրա ապրող մի տեսակ որդից[2]։ Այդ որդի հավաքմամբ և նրանից ներկանյութ պատրաստելով հիմնականում զբաղվում էր էջմիածնի վանքը[3]։ Վանքը ամեն տարի կանանց և երեխաների միջոցով հավաքել էր տալիս մեծ քանակությամբ որդեր, ապա դրանք հատուկ արհեստավորների միջոցով վեր էր ածում ներկանյութի։ Ըստ երևույթին, կոշենիլի արտադրությունը մեծ օգուտներ էր տալիս։ Թվում է, թե դրանով պետք է բացատրել Երևանի վերջին սարդարի առանձնահատուկ ուշադրությունը կոշենիլ ստանալու գործին։ Նա ամեն տարի մարդիկ է ուղարկում կոշենիլատու որդեր հավաքելու։ Նրա մարդիկ մեծ քանակությամբ դրանցից հավաքում են, սակայն չիմանալով որդից կոշենիլ ստանալու գաղտնիքը, որ հայտնի էր էջմիածնի համապատասխան արհեստավորներին, սարդարի հավաքել տված որդերը մնում են անմշակ և անօգտագործելի[4]։ Որդից կոշենիլ ստանալու հիմնական գաղտնիքը ճարպային մասերի հեռացման ձևն էր, որը այնպես էլ սարդարի մարդկանց մնաց անծանոթ։

Երևանի խանության մի շարք մահալներում մշակում էին բամբակ, բրինձ, խաղող, որոնց բերքի զգալի մասը վերամշակման էր ենթարկվում Երևանում։ Դրանցից բացի, կային շինանյութեր, բուրդ և այլ հումքեր, որոնք տեղական կայուն բազա էին ծառայում արհեստագործության համար։ Գինեգործության, օղեգործության և մի քանի այլ զբաղմունքների համար հումք էր ծառայում խաղողը։ Այնպես որ, Երևանի գրեթե բոլոր արհեստները՝ չհաշված արծաթագործությունը, պղնձագործությունը, գինագործությունը և մի քանի այլ ճյուղեր, ամբողջովին կամ գրեթե ամբողջովին մշակում էին տեղական, էժան հումքը։

Տարբեր տեսակի հումքերի առկայությունից բացի, որը անշուշտ կարևոր նախապայման է արհեստների գոյության համար, Երևանի արհեստագործության գոյության ու զարգացման համար գոյություն ունեին և այլ աղդակներ։ Իբրև խանության կենտրոն, Երևանում էին գտնվում սարդարի տունը, նրա բազմաթիվ հարճերն ու սպասավորները, բերդապաշտպան կայազորը, խանական պաշտոնյաները, ինչպես և ավելի քան մեկ տասնյակ հազար բնակիչներ, որոնք ունեին արհեստավորական արտադրանքների իրենց համապատասխան պահանջմունքները։ Երևանի արհեստների մեծագույն մասը առաջացել էր տեղական պահանջմունքներից, և արհեստավորներն աշխատում էին տեղական պատվիրատուների պահանջարկներով։ Երևանի արհեստագործությունը կատարում էր նաև շրջակայքի մահալների բնակչության պահանջների մի մասը։ Երևանի արհեստագործության վրա իր կնիքն էր դնում նաև նրա՝ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև տարանցիկ առևտրի կետ լինելը։ Նրա մի շարք արհեստները (պայտարություն, թամբագործություն և այլն) սերտորեն կապված էին տարանցիկ առևտրի հետ և սպասարկում էին դրան։

Տեղական հումքային պայմանները, քաղաքի ու նրա շրջակայքի մահալների բնակչության պահանջմունքները և տարանցիկ առևտրի կարիքներն էլ հենց պայմանավորում էին Երևան քաղաքի արհեստների կազմը և դրանց արտադրանքի չափը։ Երևանի արհեստները, գրեթե առանց բացառության, սերտորեն կապված և կախված էին այդ նախապայմաններից։

XIX դ. առաջին քառորդում Երևանում հաշվվում էին մի քանի տասնյակ արհեստներ, որոնք իրենց բնույթով ու կատարելագործությամբ գտնվում էին տարբեր աստիճանների վրա։

XIX դարի առաջին տասնամյակներին Երևանի ունեցած արհեստների և արհեստավորների թվի մասին միակ արժանահավատ և ամբողջական տեղեկությունները հաղորդում է Ի. Շոպենը։ Նա իր հայտնի աշխատության մեջ աղյուսակի ձևով ներկայացրել է ամբողջ Հայկական մարզի արհեստներն ու այլ զբաղմունքները՝

---

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 793։

[2] Ոմանք կոշենիլը նույնացնում են միջին դարերում Արարատյան դաշտի մի քանի գավառներում արտադրվող «որդան կարմիր» (արաբական մատենագիրների մոտ՝ «ալ-կրմզի» կոչված) ներկանյութի հետ, որն այնքան մեծ համբավ ուներ Մերձավոր և Միջին Արևելքի երկրների շուկաներում։

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 811։

[4] Նույն տեղը։

բան արհեստավորների ազգային պատկանելության և տեղացի կամ ներգաղթած լինելու։ Այդ ընդարձակ աղյուսակից դուրս քաշելով Երևանին վերաբերող արհեստներն ու այլ կարգի զբաղմունքները, առանձին այունակում նշելով նաև ներգաղթի ժամանակ եղած արհեստավորները, որոնք խանական շրջանում չեն եղել Երևանում, 1830-ական թվականների սկզբի համար կստանանք հետևյալ պատկերը[1].

Աղյուսակ № 1

№ թ/կ	Զբաղմունքի տեսակը	Տվյալ աշխատանքով զբաղվածների թիվը		Ընդամենը
		հիմնական բնակիչներ	ներգաղթածներ	
1	2	3	4	5
1.	Թամբի փայտակմախք պատրաստողներ	1	—	1
2.	Բախկալներ	97	—	97
3.	Նպարավաճառներ	3	—	3
4.	Բաղնիսպաններ	11	1	12
5.	Փերեզակներ	10	—	10
6.	Մաշկակարներ	128	3	131
7.	Պարանագործներ	4	—	4
8.	Դաջողներ (չիթ տպողներ)	5	—	5
9.	Ագռավնավաճառներ	1	—	1
10.	Բրաուներ	1	1	2
11.	Երկաթավաճառներ	7	—	7
12.	Կենգռնագիրներ և ներկարարներ (маляры)	2	—	2
13.	Թևմոնավաճառներ	2	—	2
14.	Ջուռնաչիներ և նաժիշտներ	10	2	12
15.	Կրագործներ	2	—	2
16.	Ոմմադիրներ	26	4	30
17.	Կաշեգործներ	38	—	38
18.	Դարբիններ և ձիարույժներ	36	5	41
19.	Կոնֆետագործներ	1	—	1
20.	Սրճագործներ	1	—	1
21.	Ոսկրարույժներ	—	2	2
22.	Նկրկարարներ	3	1	4
23.	Վաճառականներ	183	36	219
24.	Այլուրավաճառներ	20	—	20
25.	Ռուժոններ	4	—	4
26.	Կյանկոզներ	21	2	23
27.	Նպարավաճառներ (маркитанты)	22	1	23
28.	Ջրագցպաններ	17	6	23
29.	Դրամահաններ	1	—	1
30.	Օճառագործներ	3	—	3
31.	Պղնձագործներ	28	—	28
32.	Մանրավաճառ խանութպաններ	44	—	44
33.	Թրամափոխներ	14	6	20
34.	Մագործներ	25	2	27
35.	Բանջարաբույծներ	1	—	1
36.	Ջինագործներ	26	12	38
37.	Կապայառուներ	1	1	2
38.	Վրանագործներ	1	—	1
39.	Հին շորեր վաճառողներ	2	—	2
40.	Կոշիկներ պայտողներ	—	1	1
41.	Թաղիքագործներ	2	—	2
42.	Դերձակներ	39	2	41
43.	Մանածագործներ	—	1	1
44.	Ջհնորաներ	3	—	3
45.	Այգեպաններ	668	3	671
46.	Կոշկակարներ և հնակարկատներ	2	1	3
47.	Հաշած ճանկոդել վաճառողներ	5	—	5
48.	Մամագործներ	16	—	16
49.	Արծաթագործներ	27	7	34
50.	Մուշտակագործներ	1	—	1
51.	Փականագործներ	—	11	11
52.	Ջուլհակային դազգահներ պատրաստողներ	—	2	2
53.	Ատաղձագործներ և հյուսներ	14	64	78
54.	Թամբագործներ և համեատագործներ	31	3	34
55.	Ջուլհակներ	15	105	120
56.	Խառատներ	4	—	4
57.	Արդուկողներ	4	—	4
58.	Հրթիռագործներ	2	—	2
59.	Ճաշակրպակատերեր	13	—	13
60.	Հացագործներ	39	1	40
61.	Սափրիչներ	59	5	64
62.	Ժամագործներ	2	—	2
63.	Զարվադարներ, կառապաններ և սայլապաններ	79	8	87
64.	Զարչիներ	28	5	33
65.	Չիրուխչիներ	1	—	1
66.	Ճոներ	79	—	79
67.	Շերամապահներ	4	—	4
68.	Մետաքսավաճառներ	67	—	67
69.	Գզոտներ	8	9	17
70.	Շերյաչիներ (կարմիր ներկ անողներ)	6	16	22
	Ընդամենը	2020[1]	329	2349

[1] Ն. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 843—844։

[1] *Շոպենի ավյալներով արհեստավորներ և այլ աշխատաքներով զբաղվածներըր, առանց ներգաղթողների, բան քաղաքի Բաղամասերի՝ բաշխված էին հետևյալ կերպ. Շահար Բաղամասում՝ 874 արհեստավոր, Թափաբաշում՝ 743, իսկ Դամիքբուլաղում՝ 287, ընդամենը՝ 1904 (տե՛ս* И. Шопен Исторический памятник Армянской области, *էջ 475)։ Ինչպես տեսնում ենք, նրա հաղորդած այս թվերը չեն համապատասխանում հենց իր կազմած աղյուսակի տվյալներին. դրանք իրարից ունեն որոշ տարբերություն։*

Բերված աղյուսակից պարզ երևում է, որ նրանում տրված են բոլոր կարդի արտադրություններին, վաճառման և մի քանի այլ բնագավառներին վերաբերող զբաղմունքները։ Բացառություն է կազմում միայն վարչական և զինվորական ծառայությունը, ինչպես և եկեղեցու սպասարկման հետ կապված բոլոր կարգի աշխատանքները։ Տարբեր զբաղմունքների մասին միանգամից ու ճիշտ գաղափար կազմելու համար պետք է այդ աղյուսակը մասնատել ըստ բնագավառների, յուրաքանչյուր բնագավառի համար կազմելով առանձին աղյուսակ։ Ըստ այդ աղյուսակի պարունակած տվյալների, Երևանի արհեստները XIX դ. երրորդ տասնամյակի վերջերին, չհաշված ներդաղթած արհեստավորներին, ունեին հետևյալ կազմը.

Աղյուսակ № 2

№ րկ	Արհեստի տեսակը	Վարպետների թիվը տվյալ արհեստի համար	№ րկ	Արհեստի տեսակը	Վարպետների թիվը տվյալ արհեստի համար
1.	Թամբի փայտակմախք պատրաստողներ	1	23.	Վրանագործներ	1
2	Բալնիսպաններ	11	24.	Քաղքագործներ	2
3.	Մաշկակարներ	128	25.	Դերձակներ	39
4.	Պարանագործներ	4	26.	Կոշկակարներ և հնակարկատներ	2
5.	Չիթ դաջողներ	5	27.	Մոմագործներ	16
6.	Բրուտներ	1	28.	Արծաթագործներ	27
7.	Կենդանագիրներ և նկարբարներ (маляры)	2	29.	Մուշտակագործներ	1
8.	Կրագործներ	2	30.	Ատաղձագործներ	14
9.	Որմնադիրներ	26	31.	Թամբագործներ և համեմատագործներ	31
10.	Կաշեգործներ	38	32.	Ջուլհակներ	15
11.	Դարբիններ և ձիաքուժներ	36	33.	Խառատներ	4
12.	Կոնֆետագործներ	1	34.	Արդուկողներ	4
13.	Սրճագործներ	1	35.	Հրթիռագործներ	2
14.	Նկարարներ	3	36.	Հացագործներ	39
15.	Ռուժողներ	4	37.	Սափրիչներ	59
16.	Կայլկոզներ	21	38.	Ժամագործներ	2
17.	Ջրաղացպաններ	17	39.	Չիբուխչիներ	1
18.	Դրամահատներ	1	40.	Ճոներ	79
19.	Օճառագործներ	3	41.	Դղրարներ	8
20.	Պղնձագործներ	28	42.	Շիլաչիներ	6
21.	Մսագործներ	25	43.	Ջուռնաչիներ և երաժիշտներ	10
22.	Զինագործներ	26		Ընդամենը	746

Ինչպես տեսնում ենք, ըստ բերված աղյուսակի (№ 2), Երևանում եղած արհեստների թիվը XIX դ. 20-ական թթ. վերջերին հասել է 43-ի, իսկ դրանցով զբաղվող արհեստավորների թիվը՝ 746-ի։ Դրանցից են բաղնիսպանները, սափրիչները, բուժողները։ Ջուռնաչիներն ու երաժիշտները կապված չէին արտադրության հետ, իսկ մյուս՝ մեծագույն մասը արտադրական արհեստներ էին։ Շոպենի ցուցակից դուրս են մնացել այնպիսի առաջնակարգ արհեստներ, ինչպիսիք էին՝ քարտաշությունը, փականագործությունը, մանածագործությունը, պայտարությունը, գինեգործությունը, օղեգործությունը և մի քանի այլ արհեստներ։ Ընդ որում մանածագործությունն ու փականագործությունը նշված են, սակայն ըստ աղյուսակի (№ 1), մինչև ներգաղթը, այսինքն՝ խանական շրջանում, Երևանում դրանցով զբաղվողներ չեն եղել։ Քարտաշության և մյուս մի քանի արհեստների մասին չնշելն էլ ըստ երևույթին հիմնականում պետք է բացատրել նրանով, որ որոշ նույնատիպ արհեստներ վիճակագիրը տվել է ոչ թե առանձին-առանձին, այլ միասին, օրինակ՝ ատաղձագործությունն ու հյուսնությունը տրված են միայն ատաղձագործության անվան տակ, որմնադրությունն ու քարտաշությունը՝ որմնադրության տակ և այլն։ Եվ դա միանգամայն տրամաբանական է. այն ժամանակներում Անդրկովկասի բաղաքներում, այդ թվում և Երևանում, նույնատիպ շատ արհեստների միջև խիստ սահմաններ չկային. դարբինը կարող էր զբաղվել նաև փականագործությամբ, իսկ փականագործը՝ դարբնությամբ, ատաղձագործը կարող էր միաժամանակ կատարել հյուսնի գործը և ընդհակառակը, որմնադիրը միաժամանակ կարող էր լինել քարտաշ, մանավանդ, որ այդ շրջանում ճարտարապետական առումով բարձրաճաշակ որևէ կառուցում չի կատարվել և որմնադիր-քարտաշից մեծ վարպետություն չէր պահանջվում։ Իսկ գինեգործության և օղեգործության չնշելն էլ պայմանավորված էր նրանով, որ այդ արհեստներով զբաղվում էին ոչ թե հատուկ արհեստավորներ, այլ հենց նույն այգեգործները։ Դրանք բոլորը նկատի ունենալով պետք է ենթադրել, որ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու նախօրեին Երևանում եղել են ավելի քան 50 տեսակի արհեստներ։

Արհեստավորները կազմում էին քաղաքի ամբողջ բնակչության (եթե այն ընդունենք 11.500) 6%-ը (եթե արհեստավորների թիվը ընդունելու լինենք 750), իսկ այդ նշանակում է, որ քաղաքային բնակիչների ամեն մի 16,6 մարդուն ընկնում էր մի արհեստավոր։ Քանակական առումով դա այնքան էլ մեծ թիվ չէ,

մանավանդ, եթե նկատի ունենանք արհեստների արտադրողականության չափազանց ցածր մակարդակը։ Բնակչության թվի նկատմամբ արհեստավորների համեմատաբար փոքր թիվը հատուկ էր ոչ միայն Երևանին, այլև, ինչպես նկատում է Ս. Եղիազարովը, Անդրկովկասի բոլոր քաղաքներին[1]։ Այդ բացատրվում է նրանով, որ Անդրկովկասի քաղաքներում նույնիսկ XIX դ. երկրորդ կեսին, գրեթե բացառապես աշխատում էին միայն ներքին՝ տեղական պահանջմունքների հիման վրա. նրանց արտադրանքը չէր արտածվում, այլ ամբողջապես սպառվում էր տեղական շուկաներում[2]։

Աղյուսակում բերված արհեստները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ հագուստ ու կոշկեղեն արտադրող և դրա հետ կապված արհեստներ, որոնց պատկանում են՝ մաշկակարները, չիթ դաջողները, կաշեգործները, ներկարարները, դերձակները, կոշկակարներն ու հնակարկատները, մուշտակագործները, ջուլհակները, արդուկողները, ճոները, գզրարները և շիլաչիները։ Արհեստանեղի այս խմբի մեջ մտնող արհեստավորների թիվը հասնում էր 328-ի, կազմելով քաղաքի բոլոր արհեստավորների մոտ 44%-ը։ Երկրորդ խումբը կենցաղային պահանջմունքները բավարարող և կենցաղային գործածության իրեր պատրաստող արհեստներն էին, որոնց պատկանում էին բաղնիսպանները, բրուտները, դարբիններն ու ձիաբույժները, բուժողները, կայլակողները, պղնձագործները, վրանագործները, թաղիքագործները, մոմագործները, արծաթագործները, խառատները, սափրիչները, ժամագործները, չիրուխչիները։ Այս խմբի մեջ մտնող արհեստավորների թիվը հասնում էր 187-ի, կազմելով բոլոր արհեստավորների թվի մոտ 25%-ը։ Երրորդ խումբը սննդի հետ կապված արհեստներն էին, որոնց պատկանում էին կոնֆետագործները, սրճագործները, ջրաղացպանները, օճառագործները, մսագործները և հացագործները։ Այս արհեստավորների թիվը կազմում էր 86։ Չորրորդ խմբի մեջ, որը սպասարկում էր տարանցիկ ու ներքին առևտրի հաղորդակցության միջոցներին, մտնում էին հետևյալ արհեստավորները՝ թամբի փայտակմախք պատրաստողները, պարանագործները և թամբագործներն ու համեստագործները։ Այս խմբի մեջ մտնող արհեստավորների թիվը

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, Городские цехи, Казань, 1891, էջ 182։

[2] Նույն տեղը։

հասնում էր միայն 36-ի։ Կային և այնպիսի արհեստներ, որոնց դժվար է վերագրել նշված խմբերից որևէ մեկին. դրանցից էին՝ գինագործությունը, դրամահատությունը, զուռնաչիությունը և այլն։ Որոշ զբաղմունքներ էլ կային, որոնք ըստ էության գտնվում էին արհեստի մակարդակի վրա (թնդանոթաձուլություն, վառոդագործություն և այլն), սակայն դրանք առանձնացվում են իբրև արդյունաբերական տիպի զբաղմունքներ։ Ուստի այդպիսիներին կանդրադառնանք քիչ հետո, քաղաքի շատ թե քիչ արդյունաբերական տիպի օբյեկտների մասին խոսելիս։

Ըստ ընդգրկած արհեստավորների թվի, առաջին տեղը գրավում էր մաշկակարությունը (128 արհեստավոր), երկրորդ տեղը՝ գդակագործությունը (79 արհեստավոր), երրորդը՝ սափրիչությունը (59 արհեստավոր), չորրորդը՝ հացագործությունը (39 արհեստավոր), հինգերորդը՝ կաշեգործությունը (38 արհեստավոր) և այլն։

Ներկարարները բաժանվում էին երկու խմբի՝ բոյաչիների, որոնք ներկում էին կապույտ գույնի և դրա համար պարտավոր էին թույլտվություն վերցնել տվյալ մահալի կապալառուից, և շիլաչիների, որոնք ազատ կերպով ներկում էին կարմիր և այլ գույներով[1]։ Շիլաչիները կենտրոնացած էին քաղաքի ծայրամասում՝ Շիլաչի թաղում (մահլայում), որը հետագայում, քաղաքի տարածմամբ դադարեց ծայրամաս լինելուց։ Ներկայումս էլ այդ անունը բնակիչների մոտ իբրև անցյալի վերապրուկ մնացել է գործածության մեջ, չնայած պաշտոնապես վաղուց հանվել է քաղաքամասերի ցուցակներից։

Արհեստները քաղաքում տեղաբաշխված էին անհամաչափ։ Արհեստանոցների տեղաբաշխումը կապված էր նրանց բնույթի և կազմակերպական ձևերի հետ։ Սովորաբար միատեսակ արհեստավորների խանութները տեղադրված էին լինում իրար մոտ՝ միևնույն շարքում, փողոցում կամ թաղամասում։

Կաշեգործական արհեստանոցները, թվով 32 դարաղխանաները, կամ «կաշեգործարանները» (ինչպես սովորաբար կոչում էն Շոպենն ու նրա ժամանակակից մյուս հեղինակները), որոնք պահանջում էին բավական մեծ քանակությամբ ջուր, գրեթե ամբողջապես գտնվում էին Զանգվի մոտ, քաղաքի Դարաքենդ (Ձորագյուղ) թաղամասում[2]։ Ջրաղացներն ու դինգերը տեղադրված էին Կրրխ-

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 851։

[2] Նույն տեղը, էջ 473։

Բուլաղի (Գետառի) և Զանգվի ափերին՝ գերազանցապես քաղաքի Շահար և Թափաբաշ (Կոնդ) թաղամասերում։ Մյուս արհեստանոցները հիմնականում գտնվում էին շուկա-հրապարակներում և ըստ տեսակների կազմում էին առանձին շարքեր։

Ի. Շոպենը և հետագա շրջանի նրան հետևող ուսումնասիրողներից շատերը, այդ թվում «Հին Երևան» աշխատության հեղինակ

Կաշեգործական արհեստանոց (դաբաղխանա) Զանգվի (Հրազդան) ափին (Երևանի պատմության թանգարան)։

Երվանդ Շահազիզը, որոշ վերապահությամբ, պարսկական տիրապետության շրջանի ապակու գործարանի հետ միասին գործարանային տիպի արդյունաբերական օբյեկտներ են համարել կաշեգործական արհեստանոցները (դաբախխանաները), օճառագործական արհեստանոցները, կապույտ ներկող ներկարարների ձեռնարկությունները և, նույնիսկ, ջրաղացներն ու դինգիրը[1]։ Սակայն այդ բոլոր ձեռնարկությունները եղել են շատ փոքր տիպի, նրանցում անմրցակից իշխել է ձեռքի աշխատանքը, աշխատանքային պրոցեսները եղել են շատ հասարակ, և անգամ հոսող ջուրը չի օգտագործվել իբրև շարժիչ ուժ, եթե նկատի չունենանք ջրաղացներն ու դինգիրը։ Այնպես որ, նշված ձեռնարկություններից և ոչ մեկը չի կարելի համարել գործարանային բնույթի. դրանք սովորական ար-

[1] Տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 456 և 473—476; Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 48—49 և 50։

հեստանոցներ էին, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր արտադրական պրոցեսների յուրահատկությունները։

Արհեստների մասին խոսելիս առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել արտադրանքի չափին, գործիքների բնույթին, աշխատանքի բաժանման հարցերին, արտադրանքի որակին, արհեստավորների կազմակերպական ձևերին, նրանցից վերցվող հարկերին, արհեստավորների իրավական վիճակին և այլ հարցերի։

Մոմագործի արհեստանոց (Երևանի պատմության թանգարան)։

Մի փոքր վերապահությամբ կարելի է ասել, որ Երևանի, ինչպես և Անդրկովկասի բոլոր քաղաքների արհեստավորական արտադրանքի չափի մասին կցկտուր և պատահական ակնարկներից բացի ամբողջական որևէ աղբյուր գոյություն չունի, իսկ դրանով անհնար է թեկուզ մոտավոր կերպով դաղափար կազմել տարբեր արհեստների արտադրության չափի և արհեստավորների նյութական ապահովվածության աստիճանի մասին՝ XIX դարի առաջին տասնամյակներին։ Սակայն առանց սխալվելու կարելի է ասել, որ այդ շրջանում Երևանի արհեստավորների մեծագույն մասը գտնվում էր ծայրահեղ աղքատության մեջ. նրանց արտադրանքը հաճախ աննշան էր և ցածր գներով, որ նրանից ստացվող եկամուտը

չէր բավարարում արհեստավորի նույնիսկ նվազագույն պահանջմունքներին։ Արտադրանքի չափի և նյութական ապահովվածության առումով, տարբեր արհեստներ գտնվում էին տարբեր աստիճանի վրա։ Համեմատաբար շատ արտադրանք էին տալիս և նյութապես ավելի ապահովված էին կաշեգործները, մսագործները, օճառագործները, հացագործները և այլն, իսկ արհեստավորների մյուս մեծագույն մասի նյութական ապահովվածությունը նվազագույն չափի էր հասնում, որովհետև նրանք տեղական պահանջարկներից ավելի արտադրանք չէին կարող տալ, իսկ տեղական պահանջմունքները գրեթե բոլոր արհեստների գծով ունեին համեստ չափեր։ Ս. Ա. Եղիազարովը գրում է, որ որոշ արհեստավորների տարեկան շրջանառությունը չէր անցնում 100—200 ռուբլու սահմաններից[1]։

Նշված հարցերին հնարավորին չափով մոտիկից ծանոթանալու համար անհրաժեշտ է նախ և առաջ ներկայացնել մի քանի արհեստների մասին ժամանակակից և ականատես հեղինակների հաղորդած տվյալները։ Ընդ որում պետք է նկատել, որ Երևանի խանության վերջին տարիների և Արևելյան Հայաստանը ռուսական պետության միացնելուց հետո առաջին 2—3 տարվա մասին այդպիսի տվյալներ է հաղորդել գլխավորապես Ի. Շոպենը։ Մակայն, ցավոք, պետք է նշել, որ նրա հաղորդած այդ կարգի տեղեկություններն էլ հիմնականում վերաբերում են այն արհեստներին, որոնց ինքը հեղինակը համարել է գործարանային կամ ֆաբրիկային բնույթի։ Իսկ այդպիսիների տակ, ինչպես նշվեց, նա, ապակու գործարանից բացի, հասկացել է նաև օճառագործությունը, կաշեգործությունը, ներկարարությունը, ջրաղացներն ու դինգերը։

Օճառագործությամբ զբաղվում էին և՛ Երևանում, և՛ Գառնիբասարի մահալում, որտեղ, բաց Ի. Շոպենի հաղորդած տվյալներից, Շեյխ-Զադալի գյուղից 474 տղամարդ ու կին զբաղված էին օճառ եփելով։ Նրանք իրենց արտադրած օճառը տանում էին վաճառքի կամ այլ մթերքներով փոխանակելու նույն մահալի այլ գյուղեր, ինչպես և ուրիշ մահալներ[2]։ Երևանում և մահալներում պատրաստվող օճառը եղել է անորակ՝ ունեցել է սև գույն, անախորժ հոտ և ջրի մեջ վատ է լուծվել[3]։ Խանական շրջանում օճառի

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 9։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 856։

[3] Նույն տեղը։

պատրաստումը եղել է սարդարի մենաշնորհը, այն տրվել է կապալով՝ հօգուտ խանական դրամարկղի։ Այդ պատճառով էլ օճառագործությունը մեծ տարածում չի գտել, թույլ է զարգացել, իսկ օճառը ունեցել է շատ բարձր գներ։ Օճառը քաղաքի աշխատավոր բնակչության համար այնքան անմատչելի է եղել, որ մարդիկ օճառի փոխարեն օգտագործել են Արաքսի ափերի աղուտներում աճող մի տեսակ բույսի մոխիրը։ Քաղաքում օճառի պատրաստման մենաշնորհն անխախտ պահելու համար, արգելված է եղել առանց կապալառուի թույլտվության Գառնիբասարից այնտեղ օճառ բերելը։ Քաղաքում առանց կապալառուից թույլտվություն վերցնելու, ոչ ոք իրավունք չուներ օճառ պատրաստելու։ Պատրաստված օճառի մի զգալի մասը սարդարը ցածր գներով (մեկ բաթմանին տալով 2 մինալթուն, այն դեպքում, երբ շուկայում նրա մեկ բաթմանի ազատ վաճառքի գինը 3 մինալթուն էր) վերցնում էր իր տան համար[1]։ Երևանում օճառագործությամբ գրեթե բացառապես զբաղվում էին աղբրեջանցիները, որոնք օճառագործին կոչում էին սաբունչի («սաբուն»— օճառ)։

Կաշեգործական արհեստանոցները (դաբախանաները) գտնվում էին քաղաքի Դարաքենդ (Ջորագյուղ) կոչված թաղամասում՝ Զանգու գետի ափին՝ 32-ի հասնող կրպակների ձևով[2]։ Տեղական՝ Երևանի խանությունից (հետո՝ Հայկական մարզ) ստացվող մորթիներից ու կաշիներից բացի, այստեղ վերամշակվում էին նաև Բայազետի ու Մակուի կողմերից բերվող հազարավոր մորթիներ ու կաշիներ։ Ի. Շոպենը նշում է, որ տարեկան միջին հաշվով Երևանի դաբախանաներում մշակվում են մինչև 4000 մեծ և 25.000 մանր մորթիներ[3]։ Տեղական շուկաներում մշակված մեծ կաշիները վաճառվել են հատը 3 ռուբլի արծաթով, իսկ փոքրերը՝ 80 կոպեկով։ Ըստ այդմ ստացվում է, որ Երևանի 32 դաբախանաների տարեկան արտադրանքը կազմել է ընդամենը 32.000 ռուբլի (25.000×80 կ.+4000×3 ռ.), իսկ յուրաքանչյուր դաբախանայինը՝ 1000 ռուբլի։ Երևանում այդ ժամանակներում կաշեգործների թիվը եղել է 38[4], հետևապես ամեն մի դաբախանային ընկել է մոտավորապես 1,16 աշխատող, իսկ յուրաքանչյուր աշխատողի տարեկան արտադրանքը հումքի արժեքի հետ միասին

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 856։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 857։

[4] Տե՛ս № 2 ապյուսակը։

կազմել է 842 ռ. 20 կ. (արծաթ դրամով հաշված)։ Այստեղից էլ միանգամայն պարզ է, որ դաբաղանոցները եղել են փոքրիկ ձեռնարկություններ և դրանց արտադրանքն ունեցել է միանգամայն համեստ չափեր։

Կաշեգործ վարպետներից ոմանք, ինչ-որ բույսի սերմերի օգնությամբ, հում կաշին մշակելով՝ դարձրել են սագրի[1]։ Կաշուց սագրի պատրաստելը ազատ է եղել[2]. դրանով զբաղվող վարպետները կապալառուի հետ ոչ մի գործ չեն ունեցել։ Կաշեգործներից ոմանք էլ զբաղվել են կաշին զանազան գույներով (սև, կարմիր, դեղին) ներկելով։ Ի. Շոպենը գրում է, որ այստեղի կաշիների որոշ տեսակներ եղել են շատ բարձրորակ[3]։

Պարսկական տիրապետության շրջանում Երևան քաղաքում կաշեմշակումը ենթարկվել է հարկման։ Տվյալ կաշին կամ մորթին առանց կապալառուի դրոշմանշման (կնիքելու), արգելվում էր վաճառել։ Դրոշմանիշ դնելու համար կապալառուն յուրաքանչյուր 3 ոչխարի կամ այծի մորթու համար վերցնում էր մեկական շահի (2 կոպ. արծաթ), իսկ յուրաքանչյուր գոմեշի կամ եզան կաշվի համար՝ երկու շահի (4 կ. արծաթ)[4]։

Երևանի խանության բոլոր «կաշեգործարանները» տեղադրված էին միայն Երևան քաղաքում, մյուս մահալներում «կաշեգործարաններ» չկային։ Այդ պարզ երևում է նրանից, որ Շոպենը ամբողջ Հայկական մարզում հիշատակում է 45 դաբաղանոցներ, որոնցից 32-ը Երևանում, 1-ը՝ Նախիջևանում և 12-ը՝ Օրդուբադում[5]։

Ինչպես տեսանք, ներկարարները բաժանվում էին երկու խմբի՝ շիլաչիների և բոյաչիների։ Դրանցից առաջինները ազատ էին հարկադրումից և ներկում էին կարմիր ու այլ գույներով, իսկ երկրորդները ենթակա էին հարկադրման և ներկում էին կապույտ գույնով։ Կապույտ գույնով ներկող պետական ներկատները Շոպենը համարում է գործարանային տիպի, միաժամանակ նշելով, որ դրանք ունեն շատ հասարակ կառուցվածք։ Ըստ նրա խոսքերի, այդ ներկատներից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում էր

[1] Սագրին ֆրանսերեն բառ է։ Սագրի կոչվել է յուրահատուկ ձևով մշակած՝ ձիու, էշի կամ ջորու կաշին։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 857։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը։

[5] Նույն տեղը։

«հասարակ խրճիթ, երկու կավե կարասներ և երկու փայտ, որոնցով խառնում էին ներկվող իրերը՝ ներկը հավասարեցնելու համար»[1]։ Միանգամայն տարբեր կարգի իրեր միաժամանակ լցնում էին կարասները և միաժամանակ էլ հանում։ Մեկ անգամ օգտագործված լուծույթը կարող էր օգտագործվել նաև երկրորդ, երրորդ անգամ։ Ըստ երևույթին, հենց դրանից է մնացել ժողովրդի մեջ գործածվող դարձվածքը՝ «բոյախանի կարաս է, ինչ է», այսինքն՝ հո բոյախանի կարաս չէ, որ գործվածքը գցես ու հանես, և արդեն ներկված, պատրաստ լինի։

Երևան քաղաքից բացի, բոյախանաներ կային նաև Դարալիչադի, Գյոգչայի, Զանգիբասարի, Գառնիբասարի և Վեդիբասարի մահալներում։ XIX դ. 20-ական թվականների վերջին ամբողջ Հայկական մարզում եղել են այդպիսի 29 «գործարաններ»[2]։

Ներկարարը կամ կապալառուն, պայմանների համեմատ, իրավունք չուներ հաստատված գնից ավելի վերցնելու։ Ըստ սահմանված կարգի, նա իրավունք ուներ յուրաքանչյուր մեկ ստիլ քաշ ունեցող բրդյա թելից և մեկ արշին բրդյա գործվածքից վերցնելու 4-ական շահի (8 կ. արծաթ), իսկ մեկ ստիլ բամբակի մանվածքից և մեկ արշին բամբակի գործվածքից՝ 2-ական շահի[3]։

Ի. Շոպենը վկայում է, որ Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալուց հետո, բոյախանաները աստիճանաբար կորցնում են իրենց նախկին նշանակությունը։ Նա դրա պատճառները համարում է՝ ա) ներկանյութի թանկությունը, որը առաջացել էր որոշ ժամանակ Պարսկաստանի սահմանով կատարվող ինդիգոյի ներմուծման արգելումից, այն դեպքում, երբ ներկելու վարձը մնացել էր նույնը, և բ) եվրոպական ավելի բարձրորակ ապրանքների մրցակցությունը. տեղացիների մի մասը, որ նյութապես բարվոք վիճակում էր գտնվում, գերադասում էր եվրոպական ապրանքները, իսկ բոյաչիների ներկած ապրանքների սպառողները մնում էին միայն բնակչության չունևոր զանգվածները[4], որոնք առհասարակ քիչ գնողունակություն ունեին։ Բայց և այնպես բոյախանաները շարունակում են գոյություն ունենալ շատ երկար ժամանակ, բավարարելով տեղական բնակչության պահանջները։

[1] Տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области էջ 859։

[2] Նույն տեղը, էջ 859—860։

[3] Նույն տեղը, էջ 860։

[4] Նույն տեղը։

Ի. Շոպենը բավական մանրամասնությամբ է խոսում Հայկական մարզի 20-ական թվականների վերջին ունեցած գործող և խափանված ջրաղացների և դինգերի մասին՝ բերելով հետաքրքիր տեղեկություններ դրանց քանակի, վիճակի, աշխատանքային պրոցեսների և այլ հարցերի վերաբերյալ[1]։

Ըստ նրա հաղորդած տվյալների, Երևանի ջրաղացները և դինգերը արտահայտված էին հետևյալ թվերով.

Աղյուսակ № 3

	Ջրաղացներ						Դինգեր					
	Գործող		Խափանված		Ընդամենը		Գործող		Խափանված		Ընդամենը	
	Հատացանների քիվը	աչքերի քիվը	Հատացանների քիվը	աչքերի քիվը	Հատացանների քիվը	աչքերի քիվը	դինգերի քիվը	աչքերի քիվը	դինգերի քիվը	աչքերի քիվը	դինգերի քիվը	աչքերի քիվը
Երևան քաղաքում	47	47	—	26	47	73	6	12	—	9	6	21
Ամբողջ Հայկական մարզում . . .	1456	681	158	1133	1618	1814	138	83	—	70	138	159[2]

Ջրաղացներն ունեին հասարակ կառուցվածք։ Դրանք սովորաբար բաղկացած էին ջրաղացաքարից, որը տեղադրված էր նույն մեծությամբ, բայց ավելի բարակ, մի այլ, անշարժ քարի վրա, ուղղաձիգ ուղղությամբ մի առանցքից, որը վերևում հատուկ հարմարանքով մտնում էր ջրաղացաքարի վրա փորված փոսիկի մեջ, իսկ ներքևի ծայրում իր վրա կրում էր թևավոր անիվ[3]։ Ջուրը մի քանի մետր բարձրությունից հարվածելով թևավոր անիվին, այն դնում էր շարժման մեջ։ Թևավոր անիվի շարժումը ուղղահայաց առանցքի միջոցով հաղորդվում էր ջրաղացաքարին և վերջինս էլ սկսում էր պտտվել։ Ջրաղացաքարի շարժումը կանոնավորում էին փայտյա հատուկ լծակով, որը կապված էր պտտվող «մեխանիզմին», այդ նույն արդյունքին կարելի էր հասնել նաև ջրի ավելացման ու պակասեցման միջոցով։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 863—865։

[2] *Նույն տեղը, էջ 863—864։*

[3] *Նույն տեղը, էջ 863։*

Ջրաղացն իր շենքով, որը սովորական խղճուկ մի հյուղ էր ներկայացնում, և մյուս բոլոր հարմարանքներով միասին վերցրած, նույնիսկ 100 ռուբլու արժեք չի ունեցել[1]։ Ջրի անկման ուժին համեմատ, ջրաղացաքարերը լինում էին մեծ կամ փոքր։ Շոպենը վկայում է, որ մեծ ջրաղացաքար ունեցող ջրաղացները մեկ օրում (24 ժամում) կարող էին աղալ ավելի քան մեկ խալվար

Ջրաղացներ Զանգվի (Հրազդանի) վրա, նկար՝ Ս. Ղարիբյանի (Երևանի պատմության թանգարան)։

(30 փութ) հացահատիկ, իսկ փոքր քարեր ունեցողները՝ 15—20 բաթման[2]։ Ջրաղացներից 32-ը պատկանում էին քաղաքի բնակիչներին, իսկ մնացածները՝ սարդարին, մյուս խաներին և վանքերին։ Սարդարական և խանապատկան ջրաղացները Հայկական մարզի կազմակերպումից հետո համարվեցին պետական։ Երևա-

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 864։

[2] *Նույն տեղը։*

նում խանական շրջանում հատկապես հայտնի էր Զանգվի վրա, կամուրջից վերև գտնվող ինը աչքանի («դոխկուզ-դայիրման») ջրաղացը[1], որը հետագայում էլ մնաց իբրև գործող ջրաղաց։

Դինգերի (սանդ, հավանգ) միջոցով օրիզը (չալթուկը) վեր էին ածում բրնձի, այն՝ մինչ այդ աղցկացնելով նախ թեթև ջրաղացաքար ունեցող ջրաղացով։ Սրանք ևս առանձին բարդություն չունեին։ Ի տարբերություն ալրաղացների, դինգերում, մինչև օրիզը վեր էր ածվում սովորական բրնձի՝ կատարվում էին երեք և ավելի պրոցեսներ[2]։ Լավորակ օրիզի ամեն մի խալվարից ստացվում էր կես խալվար բրինձ[3]։

Նշվածների համեմատությամբ ավելի խղճուկ էին և չնչին արժեք ունեին մաշկակարանոցները, դարբնոցները, վարսավիրանոցները, ջուլհակի փայտյա դազդահը, պղնձագործի խանութը և այլն, և այլն։ Շատ արհեստավորներ չունեին նույնիսկ իրենց կըրպակը, աշխատանքը կատարում էին ոտքի վրա, կամ իրենց տանը (կոշիկ պայտողներ, վրանագործներ, ջուլհակներ և այլն)։

Խանական շրջանի երևանի ամենաբազմամարդ արհեստներից մեկը վարսավիրությունն էր։ Սափրիչները սովորաբար ունեին իրենց փոքրիկ կրպակները և երես սափրելուց բացի զբաղվում էին նաև «վիրաբուժությամբ»՝ «արյուն առնելով» և պատավական ապեղանիների միջոցով վերքեր բուժելով։

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում համեմատաբար քիչ հայտնի երկու արհեստներ՝ դաջողները և արդուկողները։ Դաջողները զբաղվում էին շիաությամբ՝ բամբակյա մետաքսի վրա տպելով (դաջելով) զանազան նախշեր, ինչպես նաև վիշապներ ու ձիեր։ Շիաությունից բացի, նրանք «սփռոցների վրա սովորաբար պատկերում (դաջում) էին պնակներ, գդալներ, պատառաքաղներ»[4]։ Արդուկողները սովորական շոր արդուկողներ չէին։ Նրանք փոխարինում էին Եվրոպայում տարածված gauffer (կամ goffer)-ներին, որոնք կտավի և դիպակի վրա հորինում էին նուրբ ծալքեր։ Երևանի արդուկողներն էլ հատուկ արդուկների

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 475—476։ Տե՛ս նաև՝ Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 45։

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 865։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը, էջ 851։

միջոցով գործվածքի վրա հորինում էին «բավական գեղեցիկ և անհարթելի նախշեր»[1]։

Ջուլհակությունը եղել է խանական Երևանի տարածված արհեստներից մեկը։ Ի տարբերություն մյուս շատ արհեստավորների, որոնք ունեին իրենց խանութները կամ կրպակները (արհեստանոցները), ջուլհակները սովորաբար աշխատում էին իրենց տանը, այնտեղ սարքված «դազդահ»-ի վրա։ Յուրաքանչյուր դազդահի համար սարդարը իբրև հարկ վերցրել է տարեկան մեկ փութ (թոփ) բյաղ[2]։ Մանածագործությունը չի նշվում իբրև արհեստ (նրան նկատի չունենանք Երևանում գտնվող ներգաղթած մի մանածագործի՝ տե՛ս աղյուսակ № 1)։ Դա բացատրվում է նրանով, որ բամբակը, բուրդն ու մետաքսը մանվել են գրեթե բոլոր տներում. մանել են կանայք՝ ձախարակներով, իսկ հատուկ մանող արհեստավորներ չեն եղել, և դրա պահանջը չի զգացվել։ Հատուկ արհեստներ էին համարվում նաև գինեգործությունն ու այգեգործության հետ կապված մի քանի այլ զբաղմունքներ։ Թեև դրանց համար պահանջվում էր բավական մեծ հմտություն, սակայն յուրաքանչյուր այգեգործ միաժամանակ և՛ գինեգործ էր, և՛ օղի քաշող։

Արհեստների ներսում թույլ էր արտահայտված մասնագիտացումը՝ աշխատանքի բաժանումը։ Չնայած այդպիսի մասնագիտացում նկատվում էր տակավին XVII դ., սակայն նույնիսկ XIX դ. 50—60-ական թվականներին «առանձին արհեստների բաղկացուցիչ մասերն ու ճյուղերը դեռևս չէին հասցրել վերջնականապես անջատվելու» և ինքնուրույն մասնագիտացումներ կազմելու[3]։ Առհասարակ «աշխատանքի բաժանումն ու մասնագիտացումը քիչ էր զարգացած», արհեստները Անդրկովկասում ըստ մասնագիտության ճյուղավորվել էին միայն մեծ քաղաքներում, որտեղ «արհեստավորական գործունեության առանձին ճյուղեր» ավյալ արհեստավորների համար «ապահովում էին» բավարար չափով «վաստակ»[4]։

Ցարական պաշտոնական շրջաններում տարածված էր այն սխալ կարծիքը, թե ընդհանրապես Անդրկովկասում արհեստների կատարելությունը շատ ցածր է, իսկ նրանց արտադրած ապրանք-

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 852։

[2] Տե՛ս Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 50։

[3] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 82։

[4] Նույն տեղը։ Տե՛ս նաև՝ էջ 239—240։

ները՝ կոպիտ ու անորակ։ Հայկական մարզի արհեստների մասին այդպիսի աննպաստ կարծիք սկսվել է Շոպենից և հետագայում տարածվել մի շարք հեղինակների միջոցով։ Ի. Շոպենը միանգամայն ճիշտ նկատելով, որ Հայկական մարզի արհեստավորը դեռևս «զուրկ է դաղգահից», կատարելագործված «գործիքներից», «գործում է ձեռքերով և ոտքերով», դրա հետ միասին արտահայտում է այն սխալ կարծիքը, որ իբր երկրի արհեստը իր զարգացման աստիճանով հիշեցնում է այն նախնական ժամանակները, երբ «մարդը հենց նոր էր... թողել իր անտառն ու քարանձավները», իսկ երկիրը, իբր, դեռևս «կիսավայրենի» վիճակում է[1]։ Ինչ խոսք, որ Շոպենի ակնարկած ժամանակների Հայաստանում արհեստներն իրենց թվով, գործիքներով, արտադրողականությամբ, աշխատանքի բաժանման աստիճանով, իսկ որոշ արհեստներ էլ նաև իրենց արտադրանքի որակով գտնվում էին ցածր աստիճանի վրա։ Արհեստավորները թվով համեմատաբար քիչ էին, նրանց գործիքները կոպիտ էին, աշխատանքի արտադրողականությունը՝ ցածր։ Սակայն այդ նույնը չի կարելի ասել նրանց վարպետության, հմտության և արտադրած իրերի որակի մասին։ Այդ պարզ կերպով երևում է հենց իր՝ Շոպենի մի այլ հիշատակությունից, որտեղ նա, դարձյալ խոսելով արհեստների մասին՝ Հայկական մարզի առաղձագործներին բնութագրում է իբրև բարձր վարպետություն, աշխատանքային մեծ հմտություն ունեցողների, իսկ նրանց արտադրած իրերը համարում աքանչելի։ Ահա թե ինչ է գրում նա. «Այստեղի (Հայկական մարզի — Թ. Հ.) բոլոր արհեստավորների մեջ առանձնապես ուշագրավ է առաղձագործը. նրա ոտքերը վարժված են աշխատել գրեթե այնպիսի վարպետությամբ, ինչպես և ձեռքերը, և, նայելով նրան, թե ինչպես նա գետնին նստած՝ ոտքերով պահում է՝ ձեռքերով պատրաստվող իրը, կարելի է նրան անվանել քառաձեռ մարդ։

Երևանի առաղձագործների արվեստը ասիական մեծ պատուհաններ պատրաստելու մեջ հաղթանակում է։ Այդ պատուհանները, որոնք բաղկացած են ամենատարբեր և գեղեցիկ նախշերով հավաքված ձողիկներից, գույնզգույն ապակիներ դնելու համար ունեն մանր եղրանախշեր, որոնք կազմում են հիանալի պատկերներ, ճիշտ այնպիսիները, ինչպիսիք ներկայացնում են կալեյդոսկոպները»[2]։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 842։

[2] Նույն տեղը, էջ 850։

Անդրկովկասի արհեստների պատմության լավագույն մասնագետ Ս. Ա. Եղիազարովը, փաստական նյութի հիման վրա և իբրև ականատես հեղինակ, վկայում է, որ XIX դարում անդրկովկասյան քաղաքների արհեստները գտնվում էին «զարգացման շատ թե քիչ բարձր աստիճանի վրա»[1]։ Անդրկովկասի արհեստները նույնիսկ XIX դարի 80—90-ական թվականներին իրենց կազմով եղել են բարդ արհեստներ։ Եղիազարովը գրում է, որ, օրինակ, արծաթագործներն (զարգարներ) ու ոսկերիչները իրենց արհեստները հաջողությամբ կատարելու համար պետք է գիտակ լինեին նրա տեխնիկական բոլոր մանրամասնություններին ու մասերին, որ ոսկերիչն ու արծաթագործը կատարում էին «ոսկերչության» և «արծաթագործության» բարդ արհեստների մեջ մտնող ամենազանազան կերպ աշխատանքները՝ սկսած իրերի ձևերի պատրաստումից մինչև թանկարժեք քարերի ընտրություն կատարելն ու նրանց հարգի (проба) որոշելը[2]։ Նույնպիսի բարդ արհեստ էր և գինագործությունը։ Անդրկովկասի գինագործ արհեստավորը պատրաստում էր հրացանի ու ատրճանակի բոլոր մասերը և ամեն տիպի սառը զենքեր։ Եղիազարովի ասելով, տեղացի արհեստավոր-գինագործներն իրենց արհեստը այնպիսի կատարելության էին հասցրել, որ նույնիսկ «այնպիսի ոչ մեծ գավառական քաղաքում, ինչպիսին Նախիջևանն էր, գինագործները պատրաստում էին նորագույն սիստեմի զենքեր...»[3]։

Հայտնի է, որ միջնադարյան Հայաստանում գործում էին տասնյակ արհեստներ, որոնք հասել էին զարգացման բարձր աստիճանի։ Հայաստանի գինագործները, ոսկերիչներն ու արծաթագործները, բրուտները, ջուլհակները, քարտաշներն ու որմնադիրները և ուրիշներ մեծ վարպետության էին հասցրել իրենց արհեստները և հայտնի էին ոչ միայն երկրի ներսում, այլև հարևան ու հեռավոր շատ երկրներում։ Սակայն մոնղոլական տիրապետության և նրան հաջորդած թուրքական ցեղերի ու պարսկա-օսմանական տիրապետության մոայլ ժամանակներում անկում են ապրում Հայաստանի երբեմնի ծաղկած քաղաքները՝ իրենց արհեստներով և առևտրով հանդերձ։ Հայաստանի բազմաթիվ քաղաքներ վերանում են պատմական ասպարեզից, իսկ իրենց գոյությունը պահպանած քաղաքներն էլ կորցնում են նախկին նշանակությունը։ Այնպես որ,

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 82։

[2] Նույն տեղը, էջ 81։

[3] Նույն տեղը, էջ 81—82։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու ժամանակ, ինչպես նշում է պրոֆ. Թումանյանը, երկրի քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով, նրա արհեստները հասել էին ծայրահեղ անկման[1]։ Բայց հայ ժողովուրդը չէր կորցրել իր հմտությունը արհեստների բնագավառում, այդ ժամանակներում իրենց գործին վերազանց տիրապետող բազմաթիվ վարպետներ կային Թիֆլիսում, Բաքվում, Շամախիում, Նուխիում, Ախալցխայում[2], ինչպես նաև Երևանում (կարելի է ավելացնել պրոֆ. Թումանյանի առաջարկած ցուցակին)։ Նկատի ունենալով պատմական այդ անհերքելի ճշմարտությունը, պրոֆ. Թումանյանը գտնում է, որ Հայկական մարզի արհեստների մասին Շոպենի տված ցածր գնահատականը «չի կարելի համարել ճիշտ գնահատական»[3]։ Շատ մեղմ է ասված։ Շոպենի այն արտահայտությունը, թե «արհեստները այստեղ, դեռևս կիսավայրենի երկրում, ամեն քայլափոխում հիշեցնում են այն ժամանակները, երբ մարդը ինքը նոր էր...թողել իր անտառներն ու քարանձավները (ընդգծումները մերն են—Ք. Հ.)»[4],—պատմական իրականության գեհկացում է և եղած դրությունը ներկայացնում շրջված ձևով։ Այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե պարսկական ծանր տիրապետության ողբալի արդյունքներին, որի մասին հազիվ թե որևէ մեկը կարող է տարակուսել, այլ մի հին, քաղաքակրթված ժողովրդի ունակություններին, ժողովուրդ, որը օտարի ծանր լծի տակ երկար ժամանակ հեծել է, բայց չի կորցրել իր վարպետությունն արհեստների մեջ։ Հարկ չկա նաև ապացուցելու, որ պարսկական տիրապետության շրջանում արհեստներից ոմանք հետադիմել են, ոմանք դադարել գոյություն ունենալուց, իսկ մի շարք արհեստներ էլ իրենց կատարելությամբ շատ են հետ մնացել ժամանակաշրջանի ընդհանուր մակարդակից։ Բայց և այնպես, շատ արհեստներ, շնորհիվ պատմական մեծ ժառանգության անհաղթելի տրադիցիաների, մնում էին բարձր մակարդակի վրա։ Ընդ որում, չպետք է շփոթել երկու միանգամայն տարբեր հասկացողություններ, չպետք է շփոթել գործիքների կատարելագործման աստիճանը, աշխատանքի բաժանման խորությունն ու արտադրության մակարդակը արհեստավորների անձնական հմտությունների հետ։ Արհեստավորների գործիքները անհամեմատ հասարակ էին, արհեստի բնագավառում անմրցակից իշխում էր ձեռքի աշխատանքը, աշխատանքի բաժանումը արհեստի ներսում թույլ էր, կամ իսպառ բացակայում էր, աշխատանքի արտադրողականությունը շատ ցածր էր, սակայն վարպետները բազմագործունյա էին, լավ էին տիրապետում իրենց գործին և նրանց ձեռքի աշխատանքը ուներ համեմատաբար բարձր որակ։

Արհեստի ներսում աշխատանքի բաժանման թույլ լինելու կամ բացակայելու պատճառով արհեստավորների աշխատանքային գործիքները ենթ մասնագիտացումների համար եղել են անձեռնտու. դրանք հարմարեցված են եղել արհեստների բարդ կոմպլեքսին, և յուրաքանչյուր գործիք օգտագործվել է մեկից ավելի աշխատանքային պրոցեսների համար։

Արհեստների, դրանց արտադրության և արտադրած ապրանքների վաճառքի կազմակերպման, արհեստավորների արտադրական ու բարոյական փոխադարձ կապի, արհեստավորներից վերցվող հարկերի ու տուրքերի սիստեմի, հասարակության, քաղաքի ներքին կյանքում նրանց խաղացած դերի մասին անհնար է գաղափար կազմել առանց համքարությունների, որովհետև արհեստավորների, առևտրականների և, նույնիսկ, սևագործ բանվորների մեծագույն մասը ընդգրկված էր համքարություններում։

Համքարությունները ունեցել են բազմադարյան պատմություն։ Անդրկովկասի քաղաքների համքարությունների ուսումնասիրությամբ եռանդագին կերպով զբաղվել են հատկապես XIX դարում։ Այդ դարը անդրկովկասյան համքարությունների համար մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ դրանք հասան իրենց լիակատար զարգացմանը և դրա հետ միաժամանակ, նույն դարի վերջերին, մեքենայական արդյունաբերության հարվածների տակ, աստիճանաբար վերացան պատմական ասպարեզից։ Համքարությունների պատմական ճակատագրի այդպիսի փոփոխությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց դրանց նկատմամբ։ Այդ հարցով առանձնապես մտահոգված էր Թիֆլիսում հրատարակվող «Մշակ» լրագիրը, որի էջերում, հատկապես 80—90-ական թվականներին, ավելի հաճախակի են երևում Անդրկովկասի համքարություններին նվիրված հոդվածներ։ Համքարությունների տոմարությունների հավաքման և նրանց կյանքի ուսումնասիրման բնագավառում հսկայական գործ են կատարել Պ. Շանշիևը, Յու. Ֆ. Հախվերդովը, Խ. Մատանկոզյանը, Լ. Զագուրսկին, Ավ. Ասլան-

[1] Проф. О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954, էջ 20։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը։

[4] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 842։

յանցը և, առանձնապես, Ս. Ա. Եղիազարովը, որի համքարություններին նվիրված աշխատությունը՝ նշված մյուս հեղինակների աշխատությունների նման սկզբնաղբյուր լինելով հանդերձ, միաժամանակ այդ ընագավառի ամենախոր ուսումնասիրությունն է, չնայած նրանում կան նաև վիճելի հարցեր։

Նշված հեղինակներից ոմանց (Զագուրսկի, Հախվերդով, Մառանկոզյան, Ասլանյանց) աշխատությունները վերաբերում են առանձին քաղաքների (Թիֆլիս, Ախալցխա, Կարս, Էրզրում) համքարություններին, իսկ ոմանց (Շանշիև, Եղիազարով) աշխատությունները՝ Անդրկովկասի բոլոր քաղաքների համքարություններին՝ ընդհանրապես[1]։ Թե՛ առաջինները և թե՛ երկրորդները հավասար չափով կարող են նաև Երևանի համքարությունների համար առաջնակարգ սկզբնաղբյուրներ համարվել, որովհետև Անդրկովկասի բոլոր քաղաքների համքարություններն իրենց սովորություններով, կազմակերպական ձևերով, արտադրանքի ու վաճառքի կազմակերպման մեթոդներով ու տրադիցիաներով համանման էին և չունեին որևէ էական տարբերություն։ Երևանի համքարությունների կյանքը արտահայտող սկզբնաղբյուրներ են նաև Ի. Շոպենի և Երվանդ Շահազիզի աշխատությունները[2]։ Ճիշտ է, վերջինիս աշխատությունը լույս է տեսել մեր դարի 30-ական թվականներին, սակայն նրանում համքարություններին վերաբերող մի քանի մանրամասնություններ արդեն՝ գառամյալ հասակում դնելով հեղինակը նկարագրել է իբրև ականատես։

Տարակուսանքի տեղիք կարող է տալ, թե ինչու Երևանի համքարությունների կարգերի ամբողջական պատկերը տալիս ենք XIX դ. առաջին քառորդի տակ, չէ՞ որ համքարությունները գոյություն ունեին շատ վաղուց և գոյություն ունեցան դրանից հետո էլ՝ մինչև նույն դարի վերջերը։ Ավելի վաղ ժամանակների տակ ներկայացնելը բացառվում է, որովհետև մեր աշխատությունը ժամանակագրական առումով իր մեջ ընդգրկում է XIX դ. սկզբից մինչև յոթանասունական թվականների վերջերը։ Այնուհետև, XIX դարի ընթացքում Անդրկովկասի քաղաքների, այդ թվում Երևանի համքարությունները էական փոփոխություններ չեն կրել[1], նրանք 70-ական թվականներին նույնն էին, ինչ որ դարի սկզբներին։ Կառավարական օրգանների կողմից կատարված փոփոխություններն էլ, որոնք ամբողջապես վերաբերում էին համքարությունների արտաքին կողմին, համքարությունների ու քաղաքային վարչական հիմնարկների հարաբերություններին ու համքարության ղեկավար օրգաններին, այնուամենայնիվ չկիրառվեցին Երևանի համքարությունների նկատմամբ և դրանք իրենց կարգ ու կանոնով, առանց էական էվոլյուցիա ապրելու, իրենց գոյությունը պահպանեցին մինչև XIX դ. վերջերը։ Հետևապես նշված սկզբնաղբյուրները, որոնք Անդրկովկասի համքարությունները ներկայացրել են գլխավորապես 50—90-ական թվականների դրությամբ, միանգամայն համապատասխանում են և XIX դ. առաջին քառորդին՝ հանդիսանալով արժանահավատ ու ստույգ աղբյուրներ։ Հենց այդ հանգամանքներն էլ հաշվի առնելով՝ Երևանի արհեստավորների ու առևտրականների համքարական կարգերի մասին խոսում ենք այստեղ՝ XIX դ. առաջին քառորդի տակ, իսկ նրա կրած մասնակի փոփոխությունների վերաբերյալ խոսք կլինի հետագայում, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուն հաջորդած ժամանակաշրջանին անդրադառնալիս։

Համքարությունների մեջ ընդգրկված էին արհեստավորները, առևտրականները, բանվորները և այլն[2]։ Համքարություններից դուրս չէին «նույնիսկ բեռնակիրները, ջրկիրները, փայտ կտրողները և կառապանները»։ Շնորհիվ այն բանի, որ քաղաքային դասի մեջ հասարակական-դասակարգային շերտավորումը ուժեղ չէր արտահայտված, Անդրկովկասի քաղաքների առևտրական համքարությունները իրենց արտաքին կազմակերպական ձևերով քիչ էին տարբերվում «մյուս, մաքուր արհեստավորական համքարություններից», բացառությամբ հարուստ ու անվանի վաճառականների, որոնք համեմատաբար փոքր թիվ էին կազմում և պատկանում էին հասարակության արտոնյալ խավերին[3]։

---

[1] П. Шаншиев, Два слова об амкаре, Тифлис, 1857, Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, Тифлис, 1883. Խ. Մառանկոզյան, Էրզրումի և Կարսի արհեստավորների համայնական կարգերը («Մշակ» լրագրում)։ Л. Загурский, Поездка в Ахалцихский уезд в 1872 г., Тифлис, 1873. С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, Казань, 1891. Ա վ. Ասլանյանց, Ախալցխայի համքարությունը («Մշակ» լրագրում)։

[2] Նկատի ունենք Ի. Շոպենի «Исторический памятник Армянской области» և Երվանդ Շահազիզի «Հին Երևանը» աշխատությունները։

[1] Պետք է ասել, որ համքարություններն առհասարակ իրենց սովորություններով շատ պահպանողական են եղել, մեկ անգամ արդեն համքարության կենցաղում տեղ գտած այս կամ այն սովորությունը պահպանվել է երկար ժամանակ, նույնիսկ մինչև համքարության վերացումը։

[2] П. Шаншиев, Два слова об амкаре, Тифлис, 1857, էջ 14։

[3] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 2։

Հաստատված կարելի է համարել, որ մեզ մոտ՝ Հայաստանի քաղաքներում, համքարութիւնները ծագել են X[1]—XI դարերում, այնուհետև երկրի քաղաքական անկայուն և ելևէջներով հարուստ պատմության շնորհիվ համքարական կազմակերպություններն էլ անցել են անհամաչափ զարգացման ուղի, երբեմն երկրի այս կամ այն քաղաքում նրանք առաջադիմել, երբեմն երկրի մեծագույն մասում զգալիորեն հետադիմել են, իսկ երբեմն էլ ամբողջական համքարութիւններ վերացել են ասպարեզից։ Չնայած այդ բոլորին, XIX դ. սկզբին Երևանն ուներ մի քանի տասնյակի հասնող արհեստավորական և առևտրական խմբեր՝ պրոֆեսիաներ, որոնց բազայի վրա գոյություն ունեին առևտրական և արհեստավորական համքարութիւններ։

Համքարութիւնները կազմված էին ըստ զբաղմունքների, և նրանց մեջ սովորաբար մտնում էին միևնույն զբաղմունքն ունեցող անձինք։ Համքարական միութիւնների առանձին անդամների միջև կապ էր ստեղծվում և պահպանվում «տնտեսական, կրոնա-իրավական, վարչա-դատական և հասարակական շահերի», ինչպես և «փոխադարձ օգնության» գաղափարի շնորհիվ[2]։

Համքարութիւնները արհեստավորների, առևտրականների և, նույնիսկ, բանվորների եղբայրութիւններ էին, որոնք դեկավարվում էին համքարութեան անդամների կողմից ընտրվող գլխավոր վարպետի (ուստաբաշու) կողմից[3]։ Համքարութիւնները հասարակության մեջ առանձին շերտեր կամ կարգեր չէին. նրանց անդամների թիվը սահմանափակ չէր, նրանցում ընդունվում էին հասարակության տարբեր շերտերին պատկանող, բայց իրենց որոշակի զբաղմունքն ունեցող բոլոր անձինք[4]։ Անդրկովկասի և Արևմտյան Հայաստանի համքարութիւնները գրավոր օրենքներ կամ սահմանադրութիւններ չեն ունեցել։ Նրանց ներքին կարգ ու կանոնը, իրավունքներն ու պարտականությունները ամբողջապես բանավոր էին և համապատասխանում էին ժամանակի ընթացքում ստեղծված ավանդութիւններին, սովորութիւններին, այսինքն՝ ադաթին։ Այս տեսակետից բացառութիւն էին կազմում միայն էրզրումի դարբինների էսնաֆութիւնն ու Ախալցխայի մի քանի համքարութիւններ, որոնք ունեին իրենց գրավոր սահմանադրութիւնները[1]։

Երևանի համքարութիւնները նույնպես իրենց սահմանադրութիւնն ու կանոնադրութիւնը չեն ունեցել, նրանք էլ դեկավարվել են ադաթի՝ սովորութեան ու ավանդութիւնների հիման վրա։ Նրանց մոտ այդ բանավոր օրենքը կոչվել է «յոլ» (ճանապարհ), որը սահմանադրութեան իմաստ է ունեցել և կատարվել է անշեղորեն՝ «առանց ճանապարհից շեղվելու»։ «Յոլը» խախտող համքարը ենթարկվում էր տուգանքի և զանազան այլ պատիժների։ Յոլի անշեղ կատարման հսկողութիւնն ընկած էր ուստաբաշու և համքարութեան մյուս պաշտոնյաների վրա. վերջիններս բոլորը ենթակա էին ուստաբաշուն[2]։

Համքարները կաշկանդված չէին միշտ միևնույն համքարութեան մեջ մնալու պարտավորութեամբ։ Նրանք ազատ կերպով կարող էին թողնել իրենց հին զբաղմունքը և ընտրել նոր զբաղմունք՝ մտնելով նոր մասնագիտութեան համապատասխան համքարութեան մեջ[3]։

Մենաշնորհի ենթարկելը խորթ էր համքարութիւնների համար։ Կային այնպիսի համքարութիւններ, որոնք բացառապես զբաղվում էին բարդ արհեստի առանձին ճյուղերով[4], սակայն նրանք երբեք չեն ձգտել ամբողջապես իրենց մենաշնորհը դարձնել[5]։ Համքարութիւնները արհեստավորների և առևտրականների համար միջոց են ծառայել մրցակցության դեմ պայքարելու[6]։ Այդ նպատակով նրանք կիրառում էին մի քանի կանոններ,

---

[1] Վ. Աբրահամյանը, հիմք ընդունելով հայկական մատենագրական մի քանի ավյալներ և մի շարք հայագետների կարծիքներ՝ միջնադարյան Հայաստանում համքարութիւնների առաջացումը կապում է X դարի հետ (տե՛ս նրա՝ «Արհեստանները Հայաստանում» աշխատութիւնը, Երևան, 1956, էջ 250)։

[2] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Заакавказьи, ч. II, էջ 2։

[3] Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, Тифлис, 1883, էջ 1։

[4] Նույն տեղը։

[1] Տե՛ս С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, Городские цехи, էջ XXVII—XXVIII, էջ 368, 381—390։

[2] Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 80։

[3] П. Шаншиев, Два слова об амкара, էջ 31։

[4] Ա. Մատնկոզյան, Էրզրումի և Կարսի արհեստավորների համայնական կարգերը («Մշակ», 1891 թ., № 65)։

[5] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 239—240։

[6] Проф. О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, էջ 55—56։

Դրանցից գլխավորներն էին՝ հում նյութի հավասարաչափ բաշխումը համքարության անդամների միջև, առանց ուստաբաշու գիտության ու համաձայնության համքարության այս կամ այն անդամին առանձին ու մասնավոր գործարքներ կատարելու խստիվ արգելումը (հումքի գնում, խանութի կամ կրպակի վարձակալում և այլն), արտադրության որակի (մի քանի համքարություններում անգամ աշխատավարձի) կանոնավորումը, մրցակցության դատապարտումը և այլն։ Արտադրության և վաճառքի մյուս շատ բնագավառներում ընդհանուր կանոնավորող միջոցառումների (խիստ ռեգլամենտացիայի) կարիք չկար[1], որովհետև նշված պայմանները միանգամայն ապահովում էին համքարությունների միջև և համքարությունների ներսում՝ նրա առանձին անդամների միջև մրցակցության խափանումը։ Ի տարբերություն արևմտաեվրոպական ցեխերի, որտեղ ռեգլամենտավորված (կանոնավորված) էր արհեստավորական ամբողջ արտադրանքը, նույնիսկ արտադրվող գործվածքի լայնությունն ու գույնը, Անդրկովկասի համքարություններում, այդ թվում և Երևանի համքարություններում արտադրանքի որակը չէր ենթարկված մանրամասն ռեգլամենտավորման։ Այստեղ բողոքի դեպքում հատուկ դատով որոշվում էր տրվյալ ապրանքի կամ հումքի պիտանի կամ ոչ պիտանի լինելը[2]։ Ոչ պիտանի («խարաբ») լինելու դեպքում արհեստավորը կամ առևտրականը ենթարկվում էր զանազան տույժերի։

Համքարություններում օրվա աշխատանքի որոշակի ժամանակամիջոց չէր սահմանված։ Աշխատանքը, կապված լույսի անհրաժեշտության և այս կամ այն արտադրության յուրահատուկ կողմերի հետ, սովորաբար սկսում էին արևածագին և դադարեցնում մայրամուտին[3]։ Այլ կերպ ասած, տարվա տարբեր ժամանակներում աշխատանքի ժամերը լինում էին տարբեր։ Ոչ արհեստավորական՝ առաջին անհրաժեշտության ապրանքներ վաճառող համքարությունները պարտավոր էին առևտուր կատարել նաև կիրակի օրերը՝ առավոտից մինչև կեսօր, որից հետո իրենց հայեցո-

[1] Տե՛ս С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 200—201, 167, 175։ «Մշակ», 1890 թ., № 108, 1891 թ., № 66։

[2] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 189։

[3] Նույն տեղը, էջ 184։

ղությամբ կարող էին փակել կրպակները[1]։ Առևտրական կրպակները բաց էին լինում նաև տոն օրերին[2]։

Առևտուրն ու արհեստները քաղաքներում կենտրոնացված էին որոշակի կետերում և կենտրոններում։ Պատրաստի արտադրանքի և հումքի վաճառահանման անփոխարինելի տեղը շուկան էր՝ բազարը, որտեղ սովորաբար գալիս էին և՛ տեղական՝ քաղաքային, և՛ դրսից եկող գնորդներ։ Այդ պատճառով արհեստավորների ու առևտրականների խանութներն ու կրպակները հիմնականում կենտրոնացած էին շուկաներում, որտեղ արհեստի կամ առևտրի յուրաքանչյուր տեսակ զբաղեցնում էր մի անկյուն, տեղամաս կամ շարք։ Արհեստների և առևտրի այդպիսի կենտրոնացումը միաժամանակ հեշտացնում էր ոստիկանական հսկողությունը և նպաստում էր խանի պաշտոնյաների ու կապալառուների կողմից արհեստավորներից ու առևտրականներից վերցվող հարկերի ու տուրքերի չափը որոշելուն ու հավաքելուն[3]։

Երևանի համքարություններն էլ ըստ իրենց արհեստի և զբաղմունքի, «շուկայում» և «չարսուներում» ունեին իրենց «խանութաշարքերը», բացառություն էին կազմում միայն կապույտ ներկողները, կաշեգործները ու կարմիր ներկողները։ Դրանցից առաջինները ու երկրորդները, ինչպես տեսանք, իրենց բոյախանաներն ու դարախանաները կենտրոնացրել էին Զանգվի ափին, իսկ շիլաշինների ներկատները գտնվում էին քաղաքի ծայրամասերից մեկում՝ Շիլաշի մահլայում[4]։ Ներկատների և կաշեգործների այդպիսի տեղաբաշխումը հետևանք էր այն բանի, որ, այդ արհեստները պահանջում էին բավական քանակությամբ ջուր և արտադրության մնացորդները կարող էին ապականել ամբողջ քաղաքը։

Համքարությունների մյուս կապող օղակը եղել է պաշտամունքը։ Ամեն մի արհեստ հնից ի վեր գտնվում էր հատուկ սրբի հովանավորության ներքո, որը համարվել է համքարության փիրը[5]։ Տար-

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учрежд. в Закавказьи, часть II, городские цехи, էջ 178—179։

[2] «Մշակ», 1888 թ., № 134։

[3] Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 25—26, 178—179։ С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 16—17։

[4] Բրվանդ Շահդի, Հին Երևանը, էջ 81։

[5] Տե՛ս П. Шаншиев, Два слова об амкаре, էջ 14—15։ Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 6—10։ «Մշակ», 1890 թ., № 98, 108 և 145, 1891 թ., № 65 և 67։ Л. Загурский, Поездка в Ахалцихский уезд, էջ 25—27։

բեր համքարութիւններ ունեցել են տարբեր փիրեր, սակայն երբեմն միևնույն փիրի պաշտամունքը դուրս կարող էր գալ մեկ համքարության շրջանակներից և տարածվել մի քանի համքարությունների վրա։ Որոշ համքարութիւններ իրենց փիր էին համարում մարգարիներին և սրբերին, որոշ համքարութիւններ՝ իրենց արհեստի առաջին ստեղծողին, իսկ որոշ համքարութիւններ էլ՝ առասպելական վարպետներին։ Փիրը և պաշտամունքը համքարությանը տվել են կրոնական եղբայրության բնույթ[1]։ Ճիշտ նույն ձևով էլ երևանի համքարութիւններն են ունեցել իրենց փիրերը։ Այսպես, օրինակ՝ երևանի ատաղձագործների համքարության փիրը համարվել է աստվածահայր Հովսեփը, կաշեգործներինը՝ Սիմեոն Ծերունին, դարբիններինը՝ Դավիթ մարգարեն, մաշկակարներինը՝ Մելիքսեդեկը և այլն»[2]։

Ի պատիվ իրենց փիրի, համքարութիւնները ամեն տարի կազմակերպել են տոնակատարութիւն, որոնք ուղեկցվել են շքեղ թափորներով, պատարագով, ճաշկերույթով, ինչպես և զոհաբերութիւններով՝ հօգուտ կալանավորների և մուրացկանների[3]։

Երևանի համքարները կիրակի օրերը մասնակցել են պատարագին, բոլորը պարտադիր կարգով զրոշակներով մասնակցել են եկեղեցական հանդեսներին։ Յուրաքանչյուր համքարություն ունեցել է իր զրոշակը, որի վրա աշխատանքային գործիքներից բացի նկարված է եղել նաև փիրի պատկերը։ Նրանք իրենց փիրին նվիրված ամեն տարվա տոնահանդեսը անց են կացրել եկեղեցիների բակերում, հատկապես՝ Շահար թաղամասում գտնվող Գևթեսեմանի մատուռի առջև։ Երվանդ Շահազիզի վկայության համաձայն, այդ մատուռը հատուկ վերանորոգման է ենթարկվել՝ համքարությունների կրոնական տոնահանդեսներն այնտեղ անցկացնելու համար[4]։

Անդրկովկասի պրովինցիալ քաղաքներում, արհեստավորների փոքրաթվության հետևանքով համքարությունների մասնատում շատ քիչ էր նկատվում։ Նրանց բաժանումը ըստ խմբերի ու ատրաբաժանումների կատարվում էր ազգային և կրոնական շարժառիթներով։ Նոր համքարությունների առաջացումը, հին համքարությունների մասնատումը մի քանի ինքնուրույն համքարությունների, ինչպես և որոշ հին համքարությունների վերացումը հիմնականում հետևանք էին արհեստագործության ու առևտրի զարգացման, արտադրության և առևտրի նոր ճյուղերի ու մասնագիտությունների առաջացման[1]։ Երևանն էլ Անդրկովկասի այն տիպի քաղաքներից էր, որտեղ արհեստավորներն ու առևտրականներն ըստ իրենց զբաղմունքների, համեմատաբար փոքր թիվ էին կազմում, և մեկ համքարության բաժանումը երկու կամ ավելի համքարությունների, խմբերի կամ ատրաբաժանումների, դրեթե բացառված էր։ Ընդհակառակն, այստեղ երկու կամ ավելի մասնագիտացումների գծով եղած արհեստավորները կարող էին միասին կազմել մեկ համքարություն, օրինակ՝ բոյաչիներն ու շիլաչիները միասին կազմում էին մեկ համքարություն՝ ներկարարների համքարությունը։

Միջնադարյան եվրոպական ցեխերի նման՝ համքարութիւնները էլ ենթարկվում էին քաղաքային իշխանութիւններին և ադմինիստրացիային։ Իսկ ներքին կյանքում նրանք ունեին նշանակալի ինքնուրույնություն[2]։

Փոխադարձ օգնության գաղափարը կազմում էր համքարության գլխավոր գաղափարներից մեկը։ «Համքարությունները,— գրում է Ս. Ա. Եղիազարովը,— ցեխերի նման, չէին հանդուրժում ո՛չ ազատ մրցակցություն, ո՛չ տնտեսական անհավասարություն. աշխատանքի և վաստակի հավասարաչափ բաշխումը իրենց անդամների միջև և բոլորին ու յուրաքանչյուրին միջին կարողությամբ ապահովելը կազմել է նրանց հոգատարության գլխավոր առարկան[3]»։ Համքարութիւններն այդ եղանակով պայքարում էին ընչազրկման դեմ և ապահովում իրենց անդամների նվազագույն կամ միջին ապրուստը։ Համքարությունները օգնում էին իրենց հիվանդ, անդամալույծ, աշխատանքի համար անպիտանի դարձած ընկերներին, համքարի մահվան դեպքում իրենց ուժերը ներածին չափով նյութապես ապահովում էին նրա ընտանիքը՝ այն փրկելով սովից ու մուրացկանությունից[4]։ Համքարությունները միայն

[1] С. А. Егиазаров, Исследование по ист. учрежд. в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 202—204 և 207։

[2] Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 79։

[3] С. А. Егиазаров, Исслед. по ист. учрежд. в Закавк., ч. II, городские цехи, էջ 208—210։

[4] Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 81—82։

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 5—6։

[2] Նույն տեղը, էջ 11։

[3] Նույն տեղը, էջ 236։

[4] Նույն տեղը, էջ 236—237։ Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 8—9։

իրենց անդամներով և որբերով չէին մտահոգված։ Նրանք օգնում և հոգ էին տանում նաև քաղաքի բարեկարգման և նրա բնակչության մասին[1]։ Այս ամենից բացի, համքարութիւնները բնակչութեան անուղղակի օգնութիւն են ցույց տվել նաև, պայքարելով շուկայում վաճառվող մթերքների գների բարձրացման դեմ, տուրքերի ու հարկադիր աշխատանքների ավելացման դեմ, ինչպես և համքարութեան բարձր բարոյականութեան համար։ Համքարութիւնները իրենց շարքերում չեն հանդուրժել և տարբեր կարգի տույժերի են ենթարկել բարոյալքված անդամներին՝ ստախոսներին, խարդախներին, թղթամոլներին, այլև ընտանեկան կյանքում իրենց վատ պահողներին, դրանով իսկ նպաստելով քաղաքի հասարակութեան բարքերի առողջացմանը։

Նշված բարեգործութիւնները կատարելու և զանազան կարգի օգնութիւն ցույց տալու համար, համքարութիւններն ունեին իրենց դրամական միջոցները։ Նրանց դրամական միջոցները չնայած անհամեմատ փոքր էին, սակայն դրանք մշտապես լրացվում էին տարբեր եղանակներով։ Համքարական դրամարկղի (գանձ, խազնա) եկամուտները ստացվում էին հետևյալ աղբյուրներից. ա) Համքարութեան մեջ մտնող ամեն մի վարպետից կամ անդամից գանձվում էր անդամավճար, ընդ որում, անդամավճարի չափը տարբեր քաղաքներում և տարբեր համքարութիւններում տարբեր էր։ Դա տատանվում էր 5-ից 30 ռուբլու սահմաններում (արծաթ դրամով)։ Պատահում էին դեպքեր, երբ համքարութիւն մտնող չոմեներ անդամներից անդամավճար էին վերցնում սահմանված գումարի 50%-ի չափով, իսկ այն դեպքում, երբ համքարութիւն մտնողն իր խնամքի տակ ուներ զառամյալ ծնողներ կամ փոքրահասակ քույրեր ու եղբայրներ, նա ընդհանրապես ազատվում էր անդամավճար մուծելուց։ բ) Որոշ համքարութիւններում, առևտրական համքարութիւն մտնող նոր անդամը, երբ առաջին անգամ էր բաց անում իր ինքնուրույն կրպակը, նա, հօգուտ համքարական դրամարկղի, մուծում էր 1—3 ռուբլի (արծաթ դրամ)։ գ) Երբ վարպետացումն այնքան էր համառնում իր աշխատանքում, որ կարող էր ինքնուրույն գործել, բայց դեռևս աշխատում էր վարպետի մոտ, ապա մինչև ինքնուրույն վարպետ դառնալը, նա. կամ նրա ուսուցիչը, վճարում էր 1—5 ռուբլի (արծաթ դրամ), իբրև «դաստուրհաց» («ճաշի համար»)՝ վարպետի իրավունք

[1] Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 9—10։ Տե՛ս նաև՝ Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 78—79։

ստանալու համար։ դ) Բավական միջոցներ էին կուտակվում տուգանքներից, իսկ համքարները տուգանվում էին՝ գժտվելու, կռվելու, հայհոյելու, խաբեության, կեղծիքի, իրենց կանանց հետ կոպիտ վարվելու, ծնողներին պատշաճ հարգանք ցույց չտալու, համքարական ժողովներից և այլ կարգի միջոցառումներից անհարգելի պատճառով բացակայելու, եկեղեցական տոների կանոնները խախտելու, ուստաբաշու և համքարական ժողովների որոշումները չկատարելու և այլ կարգի խախտումների դեպքում։ Պետք է նշել նաև, որ դրամական եկամուտներից բացի, համքարութիւնների դրամարկղները ունեին նաև բնամթերքով արտահայտված եկամուտներ, գլխավորապես մոմով, որը օգտագործվում էր կրոնական նպատակներով[1]։

Համքարութիւնների ներքին ու արտաքին ամբողջ կյանքը գլխավորելու, նրանց սովորութիւնները իրագործելու և դրանք անխախտ պահելու համար գոյութիւն ունեին համքարական օրգաններ։ Համքարական ղեկավար կազմը բազմամարդ չէր. նա բաղկացած էր ուստաբաշուց (գլխավոր վարպետ), նրա օգնականից, որը կոչվում էր աղսախկալ (համքարութիւնը կարող էր ունենալ մեկ կամ երկու աղսախկալ), գանձապահից (խազնադար) և սուրհանդակից (իգիթբաշի, կատարածու)[2]։ Սուրհանդակի աշխատանքը կամ հերթականութեամբ կատարում էին համքարութեան անդամները, կամ հատուկ այդ պաշտոնը կատարելու համար նշանակվում էր մեկը։ Սովորաբար իգիթբաշի էր նշանակվում համքարութեան հիվանդ, հաշմանդամ, աշխատանքի անընդունակ որևէ անդամ, որն այդ պաշտոնը կատարելու համար ամեն մի կրպակից կամ խանութից ամսական ստանում էր 10 կոպեկ (արծաթ դրամ)։ Բացի այդ, իգիթբաշին որոշ պարգև էր ստանում նոր ձեռնադրված վարպետից և այն վարպետներից, որոնց տուգանվածության ներման մասին ինքը հաղորդում էր։ Իգիթբաշին պարտավոր էր համ-

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, գ. 7, թ. 74։ Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 13—16։ П. Шаншиев, Два слова об амкаре, էջ 32։ «Մշակ», 1888 թ., №№ 134 և 136, 1890 թ., № 108, 1890 թ., №№ 6 և 65—68։ Загурский, Поездка в Ахалцихский уезд, էջ 25։ С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 229—234։ Проф. О. Е. Туманян. Экономическое развитие Армении, ч. I, էջ 56—57 և այլուր։

[2] Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 1—18։ П. Шаншиев, Два слова об амкаре, էջ 31։ С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 267—275։

քարութեան բոլոր անդամներին հաղորդել ուստաբաշու կարգադրութիւնները, համքարական ժողովի և ընդհանուր կրոնական տոների կազմակերպման լուրը, համքարական դատին ենթակա անդամներին ներկայացնել դատարան, ի կատար ածել դատարանի վճիռները և այլն։ Իդիբրաշին համարվում էր համքարութեան ամենացածր պաշտոնյան, նա ինքնուրույն որևէ գործ չէր կարող ձեռնարկել, ամբողջապես ենթակա էր համքարական մյուս պաշտոնյաների՝ հատկապես ուստաբաշու հրամանին։

Համքարութեան ամենաբարձր պաշտոնյան համարվում էր ուստաբաշին, որը ընտրվում էր համքարութեան ընդհանուր ժողովի կողմից՝ անորոշ ժամանակով[1]։ Նույն կարգով ընտրվում էին ուստաբաշու օգնականները՝ աղասախկալները։ Գլխավոր վարպետն ու նրա օգնականները ղեկավարում էին համքարութեան ամբողջ ներքին կյանքը, ինչպես և տնօրինում էին համքարութեան ու քաղաքային ադմինիստրացիայի միջև եղած հարաբերությունները։

Գլխավոր վարպետն ու աղասախկալները կազմում էին համքարութեան դատարանը, որի իրավասությանն էին ենթակա ոչ քրեական բնույթի բոլոր հայցերը և որը կարող էր կայացնել ամենազանազան բնույթի վճիռներ՝ սկսած տուգանումից, մինչև մահը։ Ընդ որում ոչ կարևոր, մանր հայցերն ու բողոքները ուստաբաշին լուծում էր միանձնյա՝ առանց հատուկ դատ կազմակերպելու։ Ուստաբաշին պարտավոր էր համքարների նկատմամբ հոգատար լինել, գործերը կարգադրելիս նրանց չհոպտել, անարդարացի չլինել[2]։

Ուստաբաշին և աղասախկալները, իրենց պաշտոնները կատարելու համար, սահմանված աշխատավարձ չէին ստանում։ Իբրև վարձատրություն, ուստաբաշիները որոշ գումար էին ստանում նոր ձեռնադրվող վարպետներից, համքարութեան երկու կամ ավելի անդամների միջև ընկերության կազմելուց կամ ընկերությունը բաժանելուց, որոնք սովորաբար տեղի էին ունենում ուստաբաշու ներկայությամբ. նոր կրպակ բաց անելիս ուստաբաշին գրեթե միշտ ներկա էր լինում և ստանում էր որոշ գումար։ Ուստաբաշին վարձատրվում էր նաև համքարների միջև ծագած վեճերը լուծելու, ինչպես և համքարութեան համար մեծածախ ապրանքներ գնելու համար. ապրանքները նա բաշխում էր համքարութեան անդամների միջև և, արժեքը համքարներից հավաքելով, հանձնում էր վաճառողին, նրանից ստանալով որոշ տոկոս։ Բացի այդ, ուստաբաշին նվերներ էր ստանում նոր տարվա առթիվ իր տունը շնորհավորելու եկած համքարներից, որոնց ինքը ևս հյուրասիրում էր։ Այդ բոլորից բացի՝ ուստաբաշին աղասախկալներից։ Աղասախկալները վարձատրվում էին նույն ձևով, ինչ որ ուստաբաշին, միայն թե նրանց ստացածը, ընդհանուր առմամբ, կազմում էր ուստաբաշու ստացածի մոտավորապես կեսը[3]։

Ուստաբաշուց և աղասախկալներից հետո, իր նշանակությամբ և դիրքով, համքարութեան հաջորդ պաշտոնյան գանձապահն էր (կամ գանձապետ, խաղնադար)։ Գանձապահի պարտականությունն էր՝ ընդունել անդամավճարները, հարկերը, տուգանքները և դրանք պահպանել իրեն հանձնած դրամարկղում։ Նա ընտրվում էր համքարական ընդհանուր ժողովում՝ անորոշ ժամանակով. լիովին անկախ էր գլխավոր վարպետից ու նրա օգնականներից, հաշվետու էր միայն համքարական ժողովի առաջ, որը նրա աշխատանքի հաշվետվությունը լսում էր տարին կամ ամիսը մեկ անգամ[4]։ Գանձապահի պաշտոնը եղել է պատվավոր պաշտոն[5]։ Գանձապահ էր ընտրվում գրագետ ու ազնիվ համքարներից։ Նա իր պաշտոնի համար դրամական վարձատրություն չէր ստանում, միայն տոների կապակցությամբ նրան զանազան նվերներ էին տալիս[6]։

Համքարութեան ամենացածր պաշտոնյան կատարածուն էր (իդիբրաշին), որի պարտականությունների ու վարձատրության մասին արդեն ասվեց։

---

[1] П. Шантиев, Два слова об амкаре, էջ 31։ Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 2։ *Սակայն Երվանդ Շահազիզը, առանց իր օգտագործած աղբյուրները ցույց տալու, գրում է, թե Երևանում ուստաբաշին, աղասախկալները, իդիբրաշին և դանձապահը ընտրվել են ոչ թե անժամանակ, այլ երեք տարին մեկ անգամ («Հին Երևանը», էջ 79), իսկ պրոֆ. Հակ. Թումանյանի մոտ ասված է, որ դրանք ընտրվում են մեկ տարի ժամանակով* («Экономическое развитие Армении», ч. I, էջ 56)։

[2] *Տե՛ս* Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 3, 5, 20—21։ Л. Загурский, Поездка в Ахалцихский уезд, էջ 25։ Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 108 և այլն։

[1] Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 3—4, 16—18։ С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 274—275, 278—284. Проф. О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, էջ 56։

[2] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 275—277։

[3] Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 2—3։

[4] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 277։

Համքարության գերագույն օրգանը համարվում էր ընդհանուր ժողովը, որը արտահայտում էր ամբողջ համքարության կամքը։ Ընդհանուր ժողովին մասնակցում և այնտեղ ձայն ունեին բոլոր լիիրավ անդամները, ինչպես և այն տարիքավոր վարպետացուները, որոնք մի ժամանակ այլ համքարություններում եղել են ինքնուրույն վարպետներ կամ աշխատել են համքարություններից դուրս, սակայն տնտեսական շարժառիթներով փոխել են իրենց զբաղմունքը և այժմ ծոր համքարության մեջ գեռևս գտնվում են վարպետացուի աստիճանում։ Ընդհանուր ժողովին մասնակցում էին մահացած համքարների այրիները և վարպետացուները՝ առանց ձայնի իրավունքի, առաջինները իրենց սեռի (կանայք իրավունք չունեին խառնվելու հասարակական և համքարական գործերին), իսկ երկրորդները՝ համեմատաբար փոքրահասակ լինելու պատճառով[1]։ Այսպիսով, ժողովին մասնակցելու իրավունքի սահմանափակումը պայմանավորված էր ոչ թե տնտեսական անկախությամբ և ունեցվածքի ցննդով, այլ՝ սեռով և տարիքով։ Սակայն ինչպիսին էլ ուղում է լինեն շարժառիթները, փաստը մնում է փաստ, որ կանայք ու վարպետացուները զրկված էին համքարական հարցերի լուծմանը մասնակցելուց, էլ չենք խոսում աշակերտների մասին, որոնք առհասարակ իրավազուրկ վիճակում էին։

Ընդհանուր ժողովի ֆունկցիաների մեջ էին մտնում՝ համքարության պաշտոնյաների հաշվետվությունները լսելը, դրանց ընտրությունները, համքարության մեջ ընդունվելու կամ նրանից հեռացվելու հարցերը, հարկերի ու տուրքերի բաշխումն ըստ անդամների, վարպետացուների առուգողական աշխատանքների վերջնական քննարկումն ու գնահատումը, համքարական պաշտամունքի հետ կապված զանազան հարցեր և այլն[2]։ Որոշումներն ընդունվում էին քվեարկությամբ, միաձայն կամ ձայների բացարձակ մեծամասնության հիման վրա։ Երևանում տարբեր համքարություններ ընդհանուր ժողովի են հավաքվել տարբեր տեղերում։ Այսպես, օրինակ՝ կաշեգործները տարվա տաք ու արևոտ եղանակներին իրենց ընդհանուր ժողովները գումարում էին Զանգվի ափին[1], ուրիշ համքարությունների ժողովատեղին գերեզմանոցներն էին, եկեղեցիների բակերը և այլն։ Համքարության ժողովի հրավիրման իրավունքը պատկանում էր գլխավոր վարպետին[2]։

Ինչպես ասվեց, յուրաքանչյուր համքարություն ուներ իր դատը («դատաստան»)[3], որի կազմի մեջ մտնում էին գլխավոր վարպետը և աղսախկալները։ Դատը գումարվում էր վիճելի ու այլ կարգի բողոքների վերաբերյալ դատավճիռ կայացնելու համար, բացառությամբ այն ոչ մեծ ու առօրյա գործերի, որոնց լուծումը կատարում էր անձամբ ինքը՝ գլխավոր վարպետը, իր ամենօրյա գործունեության ընթացքում։ Համքարության դատերին կարող էին մասնակցել նաև վստահություն ու հեղինակություն վայելող և այլ վարպետներ[4]։

Ընդարձակ իրավունքներ ուներ համքարական դատարանը։ Ս. Ա. Եղիազարովը, հիմնվելով զանազան սկզբնաղբյուրների և ժամանակակից մամուլում եղած նյութերի վրա[5], համքարական դատարանի իրավասությանը ենթակա գործերը բաժանում է վեց խմբի. ա) գործեր, մի կողմից վարպետի, իսկ մյուս կողմից նրա աշակերտների ու վարպետացուների միջև։ Դրանք կարող էին վերաբերել ուսուցման ժամկետներին, աշխատավարձին և այլ հարցերի։ բ) Գործեր համքարության վարպետների միջև, որոնք վերաբերում էին նրանց անձնական և համքարական հարաբերություններին։ գ) Գործեր, որոնք վերաբերում էին ընտանեկան հարցերին (վիճեր ամուսինների միջև, հասունացած որդիների և ծնողների միջև և այլն)։ դ) Կրոնական պարտականությունների խախտման գծով եղած գործեր։ ե) Համքարության անդամների կողմից հասարակական հանգիստը խանգարելու մասին հարուցված գործեր։ զ) Կողմնակի անձանց բողոքները համքարության անդամների դեմ, վերջիններիս կողմից պատվերները վատ կատարելու, ոչ պիտանի մթերքներ վաճառելու և այլ հանցանքների համար[6]։

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 277։

[2] «Մշակ», 1888 թ., №№ 134 և 136, 1890 թ., № 108, 1891 թ., № 6,65—68. Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 1, 2—3. С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 284—291։

[1] Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 81։

[2] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 290։

[3] Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 106։

[4] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 291—292։

[5] Гакстгаузен, Закавказский край, ч. I, С.-Петербург, 1857, էջ 106—107։ Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 15, 20—22, 29—30։ «Մշակ», 1888 թ., №№ 58, 134 և 136, 1890 թ., № 108, 1891 թ., № 6։

[6] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 292—293։

Պարսկական ոստիկանապետի (դարուղա) դատին խուսափում էին որևէ գործ ներկայացնելուց, որովհետև այնտեղ լայն տարածում էր գտել կաշառակերությունը («ռուշվաթ»-ը)[1]: Համքարական դատարանն ուներ մեծ հեղինակություն, նրա վճիռները ճանաչվում և կատարվում էին ոչ միայն նույն համքարության մեջ, այլև մյուս համքարությունների կողմից: Համքարական մարմինները ամբողջ եռանդով ձգտել են համքարական դատարանի վճիռները ժամանակին ու անթերի ի կատար ածել: Դատարանի վճիռները չկատարող մեղադրյալների նկատմամբ ցուցաբերվել է անողոք վերաբերմունք. ինչպես տվյալ համքարության, այնպես էլ մյուս համքարությունների անդամները պլխավոր վարպետի միջնորդությամբ դադարեցրել են բոլոր կարգի հարաբերությունները այդպիսի մեղադրյալների հետ[2]:

Համքարական կարգը ժամանակի ընթացքում ստեղծել էր տարբեր բնույթի ու չափի պատիժների մի ամբողջական սիստեմ, որը բխում էր համքարության անտեսական ու իրավական շահերից և սերնդե-սերունդ անցնում էր բանավոր կարգով, ժամանակի ընթացքում ենթարկվելով որոշ փոփոխությունների: Ամենաստորական և շատ տարածված պատիժը դրամական և բնամթերային տուգանքներն էին: Դրամական տուգանքն ամբողջապես մտնում էր համքարության գանձարկղը, իսկ բնամթերային տուգանքը սովորաբար լինում էր մոմ կամ գինի ու ճաշ: Մոմը, ինչպես նշվեց, օգտագործվում էր եկեղեցիները լուսավորելու համար, իսկ գինին ու ճաշը հասնում էր համքարության վարպետներին: Խստությամբ հետևել և ավելի խիստ պատժի են ենթարկել այն մեղավորներին, որոնց հանցանքով համքարը անտեղի կերպով ենթարկվել էր տուգանքի, նույնպիսի խստությամբ են վարվել նաև դատարանի վճռին չենթարկվողների հետ[3]: Վերջիններիս նկատմամբ կիրառել են ավելի խիստ պատիժներ: Դրանցից են՝ կրպակի կամ արհեստանոցի ժամանակավորապես փակելը, արհեստի գործիքները խլելը և բանադրանքը, որի շնորհիվ տվյալ համքարության և այլ համքարությունների անդամները խզել են իրենց հարաբերությունները ըմբոստ և համքարական դատաստանի վճիռները չկատարող համքարի նկատմամբ, նույնիսկ նրան սովորական ողջույն չտա-

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 973:

2 С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 297—298:

3 Նույն տեղը, էջ 317—318:

յով[1]: Եթե դրանից հետո հանցագործ համքարը զղջում էր իր կատարած հանցանքի համար և միջնորդի միջոցով պլխավոր վարպետին հայտնում իր հնազանդությունը, ապա սահմանված տուգանքը դանձելուց հետո վերականգնում էին նրա իրավունքները: Սակայն այդ դեպքում, տուգանքից բացի, նա պարտավոր էր ճաշկերույթ կազմակերպել համքարության անդամների համար, որը նրա վրա տուգանքից ավելի ծանր էր նստում: Իսկ եթե հանցագործը շարունակում էր համառել իր սխալի մեջ, ապա նրա նկատմամբ վերջ ի վերջո կիրառում էին ամենախիստ պատիժը, այն է՝ նրան վտարում էին համքարությունից: Համքարությունից վտարումը կատարվում էր համքարության ընդհանուր ժողովում, որն այդ դեպքում էլ, ինչպես համքարության մեջ նոր անդամ ընդունելու դեպքում, ունենում էր կրոնական արարողության բնույթ: Համքարությունից վտարվածը այլևս իրավունք չուներ մտնելու որևէ համքարության մեջ, նա կարող էր աշխատել իբրև առանձին վարպետ և այլևս չէր հետապնդվում համքարության օրգանների կողմից[2]:

Համքարություն ընդունվելու հիմնական նախապայմանը արհեստին տիրապետելն էր, նրա տեխնիկական բոլոր կողմերի յուրացումը: Առանց անհրաժեշտ տեխնիկական գիտելիքների և արհեստի բավարար տիրապետման՝ ոչ ոք չէր կարող ընդունվել համքարության մեջ: Այդ գիտելիքները ձեռք էին բերվում սովորելու միջոցով: Վարպետացուի՝ արհեստին տիրապետելու և ինքնուրույն գործունեության համար պիտանի լինելու առաջին վկայությունը տալիս էր նրան սովորեցնող վարպետը՝ երդման միջոցով, ցույց տալով վարպետացուի կատարած ինքնուրույն աշխատանքի նմուշը: Վարպետի վկայության նկատմամբ տարակուսանքի դեպքում վարպետացուին այլ վարպետի հսկողությամբ տրվում էր ստուգողական աշխատանք: Համքարություն ընդունվելու համար անհրաժեշտ գիտելիքների և գործիմացության աստիճանը կախված էր արհեստի տեսակից, տվյալ արհեստի զարգացման աստիճանից և տվյալ ժամանակաշրջանում ընդհանրապես արհեստագործության զարգացման մակարդակից: Սակայն հաղվադեպ էր պատահում, որ

1 С. А. Егиазаров, Исследование по истории учреждении в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 317—318: Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 4—5:

2 Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 38—44: «Մշակ», 1890 թ. 108, 1891 թ. №№ 6 և 65—68. С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 318—322: Տե՛ս նաև Ե ր վ ա ն դ Շ ա հ ա զ ի զ, Հին Երևանը, էջ 80 և 81:

վարպետը սխալ վկայություն տար վարպետացուի ինքնուրույն աշխատանք կատարելու ունակության մասին, որովհետև արհեստավորները, աշխատելով իրար կողք-կողքի՝ միևնույն անկյունում կամ շարքում, միշտ դիտում, տեսնում և հսկում էին իրար, և ոչինչ գաղտնի չէր մնում, անորակ աշխատանքի արդյունքները առաջին իսկ պահից աչքի էին զարնվում[1]: Վարպետացուի ստուգողական աշխատանքի քննարկման և գնահատման վերջնական ինստանցիան համքարության ընդհանուր ժողովն էր, որտեղ գնահատման հետ միասին վճռվում էր վարպետացուին համքարության մեջ իբրև ինքնուրույն վարպետ ընդունելու կամ չընդունելու հարցը[2]: Համքարություն ընդունվելու համար բավարար չափով գիտելիքների ու գործնականության պահանջը Անդրկովկասի քաղաքներում, այդ թվում և Երևանում, ելնում էր համքարության տնտեսական շահերից և նպաստում էր արհեստների կատարելագործմանը, նրանց պատշաճ բարձրության վրա պահելուն: Իսկ այդ հանգամանքը վկայում է, որ XIX դ. առաջին կեսին Երևանում արհեստները այնպիսի պրիմիտիվ վիճակում չէին, ինչպես Շոպենը փորձում է ներկայացնել: Համքարություն ընդունվելու համար որևէ նշանակություն չուներ տնտեսական դրությունը, դուլքային ցենզը, ազգային պատկանելությունը, նստակյացությունը և այլն:

Համքարություն ընդունվելու մյուս կարևոր նախապայմանը անձնական բարեմասնություններն էին՝ բարձր բարոյականությունը, կարգ ու կանոնին ենթարկվելը, հասարակական կյանքի կանոններին հետևելը, վնասակար ու վատասողջ վարք ու բարքից զերծ մնալը: Աշակերտների ու վարպետացուների գործողությունների ու վարքի վրա պարտավոր էին ամեն քայլափոխում հսկել նրանց վարպետները, որոնք դրա համար կրում էին պատասխանատվություն: Ինչպես Թիֆլիսում, այնպես և Երևանում, Կարսում, Ախալքալաքում, Ալեքսանդրապոլում, Էրզրումում համքարության մեջ չէին կարող տեղ գտնել, այսպես կոչված, լոթիները, այսինքն՝

[1] Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 165:

[2] Л. Загурский, Поездка в Ахалцихский уезд, էջ 25—27: Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 12, 19—21, 25: «Մշակ», 1888 թ., №№ 134 և 136, 1890 թ., № 108, 1891 թ., №№ 6 և 65—68: С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 27, 31—32, 38—42, 58—59.

անրարոյականները, գողերը, թափառաշրջիկները, ղումարբազները, անամոթները և այլն[1]:

Համքարությունն իր մեջ ընդգրկում է տարբեր աստիճանի վրա գտնվող և տարբեր իրավական վիճակ ունեցող մարդկանց. նա միատարր չէր: Լայն առումով համքարության կազմի մեջ մտնում էին ոչ միայն ինքնուրույն վարպետներն ու առևտրականները, այլև նրանց աշակերտները, վարպետացուները, աշխատակիցները, գործակատարները, վարպետների ու առևտրականների ընտանիքի անդամները: Սակայն ավելի նեղ առումով համքարությունը կազմված էր միայն ինքնուրույն վարպետներից և առևտրականներից, որովհետև միայն դրանք էին համարվում համքարության լիիրավ անդամներ[2]: Համքարության ընդգրկած կամ որևէ չափով նրան հարող ամբողջ անձնակազմը տնտեսական ու իրավական առումով բաժանվում էր իրարից խիստ կերպով տարբերվող երկու խմբի՝ ա) ինքնուրույն վարպետների (ուստա) և բ) աշակերտների, աշխատողների և վարպետացուների: Ինքնուրույն վարպետներն ու առևտրականներն ունեին իրենց արհեստանոցներն ու կրպակները, համարվում էին համքարության լիիրավ անդամներ և մասնակցում էին համքարության բոլոր գործերին: Աշակերտները, աշխատողներն ու վարպետացուները համքարության գործերում իրավազուրկ էին և ամբողջապես ենթարկված էին վարպետների ու առևտրականների իշխանությանը: Բացառություն էին կազմում միայն այն վարպետացուները, որոնք հատուկ հանձնարարությամբ ղեկավարում էին համքարության մահացած անդամի ժառանգորդի կամ այրու ձեռնարկությունները[3]: Նշվածներից բացի, համքարության աշխատանքներին (հատկապես մանածագործության, ջուլհակության և մի քանի այլ արհեստների գծով) մասնակցում էին նաև կանայք[4], որոնք սակայն համքարության ներքին գործերին ոչ մի մասնակցություն չունեին:

Համքարության մեջ առաջին աստիճանի վրա գտնվում էին աշակերտները, որոնք ընդունվում էին վարպետների կողմից, հա-

[1] Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 20, 34—35: «Մշակ», 1888 թ., №№ 134 և 136, 1890 թ., № 108, 1891 թ., №№ 6—8, 11, 13, 65—68: С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 51—52:

[2] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 71:

[3] Նույն տեղը, էջ 72:

[4] Նույն տեղը, էջ 183:

տուկ երդումով, ավագ վարպետի ու աղսախկալների ներկայությամբ։ Աշակերտներ կարող էին ընդունել անսահմանափակ թվով։ Ուսման տևողությունը Անդրկովկասի քաղաքներում, այդ թվում և Երևանում, տատանվում էր 3-ից մինչև 10 տարվա միջև, նայած արհեստի բնույթին և տեխնիկական առանձնահատկություններին։ Առևտրական համքարությունների համար որոշակի ուսման ժամանակամիջոց չի սահմանվել և դրա կարիքը չի զգացվել, որովհետև ինքնուրույն առևտրական լինելու համար չէր պահանջվում երկարատև ու համառ աշխատանք, ինչպիսին պահանջվում էր արհեստար տիրապետելու և ինքնուրույն վարպետ դառնալու համար։ Աշակերտն ամբողջապես հանձնվում էր վարպետի կամքին՝ «միսը քեզ, ոսկորը մեզ», ասում էր իր երեխան կամ սանը վարպետին հանձնող անձնավորությունը։ Վարպետը իրավունք ուներ իր աշակերտին (և վարպետացուին) ծեծել և ենթարկել այլ պատիժների։ Այն վարպետն էր համարվում լավ, որը խիստ էր։ Աշակերտը համարվում էր նրա «տան տղան» և ծրիաբար կատարում էր դանդաղ աշխատանքներ, որոնք մեծ մասամբ կապված էին արհեստի հետ։ Սովորեցնելու համար վարպետին հատուկ վարձատրություն չէր տրվում, բացի ձեռնադրման ժամանակ նրան տրվող նվերից։

Աշակերտի կյանքով հետաքրքրվում էր և ինքը համքարությունը։ Համքարությունը հետամուտ էր լինում, որպեսզի աշակերտը ժամանակին ձեռնադրվի վարպետացու (քարգահ)՝ կանխելով երբեմն վարպետների կողմից այս կամ այն շարժառիթով նրա աշակերտական ժամանակամիջոցը ավելի երկարաձգելու մտադրությունները[1]։ Երբ աշակերտը այնքան էր տիրապետում իր արհեստին, որ կարող էր առանց վարպետի հսկողության կատարել ինքնուրույն գործ, նրան փոխադրում էին վարպետացուի աստիճանի։ Այդ տեղի էր ունենում որոշ ծիսակատարությամբ, համքարական դրամարկղը մի քանի ռուբլի («դաստուրհաց») մուծելուց հետո, որը տրվում էր հանդիսավոր ճաշի համար՝ ինքնուրույն աշխատելու թույլտվության ստանալու նպատակով[2]։

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 79 և 120։

[2] Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 21։ С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 121։

Վարպետացուն աշակերտից արդեն մեկ աստիճան բարձր էր դառնում։ Որոշ ժամանակ անց, նա հանդիսավոր կերպով ձեռնադրվում էր ինքնուրույն վարպետ. ձեռնադրման ժամանակ նա պարտավոր էր իր վարպետի համար իբրև նվեր մեկ շորացու գնել, որը սովորաբար կոչվում էր խալաթ։ Դրա փոխարեն վարպետն էլ իր աշակերտին տալիս էր արհեստին վերաբերող բոլոր գործիքները, որպեսզի նա կարողանա իր ինքնուրույն արհեստանոցը ունենալ[1]։ Վարպետացուն աշակերտի համեմատությամբ ենթահատկապես ավելի բարվոք վիճակում էր գտնվում, ստանում էր որոշ աշխատավարձ[2]։

Վարպետ ձեռնադրելը կատարվում էր համքարության հանդիսավոր ընդհանուր ժողովում, որը փաստորեն վեր էր ածվում խնջույքի։ Ուսուցիչ վարպետը ընդհանուր ժողովին ներկայացնում էր ձեռնադրվող վարպետացուին՝ բնութագրելով նրա անձնական հատկությունները, վարքը, ունակությունները և, իրեն ապացույց իր ասածների, ցուցադրելով նրա կատարած գործը, ապա հոգևորականների ներկայությամբ կատարվում էր հանդիսավոր ձեռնադրումը, որին հետևում էին կրոնական արարողություններն ու կերույսումը[3]։

Համքարության կազմում ամենաարձր աստիճանի վրա գտնվում էին նրա լիիրավ անդամները՝ իսկական վարպետները, որոնք, ինչպես նշել ենք, համքարական ընդհանուր ժողովներում ձայնի իրավունք ունեին, կարող էին ընտրվել համքարական պաշտոններում (գլխավոր վարպետ, աղսախկալ և այլն), ունեին իրենց ինքնուրույն ձեռնարկությունները (արհեստանոց կամ կրպակ), օգտվում էին համքարության շրջանակներում թույլատրվող աղատություններից և իշխանություն ունեին իրենց վարպետացուների ու աշակերտների վրա։ Դրա հետ միաժամանակ, վարպետները ունեին իրենց պարտականությունները, որոնք պարտավոր էին կատարել անշեղորեն։ Նրանց պարտականությունների մեջ էին

[1] Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 21—22։ С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 79—80 և 121։

2 С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 114—115։

3 Տե՛ս «Մշակ» 1888 թ., № 136, Բարօն Օգոստոս ֆոն Հակաոհաուզենայ Հանդապարհորդութիւն յայսկոյս Կովկասու այն է ի Հայս եւ ի Վիրս, Վաղարշապատ, 1872 թ., էջ 102—105, ինչպես նաև Եղիազարովի նշված աշխատությունը (էջ 142—143)։

մտնում՝ համքարական ժողովներին մասնակցելը, համքարական ժողովների, դատարանի վճիռների և ղեկավարների կարգադրությունները կատարելը, կրոնական տոներին, մահվան թափորներին մասնակցելը, տոների համար սահմանվող աշխատանքի կարգի կատարումը, բարձրորակ արտադրանք տալը, քաղաքի հասարակական ձեռնարկումներին մասնակցելը, աղքատների, մահացած անդամների ընտանիքների համար նյութական միջոցներ տրամադրելը, համքարական սովորույթների ճշտիվ կատարումը և այլն, և այլն[1]։

Հսկայական էր համքարությունների դերը արտադրության և արտադրանքի վաճառման կազմակերպման գործում։ Ինչպես մյուս բնագավառներում, այնպես էլ արտադրության կազմակերպման մեջ համքարությունը հանդես էր գալիս իբրև միասնական մի կազմակերպություն։ Համքարության համերաշխությունը հետևանք էր նրա տնտեսական, վարչա-ֆինանսա-հարկային, հասարակական և պաշտամունքի հետ կապված շահերի միասնության[2]։

Համքարությունները իրենց անդամների անխափան աշխատանքն ու դրանից կախված ապրուստն ապահովելու համար՝ միջամտում և կանոնավորում էին նույն համքարության անդամների, տարբեր համքարությունների ու նրանց անդամների և համքարության անդամների ու մեծածախ առևտրականների միջև եղած տնտեսական հարաբերություններն ու առևտրական գործարքները։ Ապրանքները և հումքը սովորաբար գնում էին ապառիկի կարգով. համքարության անդամները չունեին այնքան կապիտալ, որպեսզի կարողանային կանխիկ դրամով ապրանքներ գնել։ Ապառիկի կարգով կատարվող գործարքներն ունեին այն առավելությունը, որ համքարության անդամը առանց ժամանակ կորցնելու կամ դրամի համար ուրիշին դիմելու, հնարավորություն էր ստանում անխափան կերպով շարունակել իր աշխատանքը, իսկ ապրանքաշրջանառությունն էլ ընթանում էր առանց զգալի ընդհատումների։ Յուրաքանչյուր պարտատեր ժամանակին մուծում էր իր պարտքը, դրամը «չէր վառվում»՝ չէր կորչում, պարտքերի մուծման համար ռատիկանության միջամտության կարիք չէր զգացվում, ուստաբաշին իր պատասխանատվությամբ ամեն ինչ հոգում էր ժամանակին՝

[1] Տե՛ս С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 150—157։

[2] Տե՛ս Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 9։ С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 238—239։

շաբաթական մեկ անգամ պարտատերերից մաս առ մաս հավաքելով և վաճառողին հանձնելով պարտքերը։ Թերացողների նկատմամբ ուստաբաշին կիրառում էր համքարության մեջ ընդունված պատժի ձևերը և հարկադրանքի եղանակով հասնում էր իր նպատակին[1]։ Ապառիկի կարգով հումքը իրարից վերցնում էին ոչ միայն տարբեր համքարությունները, այլև նույն համքարության անդամները։ Եթե համքարության որևէ անդամին անհրաժեշտ էր որևէ հումք կամ ապրանք, սակայն քաղաքում դժվար էր այն ձեռք բերել, ապա նա շուկայական գներով այդ ապրանքը վերցնում էր նույն համքարության այն անդամներից, որոնց մոտ տվյալ հումքի կամ ապրանքի ավելցուկ կար[2]։ Պատահում էր, երբ ամբողջ համքարության համար՝ համքարության գլխավոր վարպետի կամ վիճակահանության միջոցով, դարձյալ մեծ մասամբ ապառիկի կարգով, մեծածախ առևտրականից մեծ քանակությամբ հումք էր վերցվում, որի համար ստորագրություն էին տալիս գլխավոր վարպետն ու մի քանի այլ անդամներ։ Համքարության համար գնված այդ ապրանքը՝ ըստ համքարության անդամների թվի, մասնատվում էր բաժինների՝ «փայերի». դրանք բաշխվում էին վիճակահանության միջոցով։ Պատահում էր, երբ մեծածախ առևտրականը նկատելով, որ քաղաքում անհնար կամ դժվար է տվյալ ապրանքից ձեռք բերել, փորձում էր օգտվել առիթից և բարձրացնում էր ապրանքի գինը։ Այդպիսի դեպքերում համքարությունը վաճառողի դեմ պայքարում էր նրանով, որ կարգադրում էր իր բոլոր անդամներին՝ այլևս տվյալ վաճառականից ապրանք չգնել, անհրաժեշտ ապրանքը ձեռք բերել այլ առևտրականներից, իսկ մինչ այդ, իրար տրամադրել իրենց ձեռքի տակ եղած հումքի փոքրիկ պաշարները։ Առևտրականներին քաջ հայտնի էր համքարական պայքարի այդ ձևը, ուստի նրանք հաղվադեպ էին փորձում օգտվել համքարությունների դժվար կացությունից։ Բայց և այնպես, խոշոր առևտրականներն էլ ունեին իրենց պայքարի ձևերը. հատկապես XIX դ. 60—70-ական թվականներից սկսած, հաճախ նրանք դիմում էին պետության և նրա օրգանների՝ մասնավորապես ոստիկանության օգնությանը, նույնիսկ խնդրելով ոչնչացնել համքարությունները[3]։

Համքարության անդամների փոխադարձ օգնությունը առանձ-

[1] Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 24—25։

[2] Նույն տեղը, էջ 25։

[3] Նույն տեղը, էջ 22—24։

նապես արտահայտիչ է, երբ ծանոթանում ենք նրանց կողմից կրպակներ և արհեստանոցներ վարձակալելու սիստեմին։ Այստեղ գոյություն ուներ հետևյալ կարգը։ Սովորաբար համքարության անդամները, երևանում հատկապես XIX դ. առաջին քառորդում, չունեին իրենց սեփական կրպակներն ու արհեստանոցները. նրանք աշխատում էին իրենց վարձակալած կրպակներում ու արհեստանոցներում։ Արհեստանոցի կամ կրպակի վարձը կախված էր դրանց մեծությունից, բարեկարգ լինելու աստիճանից և, հատկապես, դիրքից, այսինքն՝ նրանից, թե քաղաքի որ մասում էր գտնվում՝ գլխավոր շուկայում, հրապարակներում, թե փողոցների վրա։ Եվ ահա, վարձակալման ժամանակ կրպակների ու արհեստանոցների տերերը, օգտվելով դրանց հարմար դիրքից, երբեմն անչափ բարձրացնում էին վարձագինը։ Այդպիսի դեպքերում, եթե համքարության անդամի ուժերից վեր էր վճարել պահանջվող վարձը, նա թողնում, դուրս էր գալիս արհեստանոցից՝ այդ մասին հայտնելով ամբողջ համքարությանը, որը կարգադրում էր իր անդամներին՝ այլևս տվյալ կրպակը կամ արհեստանոցը չվարձակալել[1]։

Համքարությունն իր ղեկավարների միջոցով պաշտպանում էր իր անդամների արժանապատվությունը պատվիրատուի և հումք ու ապրանք վաճառողների կամայականություններից ու անպատշաճ վարմունքից։ Եթե պատվիրատուն կամ վաճառողը հայհոյում կամ անպատվում էր համքարության անդամին, ապա գլխավոր վարպետի կարգադրությամբ համքարության բոլոր անդամները պարտավոր էին տվյալ պատվիրատուի կամ վաճառողի հետ խզել իրենց հարաբերությունները և դադարեցնել բոլոր տեսակի գործարքները[2]։

Ինչպես տեսնում ենք, համքարությունների մեջ խիստ կերպով զարգացած էին համագործակցությունը, շահերի փոխադարձ պաշտպանությունը և միասնական պայքարը համքարության ու նրա առանձին անդամների նկատմամբ կատարվող հարձակումների ու անարդարությունների դեմ։ Այդ պայքարում հանդես էին գալիս ոչ թե համքարության անդամներն առանձին-առանձին, յուրաքանչյուրը միայն իր անձնական շահի համար, այլ համքարությունն ամբողջությամբ վերցրած՝ հանուն և՛ յուրաքանչյուր անհատ անդամի, և՛ ամբողջ համքարության շահերի։ Սակայն, ինչ-

[1] Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 26։
[2] Նույն տեղը, էջ 29։

պես նշում է Ս. Ա. Եղիազարովը, միշտ չէ, որ ներքին պայքարը խորթ էր համքարությունների համար։ Համքարությունների ներքին պայքարը տեղի էր ունենում շուկայական գների առնչությամբ. դրանով նրանք չէին հետապնդում ինչ-որ մենաշնորհ դիրք ձեռք բերելու, այլ նպատակ ունեին լոկ շուկայական գները կանոնավորել։ Այդպիսի պայքար տեղի էր ունենում գլխավոր վարպետների և շուկայի պետի միջև[1]։

Համքարությունների կյանքին ծանոթանալուց հետո տրամաբանորեն հարց է առաջանում, թե ինչպիսի՞ համքարություններ կային Երևանում XIX դարի առաջին կեսին, որքա՞ն էր նրանց թիվը, որո՞նք էին առավել աչքի ընկնող համքարությունները և այլն։

Մենք տեսանք, որ Երևանում, չհաշված զանազան կարգի այլ զբաղմունքները, որոնք ևս կարող էին կազմել համքարություններ, արհեստների թիվը XIX դ. առաջին քառորդում հասնում էր 43-ի (աղյուսակ № 2)։ Երվանդ Շահազիզը, առանց իր օգտագործած աղբյուրները ցույց տալու, հայտարարում է, թե իր ձեռքի տակ եղած տվյալների համաձայն XIX դ. առաջին կեսին Երևանի համքարությունների թիվը եղել է 19, բայց դրանից թվարկում է միայն 10-ը՝ աուաղձագործների, մաշկակարների, կաշեգործների, դարբինների, ներկարարների, քարտաշների, ոսկերիչների, գդակ կարողների (ճոնների), դերձակների և վարսավիրների համքարությունները, իսկ մյուսների անունները տալու փոխարեն դնում է փրկարար «և այլն»-ը և դրանով վերջացնում[2]։ Նրա հաղորդած այդ համքարությունները, ինչպես ցույց են տալիս աղբյուրների տվյալները, իրոք որ բոլորն էլ գոյություն են ունեցել (բացառությամբ ոսկերիչների համքարությունից), այն տարբերությամբ, սակայն, որ քարտաշների համքարության փոխարեն (Շահազիզի առաջադրած աղյուսակում հիշատակված) իրականում եղել է որմնադիրների համքարություն, որովհետև XIX դ. առաջին քառորդին վերաբերող աղբյուրներում Երևանում քարտաշներ առհասարակ չեն հիշատակվում, դրանց փոխարեն հիշատակվում են որմնադիրներ, որոնց թիվը, ըստ Շոպենի աղյուսակի, եղել է 30 (դրանից 20-ը աղբե-

[1] С. А. Егизаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 244—246։ Տե՛ս նաև Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, էջ 19։
[2] Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, էջ 79։

ջանցիներ, 6-ը բնիկ հայեր, իսկ 4-ը ներգաղթած հայեր էին)[1]։ Ե. Շահազիզի տված աղյուսակից դուրս են մնացել մի ամբողջ շարք այնպիսի բազմամարդ արհեստներ, պղնձագործներ՝ 28 մարդ, որոնցից 27-ը հայեր, 1-ը՝ ադրբեջանցի, արծաթագործներ՝ 34 մարդ, որոնցից բնիկ հայեր՝ 17, եկվորներ՝ 7, ադրբեջանցիներ՝ 10, թամբագործներ՝ 34 մարդ, որոնցից 18-ը բնիկ հայեր, 3-ը՝ եկվորներ, իսկ 13-ը՝ ադրբեջանցիներ և այլն[2]։ Այս յուրաքանչյուր արհեստի գծով կարող էին կազմվել առանձին համքարութիւններ, իսկ ինչ վերաբերում է զանազան կարգի առևտրականների և այլ զբաղմունքների գծով եղած համքարություններին, ապա Շահազիզի մոտ դրանցից և ոչ մեկը չի հիշատակված։

Այսպիսով, համքարությունների թվի և դրանցում ընդգրկված նույնանման արհեստների և այլ զբաղմունքների մասին լրիվ գաղափար կազմելու գործում երվանդ Շահազիզի առաջադրած ընդամենը մեկ տասնյակ համքարությունների սոսկ ցուցակը աչնչով չի օգնում։ Այդ հարցի պարզաբանման համար պետք է նկատի ունենալ մի քանի հանգամանքներ. ա) այն, որ դեռևս XVII—XVIII դարերում Հայաստանի քաղաքների հայ արհեստավորները, առևտրականները և քաղաքային այլ կարգի զբաղմունքների տեր անձինք գրեթե ամբողջովին ընդգրկված էին համապատասխան համքարություններում[3] կամ, համենայն դեպս, հարում էին այս կամ այն համքարությանը, բ) տվյալ արհեստը կամ քաղաքային որևէ այլ զբաղմունք սովորաբար կազմում էր մեկ առանձին համքարություն, սակայն կարող էին լինել դեպքեր, երբ տվյալ արհեստի շատ բազմամարդ լինելու պատճառով, նույն արհեստի գծով միևնույն քաղաքում լինեին երկու և ավելի համքարություններ։ XIX դարի Երևանում, իբրև փոքր քաղաք, այդպիսի բազմամարդ զբաղմունքներ չկային, ընդհակառակը, այստեղ, ինչպես և Անդրկովկասի մի շարք այլ քաղաքներում, այս կամ այն արհեստի, առևտրի և այլ զբաղմունքների ներկայացուցիչների փոքրաթիվության պատճառով, երբեմն միանման զբաղմունքների ներկայացուցիչները միա-

[1] Տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 843։

[2] Նույն տեղը, էջ 843 և 847։

[3] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 20։ Տե՛ս նաև «Кавказский календарь» на 1874 г., отд. II, էջ 172։

նում և կազմում էին մի բարդ համքարություն՝ Երևանում, օրինակ, մի բարդ համքարության մեջ էին միավորված բոլոր կարգի ներկարարները[2], գ) համքարական կարգը, ինչպես տեսանք, սերտորեն կապված էր պաշտամունքի հետ, ամեն մի համքարություն ուներ իր փիրը և սրբությամբ կատարում էր կրոնական արարողություններ։ Միևնույն արհեստի կամ քաղաքային այլ զբաղմունքի ներկայացուցիչ հայերն ու ադրբեջանցիները կրոնների տարբերության պատճառով կազմում էին առանձին-առանձին համքարություններ,[3] վերջապես, դ) պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր արհեստավորներն էին ընդգրկված համքարություններում։ Համքարություններից դուրս էին գտնվում և գործում էին իբրև առանձին վարպետներ ու առևտրականներ բավական մեծ թվով ադրբեջանցիներ[4] և Թուրքմենչայի պայմանագրով Երևան ներգաղթածներ։ Վերջիններս համքարությունների մեջ մտան հետագայում։ Այստեղ նկատի չեն առնվում այն առևտրականներն ու արհեստավորները, որոնք կարող էին այլ տեղերից ժամանակավորապես Երևան գալ և որոշ ժամանակ հետո դարձյալ թողնել-հեռանալ։

Նկատի ունենալով այդ բոլորը և հիմք ընդունելով ամբողջ Հայկական մարզի, այդ թվում և Երևան քաղաքի զբաղմունքների վերաբերյալ Ի. Շոպենի հաղորդած տեղեկությունները (որ տրված են աղյուսակի ձևով), ապա այն, որ առանձին համքարություն կազմելու համար տվյալ զբաղմունքի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լիներ 5—6 հոգուց, XIX դ. առաջին քառորդի Երևանի համար կարելի է նշել հետևյալ համքարությունները[5].

[1] Л. Загурский, Поездка в Ахалцихский уезд, էջ 25; С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 24։

[2] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 7։

[3] Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 165։

[4] «Сборник стат. данных о Кавказе», т. I, отд. III, էջ 30—60; С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 20։

[5] Կազմված է քաո Ի. Շոպենի «Исторический памятник Армянской области» աշխատության մեջ (էջ 843—844) տրված աղյուսակի, որից կազմված է նաև մեր այս դրքի № 1 աղյուսակը։

№ թ/կ	Համքարության անունը	Համքարության (կամ երկու համքարությունների) ընդհանուր թիվը: Համքարության (կամ նրանց) ընդհանուր թիվը:		№ թ/կ	Համքարության անունը	Համքարության (կամ երկու համքարությունների) ընդհանուր թիվը: Համքարության (կամ նրանց) ընդհանուր թիվը:	
		Տարի	Անդր.			Տարի	Անդր.
1	Թախկալների	—	96	17	Մանրավաճառ-խանութպանների	—	43
2	Բաղնիսպանների	—	11	18	Դրամափոխների	—	14
3	Փերեզակների	—	10	19	Չինագործների	25	—
4	Մաշկակարների	33	95	20	Դերձակների	20	19
5	Դաբաղների	—	5(?)	21	Մոմագործների	—	14
6	Երկաթավաճառների	—	7	22	Արծաթագործների	17	10
7	Ոսկեգործների	6	20	23	Ատաղձագործների	9	5
8	Ջուռնալների և երաժիշտների	5(?)	5(?)	24	Թամբագործների	18	13
9	Կաշեգործների	12	26	25	Ջուլհակների	12	—
10	Դարբինների	12	24	26	Հացագործների	—	37
11	Ներկարարների	—	6	27	Վարսավիրների	9	50
12	Վաճառականների	32	151	28	Ջարչիների	—	28
13	Այլուրավաճառների	—	20	29	Ճոների	8	71
14	Կրպակատերերի	—	18	30	Միսավաճառների	36	31
15	Ջրաղացպանների	8	9	31	Գզրարների	—	7
16	Պղնձագործների	27	—				

Աղյուսակում, ինչպես ասվեց, բերված են միայն այն զբաղմունքները, որոնցից յուրաքանչյուրի գծով զբաղված են եղել 5 և ավելի մարդիկ՝ հայերն ու ադրբեջանցիներն առանձին-առանձին վերցրած, չհաշված մսագործներին (25 հոգի), խաշած ճակնդեղ վաճառողներին (5 հոգի) և չարվագարներին ու կառապաններին (79 հոգի), որոնք առանձին-առանձին իրենց ներկայացուցիչների թվով բավարարում էին այդ պահանջները, սակայն, ինչպես 1828—1879 թթ. արհեստագործության մասին խոսելիս կտեսնենք, դրանք համքարություններ չէին կազմում: Իսկ դրանից երևում է, որ առանձին համքարություններ կազմող քաղաքային զբաղմունքների թիվը Երևանում XIX դ. առաջին քառորդի վերջերին, չհաշված արդյունաբերական բնույթի մի քանի զբաղմունքները, որոնց մասին կխոսվի քիչ հետո, ըստ մեր հաշիվների, հասնում էր 31-ի, որոնցից երկուսը՝ դաջողների ու գուռնաչիների համքարությունները, համապատասխան աղբյուրների բացակայության պատճառով ընդունել ենք վերապահորեն: Ընդ որում մաշկակարները, որմնադիրները, գուռնաչիներն ու երաժիշտները, կաշեգործները, դարբինները, վաճառականները, ջրաղացպանները, դերձակները, արծաթագործները, ատաղձագործները, թամբագործները, վարսավիրները, ճոները և մետաքսավաճառները կարող էին կազմել ոչ թե մեկական, այլ 2-ական համքարություններ՝ մեկը հայկական, մեկը՝ ադրբեջանական, որովհետև յուրաքանչյուրի գծով և՛ հայերը, և՛ ադրբեջանցիները բավական թիվ էին կազմում: Ուրեմն համքարությունների մոտավոր թիվը կլինի ոչ թե 31, այլ դրանից ավելի: Շատ հավանական է, որ նշված զբաղմունքներից մի քանիսը ընդհանրապես չեն կազմել համքարություններ, բայց դրա հետ միասին, չեն թվարկվել նաև այնպիսի զբաղմունքներ, որոնք կարող էին իրար հետ միանալով կազմել բարդ համքարություններ, ինչպես այդ արել էին ներկարարները: Ուստի, եթե մի կողմից պետք է փոքրացնել նշված թիվը, ապա մյուս կողմից էլ այն պետք է ավելացնել՝ մեզ անհայտ մնացած և աղյուսակում տեղ չգտած համքարությունների հաշվին: Այսպիսով, ստացվում է, որ XIX դ. առաջին քառորդի վերջում Երևանում գոյություն են ունեցել ոչ թե 19 համքարություններ, ինչպես ենթադրել է Երվանդ Շահազիզը, այլ ավելի քան 30:

Իրենց նշանակությամբ և ազդեցությամբ բոլոր համքարությունները հավասար մակարդակի վրա չէին: Վաճառականական համքարությունները ունեին ավելի մեծ ազդեցություն: Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Անդրկովկասի քաղաքներում բարձրաստիճան վաճառականությունը՝ սովզաբյարները, որոնք դրեթե բացառապես զբաղված էին արտաքին առևտրով, հավասարեցված էին ազնվականությանը և, բացի մաքսից, ազատված էին ամեն տեսակի հարկերից, տուրքերից ու հարկադրական աշխատանքներից: Ռուսական տիրապետության շրջանում նրանց այդ արտոնությունները պահպանվեցին[1]:

Երևանում XIX դ. 60-ական թվականներին և հետագայում ամենաազդեցիկ համքարությունը բազազների համքարությունն էր[2], որը, ըստ երևույթին, նույն դարի առաջին տասնամյակներում դեռևս գոյություն չուներ, որովհետև այդ ժամանակներին վերաբերող սկզբնաղբյուրներում այն չի հիշատակվում: Եվ դա միանգա-

[1] С. А. Егиазаров. Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 8—9:

[2] «Кавказский календарь на 1874 г.», отд. II, էջ 172:

մայն բնական է։ Բազմները մարդաշատ գործան և սկսեցին կարևոր դեր խաղալ միայն Երևանի՝ պարսկական լծից ազատագրվելուց հետո, երբ Ռուսաստանից և մասամբ եվրոպական այլ երկրներից Երևան էին ներմուծվում բավական մեծ քանակությամբ տեքստիլ արդյունաբերական արտադրանքներ։

Իրենց տնտեսական վիճակով, քաղաքի ներքին կյանքում խաղացած դերով և տնտեսության մեջ զբաղած տեղով զգալի տարբերություններ կային նաև զուտ արհեստավորական համքարությունների միջև։ Տնտեսական ապահովվածության աստիճանով ավելի բարձր էին կանգնած արծաթագործների, կաշեգործների և այլ համքարությունները[1]։

Ինչպես ասվեց, բավական մեծ թիվ էին կազմում նաև համքարություններից դուրս գտնվող արհեստավորներն ու քաղաքային այլ զբաղմունքների տեր մարդիկ։ Սրանց և համքարությունների միջև XIX դ. առաջին 2—3 տասնամյակների ընթացքում մրցակցություն և պայքարի տենդենց քիչ էր նկատվում։ Սակայն 40-ական թվականներից համքարությունների ու զրանցից դուրս գտնվող քաղաքային ազատ աշխատանքների ներկայացուցիչների միջև գնալով պայքարն ավելի է խորանում։ Այդ տենդենցը նկատվում է մանավանդ Կովկասի փոխարքայության կենտրոն Թիֆլիսում, որտեղ 60-ական թվականներին «տեղական համքարությունները արգելում էին առևտրով և արհեստներով զբաղվել բոլոր նրանց, որոնք չէին ցանկանում զրանցվել» համքարություններում[2]։ Երևանում մինչև 60-ական թվականները ներառյալ, համքարություններից դուրս գտնվողների ու համքարությունների միջև հակասությունները թույլ են եղել, արտադրության և վաճառքի բնագավառներում նրանց միջև համեմատաբար սուր պայքար չի մղվել։ Ազատ արհեստավորներն ու առևտրականները վճարում էին նույնքան հարկ ու տուրք, որքան համքարությունների մեջ ընդգրկվածները, կատարում էին նույն հարկադրական աշխատանքները, ինչ որ վերջիններս էին կատարում։ Այդ պատճառով էլ նրանց միջև պայքարի շարժառիթ համեմատաբար քիչ կար։ Սակայն դա նրանց միջև պայքարի թույլ լինելու միակ պատճառը չէր։ Երևանում (ինչպես և Անդրկովկասի մյուս քաղաքներում) արհեստավորների և առևտրականների համար արհեստն ու առևտուրը միակ զբաղմունքները չէին, արհեստն ու առևտուրը տակավին չէին կլանել մյուս զբաղմունքները՝ այգեգործությունը, բանջարաբուծությունը և, նույնիսկ, հացահատիկների մշակությունն ու անասնապահությունը։ Այնպես որ, արհեստավորի ու առևտրականի ապրուստը ամբողջովին չէր կախված քաղաքային զբաղմունքից, այլ այն մեծ չափով դեռ կախված էր գյուղական բնույթի նշված զբաղմունքներից։ «Մաքուր արդյունաբերական գործունեությունը համքարություններին վտանգ չէր սպառնում»[1], համքարությունները իրենց նյութական գոյության համար ազատ աշխատանքի ներկայացուցիչներին չհանդուրժելու, նրանց դեմ պայքարելու կարիք քիչ ունեին, երկու այդ սեկտորների, եթե այդպես կարելի է ասել, միջև եղած մրցակցությունը համքարությունների համար ճակատագրական վախճան չէր կարող ունենալ[2]։

XIX դ. առաջին քառորդում Երևանի քաղաքային արտադրությունը չէր սահմանափակվում միայն տասնյակների հասնող արհեստներով։ Նրանում, արհեստներից բացի, գոյություն ունեին նաև մի քանի օբյեկտներ, որոնք իրենց պրիմիտիվությամբ ու փոքր մասշտաբներով հանդերձ՝ այնուամենայնիվ տարբերվում էին հասարակ արհեստանոցներից և կարող էին համարվել արդյունաբերական տիպի ձեռնարկություններ։ Դրանցից յուրաքանչյուրում զբաղված էին զանազան կարգի մի քանի բանվորներ, իսկ իբրև շարժիչ ուժ օգտագործվում էր ջուրը։ Այդ ձեռնարկություններն էին՝ ապակու, քնդանոթաձուլական և վառոդի «գործարան»-ները։ Ի. Շոպենը դրանցից բացի Երևանի «գործարանների ու ֆաբրիկաների» շարքում է դասել նաև կաշեգործական արհեստանոցները (դաբախանաները), օճառագործական արհեստանոցները, ներկատները և ջրաղացները[3], սակայն դրանք արդյունաբերական տիպի ձեռնարկություններ չէին, այլ խղճուկ արհեստանոցներ՝ ամբողջապես ձեռքի աշխատանքի վրա հիմնված հասարակ ձեռնարկություններ, որոնք գոյություն ունեին շատ հին ժամանակներից և ոչնչով չէին նմանվում արդյունաբերական ձեռնարկություններին՝ բառիս տնտեսագիտական-տեխնիկական իմաստով, չնայած 1828—

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 9։

2 Նույն տեղը, էջ 19։

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 23։

2 Նույն տեղը, էջ 19—20։

3 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 473—474։

1879 թթ. մասին խոսելիս գրանք ներկայացնելու ենք արդյունաբերական ձեռնարկությունների հետ միասին։

1. Ապակու «գործարանը» գոյություն է ունեցել շատ կարճ ժամանակով. 1828—1830 թթ. նա արդեն դադարել էր գործելուց[1] և իմաստ էլ չուներ այն նորից վերականգնելը։ Շոպենը բավական մանրամասնությամբ պատմում է այդ գործարանի կառուցվածքի, նրա արտադրանքի տեսակների ու որակի, ապակի ստանալու համար օգտագործվող հումքի, աշխատանքի պրոցեսների և Անդրկովկասում եվրոպական տիպի ապակու գործարաններ կառուցելու անհրաժեշտության մասին[2]։ Ահա թե ինչ էր ներկայացնում խանական Երևանի ապակու գործարանը ըստ Ի. Շոպենի հաղորդած տեղեկությունների։

Ի տարբերություն իսկական գործարանների, որոնք տեղադրված էին ընդարձակ ու լուսավոր շենքերում, Երևանի ապակու գործարանը գտնվելիս է եղել մի նեղվածք ու անշուք խրճիթանման շենքում։ Հնոցը տաշտաձև էր, ծածկված խոզովակաձև կամարով, գանգվածը ձուլվել է ոչ թե ամանների մեջ, այլ հենց այդ տաշտում։ Ամեն մի եռացում (ձուլում), որ սովորաբար կատարվել է չորս օրվա ընթացքում, պարունակել է մինչև 25 փութ ապակի և ձուլելու համար իրրև վառելիք պահանջվել է երկու և կես խորանարդ սաժեն փայտ։ Ձուլելուց հետո, 5-րդ օրը վարպետը սկսում էր պատրաստել ապակյա ամաններ, օրական 100—200 հատ։ Ապակին եղել է անորակ՝ անմաքուր և պղպջակներով լի։ Ապակու համար պահանջվող ձուլվածքը պատրաստել են տեղական հումքով հավասար քանակությամբ կվարցային ավազի և սոդայի խառնուրդից, վրան ավելացնելով որոշ քանակությամբ մարգանեց։ Պատրաստել են յոթ գույնի (կարմիր, վարդագույն, կապույտ, կանաչ և այլն) ապակի։ Պոտաշ գործածելու դեպքում ստացվում էր միանգամայն սպիտակ ապակի, իսկ սոդան ապակուն միշտ տալիս էր մուգ գույն։ Սոդան հատկապես օգտագործվում էր այն ժամանակ, երբ պահանջվում էր արտադրել լուսամուտի ապակի և շշեր[3]։ Գործարանի կառուցվածքի ու աշխատանքային պրոցեսների մանրամասն նկարագրություններ տալուց հետո, Շոպենը գրում է, որ գործարանն արդեն գոյություն չունի և այդ տիպի գործարանը չի էլ կարող օգտավետ համարվել։ Նա գտնում է, որ Անդրկովկասում

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 558։

[2] Նույն տեղը, էջ 558—559։

[3] Նույն տեղը, էջ 858։

նոր տիպի մեքենայացված ապակու գործարանի կառուցումն անհրաժեշտություն է, այդպիսի կառուցումը մեծապես կբարձրացնի դինեգործությունը, որն այնքան խոշոր նշանակություն ունի Անդրկովկասի ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ[1]։

Սարդարի ժամանակ մի քանի տարի գործող այդ «գործարանի» արտադրանքը ամբողջովին մնում էր Երևանում, սպառվելով նրա բնակիչների՝ գլխավորապես բերդում կենտրոնացած պարսկական վերնախավին պատկանողների կողմից։ Գույնզգույն ապակիների գործածությունը պարսկական ճարտարապետության բնորոշ կողմերից մեկն էր։ Մասամբ այդ էր պատճառը, որ նշված գործարանում սովորաբար արտադրվել է ոչ թե մաքուր, թափանցիկ ու անգույն ապակի, այլ՝ գունավոր։

2. Թնդանոթաձուլական «գործարանի» մասին հիշատակվում է Ջեմս Մորիերի «Հաջի Բաբայի արկածները Պարսկաստանում» վերնագիրը կրող գրքի մեջ, որտեղ նկարագրված են նրա՝ դեպի Պարսկաստան կատարած երկու ճանապարհորդությունները և Պարսկաստանում ունեցած գործունեությունը։ Նա գրում է, որ իր ճանապարհորդության ժամանակ, Երևանի բերդում, նախկին թուրքական մզկիթի մոտ, որն իր այցելած ժամանակ արդեն օգտագործվում էր ոչ թե որպես մզկիթ, այլ մթերանոց, գտնվում էր սարդարի թնդանոթաձուլարանը։ Անգլիացի դիվանագետ-ճանապարհորդը նրան բերդը նկարագրել է բավական մանրամասնությամբ, իր պատմությունը համեմելով երկու սիրահարների հետ կապված ժողովրդական մի ավանդությամբ, ապա թնդանոթաձուլարանի մասին բավարարվել է միայն մի համառոտ նախադասությամբ. «Նրանից (թուրքական մզկիթից—Բ. Հ.) ոչ հեռու գտնվում է մի վայր, ուր սարդարը թնդանոթներ է ձուլում և արձակում»[2]։ Ահա այն բոլորը, ինչ ասված է Մորիերի մոտ՝ Երևանի թնդանոթաձուլական «գործարանի» վերաբերյալ։ Հազիվ թե հարկ լինի հիշատակության պակասավոր լինելը ցույց տալ։ Նրանում չի ասված, թե ինչ մեծություն և ձև ուներ «գործարանը», ինչ մետաղից և ինչ տեսակի թնդանոթներ էին ձուլվում այնտեղ, երբ էր հիմնվել այն, քանի աշխատող-ներ ուներ, ինչքան թնդանոթներ էր ձուլում և այլն։ Այնուամենայնիվ, պարզ է, որ այդ «գործարանը» սովորական դիտագործական արհեստանոցից և՛ իր մեծությամբ, և՛ իր տեխնիկական հար-

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 858—859։

[2] Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ հ. Ջ, էջ 323։

մարանքներով քիչ է տարբերվել, այլապես ճանապարհորդը այն չէր կոչի «վայր», այլ կկոչեր գործարան։

Թնդանոթաձուլական «գործարան»-ի մասին անուղղակի հիշատակություն ունի նաև Լաշինովը, որը ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի ժամանակ եղել է Երևանում և արժեքավոր շատ տեղեկություններ է հաղորդել քաղաքի ու նրա բերդի վերաբերյալ։ Լաշինովի մոտ թնդանոթաձուլական «գործարան» չի հիշատակվում, այլ դրա փոխարեն նա նշում է, որ Երևանի բերդում «եղել է ձուլարան»[1], որը հեղինակի այնտեղ եղած ժամանակ դադարել էր գոյություն ունենալուց։ Առանց տարակուսանքի կարելի է ասել, որ Լաշինովի հիշատակած «ձուլարանը» («литейный завод») նույնն է Մորիերի նշած թնդանոթաձուլական վայրի («գործարանի») հետ։

Սարդարյան թնդանոթաձուլական «գործարանը» գոյություն է ունեցել մինչև ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմը։ Պատերազմի ընթացքում այն ավերվել է և այլևս հարկ չի եղել վերականգնելու։ Ռուսաստանը Երևանի բերդում գետեղված իր կայազորը զինում էր ժամանակակից թնդանոթներով, որոնք բավարար քանակությամբ արտադրվում էին մայր երկրում, հետևապես Ռուսաստանը ամենևին կարիք չուներ պարսկական հետամնաց տեխնիկայի նմուշի։

3. Խանական ժամանակաշրջանի վերջին ձեռնարկությունը, որը արդյունաբերական օբյեկտի բնույթ ուներ, բերդի մոտ գտնվող վառոդի «գործարանն» էր։ Վառոդի «գործարանը» կամ «վառոդարանը», ինչպես այն կոչվում է Թաղիադյանի մոտ, կառուցվել է հայ արհեստավոր Կարապետի կողմից։ Իր կառուցվածքով վառոդարանը նման է եղել շոգիով աշխատող գործարաններին, սակայն այն շարժման մեջ է դրվել ջրի միջոցով։ Վառոդարանի համար Զանգու գետից անց է կացվել հատուկ առու։ Այդ բոլորի մասին Մխսրոպ Թաղիադյանը հետևյալն է գրում. «Մեծանուն հայ արուեստաւորն Կարապետ՝ կառոյց առ ի հարաւային եզրս գետոյն զդիմակ վառոդ՝ կամ լաւ ևս ասել՝ զվառօդարան. և առու հանեալ ի գետոյն զարձոյց զնա, ո՛չ ինչ ընդհատ ի շոգեշուրջ գործարանաց»[2]։

Ապակու և թնդանոթաձուլական «գործարանների» նման, վառոդարանը ևս Երևանը պարսկական լծից ազատագրելուց հետո դադարել է գոյություն ունենալուց։ Սակայն, ինչպես երևում է, հետագայում էլ Երևան քաղաքում և նրա շրջակայքի գյուղերում արհեստավորները պրիմիտիվ եղանակով վառոդ են արտադրել և գաղտնի ճանապարհներով այն վաճառքի հանել տարբեր կողմերում։ Կաթողիկոսական դիվանի փաստաթղթերում ասված է այն մասին, որ Երևանում գաղտնի արտադրվել և սայլերով ծածուկ կերպով Շամխիլին է ուղարկվել բավական քանակությամբ վառոդ։ Ցարական ոստիկանությանը հաջողվել է վառոդ արտադրող արհեստավորներին և նրանց պատվիրատուներին հայտնաբերել ու պատասխանի հանձնել երկարատև որոնումներից ու մանրազնին հետաքննությունից հետո միայն[1]։ Ըստ երևույթին, խանական շրջանի վառոդարանը հետագայում գաղտնի կերպով գործող արհեստավորներից տարբերվում էր միայն նրանով, որ այն ավելի խոշոր էր և գործում էր ջրի ուժով։

Այդպիսին էր արհեստագործության ու արդյունաբերական բնույթ ունեցող ձեռնարկությունների վիճակը Երևանում, XIX դ. առաջին տասնամյակներում։

բ) ԱՌԵՎՏՈՒՐԸ

Առևտուրը խափանող և նրա զարգացմանը նպաստող ազդակները։ Երևանի սարդարի վարած առևտրական հաղթականության բնույթը։ Առևտրի ապրանքները։ Ապրանքների գները։ Վաճառականների կարգերը։ Շուկա-հրապարակները։ Քարավանատները։ Կրպակներն ու խանութները, դրանց թիվը, բնույթը և տեղաբաշխումն ըստ հաղթի առանձին մասերի։ Ներքին առևտրի կազմակերպման ձևը և նրանից խանի ստացած եկամուտները։ Արտաքին առևտրի պայմանները։ Սարդարի արտաքին առևտուրը հովանավորող հաղթականությունը։ Ռուսաստանի և Պարսկաստանի առևտրական փոխհարաբերությունները։ Արտաքին առևտրի զարգացումը խափանող ազդակները։ Երևանը որպես ռուս-պարսկական առևտրի ամենախոշոր կայաններից մեկը։ Երևանի վրայով կատարվող տարանցիկ առևտրի բնույթը, ապրանքների կազմը և ծավալը։ Մաքսային սիստեմը։ Երևանով անցնող հաղորդակցության ճանապարհները։ Դրամի, կշռի և չափի միավորները։ Արտաքին և ներքին առևտրի աճումը 1826—1828 թթ.։

[1] М. Нерсисян, Из истории русско-армянских отношений. Ереван, 1956, книга первая, Документы, էջ 359։

[2] Ճանապարհորդութիւն Մխսրովբայ Թ. Թաղիադեանց Վ. Ա. սարկաւագապետ էջմիածնի ի Հայս, Հատոր առաջին, Կալկաթա, 1847, էջ 129։

[1] Հայոց Մինիստրների Տովեմին կից Պետական Ձեռագրատուն (Մատենադարան), Ֆ. Կաթողիկոսական դիվան, Թղթապանակ 147, վավերագիր 478։

Ֆեոդալական Պարսկաստանում և նրա վարչական միավորումներից մեկը կազմող Երևանի խանությունում տիրապետող էր փակ նատուրալ տնտեսությունը: Առևտրի լայն զարգացման համար չկային համապատասխան սոցիալ-տնտեսական պայմաններ, նրա ծավալմանը խանգարում էին նաև ֆեոդալական մաքսային սիստեմը, հանապարհների վտանգավորությունը, չափ ու կշիռների տեսակների բազմազանությունը: Բնակչության ցածր գնողունակությունը և քաղաքական դեպքերը, որոնք այնքան հաճախակի էին դարձել XIX դարի առաջին քառորդի Երևանի խանությունում, մինչև որ այն վերջնականապես ազատվեց պարսկական լծից: Սարդարն իր կողոպտիչ քաղաքականությամբ գյուղացիությանը հասցրել էր ծայր աղքատության: Գյուղացին շուկա դուրս բերելու համար չուներ ավելցուկ մթերքներ, այն անհնարին բանակությամբ մթերքներն էլ, որ նա դուրս էր բերում վաճառքի, անում էր հարկադրաբար՝ դրամական որոշ տուրքեր տալու և իր տնտեսության մեջ պակասող իրեր ձեռք բերելու համար: Սակայն այդ նույնը չի կարելի ասել խանության կենտրոն Երևանի առևտրի վերաբերյալ: Երևանում պայմանները որոշ չափով այլ էին, այստեղ առկա էին որոշ ազդակներ, որոնք նպաստում էին ներքին առևտրի ծավալմանը: Հակառակ գյուղական վայրերի, որտեղ գյուղացիության ծայր աստիճան աղքատության պատճառով նրա գնողունակությունը աննշան էր, իսկ ինքն էլ ավելցուկ մթերքներ չուներ, կամ շատ քիչ ուներ շուկա դուրս բերելու համար, Երևանում, իբրև խանության կենտրոն, առկա էր բարձր պահանջներ ունեցող սպառողների մի բազմամարդ խումբ: Դրա մեջ մտնում էին՝ սարդարը, նրա պալատի ծառայողները, հարեմը, զորքը, 10-ի հասնող առաջնակարգ խաներ, բազմաթիվ միրզաներ, բեկեր և այլ կարգի աստիճանավորներ, որոնք իրենց հսկայական եկամուտների մի մասը գործադրում էին Երևանի շուկայում՝ իրենց շռայլ կյանքի պահանջմունքներին հագուրդ տալու համար[1]: Շոպենի վկայությամբ, նշված 10 խաներից յուրաքանչյուրն ամեն տարի Երևանի շուկայում ծախսել է 3000 թումանի[2], իսկ սարդարն ու նրա բարձրաստիճան պաշտոնյաների ծախսումներն, անշուշտ, ավելի

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 873: Տե՛ս նաև՝ Ն. Շահազիզ, Հին Երևանը, էջ 159—160, Проф. О. Е. Туманян, Экономическое развитие Армении, часть I, էջ 20—21:

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 873:

մեծ մասշտաբներ են ունեցել: Բազմաթիվ միրզաները, բեկերն ու այլ կարգի աստիճանավորները ևս բավական միջոցներ են ծախսել Երևանի շուկայից իրենց աղայական ապրուստին համապատասխան ապրանքները գնելու համար: Ինքը սարդարը ևս զբաղվել է առևտրով, մասնակցել է խոշոր վաճառականների գործարքներին: Սարդարի օրինակին հետևել են մյուս խաները, որոնք իրենց շահերից ելնելով, դրամ են մատակարարել վաճառականներին և նրանց վերցրել իրենց հովանավորության տակ[1]:

Միշտ չէ, որ սարդարի քաղաքականությունը նպաստել է Երևանի առևտրի զարգացմանը: Եթե նա իր բազմամարդ պալատով և զորքով եղել է քաղաքի մեծագույն սպառողը, խոշոր վաճառականների հովանավորն ու նրանց առևտրի ակտիվ մասնակիցը, ապա որոշ ապրանքների համար սարդարական մենաշնորհ սահմանելով՝ սարդարը դրանով իսկ անուղղակի կերպով արգելակել ու խափանել է ներքին առևտրի զարգացումը: Սարդարի մենաշնորհն էին բամբակը և չալթուկը: Ամբողջ խանության ավելցուկ բամբակն ու չալթուկը նրա հրամանի համաձայն պարտավոր էին որոշված ցածր գներով (բամբակի մեկ խալվարը 80 ռուբլի արծաթով, իսկ չալթուկինը՝ 6 ռուբլով) վաճառել սարդարին, որը, դրանց միացնելով հարկերի ու տուրքերի ձևով ստացվածները, վաճառականների միջոցով ուղարկում էր Վրաստանի, Պարսկաստանի կամ Թուրքիայի շուկաները[2]: Անուղղակի մի քանի վկայություններ գալիս հենասելու, որ բացի բամբակի ու չալթուկի առևտուրն իր մենաշնորհի հայտարարելուց և դրա խախտման դեպքեր թույլ չտալու համար խիստ հսկողություն սահմանելուց, սարդարը խանական պահեստներում հավաքված մյուս տեսակի ապրանքները ժամանակին և բարձր գներով վաճառելու համար՝ նույնատեսակ ապրանքների վաճառքը կամ միանգամից արգելում էր, կամ զանազան պատրվակներով խափանում: Երևանի «վաճառականները ...սպասում են, մինչև որ» սարդարը «կարողանա յուր բաժինը վաճառել... նա նեղում է ոչ միայն ներքին առևտուրը, այլև արտաքինը, ուշադրու-

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 873:

[2] Նույն տեղը, էջ 873—874: «Обозрение российских владений за Кавказом» (ч. IV, էջ 280—281)-ում ասված է, որ սարդարը բամբակը գնում է բաժմանը 1 ռուբլով (արծաթ), և քանի որ խալվարը 100 բաժման էր, ապա բուն այդ աղբյուրի նա խալվարը գնում էր ոչ թե 80 ռուբլով, այլ 100-ով: Սակայն նրա օգուտները դարձյալ շատ մեծ էին:

Թյան չառնելով դաշնագրերը, ինչպես և Ադամ Սմիթի սիսեռամբ, որոնք նրա օրով և նրա համար գրված բաներ չեն»[1]:

Աչնուամենայնիվ, Երևանի առևտուրը կրում էր աշխույժ բնույթ: Նրա շուկաներում ու կրպակներում վաճառվում և գնվում էին գյուղատնտեսական ապրանքներ (հացահատիկներ, թարմ ու չոր մրգեր, խմիչքներ, բանջարեղեն, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ձիեր, ջորիներ և էշեր, թռչուններ, կաթնամթերքներ, միս և այլն, և այլն), արհեստավորական արտադրանքներ (գյուղատնտեսական ու արհեստավորական գործիքներ, տնային գործածության իրեր, գործվածքներ և այլն), ինչպես և ներմուծված ապրանքներ: Դրամով կատարվող առևտրի հետ միասին տարածված էր նաև ապրանքափոխանակությունը: Ընդ որում, արհեստավորական արտադրանքները գերազանցապես վաճառվում էին հենց արհեստանոցներում, դրանք դուրս չէին բերվում շուկա, որովհետև արհեստավորները հիմնականում աշխատում էին պատվիրատուների համար: Այդ է պատճառը, որ Երևանի մասին խոսելիս՝ ժամանակակից հեղինակները գրեթե ոչինչ չեն հաղորդում արհեստավորական արտադրանքների կազմի ու դրանց գների վերաբերյալ: Երևանում արտադրվող ապրանքների մեջ բանջարեղենը համեմատաբար քիչ է դուրս բերվել շուկա՝ վաճառքի, որովհետև, ինչպես կտեսնենք քաղաքի գյուղատնտեսական զբաղմունքների մասին խոսելիս, գրեթե բոլորն ունեին իրենց բանջարանոցները՝ սկսած սարդարից մինչև արհեստավորն ու առևտրականը:

Երևանի շուկայում վաճառվող ապրանքների մի մասը (արհեստավորական շինվածքներ ու իրեր, խմիչքներ, մրգեր, խաղող և այլն) քաղաքային ծագում ուներ՝ արտադրվում էր քաղաքում, իսկ մյուս խոշորագույն մասը գալիս էր դրսից, բերվում էր խանության զանազան մահալներից, ինչպես և ներմուծման ճանապարհով: Այսպես, օրինակ՝ Երևանի շուկա՝ վաճառելիության ու փայտածուխ էին բերում Դարաշիշագի (Ծաղկաձոր) մահալի բնակիչները[2]*, բուսական սոդա էին բերում Արարատյան հարթության տարբեր մասերից, հացահատիկներ՝ դաշտային և նախալեռնային մահալներից, անասուններ, բուրդ, կաթնամթերքներ՝ լեռնային շրջաններից, աղ՝ Կողբից, մասամբ Նախիջևանից և այլն:*

Երևանի շուկայում վաճառվող տեղական ապրանքների և դրանց գների վերաբերյալ եղած տեղեկությունները, որոնք հիմնականում հաղորդված են Ի. Շոպենի կողմից և ցրված են նրա գրքի տարբեր բաժիններում, ի մի բերելով, կարելի է կազմել հետևյալ աղյուսակը, որը տվյալների պակասության պատճառով ամբողջական և բավարար լինելուց շատ ու շատ հեռու է:

Երևանի շուկայում վաճառվող ապրանքները և դրանց գները

Աղյուսակ № 5

Ապրանքների տեսակները	Վաճառման գինը արծաթի դրամով արտահայտված		Ապրանքների տեսակները	Վաճառման գինը արծաթի դրամով արտահայտված
	բարձր որակի	ցածր որակի		
Ցորեն (1 խալվար)	12 ռ	6 ռ	Լավագույն տեսակի ձին	100 ռ—300 ռ (և ավելի)
Գարի »	7 »	3 »		
Ոսպնակ »	6 »	3 »	Սովորական էշը	4 ռ—6 ռ
Չայիրուկ »	12 »	8 »	Անասնային բեռված էշը	12 ռ—20 ռ
Բրինձ »	25 »	16 »	Ոչխարը	2 ռ—6 ռ
Կտավատ »	25 »	16 »	Եզը	2 ռ—3 ռ[3]
Քնջութ »	24 »	15 »	Մեղրի մեկ բաթմանը	1 ռ 20 կ—2 ռ[3]
Բամբակ »	205 »	120 »	Քնջութի ձեթ (մեկ բաթմանը)	1 ռ 60 կ—2 ռ 40 կ
Մխաճառ »	160 »	50 »		
Դեղձաբշակ »	25 »	16[1] »	Կտավատի և գեներայի մեկ բաթմանը	80 կ—1 ռ 20 կ
Յուղ (1 բաթմանը)	1 ռ—1 ռ 60 կ		Աղյուսի 1000 հատը	12 ռ—14 ռ[4]
Բուրդ »	60 կ—1 ռ		Բուսական սոդայի մեկ խալվարը	16 ռ—20 ռ
Պանիր »	50 կ—40 կ		Ածուխ (մեկ բեռը)	1 ռ 20 կ—2 ռ
Աշխատող գոմեշը	20 ռ—40 ռ		Փայտ »	35 կ—45 կ[5]
Լծի գոմեշը	15 ռ—25 ռ		Հոտի 100 կապուկը	60 կ—1 ռ 20
Եզը	10 ռ—20 ռ		Ոսխտի »	80 կ—1 ռ 60
Կթի կով	6 ռ—12 ռ		Դարմանի մեկ խալվարը	2 ռ—4 ռ[6]
Ջորին	50 ռ—30 ռ		Խաղողի և այլ մրգերի մեկ բաթմանը	20 կ[7]
Տեղական տեսակի ձին	15 ռ—40 ռ		Գինու թացախի մեկ բաթմանը	60 կ—80 կ[8]

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 745:

2 Նույն տեղը, էջ 794—796:

3 Նույն տեղը, էջ 471, 809:

4 Նույն տեղը, էջ 862:

5 Նույն տեղը, էջ 853—854:

6 Նույն տեղը, էջ 764:

7 *Այլ աղբյուրի համաձայն, 30-ական թվականների սկզբներին թարմ ծիրանի մեկ բեռը վաճառվում էր 1 ռ. արծաթ դրամով, իսկ չորացրած ծիրանի բաթմանը՝ 40 կոպեկով: Ապրանքափոխանակություն կատարելիս չորացրած ծիրանի մեկ բաթմանը փոխանակում էին 4 բաթման ցորենի հետ (տե՛ս* Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, ч. IV, СБП, 1836, էջ 281):

8 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 752:

[1] А. С. Грибоедов, Полное собрание сочинений, т. I, էջ 42:

2 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 853:

Մեր կազմած այս աղյուսակում թվարկված բոլոր ապրանքներն առանց բացառության ունեն գյուղատնտեսական ծագում: Նայելով դրանց գներին, առաջին իսկ հայացքից թվում է, թե դրանք շատ էժան են եղել: Սակայն դա միայն առաջին հայացքից: Իրականում փակ նատուրալ տնտեսության պայմաններում, երբ թույլ էին զարգացած դրամական հարաբերությունները, երբ շրջանառության մեջ գտնվող դրամի քանակը չնչին էր, երբ արհեստավորների, օրավարձով աշխատողների և մյուս աշխատանքների աշխատավարձը չնչին կոպեկներ էին, ապա այդ գներն էլ համեմատաբար շատ բարձր էին, էլ չենք խոսում այն մասին, որ ոչ գյուղատնտեսական լայն գործածության ապրանքների գները (գործվածքների, մետաղյա իրերի, շաքարի, օճառի և այլն) շատ բարձր էին: Դրանցից շատերն իրենց քանկության պատճառով (օրինակ՝ օճառը, շաքարը, մետաքսյա գործվածքները և այլն), միանգամայն անմատչելի էին աշխատավոր բնակչության համար: Կարելի է ենթադրել, որ ցարական աստիճանավոր Ի. Շոպենը դիտավորյալ կերպով լռել է ոչ գյուղատնտեսական ապրանքների գների մասին, ըստ երևույթին, ձգտելով ստեղծել տպավորություն, թե իբր Հայկական մարզի բնակչության նյութական պայմանները այնքան էլ վատ չէին:

Այդ բոլորի հետ միասին, անհրաժեշտ է նկատի ունենալ ևս մի կարևոր հանգամանք, դա Շոպենի հաղորդած տեղեկությունների արժանահավատության հարցն է: Չափ ու կշռի բազմազանության ու անորոշության, բերքատվության մեծ տատանումների (երաշտի, մորեխի, հիվանդությունների հետևանքով) և այլ օբյեկտիվ պայմանների պատճառով, ցանկություն ունենալու դեպքում էլ նա ապրանքների գները չէր կարող հաղորդել անգամ մոտավոր ճշտությամբ: Ինքը Շոպենը դգալով այդ, արդ վերապահություն է անել ցորենի, գարու, կորեկի, չալթուկի, բրնձի, կտավատի, քնջութի, բամբակի, ծխախոտի և գնդապղպեղի գները հաղորդելուց առաջ: Ահա թե ինչ է գրում նա. «Բոլոր այս արտադրանքների (ցորենի, գարու և այլն — Բ. Հ.) միջին գները կախված են պահանջից և բերքից»[1], ավելացնելով, որ «դրանք (գները — Բ. Հ.) հազվադեպ են ցուրտ գալիս» իր հաղորդած չափերի սահմաններից[2], իսկ նվազագույն և առավելագույն գներն իրարից տարբերվում են մեկ

[1] И. Шопен. Исторический памятник Армянской области, էջ 745:

[2] Նույն տեղը:

և կես, երկու և ավելի անգամ՝ անորոշ դարձնելով շատ ապրանքների մոտավոր գները: Այսպես, օրինակ՝ ձիու գինը տատանվում էր 15 ռուբլուց 300 ռուբլու սահմաններում, ջորու գինը՝ 50 ռուբլուց 300 ռուբլու սահմաններում, ծխախոտինը (մեկ խալվարը)՝ 50 ռուբլուց 160 ռուբլու սահմաններում և այլն:

Առևտրով զբաղվում էին և՛ գյուղացիները, և՛ արհեստավորները, և՛ վաճառականները, և՛ ինքը սարդարը: Պրոֆեսիոնալ վաճառականությունը ըստ իր կապիտալի մեծության, կատարած առևտրի չափի և երկրի կյանքում խաղացած դերի, բաժանվում էր չորս խմբի՝ սովդաքյարների, բինախտարների, բազազների և չարչիների[1]: Սովդաքյարները եղել են ամենահարուստ և բարձր դիրք ունեցող վաճառականները: Նրանք խանութներ չեն ունեցել, այլ կատարել են մեծածախ առևտուր: Սովդաքյարները գրեթե բացառապես զբաղվում էին արտաքին առևտրով: Նրանցից շատերը 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո թողել են Երևանը և գնացել Պարսկաստան: Սովդաքյարները մաքսերից բացի որևէ այլ կարգի հարկ կամ տուրք չէին տալիս, նրանք պատկանում էին ոչ թե հարկատու դասին, այլ վերնախավին: Նրանց այդ իրավունքները պահպանվեցին նաև Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո: Եղած տվյալների համաձայն, Երևանում հարուստ վաճառական կամ առևտրական են համարվել նրանք, որոնք ունեցել են մինչև 6 հազար ռուբլու (արծաթ դրամով հաշված) կապիտալ, և այդպիսի առևտրականների ու վաճառականների թիվը եղել է շատ փոքր: Տասը հազար ռուբլի և ավելի կապիտալ ունեցող վաճառականներ և առևտրականներ գրեթե չկային ո՛չ հայերից և ո՛չ էլ պարսիկներից ու ադրբեջանցիներից: Մի քանի վաճառականներ ու առևտրականներ չնայած կատարում էին 10—20 հազար ռուբլու առևտուր, սակայն նրանց մոտ շրջանառության մեջ գտնվող փողը պատկանում էր ոչ թե մեկ, այլ բազմաթիվ մարդկանց[2]:

Ըստ իրենց նշանակության և հարստության, վաճառականների երկրորդ խումբը կազմում էին բինախտարներ, որոնք ևս, սով-

[1] И. Шопен. Исторический памятник Армянской области, էջ 850—851. Статистические очерки некоторых городов Кавказа и Закавказского края; К. Орловский. Эривань (Кавказский календарь на 1852 г., отд. III, էջ 447). Տե՛ս նաև՝ Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 41:

2 Статистические очерки некоторых городов Кавказа и Закавказского края; К. Орловский. Эривань (Кавказский календарь на 1852 г., отд. III, էջ 447):

դաբյարների նման, մեծածախ առևտուր էին կատարում։ Սակայն ի տարբերություն վերջինների, նրանք ունեին իրենց խանութները և իրենց գործարքներն էլ հենց կատարում էին խանութներում կամ կրպակներում, ինչպես սովորաբար կոչում են ժամանակակիցները։

Բազազները մանրածախ առևտուր կատարողներն էին։ Նրանք ունեին իրենց փոքրիկ կրպակները, որոնցում վաճառում էին կտոր-եղեն և այլ մանր ապրանքներ։ Նույնպիսի բնույթ ուներ բախկալների առևտուրը, սակայն այն տարբերությամբ, որ սրանք մրգավաճառներ էին։ Վաճառականների վերջին խումբը կազմում էին չարչիները (փերեզակներ), որոնք շարժական առևտրով են զբաղվել՝ ապրանքը շալակած անցնելով քաղաքի մի փողոցից մյուսը, մի բակից մյուսը, կամ, հաճախ էլ, ուղևորվել են շրջակայքի գյուղերը, այնտեղ վաճառելով իրենց ամենաանհրաժեշտ ապրանքները[1]։ Չարչիները գյուղերում ապրանքները վաճառում էին երկու-երեք անգամ ավելի թանկ, հաճախ կատարում էին ապրանքափոխանակություն[2]։ Նրանք սովոր էին երկար սակարկել, խաբել չափ ու կշռի մեջ, անորակ ու անպետք ապրանքները ներկայացնել իբրև արժեքավոր ու բարձրորակ։ Հենց դրանով պետք է բացատրել այն, որ ժողովուրդը սակարկություն անող և ապրանքն իր գինից շատ բարձր վաճառող մարդկանց սովորաբար կոչել է «չարչի»։

Ավելի հարուստ չարչիները գյուղերում առևտրական շրջագայություն էին կատարում ոչ թե շալակով, այլ ձիով կամ էշով[3]։

Արևելքի և Արևմուտքի ֆեոդալական քաղաքների նման, Երևանում ևս առևտուրը հիմնականում կենտրոնացված էր շուկա-հրապարակներում, ուր տեղավորված էին քարավանատները, կրպակների ու խանութների մեծագույն մասը և պահեստները։ Շուկա-հրապարակները ամեն օր լեփ-լեցուն են եղել մարդկանցով։ Նրանց մի մասը զբաղվել է արհեստով ու առևտրով, մի մասը՝ իր համար ապրանքներ գնելով, մի մասը օրվա ապրուստի համար աշխատանք որոնելով, իսկ մյուս մասը հենց այնպես, երբեմն առանց որևէ գործի խոնվել է «առավոտից մինչև երեկո»[4]։ Ընդհանուր

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 850. Статистические очерки некоторых городов Кавказа и Закавказского края; К. Орловский, Эривань (Кавказский календарь на 1852 г., էջ 447)։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 850—851։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը, էջ 877։

առմամբ, Երևանի հրապարակները մեծ տարածություններ չեն զբավել, նրանք ունեցել են քառանկյունու տեսք, որոնց չորս կողմերում շարված են եղել զանազան կրպակներ։

Երևանի շուկա-հրապարակների (մեյդանների) թիվը հասել է հինգի, դրանք էին Խանբաղի, Հուսեյն-Ալի-խանի կամ Մզկիթի, Ջալ-խանի, Ֆահլա-բազարի և Գլխավոր կամ Մեծ կոչված հրապարակները[1]։

Հուսեյն-Ալի-խանի հրապարակը եղել է ամենից գեղեցիկը. նա ունեցել է կանոնավոր քառանկյունու տեսք և գտնվել է գլխավոր մեչիդի մոտ, որի պատճառով էլ կոչվել է նաև Մեչիդի կամ Մզկիթի հրապարակ։ Այն բոլոր կողմերից շրջապատված է եղել խանութներով, որոնց մի մասի պատերը շարված են եղել թրծած աղյուսով։ Հրապարակն ունեցել է կանոնավոր կամարակապ արտաքին[2]։ Խանբաղի հրապարակը, Թուրքմենչայի պայմանագրի համաձայն, հայ գաղթականների՝ Պարսկաստանից ներգաղթելուց հետո, շարքից դուրս է եկել[3], որովհետև այնտեղ տներ են կառուցվել, և այն դարձել է բուն քաղաքի մի մասը։ Ջալ-խանի հրապարակը ևս շրջապատված է եղել կրպակներով, բայց սա Խանբաղի համեմատությամբ ավելի փոքր էր։ Ֆահլա-բազարը խանութներ գրեթե չի ունեցել, ավելի ամայի է եղել։ Այստեղ ամեն օր հավաքվել են աշխատանք որոնող մշակները, որի պատճառով էլ այն կոչվել է Ֆահլա-բազար («մշակի շուկա», «բանվորի շուկա»)։ Գլխավոր շուկա-հրապարակը, որ ուղղակի կոչվել է Մեյդան (հրապարակ), գտնվում էր բերդի, Կոնդի (Քափարաշ) և Շահարի միջև՝ գրավելով բավական ընդարձակ տարածություն։ Հիմնականում այստեղ էր կատարվում մրգեղենի և բանջարեղենի վաճառքը, իրենց ապրանքներն այստեղ էին բերում Երևանի շրջակայքի մահարների ու գյուղերի բնակիչները։ Մեծ հրապարակում էին գտնվում սարդարական կշեռքները՝ դանթարը (մեծ կշեռքը) և միրզանը (փոքր կշեռքը)[4]։ Քաղաքի գլխավոր շուկայից (բազար) և մյուս շուկա-հրապարակներից բացի՝

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 877։ Տե՛ս նաև՝ Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 43—44։

[2] Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջմիածին, 1842, էջ 150, И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 881։ Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 316։ Տե՛ս նաև՝ Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 44։

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 877։

[4] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 44։

մի ոչ մեծ շուկա էլ գտնվում էր բերդում: Վերջինս «շրջապատված էր վառ կառուցված փոքրիկ կրպակներով»[1]:

Կշեռքների հսկիչը նշանակվում էր սարդարի կողմից և կոչվում էր դանբար-բաշի:

Բոլոր շուկա-հրապարակները և կշեռքները տրված էին մենավարձով:

Առևտրի կազմակերպման համար առանձնահատուկ նշանակություն ունեին քարավանատները (քարվանսարաները), որոնք սպասարկել են երթևեկ վաճառականներին: Երևանի քարվանսարանները, առանց բացառության, շարված են եղել աղյուսից կամ բազալտից և գրանիտից, կրաշաղախով[2]. նրանք համարվել են քաղաքի ամենաամուր և բարեկարգ կառույցներից: Ունեցել են կրպակներ ու խանութներ, պահեստներ, ախոռատներ, գիշերելու համար հատուկ սենյակներ: Գրեթե առանց բացառության, նրանք ունեցել են ընդարձակ ու ծառազարդ բակեր, իրենց ջրավազաններով:

Բոլոր քարավանատները գտնվում էին գլխավոր շուկայում: Շոպենի վկայությամբ, 30-ական թվականների սկզբներին Երևանում պահպանվել էին 7 քարավանատներ, որոնք կրում էին հետևյալ անունները.

1. Գյուրջի (վրացական), որը եղել է ամենից գեղեցիկը և ունեցել է 62 խանութներ ու կրպակներ, բացի այդ, 24 կրպակ էլ գտնվել են նրա մոտ շարքերով (չարսու)[3]: 2. Ջուղայի քարավանատունը՝ 38 կրպակներով: 3. Ջառաբի[4] քարավանատունը, որը դարձյալ ունեցել է 38 կրպակներ: 4. Թաղիր, 5. Սուլի (ջուր ունեցող) և 6. Սուսրզ (ջուր չունեցող), որոնք սրասին ունեցել են 74 խանութ ու կրպակ: 7. Հաջի-Ալիի[1] քարավանատուն՝ 40 խանութներով[2]: Հաջի-Ալիի քարավանատունը ամենից ընդարձակն էր: Նա ունեցել է մեծ խանութներ և ախոռատներ, բայց 30-ական թվականների սկզբներին արդեն խարխլվել էր:

Պետական քարավանատները տրված էին մենավարձով (կապալով) և կապալառուն հավաքում էր հատուկ հարկեր, որոնց մասին կխոսենք քիչ հետո, առևտրից վերցվող հարկերին անդրադառնալիս:



Ղանթարի (շուկա) ընդհանուր տեսքը (Հայկական ՍՍՌ Գոտո-ֆոնո-կինո արխիվ):

Երևանում խանութների և կրպակների թիվը հասել է 851-ի[3], որոնք տեղադրված են եղել քարավանատներում, առևտրաշարքերում (չարսուներում) և հրապարակներում: 11.463 բնակիչ ունեցող քաղաքի համար, ինչպիսին էր Երևանը, թվում է, թե խանութների և կրպակների այդ թիվը անհավատալիորեն մեծ է: Սակայն պետք է նկատի ունենալ երեք հանգամանք՝ ա) այն, որ դրանք

---

[1] Записки декабриста Е. Лачинова об Армении (տե՛ս М. Нерсисян. Из истории русско-армянских отношений, кн. первая. Документы, էջ 359):

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области. էջ 468 և 879:

[3] Շոպենի մոտ մի տեղ ասված է, որ Գյուրջի քարավանատան շրջակայքում կա 78 խանութ, և 34 խանութ էլ հատուկ շարք են կազմել (չարսու) (տե՛ս նրա «Исторический памятник Армянской области» աշխատությունը, էջ 879: Բայց մի այլ տեղում այդ նույն քարավանատան շրջանում հիշատակում է ընդամենը 62 խանութ (նույն տեղում, էջ 881):

[4] «Ջառաբ»-ը նույնն է «սառաֆ» բառի հետ, որը նշանակում է լումայափոխ, դրամափոխ: Ջառաբի քարավանատան կրպակներից մի քանիսում դրամափոխությամբ էին զբաղվում սառաֆները: Այստեղ էր գտնվում և սարդարի դրամանոցը՝ «Ջառաֆ-խանան»: Այդ պատճառով էլ քարավանատունն էլ կոչվել է «Ջառաբի» քարավանատուն:

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 778—779: Հովհ. Շահխաթունյանց, Սաղարտութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջ 150. Աբիշան, Այրարատ, էջ 316.

[2] 30-ական թվականների սկզբներին ամբողջ Հայկական մարզում (քաղաքներինը և մահալներինը միասին վերցրած) եղել է 24 քարավանատուն:

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 469 և 881, իսկ ամբողջ Հայկական մարզի խանութների ու կրպակների թիվը 1409 էր (տե՛ս նույն տեղը, էջ 881—882):

եղել են շատ փոքր։ Այն կրպակը, որի համար Թիֆլիսում կարող էր մուծվել 600 ռուբլի արծաթ, Երևանում, առևտրի սահմանափակության և կրպակների փոքրության պատճառով, բերում էր տարեկան 25—30 ռուբլուց ոչ ավելի եկամուտ[1]. բ) պետք է հաշվի առնել, որ խանութներն ու կրպակները ոչ բոլորն էին իրրև խանութներ ծառայում, բառիս իսկական իմաստով. նրանց մեծ մասը փաստորեն ոչ թե խանութներ, այլ արհեստանոցներ էր. գ) պատերազմների պատճառով խանութների և կրպակների մի զգալի մասը գտնվում էր լքված կամ բոլորովին ավերված վիճակում, և նրանցում առևտուր չէր կատարվում։

Որ իրոք նշված կրպակների մի մասը արհեստանոցներ էր,



Գյուրջի քարավանատունը՝ լուսանկարված բակի կողմից (Հայկական ՍՍՌ Ֆոտոֆոնո-կինո արխիվ)։

և եղել են խափանված ու ամայի շատ կրպակներ ու խանութներ, դա երևում է Ի. Շոպենի հետևյալ հիշատակությունից, որը նա կատարում է ամբողջ քաղաքի խանութների ու կրպակների բաշխումն ըստ քաղաքի մասերի ներկայացնելուց հետո.

«Հրապարակներում ու միջնորմներում, կրպակների միջև, տեղ-տեղ դեռևս կանգնած են դրամափոխների, արծաթագործների, ժամագործների և մետաքսավաճառների փայտյա տնակները (будка—

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 469 և 882։

Ի. Հ.), կրպակները և պահարանները, այժմ սակայն, այդ ցուցադրություններն սկսում են անհետանալ[1]։ Իսկ հաջորդ պարբերության մեջ ուղղակի նշում է, որ շատ կրպակներ դատարկ ու ամայի են[2]։

Կրպակներն առանց բացառության համարվել են պետական-սարդարական։ Նոր շուկան կառուցելուց հետո, որն ունեցել է բավական բարեկարգ 24 խանութների մի երկար շարք, բոլոր խանութներն ու կրպակները վարձով տրվել են արհեստավորներին և առևտրականներին, որոնք պարտավոր էին լրիվ վճարել կրպակների ու խանութների վարձը, անկախ այն բանից՝ առևտուր կատարում են, թե ոչ, որովհետև սարդարական հատուկ հրովարտակով դրանք համարվել էին վարձակալողներին ընդմիշտ տրված։ Հետագայում, սակայն, բնակիչներից ոմանք իրենց ամրացված կրպակներում առևտուր կատարելու իրենց իրավունքը տվել են այլ մարդկանց, իսկ վերջիններս էլ, ժամանակի ընթացքում, իրենց սեփականությունն են դարձրել կրպակները։ Սեփական կրպակներում առևտուր կատարելու համար կրպակատերերը սարդարական դրամարկղն էին մուծում արդեն ոչ թե հաստատուն կերպով սահմանված գումար, այլ կատարված առևտրի չափին համապատասխան, իսկ քանի որ Երևանում առևտուրն ուներ շատ փոքր չափեր, հետևապես և կրպակներից ստացվող սարդարական եկամուտները բավական նվազել էին[3]։

Կրպակներն ու խանութները, ինչպես արդեն ասված է արհեստագործության և համքարությունների մասին խոսելիս, կենտրոնացած էին մի շրջանում՝ իրար մոտ գտնվող քարավանատներում և առևտրաշարքերում։ Այդպիսի կենտրոնացումը բխում էր տիրողների (սարդարների և խանների) վարչա-ֆինանսական շահերից և առևտրի կազմակերպման պայմաններից։ Առևտրից և արհեստներից պահանջվող տուրքերը նշանակելու, հավաքելու և դրանց վրա հսկելու համար սարդարին շատ ձեռնտու և անհրաժեշտ էր խանութներն ու կրպակները մի տեղում կենտրոնացնել, որպեսզի դրանք միշտ լինեին վերակացուների և հարկահանների աչքի առաջ, ամենօրյա հսկողության տակ[4]։ Կենտրոնացումը ձեռնտու էր նաև

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 882։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 882 և 492։

[4] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 18։

համքարութիւնների և առանձին առևտրականների ու արհեստավորների համար՝ հումքը գնելու, պատրաստի ապրանքները վաճառելու, համքարութիւնները դեկավարելու առումով և մի շարք այլ պատճառներով։

Խանութներն ու կրպակները Երևանում տեղաբաշխված էին հետևյալ կերպ.

ա) քարավանատներում	. . 252	խանութ և կրպակ
բ) առևտրաշարքերում (շարասներ)	543	»
գ) բերդում	32	»
դ) Քափարաշ (Կոնդ) թաղամասում	4	»
ե) շահարում	18	»
զ) Դամիրբուլաղ թաղամասում	2	»

ընդամենը՝ 851 խանութ և կրպակ[1]

Ընդ որում քարավանատների խանութները բաշխված էին այսպես.

ա) Գյուրջի քարավանատանը	. . 62	խանութ և կրպակ
բ) Ջուլֆայի և Ջառարի քարավանատներում	76	»
գ) Թաղիր, Սուլի և Սուսրդ քարավանատներում	74	»
դ) Հաջի-Ալիի քարավանատանը	. . . 40	»

ընդամենը՝ 252 կրպակ[2]

Երևանի առևտրի կազմակերպման ձևը լիովին համապատասխանել է Պարսկաստանի և, ընդհանրապես, ֆեոդալական քաղաքների առևտրին։ Նրա հրապարակներում յուրաքանչյուր ապրանք կամ նույնատեսակ մի քանի ապրանքներ վաճառվել են առանձին շարքերում։ Դրան համապատասխան էլ եղել են մրգեղենի, կտորեղենի, մետաքսեղենի և այլ ապրանքների հատուկ խանութաշարքեր։ Խանութներից ու կրպակներից բացի, եղել են վաճառատեղաններ, պահարաններ, փոքրիկ վրաններ, առևտուր է կատարվել նաև ձեռքի վրա։ Շուկան գտնվում էր սանիտարական վատ պայմաններում. ցեխը, փոշին, մրգերի ու բանջարեղենի մնացորդները, որ թափված էին ամենուրեք, շուկային տալիս էին անհրապույր տեսք,

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 469։

[2] Նույն տեղը, էջ 881։

իսկ գնորդների, վաճառողների և «ժամանակ անցկացնողների» աղմուկ-աղաղակը ականջ էր խլացնում։

Ներքին առևտրի հարկադրումից սարդարն ստանում էր մեծ եկամուտներ։ Պետական քարավանատները, խանութներն ու կրպակները սարդարի կողմից տրված էին մենավարձով։ Կապալառուն Երևան բերվող և նրա շուկաներում ու խանութներում վաճառվող ապրանքների համար գանձում էր սահմանված տուրքերը՝ դրամով կամ բնամթերքով[1]։ Այդ տուրքը չի տարածվել միայն Երևան քաղաքի ապրանքների վրա, դրանք քաղաքի շուկաներում և հրապարակներում վաճառելու համար հատուկ տուրք չէին տալիս[2]։

Սարդարին և մենավարձողներին հասնող տուրքերն ու մաքսերը հավաքելու համար շուկաներում և հրապարակներում կարգված էին զանազան հարկահավաքներ։ Քաղաք բերվող անասունները տարվում էին դալալ-խանա՝ միջնորդների (դալալների) բակը, որտեղ միջնորդները խանի հարկահավաքների հսկողությամբ վերցնում էին խանական տուրքը և իրենց միջնորդական տոկոսները։ Քաշով վաճառվող ապրանքները տանում էին շուկայում գտնվող խանական երկու կշեռքների՝ դանթարի և միզանի մոտ, որոնք նույնպես տրված էին մենավարձով։ Այստեղ սարդարական կշռաբարը (весовщик), որը իբրև հսկիչ նշանակված էր սարդարի կողմից և կոչվում էր դանթար-բաշի, վերցնում էր կշռատուրքը (весовой сбор)։ Շրջակայքից բերվող մրգեղենը նույնպես ներկայացրել են դանթար, կամ ուղղակի տարել են մրգի շուկա՝ բախկալ-խանա, որտեղ հատուկ հարկահավաքը, ըստ «զամբյուղի, պարկի կամ բարձի», գանձել է համապատասխան տուրքը[3]։ Ընդ որում մեծ կշիռ ունեցող ապրանքները կշռել են դանթարով, իսկ փոքր կշիռ ունեցողները՝ միզանով։ Ապրանք վաճառողներն ու գնողները այդ երկու կշեռքների միջոցով են ստուգել իրենց վաճառած կամ գնած ապրանքի կշիռը[4], որովհետև շուկայում գտնվող մյուս փոքր կշեռքները

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 880—881, 887։ С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 17—18։ Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 44 և այլն։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 878։

[3] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 17—18։

[4] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 886։

շատ ավելի անճիշտ էին, փոքր էին և չունեին համապատասխան «ճշտված» կշռաքարեր։

Մետաքսյա և բամբակյա ապրանքները տարվում էին կամ քարավանատները, կամ մաքսատները, որտեղ վերցվում էր մաքս (ռախատար, տամղա)։

Խանութների, կշռոքների, հրապարակների, քարավանատների համար տրվող տուրքերն ունեին տարբեր չափեր։ Միայն խանութներից վերցվող տուրքը վերջին սարդարի ժամանակ տարեկան կազմում էր 1260 թուման, չհաշված հարկահավաքի կողմից վերցվող տոկոսները։

Շուկայում գտնվող կշռոքներով գերազանցապես ստուգվում էր մետաքսի, համեմունքների, խինայի, շաքարի, մեղրի և այլ ապրանքների քաշը՝ «ճշտված» կշռաքարերի միջոցով[1]։ Դրա համար մենավարձողը տուրք էր վերցնում հետևյալ չափերով[2]։

Մեկ բաթման մետաքսի համար . . . 45 կոպ. (արծաթ)
» » ինդիգոյի » . . . 45 »
» » բամբակի թելի » . . . 20 »
Որևէ բան կշռելու համար . . . . 2 »
Բամբակի, ձեթի, յուղի, սալի, մեղրի, մոմի, ծխախոտի և խմիչքի յուրաքանչյուր մեկ բաթմանի համար . . . . . 1 »
Բրդի, սիսեռի, ոսպի և բակլայի, լոր մըրգերի, նուշի և ընկույզի յուրաքանչյուր բաթմանի համար . . . . . 1 »

Շուկա-հրապարակներում, որոնք ևս տրված էին մենավարձով, վաճառք կատարելու համար կապալառուն տուրք վերցնելու իրավունք ուներ հետևյալ չափերով[3].

Մեկ բեռ շինափայտից, եղեգից և հարդից՝ 1 շահի (2 կ. արծաթ)
» աղից . . . . 2 » (4 »)
» ածուխից և տունկից . 4 » (8 »)
Մեկ բյուրդուգ (տիկ) կովի կամ ոչխարի յուղից . . . . . 5 » (10 »)
Արտասահմանից ներմուծված մեկ մեծ բյուրդուգ կովի կամ ոչխարի յուղից ¼ բաթման և այլն։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 886։
[2] Նույն տեղը, էջ 887։
[3] Նույն տեղը, էջ 878։

Շուկա-հրապարակներում վաճառք թույլ տալու համար կապալառուն շատ ապրանքներից վերցնում էր ոչ թե դրամական տուրք, այլ բնատուրք։ Այսպես՝ առվույտի և խոտի բեռի վաճառքի համար նա վերցնում էր մեկական կապոց, մեկ բեռ վառելափայտի համար՝ 2 կտոր, մեկ բեռ տախտակի համար՝ 2 տախտակ, մեկ բեռ փայտյա թասերի համար՝ 2 թաս, մեկ բեռ ձկան համար՝ 2 ձուկ, մեկ բեռ խսիրի համար՝ 2 խսիր, մեկ բեռ կավե թասերի համար՝ 2 թաս, ձմերուկի, սեխի և նոան յուրաքանչյուր բեռի համար՝ երկուական հատ, մեկ բեռ բահերի համար՝ 2 բահ, մեղրի, խաղողի հյութի, քիշմիշի, ծխախոտի, խնձորի, տանձի, սերկևիլի, փշատի, սալորի, կծոխուրի, նուշի, ընկույզի, սիսեռի, կարմիր բիբարի, սուճուխի, դեղձի և չորացրած այլ մրգերի յուրաքանչյուր բեռի համար՝ ¼ բաթման[1]։

Անասունների վաճառքի դեպքում կապալառուն յուրաքանչյուր ուղտի համար վերցնում էր 2 ռուբլի (արծաթ), ջորու համար՝ 1 ռուբլի, ձիու համար՝ 1 ռուբլի, գոմեշի, եզան և կովի համար՝ 4-ական կոպեկ, գառան համար՝ 2 կոպեկ[2]։

Ինչպես ասվեց, մենավարձով էին տրված նաև պետական քարավանատները։ Քարավանատներում գիշերելու, նրա կրպակներում առևտուր անելու, ինչպես և վաճառքի ապրանքները աչքատեղ պահելու համար՝ կապալառուն գանձում էր համապատասխան տուրքեր։ Կապալառուն իրավասու էր՝ ա) արտասահմանից և Երևանի խանության մահալներից քարավանատուն բերված ապրանքների մեծածախ վաճառքի դնի յուրաքանչյուր թումանից վերցնելու 1 շահի (այսինքն՝ ½ տոկոսը)։ Այս տուրքը տրվում էր միայն մեկ անգամ՝ քարավանատանը կատարված մեծածախ առևտրի ժամանակ, իսկ քարավանատանը պատկանող կրպակներում կատարվող առևտրի համար ոչինչ չէր վերցվում։ Ապրանքների մեծածախ վաճառքից կապալառուին տրվող այդ տուրքը կոչվում էր ավայի։ Ավային կապալառուն գանձում էր այնքան ժամանակ, քանի դեռ ապրանքը քարավանատանը ձեռքից-ձեռք էր անցնում՝ մինչև այնտեղից դուրս գալը[3]։ Քարավանատան համար վերցվող տուրքը երկու տեսակ էր, որոնցից մեկը հենց ավային էր, որը վերցվում էր այն ժամանակ, երբ ապրանքը վաճառվում էր քարավանատանը, իսկ երկրորդը կոչվում էր բոռնա և վերցվում էր այն ժամանակ,

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 878։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը, էջ 880։

երբ գնորդ չունենալու պատճառով վաճառողն իր ապրանքը քարավանատնից հանում էր առանց վաճառելու։ Եթե ավային վերցվում էր ապրանքի գնի ամեն մի թումանից մեկ շահիի չափով, ապա բորճան՝ յուրաքանչյուր բեռից 4 շահի։ Բորճան վերցվում էր այն դեպքում, երբ ապրանքը առհասարակ դուրս էր տարվում խանության սահմաններից[1]։

Քարավանատուն նկող յուրաքանչյուր վաճառականից կապալառուն օրական վերցնում էր 4 շահի, իսկ նրա յուրաքանչյուր ուղտի, ձիու և էշի համար, եթե դրանք տեղավորվում էին քարավանատան ախոռում, վերցնում էր օրական մեկ շահի։ Քարավանատնից դուրս տարվող յուրաքանչյուր բեռ բրնձի և աղի համար կապալառուն գանձում էր 2 շահի[2]։ Քարավանատուն ժամանող վաճառականները գիշերելու համար գրաղեցնում էին ազատ սենյակները, իսկ իրենց ապրանքները պահում և առևտուր էին անում քարավանատան խանութներում, որ նրանք գրաղեցնում էին մինչև իրենց առևտրական գործարքների ավարտելը[3]։

Երևանում էին կուտակվում ոչ միայն վաճառականների, առևտրականների ու գյուղացիների միջոցով քաղաքում վաճառելու համար Երևանի խանության մահալներից և այլ խանություններից ու երկրներից բերվող ապրանքները, այլև սարդարին տրվող հսկայական քանակությամբ մթերքներ՝ Գառնիբասարի, Զանգիբասարի, Կրրխբուլաղի և Կարրիբասարի մահալներից։ Սարդարին իբրև հարկ տրվող այդ մթերքները կուտակվում էին Երևանի պահեստում, որտեղ դրանք ընդունում էր սարդարի կողմից նշանակված պահեստապետ (ամբարդար) կամ վերակացու[4]։ Սարդարական պահեստում կուտակված մթերքների մի մասը գնում էր սարդարի, նրա բնտանիքի և պալատի կարիքների բավարարման համար, իսկ մյուս մասը դուրս էր բերվում վաճառքի։

Ներքին առևտրի համեմատությամբ Երևանի համար ավելի մեծ նշանակություն ուներ արտաքին առևտուրը, որը մեծածախ առևտուր էր և որին քաղաքը մասնակցում էր երկու կերպ՝ իր սեփական ապրանքներով և իբրև տարանցիկ առևտրի կարևոր կետ։ Երևանի արտաքին առևտրի բավական աշխույժ բնույթը և համեմատաբար մեծ ծավալը բացատրվում է մի շարք պատճառներով՝

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 880։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 880—881։

[4] Նույն տեղը, էջ 1132։

Պարսկաստանի, Ռուսաստանի և Թուրքիայի սահմանագլխին գտնվելով, որի շնորհիվ նա դարձել էր նշված երկրների միջև կատարվող առևտրի ամենակարևոր կայաններից մեկը, սարդարների՝ արտաքին առևտուրը հովանավորելու քաղաքականությամբ, ռուսական պետության կողմից Պարսկաստանի հետ կատարվող առևտրին տրված մեծ արտոնություններով և հովանավորող քաղաքականությամբ, երկրի ներսում արտաքին առևտրի համար անհրաժեշտ հումքերի ու ապրանքների առկայությամբ, ներմուծվող մի շարք ապրանքների կարիքով[1] և այլն, և այլն։

Արտաքին առևտուրը հովանավորելու և այն զարգացնելու՝ սարդարի քաղաքականությունը բացատրվում է նրա տնտեսական շահերով։ Սարդարը արտաքին առևտուրը դիտում էր իբրև իր գանձարանի հարստացման ամենակարևոր աղբյուրներից մեկը։ Դրանով պետք է բացատրել արտաքին առևտրի զարգացման համար նրա կատարած ձեռնարկումները։ Ինքը սարդարը համարվում էր խանության ամենախոշոր վաճառականը[2], նա իր ձեռքում էր կենտրոնացրել բամբակի, չալթուկի, ցորենի, գարու և աղի առևտուրը[3]։ Արտաքին առևտուրը անվտանգ դարձնելու և առևտրական քարավանների անխափան երթևեկություն ապահովելու համար՝ սարդարը արտակարգ միջոցառումներ էր ձեռնարկել սահմաններում ու ճորերում թափվող և առևտրական քարավանների վրա հարձակվող բանդաների դեմ՝ սարդարական հատուկ հրամանագրով արգելելով նաև իր խանության զինվորների կողմից կազմակերպվող ավազակային արշավանքները, այսպես կոչված, չափաուներ[4]։ Առևտրականքարավաններից բացի, սարդարը հոգ էր տանում նաև տարբեր նպատակներով օտարերկրյա ճանապարհորդների ուղևորությունները Երևանի խանության սահմաններում անվտանգ ու ապահով դարձնելու և նրանց համապատասխան կարիքները բավարարելու

[1] Орест Евецкий, Статистическое описание Закавказского края, СПБ, 1835. Обозрение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях, ч IV, СПБ, 1836, էջ 284։ И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 872—874։ АКАК, т. II, Тифлис, 1868, էջ 241, № 443։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 871—872։ Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 41 և 159։ Проф. О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, էջ 20—21։

[3] Обозрение российских владений за Кавказом, ч. IV, СПБ, 1836, էջ 284։

[4] Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 326 և 769։

համար, տալով նրանց հատուկ արտոնություններ և ուղեկցողներ՝ մեհմանդարներ[1]։ Սարդարի համար առանձնապես շահավետ և հուսալի էր Ռուսաստանի հետ կատարվող առևտուրը, որը անխափան դարձնելու նպատակով, ինչպես Վրաստանի ցարական ատյանները, այնպես էլ ինքը սարդարը չընդհատեց առևտուրը նույնիսկ երկու պետությունների՝ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև եղած առաջին պատերազմի տարիներին։ Սարդարը 1810 թ. հունիսի վերջերին գրած իր մի նամակում հավատացնում էր ռուսական իշխանություններին, որ չնայած պատերազմական դրությանը, ինքը պատրաստ է Պարսկաստանում առևտուր կատարող ռուս-հայատակ վաճառականներին դինված պահակախմբի հսկողության ներքո ուղեկցել մինչև վրացական սահմանը, և իբրև դրան ապացույց, Պարսկաստանից վերադարձող Թիֆլիսցի 11 վաճառականների նամակը տանող Ալլահ-Վերդի-բեկի հետ միասին, ուղարկում է Թիֆլիս, այդ նամակով խնդրելով, որ Վրաստանում եղած երևանցի վաճառականների հետ ևս վարվեն նույն կերպ, այսինքն՝ ապահովեն նրանց անվտանգ վերադարձը Երևանի խանություն[2]։

Սարդարի ձեռնարկած միջոցառումների, հավաստիացումների և խոստումների համեմատությամբ, նույնիսկ, եթե, հակառակ իրական դրության, դրանք համարելու լինենք էֆեկտիվ ու լիովին արժանահավատ, Պարսկաստանի հետ Ռուսաստանի առևտուրը անխափան և ապահով դարձնելու խնդրում ավելի կոնկրետ և հուսալի խոստումներ էին անում ռուսական իշխանությունները՝ ի դեմս Վրաստանում եղած ցարական բարձրաստիճան պաշտոնյաների, որոնք մեծ եռանդ ու ջանք էին գործադրում այդ բնագավառում։ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև առևտուրը կանոնավորելու և զարգացնելու համար, ռուսական իշխանությունների նախաձեռնությամբ, անընդմեջ դրագրություններ են կատարվել Երևանի սարդարի հետ՝ սկսած 1802—1803 թթ., ընդհուպ մինչև Գյուլիստանի պայմանագրի կնքումը։ Երևանի սարդարին ուղղված իրենց պաշտոնական գրություններում և նամակներում ռուսական բարձրաստիճան պաշտոնյաները ցանկություն են հայտնում երկու երկրների միջև առևտուրը զարգացնելու համար կանոնավորել մաքսային սիստեմը, ապահովել քարավանների անվտանգ ու անխափան երթևեկությունը և այլն[1]։ Ռուսական աստիճանավորները գտնում էին, որ Պարսկաստանի հետ փոխադարձ ըմբռնման դեպքում կարելի է և պետք է առևտուրը շարունակել նույնիսկ պատերազմական դրության ժամանակ, հակառակ բոլորի կողմից ընդունված այն ընդհանուր կանոնի, որ երկու պետությունների միջև պատերազմ լինելու դեպքում ընդհատվում են բոլոր կարգի հարաբերությունները, հատկապես առևտուրը։ Ահա թե ինչ է գրում գեներալ Ռտիշչևը 1812 թ. հունիսի 15-ին Երևանի սարդար Հուսեյն-Ղուլի խանին ուղարկած նամակում.

«Չնայած համայն աշխարհում ընդունված այն ընդհանուր կարգին, որ երկու պետությունների միջև պատերազմի դեպքում հակառակորդի հետ անմիջապես ընդհատվում են ամեն տեսակի հարաբերությունները, հատկապես առևտրական կապերը, սակայն մինչև այս երկրում՝ իմ գլխավոր պետ գտնալը, իմ նախորդները իբրև ռուսական պետության կարգադրություններ անկեղծության ապացույց՝ բարի համաձայնության և խաղաղության նկատմամբ, թույլատրելի է եղել ազատ առևտուր Պարսկաստանի հետ նույնիսկ ռազմական գործողությունների ժամանակ, ուստի չնայելով պարսկական կառավարության անկեղծ չլինելուն, որ հայտնի գարձավ ընթացիկ ամռանը... (այնուամենայնիվ—Թ. Հ.) ես... կարգադրեցի Փամբակում և Շուրագյալում իշխող Լիսանևիչին... անարգել բաց թողնել Երևանից Թիֆլիս եկող քարավանները և խստորեն հետևել, որ դրանք պաշտպանված լինեն ամենայն անվտանգությամբ։ Միայն ես անհրաժեշտ եմ գտնում այս դեպքում նախազգուշացնել Ձերդ բարձրությանը, որ ձեր տիրապետությունից Վրաստան եկող այդպիսի քարավանները պետք է ձեր կողմից մատակարարվեն անհրաժեշտ տոմսերով՝ նրանց վրա նշելով քարավանում գտնվող յուրաքանչյուր մարդու անունը...»[2]։

Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կատարվող առևտրի զարգացման հարցը ոչ միայն տեղական պետերի՝ Կովկասի զորահրամանատարների և Երևանի սարդարի մտահոգության առարկան էր, այլև XIX դ. առաջին քառորդի Ռուսաստանի համապետական դիվանագիտության Արևելքի հույժ կարևոր հարցերից մեկը։ Այս պատճառով էլ նրանց միջև կատարվող առևտրի մասին տարվել է ոչ միայն հակայական գրագրություն, այլև այդ հարցը

[1] Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, էջ 766—767 և 769։
[2] АКАК, т. IV, էջ 720, № 1102։

[1] АКАК, т. II, էջ 241, № 443, т. IV, էջ 89, № 101, էջ 498, № 718, էջ 720, № 1102, т. V, ч. II, էջ 335, т. IV, ч. II, էջ 245, № 454, էջ 546—547, № 648 և այլուր։
[2] АКАК, т. VI, ч. II, էջ 546, № 648։

մտել է պետական-պաշտոնական փաստաթղթերի (1813 թ. Գյուլիստանի և 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի) մեջ։

Գյուլիստանի պայմանագրի VIII, IX և X հոդվածներն ամբողջապես վերաբերում են ռուս-պարսկական առևտրին։ Ըստ այդ պայմանագրի, երկու կողմերը՝ Ռուսաստանը և Պարսկաստանը, պարտավորվում են թույլ տալ երկու կողմերի վաճառականներին թե՛ ցամաքային և թե՛ ջրային ճանապարհներով ազատ մուտք գործելու՝ ռուսական վաճառականները Պարսկաստանի քաղաքներն ու այլ կարգի բնակավայրերը, իսկ պարսկական վաճառականները՝ ռուսական տերիտորիաները, նրանց իրավունք է վերապահվում տվյալ վայրում ապրել այնքան ժամանակ, ինչքան իրենք են ուզում, իսկ վերադարձի ցանկություն ունենալու դեպքում, պետական իշխանությունները, առանց ձգձգման ու արգելքների, պարտավոր են թույլատրել։ Նրանք իրավունք ունեն ազատ կերպով առևտուր անելու և ապրանքափոխանակությամբ զբաղվելու։ Երկու պետությունների համապատասխան օրգանները պարտավոր են ապահովել վաճառականների կյանքն ու գույքը, ժառանգելու և կտակելու իրավունքները, լսել նրանց բողոքները՝ տալով համապատասխան ընթացք։ Ռուսական վաճառականներին թույլատրվում էր Պարսկաստանի վրայով անցնել այլ պետություններ, ինչպես և պարսկական վաճառականներին՝ ռուսական տերիտորիայով գնալ ուրիշ երկրներ։ Մաքս էր սահմանվում ապրանքների գնի 5%-ի չափով, արգելվում էր կրկնակի կամ եռակի անգամ մաքս վերցնել և այլն[1]։

Պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումը ապահովելու ու դրանք ավելի կոնկրետացնելու և առևտրին առհասարակ զարկ տալու նպատակով առաջարկվում է կնքել հատուկ համաձայնագիր, որպեսզի Պարսկաստանում մաքս վերցվի միայն մեկ անգամ, որպեսզի տարբեր խանություններում համայնական կերպով մաքսեր չվերցվեն. առաջարկվում է ձգտել պայմաններ ստեղծելու Պարսկաստանում ռուսական առևտրական ընկերություններ և գրասենյակներ կազմակերպելու համար, խնդիր է դրվում մանրամասնորեն ուսումնասիրել Պարսկաստանում վաճառվող ռուսական ապրանքների, ինչպես և Պարսկաստանից Ռուսաստան ներմուծվող ապրանքների կազմն (ասորտիմենտը) ու քանակը՝ առևտուրն ավելի ռացիոնալ դարձնելու նպատակով. հաշվի առնել և բարելավել Պարսկաստանում շրջանառության մեջ

[1] Տե՛ս АКАК, т. VI, ч. II, էջ 117—118, № 261։

պտվող ռուսական ոսկին ու արծաթը, ուսումնասիրել պարսկական այն խանությունները, քաղաքներն ու շուկաները, որտեղ ռուսական ապրանքներով առևտուր է կատարվում, հաշվի առնել այդ վայրերի՝ ռուսական ապրանքների ունեցած կարիքները և այլն[1]։

Ցարական Ռուսաստանը, ինչպես և մասամբ Պարսկաստանը՝ Գյուլիստանի հաշտության պայմանագրում նախատեսված և դրան հաջորդած առանձին համաձայնագրերի կնքմամբ չբավականացան։ Գյուլիստանի հաշտությունից հետո, երկու պետությունների միջև կատարվող առևտրի խոչընդոտները վերացնելու նպատակով շարունակվեցին դիվանագիտական ճանապարհով առանձին հարցերի շուրջը սկսված բանակցությունները։ Այդ տեսակետից առանձնապես շոշափելի արդյունքներ տվեցին Գրիբոյեդովի կողմից պարսից իշխանությունների հետ 1818—1821 թթ. վարված բանակցությունները։ Ի. Ենիկոլոպովը միանգամայն իրավացի է, որ Գրիբոյեդովի՝ այդ թվականների դիվանագիտական գործունեության հիմնական առաջադրանքը համարում է Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կայուն առևտրական հարաբերությունների ստեղծումը[2]։

Այսպիսով, թե՛ ցարական Ռուսաստանը և թե՛, մասամբ, շահական Պարսկաստանը շահագրգռված էին իրար հետ, ինչպես և միմյանց տերիտորիաների վրայով այլ երկրների հետ առևտուր կատարելով։ Առևտրի հաջող կազմակերպումն ու անխափան ընթացքն ապահովելու համար երկու պետությունները կատարում են պաշտոնական բազմաթիվ ու բազմաբովանդակ գրությունների փոխանակում և դիվանագիտական բարձր կարգի հարաբերությունների միջոցով պայմանագրերի կնքում։

Սակայն Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կատարվող առևտրի ավելի լայն զարգացման համար առկա էին և արգելակող մի շարք պայմաններ, որոնք սահմանափակում էին նրա չափերը և, երբեմն էլ, պատճառ դառնում լիովին խափանմանը։

Խափանման պատճառ կարող էին լինել XIX դ. առաջին քառորդի ընթացքում Ռուսաստանի և Պարսկաստանի միջև մղվող պատերազմները։ Սակայն, ինչպես տեսանք, Գյուլիստանի պայմանագրին նախորդած պատերազմի ժամանակ առևտուրը լրիվ չի ընդհատվել, նրան հաջորդած մանր-մունր բնդհարումները, որոնք տեղի էին ունենում Երևանի խանության և Վրաստանի սահմանագլխին, դարձյալ խոչընդոտներ էին հարուցում առևտրի հա-

[1] АКАК, т. VI, ч. II, էջ 118—119։

[2] И. Ениколопов, Грибоедов и Восток. Ереван, 1954, էջ 21։

մար, բայց առանց պատճառ դառնալու առևտրի լրիվ խափանմանը։ Առևտրի լայն զարգացումը, ինչպես ասվեց, կասեցնում էին նաև Երևանի խանության տնտեսության փակ նատուրալ բնույթը և Պարսկաստանում գոյություն ունեցող մաքսային սիստեմը։ Տնտեսության փակ նատուրալ բնույթի պատճառով Երևան քաղաքի և Երևանի խանության վրայով Ռուսաստանի ու Պարսկաստանի միջև կատարվող առևտուրը քիչ էր թափանցում երկրի ներսը, նա գերազանցապես ուներ սոսկ տարանցիկ առևտրի բնույթ։

Պարսկաստանում, որպես առանձին խանությունների մասնատված ֆեոդալական պետության, մի միասնական մաքսային սիստեմ գոյություն չուներ, այնտեղ յուրաքանչյուր խանություն ուներ իր մաքսային սահմանները, այնպես որ արտաքին առևտրից մաքս էր վերցվում և՛ ընդհանուր համապետական մասշտաբով, և՛ յուրաքանչյուր խանության շրջանակներում, որի վրայով կատարվում էր առևտուրը։ Երևանի սարդարը այդ տեսակետից մի քայլ ավելի էր առաջ գնացել։ Նա մաքսային տիպի գանձումներ էր կատարում նույնիսկ խանության շրջանակներում կատարվող մանրածախ առևտրից։ Երևանի ապրանքներով խանության մահալները ճանապարհվող շարժինները «պարտավոր էին տոմսի համար դրուղային տալու 4-ական շահի», իսկ «առանց ապրանքի» ուղևորվելու դեպքում՝ «2-ական շահի»[1]։ Շոպենի հիշատակած՝ խանության սահմաններում մանրածախ շրջիկ առևտրով զբաղվող շարժիններից «տոմսի համար» վերցվող այդ տուրքը փաստորեն մաքս էր՝ խանության մահալներում առևտուր կատարելու համար։

Արտաքին առևտուրը խափանող նշված արգելքները հատուկ էին ոչ միայն Պարսկաստանին, այլև ֆեոդալական ապակենտրոնացած պետություններին ընդհանրապես։ Այդ ժամանակաշրջանի Թուրքիայում և Պարսկաստանում գոյություն ուներ առևտրի զարգացումը կասեցնող ևս մի պայման, որը ուրիշ երկրներում համեմատաբար ավելի սակավ էր պատահում։ Դա այն է, որ ֆեոդալական Թուրքիայում և Պարսկաստանում վաճառականների կյանքն ու գույքը ապահովված չէր, որ առևտրական քարավանները Պարսկաստանի և Թուրքիայի տերիտորիաներում մշտապես ենթակա էին զինված հարձակման, կողոպուտի, նույնիսկ ոչնչացման։

Թուրքիայում, ինչպես և Արևելքի մյուս երկրներում (այդ

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 986։

Թվում նաև Պարսկաստանում) վաճառականների կյանքի ու գույքի անապահովության և խանների ու փաշաների կատարած հափշտակումների մասին Ֆ. Էնգելսը գրում է. «Հիրավի, թուրքական, ինչպես և արևելյան ամեն տեսակի տիրապետություն անհամատեղելի է կապիտալիստական կարգի հետ, հանված հավելյալ արժեքը ոչնչով չէր ապահովված սատրապների և փաշաների հափշտակիչ ձեռքերից, առկա չէր բուրժուազիայի ձեռք բերած առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի և նրա գույքի ապահովվածությունը (ընդգծումը մերն է — Բ. Հ.)»[1]։

Երևանի վերջին սարդար Հուսեյն-Ղուլի խանը, որը առևտրից ստանում էր հսկայական եկամուտներ և ինքն էլ էր հանդես գալիս իբրև խոշոր վաճառական, փորձել է խանության սահմաններում առևտրական քարավանների վրա կատարվող ավազակային հարձակումներին վերջ տալ, սակայն թափառաշրջիկ բանդաները և մահալներում ցրված նրա զինվորները շարունակում էին զբաղվել այդ «եկամտաբեր գործով»՝ զինված հարձակում կատարելով և կողոպտելով խանության ճանապարհներով անցնող քարավաններ։ Օտարերկրյա ճանապարհորդների վկայություններից պարզ կերպով երևում է, որ ինքը սարդարն էլ չէր խորշում ավազակային հարձակումներից և շատ դեպքերում գործակցում էր իր զինվորների ձեռնարկած չափումներին (ավազակային հարձակումներին)՝ ստանալով թալանած ապրանքների ու դրամի առյուծի բաժինը։ Այդպիսի մի դեպքի մասին է պատմում Ջեմս Մորիերը. սարդարի սադրանքով նրա զինվորները հարձակվում և թալանում են Թիֆլիսից Երևան եկող մի քարավան, բայց վերջում պարզվում է, որ քարավանով բերվող ապրանքները պատկանել են հենց իրեն՝ սարդարին։

Սարդարի համար անցանկալի, անսպասելի ու անելանելի վախճան ունեցած այդ դեպքը Ջ. Մորիերը հետևյալ կերպ է պատմում. «Բայց իմացած լինելով (սարդարը — Բ. Հ.), որ մի մեծ քարավան, հարուստ բեռներով, ճանապարհորդում է Թիֆլիսից, իր մոտ կանչեց իր զինվորներից ոմանց և ասաց. «Գիտե՛ք, որ մենք խրատորեն արգելում ենք չափու ռուսական հողամասի վրա, և հիմա Թիֆլիսից մի քարավան է մեկնել»։ Ակնարկը բավական էր, և նրանք անմիջապես մեկնեցին տեսնելու, թե ի՛նչ կարող են անել։ Մի քանի օր հետո սարդարի ճանապարհորդող վաճառականը ժա-

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XVI, ч. II, Москва, 1936, էջ 22։

մանեց մեծ սրտաբեկումով, ասելով, թե, երբ ինքը քարավանի հետ գալիս էր Թիֆլիսից՝ իր հետ բերելով սարդարի համար հարուստ ապրանք, ավազակների մի խումբ, հարձակվելով քարավանի վրա, կողոպտել է ամեն ինչ։ Փաստորեն սարդարը կողոպտել էր ինքն իրեն։ Իր սեփական ապրանքը իր զինվորներին ավար էր դառել. տրամադիր լինելով անգամ պատժել նրանց, նա ստիպված էր իր վարկին համար աչք փակել կատարված հանցանքին»[1]։

Միանգամայն պարզ է, որ եթե երկրի իշխողը բավարարվում էր միայն ձևականորեն ավարառությունների արգելման մասին կարգադրություն անելով, իսկ իրականում աչք էր փակում դրանց առջև, նույնիսկ, ինքն էլ իր հերթին կազմակերպում էր ավազակային հարձակումներ, ապա խանության և՛ ներքին, և՛ արտաքին առևտուրը կրում էր մեծամեծ վնասներ, և ապրանքներով երթևեկությունը նմանակ էր մեծ վտանգների։ Հետևապես, չպետք է չափազանցել Երևանի վերջին սարդար Հուսեյն-Ղուլի խանի ներքին ու արտաքին առևտուրը հովանավորելու քաղաքականությունը։ Նա փաստորեն, եթե մի կողմից առևտուրը հովանավորում էր, ապա մյուս կողմից էլ հարվածում էր դրան։ Այս առումով էլ, որոշ վերապահությամբ պետք է ընդունել սարդարի ժամանակակիցներից շատերի այն հաղորդումները, թե նա իր քաղաքականությամբ և գործուն ձեռնարկումներով հովանավորում և նպաստում էր առևտրի զարգացմանը։ Չէ՞ որ սարդարի մաքսային սիստեմը, նրա կողմից մի շարք ապրանքներով առևտուր կատարելը իր մենաշնորհիան հայտարարելը, նրա անտարբերությունը կամ մեղսակցությունը առևտրական քարավանների վրա կատարվող հարձակումներին, այս բոլորը մեծ հարված էին հասցնում առևտրին, անկախ այն բանից, որ սարդարը զանազան հրովարտակներով արտոնություններ էր տալիս առևտրին, առանձին անվանի վաճառականներին, նույնիսկ ինքն էլ մասնակցում առևտրական խոշոր գործարքներին։

Այդ բոլորով հանդերձ, Երևանը ռուս-պարսկական առևտրի ամենակարևոր կայաններից մեկն էր, ցամաքային ճանապարհով կատարվող առևտրի ամենախոշոր հանգույցներից մեկը։ Երևանը ծառայում էր որպես պահեստավայր Պարսկաստանից Վրաստան և հակառակ ուղղությամբ ուղարկվող ապրանքների[2]։ Սովորաբար Երևան էին բերվում Անդրկովկասի պրովինցիաներից հետևյալ

[1] Տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 327։

[2] Обозрение российских владений за Кавказом, ч. IV, էջ 285։ И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 872։

ապրանքները՝ ռուսական և գերմանական չիթեր, գերմանական մահուդ, նանկին (գործվածքի տեսակ), պերճանքի առարկաներ, սպիտակ կալենկոր, շաքար, կոշենիլ, սկյուռի և ժանտաքիսի մորթիներ, յափնջի, ինդիգո, մրգեր, լեզդիական մահուդ, մետաքս, տեղական ցածրորակ գորգեր, մետաքսյա ծաղկավոր թիկնոցներ, շաֆրան — ընդամենը տարեկան 168.200 ռուսական արծաթ ռուբլի։ Պարսկաստանից Երևան էր ներմուծվում՝ ճամակավոր դիպակ (парча), քաշմիրի շալեր, մետաքսյա զանազան գործվածքներ, շադրաներ, գունավոր թաղիքներ, օսո-հնդկական մարմաշ (նույնը գործվածք), անգլիական չիթեր, կալենկոր, Խորասանի դառան փոքր մորթիներ, շաքար, ծխախոտ, ծխամորճեր, զայլաններ և այլն։ Պարսկաստանից ընդամենը ներմուծվել են տարեկան 80 հազ. ռուսական արծաթ ռուբլու ապրանքներ[1]։ Երևանի վաճառականները, ապրանքներ գնելով Կոստանդնուպոլսում, Պարսկաստանի զանազան քաղաքներում, դրանք բերում էին Թիֆլիս, որտեղ վաճառում էին դրամով, ապա նորից սկսում իրենց նոր գործարքները[2]։

Վրաստանին Պարսկաստանի հետ ազատ առևտուր թույլ տալու շնորհիվ, առևտրական գործառնությունները ավելի են ընդարձակվում։ Դրանից հետո վաճառականները սկսեցին Թիֆլիս ներմուծել մեծ բանակությամբ պարսկական ապրանքներ, որի դիմաց այստեղ ձեռք էին բերում Լայպցիգի և Մոսկվայի ծագում ունեցող արդյունաբերական ապրանքներ[3], որոնք արտածում էին Երևան և Հարավային Ադրբեջան։

Երևանի վրայով Թուրքիայի և Ռուսաստանի միջև կատարվող առևտուրն ուներ շատ ավելի համեստ չափեր։ Այսպես, ըստ մեզ հասած աղբյուրների, XIX դ. առաջին քառորդում Թուրքիայից Երևան էին ներմուծվում, տարեկան միջին հաշվով, ռուսական արծաթ դրամով հաշված՝ 10 հազար ռուբլու ապրանքներ։ Թուրքիայից Երևան էին ներմուծվում հիմնականում մահուդ, կալենկոր, ատլաս, եվրոպական մետաքսյա գործվածքներ, եվրոպական չիթեր, կոշենիլ, գունավոր ապակիներ, քաշմե, պղինձ, հայելի, պողպատյա իրեր[4]։

[1] Обозрение российских владений за Кавказом, ч. IV, էջ 285։ И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 872։ Տե՛ս նաև Орест Евецкий, Статистическое описание Закавказского края, էջ 76—78։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 871—873։

[3] Նույն տեղը, էջ 873։

[4] Обозрение российских владений за Кавказом, ч. IV, էջ 285։

Օրեստ Եվեցկու հաղորդած տեղեկությունների համաձայն, Անդրկովկասի և Պարսկաստանի միջև ցամաքային ճանապարհներով կատարվող առևտուրը ամբողջությամբ գտնվում էր Թիֆլիսի, Երևանի, Ղարաբաղի, Շաքիի և Շիրվանի առաջնակարգ վաճառականների ձեռքին։ Ըստ նրա տվյալների, 1825 թ. և 1826 թ. սկզբին Անդրկովկասի և Պարսկաստանի միջև կատարվող առևտրի ապրանքաշրջանառությունը կազմել է 919.770 ռուբլի (արծաթ)[1]։ Պարսկաստանում Անդրկովկասի հետ կատարվող առևտրի կենտրոնը Թավրիզն էր, ուր կենտրոնացվում էին Անդրկովկասից դեպի Պարսկաստան և Պարսկաստանից դեպի Անդրկովկաս արտածվող բոլոր ապրանքները, և ապրանքաշրջանառության համար բերված այդ թիվը (919.770 ռ.) վերաբերում է Թավրիզին[2]։ Երևանից Պարսկաստան արտածվող բոլոր ապրանքները ևս կենտրոնացվում էին Թավրիզում, որտեղ դրանց մի մասը վաճառվում էր տեղում, իսկ մյուս մասը ուղարկվում էր պետության տարբեր մասերը։ Թավրիզից Անդրկովկաս ուղարկվող ապրանքների մեծ մասը կենտրոնացվում էր Երևանում, իսկ այստեղից էլ արտածվում Թիֆլիս ու այլ քաղաքներ։

Երևանի վրայով Պարսկաստանի և Ռուսաստանի միջև կատարվող ցամաքային առևտրի ապրանքներից ամենաառաջնակարգ տեղը բռնում էին բամբակը, շալը և մետաքսը[3]։ Ըստ պաշտոնական տվյալների, XIX դ. առաջին տասնամյակի վերջերին Երևանի և մասամբ այլ քաղաքների վրայով Պարսկաստանից (Երևանի, Նախիջևանի, Մակուի խանություններից և այլ տեղերից) Թիֆլիս էր արտածվում տարեկան 30.000 փութ բամբակ, որը միջին հաշվով կազմել է 250.000 ռուբլի[4]։ Բամբակից բացի, Երևանյան խանությունից արտածվող ապրանքների մեջ նշանակալից էին՝ բրինձը, ցորենը, մրգերը, աղը և այլ ապրանքներ, որոնց մասին ասվեց ներքին առևտրի բաժնում։

Մաքսատուրքը, որ կոչվում էր ռախատ և տրված էր կապալով, կազմում էր խոշոր գումարներ։ Սարդարը արտածվող և ներմուծվող ապրանքներից վերցվող մաքսատուրքը՝ ռախտարը համարում էր եկամտի կարևոր աղբյուրներից մեկը և այդ պատճառով էլ իր պաշտոնյաների միջոցով հսկում էր, որպեսզի առանց

1 Орест Евецкий, Статистическое описание Закавказского края, էջ 76—77։

2 Նույն տեղը, էջ 77։

3 АКАК, т. IV, էջ 79, № 95։ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 318։

4 АКАК, т. IV, էջ 79, № 95։

մաքս տալու ապրանքի արտածում կամ ներմուծում չկատարվի։ Մաքսից խուսափելու նպատակով, գաղտնի ճանապարհով ապրանքներ անցկացնելու դեպքը երբ հայտնաբերվում էր, սպա հօգուտ սարդարի մաքսը վերցվում էր կրկնակի չափով[1]։ Գաղտնի ճանապարհով ապրանքների ներմուծումն ու արտածումը արգելելու համար, սարդարը խանության մի քանի վայրերում նշանակել էր պահակներ, որոնք հօգուտ իրենց՝ ուղտի կամ ձիու յուրաքանչյուր մեկ բեռից գանձում էին 20 կոպեկ, իսկ էշի բեռից՝ 10 կոպեկ[2]։ Շարուրում գտնվող վերակացուն յուրաքանչյուր բեռից կամ առանց բեռի ձիուց և ուղեկցողներից բռնագանձել է 2-ական շահի (4 կոպեկ), իսկ վերադառնալիս գանձել է դարձյալ նույնքան, բայց միայն ձիերից[3]։

Մաքս է վերցվել և՛ արտածվող, և՛ ներմուծվող ապրանքներից։ Մաքսային տարիֆը Պարսկաստանի, Թուրքիայի և Վրաստանի համար եղել է տարբեր չափի։ Պարսկաստանի հետ կատարվող առևտրի համար 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով սահմանված էր 5% մաքսատուրք, իսկ Թուրքիայի հետ կատարվող առևտրից վերցվող մաքսատուրքն ուներ ավելի բարձր տարիֆ։

Երևանի սարդարը մաքսատուրքը գանձել է կապալառուի և այլ պաշտոնյաների միջոցով։ Տարբեր ապրանքներից և տարբեր երկրներից ներմուծվող և արտածվող ապրանքներից Երևանում վերցվող մաքսատուրքերի մասին ամբողջական տեղեկություններ են հաղորդված Ի. Շոպենի գրքում[4] և Հայկական մարզի պաշտոնական գործերում, որոնք գտնվում են Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվում[5]։ Այդ երկու աղբյուրների հաղորդած տեղեկությունները ընդհանուր առմամբ իրարից շատ քիչ են տարբերվում։ Բայց և այնպես Երևանում գործող մաքսային տարիֆի մասին ավելի ճիշտ և լիակատար գաղափար կազմելու համար անհրաժեշտ ենք համարում աղյուսակի ձևով տալու և՛ արխիվային տվյալները, և՛ Շոպենի հաղորդած թվերը, հաջորդական կարգի համար հիմք ընդունելով արխիվային փաստաթղթի տեքստը։

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 883։

2 Նույն տեղը, էջ 882—883։

3 Նույն տեղը, էջ 883։

4 Նույն տեղը, էջ 882—886։

5 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 90, գ. 35, թ. 309—315։

XIX Դ. ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԻՖԸ

Աղյուսակ 6

Ներմուծման համար

Ա) Պարսկաստանից ներմուծվող ապրանքներից

Ըստ արխիվային տվյալների[1]			Ըստ Շոպենի[2]		
№№ բ/կ	Ապրանքների տեսակները	Մաքսի չափը	№№ բ/կ	Ապրանքների տեսակները	Մաքսի չափը
1	2	3	4	5	6
1.	Մետաքսյա, բրդյա և բամբակյա գործվածքների մեկ բեռից	40 կ.	1.	Ամեն տեսակի գործվածքների մեկ բեռից — Երևանի բնակիչների կողմից ներմուծված	30 կ.
2.	Գորգերի, շալերի, շաքարի, սուրճի, սառնաշաքարի (леденца), սակիսի, պրղընձյա իրերի, նուշի, մեխակի, կինոմոնի, յուղի, մեղրի, արմավի մեկ բեռից	1 ռ. 60 կ.		— Արտասահմանյան վաճառականներից .	1 ռ.
3.	Քիշմիշի, սիսեռի, նռան և խաղողահյութի մեկ բեռից	65 կ.	2.	Գորգերի, շալերի և այլ ապրանքների, ինչպես և քաշով վաճառվող ապրանքների՝ շաքարի, սուրճի, սառնաշաքարի, սակիսի, խինայի, ռոմի, պղնձյա իրերի, նուշի, սալորի, մեխակի, յուղի, մեղրի, արմավի և այլնի մեկ բեռից .	1 ռ. 60 կ.
4.	Մետաքսի մեկ բեռից	4 ռ.	3.	Մետաքսի և մորթու մեկ բեռից . . .	4 ռ.
5.	Կապույտ ներկի (ինդիկո) մեկ բեռից .	3 ռ. 60 կ.	4.	Կապույտ ներկի (ինդիկո) մեկ բեռից .	3 ռ. 20 կ.
6.	Բամբակի մեկ բեռից	80 կ.	5.	Բամբակի մեկ բեռից	60 կ.
			6.	Քիշմիշի, սիսեռի, նռան և խաղողահյութի մեկ բեռից	54 կ.

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 90, գ. 35, թ. 309—315։

[2] И Шопен, Исторический памятник Армянской области, էջ 882—886։

1	2	3	4	5	6

Բ) Վրաստանից ներմուծվող ապրանքներից

1.	Մետաքսյա, բրդյա և բամբակյա գործվածքների, զանազան պաուղների, յուղի, բրդի, շիբի, ռոմի, օղու, գինու, մեղրի, մոմի մեկ բեռից	1 ռ. 60 կ.	1.	Տարբեր տեսակի գործվածքներից, երկաթի և պղնձյա իրերի, շաքարի, սուրճի, մեղրի, յուղի, մոմի, սալի և այլ ապրանքների մեկ բեռից	1 ռ. 60 կ.
2.	Ընկուզի, շագանակի, նռան մեկ բեռից .	80 կ.	2.	Սուջուխի, խնձորի, տանձի, արմավի, թուզի, քիշմիշի, ընկուզի, հոնի, նուշի և այլ ապրանքների մեկ բեռից . . .	54 կ.
3.	Դեղանի, տախտակի և փայտյա մասերի մեկ բեռից	20 կ.	3.	Տախտակի մեկ բեռից	20 կ.

Գ) Թուրքիայից ներմուծվող ապրանքներից

1.	Մետաքսյա, բրդյա և բամբակյա գործվածքների, շաքարի, սուրճի, մեղրի, յուղի, մոմի, սալի, պղնձյա և երկաթյա իրերի մեկ բեռից	1 ռ. 60 կ.	1.	Տարբեր տեսակի գործվածքներից, յուղի, բրդի, շիբի, ռոմի, օղու, գինու, մեղրի, մոմի և այլ ապրանքների մեկ բեռից .	1 ռ. 20 կ.
2.	Խնձորի, տանձի, արմավի, թուզի շագանակի, ընկուզի, հոնի և նուշի մեկ բեռից	54 կ.	2.	Ընկուզի և այլ մրգերի մեկ բեռից . .	80 կ.
3.	Տախտակի մեկ բեռից	20 կ.	3.	Դեղանի, տախտակի և փայտյա թասերի մեկ բեռից	20 կ.

1	2	3	4	5	6

Արտածման համար սահմանված մաքսը և այլ տուրքեր

Ա) Թուրքիա և Վրաստան արտահանվող ապրանքներից

1.	Զանազան տեսակի գործվածքների, շիբի, բրդի և մորենայի (կիսաբրդյա գործվածք) մեկ բեռից տրվում էր՝		1.	Զանազան գործվածքների, բրդի, շիբի, և քաշով վաճառվող բոլոր ապրանքների մեկ բեռից տրվում էր՝	
	Մաքս	1 ռ. 60 կ.		Մաքս	1 ռ. 60 կ.
	Պահակներին	1 ռ. 12 կ.		Պահակներին	1 ռ. 60 կ.
	Արտահանման տոմսին	14 կ.	2.	Բրնձի մեկ բեռից տրվում էր՝	
	Գիշերային հսկիչին	2 կ.		Մաքս	40 կ.
	Ոստիկանությանը	10 կ.		Պահակներին	40 կ.[1]
	Քարավանատների կապալառուի համար	3 կ.		Ընդամենը	80 կ.
	Ընդամենը	3 ռ. 60 կ.	3.	Ագի մեկ բեռից՝ Երևան քաղաքից Վրաստան արտահանելու համար՝	
2.	Բրնձի մեկ բեռից տրվում էր՝			Մաքս	32 կ.
	Մաքս	40 կ.	4.	Քիշմիշի մեկ բեռի համար տրվում էր՝	
	Պահակներին	40 կ.		Մաքս	80 կ.
	Տոմսին	6 կ.		Պահակներին	1 ռ. 20 կ.
	Ոստիկանությանը	4 կ.		Ընդամենը	2 ռ.
	Քարավանատան կապալառուին . .	4 կ.	5.	Ինդիկոյի մեկ բեռից՝	
	Գիշերային հսկիչին	2 կ.		Մաքս	3 ռ. 20 կ.
	Ընդամենը	96 կ.		Պահակներին	1 ռ. 12 կ.
				Ընդամենը	4 ռ. 32 կ.

[1] Շոպենի մոտ քարավանատների կապալառուին, գիշերային հսկիչին, ոստիկանությանը և արտահանելու տոմս ձեռք բերելու համար տրվող դումարները անմիջապես չեն միացված մաքսին և պահակներին տրվող տուրքի հետ, այլ տրված են ուրիշ

1	2	3	4	5	6
3.	Բամբակի և քիշմիշի մեկ բեռից տրվում էր՝		6.	Մետաքսի մեկ բեռից՝	
	Մաքս	80 կ.		Մաքս	4 ռ.
	Պահակներին	1 ռ. 12 կ.		Պահակներին	1 ռ. 12 կ.
	Տոմսին	14 կ.		Ընդամենը	5 ռ. 12 կ.
	Ոստիկանությանը	10 կ.	7.	Բամբակի մեկ բեռից՝	
	Գիշերային հսկիչին	2 կ.		Մաքս	80 կ.
	Քարավանատան կապալառուին . .	8 կ.		Պահակներին	1 ռ. 92 կ.
	Ընդամենը	2 ռ. 26 կ.		Ընդամենը	2 ռ. 72 կ.
4.	Մետաքսի մեկ բեռից տրվում էր՝				
	Մաքս	4 ռ.			
	Պահակին	1 ռ. 12 կ.			
	Ոստիկանությանը	10 կ.			
	Տոմսին	14 կ.			
	Գիշերային հսկիչին	2 կ.			
	Քարավանատան կապալառուին . .	8 կ.			
	Ընդամենը	5 ռ. 46 կ.			

Բ) Պարսկաստան արտահանվող ապրանքներից

1.	Պարսկաստան արտահանվող ապրանքներից վերցվել է նույն մաքսը, ինչ որ վերցվում էր Վրաստան և Թուրքիա արտահանելու համար, միայն չէին վերցվում պահակների ծախսերը։		1.	Մետաքսյա, բամբակյա և բրդյա զանազան ապրանքների մեկ բեռից մաքս է վերցվել	1 ռ. 60 կ.[1]
			2.	Բրնձի մեկ բեռից	40 կ.
			3.	Բամբակի մեկ բեռից	80 կ.
			4.	Մեկ բեռ քիշմիշից	80 կ.
			5.	Մեկ բեռ կապույտ ներկից (ինդիկո) . .	3 ռ. 20 կ.
			6.	Մեկ բեռ մետաքսից	4 ռ.

տեղերում՝ քաղաքի քարավանատների, շուկա-հրապարակների և ներքին առևտրի յուժինևներում, որոնց մասին մենք արդեն խոսեցինք վերևում։

Հաղիվ թե հարկ կա աղյուսակի ձևով բերված մաքսային տարիֆի մասին լրացուցիչ բացատրություններ տալու։ Միայն պետք է տալ լրացուցիչ մի քանի տեղեկություններ, որպեսզի հնարավորին չափով վերանան բոլոր անորոշությունները։ Այդ տեղեկությունները վերաբերում են տարանցիկ (տրանզիտային) առևտրին, նըշված մաքսային տարիֆի գործելու ժամանակին և այն դեպքերին, երբ բեռի քաշը տարբերվել է ընդունված չափերից։ Դրանց մասին համառոտ, բայց պարզ ու վերջնական տեղեկություններ է հաղորդում Ի. Շոպենը։ Նա գրում է, որ տարանցիկ առևտրից մաքս էր վերցվում միայն արտահանման համար, և «եթե վաճառականը ցանկանում էր արտասահման արտահանել այն ապրանքը», որի համար նա արդեն մուծել էր «ներմուծման մաքսը», ապա այդպիսի դեպքում պետք է ներկայացներ համապատասխան կտրոնը և լրացուցիչ մուծեր միայն այն գումարը, որը պահանջվում էր արտահանման համար[1]։ Դրանից հետևում է, որ ներմուծման մաքս վճարված ապրանքների՝ Վրաստան կամ Թուրքիա արտահանելու դեպքում վաճառականը պետք է լրացուցիչ մուծեր պահակների վարձը և արտահանման տոմսի գումարը։ Իսկ Պարսկաստան արտահանելու դեպքում ներմուծման մաքսի կտրոնը կարող էր լիովին բավարարել պահանջները, որովհետև Պարսկաստան արտահանելու համար մաքսից բացի այլ գանձումներ չէին պահանջվում։

Մաքսային այդ տարիֆն իր գոյությունը պահպանեց նաև Երևանի և Նախիջևանի խանությունները Ռուսաստանին միացնելուց հետո՝ առաջին մի քանի տարիների ընթացքում։ Այդ տարիների ընթացքում մաքսատուրքը գանձվում էր Գյուլիստանի պայմանագրով նախատեսված 5%-ի չափով։ Արդեն ոախատար մուծած վաճառականները իրավունք ունեին մաքսատներում ներկայացնելու դրա կտրոնը 5 տոկոսանոց մաքսի հաշվարկի մեջ հաշվենշում կատարելու համար[2]։

Մաքսի, ինչպես և ներքին առևտրի շատ բնագավառներում, որոշակի կշռի միավոր էր դարձել բեռը։ Ընդ որում, ձիու բեռը մինչև հաշվով ընդունված էր 12 փութ, ուղտի բեռը՝ 24 փութ, էշի

[1] Պահակներից ծախս չէր վերցվում (տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 884)։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 885։

բեռը՝ 6 փութ, իսկ եզան բեռը՝ 9 փութ[1]։ Եթե բեռն ավելի թեթև էր լինում ընդունված քաշից, ապա վաճառականն իրավունք ուներ մաքսը վճարել ըստ եղած ապրանքի քաշի[2]։

Ներքին և արտաքին առևտրի զարգացման՝ նրա ծավալի և բեռնաշրջանառության արագության համար կարևոր նշանակություն ունեն հաղորդակցության ճանապարհներն ու հաղորդակցության միջոցները։ Հայաստանը, մանավանդ Արարատյան դաշտը, շատ հին ժամանակներից լինելով Արևելքի ու Արևմուտքի միջև իրև տարանցիկ երկիր, ուներ դաշտերով, հովիտներով և լեռնային բարձր շրջաններով անցնող մի շարք ճանապարհներ, որոնցից մի քանիսը ձեռք էին բերել առևտրա-տնտեսական խոշոր նշանակություն։ Մոնղոլական, ապա նրան հաջորդած թուրք-թաթարական և պարսկա-թուրքական տիրապետությունների ժամանակաշրջանում Հայաստանի տնտեսական կյանքի անկումը և նրա քաղաքական աննպաստ դրությունը պատճառ դարձան մեծ մասշտաբի տարանցիկ առևտրի անկման, որի հետ միասին շարքից դուրս եկան կամ ոչ բանուկ դարձան շատ ճանապարհներ։ Այնուամենայնիվ, Երևանի խանության բավական աշխույժ առևտրի շնորհիվ, մանավանդ XIX դ. առաջին քառորդում, քարավանային անընդհատ երթևեկություն էր կատարվում մի քանի ճանապարհներով, որոնց նման կետն ու հիմնական հանգույցը հանդիսանում էր Երևանը՝ Երևանի խանության կենտրոնը։

Երևանից էին դուրս գալիս կամ Երևանով էին անցնում՝ ա) գլխավոր փոստային ճանապարհը, որը Գյումրին, Էջմիածնի ու Երևանի վրայով՝ կապում էր Նախիջևանի և Օրդուբադի հետ, բ) Երևան—Ջոդ—Ղարաբաղ, գ) Երևան—Բաշ-Աբարան—Ջալալօղլի ճանապարհը և դ) Երևան—Էջմիածին—Կարս[3] ճանապարհները[4]։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 885։ Ուղտի, ձիու, եզան և էշի բեռների չափի համար հաղորդումներ կան և այլ աղբյուրներում (տե՛ս, օրինակ՝ Обозрение российских владений за Кавказом, ч. IV, էջ 285—286), որոնց տված թվերը որոշ չափով տարբերվում են Շոպենի հիշատակած թվերից։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской обл., էջ 885։

[3] Այդ ճանապարհների տարբեր կայարաններից բաժանվում և տարբեր ուղղություններով գնում էին մի շարք այլ ուղիներ, որոնք բոլորը միասին խանության տերիտորիան ծածկում էին բավական խիտ ցանցով։ Դրանցից կարելի է հիշատակել հետևյալները՝ Սարդարաբադ—Բայազետ, Սարդարաբադ—Կոզբ, Նախիջևան—Ջուլֆա, Նախիջևան—Բիչանաղ—Ղարաբաղ, Նախիջևան—Սևլիմի լեռնանցք, Շամշադին—Ղազախ, Օրդուբադ—Մեղրի, Գյումրի—Կարս և այլն։

[4] И. Шопен, Исторический памятник Армянской области,

Գլխավոր փոստային ճանապարհը Երևանը Գյումրիի և Ախալքալաքիի վրայով կապում էր Ախալցխայի հետ: Այստեղից նրա շարունակությունը կազմող Ձկևարի ճանապարհը տանում է դեպի Քութաիսի և Փոթի, իսկ Բորժոմի կիրճով անցնողը՝ դեպի Թիֆլիս: Երևանի և Նախիջևանի խանությունների սահմաններում այս ճանապարհն ուներ 11 կայարաններ՝ Մաստարա, Սարդարաբադ, Էջմիածին, Երևան, Արտաշատ, Սադարակ, Նորաշեն, Գիվրախ, Նախիջևան, Ցայջի և Օրդուբադ, Մաստարայից մինչև Օրդուբադ կազմելով $288\frac{1}{2}$ վերստ[1]:

Փոստային ամեն մի կայարանում բնակիչներից նշանակված էր մի վերակացու, որը պարտավոր էր ընդունել ու հյուրասիրել ճանապարհորդներին և նրանց համար հայթայթել ճանապարհին անհրաժեշտ բոլոր հնարավոր պարագաները: Այդ բոլորի համար, ճանապարհային կայարանի վերակացուն ստանում էր կամ տուն աշխատավարձ կամ որևէ դյուղի թիուլի կամ մյուլքի իրավունքը[2]: Ի. Շոպենը, այս ճանապարհը նկարագրելով Երևանի և Նախիջևանի խանությունները Ռուսաստանին միացնելուց անմիջապես հետո եղած դրությամբ, գրում է, որ մինչև Մաստարա այն պիտանի է անվային հաղորդակցության միջոցների համար, և ճանապարհորդները կարող են գնալ կառքով, իսկ այդտեղից սկսած դեպի Երևան անվային երթևեկությունը ընդհատվում է՝ լծկան ձիեր չինելու պատճառով: Այնուհետև, նա հաղորդում է, որ կայարաններում չկան հատուկ շենքեր, որ ուղևորը տչ մի կայարանում չի գտնում պիշերելու համար տեղ, որ ձիերը ուժասպառ են եղել, աննդամթերքները ձեռք են բերվում մեծ դժվարություններով և երեք անդամ ավելի թանկ գներով և այլն[3]:

Գլխավոր փոստային ճանապարհի Երևան—Էջմիածին հատվածի մասին մի կարևոր հիշատակություն է արել Լաչինովը: Նրա այդ հիշատակությունը, որ վերաբերում է 1828 թ. դեկտեմբերի վերջին տասնօրյակին, լույս է տեսել առաջին անդամ Պետերբուրգում հրատարակվող «Северная пчела» թերթում, նամակի ձևով՝

էջ 719—721 և 728, «Кавказский календарь на 1851 г.», отд. III, էջ 104—109: Տե՛ս նաև Ա. Օհանյան, Անռելս տրանսպորտը նախասովետական Հայաստանում (Երևանի Պետական համալսարանի Գիտական աշխատություններ, հ. 43, Երևան, 1954, էջ 6—7, 16—18):

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 719, 728:

2 Նույն տեղը, էջ 727:

3 Նույն տեղը, էջ 728:

«Путешествие по Эриванской области» վերնագրի տակ[1]: Ահա թե ինչ է գրված Երևան—Էջմիածին ճանապարհահատվածի մասին՝ նշանավոր դեկաբրիստի նամակում. «Երևանից վանք (Էջմիածին — Թ. Հ.) տանող մեծ ճանապարհը անցնում է Զանգվի վրայով՝ կամարների վրա ամուր և լավ կառուցված կամուրջով, որը գտնվում է ամրությունների հյուսիս-արևմտյան աշտարակի դիմաց, սակայն այս ճանապարհը եղել է դժվարանցանելի նույնիսկ բեռների և հեծյալների համար. այժմ շտկվել է, և սայլերը միանդամայն հարմար կերպով անցնում են նրանով: Նա ընկած է այգիների միջև և, շրջանցելով բերդը շրջապատող բարձրությունը..., դուրս է գալիս Էջմիածնի լայնատարած հարթությունը»[2]:

Լաչինովից բերված այդ հիշատակությունից, ինչպես և Ի. Շոպենի հաղորդած տեղեկություններից երևում է, որ ճանապարհի Մաստարա—Երևան հատվածով անվային երթևեկություն չկար, կամ այդպիսին հազվադեպ էր կատարվում ոչ թե ճանապարհի անբարեկարգ լինելու, այլ պարզապես կայարաններում փոխադրական միջոցների՝ լծելու ձիերի և, թերևս, կառքերի ու սայլերի բացակայության պատճառով: Այս ճանապարհով էին երթևեկում զանազան ճանապարհորդներ, պաշտոնական մարդիկ, այստեղով էր անցնում Վրաստանի հետ կատարվող առևտրի ապրանքների զգալի մասը: 1837 թ. սկսած այս ճանապարհը կոչվում է «Թագավորական ճանապարհ», սոսկ այն բանի հետևանքով, որ նրանով Վրաստանից Հայաստան եկավ Նիկոլայ I ցարը: Հետագայում՝ 1870—1880-ական թվականներին, «Թագավորական ճանապարհը», իրրև ռազմական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող ուղի, վերակառուցվում և միանդամայն պիտանի է դարձվում անվային երթևեկության և փոխադրությունների համար: Նա այն միակ ճա-

1 Այդ նամակը Գրիբոյեդովի երկերի խմբագիր Ի. Շլյապկինը վերագրել է Գրիբոյեդովին և տեղադրել նրա երկերի առաջին հատորում: Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, այդ նամակի տեքստը համեմատելով դեկաբրիստ Լաչինովի՝ մինչև վերջերս անտիպ մնացած «Записки»-ի հետ, պարզել է, որ այն պատկանում է ոչ թե Գրիբոյեդովի, այլ Լաչինովի գրչին (տե՛ս М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, էջ 201—206):

2 Տե՛ս «Северная пчела» (լրագիր) С.-Петербург, 1828, № 21, էջ 3, կամ՝ М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, Документы, էջ 365, կամ՝ Полное собрание сочинений А. С. Грибоедова, под ред. приват-доцента имп. С.-Петербургского университета И. А. Шляпкина, том I, С.-Петербург, 1889, էջ 118:

նապարհն էր, որ հաճառատ Շորագյալը (Շիրակը) կապում էր Ախալցխայի, Քութաիսիի և Փոթիի հետ։ Ընդ որում, նրա մի ղպաէի հատվածը (Թիֆլիսից և Քութաիսիից մինչև Ալեքսանդրապոլ) համընկնում էր «աղի ճանապարհ»-ի հետ։ Երևանից այս ճանապարհով դեպի Մաստարա և Ալեքսանդրապոլ էին տարվում գինի, օղի, ձմերուկ, սեխ, զանազան մրգեր և այլն, իսկ հակառակ ուղղությամբ՝ գերազանցապես հացահատիկներ։ Ալեքսանդրապոլ—Ախալցխա մասն ավելի բանուկ էր։ Այստեղով՝ Կողբից աղ, իսկ Ալեքսանդրապոլից գյուղատնտեսական մթերքներ էին տարվում դեպի Վրաստան, հակառակ ուղղությամբ՝ Վրաստանից Ալեքսանդրապոլ էր բերվում մեծ քանակությամբ շինափայտ։

XIX դ. առաջին քառորդում Երևանի համար, սակայն, թվարկված ճանապարհների մեջ առևտրա-տնտեսական ամենամեծ նշանակություն ուներ Երևան—Բաշ-Ապարան—Փամբակի ձոր—Բզովդալի լեռնանցք (այժմ Պուշկինի լեռնանցք՝ Բազումի լեռնաշղթայում) —Թիֆլիս ուղին[1]։ Այդ ժամանակներում այս ճանապարհը սայլային ճանապարհ էր և ծառայում էր իբրև ամենակարճ ու հարմար ուղի՝ Երևանի և Թիֆլիսի միջև։ Երևանից Թիֆլիս այս ճանապարհով փոխադրում էին բամբակ, բրինձ, ցորեն, պարսկական զանազան տեսակի ապրանքներ, իսկ Թիֆլիսից Երևան՝ գլխավորապես եվրոպական ու ռուսական արդյունաբերական ապրանքներ, որոնց մի մասը սպառվում էր Երևանում, իսկ մյուս մեծ մասը Նախիջևանի և Ջուլֆայի վրայով արտահանվում էր Պարսկաստան։ Երևան—Թիֆլիս այս ճանապարհը մնաց միակ հարմար ուղին մինչև Թիֆլիս—Դիլիջան—Երևան խճուղու կառուցումը, երբ բեռնաշրջանառության հիմնական մասը փոխադրվեց նորակառույց խճուղին, չնայած դրանից հետո էլ առաջինը չկորցրեց իր առևտրատնտեսական և, մասամբ, ռազմական նշանակությունը։

Երևան—Ղարաբաղ հիմնական ճանապարհն անցնում էր Դարաչիչագի և Գյոգչայի մահալներով՝ Քանաքեռ, Ելոզան, Դավաո (Նոր Բայազետ), Ներքին Ղարանլուղ (Մարտունի), Բասարգեչար և Ջոդ գյուղերով՝ Երևանից մինչև Ջոդ կազմելով 161 վերստ[2]։ Այս

[1] Այստեղով է 1829 թ. Պուշկինը կատարել իր նշանավոր ճանապարհորդությունը, որի տպավորության տակ հանճարեղ բանաստեղծը գրել է «Ճանապարհորդություն դեպի Էրզրում» երկը։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 721։

ճանապարհը տրանզիտային նշանակություն գրեթե չուներ, նրանով Գյոգչայի և Դարաչիչագի մահալների անասնապահական և երկրագործական մթերքները՝ հարկերի ձևով և վաճառելու համար, փոխադրվում էին Երևան, իսկ այստեղից էլ դեպի նշված մահալներն էին տարվում՝ խմիչքներ, մրգեր, արհեստավորական և այլ երկրներից ներմուծված տարբեր ապրանքներ։ Ճանապարհի՝ Երևանի խանության մեջ եղած վերջնակետ Ջոդ գյուղը Ղարաբաղի սահմանից գտնվում էր ընդամենը մի քանի վերստի վրա, այստեղից ճանապարհն անցնում էր Ջոդի լեռնանցքով և մտնում Ղարաբաղ։

Երևանից Կարս տանող ճանապարհն անցնում էր էջմիածնով, Կզըլ-Քիլիսայով և Ղոշավանքով։ Այս ճանապարհով էին հիմնականում իրար հետ կապվում Երևանի խանությունն ու Կարսի փաշայությունը։

Երևանից դուրս եկող կամ նրանով անցնող նշված ճանապարհները XIX դ. առաջին քառորդում եղել են խիստ անբարեկարգ վիճակում, նրանք իրենցից ներկայացրել են ոչ թե խճուղիներ, այլ հասարակ սայլային ճանապարհներ, շատ հատվածներում նեղլիկ, քարքարոտ և վտանգավոր՝ իրենց խղճուկ վիճակի և ղինված բանդաների հարձակումների պատճառով։ Սայլային ճանապարհներից բացի, Երևանը խանության մի շարք մահալների հետ կապված էր նաև միջգյուղյա ճանապարհներով։ Այդպիսի երեք ճանապարհներ տանում էին դեպի Աշտարակի կողմերը, երկուսը՝ դեպի Գյոգչայի մահալը[1] և այլն։

Ապրանքների փոխադրությունը գրեթե բացառապես կատարվում էր բեռներով, անվային փոխադրական միջոցների գործադրումը հազվադեպ էր։ Իբրև փոխադրական միջոցներ էին ծառայում՝ ուղտերը, ձիերը, էշերը, երբեմն էլ՝ եզները[2]։ Ապրանքաշրջանառությունը կատարվում էր շատ դանդաղ, իսկ փոխադրվող ապրանքների զանգվածները, անվային փոխադրական միջոցների բացակայության պատճառով, եղել են սահմանափակ։ Ապրանքների փոխադրումը, ինչպես երևում է Շոպենի մի հիշատակությունից, շատ թանկ է նստել[3]։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 721։

[2] Обозрение российских владений за Кавказом, часть IV, էջ 285—286։

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 727։

Երևանի ներքին ու արտաքին առևտրի չափերի ու բնույթի մասին ավելի ամբողջական գաղափար կազմելու համար չի կարելի խույս տալ և չխոսել այնպիսի հարցերի մասին, ինչպիսիք են՝ այնտեղ շրջանառության մեջ գտնվող դրամական միավորների ու դրամների տեսակների, ինչպես և չափերի ու կշիռների վերաբերյալ, որովհետև առանց դրանց որպիսությունն իմանալու՝ առևտրի վերաբերյալ բերված թվերը մնում են անհասկանալի, մանավանդ այն պատճառով, որ միևնույն անունն ունեցող չափի, կշռի և դրամական միավորը տարբեր տեղերում ուներ տարբեր մեծություն։

Ուղտապահ Դարաքենդ (Զորագյուղ) թաղամասում (Երևանի պատմության թանգարան)։

Երևանի խանության մեջ, ինչպես և նրա կենտրոն Երևան քաղաքում ազատ շրջանառության մեջ էին գտնվում պարսկական, ռուսական և թուրքական դրամներ, որոնք ունեցել են ամենաբազմազան արժեքներ (կուրս)։ Օգտվելով դրանից՝ դրամափոխները ստացել են հսկայական եկամուտներ[1]։

Ոսկե դրամներից շրջանառության մեջ են գտնվել՝ ռուսական իմպերիալը, որն այստեղ արժեր 10 ռուբլի արծաթ, հոլանդական շերվոնեցը (այստեղ հայտնի էր բաջահլի անունով), որն արժեր

[1] Ի. Շոպեն, Исторический памятник Армянской области, էջ 728։

վրացական 16 աբասի[1], կամ պարսկական 8 մինալթուն (մեկ մինալթունը հավասար էր 40 կ. արծաթ դրամի), պարսկական թումանը, որը համապատասխանում էր վրացական 20 աբասու (4 ռուբլի արծաթ դրամով), թուրքական դահուդլիհֆան, որը համապատասխանում էր 1 ռ. 34 կ. ռուսական արծաթ դրամի, թուրքական մահմուդը՝ իր երեք տեսակներով, որոնցից առաջինը համապատասխանում էր ռուսական արծաթ դրամի 3 ռուբլու, երկրորդը՝ 2 ռուբլու, իսկ երրորդը՝ 1 ռուբլու, ռուբը իր երկու տեսակներով, որոնցից մեկը հավասար էր ռուսական արծաթ դրամի 50 կոպեկի, իսկ երկրորդը՝ 30 կոպեկի։

Ւրծաթե դրամներից՝ ռուսական ռուբլին, որը հավասար էր վրացական 5 աբասու կամ 2 ½ պարսկական մինալթունի, վրացական աբասին[2], որը հավասար էր պարսկական ½ ալթունի կամ պարսկական 10 շահու, Ղարաբաղի փանահաբադը, որը հավասար էր վրացական մեկ աբասու, պարսկական աաճիրդրաճը՝ հավասար վրացական 2 աբասու, թուրքական դուրուշը՝ իր երեք տեսակներով, որոնցից առաջինը հավասար էր վրացական երկու աբասու, երկրորդը 1 ½ աբասու և ռուսական պղնձյա դրամի 6 կոպեկի, իսկ երրորդը՝ վրացական մեկ աբասու, թուրքական փուլը՝ հավասար ռուսական 10 կոպեկ արծաթի, թուրքական փարան, որոնցից 7-ը հավասար էին ռուսական պղնձյա դրամի 6 կոպեկի։

Պղնձյա դրամներից շրջանառության մեջ էին Երևանում հատած դրամները՝ կարափուլի-ն, և ռուսական գրոշները։ Երևանի պղնձյա կարափուլ կոչված 4 դրամը հավասար էր ռուսական պղնձյա դրամի 6 կոպեկի[3], իսկ ռուսական մեկ գրոշը հավասար էր ½ կոպեկի[4]։

Նշված դրամական միավորների արժեքները հաստատուն չեն եղել, դրանք հաճախ փոփոխության են ենթարկվել՝ մետաղների տոկոսների փոփոխության հետևանքով, որը կատարվել է մի դրամից մի այլ դրամ վերահաշվելու ընթացքում։ Ի. Շոպենը հաղոր-

[1] Վրացական 1 աբասին հավասար էր 20 կոպեկի (արծաթ դրամով արտահայտված)։

[2] Վրացական մեկ թումանը հավասար էր Երևանում գործող պարսկական 2,143 թումանի (տե՛ս ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական գիրան, թղթապանակ 70, վավերագիր 208ա)։

[3] Ըստ Շոպենի՝ չորս կարափուլը հավասար էր 7 արծաթե կոպեկի (И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 891)։

[4] Обозрение российских владений за Кавказом, ч. IV, էջ 287—288։ Տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 888—891։ Լեո, Հայոց պատմության, հ. 3, էջ 54։

դում է, որ Պարսկաստանում շատ սովորական երևույթ է եղել ոսկե և արծաթե դրամները, ինչպես և հնադույն ժամանակներից պահպանված ավելի բարձր պրոբի դրամները պարսկական ավելի ցածր պրոբ ունեցող դրամների վերածելը, մի գործողություն, որը դրամահատներին ու դրամափոխներին տալիս էր հսկայական եկամուտ[1]: Դրա հետևանքով, հետագայում պարսկական դրամների արժեքը բավականաչափ ընկնում է: Այսպես, օրինակ՝ պարսկական թումանը 4 ռուբլուց իջնում է 3 ռ. 50 կոպեկի, որովհետև պարսկական սահիբղրանը 40 կոպեկից իջել էր 32 կոպեկի: Արժեքի նույնպիսի իջեցում կար նաև թուրքական դրամների մեջ[2]: Հետագայում թումանի կուրսը իջնում է 3 ռուբլու և, երբեմն նաև 2 ռ. 85 կոպեկի[3]:

Չնայած Երևանի խանությունում ազատ շրջանառության մեջ էին գտնվում հարևան բոլոր երկրների դրամները, սակայն, այդտեղ՝ իբրև պարսկական պետության վարչական միավորներից մեկում՝ բոլոր հաշիվները կամ, համենայն դեպս, հաշիվների մեծագույն մասը կատարում էին՝ հիմք ընդունելով պարսկական դրամները: Վերջին տարրերի օրոք Երևանի խանությունում և Երևան քաղաքում շրջանառության մեջ են գտնվել պարսկական հետևյալ դրամները.

Աղյուսակ № 6

№№ ը/կ	Պարսկական դրամների անունները	Պարսկական դրամների արժեքը՝ արտահայտված ռուսական արծաթե դրամով
1.	Ոսկի թումանը	4 ռ.—
2.	Սահիբղրանը	— 40 կ.
3.	Տարրմ թումանը (կես թուման) .	2 ռ.—
4.	Ֆանահարադը	—17½ կ.
5.	4 կարափուլը	—6|7 կ.
6.	Շահին	— 2 կ.[4]

Գործող դրամներից բացի՝ կային և մտավոր միավորներ, որոնք իրականում շրջանառության մեջ չեն եղել, բայց որոնք օգտագործվել են հաշիվներ անելու համար: Դրամական այդպիսի միա-

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 851, 889—891:

2 Նույն տեղը, էջ 889:

3 «Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 451:

4 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 889—891:

վորներից էին՝ դինարը, որը մոտավորապես հավասար էր ֆրանսիական սուի ½ մասին[1] ղազրին (=5 դինարի), բիստը (=4 ղազբի=20 դինարի), շահին (=50 դինարի=10 ղազբի=2½ բիստի) և ռեալը (=50 կ. արծաթ դրամի)[2]:

Ինչպես ասվեց, Երևանում ևս հատել են դրամներ: Դրամ հատելու իրավունքը պատկանել է միայն սարդարին, որն այդ դործը տվել է կապալով, կապալառուից տարեկան ստանալով 300 թուման եկամուտ: Կապալառուն պարտավոր է եղել դրամները հատել սահմանված արժեքներից ոչ ցածր պրոբի:

Ինչպես Պարսկաստանի մյուս քաղաքներում, այնպես էլ Երևանում հատած պղնձյա դրամների՝ կարափուլ-ների (սև դրամներ) մի երեսին պատկերված էր Արևգակը, իսկ մյուս երեսին դրված էր այն քաղաքի անունը, որտեղ հատվել էր տվյալ դրամը[3]:

Տվյալ երկրի կամ առանձին շրջանների ու բնակավայրերի տնտեսական կյանքն անհնար է պատկերացնել առանց իմանալու դրանց տնտեսական ցուցանիշները՝ ցանքսային տարածությունները, արտադրանքների չափերը և այլն: Իսկ տնտեսական ցուցանիշները տարբեր ժամանակներում ու տարբեր երկրներում արտահայտվել են տարբեր կարգի չափ ու կշիռներով: Պարսկական տիրապետության ժամանակաշրջանի Երևանի խանությունում և Երևան քաղաքում ընդունված չափ ու կշիռների մասին ամբողջական տեղեկություններ են հաղորդվում Ի. Շոպենի «Исторический памятник Армянской области» վերնագիրը կրող գրքում և «Кавказский календарь»-ի բազմաթիվ համարներում, որոնցից շատերում ընդարձակ հոդվածներ և նույնիսկ ամբողջական աշխատություններ կան նվիրված Անդրկովկասում գործածվող չափ ու կշիռներին:

Անդրկովկասում պարսկական տիրապետության շրջանում միասնական չափ ու կշիռներ գոյություն չունեին: Այստեղ գործ էին ածվում պարսկական, թուրքական, մասամբ և տեղական ծագման բազմաթիվ ու բազմատեսակ չափ ու կշիռներ[4]: Շատ հա-

1 Լ ե ո, Հայոց պատմություն, հ. 3, էջ 54:

2 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 890: Տե՛ս նաև Լ ե ո, Հայոց պատմություն, հ. 3, էջ 54:

3 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 890:

4 Տե՛ս «Кавказский календарь на 1852 год», отд. IV, «О весах и мерах Закавказского края», էջ 551—573, «Кавк. кал. на 1886 год», отдел I, էջ 61—62 և այլն:

ձախ, տարբեր խանություններում, մահաններում և բնակավայրերում գործ էին ածվում միևնույն անունը կրող միավորներ՝ բաթման, խալվար, սամար և այլն, սակայն դրանք տարբեր տեղերում ունեին տարբեր չափեր։ Այսպես, օրինակ՝ տեղ կար, որ բաթմանը հավասար էր 7 ֆունտի, տեղ կար՝ հավասար էր 9 ֆունտի, կային և տեղեր, որտեղ այն հավասար էր 12 ֆունտի, 18 ֆունտի, 20 ֆունտի, 28 ֆունտի, 32 ֆունտի, 37 ֆունտի, 46 ֆունտի[1] և այլն[2]։ Նույնպիսի տարբեր չափ ունեին և մյուս միավորները՝ թե՛ չափի և թե՛ կշռի։ «Տարատրամաչափությունը (разноколиберность) այնպես հետևւ է գնում, որ ոչ միայն յուրաքանչյուր գավառ, կամ գյուղ, այլև ամեն մի շարչի ունի իր մետրային սիստեմը», և շարչիները, «օգտվելով անորոշությունից», օգտագործել են երկու կարգի չափեր՝ մեծ, որ օգտագործել են գյուղացիներից ապրանքներ գնելիս և փոքր՝ իրենց ապրանքները վաճառելիս[3]։ Հետևապես միանգամայն իրավացի էր հայ մեծ վիպասան Րաֆֆին, երբ նշում էր, թե նույնիսկ իր ապրած օրերում յուրաքանչյուր շարչի ուներ իր հատուկ «կշռնքն» ու «կշռաքարերը» և չափական միավորները, որոնք անորոշ էին և իրենց ձևով ու քաշով հսկայական չափով տարբերվում էին ռուսական-պետական չափ ու կշռի միավորներից[4]։ Նրանք իրրև «կշռաքար» օգտագործել են մինչև անգամ իրենց ոտները[5]։ «Кавказский календарь»-ի հոդվածագիրը նշում է, որ երկու միևնույն տեսակի, բայց երկու տարբեր ծանր ու թեթև քաշ ու մեծություն ունեցող չափեր ու կշռաքարեր էին օգտագործում նաև ամբողջ Շուշի քաղաքի առևտրականները[6]։

Միասնական չափ ու կշիռների բացակայության պատճառով աշխատավոր բնակչությունը, մանավանդ գյուղացիությունը, որը գործ ուներ Րաֆֆու նկարագրած չարչիների հետ, իր մթերքները վաճառելիս տուժում էր մեծապես։

Վիճակագրական-անտեսագիտական առումով դրեթե անհնար է որևէ ստույգ թիվ տալ պարսկական տիրապետության ժամանակաշրջանի Անդրկովկասի և նրա առանձին մասերի ու քաղաքների

[1] «Кавказский календарь на 1886 год» отд. I, էջ 61։

[2] Միջին Ասիայում և Ալյասկում բաթմանը հավասար է եղել 180 կգ-ի (տե՛ս А. Г. Баиников, Первые русские путешествия в Монголию и Северный Китай. Москва, 1954, էջ 51)։

[3] Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1955, էջ 430—431։

[4] Նույն տեղը, էջ 434։

[5] Նույն տեղը։

[6] «Кавказский календарь на 1886 год», отдел I, էջ 61—62։

վերաբերյալ։ Շատ քիչ հավանական որևէ թիվ տալու համար, անկախ այն բանից, թե դա վերաբերում է առևտրին, գյուղատնտեսությանը կամ արհեստագործությանը, պահանջվում են հատուկ մասնագետի երկարատև աշխատանքն ու համառ ջանքերը։ Դերազանցապես այդ նույն պատճառով է, որ և՛ սկզբնաղբյուրների մեջ, և՛ ուսումնասիրություններում հաճախ հանդիպում են նույն ժամանակին և բնագավառին վերաբերող միանգամայն իրարամերժ թվեր։ Անդրկովկասի ժողովրդական տնտեսության պատմության համար պարսկական ժամանակաշրջանի չափ ու կշիռների սիստեմի գիտական, խոր ուսումնասիրությունը պետք է համարել կովկասագիտության հույժ կարևոր հարցերից մեկը։ Այդպիսի ուսումնասիրությունը կնպաստեր Անդրկովկասի՝ պարսկական տիրապետության ժամանակաշրջանի տնտեսության պատկերը ավելի իրական թվերով ներկայացնելուն։

***

Մեր նպատակից բոլորովին դուրս է Անդրկովկասի կամ նույնիսկ Երևանի խանության չափ ու կշիռների հարցը։ Մենք հետաքրքրված են միայն Երևան քաղաքում գործող չափ ու կշիռներով, առանց սրանց թվական արժեքների՝ վիճակագրական տեղեկությունները կմնան անորոշ և կամ տեղիք կտան իրավացի տարակուսանքի։

Երևան քաղաքում գործող չափ ու կշիռների մասին տեղեկություններ կան շատ տեղերում։ Դրանք Անդրկովկասի մյուս քաղաքներում և վարչա-տերիտորիալ միավորներում գործածության մեջ եղած չափ ու կշիռների հետ միասին պարբերաբար զետեղվել են «Кавказский календарь»-ի համարներում և երբեմն ուղեկցվել բնդարձակ բացատրություններով։

Երևան քաղաքում պարսկական տիրապետության շրջանում գործ են ածվել հետևյալ չափ ու կշիռները.

ա) Կշռի միավորներ և դրանց հաշր արտահայտված հին ռուսական միավորներով[1]

1. Նախուդ = 3,698 գոլյակի (1 գոլյակ = 1/96 գոլոնիկի կամ 44,43 միլիգրամի)։

[1] Տե՛ս «Кавказский календарь на 1852 год», отдел IV, էջ 564, на 1868 год, էջ 342, на 1881 год, отдел II, էջ 170 և այլն, ինչպես նաև՝ И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 886։

2. Մսղալ =24 նոխուդի=88,752 դոլյայի։
3. Գրվանքա = 82 մսղալի=1968 նոխուդի=75 ղոլոտնիկի 77,664 դոլյայի։
4. Սաիլ = 52 մսղալի=1248 նոխուդի=48 ղոլոտնիկի 7,104 դոլյայի=1/2 ֆունտի։
5. Բաթման = 20 սաիլի=1040 մսղալի=24960 նոխուդի=10 ֆունտի 1 ղոլոտնիկի 46,080 դոլյայի։
6. Տիլան =1 1/2 բաթմանի=1560 մսղալի=37440 նոխուդի=15 ֆունտի 2 ղոլոտնիկի 21 դոլյայի։
7. Քաֆիր = 10 բաթմանի=2 փթի 20 ֆունտի 14 ղոլոտնիկի 76 դոլյայի։
8. Ղանթար =30[1] տիլանի=45 բաթմանի=46800 մսղալի =1123200 նոխուդի=11 փթի 10 ֆունտի 66 ղոլոտնիկի 57 դոլյայի։
9. Խալվար =10 Քաֆիրի=100 բաթմանի =25 փթի 1 ֆունտի 25 դոլյայի[2]։

Ինչպես տեսանում ենք, կշռային բոլոր միավորների հիմքը եղել է նոխուդը (սիսեռը), որը հաստատուն մեծություն չի ներկայացնում, քանի որ կարող է լինել խոշոր կամ փոքր[3], հետևապես և նրա վրա հենված մյուս կշռային միավորները ևս հաստատուն մեծություններ չէին։ Դրա վրա պետք է ավելացնել նաև այն, որ

[1] «Кавказский календарь на 1879 г.»-ում՝ դանթարը համարված է հավասար ոչ թե 30 տիլանի, այլ 29-ի։ Իսկ կշիռների մասին նոպենի տված թվերն առհասարակ շատ են շեղվում մեր նշածներից, որովհետև նա տվել է ոչ թե հատկապես Երևան քաղաքի, այլ ամբողջ Հայկական մարզի կշիռները։

[2] Մեր ձեռքի տակ եղած բոլոր աղբյուրներում պարսկական տիրապետության ժամանակաշրջանում Երևան քաղաքի խալվարը ամենուրեք տրված է 25 փութ կամ դրանից մի փոքր ավելի (25 փ. 1 ֆ. ...)։ Սակայն հետագայում, Երևանը պարսկական լծից ազատագրելուց հետո, դարձյալ պարսկական կշիռներն ու չափերը երկար ժամանակ մնացին գործածության մեջ, Երևան քաղաքի խալվարի չափը ենթարկվել է փոփոխության. այժմ արդեն այն համարել են ոչ թե 25, այլ 30 փութ, խալվարի մի արժեք, որը նախկինում ընդունված էր ամբողջ Երևանի խանության համար՝ բացառելով նրա կենտրոն Երևանը։ Այնպես որ, XIX դարի 40—50-ական թվականներից Երևանի խալվարն արդեն հիշատակվում է որպես 30 փութ քաշ ունեցող կշռի միավոր (տե՛ս «Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 448։ ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Ձեռագրական Բաժին, թղթապանակ 172, վավերագիր 175 և այլուր)։

[3] «Кавказский календарь на 1852 г.», отдел IV, էջ 564։

Երևանի շուկայում միշտ չէր, որ պահպանվում էին նշված կշռային միավորները։ Ճիշտ է՝ վաճառվող և գնվող ապրանքների համեմատաբար ճշգրիտ քաշն իմանալու համար դրանք կշռում էին շուկայում գտնվող կշեռքներով ու ստուգված կշռաքարերով, սակայն մանրածախ առևտրի համար դրանք գրեթե բոլորովին չէին օգտագործվում, այդպիսիք կշռում էին ոչ ստուգված կշեռքներով ու կշռաքարերով։ Նկատի պետք է առնել նաև այն, որ Երևանում քաղաքային նշված կշռի միավորներից բացի՝ օգտագործվում էր նաև Թավրիզի բաթմանը, որը հավասար էր 640 մսղալի կամ ռուսական $7^{17}/_{89}$ ֆունտի, այսինքն Երևանի բաթմանից պակաս էր կշռում մոտավորապես 3 ֆունտի չափով։ Թավրիզի բաթմանն օգտագործվում էր գրեթե բացառապես պարսկական և արևելյան այլ ապրանքների՝ մետաքսի, համեմունքների, խինայի, ինչպես նաև մեղրի, շաքարի ու այլ ապրանքների քաշն ստուգելու համար[1]։ Այդ բոլորով հանդերձ, Երևանի՝ վերը նշված կշռային միավորների քաշերն ավելի արժանահավատ էին, քան այն միավորների քաշերը, որոնք տրվում են ամբողջ Երևանի խանության և Հայկական մարզի համար, որովհետև Երևանը իրենից ներկայացնում էր մի օբյեկտ, կետ, որտեղ հիմնականում գործածության մեջ էին որոշակի քաշ ունեցող միավորներ։ Մինչդեռ Երևանի խանության կամ Հայկական մարզի մասշտաբով, ինչպես արդեն նշեցինք, ընդհանուր միավորներ չկային, դրանց ամեն մի մահալը, գյուղը, քաղաքն ուներ իր կշռային միավորները, որոնց քաշերն ունեին հսկայական տարբերություններ։ Վարչա-տերիտորիալ այդպիսի համեմատաբար մեծ միավորների համար ընդհանուր կշռային միավորներ առաջադրելը չէր կարող իրական լինել, ուստի Երևանի խանության կամ Հայկական մարզի ընդհանուր հաշիվներն անելիս այն պետք է ուղեկցվի վիճակագրական-բանասիրական ամենամանրակրկիտ ուսումնասիրություններով։

բ) Երևան քաղաքում գործածվող հեղուկների չափերը

1. Տունգա =8 ֆունտի (ըստ Երևանի նահանգական վարչության տվյալների)։
2. Բաթման = 2 1/2 տունգայի=2,0 ֆունտի[2]։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 886։

[2] «Кавказский календарь на 1852 г.», отдел IV, էջ 565, на 1879 г., էջ 137, на 1881 г., отдел II, էջ 171 և այլն։

Ուրեմն, եթե Երևանի բաթմանը, որպես կշռի միավոր, ռուսական 10 ֆունտից միայն մի քիչ է ավելի, ապա իրրև հեղուկի չափ այն կազմում է 20 ֆունտ։

գ) Գծային չափեր

1. Գ ր ե խ = 1,375 վերշոկի (1 վերշոկը=4,450 սանտիմետրի)։
2. Հ ա յ կ ա կ ա ն ա ր շ ի ն = 16 գրեխի=22 վերշոկի[1] (ըստ Երևանի նահանգական վարչության տվյալների)։
3. Ա ղ ա ջ = 7 վերստի (1 վերստը=1,668 մետրի)։
4. Ա լ ա բ ա ի = 1 արշինի[2] (ըստ Երևանի նահանգական վարչության տվյալների)։

Ալաբային Թուրքական գծային միավոր էր և գործածության մեջ էր ոչ միայն Անդրկովկասում ու բուն Թուրքիայում, այլև Բալկանյան թերակղզու շատ շրջաններում։ Տարբեր տեղերում նա ուներ տարբեր չափեր, օրինակ՝ Վալախիայի ալաբային հավասար էր 15,345 վերշոկի, Մոլդավիայինը՝ 15,102 վերշոկի և այլն։

դ) Մակերեսույթի չափման միավորներ

1. Թ ա ն ա փ = 900 խանական քառ. արշինի։
2. Տ ո մ ա ր = է այն տարածությանը, որը զբաղեցնում է 10 բաթմանի ցանքսը=702 քառ. սաժենի (ըստ Երևանի նահանգական վարչության տվյալների)[3]։

Եթե գավառների համար խալվարը ևս տրվում է իրրև մակերեսույթի չափման միավոր, ապա Երևան քաղաքի՝ այդ տիպի չափական միավորների մեջ խալվարը չի հիշատակվում, չնայած նրա

[1] «Կ ա յ ք կալենդար»-ի 1879 և 1881 թվականների համարներում 22 վերշոկի փոխարեն գրված է 32 վերշոկ, որը վրիպակ պետք է համարել։

[2] «Кавказский календарь на 1852 г.». отдел IV, էջ 565, на 1879 г. էջ 344 և այլն։

[3] Նույն տեղերը։

այգիների և ցանքերի տարածությունները տրվում են խալվարներով։ Ուստի, հարմար ենք համարում խալվարի մասին հիշատակել ոչ թե այստեղ, այլ դրան անդրադառնալ քաղաքի այգեգործության, բանջարաբուծության և գյուղատնտեսության այլ գրաղմունքների մասին խոսելիս։

ե) Թափվող մարմինների չափման միավորներ

1. Թ ա ջ գ ի ր = 10 բաթմանի=2 փթի 20 ֆունտի 14 զոլոտնիկի 76 դոլյալի։
2. Խ ա լ վ ա ր = 20 թաջգիրի=100 բաթմանի=25 փթի 1 ֆունտի 52 դոլյալի[1]։

Բերված բոլոր կշիռներն ու չափերը ճշգրիտ համարել չի կարելի, դրանցից ոմանց մեծությունը երբեմն տատանվում է բավական մեծ սահմաններում, ոմանց մեծությունները տրված են ըստ Երևանի նահանգական վարչության տվյալների, որոնք միայն մոտավոր թվեր են՝ վերցված առօրյա կյանքից և այլն։ Ուստի, վերը բերված չափական միավորների հիման վրա կատարված հաշիվները կարող են ճիշտ լինել միայն մոտավոր կերպով։

1832 թ. օգոստոսի 2-ին հատուկ հրամանագրով Անդրկովկասում մտցվում են ռուսական չափի ու կշռի միավորները, սակայն դրանից հետո էլ շատ երկար ժամանակ՝ ընդհուպ մինչև 90-ական թվականները այստեղ գործածության մեջ են մնում նաև պարսկական և տեղական հին չափ ու կշռի միավորները[2]։ Այդպիսի պայմաններում բնական է՝ վիճակագրությունը ի վիճակի չի կարող լինել շատ թե քիչ հավանական թվեր մշակել տնտեսության և բնակչության վերաբերյալ։

***

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում Երևանի և Թիֆլիսի միջև կատարվող առևտուրը բոլորովին ընդհատվում է։ Պատերազմական գործողությունների պատճառով անկում է ապրում նաև Պարսկաստանի քաղաքների հետ կատարվող

[1] Տե՛ս «Кавказский календарь на 1879 г.», էջ 136, на 1894 г., отд. IV, էջ 15—17 և այլն։

[2] Տե՛ս «Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 238, на 1886 г., отд. I, էջ 167, на 1886 г., отд. I, էջ 61 և այլն։

առևտուրը։ Երևանի բերդի պաշարման ժամանակ բնակչության զգալի մասը իր ունեցվածքով տեղափոխվել էր բերդ, քաղաքի շուկան և հրապարակներն ամայացել էին, այնտեղ այլևս չկար նախկին առևտրի եռուզեռը, ապրանքների գները մեծապես բարձրացել էին, իսկ բնակչության գնողունակությունը՝ անասելի ցածրացել։ 1828 թ., երբ հաշտություն կնքվեց կռվող կողմերի միջև, և Երևանը ազատագրվեց պարսկական լծից, քաղաքի բնակչությունը ձեռնամուխ եղավ պատերազմի ժամանակ ավերված այգիների, բանջարանոցների, բնակելի տների վերականգնմանը, որին և պետք է հաջորդեր առևտրի աշխուժացումը՝ մի քանի տարվա դադարից հետո[1], սակայն 1829 թ. վաղ գարնանը քաղաքում տարածված ժանտախտը կանխեց ամեն ինչ՝ բնակչությունից խլելով մեծ զոհեր։ Ի. Շոպենը գրում է, որ «կրպակները փակվել են, քարավանատները՝ դատարկվել, ամբողջ առևտուրն ու արդյունաբերությունը՝ ընդհատվել. ահաբեկված բնակիչները փակվել են իրենց տներում, և կյանքի պահպանումը դարձել է յուրաքանչյուրի մտահոգության առարկան»[2]։ Լալինովը նշում է, որ Երևանի հսկայական քարավանատունը իր բազմաթիվ խանութներով՝ պատերազմի հետևանքով դատարկվել է, որ այնտեղ այլևս չի բարձրանում առևտրի աղմուկը[3]։

Երևանի կյանքն իր նորմալ հունի մեջ չի մտնում նաև 1830 թվականին, որովհետև 1829 թ. վերջերին, երբ ժանտախտն արդեն անցել էր Պարսկաստան, և Երևանում քաղաքային կյանքը սկսում էր նորից արթնանալ, Երևան է մուտք գործում խոլերան[4], որի հետևանքով դարձյալ ընդհատվում է քաղաքի հասարակական-տնտեսական գործունեությունը, հատկապես՝ առևտուրը։ Պատերազմի և նրան հաջորդած համաճարակների հետևանքով ստեղծված տնտեսական անկումային դրությունը քայլ առ քայլ փոխվում է 1831 թվականից սկսած, և շատ չանցած՝ Երևանի արհեստագործությունը, առևտուրն ու գյուղատնտեսությունը ընկնում են իրենց զարգացման հոսքի մեջ։

Պարսկական տիրապետության վերջին շրջանի Երևանը բնու-

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 874։

2 Նույն տեղը։

3 М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, книга первая, Документы, էջ 316։

4 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 874— 875։

թագրելով իբրև նույնանուն խանության առևտրի ամենամեծ կենտրոն, ինչպես և Պարսկաստանի ու Ռուսաստանի միջև ցամաքային հանապարհներով կատարվող առևտրի ամենակարևոր ու մեծ կետերից մեկը, դրա հետ միաժամանակ չպետք է չափազանցել նրա դերը, որովհետև իրականում Երևանի և՛ ներքին, և՛ արտաքին (չհաշված տարանցիկը) առևտուրն ուներ համեմատաբար հասմնատ չափեր։ Այդ շրջանի Երևանի առևտուրը հիմնականում մանրածախ առևտուր էր, մեծ տարածում ուներ ապրանքափոխանակությունը, վաճառականական դասը դեռևս չէր ձևավորվել որպես քաղաքային խոշոր բուրժուազիա, նրա առավել ազդի ընկնող և հարուստ ներկայացուցիչների կապիտալները չէին անցնում մի քանի հազար ռուբլու սահմաններից։ Ֆեոդալական-մաքսային սիստեմը, դրամական միավորների և չափ ու կշիռների բազմազանությունը, բարեկարգ ճանապարհների բացակայությունը, հաղորդակցության միջոցների պրիմիտիվությունը, որոշ ապրանքներով կատարվող առևտուրը սարդարի մենաշնորհին հնթակա լինելը, երկրի փակ նատուրալ տնտեսության հետ միասին լուրջ կերպով արգելակում էին նրա առևտրի ծավալմանը։ Առանձին խանների՝ առևտուրը հովանավորելու և արտակարգ միջոցառումներով այն առաջ մղելու քաղաքականությունը էպիզոդիկ բնույթ էր կրում և չէր կարող արմատական փոփոխությունների պատճառ հանդիսանալ։

Գ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԸ

Երևան քաղաքի հողային տարածությունները։ Խալվարն ու օրավարը որպես մակերևույթի միավորներ։ Հողաշինության ձևերն ու հողային հարաբերությունները։ Ոռոգման սիստեմը և դրանից օգտվելու կանոնները։ Սկզբնաղբյուրների հաղորդումները Հուսեյն-Ղուլի խանի տնտեսական քաղաքականության մասին։ Այգեգործությունը։ Բանջարաբուծությունը։ Անասնապահությունը, շերամապահությունը և մեղվաբուծությունը։

XIX դ. առաջին քառորդում, ինչպես և դրանից հետո, Երևանում, նրա տնտեսության մեջ գյուղատնտեսական ճյուղերը՝ այգեգործությունը, բանջարաբուծությունը, երկրագործությունն ու անասնապահությունը ունեին կարևոր նշանակություն։ Աշխատան-

քով զբաղված բնակչության մի պատկառելի մասը բաժին էր ընկնում գյուղատնտեսական ճյուղերին։ Բուն Երևանցի ընտանիքներից շատ-շատերն ունեին իրենց բանջարանոցներն ու այգիները, անասունները, իսկ արվարձանների բնակիչների մեծ մասը զբաղված էր երկրագործությամբ, որը տարածված էր մերձքաղաքային մասերում։ Սակայն նրա էկոնոմիկայի համար բնորոշը ոչ թե գյուղատնտեսական զբաղմունքներն էին, այլ արհեստագործությունն ու առևտուրը, չնայած առաջինները նույնպես մեծ տարածում էին գտել։ Երևանն իր զբաղմունքների այդպիսի բնույթով բացառություն չէր կազմում։ Նա այդ շրջանում գոյություն ունեցող ֆեոդալական բազմաթիվ այն քաղաքներից մեկն էր, որոնց բնակչությունը՝ արհեստագործության և առևտրին գրեթե հավասար՝ զբաղված էր գյուղատնտեսությամբ։ Հարցը այն էր, որ արհեստագործությունն ու առևտուրը եղել են զարգացող ճյուղեր, դրանք երևանի էկոնոմիկայում գնալով զբավել են ավելի ու ավելի կարևոր տեղ, մինչդեռ այդ գործությունն ու գյուղատնտեսական մյուս ճյուղերը՝ գյուղի ու քաղաքի միջև աշխատանքի բաժանման խորացմամբ, քաղաքը գյուղից անջատվելու պրոցեսի խորացմամբ՝ աստիճանաբար ետ են մղվել վերջին տեղերը, դրանց որոշ մասը նույնիսկ իսպառ վերանում է քաղաքի կյանքից։ Քաղաքային կյանքի հիմքը եղել են արհեստագործությունն ու առևտուրը, որոնք քաղաքի էկոնոմիկայի զարգացող ճյուղերն էին, նրա հասարակական կյանքը վերափոխող ճյուղերը։

Երևանի տնտեսական կյանքում գյուղատնտեսական զբաղմունքներից կարևոր դեր էին խաղում այգեգործությունն ու բանջարարուծությունը։ Այստեղ ոմանք զբաղվում էին նաև երկրագործությամբ, ոմանք շերամապահությամբ, մեղվապահությամբ, ոմանք էլ՝ պահում էին անասուններ։

Բավականաչափ ընդարձակ են եղել Երևան քաղաքի հողային տարածությունները։ Ըստ հիշատակության, քաղաքի արտաքին գիծը մոտավորապես կազմել է 28 վերստ, որի մեջ ընդգրկված տարածության մեծագույն մասը (ըստ Շոպենի՝ 99/100-ը, որը չափազանցված հարաբերություն է) զբաղեցրել են այգիներն ու բախչաները[1]։ Բացի դրանից, քաղաքին հարող 300 խալվար տարածությամբ ևս մշակվել է «քաղաքացիների» կողմից։ Այստեղ

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 464։

տարածված են եղել բրնձի և այլ հացահատիկների տեսակները։ Միանգամայն տրամաբանական է, որ այնպիսի փոքր քաղաքի, ինչպիսին էր Երևանը, որի բնակչության թիվը XIX դ. առաջին քառորդում նույնիսկ 12000-ի չէր հասնում, այդքան մեծ տարածություն զբավելը ցույց էր տալիս այնտեղ գյուղատնտեսական զբաղմունքների՝ այգեգործության, խաղողագործության և երկրագործության տարածված լինելը։

Երևանի հողային տարածությունների մասին, սակայն, արժանահավատ և միանգամայն ընդունելի տվյալներ չկան։ Մեզ հասած տվյալները միայն մոտավոր են, դրանք հաշվի են առնվել ոչ թե հատուկ չափումներ կատարելով և ճշգրիտ վիճակագրական կանոնների համաձայն, այլ հարկա-ֆինանսական և ոստիկանական օրգանների ոչ ստույգ տվյալների հիման վրա, իսկ պարսկական ֆինանսական և ոստիկանական օրգանների համար հողային տարածության միավորներ են ծառայել վերին ոստիճանի անհաստատ ու անորոշ խալվարն ու օրավարը։ Խալվարն իրեն կշռի միավոր Երևանի խանության տարբեր մահալներում և բնակավայրերում տատանվել է 25 փթից մինչև 30 փթի սահմաններում։ Այսպես, օրինակ՝ Երևան քաղաքի մեկ խալվարը հավասար է եղել 25 փթի, 1 ֆունտի[1], դրեթե նույնչափ է եղել խալվարը նաև Նախիջևանում[2], մինչդեռ ամբողջ Հայկական մարզի համար, որն իր մեջ ընդգրկում էր պարսկական տիրապետության շրջանի Երևանի և Նախիջևանի խանությունները, խալվարը հիշատակվում է իբրև կամ 28 փթի, 4 ֆունտի[3], կամ էլ 30 փթի հատնող[4] կշռային միավոր։ Բացի դրանից, խալվարի, ինչպես և սոմարի քաշը կախված էր նաև տվյալ ապրանքի՝ հացահատիկի և այլնի ծանր կամ թեթև լինելուց։ Եթե իբրև կշռային միավոր, խալվարի քաշն ունի այդպիսի տատանումներ, ապա ավելի անորոշ է նա իբրև մակերևույթի միավոր։ Իբրև մակերևույթի միավոր, խալվարը հավասար էր այն տարածությանը, որը ցորեն ցանելու դեպքում պահանջել է մեկ խալվար սերմացու[5]։ Համապատասխանաբար սոմարն էլ այն տարածու-

[1] Տե՛ս «Кавказский календарь на 1852 г.» отдел IV, էջ 564 և այլ տեղերում։

[2] «Кавказский календарь на 1886 г.», отд. I, էջ 62։

[3] Обозрение российских владений за Кавказом, часть IV, էջ 281։

[4] «Кавказский календарь на 1847 г.», էջ 113։ К. Орловский, Готистический очерк четырех уездов Эриванской губернии... («Кавказский календарь на 1851 г.», отд. IV, էջ 8) և այլն։

[5] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 887։

թյունն էր, որը ցորեն ցանելու դեպքում պահանջում էր մեկ սոմար սերմացու, իսկ բաթմանը՝ մեկ բաթման սերմացու։ Սակայն քանի որ՝ ա) խալվարը (ինչպես և սոմարն ու բաթմանը) իրրև կշռի միավոր ունեցել է տարբեր քաշ և բ) ցածրադիր վայրերում ու արգավանդ հողերում սերմը ցանվել է ավելի խիտ, քան լեռնալանջերին ու քիչ արգավանդ հողերում[1], ուստի խալվարն էլ իրրև մակերեսության միավոր ուներ շատ տարբեր մեծություններ։ Ի. Շոպենը, խոսելով պարսկական տիրապետության շրջանի մակերեսության միավորների՝ խալվարի, սոմարի և բաթմանի մասին, նշում է, որ դրանք անհուսալի միավորներ են, և տարածության չափն իմանալու համար դրանց հիման վրա չի կարելի կատարել շատ թե քիչ արժանահավատ որևէ հաշիվ[2]։

Հենց այդ է պատճառը, որ խալվարն իրրև մակերեսության միավոր տարբեր հեղինակների մոտ տրված է տարբեր մեծություններ։ Ոմանք այն համարել են 4—5 դեսյատին[3] (1 դեսյատինը = է 1,0925 հեկտարի), ոմանք՝ 6—10[4], իսկ ոմանք էլ՝ $1\frac{3}{4}$—$4\frac{1}{4}$ դեսյատին[5]։ Խալվարի մեծությունը կախված է եղել նաև հողի ջրարբի կամ անջրդի լինելուց։ «Кавказский календарь»-ի 1886 թ. համարում Անդրկովկասի տեղական և պարսկական ու թուրքական ծագումի չափ ու կշիռների մասին եղած անսատարադիր ընդարձակ հոդվածում ասված է, որ ջրարբի հողերում խալվարը հավասար է $1\frac{3}{4}$ դեսյատինի, իսկ անջրդի հողերում նա գրավում է դրանից 2 և $2\frac{1}{2}$ անգամ ավելի մեծ տարածություն[6]։ Այդպիսի պայմաններում, եթե դժվար է Երևանի խանության կամ Հայկական մարզի խալվարի համար գտնել որևէ միջին թիվ, ապա նույնը չի կարելի ասել Երևանի համար։ Երևանի հողային տարածություններն ամբողջովին գտնվում էին ցածրադիր գոտում, դրանք, առանց բացառության, ջրարբի էին և վերին աստիճանի արգավանդ։ Բացի դրանից, Երևանի խալվարն իրրև կշռի միավոր, ամենից փոքրն էր ամբողջ Երևանի խանությունում։ Ուստի, այդ բոլորն ի մի բերելով, կարելի

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 887։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 570, 737։

[4] В. Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, Тифлис, 1901, էջ 226. Իվանենկոյի տված այդ թվերը չափազանցված են, և դրանք պետք է առհասարակ մերժել։

[5] «Кавказский календарь на 1886 г.», отд. I, էջ 62։

[6] Նույն տեղը։

է ասել, որ իրրև մակերեսության միավոր, Երևանի խալվարը ամբողջ Երևանի խանությունում իր մեծությամբ պետք է լիներ նվազագույնը, կամ, համենայն դեպս, նվազագույնին շատ մոտ, այն է՝ 2—$2\frac{1}{2}$ դեսյատին, այն դեպքում, երբ նրա առավելագույն չափը եղել է 4—5 դեսյատին։ Երևանի խալվարի համար մեր ստացած այդ թվերը ավելի հավանական են դառնում, երբ նկատի ենք ունենում նաև մի այլ հանգամանք։ Այսպես, իրրև մակերեսության միավոր խալվարից, սոմարից և բաթմանից բացի, հատկապես Երևանում, ընդունված է եղել նաև օրավարը, որը ևս շատ անորոշ մեծություն էր[1]։ Մի քանի զույգ եզներով գործի դրվող դութանի մեկ օրվա կատարած վարը սովորաբար հավասար են համարել մեկ դեսյատինի, իսկ այդպիսի 4—5 օրվա վարը՝ մեկ խալվարի[2]։ Սակայն փորձը ցույց է տալիս, որ այն ժամանակվա դութանը, որն առանց կատարելագործվելու իր գոյությունը պահպանեց ընդհուպ մինչև սովետական կարգերի հաստատումը, մեկ օրում երբեք չէր կարող մեկ դեսյատին վարել, նրա օրվա հերկը կարող էր կազմել առավելը 0,7—0,8 դեսյատին, կամ չորս-հինգ օրը՝ 2,8/3,5—3,2/4 դեսյատին։ Երևանի հողը ծանր կավահող էր, դժվար հերկելի։ Այստեղ դութանը օրական կարող էր առավելը վարել 0,5—0,6 դեսյատին, այստեղի խալվարը չէր կարող անցնել 2—2,5 դեսյատինից։

Հետևապես և, խոսելով Երևանի հողային տարածությունների մասին, մենք նրա խալվարն ամենուրեք հաշվելու ենք մոտավորապես 2—2,5 դեսյատին, իսկ օրավարը՝ 0,5—0,6 դեսյատին։

Պրոֆ. Հ. Ե. Թումանյանը, խոսելով Երևանի խանության վերջին շրջանում նրա ունեցած այգիների տարածության մասին, գրում է, որ ընդհանրապես խալվարը ոչ թե 4 դեսյատին է, ինչպես հաղորդում է Ի. Շոպենը, այլ մոտավորապես 2,5[3]։ Եթե խոսքը վերաբերում է միայն այն մահալների խալվարին, որոնք ցածրադիր են և այգեգործական, ապա կարելի է ընդունել այն առանց տարակուսանքի։ Իսկ եթե խալվարի այդ չափը ստացվում է ամբողջ Երևանի խանության համար, որի մեծագույն մասը գրավում էին

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 887—888։

[2] Նույն տեղը, էջ 737, 887—888։

[3] О. Е. Туманян, Экономическое развитие Армении, часть I, էջ 17—18։

նախալեռներն ու լեռները, ապա այն չի կարելի ընդունելի համարել, որովհետև լեռնային և նախալեռնային մահալներում խալվարը ավելի մեծ տարածություն է գրավել (3,5—4 դեսյատին)։

***

Երևան քաղաքի հողային տարածության և դրա չափման միավորների մասին մոտավոր գաղափար կազմելուց հետո՝ այժմ անդրադառնանք քաղաքում տարածված հողատիրության ձևերին և հողային հարաբերություններին, որոնք կազմում էին քաղաքի հասարակական-տնտեսական հարաբերությունների բաղկացուցիչ մասը և կարևոր դեր խաղում նրա կյանքում։

Ի. Շոպենը Հայկական մարզի, հետևապես և Երևանի խանության անշարժ գույքը բաժանում է հինգ խմբի՝ բնակեցված կալվածքների, չբնակեցված հողերի, ջրերի, խանութների (կրպակների) և այգիներով տների ու ամեն տեսակի ձեռնարկությունների[1]։ Դրանց մեջ, անշուշտ, հասարակական կյանքի և հասարակական-գույքային հարաբերությունների սիստեմում գլխավոր դերը խաղում էին բնակեցված կալվածքներն ու չբնակեցված հողերը, այլ կերպ ասած, հողն ամբողջությամբ վերցրած։

Երևանի խանությունում, պարսկական պետության մյուս մասերի նման, հողի գերագույն սեփականատերը համարվում էր ինքը՝ շահը։ Շահի իրավասության տակ էին գտնվում պետության բոլոր հողերը, նա դրանք կարող էր տնօրինել իր ցանկացած ձևով։ Շահն իր հայեցողությամբ հսկայական հողային տարածություններ էր տալիս խաներին, իսկ սրանք էլ իրենց հերթին թիուլի կամ մյուլքի իրավունքով առանձին կալվածքներ և ամբողջական գյուղեր էին տալիս բարձր դասի ներկայացուցիչներին[2]՝ բեկերին, աղալարներին և այլոց։ Թիուլական և մյուլքադարական գյուղերում և կալվածքներում «գյուղացիների և հողատերերի միջև եղած հարաբերությունները բնորոշվում էին որպես ճորտերի և կալվածատերերի միջև եղած հարաբերություններ»[3]։ Երևանի խանության գյուղերի մոտ $^1/_3$-ը թիուլական և մյուլքադարական էին, իսկ մնացած մասը

[1] Н. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 925։

[2] О. Е. Туманян, Экономическое развитие Армении, часть I, էջ 7։

[3] Նույն տեղը։

պետական կամ խալիսե[1]։ Մյուլքադարն ու թիուլդարը փաստորեն հանդիսանում էին իրենց հանձնված հողերի սեփականատերերը[2]։

Նկատի ունենալով միայն արտաքին ձևական մի քանի հատկանիշներ, այն է՝ ամբողջ երկրի հողերի և ընդերքի հարստությունների գերագույն տերը շահը համարվելը, պետական, թիուլական և մյուլքադարական գյուղերի բնակիչների՝ մի տեղից մյուս տեղ ազատ տեղափոխվելու իրավունք ունենալը և այլն, նախասովետական շրջանի հետազոտողները և ցարական աստիճանավորները գտնում էին, որ Երևանի խանությունում բացակայում էր և՛ հողի մասնավոր սեփականությունը, և՛ ճորտատիրական կարգը։ Սակայն իրականում ամբողջ երկրում տարածված էր հողի մասնավոր սեփականությունը, իսկ գյուղացիությունը գտնվում էր ճորտական վիճակում։ Հողի մասնավոր սեփականության տարածման անառարկելի փաստերից են այն բազմաթիվ գործարքները՝ հողի առուծախը, պատական վճիռով մեկից մյուսն անցնելը, ընտանեբաժանելը, ժառանգելը, ինչպես և խանական ու շահական հրովարտակները։ Ձանազան նպատակներով հողի օտարացման մասին պահպանվել են արխիվային բազմաթիվ փաստաթղթեր, որոնց մի մասը հրատարակված է առանձին ժողովածուներում ու այլ կարգի աշխատություններում։ Մ. Ադոնցի հաշիվներով, միայն Հայկական ՍՍՌ Պետական արխիվում և Մատենադարանում պահպանվել են հողերի վաճառքի, նվիրատվության, կտակման և հողը մեկից մյուսին անցնելու և այլ կարգի գործարքների մոտավորապես 300 փաստաթղթեր[3]։

Հողից բացի ջուրն էլ համարվում էր խանի սեփականությունը։ Սակայն, ի տարբերություն հողի, որը նա բաժանում էր առանձին տիրոջների վրա, ջուրը ամբողջությամբ պահում էր իր անմիջական իրավասության ներքո։ Եվ որպեսզի մշտական հսկողություն ունենա ու ապահովի ոռոգման ջրերից ստացվող իր եկամուտները, խանը դրա համար սահմանել էր հատուկ պաշտոնեություն[4], որին կանդրադառնանք հետո։

Խանության մահալներում գոյություն ունեցող կարգի համաձայն, ձևականորեն Երևանի հողն էլ համարվել է ամբողջությամբ

[1] О. Е. Туманян, Экономическое развитие Армении, часть I, էջ 9։

[2] Նույն տեղը։

[3] М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении в XIX веке, էջ 30։

[4] О. Е. Туманян, Экономическое развитие Армении, часть I, էջ 9։

սարդարապատական, սակայն իրականում այստեղ եղել է երեք կարգի հողային սեփականություն՝ խանական (սարդարական) կամ պետական, վանքապատկան և մասնավոր անձանց պատկանող հողեր։

Երևանի քաղաքապատկան հողերի մի մասը իրրև սեփականություն գտնվում էր սարդարի ձեռքին[1]։ Սարդարապատկան հողերը հիմնականում տարածվում էին բերդի մոտ գտնվող «Սավզի-երի» ջրառատ տեղում և Զանգվի աջ ափին՝ Դալմայում։ Դրանցից առաջինը, որ գրավում էր ընդարձակ տարածություն, մշակովի է եղել վաղուց, իսկ երկրորդը մինչև վերջին սարդար Հուսեյն խանը անմայր ու անպտուղ էր. եթե հնում այն մշակվելիս էլ է եղել, ապա հետագայում ինչ-ինչ պատճառներով ոռոգման առուները խափանվել են և այգեգործության համար այդ անղուգական հողերը վեր են ածվել կիսաանապատային անհրապույր տարածության։ Սարդարը՝ 1815 թ., գյուղացիների հարկադիր աշխատանքով՝ սարբազների գործուն մասնակցությամբ, հանում է Դալմայի առուն և առվով ոռոգվող Զանգվի աջ ափին տարածվող հողերը բաժանում իր մերձավորներին, քաղաքի որոշ բնակիչների և մի հսկայական բաժին էլ վերցնում իրեն՝ այն դարձնելով սարդարապատկան այգի[2]։ Երևանի սարդարապատկան այգիների թիվը հասնում էր 14-ի, դրանք էին՝ Դալմա, Դել-ղուշի, Բաղկա, Միրզա-Ռաբի, Յուզբաշի-Քյազիմ, Քիւ-բաղ, Գյուլլի-բաղ, Ղոշա-բաղ, Ղայա-բաշի, Թութչի-բաշի, Հաջի-Բաբա, Թափա-բաշի և Հաջի-Բեգում-բաղ[3]։ Պետական-սարդարապատկան այդ այգիները տրվում էին կապալով։ Կապալի ժամկետը սովորաբար սահմանված էր մեկ տարի, կապալառուի հետ պայմանը կնքվում էր մարտ ամսին, երբ արդեն հնարավոր էր սպասվող բերքի մասին որոշ գաղափար կազմել։ Պայմանը կնքելուց հետո, այգին ամբողջությամբ անցնում էր կապալառուի ղեկավարության ներքո, նա հավաքում էր այգու ամբողջ միրգը, քաղում տավուշն ու խաղող։ Սակայն սարդարի այգեպանները մնում էին իրենց տեղերում, որպեսզի հսկեն և կարգին վիճակում

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 470։

[2] Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 3, էջ 154—155։ И. Шопен. Исторический памятник Армянской области, էջ 960։ Տե՛ս նաև «Записки Кавказского отделения Русского технического общества», т. IV, 1871—1872, էջ 308։

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 959։

պահեն այգիները և թույլ չտան կապալառուին՝ հափշտակելու լավ ծառերը կամ միրգը հավաքելու ժամանակ անզգուշությամբ՝ վնասելու դրանք։ Այգեպանների վրա իրրև հսկող նշանակված էր բաղման-բաշին՝ գլխավոր այգեպանը։ Բերքը հավաքելուց հետո՝ այգիները մինչև հաջորդ գարուն ամբողջությամբ անցնում էին բաղման-բաշու հսկողության ներքո։ Նա կապալառուից ստանալով այգիները, սարդարի կողմից ամբողջ խանության մասշտաբով սահմանված հարկադիր աշխատանքի միջոցով աշնանը ծածկել էր տալիս խաղողի այգիները և նախապատրաստում ձմռանը[1]։ Այգիների խաղումը այգեգործության ամենածանր աշխատանքներից մեկն է համարվել։ Կոռի կարգով այդ աշխատանքները կատարել են ինչպես քաղաքի շրջակայքի գյուղացիները, այնպես էլ Երևանի բնակիչները[2]։ Նույն կարգով էին կատարվում նաև այգիների բացման և էտման աշխատանքները։

Ըստ Ի. Շոպենի հաղորդած տեղեկությունների, պետական այգիները մշակելու՝ խաղելու, բաց անելու և էտելու համար սարդարը սահմանել էր կոռային աշխատանքի հետևյալ կարգը.

Աշնանը խաղողի պետական այգիները պարտավոր էին խաղել.

ա) Սուրմալուի մահալի գյուղացիները՝ Դել-ղուշի և Քիւ-բաղի այգիները։

բ) Կարբիբասարի մահալի բնակիչները՝ Ղայա-բաշի և Վեդիբաղի այգիները։

գ) Զանգիբասարի և Վեդիբասարի մահալների բնակիչները՝ Թութչի-բաշի-բաղի, Յուզբաշի-Քյազիմ-բաղի, Միրզա-Ռաբի-բաղի, Հաջի-Բաբա և Հաջի-Բեգում-բաղի այգիները։

դ) Գյոգչայի հայերը և Երևանի քաղաքի արվարձաններում ապրող բոշաները՝ Ղոշա-բաղլարը։

Իսկ խաղողի այգիների բացման և էտման համար գարնանը սարդարի հատուկ հրովարտակով հարկադիր աշխատանքի հետևյալ կարգն էր սահմանված.

ա) Աշտարակ գյուղի բնակիչները պարտավոր էին բացել և էտել Քիւ-բաղը և Վեդիր-բաղի կեսը։

բ) Քանաքեռ և Զոլմաքշի (Նորք) գյուղերի բնակիչները՝ Դել-ղուշի, Բաղկա, Միրզա-Ռաբի և Յուզբաշի-Քյազիմ այգիները։

գ) Շիրաբադի բնակիչները՝ Գյուլլի-բաղը և Վեդիր-բաղի մյուս կեսը։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 959։

[2] Նույն տեղը։

դ) Երևանի բոշաները՝ Ղոշա-բաղն ու Ղայա-բաշին։

ե) Երևան քաղաքի հայ բնակչության մի մասը՝ Թոփչի-բաղն ու Հաջի-Բարան։

զ) Կզըլ-կալա (Կարմիր-բերդ) գյուղի բնակիչները՝ Թափա-բաշը և Հաջի-Բեգում-բաղը[1]։

Խաղողի որթերի թաղումը սև և ծանր աշխատանք էր, բացառապես կատարվում էր գյուղացիների կոռային աշխատանքով։ Դրա համար առանձին փորձ և հմտություն չէր պահանջվում, մինչդեռ որթերի բացումն ու, մանավանդ, էտումը պահանջում էր հմտություն, այդ պատճառով էլ դրանք կատարվում էին այգեգործ գյուղացիների և Երևանի քաղաքացիների կոռային աշխատանքով[2]։ Սարդարապատական այգիների մշակման համար ամեն տարի կոռի եղանակով գործադրվում էր 6000 բանվորական օր, չհաշված այն ժամանակամիջոցը, որն անհրաժեշտ էր մահալներից Երևան գալու և վերադառնալու համար[3]։ Մեկ աշխատանքային օրվա վարձը համարելով 20 կոպեկ, Շոպենը նշում է, որ պետական այգիների համար գործադրված հարկադիր աշխատանքի ընդհանուր արժեքը հավասար էր 1200 ռուբլու (արծաթի դրամով արտահայտված)[4]։

Հողային տարածություններից բացի, ինչպես տեսանք, խանական սեփականությունն էին կազմում նաև ջրաղացներ, շուկա-հրապարակներ, իջևանատներ և այլն։ Սակայն դրանցով էլ չէր սահմանափակվում պետական սեփականության ցանկը։ Պետական ամենաարժեքավոր սեփականություններից մեկը, որն անմիջապես կապված էր այգեգործության հետ և պայմանավորում էր նրա հաջողությունը, Երևանի ամենանշանավոր առուն էր՝ Դալմայի ջրանցքը, որը կառուցվել է 1815 թ.։ Այդ ջրանցքը, ինչպես հաղորդում են աղբյուրները, 1822 թ., վերջին սարդար Հուսեյն խանը պարսից մայրաքաղաք գնացած ժամանակ նվիրել է շահին[5]։

Եղած տվյալները ցույց են տալիս, որ պետական այգիների ոչ միայն մշակումը, այլև դրանց տնկելը կատարվում էր կոռային աշխատանքի միջոցով։ Ի. Շոպենը հաղորդում է, որ «այդ այգիների տնկման ժամանակ հատուկ պայմաններ չեն եղել, սակայն բան ընդհանուր սովորության, որ գոյություն ուներ գրեթե ամբողջ

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 959—960։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 960։

[4] Նույն տեղը։

[5] Նույն տեղը։

Անդրկովկասյան երկրում, ուրիշի հողի և ջրի վրա այգի գցողը պարտավոր էր տիրոջը տալ ամբողջ եկամտի կեսը, կամ հենց այդին բաժանվում էր երկու մասի»[1]։ Այստեղից միանգամայն պարզ է, որ Երևանի պետական այգիները գցվել են հարկադիր աշխատանքի միջոցով։ Հողն ու ջուրը համարվում էր սարդարի սեփականություն։ Նա իր տրամադրության տակ եղած հողից բաժանել է բնակիչների վրա, որոնք այգիներ են գցել այդ հողերում, դրա դիմաց նրանք այգիներ են գցել նաև սարդարի համար։ Հարկադիր աշխատանքով պետական այգիներ գցելու տիպիկ օրինակ կարող է ծառայել Դալմայի այգիները գցելը 1815 թ., երբ Հուսեյն խան սարդարը Դալմայի առուն հանելուց հետո, Զանգվի աջակողմյան հողերը տալիս էր իր մերձավորներին ու քաղաքի բնակիչներին՝ այգիներ գցելու համար։ Շուտով այստեղ գցվում է 149 այգի[2], որոնց թվում և Դալմայի սարդարական նշանավոր այգին։

Հողատիրության երկրորդ ձևը վանքապատկան հողատիրությունն էր։ Երևան քաղաքում կալվածքներ ունեին և՛ էջմիածնի վանքը, և՛ Սևանա վանքը, և՛ Գեղարդավանքը, և՛ քաղաքի եկեղեցիները[3]։

Էջմիածինը միայն Երևան քաղաքում ուներ 8 այգի, ընդամենը 100 խալվար (մոտավորապես 200—250 դեսյատին) տարածություն[4]։ Բացի դրանից, նա այստեղ ուներ նաև ջրաղացներ ու այլ կալվածքներ[5]։ Եթե մի կողմից սարդարը հարկադրում և կաշառքներ (փեշքեշներ) էր պահանջում կաթողիկոսական աթոռից, ապա

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 960։ Ըստ մի այլ աղբյուրի, պարսից կառավարությունն ու խաները իրենց պատկանող հողերը բաժանելով բնակիչներին և այդ հողերն ապահովելով ոռոգման ջրերով, բնակիչներից պահանջում էին նրանց ցանքսերից (այգիներին չի վերաբերում, այգիների համար վերցնում էին բերքի 1/3-ը) ստացած բերքի 1/3 մասը (տե՛ս «Записки Кавказского отделения Русского технического общества», т. IV, *1871—1872*, էջ *309*)։ Իսկ եթե հողատերը ուզում էր օգտվել ուրիշի հանած առվից, ապա պարտավոր էր իր հողի եկամտի 2/3-ը տալ առվի տիրոջը (տե՛ս նույն տեղը)։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 874։

[3] Նույն տեղը, էջ *684*։ «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր», կազմեց՝ Հար. Աբրահամյան, Երևան, *1941*, էջ *102—103*։

[4] И. Шопен, Ист. пам. арм. обл., էջ 679։ Տե՛ս նաև ՀՍՍՌ Պետ. Մատեն., ֆ. Կաթողիկոսական դիվան, Բղեշպանակ *183*, վավերագիր *469*։

[5] И. Шопен, Ист. пам. арм. обл., էջ 680—681։

մյուս կողմից էլ նա իր հրովարտակներով միջամտում և պաշտպանում էր էջմիածնի կալվածատիրական իրավունքներն իր հոգային տարածություններում նկատմամբ: Վաթողիկոսական դիվանում պահպանված է սարդար Հուսեյն խանի մի հրամանը, որը պարսկերենից թարգմանված է ռուսերեն: Այդ հրամանագրով Հուսեյն խանը նախազգուշացնում է բոլոր մարդկանց, որ Շոլլու վայրի մոտ էջմիածնին պատկանող արոտավայրը ոչ ոք իրավունք չունի ձեռք տալու և վանքին նեղացնելու: Ահա այդ փաստաթուղթը (բերում ենք լրիվ տեքստը՝ թարգմանաբար). «Նախկին սարդար Հուսեյն խանի հրամանի թարգմանությունը, Զիլ-Հաջի ամիս, թիվը անորոշ:

Ճանապարհով անցնող բոլոր մարդկանց և քարավաններին տեղեկացվում է՝ քանի որ Շոլլուի մոտ ընկած արոտատեղին պատկանում է էջմիածնի վանքին, որը այն պահպանում է իբրև ղորուղ, այսինքն՝ իբրև խոտհարք և այնտեղ իր անասունների համար հավաքում է կեր, ապա հրամայվում է այդտեղով բոլոր անցնողներին՝ ամենևին չդիպչել այդ արոտատեղի ղորուղին և նեղացնել նշված վանքին, որովհետև նա մշտապես և միանգամայն ազատ կերպով օգտվել է այդ արոտավայրի խոտից: Դրված է Հուսեյն խան սարդարի անվանական կնիքը»[1]:

Եթե հասարակ արոտատեղիի անձեռնմխելիությունը պահպանելու համար Հուսեյն խանը հատուկ հրամանագիր է տալիս, ապա միանգամայն հասկանալի է, որ ավելի եկամտաբեր կալվածքների՝ այգիների, ցանքսերի և այլոց նկատմամբ էջմիածնի և մյուս վանքերի կալվածատիրական իրավունքների պահպանման համար նա պատրաստ էր ավելի կտրուկ միջոցների դիմելու: Եվ իրոք, փաստերը ցույց են տալիս, որ էջմիածնի և նրան ենթակա վանքերի կալվածքները, տվյալ դեպքում դրանց Երևանում ունեցած կալվածքները, գտնվում էին արտոնյալ վիճակում: Դրանք ժամանակի ընթացքում զնալով կլորանում էին այս կամ այն միջոցներով՝ նվիրատվությամբ, գնելու ճանապարհով և նույնիսկ բացարձակ գրավման եղանակով:

Վանքին նվիրելու և նրա կողմից այս կամ այն այգին սեփականացնելու սպառնալիքի մասին է վկայում կաթողիկոսական դի-

[1] ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆոնդ Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 221, վավերագիր 67:

վանում պահպանված մի վավերագիր[1], որը գետեղված է Հար. Աբրահամյանի կազմած «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր» աշխատության մեջ: Այդ վավերագրում ասված է[2]. «Ես ներքոյ ստորագրող Երևանու շհարցի Մուքավէլի Ալլահաշուքուր կոչեցեալս, լեալ ուխտադիր Աստուծոյ վասն վաղաքառամ որդւոյն իմոյ Գալուստի, վասն զի պարտ էի ըստ կանուխ խոստմանս նուիրել որդին իմ Աստուծոյ ի հոգևորական կարգ կրօնաւորութեան...: Բայց սակայն հանգուցեալ Ղուկաս սրբազան կաթուղիկոսն բազում ստիպանօք հրամայեաց ներելով ինձ, չետս կալ ի խոստմանցս, երաշխաւոր լինելով Աստուծոյ, որ առ իմս անարժանութեան խոստումն: Վասն որոյ և մենք... փոխեցաք զդիտաւորութիւն մեր դարձուցանելով զորդին մեր ի կարգ աշխարհի. բայց ըստ մեղացս իմոց, Աստուած զորդին իմ ի հասակի քսան ամաց փոխեաց աստի և եղև մեզ սուգ անհնարին և մանաւանդ խիղճ մտաց մերոց ստէպ հարկանելով զհոգիս, համարիմ զանձն ուխտադրուժ: Ապա կամելով ելանել ի խղճմտանաց, մտադիր անասամի վաստակոյ իմոյ հանել զբաժին նմայ...: Ուստի Երևանու Նորագիւղ առացեալ վայրոջ իմ սեպհականն այգիս, որ մէկ կողմն է Ջանգու գետոյ բաղն, երկրորդն՝ Աշտարակու ճանապարհն, երրորդն՝ Մուդասլի բաղատեղն, որ այժմ այգի է, չորրորդն դուրս քարափն: Այս այգւոյս մէկ տախտակն... ետու բաժին որդւոյ իմոյ յանուն և ի վայելս Սրբոյն Գեղարդայ, որ միշտ գյաւիտեան այս մէկ տախտակ տեղւոյ արդիւնքն, որշափ և գոյացի, ձեռամբ իմով և չետագայ այգի իմոյ մշտնջենաւորեսցի Սրբոյն Գեղարդայ. միայն մերս հոգացողութեամբ և ոչ միաբանից նորա. այսինքն մի՛ այլ ևս աշխատ լիցէն ի միաբանութենէ վանիցն կամ պաշտօնէից նորա զալ յայգին և աշխատութեամբ իւրեանց ունիցին ստանալ. ո՛չ այսպես. այլ ես, կամ չետնորդք իմ ունիցիմք զհոգացողութիւն մշակելոյ և մերս ձեռամբ արդիւնք այն մեկ տախտակ տեղւոյն մատուսցուք Սրբոյն Գեղարդայ:

Եւ բաց յայսմանէ զրոց եթէ այլ ևս զիր ինչ ի չետ գայցէ յանուն իմ վասն յիշատակութեան այգւոյ, կամ աթոռոյն և կամ այլ տեղւոյ, եղիցի անընդունակ. վասն զի չառաջ քան զայս Երևանու ոմն երևելի իշխան, Հաճի Նովրուզալի ասացեալ, ի ձեռն զրոյ և չղով դրամատուութեան կամէր զայգին իմ գնել և ես առ ի խաբել զմիտս նորա, անուն եդի այգւոյն իբր մատուցեալ Աթոռոյն զրով

[1] ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆոնդ Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 242, վավերագիր 64:

[2] Բերում ենք համառոտագրելով:

միով։ Ահա՛ մի գուցէ ժամանակաւ յայտնեսցի զայն գիր, այսու գրով հաստատեմ՝ զի ուր ուրեք զայն գիր ի յայտ գայցէ, անընդունակ է և անպէտ. այլ այս է ճշմարիտ խոստումն իմ, զոր ուղղամիտ հոգւով վերընծայեմ Սրբոյն Գեղարդայ, վասն հոգևոր բաժին լինելոյ որդւոյն իմոյ Գալուստի, զի թերևս սխալանաց իմոյ զներումն ընկալայց յամենառողորմ մարդասերէն Աստուծոյ։

Ըստեփան Գալուստով. ես գրեցի իմ ձեռօք։

Գրեցաւ գիրս ի Թիֆլիզ քաղաքի, ի 1815 յամի Տեառն և յամսեանն փետրվարի 7-ին»[1]։

Բերված այդ վավերագրից նախ և առաջ երևում է, որ միջնադարյան Հայաստանում «հոգու փրկության» անվան տակ վանքերին կալվածքներ նվիրաբերելու «սովորությունը» իր ուժը պահպանում էր նաև XIX դ. առաջին քառորդին, Երևանում։ Երկրորդ՝ նա ցույց է տալիս, որ վանքերը իրենց կալվածքներին շփվող հովվերը ամեն կերպ աշխատում են սեփականացնել և ավելի ընդարձակել իրենց տիրույթները։ Վավերագրում նշված ոմն Գալուստովը, որն, անշուշտ, հասարակության բարձր խավին չէր պատկանում, իր այգու մեկ տախտակը նվիրելով Գեղարդի վանքին, միաժամանակ խիստ կերպով պայմանադրում է, որ ինքը և իր հաջորդները պետք է այն մշակեն և ամբողջ արդյունքը հանձնեն վանքին, որ այդտեղ վանականներ չպետք է դան, որ վանքը իրավունք չպետք է ունենա այդտեղ որևէ վերակացու կարգելու և այլն։ Այլ կերպ ասած, ըստ պայմանի, վանքը պետք է ստանար միայն նվիրված տախտակի բերքը, այգետերը նրան իրավունք չէր տալիս վանականների ու վերակացուների միջոցով թափանցելու իր այգին, որովհետև նա վախենում էր իր ամբողջ այգին կորցնելու հեռանկարից, վանքի կալվածքային հարևանությունը ճակատագրական կլիներ նրա համար։ Այգետերը լավ ծանոթ լինելով վանքի մեքենայություններին, իր նվիրագրության մեջ նշում է նաև այն մասին, որ ինքն իր այգին, «երևելի» իշխան Հաջի Նովրուզալուն չտալու համար, հայտարարել է, թե մի գրով տվել է էջմիածնի աթոռին, եթե որևէ ժամանակ ի հայտ գա այդպիսի պայմանագրություն («գիր»), նշում է իր նվիրագրի մեջ Գալուստովը, ապա այն պետք է համարել չեղյալ, անպետք, իր իսկական գիրը այն է, որով ինքը Գեղարդին է տվել այգու մեկ տախտակը՝ ինքը այն մշակելու և բերքը վանքին հանձնելու պայմանով։

[1] Տե՛ս՝ «Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ տեղական վավերագրեր», կազմեց՝ Հար. Աբրահամյան, էջ 102—103։

Երրորդ՝ բերված վավերագրից երևում է, որ քաղաքային հարուստ բնակչության այգիները կարող էին զանազան եղանակներով խլվել նաև հասարակության բարձր դասակարգերի ներկայացուցիչների կողմից։ Վավերագրում հիշատակված Երևանի «ոմն երևելի իշխան» Հաջի Նովրուզալին ճիշտ է՝ ուզում էր դրամով գնել Գալուստովի այգին, սակայն, դրամի հետ միասին նա իր ձեռքում ուներ նաև «գիր», որն անշուշտ խանի կամ որևէ այլ իշխանավորի դրավոր միջնորդությունը կամ կարգադրությունն էր։ Գալուստովը չէր կարող խուսափել այդ գործարքից, ուստի հայտարարում է, թե իբր ինքն իր այգին մի գրով արդեն տվել է աթոռին (էջմիածնին) և դրանով միայն կարողանում է փրկել այգին Հաջի Նովրուզալու ձեռքն անցնելուց։

Վերջապես՝ հինգերորդ՝ բերված վավերագիրը այն բազմաթիվ փաստաթղթերից մեկն է, որոնցով պարզվում է, որ Երևանի բնակիչներն իրենց այգիների սեփականատերերն էին, որ, նրանք, եթե չհաշվենք բռնություններն ու զանազան խարդախությունները, որոնք կարող էին գործադրվել արտոնյալ դասերի և վանքերի կողմից՝ նրանց հողակտորները խլելու նպատակներով, կարող էին իրենց այգիներն ու բանջարանոցները տնօրինել իրենց ցանկացած ձևով՝ վաճառել, ժառանգել, փոխարինել մի այլ ունեցվածքով և այլն։

Օգտվելով ասվածից, հարկ ենք համարում նշել, որ բերված փաստը եզակի չէր։ Երևանի հասարակ քաղաքացիների սեփականատիրական իրավունքները ոտնահարվում էին խանների ու բեկերի, ինչպես և վանքերի կողմից, հաճախ արհեստավորների ու առևտրականների գույքն ու ունեցվածքը այնպիսի խստությամբ չէին ապահովված, ինչպես բուրժուական կարգերում։ Կաթողիկոսական Դիվանի վավերագրերից մեկում կարդում ենք հետևյալը.

«Վեհափառ բարձրագոյն հոգևոր կառավարութեան Սրբոյ էջմիածնի Երևանցի ոսկերիչ Գէորգեան Կարապետէս ամենախոնարհ խնդիր

Յամի տեառն 1825 դեկտեմբերի 2-ին՝ որովհետև երկիրս անօրինաց իշխանութիւնէ էր՝ զիս ազատելով Երևանայ՝ կամեցայ սրբոյ աթոռոյս հովանավորութեամբն մնալ, խնդրեցի ի սրբազան կառավարչացն ինձ մի դուքան շնորհել, որ առուտուրս այստեղուն ընեմ, բայց այնպես պատահեցաւ, որ սրբոյ աթոռոյս հարկաւորք համար՝ սրբազան կառավարիչքն ութ՝ թուման փող ուղեցին ինձա-

նից և առան, թող զայս ըստ սովորութեան քերան ևս տայի. ու սինօդի թուղտով[1] այնպես պայմանեցին, որ դուքանն ինձ սեպհական լինի, ես նստեմ մէջն միշտ՝ ինչպես որ ահա՛ այն գրի օրինակն խնդրոյ գրիս հետ մատուցի, ևրանով կարէ իմանալ ձեր սրբազնութեան բանի որպիսիքն, բայց աշխարհ էր վասն խառնակութեան ժամանակին եղև, որ ուր ամիս միայն կարացի ներստիլ... ա՛նպէս ոչ փոխի տէր եդէ և ոչ դուքանի տէր, և դուքանն այն է, որ կայր հանդուցեալ Դանիէլն Եփրեմ եպիսկոպոսիս։

Վա՛յ ամինս խոնարհաբար խնդրեմ ողորմութիւն անէ բարձրագոյն կառավարչութիւնդ իմ դուքանն վերստին ինձ դարձուցանէ, որ ես աբրուստ ունենամ ինձ համար։

1828 նոյեմբեր 28 Կարապետ Գէորգեան»[2]։
Ի սուրբ էջմիածին

Ակնհայտ է, որ նուէնպիսի գործարքներ սովորական էին և Երևանի կյանքում։ Էջմիածնի «սրբազան կառավարիչները», Երևանցի ոսկերիչ Կարապետ Գևորգյանից ութ թուման վերցնելով, հատուկ պայմանով նրան սեփականատիրական իրավունքով տալիս են մի խանութ։ Սակայն շուտով ինչ-ինչ եղանակներով խանութը նորից խլում են նրա ձեռքից, առանց նրա արժեքը հատուցելու։ Երևանցի ոսկերիչը բողոքում է այդ անարդարության դեմ և հոգևոր բարձրագույն կառավարչությանը խնդրում նորից իրեն վերադարձնել իր խանութը։ Հարցն այն չէ, թե Կարապետի խանութը նրան վերադարձրել են թե չէ, այլ այն, որ նույնիսկ սինոդի կողմից հաստատված պայմանագրերը ևս կարող են ոտնահարվել՝ հօգուտ վանքի և ի վնաս քաղաքացիների։

Հողատիրության երրորդ ձևը Երևանի բնակիչներին պատկանող հողերն էին։ Դրանց մեջ մտնում էին բնակիչների այգիները, բաղերն ու բախչաները, ինչպես նաև տնատեղերը[3]։ Հողատիրության այս ձևի մեջ կարող էին մտնել և՛ քաղաքի հարկատու բնակիչների փոքրիկ այգիներն ու բանջարանոցները, և՛ խանների ու բեկերի ընդարձակ այգիներն ու այլ հողային տարածություններ, որոնք ընկած էին քաղաքի ու նրա արվարձանների շրջանում։ Վերջին կարգի հողատիրություններն ավելի արտոնյալ վիճակում էին գտնվում։

1 Ամենուրեք պահպանված է վավերագրերի ուղղագրությունը։

2 ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆոնդ Կաթողիկոսական Դիվան, թղթապանակ 59, վավերագիր 499։

3 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 943։

Քաղաքացիներն իրավունք ունեին իրենց պատկանած հողերը տնօրինել իրենց ցանկացած ձևով։ Ի. Շոպենը գրում է, որ նրանք իրավունք ունեին իրենց այգիները, բաղ ու բախչան և տները «վաճառել, գրավ դնել, օտարացնել»[1]։ Քաղաքացիներից՝ իրենց պատկանող այգիների, տների և բախչաների համար առանձին հարկեր և տուրքեր չէին վերցվում։ Սակայն այդ չի նշանակում, որ բնակիչներին պատկանող այգիներն ու բանջարանոցներն առհասարակ ազատված էին հարկերից ու տուրքերից։ Դրանցից վերցվող հարկերն ու տուրքերը մտնում էին բնակիչներից այլ անուանների տակ վերցվող զանազան հարկերի և տուրքերի մեջ[2]։ Հետևապես չի կարելի համաձայնել Երվանդ Շահազիզի այն թեզի հետ, ըստ որի՝ իբր Երևանի բնակիչներին, հատկապես հայ բնակիչներին, պատկանող հողերը չեն հարկագրվել[3]։ Երվանդ Շահազիզի այդ եզրակացությունը հիմնված է «Հայսմավուրք»-ի հիշատակարանում 1652 թ. գրված մի հիշատակության և Մեսրոպ Թաղիադյանի մի հաղորդման վրա, որոնք կարոտ են լուրջ ուսումնասիրության։ Առայժմ միայն կարելի է ենթադրել, որ Երևանի բնակիչների հողային սեփականությունների մի մասը առաջացել է գնման ճանապարհով։

Հողատիրությունն ու հողային հարաբերությունները սերտորեն կապված էին արհեստական ոռոգման անհրաժեշտության հիմքի վրա առաջացած և գործող սովորությունների ու կանոնների հետ։ Տվյալ հողամասի, այգու, բանջարանոցի կամ խոտհարքի արժեքը որոշվում էր ոչ միայն նրա մեծությամբ ու արգավանդությամբ, այլ գլխավորապես ոռոգման պայմաններով, ոռոգող ջրի քանակությամբ։ Այդ պատճառով էլ՝ այս կամ այն հողամասը վաճառելիս գնողն առաջին հերթին ուշադրություն էր դարձնում նրա ոռոգման հնարավորություններին[4]։

Երևանի խանությունում ոռոգման հարցը եղել է գյուղատնտեսության ամենակենսական հարցերից մեկը, թերևս նրա ամենակարևոր հարցը։ Այստեղ երկրի դաշտային արգավանդ հողերն առանց արհեստական ոռոգման իրենցից կներկայացնեին անպտուղ ու անհրապույր տարածություններ։ Ելնելով կենսական անհրաժեշ-

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 943—945։

2 Նույն տեղը, էջ 944—945։

3 Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 156—157։

4 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 941։

տությունից, ժամանակի ընթացքում կանոնավորել են բնական ջրերից օգտվելու իրավունքը, ստեղծել են արհեստական առուների ցանցեր, պատրաստել են արհեստական լճակներ ու ամբարտակներ, խանության վարչական բաժանումը հարմարեցրել են ոռոգման պայմաններին, ոռոգման ցանցից օգտվելը հսկելու, հերթականությունը, վերցվող ջրի չափը և ժամանակը որոշելու ու դրանք կատարելու համար ստեղծել են հատուկ պաշտոնեություն, որը հսկայական դեր էր խաղում և՛ մահալներում, և՛ քաղաքներում, այդ թվում և Երևանում: Ոռոգման ջրի համար բնակիչների միջև հաճախակի լինում էին վեճեր, կռիվներ, ուր բանը հասնում էր արյունահեղության[1]:

Մի կողմ թողնելով մահալներում գոյություն ունեցող կարգ ու կանոնը և ոռոգման ցանցը, կանգ առնենք Երևան քաղաքի ոռոգման պայմանների, նրա առուների ցանցի, ոռոգման ջրից օգտվելու կարգի և ոռոգման գործին հսկողների աշխատանքի վրա:

Ընդհանուր առմամբ, բոլոր կարգի ջրերը բաժանվում էին երկու խմբի՝ բնական պայմաններում գոնվող ջրեր (լճեր, գետեր, աղբյուրներ, ձյան և անձրևի ջրեր) և, այսպես կոչված, հանած, անցկացրած ջրեր (քյահրիզներ, ջրհորներ, առուներ, արհեստական լճակներ և այլն)[2]: Երևան քաղաքի համար ջրի բնական պաշարներ էին համարվում Զանգու (այժմ Հրազդան) և Կըրխ-Բուլաղ (այժմ Գետառ) գետերը և քաղաքի Դամիրբուլաղ մասում գոնվող աղբյուրները[3]:

Իր բնակչության թվի և հողային տարածությունների քանակի տեսակետից Երևանը համարվել է ամենաջրառատ քաղաքներից մեկը: Այստեղ արհեստական ոռոգման շուրջը բնակիչների միջև վեճերը ավելի քիչ էին վերածվում լուրջ ընդհարումների, քան այդ տեղի էր ունենում բազմաթիվ մահալներում, որտեղ ջրի մեծ սղություն կար:

Երևանի այգիները, տներին կից հանած բանջարանոցները և քաղաքի ծայրամասերին մոտ տարածվող ցանքսերը ոռոգելու համար վերջին տարիներ Հուսեյն խանի օրոք Զանգվից և Կըրխ-Բուլաղից հանվել են մի շարք առուներ: Զանգվից հանած առուներով ոռոգվել են՝ Կզըլ-կալայի, Դարաբաղի, Դարաքենդի այգիները և բերդի տերիտորիայում հաղած բանջարանոցները, իսկ Կըրխ-Բուլաղով ոռոգվել են՝ Աբբաս-դարայի, Շահարի, Դամիրբուլաղի և Խոտրովարադի այգիները[1]: Կըրխ-Բուլաղը, քաղաքի հարավային կողմում Սավզի-երի վայրում գտնվող ընդարձակ բանջարանոցներն ու բոստանները ոռոգելուց հետո՝ թափվել է Զանգվից հանած Նորագավիթի առուն: Դամիրբուլաղ կոչված աղբյուրը բխել է քաղաքի նույնանուն մասից և հոսել դեպի բերդը[2]:

Երևանի բնական ջրերի, առուների, ջրհորների և Թոխմախան-գյոլի մասին (այժմ Կոմսոմոլի լիճ) խոսել են շատ հեղինակներ ու ճանապարհորդներ[3]: Նրանց դիտողություններն ու նկարագրությունները ի մի բերելով, կարելի է ամբողջական կերպով ներկայացնել պարսկական տիրապետության վերջին 25-ամյակում Երևանում գործող ոռոգման ցանցի պատկերը: Քաղաքի ոռոգման ցանցը իր մեջ ընդգրկել է Քանաքեռ և Նորագեղ գյուղերի և Թոխմախան-գյոլի ու Զանգու գետի միջև լճակած տարածությունները: Գլխավոր առուները հանված էին Զանգվից: Դրանք թվով չորսն էին՝ Դալմայի, Աբուհայաթի, Մամոիի և Նորագեղի:

Դալմայի[4] առուն երկարությամբ բոնել է նախավերջին տեղը, սակայն իր ջրի քանակությամբ ամենամեծն է հղել և ոռոգել է քաղաքի ամենաբնտիր այգիները: Այս ջրանցքը իր սկիզբն առնում

---

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 942:

[2] С. А. Егиазаров, О водовладении в Закавказском крае, Киев, 1896, էջ 11:

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 465, Орловский, г. Эривань («Кавказский календарь» на 1852 г.». отд. III, էջ 437), «Кавказский календарь на 1866 г.», отд. III, էջ 61 և այլն:

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 465:

[2] Նույն տեղը:

[3] Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, էջ 153—154: И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 398, 465: Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, часть 6, Эриванская губерния, составил капитан Услар, Санкт-Петербург, 1853, էջ 255: К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 437): Барон Август фон-Гакстгаузен, Закавказский край, часть I, էջ 165—169: «Кавказский календарь на 1866 г.», отд. III, էջ 61: «Записки Кавказского отделения русского технического общества», т. IV, էջ 308—309, М. Сагателов, Экономические очерки, Эриванской губернии и озеро Гокча, Тифлис, 1879, էջ 31—33: Гр. Уварова, Кавказ, Путевые заметки, Москва, 1887, էջ 191—195: Աիշան, Այրարատ, էջ 316: Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հատ. I, էջ 708: Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 18—21:

[4] «Դալմա» (պարսկ.)— ընդերկրյա, ստորերկրյա:

է Զանգվի աջ կողմից, նրա ժայռոտ ափից, մոտ 350 սաժեն[1] (ավելի քան 745 մետր) երկարությամբ անցնում է ժայռափոր թունելով և դուրս գալիս Դալմայի այգիների մոտ, որոնք խաղողագործության համար ունեն լավագույն հողեր: Դալմայի այգիներից բացի՝ այս ուղի ջրերով ոռոգվել են նաև Նորագեղի որոշ այգիներն ու էջմիածնի վանքին պատկանող մի քանի այգիներ: Դալմայի առուն այն ժամանակվա պայմաններում ամենադժվարին և բարդ կառույցներից մեկն էր համարվում: Նրա երկարությունը հասել է 8 վերստի[2] (ավելի քան $8^1/_2$ կմ):

Արուհայաբին[3] հանված էր Զանգվի ձախ ափից, Մամռիի առվից ավելի վերև: Այս առուն երկար տարածությամբ անցնում էր քաղաքապատկան այգիներով և երբ հասնում էր բուն քաղաք, նրա ջրերն արդեն գրեթե միանգամից սպառվում էին[4]: Կըրխ-բուլաղի ջուրը ավելացնելու համար Արուհայաբի առուն միացված էր նրան: Արուհայաբի մի ճյուղը գնում էր Թափարաշ, Դարաքենդ և բերդ, իսկ մյուս ճյուղը՝ Նոր թաղ և միանում Կըրխ-բուլաղին:

Մամռի[5] առուն նույնպես սկսվել է Զանգվի ձախ ափից, Քանաքեռ գյուղի տակ գտնվող նրա խոր ձորից: Քաղաքապատկան հողերով նա անցնում էր $9^1/_2$ վերստ (ավելի քան 10 կմ) երկարությամբ[6]: Երևանում եղած գլխավոր առուների մեջ սա համարվում էր ամենից երկարը: Մամռին ոչ միայն ոռոգել է քաղաքի այգիների ու բանջարանոցների գգալի մասը, այլև լցրել Թոխմախան-գյոլը, որի ջրերը ևս ամռանը օգտագործվել են ոռոգման նպատակներով:

Ամենակարճ առուն եղել է Նորագեղի առուն (երկարությունը հասել է 4 վերստի), որը ևս սկսվել է Զանգվից, նրա աջ կողմից՝ կամուրջի և Դարաքենդի (Զորագեղ) միջև ընկած հատվածից: Այս առուն ոռոգել է ավելի հնում գոյություն ունեցող Նորագեղի ցանքադաշտերն ու այգիները: Այս գյուղը XIX դ. սկզբներին արդեն գոյություն չուներ, այդ ժամանակ նրա ավերակները հաղիվ նկատ-

[1] М. Сагателов, Экономические очерки Эриванской губернии и озеро Гокча, էջ 32:

[2] Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 167—168:

[3] «Արուհայաբ» (պարսկ.)— ջուրը ծծված, իսկ Երվանդ Շահազիզը այդ բառդ[illegible]ում է «կյանքի ջուր» (տե՛ս նրա «Հին Երևանը», էջ 21):

[4] Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 167:

[5] Ըստ Հաքստհաուզենի՝ «մամուռ» նշանակում է «վերականգնված», «վերանորոգված» առու:

[6] Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 167:

վում էին այժմյան Երևանի գարեջրի նոր գործարանից ոչ հեռու գտնվող բլրի շրջանում:

Նշվածներից բացի, Զանգվից հանված էին երկու այլ առուներ ևս, սակայն դրանք չեն ծառայել ոռոգման նպատակներին, այլ հանված են եղել ջրաղացների համար: Հաքստհաուզենը գրում է, որ դրանցից յուրաքանչյուրի վրա եղել է 19-ական ջրաղաց[1]:



Մի տեսարան Կըրխ-բուլաղ (Գետառ) գետի հովտից (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ):

Քաղաքապատկան այգիների ու հողերի ոռոգման մյուս կարևոր աղբյուրը եղել է Կըրխ-բուլաղը (Գետառը): Այս գետը փաստորեն իրենից ներկայացրել է մի գլխավոր առու, որն, անցնելով քաղաքի միջով, մասնատվել է առանձին այգիներ ու բանջարանոցներ գնացող բազմաթիվ մանր առուների, որոնք ջրի սղության պատճառով գործել են խիստ սահմանված հերթականությամբ: Սակայն, բացի այդ փոքրիկ առուներից, որոնք չունեին իրենց հատուկ անունները, Կըրխ-բուլաղից անց էին կացված նաև երեք

[1] Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 167:

համեմատաբար ավելի մեծ առուներ։ Դրանք էին Փաշալըխ-արխը, Հաշա-Գավառը և Զոլմաքշիի առուն։ Փաշալըխ-արխով և Հաշա-Գավառով ոռոգվում էին Շահար և Դամիրբուլաղ քաղաքամասերի այգիները, ինչպես և քաղաքային հողերում բնակիչների կողմից կատարված ցանքսերը, իսկ վերջին առուն միայն ոռոգում էր Զոլմաքշի (Նորք) գյուղի այգիներն ու ցանքսերը[1]։

Ի տարբերություն Զանգվից հանած առուների, որ ավելի քիչ են ենթարկվել ավերումների, Կըրխ-բուլաղը և նրանից հանված առուները հեղեղների պատճառով հաճախ խափանվել են և նորից սկսել են գործել միայն դրանց վրա հսկայական աշխատանք թափելուց հետո։

Երևանի ոռոգման ցանցի պատմությունն ունի դեռևս մութ ու վիճելի շատ կողմեր։ Մինչև օրս տակավին չի պարզաբանված նշված առուների կառուցման ժամանակը, պատմության ընթացքում դրանց ունեցած խափանումները, վերականգնման ժամանակներն ու պայմանները և այլ հարցեր։ Երևանի պատմության ավելի հին ժամանակներին վերաբերող մեր ձեռքի տակ եղած նյութերը, որոնք հավանաբար առիթ կլինի հրապարակել հետագայում, ցույց են տալիս, որ նրա ոռոգման ցանցի գլխավոր երակները, այսինքն հիմնական առուները կառուցվել են հնագույն ժամանակներից, բայց քաղաքական աննպաստ պայմանների և բնական աղետների հետևանքով ժամանակ առ ժամանակ ավերվել են, և հարկ է եղել պարբերաբար վերականգնել դրանք կամ թևրևս հանել նոր առուներ։ Նրա ոռոգման ցանցը առանձնապես հաճախակի է ավերվել պարսկա-թուրքական երկարաձիգ պատերազմների հետևանքով։ Պարսկական տիրապետության շրջանում վերջին անգամ Երևանի առուները վերականգնել է վերջին սարդար Հուսեյն խանը։ Վերջինիս ժամանակներին վերաբերող աղբյուրներից մի քանիսը Հուսեյն խանին են վերագրում Երևանի բոլոր առուների առաջին կառուցողի պատիվը, մյուսները նրան համարում են քաղաքում հնուց արդեն գոյություն ունեցող առուների լոկ վերականգնողը[2]։ Կարելի է հաստատապես պնդել, որ հատկապես Մամռիի

[1] К. Орловский, г. Эривань («Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 437)։

[1] Տե՛ս Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կարուղիկէ էմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, էջ 153—154, Гр. Уварова, Кавказ, էջ 195։ К. Орловский, г. Эривань («Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 437)։ «Записки Кавказского отд. русск. технич. общесвва», г. IV, էջ 308, М. Сагателов, Экономические очерки Эриванской губернии и озеро Гокча, էջ 31 և այլն։

և Դալմայի առուները գոյություն են ունեցել հին ժամանակներից, հետևապես դրանք Հուսեյն խանի կողմից նշ թե կառուցվել, այլ միայն վերականգնվել են։

Հուսեյն խանը, իբրև ընդհանուր կանոն, բոլոր առուները վերականգնել կամ նոր առուներ է կառուցել գյուղացիների հարկադիր աշխատանքով, որին մասնակցել են նաև նրա սարբազները[1]։

Երևանի ջրանցքների մասին շատ արժեքավոր տեղեկություններ է հաղորդել, մանավանդ, Հաքոտհաուզենը, որն, իր ասելով, Երևանում եղած ժամանակ ամենից շատ հետաքրքրվել է հատկապես նրա ոռոգման սիստեմով։ Խաչատուր Աբովյանի ուղեկցությամբ (որը նրա համար կատարում էր նաև թարգմանչի դեր), ինքը շատ տեղեկություններ է ստացել քաղաքի ոստիկանապետից։ Նա գրում է, որ Երևանի առուները շատ լավ են համահարթված, թեքությունները համաչափ են, մեղմ, ափերը պատվարված են և ամրացված, առանց դժվարության կարելի է պահել կարգին վիճակում[2]։ Հաքոտհաուզենի վկայությամբ, տարվա ընթացքում դրանց վերանորոգման ծախսը չի անցել 300 ռուբլու սահմաններից։ Առուներից օգտվողները պարտավոր են եղել, ըստ իրենց հողամասերի և այն ոռոգելու համար անհրաժեշտ ջրի քանակի, մուծել վերանորոգման համար սահմանված գումարը և տալի վրա կատարել հարկադիր աշխատանք[3]։

Առուներից բացի, Երևանի այգիների, բանջարանոցների ու ցանքսերի համար օգտագործվում էին նաև Թոխմախան-գյոլի, Դամիրբուլաղի աղբյուրների, մասամբ և ջրհորների ջրերը։

Թոխմախան-գյոլը արհեստական լճակ էր։ Նա, ըստ երևույթին, գոյություն է ունեցել տակավին ուրարտական ժամանակներից, սակայն հետագայում մի շարք անգամ շարքից դուրս է եկել և նորից վերականգնվել։ Ըստ հիշատակությունների, պարսկական տիրապետության վերջին տարիներին նա չի գործել, փչացած է եղել և վերականգնվել է հետագայում՝ Երևանը պարսից լծից ազատագրվելուց հետո։ Թոխմախան-գյոլը իրենից ներկայացրել է բնական փոս, որի հոլովում պատրաստել են մի արհեստական մեծ պատվար։ Նա գտնվում էր Զոլմաքշիի տափի ներքևի մասում։ Այստեղ ձմեռվա ու գարնան ընթացքում հավաքված ջուրը ամռանը

[1] М. Сагателов, Экономические очерки Эриванской губернии и озеро Гокча, էջ 32։

[2] Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 168։

[3] Նույն տեղը։

բաց են թողել և ոռոգել շրջակայքի հողերը[1]։ Ռուս-պարսկական վերջին պատերազմի ժամանակ այդ լճակը նորից է ավերվել[2], բայց հետագայում կրկին վերականգնվել է։

Բուն քաղաքի և նրա բերդի բանջարանոցների ու այգիների ոռոգման համար օգտվում էին նաև Դամիրբուլաղ թաղամասում դուրս եկող համանուն հորդառատ աղբյուրներից։ Սակայն հենց այդ նույն աղբյուրների և ընդգետնյա (գրունտային) ջրերի առկայության պատճառով քաղաքի Դամիրբուլաղ մասի և բերդի միջև առաջացել էր մի մեծ ճահիճ, որը, Ի. Շոպենի վկայության համաձայն, գնալով «ավելի ու ավելի էր ընդարձակվում և ավելի սաստկացնում հիվանդությունները»[3]։

Նշված գետերից, դրանցից հանված գլխավոր և երկրորդական առուներից և Դամիրբուլաղի աղբյուրներից բացի՝ քաղաքն ուներ ավելի քան 200-ի հասնող ջրհորներ[4], որոնց ջուրը հիմնականում օգտագործվում էր խմելու համար, սակայն բացառված չէր նաև դրանցով տների բակերում գտնվող փոքրիկ բանջարանոցների ոռոգումը։ Պետք է նկատել, որ Երևանի ջրերն առհասարակ օգտագործվել են ոռոգման և խմելու ու ջրաղացներ գործի դնելու նպատակներով. հաղորդակցության համար դրանք եղել են ոչ պիտանի, ինչպես նաև որևէ նշանակություն չեն ունեցել ձկնորսական առումով։

Պարսից պետության կազմի խանություններում, այդ թվում և Երևանի խանությունում ոռոգման գործի վրա հսկելու և ոռոգման ցանցից հատուկ կարգ ու կանոնով օգտվելու համար առաջացել էր հատուկ պաշտոնեություն, որը բաղկացած էր միրաբներից ու ջուվարներից։

Միրաբը[5] համարվում էր տվյալ մահալի ոռոգման ջրերի գերագույն կառավարիչը. նա ուներ վարչական ու դատական իշխանություն և ղեկավարում էր ամբողջ մահալի ոռոգողական տնտեսությունը։ Նա էր ջուրը բաժանում ըստ ընդհանուր և մասնավոր առուների, որոնք պատկանում էին առանձին գյուղերի և համայնքների, նա էր սահմանում տարբեր գյուղերի հողերի ոռոգման կարգը և հսկում, որ չխախտվի այն, և միշտ կանոնավոր վիճակում

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 397։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 465։

[4] «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 61։

[5] Միրաբ (պարսկ.)— ջրի տեր։

գտնվեն ու անխափան գործեն առուները, խանգարումների դեպքում նա էր հոգ տանում շահագրգռված համայնքների հարկադիր աշխատանքով տվյալ առուն սարքելու մասին։ Ոռոգման առուներից օգտվելու շուրջն առաջացած բոլոր վեճերը, որոնք կարող էին առաջանալ գյուղերի միջև եղած հերթի խախտման, ջրի չափի ու ժամանակի կեղծման, կամայական կերպով ջուր վերցնելու («ջրի գողության») առիթներով, լուծվում էին միրաբի միջոցով[1]։

Միրաբը նշանակվում էր սարդարի կողմից, նրա հայեցողությամբ[2]։ Ամբողջապես նրա իշխանությանն էին ենթարկված ջուվարները, որոնք փաստորեն կատարում էին ոստիկանական պարտականություններ։

Ջուվարների պարտականությունները հետևյալներն էին՝ ա) ջրի պահպանումը գլխավոր առվի ու ակունքի մասում և նրա մյուս հատվածներում, բ) առանձին համայնքների միջև ջրի օգտագործման հերթին հսկելը և այն ճիշտ պահպանելը։ Ամեն մի ջուվարի հսկողության տակ գտնվում էր որևէ գլխավոր առու, իր ենթաճյուղերով հանդերձ։ Սովորաբար ամեն մի գյուղ ուներ իր ջուվարը։ Ջուվարների նշանակման կարգը ոչնչով չէր տարբերվում միրաբների նշանակման կարգից, դրանք ևս նշանակվում կամ հաստատվում էին սարդարի կողմից։ Ջուվարն իր պարտականությունների կատարման ժամանակ տարբեր հարցերով միշտ դիմում էր միրաբին, որի վճիռները նրա համար համարվում էին վերջնական և անառարկելի իրագործման ենթակա պարտականություններ։ Մեծ գյուղերում ջուվարներից բացի, իբրև նրանց օգնականներ, նշանակվում էին և կարաջուվարներ, որոնք ևս հաստատվում էին սարդարի կողմից։ Միրաբներն ու ջուվարները նշանակվում էին մեկ տարի ժամանակով[3]։ Սակայն այդ չէր նշանակում, որ միևնույն անձնավորությունը չի կարող մի քանի տարի իրար հետևից կամ ընդմիջումներով լինել միրաբ կամ ջուվար։

[1] *Տե՛ս* И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 941—942, «Записки Кавказского отдела импер. русск. географ. общ.», кн. 1, Тифлис, 1852, էջ 20, «Записки Кавказского отделения русск. технич. общества», т. IV, էջ 264—265, С. А. Егиазаров, О водовладении в Закавказском крае, էջ 23—24։

[2] С. А. Егиазаров, О водовладении в Закавказском крае, էջ 23։

[3] *Տե՛ս* «Записки Кавказского отдела императорского русск. географ. общества», кн. 1, էջ 20, «Записки Кавказск. отделения русск. технич. общества», т. IV, էջ 265, С. А. Егиазаров, О водовладении в Закавказском крае, էջ 23—25, Լ ի ս, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մաս I, (ձեռագրի իրավունքով, ապակնթիպ), Երևան, 1926, էջ 25։

Միրաբները, ջուվարները և կարաջուվարները հատուկ աշխատավարձ էին ստանում այն մահալներից ու գյուղական համայնքներից, որտեղ նրանք գործում էին: Դրամով աշխատավարձից բացի, միրաբները «իրենց բաժինն» էին ստանում նաև ամբողջ մահալի զանազան բերքերից[1]: Միրաբները և նրանց ենթակա ջուվարներն ու կարաջուվարները չէին բավականանում մահալների բնակչության և գյուղական համայնքների կողմից տրվող օրինական վարձով, նրանք, օգտվելով գյուղացիների նեղ դրությունից, դիմում էին ամեն տեսակի կեղծիքների ու խարդախության: Անօրինական գործողությունները, կաշառքը և բացարձակ կեղծիքը միշտ ուղեկից էին միրաբների ու ջուվարների գործունեությանը: Թերևս հենց այդ է եղել գլխավոր շարժառիթը՝ գյուղական համայնքների և առանձին անհատների միջև ջրի համար ծագած անվերջանալի և երբեմն արյունահեղության հասնող կռիվների: Երևանի և Նախիջևանի խանություններում միրաբները իբրև վարձատրություն ստացել են ամեն մի դութանից 10 բաթման ցորեն, 5 բաթման գարի, իսկ չալթուկից ստացել են ըստ պայմանավորվածության[2]: Այդ երկու խանությունների մահալների միրաբներից ամենից շատ վարձատրությունը ստացել է Գառնիբասարի մահալի միրաբը[3]:

Անդրկովկասի յուրաքանչյուր մեծ քաղաք ուներ իր միրաբը, որովհետև քաղաքների ոռոգման բարդ ցանցը, առուների շատությունը, բնակչության և համայնքների մեծ թիվը թույլ չէր տալիս դրանք ոռոգման գծով մտցնելու որևէ մահալի մեջ: Մեծ քաղաքներից յուրաքանչյուրն, այսպիսով, իրենից ներկայացնում էր ոռոգման մի առանձին շրջան: Առանձին միրաբներ ունեին Երևանը, Գանձակը (այժմ Կիրովաբադ) և այլ քաղաքներ[4]: Քաղաքների, այդ թվում և Երևանի միրաբի վարձատրության չափը որոշվում էր փոխադարձ պայմանավորվածությամբ: Երևանի միրաբի տրամադրության տակ կային 11 ջուվարներ, որոնք, Հաբստհաուզենի հաղորդման համաձայն, ընտրվում էին բնակիչների կողմից, առանց կառավարության որևէ միջամտության[5]: Ջուվարների հետ

[1] «Записки Кавказского отделения русского технического общества», т. IV, էջ 265:

[2] Նույն տեղը, էջ 310:

[3] Նույն տեղը:

[4] Նույն տեղը:

[5] Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 168:

բնակիչները կնքում էին հատուկ պայման, որի համաձայն էլ նրանք գործում էին: Նայած իրենց հանձնարարված օկրուգի մեծության՝ Երևանի ջուվարները իբրև վարձատրություն ստանում էին մինչև 30 ռուբլի: Ջրանցքների անհրաժեշտ վերանորոգումներ կատարելու համար նշանակվում էր երեք հոգուց կազմված պատգամավորություն, որը սովորաբար բաղկացած լինելով հողային ընդարձակ տարածություն ունեցողներից, իր հայեցողությամբ վերանորոգել էր տալիս առուները[1]: Ըստ երևույթին, այդ պատգամավորությունը գոյություն է ունեցել և գործել է միայն այն դեպքերում, երբ քաղաքն ինչ-ինչ պատճառներով ժամանակավորապես չի ունեցել իր միրաբը, որովհետև, ըստ եղած դրության, առուների վերանորոգման գործը մտնում էր միրաբի պարտականությունների մեջ:

Միրաբների և ջուվարների պարտականությունների մեջ, ինչպես տեսանք, կենտրոնական տեղը և հիմնականը՝ ջրի բաշխումն էր ըստ համայնքների և առանձին հողատերերի: Ջրի բաշխման համար ժամանակի ընթացքում առաջացել և օրենքի ուժ էին ձեռք բերել մի քանի սովորություններ: Ջուրը համայնքների և առանձին հողատերերի միջև ճիշտ բաշխելու համար կիրառվում էին ջրի և ժամանակի չափման մի քանի եղանակներ:

Տվյալ համայնքին կամ առանձին հողատիրոջը հատկացվող ջրի քանակությունն ու նրա բացթողման ժամանակը կախված էր հողի քանակից, այնտեղ մշակվող կուլտուրաներից և ոռոգման ընդհանուր պայմաններից: Երևանի խանությունում ժամանակը չափելու համար սովորաբար գործ էին ածում փոքր անցք ունեցող թաս[2]: Բացի դրանից, ժամանակը որոշվում էր նաև մեկ օրով, կես օրով և այլ միավորներով: Ջրի քանակի համար նույնպես ընդունված էին զանազան միավորներ: Երևանի խանությունում ամենատարածված միավորը բահն էր: Բահ էր կոչվում ջրի այն քանակությունը, որը կարող էր ղեկավարել մեկ մարդ, հացահատիկների դաշտերը ջրելիս: Ջուրը բահերի էր բաժանվում գլխավոր ջրանցքից՝ նրա վրա գտնվող համայնքներին բաշխելիս[3]: Բահը տարբեր տեղերում և տարբեր պայմաններում տարբեր մեծություն է ունեցել: Նրա մեծությունը կախված է եղել հողի տեսակից, դաշտի թեքությունից, ջրող մարդու վարպետությունից և այլն: Այնպես որ

[1] Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 168:

[2] «Кавказ» (լրագիր), 1869, № 14:

[3] «Записки Кавказского отделения русского технического общества», т. IV, էջ 281:

բահը հաստատուն միավոր չէր։ Ջուրը բահերով չափելիս, բանվորական օրը հաշվվել 14 ժամ, յուրաքանչյուր բահ ջրով՝ օրական կարելի էր ջրել՝ էջմիածնի մահալում 2500 քառ. սաժեն, Գառնիբասարի մահալում՝ 3500 քառ. սաժեն ցանքս, Զանգիբասարի մահալում՝ 5000 քառ. սաժեն չալթուկի մարգեր և այլն[1]։

Համայնքին հասանելիք ջուրը նրա առանձին անդամների միջև բաժանում էին կամ ըստ օրվա մասերի՝ օր, կես օր, ժամերով, կամ ուղղակի ջրի շիթի չափման միջոցով[2]։ Քաղաքներում, այդ թվում և Երևանում, ջրի բաշխումն ըստ առանձին հողատիրությունների կատարում էին լուլաներով (ծորակներով)։ Լուլա էր կոչվում ջրի այն շիթը, որը հոսում էր ցուցամատի երկու հոդի մեծության տրամաչափ ունեցող անցքով։ Յուրաքանչյուրն իրեն հասանելիք ջուրը ստանում էր համապատասխան թվով լուլաներով[3]։ Ըստ մեզ հասած տվյալների, Պարսկաստանում յուրաքանչյուր լուլայի համար վճարել են 2—3½ թուման (8—14 ռուբլի արծաթ)։ Ընդ որում, փողոցով անցնող գլխավոր առուների՝ սարքին ու անխափան վիճակում պահելը ընկնում էր առվի տիրոջ վրա[4]։

Հաքսհաուզենը վկայում է, որ Երևան քաղաքում յուրաքանչյուր հողատեր իրեն հասանելիք ջուրը ստանում էր ըստ իր հողամասի մեծության։ Ջուրը բաց թողնելու անցքը միատեսակ մեծություն ուներ, այնպես որ տարբեր տնտեսությունները, ըստ նրանց հողամասերի մեծության, տարբեր քանակությամբ ջուր բաց թողնելու համար սահմանված էր տարբեր ժամանակամիջոց։ Խարդախություններ չանելու և գաղտնի ճանապարհով ջուր չգողանալու համար՝ ջուվարները իրենց ձեռքի փայտե կնիքով կնքում էին առվի ակոսքը, որը սովորաբար ծածկված էր լինում ցեխով։ Առանց ջուվարի ոչ ոք իրավունք չուներ առվի ակունքը բաց անել և ջուր տանել, ջուվարի կնիքը անխախտ պետք է մնար, քանի դեռ նա, ըստ հերթականության, չհայտարարեր տվյալ հողատիրոջ ջրի հերթի սկսման մասին և թույլ չտար խախտելու՝ ակունքը խցանող կավե ցեխի վրա դրված իր կնիքը[5]։

Նախքան Երևան քաղաքի գյուղատնտեսական զբաղմունքների վիճակին անցնելը, անհրաժեշտ ենք համարում նշել նաև հետևյալը։ Պատմական աղբյուրները, որոնց թիվը շատ մեծ է, առանց բացառության՝ Երևանի վերջին սարդար Հուսեյն խանին ներկայացնում են իբրև ամբողջ խանության տնտեսությունը իր հովանավորող քաղաքականությամբ մեծապես զարգացնող միապետ, գովում տնտեսության բնագավառում նրա հանդես բերած ձեռնեռնության, չափազանցելով և խտացված գույներով ներկայացնելով նրա դերը խանության տնտեսության զարգացման գործում։ Այդ աղբյուրները առանձնապես նշում են Հուսեյն խանի կողմից կառուցված ոռոգողական առուների մասին։ Նրանք հաղորդում են, որ չնայած անգրագետ լինելուն, Հուսեյն խանը «սքանչելի տնտեսվար է», «գործիմաց ու եռանդուն անձնավորություն»[1]։ Իբրև իրենց ասածների հաստատում, նրանք գրեթե միաբերան վկայակոչում են սարդարի կողմից առևտրի հովանավորումը, նրա անմիջական մասնակցությունը առևտրին, հատկապես ջրանցքաշինությանը։ Մենք տեսանք, որ Հուսեյն խանի տնտեսական այդպիսի քաղաքականությունը առևտրի նկատմամբ ելնում էր սոսկ իր սարդարական գանձարանը էլ ավելի հարստացնելու նպատակներից։ Նույնը պետք է ասել նաև ջրանցքաշինության մասին։ Վերը արդեն նշվեց, թե ինչպիսի հսկայական ուղղակի և անուղղակի եկամուտներ էր տալիս ոռոգման ցանցը՝ ամենաբազմազան եղանակներով։ Այդ է պատճառը, որ աշխատավոր ժողովուրդը Հուսեյն խանի մասին բոլորովին այլ կարծիք ուներ։ Ժողովրդի վերաբերմունքը արտահայտված է Ա. Աբովյանի անմահ «Վերք Հայաստանի» վեպի մեջ, որում Հուսեյն խանն ու նրա եղբայր Համզան խանը ներկայացված են իրենց իսկական էությամբ, այսինքն իբրև դաժան դեսպոտներ և ժողովրդի հոգին հանողներ։ Այդ բոլորով հանդերձ, չի կարելի ժխտել, սակայն, այն փաստը, որ նախորդների համեմատությամբ Հուսեյն խանի օրոք երկրի տնտեսությունը ավելի բարվոք վիճակում էր[2]։

Երևանի գյուղատնտեսական գյուղերի մեջ իր համախառն արտադրանքով և ընդգրկած աշխատող ձեռքերի թվով բացարձակ

---

[1] «Записки Кавказского отделения русского технического общества» т. I, էջ 282։

[2] Նույն տեղը, էջ 283։

[3] Նույն տեղը, էջ 311։

[4] «Кавказ» (լրագիր), 1869, № 14։

[5] Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 168—169։

[1] Տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 450, «Записки Кавказского отдела императ. русск. географ. общества», кн. 1, էջ 20, «Записки Кавказского отделения русск. технич. общества», т. IV, էջ 308, М. Сагателов, Экономические очерки Эриванской губернии и озеро Гокча, էջ 31, Гр. Уварова, Кавказ, էջ 194—195 և այլն։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 450։

առաջնությունը պատկանում էր այգեգործությանը: Քաղաքն ու նրա շրջակայքի արվարձանները, ինչպես գրում են բազմաթիվ հեղինակներ ու Երևան այցելած ճանապարհորդներ[1], թաղված են եղել այգիների ու բանջարանոցների մեջ: Այգիներն ու բանջարանոցները գրավել են քաղաքի տերիտորիայի մեծագույն մասը[2]: Նրա այգեգործության զարգացմանը, ոռոգման լավ հնարավորություններից բացի, նպաստում էր նաև այգեգործության համար գերազանց արգավանդություն ունեցող հողերի առկայությունը[3]:

Երևան քաղաքի այգեգործության մասին մեզ են հասել տարբեր բնույթի մի շարք տվյալներ: Դրանցից ոմանք ոչ պաշտոնական են և տրված են բանավոր հայտարարությունների հիման վրա, կամ աչքաչափով, իսկ մյուսները տրված են իբրև արդյունք հատուկ ստուգումների: Տրամաբանական է, որ ավելի արժանահավատները համարվելու են վերջիններս, չնայած դրանք ևս տառապում են երբեմն խիստ մեծ թվերով արտահայտված անճշտություններով: Պարսկական տիրապետության ժամանակաշրջանի Երևանի այգեգործության ընդհանուր վիճակին վերաբերող ընդհանրապես պաշտոնական տվյալները բացակայում են: Այդ կարգի առաջին տվյալները սկսվում են Երևանի պարսկական լծից ազատագրումից հետո, երբ Հայկական մարզի կառավարչության հրամանով անցկացվեց երկրի տնտեսության ընդհանուր հաշվառում, որի արդյունքները տրված են Ի. Շոպենի՝ մեր կողմից հաճախակի վկայակոչվող աշխատության մեջ: Ուստի, Երևանի այգեգործության վիճակը թվերով պատկերացնելու և նրա մասին առհասարակ հիմնավոր գաղափար կազմելու համար հիմնականում պետք է դիմենք Շոպենին, նրա հաղորդածները հնարավորին չափով ճշտելով այլ աղբյուրների տվյալներով:

Երևանի այգիների թվի, դրանց գրաված տարածության և բերքատվության մասին մի քանի առանձին հիշատակություններ չհաշված, Ի. Շոպենի մոտ կա մի ամփոփիչ աղյուսակ, որտեղ տրված են պետականից բացի մնացած և՛ խաղողի, և՛ մրգատու բոլոր այգիները[4]: Աղյուսակի պարունակած թվերը վերաբերում են

[1] Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառաց Արարատայ, հ. 2, էջ 154, Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, էջ 640:

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 464:

[3] Նույն տեղը:

[4] Նույն տեղը, էջ 471—472:

ոչ թե անմիջապես սարդարական շրջանին, այլ 1829—1830 թվականներին, սակայն դրանք նախորդ թվականներում եղած դրությունից ըստ երևույթին շատ քիչ էին շեղվում և կարելի է ընդունել իբրև արժանահավատ տվյալներ՝ պարսից տիրապետության վերջին շրջանի համար:

Ահա այդ աղյուսակը.

Աղյուսակ 7

Ըստ քաղաքի մասերի		Այգիների թիվը	Մոտավոր ցուցանիշը				
			Հողային տարածության մոտավոր չափը	Եկամուտը			
				Խաղող		Մրգեր	
				Խալխ.	Բաթմ.	Խալխ.	Բաթմ.
Քաղաքի բնակեցված մասերում							
1. Շահարում	Տներին կից	449	662¼	59	60	793	83
	Առանձին	94	914	559	25	480	10
2. Թափաբաշում	Տներին կից	155	189½	178	80	148	80
	Առանձին	17	192	95	50	28	—
3. Դամիրքուլաղում	Տներին կից	218	394½	35	50	541	20
	Առանձին	16	80½	29	—	26	50
Քաղաքի ոչ բնակեցված վայրերում							
1. Աբբաս-գարայում		8	68	59	—	51	—
2. Քիշաղիում		50	205½	218	—	89	30
3. Աբուհայաթում		56	258	182	—	141	30
4. Կզըլ-Կալայում		67	96¼	—	—	189	50
5. Դարա-բաղում		67	283½	151	30	180	90
6. Նորագեղում		61	736½	511	30	177	60
7. Գայմայում		145	735	491	—	79	—
8. Մավզի-երիում		10	31½	12	9	1	—
9. Նոսրով-արագում		3	29	14	—	—	50
10. Մուգուտիում		1	5	—	—	—	—
11. Շահջիկում		3	25	9	—	45	50
12. Կույ-գարաճում		1	10	—	—	5	—
13. Կեփգենում		1	8	—	—	—	—
14. Քյարփիչ-խանայում		1	2	—	—	—	—
Ընդամենը Երևան քաղաքում		1423[1]	4932	2608	34	2982	3

[1] Շոպենի մոտ այգիների ընդհանուր թիվը տրված է ոչ թե 1423, այլ 1473 (տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 749), այսինքն՝ իր բերած թվերի գումարից 50-ով ավելի: Ըստ երևույթին դա չնկատված վրիպակ է:

Ինչպես տեսնում ենք, Երևանի խաղողի և մրգատու բոլոր մեծ ու փոքր այգիների թիվը, առանց պետական այգիների, եղել է 1423, որոնք միասին կազմել են 4932 օրավար տարածություն։ Եթե այդ տարածությունը վերածենք դեսյատինի, Երևանի պայմաններում մեկ օրավարը համարելով 0,5 դեսյատին, ապա կստացվի, որ պարսից տիրապետության վերջին շրջանում Երևանի այգիների տարածությունը առանց պետական այգիների՝ հասել է 2466 դեսյատինի (1233 խալվար, ինչպես տրված է Շոպենի մոտ, մի այլ տեղում)[1]։ Եթե դրանց վրա գումարենք պետական այգիները, որոնց թիվը, ինչպես տեսանք Երևանի հողատիրության ձևերի մասին խոսելիս, հասնում էր 14-ի, ապա կստացվի, որ Երևանի բոլոր այգիների թիվը՝ և՛ քաղաքացիներին, և՛ վանքերին ու եկեղեցիներին, և՛ սարդարին պատկանողները, միասին վերցրած, նեղրատյալ նաև այն մի քանի այգիները, որոնք ամայի են եղել, բայց տեղ են գտել Շոպենի աղյուսակի մեջ, հասել է մոտավորապես 1437-ի[2]։ Պետական այգիների գրաված տարածության մասին ստույգ տեղեկություններ չկան։ Ըստ երևույթին, դրանք առանձին-առանձին, ընդհանուր առմամբ, ավելի մեծ են եղել, քան քաղաքացիներին պատկանող այգիները։ Այսպես, օրինակ՝ Զանգվի աջ ափին գտնվող սարդարապատական հայտնի Դալմայի այգին ունեցել է ավելի քան 7,1 դեսյատին տարածություն[3]։ Պետական մյուս այգիները, Դալմայի հետ համեմատած, անշուշտ ավելի փոքր են եղել։

Մեր կատարած այդ հաշիվները խիստ մոտավոր են, որովհետև դրանք հենվում են Ի. Շոպենի հաղորդած մոտավոր թվերի վրա։ Սակայն, այնուամենայնիվ, դրանք **մոտավորապես ճիշտ են** արտահայտում եղած դրությունը։

Այգիների թվի և դրանց գրաված տարածության հետ միասին, թերևս դրանցից էլ ավելի կարևոր հարց է բերքատվության հարցը։ Բերքատվությունը կախված էր ոռոգման պայմաններից, հողի տեսակներից, մշակման եղանակից, տվյալ տարվա օդերևութաբանական պայմաններից և այլն։ Դրանք բոլորը խիստ նեղ մասնագիտական հարցեր են, որոնց վերաբերյալ վճռական խոսք կարող են

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 749։

[2] Այստեղ չեն մտել Զոլմաբլիի (Նորքի) այգիները, որտեղ 30-ական թվականներին եղել է խաղողի 110 այգի (Обозрение российских владений за Кавказом, т. IV, էջ 281)։

[3] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 667, թ. 58։

ասել միայն գյուղատնտեսության պատմության հետազոտողները։

Բերքատվության մասին մեզ հասած միակ ուղղակի աղբյուրը դարձյալ Շոպենի աշխատությունն է, նրա այն աղյուսակը, որը մեջբերեցինք քիչ առաջ՝ այգիների թվի և դրանց գրաված տարածության մասին խոսելիս։ Ուստի դիմենք այդ աղյուսակին։

Ըստ աղյուսակի, Երևանի խաղողի և մրգատու մասնավոր բոլոր այգիների տարեկան բերքը կազմել է 5590 խալվար 37 բաթման, որը վերածելով փթերի, Երևանի խալվարը համարելով 25 փութ, կկազմի մոտավորապես 139 757 փութ, իսկ քանի որ այգիների ամբողջ տարածությունը մոտավորապես 2466 դեսյատին էր, ապա մեկ դեսյատինի բերքը կկազմի մոտավորապես 56,6 փութ։ Այգիների տարածությունն ու ստացված բերքը վերածելով ժամանակակից չափերի ու կշիռների՝ հեկտարների և ցենտներների, կըստանանք՝ այգիների տարածությունը 2694 հեկտար, իսկ տարեկան ստացված ամբողջ բերքը՝ 23 276 ցենտներ։ Վերջին թիվն էլ բաժանելով նախավերջին թվի վրա, կստանանք տարեկան մեկ հեկտարից ստացվող բերքի քանակը, որը մոտավորապես կազմում է 8,8 ցենտներ։ Վերջինս էլ, այնուամենայնիվ, շատ ցածր բերքատվության ցուցանիշ է։ Ակնհայտ որ՝ Երևանի խաղողի և պտղատու այգիների բերքատվությունը պարսից տիրապետության շրջանում եղել է շատ ցածր։

Անհրաժեշտ է ավելացնել նաև այն, որ բերքատվությունը շատ անկայուն է եղել, մանավանդ, հաճախակի կրկնվող հիվանդությունների պատճառով, որոնք մեծ վնաս են հասցրել խաղողի և մրգատու այգիներին։

Խաղողի և մրգերի համար հեկտարից 8,8 ցենտներ բերքը շնչին քանակություն է և չի կարող հավանական թիվ համարվել։ Այդքան փոքր թիվ ստացվելու պատճառն այն է, որ նախ՝ այգիների տարածությունը տրված է չափազանցված թվերով և երկրորդ, որն ավելի կարևոր է, այգիների գրաված տարածության մոտավորապես կեսը և դրանից էլ դեռ ավելին գրավում էին ամառույտի ցանքսերը, խոտհարքները, բանջարանոցները և անպտուղ ու ամայացած տարածությունները, որոնք նկատի չեն առնված։ Վերջին երեքի գրաված տարածությունը մոտավորապես համարելով այգիների գրաված տարածության կեսը, մեկ հեկտարի բերքը (խաղողը և մրգերը միասին վերցրած) կկազմի 17,6—18 ցենտներ։ Խաղողի և մյուս մրգերի տարվա բերքի համար ստացված ընդհանուր թիվը (139 757 փութ) հավանականության ավելի մոտ է և չի կարող լուրջ առարկության ենթարկվել։ Սակայն այստեղ էլ որոշ փաստեր

տարակուսանքի տեղիք կարող են տալ։ Նույն Շոպենի հիշատակության համաձայն, ամբողջ Հայկական մարզի (նախկին Երևանի և Նախիջևանի խանությունները միասին վերցրած, որ ունեին այնքան մեծ թվով խաղողագործական և այգեգործական շրջաններ) խաղողի և մրգերի տարեկան միջին բերքը կազմել է մոտավորապես 348 000 փութ, որից 180 000 փութը խաղող, իսկ 168 000 փութը՝ մյուս տեսակի մրգեր[1]։ Եթե հավատալու լիներինք այդ թվերին, ապա պետք է ընդունեինք, որ միայն Երևան քաղաքի խաղողի և մյուս մրգերի բերքը կազմել է ամբողջ Հայկական մարզի նույնատեսակ բերքերի ավելի քան մեկ երրորդը, որը անհավանական է։ Անհավանականությունն ավելի է ակնհայտ դառնում, երբ նկատի ենք ունենում նաև այն, որ Շոպենի նշված աղյուսակում չեն տրված պետական-սարդարապատական 14 այգիները, որոնց բերքը, ըստ երևույթին, հասել է նշանակալի չափերի։

Աղյուսակից երևում է, որ Երևանի այգիների մեծ մասը, մանավանդ այն այգիները, որոնք գտնվում էին բուն քաղաքի շրջանում (Շահարում, Թափաբաշում, Դամիրբուլաղում)՝ բնակելի տներին կից, նրանց բակերում, եղել են շատ փոքր չափերի։ Համեմատաբար մեծ էին այն այգիները, որոնք գտնվում էին բուն քաղաքի շրջակայքի առանձին տեղերում (Սավզի-երի, Դալմա, Դարաբաղ և այլն)։ Տնամերձ փոքրիկ այգիները հատուկ այգեգործներ չեն ունեցել, դրանք մշակվել են տնեցիների կողմից, որոնք ունեցել են և այլ զբաղմունքներ։ Իսկ մեծ այգիները և առհասարակ այն այգիները, որոնք գտնվում էին ոչ թե բուն քաղաքում, այլ նրա շրջակայքում, մշակվում էին հատուկ այգեգործների կողմից։ Երևանի այգեգործները կազմել են մեծ թիվ։ Քաղաքի արհեստներով, առևտրով, գյուղատնտեսական աշխատանքներով զբաղված 2349 մարդուց (որի մեջ մտնում էին և ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմից հետո ներգաղթածները) 671-ը այգեգործներ էին[2], որը կազմում է նշված թվի ավելի քան 28,6%-ը։

Բազմատեսակ է եղել Երևանի խաղողը։ Հայկական մարզում մշակվող՝ 100-ի հասնող տարբեր տեսակի խաղողներից[3] մի քանի տասնյակը[4] մշակվում էր նաև Երևանում։ Այստեղ մշակվող խաղողատեսակներից նշանավոր էին՝ ասկյարին (Նազելի), Իշմիշին (Երևանի), խաթուն-բարմաղը, եզանդարին, Ջյարիմ-դանդին, այծապտուկը, հաշաբաշը (արարատ), մսխալին, շիրշիրան (Հաստատաշկ), սահաբին, խարջին (ոսկեհատ), սխտորուկը (կամ Ջյուլբի գուլբուդի) և գառանդմակը[1]։ Երևանի խաղողը բարձր փնտրատակառի է արժանացել այստեղ այցելած ճանապարհորդների կողմից։ Ուվարովան գրում է, որ իր տեսած խաղողների մեջ ամենաարարթորակն ու համեղը Երևանի խաղողներն են եղել[2]։

Երևանում մշակվող մրգերի տեսակները նույնպես հասել են մի քանի տասնյակի։ Երևանն առանձնապես հայտնի է եղել ծիրանով, դեղձով և տանձով։ Մյուս մրգատեսակներից տարածում էին ստացել սալորները, բալը, կեռասը, սերկևիլը, թութը, փշատը և այլն[3]։

Վերջին սարդար Հուսեյն խանը պետական այգիները կապալով տալով, չէր դադարում նրանց ընդարձակման, մրգատու նոր տեսակի ծառերով հարստացնելու և մշակումը բարելավելու մասին մտածելուց։ Շոպենը գրում է, որ նա իր այգիներում տնկելու և մշակելու համար մրգատու ծառատեսակներ էր բերել տալիս նույնիսկ Պարսկաստանից ու Հնդկաստանից և միշտ առանձնահատուկ ուշադրություն դարձնում իր այգիները բարելավելու վրա[4]։

Խաղողի և մրգատու այգիները սովորաբար խառն էին։ Միևնույն այգում իրար կողք-կողքի մշակվում էին խաղողի որթեր ու մրգատու ծառեր։ Այգիներում ընդարձակ տարածություններ էին գրավում ավուրան ու խոտհարքները։ Խաղողից և պտղատու ծառատեսակներից բացի՝ այգիներում, սովորաբար նրանց եղրագծերի ուղղությամբ տնկում էին բարդիներ, տուեներ, չինարիներ և այլ ծառատեսակներ[5]։ Այգիների մեջ ամենից օրինակելին, եթե կարելի է այդպես ասել, սարդարապատական Դալմայի այգին էր։ Նրա մի կեսը զբաղեցնում էին մրգատու զանազան ծառերը, մյուս կեսը մասնատված էր լայն ծառուղիների, որոնց երկու կողմերը եղերված էին երկնասլաց բարդիներով, իսկ այգու զբաղեցրած զառի-

---

1 Н. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 750, 751։

2 Նույն տեղը, էջ 843, 847։

3 Նույն տեղը, էջ 751։

4 Ուվարովան նշում է, որ Երևանում մշակվող խաղողի տեսակների թիվը հասել է 35-ի (Гр. Уварова, Кавказ, էջ 195)։

1 Ա լ ի շ ա ն, Այրարատ, էջ 316, И. Шопен. Исторический памятник Армянской области, էջ 750—751։

2 Гр. Уварова, Кавказ, էջ 195։

3 Ա լ ի շ ա ն, Այրարատ, էջ 316, И. Шопен. Исторический памятник Армянской области, էջ 750։

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 950։

5 Նույն տեղը, էջ 758։

թափներում մշակվում էր խաղող։ Այս այգում էր գտնվում սարդարի տաղավարը (беседка)[1], որը համարվում էր այն ժամանակվա Երևանի տեսարժան վայրերից մեկը։ Սարդարապատական այգու մասին մեծ գովեստով է խոսում XIX դարի 80-ական թվականներին Երևան այցելած և Ալեքսանդր Երիցյանի հետ միասին Արմավիրի շրջանում պեղումներ կատարած Ուվարովան։ Ճանապարհորդ տիկինը, հիանալով Երևանի այգիներով ու խաղողով, առանձնապես գովեստով է խոսում Դալմայի պետական այգու մասին, որը նախկինում պատկանում էր սարդարին։ Նա գրում է, որ

Ծառուղի սարդարի այգում (Երևանի պատմության թանգարան)։

այդ այգում մշակվում են խաղող, մրգատու ծառեր, ինչպես և կան շատ զարդածառեր։ Ամբողջ այգին պատած է եղել կավակերտ պարսպով[2], որի երկայնքով ձգվել են բարդիների, չինարիների, ուռենիների և փշատենիների շարքերը։ Սարդարի այդ այգին և՛ տեղագրական, և՛ ոռոգման պայմաններով, և՛ հողով եղել է ամենահարմարը[3] և ունեցել համեմատաբար բարձր բերք։ Սարդարա-

[1] «Записки декабриста Е. Лачинова об Армении» (М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, книга первая. Документы, էջ 313։

[2] Гр. Уварова, Кавказ, էջ 194։

[3] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 667, թ. 58։

պատկան այգու մշակման ձևերը, սակայն, ոշնչով չէին տարբերվում մյուս այգիների մշակման ձևերից։

Խաղողի և մրգատու այգիների մշակման գործիքներն էին հնադարյան բահը, բրիչը ու մկրատը։ Առանց բացառության, այգեգործական բոլոր աշխատանքները կատարվում էին ձեռքով, նույնիսկ այգու ազատ տարածություններում տավույտ ցանելու համար գութան կամ արոր չէր օգտագործվում, խիտ տնկված ծառերը խանգարում էին դրանց մուտքը այգի, արորին և գութանին ամենուրեք փոխարինում էին բահն ու բրիչը։

Երևանի այգիները բաժանվում էին խմբերի, յուրաքանչյուր խումբ կոչվում էր քաղաքի այն թաղի անունով, որում կամ որի մոտ տարածվում էր տվյալ խումբը։ Դրանից ելնելով էլ, սովորաբար Երևանի այգիները բաժանվել են հետևյալ խմբերի՝ Շահարի, Կոնդի, Դամիրբուլաղի այգիների և այլն։ Դրանք իրենց հերթին բաժանվել են երկու խմբի՝ բուն քաղաքի թաղամասերում և դրանցից դուրս գտնվողների։ Վերջիններս հայտնի են առանձին անուններով։ Այսպես, Շահարի թաղամասին կից եղած այգիների մեջ էին մտնում Աբբաս-դարայի՝ թվով 8 այգիները, որոնք գտնվում էին Գետառի վրա, Նորքի տակ, Քեշաղալիի՝ թվով 50 այգիները՝ Քանաքեռ տանող ճանապարհի աջ կողմում։ Կոնդի խմբի մեջ էին մտնում Աբուհայաթի այգիները, որոնք թվով 56 էին և գտնվում էին Քանաքեռի ճանապարհից ձախ, Կղըլ-կալայի՝ թվով 67 այգիները՝ Զանգվի ձորում, Քանաքեռից ներքև, Դարաբաղի այգիները, որոնց թիվը նույնպես հասնում էր 67-ի և որոնք նույնպես գտնվում էին Զանգվի ձորում՝ Կղըլ-կալայից ցած, Դարաքենդի այգիները նույնպես գտնվում էին Զանգվի ձորում՝ Դարաբաղի և կամուրջի միջև։ Քաղաքի Քարահանք կամ Դամիրբուլաղ թաղամասի այգիխմբերի մեջ էին մտնում Խոսրովաբադի այգիները, որոնք թվով երեք էին և գտնվում էին թաղամասի հարավային կողմում։ Զանգվի աջ կողմում գտնվող այգիներն էլ բաժանվել են երկու խմբի. առաջինի մեջ էին մտնում Դալմայի այգիները, որոնց թիվը հասել է 149-ի (դրանցից 145-ը պատկանել է քաղաքացիներին, իսկ 4-ը՝ պետական-սարդարապատական)։ Դալմայի այգիները գտնվում էին Դարաբաղի դիմաց։ Զանգվի աջ ափին գտնվող այգիների մյուս խումբը կոչվում էր Նորագեղի անունով[1]։ Նորագեղի այգի-

[1] Հովհ. Շահխաթունյանց, Տոորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջ 154—155, И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 471—472, Աւիշան, Այրարատ, էջ 316, Ն. Շահազիզ, Հին Երևանը, էջ 176։

ները կազմում էին Դալմայի այգիների անմիջական շարունակությունը և նույնպես տարածված էին քաղաքապատական հողերում։

Երևանի այգիներից հավաքվող խաղողի մի մասը օգտագործել են թարմ վիճակում, մի մասը՝ չամիչ և սուճախ պատրաստելու համար, իսկ մի մասն էլ, որն իր քանակով ամենից մեծն էր, վերամշակում և ստանում էին գինի, քացախ և ծոր։ Երևանի գինին հայտնի է եղել իր բարձր սպիրտայնությամբ։ Սկզբնաղբյուրները (Դյուպուա, Տուրնեֆոր, Շոպեն, Ալիշան և այլն) հաղորդում են, որ Երևանի գինիները նման էին և իրենց սպիրտայնությամբ ու գույնով ոչնչով չէին զիջում մալագային, մադերային, բորդոյին, խերեսին[1]։ Երևանի խաղողի ամենաբնութիւր տեսակները, որոնք հայտնի են եղել իրենց բարձր շաքարայնությամբ, տալիս էին Դալմայի այգիները։ Դալմայի խաղողից ստացված գինին երբեմն համեմատել են կրնտեական բարձրորակ գինիների հետ և նրանց միջև դրել հավասարության նշան[2]։ Անսովոր մարդը մեկ բաժակ խմելուց արդեն գլխապտույտ էր ստանում։ Սևղանի գինիները եղել են ցածրորակ, չափից ավելի բարձր սպիրտ պարունակելու հետ միասին, դրանք ոչ-հնցել են և անդուրեկան համեր, որոնք ստանում էին ամաններից։ Գինին պատրաստել են պրիմիտիվ եղանակներով։ Խաղողը ճմլել են ոտքերով, քարե մզարաններում։ Գինին պահել են սովորաբար 50 բաթմանանոց (մոտ 40 դույլ) կարասներում, որոնք կողք-կողքի դասավորել են հով նկուքնահարկերում։ Ի. Շոպենը գրում է, որ Երևանում տեղական գինու մեկ դույլը վաճառվում էր 25—40 ռուբլով[3]։ Ղուրանին հակառակ, ինչպես տեսանք, Երևանի սարդարները, հատկապես վերջին սարդար Հուսեյն խանը սիրել է մշտապես զվարթանալ գինով։ Նույնպիսի սեր ունեին գինու նկատմամբ նաև մյուս բարձրաստիճան պարսիկները։ Սակայն «իրենց մահմեդական հպատակներին» հաճոյանալու համար սարդարները նեղել են գինեգործներին, հարկադրելով նրանց[4]։ Գինեգործությամբ զբաղվում էին միայն հայերը, որոնք հաճախ գինի պատրաստելու համար մեծ քանակությամբ խաղող էին գնում ադրբեջանցի խաղողագործներից։ Գինեգործությունը տուրքադրելը չի կասեցրել նրա զարգացումը, նա ամենանկատելի ճյուղերից մեկն էր և շարունակում էր գյուղատնտեսական մյուս ճյուղերի մեջ գրավել կենտրոնական տեղ։ Երևանի գինին, ինչպես ասվեց առաջին մասին խոսելիս, վաճառքի էր տարվում խանության լեռնային մահալները։

Գինի պատրաստելուց հետո՝ խաղողի մնացորդներից, ինչպես և թթից օղի են քաշել։ Երևանի օղին եղել է շատ թունդ, սակայն ունեցել է ավելորդ և անհաճո համ, որը բավական իջեցրել է նրա որակը[1]։ Գինու հետ միասին, Երևանը դեպի խանության լեռնային զանազան մահալներն է ուղարկել օղի, որը մասամբ փոխանակվել է անասնապահական ու երկրագործական արտադրանքների հետ և մասամբ էլ վաճառվել դրամով։

Մյուս մրգերը՝ ծիրանը, դեղձը, տանձը, սալորը, բալը և այլն օգտագործվել են թարմ վիճակում, ինչպես և դրանցից պատրաստել են չիր, որը հնարավոր էր երկար պահել և մեծ հեռավորությունների վրա տանել վաճառելու։ Հայտնի է եղել Երևանի հատկապես ծիրանի ու դեղձի չիրը։

Ըստ նշանակության, XIX դ. առաջին քառորդում Երևանի գյուղատնտեսական զբաղմունքների մեջ այգեգործությունից հետո գալիս էր բանջարաբուծությունը։ Երևանում բանջարաբոստանային կուլտուրաներից մշակել են ձմերուկ, սեխ, վարունգ, բադրիջան, բիբար, լոբի, գազար, բազմաթիվ կանաչիներ (ռեհան, կտեմ, համեմ և այլն) և այլն[2]։ Քաղաքի բնակիչների մեծագույն մասն ունեցել է իր բանջարանոցը, որը զբաղել է այգու կամ պարտեզի մի մասը։ Դրանցից բացի, մի ընդարձակ բանջարանոց է ունեցել սարդարը։ Նրա բանջարանոցը, որ տրվում էր կապալով և մեծ քանակությամբ կանաչեղեն ու բանջարեղեն էր տալիս Երևանի շուկային, գտնվում էր բերդի մոտ, Սավզի-երի (կամ Սաբզիքերի) կոչված տեղում[3]։ Հատուկ մասնագետ-բանջարաբույծներ քիչ են եղել[4], բոլորն էլ ունեցել են զանազան բանջարեղեն մշակելու հմտություն։ Երևանում մշակվող բանջարա-բոստանային կուլտուրաների մեջ առանձնապես հայտնի է եղել սեխի մի տեսակը՝ դութման, որն իր համով և քաղցրությամբ հռչակված էր նույնիսկ խա-

---

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 751—752 և Ալիշան, Այրարատ, էջ 316, 318։

[2] Ալիշան, Այրարատ, էջ 318։

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 752։

[4] Նույն տեղը, էջ 975, տե՛ս նաև Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 48։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 751—752։

[2] Նույն տեղը, էջ 470, 742, 746, տե՛ս նաև Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 45։

[3] Նույն տեղերը։

[4] Շոպենը Երևանում հիշատակում է միայն 1 բանջարաբույծ (տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 843)։

նության սահմաններից հետու շրջաններում[1]։ Կային և սեխի այլ տեսակներ՝ շալախ, դոստիջան, անեյվազ, խորասանի և այլն[2]։ Շոպենի մի վկայությունից երևում է, որ սարդարը հետևում էր, որպեսզի այլ բարձրարժեք կուլտուրաների համար պիտանի հողերը չզբաղեցնեն բանջարա-բոստանային մշակույթներով[3]։ Նա, իր նեղ շահերից ելնելով, ամեն կերպ ձգտում էր կրճատել բանջարանոցային «ավելորդ» տարածությունները՝ հօգուտ սարդարական գանձարանին ավելի մեծ օգուտ բերող կուլտուրաների։

Կարելի է առանց տարակուսելու ասել, որ միջին դարերում, երբ Երևանը մեր մատենագիրների մոտ հիշատակվում էր որպես «դյուղաքաղաք» կամ «քաղաքագյուղ», նրա այգեգործության ու բանջարաբուծության հետ միասին կարևոր տեղ էր գրավում և երկրագործությունը։ Երևանի շրջակայքում եղած արգավանդ հողերը արհեստական ոռոգման առկայության պայմաններում տվել են հացահատիկների և բամբակի բավական բարձր բերք։

Մեզ հետաքրքրող ժամանակների Երևանի երկրագործության մասին ուղղակի որևէ հիշատակություն չկա ոչ Ի. Շոպենի մոտ և ոչ էլ այլ կարգի աղբյուրներում։ Երվանդ Շահազիզը ենթադրում է, որ եթե Երևանում ավելի հին ժամանակներում զբաղվել են նաև երկրագործությամբ, ապա հետագայում քաղաքը աճելով ու ընդարձակվելով, կլանել է ցանքատարածությունների համար պիտանի հողերը և այդ եղանակով էլ երկրագործությունը (բրնձի մշակումը) վերացել է քաղաքի կյանքից[4]։ Չի կարելի հերքել, որ նախկինում Երևանն ունեցել է բրնձի և այլ հացահատիկների ու բամբակի ցանքսեր, իսկ երկրագործությունը միջնադարյան Երևանում կազմել է նրա տնտեսության կարևոր ճյուղերից մեկը։ Սակայն միաժամանակ չի կարելի ընդունել Ե. Շահազիզի ենթադրության այն մասը, թե իբր հետագայում Երևանի զբաղմունքներից երկրագործությունն արդեն իսպառ վերացել էր, իսկ նախկինում նրա դրաված հողերը կլանվել էին քաղաքի ու նրա այգիների կողմից։ XIX դ. առաջին քառորդի Երևանը տակավին ուներ իր երկրագործությունը, որն իր համեստ ու փոքր մասշտաբներով՝ քաղաքի էկոնոմիկայում դադարել էր կարևոր դեր խաղալուց։ Ի. Շոպենը մի վկայություն ունի Երևանի շրջակայքի հողերի ու ցանքսերի վերաբերյալ, որը անուղղակի կերպով ակնարկում է Երևանի քաղաքապատկան հողերում երկրագործությամբ զբաղվելու մասին։ Ահա թե ինչ է գրում նա. «Երևանը շրջապատող հողերը գերազանց հացաբեր են և պիտանի՝ գրեթե արևադարձային բոլոր բույսերի համար. այստեղ առատորեն աճում են բամբակը, չալթուկը, ցորենը, գարին, կորնկը, քնջութը, վուշը, բոստանները... բոլոր տեսակի բանջարեղենները։ Մոտավոր հաշվով կարելի է ենթադրել, որ քաղաքի ոռոգողական առուների այժմյան դրությամբ՝ ջուրը կհասնի այդ հողից մինչև 300 խալվար՝ ոռոգելու համար»[1]։

Միանգամայն ակնհայտ է, որ Շոպենի նշած Երևանի շրջակայքի 300 խալվար հողը ամբողջությամբ պատկանում էր քաղաքին։ Իսկ այդ հողում, ինչպես ասված է, հաջողությամբ մշակվել են ոչ միայն տեխնիկական կուլտուրաներ ու բանջարեղեն, այլ նաև հացահատիկներ՝ չալթուկ, ցորեն, գարի ու կորեկ։ Հացահատիկների մշակության մասին նշում է նաև Կ. Օլովսկին, որի «Երևան» վերնագիրը կրող հոդվածը տեղադրված է «Кавказский календарь»-ի 1852 թ. համարում[2]։ Երևանի երկրագործության մասին այլ աղբյուրների բացակայության պատճառով դժվար է ավելին ասել։ Քաղաքի ցանքատարածությունների մեծությունը, բերքի չափը և այլն մնում են շլուսաբանված։ Միայն կարելի է ասել, որ Երևանի խանության մյուս ցածրադիր շրջանների նման Երևան քաղաքի երկրագործության մեջ ևս հիմնական վարելու գործիքը եղել է ծանր գութանը, որը գործի է դրվել մի քանի լուծ եզների կամ գոմեշների միջոցով՝ 4—5 մարդու մասնակցությամբ, որոնցից մեկը ղեկավարել է գութանը, իսկ մյուսները ուղղություն են տվել լծկաններին[3]։ Ցանել են չալթուկ, ցորեն, բամբակ և այլ կուլտուրաներ[4]։

Երևան քաղաքում պահում էին և անասուններ՝ ուղտեր, գոմեշներ, եզներ ու կովեր, ոչխարներ, այծեր, ձիեր, ջորիներ ու էշեր,

---

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 742, Ալիշան, Այրարատ, էջ 316։

2 Ալիշան, Այրարատ, էջ 316։

3 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 742։

4 Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 44—45։

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 470։

2 «Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 436։

3 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 737։

4 Երևանի և Նախիջևանի խանության մահալների բերքատվության մասին մեզ հասել են մեծապես չափազանցված թվեր (տե՛ս «Обозрение российских владений за Кавказом», ч. IV, էջ 278), որոնք չեն կարող հիմք ծառայել գաղափար կազմելու նաև Երևանի հողերի բերքատվության մասին։

Շոպենի գլխավորությամբ՝ 1829 — 1832 թթ. կատարված կամերալ ցուցակագրության ժամանակ պարզվել է, որ Երևանում բնտանի կենդանիների թիվը բավական մեծ էր։ Ցուցակագրումը կատարվել է ըստ թաղերի, և հաշվի են առնվել ոչ միայն բնիկների, այլև պատերազմից հետո Պարսկաստանից ու Թուրքիայից քաղաք ներգաղթածների անասունները։ Կամերալ ցուցակագրման արդյունքների հիման վրա, Շոպենն իր զրքում տվել է ըստ թաղերի՝ Երևան քաղաքում եղած բնտանի անասունների տեսակներն ու թվերը[1]։ Դրա հիման վրա էլ մենք կազմում ենք մի նոր աղյուսակ, որտեղ տալիս ենք Երևանում եղած անասունների թիվն ըստ նրա թաղամասերի, բնիկների և ներգաղթածների անասունների թվերը տալով առանձին-առանձին։

Աղյուսակ 8

	Ուղտեր	Գոմեշներ	Եզներ	Կովեր	Հորթեր	Ոչխարներ և այծեր	Ձիեր	Ջորիներ	Էշեր
	Թաթարների մասը								
Բնիկ բնակիչների անասունների թիվը . . .	6	10	3	73	57	525	175	25	422
Ներգաղթած բնակիչների անասունների թիվը . .	—	—	—	5	4	100	2	—	14
Ընդամենը	6	10	3	78	61	625	175	25	466
	Շահաթի մասը								
Բնիկ բնակիչների անասունների թիվը . . .	31	28	23	48	37	982	268	20	224
Ներգաղթած բնակիչների անասունների թիվը . .	—	3	9	13	11	240	31	4	96
Ընդամենը	31	31	32	61	48	1222	299	24	320
	Դամիրբոյնու լաղ թաղամաս								
Բնիկ բնակիչների անասունների թիվը . . .	7	9	7	19	18	188	85	1	84
Ներգաղթած բնակիչների անասունների թիվը . .	—	—	—	1	1	—	1	—	3
Ընդամենը	7	9	7	20	19	188	86	1	87
	Ամրոզ քաղաքամաս								
Բնիկ բնակիչների անասունների թիվը . . .	44	47	33	140	112	1695	526	46	730
Ներգաղթած բնակիչների անասունների թիվը . .	—	3	9	19	16	340	34	4	113
Ընդամենը	44	50	42	159	128	2035	560	50	843

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 473—474։

Ուրեմն այսպես՝ պարսկական տիրապետության վերջին շրջանում Երևանում եղել են՝ ուղտեր 44, գոմեշներ՝ 47, եզներ՝ 33, կովեր՝ 140, հորթեր՝ 112, ոչխարներ և այծեր՝ 1695, ձիեր՝ 526, ջորիներ՝ 46 և էշեր՝ 730։ Իսկ դա ցույց է տալիս, որ քաղաքի անասունների մեծագույն մասը կազմել են բեռնակիրները (ուղտեր, ձիեր, ջորիներ ու էշեր) և մսա-կաթնատու անասունները (կովեր, ոչխարներ ու այծեր)։ Քաշող անասունները՝ գոմեշներն ու եզները՝ համեմատաբար փոքր թիվ են կազմել, որը ցուցանիշ է՝ քաղաքում երկրագործության փոքր մասշտաբների։ Բեռնակիր անասունների մեջ փոքր թիվ են կազմել ուղտերը, որովհետև Երևանից դեպի Վրաստան և Ադրբեջան ձգվող ճանապարհներում, որոնք նրա առևտրի ամենակարևոր ճանապարհներն էին, ուղտը չէր օգտագործվում իբրև բեռնակիր, այդ ճանապարհներն անցնում էին լեռնաշրջաններով, ունեին շատ ոլորաններ, որոնք և արգելակում էին ուղտի ազատ երթևեկությունը։ Ուղտերը հիմնականում օգտագործվում էին Երևան—Ջուլֆա, մասամբ էլ՝ Արարատյան դաշտով անցնող ճանապարհներով։ Դեպի Երևանի խանության ուղտերի քարավաններ էին գալիս Պարսկաստանից, որոնք թողնելով իրենց բեռները Երևանում, վերադառնում էին իրենց ելման կետերը։ Բեռնակիր անասունների մեջ էլ ամենամեծ թիվը կազմում էին էշերն ու ձիերը։

Երևանի բնիկ բնակիչների անասունների ամբողջ գլխաքանակը, ըստ նշված կամերալ ցուցակագրման, հասնում էր 3027-ի, այլ կերպ ասած, նրա ամեն մի 3,7 մարդուն ընկնում էր մի անասուն։ Դա, իհարկե, շատ փոքր թիվ է, սակայն նկատի պետք է ունենալ, որ այդ ամբողջ անասունները պահվում էին քաղաքում՝ այգիների, նրանցում գտնվող խոտհարքների և բանջարեղենների մնացորդների բազայի վրա։ Այգիներում եղած խոտհարքներից բացի, Երևանում կար բավական ընդարձակ տարածություն զբաղող պետական-սարդարապատական առվույտի դաշտ, որը գտնվում էր քաղաքի բերդի և Շենգավիթ գյուղի միջև։ Շոպենը իր զրքում մի տեղ նշում է, որ այն զբաղում էր մոտավորապես 4 խալվար տարածություն, իսկ մի այլ տեղ նրա տարածությունը համարում է 13 խալվար և ավելացնում, թե բնակիչներն արդեն վարել են այն[2]։

[1] Երևանում և առհասարակ Երևանի խանությունում նստակյաց բնակիչների մոտ եղն ու գոմեշը ծառայել են իբրև քաշող անասուններ, դրանք միայն շատ հազվադեպ են օգտագործվել որպես բեռնակիրներ։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 470, 760։

Ինչպես ասվեց, այգիներում տարածված են եղել առվույտի փոքրիկ դաշտեր։ Շոպենի տվյալների համաձայն, միայն այգիներում եղած առվույտի դաշտերից տարեկան միջին հաշվով հավաքում էին 500 հազ. կապուկ առվույտ[1]։

Ներգաղթից հետո Երևանի անասունների գլխաքանակը որոշ չափով ավելանում է, քաղաքի նորեկ բնակիչները ևս սկսում են իրենց համար պահել անասուններ։

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Երևանում եղած բոլոր անասունների մեջ համեմատաբար ամենամեծ թիվը կազմել են էշերը։ Սա բացատրվում է երկու հանգամանքով՝ նախ նրանով, որ բեռնակիր անասունների մեջ ամենաէժանը էշն էր, և շատ-շատերը կարող էին իրենց համեստ միջոցներով գնել այն, և երկրորդ՝ այգիների ու բանջարանոցների միրգն ու բանջարեղենը տուն, շուկա և մոտակա գյուղերը տանելու համար ամենահարմար բեռնակիրը դարձյալ՝ քչապահանջ և օգտակար գործողության բարձր գործակից ունեցող էշն էր։ Հեռավոր շրջանների և հարևան երկրների հետ կատարվող հաղորդակցության մեջ էշն իբրև բեռնակիր գրեթե միանգամայն բացառված էր։

Նշվածներով չէին սպառվում խանական Երևանի գյուղատնտեսական զբաղմունքները։ Այստեղ կային նաև մի քանի այլ զբաղմունքներ՝ շերամապահություն, մեղվապահություն և այլն, որոնք քաղաքի տնտեսական կյանքում որևէ լուրջ դեր չէին խաղում։ Ըստ կամերալ ցուցակագրման, Երևանում եղել է 304 փեթակ, որից տարեկան մոտավորապես ստացել են 350 բաթման մեղր և 50 բաթման մոմ։ Երևանի մեղրը բարձրորակ էր, նրա մեկ բաթմանը քաղաքի շուկայում վաճառվել է մինչև երկու ռուբլով[2]։ Առաջին հայացքից թվում է, թե այգիների, առվույտի և, ընդհանրապես, կանաչ տարածությունների ու ջրի առատությունը պետք է խթան հանդիսանային Երևանում՝ համեմատաբար բարձր եկամտաբերություն ունեցող այդ զբաղմունքի՝ մեղվապահության զարգացմանը, մանավանդ որ մեղրից բացի՝ շատ բարձր արժեք ուներ մոմը, որի մեծ պահանջը զգացվում էր եկեղեցիներում և ուխտավայրերում։ Բայց, ինչպես տեսնում ենք, իրականում քաղաքը չի ունեցել առաջնակարգ նշանակություն ունեցող մեղվապահություն։ Մեր կարծիքով, մյուս պատճառների հետ միասին, մեղվապահության ետ մնալուն նպաստել են նաև քաղաքի օդերևութաբանական

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 760։

[2] Նույն տեղը, էջ 471։

պայմանները՝ ուժեղ քամիներն ու փոշու առատությունը, ինչպես նաև բնակչության մեջ մեղու պահելու անհրաժեշտ հմտության բացակայությունը։

Ավելի հետամնաց էր և համեստ չափեր ուներ շերամապահությունը։ Շոպենը գրում էր, որ տարվա ընթացքում Երևանի շերամապահությունը հազիվ թե տար 10 ֆունտ մետաքս, «չնայած» նրա «այգիները լիքն են թթենիներով» և կարող են բավարարել մեծ քանակությամբ շերամի որդեր պահելու համար[1]։ Շոպենը հայտարարում է, որ տեղացիներից ոմանք Երևանի կլիմայական պայմանները շերամապահության համար համարում են ոչ պիտանի, այդ պատճառով էլ շահագրգռվածություն չունեն զարգացնելու այն[2]։

Ոմանք Երևանում, իբրև կողմնակի աշխատանք, Զանգու գետում զբաղվել են ձկնորսությամբ[3]։ Սակայն Երևանը ձկնորսության համար չի ունեցել համապատասխան բազա. Զանգվի ձուկը իր բացարձակ քանակությամբ այնքան քիչ էր, որ չէր կարող տնտեսական շատ թե քիչ լուրջ նշանակություն ունեցող զբաղմունքի հիմք ծառայել։ Երևանն իր ձուկը ստացել է Սևանից՝ կողովներով։ Հետևապես անընդունելի է Շոպենի այն հայտարարությունը, թե «Զանգվում» իբր կա «առատ ձկնորսություն»[4]։

Դրանք էին պարսկական տիրապետության վերջին տասնամյակների Երևանի գյուղատնտեսական այն զբաղմունքները, որոնցից մի քանիսը քաղաքի տնտեսական կյանքում խաղացել են կարևոր դեր։

3. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Բնակչության թիվը։ Բնակչության շարժումը։ Բնակչության ազգային կազմը։ Դասակարգային կազմը։ Հարկատու բնակչությունը։ Ուղղակի և անուղղակի հարկերն ու պարհակները։ Բնակչության առանձյալ խավերը և նրանց իրավունքները։ Դասակարգային և ազատագրական պայքարը։

Պարսկական տիրապետության ժամանակաշրջանի Երևանի բնակչության թվի վերաբերյալ չկան ստույգ տվյալներ, որովհետև այդ ժամանակներում չեն եղել ո՛չ իսկական մարդահամարներ և

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 471։

[2] Նույն տեղը, էջ 472։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը։

ոչ էլ այնպիսի ցուցակագրումներ, որոնք ընդգրկեին երևանի բնակչության բոլոր տարիքները։ Դրա հետևանքով էլ՝ Երևանի բնակչության թիվը ուսումնասիրողների մոտ տարբեր է։ Այսպես, Զ. Կորկոտյանի հաշիվներով, որը հատուկ զբաղվել է Երևանի բնակչության հարցերով, Երևանը պարսկական տիրապետության վերջին տարիներին ունեցել է 10 050 բնակիչ[1]. Երվանդ Շահազիզը գրում է, որ այդ ժամանակ Երևանն ունեցել է 12 000 բնակիչ[2], իսկ Յու. Յարալովի կարծիքով՝ 9700 բնակիչ[3]։ Դրանցից առաջինն իր հաշիվները կատարելիս վկայակոչում է Շոպենի այն հիշատակությունը, ըստ որի Երևանը պարսկական լծից ազատագրվելու պահին ունեցել է 2400 ընտանիք։ Ապա ընդունելով, որ Երևանում այդ ժամանակ հայկական մեկ ընտանիքը բաղկացած էր 4,24 անձից, իսկ ադրբեջանականը՝ 4,06 անձից (գործակիցներ, որոնք նա դուրս է բերում ոչ թե այն ժամանակվա, այլ Երևանի ազատագրումից հետո կատարված կամերալ ցուցակագրման տվյալների հիման վրա) և համապատասխան թվաբանական հաշվումներով՝ Երևանի բնակչության թիվը՝ 1827 թ. համար ստանում է 10 050։ Ավելի պարզ, սակայն իրականին ավելի մոտ է կատարել իր հաշվումները Երվանդ Շահազիզը։ Սա էլ իր համար հիմք է ընդունում ընտանիքների թիվը՝ 2400։ Եվ քանի որ կամերալ ցուցակագրման ժամանակ պարզվել էր, որ ամբողջ Հայկական մարզում մեկ ընտանիքը միջին թվով բաղկացած էր 5 հոգուց, ուստի Երևանի մեկ ընտանիքն էլ համարելով նույնքան անձերից բաղկացած՝ նրա ընտանիքների թիվը բազմապատկում է 5-ով և ստանում քաղաքի ամբողջ բնակչության մոտավոր թիվը՝ 12 000։ Յու. Յարալովի տված թիվը չի կարող առհասարակ ուշադրության արժանանալ, որովհետև այն տրված է առանց որևէ սկզբնաղբյուրի և փաստի։ Ավելի ճիշտ, նա մեխանիկորեն վերցրել է Հայկական մարզում 1829—1832 թթ. կատարված կամերալ ցուցակագրման՝ Երևանին վերաբերող տվյալները, դրանցից դուրս գալով ներգաղթողներին, որոնք Արևելյան Հայաստան, այդ թվում և Երևան էին եկել Թուրքմենչայի պայմանագրով։ Նա այնքան անքննադատ է վերցրել Շոպենի տվյալները, որ նույնիսկ չի նկատել դրանց վրիպակները, որոնք կարող էին որոշ փոփոխություն մտցնել նրա վերցրած թվի մեջ։

[1] Զ. Կ ո ր կ ո տ յ ա ն, Երևան քաղաքի ժողովրդագրությունը, Երևան, 1931, էջ 22։

[2] Ե. Շ ա հ ա զ ի զ, Հին Երևանը, էջ 28—29։

[3] Ю. Я р а л о в, Ереван, Москва, 1948, էջ 9։

Ինչպես տեսնում ենք, բոլորի համար էլ հիմք են ծառայել կամերալ ցուցակագրման տվյալները և Շոպենի այն հիշատակությունը, թե պարսկական տիրապետության վերջին շրջանում Երևանն ունեցել է 2400 ընտանիք[1]։

Ըստ կամերալ ցուցակագրման տվյալների, Երևանը (առանց Նորք գյուղի և ներգաղթողների), ունեցել է 2374 ընտանիք՝ 9700 բնակիչներով[2]։ Ահա հենց այս թիվն էլ Յարալովը համարել է ստուգված և առանց որևէ այլ բացատրությունների՝ ավել իբրև պարսկական տիրապետության վերջին շրջանի Երևանի բնակչության ճշտված թիվ։ Սակայն Երևանի այդ տարիների բնակչության ավելի հավանական թիվը գտնելու համար ուսումնասիրողները պետք է նկատի ունենային առնվազն երեք հանգամանք՝ առաջին՝ այն, որ Երևանը ռուսական զորքերի կողմից 1827 թ. գրավվելուց հետո՝ որոշ թվով պարսիկներ թողել և հեռացել են Պարսկաստան[3]։ Դրանք, ընդհանուր առմամբ, թվով մեծ չէին և բաղկացած էին համեմատաբար խոշոր կապիտալ և քաղաքական մեծ աղդեցություն ունեցող մարդկանցից՝ խաներից, սովդաքյարներից և նմաններից։ Պետք է ենթադրել, որ Երևանից Պարսկաստան փախածների թիվը, համենայն դեպս, հարյուրների էր հասնում, եթե նկատի ունենանք Երևանի խանության վարչական ապարատի մեծությունն ու մեծ կապիտալ և ընդարձակ կալվածքներ ունեցող մարդկանց բազմաթվությունը։ Այս փաստը նշված է նաև Երվանդ Շահազիզի մոտ, մինչդեռ Զ. Կորկոտյանն ու Յու. Յարալովը լռելյայն անցել են սրա կողքով և իրենց հաշիվները կատարել՝ առանց այդ փաստը նկատի ունենալու։ Երկրորդ հրդությունը, որ նշանակալի չափով ազդել է Երևանի բնակչության թվի վրա և որը նշված հեղինակներից և ոչ ոքի կողմից ուշադրության չի առնված, դա 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Երևանի պաշարման և նրա գրավման ժամանակ եղած զոհերն են, որոնք անշուշտ ոչ միայն զինվորներից էին (զինվորները քաղաքի բնակչության մեջ առհասարակ չեն հաշվվել), այլ նաև քաղաքացիներից։ Երրորդ՝ հայտնի է, որ 1828, 1829 և 1830 թթ. Երևանում պարբերաբար կրկնվել են սուր-վարակիչ հիվանդություններ (խոլերա, ժանտախտ), որոնք հսկայական զոհեր են պատճառել բնակչությանը։ Առևտրի մասին խոսելիս, մենք տեսանք, որ այդ թվական-

[1] И. Ш о п е н, Исторический памятник Армянской области, էջ 540։

[2] Նույն տեղը, էջ 543—546։

[3] Նույն տեղը, էջ 540։

ներին ոչ միայն զոհվում էին մարդիկ, այլև ամիսներով գրեթե հիմնովին ընդհատվում էր հասարակական կյանքը։ Քաղաքի բնակչության կամերալ ցուցակագրումը կատարվել է այդ հիվանդություններից հետո, դրանց տարած զոհերը բնականաբար չէին կարող մանել ցուցակների մեջ։

Այդ բոլորը հաշվի առնելով, կարելի է եզրակացնել, որ պարսկական տիրապետության վերջին տարիներին Երևանի բնակչությունը ավելի մեծ թիվ է կազմել, քան նույնիսկ 1830 թ., երբ արդեն Պարսկաստանից և Թուրքիայից Թուրքմենչայի և Ադրիանապոլսի պայմանագրերով Երևան էին եկել 1763 հոգի[1], իսկ Երևանի բնակչությունը ներգաղթողների հետ միասին կազմում էր 11 463 հոգի[2]։ Հետևապես, երևանդ Շահազիզի հաշիվները, որ հենված են միայն ընտանիքների և յուրաքանչյուր ընտանիքում եղած անձերի մոտավոր թվերի վրա՝ ավելի ճիշտ են դուրս գալիս, քան Զ. Կորկոտյանինը։ Ելնելով նշվածներից, կարծում ենք, որ Երևանի գրավման նախօրեին նրա բնակչության թիվը եղել է 12 000 և նույնիսկ դրանից էլ ավելի։

Իր բնակչության թվով Երևանը XIX դ. առաջին քառորդում Անդրկովկասի խոշոր քաղաքներից մեկն էր[3]։ Անդրկովկասի ամենամեծ քաղաքն այդ ժամանակ Թիֆլիսն էր, որը 1803 թ. ունեցել է մոտավորապես 13 500, իսկ 1821 թ.՝ 16 840 բնակիչ[4]։ Երևանի բնակչության թիվն էլ առատիկ վիճակում չի եղել, նա էլ այդ 25—28 տարվա ընթացքում ենթարկվել է փոփոխությունների։ 1810 թ. վերաբերող պաշտոնական տվյալներով Թիֆլիսի հայերի մինչև 1000 հոգին տարբեր ժամանակներում եկել էին Երևանից[5], իսկ Ի. Շոպենը վկայում է, որ Ցիցիանովի 1804 թ. արշավանքի ժամանակ Երևանի խանությունից 2000 հոգի գնացել և բնակություն են հաստատել Թիֆլիսում[1]։ Տրամաբանական է, որ Ցիցիանովի արշավանքի ժամանակ Թիֆլիս գնացած 2000 բնակիչներից մի մասը դուրս էր եկել հենց Երևան քաղաքից։ Եթե դրա վրա էլ ավելացնենք այն 1000 հոգին, որ Երևանից Թիֆլիս էին գնացել տարբեր ժամանակներում, ապա միանգամայն հասկանալի կդառնա, որ Երևանի բնակչության թիվը այդ 25-ամյակի ընթացքում չի ավելացել՝ արտագաղթի միջոցով նրա բնակչությունը հասել է դեպի պարսկական լծից արդեն ազատագրված Անդրկովկասի շրջաններն ու քաղաքները, այդ թվում և Թիֆլիս։

Երևանից մշտապես այլ քաղաքներ բնակության գնալուց բացի՝ նրա բնակչության մի մասը ժամանակավոր ամառանոցներ է գնացել ինչպես քաղաքի մոտ գտնվող Կզըլ-կալա այգեվետ վայրը, այնպես էլ խանության այլ շրջաններ։ Ամառանը, ավելի ճիշտ՝ գարնան տաքն ընկնելուց մինչև ուշ աշուն՝ մինչև ցրտերի վրա հասնելը, քաղաքաբնակ այն ազդրեջանցիները, որոնք այգիներ ունեին Կզըլ-կալա վայրում, թողնում էին քաղաքի իրենց տունտեղը և բնակվում այդտեղի իրենց այգիներում։ Երևանում գտնվող խանության բարձրաստիճան ծառայողներն ու անվանի մարդիկ ամառանը մի քանի ամիս թողնում էին շոգ ու տոթ Երևանը և հեռանում հովասուն յայլաններ։ Ամառանոց էր գնում և խանը՝ Հուսեյն խան սարդարը, որը չնայած Զանգվի աջ ափին, Դալմայի այգիներում ուներ «խանին վայել» ամառանոց։ Հուսեյն խանը սովորաբար ամառանոց էր գնում Մեծ և Փոքր Մասիսի միջև գտնվող Քամբոցի շրջանը, որտեղ բխում էր հորդառատ ու սառնորակ Սարդար բուլաղ կոչված աղբյուրը։

Երևանի բնակչությունը բաղկացած էր հայերից և ազդրեջանցիներից։ Թվական առումով պարսկական տիրապետության շրջանում, Երևանում ազդրեջանցիները որոշ չափով շատ են եղել հայերից, սակայն հետագայում՝ այն պարսկական լծից ազատագրելուց հետո Պարսկաստանից ու Թուրքիայից եկող հայերի շնորհիվ՝ քաղաքի բնակչության ազգային հարաբերակցությունն էլ աստիճանաբար փոխվում է. ժամանակի ընթացքում հայերը սկսում են կազմել քաղաքի բնակչության ավելի մեծ տոկոսը[2]։ Վարչականորեն քաղաքի ամբողջ բնակչությունը բաժանված էր 4 համայնքների, որոնցից երկուսը կազմում էին ազդրեջանցիները, երկուսը՝

---

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 543—546։

[2] Նույն տեղը։

[3] Եվրոպայում XVI—XVIII դդ. բնթացքում արդյունաբերության զարգացման զուգընթաց տեղի է ունենում քաղաքների զարգացման աճ։ Եթե 1400 թ. Եվրոպայում ավելի քան 100 հազար բնակիչ ունեցող քաղաքների թիվը ընդամենը 4 էր (Փարիզ, Կոստանդնուպոլիս, Վենետիկ և Միլան), ապա 1700 թ. այդպիսի քաղաքների թիվը հասնում է 14-ի, իսկ 1800 թվին՝ 21-ի։ Մյուս աշխարհամասերում այդ դարերին քաղաքների այդպիսի աճ չկար։

[4] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 29։

[5] АКАК, т. IV, էջ 37, № 37։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 526, 706։

[2] Նույն տեղը, էջ 543—546, տե՛ս նաև Զ. Կորկոտյան, Երևան քաղաքի Ժողովրդագրությունը, էջ 22։

հայերը։ Ադրբեջանական բնակչության համայնքներից մեկը կազմում էին մշտաբնակ քաղաքացիները, իսկ մյուսը՝ Կզըլ-կալայի ադրբեջանցիները, որոնք քաղաքում էին ապրում միայն ցուրտ ամիսներին։ Հայ բնակչության երկու համայնքներից յուրաքանչյուրը գտնվում էր մի մելիքի իշխանության ներքո, հայերը բոլորն էլ մշտաբնակ քաղաքացիներ էին։ Կոնդում գտնվող 46 ընտանիք՝ հայ բոշաները վաղուց թողել էին իրենց թափառաշրջիկ կյանքն ու նախկին արհեստը (մաղ կապելը) և դարձել քաղաքի մշտական ու նրա առօրյայով ապրող բնակիչներ։ Համայնքների բաժանումը ելնում էր վարչական, ֆինանսական և ռազմիկանական նպատակներից, որոնց մասին դեռ խոսք կլինի քաղաքի ներքին կարգ ու կանոնը ներկայացնելիս։

Երևանում արական բնակչությունը միշտ իգական բնակչությունից շատ է եղել[1]։ Դա հատուկ է ոչ միայն Երևանին, այլև Անդրկովկասի մյուս քաղաքներին։

Քաղաքի բնտանիքների թվի, նրա բնակչության ազգային կազմի, ըստ քաղաքի թաղամասերի բնակեցվածության և բնակիչների թիվն ըստ սեռի միանգամից և անմիջականորեն պատկերացնելու համար տալիս ենք մի ամփոփիչ աղյուսակ, որը կազմել ենք ըստ Ի. Շոպենի հաղորդած տվյալների[2]։

Աղյուսակ 9

Թաղամասերը	Ադրբեջանցիներ				Հայեր				Ընդամենը			
	ընտանիքների թիվը	Շունչերի թիվը			ընտանիքների թիվը	Շունչերի թիվը			ընտանիքների թիվը	Շունչերի թիվը		
		արական	իգական	ընդամենը		արական	իգական	ընդամենը		արական	իգական	ընդամենը
ա) Շահարում	802	1627	1527	3154[3]	244	530	468	998	1046	2157	1995	4152
բ) Թափաբաշում	594	1333	1204	2537	323	690	681	1371	917	2023	1885	3908
գ) Դամիրբուլաղում	411	789	806	1595	—	—	—	—	411	789	806	1595
Ամբողջ քաղաքում	1807	3749	3537	7286	567	1220	1149	2374	2374	4969	4686	9655

[1] Տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 543—546, «Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 439։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 543—546։

[3] Ի. Շոպենի մոտ 3199 է, որը պետք է վրիպակ համարել։ Վրիպակները կան նաև այլ տեղերում, որոնք մյուս թվերի միջոցով ուղղված են։

Վերը նշված հանգամանքները, այն է՝ պատերազմի և համաճարակ հիվանդությունների հետևանքով եղած զոհերը, ինչպես և Պարսկաստան փախած մարդիկ հաշվի չեն առնված ավյալ աղյուսակում, ուստի և ըստ Շոպենի՝ Երևանի ամբողջ բնակչությունն, առանց ներզաղթողների, դուրս է եկել 9655 հոգի։ Ընդունելով այդ թիվը իբրև իրական թիվ պարսկական տիրապետության վերջին տարիների Երևանի բնակչության համար, սակայն, աղյուսակը, այնուամենայնիվ, լրիվ գաղափար է տալիս այդ ժամանակվա Երևանի բնակչության ազգային կազմի, ըստ թաղամասերի բաշխվածության, ընտանիքների քանակի և արական ու իգական բնակչության մոտավոր տոկոսային հարաբերության մասին։

Պարսկական տիրապետության շրջանի Երևանի բնակչության դասակարգային կազմը հայելային անդրադարձումն էր ֆեոդալական հասարակարգի բնակչության դասակարգային կառուցվածքի։ Այստեղ նախ և առաջ ամբողջ բնակչությունը բաժանված էր երկու հակադիր, իրար նկատմամբ ներհակ հարաբերությունների մեջ գտնվող խմբերի՝ շահագործողների և շահագործվողների, որոնք իրենց հերթին մասնատված էին սոցիալական և անտեսական տարբեր դրություն ունեցող ավելի փոքր խմբերի։ Երևանի բնակչությունը կազմված էր ազնվականությունից, հոգևորականությունից, քաղաքային դասից և գյուղատնտեսությամբ զբաղվողներից, հաշված բերդապահ կայազորը, որի զինվորները սովորաբար քաղաքի բնակչության շարքը չեն դասվել։ Շոպենը կարևոր տեղեկություններ է հաղորդել քաղաքի բնակչության դասակարգային-դասային կազմի, տարբեր դասերի մեջ մտնող մարդկանց թվի, ինչպես և ամբողջ Հայկական մարզի բնակչության դասակարգային կազմի մասին[1]։ Նրա հաղորդած այդ տեղեկությունները կամերալ ցուցակագրման արդյունքներն են և, հետևապես, վերաբերում են 1829—1832 թթ.։ Այնտեղ նկատի չի առնված 1826—1828 թթ. ընթացքում Երևանից Պարսկաստան փախած բարձրաստիճան ազնվականության և մեծ կապիտալներ ունեցող վաճառականության ներկայացուցիչներին, խիստ մոտավոր են նաև հասարակության մյուս շերտերի թվերը, որովհետև, ինչպես տեսանք, Երևանի բնակչության թիվը պատերազմի և նրան հաջորդած այլ իրադարձությունների հետևանքով ենթարկվել էր խիստ փոփոխման, մի փոփոխում, որը չէր կարող արտացոլվել կամերալ ցուցակագրման

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 688—705։

մեջ, իսկ դրանից առաջ ցուցակագրումներ չէին եղել, որպեսզի հնարավոր լիներ դրանց արդյունքները համեմատել իրար հետ և հանել համապատասխան եզրակացություններ։ Այնուամենայնիվ, կամերալ ցուցակագրման տվյալները այս դեպքում ևս համեմատաբար ճիշտ և ամբողջական դաղափար են տալիս պարսկական տիրապետության վերջին շրջանում Երևանի բնակչության դասակարգային և դասային կառուցվածքի մասին։ Այնուհետև, կամերալ ցուցակագրման և դրա տվյալների ամփոփումը հանդիսացող Ի. Շոպենի գրքում հասարակության դասերը տրված են ըստ ազգությունների, յուրաքանչյուր մեծ խումբ՝ գյուղատնտեսությամբ զբաղվողներ, քաղաքային դաս և այլն դիտված են իբրև միասնական մի ամբողջ։ Այնինչ դրանցից յուրաքանչյուրը իր հերթին ենթարկված էր տարբեր սոցիալական դիրք և անտեսական վիճակ ունեցող շերտերի։ Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական դասերի մասին խոսելիս մենք էլ սկզբում տալու ենք դրանց պատկերը ըստ ազգային պատկանելության, ինչպես արված է Շոպենի մոտ, որովհետև ադրբեջանցի և հայ ազնվականներն ու հոգևորականներն ունեին տարբեր արտոնություններ, սակայն վերջում դրանք, իբրև միևնույն սոցիալական խմբեր, կդումարվեն և կներկայացվեն միասին։ Քաղաքային դասի (արհեստավորներ և առևտրականներ) գյուղատնտեսությամբ զբաղվողների նկատմամբ այդ նույնը կիրառելն անիմաստ է, որովհետև թե՛ ադրբեջանցի և թե՛ հայ վաճառականն ու գյուղացին ոչնչով չէին տարբերվում իրարից՝ ո՛չ արտոնությով, որովհետև նրանք ընդհանրապես արտոնությավորված չէին, և ո՛չ էլ անտեսական ու սոցիալական դրությամբ։

Այժմ առանձին-առանձին ծանոթանանք Երևանի բնակչության դասակարգային խմբերի՝ աշխարհիկ ազնվականության, հոգևորականության, քաղաքային դասի և գյուղացիության հետ։

Ազնվականությունը բաժանված էր երկու խմբի՝ մահմեդական, որի մեջ մտնում էին պարսիկ, թուրք ու ադրբեջանցի ազնվականները և հայ ազնվականություն։ Մահմեդական ազնվականությանը պատկանում էին ժառանգական բեկերը և պարսկական արքունիքից խանի արժանապատվություն (արտոնություն) ստացածները[1]։ Իսկ հայ ազնվականությունը միայն բաղկացած էր ժառանգական մելիքներից և աղալարներից[2]. պարսկական արքունիքի կողմից արտոնությավորված ոչ ժառանգական հայ ազնվականներ չկային։

Ըստ Շոպենի հաղորդած տվյալների[1], Երևանում մահմեդական և հայ ազնվականությունը, թվերով արտահայտված, հետևյալ պատկերն էր ներկայացնում.

Աղյուսակ 10

	Ընտանիքների թիվը	Շնչերի թիվը		
		արական	իգական	ընդամենը
Մահմեդական ազնվականություն				
ա) խաներ	4	22	19	41
բ) Բեկեր և սուլթաններ .	51	167	137	304
Հայ ազնվականություն				
Մելիքներ և աղալարներ .	8	29	26	55
Ընդամենը . . .	63	218	182	400

Ֆեոդալական հիերարխիայի գլուխ կանգնած էր սարդարը, որը միաժամանակ փաստորեն ամբողջ խանության տերն էր։ Սարդարն էլ իր հերթին համարվում էր պարսկական շահի վասալը։

Ավելի բազմամարդ էր հոգևորականությունը, որը բաժանված էր երկու խմբի՝ մահմեդական հոգևորականության և քրիստոնեական-լուսավորչական։ Դրանք էլ իրենց հերթին առանձին-առանձին ենթարկված էին հիերարխիայի։ Երևան քաղաքում մահմեդական հոգևորականության գլուխ էր կանգնած կազին, որը օժտված էր հոգևոր և դատական մեծ իրավունքներով, իսկ հայ լուսավորչական հոգևորականությունը ենթարկված էր Երևանի թեմի առաջնորդին։

Չհաշված վանականներին, հոգևորականների թիվը, ըստ Շոպենի տվյալների, կազմել է ընդամենը 90 մարդ[2]։ Ավելի մեծ թիվ

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 688։

[2] Նույն տեղը։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 689—690։

[2] Նույն տեղը, էջ 691—692։

են կազմել մահմեդական հոգևորականները՝ ախոնդները, մոլլաները, միրզաները, սեիդներն ու դերվիշները։ Սրանք ազատված էին բոլոր կարգի տուրքերից, հարկերից և պարհակներից։ Սակայն դրանք չէին միայն նրանց արտոնությունները։ Տարբեր անունների տակ նրանք ինչպես խանության մահալներում, այնպես էլ նրա կենտրոն Երևանում մահմեդական բնակչությունից և գանազան այլ աղբյուրների միջոցով ստանում էին հսկայական եկամուտներ, որոնց մասին հարկ կլինի խոսել քիչ հետո՝ հարկերին ու տուրքերին անդրադառնալիս։ Դրանցից բացի, կային հայ և մահմեդական բազմաթիվ ուխտավորներ, որոնք գնալով սրբազան վայրերը (առաջինները Երուսաղեմ, երկրորդները՝ Մեքքա, Մեդինա և Քերբալա), իրենց անունների վրա ավելացրել էին՝ առաջինները մուղդըսի, Մեքքա գնացողները՝ հաջի, Մեդինա գնացողները՝ մեշեդի, իսկ Քերբալա գնացողները՝ քերբալա տիտղոսները, և մեծ ազդեցություն ունեին հասարակության մեջ։ Սրբազան վայրերը գնացող հայ և մահմեդական ուխտավորները սովորաբար հասարակության բարձր դասերից էին։ Նրանք այդ երկարատև ճանապարհորդությունների ընթացքում հսկայական միջոցներ էին ծախսում։ Ի. Շոպենի հաշիվներով, Հայկական մարզից սրբազան վայրերը սխտի գնացող միայն մահմեդական ուխտավորները տարին երկրից դուրս էին տանում մոտավորապես 30 000 ռուբլի[1], որը այն ժամանակվա համար խոշոր գումար էր համարվում։ Ընդ որում, Մեքքա ճանապարհորդություն կատարելու համար մեկ մարդուց պահանջվում էր մոտավորապես 600 ռուբլի, Մեդինա ճանապարհորդելու համար՝ 300, իսկ Քերբալա՝ 200 ռուբլի[2]։

Երևան քաղաքի հայ լուսավորչական և մահմեդական հոգևորականության, ինչպես և հայ ու մահմեդական ուխտագնացների տիտղոսների և թվի մասին ամբողջական գաղափար կարելի է կազմել հետևյալ աղյուսակից, որը կազմում ենք ըստ Շոպենի հաղորդած տվյալների[3]։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 704—705։

[2] Նույն տեղը, էջ 704։

[3] Նույն տեղը, էջ 689—704։

	Ընտանիքների թիվը	Շնչերի թիվը		
		արական	իգական	ընդամենը
Մահմեդական հոգևորականություն				
ա) Ախոնդներ և մոլլաներ	50	181	151	332
բ) Միրզաներ	19	64	41	105
գ) Սեիդներ	39	92	96	188
դ) Դերվիշներ	3	6	4	10
Քրիստոնեական հոգևորականություն				
ա) Տերտերներ և այլն . .	13	55	35	90
Ընդամենը . . .	124	398	327	725
Սրբազան վայրեր այցելած ուխտավորներ				
ա) Մուղդոխներ	—	6	—	6
բ) Հաջիներ	—	85	—	85
գ) Մեշեդիներ	—	158	—	158
դ) Քերբալաներ	—	105	—	105
Ընդամենը . . .	—	354	—	354
Բոլորը միասին . .	124	752	327	1079

Սրբազան վայրերը այցելած ուխտագնացները, անշուշտ, հոգևորականներ չէին, սակայն նրանք ստանալով նշված տիտղոսները, մեծ ազդեցություն ունեին հասարակական և կրոնական կյանքում, մանավանդ որ, ինչպես ասվեց, նրանք գրեթե առանց բացառության պատկանում էին հասարակության բարձր խավերին։ Հոգևորականությունը նեղ իմաստով, այսինքն՝ քրիստոնեական եկեղեցիների ու մահմեդական մզկիթների սպասարկողներն ու նրանց ընտանիքների անդամները, ինչպես տեսնում ենք, կազմում էին քաղաքի ամբողջ բնակչության (9655 հոգի) 7,48%-ը։ Իսկ եթե հոգևորականությունը (725) և աշխարհիկ ֆեոդալների դասը (400 հո-

գի) միասին վերցնենք (1125), ապա նրանք կկազմեն քաղաքի բնակչության 11,68%-ը։ Այլ կերպ ասած, քաղաքի յուրաքանչյուր 100 բնակչից 7,48-ը հոգևորականներ էին, իսկ հոգևորականներն ու աշխարհիկ ֆեոդալները միասին՝ 11,68։

Երևանի բնակչության մեծագույն մասը հարկատու բնակիչներն էին՝ քաղաքային դասը (առևտրականներ և արհեստավորներ) և գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվողները՝ այգեգործները, երկրագործները և այլն։ Քաղաքի բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմող այդ խմբերի մեջ միայն որոշ չափով խոշոր վաճառականներ էին սովդաքյարները, որոնք ազատված էին ներքին հարկերից ու տուրքերից, մյուսները բոլորը ենթակա էին հարկադրման և պարհակների։ Քաղաքային դասն ու քաղաքում գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվածները, ըստ կամերալ ցուցակագրման, 1832 թ. կազմում էին քաղաքային ամբողջ բնակչության 88,32%-ը, իսկ մնացած 11,68%-ը, ինչպես ասվեց, կազմում էին աշխարհիկ ֆեոդալները և հայ ու մահմեդական հոգևորականությունը։ Այնուամենայնիվ, Երևանում աշխարհիկ ֆեոդալներն ու հոգևորականները քաղաքի բնակչության նկատմամբ ավելի բարձր տոկոս էին կազմում, քան Երևանի խանության մեջ եղած ֆեոդալներն ու հոգևորականները խանության բնակչության նկատմամբ։ Այսպես, ըստ 1829—1832 թթ. կամերալ ցուցակագրման, նրա ամբողջ Հայկական մարզում (նախկին Երևանի և Նախիջևանի խանություններում) ամեն մի 10 000 բնակչին ընկնում էր 192,8 աղնվական և 313,4 հոգևորական[1], ապա Երևանում, որն այդ ժամանակ, ներգաղթողներին չհաշված, նույնիսկ չուներ 10 000 բնակիչ (այլ՝ 9655), կային 400 աղնվական և 725 հոգևորական, այսինքն՝ արտոնյալ այդ դասերի հարաբերական թիվը Հայկական մարզի համապատասխան թվից մեծ էր ավելի քան երկու անգամ։ Դա պետք է բացատրել նրանով, որ խաները, բեկերը, աղալարները, բարձրաստիճան շատ հոգևորականներ, ունենալով խոշոր եկամուտներ և համեմատաբար մեծ պահանջներ, գերադասում էին թողնել գյուղը, որտեղ նրանք իրրև կանոն չէին վարում սեփական տնտեսություն, այլ օգտվում էին մյուլքի կամ թիուլի իրավունքներից, և բնակվել խանության կենտրոնում, այնտեղ վարելով շռայլ ու հանդիսավոր կյանք։ Նրանք գյուղ կամ յայլա էին գնում ամառվա մի քանի ամիսներին։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 705։

Պարսկական տիրապետության շրջանում, պարսկական պետության ֆեոդալական կառուցվածքին համապատասխան, հարկերն ու տուրքերը եղել են երեք ձևի՝ դրամական, բնամթերային և աշխատավճարային։ Դրանցից յուրաքանչյուրն իր հերթին ունեցել է բազմաթիվ ձևեր։ Այնպես որ Երևանի խանությունում, իբրև պարսկական ֆեոդալական պետության վարչական խոշոր միավորներից մեկը, գոյություն են ունեցել տասնյակների հասնող ուղղակի և անուղղակի դրամական, բնամթերային և աշխատավճարային հարկեր ու տուրքեր։

Երևանի խանության հարկերի ու տուրքերի մասին բազմաթիվ նյութեր կան արխիվներում և հրատարակի վրա գտնվող տարբեր թվականներին վերաբերող պարբերականներում ու առանձին աշխատություններում, որոնցից մի քանիսը կարելի է դասել հավաստի սկզբնաղբյուրների թվին։

Պարսից տիրապետության շրջանում Երևանի խանությունում գործող հարկային սիստեմը տարածվում էր նաև Երևան քաղաքի վրա, միայն այն տարբերությամբ, որ այստեղ բնամթերային տուրքեր չկային։ Եթե Երևանի խանության մահալներում դրամական և աշխատավճարային տուրքերի հետ միասին գոյություն ունեին և շատ մեծ գումարներ էին կազմում բնամթերային տուրքերը, ապա դա բացատրված էր Երևան քաղաքի քաղաքացիներից վերցվող հարկերում ու տուրքերում։ Դրանով, անշուշտ, չպետք է ենթադրել, թե Երևանի քաղաքացիների դրությունը գյուղացիների դրությունից շատ է տարբերվել։ Երևանի քաղաքացիներն էլ ծանրաբեռնված են եղել ամենատարբեր տեսակի դրամական տուրքերով և հարկադիր աշխատանքներով, որոնք շատ ծանր են նստել նրանց վրա՝ խլելով, այն ժամանակվա պայմաններում, հսկայական միջոցներ, ժամանակ և աշխատանք։

Երևանի բնակիչներից վերցվող հարկերի և տուրքերի մասին ամբողջական տեղեկություններ է հաղորդել Ի. Շոպենը։ Նրա հաղորդած տեղեկությունների մի մասը արդյունք է կամերալ ցուցակագրման, իսկ մյուս մասը, որը ծառայել է նաև որպես աղբյուր՝ հարկերի գծով կամերալ ցուցակագրման համար, Հասան-Ղուլի խանի վեզիրի կազմած հարկերի ու տուրքերի տեղեկագիրն է, որը վերաբերում է սարդարի իշխանության վերջին տարուն[1]։

Երևանի բնակիչներից վերցվող դրամական հարկը, խանու-

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 966—988, 992—1055։

թյան մահալների բնակիչներից վերցվող հարկերի ու տուրքերի նման, եղել է երկու կարգի՝ ուղղակի և անուղղակի[1]։

Ուղղակի հարկերի չափը օրենքով չէր սահմանված ո՛չ մահալներում, ո՛չ էլ Երևան քաղաքում։ Շոպենը նշում է, որ ինքը՝ սարդարն իր հայեցողությամբ ամեն տարի որոշ չափի հարկ էր սահմանում երկրագործությամբ զբաղվողների, քաղաքային բնակիչների, քոչվորական ցեղերի և հայ հոգևորականության համար։ Նա գրում է. «Ըստ անձի հարկադրույքի՝ ուղղակի հարկեր գոյություն չունեին, սակայն սարդարը նշանակում էր ամեն տարվա դրույքատուրքեր երկրագործների համայնքներից, քաղաքային բնակիչներից և հայկական կուսակրոն հոգևորականությունից...»[2]։ Հայտնի չէ, թե յուրաքանչյուր ընտանիքից ինչքան գումար էին գանձում այս հարկի անվան տակ։ Քաղաքի հարկատու տնտեսությունների մոտավոր թվի և հարկի ամբողջ գումարի հիման վրա կարելի է կատարել որոշ հաշիվներ, որոնք սակայն չեն տա հավանականության մոտ թվեր։

Երևանի բնակիչներից վերցվող այդ կարգի հարկը տարեկան հասնում էր 1724 թուման 5 մինալթունի (ռուսական արծաթ դրամով՝ 6898 ռուբլի)։ Այս հարկը հավաքվում էր ըստ քաղաքի հարկային հասարակություններ, որոնց թիվը Երևանում 5-ն էր՝ երկուսը ադրբեջանական, երեքը՝ հայկական։ Հարկը այդ հասարակությունների մեջ բաշխված էր հետևյալ կերպ.

ա) Քաղաքի մշտաբնակ ադրբեջանցիներից[3]	1200 թուման
բ) Կզըլ-կալա արվարձանում բնակվող ադրբեջանական բնակիչներից .	54 թում. 5 մին.
գ) Մելիք-Սահակին ենթակա հայ բնակիչներից	400 թուման
դ) Յուղբաշի Բարսեղ-Գեղամովին ենթակա բնակիչներից	40 թուման
ե) Կոնդում բնակվող հայ բոշաներից	30 թուման
Ընդամենը . . .	1724 թում. 5 մին[4].

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 967։

[2] Նույն տեղը, էջ 968։

[3] Սկզբնաղբյուրներում առհասարակ «ադրբեջանցի» չի ասված, այլ՝ «թաթարներ» և ավելի հաճախ, կրոնի անունով՝ «մահմեդականներ», «մուսուլմաններ»։

[4] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 968, 1051, տե՛ս նաև Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 158—159։

Քաղաքային բնակիչներից վերցվող այս հարկը բաշխում էին անմիջականորեն հարկատու քաղաքացիներին և նրանցից էլ գանձում՝ տարվա ընթացքում չորս անգամ[1]։ Սա ամենից ծանրն էր Երևանի բնակիչների վրա ընկած ուղղակի հարկերի մեջ, մանավանդ այն բնակիչների համար, որոնք արհեստագործությամբ և առևտրով չէին զբաղվում, ավելի քիչ դրամ ունեին։

Ուղղակի հարկերից երկրորդը պարտադիր դարձած և այնքան շատ տարածված ևվերեներն էին։ Պարսկաստանում, ինչպես գրում է Շոպենը, «նվերները» բաժանվում էին երկու կարգի՝ փեշքեշներ (նվերներ) և ռուշֆաթ (կաշառք)։ Ե՛վ փեշքեշները, և՛ ռուշֆաթները, ըստ էության, ուղղակի հարկեր էին։ Պարսկական պետության բոլոր մասերում, սկսած արքունիքից և վերջացրած ամենահետամնաց գյուղերով, ամենուրեք տարածված էին կաշառքն ու փեշքեշները։ Յուրաքանչյուր ստորադրյալ, իր վերադրին դուր գալու և նրան իր հավատարմությունը ցույց տալու համար, զանազան առիթներով՝ կրոնական տոներին, ծննդյան օրվա կապակցությամբ և այլն տալիս էր նվերներ, իսկ կաշառքները տրվում էին անօրինական գործունեություն սկսելու կամ արդեն գործած հանցանքների համար պատժից խուսափելու նպատակով։ Ընդ որում, կաշառքը հաճախ ներկայացվում էր իբրև փեշքեշ՝ նվեր։ Փեշքեշներն ու կաշառքը այնպիսի գործարքներ էին, որ կատարվում էին անհատ մարդկանց միջև, ամենուրեք և ամեն ժամանակ, հետևապես չկար կարող իմանալ, թե, ասենք, Երևանի խանությունում կամ Երևան քաղաքում այսինչ տարում ինչքան կաշառք կամ նվեր է վերցրել սարդարը, նրա վեզիրը կամ աստիճանավորը, միևնույն է՝ դա անհնար է իմանալ, որովհետև այդպիսիք ոչ մի տեղ չէին արձանագրվում։ Սակայն, այստեղ խոսքը կաշառքի և բոլոր կարգի նվերների մասին չէ, այլ միայն այն նվերների, որոնք պարտադիր էին և սահմանված էին սարդարի կողմից։ Այդպիսի նվերները, իբրև կանոն, սարդարին տրվել են նոր տարվա (նովրուզ բայրամ) օրը։ Նվերները զարդարել են արևելյան ճաշակով և փաթաթել թանկարժեք կտորներով։ Երևանի բնակչությունը յուրաքանչյուր տարի պարտավոր է եղել 100 թուման «նվեր» տալ սարդարին, որից 70 թուման՝ ադրբեջանցիներն են տվել, իսկ 30-ը՝ հայերը[2]։ Քանի որ հարկադիր այս փեշքեշը սովորաբար տրվում էր դրամով, ուստի

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 968։

[2] Նույն տեղը, էջ 974, 1051։

այն կոչվում էր «փեշքեշ-փուլի»։ 100 թուման կազմող փեշքեշ-փուլիից բացի՝ Երևանի բնակիչները պարտավոր էին տարդարին յուրաքանչյուր տարի տալու նաև 60 գլուխ շաքար[1], որը դրամով արտահայտված՝ գործյալ զգալի գումար էր կազմում։

Ուղղակի հարկերի երրորդ տեսակը աշխատավարձի ձևով միրաբին տրվող գումարն էր։ Երևան քաղաքի կողմից իրրև աշխատավարձ միրաբին տարեկան տրվում էր 145 թուման[2]։ Նույն կարգով Երևանի բնակիչները իրենց հաշվին պահում էին 11 ջուվարներ, որոնցից յուրաքանչյուրը տարեկան ստանում էր մինչև 30 թուման[3]։ Ջուվարներին իրրև աշխատավարձ տրվող այդ գումարը, որը հասնում էր մինչև 330 թուման, ոչ մի տեղյուրի կողմից չի հիշատակվում իրրև հարկ, որովհետև այդ համարել են փոխադարձ համաձայնությամբ բնակիչների կողմից իրենց ջուվարներին տրվող սովորական վարձատրություն։ Սակայն, ըստ էության, այդ ևս յուրահատուկ հարկ էր։ Քաղաքի բնակիչների կողմից միրաբին և ջուվարներին տրվող այդ գումարները, միասին վերցրած, տարեկան կազմել են 475 թուման։

Երևան քաղաքի բնակիչներից վերցվող չորրորդ և վերջին տեսակի ուղղակի հարկը բաղարի պահապանների համար վերցվող հարկն էր։ Սկզբնաղբյուրները հաղորդում են, որ Երևանի բնակիչները քաղաքի շուկայում և փողոցներում գիշերները ապահով վիճակ ստեղծելու համար հնուց ի վեր վարձել են հատուկ պահակներ։ Պարսկական սարդարը օգտվելով քաղաքացիների այդ սովորությունից, քաղաքի անվտանգության պահպանման գործը հանձնարարել էր իր մոտ ծառայության մեջ գտնվող մարդկանց և պահպանության դիմաց քաղաքացիների կողմից տըրվող գումարն էլ վերցրել իր օգտին[4]։ Այդ հարկը տարեկան կազմել է 72 թուման[5]։

Ահա հիմնականում այն չորս տեսակի ուղղակի հարկերը, որ բարդվում էին Երևանի քաղաքացիների վրա[6]։ Դրանք, միասին

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 975։

[2] Նույն տեղը, էջ 977։

[3] Гакстгаузен, Закавказский край, ч. I, էջ 168։

[4] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 978։

[5] Նույն տեղը։

[6] Ս. Ա. Եղիազարովը գրում է, որ պարսկական տիրապետության շրջանում մերձքաղաքային վայրերում և իրենց տներին կից բոլոր այգի ունեցողները պետությանը տալիս էին «այգու փող» կոչված («բաղ-փուլի») հատուկ

վերցրած, տարեկան կազմում էին 2371 թուման 5 մինալթուն (որը ռուսական արծաթի դրամով արտահայտված՝ հավասար էր 9486 ռուբլու), առանց այն 60 գլուխ շաքարի, որ ամեն տարի սարդարին էր տրվում փեշքեշների հետ միասին՝ իբրև «շիրնի-փեշքեշ»։

Ուղղակի հարկերի համեմատությամբ անուղղակի հարկերն ու տուրքերը վերին աստիճանի բազմազան են եղել։ Դրանք այնքան շատ էին և դրանց մի մասը այնքան անորոշ էր, որ հազիվ թե հնարավոր լինի նույնիսկ թվարկել այդ բոլորը[1]։ Անուղղակի հարկման էին ենթարկվում բոլոր օբյեկտները՝ խանութները, արհեստանոցները, արհեստով ու առևտրով զբաղվելն առհասարակ, այգիները և այլն։ Դրանցից բացի խանական պաշտոնյաները՝ սկսած խանի քարտուղարներից (միրզաներից) ու ասիկանապետից (դարուղա), վերջացրած շուկայի պետով (բազար-բաշի) ու սուրհանդակներով (յասաուլ), պահվում էին բնակիչներից, այդ թվում և Երևանի բնակիչներից «ղուլուղ փուլի» անվան տակ հավաքվող հարկերի հաշվին[2], առանց պետական գանձարկղին վնաս հասցնելու՝ բնակչության հաշվին բազմաթիվ պետական պաշտոնյաներ պահելու մի շատ հարմար ու ձեռնտու ձև, որն այնքան տարածված էր Պարսկաստանում և Թուրքիայում։ Երևան քաղաքի բնակիչների վրա բարդված անուղղակի այդ հարկերի մասին մենք մասամբ արդեն ստացինք նրա տնտեսական կյանքի՝ արհեստագործության, առևտրի և գյուղատնտեսական զբաղմունքների մասին խոսելիս։ Իրենց տեղերում դրանց մասին նշումներ կատարելը անհրաժեշտ էր, սակայն հարցն ամբողջական ձևով ներկայացնելու համար պահանջվում է նաև ի մի բերել դրանք, որը և կատարում ենք, աշխատելով հնարավորին չափով խուսափ տալ անցանկալի կրկնություններից։

հարկը, որը կազմում էր երբեմն ամբողջ համախառն արտադրանքի 1/11 մասը (С. А. Егиазаров, Исследование по истории учреждений Закавказья, часть II, городские цехи, էջ 248)։ Շոպենի հիշատակության համաձայն, Երևանի խանությունում հայերին պատկանող խաղողի այգիներից վերցնում էին նույնպիսի տուրք, այդ հիմնավորելով նրանով, որ հայերը խաղողի մեծ մասը օգտագործում են գինի պատրաստելու համար (И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 975)։ Սակայն Շոպենի կատարած հաղորդումից երևում է, որ այդ չի վերաբերում Երևան քաղաքին։ Երևան քաղաքի այգեպետեր հայերը այդպիսի առանձին հարկ չեն տվել։ Այստեղի խաղողի և մրգատու այգիներից վերցվող հարկերը մտել են մյուս ընդհանուր հարկերի մեջ։

[1] Լ ե ո, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, 1946, էջ 92։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 976, «Свод законов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. I, ч. 3, էջ 31։

Պարսկական պետությունում պետական եկամտի բոլոր հնարավոր աղբյուրները տալիս էին կապալով: Պարսկական պետության համար դա բնակչությունից ու տնտեսական օբյեկտներից տարբեր եղանակներով միջոցներ կորզելու ամենահարմար և հեշտ ձևն էր[1]: Նույն կարգը գոյություն ուներ և Երևանի խանությունում: Սարդարը ևս խանության եկամտաբեր օբյեկտներն ու աղբյուրները տալիս էր կապալով: Նա առանց «ննղությունն» կրելու, կապալով տալու միջոցով, կարողանում էր հարկման ենթարկել բոլոր օբյեկտները և դրանց կապալագնով հարստացնել սարդարական գանձարանը:

Երևանի խանությունում հարկման ենթակա աղբյուրները բազմաթիվ էին: Դրանց մեջ էին Կողբի աղահանքերը, Սևանի ձկնորսությունը[2], ներքին ու արտաքին առևտրի բոլոր բնագավառները, արհեստագործությունը՝ իր բոլոր ճյուղերով և այլն: Մեզ հետաքրքրում են միայն հարկադրման ենթակա կամ ուղղակի սարդարապատկան այն օբյեկտներն ու եկամտի աղբյուրները, որոնք գտնվում էին Երևանում կամ սերտորեն կապված էին նրա հետ:

Երևան քաղաքում պետությանը ամենամեծ եկամուտ տվողը մաքան էր՝ ռախտարը, որը վերցվում էր և՛ ներմուծվող, և՛ արտահանվող ապրանքներից: Պարսկաստանում գրեթե յուրաքանչյուր քաղաքում և օկրուգում կար մաքսատուն: Երևանի խանությունում արտահանման և ներբերկրյա ծագում ունեցող ապրանքներից մաքս էին գանձում վեց կետում՝ Երևանում, Գառնիբասարում կամ Վեդիբասարում, Շարուրում, Սուրմալուում, Սարդարաբադում և Կարբիբասարում: Բոլոր այդ վեց կետերում գանձվող մաքսը տարեկան տալիս էր 3394 թուման եկամուտ, որից 2500 թումանը բաժին էր ընկնում միայն Երևանին[3]:

Սարդարական եկամտի հաջորդ հատատուն աղբյուրը պետական խանութներն ու կրպակներն էին: Երևանում դրանց թիվը 430 էր, բացի բերդում եղածներից: Պետական բոլոր կրպակները տրվում էին վարձակալությամբ, և դրանցից տարեկան ստացվում էր 1300 թուման եկամուտ: Ընդ որում, այդ գումարից 1260 թումանը բաժին էր ընկնում բուն քաղաքի 430 կրպակներին, իսկ մնացած 40 թումանը ստացվում էր բերդում եղած կրպակներից[4]:

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 979:

[2] Նույն տեղը, էջ 806, 829:

[3] Նույն տեղը, էջ 980, 1055:

[4] Նույն տեղը, էջ 980, 1051:

Զգալի գումարներ էին բերում ներկատները, օճառագործությունը և սպանդանոցները: Երևանի ներկատներից ստացվող եկամուտները տարեկան կազմում էին 300 թուման[1]: Օճառագործությունն անմիջական արտադրական կապի մեջ էր գտնվում սպանդանոցի հետ. առանց վերջինիս կողմից անհրաժեշտ քանակությամբ տըրվող ճարպի, օճառագործությունը չէր կարող գոյություն ունենալ: Որպեսզի իր եկամուտներն ավելի մեծացնի, և օճառագործն էլ մշտապես ունենա պահանջվող ճարպը, սարդարը օճառագործությանն էր կցել քաղաքային մեծ սպանդանոցը և մսի վաճառքը մենաշնորհաբար տրամադրել էր մի մարդու: Սարդարի եկամուտը օճառագործության և քաղաքային մեծ սպանդանոցի կապալից նրա իշխանության վերջին շրջանում տարեկան կազմում էր 1170 թուման: Կապալով էր տրված նաև քաղաքի փոքր սպանդանոցը, որի կապալագինը տարեկան կազմում էր 38 թուման 5 մինալթուն: Այսպիսով, օճառագործությունը և քաղաքի մեծ ու փոքր սպանդանոցները միասին սարդարական գանձարանին տարեկան տալիս էին 1208 թուման 5 մինալթուն եկամուտ[2]:

Պատկառելի գումար էր կազմում Երևանի պետական այգիների կապալագինը: Ի. Շոպենի հիշատակության համաձայն, պարսկական տիրապետության վերջին տարիներին Երևան քաղաքում եղել է պետական 12 այգի, որոնցից սարդարը ստացել է հետևյալ եկամուտները.

Դել-դուշի	այգուց	տարեկան	140 թուման
Թութի-բաշի	»	»	125 »
Կիս-բաղ	»	»	110 »
Բաղչա	»	»	50 »
Գյուլլի-բաղ	»	»	70 »
Կայա-բաշի	»	»	45 »
Վեդիր-բաղ	»	»	75 »
Դաղ-բաշի	»	»	20 »
Յուղբաշի-Քյազիմ	»		45 »
Հաջի-բաբա	»	»	35 »
Միրզա-Ռաբի	»	»	70 »
Բեյուկ-խան	»	»	50 »
Ընդամենը . . .			835 թուման[3]

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 1051:

[2] Նույն տեղը, էջ 851, 981 և 1055. տե՛ս նաև ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 90, գ. 1, թ. 337:

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 981, 1055:

Պետական այգիներից ստացվող եկամուտները դրանով չէին սահմանափակվում։ Սարդարը, նրա բազմանդամ ընտանիքը, բազմահարեմ հարեմը և պալատը միանգամայն ձրիաբար, հսկայական քանակությամբ մրգեղեն էին օգտագործում պետական այգիներից[1]։ Մեր կատարած մոտավոր հաշիվները ցույց են տալիս, որ սարդարի ընտանիքի և նրա հարեմի ու պալատի օգտագործած մրգերը, դրամով արտահայտված, նույնիսկ ավելի են եղել կապալագնից։ Հետևապես, պետական այգիներից ստացվող եկամտի մասին գոնե մոտավոր գաղափար կազմելու համար նշված գումարը պետք է առնվազն կրկնապատկել։ Ընդ որում, հաշիվները կատարելիս պետք է նկատի ունենալ ոչ միայն սարդարի ու նրա պալատի կողմից օգտագործվող մրգի քանակը, այլ նաև տրակը. այդ նպատակի համար տրվում էին ամենաընտիր և բարձրորակ մրգերը, չոկելով դրանք մեծ քանակությունից։

Երևանում կային պետական ջրաղացներ, որոնք նույնպես սրբվում էին կապալով։ Պարսկական տիրապետության վերջին շրջանում Երևանում գտնվող պետական ջրաղացները տարեկան ունեին 540 թուման եկամուտ։ Այդ գումարը ստացվում էր հետևյալ կերպ՝ Դոխկուզ-դայիրման ջրաղացից 180 թուման, Յուղբաշի-Քյաղիմ ջրաղացից՝ 140, իսկ Դարաքենդում գտնվող ջրաղացներից՝ 220 թուման[2]։ Զանգվի վրա գտնվող պետական ջրաղացներից մեկը, որը սարդարը գնել էր իր դրամով, զրաղված էր միայն սարդարի պալատի սպասարկումով[3]։

Եկամտի կարևոր աղբյուր էին Երևանի շուկայում գտնվող մեծ և փոքր կշեռները։ Դրանք նույնպես տրվում էին կապալով և պետությանը տարեկան տալիս էին 715 թուման եկամուտ, որից 500 թուման ստացվում էր մեծ կշեռքի, իսկ 215 թուման՝ փոքր կշեռքի կապալից[4]։

Կշեռքներին գրեթե հավասար եկամուտներ են բերել դարձյալ կապալով տրվող բարավանատները, որոնք վերջին սարդարի օրոք Երևան քաղաքում թվով 5-ն էին և պետական գանձարանին տարեկան տալիս էին հետևյալ չափի եկամուտները.

ա) Դյուրջի քարավանատուն	. . . . .	280 թուման
բ) Հաջի-Ալի »	. . . . .	105 »
գ) Ջուրար »	. . . . .	105 »
դ) Սուղրզ »	. . . . .	105 »
ե) Սուլին »	. . . . .	105 »
Ընդամենը	. . .	700 թուման[1]

Երևանի պետական երկու բաղնիքները տարեկան բերում էին 390 թուման եկամուտ։ Դրանցից մեկը, որ գտնվում էր բերդում և քաղաքի ամենաշքեղ բաղնիքն էր համարվում, սարդարին և Երևանի մզկիթին տարեկան յուրաքանչյուրին տալիս էր 95-ական թուման եկամուտ (երկուսի բաժինը միասին կազմում էր 190 թուման), իսկ երկրորդը, որը կոչվում էր սարդարի կնոջ՝ Հաջի Բեգումի անունով, տարեկան տալիս էր 200 թուման եկամուտ[2]։

Շուկա-հրապարակներից ստացվում էր 348 թուման։ Երևանում կար երկու շուկա-հրապարակ՝ մեծ և փոքր։ Մեծ շուկա-հրապարակում, որը սարդարի զանձարանին տարեկան տալիս էր 180 թուման եկամուտ, վաճառում էին անհրամեքներ, իսկ փոքր շուկա-հրապարակում առք ու վաճառքի էին հանվում անասուններ։ Վերջինիս՝ պետությանը տրվող եկամուտը կազմում էր 168 թուման[3]։

Դրամ հատելու իրավունքը կապալով տրված էր մի անձնավորության։ Պարսկական տիրապետության վերջին տարիներին՝ սարդարական զանձարանին դա տալիս էր տարեկան 300 թուման եկամուտ։ Տարեկան 225 թուման եկամուտ էր ստացվում երկարաճիտ կոշիկների և մաշիկների նալեր պատրաստելուց, որի իրավունքը ամբողջ խանության մեջ տրված էր միայն մի մարդու։ Վերջինս ամեն մի զույգ երկարաճիտ կոշիկների նալից վերցնում էր 6 շահի (12 կոպեկ), իսկ մաշիկների մեկ զույգ նալերից՝ 3 շահի (6 կոպեկ)[4]։

Մեծ չի եղել ակցիզային հարկը։ Երևան քաղաքի շուկայում օղի և գինի վաճառելու իրավունք թույլ տալու համար սարդարը առանում էր տարեկան 80 թուման։ Իսկ ծխախոտի վաճառքից տարեկան առանում էր 72 թուման, որից 60 թուման տալիս էր ծխա-

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 981։
[2] Նույն տեղը, էջ 981, 1055։
[3] Նույն տեղը, էջ 982։
[4] Նույն տեղը, էջ 983, 1051։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 983, 1051։
[2] Նույն տեղը, էջ 983, 1055։
[3] Նույն տեղը, էջ 983։
[4] Նույն տեղը, էջ 983—984, 1055։

խոտը, 12 թումանը՝ քթախոտը։ Կաշիների դրոշմումից սարդարական գանձարանը տարեկան ուներ 50 թուման եկամուտ, իսկ Սավզի-երիի կապալից՝ 20 թուման[1]։

Պատկառելի միջոցներ էին կլանում բնակիչներից՝ ոստիկանապետի աշխատավարձի անվան տակ, *որը տարեկան տալիս էր 819 թուման եկամուտ։ Այդ գումարները բնակիչներից գանձվում էին տարբեր ձևերով և տարբեր անվան տակ։ Այսպես, որպես ոստիկանապետի աշխատավարձ բնակիչներից տարեկան հավաքում էին 54 թուման, նոր տարվա օրը բնակիչները պարտավոր էին նրան նվեր բերել 70 թուման, քաղաքի արհեստավորական և առևտրական խմբերն առանձին-առանձին (բախկալները, հացագործները, մսագործները և այլն) պարտավոր էին նվեր տալ նրան, խանության մահալները ապրանքներով ուղևորվող շարչիները տոմսի համար տալիս էին 4 շահի, իսկ առանց ապրանքների ուղևորվելու դեպքում՝ 2 շահի։ Այդ հարկից միայն ազատվում էին աղի բեռները։ Արտասահման տարվող բեռներից նույնպես վերցնում էին համապատասխան գումար. ամեն մի բեռի համար 7 շահի, բրնձի մեկ բեռից՝ 3 շահի, իսկ աղի մեկ բեռից՝ 4 շահի*[2]։ *Ի. Շոպենը այդ բոլորը թվարկելուց հետո ավելացնում է. «Ոստիկանապետի այլ եկամուտների մասին տեղեկություններ չկան, սակայն հավանական է, որ չարաշահումներ կատարելու համար իշխանությանը բացահայտորեն վճարող և անպատիժ մնալու մեջ վստահ ոստիճանավորը չէր մնում բեռան տակ»*[3]։ *Այլ կերպ ասած, ոստիկանապետը (դարուղան) կատարում էր ամեն տեսակի չարաշահումներ ու անօրինականություններ՝ իր եկամուտներն էլ ավելի մեծացնելու համար, վստահ լինելով, որ իր կողմից կաշառված իշխանությունը չի դիմի որևէ պատժի միջոցի։*

Մոտավորապես դրանք էին պարսկական տիրապետության վերջին շրջանի այն ուղղակի և անուղղակի հարկերն ու տուրքերը, որոնք ընկած էին երևանի բնակչության վրա։ Հարկերի այդ ձղված ցանկն ավելի արտահայտիչ ու ըմբռնելի արտացոլվել է հետևյալ աղյուսակում։

---

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 984, 1055։

[2] Նույն տեղը, էջ 985—986, 1055։

[3] Նույն տեղը, էջ 986։

Պարսկական տիրապետության վերջին շրջանում Երևանի բնակիչներից վերցվող ուղղակի և անուղղակի հարկերը

Աղյուսակ 12

Ուղղակի և անուղղակի հարկերի տեսակներն ու եկամտի այլ աղբյուրները	*Արտահայտված պարսկական դրամական միավորներով*		*Արտահայտված ռուսական դրամական միավորներով*	
	Թուման	*մինալթուն*	*ռուբլի*	*կոպեկ*
Ուղղակի հարկեր				
ա) Քաղաքի բնակչությունից վերցվող բնդհանուր հարկը	1724	5	6898	—
բ) Գարաագիր նվերներ	100	—	400	—
գ) Միրաբի վարձ	145	—	580	—
դ) Ջուլարների վարձ	330	—	1320	—
ե) Քաղաքի պահապանների վարձ	72	—	288	—
Ընդամենը	2371	5	9486	—
Անուղղակի հարկերն ու եկամտի այլ և այլ աղբյուրները				
ա) Մաքս	2500	—	10000	—
բ) Պետական կրպակներից ու խանութներից	1300	—	5200	—
գ) Քաղաքի հրապարակներից	195	—	780	—
դ) Նեբկատներից	300	—	1200	—
ե) Օճառագործությունից և քաղաքի մեծ ու փոքր սպանդանոցներից	1208	5	4834	—
զ) Պետական այգիներից	835	—	3340	—
է) Պետական ջրաղացներից	540	—	2160	—
բ) Մեծ և փոքր կշեռքներից	715	—	2860	—
թ) Քարավանատներից	700	—	2800	—
ժ) Բաղնիքներից	390	—	1560	—
ժա) Շուկա-հրապարակներից	348	—	1392	—
ժբ) Դրամահատությունից	300	—	1200	—
ժգ) Ակցիզ՝ գինու և օղու վաճառքից	80	—	320	—
ժգ) Ակցիզ՝ ծխախոտի վաճառքից	72	—	288	—
ժե) Կաշիները դրոշմանշելուց	50	—	200	—
ժզ) Սավզի-երիի կապալից	20	—	80	—
ժէ) Ոստիկանապետի համար վերցվող գումարներ	819	—	3276	—
Ընդամենը ուղղակի հարկեր	10373	5	41490	—
Ուղղակի և անուղղակի հարկերը միասին վերցրած բնդամենը կազմում էին	12744	—	50976	—

Մեզ հասած աղբյուրների համաձայն սրանք էին այն եկամուտները, որ տարդարը ստանում էր Երևանի բնակիչներից՝ ուղղակի և անուղղակի դրամական հարկերի ու տուրքերի ձևով։ Այժմ հարց կարող է առաջանալ, թե որքանով են ճիշտ արտահայտում այդ թվերը քաղաքային բնակչությունից տարբեր եղանակներով բռնագանձվող հարկերի չափը։ Պետք է ասել, որ այդ թվերը նույնիսկ մոտավոր չափով չեն կարող արտահայտել այն ծանր հարկերն ու տուրքերը, որոնք ընկած էին քաղաքային բնակիչների վրա, որովհետև համապատասխան տվյալների բացակայության պատճառով՝ դրանց մեջ չեն մտել՝ ա) շուկաների, ջրաղացների, այգիների և այլ օբյեկտների ու այլ կարգի դրամական աղբյուրների կապալադնից ավելի գանձվող այն միջոցները, որոնք մնում էին մենավաճառողներին, իսկ այդ միջոցները հավանաբար կապալավարձից պակաս չէին, բ) ոստիկանապետի և պետական այլ պաշտոնյաների կողմից չարաշահման ճանապարհով բնակչությունից խլվող դրամական միջոցներն ու անօրինական վիշքիշները, գ) տարդարի, նրա բնտանիքի, հարեմի և պալատի կողմից օգտագործելու համար պետական այգիներից ու բանջարանոցներից վերցվող մրգեղենն ու բանջարեղենը, որոնք հասնում էին մեծ չափերի, դ) կաշառքները, տարդարին տարեկան տրվող 60 դուխ շաքարը, ե) խանական բարձրաստիճան մյուս ծառայողների, ինչպես և բարձրադիր աղնվականների կողմից անօրինական ճանապարհներով խլվող միջոցները, զ) եկեղեցիներին ու մզկիթներին տրվող հարկերն ու պարտադիր աշխատանքները, որոնց մասին մի քանի խոսք կասվի քիչ հետո։ Սակայն նշված հանրագումարային թվերի մեջ մտել են և այնպիսի գումարներ, որոնք բռնագանձվում էին ոչ միայն Երևանի բնակիչներից, այլև խանության մահալներից և հարևան շրջաններից ու երկրներից եկող վաճառականներից ու այլ կարգի մարդկանցից։ Այսպես, օրինակ՝ Երևանում ստացված մաքսը միայն Երևանի վաճառականներից չէր վերցվում, դրա մի մասը տալիս էին այլ տեղից եկող ու գնացող վաճառականները։ Նույնպիսի բնույթի էին նաև մյուս անուղղակի հարկերը, որոնց մի մասը ևս ստացվում էր ոչ քաղաքաբնակներից։ Բացառություն էին կազմում միայն ուղղակի հարկերը։ Սրանք ամբողջապես բռնագանձվում էին քաղաքի հարկատու բնակչությունից։ Մեր ձեռքի տակ եղած տվյալները, սակայն, ցույց են տալիս, որ հաշվարկի մեջ չմտած գումարներն անհամեմատ ավելի մեծ թիվ էին կազմում, քան այն գումարները, որոնք ստացվում էին ոչ երևանարնակ բնակիչներից, որոնք սակայն հաշվված են սրա անուղղակի հարկերի մեջ։ Եթե նույնիսկ այդ երկու կարգի գումարները

համարենք իրար հավասար և ընդունենք, որ Երևանի բնակչությունից դանազան եղանակներով բռնագանձվող հարկերի գումարը (առանց հարկադիր աշխատանքների և եկեղեցուն ու մզկիթներին տրվող հարկերի) հավասար է միայն 12 549 թումանի (50 196 ռուբլի), ապա մոտավոր և կոպիտ հաշվումներով ստացվում է, որ Երևանի յուրաքանչյուր հարկատու մարդուց, սևագործ բանվորի աշխատավարձով հաշված, պետությունը տարեկան վնցնում էր 3—4 ամսվա աշխատավարձ, իսկ դա գալիս է ասելու, որ քաղաքային բնակչության հարկերի ծանրությունը գյուղական բնակչության հարկերից՝ շատ չնչին տարբերություն ուներ։ Ս. Ա. Եղիազարովը գրում է, թե, քանի որ այդ ժամանակվա Պարսկաստանում և Անդրկովկասում քաղաքի և գյուղի միջև գոյություն չուներ խիստ տարբերություն, ապա քաղաքային բնակչությունը էապես կրում էր այնպիսի հարկեր ու պարհակներ, ինչպիսիք գյուղականը։ Տարբերությունը, եթե այդպիսին էլ գոյություն ուներ, վերաբերում էր տուրքադրման օբյեկտներին. հարկային ծանրության տեսակետից այն սկզբունքային տարբերություն չուներ[1]։

Եվ իրոք, չնայած Երևանի բնակչությունն ազատված էր բնատուրքային հարկերից, սակայն դրամական տուրքերն այնքան մեծ էին, որ քաղաքացու տուրքերը ընդհանուր առմամբ շատ քիչ էին տարբերվում գյուղական բնակչությունից գանձվող հարկերից ու տուրքերից։ Այդ շատ պարզ կերպով երևում է հետևյալ թվերից։ Այսպես, եթե ամբողջ Երևանի խանությունից գանձվող պետական դրամական ուղղակի և անուղղակի հարկերը կազմում էին 39 709 թումանի[2] 2 մինալթուն 12½ շահի (ռուսական դրամով՝ 158 837 ռուբլի)[3], ապա դրանից միայն Երևանին բաժին էր ընկնում 12 414 թումանի (ռուսական դրամով՝ 49 656 ռ.)[4], չհաշված քաղաքի 11 ջուվարներին իբրև վարձատրություն տրվող 330 թումանը։ Այդ այն դեպքում, երբ ամբողջ Երևանի խանության հարկատու բնակիչների

---

1 С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 247։

2 Ներսես արքեպիսկոպոսի (վերջում կաթողիկոս) տվյալներով Երևանի տարդարի գանձած դրամական և բնամթերային բոլոր տուրքերը, միասին արտահայտված, Երևանի թումանով կազմում էին 114 633 թուման (ռուսական արծաթ դրամով՝ 458 532 ռ.) (տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 1, թ. 80), իսկ Շուշիի տվյալներով՝ 653 150 ռուբլի (Исторический памятник Армянской области, էջ 1135—1136)։

3 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 986։

4 Նույն տեղը, էջ 477, 1135—1136։

թիվը հասնում էր մոտավորապես 80 000-ի, իսկ Երևան քաղաքի հարկատու բնակչության թիվը մոտավորապես 10 000 էր։ Այլ կերպ ասած, Երևանի հարկատու բնակչությունը կազմում էր ամբողջ խանության հարկատու բնակչության մոտ $^1/_8$ մասը, սակայն տալիս էր պետական դրամական հարկերի և տուրքերի ավելի քան 31,3%-ը։ Այսպիսով, եթե Երևանի բնակչությունը աղատված էր բնամթերային տուրքերից, ապա դա ամենևին էլ չէր նշանակում, որ նրանից գանձվող պետական հարկերը քիչ էին՝ գյուղական բնակչությունից գանձվող հարկերի նկատմամբ։ Երևանի բնակչությունից գանձվող դրամական հարկերն ու տուրքերն այնքան շատ էին, որ դրանք հաբարերականորեն, վերջին հաշվով, գրեթե հավասարվում էին գյուղական բնակիչներից գանձվող դրամական ու բնամթերային հարկերին ու տուրքերին։

Պետական տուրքերի մեջ նշանակալի տեղ էին գրավում **աշխատավճարային, այսինքն՝ պարտադիր պարեհակները**։ Երևան քաղաքի հարկատու բնակիչների վրա շատ ծանր էին նստում պարհակները, մանավանդ այն պատճառով, որ դրանք կատարվում էին այգեգործական և գյուղատնտեսական այլ աշխատանքների հուն պահերին։ Գյուղատնտեսական զբաղմունքների մասին խոսելիս մենք տեսանք, որ Երևանի բնակչությունը քաղաքի շրջակայքի գյուղերի բնակչության հետ միասին, հավասար հարկադիր աշխատանքներ էր կատարում սարդարի համար։ Նրանք մշակում էին սարդարի այգիները, անց էին կացնում ոռոգման առուներ, կառուցում ամբարտակներ, կամուրջներ և այլն։ Ի. Շոպենի հիշատակության համաձայն, սարդարապատկան միայն Սավզիերիի բանջարանոցը մշակելու համար քաղաքը պարտավոր էր տարեկան տալ մինչև 400 մարդ[1], իսկ պետական այգիների մշակումը, ինչպես տեսանք, պահանջում էր ավելի մեծ թվով բանվորական ձեռքեր, որոնց մի զգալի մասը հարկադիր հղանակով տալիս էր քաղաքային բնակչությունը[2]։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 984։

[2] Ըստ Ջեմս Մորիերի հիշատակության, որը վերաբերում է XIX դարի երկրորդ տասնամյակին, Երևանի խանության ամբողջ բնակչության թիվը հասել է 100 հազարի (տե՛ս Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, էջ 324), իսկ ըստ 1829/32 թթ. կամերալ ցուցակագրման՝ 17 հազար բնտանիքի (տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 542), կամ մոտ 85 000 բնակչի, յուրաքանչյուր բնտանիքը միջին թվով հաշվելով 5 շնչից բաղկացած։

Հարկադրման և պարհակների ենթակա էին քաղաքի ռանջպարները, այգեպահները, առևտրականները և արհեստավորները։ Հարկերից և պարհակներից աղատ էին միայն թարխաններն ու ոչ մեծ թվով հարուստ վաճառականները[1] սովդաքյարները։

Հարկերի նշանակումն ու գանձումը Երևանում ուներ այնպիսի կարգ, ինչպիսին գոյություն ուներ ամբողջ Պարսկաստանում։ Արևելյան պետություններում, որոնց թվում նաև Պարսկաստանում, և՛ գյուղական, և՛ քաղաքային բնակչության հարկերն ու տուրքերը իրենց մեջ համեմատաբար ճիշտ բաշխելու և դրանով իսկ այն որոշ չափով տանելի դարձնելու համար՝ համայնքների ներսում խմբավորվել էին ավելի փոքր միավորներ, որոնց նպատակը նույնպես հարկերն ու տուրքերը թեթևացնելը, տանելի դարձնելն էր։ Քաղաքում համեմատաբար մեծ համայնքների ներսում այդպիսի փոքր խմբավորումներ կազմելու հիմքը արհեստը կամ այլ կարգի զբաղմունքն էր։ Քաղաքներում, այդ թվում և Երևանում, արհեստավորների ու առևտրականների այդպիսի մանր խմբավորումները, որոնք կոչվում էին համքարություններ և գոյություն ունեին վաղուց, ծառայում էին իբրև հարկային միավորներ։ Պարսկական պետությունը, որոշակի գումարի հարկ նշանակելով քաղաքի մեծ համայնքներին, դրանց տվագներից (մելիքներից, բեկերից) էլ գումարով պահանջում էր այն, առանց խառնվելու համայնքի ներսում հարկերի ու տուրքերի նշանակման և հավաքման գործին[2]։ Երևանի սարդարները պետական հարկերը նշանակում էին ըստ քաղաքի չորս համայնքների, որոնցից երկուսը կազմում էին ադրբեջանցիները, երկուսը՝ հայերը[3], չհաշված Կոնդի հայ բոշաներին, որոնք հարկային առումով, ըստ երևույթին, ենթարկվում էին հայկական այդ երկու համայնքներից որևէ մեկի մելիքին։ Մելիքներն ու բեկերը իրենց տնօրինության ներքո գտնվող համայնքների հարկերը համքարությունների գլխավոր վարպետների մասնակցությամբ բաշխում էին ըստ համքարությունների։ Իսկ վերջինիս ներսում համքարության վրա դրված հարկը նրա անդամների վրա բաշխելու

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть I, гл. I и VII, часть II, городские цехи, Казань, 1889, էջ 251—252։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 268, С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 238։

[3] Ն. Շահազիզ, Հին Երևանը, էջ 60։

համար գլխավոր վարպետի ղեկավարությամբ գումարվում էր համքարության ընդհանուր ժողով: Ընդհանուր ժողովը ամբողջ հարկը բաշխում էր ըստ համքարության անդամների, որոնք տարին երկու նվագով իրենց հարկերը տալիս էին համքարության գլխավոր վարպետին, ում էլ՝ ամբողջը գումարելով, հանձնում էր մելիքին կամ բեկին, վերջինս էլ՝ այդ եղանակով ամբողջ համայնքի հարկը հավաքելուց հետո՝ հանձնում էր պետական գանձարանին: Բացառված չէին նաև այն դեպքերը, երբ խանական պաշտոնյաները հարկերի ու տուրքերի գծով անմիջական գործ ունեին ոչ թե մելիքի կամ բեկի հետ, այլ համքարական ընկերությունների ղեկավարների: Երկու դեպքում էլ կարգը ըստ էության նույնն էր. սարդարը և նրա պաշտոնյաները, առանց «ընդունյան ու գլխացավանքի», արտադրական այդ մանր խմբերի ղեկավարների միջոցով, առանց գումարներ ծախսելու և հատուկ պաշտոնյաներ պահելու, բռնագանձում էին պետական հարկերը: Իրև հարկային միավոր հանդես էր գալիս համքարությունը, որը «կանգնած էր պետության ու անձի միջև..., համքարական վարպետը ճանաչում էր իր համքարության գլխավորին, վաճառականը՝ վաճառականության գլխավորին և այլն»[1]: Հարկերի թեթևացման, կարգի փոխման, պարհակների և այլ հարցերով կառավարությանը դիմում էին ոչ թե անհատ հարկատուները, այլ համքարությունները[2]:

Դրամական հարկերի նշանակման և գանձման նման՝ պարհակները նույնպես բաշխվում էին ըստ համայնքների և համքարությունների: Յուրաքանչյուր անհատի կատարելիք հարկադիր աշխատանքի չափը և հերթը դարձյալ որոշվում էր համքարության ընդհանուր ժողովներում[3]:

Անուղղակի հարկերի գանձումը միանգամայն այլ ձևով էր կատարվում: Դրանք բոլորը տրվում էին կապալով: Կապալառուն պետական ունեցվածքից, առևտրից և այլ բնագավառներից սահմանված գումարները ինքն էր հավաքում և հանձնում սարդարական գանձարկղին: Չնայած անուղղակի հարկերի ու մուծումների համար սահմանված էին որոշ նորմաներ (մաքսի, քարավանատներից, շուկա-հրապարակներից, պետական խանութներից օգտվելու, օճառագործությամբ զբաղվելու և այլն), սակայն կապալային ձևը շատ հաճախ անտեսում էր այդ նորմաները: Կապալառուն աշխատում էր, որքան կարելի է, շատ բռնագանձել, որպեսզի կապալագինը վճարելուց հետո՝ ավելի մեծ գումարներ մնան իրեն: Այս եղանակով անուղղակի հարկերը մինչև ամսիջական գանձողներին հասնելը մեծապես ավելանում էին[4]: Այնպես որ, սահմանված նորմաները միայն կողմնորոշիչ նշանակություն ունեին և խախտվում էին ամենուրեք:

Պետական հարկերով և պարհակներով չէին սահմանափակվում բնակչության վրա բարդված պարտականությունները: Բնակչությունից ուղղակի և անուղղակի եղանակներով ևսկայական միջոցներ ու աշխատանք էր կլանում նաև իրիսոնեական և մահմեդական հոգևորականությունը: Շոպենի հաղորդած տվյալներով, պարսկական տիրապետության շրջանում հայ լուսավորչական բնակչությունից էջմիածնի բռնագանձած դրամական տուրքը որոշակի չափ չուներ[2], հոգևոր տերերը բնակչությունից հավաքում էին այնքան, ինչքան հնարավոր էր: Բայց և այնպես, դրամական այդ տուրքը ամեն մի ընտանիքին բաժին էր ընկնում 1½ թումանի (ռուսական դրամով՝ 6 ռուբլի)[3]: Դրանից բացի, դյուղական բնակչությունը պարտավոր էր վանքին հանձնել իր ստացած բերքի ½₀ մասը, որոշ վարձատրությամբ աշխատավոր ձեռքեր տրամադրել և անվճար կերպով սայլեր տալ հացահատիկը, խոտը և այլ արդյունքները վանքապատկան դաշտերից տեղափոխելու համար: Հնձի ժամանակ յուրաքանչյուր դյուղական ընտանիք պարտավոր էր փորահացի կարգով՝ մեկական հնձվոր տրամադրելու վանքի բերքը հավաքելու համար[4]:

Նշվածներից երևան քաղաքի բնակիչները տալիս էին միայն իրենց բաժին ընկնող դրամական տուրքը: Ըստ երևույթին, քաղաքի բնակիչները վանքին բնամթերային տուրք չէին տալիս, նրա համար հարկադիր աշխատանք չէին կատարում: Դրամական տուրքը բաշխված էր ըստ քաղաքի հայաբնակ երկու թաղամասերի (Շահար և Կոնդ) և քաղաքին կից դտնվող Նորք դյուղի[5]: Սակայն քա-

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 252—253:

[2] Նույն տեղը, էջ 253:

[3] Ю. Ахвердов, Тифлисские амкары, էջ 9:

[1] Х. Г. Гуланян, Очерки истории армянской экономической мысли XIX века, էջ 9:

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 681:

[3] Նույն տեղը:

[4] Նույն տեղը, էջ 681—682:

[5] ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 52, վավերագիր 336, թ. 3—4:

ղաքային բնակչությունը վանքից չէր փրկվում միայն դրամական ուղղակի հարկը վճարելով։ Մենք տեսանք, որ քաղաքի հայկական բոլոր համքարությունները զանազան նվերներ էին տալիս եկեղեցիներին, կատարում էին ողջարերություններ, նվիրատվություններ, քաղաքում զանազան հաստակներով էջմիածնին և այլ վանքերին էին անցնում այգիներ, բանջարանոցներ, ջրաղացներ և այլն։ Եկեղեցիները եկամուտներ էին ստանում նաև պսակադրումից, թաղումից, համքարություններում վարպետներ օծելուց և այլ արարողություններից։

Ուղղակի և անուղղակի զանազան հարկեր էին բարդված նաև մահմեդական բնակչության վրա մահմեդական հոգևորականության կողմից։ Մահմեդական հոգևորականության եկամուտի հիմնական աղբյուրներն էին մզկիթապատկան (վակիֆ) անժառանգ մնացած և նրանց կտակված ունեցվածքներից ստացվող եկամուտները, ամուսնության, թլպատման, թաղման, ապահարզանի համար տրվող գումարները, թալիսմանների, վկայագրերի և փաստաթղթերի համար կատարվող մուծումները, ինչպես և տասանորդ կոչվող տուրքը, որը վերջին ժամանակներում ոչ թե հավաքվել է մի տեղ և հավասար բաշխվել հոգևորականների միջև, ինչպես անում էին ավելի վաղ ժամանակներում, այլ յուրաքանչյուր հարկատու իր այդ տուրքը տալիս էր այն մոլլային կամ ախունդին, որը «նրան ավելի շատ է հարգանք ներշնչում»[1]։ Երևան քաղաքի մահմեդական բնակչությունը պարտավոր էր տալ այդ բոլոր հարկերն ու տուրքերը։ Ըստ երևույթին, նրանք ազատված են եղել միայն տասանորդից։ Մզկիթներն էլ քրիստոնեական եկեղեցիների նման ունեցել են նշվածներից բացի եկամտի այլ և այլ աղբյուրներ։ Մահմեդական հոգևորականության և աշխարհականների միջև այնպիսի խիստ սահման չի եղել, ինչպիսին կար քրիստոնեական հոգևորականության և աշխարհականների միջև։ Նրանցից շատերը՝ հատկապես սեիդները Երևանում մասնակցում էին առևտրին, արհեստագործությանը, իսկ մահալներում զբաղվում էին նույնիսկ երկրագործությամբ[2]։

Մահմեդական հոգևորականությունը քրիստոնեականից ավելի արտոնյալ վիճակում էր գտնվում։ Նա ազատված էր պետական

2 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 697—698։

2 Նույն տեղը, էջ 698—699, АКАК, т. VII, էջ 432, № 373։

բոլոր կարգի հարկերից ու տուրքերից, նրա առանձին ներկայացուցիչները, որոնք մեծ ազդեցություն ունեին հասարակության մեջ, պետության կողմից վարձատրվում էին դրամով կամ տոնում որևէ գյուղ՝ մյուլքի կամ թիուլի իրավունքներով[1]։

Այսպիսով՝ դարը, շատ դառն է եղել Երևանի աշխատավոր բնակչության վիճակը պարսկական տիրապետության շրջանում։ Սարդարն իր ծանր հարկային քաղաքականությամբ և առևտրի բնագավառում մենաշնորհ կերպով գործելով[2], խանական պաշտոնյաներն իրենց կամայականություններով ու օրինազանցություններով, մահմեդական և քրիստոնեական հոգևորականությունն իր անկշռում պահանջներով կատարյալ պատուհաս էին դարձել քաղաքի աշխատավոր բնակչության համար և նրան հասցրել աղքատության դուռը։ Երևանի արհեստավորը, մանր առևտրականը, այգեգործը տնտեսապես անապահով վիճակում էր, նրա պահանջները սահմանափակ էին, շատ դեպքերում կարիքը ուղղակի հալումաշ էր անում նրան։ Քաղաքում դեռևս իր գոյությունը պահպանած նահապետական կյանքի պայմանները և դրանց հետևանքը հանդիսացող ժողովրդի սահմանափակ պահանջները միայն հիմք դարձնելով՝ պնդել, թե պարսկական տիրապետության շրջանի Երևանում «դառն չքավորություն չի եղել[3]», ինչպես արել է Երվանդ Շահազիզը, նշանակում է մեղանչել պատմական ճշմարտության առաջ։

Երևանի բնակչությունից բռնագանձվող հարկերի ու տուրքերի չափից ու երկար ցուցակից, հարկադիր աշխատանքների բնույթից ու քանակից, հոգևորականությանը տրվող հարկերից երևում է, որ պարսկական տիրապետության շրջանի Երևանի քաղաքացիներն իրենց նյութական դրությամբ և նույնիսկ իրավական վիճակով գրեթե չէին տարբերվում գյուղացիությունից, իսկ վերջինիս դրությունը անհուսալի ողորմելի էր։ Ահռելս որ, վերջին սարդար Հուսեյն-Ղուլի խանի սպառնալիքը, թե ինքը գյուղացիությանը կհասցնի «այնպիսի դրության, երբ յուրաքանչյուր յոթ ընտանիք կուտեն մեկ և այն էլ ծակ ամանից[4]», գրեթե լիովին վերաբերում է նաև Երևանի աշխատավոր հայ և ադրբեջանցի բնակչությանը։

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 697։

2 АКАК, т. VII, էջ 493, № 446։

3 Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 52։

4 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 13։

Արտոնյալ դասերի և աշխատավորների կյանքի պայմանները կատարյալ հակադրություն էին ներկայացնում։ Եթե աշխատավոր բնակչությունը դառը քրտինք թափելով, հազիվ էր քարշ տալիս իր ապրուստը, ապա նրա վաստակի հաշվին խաները, աղալարները, բեկերը, մելիքներն ապրում էին արևելյան շռայլությամբ և օժտված էին զանազան արտոնություններով։ Նրանք, ինչպես և մահմեդական հոգևորականությունը, ազատված էին պետական հարկերից ու պարհակներից։ Մանր առևտրականների ու արհեստավորների համեմատությամբ արտոնյալ էր նաև խոշոր վաճառականությունը՝ առվտրաչարները, որոնք նույնպես ազատված էին հարկերից ու պարհակներից. նրանք, մաքսից բացի, որևէ այլ հարկ չէին տալիս[1]։ Հասարակության արտոնյալ խմբերի ներկայացուցիչները՝ աղալարները, բեկերը և ուրիշներ իրավունք ունեին դինվորական ծառայություն կատարել սպրդարի զորքերում։ Նրանք, իբրև վարձատրություն իրենց կատարած ծառայության, սարդարի կողմից թիուլի իրավունքներով ստանում էին գյուղեր, իրավունք ունեին կառավարել վերցնելու հողեր և այլ կալվածքներ[2]։

Աղնվականության դասին պատկանում էին աղալարները, բեկերը (ադրբեջանցի, հայ, պարսիկ), բեկզադեները և մելիքները[3]։ Երևանում, ինչպես տեսանք, կային նաև խաներ։ Խան տիտղոսը Երևանի և Նախիջևանի խանություններում պատվավոր տիտղոս էր, որը ժառանգաբար չէր անցնում և «տիրողի», «իշխողի» իմաստ չուներ, ինչպիսին էին մյուս խանությունների խաները[4]։

Երևանի մելիքները, իբրև ժառանգական աղնվականներ, մեծ արտոնություններ ունեին և հասարակության մեջ՝ բարձր դիրք։ Վերջին սարդարների ժամանակ Երևանում հատկապես աչքի ընկնող դեր էին խաղում մելիքական երկու ընտանիք՝ Մելիք-Ադամալյան և Գեղամյան ընտանիքները։ Դրանցից առաջինը, որն ավելի զորեղ էր, ապրում էր Կոնդում։ Այստեղ Մելիք-Ադամալյաններն ունեին իրենց շքեղ ապարանքը։ Վերջին սարդարի օրոք Մելիք-

[1] АКАК, т. VII, էջ 428, 430, № 373, С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 9, С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. I, Тифлис, 1907, էջ 610, «Կռունկ Հայոց աշխարհին» (ամսագիր) Թիֆլիս, 1862 թ., № 1, էջ 26։

[2] АКАК т. VII, էջ 430, № 373։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը։ Տե՛ս նաև С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. I, էջ 610։

Ադամալյան տոհմի հայտնի ներկայացուցիչն էր Մելիք-Սահակը, որն ունեցել է մեծ ազդեցություն և բարձր դիրք։ Հաքստհաուզենի նկարագրությունից երևում է, որ Մելիք-Սահակը կատարյալ իշխանավոր էր, մեծ կալվածքների տեր, շրջապատված բազմաթիվ ծառաներով. նա հատուկ արտոնություններ ուներ պարսից կառավարությունից և ամբողջ խանության ամենաազդեցիկ մարդկանցից մեկն էր համարվում։ Հաքստհաուզենի ասելով, «երբ որ երևում էր նա երևելի պարսիկի շորերով (որ բոլոր հայերի մեջ միայն նա կարող էր հագնել), երկայն թևավոր ծիրանի վերարկուով..., նստած Դաղստանի գեղեցիկ ձիու վրա, շրջապատված իր ծառաներով, այն ժամանակ ամենայն հայ ընդունում էր նրան որպես յուր իշխանին...։ Ինքն՝ շահը ճանաչում էր նրան ինչպես յուր հավատարմագույն հպատակներից մեկը, այս պատճառով նրա ազդեցությունը մեծ էր ամենայն տեղ. Երևանում այս կողմանե միայն սարդարը նրանից վեր էր»[1]։

Մելիք-Սահակին թիուլական իրավունքով պատկանում էին էլար գյուղի մի մասը և Արղաքյանդ (Արզական), Դալլար ու Գյումեշ գյուղերը։

Նույնպիսի իրավունքներով էր օժտված և Գեղամյան ընտանիքը, որը նույնպես հին հայկական իշխանական տների շառավիղներից էր։ Վերջին սարդարի օրոք այս տան մելիքը Բարսեղն էր, որը թիուլական իրավունքով Բջնի մեծ գյուղի տերն էր։

Վերջին սարդարի ժամանակ Երևանի հայ բնակչությունը անմիջապես ենթարկվում էր այդ երկու մելիքներին։ Նրանցից առաջինի տեսչության ներքո գտնվում էր քաղաքի հայ բնակչության մեծագույն մասը, իսկ նրա փոքր մասը ենթարկված էր Բարսեղ Գեղամյանին։

Եղած պատմական աղբյուրները ցույց են տալիս, որ նախկինում մելիքների իրավունքները ավելի մեծ և իշխանական են եղել։ Նրանց ազդեցությունը տարածվել է ոչ միայն քաղաքի, այլև շրջակայքի գյուղերի հայ բնակիչների վրա։ Երևանի խանության հայկական գյուղերից յուրաքանչյուրը որոշ գումարի հարկ է վճարել նրանց, նրանք ունեցել են դատական մեծ իրավունքներ, կատարել են դատական բոլոր կարգի վճիռներ, բացառությամբ մահվան պատժի, որը իրավասու էր կատարել միայն սարդարը[2]։ Հետա-

[1] Տե՛ս «Կռունկ Հայոց աշխարհին» (ամսագիր), Թիֆլիս, 1862, էջ 26։

[2] Տե՛ս Гакстгаузен, Закавказский край, ч. I, ինչպես նաև՝ Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 67—68։

գայում սարդարները քայլ առ քայլ նեղացրել են տեղական իշխողների այդ արտոնություններն ու իրավունքները և հասցրել նվազագույնի։ Այնուամենայնիվ, նույնիսկ վերջին սարդարի ժամանակներում Երևանի հայ մելիքները պահպանում էին իրենց իրավունքները։ Նրանք ժառանգական աղնվականներ էին, ազատված ամեն կարգի հարկերից ու պարհակներից։ Նրանցից յուրաքանչյուրն իր տնօրության տակ գտնվող հայ հասարակության և պետության միջանկյալ օղակն էր։ Մելիքն էր բաշխում պետական հարկը ըստ հարկային մանր միավորների և հսկում այն՝ ժամանակին հավաքելու համար, նա էր վճռում իր ավագության ներքո գտնվող հասարակության մեջ ծագած վեճերը, հետևում իր թաղամասի ներքին կարգ ու կանոնին և այլն[1]։ Նույնպիսի իրավունքներ և դիրք ունեին նաև մահմեդական աղնվականները՝ աղալարները, բեկերը և բեկզադեները։ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո ցարական կառավարությունը, տեղում իր համար հուսալի հենարան ստեղծելու նպատակով, պահպանեց հայ և այլազգի բոլոր աղնվականների արտոնություններն ու իրավունքները[2]։

Սոցիալական և տնտեսական առումով իրար հակադիր այդ պիսի երկու խմբի էր բաժանված պարսկական տիրապետության վերջին շրջանի Երևանը։ Հասարակության այդ երկու խմբերի շահերն ամենուրեք բախվում էին։ Աշխատավոր բնակչության զանգվածներում դասակարգային բարձր գիտակցություն ունեցող դասակարգի՝ պրոլետարիատի բացակայության պատճառով դասակարգային պայքարն էլ իր բացահայտ ձևերով հանդես չէր գալիս։ Սակայն այն ամենևին մեզ թույլ չի տալիս ասելու, որ հին Երևանում «չի եղել հասարակաց կյանք և... աշխարհիկ մտավոր շարժում»[3], ինչպես փորձում է ներկայացնել Երվանդ Շահազիզը։ Նա ուղղակի գրում է. «(Հին Երևանում — Թ. Հ.) ամեն մի մարդ զբաղված է եղել յուր գործով և մտահոգված յուր օրվա պարենը հայթայթելու մտածողությամբ։ Սարդարը, նրա մերձավորները, աստիճանավորությունը, ազնվականությունը և խոջայությունը վարել են անհոգ կյանք և վայելել կյանքի բարիքները արևելյան ճոխությամբ, իսկ բնակչության մյուս մասը, խոշոր զանգվածը, չարքաշ աշխատանքով վաստակել է յուր օրվա ապրուստը և հրուհնազանդ է եղել տիրող կարգ ու կանոնին, անտրտունջ կատարել իշխանավորների պահանջը, համակերպվելով նրանց գամայականությանը և ժամանակի ընթացքում մշակելով յուր համար մի կյանքի եղանակ, մի մոդուս վիվենդի (modus vivendi), որ հնարավորություն է տվել նրան ապրելու, ինչպես ասվում է, աչքն յուր դրանը»[1]։

Պատմական իրականության նկատմամբ մեղանչելու մի ակընհայտ օրինակ է սա։ Ավելին, պարսկական ծանր տիրապետության, նրա սատրապի՝ սարդարի բռնությունների ու կամայականությունների նկատմամբ Արևելյան Հայաստանի և հատկապես Երևանի բնակչության, նրա առաջավոր ներկայացուցիչների՝ Աբովյանի, Թաղիադյանի, նրա շրջակայքի գյուղերի աղասիների ըմբոստացումները չտեսնելը և օտարի ծանր լծի տակ հեծող բնակչությունը այդ լծին «հրու-հնազանդ» ներկայացնելը պետք է համարել եղած իրականության գռեհկացում։ Տարօրինակ է, որ հարգելի հեղինակը այլ տեղերում խոսում է Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի մասին և ճիշտ կերպով այն ներկայացնում որպես պարսկական տիրապետության դեմ ըմբոստացող ժողովրդի պայքարի գեղարվեստական վերարտադրություն, իսկ այստեղ նույն ժողովրդին ներկայացնում՝ իբրև «իշխանավորների պահանջը» անտրտունջ կատարողներ, սարդարական լծի նկատմամբ «հրու-հնազանդ», «աչքն յուր դրանը» ապրող։

Հաղիվ թե հարկ կա բանավիճելու Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» երկը հենց արտահայտում է ամբողջ մի ժողովրդի ատելությունը և նրա ըմբոստացումը օտար բռնակալների դեմ։ Թաղիադյանի հայտնի նամակը Երևանի ազատագրման առթիվ նույնպես արտահայտություններ է իր ազատագրության համար պայքարող ժողովրդի իղձերի։ Մի՞թե ռուս-պարսկական պատերազմներին հայերի ու ադրբեջանցիների այնքան ակտիվ մասնակցությունն ու նրանց կատարած անօրինակ խիզախությունները «հրու-հնազանդ»-ության նշաններ են և ոչ թե՝ պայքարի և ազատատենչության։ Վերջապես, հենց իր՝ Երվանդ Շահազիզի պատմական աղբյուրներից բերած այն տեղեկությունը, ըստ որի՝ XVII դարի քառասնական թվականներին Երևանի հայ և ադրբեջանցի բնակիչները, ինչպես և բերդապահ զինվորները, ըմբոստանալով դաժան Մահմուդ խանի դեմ, շահի միջոցով կարողացել են փոխել տալ նրան[2], չի գալիս հերքելու իրեն։ Չէ որ վերջինս պարսկական

[1] ԱԿԱԿ, т. VII, էջ 430, № 373։ «Կոռնակ Հայոց աշխարհին» (ամսագիր), 1862, № 1, էջ 26—27, Ե. Շ ա հ ա զ ի զ, Հին Երևանը, էջ 67—68, 77—78։

[2] ԱԿԱԿ, т. VII, էջ 430, № 373։

[3] Ե. Շ ա հ ա զ ի զ, Հին Երևանը, էջ 51։

[1] Ե. Շ ա հ ա զ ի զ, Հին Երևանը, էջ 51—52։

[2] Նույն տեղը, էջ 100։

տիրապետության դեմ հայ և ադրբեջանցի բնակչության համատեղ պայքարի ամենահայտնի օրինակներից մեկը կարող է լինել:

Միանգամայն անընդունելի է Երվանդ Շահազիզի նաև այն կարծիքը, որ նա արտահայտել է Երևանի հայ բնակչության և մելիքների միջև եղած հարաբերությունների վերաբերյալ: Նա հետևյալ կերպ է բնութագրում այդ փոխհարաբերությունները. «Թե ի՞նչ հարաբերության մեջ են գտնվել հասարակությունները իրենց մելիքների հետ, մենք դժվարանում ենք այստեղ ճշտիվ սահմանել, քանի որ հին ժամանակներից վավերականներ այդ մասին մեր ձեռքը չեն հասել: Մենք միայն կարող ենք այսքանը ասել, որ երեսունյոթ հարգանք ու պատիվ են մատուցել իրենց մելիքներին, հյու-հնազանդ են գտնվել նրանց խրատներին ու պատվերներին, նրանց դեկավարությամբ, ցուցմունքներով ու որոշումներով վարել են իրենց ներքին առտնին գործերն, ու այդպիսի գործերի մեջ թյուրիմացություն, վեճ և անհամաձայնություն ծագելու դեպքերում, միշտ դիմել են նրանց՝ իրենց բողոքներով և նրանց վճիռներով լուծված համարել իրենց բոլոր տարաձայնությունները»[1]:

Ինչպես տեսնում ենք, Երվանդ Շահազիզը Երևանի մելիքների ու նրանց ավագությանը ենթարկված թաղերի բնակիչների հարաբերությունները դիտել է իբրև հոր և որդիների հարաբերություններ: Մինչդեռ իրականում մելիքները դրության տերն էին, իսկ բնակիչները՝ նրանց ենթակաները, որոնք պարտավոր էին առաջիններին հարգելու, լսելու, հնազանդվելու և նրանց ընդունելու իբրև իրենց դատավոր: Մելիքը, բեկը և աղալարները աշխատավոր հայ և ադրբեջանցի բնակչության համար ոչ թե հայրեր ու բարի խորհրդատուներ էին, ինչպես այդ կարելի է եզրակացնել մեջբերումից, այլ նրանց վրա իշխողներ, նրանց կարգադրողներ և շահագործողներ: Պայքարը հասարակական այդ երկու խմբերի միջև միշտ գոյություն է ունեցել, սակայն քանի որ այդ ժամանակներում հասարակական կյանքի համեմատաբար թույլ զարգացման հետևանքով այն բացարձակ ըմբոստացումների և կազմակերպված ելույթների բնույթ չի ստացել, ուստի սկզբնաղբյուրների մեջ անտեսված է այդ պայքարը և դրա մասին հաղորդումներ չեն արված:

[1] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 60:

4. ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

Քաղաքի գրաված տարածությունը: Նրա արտաքին տեսքի նկարագրությունը: Տների կառուցվածքը, թիվը: Քաղաքի կառուցվածքեների ճարտարապետական առանձնահատկություններ: Թաղերը և դրանց նկարագրությունը: Քաղաքի ճարտարապետական կոթողները (բերդը, խանի ապարանքը, եկեղեցիները, մզկիթները, ծածկած շուկան, կամուրջները, գերեզմանոցները): Քաղաքի անվտանգության օրգանները: Կոմունալ և սանիտարական պայմանները: Բնակչության առողջապահական վիճակը և աճը:

Երևան քաղաքն իր բնակելի թաղերով, այգիներով ու բանջարանոցներով և վարելահողերով փռված է եղել մեծ տարածության վրա, չնայած այն բանին, որ նրա բնակչության թիվը 11—12 հազարից չէր անցնում: Եղած հիշատակությունների համաձայն, նրա արտաքին եզրագիծը ունեցել է մոտավորապես 28—30 վերստ[1] (մոտ 30—32 կմ) երկարություն: Իբրև առանձին վարչական միավոր, Երևանն ուներ իր որոշակի սահմանները հարևան Զանգիբասարի, Գառնիբասարի և այլ մահալների հետ: Քաղաքի հյուսիս-արևելյան, հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմերում գտնվող բարձրությունները կազմում են դեպի հարավ-արևելք բացված մի ամֆիթատրոն, որի մեջ և ամփոփված էր քաղաքի հիմնական մասը:

Պարսկական տիրապետության շրջանում Երևանի մեծ փրկվածությունը միանգամայն հասկանալի է: Ֆեոդալիզմի ժամանակաշրջանի մյուս բազմաթիվ քաղաքների նման նա էլ ուներ իր գյուղատնտեսությունը՝ այգեգործությունը, բանջարաբուծությունը և երկրագործությունը, որոնք բուն քաղաքում և նրա արվարձանների շրջաններում գրավում էին քաղաքին պատկանող ընդարձակ հողային տարածություններ: Դրա վրա պետք է ավելացնել նաև այն, որ քաղաքի տները, գրեթե առանց բացառության, միհարկանի էին, բնակչությունը բնակվում էր ցրված՝ մեծ տարածության վրա: Պակաս տեղ չէին գրավում նաև անպտուղ ու ամայի տարածությունները, որոնք ևս համարվում էին քաղաքապատկան: Այդպիսի կազմով XIX դ. առաջին քառորդում Երևանին պատկանող հողային տարածությունների սահմանը հարավում հասնում էր

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 464, «Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 436:

մինչև Թոխմախան-գյուղի արևելյան մասը, արևմուտքում՝ Եղվարդի սարահարթը, հյուսիսում՝ Քանաքեռ գյուղի հողերը, իսկ հարավում՝ մինչև Զանգիբասար մահալը։

Երևանի արտաքին տեսքի, նրա փողոցների, թաղերի, տների, դիրքի նկարագրությունները տվել են շատ ճանապարհորդներ ու հեղինակներ, որոնց թվումն են՝ Շարդենը (1673 թ.), Ջեմելլին (1694 թ.), Կեր Փորտըրը (1817 թ.), Մորիերը (1810—1816), Գրիբոյեդովը, Լաչինովը, Ուվարովան, Շոպենը, Լինչը և շատ ուրիշներ։

Երևանի արտաքին ընդհանուր տեսքը ձմեռվա և ամառվա կեսերին տարբեր տպավորություններ է թողել այցելուների վրա։ Ձմեռվա կեսին Երևանն իր արտաքին տեսքով անհրապույր է եղել և աննպաստ տպավորություն է թողել անծանոթի վրա։ Նա «մի հետ ընկած սովորական ասիական քաղաք» էր «նեղ, ծուռումուռ փողոցներով», որոնք անցնում էին «հում աղյուսից և մանր կլոր քարերից շինված, հաճախ ուղղակի կավակերտ» մանր տների միջով[1]։ Նրանք բոլորը վկայում են, որ այդ ժամանակվա Երևանը բառիս իսկական իմաստով քաղաքային տիպի ոչ մի փողոց չի ունեցել։ Նրա փողոցները ոչնչով չեն տարբերվել Ալրաբատյան դաշտի գյուղերի փողոցներից։ Գլխավոր փողոցների միջով անցնող առուները, որոնք ճյուղավորվելով ջուր են մատակարարել տների բակերին կից եղած այգիներին ու պարտեզներին, մերթ առաջացրել էին գարշահոտ լճացումներ, մերթ՝ անանցանելի ցեխ, մերթ էլ՝ քանդել մայթերն ու փողոցի կողքերին շարված խղճուկ տների հիմքերը[2]։ Փողոցներն ու հրապարակները կեղտոտ են եղել[3], ամենուրեք թափառում էին հավերը, խոզերը և այլ բնատանի կենդանիներ։

Քաղաքը ընդարձակ է եղել, բայց սակավամարդ, ամայի։ Ոչ ոք հոգ չի տարել 1804 և 1808 թթ. պաշարումների ժամանակ առաջացած ավերումների հետքերը վերացնելու համար։ Նրա երկար ցանկապատերով ուղեկցվող, դատարկ փողոցները և ավերված շինությունները տխուր, շատ տխուր տպավորություն են թողել այցե-

---

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 466, Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ջ, էջ 321—322, 764, М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, Документы, էջ 314, Полное собр. соч. А. С. Грибоедова, т. I, письма IV, VI и VII և այլն։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 466։

[3] Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ջ, էջ 321։



Երևանի բերդի և նրա մոտ գնհած քաղաքի գլխավոր հատակագիծը (ЦГВИА, ф. ВУА, д. 4283)։

յուի վրա։ Գրիբոյեդովը գրում է. «Որքան ես կարողացա նկատել ժամանելուս և մեկնելուս միջոցին, քաղաքն ընդարձակ է, բայց գեղեցիկ չէ, և՛ երկայնածիգ ցանկապատները, և՛ ավերակները, և՛ ռուսների վերջին պաշարման (1808 թ.— Բ. Հ.) հետքերը հաղորդում են նրան մի թախծալի ամայության տեսք»[1]։

Նարդեն (Երևանի պատմության թանգարան)։

Քաղաքը պլանավորված չէր, նոր կառուցումները կատարում էին կամայական կերպով, ով որտեղ և ինչպես ցանկանում էր։ Քաղաքի մասշտաբով ոչ ոք չկար՝ ո՛չ ինժեներ, ո՛չ տեխնիկ և ո՛չ նույնիսկ հասարակ վերակացու, որպեսզի հսկեր շենքերը գեթ որոշ կանոնավորությամբ կառուցելու և փողոցների զիգզագները մեղմացնելու համար։ Քաղաքը կատարյալ քաոսի պատկեր ներկայացնելուց փրկվում էր միայն նրանով, որ, գրեթե առանց բացառության, բոլոր տները բակերի կողմերից ունեին փոքրիկ այգիներ ու բանջարանոցներ, որոնց շնորհիվ տները իրարից զանվում էին

[1] Полное собрание сочинений А. С. Грибоедова, т. I, письмо V.

հավասար հեռավորությունների վրա՝ երկար տարածություններից վրա, իսկ շատ հաճախ մինչև իսկ մեկ ծայրից մինչև մյուսը, փողոցների երկու կողմերում ձգվում էին տները փողոցից մեկուսացնող բարձր պատեր, որոնք իրենց արտաքին զորշ տեսքով ավելի մռայլություն էին հաղորդում քաղաքին։ Քաղաքի «փողոցները կամ, ավելի ճիշտ, նրբանցքները նեղ են, ծուռումուռ,— գրում է Ե. Լալինովը,— տեղ-տեղ կան մայթեր, սակայն հսկայական քարերը ընկած են միջտեղում, և չեն նկատվում կառուցվածքի հետ-

Արևելյան կենցաղային իրեր (Երևանի պատմության թանգարան)։

Արևելյան կենցաղային իրեր (Երևանի պատմության թանգարան)։

քեր. բարձր պատերը արգելում են հայացքները, ...գրեթե բոլոր տները կառուցված են բակերում...»[1]։

Քաղաքի ընդհանուր տիպը պատկերը փոխվում էր ամռան կեսերին։ Այդ ժամանակ նա իր այգեստաններով, առվույտի և հացահատիկների դաշտերով, բանջարանոցներով մի կանաչ կղզու էր վերածվում՝ շրջակայքի չոր տարածությունների դրկում։ Տարվա այդ ամիսներին, մանավանդ Քանաքեռի բարձրությունից, քաղաքը հաճելի տպավորություն է թողել դիտողի վրա։ Լինչը բանաստեղծական տրամադրությամբ է նկարագրում Երևանի և նրանից հարավ բարձրացող Մեծ ու Փոքր Մասիսների ամառային տեսքը՝ հայացքը սահեցնելով Մեծ Մասիսի հավերժական ձյան թագից մինչև «կանաչի ծովում» թաղված Երևանը։ Երևանը տարվա այդ ամիսներին գեղեցկանում էր նաև ներքնապես։ Փողոցների երկու կողմերում բարձրացող պատերը, բնակելի տները և մյուս օժանդակ շենքերը ծածկվում էին մրգատու ծառերի և խաղողի որթերի տակ, իրենց անհրապույր տեսքը ժամանակավորապես թաքցնելով դիտողներից։

«Երևան քաղաքի տխրալի դեմքը փոխվում է ամառ ժամանակ,— գրում է Ի. Շոպենը,— երբ նրա փողոցները կազմող այլանդակ պատերը անհետանում են չքնաղ այգիների փարթամ կանաչով, որտեղ ճոխ բնությունը՝ հողի մշտական խոնավությամբ և հարավի կիզիչ արևով գրգռված, անսովոր ուժով բաց է անում իր բուսական հարստությունն ու հմայքը»[2]։

Դա փաստորեն պովք է հին Երևանի մասին։ Սակայն այդպիսի պովք կարելի էր անել նաև Արարատյան դաշտի այգեշատ ցանկացած գյուղի վերաբերյալ։ Խոսքն այստեղ ոչ թե քաղաքի կառուցվածքի մասին է, որը հաճելի շատ քիչ բան ուներ, այլ նրա այգիների ու ծառաստանների։ Ամառվա կանաչ թավիշով իր զորշ մարմինը ծածկած Երևանը ուշ աշնանը նորից էր մերկանում և իր ամբողջ անհրապույր տեսքով կանգնում դիտողի առջև՝ իբրև պարսկական ծանր տիրապետության ամենատխրալի պատկերներից ու կենդանի վկաներից մեկը։

Երևանի փողոցների անհրապույր տեսքը արդյունք էր նաև այն բանի, որ տների մուտքերը արվում էին բակի կողմում. փո-

1 М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, книга первая, Документы, էջ 314։

2 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 468։

ղոցի կողմում տները սովորաբար չունեին լուսամուտներ, շքամուտքեր։ Տների՝ դեպի փողոց նայող կողմում ուղիղ պատից և դեպի բակը տանող փոքրիկ, միանգամայն անշուք մուտքից բացի ուշադրության արժանի ոչինչ չկար։ Երկար շարքով ձգված կավակերտ կամ անտաշ քարով ու հողե շաղախով շարված պատերը փողոցին տալիս էին միանգամայն ամայի տեսք։ Տների ճակատը բակի կողմում էր արվում պարսիկ խաներից, բեկերից և մյուս բարձրաստիճան տիրողների ագահությունից իրենց ունեցվածքը թաքցնելու, իրենց կանանց ու աղջիկներին նրանց հարեմներից հեռու պահելու նպատակով։ Ի. Շոպենն այդ մասին ուղղակի հետևյալն է գրում. «Ճակատը միշտ նայում էր դեպի բակի կողմը, դեպի փողոց ցուցադրված էր առանց լուսամուտների և դռների՝ խուլ, այլանդակ պատը. պաշտոնական խանները և աստիճանավորները իրենց տները զարդարում էին դեպի փողոց նայող դարպասով..., սակայն խաղաղ քաղաքացիները ձգտում էին, որպեսզի իրենց բնակարանները բոլորովին աննկատ լինեն, և մուտքի համար թողնում էին նեղ ու ցածր դռնակ, որի դիմաց կառուցում էին փոքր պատ, որպեսզի մոտով անցնողները չկարողանային նայել դեպի բակ։

Բնակարանային լապտեր (Երևանի պատմության թանգարան)։

Այդ նախապատվությունը նախկինում (պարսկական տիրապետության շրջանում — Թ. Հ.) անհրաժեշտ էր երկու կարևոր պատճառներով. եթե պարսկական իշխանավորներից որևէ մեկը նկատում էր, որ քաղաքային այս կամ այն բնակիչը մյուսներից ավելի հարուստ է ապրում, որ նրա տունը ավելի մաքուր է, կանայք ավելի շքեղ են հագնված, մի խոսքով, որ նա օգտվում է որոշ բարեկեցությունից, ապա, հասարակական հարկադրման ժամանակ միշտ ձգտում էր ավելացնել նրանից պահանջվող մասը։ Եթե սարդարը, խանը կամ որևէ այլ աստիճանավոր քաղաքային բնակչի տանը նկատում է գեղեցիկ կին, ապա բոլոր եղանակներով ձգտում էր կամավոր կամ հարկադրաբար նրան խլել իր հորից կամ ամուսնուց, իսկ դիմադրության դեպքում վրեժ էր լուծում բոլոր միջոցներով»[1]։

Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում նույնիսկ մեծ ձգտում և միջոցներ ունեցողները վտանգի չէին ենթարկի իրենց ունեցվածքը, ապրուստը և պատիվը։ Իսկ դրա հետևանքը լինում էր այն, որ տների՝ դեպի փողոց նայող կողմերը, որոնցից կախված էր փողոցի լավ կամ վատ, գեղեցիկ կամ տգեղ լինելը, իրենց այլանդակությամբ՝ դիտողին կարող էին միայն վանել։ Փողոցների բարեկարգման մասին ոչ ոք չէր մտածում։ Քաղաքացիների մեծագույն մասը հազիվ էր հայթայթում իր օրվա հացը, միջոցներ չուներ նույնիսկ նվազագույն պայմանների համար, մյուս փոքր մասը, որ ավելի ապահով էր, ձգտում էր թաքցնել իր ունեցվածքը, ապրուստը, իսկ սարդարն էլ կողոպտելուց և իր համար շահավետ հարմարություններ ստեղծելուց բացի ոչնչով չէր հետաքրքրվում։ Նրա ինչ հոգն էր, որ Երևանի փողոցները ողորմելի վիճակում են գտնվում, քաղաքը թաղված է կեղտի մեջ, քաղաքացիների կյանքն ու գույքը ենթակա են վտանգի։ Իսկ «այն, ինչ որ շահավետ էր սարդարի համար, շահավետ չէր ընդհանուրի համար»,— գրում է Գրիբոյեդովը[2]։

Տների ներսը և բակի կողմը անհամեմատ ավելի գեղեցիկ և հարմարավոր է եղել։ Հարուստ ընտանիքների զբաղեցրած տները կահավորված են եղել արևելյան ճոխությամբ, բակում սովորաբար ունենալով իրենց ջրավազանը։ Իսկ սակավավոր և աղքատ ընտանիքների միակ զարդը բակի կողմում գտնվող բանջարանոցը կամ այգին էր, եթե այդպիսին կար[3]։ Սակայն այստեղ էլ տնատերը ամեն ինչ հարմարեցրել է եկամուտ բերելու նպատակին։ Նա «ավելորդ» ոչ մի թիզ հող, այգու կտոր կամ ծաղկանոց չի թողել զբոսնելու կամ նման նպատակների համար։ Տների ներսը և բակերում բացակայել է համաչափությունը, հարմարավորությունը։ Այդիներում չկային ծառուղիներ, դրանց ամբողջ տարածությունը

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 892—893։

2 Полное собр. соч. А. С. Грибоедова, т. I, письмо VII.

3 Տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 466—467, Записки декабриста Е. Лачинова об Армении (М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, Документы, էջ 314—316)։

համաատարած կերպով զբաղեցված էր խաղողի որթերով, ծառերով, ամվույտով և բանջարեղենի մարգերով[1]։

Հայկական մարզում 1829—1832 թթ. անցկացված կամերալ հուցակագրման տվյալներով Երևանն ունեցել է 1736 տուն, որից 792-ը գտնվում էր Շահար թաղամասում, 622-ը՝ Թափաբաշում, իսկ մնացած 322-ը՝ Դամիրբուլաղում[2]։ Տների կառուցման համար օգտագործել են հում աղյուսը, մասր քարերը և կավը, իսկ իբրև շաղախ՝ կավե կամ կրի ցեխը։ Բնակելի տների մեծագույն մասը եղել



Բնակելի շենք Թափաբաշ (Կոնդ) թաղամասում
(Հայկական ՍՍՌ Ցատո-ֆոնո-կինո արխիվ)։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 893—894։

[2] Նույն տեղը, էջ 466—467, 892—895։ Տե՛ս նաև՝ Обозрение российских владений за Кавказом, ч. IV, էջ 275—276։

է միհարկանի, գաճաճ։ Հարուստների ավելի մեծ և բարեկարգ տները բաղկացած են եղել մի քանի բաժիններից, հաճախ ունեցել են ապակեպատ վերանդաներ (այվա), մեծ լուսամուտներ՝ փունջաթաղ առաջացնող գույնզգույն ապակիներով։ Սակայն, չնչին բացառությամբ, պարսկական տիրապետության շրջանում Երևանի բնակելի տները ճարտարապետական առումով որևէ հետաքրքրություն չէին ներկայացնում՝ ոչ միայն այն պատճառով, որ դրանք իրենց կառուցվածքով շատ հասարակ էին, այլև նրանով, որ կրկնություն էին հին և միջնադարյան Հայաստանի, Ադրբեջանի ու Պարսկաստանի հասարակ խրճիթների, որոնց կառուցումը կատարվում էր առանց ճարտարապետի և, նույնիսկ, առանց վարպետ որմնադրի մասնակցության։



Բնակելի շենք Շահար թաղամասում (Երևանի պատմության թանգարան)։

Ճարտարապետական առումով շատ քիչ հետաքրքրություն են ներկայացնում Երևանի բերդը՝ աղբյուրի պալատով, մզկիթներով և այլ կառուցվածքներով հանդերձ, քաղաքի եկեղեցիները, մզկիթները, քարավանատները, կամուրջները և այլն։ Սակայն դրանցում էլ նորություններ չեն եղել և առավելագույն դեպքում կրկնվել են հին ոճերն ու հնարանքները։ Խոսելով մզկիթների և այլ կառույցների մասին, Ի. Շոպենը գրում է. «Մահմեդականների տի-

բապետության ժամանակաշրջանը այդ տիպի (ճարտարապետության— Բ. Հ.) ժառանգության մեջ ուշագրավ ոչինչ չի թողել՝ մզկիթները, մինարեները և որևէ չափով նշանակալի շենքերը, որ կառուցված են թրծած աղյուսից, իրենց վրա կրում են ընդհանուր արաբական ոճի հետքեր. նրանց պատերը զարդարված են հախճաղյուսի (израцовый) նախշերով...:

Հայկական մարզի այժմյան բնակիչները իրենց տները կառուցելու գծով վերցրել են արևելյան ճարտարապետության կանոնները և, մոռանալով երեք ձյունապատ լեռնաշղթաների սահմանակցության ու սաստիկ ձմեռների... մասին, իրենց բնակարանները կառուցում են ճիշտ այնպես, ինչպես դրանք կառուցում են Շիրազում, Բաղդադում և Ասիայի այլ տեղերում, որտեղ սառնամանիքներ երբեք չեն լինում»[1]:

Նույնը կարելի է ասել նաև հայկական ոճի կառուցվածքների՝ հայկական եկեղեցիների, մատուռների և այլ շենքերի մասին: Պարսկական շրջանի Երևանում եղած հայկական ոճի կառուցվածքները իրենց գեղեցկությամբ, ճարտարապետական հնարանքներով, շարվածքով, քանդակներով շատ ու շատ ետ էին մնում զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանի (IX-XIII դդ.) Հայաստանի ճարտարապետական կոթողներից: Կարծում ենք, որ հենց դրանով պետք է բացատրել այն, որ հայ ճարտարապետության խոշորագույն պատմաբան Թորոս Թորամանյանը ուշադրության չի առել Երևանի թե՛ քաղաքացիական և թե՛ եկեղեցական շենքերից որևէ մեկը՝ այն դեպքում, երբ նա իր աշխատությունների երկու ստվարածավալ ժողովածուներում այնքան մանրամասնությամբ խոսում է ամենատարբեր ոճով կառուցված և ամենատարբեր նպատակների ծառայող շենքերի մասին[2]:

Հին Երևանի ճարտարապետական կոթողները համահայկական ճարտարապետության պատմության համար հաջող օրինակներ չեն կարող լինել, բայց և այնպես դրանք պետք է ուշադրության արժանանան Երևան քաղաքի պատմության և, մանավանդ, հնագիտության ու ճարտարապետության պատմության կողմից: Նրա կոթողները, որոնց մասին հատուկ ծանոթություններ կտրվեն քաղաքի թաղերը ներկայացնելուց հետո, ունեն հայկական, պարսկա-արաբական և ազգրնջանական ծագում: Վերջիններս նմանության շատ գծեր ունեն և խիստ կերպով տարբերվում են հայկական ոճի կառուցումներից:

Պարսկական տիրապետության շրջանի Երևանը կարելի է բաժանել երկու հիմնական մասի՝ բերդի և բուն քաղաքի: Բերդը գտնվում էր քաղաքի մի ծայրում, Զանգու գետի ձախ ափին: Քաղաքը բերդից բաժանված էր շուկա-հրապարակով և այգիներով:

Փանահ-խանի որդի Ալի-խանի տունը Շահար թաղամասում (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ):

Բուն քաղաքը բաժանված էր երեք գլխավոր թաղամասերի՝ մահալների, որոնք սակայն միացած էին իրար հետ և կազմում էին անընդմեջ բնակեցված մի ընդարձակ տարածություն, որի մեծագույն մասը ամփոփված էր Զանգու և նրա ձախակողմյան վտակ Կըրխբուլաղ գետերի միջև: Քաղաքի երեք գլխավոր թաղամասերն էին Շահարը, Թափաբաշը և Խամիրբուլաղը[1]:

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 892:

[2] Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Աշխատությունների ժողովածու, Երևան, 1942, Աշխատությունների երկրորդ ժողովածու, Երևան, 1948:

[1] Հին Երևանի թաղերը բավական մանրամասնությամբ նկարագրված են շատ հեղինակների աշխատություններում: Դրանցից կարելի է նշել հետևյալները. Орест Евецкий, Статистическое описание Закавказского края, СПБ, 1835, էջ 198—199, Обозрение российских владений за Кавказом, ч. IV, էջ 290—292, Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջ 141—150, Ալիշան, Այրարատ, էջ 311—316, Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. I, էջ 701—705, Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 173—176, Զ. Կորկոտյան, Երևան քաղաքի ժողովրդագրությունը, էջ 10—12 և այլն:

Շահարը, որը բառացի նշանակում է քաղաք, քաղաքի ամենահին թաղամասն էր և այդ պատճառով հաճախ կոչվել է նաև հին քաղաք։ Շահարը Երևանի ամենաբնդարձակ թաղամասն էր. նա սկսվել է Կրբախբուլաղի աջ ափից՝ այժմյան Պետ. համալսարանի շենքից քիչ ներքև, և տարածվել է մինչև բերդի պարիսպների մոտերքը՝ ընդգրկելով այժմյան Աբովյան, Նալբանդյան և Ալավերդյան փողոցների միջև ընկած տարածությունները։ Շահարը գրավում էր քաղաքի հյուսիս-արևելյան մասը, դա բուն Երևան քաղաքն էր՝ նեղ իմաստով։

Թափաբաշը (Կոնդ) գտնվում էր քաղաքի արևմտյան կողմում՝ Կոնդի բարձրությունների վրա, Զանգու գետի և Շահարի միջև, Կոդհոն կոչված բլուրի մոտ։ Շահարի համեմատությամբ այս թաղն ավելի ուշ է բնակեցվել։ Նա բնդարձակվել է այն ժամանակից սկսած, երբ այստեղ մշտական բնակություն են հաստատել 100 տուն հայ բոշաներ, որոնք հետագայում աստիճանաբար դարձել են նաստակյաց կյանք վարողներ և իրենց խիզախությամբ անջնջելի հետք են թողել Երևանի քաղաքական պատմության մեջ։ Կոնդի արևելյան կողմում, նրա և Շահարի միջև, պարսկական տիրապետության շրջանում տարածված էին այգիներ, որոնք պատկանում էին Երևանի խաներին։ Այդ այգիները միասին կոչվում էին Խանբաղ կամ Խանլրդ-բաղ։ Ըստ եղած տվյալների, վերջին սարդար Հուսեյն խանի ժամանակ Խանբաղի մեծ մասը ամայի էր և անպտուղ։ Երևանը պարսկական լծից ազատագրելուց հետո՝ Խանբաղը աստիճանաբար քաղաքի վերածվեց Պարսկաստանից ներգաղթած հայերի շնորհիվ, որոնք բնակություն հաստատելով այդտեղ, կազմեցին մի առանձին թաղամաս՝ Նոր-Թաղը։

Շահարից հարավ և բերդից արևելք ընկած էր քաղաքի երրորդ հիմնական թաղամասը՝ Դամիրբուլաղը (— երկաթաղբյուր), որը կոչվել է նաև Քարհանք։ Այստեղ հնում եղել է քարհանք, որտեղից քարը հանելով տանում էին Շահար։ Հետագայում այդ շրջանում բնակություն են հաստատում աղբրեջանցիներն ու մի քանի տուն հայեր և դրանով իսկ վերածում այն՝ քաղաքի թաղամասերից մեկի։ Այս թաղամասը Դամիրբուլաղ է կոչվել այդտեղ բխող ահ դույնի ջուր ունեցող աղբյուրի շնորհիվ։ Դամիրբուլաղը գրավում էր քաղաքի բնակեցված մասի հարավ-արևելյան կողմը։

Երևանի հյուսիս-արևելյան և արևմտյան կողմերում գտնվում էին երկու գյուղ՝ Զոլմամշին (Նորք) և Դարամենդը (Զորագեղը)։ Դրանցից առաջինը, որ գտնվում էր քաղաքի հյուսիս-արևելյան կողմում, պարսկական տիրապետության շրջանում քաղաքի մեջ

չէր մտնում, չնայած նրա այգիներն ու հանդերը ձուլվում էին քաղաքապատկան հողերի հետ։ Զոլմաքչի (բրուտ) կամ Նորք գյուղը քաղաքին է միացել 1837 թ., կազմելով նրա թաղերից մեկը։ Դարաբննդը ավելի վաղ էր միացել քաղաքին, սակայն նա վերջին սարդարի ժամանակ հիշատակված է որպես քաղաքի ամբնակ կամ, համենայն դեպս, ձմեռները անբնակ թաղերից մեկը։ Նա ընկած էր Թափաբաշից ներքև, Զանգու գետի ձախակողմյան նեղ հովտում և գտնվում էր քաղաքի ամենաբարձր տեղում։ Ավելի հին ժամանակներում, երբ դա առանձին գյուղ էր, կոչվում էր Խնկելո ձոր։ Վարչականորեն Զորագեղը Թափաբաշի բաղկացուցիչ մասն էր։ Բայց և այնպես նա հիշատակվում է որպես քաղաքի մի առանձին թաղ։ Զորագեղում հիշատակված են և ավելի փոքր թաղեր՝ ենթաթաղեր, որոնք գրավում էին նրա տարբեր մասերը։ Այսպես, օրինակ՝ որպես Զորագեղի ենթաթաղեր են հիշատակվում Քարկափի թաղը, Ներքին (ստորին) կամ Ձորի թաղը և Կարբիի թաղը։ Վերջինում, Արազածոտն գավառում գտնվող Կարբի գյուղը ավերվելուց հետո, բնակություն էր հաստատել նրա բնակիչների մի մասը և այդ նոր թաղն էլ կոչել իրենց գյուղի անունով։ Զորագեղի հենց այդ թաղից էր ժամանակի հայ ամենահարուստ դեմքերից մեկը՝ Մեսրոպ Թադիադյանը, որը կոչվել է նաև Կարբեցի։

Նշվածներից բացի, Երևանում հիշվում են նաև այլ թաղերի անուններ՝ Միրաճի թաղ, Ջուխաբենց թաղ և այլն։ Սակայն դրանք ևս նման են եղել Զորագեղի ենթաթաղերին՝ նրա Ներքին թաղին և մյուսներին։ Այլ կերպ ասած, դրանք եղել են ոչ թե առանձին թաղեր, այլ մտել են քաղաքի այս կամ այն թաղամասի մեջ։ Այսպես, օրինակ՝ Միրաճի թաղը Թափաբաշ թաղամասի բաղկացուցիչ մասերից մեկն էր. նույնպիսի բնույթ ունեին և մյուսները։ Նույն տիպի, բայց համեմատաբար ավելի նոր ժամանակներում Երևանում առաջացել են ուրիշ թաղեր՝ Սպանացոց թաղ, Շիլաչի թաղ, Շենթաղ և այլն։

Մի քանի թաղեր էլ հիշատակվում են քաղաքի անբնակ մասերում, որոնք հարում էին քաղաքի բնակեցված այս կամ այն թաղամասին։ Շահար թաղամասին հարում էին՝ Աբբաս-դարաճ, որը գտնվում էր Նորքի տակ և հետագայում կոչվել է Նորքաձոր, և Քոչակլի թաղը՝ ընկած Քանաքեռ տանող ճանապարհից աջ։ Թափաբաշ թաղամասին հարում էին՝ Աբուհայաթը, որը գտնվում էր Քանաքեռի ճանապարհից ձախ, Կզըլ-կալաճ՝ Զանգվի ափին, Քանաքեռ գյուղից ցած, Դարա-բաղը՝ Կզըլ-կալայից ցած, նույնպես Զանգվի վրա, Դարամենդը (Զորագեղը), որը նույնպես պարս-

կական տիրապետության վերջին շրջանում մշտական բնակիչներ չուներ[1] և գտնվում էր Զանգվի ափին՝ կամուրջի և Դարաբաղի միջև, Պալման, որը գտնվում էր Զանգվի աջ կողմում՝ Դարաբաղի դիմաց և Նորագեղը, որը նույնպես գտնվում էր Զանգվի աջ կողմում, էջմիածնից տանող ճանապարհից ձախ: Բոլոր այդ թաղերը մշտական բնակիչներ չունեին: Նրանք ամբողջապես զբաղեցված էին այգիներով[2] և բնակելի էին դառնում միայն ապրիլից մինչև ուշ աշուն, երբ այդտեղի այգիները խնամելու և քաղաքի տոթից խույս տալու համար այստեղ ժամանակավորապես բնակություն էին հաստատում այգեպանները՝ իրենց ընտանիքների հետ միասին: Դամիրբուլաղ թաղամասին հարում էր **Խոսրովաբաղը**, որը ընկած էր այդ թաղամասի հարավային կողմում և գրավում էր մի շրջանաձև տարածություն: Երևանի՝ պարսկական լծից ազատագրվելուց հետո այս թաղը եղել է ավերակ վիճակում: Դամիրբուլաղի մոտ էր գտնվում և **Սավզի-երիճ**, որն ընկած էր բերդի ու Խոսրովաբաղի միջև[3], գրավելով գերեզմանոցի և քաղաքի միջև ընկած տարածությունները, հարավում հասնելով մինչև այժմյան Երևանի երկաթուղային կայարանի մոտերքը[4]:

Այժմ ծանոթանանք Երևանի բերդին և եկեղեցիներին, մզկիթներին, կամուրջներին և մյուս այն հուշարձաններին, առանց որոնց անհնար է ընդհանուր գաղափար կազմել քաղաքի հնությունների ու կուլտուրայի մասին:

Երևանը հնագույն ժամանակներից ի վեր եղել է ամրությունների մի հանգույց: Նրա շրջակայքում մեր օրերում կատարվող հնագիտական պեղումների և զանազան շինարարական աշխատանքների հետևանքով հայտնաբերված են ուրարտական և նախաուրարտական ժամանակաշրջաններին վերաբերող մի քանի բերդերի ու ամրացված վայրերի հետքեր (Շենգավիթում, Նորագավիթում, Միծեռնակաբերդում, Կարմիր բլուրում, Արին բերդում), որոնցից մեկի՝ Իրիբունի բերդանվան հետ էլ այժմ կապում են Երևան քաղաքի անունը[5]: Սակայն երկար ժամանակ, ընդհուպ

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 464—465:

[2] Նույն տեղը, էջ 465:

[3] Նույն տեղը:

[4] Զ. Կորկոտյան, Երևան քաղաքի ժողովրդագրությունը, էջ 11—12:

[5] Նախկինում ուրարտագետները Երևան անունը սովորաբար կապել են Ողվինաո դյուղի մոտ պահպանված ուրարտական արձանագրության մեջ հիշատակված «Երիա...ինի» երկրանվան հետ: Ներկայումս այդ վերսիան հերքվում է և այդ երկու անունների նմանությունը դիտվում է միայն իբրև պատահականություն (տե՛ս Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, էջ 27, 100):

[1] Երևանի բերդը նկարագրված է հետևյալ աղբյուրներում՝ Ջնմա Մորիեր (տե՛ս Հ ո վ հ. Հ ա կ ո բ յ ա ն, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 321—324), Մորից Ֆոն Կոցեբու (տե՛ս Հ ո վ հ. Հ ա կ ո բ յ ա ն, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 532, 535, 536, 540—541), Ֆրեյգան (տե՛ս Հ ո վ հ. Հ ա կ ո բ յ ա ն, Ուղեգրություններ, հ. Զ,

մինչև VII դարի սկիզբը (մ. թ.), Երևանի մասին գրավոր որևէ հիշատակություն չկա արված ոչ մեր և ոչ էլ օտար աղբյուրներում: VII դարից մեր մատենագրության մեջ արդեն սկսվում է Երևանի հիշատակությունը և այնուս չի ընդհատվում մինչև վերջ. իսկ դրանից երևում է, որ VII դարում և նրանից հետո Երևանում բերդ եղել է: Թե ինչպիսի դիրք, կառուցվածք, մեծություն և կայազոր է ունեցել Երևանի բերդը մինչև թուրք-պարսկական տիրապետության ժամանակները, դեռևս մնում է չլուսաբանված. դրանց մասին հայագիտությունը ենթադրություններից դեռևս դուրս չի եկել՝ մասամբ համապատասխան նյութերի բացակայության և մասամբ էլ եղած աղբյուրների տակավին ոչբավարար ուսումնասիրության պատճառով:

Թուրք-պարսկական տիրապետության մոտյալ շրջանում, երբ Արարատյան աշխարհի վաղեմի հռչակավոր քաղաքները՝ Դվինը, Վաղարշապատը, Անին և մյուսները վաղուց արդեն դադարել էին գոյություն ունենալուց, Երևանը Արևելյան Հայաստանում աստիճանաբար դառնում է ամենանշանավոր կենտրոնը և այդ իսկ պատճառով էլ՝ պարսկա-թուրքական երկարաձիգ պատերազմների կռվածադիկը: Այդպիսի դիրք ու նշանակություն ձեռք բերած Երևանը արդեն ավելի մանրամասնությամբ է նկարագրվում պատմադիրների և այլ կարգի հեղինակների աշխատություններում, որովհետև Հայաստանի տերիտորիայում տեղի ունեցող քաղաքական դեպքերը մեծապես առնչվում էին այդ քաղաքի հետ:

XVI—XIX դդ. Երևանի, հատկապես նրա բերդի մասին ուղղակի և անուղղակի շատ հիշատակություններ և նկարագրություններ ունեն հայ մատենագիրներն ու հեղինակները, եվրոպական, ռուսական ճանապարհորդներն ու ուսումնասիրողները: Սակայն, մեզ տվյալ դեպքում դրանցից հետաքրքրում են միայն նրանք, որոնք Երևանի բերդի մասին խոսում են նրա՝ XVIII դարի վերջերի և XIX դ. առաջին տասնամյակների ունեցած դրությամբ, իսկ այդպիսիների թիվը նույնպես փոքր չէ[1]: Երևանի բերդի մասին

Երևանի բերդի բնդհանուր տեսարանը Զանգվի (Հրազդան) կողմից. փորագրություն 1786 թ., նկար՝ 1812 թ. (Երևանի պատմության թանգարան)։

ավելի ընդարձակ և մանրամասն տեղեկություններ կան նաև արխիվային ֆոնդերում, հատկապես Մոսկվայի ЦГВИА-ի (Պետական կենտրոնական ռազմա-պատմական արխիվ) ВУА ֆոնդում, որտեղ զանազան դեկուցագրերի մեջ եղած նկարագրություններից բացի՝ պահպանված են նաև Երևանի բերդի ու նրա մոտ փռված Երևան քաղաքի հատակագծերը, որոնք հանվել են ռուսական զոր-

էջ 409), Полное собрание сочинений А. С. Грибоедова, т. I, էջ 42—44, И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 894—895, Հ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն հնոյ մասանց աշխարհի, հ. I, Վենետիկ, 1802, Орест Евецкий, Статистическое описание Закавказского края, էջ 198—199, Обозрение российских владений за Кавказом, ч. IV, էջ 290, Записки декабриста Е. Лачинова об Армении (М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, Документы, էջ 312—314), Հովհ. Շահխաթունյանց, Տառագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջ 151—153, Линч, Армения, т. I, Тифлис, 1910, Խ. Արովյան, Վերք Հայաստանի (երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. III, էջ 53 և այլուր), «Հայրենասէր» (շաբաթաթերթ), 1843, օգոստոս, № 14 (Երևան իշխանանիստ քաղաք Արարատեան գաւառի, անատորագիր), Մ. Վագներ, Ճանապարհորդութիւն ի Հայաստան, բաղկով թարգմանեց Հ. Փիլիպպոս Ճամճեան, Վիեննա, 1851, էջ 31—32, Հ. Աթյան, Աշխարհատ, էջ 308—311 և այլն։ Երևանի բերդը նկարագրված է նաև արխիվային մի շարք փաստաթղթերում, որոնք վկայակոչելու ենք քաղաքական իրադարձությունները ներկայացնելիս։

բերի հրամանատարների հատուկ հրամաններով՝ բերդի պաշտպանների և ապա 1827 թ. նրա գրավման պահերին։

Արդ, փորձենք ի մի բերել այդ աղբյուրների՝ Երևանի բերդի մասին հաղորդած տեղեկությունները և դրանց հիման վրա ներկայացնենք այն՝ XIX դ. առաջին քառորդում ունեցած դրությամբ։

Երևանի բերդը տեղադրված է եղել Զանգվի ձախ բարձրադիր ափին, քաղաքից մոտ ¼ մղոն հեռավորության վրա և նրանից բաժանված է եղել մի մեծ հրապարակով։ Թե նրա տեղում հետ ինչպիսի բերդ է եղել, մնում է դեռևս չլուսաբանված, բայց հայտնի է, որ այստեղի թուրքական բերդը կառուցվել է սուլթան Մուրադի օրոք, 1582 կամ 1583 թվականին, Ֆահրադ փաշայի կողմից։ Հետագայում բերդը մի քանի անգամ ավերվել և նորից է վերակառուցվել։ 1679 թ. հունիսին տեղի ունեցած աղետաբեր երկրաշարժի հետևանքով քաղաքի շենքերի, կամուրջների և այլ կառուցվածքների հետ միասին հիմնահատակ կործանվել են նաև բերդը, նրա տաբարանքները, պարիսպները, պաշտպանական և օժանդակ կառուցվածքները։ Այդ ժամանակ բերդը պարսիկների ձեռքին էր գտնվում, և Երևանի Զալ խանը պարսկական արքունիքից համապատասխան միջոցներ ստանալով, իր անմիջական նախաձեռնությամբ վերակառուցում է բերդը՝ նոր կառուցումներով ավելի ուժեղացնելով նրա անառիկությունը։ Հետագայում այլ խանների կողմից նույնպես բերդում կատարվում են կառուցողական զանազան աշխատանքներ։ Պարսկական տիրապետության շրջանում Երևանի բերդի վերջին վերանորոգողն ու այն մի քանի նոր շենքերով հարստացնողը եղել է վերջին սարդարը՝ Հուսեյն-Ղուլի խանը, որից հետո բերդն անցավ Ռուսաստանի ձեռքը և մնաց նախ՝ իբրև Հայկական մարզի կառավարչի, ապա Երևանի գավառապետի, իսկ 1850 թվից՝ Երևանի նահանգապետի նստավայր՝ մինչև 1864 թ., երբ լքվեց որպես Երևանի նահանգական վարչության նստավայր։

Բերդը գրավել է բավական ընդարձակ տարածություն։ Որոշ աղբյուրների հաղորդած տեղեկությունների համաձայն, նրա եզրագծի երկարությունը հասել է մոտավորապես 860—1000 սաժենի։ Բերդի գրաված տարածությունը՝ չհաշված մանր զիգզագները, իրենից ներկայացրել է քառանկյունաձև մի շրջան։ Նա երեք կողմերից՝ հյուսիսից, արևելքից և հարավից պատած էր կրկնակի պարիսպներով, որոնք մեկը մյուսից գտնվում էին 15—20 սաժեն հեռավորության վրա։ Արտաքին պարիսպը ավելի ցածր է եղել, քան ներքինը. նա ունեցել է մոտ 5—5½ սաժեն բարձրություն։ Պարիսպները կառուցված են եղել՝ արտաքինը մանր քարերից ու կա-

վից, ներքինը՝ աղյուսից և քարից՝ կավե շաղախով։ Նրանք ունեցել են 50—60 աշտարակներ ու բուրգեր, որոնցից 17-ը[1] արտաքին պարսպի, մնացածը՝ ներքին պարսպի ուղղությամբ։ Դրանց հիմքերը շարված էին հին հուշարձանների ավերակներից բերված բազալտե խոշոր քարերով, իսկ վերևի մասերը՝ հում աղյուսով։

Արևմտյան կողմից պարսպի անհրաժեշտություն չի զգացվել։ Բերդի այդ մասով հոսում էր Զանգուն, որն առաջացրել է խիստ զառիվեր և անմատչելի կիրճ։ Այստեղ բերդը պաշտպանելու համար դրված էին միայն ինդանոթներ։

Պարիսպների վրա կային բազմաթիվ որմնանցքեր՝ բերդի ներսից՝ պաշարողների վրա հրացաններով և ինդանոթներով կրակելու համար։ Բերդն ունեցել է երկու դարպաս, որոնցից մեկը գտնվում էր հյուսիսային մասում և կոչվում էր Բարի-շիրվան, իսկ մյուսը հարավային կողմում էր և հայտնի էր Թավրիզ-գափուսի անունով։ Դրանցից բացի, ստորերկրյա անցք կար դեպի Զանգու գետը, պաշարման ժամանակ այնտեղից ջուր վերցնելու համար։ Հիշատակություն կա այն մասին, որ ստորերկրյա անցքերով և՛ Զանգվից, և՛ Կըրխ-բուլաղից ջուր է բերված եղել բերդ՝ երկար ժամանակ պաշարմանը դիմանալու նպատակով[2]։

Պարիսպների ուղղությամբ, նրանց շուրջը կառուցված էր բավական լայն ու խոր փոս, որի որոշ հատվածները վտանգի ու հարձակումների ենթակա պահերին լցրել են ջրով, իսկ մյուս մասերը, ուղղակի առանց ջրի, նույնպես ծառայել են իբրև արգելագիծ։ Պարիսպներից, նրանց շուրջը եղած փոսից, ինչպես և բուրգերից ու այլ արհեստական կառուցումներից և պաշտպանությանը նպաստող բնական հարմարանքներից բացի՝ բերդի պաշտպանությունը ուժեղացված էր այնտեղ մարդաշատ կայազորի ներկայությամբ, որի մեծությունը կախված է եղել քաղաքական հանգամանքներից։

Մի քանի դար շարունակ Երևանի բերդը արևելքում հռչակված է եղել իբրև անառիկ, անմատույց։ XVII—XVIII դդ. պարսկական և թուրքական բանակների համար իրոք որ Երևանի բերդը կարելի է անմատչելի համարել։ Նրանց պրիմիտիվ զենքերը, տրանսպորտային ողորմելի միջոցները, բանակում համապատասխան սակրավոր զորամասեր չունենալը պայմանավորում էին նրանց պարտությունները Երևանի բերդի պարիսպների տակ։ Ընդ որում, բերդն ավելի անառիկ էր արևմտյան կողմից, որտեղ նա պաշտպանված էր Զանգվի խոր և զառիվեր կիրճով։ Բերդի մոտերքում Զանգվի վրայով անցնելու համար միայն երկու տեղ կար, մեկը բերդի հյուսիս-արևմտյան անկյունի մոտ գտնվող կամուրջն էր, որը սակայն բերդից կարելի էր միշտ պահել ուժեղ կրակի տակ, իսկ մյուս անցումը բերդից ներքև էր՝ նրանից ավելի քան 4 կմ հեռավորության վրա[1]։ Մասամբ նաև դրանցով կարելի է բացատրել և այն, որ պարսկա-թուրքական պատերազմների ժամանակ Երևանի բերդը մեծ մասամբ մնում էր պարսիկների ձեռքին. վերջիններս, բերդի արևմտյան պաշտպանական գծի՝ Զանգվի ձորի անմատչելիությունից օգտվելով, կարողանում էին ավելի հաջող պաշտպանել այն, քան թուրքերը, որոնք իրենց ձեռքում ունենալով բերդը, պետք է ավելի մեծ ջանքեր թափեին՝ արևելքից նրա կավակերտ պարիսպների վրա արշավող պարսիկներին ետ մղելու համար։

Երևանի բերդը XIX դ. առաջին կեսի ռուսական զորքերի համար չի կարելի անառիկ համարել։ Այդ ժամանակվա ռուսական զորքերը զինված էին այնպիսի հրանոթներով, որ հեշտությամբ կարող էին ուղի հարթել դեպի բերդի ներսը, իսկ նրանց սակրավոր զորամասերի համար Զանգվի վրայով անցնելու հարմարանքներ ստեղծելը և բերդից եկող կրակից պաշտպանվելու համար ժամանակավոր կառուցումներ (խրամատներ և այլն) կատարելը մեծ դժվարություններ չէին ներկայացնում։ Այնպես որ, 1804 թ. Ցիցիանովի և 1808 թ. Դուդուկովի զորքերի նահանջը Երևանի բերդի պարիսպների տակից պետք է բացատրել ոչ թե նրա անառիկությամբ, այլ ուրիշ պատճառներով, որոնց կանդրադառնանք հետագայում։ Նկատի պետք է ունենալ նաև այն, որ Երևանի բերդից ոչ հեռու գտնվող բարձունքները՝ Մուխանաթ-թափան, Հերակլի բլուրը և մյուսները ռուսական հրետանու համար կարևոր դիրքեր էին ծառայում ամբակոծելու բերդը, մինչդեռ դրանք պարսկա-թուրքական պատերազմների ժամանակ ստրատեգիական որևէ նշանակություն չունեին, որովհետև պարսկական և թուրքական զորքերի ապառազինությունների մեջ մտնող ինդանոթները ավելի պակաս հնոտահարություն ունեին ու պրիմիտիվ էին։

[1] Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. IV. С. Петербург, 1886, էջ 323—324. Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջ 151 և այլն։

[2] Обозрение российских владений за Кавказом, часть IV, էջ 290. Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջ 152։

[1] Орест Евецкий, Статистическое описание Закавказского края, էջ 198։

Այսպիսով, բացարձակ իմաստով չի կարելի Երևանի բերդը, կարելով ժամանակից ու պայմաններից, որակել կամ իբրև «անառիկ», կամ հուսարակ «կավե կճուճ»։ Նա XVII—XVIII դդ. պարսկա-թուրքական պատերազմների ժամանակ անառիկ էր, որովհետև պարսկական ու թուրքական բանակների կառուցվածքը, սպառազինությունը և տակտիկան պրիմիտիվ էին։ Նա մատչելի էր և զրավման ենթակա՝ XIX դարի առաջին կեսի ռուսական բանակների համար, որովհետև սրանց սպառազինությունը և տակտիկան միանգամայն ապահովում էին այդպիսի բերդերի գրավումը։ Հատկանշական է, որ եվրոպական և ռուսական ճանապարհորդներից գրեթե ոչ մեկը Երևանի բերդը անառիկ չի համարել[1]։ Դա բացատրվում է նրանով, որ նրանք եկնում էին իրենց երկրների բանակների հնարավորություններից, բանակներ, որոնց պարսկա-թուրքական Երևան բերդը չէր կարող երկար դիմադրել։ Ըստ երևույթին, այդ հասկացել էին նաև պարսիկ իշխանավորները։ Նրանք, բան գերմանացի բժիշկ և ճանապարհորդ Ֆրեյգանի հիշատակության, Երևանի բերդում ֆրանսիական ինժեներների և անգլիական սպաների մասնակցությամբ կատարել են լրացուցիչ կառուցումներ՝ նրա պաշտպանունակությունը ուժեղացնելու համար[2]։ Այդ կառուցումները կատարվել էին Գյուլիստանի հաշտությունից հետո և բերդը ամրացրել՝ ընդեմ Ռուսաստանի։ Այդպիսի կառուցումներ կատարվել էին նաև 1808 թ.՝ Դուդովիչի կողմից Երևանի բերդը պաշարելուց առաջ[3]։

Երևանի բերդը այլաբանորեն, բայց ամենից ճիշտ և գեղարվեստական կենդանի լեզվով է նկարագրել Խաչատուր Աբովյանը։ Նա այդ բերդը ճիշտ կերպով դիտում է որպես օտարի լծի խորհրդանիշ և այն նկարագրում հետևյալ պատկերավոր խոսքերով.

«Է՛հ քարափի վրա՝ ցից գլուխը բարձրացնում, թամաշա յա անում հանդարտ՝ հազար գլխանի փեի պես՝ նեհանու՝ հազար տարեկան քավթառ, պատռված, չորս կողմը խանդակով կապած, բրջերով զալիմացրած, տո՛ւր-տո՛ւր ատամները գլխին շարած, հինգ գազաշափ հաստապատով երկու տակ բռնած, մեկ ոտը Կոնդումը, մեկ ոտը Թամուր-բույաղի գլխին դրած, մեկ բերանը հյուսիս, մեկը հարավ բաց արած, չորացած գլուխը երկինքը ցցած, լեն փիշերը երկրումը փռած, անամոթ երեսը կոկած, ավազած, հազար բնով, հազար փանջարա աչքերը դես ու դեն չռած, գլուխը չանգիրով՝ Զանգվի քարոտ, զարհուրելի, սևագեմ ձորը խտտած, դոշին կպցրած, անմազ, անվեզու, մարդակեր բերդը, ու դեղնած երեսը հետու տեղից ծածկում, ազահ աչքերը գետին քցում, որ միամիտ սեանողին դհա շուտով խաբի, դհա հեշտ իր ծոցը քաշի ու բերդի, անձեն, անսաս կուլ տա, փշացնի։

Պարսիկ նրան շինեց, խորամանկ, խաբեբա, թե սամանացի նրա հիմքը դրեց՝ կատաղի, անհաշտ, ո՛չ գիր կա, ո՛չ թարեղ, նրա պատմությունը խավարի միջումն ա, մարդ ուղիղ չի՛ գիտի, չի՛ լսել. բայց հազարավոր ժամանակով՝ անահ, անվախ՝ պինդ երեսը լիրբ գազանի պես դեմ տված, որքան թոփի, թոփխանի դյուլլեք էլ նրա կոշտ քամակին, նրա կակղ դոշին, նրա բաց գլխին դիպան, ո՛չինչ չի՛ ազդեց, քյար չա՛րեց։ Կորցրած թևերն էլ եդ սաղացրած, ջարդած ոսկորներն էլ եդ պնդացրած՝ գլուխը վեր քաշեց, էլ եդ շունչ առավ, վեր կացավ, կանգնեց՝ ուսերը դդեց, ոլորեց, սարքեց ու էլ եդ հարբա գազով, հաթաթա տալով, իր գլոխը քորոդի, իր շարի հետ խաղացողի՝ թուղթյան, փոքրոդթյան, անգորթյան ու հիմար հանդգնթյան վրա ծաղր անելով, ծիծաղելով, ծափ տալով, պռին կանգնեց, մատը ցցեց էս ճողաշեն, այլ ո՛չ քարաչին բերդը ու խենեշ դիմոք՝ իր կոտրած ոտները Զանգվի բերանը խցկելով, մնաց տեղը նստած, Զանգվի՝ որ դիշեր ցերեկ, անքուն, անդադար, գժված, կատաղած նրա բաց դոշին, նրա անիրավ սրտին՝ իր պլոկած ջրի անբերան թրովը, քարի ուրաթովը վեր հատում, զարկում ա...»[1]։

Հազիվ թե կարելի է լրացնել, կրճատել կամ փոփոխել Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ից բերված այդ նկարագրությունը։ Նրանում հակիրճ, բայց լիովին, պատմական աղբյուրների հաղորդած տեղեկություններին համապատասխան, տրված է Երևանի բերդի արտաքին տեսքի, գրաված դիրքի ու պաշտպանական կառուցվածքների ճշմարիտ նկարագիրը և նրա կառուցման ժամանակի, պատմության ընթացքում բազմաթիվ անգամ ավերումների ենթարկվելու, ձեռքից ձեռք անցնելու ու նրա խաղացած դերի համառոտ պատմությունը։

Երևանի բերդը սարդարի նստավայրն էր, նրա պալատի, հարեմի և կայազորի տեղադրավայրը։ Այս պատճառով էլ նա լիովին հարմարեցված էր և համապատասխանում էր խանական աթոռա-

[1] Մ. Վ ա գ ն ե ր, Ճանապարհորդություն ի Հայաստան, էջ 31, Ֆրեյգան (Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ջ. էջ 409), Ջեմս Մորիեր (Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ջ, էջ 322—323)։

[2] Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ջ, էջ 409։

[3] АКАК, т. III, էջ 252—256։

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, էջ 53։

նիստ լինելու բոլոր պահանջներին: Այստեղ կառուցված էին խանի պալատը, հարեմը, զորանոցներ, բաղնիքներ, մզկիթներ, կային կրպակներ, բնակելի տներ և այլ շինություններ: Սակայն այդ բոլորը բերդում զետեղված էին ոչ թե որոշակի պլանով, կանոնավորությամբ, այլ խառնիխուռն, և բերդի նեղլիկ, ծուռ ու մուռ փողոցները փաստորեն ոչ թե փողոցներ էին, այլ նեղ անցքեր, որոնք անկանոն դասավորված շենքերի քառսում կազմում էին մի բարդ լաբյուրինթոս: Բերդի ներսի այդ անկանոնության ամենահաջող նկարագիրը տվել է Ա. Ս. Գրիբոյեդովը 1819 թ. հունիսի սկզբներին այդտեղ եղած ժամանակ: Ահա թե ինչ է ասում դիվանագետ գրողը Երևանի բերդի մասին. «Մենք հասանք բերդի ժանիքավոր պարիսպներին, հետո մի քանի ճեղքերից, որոնք կոչվում են փողոցներ, դժվարությամբ անցնելով՝ հասանք սարդարի միջին դարպասին: Չգիտեմ՝ ի՞նչ ասեմ քեզ նրա ապարանքի մասին: Մի անվթար բան չկա, ընդամին այնքան ծուռ ու մուռ բաներ, ոլորաններ, նրբանցքներ, կից շինություններ, վերաշինություններ, մուտքեր, անցքեր, անձուկ, մռայլ և բոլորովին խավարշտին, որ բան չես հասկանա»[1]:

Խանի ապարանքը գտնվում էր բերդի հյուսիս-արևմտյան կողմում, Զանգվի կիրճի վրա կախված, և ներկայացնում էր մի քառանկյունաձև ընդարձակ, զանազան բաժինների մասնատված շինություն: Բերդը բաժանված էր երկու մասի՝ խանի բուն ապարանքի և հարեմի: Վերջինս քառակուսի, ընդարձակ շենք է եղել՝ մոտ 200 ոտնաչափ երկարությամբ և 125 ոտնաչափ լայնությամբ՝ բաժանված բազմաթիվ սենյակների ու միջանցքների: 1827 թ. Երևանը պարսկական լծից ազատելուց հետո՝ ռուս հրամանատարների կարգադրությամբ նախկին հարեմը վերակառուցվում և վեր է ածվում ռազմական հոսպիտալի, որը փաստորեն համարվում է Արևելյան Հայաստանի առաջին հիվանդանոցը:

Խանի ապարանքը կառուցվել է Հուսեյն-Ալի խանի որդի Մահմուդ խանի օրոք (1798 թվականին[2]): Նա կառուցված է եղել պարսկական ոճով և իր տեսակի մեջ ճարտարապետական առումով ներկայացրել է մեծ հետաքրքրություն: Հայտնի է մանավանդ

[1] Полное собрание сочинений А. С. Грибоедова, т. I, էջ 42:

[2] Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն Կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառաց Արարատայ, հ. երկրորդ, էջ 152, . Ս. Զնլինսկին խանի ապարանքի կառուցումը վերագրում է 1791 թվականին (Տե՛ս «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. I, отдел I, Город Эривань, Тифлис, 1881, էջ 7):

հայելապատ դահլիճը՝ Շուշաբանդ-այվան, խաների սիրած հովանոցն ու հանդիսասրահը[1]: Նրա կամարները և պատերի վերևի մասերը՝ կառնիզները պատած են եղել շենքի չորս կողմերով համատարած գոտի կազմող գույնզգույն հայելիներից, որոնք տարբեր հարթության վրա անդրադարձնելով լույսը՝ առաջացրել են գույների մի հրաշալի խաղ, ընդհանուր փայլով նմանվելով ադամանդին: Առաստաղը ամբողջապես զարդարված էր վառվռուն ծաղիկների նկարներով, իսկ դահլիճի պատերին փակցված են եղել կտավի վրա նկարված և շրջանակների մեջ դրված ութ պատկերներ՝



Սարդարի հայելազարդ պալատը ներսից (Երևանի պատմության թանգարան):

Ցար-Ալի-շահի, սարդար Հուսեյն-Ղուլի խանի, նրա եղբայր Հասան խանի, դյուցազուններ Ռուստամի ու Զոհրաբի և այլոց նկարները: Պատշգամբի բակում պատրաստված է եղել մեծ ու շքեղ մի շատրվան:

Խանի ապարանքը և նրա օժանդակ շենքերը կենդանի և գեղեցիկ են նկարագրել շատ-շատերը: Այդ ապարանքում էր Հուսեյն խան սարդարը անցկացնում իր շռայլ, ծերունուն անվա-

[1] Այդ հայելապատ պատշգամբը կոչվել է նաև Աղջկավազք, մի անուն, որը կապված է Երևանում XIX դ. առաջին քառորդում տարածում ստացած մի ավանդության հետ: Այդ ավանդությունը գրի է առնված Ջեմս Մորիերի «Հաջի Բաբա» աշխատության մեջ:

յել կյանքը։ Լինչը գրում է. «Իմ նախորդներից մեկը, որ եղել է այդտեղ 1834 թվին, պատմում է, որ ինքը տեսել է ալկովի պատին (շուշաբանդի մասին է խոսքը—Թ. Հ.)՝ զարդարված չորս պատկերով, որոնք իրենց այժեով ցուցակյաց ծերունու ճաշակով են եղել։ Մուսուլմանն ընդունում է գինու բաժակը վրացուհի գեղեցկուհու ձեռքից, էջմիածնի վարդապետների ներկայությամբ. սրանց հավաստիացումները մահմեդականին քրիստոնյա դարձնելու համար այնքան զորեղ չեն, որքան քրիստոնյա օրիորդի մարմնի



Մարմարակերտ շատրվան սարդարի հայելապատ դահլիճում (Երևանի պատմության թանգարան)։

հրաշալիքները։ Պարսկուհի գեղեցկուհին ... թափանցիկ զգեստ հագած, խոնարհում է յուր գլուխը շահի առաջ։ Որսորդական զգեստ հագած արքայազնը սիրախաղ է անում մատաղահաս օրիորդի հետ ...»[1]

Բերդից հետո իրենց ճարտարապետությամբ աչքի էին ընկնում երկու մզկիթները։ Դրանցից մեկը կառուցվել էր թուրքերի կողմից, և իրենից ներկայացնում էր չորս սյուների վրա հենված համարակապ մի մեծ շինություն, բավական ընդարձակ և շքեղ տեսքով։ Այս մզկիթը կառուցվել էր 1725 թվականին, հետագայում պարսիկների կողմից այն վեր էր ածվել գինանոցի, իսկ 1827 թ.

[1] Х. Ф. Линч, Армения, т. I, Тифлис, 1910, էջ 282—283։

Երևանը գրավելուց հետո, վերակառուցվում և դարձվում է ռուսական եկեղեցի՝ կոչվելով Տիրամոր անունով։ Մյուս մզկիթը պարսկական էր, կառուցված վերջին սարդար Հուսեյն-Ղուլի խանի օրոք, և կոչվում էր թագաժառանգ Աբաս Միրզայի անունով։ Այս մզկիթի ճակատի ու գմբեթի արտաքին կողմը ամբողջապես պատած է եղել կանաչ և կապույտ, փոքրիկ քառակուսի հախճապակիներից, որոնց գործածությունը այնքան հատուկ էր արաբական և պարսկական ճարտարապետության համար։ Երևանի գրավումից հետո՝ այս մզկիթը վերածվեց գինանոցի։



Սարդարի մզկիթը Երևանի բերդում (Երևանի պատմության թանգարան)։

Հոյակապ էր սարդարի հարեմին պատկանող բաղնիքը, որի ներսը ամբողջական մարմարապատ է եղել, մոգաիկ նախշերով զարդարված։ Բուն բաղնիքից բացի, նրան կից պատրաստված է եղել մի ընդարձակ ջրավազան, ամառվա շոգերին նրանում լողանալու և հովանալու համար։ Նրա երկարությունը կազմել է 15 սաժեն, լայնությունը՝ 4, իսկ խորությունը՝ 3 արշին[1]։ Բաղնիքն ու նրան կից այս ջրավազանը, որը իրենից ներկայացրել է աղյուսակերտ մի համարակապ շինություն, գոյություն են ունեցել մինչև 1830 թվականը[2], երբ բերդի վերակառուցման կապակցությամբ

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 867։

[2] Նույն տեղը։

այնտեղ եղած մի շարք այլ շենքերի հետ միասին քանդում են նաև բաղնիքն ու նրան կից ջրավազանը։

Եղած հիշատակություններին համաձայն, XVII դարի երկրորդ կեսին, Երևանի երկրաշարժի (1679 թ.) նախօրեին Երևանի բերդում կային մինչև 800-ի հասնող բնակելի տներ, սակայն սարդարները հետագայում բերդն ամբողջությամբ աստիճանաբար վերցնում են իրենց ձեռքը՝ այնտեղից դուրս քշելով բնակիչներին[1]։ Այնպես որ XIX դ. առաջին քառորդում, չհաշված պաշարումների ժամանակ հարկադրանքով կամ այլ եղանակներով ժամանակավորապես բերդի պարիսպների ներսը քշված բնակիչներին, բերդում մշտաբնակ քաղաքացիներ չեն եղել, այն ամբողջապես գտնվում էր սարդարի, նրա ընտանիքի, հարեմի և կայազորի տրամադրության տակ։

Բերդում կային զորակայաններ, զենքերի ու սննդամթերքների պահեստներ, օժանդակ զանազան շենքեր և այլն։

Սակայն բերդով և քաղաքից հեռու գտնվող ամառանոցավայրերով չէին սահմանափակվում Երևանի սարդարի ժամանցի վայրերը։ Բերդի դիմաց, Դալմայի այգում նա կառուցել էր մի շքեղ տաղավար, ամռան շոգերին նրան շրջապատող սովերախիտ ծառերի ծառուղիներում զբոսնելու և տաղավարում իր ազատ ժամանակն անցկացնելու համար։ Սարդարապատական տաղավարը ունեցել է արևելյան միապետի ճաշակին համապատասխանող բոլոր հարմարություններն։ Նա գտնվում էր Դալմայի մի մասը կազմող Թալլար կոչված այգու մեջ[2]։ Տաղավարի կենտրոնում գտնվում էր մարմարակերտ ավազան՝ «մի շատրվանով (jet d'eau), ուր զարնվում են փոքրիկ զանգակներ, և... արտադրում մեղմ ձայներ, որոնք հաճելի են սարդարի ականջին։ ...Այս վայրը ամառվա համար հաճելի բնակարան է ...ոչ մի բան չի պակասում այս վայրը մի քանի տարուց դարձնելու մի երկնային առանձնարան»— գրում է Մորից Կոցեբուն[3]։

Քաղաքի ճարտարապետական կոթողներից նշանավոր էին եկեղեցիները, մզկիթները և կամուրջները։

Շոպենի հաղորդած տեղեկությունների համաձայն, Երևանը պարսկական լծից ազատագրելու ժամանակ ունեցել է վեց եկեղեցի՝ Պողոս-Պետրոս, ս. Սարգսի, ս. Հովհաննեսի, Կաթուղիկե և այլն, ութ մզկիթ, որոնցից երկուսը գտնվում էին բերդում, իսկ 6-ը՝ քաղաքում[1]։ Բերդում գտնվող մզկիթների մասին նշեցինք բերդի կոթողները նկարագրելիս։ Քաղաքում եղած մզկիթներն էին՝ Ջալ-խանի, Նովրուզ-Ալի-խանի, Սարտիպ-խանի, Հուսեյն-Ալի-խանի, Հաջի-Իմամ-վերդիի և Հաջի-Ջաֆար-բեկի մզկիթները[2]։

Շահար թաղամասում էին գտնվում Պողոս-Պետրոսի և Կաթուղիկե եկեղեցիները։

Պողոս-Պետրոսի եկեղեցին գոյություն է ունեցել նախքան 1679 թ. երկրաշարժը, այդ երկրաշարժի հետևանքով մեծ վնասվածքներ է ստացել, իսկ հետագայում նորից է վերանորոգվել։ Նրա վերաշինման ժամանակի վերաբերյալ գրավոր ոչ մի հիշատակություն չի պահպանվել։ Ըստ երևույթին, այդ կատարվել է հիմնականում երկրաշարժից անմիջապես հետո, XVII դարի վերջին քսաներամյակի որոշ տարիների ընթացքում։ Ավելի ուշ շրջանում՝ 1778 և 1810 թվականներին կատարվել են վերանորոգումներ։ Վերջին վերանորոգման մասին հիշատակվում է եկեղեցու հարավային դռան ճակատին գրված երկու արձանագրությունների մեջ, որոնցից մեկը, որը գտնվում է անմիջապես դռան վերևի մասում, վերաբերում է 1778, իսկ մյուսը, որը փորագրված է նրանից վերև, վերաբերում է 1810 թվականին։

Այդ արձանագրություններից առաջինում հետևյալն է ասված.

«Ի թուին ՌՄԻԷ—1227 (1778) ողորմածութեամբ այ. նորոգեցաւ բոլոր տանիքս սբ. եկեղեցւոյս հանդերձ այլ եւս խախուտ տեղորն, որք ի յորմունս և ի սիմսան էին արդեամբք և հոգացողութեամբ Տն. Սիմէոնի գերընտիր կաթուղիկոսի ամ. Հայոց սրբոյ էջմիածնի, որ ի սոյնոյ քաղաքէ»[3]։

Իսկ 1810 թ. վերանորոգության վերաբերող արձանագրության մեջ ասված է. «Շնորհիւ Ած. եւ հրամանաւ Տն. Եփրեմայ սրբազան կաթուղիկոսին նաև հոգաբարձութեամբ Գեղամեան Ստեփաննոս արքեպիսկոպոսին երկրիս առաջնորդին և Յօհանի որդի աշխատասեր Թոխավելի դարձ. Մարտիրոսին վերանորոգեցաւ հարաւային կողմն սբ.տաճարիս արդեամբք սոյն եկեղեցւոյ օրհնեալ ժողովրդոցն ի ՌՄԿԹ-ի — 1259 (1810)»[4]։

[1] Մորից Ֆոն Կոցեբու (Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 535), Обозрение российских владений за Кавказом, ч. IV, էջ 290։
[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 895, Ալիշան, Այրարատ, էջ 311։
[3] Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 542։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 468։
[2] Նույն տեղը։
[3] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 210։
[4] Նույն տեղը (Ե. Շահազիզի մոտ գրված է «1260 (1811)», որը բառ երևույթին վրիպակ է)։

Ինչպես տեսնում ենք, երկու վերանորոգումներն էլ այնքան մեծ աշխատանքներ չեն պահանջել, որովհետև նրանցից յուրաքանչյուրը կատարվել է միայն մեկ տարում և կրել է մասնակի բնույթ։

Նշվածներից բացի, Պողոս-Պետրոս եկեղեցու վրա եղել են մի շարք այլ արձանագրություններ, որոնցում հիշատակվում է այս կամ այն «բարեպաշտ» անձնավորության կողմից եկեղեցուն տրված նվիրատվությունների և այլ գոհաբերությունների վերաբերյալ։



Պողոս-Պետրոս եկեղեցին (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Պողոս-Պետրոսի, ինչպես և Կաթուղիկե ու Զորավոր եկեղեցիները հին են։ Նկատի ունենալով կառուցվածքի առանձնահատկությունները, այն է՝ երկարավուն քառանկյունի ձևը, կամարների լուսավորությունը և խորանների հարավից դեպի հյուսիս ձգված հատակագծի ձևը, դրանց դասում են հին բազիլիկների տիպին[1]։

Դրանցից ամենալավ ու բազմակողմանի ուսումնասիրությունն է ենթարկվել Պողոս-Պետրոս եկեղեցին, որի վրա ցցուն կերպով տարբերվել են հին կառուցվածքները, որոնք տիպիկ են հին բազիլիկների համար, և նորերը, որոնք աղաղակող տարբերություններ ունեն հնի նկատմամբ։ Մեր օրերում եկեղեցու ներսում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Պողոս-Պետրոս եկեղեցին գոյություն է ունեցել տակավին 1131 թվականին[1]։ Նրա հնության մասին վկայող այլ փաստեր ևս կան, որոնք ուսումնասիրողների կողմից արդեն նկատի են առնված։

Պողոս-Պետրոս եկեղեցին, որ գտնվում էր այժմյան Երևանի «Մոսկվա» կինոթատրոնի տեղում և գոյություն ուներ մինչև վերջինիս շինարարության սկսվելը՝ 1930-ական թվականների սկզբները, կառուցված էր կարմրավուն սրբատաշ տուֆից, մի մեծ բակի մեջ, որը եղել է ծառազարդ[2] և կանաչապատ։ Նա իրենից ներկայացրել է քառանկյունաձև մի բավական մեծ ու հին շինություն։ Ավելի ուշ ժամանակներում նրա հյուսիսային դռան առաջ կառուցել են մի գավիթ, իսկ արևմտյան դռան առաջ՝ զանգակատուն։ Եկեղեցին ունեցել է սյուներ, զանազան քանդակներ, կաթուղիկեներ։ Առանձնապես ուշադրության արժանի էր գլխավոր դուռը, որը երկաթյա է եղել։ Այդ դուռը նախկինում պատկանել է Բայազետի բերդին, 1835 թ. այնտեղից բերվել է և գցվել եկեղեցու վրա՝ ոմն Վարդան անունով քահանայի միջոցներով։

Պողոս-Պետրոս եկեղեցու նկարագրությունը նրա՝ XIX դ. առաջին քառորդում ունեցած դրությամբ տվել է Հովհ. Շահխաթունյանցը։ Սա գրում է. «Իսկ միւսն՝ յանուն առաքելոցն Պետրոսի և Պողոսի, մեծ դրութեամբ քան զկաթուղիկէ եկեղեցին և քան զմիւսն՝ նոյնպէս ի վերայ չորից հիւսածո սեանց, ունի զերիս սեղանս մին՝ի միջին տեղւոջ՝ի կիսարոլորակ կամարայարկի, և երկուքն՝ի միջոցս դրանց աւանդատանց և աստիճանաց բեմին՝ նոյնպես՝ի խարտեղ քարանց՝ յանուն Ստեփաննոսի Նախավկայի, և Յովհաննու Մկրտչի. այսոքիք Բ, սեղանք հանդերձ կաթուղիկէիւնք՝ի նորոյ կառուցան արդեամբք պարոն Ստեփաննոսի Ջալալեանց, և Վարդանայ Կարապետեան բնակչաց Երևանայ. ունի և զերկուս դրունս՝ յարևմտից և՝ի հարաւոյ և շրջապատ պարիսպ։ Յայս եկեղեցի՝ի տանիսն և յորմունսն եղել են ինչ-ինչ նորոգութիւնք՝ ի թիւան հայոց, ՌՄԻԷ, ՌՄԿԲ ևն. իսկ այժմ լաւագոյն նորոգեալ պատեն ահա զտանիքն տախտակօք ժեշտից[3]»։

[1] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 223—224։

[1] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 224—227։

[2] Гр. Уварова, Кавказ. էջ 195։

[3] Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ եկեղեցւոյն և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջ 141—142։

Ուրեմն այսպես, Պողոս-Պետրոս եկեղեցին Կաթուղիկեից մեծ է եղել, նա ունեցել է երեք սեղաններ, որոնցից մեկը եղել է գլխավոր, ունեցել է երկու դուռ՝ արևմուտքից և հարավից, շրջապատված է եղել պարիսպով։ Շահխաթունյանցի ժամանակ նա ունեցել է բարեկարգ վիճակ՝ վերանորոգված էր և տանիքը թիթեղապատած։

Երկրորդ հին և նշանավոր եկեղեցին, որ գտնվում էր Շահար թաղամասում, Կաթուղիկե կոչված ս. Աստվածածինն էր։ Սա գտնվում էր այժմյան Հայկական ՍՍՌ ԳԱ շենքի տեղում (Աբովյան փողոցի վրա), որի բակում մինչև օրս էլ պահպանված է նրա սքանչելի կաթուղիկեներից մեկը։ Այս եկեղեցին էլ նույնպիսի պատմություն և ճակատագիր է ունեցել, ինչպես Պողոս-Պետրոսինը։ Վերջինիս նման կաթուղիկեն էլ գոյություն է ունեցել վաղ ժամանակներից, նա էլ 1679 թվականի երկրաշարժից մեծ վնասվածքներ է ստացել, ավելի ճիշտ՝ կործանվել է և նորից վերաշինվել (1693 թվականին)։ Պողոս-Պետրոս եկեղեցու նման Կաթուղիկեն էլ իրենից ներկայացնում էր հին և համեմատաբար նոր ժամանակներում կատարված կառուցումների մի կոնգլոմերատ։ Նա իր սկզբնական ձևով իրենից ներկայացրել է քառանկյունի հատակագիծ ունեցող մի ընդարձակ շինություն, բազիլիկ, հետագայում կառուցվել է նրա փոքրիկ կաթուղիկեն և գավիթը, որը գտնվում էր հարավային դռան առաջ։ Կաթուղիկեն իր հին դրությամբ ունեցել է ժամատուն, որը կառուցվել է XVII դարում, և օժանդակ շենքեր։ Վերջիններից մեկը ծառայել է իբրև օթևան՝ հոգևորականների համար։ Այդտեղ երբեմն ապրել են Մովսես Սյունեցին և Մելիքսեթ ու սրան աթոռակից Սահակ կաթողիկոսները։ Նրա խուցերում, Ավետիք երեցի ձեռքով, ընդօրինակվել է XVII դ. հայ նշանավոր պատմագիր Առաքել Դավրիժեցու Պատմության օրինակներից մեկը[1]։

Պողոս-Պետրոսի նման Կաթուղիկեն ևս XIX դ. առաջին կեսի դրությամբ ամենից լավ և հակիրճ նկարագրված է Հովհ. Շահխաթունյանցի մոտ։ Ահա՛ թե նա ինչ է գրում Կաթուղիկեի մասին. «...երկու եկեղեցիք են հայոց ՚ի սմա (Շահար թաղամասում — Թ. Հ.) ՚ի կոփածոյ քարանց. մին անուանեալ Կաթուղիկէ եկեղեցի,

[1] Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 520—հիշատակարանը։ Տե՛ս նաև Ե. Շ ա հ ա զ ի զ, Հին Նոր հանը, էջ 207—208։

կառուցեալ ՚ի վերայ չորից հիւսածու սեանց օրոցաձև. ունի գմբէթ և ԼԹ սեղան յանուն սրբուհւոյ աստուածածնի... և քարակերտ կաթուղիկէ կրկին ՚ի վերայ սեղանոյն և ՚ի վերայ տանեաց նորին և ընդ հարաւ..., ունի և շրջապատ պարիսպ, և զսննեակս քահանա-

Կաթուղիկե եկեղեցին (Երևանի պատմության թանգարան)։

յից. այս եկեղեցի չունէր արձանագրութիւն շինութեանն որպէս և միւս եկեղեցիք քաղաքիս, այլ գտանի ՚ի ճակատ արևմտեան որմոյն արտաքուստ թուական հայոց ՌՃՆԲ (1693). ոչ միայն սա, այլև միւս եկեղեցիք և այլ շենք մզկթաց և պանդոկաց են. շինեցան

զկնի մեծի երկրաշարժութեանն դիպելով յամի 1679, յորում միշոցի որ ինչ շինուածք էին յառաջնոց կործանեցան իսպառ»[1]։

Ինչպես երևում է մեջբերումից, կաթուղիկեն կառուցված է եղել սրբատաշ կոփածո քարից և հանգել է չորս սյուների վրա, ունեցել է երկու քարակերտ կաթուղիկե, որոնցից մեկը սեղանի, մյուսը՝ տանիքի վրա, արևմուտքից և հարավից բացվող երկու դուռ և այլն։

Զորավոր եկեղեցին (Երևանի պատմության թանգարան)։

Նրա քարակերտ կաթուղիկեի մակետը մինչև օրս էլ պահպանվում է Երևանի պատմության թանգարանում։ Դա իր չափերով թեպետ փոքր, բայց կերտված է մի ամբողջական քարից և շատ դեղեցիկ է՝ լիովին համապատասխանելով իսկականին։

Երևանի ուշադրության արժանի երրորդ հին եկեղեցին եղել է ս. Անանիա անապատ եկեղեցին, որը գտնվում էր Երևանի Նոր թաղում (խանական շրջանի Խանբաղ կամ Խանլըղ-բաղ կոչված տեղում)։ Ս. Անանիա կոչված հին, ավերակ մատուռի տեղում ս. Անանիա անապատ եկեղեցին կառուցվել է XVII դարի սկզբներին, Ամիրգանա խանի օրոք, Մովսես Սյունեցի վարդապետի (ապա կաթողիկոս) նախաձեռնությամբ[2]։

«Կայր ի վաղեմի ժամանակաց վայելուչ մատուռ մի շինեալ ի վերայ դամբարանի սրբոյ առաքելոյն Անանիայի,— գրում է Առաքել Դավրիժեցին,— որ էր ի հիւսիսային կողմանէ քաղաքին Երևանայ ի մէջ այգեստանեայցն, և էր աւերակ և անմարդաբնակ, որոյ վասն ասաց խանն (Ամիրգունան — Թ. Հ.) առ վարդապետն. տեսանես դայս եկեղեցիս, որ ամայի կայ. արդ՝ լուր ինձ, և մի դնար յայլ աշխարհ, այլ արա զսա քեզ բնակութիւն՝ և զադարեա աստէն, զի իբերաց մերձակայութեամբ և տեսութեամբ մխիթարեսցուք, այլ և ամենայն ժողովուրդք քաղաքականք և վաճառականք աղաչեալ զնոյն խնդրէին ի վարդապետէն։ Յորոց բանս հաճեալ սրբոյ վարդապետին՝ ձեռն ի գործ էարկ շինել զտեղին, արդեամբք և ձեռնատուութեամբ քրիստոնէից տեղականաց և վաճառականաց, որք յօժարութեամբ տային ստուրս ողորմութեան ի շինումն տեղւոյն, վասն սիրոյ վարդապետին, զի բնակեսցէ ի մէջ իւրեանց. վասն որոյ փութանակի շինեցին, շուրջանակի պարիսպ և խցիր և դժամատուն, և սարաւութ, և զայլ տունս յոլով. և կատարեալ զամենայն շինուածսն, բնակեցաւ անդէն վարդապետն իւրովք միաբանօքն, կարգաւն և սահմանաւն այն, զոր կարգեցին ի մեծ անապատն»[1]։

Ինչպես տեսնում ենք, ս. Անանիա անապատը եկեղեցուց բացի ունեցել է և օժանդակ կառուցվածքներ՝ խցեր, ժամատուն, զանգակատուն։ Նա շրջապատված է եղել պարսպով, ունեցել է ընդարձակ բակ։ Այս եկեղեցում են թաղվել Հովհաննես Կողեոն կոչված վարդապետը, Մովսես կաթողիկոսը և այլն։

1636 թ. Փիլիպպոս կաթողիկոսը վերանորոգում է ս. Անանիա եկեղեցին, սակայն 1679 թ. երկրաշարժից հետո նորից է հարկ լինում արմատապես վերաշինել այն։ Ըստ հիշատակություններին, երկրաշարժից հետո, 1693 թ. Խոջա Փանոս անունով մեկը այդ անապատը ընդարձակում է՝ կառուցելով չորս սյուների վրա հանգող նոր քարակերտ մի բավական մեծ շինություն, որն ուներ սյունազարդ ժամատուն, երկու ավանդատներ, դեղեցիկ զանգակատուն՝ կառուցված միջին դռան վրա։ XVIII դարի վերջերին (1793 թ.) այն նորից է վերանորոգվում՝ ոմն երևանցի Գաբրիել հարյուրապետի կողմից, որը իր կատարած այդ վերանորոգման մասին թողել է մի ընդարձակ հիշատակություն՝ բաղկացած քսան տողից։ Ս. Անանիա անապատը ունեցել է մեծ թվով վանականներ, եղել է նշանավոր ուխտատեղերից մեկը։ Հաճախ ժողովուրդը այն կոչել է Զորավոր

---

1 Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջ 141 (Երևանի կաթուղիկե եկեղեցու նկարագրությունը տե՛ս նաև՝ Ալիշան, Այրարատ, էջ 315)։

2 Այդ մատուռի և այնտեղ կառուցված եկեղեցու մասին մանրամասն տե՛ս Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 189—196։

1 Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 294—295։

եկեղեցի, նրանում գտնվող մի հրաշագործ համարված ավետարանի պատճառով[1]։

Պողոս-Պետրոսի և Կաթուղիկեի նման՝ ս. Անանիա անապատը ևս կառուցված էր սրբատաշ կարմրավուն տուֆից[2]։

Երևանի մյուս երեք եկեղեցիները՝ ս. Սարգիսը, ս. Գևորգը, ս. Հովհաննեսը իրենց հնությամբ ու ճարտարապետությամբ առանձնապես աչքի ընկնող կոթողներ չեն։ Ս. Սարգիսը գտնվում էր Զորագեղում, նրա վերին մասում։ Այժմ էլ այն կանգուն է և գտնվում է Հրազդանի վրա կառուցված Հաղթանակ կամուրջից քիչ վերև, Հրազդանի ձախ կողմում։ Ս. Հովհաննեսը Կոնդում էր, նրա հյուսիսային կողմում։ Սա իր վրա ունի մի շարք արձանագրություններ, որոնք վերաբերում են տարբեր ժամանակների. նրանցում հիշատակվում են այն զոհողությունների ու ողորմածությունների մասին, որ այս կամ այն անձնավորությունը արել է եկեղեցուն։ Ս. Գևորգը գտնվում էր ս. Սարգսի մոտ, Զորագեղ թաղամասում. ամենք այն նույնացնում են կաթողիկոսարանի հետ, որը գտնվում էր այդ մասերում[1]։

Ս. Սարգսի եկեղեցին (Երևանի պատմության թանգարան)։

Երևանում հիշատակվում է նաև Երկուերեսանի ս. Նշան կոչված հայոց եկեղեցին, որը մեզ հետաքրքրող ժամանակներում արդեն գոյություն չուներ։

Հնությունների մյուս խումբը բաղկացած էր պարսկա-արաբա-ադրբեջանական հարտարապետության կոթողներից՝ մզկիթներից, որոնց թիվը XIX դ. առաջին քառորդի Երևանում հասնում էր 8-ի։ Դրանցից երկուսին մենք ծանոթացանք բերդի ու խանի պարանքի մասին խոսելիս։ Մյուս 6 մզկիթները գտնվում էին քաղաքում։ Դրանցից՝ և՛ իր ճարտարապետությամբ, և՛ խաղացած դերով ամենաառաջնակարգը Հուսեյն-Ալի-խանի մզկիթն էր։ Մյուսներից շատ քիչ նշանավոր էին Շահար թաղամասում

Դամիր-բուլաղի մզկիթի արտաքին տեսքը (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

գտնվող Հաջի-Նովրուզ-Ալի-բեկի և Զալ-խանի մզկիթները, իսկ Դամիր-բուլաղի մզկիթներն ավելի փոքր և համեմատաբար անշուք էին։

Ե՛վ հայ, և՛ օտար հեղինակներն ու ճանապարհորդները Երևանի մզկիթների մեջ առանձնահատուկ ուշադրություն են դարձրել դրանց պսակը կազմող Հուսեյն-Ալի-խանի մզկիթի վրա, որը

[1] Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, Эриванская губерния, сост. капитан Услар, էջ 255—256, Ա լ ի շ ա ն, Այրարատ, էջ 311, Է փ ր ի կ յ ա ն, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. I, էջ 703—704, Ե. Շ ա հ ա զ ի զ, Հին Երևանը, էջ 189—196։

[2] Гр. У в а р о в а, Кавказ, էջ 195։

[1] Տե՛ս Ե. Շ ա հ ա զ ի զ, Հին Երևանը, էջ 158, 205—207 և այլուր։

սովորաբար կոչվել է Գյոյ-ջամի կամ Գեոմ-ջամի (կապույտ մզկիթ)։

Գյոյ-ջամին պատկանում է շիա դավանության մզկիթների շարքին։ Նա Երևանի մզկիթների մեջ ոչ միայն ամենագեղեցիկն ու շքեղը, այլ ամենամեծն էր։ Գյոյ-ջամին իրենից ներկայացնում է քառանկյունաձև ընդարձակ մի շինություն՝ բարձր մինարեով և լայնանիստ գմբեթով։ Աղյուսակերտ է, նրա գմբեթը, մինարեն և պատերի մի զգալի մասը պատած են երկնագույն հախճապակով։ Բուն մզկիթի շինվածքները գտնվում են հարավային և հյուսիսային կողմերում, իսկ նրա երկու թևերում և դիմացը կառուցված են օժանդակ մի շարք շենքեր ու խցիկներ, որոնք բուն մզկիթի հետ միասին շրջապատում են մի քառակուսի գեղեցիկ և ընդարձակ բակ։ Վերջինիս կենտրոնում կառուցված է մի ջրավազան, որի



Գյոյ մզկիթի արտաքին ընդհանուր տեսքը արևմտյան կողմից
(Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

շուրջը ընկած է սովերախիտ ծառերով ծածկված լայն ու խնամքով սալահատակված ճեմահրապարակը։ Մզկիթն ունի երեք մուտք՝ երկուսը փոքր, մեկը՝ մեծ։ Փոքր դռները գտնվում են նրա արևելյան և արևմտյան կողմերում, իսկ մեծը, որը և համարվել է նրա հիմնական դուռը, հարավային կողմում է։ Բուն մզկիթը դեպի հարավ է ընկած։ Նա բաղկացած է երեք կամարակապ դահլիճներից, որոնք կապված են իրար հետ։ Ամենաբարձրը միջին դահլիճն է։ Այդ դահլիճի վրա բարձրանում է նրա մեծանիստ գմբեթը։ Մյուս

երկու դահլիճները, որոնք կից են միջին դահլիճին՝ համեմատաբար ցածր առաստաղ ունեն և փոքր են։ Դահլիճները ընդհանրապես անզարդ են, կառուցվածքով պարզ, ունեցել են հասարակ կահավորում։ Զարդարված են միայն դահլիճների՝ դեպի բակը բացվող լուսամուտները։ Իսկ դրանց զարդարանքն էլ իրենից ներկայացնում է դուրսդուրս ապակիներով լուսամուտների մոտ գետեղված արևելյան նախշեր։

Բակի հյուսիսային կողմում գտնվում էր փոքր աղոթարանը, որն իր մեծությամբ ու շքեղությամբ՝ հարավային կողմում եղած հիմնական մզկիթի հետ չէր կարող նույնիսկ համեմատվել։ Շատ գեղեցիկ էր բարձրադիր մինարեն, որը հին Երևանի կառուցվածքների բարձրագույն կետն էր և ուշադրություն էր գրավում շատ հեռվից։ Մզկիթից դեպի մինարեի գագաթը տանում էր մի նեղ և ուղղաձիգ աստիճան, որով ամեն օր բարձրացել և մահմեդական հասարակությանը աղոթքի է հրավիրել աղանչին։

Գյոյ-ջամին նկարագրել են շատ-շատերը՝ Հաքոտհաուզենը, Ե. Լաչինովը, Հովհ. Շահխաթունյանցը, Լինչը, Ուսլարովան, Ալիշանը և ուրիշներ, որոնք առանձնապես նշել են նրա գեղեցկությունը և կից եղած դպրոցը[1]։

Դրանք բոլորն էլ մեծ գովեստով են խոսում Գյոյ-ջամիի մեծության, գեղեցկության, ճարտարապետական կառուցվածքի և ունեցած հարմարությունների մասին։ Առանձնապես այն բարձր է գնահատված Հաքոտհաուզենի մոտ։ Գերմանացի ճանապարհորդը, որը Խաչատուր Աբովյանի ուղեկցությամբ մոտիկից ծանոթացել է Երևանի այս կամ այն չափով նշանավոր գրեթե բոլոր շինություններին, հետևյալն է գրում Գյոյ-ջամիի մասին. «Երկու աւուրք յառաջ քան զայս՝ առաջնորդութեամբ Խորան զարձեալ Աբովեանի տեսեալ էր զմզկիթն, որ շքեղատես և հոյակապ մինարէիւն և վայելչաշէն զրամբքն, կարեմ ասել՝ առաջին շինուածոց է Երևանայ[2]. առաջի մզկիթն են բաղում շինուածք, յորս և դպրոցն նոցա և բնակարանք մոլլայից»[3]։

---

[1] Տե՛ս «Հակատհաուզենայ ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու այն է ի Հայս և ի Վիրս», Վաղարշապատ, 1872, էջ 244—245, Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջ 150—151, Записки декабриста Е. Лачинова об Армении (М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, Документы, էջ 312) և այլն։

[2] Ընդգծումը մերն է—Ք. Հ.։

[3] «Հակատհաուզենայ ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու այն է ի Հայս և ի Վիրս», էջ 244։

Իրոք որ Գյոյ-ջամին պարսկա-ադրբեջանական ոճի մի հրաշալի կոթող է, որտեղ «ամեն բանում երևում է կառուցող ճարտարապետի սիրող ձեռքը, նրա...արևելյան վառ ճաշակը[1]», ինչպես ճիշտ կերպով նկատում է Երևանի հին կոթողներին այնքան լավ տեղյակ Երվանդ Շահազիզը։

Գյոյ մզկիթը փողոցի կողմից (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Գյոյ-ջամիի հարթավայրին դարպասի ճակատին՝ նրա շինության մասին թողնված է արաբատառ մի կարճ արձանագրություն, որում նշված են մզկիթի կառուցողի անունն ու մզկիթի կառուցման թվականը[2]։

1 Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 199։

2 Ս. Զելինսկին դրա կառուցման թվականը համարում է 1764-ը (Сборник мат. для описания мест. и племен Кавказа, вып. I, Город Эривань, էջ 7), իսկ Ե. Շահազիզը՝ 1760-ը (Հին Երևանը, էջ 200)։

Գյոյ-ջամին գտնվում էր շուկայի մոտ, նրա հարթավայրի կողմի պարիսպը անմիջապես ձգվում էր շուկայի հրապարակի հյուսիսային մասում։ Նա իր օժանդակ շենքերով և բակով այժմ էլ գոյություն ունի և վեր է ածված երկու թանգարանի, որոնցից մեկը Երևանի պատմության, մյուսը՝ բնագիտական թանգարանն է։ Երևանի պատմության թանգարանը գտնվում է բուն մզկիթում, որը գտնվում է բակի հարթավայրի կողմում, իսկ բնագիտական թանգարանը տեղադրված է փոքր աղոթարանում՝ բակի հյուսիսային կողմում։

Քաղաքի քաղաքացիական կառուցվածքներից ուշադրության արժանի էր Գյոյ-ջամիի մոտ, շուկա-հրապարակում կառուցված խանութաշարքը, որը բաղկացած էր մի գծով դասավորված 24 համարապատ խանութներից։ Այս խանութաշարքը կառուցվել է վերջին սարդարի օրոք և կոչվել է ուղղակի փակ կամ ծածկած շուկա (բազար)։ Ճարտարապետական առումով իր տիպի մեջ Հուսեյն-Ղուլի խանի կառուցած այդ խանութաշարքը ուներ իր հետաքրքրությունը։ Համենք դա համեմատում են այն ժամանակվա Արևելքի խոշոր քաղաքների ծածկած շուկաների հետ և նպատակավոր կարծիք հայտնում նրա մասին։

Պատմական առումով որոշ հետաքրքրություն են ներկայացնում Ջանգվի վրա տարբեր ժամանակներում եղած կամուրջները։ Մեզ հասած աղբյուրները և Ջանգվի ափերին պահպանված հնություններ թույլ են տվել ենթադրելու, որ Երևանի շրջանում Ջանգվի վրա կամուրջներ են եղել երեք տեղում. դրանցից մեկը բերդի հյուսիս-արևմտյան անկյունում էր, անմիջապես խանի ապարանքի տակ, երկրորդը՝ Զորագեղ թաղամասի հատվածում, իսկ երրորդը՝ ավելի վեր, Քանաքեռ գյուղի տակ։ Վերջինիս հետքերը մինչև օրս էլ նկատվում են։ Զորագեղի թաղում եղած երբեմնի կամուրջի հետքերը XIX դ. առաջին կեսին հազիվ էին նշմարվում. մեր կատարած շրջագայության ժամանակ այնտեղ մենք չկարողացանք նկատել հին կամուրջի որևէ հետք։

Տնտեսական առումով և առհասարակ հաղորդակցության համար հույժ կարևոր նշանակություն է ունեցել բերդի հյուսիս-արևմտյան անկյունում գտնվող կամուրջը[1], որովհետև այն՝ քաղաքը

1 Այդ կամուրջի մասին տե՛ս Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառաց Արարատայ, հ. երկրորդ, էջ 153, И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 723, К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 444) և այլ տեղերում։

Զանգվի (Հրազդան) քառակամար «Կարմիր» կամուրջը և նրա շրջակայքը (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Զանգվի վրայով կապում էր դեպի Էջմիածին, Աշտարակ և այլ վայրեր տանող հիմնական ճանապարհի հետ։ 1679 թ. երկրաշարժի հետևանքով բերդի և քաղաքի կառուցվածքների կործանման հետ միասին փլվում է Զանգվի այդ կամուրջը, որը, սակայն, շուտով վերականգնվում և շարք է մտնում[1]։ Հետագայում նա մի քանի անգամ ևս ենթարկվել է մասնակի վերանորոգումների։ Երևանը պարսկական լծից ազատագրելուց հետո այն առաջին անգամ հիմնական վերանորոգման է ենթարկվել 1851 թվականին, որից հետո մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը՝ կատարվել են մասնակի մի քանի վերանորոգումներ ևս։ Այդ կամուրջը որ մինչև «Հաղթանակ» կամուրջի կառուցումը մնում էր իրրև քաղաքը Հրազդանի աջ ափի հետ կապող հիմնական օղակը, այժմ էլ գոյություն ունի և սովետական շրջանում ենթարկվել է բարենորոգումների, իր հիմնական կմախքով մնալով նախկին ձևի մեջ։ Այս կամուրջը հայտնի է եղել «Կաւմիր կամուրջ» և «Խոջափլավի կամուրջ» անուններով։ Նա կարմիր է կոչվել պարզապես կարմիր տուֆից կառուցված լինելու պատճառով,

[1] «Հայրենասէր» (շաբաթաթերթ), 1843, օգոստոս, № 14. С. Зелинский, Город Эривань («Сборник мат. для опис. мест. и племен Кавказа», вып. I, էջ 8)։

իսկ Խոջափլավ անունը նա ստացել է իր վերանորոգողներից մեկի՝ քանաքեռցի անվանի հարուստ Խոջա-փլավի անունից, մի անձնավորություն, որի հետ կապում են և Աշտարակի կամուրջի կառուցումը[1]։ Նա բաղկացած է չորս սրածայր կամարներից[2], որոնցից երկուսի տակ հոսում է Հրազդանը, իսկ մյուս երկուսի տակով անցնում են Հրազդանից հանված երկու առուները։

Կըրխ-բուլաղի (Գետառ) կամուրջը Դամիրբուլաղ թաղամասում (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

XIX դ. առաջին կեսում չորս կամուրջներ են եղել Կըրխ-բուլաղ գետի (Գետառի) վրա, որոնցից մեկը գտնվում էր Նորքի տակ՝ Աբբաս-դարայում։ Շոպենի հիշատակության համաձայն՝ դրանք բոլորն էլ աննշան կամուրջներ էին և 30-ական թվականների սկզբներին ունեին վերանորոգման կարիք[3]։

[1] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 186—187։

[2] Տարօրինակ է, որ «Հայրենասէր» շաբաթաթերթում (1843 թ., օգոստոս, № 14) «Երևան իշխանանիստ քաղաք Արարատեան դաշտի» անստորագիր հոդվածում այն համարված է «եռակամար» (այդ նույն հոդվածում Երևանի բերդին էլ վերագրված է ոչ թե երկու, այլ երեք պարիսպ), իսկ Աւիշանն էլ կոչել է «եօթնակամար քարաշէն Կարմիր կամուրջ» (Այրարատ, էջ 316)։

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 723։

Քաղաքի գերեզմանոցներից հայտնի էին երկուսը։ Դրանցից մեկը գտնվում էր այժմյան Երևանի՝ դեպի երկաթուղային կայարանը տանող ճանապարհին և կոչվում էր «Մլեր», որը իրրև անուն գործածության մեջ է եղել վաղ ժամանակներից՝ ընդհուպ մինչև մեր օրերը։ Այս գերեզմանոցի տապանաքարերն, ընդհանուր առմամբ, անշուք և առանց տապանագրի էին։ Դա եղել է և՛ հայկական, և՛ ռուսական գերեզմանոց[1]։

Պատմական և ճարտարապետական առումով ուշադրության արժանի էր քաղաքի հայկական մյուս, ավելի հին գերեզմանոցը, որը գտնվում էր քաղաքի հյուսիս-արևմտյան կողմում, Թափաբաշ (Կոնդ) թաղամասում և կոչվում էր Կոզեռն։ Կոզեռն էր կոչվում և՛ բլուրը, և՛ նրա վրա գտնվող գերեզմանոցը, իսկ այդ անունը կապված էր XI դարի Հովհաննես Կոզեռն կոչված վարդապետ-գիտնականի անվան հետ։ Այստեղ է թաղվել նաև Մովսես Սյունեցի կաթողիկոսը, որի տապանաքարի վրա եղել է ութ տողից բաղկացած տապանագիր՝ հանգուցյալի ով և որտեղացի լինելու, նրա պաշտոնի և մահվան թվի (1633թ.) վերաբերյալ[2]։

Կոզեռն գերեզմանոցում, նրա կենտրոնական մասում, Կոզեռն բլրի վրա գտնվում էր համանուն մատուռը, որ կառուցված էր Հովհաննես Կոզեռնի գերեզմանի վրա։ Հենց այդ մատուռի մոտ թաղվել է նշված Մովսես Սյունեցին։ Հետագայում՝ 1829 թ. մատուռը վերանորոգման է ենթարկվել Մելիք-Սահակ Աղամալյանի կողմից, որը ևս թաղվել է այստեղ (1834 թ.)[3]։

Կոզեռն մատուռից ոչ պակաս հայտնի է Գեթսեմանի մատուռը, որը գտնվում էր քաղաքի հյուսիսային մասում, Շահար թաղամասի այգիների մեջ՝ էջմիածնին պատկանող մի այգում, որը հետագայում վաճառվել է ոմն երևանցի հայի։ Շահխաթունյանցի հիշատակության համաձայն՝ այս մատուռի ավերակների շուրջը կային բազմաթիվ շիրիմներ։ Երվանդ Շահազիզը ենթադրում է, որ Գեթսեմանի կոչված մատուռը հավանաբար ունեցել է XII դարի վերջերին և XIII դարի սկզբներին կառուցված հայկական «եկեղեցիների ճարտարապետական ոճն ու ձևը»[4]։

Երևանի շրջակայքում եղած հնություններ (Կարմիր բլուր, Սիծեռնակաբերդ և այլն) ավելի մեծ հետաքրքրություն են ներկա-

---

[1] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 223։

[2] Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջ 155։

[3] Նույն տեղը, էջ 156։

[4] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 212—214։

«Կոզեռն» գերեզմանատունը և մատուռը (Երևանի պատմության թանգարան)։

Գեթսեմանի մատուռը (Երևանի պատմության թանգարան)։

յացնում, սակայն նրանք կապված են հնագույն ժամանակների հետ և կարող են ներկայացվել միայն այդ ժամանակների տակ։

Քաղաքի արտաքին տեսքի և նրա ճարտարապետական առանձին կոթողների մասին եղած տեղեկությունների համեմատությամբ՝ ավելի ժլատ են մեզ հասած տեղեկությունները պարսկական տիրապետության ժամանակաշրջանի Երևանի ներքին կարգ ու կանոնի վերաբերյալ։ Բայց և այնպես դրանք օգնում են որոշակի գաղափար կազմելու՝ այդ ժամանակվա Երևանի ներքին կյանքի կարևոր մի քանի կողմերի մասին։

Պարսկաստանի քաղաքների նման, Անդրկովկասի քաղաքներում ևս գոյություն են ունեցել ոստիկանական երկու կարգի անվտանգության օրգաններ՝ համամաղամային և չուկայական։ Երևանում համաքաղաքային ոստիկանության գլուխ կանգնած էր ոստիկանապետը՝ դարուղան[1], որին ենթարկվում էին հարյուրապետները (յուզբաշի) և տասնապետները (չաուշ)։ Իսկ գիշերային անվտանգության ոստիկանությունը հանձնարարված էր մի այլ հատուկ օրգանի, որի գլուխ կանգնած էր գիշերային ոստիկանության պետը՝ հասաս-բաշին։ Վերջինիս տրամադրության տակ գտնվում էին պահապանները՝ հասաս-ները, որոնք գիշերները պարտավոր էին հսկել ու պահպանել կարգը քաղաքի թաղամասերում ու փողոցներում։ Շուկան ուներ իր առանձին մարմինները։ Այստեղ յուրաքանչյուր առևտրական և արհեստավորական շարք ուներ իր հասասները՝ մեկ կամ երկու հոգուց բաղկացած։ Ամբողջ ոստիկանությունը (և՛ համաքաղաքայինը, և՛ շուկայինը) պահվում էր քաղաքային բնակչության հաշվին[2], նրանից այդ միջոցները կորզելով հատուկ հարկի ձևով, որի մասին ասվեց իր տեղում։

Պարսկական քաղաքների ներքին անվտանգության կազմակերպման այս ձևը եվրոպական մի շարք ճանապարհորդների կողմից համարվել է օրինակելի և արժանացել բարձր գնահատականի։ Նրանք այդպիսի եզրակացության են հանգել պարզապես միայն այն բանի համար, որ պարսկական քաղաքներում, քաղաքային շրջագծի ներսում տեղի ունեցած անկարգությունների և հանցագործությունների համար կառավարության առջև անձնական պատասխանատվություն էր կրում ինքը՝ քաղաքային բնակչությունը, ուստի վերջինս շահագրգռված էր ամեն կերպ վերացնելու խաղաղ

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 458։

[2] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 260—262։

կյանքին սպառնացող բոլոր վտանգները։ Այդ հիմքի վրա կարիք է առաջանում կազմակերպելու քաղաքային ոստիկանություն, մանավանդ որ պետական վարչական օրգանները իրենց բծախնդրությամբ, կաշառակերությամբ, անտեղի տուգանքներով ոչ թե օրինականության պաշտպան, այլ կատարյալ պատուհաս էին քաղաքացիների համար[1]։

Սակայն քաղաքային ոստիկանությունն էլ չէր փոխում իրերի դրությունը, և միայն առաջին պահից է դրական տպավորություն թողնում պարսկական քաղաքների ներքին կարգ ու կանոնի կազմակերպումը։ Իրականում ժողովրդի հաշվին պահվող ոստիկանական աշխատողներից և պահապաններից յուրաքանչյուրը, սկսած դարուղայից ու հասաս-բաշուց և վերջացրած չաուշներով ու հասասներով, կատարում էր ամեն տեսակի անօրինականություններ և չարաշահումներ։ Ոստիկանության պաշտոնի մենավարձի ստիճանավորը, իր այդ պաշտոնի համար սարդարին տալով 819 թումանն, աշխատել է հատուցած գումարներից բացի՝ բնակիչներից անօրինական եղանակներով իր համար դուրս կորզել այլ միջոցներ[2]։ Եթե այդ բոլորի փոխարեն քաղաքային ոստիկանությունը գտնվեր իր բարձրության վրա և, թեկուզ նվազագույն չափով, ապահովեր քաղաքի և շուկայի խաղաղ առօրյան, բնակիչների կյանքն ու գույքը, դեռ ոչինչ, մի կերպ կարելի էր քաղաքի ներքին կյանքը համարել նորմալ և տանելի, իսկ նրա ոստիկանության գործունեությունը՝ բավարար։ Այնինչ պարսկական տիրապետության շրջանի Երևանի ներքին կյանքը միանգամայն անապահով էր, հասարակության ապադասակարգային տարրերը՝ այսպես կոչված լոթիները, խուլիգանական բանդաներ կազմած, գիշերվա պահին ցրվում էին քաղաքով մեկ և մինչև լույս ահ ու սարսափի մեջ պահում քաղաքացիներին։ Ամռանը Երևանի լոթիները նոր լրացումներ էին ստանում Խոյից, որտեղից եկած գողերն ու ավազակները, իրենց բնիկ համագործակիցների հետ միասին, գերեկը թաքնվում էին Կզըլ-կալայի այգիներում, գիշերները զբաղվում գողությամբ, սպանություններով, բռնաբարությամբ, թալանով։ Ահա թե ինչ է գրում Ի. Շոպենը հասարակության համար պատուհաս դարձած և հենց տիրող կարգերի արդյունքը հանդիսացող այդ գող-ավազակների մասին. «Նկարագրելով իրեն օգտա-

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, часть II, городские цехи, էջ 262։

[2] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 52—53։

կար որևէ զբաղմունքի նվիրած դասերին, պետք է հիշատակել նաև մարդկանց մի հատուկ դասակարգի մասին, որն իր համար արհեստ է ընտրել՝ ոչինչ չանելը։ Նրանք կոչվում են լոթի, բառացի՝ խեղկատակ։ Լոթիները ամբողջ ցերեկը քնում են, արթնանում են երեկոյան, հավաքվում և զբաղվում հարբեցողությամբ և զանազան անառակություններով։ Երբ լոթու մոտ փող չի լինում, նա վճռում է ամեն բան անել, սպանությունն ու թալանը նրա համար ոչինչ են։ Ամռանը Երևան լոթիներ էին գալիս Խոյից և Պարսկաստանի այլ քաղաքներից, և այդ ժամանակ նրանց էին վերագրում քաղաքում տեղի ունեցող բոլոր անկարգությունները։ Սրանք սովորաբար թաքնվում էին Կզըլ-կալա արվարձանի այգիներում, և երեկոյից իրար ազդանշաններ էին տալիս ականջ ծակող սուլոցով, որը գիշերային լռության մեջ հնչում էր ամբողջ քաղաքում և տհաճ տպավորություն թողնում խաղաղ բնակիչների վրա»[1]։

Պարսկական տիրապետության շրջանում Երևանը չի ունեցել **կոյուղի, ջրմուղ, գրոսայգիներ**։ Քաղաքը գտնվում էր սանիտարական վատ պայմաններում, բնակչության մահացության տոկոսը շատ բարձր էր, տարափոխիկ հիվանդությունները խլել են մեծ զոհեր։

Երևանի բնակչությունը խմելու համար գործ է ածել Զանգվի, Կըրխ-բուլաղի, Սյոգյուտլուի, Դամիր-բուլաղի և ջրհորների ջրերը։ Դրանց բոլորի ջրերն էլ պարունակում էին օրգանական զանազան նյութեր և առաջացնում մի շարք հիվանդություններ։ Այդ տեսակետից որոշ բացառություն էին կազմում Կըրխ-բուլաղ գետի և Դամիր-բուլաղ աղբյուրի ջրերը, որոնք, սակայն, նույնպես զերծ չէին օրգանական մնացորդներից։ Կըրխ-բուլաղի ջուրը կեղտոտվում և պղտորվում էր երկար տարածության վրա բաց հոսելուց և բազմաթիվ այն առուներից, որոնք նրանից բաժանվում և ձգվում էին դեպի այգիներն ու բանջարանոցները։ Զանգվի, Սյոգյուտլուի աղբյուրների (որոնք բխում էին այժմյան «26 Կոմիսարների» անվան այգուց հարավ և իրենց որակով ոչնչով չէին տարբերվում ճահճաջրերից) և ջրհորների ջրերը խմելու համար ավելի վնասակար էին։ Դրանց գործածելուց առաջանում էին ստամոքսային-կյանքի համար վտանգավոր, հիվանդություններ։ Դրանք բոլորն էլ տալիս էին նատվածքներ, որ և լավագույն ցուցանիշն է՝ խմելու համար ոչ պիտանի լինելու։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 855—856։

Շատ տարօրինակ է հնչում Ուլարի կողմից հին Երևանի ջրին տրված բավական բարձր գնահատականը։ Նա գրում է. «Զանգվից դեպի աջ ափը անց են կացված Նորագեղի և Դալմայի, իսկ դեպի ձախ ափը՝ Աբուհայաթի և Մամռիի առուները։ Վերջին երկուսի ջրից օգտվում են Թափաբաշ թաղամասը և մասամբ Շահարը։ Կըրխ-բուլաղից նույնպես անց են կացված առուներ դեպի Զոլմաքշի, Շահար և Դամիր-բուլաղ։ Աղբյուրները, որոնք գտնվում են այս վերջին թաղամասում, խմելու համար տալիս են ամենալավ ջուրը, սակայն ընդհանրապես այստեղի ջուրը առողջության վրա

«Ծահլարազար» մզկիթի (հրապարակ) աղբյուրը
(Երևանի պատմության թանգարան)։

վնասակար ոչ մի ազդեցություն չի թողնում։ Բացի դրանից, քաղաքի բոլոր մասերում շինված են ջրհորներ, որոնք հաշվվում են մինչև 200»[1]։

Ուլարի այդ գնահատականը չի համապատասխանում մյուս սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններին և իրական դրության։ Այլ հեղինակներ հին Երևանի ջուրը որակել են որպես

[1] Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, часть 6, Эриванская губерния, сост. капитан Услар, էջ 255։

խմելու համար ոչ այնքան պիտանի և առողջության վրա բացասաբար ազդող[1]։

Ըստ երևույթին, երևանցիները միշտ մտահոգվել են խմելու համար ավելի որակյալ ջուր ունենալու հարցով։ Երևանի բնակիչների համար խմելու ջրի միակ և լավագույն աղբյուրը կարող էր լինել Կըրխ-բուլաղ գետը։ Այն ժամանակվա պայմաններում նրանք այլ տեղերից հազիվ թե կարողանային ջուր բերել, հասցնել քաղաք։ Եվ իրոք, այդպիսի երկու հաջող փորձ են կատարվել քաղաքի թաղամասերը ջուր բերել Կըրխ-բուլաղ գետի՝ նախքան այգիների շրջանը մտած, պարզկա և մաքուր ջուր ունեցող տեղից։ Դրանցից մեկը կատարվել է XVII դարի կեսերին՝ երևանցի Արղումբեկի որդի Մոծակ մականվանված Խոջա Գրիգորի նախաձեռնությամբ և միջոցներով։ Մոծակ Գրիգորին հաջողվում է 1652 թ. «մեկ քյահրեզով կամարակապ կերպի» Կըրխ-բուլաղի մաքուր մասից ջուր բերել և հասցնել Կաթուղիկե եկեղեցու բակը, իսկ այստեղից էլ այն հանվել և տարվել է քաղաքի կենտրոնական մասը[2]։ Երկրորդ փորձը կատարվել է XVIII դարի 90-ական թվականներին՝ երևանցի Տեր-Գրիգորյան եղբայրների նյութական միջոցներով և անձնական նախաձեռնությամբ։ Տեր-Գրիգորյան եղբայրները կոնդակցիներ էին։ Նրանք 1793 թ. Կըրխ-բուլաղից խմելու ջուրը ագուգաններով բերում հասցնում են իրենց թաղամասը՝ Կոնդ, ս. Հովհաննես եկեղեցու բակը, որտեղից բաշխում թաղամասի բակերին։ Երվանդ Շահազիզը վկայում է, որ ս. Հովհաննեսի անունով կոչված այդ ընդգետնյա տուփի հետքերը նկատելի են եղել նույնիսկ XX դարի 20-ական թվականների սկզբներին[3]։

Կաթուղիկեի «Քյահրեզի» և ս. Հովհաննեսի տուփի ջրերը, որոնք բերված էին Կըրխ-բուլաղի ավելի մաքուր մասից՝ գետնի տակով, խմելու համար ավելի պիտանի էին, քան քաղաքում գործածվող մյուս ջրերը։ Սակայն, ըստ երևույթին, դրանցով եկող ջուրը մեծաքանակ չէր և հազիվ էր բավարարում քաղաքի բնակչության մի ոչ մեծ հատվածին։ Պատմական տեղեկությունների բացակայության պատճառով հնարավոր չէ իմանալ՝ արդյոք քյահրեզն ու

---

1 Ի. Շոպենը երևանի բնակչության մեծ մահացության պատճառներից մեկը համարում է նրա խմելու ջուրը, որը դեպի բակերն էր տարվում փոքրիկ առուներով (И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 465—466)։

2 Մանրամասն տե՛ս Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 27—28։

3 Նույն տեղը, էջ 25—26։



Գամիրբուլաղ թաղամասի աղբյուրները (Երևանի պատմության թանգարան)։



Ջրքամ (Երևանի պատմության թանգարան)։

առուն միաժամանա՞կ են գործել, թե՞ վերջինս անց է կացվել ա-ռաջինի խափանումից հետո։

Երևանի բնակչությանը խմելու համար պիտանի ջրով ապահո-վելու հարցը XIX դարի ընթացքում տեղից չի շարժվում։ Այդ հար-ցը քաղաքի բնակչության և նրա առանձին ներկայացուցիչների ու օրգանների ուշադրության կենտրոնն է դառնում միայն XX դարում։

Երևանը հատուկ զրոսայգիներ չի ունեցել։ Իբրև զրոսայգի են ծառայել եկեղեցիների ու մզկիթների բակերը, որոնք սովորաբար ծառազարդ էին, ունեին սալահատակված ծառուղիներ և ջրի ա-վակներ ու ծորակներ։ Իր մեծությամբ ու գեղեցկությամբ հատկա-պես հայտնի է եղել Հուսեյն-Ալի-խանի՝ քառակուսու ձև ունեցող բակը (Գյոյ-ջամի), որն, ինչպես տեսանք, իրենից ներկայացնում էր մի հրաշալի ծառաստան-հովարան։

Երևանի հրապարակները թվով հինգ էին, որոնցից մեկը հա-մարվում էր հենց Հուսեյն-Ալի-խանինը։ Մյուս չորս հրապարակնե-րը, որոնցից մեկը գտնվում էր Խանրադում, մյուսը՝ շուկայի և բերդի միջև, երրորդը՝ Զալ-խանի հրապարակը, իսկ չորրորդը՝ Ֆահլա-բազարը[1], զրոսնելու և հանգստի համար որևէ հարմարություն չունեին։ Սակայն դրանք հաճախ բազմամարդ էին լինում, որով-հետև այդ հրապարակներում հավաքվում էին զրուցելու, մասնա-վոր գործարքներ կնքելու, աշխատանք որոնելու (հատկապես Ֆահ-լաբազարում) և այլ շարժառիթներով։

Ինչպես այլ առիթներով նշվել է, Երևանը, Պարսկաստանի քա-ղաքների նման, գտնվում էր սանիտարական վատ պայմաններում։ Կոյուղու բացակայությունը, քաղաքի տարբեր մասերում կանգնած ջրերի ու ճահճուտների առկայությունը, փոշին, կեղտը, մրդեղենի և բանջարեղենի մնացորդները, շուկա-հրապարակներում և փո-ղոցներում թափառող անասունները, այդ բոլորը ապականում էին քաղաքը և դարձնում հիվանդությունների բույն։ Սանիտարական վատ պայմաններում էին գտնվում և տները։ Աղքատ քաղաքացի-ների համար ուժից վեր էր օճառի գործածությունը։ Սրանք օճառի փոխարեն գործ էին ածում շագան բույսից ստացվող սոդան[2]։

Երևանում կային 10 բաղնիք, որոնցից 9-ը քաղաքում, իսկ մեկը՝ բերդում։ Վերջինս պատկանում էր սարդարի հարեմին և իր ժամանակվա տեսակետից՝ ուներ աքանչելի կառուցվածք։ Այդ

[1] И Шопен, Исторический памятник Армянской области էջ 469։

[2] Նույն տեղը, էջ 856։

քաղնիքին կից, ինչպես ասվեց, կար և մի լողարան-ջրավազան։ Քաղաքի 9 բաղնիքները[1] ըստ թաղամասերի բաշխված էին հետև-յալ կերպ։

Շահար թաղամասում գտնվում էր 3 բաղնիք՝ Շեյխ-ուլ-Իսլա-մի, Զալի-խանի և Մեհտի-բեկի բաղնիքները։ Թափարաշ թաղամա-սում՝ 5 բաղնիք, դրանք էին՝ Հաջի-Բեգումի, Շեյխ-ուլ-Իսլամի (այս անունով երկու բաղնիք կար՝ մեկը Շահարում, մյուսը՝ Թա-փաբաշում), Հաջի-Ալիի, Կաֆարի կամ Հաջի-Ֆաթալիի և Քյարիմ-բեկի բաղնիքները, իսկ վերջին, 9-րդ բաղնիքը գտնվում էր Դամիր-բուլաղ թաղամասում և կոչվում էր Հասան-Ալի կամ Ջաֆար-բեկ[2]։

Բաղնիք Գյոյ մզկիթի մոտ (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո կինո արխիվ)։

Առաջին հայացքից թվում է, թե Երևանի նման փոքր քաղաքի համար 9 բաղնիքը նույնիսկ ավելի է՝ քան անհրաժեշտ է։ Սակայն այդ այդպես չէ։ Երևանի բաղնիքները եղել են շատ փոքր, անհար-մար, կեղտոտ, նրանցում չեն պահպանվել սանիտարական ամենա-տարրական կանոնները։ Այլ խոսքով ասած, դրանք ոչ թե մաքրու-թյան օբյեկտներ են եղել, այլ կեղտի ու վարակի բներ, ինչպես ընդ-

[1] Շոպենի մոտ մի տեղ նշվում է, որ Երևանում եղել է 8 բաղնիք (Истори-ческий памятник Армянской области, էջ 469)՝ թվարկելով դրանք, իսկ մի այլ տեղում (էջ 867) հիշատակվում է 9 բաղնիք, որոնց թվում և Դամիրբուլաղում գտնվող Հասան-Ալիի բաղնիքը, որը առաջինում չի հիշատակված։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 867։

դծում են ականատես հեղինակները[1]։ Այդ տեսակետից միայն բացառություն էր կազմում բերդի բաղնիքը, որը պատկանում էր հարեմին և ուներ բավարար հարմարություններ ու ճոխ սարքավորում։

Պարսկաստանի և Անդրկովկասի մյուս քաղաքների նման Երևանում ևս XIX դ. առաջին կառուցում իսկական գիտական բժշկությունը բացակայել է։ Այստեղ, ինչպես և ամբողջ Անդրկովկասում, ամենուրեք տարածված են եղել գեղձախտն ու մկնատամը, որոնք ոմանք դիտում են իբրև բոր հիվանդության մնացորդներ։ Հաճախ մոլեգնել է ծաղիկը, որովհետև մինչև Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացնելը պրոֆիլակտիկ միջոցառումներ և պատվաստում չէին իրագործվում[2]։ Այստեղ անառվոր չէին այնպիսի մահաբեր հիվանդություններ, ինչպիսիք էին՝ խոլերան և ժանտախտը, որոնք այնքան զոհերի պատճառ դարձան ռուս-պարսկական երկրորդ պատերազմին անմիջապես հաջորդած տարիներին։

Երևանում բնակչության բուժման գործն ամբողջովին գտնվում էր տեսական պատրաստականություններից զուրկ, միայն իրենց պրակտիկ փորձով որոշ հմտություն ունեցող մարդկանց՝ հեքիմների («բժիշկների») և դրանց օգնականների ձեռքին, որոնք բոլորը միասին ընդամենը 4-ն էին։ Որոշ դեպքերում, դրանցից ոմանք իրենց փորձով ու անձնազոհ աշխատանքով կարողանում էին էֆեկտիվ օգնություն ցույց տալ ծանր հիվանդություններով տառապողներին։ 20-ական թվականներին Երևանում հայտնի էր Գևորգ Տեր-Կարապետյանը, որը ռուս-պարսկական պատերազմից հետո դարձավ քաղաքային բժիշկ։ Նա, ինչպես նշում է Ի. Շոպենը, մեծ գործ է կատարել հատկապես 1829—1830 թթ., քաղաքի բնակչությանը խոլերայի ու ժանտախտի դեմ բուժօգնություն ցույց տալու խնդրում։ Գ. Տեր-Կարապետյանը ռուս բժիշկ Ֆ. Օ. Ստեֆանովիչի հետ միասին շատ կյանքեր է փրկել։ Նրանք մի քանի անգամ փրկել են նաև Ի. Շոպենի կյանքը, որն իրեն անքան երախտապարտ է զգում նրանց նկատմամբ՝ հայտնելով իր խորին շնորհակալությունը[3]։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 867, տե՛ս նաև К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 445։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 915։

[3] Նույն տեղը, էջ 915—916։

Բնակչության բուժման բնագավառի մյուս գործիչները ոսկրաբուժները (անբեխի) և սափրիչներն էին։ Դրանցից առաջինները, որոնք 2 հոգի էին, զբաղվում էին ոսկրային հիվանդությունների (ջարդվածքներ և այլն) բուժմամբ, իսկ սափրիչները (դալլաք, բարբար) իրենց արհեստների հետ միասին զբաղվում էին արյուն առնելով և այլ կարգի «վիրաբուժությամբ»[1]։

Ամբողջ Երևանի խանությունում, այդ թվում և Երևան քաղաքում ոչ մի դեղատուն և հիվանդանոց չի եղել, բոլոր դեղերը, որոնք այստեղ հայտնի էին և գործածության մեջ էին, վաճառվում էին շուկաներում՝ դեղապրանքների կրպակներում, պղպեղի և դարչինի հետ միասին։ Նույն կրպակներում վաճառվում էին և՛ անդամթերքները, և՛ ամենասիրունավոր նյութերը։ Երևանը պարսկական լծից ազատագրելուց հետո, նոր բացված ռազմական հոսպիտալին կից կազմակերպվում է դեղատուն, որին թույլատրվում է՝ դեղորայք բաց թողնել զինվորականների հետ միասին նաև քաղաքացիական աստիճանավորներին[2]։

Միանգամայն հասկանալի է, որ նկարագրված սոցիալ-տնտեսական վատթար պայմանների, բժշկության բացակայության, հիվանդանոցներ և դեղատներ չլինելու, սանիտարական անմխիթար պայմանների և այլ աղտակների հետևանքով՝ Երևանում պետք է նվազագույնի հասներ բնական աճը, իսկ մահացությունները հասնեին մեծ չափերի։ Եվ, իրոք, Երևանում մահացությունը հասել է մեծ տոկոսի, աճը եղել է նվազագույն, հետևաբար տարածվել են շատ հիվանդություններ։ Այդ նկատել և արձանագրել են մի շարք հեղինակներ, որոնք սակայն մեծ մասամբ դրա իսկական պատճառը համարել են ոչ թե սոցիալականը, այլ՝ բնա-կլիմայականը։ Նրանց մեջ՝ ըստ երևույթին, համեմատաբար ավելի ճիշտ բացատրությունը տվել է Ի. Շոպենը։ Սա գրում է, որ «Երևանի կլիման վատառողջ է», և այնտեղ «մահացությունը անասելոր»[3] բարձր է։ Նա նշում է, որ սրա պատճառներն էին՝ ա) կյանքի շատ պահանջմունքների պակասությունը, բ) տների վատ կառուցվածքը, գ) առևտրականների անուշադրությունը վաճառվող անդամթերքների որակի նկատմամբ, դ) տների մոտով փոքր և փակուղու առուներով անցնող ջուրը և այլն[4]։ Մինչդեռ, օրինակ՝ նույնիսկ երվանդ Շահազիզը, որն ապրել

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 916—917։

[2] Նույն տեղը, էջ 917։

[3] Նույն տեղը, էջ 465—466։

[4] Նույն տեղը։

է մեր օրերում, Երևանի բնակչության թույլ աճն ու բարձր մահացությունը բացատրում է միայն նրա բնա-կլիմայական պայմաններով։ «Արդ, հին Երևանի խմելու ջրի այդպիսի վնասակար հատկություն,— գրում է նա,— նրա օդի խստությունը, ճահիճների գոյությունը քաղաքի անմատուր և մշտապես ապականության մեջ պահված լինելու հանգամանքի հետ միասին՝ ստեղծել են նրա համար հնոմը մի հակասողջական վիճակ, որի հետևանքով և նրա բնակիչների թվի աճելությունն ընդհանրապես թույլ է եղել և մահացությունը գործել»[1]։

Բնա-կլիմայական պայմաններն ու ջուրը անշուշտ ազդում են բնակչության առողջության վրա, սակայն մահացության չափը և աճը հիմնականում կապված են սոցիալ-տնտեսական պայմանների հետ։

5. ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Կուլտուրայի բնդհանուր բնութագիրը։ Դպրոցները։ Ջուռնաչիները ու աշուղները։ Նկարչությունը։ Ավանդությունները։ Զեռագրերը։ Երևանցի նշանավոր գործիչները։

Տնտեսական և հասարակական զարգացման ցածր մակարդակին համապատասխան՝ Երևանի կուլտուրան էլ XIX դ. առաջին քառորդում ունեցել է շատ ցածր մակարդակ։ Նա ոչնչով չէր տարբերվում հետամնաց Պարսկաստանի պրովինցիալ այլ քաղաքներից։ Այդ ժամանակվա Երևանը չուներ ո՛չ կանոնավոր դպրոցներ, ո՛չ գրքերի ու թերթերի տպագրություն, ո՛չ թատրոն, ո՛չ էլ նշանակալի բարձրության հասած ճարտարապետություն։ Աղքատիկ, շատ աղքատիկ է պարսկական տիրապետության շրջանի Երևանի կուլտուրան։ Նա ամբողջովին սահմանափակվում էր նոր, ոչինչ չասող ճարտարապետական մի քանի կառույցվածքներով, որոնց մասին տալեց քաղաքի նկարագրությունը տալիս, մզկիթներին և եկեղեցիներին կից ողորմելի վիճակ ունեցող դպրոցներով, մի քանի ջուռնաչիներով ու աշուղներով, մի քանի տասնյակի հասնող ձեռագրերի կոլեկցիայով, որը կուտակվել էր դարերի ընթացքում և բանավոր կերպով սերնդից սերունդ հաղորդվող երկու-երեք ավանդություններով, որոնք կապված էին քաղաքի կյանքի հետ։ Ընդ որում, նրա կուլտուրան դարերի ընթացքում կրել է տարբեր աղդեցություններ՝ սկսած նախատուրա-

[1] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 23։

տական հնագույն ժամանակներից մինչև մեզ հետաքրքրող դարը ներառյալ։ Այս պատճառով էլ, XIX դ. առաջին քառորդի Երևանում կարելի էր տեսնել և՛ նախաուրարտական ու ուրարտական, և՛ հայկական, և՛ արաբա-պարսկա-ադրբեջանական կուլտուրայի նմուշներ՝ հատկապես ճարտարապետության բնագավառում։

Երևանի խանությունում և նրա կենտրոն Երևան քաղաքում XIX դ. առաջին քառորդում դպրոցական գործը, որը գտնվում էր շատ թշվառ դրության մեջ, ամբողջովին գտնվում էր քրիստոնյա և մահմեդական հոգևորականության ձեռքին։ Կրթությունն այդ ժամանակ հիմնականում սահմանափակվում էր միայն նրանով, որ յուրաքանչյուր վանական կամ մոլլա իր մոտ պահում էր մոնթ (փոքրավոր), որին պատրաստում էր իրեն փոխարինելու համար։ Սակայն կային և այնպիսի հոգևորականներ, որոնք ունեին մի քանի աշակերտից բաղկացած մասնավոր դպրոցներ, և աշակերտներից հատուկ վարձ վերցնելով, նրանց սովորեցնում էին գրագիտություն և հոգևոր-կրոնական ուսմունք։ Ամեն մի մզկիթին և եկեղեցուն կից կար դպրոց, որտեղ նույնպես գրագիտություն էին սովորեցնում երեխաներին[1]։ 20-ական թվականների վերջերին Երևան քաղաքում մզկիթներին և եկեղեցիներին կից եղած բոլոր դպրոցներում սովորողների թիվը հասել է ընդամենը 280-ի[2]։ Ինչպես վկայում է Ի. Շոպենը, այդ ժամանակներում ամբողջ Երևանի և Նախիջևանի խանություններում բոլոր սովորողների թիվը չի անցել 1000-ից, այսինքն՝ մոտավորապես յուրաքանչյուր 164 մարդուն ընկել է միայն մեկ սովորող[3], իսկ Երևան քաղաքում՝ 50—60 մարդուն՝ մեկ սովորող։ Անհամեմատելի վիճակում էր գտնվում կրթության գործը նաև էջմիածնում։ Այստեղ կանոնավոր չէր գործում նույնիսկ 1813 թ. Ներսես Աշտարակեցու ջանքերով վերաբացված ժառանգավորաց փոքրիկ դպրոցը, որի սովորողների թիվը մի քանի տասնյակից չէր անցնում։

Ե՛վ մասնավոր, և՛ եկեղեցիներին ու մզկիթներին կից եղած դպրոցներում սովորեցնում էին գրագիտություն և կրոն։ Ամենուրեք տարածված էին ծեծն ու մարմնական այլ պատիժներ, իսկ դասավանդելու ճանաչված ու անտարակելի մեթոդը՝ սխոլաստիկական էր, անգիր անելը՝ առանց իմաստի մեջ խորամուխ լինելու, կամ հասկանալու համար որևէ ջանք գործադրելու։ Ավանդվող առարկաների մեծագույն մասը կրոնի բնագավառին էր վերաբերում, իսկ մյուս մասի մեջ մտնում էին լեզուները։ Որոշ աշակերտների ավան-

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 468։
[2] Նույն տեղը, էջ 903։
[3] Նույն տեղը։

դում էին տարրական գիտելիքներ աշխարհագրությունից, աստղաբաշխությունից և այլ գիտություններից, որոնց ավանդումը հարմարեցվում էր կրոնական գաղափարախոսությանը[1]: Ըստ էության՝ և՛ մահմեդական ու քրիստոնյա հոգևորականների մասնավոր դրպրոցները, և՛ մզկիթներին ու եկեղեցիներին կից եղած դպրոցները իրար նման էին: Նրանք իրար համապատասխանում էին և՛ ավանդվող առարկաներով, և՛ ուսուցման մեթոդներով, միայն այն տարբերությամբ, որ մի տեղում մահմեդական կրոնի դոգմաներն էին սովորում, մյուս տեղում՝ քրիստոնեական կրոնի դոգմաները:

Երևանի մզկիթներին կից, ինչպես ասվեց, եղել են դպրոցներ, որոնցում սովորել են մահմեդական երեխաները: Մզկիթներին կից եղած այդ դպրոցները կոչվել են մեդրեսաներ (ուսումնարան): Այստեղ երեխաները պատրաստվում էին հոգևորական դառնալու կամ ուղղակի ձգտում էին որոշ գիտելիքներ ձեռք բերել: Ուսուցիչները երկու կարգի էին: Ցածր դասարանների ուսուցիչները կոչվում էին մուդարիսներ, իսկ բարձր դասարանների ուսուցիչները՝ վայզեր: Տվյալ մզկիթին կից եղած դպրոցի աշակերտների ու դասարանների թիվը կախված էր մզկիթի եկամուտների չափից: Եթե նրա եկամուտները շատ էին, ապա նա հնարավորություն ուներ վարձելու ավելի մեծ թվով ու ավելի որակյալ ուսուցիչների[2]: Կային մզկիթներ, որոնց կից եղած դպրոցներում՝ սկզբից մինչև վերջ՝ ավանդում էին միևնույն ուսուցիչները՝ մուշտեհիդները (муджтенд), որոնց մոտ աշակերտներ էին գալիս տարբեր տեղերից: Մուշտեհիդը սովորաբար իր աշակերտների միջից իրեն համար ընտրում էր փոխանորդ և դրան իրրև նշան՝ տվյալ աշակերտին էր թողնում իր թիկնոցը[3]:

Երևանի մզկիթների մեջ համեմատաբար ամենից մշտական, մեծ ու կանոնավոր գործող դպրոցն ունեցել է Գյոյ-ջամին (Հուսեյն-Ալի-խանի մզկիթը), որը դպրոցի համար ուներ հատուկ հարմարանքներ: XIX դ. առաջին քառորդի վերջերին այս մզկիթին կից եղած դպրոցում եղել են մոտավորապես 200 աշակերտներ: Հայ և օտար շատ հեղինակներ այդ մզկիթի մասին խոսելիս միշտ անդրադառնում են նաև նրա դպրոցին[4]: Սակայն դպրոցի կենդանի ուսման-

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 911:

[2] Նույն տեղը, էջ 902:

[3] Նույն տեղը:

[4] Հովհ. Շահխաթունյանց, Առաքելագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ դասատաց Արարատայ, հ. երկրորդ, էջ 150—151. И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 468, 903, Ալիշան, Այրարատ, էջ 316 և այլն:

բանական նկարագիրը տվել է Հաքոբ Հաուկնը, որը Խ. Աբովյանի ուղեկցությամբ մոտիկից դիտել է նրա առօրյան: Ահա՛ թե ինչ է գրում գերմանացի ճանապարհորդը. «Երկու առաջ յառաջ քան զայս՝ առաջնորդութեամբ նորան գարձեալ Աբովեանի տեսեալ էի զմզկիթըն, որ շքեղատես և հոյակապ միներէիւն և վայելչաշէն գրամբքն, կարեմ ասել՝ առաջին շինութիւնն է Երեւանայ. առաջի մզկիթն են բազում շինուածք, յորս և դպրոցն նոցա և բնակարանք մօլլայից. ի մտնելն մեր յառաջնում նուագի ընդ պարիսպն մզկիթի՝ տեսաք զի յարձակ պատշգամբի միում նստէին երեսուն աշակերտք բատ արեւելեան սովորութեանն (ծալեալ ոտիք), ի մէջ նոցա երկու ուսուցիչք նոյնօրինակ նստեալք, կոչէին յաշակերտաց երկուս երկուս, և նստուցեալ առաջի իւրեանց համարս առնուին աշակերտք՝ որք պատմէին կամ ընթեռնուին զուսանելիսն, շարժէին անդադար զգլուխս իւրեանց յայսկոյս. մատեանք նոցա ձեռագիր են յեղու Պարսից, ի գրելն ևս ի կիր առնուն տառս Պարսից, թէև ինքեանք Թաթարք ուսուցանեն աշակերտաց միայն զքանի մի թեթև առարկայս, որպես զպամատութիւն Նադիր Շահին և այլն. և ձեռագիր. ուսուցիչն այնչափ պարտի կրկնել զաւանդեալն, մինչեւ աշակերտք կարող լինցին մեքենաբար բմբռնել զայնս ի լեզուս, միանգամայն անծանօթ ինքեանց, սմին իրի է՝ զի սոսկ ընթերցումն և ի գիր սմս ձիգս մաշէ զկեանս ողորմելի աշակերտին. յայլում տեղւոջ նստեալ տեսաք զմոլլայ մի ծերունի. և առաջի նորա երկու դեռահաս պատանիք. նոքա ունկն դնէին և ինքն երկիւղածութեամբ ընթերցեալ զՂուրանն մեկնէր նոցա»[1]:

Բերված պարբերությունից երևում է, որ Գյոյ-ջամիին կից եղած դպրոցում չեն եղել տարրական հարմարություններ (սեղան, նստարան, գրատախտակ և այլն), գրենական պիտույքներ և տպագիր դասագրքեր: Թեպետև սովորողները եղել են ազգբեջանցի մանուկներ («թաթարներ»), սակայն ուսուցումը կատարվել է նրանց համար անհասկանալի լեզվով՝ պարսկերենով: Շատ անգամ աշակերտները ոչինչ չեն հասկացել իրենց դասերից և միայն մեխանիկորեն դրանք անգիր են արել: Ուսումը տևել է երկար, աշակերտների համար ծանր պայմաններում, ուսման հիմնական նպատակը գրագիտություն սովորեցնելն էր և մի փոքր ծանոթություն տալը պատմությունից ու այլ առարկաներից: Պետք է ասել, որ ազգբեջանցի աշակերտների համար ամենից ծանրը եղել է

[1] Բարօն Օգոստոս ֆոն Հակաուսհաուզենայ՝ Ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու, այն է ի Հայս և ի Վիրս, էջ 244—245:

իրենց համար օտար պարսկերենով սովորելը։ Նրանք սոսկ պրել կարդալ սովորելու համար կյանք են մաշել երկար ու ձիգ տարիներ. «Մինչեւ աշակերտը կարող լինցին մեքենաբար ըմբռնել գաղտնի ի լեզու (պարսկերենը — Թ. Հ.), միանգամայն անծանօթ ինքեանց, սակայն իրի է՝ զի սոսկ ընթերցումն և ի գիր ամս ձիգս մաշէ զկեանս ողորմելի աշակերտին», ասում է Հաքստհաուզենը։ Սակայն Երևանում աղրբեջանցիներին իրենց մայրենի լեզվով ավանդելու հարցը վճռակամապես բարձրացվեց 40-ական թվականներին՝ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի կողմից։

Եթե մզկիթներին կից եղած դպրոցներից «օրինակելին»՝ Գյոյջամիի դպրոցն, այդպիսի պատկեր էր ներկայացնում, ապա միանգամայն պարզ է, թե նույնատիպ մյուս դպրոցները ինչպիսի խղճուկ վիճակ կունենային։

Ինչպես ասվեց, եկեղեցիներին կից եղած դպրոցները էապես չէին տարբերվում մզկիթներին կից եղած դպրոցներից։ Էական տարբերությունը միայն կայանում էր նրանում, որ առաջիններում աշակերտները, որոնք առանց բացառության հայեր էին, սովորում էին մայրենի լեզվով, մինչդեռ երկրորդները լինելով ադրբեջանցիներ, սովորում էին իրենց ոչ մայրենի լեզվով՝ պարսկերեն, որը համարվում էր խանության պետական-պաշտոնական լեզուն։

Հայկական դպրոցների մեջ «ամենաօրինակելին», «բարձր կրթություն տվողն» ու «կանոնավոր» գործողը եղել է Էջմիածնի վանքին կից եղած հոգևոր գիշերօթիկ դպրոցը, որի փայլուն նկարագրությունը տվել է Մեսրոպ Թաղիադյանը։ Սա գրում է, որ մի ծերունի վարդապետ պարապում էր 5—10 տարեկան մանչերի հետ։ Վարդապետ ուսուցչի սովորական դաստիարակության փորձված միջոցները եղել են ծեծն ու այլ պատիժներ։ Նա, աշակերտի պատասխանը մի փոքր ուշանալու դեպքում, իր հսկայական ցուպով հարվածներ էր տալիս մանուկին։ Խիստ պատժի էին ենթարկում նմանապես և այն երեխաներին, որոնք ֆիզիկապես ի վիճակի չէին աղոթքի համար դիշերվա ժամին վեր կենալու կամ մի քանի ժամ տևող ժամերգությանը եկեղեցում՝ ոտքի վրա կանգնելու։ Ուսման ծրագիրը բազկացած էր շարականներից, աղոթքներից, հայերենի քերականությունից, որը ոչ թե սովորեցնում, այլ մեխանիկորեն անգիր անել էին տալիս։ Դպրոցի ուսման տարին որոշակի տևողություն չուներ, դասերը սկսում և վերջացնում էին կամայական կերպով, իսկ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ և նրանից հետո՝ դպրոցը մի որոշ ժամանակ միանգամից դադարել էր գործելուց[1]։

Երևանի եկեղեցիներին կից եղած դպրոցներն էլ ավելի վատթար դրության մեջ էին։ Այստեղ յուրաքանչյուր հոգևորական-ուսուցիչ, որը կարող էր նույնիսկ իսկական գրագետ չլիներ, սովորեցնում էր իր ձևով։ Ուսման ծրագրի մեծագույն մասը վերաբերում էր կրոնին։ Այդ դպրոցներն ավարտողները առավելագույն դեպքում կարողանում էին մայրենի լեզվով մի կերպ գրել կարդալ, փոքր-ինչ ծանոթ լինելով նաև նրա քերականությանը։ Դասագրքեր գոյություն չունեին, եղած ձեռնարկներն, առանց բացառության, կրոնական բովանդակություն ունեին և գտնվում էին ձեռագիր վիճակում։

Նույնպիսի վիճակ գոյություն ուներ և մասնավոր խալֆայական տիպի դպրոցներում։ Այստեղ սովորեցնում էին գրել կարդալ։ Ադրբեջանական մասնավոր դպրոցներում ուսուցիչը սկզբից սովորեցնում էր այբուբենը, ապա աշակերտին ստիպում արաբերեն կարդալ դուրանը, «չնայած ոչ սովորեցնողների և ոչ էլ սովորողների մեծ մասը դրանից ոչինչ չէր հասկանում»[2]։ Մի քանի տարուց հետո աշակերտին տալիս էին պարսկերեն գիրք և սովորեցնում գրել, իսկ երբ վերջինս կարողանում էր գրել, մի քանի հատված անգիր իմանալ կրոնից ու գրական աշխատություններից և ընթերցել բավական արագությամբ, նրան համարում էին դպրոցն արդեն ավարտած[3]։ Հայկական մասնավոր դպրոցներում ուսումն էլ ավելի մակերեսային էր։ Այստեղ ևս սկզբնապես սովորեցնում էին կարդալ սուրբ գիրքը (աստվածաշունչը), ապա սովորեցնում գրել։ Ե՛վ ադրբեջանական, և՛ հայկական մասնավոր դպրոցներում աշխարհագրության, պատմության, մաթեմատիկայի և այլ գիտությունների մասին անգամ գաղափար չունեին[4]։

Հին Երևանում երաժշտության միակ ներկայացուցիչները զուռնաչիներն ու աշուղներն էին, ինչպես նաև ժամանակավորապես լույթների եկող կովկասյան երաժշտական այլ խմբեր։ Զուռնաչիներն իրենց գործիքներով ճանապարհորդել են բնակավայրից բնակա-

1 Մեսրոպ Թաղիադյանց, Ճանապարհորդութիւն ի Հայս, Կալկաթա, 1847, էջ 111—114, տե՛ս նաև՝ Մ. Գասպարյան, Երևանի գավառական դպրոցը XIX դարի Ա կեսում, «Սովետական մանկավարժ» (ամսագիր), Երևան, 1941, № 3։

2 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 904։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

վայր[1] և զբաղվել արվեստով (ավելի ճիշտ՝ արհեստով)։ XIX դ. առաջին քառորդի վերջերին Երևանում զուռնաչիների թիվը հասել է 12-ի, որոնցից 7-ը հայեր էին, մնացած 5-ը՝ ադրբեջանցիներ[2]։ Քաղաքում սրանք էին նվագում հարսանիքների, խնջույքների և տոների ժամանակ։ Զուռնաչիները մեծ վաստակ ունեին միայն նոր տարվա տոնին՝ նովրուզ-բայրամին, որի տոնակատարությունը տևեկցվել է մի քանի օր տևող զբոսանքով, ուրախությամբ, կերուխումով և երգուպարով[3]։ Աշուղները ավելի թափառաշրջիկ էին։ Այս պատճառով էլ սկզբնաղբյուրների մեջ սրանք չեն հիշատակվում այս կամ այն բնակավայրի՝ գյուղի, քաղաքի հետ կապված։ Աշուղները ձգտում էին սազի նվագակցությամբ։ Նրանք հանդես էին գալիս բոլոր տեղերում և երգում էին՝ ինչպես նշանավոր բանաստեղծներից վերցրած երգերից, այնպես էլ իրենց սեփական ստեղծագործություններից։ Առանց աշուղների գրեթե ոչ մի տոնակատարություն չէր լինում, «ուրախություն չէր կարող լինել»[4]։ Նրանք էին բոլոր ուրախությունների ոգին։ Ժողովուրդը

Նրաժշտախումբ հին Երևանում (Երևանի պատմության թանգարան)։

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 896—897։

[2] Նույն տեղը, էջ 897։

[3] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 55։

[4] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 897։

մեծ ուշադրությամբ էր լսում աշուղին, որովհետև սրա երգերը իմաստալից էին և մեծ մասամբ ժողովրդական ծագումի։

XIX դ. առաջին քառորդում Երևանում նկարչական արվեստը դրեթե բացակայում էր։ Ի. Շոպենի վկայությամբ, Երևանում կամերալ ցուցակագրման ժամանակ մնացել էին միայն երկու նկարիչ, որոնք գտնվում էին ղզլարմելի վիճակում։ Շոպենը գրում է. «Այլևս չունենալով իրենց համեստ արվեստի համար մեկենասներ՝ նրանք (նկարիչները—Բ. Հ.) ընկել են ղզլարմելի դրության մեջ, նրանց արվեստը ծաղիկների, ծաղկաշղթաների, թռչունների պատկերման մի հանդգնություն է, չի կարելի չհիանալ կոլորիտի պարզությամբ և թարմությամբ, սակայն իսկական արվեստի մասին լռել։ Ընդհանրապես պերսպեկտիվի կանոնը նրանց ...օտար է և նրանց նկարները առանց ստվերների են»[1]։

Նկարագրություններից երևում է, որ սարդարի ապարանքի պատերին եղած նկարները ևս (Ֆաթ-Ալի-շահի, Հուսեյն-Ղուլի խան սարդարի, նրա եղբայր Հասան խանի և այլոց նկարները, որոնց մասին նշվեց սարդարի պալատի նկարագրության ժամանակ) ունեցել են այնպիսի բնույթ, որի մասին նշում է Շոպենը։ Արվեստի համար նորություններ չէին նաև մզկիթներում, բերդի բաղնիքում և այլ տեղերում եղած մոզաիկ նախշերը։ Դրանք կրկնություն էին տակավին վաղ ժամանակներից գոյություն ունեցող արևելյան նկարչական ոճերի։ Առավելագույն դեպքում դրանք միայն հարազատ էին մնում այդ ոճերին։

Երևանում ժողովուրդը ստեղծել է մի քանի ավանդություններ։ Դրանցից մեկը, որը կարելի է համարել ամենից նշանավորը, ստեղծվել է առաջին ռուս-պարսկական պատերազմի շրջանում։ Ըստ այդ ավանդության, Երևանի սարդար Հուսեյն-Ղուլի խանը դեպի Վրաստան կատարած իր մի արշավանքի ժամանակ այնտեղից գերում և իր հարեմն է բերում մի մանկամարդ վրացի գեղեցկուհի։ Սրան փրկելու համար գաղտագողի Երևան է գալիս սիրահարը։ Ավանդության ասելով, իրերի բերումով խանը ազատում է օրիորդին և թույլ տալիս, որպեսզի իր սիրածի հետ միասին վերադառնա Վրաստան[2]։

Այս ավանդությունն առաջին անգամ գրի է առել Ջնմս Մոբրիները XIX դ. երկրորդ տասնամյակում՝ Երևանում եղած ժամանակ։ Հենց այդ ավանդությունն էլ նրա համար հիմք է դարձել

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 895—896։

[2] Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ջ, էջ 323—324։

գրելու իր «Հաջի Բաբա» վերնագիրը կրող աշխատությունը։ Այս ավանդությունը պատմվել է և մի այլ վարիանտով (օրինակ՝ Մորից Վագների մոտ), ըստ որի՝ հերոսուհին եղել է հայ։

Երևանի եկեղեցիներում, մզկիթներում և որոշ տներում կային տարբեր բովանդակությամբ ձեռագրեր։ Երվանդ Շահազիզի վկայությամբ, 1923 թ. Երևանից հավաքել և էջմիածնի ձեռագրատունն են հանձնել 78 ձեռագրեր, որոնցից 25-ը պահվում էր Կաթուղիկեում, 20-ը՝ Պողոս-Պետրոս եկեղեցում՝ 7-ը՝ ս. Սարգիս եկեղեցում, 21-ը՝ ս. Հովհաննեսում, 2-ը՝ Ջորավորում, իսկ մնացած 3-ը՝ Նորքում։ Դրանք եղել են ավետարաններ, աստվածաշունչ, ճաշոցներ, մաշտոցներ, նարեկ և այլն[1]։ Մզկիթներում պահվող ձեռագրերն, առանց բացառության, եղել են պարսկերեն և արաբերեն։ Դրանք մեծ մասամբ ղուրաններ էին և մուսուլմանական սրբազան այլ գրքեր։ Կային նաև աշխարհիկ բնույթի պարսկերեն ու արաբերեն ձեռագրեր՝ բանաստեղծություններ, դեղագրություններ և այլն[2]։ Ըստ հիշատակությունների, տներում պատահում էին պատմական և այլ բովանդակություն ունեցող ձեռագրեր, որոնք շատ բարձր են գնահատվել։ Հայերից սեփական ձեռագրեր են ունեցել միայն շատ քիչ թվով հարուստներ։ Դրանք եղել են կրոնական բովանդակության[3]։

Երևանը պատմության ընթացքում ունեցել է բավական թվով նշանավոր մարդիկ՝ կաթողիկոսներ, գրիչներ, կուլտուրայի գործիչներ։ Երևանի հետ են կապված հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի և նրա ժամանակակից Մեսրոպ Թաղիադյանի գործունեությունը, որի մասին խոսք կլինի հաջորդ ժամանակաշրջանի կուլտուրայի բաժնում։

1 Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 227։

2 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 917։

3 Նույն տեղը։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆԸ 1828—1879 ԹԹ.

1. ԵՐԵՎԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԼԾԻՑ

Անդրկովկասի ժողովուրդները՝ հայերը, վրացիներն ու ադրբեջանցիները թուրք-պարսկական ծանր լծից ազատագրվելու գործը տակավին XVII դարից կապում էին ընդարձակվող ռուսական պետության հետ։ Սակայն ընդհուպ մինչև XVIII դարի վերջերը Ռուսաստանի քաղաքական շահերը թույլ չէին տալիս դեպի Անդրկովկաս լայնացնելու պետության տերիտորիան, եթե նկատի չունենանք Պետրոս I-ի ժամանակ Կասպից ծովի ափերով ձեռնարկված արշավանքը։

XVIII դարի վերջերին և XIX դ. սկզբին քաղաքական նպաստավոր պայմաններ են ստեղծվում Ռուսաստանի համար՝ հարկավոր իր ազդեցությունը տարածելու Սև և Կասպից ծովերի վրա, ինչպես և գրավելու Անդրկովկասը, որը, բնականաբար մեծ պոտենցիալ ներկայացնելուց բացի, ուներ ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակություն։ Անդրկովկասի ժողովուրդների՝ պարսկական ու թուրքական լծից ազատագրվելու ձգտումները օբյեկտիվորեն համընկնում էին Անդրկովկասի նկատմամբ Ռուսաստանի վարած քաղաքականության հետ։ Ռուսական պետության արևելյան քաղաքականության և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարի շահերի այդպիսի զուգորդությունն էլ հենց պայմանավորեց Անդրկովկասի ազատագրումը պարսկական ու թուրքական լծից և նրա միացումը Ռուսաստանին։ Կոտրելով թուրք-պարսկական զավթիչների դիմադրությունը և խափանելով անգլո-ֆրանսիական դաղութարարների՝ Անդրկովկասը Պարսկաստանի ու Թուրքիայի լծի տակ պահելու համառ ձգտումները[1], Ռուսաստանը

1 М. Нерсисян, Присоединение Армении к России и его историческое значение («Известия», АН Арм. ССР, Общ. науки, Ереван, 1953, № 7, էջ 5—6), А. Р. Иоаннисян, Борьба Англии и Франции против присоединения Армении к России (Նույն տեղը, № 3, էջ 49—51).

հայերի, վրացիների և ադրբեջանցիների գործուն օգնությամբ XIX դ. առաջին տասնամյակներին՝ մեկը մյուսի հետևից իրեն միացրեց Վրաստանը, Ադրբեջանն ու Արևելյան Հայաստանը։

Անդրկովկասի ազատագրումը թուրք-պարսկական լծից սկսվում է Արևելյան Վրաստանը Ռուսաստանին միացնելով, որը կատարվեց երկու երկրների միջև մի քանի տասնամյակների տևած դիվանագիտական ու քաղաքական շփումներից հետո՝ 1801 թվականին[1]։

Արևելյան Վրաստանի՝ Ռուսաստանին միանալը թուրք-պարսկական զավթիչների և նրանց թիկունքում կանգնած անգլո-ֆրանսիական գաղութարարների շրջանակներում մեծ անհանգստություն առաջացրեց։ Նրանց լավ հայտնի էր, որ Արևելյան Վրաստանի միացումը միայն առաջին քայլն էր, որ Ռուսաստանը Անդրկովկասում ձգտում է իր սահմանը հասցնել Արաքսով անցնող բնագիծը, և նրա այդ քաղաքականությունը մեծ ընդունելություն ու աջակցություն է գտնում ազատագրական պայքարի ելած հայերի, վրացիների և ադրբեջանցիների կողմից։ Ռուսաստանի առաջխաղացումը խափանելու և նրան Անդրկովկասից դուրս հանելու համար Պարսկաստանն ու Թուրքիան՝ Անգլիայի և Ֆրանսիայի երբեմն բացահայտ, երբեմն էլ գաղտնի հովանավորությամբ, XIX դ. առաջին երեք տասնամյակների ընթացքում մի քանի պատերազմներ մղեցին Ռուսաստանի դեմ, որոնք բոլորն էլ ավարտվեցին վերջինիս հաղթանակներով։ Այդ տարիներին Ռուսաստանը երկու պատերազմ մղում է Պարսկաստանի (1804—1813 թթ. և 1826—1828 թթ.), երկու պատերազմ էլ՝ Թուրքիայի (1806—1812 թթ. և 1828—1829 թթ.) դեմ։ Հենց այդ՝ Ռուսաստանի համար ընդհանուր առմամբ հաղթական պատերազմների ընթացքում էլ Անդրկովկասը վերջնականապես ազատագրվում է թուրք-պարսկական լծից և իր բախտը կապում մեծ Ռուսաստանի հետ։

Արևելյան Հայաստանի կենտրոնական մասը, իր մեջ ամփոփած Երևանի խանությունն ու նրա կենտրոն Երևան քաղաքը, պարսկական լծից ազատագրելը ռուս-պարսկական նշված երկու պատերազմների կարևորագույն խնդիրներից մեկն էր։ Երևանի ազատագրման համար կազմակերպվում է երեք արշավանք, որոնցից երկուսը առաջին պատերազմի ընթացքում (1804 թ. և 1808 թ.), իսկ մեկը՝ երկրորդ պատերազմի, որի ժամանակ և Երևանը ազատվում է պարսկական լծից ու համանուն խանության հետ միասին միանում Ռուսաստանին։

[1] История СССР, т. II, Москва, 1954, էջ 48—50։

ա) ՌՈՒՍԱԿԱՆ ՁՈՐՔԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ

Արշավանքի ընթացքը։ Երևանի բերդի պաշարումը։ Բերդի կայազորի կազմը։ Ճակատամարտ Բաբա-խանի և նրա որդի Աբաս-Միրզայի միացյալ բանակի դեմ։ Ռուսական զորքի դուրսբերումը։ Բերդի պաշարման վերացումը և ռուսական զորքի վերադարձը Թիֆլիս։

1804 թվականին, ռուսական տեղական իշխանությունների և պարսկական խաների միջև տեղի ունեցած անհաջող որոշ բանակցություններից հետո սկսվում է ռուս-պարսկական առաջին պատերազմը։ Նույն թվականի հունվարին ռուսական զորքերը գեներալ Ցիցիանովի գլխավորությամբ գրավում են Գյանջա քաղաքն ու Գյանջայի խանությունը։

1804 թ. մայիսին սկսվում է ռուսական զորքերի առաջին արշավանքը դեպի Երևան։ Այդ արշավանքը գլխավորում էր ինքը՝ Վրաստանում եղած ռուսական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Ցիցիանովը։ Արշավանքի համար առիթ էր ծառայել Դանիել—Դավիթյան պայմանը, ինչպես և ռուսական հովանավորության տակ անցնելու մասին Ցիցիանովի ուղարկած վերջնագրին Երևանի սարդարի կողմից բացասական պատասխան տալը։

Ցիցիանովի տրամադրության տակ պարսիկների դեմ գործողություններ ծավալելու համար կար ընդամենը 4080 շարային զինվոր, որոնցից 3413-ը հետևակազորայիններ, 667-ը՝ հեծյալներ, և 12 հրանոթ։ Բացի դրանցից, նրա ջոկատին էին միացել վրացական իշխաններ ու աղնվականներ, որոնց թիվն իրենց մարդկանց հետ միասին՝ հասնում էր ընդամենը 300 մարդու[1]։

Պարսկական զորքերի թիվը հասնում էր 40 հազարի։ Ցիցիանովի կողմից այդպիսի փոքր ուժերով, թվական առումով ավելի քան 9 անգամ գերազանցող պարսկական զորքի դեմ հարձակողական գործողությունների ձեռնարկելը բացատրվում է նրանով, որ պաշտպանական տակտիկա վարելու դեպքում Վրաստանը են-

[1] П. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. IV, С. Петербург, 1886, էջ 302։

թարկվելու էր պարսիկների ներխուժման վտանգին։ Վրաստանը պարսկական հարձակումից պաշտպանելու համար անհրաժեշտ էր առնվազն մի քանի կետերում (Լոռիում, Դիլիջանի կիրճում, Ապարանում և այլն) զետեղել զորքեր և դրանք ամրացնել։ Ցիցիանովն իր փոքրաթիվ զորքերով ի վիճակի չէր ստեղծելու պաշտպանության այնպիսի կետեր, որոնցից յուրաքանչյուրն այնքան ուժեղ պետք է լիներ, որ կարողանար դիմադրել արշավող պարսիկներին։ Ուստի միակ ելքը հարկադրական հարձակումն էր[1]։

Ցիցիանովի դլխավորած ջոկատը, նշված կազմով, Թիֆլիսից դուրս է գալիս 1804 թ. մայիսի վերջերին և, շարժվելով դեպի հարավ, դրավում Փամբակն ու Շորագյալի (Շիրակ) մի մասը, ապա՝ հունիսի 15-ին բռնում Երևան տանող ճանապարհը։ Գյումրիի մոտից դեպի Երևան ռուսական զորքը դնում է Քյալբաուլու (այժմ Փանիկ՝ Արթիկի շրջանում) և Քարավանսարա գյուղերի մոտով (Արթիկի շրջանում), ապա՝ Ապարան-չայի աջ ափերով, Եղվարդի մոտով դեպի էջմիածին[2], առանց որևէ դիմադրության հանդիպելու։ Ցիցիանովի ջոկատը առաջին լուրջ ճակատամարտը տալիս է էջմիածնի մոտ, հունիսի 20-ին։ Ռուսական փոքրաթիվ զորքը այստեղ համառ ճակատամարտում ջախջախում է Երևանի սարդարին օգնության եկած գահաժառանգ Աբաս-Միրզայի 20 հազարանոց հեծելազորին և փախուստի մատնում այն։ Պարսից թագաժառանգը, որը հույս ուներ իր մեծաթիվ զորքով ջախջախել Ցիցիանովի ջոկատը, ստիպված է լինում նահանջել դեպի Երևան։

Ցիցիանովի ջոկատը 2 — 3 օր հետո էջմիածնից շարժվում է դեպի Երևան։ Սակայն Երևանի պաշարումը և նրա բերդի վրա գրոհելը անհնար էր, քանի դեռ Աբաս-Միրզան իր մեծաթիվ բանակով դտնվում էր նրա մոտակայքում և ուշի-ուշով հետևում ռուսական ջոկատի շարժմանը, հարմար առիթ փնտրելով նրա վրա հարձակվելու և, դրանով իսկ, բերդում բանակած Մամեդ-խանին օգնելու։ Վերջինս էլ, անշուշտ, բերդը երբեք չէր հանձնելու, քանի դեռ Աբաս-Միրզայի զորքը վերջնականապես չէր ջախջախվել և Արաքսի մյուս կողմը շպրտվել[3]։ Անհրաժեշտ էր նախ և առաջ ջախջախել Աբաս-Միրզայի բանակը։

Աբաս-Միրզան՝ էջմիածնում կրած պարտությունից հետո,

[1] Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. IV, էջ 302—303։

[2] ЦГВИА, ф. ВУА, д. 4280.

[3] Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. IV, էջ 315։

նահանջել և ճամբարել էր Երևանից մոտ 7,5 կիլոմետր հյուսիս-արևելք՝ Գառնի-չայ (Ազատ) գետի ափին։ Պարսկական ճամբարի վրա անհրաժեշտ էր հարձակվել արագ կերպով՝ առանց զորքերի արագ առաջընթացը խանգարող գումակի և ավելորդ բեռների։ Ցիցիանովը՝ Քանաքեռում դրանք թողնելով, հունիսի 30-ի գիշերը անցնում է Զանգուն և արդեն լուսադեմին Երևանի մոտով արշավում դեպի մեծաթիվ թշնամին։ Նրա ջոկատի կանոնավոր մարտաշարքերը և մարտական երաժշտության տակ քայլող զինվորների բարձր տրամադրությունը գրավում են բերդի բնակիչների ուշադրությունը։ Գառնի-չայի ափին տեղի է ունենում երկրորդ լուրջ ճակատամարտը ռուսական և պարսկական զորքերի միջև։ Մի քանի ժամ տևած այդ ճակատամարտում դարձյալ հաղթանակով է դուրս գալիս ռուսական փոքրաթիվ ջոկատը։ Աբաս-Միրզան պարտվելով՝ իր բանակի մնացորդների հետ միասին նահանջում է Արաքսի աջ կողմը[1]։

Այժմ արդեն կարելի էր պաշարել Երևանի բերդը։ Դրան խանգարող ուժեր Երևանի շրջակայքում առայժմ չկային։ Աբաս-Միրզան շպրտված էր Արաքսից հարավ, իսկ պարսից արքունիքը դեռևս չէր հասցրել նրան և Երևանի Մամեդ-խանին օգնելու համար նոր զորքեր ուղարկել։ Օգտվելով համեմատաբար բարենպաստ այդ պայմաններից, Ցիցիանովն արդեն կարող էր անմիջապես գնալ Երևանի վրա, և դա միանգամայն հաջողություն կբերեր նրան, որովհետև ռուսական զորքի. տարած փայլուն հաղթանակը մեծ տպավորություն էր թողել նաև Մամեդ-խանի, բերդի կայազորի և, մանավանդ, այնտեղ քշված բնակիչների վրա։[2] Սակայն, զլխավոր հրամանատարը հապաղում է, փոխանակ անմիջապես բերդը պաշարելու և նրա վրա գրոհելու, նախ ճամբար է դնում Կրբլուղ գետի ափին և մեկօրյա հանգիստ տալիս ճակատամարտում հոգնած զորքին, ապա բերդը պաշարելուց հետո փոխանակ գրոհով այն առնելու, ապարդյուն գրագրություն է մտնում խանի հետ։ Վերջինս էլ գրագրություններով դիտավորյալ ձգձգում է գործը, որպեսզի ժամանակ շահի՝ մինչև օգնություն ստանալը[3]։

Որոշ ուսումնասիրողներ միանգամայն արդարացի կերպով նկատում են, որ Ցիցիանովը պետք է օգտվեր հաղթանակի ոգևորությունից և մարտական բարձր ոգուց, նա պետք է առանց հա-

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 2, лл. 13—15 и 42—49.

[2] Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. IV, էջ 320։

[3] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 2, лл. 17—18.

պաղելու անմիջապես հարձակվեր բերդի վրա, քանի որ թշնամին դեռ կորցրել էր իր կողմնորոշումը։

Հուլիսի 2-ին Ցիցիանովի զորքը, մեկ օրից քիչ ավելի տևած կարճատև հանգստից հետո, գալիս գրավում է բուն քաղաքն ու այգիները և բոլոր կողմերից պաշարում բերդը։ Ցիցիանովն իր համար ցվախավոր կայան է դարձնում բերդի և բուն քաղաքի՝ Շահարի միջև ընկած շրջանը, այսինքն՝ քաղաքի այն մասը, որտեղ գտնվում էին շուկա-հրապարակը, Գյուրջի քարավանատունը և Գյոյ-ջամին[1]։

Երևանի բերդը Ցիցիանովի արշավանքի ընթացքում բավական ամրացվել էր նոր, լրացուցիչ պաշտպանական կառույցներով և միջոցներով։ Ըստ եղած աղբյուրների, Երևանի Մամեդ-խանը, լսելով Ցիցիանովի արշավանքի և քաղաքն ու բերդը գրավելու նրա մտադրության մասին, ամրացրել էր բերդը՝ կանոնավորելով նրա պարիսպները, բուրգերը, բերդի շուրջը փորված փոսը, պահեստանեը և այլն, հարկադրաբար բերդի մեջ էր հավաքել բազմաթիվ բնակիչների՝ հատկապես հայերի, նրանցից պատանդներ վերցրել, որպեսզի նրանց հարազատները չօգնեն ու ծառայություն չմատուցեն ռուսական զորքերին, սպասել էր նրանց իրենց հետ վերցնելու վաոոդի, կապարի և ուտելիքի բավարար պաշարներ՝ բերդի պաշարման ընթացքում պարսկական կայազորին օգնելու և իրենց սեփական միջոցներով ապրելու համար և, վերջապես, իր մոտ կանչելով Դավիթ և Դանիել կաթողիկոսներին, նրանց կալանավորած վիճակում պահել էր բերդում, որպեսզի սրանք շփում չունենան ո՛չ ժողովրդի և ո՛չ էլ ռուսական զորքերի հետ։ Բավական ուժեղ էր և բերդի կայազորը, որը բաղկացած է եղել 7000 հոգուց, և իր տրամադրության տակ ունեցել է 60 թնդանոթ, երկու մորտիր, ինչպես և 800 հետևակային զինվոր՝ ուղարկված Բաբա-խանի կողմից[2]։

Եթե անգամ դրսից որևէ օգնություն էլ չհասներ պաշարվածներին, այնուամենայնիվ, Ցիցիանովի բանակը բերդը գրավելու համար բավական դժվարություններ պետք է հաղթահարեր։ Սակայն բերդի պաշարումը բոլոր կողմերից ավարտելուց հետո՝ Ցիցիանովը Ռուսաստանի կողմն անցած Խոյի Ջաֆար-Ղուլի խանի միջոցով լուր է առնում, որ Նախիջևանի խանը Բաբա-խանին տեղեկացրել է, թե նրա որդի Աբաս-Միրզան գտնվում է վտանգավոր

---

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 2, лл. 15—17 и 21—22։

[2] Նույն տեղը, թ. 15—17։

Երևանի բերդի հատակագիծը, հանված ալքաշափով 1804 թ. պաշարման ժամանակ (ЦГВИА, ф. ВУА, д. 4281, № 2)։

գության մեջ և առանց նրա օգնության վերջինս չի կարող փրկվել, ուստի Խոյից ու Թավրիզից շտապեցրած հավաքելով 15000-անոց մի բանակ՝ իր գլխավորությամբ շտապում է դեպի Երևան: Նա հուլիսի 14-ին իր բանակով գալիս ու միանում է Աբաս-Միրզայի զորքերին, որոնք, հունիսի 30-ին կրած պարտությունից և Արաքսի աջ կողմը նահանջելուց հետո, նորից վերակազմավորվել, վերադարձել ու բանակ էին դրել Գառնի-չայի ափին: Հայտնի է դառնում նույնպես, որ Բաբա-խանը մտադրություն ունի միաժամանակ հարձակվելու ռուսական բանակի երկու թևերի վրա և ոչնչացնելու այն: Ցիցիանովը վճռում է առանց շրջապատումը հանելու՝ նախապատրաստվել հակահարված տալու պարսկական բանակի հարձակմանը, ինչպես և խափանել պաշարվածների՝ բերդից դուրս գալու փորձերը[1]:

Հուլիսի 15-ին Աբաս-Միրզայի և նրա հոր՝ Բաբա-խանի (որը դարձավ պարսից շահ՝ Ֆաթ-Ալի-շահ անունով) միացյալ բանակը, բաղկացած մոտ 35 հազար զինվորներից, բաժանվելով ջոկատների, հարձակվում է ռուսական փոքրաթիվ բանակի վրա: Պարսկական միացյալ բանակին օգնություն է ցույց տալիս և բերդի պաշարված կայազորը, որը օգտվելով հարմար առիթներից, թիկունքից հարձակումներ էր կատարում ռուսական զորքերի վրա: Պարսկական բանակն ու բերդապաշտպան կայազորը իրենց զինվորների թվով ավելի քան 9½ անգամ գերազանցում էին ռուսական բանակին: Այնուամենայնիվ, ռուսական քաջարի բանակը 8 ժամից ավելի տևած ճակատամարտից հաղթող է դուրս գալիս: Վճռական ճակատամարտում պարտություն կրելով՝ պարսիկները ստիպված են լինում նահանջել[2]:

Այսպիսով, Ցիցիանովի փոքրաթիվ բանակը երեք հիմնական ճակատամարտ է տալիս թվով շատ անգամ գերազանցող թշնամու դեմ և երեք անգամ էլ դրանցից դուրս գալիս հաղթանակով: Ռուսական զորքի հաղթանակները պետք է բացատրել նրա քաջությամբ և նրանով, որ բնակիչները սիրով ընդունում և օգնում էին նրանց: Ցիցիանովի այդ արշավանքի մասին եղած զեկուցագրերում և նյութերում նշված են խիզախություն գործած, տարբեր աստիճան ունեցող բազմաթիվ զինվորականների և ամբողջական զորամասերի անուններ, որոնք իրենց քաջության համար արժա-

---

1 ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 2, лл. 19—20.

2 Նույն տեղը, թ. 20—22 և 57—61:

նացել են առանձին ուշադրության ու պարգևի[1]։ Առանձնապես մեծ սխրագործություն է կատարել վերջին ճակատամարտի ժամանակ գեներալ Պորտնյագինի զորամասը։ Այդ ճակատամարտում ձեռք բերված հաղթանակը մեծապես պայմանավորված էր Պորտնյագինի քաջարի զորամասի անվեհեր գործողություններով։

Պարսիկ զինվորների աչքին ռուս զորքի տարած անհավատալի հաղթանակները, նրանց անօրինակ քաջությունն ու անվեհերությունը աստվածային մղում էր թվում[2]։

Պարսկական միացյալ բանակին պարտության մատնելուց և վաննելուց հետո՝ 1804 թ. հուլիսի 24-ից մինչև սեպտեմբերի 2-ը Ցիցիանովի զորքը Երևանի բերդը պահում է պաշարված վիճակում, առանց նրանից հեռանալու և այլ գործողություններ ձեռնարկելու։ Այդ ժամանակաընթացքում նշանակալի որևէ գործողություն չեն ձեռնարկում նաև պարսիկները։ Ռուսական զորքը հուլիսի 23-ին փորձում է էֆեկտիվ գործողություններ ծավալել բերդի հյուսիսային կողմի վրա, որտեղ գտնվում էր խանի ապարանքը, սակայն պաշարողական հրանոթների բացակայության պատճառով արդյունքի չի հասնում, գլխավոր հրամանատարի հրամանով նույնիսկ դադարեցվում է կրակը[3]։

Բաբա-խանի բանակը ռուսական պաշարող զորքին առանձնապես չէր անհանգստացնում։ Ճիշտ է՝ նրա բանակը չէր հեռանում Երևանի խանությունից, սակայն չէր էլ հարձակվում ռուսական զորքերի վրա, այլ թափառում էր Շարուրի ու Գառնիբասարի մահալների գյուղերում, իսկ մեկ-մեկ էլ՝ ընդհատակ մոտենում ռուսական զորքի առաջավոր դիրքերին, սակայն՝ առանց նրա դեմ գործողություններ ծավալելու, և ապա նորից անհետանում[4]։

Այնուամենայնիվ, ռուսական զորքերի դրությունը գնալով լրջանում էր։ Երևան հասնելու պահից սկսած, նրանք արդեն պարենի պակաս էին զգում։ Չէր բավականացնում հացը, աղի, գինու և քացախի կարիք էր զգացվում, ուժեղ շոգերի և վատ պայմանների հետևանքով շատերը հիվանդացել էին ջերմախտով և ստամոքսային հիվանդություններով։ Օրվա մեջ 10—20 հոգի մահանում էին։ Հրամանատարությունը ստիպված է լինում զինվորներին բաց թողնելու օրական կես բաժին հաց, մտցնելու պարենի խիստ խնայողության ռեժիմ[1]։ Ավելի վատ դրության մեջ էր անասնակերի (фураж) հայթայթման գործը։ Անասնակերը միանգամայն սպառվել էր, ձիերը ստիպված կերակրում էին այգիներից հավաքած տերևներով[2]։

Զորքի հրամանատարությունը միջոցներ է ձեռնարկում թեթևացնելու դրությունը։ Գլխավոր հրամանատարը կարգադրում է Թիֆլիսից Փամբակի վրայով պարեն հասցնել ջոկատին։ 1000 չեմվերտ (3000 կոդ) ալյուր էր սպասվում նաև Ղազախի շրջանից, որը պետությանը տրվող հարկի հաշվին գյուղացիներից պետք է հավաքեր ու Երևան ուղարկեր այնտեղի կառավարիչ իշխան Ճավճավաձեն։ Սակայն սպասված պարենը չի ստացվում ո՛չ Թիֆլիսից և ո՛չ էլ Ղազախից։ Վրաստանի կառավարիչ Վոլկոնսկուն հաջողվում է կոմիսիոներների միջոցով հավաքել միայն 600 չեմվերտ ալյուր և 90 չեմվերտ ձավար, սակայն դա գյուղատնտեսական աշխատանքների եռուն պահը լինելու պատճառով, չի կարողանում նույնիսկ այդ համեստ քանակի պարենամթերքն ուղարկել կարոտյալ ջոկատին։ Ջոկատին մթերապաշարով չի կարողանում օգնել նաև իշխան Ճավճավաձեն, որին չնայած Ցիցիանովը հատուկ նամակով այնքան սպառնացել էր[3]։ Էջմիածնից և մյուս տեղերից վերցված պարենամթերքները արդեն սպառվում էին և նորից ձեռք բերելու հույս չկար։

Ցիցիանովի զորքի պակասը միայն մթերապաշարները չէին։ Նրան անհրաժեշտ էր նաև զենք, դինամթերք և հանդերձանք։ Ճակատամարտերում զենքի մի մասը դուրս էր եկել շարքից, դինամթերքը պակասել։ Անհրաժեշտ էր լրացնել դրանք։ Սակայն Թիֆլիսից եկող ճանապարհի անբարենպաստությունն ու վտանգավորությունը, ուղղակի հաղորդակցության ընդհատումը, ինչպես և տրանսպորտային համապատասխան միջոցների բացակայությունը, գրեթե միանգամայն բացառում էին դրանց ստացումը։

Այդ բոլորի վրա ավելանում էր նաև այն, որ Վրաստանում դրությունը խաղաղ չէր։ Այնտեղ, մի քանի ռեակցիոն ազնվականների գլխավորությամբ, սկսվել էին որոշ խռովություններ, որոնք խանգարում էին երկրի նորմալ կյանքը և բացասաբար ազդում Պարսկաստանի դեմ մղվող պատերազմի հաջող ընթացքի վրա։

---

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 3, лл. 18—21, 22 и 23.

[2] Е. Хубов, Описание достопамятных происшествий в Армении с 1779—1809 гг., СПБ, 1811, էջ 30։

[3] Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. IV, էջ 336։

[4] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 2, лл. 24—25.

[1] ЦГВИА, ф. ВУА, д .4258, ч. 2, лл. 24—25.

[2] Նույն տեղը, թ. 26։

[3] Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. IV, էջ 337—339։

Այսպիսի պայմաններում Ցիցիանովի զորքը չէր կարող երկար մնալ պաշարողի դերում: Նա կամ պետք է գրոհեր ու վերցներ բերդը, կամ ժամանակավորապես այն թողներ և վերադառնար Վրաստան: Ցիցիանովը զգում էր այդ դեպքում օգոստոսի կեսերից և դրա համար բանակցությունների մեջ է մտնում Երևանի խանի հետ՝ բերդը խաղաղ ճանապարհով հանձնելու համար, սակայն այդ բանակցությունները ոչ մի արդյունք չեն տալիս: Ուստի հարցը լուծելու համար նա օգոստոսի 31-ին հրավիրում է ռազմական խորհուրդ, որին ներկա են լինում գեներալ-մայորներ Տուչկովը, Լեոնտևը և Պորտնյագինը, գնդապետ Մայնովը, փոխգնդապետներ Սիմոնովիչը և բարոն Կլոդ-Յոն-Յուրգենսբուրգը: Ռազմական խորհրդին եղած դրությունը մի քանի խոսքով ներկայացնելուց հետո՝ Ցիցիանովը կարծիք է հայտնում, որ պետք է գրոհ ձեռնարկել բերդի վրա: Սակայն հարցի վերջնական լուծումը նա թողնում է իր հրավիրած ռազմական խորհրդին, որին լիակատար իրավունք է տալիս այդ հարցի մասին ազատ դատելու և ցանկացած որոշումը հանելու, իսկ ինքը իր ներկայությամբ խորհրդի վրա չբռնանալու համար՝ բացակայում է նիստից[1]: Խորհրդի նիստում գեներալ-մայոր Տուչկովի առաջարկով բոլոր մասնակիցները՝ սկսած ամենակրտսերից՝ մինչև ավագագույնը, արտահայտում են իրենց կարծիքները, և ձայների մեծամասնությամբ խորհուրդը որոշում է մերժել բերդի վրա գրոհելու առաջարկը, վերացնել բերդի պաշարումը և վերադառնալ Վրաստան[2]:

Ցիցիանովը թեպետև դժկամությամբ, բայց համաձայնում է խորհրդի որոշմանը, որը նրան է հաղորդում խորհրդի ավագագույն անդամը՝ գեներալ-մայոր Տուչկովը: Ցիցիանովի կարծիքով, առանց բերդը գրավելու Վրաստան նահանջելը վտանգի տակ էր դնում և վերջինիս: Այս պատճառով, նա ռազմական խորհրդի համաձայնությամբ, վերջին անգամ դիմում է ամբողջ բնակչությանը՝ կոչ անելով հանձնել բերդը կամավոր կերպով: Նա մի թուղթ է ուղարկում Երևանի ու Նախիջևանի մեծամեծներին՝ խաներին, ախունդներին, մոլլաներին, ինչպես և ամբողջ ժողովրդին: Դրա մեջ Ցիցիանովը հայտարարում է ի լուր բոլորին, որ Բաբա-խանը ի վիճակի չէ նահանջելու հարկադրել ռուսական զորքերին, որ ռուսները բնակչության նկատմամբ վարվելու են սիրալիր և

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 2, лл. 31—34.

[2] Նույն տեղը:

ձեռք չեն տալու նրանց ունեցվածքին ու տներին, և առաջարկում բարձրի բնակչությանը՝ բերդը հանձնել հետևյալ պայմաններով.

ա) Երևանի բերդ մտցնել ռուսական կայազորը, բ) ռուսական կայսրությանը հպատակ լինելու երդում տալ և գ) տարեկան տալ մինչև 100 հազար ռուբլի հարկ[1]: Նա խոստանում էր բերդը հանձնելուց հետո անփոփոխ կերպով պահպանել բոլոր մեծամեծների և ժողովրդի նախկին իրավունքները:

Պատասխանի համար ժամանակ էր տրված մեկ օր. սեպտեմբերի 2-ին պետք է ստացվեր պատասխանը:

Խանը արգելում է հաղորդել ժողովրդին ռուսական հրամանատարության դիմումը: Նա ինքն անձամբ գրում է դիմումի պատասխանը, որտեղ պատրվակ բերելով իր ընտանիքի պատանդ լինելը շահի մոտ և Բաբա-խանի՝ իր զորքերով դեռևս խանության սահմաններում գտնվելը, փաստորեն մերժում է Ցիցիանովի առաջարկը, արտաքնապես ցույց տալով, սակայն, որ ինքը պատրաստ է շահի՝ Երևանի խանությունից հեռանալուց հետո ընդունելու ռուսական հպատակությունը: Նա իր պատասխանի մեջ գրում է. «Մի՛ տարակուսեք ձեր նկատմամբ իմ ունեցած ջերմեռանդության վրա, սակայն քանի դեռ շահը գտնվում է այստեղ և իմ ընտանիքը նրա մոտ գրավ է դրված, անհնար է կատարել այն կետերը, որոնք ձերդ պայծառափայլությունը առաջադրում է: Երբ շահը վերադառնա, այն ժամանակ պատրաստ եմ ձեզ ծառայել, իսկ եթե դրան ձեռնամուխ լինեմ այժմ, ապա նա մեր ընտանիքը կոչնչացնի, ենթադրում եմ, որ դուք այդ չէիք ցանկանա»[2]:

Մամեդ-խանի ծամակի ստացումից հետո բերդը կամավոր հանձնելու ոչ մի հույս այլևս չկար: Ննդամբերքն արդեն սպառվելու վրա էր, օր օրի վրա ավելանում էր հիվանդների թիվը, հաղորդակցությունը Թիֆլիսի հետ ընդհատված էր, Բաբա-խանն իր մեծաթիվ բանակով չէր հեռանում ռուսական բանակի մոտից, չնայած առայժմ նրա վրա հարձակվելու մտադրություն էլ չուներ, բերդի կայազորն էլ Մամեդ-խանի հրամանով աշխուժ հետևում էր ռուսական զորքերի գործողություններին: Մնում էր անհապաղ կատարել ռազմական խորհրդի վճիռը:

1804 թ. սեպտեմբերի 3-ին Ցիցիանովի գլխավորած զորքը վերացնում է Երևանի բերդի պաշարումը և բռնում Թիֆլիս տանող

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 2, лл. 32—33, Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. IV, էջ 359—361:

[2] АКАК, т. II, էջ 619, № 1243:

ճանապարհը։ Սեպտեմբերի 5-ին նա արդեն էջմիածնում էր, որտեղ երկու օր մնալուց հետո՝ սեպտեմբերի 7-ին դուրս է գալիս և 15-ին հասնում Ղարաքիլիսա, իսկ այստեղից էլ Թիֆլիս[1]։

Այսպիսով, առաջին ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Երևանը պարսկական լծից ազատագրելու համար ձեռնարկված առաջին արշավանքը վերջանում է անհաջողությամբ։ Սակայն դրանով օրակարգից չի հանվում Երևանի գրավման հարցը։ Նույն պատերազմի ընթացքում Երևանը պարսկական լծից ազատագրելու համար կազմակերպվում է երկրորդ արշավանքը, որին կանդրադառնանք քիչ հետո։

Ռուսական բանակը Երևանից հեռանալուց հետո պարսիկները կատարում են ամեն տեսակ բռնություններ քաղաքում և ամբողջ խանության մեջ։ Ժողովուրդը ծայր աստիճան հալածանքի է ենթարկվում Երևանում նշանակված նոր խանի՝ Մեհտի-Ղուլի-խանի կողմից, որի դեմ ոտքի են կանգնում քաղաքի հայ և ադրբեջանցի բնակիչները։ Հայ ու ադրբեջանցի բնակչության դանգվածները հարկադրաբար բերդը քշելու և Պարսկաստանի խորքերը տանելու նոր դավեր են լարվում։ Ժողովուրդը իր նամակներով խնդրում է ռուս հրամանատարներին՝ նորից վերադառնալ և գրավել բերդը, խոստանալով օգնել նրանց հնարավոր ամեն ինչով[2]։ Պահպանվել են բնակիչների կողմից ռուսական հրամանատարությանը ուղղված և ռուս հրամանատարների կողմից ըստ աստիճանի տրված բազմաթիվ գեկուցագրեր, որոնցում խոսվում է Երևանի հայ ու ադրբեջանցի բնակիչների՝ ռուսական զորքի նկատմամբ ունեցած սիրո և նրա ձեռքով պարսկական լծից ազատագրվելու ակնկալության մասին։ Համառոտագրելով՝ բերում ենք այդ փաստաթղթերից մեկը՝ Երևանի խանության և Երևան քաղաքի ներքին կյանքին քաջատեղյակ մելիք Աբրահամի և յուզբաշի Գարրիելի նամակը՝ ուղղված Ցիցիանովին։

Ահա՛ թե ինչ է ասված այդ նամակում. «Մենք Երևանից անցել ենք Ղարաքիլիսա Ռուսիայի մեծ կայսրի հովանավորության ներքո և մեզ հետ բերել ենք մեր ժողովուրդը՝ ավելի քան 200 ընտանիք, իսկ Երևանի բերդի մոտ ապրող ավելի քան 500 հայ ընտանիքներ... որոնց վրա միշտ նշանակում էին պահակներ, ապա Երանց անհնար եղավ փախչել այնտեղից, և այնպես էլ նրանք մնացին անհավատ պարսիկների ձեռքին։

Իսկ չնայած Երևանի նոր խանը նախկինի նման մտադրություն ուներ հայերին գաղթեցնելու Պարսկաստանի խորքը... բայց մենք՝ տեսնելով նրանց այդպիսի չարամտությունը, մի կերպ փրկվել ենք նրանց ձեռքից. մեզ միայն անհանգստացնում է այնտեղ մնացած հայերի խղճալի վիճակը,— ինչի համար, ուղարկելով մեր որդիները ձերդ պայծառափայլության մոտ, տեղեկացնում ենք, որ այժմ Երևանում գտնվում է շատ քիչ թվով զորք, 3000-ից ոչ ավելի հետիոտն մարդ, իսկ Երևանի բնակիչները, թաթարները (ադրբեջանցիները — Թ. Հ.), որոնք ապրում են բերդում և նրանից դուրս, բոլորը մեզ հետ խոսել են և խոսք են տվել, որ նրա կարճ ժամանակաընթացքում ձեր զորքը գա Երևան, ապա նրանք բոլորը կենթարկվեն և առանց անհանգստանալու կգրավեք բերդը նրա բոլոր ունեցվածքներով հանդերձ... արտասվելով խնդրում ենք ձերդ պայծառափայլության, եղեք այնտեղ մնացած և ծայրահեղ դրության մեջ գտնվող հայերի փրկիչը...։

Երևանի խանի անունը Մեհտի-Ղուլի-խան է, ...Նրա հրամանատարության տակ գտնվում են կույր Կելբ-Ալի-խանը և թագաժառանգ Թեյմուրազը...։ Այս բոլորի մասին մենք պատմել ենք այստեղի գեներալին. սակայն կամքը ձերդ պայծառափայլությանն է։ Ցարդ Երևանի բոլոր թաթարները ընդվզել են նշված խանի դեմ և գտնվում են պարիսպից դուրս. կարճ ժամանակում նրանց մի կերպ բերդ կբերի և այն ժամանակ նրանք չէին միանա, ավելի քով է շտապել, որովհետև բոլորը ձեզ ենթարկվելու և լսելու են»[1]։

Ինչպես ասվեց, Ցիցիանովին և ռուսական այլ հրամանատարներին հասցեագրված այս բնույթի նամակները եզակի չէին։ Հայ և ադրբեջանցի բնակիչները՝ անտանելի պարսկական լծից ազատագրվելու համար ռուսական զորքին կոչ են անում առաջց հասպաղելու գալ և գրավել Երևանի բերդը։ Սակայն Ցիցիանովը, որը առանձնահատուկ խստությամբ էր վերաբերում և միշտ կասկածում էր տեղացիների նկատմամբ, այնքան էլ չէր մտահոգվում Երևանի գրավմամբ։

1805—1806 թթ. ընթացքում ռուսական զորքերի օգնությամբ ամբողջ Հյուսիսային Ադրբեջանը, որի հետ և Ջանգեզուրը, ազատագրվում է պարսկական լծից։ Դրանով Ռուսաստանի դիրքերն

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258 ч. 2, лл. 34—42.

[2] Տե՛ս АКАК, т. II, էջ 605, № 1205, էջ 627, № 1256, 1257, 1258, էջ 627—628, № 1259, էջ 628, № 1260, էջ 629, № 1261, էջ 631, № 1265, էջ 831, № 1707, էջ 848, № 1742 և այլուր։

[1] АКАК, т. II, էջ 605, № 1205։

Անդրկովկասում ավելի են ամրապնդվում, իսկ նրա՝ դեռևս պարսկական լծի տակ գտնվող մասերի բնակիչները էլ ավելի եռանդագին կերպով սպասում են ռուսական բանակի հաղթական արշավանքին։

բ) ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ

Պուդովիչի արշավանքը դեպի Երևան։ Երևանի բերդի պաշարումը։ Ֆրանսիական դեսպանության հակառուսական ձեռնարկումները։ Երևանի ու Նախիջևանի խանությունների տերիտորիաների գրավումը։ Գոռնր Երևանի բերդի վրա և դրա անհաջող վախճանը։ Զմոռան վրա հասնելը և Պուդովիչի բանակի վերադարձը Թիֆլիս։

1806 թ. ընթացքում տեղի ունեցած դեպքերը նպաստավոր պայմաններ էին ստեղծել Երևանը գրավելու համար։ Նոր շրջաններ Ռուսաստանին միացնելը, Կովկասի որոշ շրջաններում ծագած խռովությունների հանդարտեցումը, Երևանի բերդի համեմատաբար թույլ պաշտպանությունը և, վերջապես, Բայազետի փաշայի և Երևանի խանի միջև առաջացած թշնամությունը՝ վերջինիս իշխանությանը ենթակա քրդական ցեղերի առնչությամբ, գեներալ-մայոր Նեսվետաևին բերում են այն համոզման, որ հասել է պահը ռուսական պետության սահմանը վերջնականապես ընդարձակելու մինչև Արաքս և Քուռ գետերը, այսինքն՝ Ռուսաստանին միացնելու Երևանի ու Նախիջևանի խանությունները։ Նա գտնում է, որ պետք է անհապաղ դիմել հարձակման և առաջարկում հարձակումը սկսել աջ թևի զորքերով, որոնք, Փամբակի և Շորագյալի պրովինցիաների շնորհիվ, պարենամթերքով ամենից ավելի էին ապահովված։ Ըստ Նեսվետաևի, Երևանը պաշարելու համար պետք է թողնվեր մի փոքրիկ ջոկատ, իսկ աջ թևի մյուս ամբողջ ուժերով պետք է Երևանի մոտով, Արաքսին համընթաց շարժվելին դեպի Նախիջևան և Օրդուբադ, որտեղ կվերականգնեին հաղորդակցությունը Շուշիի ջոկատի հետ։

Իր այդ պլանը զլխավոր հրամանատարի կողմից ընդունելու համար՝ Գուդովիչին գրած զեկուցագրերում գեներալ-մայոր Նեսվետաևը մանրացույց էր անում Երևանի բերդի կայազորի թուլությունն ու փոքրաթիվությունը, Երևանի խանի գործած բռնությունների և կամայականությունների հետևանքով բնակչության դժգոհությունները և ռուսական զորքի հաջողությունը պայմանավորող այլ փաստեր[1]։

Անդուռամենաթիվ, 1806 թ. փետրվարին զլխավոր հրամանատար նշանակված Գուդովիչը մերժում է Նեսվետաևի պլանը, պատճառաբանելով, որ աջ թևի զորքը պարսկական խանությունների վրա հարձակման գնալու դեպքում ռուսական պրովինցիաները անպաշտպան կմնան և ենթակա կլինեն թուրքերի հարձակմանը[2]։ *Սակայն ավելորդ էր Գուդովիչի զգուշավորությունը։ Ճիշտ է՝ թուրքերի հետ շուտով հարաբերությունները դարձան թշնամական, բայց երկու պետությունների միջև ընդհարումները սկավեցին ուշ, թուրքերի կողմից արագ հարձակողական գործողություններ առայժմ չէին սպասվում։ Բանն այն էր, որ կոմս Վ. Գուդովիչը ամբողջ ժամանակ մնում էր Գեորգևսկում, տեղի պայմաններին շատ քիչ էր ծանոթ, իսկ տեղեկությունները ստանում էր ուշացումով և այդ պատճառով էլ իրազեկ չէր տվյալ պահին Պարսկաստանում և Թուրքիայում եղած քաղաքական գործերի իսկական ընթացքին*[3]։

Դեռևս Ցիցիանովի կենդանության օրոք, պարսիկների հետ ժամանակավոր հաշտություն էր կնքվել և բանակցություններ էին սկսվել մշտական խաղաղության դաշն կնքելու համար։ Սակայն այդ բանակցությունները ձգձգվում էին՝ երկու կողմերի միջև հաշտության պայմանների շուրջը գոյություն ունեցող անհամաձայնությունների պատճառով։ Այդպես էլ այդ բանակցությունները որևէ արդյունքի չհասան և 1808 թ. խզվեցին, ռուսների առաջադրած պայմանները պարսիկների կողմից անընդունելի համարվելուց հետո։ Ռուս-պարսկական պատերազմն, այսպիսով, շարունակվում էր։

1806 թ. վերջերին Ֆրանսիայի դրդումով Թուրքիան պատերազմ է սկսում Ռուսաստանի դեմ։ Այժմ արդեն Կովկասյան կորպուսը պետք է կռվեր երկու ճակատով՝ Ռուսաստանի դեմ միասնաբար հանդես եկած Պարսկաստանի և Թուրքիայի դեմ։ Թուրքերը հարձակումներ են գործում Ռուսաստանին անցած վրացական սահմանամերձ շրջանների վրա, որտեղ կանգնած էին ռուսական փոքրաթիվ կայազորներ։ Ռուսական զորամասերը հայերի և վրացիների մասնակցությամբ հաջողությամբ ետ են մղում թուր-

[1] Н. Дубровин, История войны и владычества русских на Кавказе, т. V, С. Петербург, 1887, էջ 95—98։

[2] Նույն տեղը, էջ 98։

[3] Նույն տեղը։

քերի ձեռնարկած գրոհները: Առանձնապես ուժեղ մարտեր են տեղի ունենում Շորագյալում 1807 թ. գարնանը: Գյումբրիում մայիսի 30-ին և հունիսի 5-ին երկու ճակատամարտ է տեղի ունենում սերասկյար Յուսուֆ փաշայի 10 հազարանոց զորքի և գնդապետ-մայոր Նեսվետաևի փոքր ջոկատի միջև, երկու դեպքում էլ հաղթող է դուրս գալիս ռուսական ջոկատը, որը համառ մարտերով քշնամուն ետ է շպրտում Արևմտյան Արփաչայի աջ կողմը: Սակայն քշնամին հույսը չի կորցնում: Նա հունիսի սկզբներին բանակցություններ է վարում Երևանի խանի և Աբաս-Միրզայի հետ՝ միացյալ ուժերով հարձակվելու ու ոչնչացնելու արդեն Գյումրի ժամանած ռուսական գլխավոր ուժերին, որը դեկավարում էր ինքը՝ գլխավոր հրամանատար ֆելդմարշալ Գուդովիչը: Վերջինս, արագ կերպով ըմբռնելով դեպքերի ընթացքը, առանց հապաղելու իր տրամադրության տակ եղած 7000-անոց ջոկատով հարձակվում է Յուսուֆ փաշայի 20000-անոց բանակի վրա, որպեսզի առանձին ջախջախի և ժամանակ չտա, որ սրան օգնության հասնեն Աբաս-Միրզան և Երևանի խանը: Այս ճակատամարտում Գուդովիչը հասնում է փայլուն հաղթանակի: Թուրքական բանակը, 1000 սպանված տալով, խուճապահար դիմում է փախուստի, զորահրամանատար Յուսուֆ-փաշան հազիվ կարողանում է փրկվել գերի ընկնելուց: Յուսուֆ փաշային 12 հազարանոց բանակով օգնության եկած Աբաս-Միրզան էլ, լսելով նրա պարտության մասին, առանց մարտի մեջ մտնելու՝ վերադառնում է Նախիջևան[1]:

Այժմ արդեն որևէ պատճառ չկար Երևանի վրա հարձակումը հետաձգելու: Կոմս Գուդովիչը տեղեկություն էր ստացել, որ Կոստանդնուպոլսում տիրող խառնաշփոթության պատճառով թուրքերը մտադրություն չունեն Վրաստանի վրա հարձակվելու, չնայած Վրաստանի սահմանակից շրջաններում զորքեր են կուտակում և ամրացնում որոշ կետեր: Պարսիկները ևս ներքին խառնակությունների պատճառով անհանգստացած էին և ռուսների հետ վարվող բանակցությունները դիտավորյալ ձգձգում էին՝ ժամանակ շահելու և իրենց ուժերը կարգի բերելու համար[2]: Օգտվելով այդ պայմաններից, սեպտեմբերի 25-ին Գուդովիչը սկսում է իր արշավանքը դեպի Երևան, հաշվի առնելով, որ տարվա այդքան ուշ ամիսներին կատարված հարձակումը անսպասելի պետք է լինի պարսիկների համար և վերջիններս հնարավորություն չեն ունենա կարճ ժամանակամիջոցում հավաքելու համապատասխան դիմադրող ուժեր ու պաշտպանելու Երևանի խանությունը: Նա հաշվի էր առնում, որ իր զորքի արագ առաջխաղացումը Արաքսի ափերով դեպի Նախիջևան և Օրդուբադ կտրիպի պարսկական արքունիքին՝ անհապաղ ընդունելու ռուսների առաջադրած հաշտության պայմանները, ըստ որի երկու պետությունների միջև սահման էր նախատեսվում Արաքս և Քուռ գետերը, այսինքն՝ Հյուսիսային Ադրբեջանից բացի, որն արդեն միացվել էր Ռուսաստանին, բայց որի վերագրավման համար Պարսկաստանը տակավին չէր դադարել պայքարելուց, Ռուսաստանին պետք է անցնեին նաև Երևանի ու Նախիջևանի խանությունները[3]:

Գուդովիչը իր պլանների մասին գրություն է ուղարկում հատուկ ջոկատով Ղարաբաղում գտնվող գեներալ մայոր Ներսիսյանին, որպեսզի սա առանց ուշացնելու իր ջոկատով շարժվի դեպի Նախիջևան և ջանք գործադրի այն գրավելու հենց այն պահին, երբ ինքը կմոտենա Երևանին: Գլխավոր հրամանատարը դրանով մեծապես խափանում էր պարսիկների կողմից Երևանի բերդին ցույց տրվելիք օգնությունը[4]: Նախքան արշավանքը սկսելը, Գուդովիչը կանոնավորում է Փամբակի ու Շորագյալի պաշտպանության գործը, այնտեղ նշանակելով համապատասխան կայազորներ և դրանց տալով բավական քանակությամբ հանդերձանք, դինամիթերք ու գնդեր[5]:

Փամբակում եղած ժամանակ, այնտեղ գալուց երեք օր անց, Գուդովիչը հատուկ աստիճանավորների միջոցով նամակներ է ստանում էրզրումի սերասկյար Օսման փաշայից, Ղարսի փաշա Աբդուլայից և Երևանի Հուսեյն-Ղուլի խանից, որոնց նպատակը փաստորեն իրենց նամակատար աստիճանավորների միջոցով Գուդովիչի զորքերի շարժման ուղղությունը իմանալն էր[6]:

Սակայն Գուդովիչն այդ նամակներին առանձին նշանակություն չի տալիս և, ինչպես ասվեց, սեպտեմբերի 25-ին դուրս է գալիս Փամբակից ու շարժվում դեպի Երևանի խանության սահմանները: Սեպտեմբերի 26-ին նա Փամբ ավերված գյուղով (այժմ նույնանուն գյուղ Հայկական ՍՍՌ Սպիտակի շրջանում) մտնում է Երևանի խանության սահմանները և շարժվում դեպի Ապարան:

[1] Հայ ժողովրդի պատմություն, երկրորդ մաս, Երևան, 1957, էջ 12—13:
[2] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 4, лл. 1—2.

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 4, л. 2.
[2] Նույն տեղը, թ. 2—3:
[3] Նույն տեղը, թ. 3—5:
[4] Նույն տեղը, թ. 4—5:

Այստեղ եղած պարսկական զորքը, որը բաղկացած էր 500 մարդուց, տեսնելով Գուդովիչի զորքի մոտենալը, թողնում հեռանում է, կրակի մատնելով իր ճանապարհին ընկած դաշտերն ու մի քանի գյուղեր[1]։

Պարսկական զորքերի հետ առաջին հանդիպումը տեղի է ունենում Աշտարակի մոտ։ Սարդար Հուսեյն-Ղուլի խանը, լսելով Գուդովիչի զորքի առաջխաղացման մասին, չորս հազար հեծյալներից բաղկացած (ըստ փախած բնակիչների հաղորդումների՝ հինգ հազար) ջոկատի գլուխ անցած, սեպտեմբերի 29-ին Աշտարակի մոտ հանդիպում է ռուսական արշավող բանակի առաջապահ զորամասերին, որոնք առանց մեծ դժվարության ետ են շպրտում նրան, չնայած սարդարի զրաված դիրքերը չափազանց հարմար էին պաշտպանության համար[2] և իշխող էին էջմիածին տանող ճանապարհի վրա։

Սարդարի ջոկատը դեպի էջմիածին վանելով, Գուդովիչի բանակը՝ առանց ժամանակ կորցնելու, նույն ուղղությամբ շարժվում է առաջ և հաջողությամբ հասնում էջմիածին, որտեղ սրան ցույց է տրվում հանդիսավոր ընդունելություն։ Այստեղ նրա բանակը համբարում է ամբոխ կազմած՝ մերթ ընդ մերթ երևացող ու անհետացող պարսկական զորքերի աչքի առաջ։ Վերջիններս դաս առած լինելով Աշտարակի ընդհարումից՝ չեն հանդգնում որևէ հարձակում գործել, այլ հեռանում են դեպի Երևան՝ հրի մատնելով նրա ճանապարհին ընկած մի քանի գյուղեր[3]։

Էջմիածնում երկու օր մնալուց հետո՝ Գուդովիչի զորքերը հոկտեմբերի 3-ին շարժվում են դեպի Երևան և նույն օրն էլ հասնում Զարբախ գյուղը, ապա՝ բերդից 6 վերստ հեռավորության վրա, անցնում Զանգուն և ճամբար դնում բերդից 3 վերստ հեռու, բերդցիների աչքի առջև[4]։

Էջմիածնից Երևան արշավելու ժամանակ Երևանի բերդից փախած մի ադրբեջանցի Գուդովիչին տեղեկացնում է, որ Հուսեյն-Ղուլի խանը նախօրյակին թողել է բերդը և հեռացել Գառնի-չայի կողմերը։ Նրան ջախջախելու և հեռացնելու համար ուղարկվում է մի ջոկատ՝ գեներալ-մայոր Պորտնյագինի հրամանատարությամբ, որը, մեծ դժվարությունների գնով, անցնում է Զանգուն և հետապնդում Հուսեյն-Ղուլի խանին։ Սակայն վերջինս խույս է տալիս

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 4, лл. 5—6.
[2] Նույն տեղը, թ. 6—8։
[3] Նույն տեղը, թ. 8—9։
[4] Նույն տեղը, թ. 9—10։

հանդիպելուց և հեռանում դեպի Արաքսի աջ կողմը՝ նախիջևանի դիմաց ընկած շրջանը[1]։

Հայտնի են դառնում նաև սարդարի հետագա մտադրությունները։ Ըստ եղած տեղեկությունների նա, իր եղբորը՝ Հասան խանին, որին հանձնարարել էր բերդի պաշտպանությունը, թողել էր 200 ընտիր հետևակայիններից ու պարսկական հրաձիգների մի զորամասից բաղկացած կայազոր, բացի դրանից՝ բերդում կային բավմաթիվ ընտանիքներ։ Իսկ ինքը՝ Հուսեյն-Ղուլի խանը, իր հեծյալների գլուխ անցած, պետք է շրջեր բերդի շրջակայքում եղած բարձրությունների վրա և մշտապես անհանգստացներ ռուսական զորքերին[2]։

Հոկտեմբերի 7-ին բերդը պաշարելու հրաման է տրվում։ Գլխավոր Սիմոնովիչին, որը շատ փորձված և հմուտ մի զորական էր, հրամայվում է շրջանցել բերդը և դեպի Վրաստան տանող ճանապարհով մտնել քաղաք ու գրավել այն։ Սկզբում մի գումարտակից կազմված, ապա այլ միավորներով ուժեղացված ջոկատը, մայոր Բուխվոստովի հրամանատարությամբ հաջողությամբ ետ է շպրտում պաշտպանվող պարսիկներին և գրավում իրեն հրամայված դիրքը, այսինքն՝ բերդի մոտ ընկած այգինները։ Մյուս կողմից, Բորշչևը, որը մի գումարտակով կանգնած էր Զանգվի ձախ ափին, գետի ուղղությամբ դիշերը բարձրանում է վեր և գրավում բերդից ոչ հեռու գտնվող Մուխանաթ-թափա բլուրը։ Այստեղ նա առանց նկատվելու անմիջապես դիրքեր է պատրաստում թնդանոթների համար։ Ամսույս 9-ին գնդապետ Սիմոնովիչը հաջողությամբ դուրս է գալիս Վրաստան տանող ճանապարհը, ապա թշնամու ուժեղ կրակի տակ մտնում քաղաք։ Այստեղից նա թշնամուն ետ է շպրտում բերդը, իսկ ինքը առանց մեծ կորուստներ տալու՝ գրավում է քաղաքի կարևորագույն տեղերը։ Այսպիսով քաղաքն ու նրա այգինները գրավված էին մինչև բերդից հրացանային կրակի հեռավորությունը, իսկ բերդը պաշարված էր բոլոր կողմերից[3]։

Զորքի մյուս մասը մնում էր ճամբարում, բերդի տեսադաշտում, նրանից երեք վերստ հեռավորության վրա։ Բերդի շրջակայքում, բարձրությունների վրա երբեմն երևում են Հուսեյն-Ղուլի խանի զորամասերը, որովհետև Պորտնյագինի՝ Գառնի-չայից վե-

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 4, лл. 10—11.
[3] Նույն տեղը, թ. 11։
[3] Նույն տեղը, թ. 12—15։

բադառնալուց հետո, Հուսեյն խանն էլ վերադարձել էր Արաքսի այն կողմից և ուշի-ուշով հետևում էր ռուսական զորքերի շարժմանն ու գործողություններին[1]: Նրա դեմ Գուդովիչը փոխգնդապետ Պոդլուցկու գլխավորությամբ ուղարկում է մի ջոկատ: Այս անգամ ևս Հուսեյն-Ղուլի խանը խուսափում է հանդիպում ունենալուց և թողնում հեռանում է: Սակայն Պոդլուցկու ջոկատը չի վերադառնում, մնում է Գառնի-չայի ափին, որպեսզի ապահովի անառանձին հայթայթողների անվտանգությունը և հետևի Հուսեյն-Ղուլի խանի շարժմանը: Այդ ջոկատը շուտով ուժեղացվում է այլ զորամասերով, որոնք գեներալ-մայոր իշխան Օրբելիանու գլխավորությամբ ուղարկվում են Հուսեյն-Ղուլի խանի վրա հանկարծակի հարձակվելու և նրան Արաքսի մյուս ափը քշելու համար: Շամշադինի և Փամբակի ադրբեջանցիներից, 700 կազակներից և վրացական հեծյալներից բաղկացած ջոկատը՝ իշխան Օրբելիանու հրամանատարությամբ հաջող կերպով ջախջախում և Արաքսի մյուս կողմն է շպրտում Հուսեյն-Ղուլի խանի զորքերին[2]: Շուտով լուր է ստացվում, որ Հուսեյն-Ղուլի խանին 5000 զինվորներից բաղկացած մի ջոկատով օգնության է եկել Ջարադ-Ղուլի խանը: Գուդովիչի հրամանով նորից է ուժեղացվում Պոդլուցկու ջոկատը՝ նրան միացնելով նաև իշխան Օրբելիանու վրացական հեծյալ զորամասը, և այն, շատ ճակատամարտերում մեծ քաջություններ գործած, գեներալ-մայոր Պորոնյագինի գլխավորությամբ ուղարկվում է Քշնամու դեմ: Պորոնյագինը հակառակորդին հետապնդում է մինչև Նախիջևանի մոտերքը և Արաքսի մոտակայքում կանգ առնում՝ Հուսեյն-Ղուլի խանի զորքերի շարժումը հետախուզելու համար: Այստեղ նա շփման մեջ է մտնում արդեն Նախիջևանին մոտեցած գեներալ-մայոր Նեբոլսինի հետ[3]:

Ռուսների ձեռք բերած հաջողությունները ոգևորում են բնակչությանը, որոնք խումբ-խումբ փախչում են նրանց մոտ՝ փրկվելով պարսիկների գործադրած բռնություններից[4]:

Այդ ժամանակաընթացքում Երևանի բերդի շրջապատման օղակը ավելի է նեղացվում: Բերդը բոլորովին կտրվում է արտաքին աշխարհից: Պաշարողները բերդը մշտապես պահում էին հրետանային կրակի տակ, ոչնչացվել էին բերդի երկու աշտարակները, որոնց հրանոթները դադարել էին գործելուց, բերդի պարիսպում

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 4, л. 15.

[2] Նույն տեղը:

[3] Նույն տեղը, թ. 17—19:

[4] Նույն տեղը, թ. 19—20:



Դարբնոցական գործիքների ամրակներին և գլխի ժամանակ, 1808 թ. հոկտեմբեր-նոյեմբերին վերաբերող մի քարտեզ (ЦГВИА, ф. ВУА, д. 4284)

առաջացել էին վնասվածքներ, կտրված էր դեպի բերդ գնացող խմելու ջուրը, պարսիկները ստիպված էին Մուխանաթ-Քափայից տեղացող հրետանային կրակի տակ ժայռերով իջնել՝ Զանգվից ջուր վերցնելու համար: Այնուամենայնիվ, պաշարվածները համառում էին և իրենց հույսը դրել էին բերդի ամրության վրա[1]: Կոմս Գուդովիչը նախապատրաստվում էր բերդը գրոհով առնելու, եթե պաշարվածները շարունակեն երկար համառել: Պաշարման ընթացքում և հետագա գործողությունների ժամանակ առանձնապես մեծ ջանքեր էին թափում դիվիզիայի հրամանատար գեներալ-լեյտենանտ բարոն Ռոզենը և գեներալ-լեյտենանտ կոմս Օստերման-Տոլստոյը[2]: Երևանի խանությունում և Երևանի բերդի պաշարման ընթացքում ռուսական զորքերի կորուստները չնչին էին, նրանք զենքի, զինամթերքի և պարենամթերքների պակաս չունեին[3]:

Երևանի սարդար Հուսեյն-Ղուլի խանի ջախջախման ժամանակ նրանից վերցված փաստաթղթերից երևում է, որ Պարսկաստանում գտնվող ֆրանսիական դեսպան գեներալ Գարդանը ամեն կերպ վնաս էր հասցնում Ռուսաստանի շահերին: Փաստորեն պարսիկները նրա ցուցումներով ու հորդորներով էին վարում իրենց արտաքին քաղաքականությունը Ռուսաստանի հետ[4]: Արտաքին գործերի մինիստր կոմս Ն. Պ. Ռումյանցևին ուղղված նամակում Գուդովիչը, հիմք ընդունելով Գարդանի կողմից Աբաս-Միրզային ուղղված նամակը, որի պատճենը վերցվել էր Հուսեյն-Ղուլի խանի դրասենյակի մյուս փաստաթղթերի հետ միասին, ուղղակի գրում է. «Պարսկաստանում ֆրանսիական միսիան՝ չնայած մեզ հետ ունեցած բարեկամական դաշինքին, Պարսկաստանի հետ մեր ունեցած գործերին ավելի է վնասում, քան առաջ՝ Ֆրանսիայի հետ պատերազմի ժամանակ, պարսկական կառավարությանը հավատացնելով, որ (ինքը — Ք. Հ.) ինչ ցանկանա՝ կարող է անել»[5]:

Այնպես որ, ֆրանսիական դեսպանությունը՝ իր կառավարությունից հատուկ հրահանգներ ստանալով, ամեն կերպ խանգարում էր Ռուսաստանի օգտին դաշինք կնքելու, բոլոր միջոցներով ձգտում էր թույլ չտալ ռուսական պետությանը Անդրկովկասում ծա-

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 4, лл. 20—21.
[2] Նույն տեղը, թ. 21—22:
[3] Նույն տեղը, թ. 23—29:
[4] Նույն տեղը:
[5] Նույն տեղը, թ. 23:

վալվելու և ամրանալու[1]: Այդ պատճառով էլ, ռուսների և պարսիկների միջև հաշտություն կնքելու համար վարվող բանակցությունները ձգձգվում էին, չէր երևում դրանց վերջը:

Հոկտեմբերի 28-ին գեներալ-մայոր Նեբոլսինի ջոկատը Նախիջևանից 18 վերստ հեռավորության վրա՝ Ղարաբաբա գյուղի մոտ, հանդիպում է Աբաս-Միրզայի զորքերին, որոնք մտադիր էին օգնության հասնել Երևանի բերդին: Վերջինիս բանակը կազմված էր 3000 հետևակայիններից, որոնց թվում էին և ռուսական 200 գերիներ, և 10 հազար հեծյալներից. նա ուներ 12 թնդանոթ և 60 ֆալկոնետ: Չնայած որ թշնամին թվապես մի քանի անգամ գերազանցում էր և ուներ հարմար դիրքեր, այնուամենայնիվ, Նեբոլսինի ջոկատը համառ մարտով նրան ջախջախում և փախուստի է մատնում: Ռուսական ջոկատը մարտից հետո անմիջապես թողնում է Ղարաբաբա գյուղը և շարժվում դեպի Նախիջևան, ուր անկանոն կերպով նահանջել էր Աբաս-Միրզան: Վերջինս, լսելով Նեբոլսինի զորքերի մոտենալու լուրը, թողնում է Նախիջևանը և հեռանում դեպի Արաքսի աջ կողմը: Նեբոլսինը գալիս է և գրավում Նախիջևանի բերդը[2]:

Փաստորեն արդեն գրավված էին ամբողջ Երևանի և Նախիջևանի խանությունները, մնում էր միայն Երևանի բերդը, որը, կտրված լինելով բոլոր կողմերից, և ոչ մի տեղից այլևս օգնության հույս չունենալով, ստիպված պետք է լիներ հանձնվել: Սակայն նա համառում էր: Ռուսական զորքի հաջողությունները ետ խլելու և Երևանի բերդի պաշարումը վերացնելու համար՝ միաժամանակ գործում է պարսկական ու ֆրանսիական դիվանագիտությունը: Երևանի բերդին օգնության հույս տալու հույս չունենալով՝ ֆրանսիական դեսպան գեներալ Գարդանի հատուկ նամակով Գուդովիչի մոտ են ուղարկում դեսպանության քարտուղար Լաժարին, նամակներ են ուղարկում նաև Աբաս-Միրզան, նրա առաջին մինիստր Միրզա Բեզյուրկը և շահի վեզիր Միրզա Շեֆին: Այդ նամակներում որոշակի ոչինչ չի ասված[3]: Ֆրանսիական դեսպանի գալու նպատակն այն էր, որպեսզի հորդորի Գուդովիչին զադարեցնելու ռազմական գործողությունները և իր զորքերով դուրս գա Երևանի խա-

[1] Ֆրանսիական դեսպանության հակառուսական գործունեության մասին մանրամասն տե՛ս А. Р. Иоаннисян, Присоединение Закавказья к России и международные отношения в начале XIX столетия, Ереван, 1958, гл. третья.
[2] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 4, лл. 30—32.
[3] Նույն տեղը, թ. 32—34:

նութիւնից[1]։ Հասկանալի է, որ Գուդովիչը ոչ միայն չպետք է համաձայներ Լաժարի մտադրութեանը, այլև բերդը գրավելու համար պետք է դիմեր ավելի վճռական գործողութիւնների[2]։

1808 թ. նոյեմբերի 17-ին, առավոտյան ժամը 5-ին Գուդովիչի զորքերը գրոհում են բերդի վրա։ Գրոհող զորքը, որն իր կազմում ուներ մոտ 3000 մարդ, բաժանվում է չորս շարասյան, յուրաքանչյուրն ունենալով իր հատուկ առաջադրանքը։ Ամեն մի շարասյուն գործում էր բերդի մի կողմում և ուներ իր ռեզերվը։ Բացի դրանցից, նշանակված էր և մեծ ռեզերվ, որում գտնվում էր Ֆելդմարշալ Տորմասովը։ Առաջին շարասյունը ռեզերվի հետ միասին իր կազմում ուներ 1100 մարդ, երկրորդ շարասյունը իր ռեզերվով՝ 508 մարդ, երրորդ շարասյունը՝ 732 մարդ, չորրորդ շարասյունը՝ 545 մարդ։ Բացի դրանից, հատուկ ջոկատներ կային, որոնք գործում էին շարասյուներին կից և իրենց կրակով պաշտպանում էին մարտկոցներին։ Առաջին շարասյունը գրոհի պետք է տաներ գնդապետ Սիմոնովիչը, իսկ ռեզերվում պետք է լիներ գնդապետ Պեշերակին։ Այդ ջոկատին կից պետք է լիներ դեներալ լեյտենանտ Ռոզենը։ Երկրորդ շարասյունը գրոհի տանելու համար նշանակված էր մայոր Նովիցկին, իսկ ռեզերվում՝ գնդապետ Բուլգակովը, երրորդ շարասյունը գրոհի էր տանելու մայոր Ժիլինսկին, բայց հիվանդության պատճառով նրան փոխարինում է Չելիշչևը, և այլն[3]։ Յուրաքանչյուր շարասյան և առանձին միավորներին տրվում է գործողությունների մանրամասն պլան[4]։ Հրամայվում է գրոհի ժամանակ խստիվ պահպանել կարգը, կանոնը, երեխաներին, ինչպես և առհասարակ չսպանել խաղաղ բնակիչներին և այլն, և այլն[5]։

Վեց շաբաթ հրացանային կրակի հետևողությամբ պաշարման մեջ պահելուց հետո, այսպիսով, սկսվում է գրոհը։ Ռուսական զորքը գործում է անօրինակ քաջությամբ։ Որոշ միավորներ ընդհուպ մոտենում են բերդի շուրջը փորված փոսին և բերդի արտաքին պարիսպին, իսկ ոմանք նույնիսկ իրենց նետում են փոսը կամ բարձրանում պարիսպի վրա։ Պաշարվածները կատաղի դիմադրություն են ցույց տալիս, նրանք որոշել էին բոլորը մեռնել, բայց չհանձնվել, որովհետև նրանցից շատերը, որոնք բերված էին Պարսկաստանի խորքերից, իրենց ընտանիքները փաստորեն թողել

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 4, л. 34.
[2] Նույն տեղը, թ. 34—36։
[3] Նույն տեղը, թ. 103—121։
[4] Նույն տեղը, թ. 109—121։
[5] Նույն տեղը, թ. 105—109։

էին պատանդի վիճակում և հանձնվելու դեպքում կկորցնեին իրենց ամբողջ ընտանիքը։ Չնայած այդ բոլորին, ռուս զինվորներն ու սպաներից շատերը թափանցել էին քաղաքի խորքերը և մարտնչում էին խիզախորեն[1]։

Այնուամենայնիվ, գրոհն ավարտվում է անհաջողությամբ։ Երևանի բերդը ամրացված էր ժամանակակից եվրոպական ռազմական տեխնիկային համապատասխան՝ ֆրանսիական ինժեներ սպաների ղեկավարությամբ, գրոհով այն գրավելու համար անհրաժեշտ էին պաշարողական թնդանոթներ և ավելի մեծ թվով զորք։ Պաշարվածները՝ չնայած որ ոչ մի տեղից հույս չունեին օգնության, սակայն իրենց ընտանիքները փրկելու համար որոշել էին մինչև մահ կռվել[2]։ Երկու կողմերն էլ տալիս են նշանակալի թվով զոհեր։ Ռուսական զորքերի միայն սպայական կազմից սպանվում են 6, վիրավորվում՝ 39 հոգի[3]։ Ռուսական գրոհող շարասյունները, ետ մղվելով պաշարվածների կողմից, քաշվում են իրենց ելման դիրքերը։ Գուդովիչը հրամայում է դադարեցնել գրոհը, սակայն բերդը նախկինի նման պահել պաշարված վիճակում։ Նա իր անմիջական տրամադրության տակ եղած պահեստի զորամասով նորից վերադառնում է նախկին տեղը՝ քաղաքից երեք վերստ հեռավորության վրա բանակելով նախկին ճամբարում[4]։

Լուր է ստացվում, որ Ապարանում ձյուն է եկել, իսկ Փամբակի լեռնաշղթան արդեն ամբողջապես թաղված է խոր ձյան տակ։ Դրանով Վրաստանի հետ մինչև գարուն կապը խզվելու վտանգ էր ստեղծվում։ Գուդովիչի զորքերը չէին կարող ձմեռելու մնալ Երևանի խանությունում։ Նույնիսկ եթե Երևանի բերդն էլ գրաված լինեին, նրանք պետք է անպայման վերադառնային Վրաստան, որովհետև այն չէր կարելի մինչև գարուն անպաշտպան թողնել։ Այդ պատճառով էլ նոյեմբերի 30-ին, այսինքն գրոհն անհաջողության մատնվելուց երկու շաբաթ հետո՝ ռուսական զորքերը վերացնում են Երևանի պաշարումը և, մեծ դժվարությունների մի կերպ կտրել անցնելով ձյունածածկ Ճանապարհը, դեկտեմբերի 6-ին Վրաստան են վերադառնում։ Գուդովիչի կողմից նախօրոք արված կարգադրության համաձայն՝ գեներալ-մայոր

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 4, лл. 36—42.
[2] Նույն տեղը, թ. 40—42։
[3] Նույն տեղը, թ. 122—124 (Երևանյան արշավանքի ժամանակ եղած հիվանդների, վիրավորների և զորքի ամբողջ թվերը տե՛ս ЦГВИА, ф. 482, д. 21, лл. 3—4)։
[4] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 4, лл. 40—41.

Նեբոլսինը ևս վերադառնում է ետ՝ դեպի Ելիզավետապոլ, թողնելով իր գրաված Նախիջևանի խանությունն ու Նախիջևան քաղաքը[1]։

Գուդովիչի զորքերի անհաջողությունը բացատրվում է պաշարողական հրետանու բացակայությամբ և ժամանակի սղությամբ[2]։ Ընդամենը երկու ամիս պահվեց Երևանի բերդը պաշարված վիճակում, մինչդեռ նա բավական պաշարներ ուներ երկար ժամանակ դիմադրելու համար։ Սակայն ձմեռվա վրա հասնելու պատճառով անհապաղ վերադառնալու անհրաժեշտությունը բացառում էր բերդի պաշարումը շարունակելը, որն, անշուշտ, կհարկադրեր պաշարվածներին վերջ ի վերջո հանձնվելու։

Սակայն, կարելի՞ է արդյոք ընդհանուր առմամբ անհաջող համարել Գուդովիչի Երևանյան արշավանքը։ Ո՛չ, չի կարելի։ Այդ արշավանքի ընթացքում ռուսական փոքրաթիվ զորքերը, որոնց թվում կային նաև վրացիներ, ադրբեջանցիներ և հայեր, կարողացան ջախջախել և հեռացնել Նախիջևանի և Երևանի խանություններում եղած պարսկական զորքերին, ամբողջությամբ գրավել այդ խանությունները և դրանցում դեռևս չգրավված միակ բերդը՝ Երևանի բերդը, երկու ամիս պահել կատարյալ պաշարման մեջ՝ հրացանային կրակի հեռավորության վրա՝ նրա չորս կողմերում զետեղելով պաշարող զորամասերը։ Այս արշավանքը ևս ցույց տվեց ռուսական զենքի ու զորքի գերազանցությունը պարսկականի նկատմամբ։ Բայց և այնպես, ռուսական զորքի երևանյան այդ արշավանքում ձեռք բերած հաջողությունները հարկադրական նահանջի պատճառով նորից ապարդյուն անցան։ Այս անգամ էլ Երևանը չազատագրվեց պարսկական լծից։

Գուդովիչի երևանյան արշավանքից հետո ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմները շարունակվում են։ Անգլիայի միջնորդությամբ Թուրքիան և Պարսկաստանը, հատուկ պայմանագրով իրար հետ կապվելով (1810 թ.), միացյալ ուժերով կռվում են Ռուսաստանի դեմ, սակայն վերջինս մարտերում միշտ դուրս էր գալիս հաղթանակներով։ Ռուս-թուրքական պատերազմը ավարտվում է 1812 թ. Բուխարեստի հաշտությամբ, ըստ որի Բեսարաբիան անցնում է Ռուսաստանին։ Դրանից մեկ տարի անց վերջանում է և ռուս-պարսկական պատերազմը, որը սկսվել էր 1804 թվականին։ Երկու պետությունների միջև 1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանում կնքվում է հաշտության պայմանագիր, որում Ռուսաստանը հանդես է գալիս իբրև հաղթող կողմ։ Այդ պայմանագրով վավերացվում և վերջնականապես Ռուսաստանին միացված են ճանաչվում Արևելյան Վրաստանը, Լոռին, Ղարաբաղը, Ղազախ-Շամշադինը, Գյանջայի, Շաքիի, Շիրվանի, Կուբայի, Դերբենդի և Թալիշի խանությունները[1]։ Գյուլիստանի պայմանագիրը, քաղաքականից բացի, իր մեջ ամփոփում է և առևտրա-տնտեսական հարցեր։

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4258, ч. 4, лл. 42—43.

[2] Նույն տեղը, թ. 43—49։

գ) ԹՈՒՍԱԿԱՆ ՉՈՐՔԵՐԻ ԵՐՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ ԵՎ ՆՐԱ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԼԾԻՑ

Պարսիկների կողմից ռուս-պարսկական երկրորդ պատերազմը սկսելը։ Երմոլովի ծավալած գործողություններ։ Երկու վարիանտով պլան Պարսկաստանի դեմ պատերազմը վարելու համար։ Արշավանք դեպի Երևան։ Էջմիածնի գրավումը Բենկենդորֆի չոկատի կողմից։ Կռիվներ Երևանի այգիներում և բերդի պաշարումը Բենկենդորֆի չոկատի կողմից։ Գլխավոր ուժերի ժամանումը Պասկևիչի հրամանատարությամբ։ Բենկենդորֆի չոկատի փոխարինումը 20-րդ դիվիզիայով՝ գեներալ Կրասովսկու հրամանատարությամբ։ Բերդի պաշարումը ժամանակավորապես վերացնելը։ Երևանի բերդի ճոր ամրացումը։ Օշականի ճակատամարտը։ Գլխավոր ուժերի գործողությունները Նախիջևանի կողմերում։ Գլխավոր ուժերի վերադարձը Երևանի խանություն։ Սարդարաբադի գրավումը։ Երևանի բերդի երկրորդ պաշարումը։ Դռոն բերդի վրա և նրա գրավումը։ Բերդի գրավման ժամանակ վերցված գերիներն ու ավարը։ Բնակչության ցնծությունը բերդի գրավման առթիվ։ Պարգևատրումներ բերդի գրավման ժամանակ աչքի ընկած զինվորականներին։ Հաղթական զորահանդես բերդի գրավման առթիվ։ Հայերի մասնակցությունը Երևանի գրավմանը։ Թուրքմենչայի հաշտությունը։ Արևելյան Հայաստանի և Երևան խաղաքի՝ պարսկական լծից ազատագրելու պատմական առաջադիմական նշանակությունը։

Գյուլիստանի հաշտությունից հետո շուտով դեպքերը ցույց են տալիս, որ Պարսկաստանը դեռևս չի հաշտվել Անդրկովկասում իր կորցրած տերիտորիաները մշտապես Ռուսաստանին թողնելու մտքի հետ։ Պարսկաստանը, ինչպես և Թուրքիան խոստումներ

[1] «Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 233, տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմություն, երկրորդ մաս, էջ 13—14։

ստանալով Նապոլեոնի դեմ հաղթանակով դուրս եկած Անգլիայի կողմից, որը ձգտում էր ամեն կերպ խափանել Մերձավոր Արևելքում Ռուսաստանի ուժեղացումը, նախապատրաստվում են վերջինիս դեմ հարձակվելու։ Ռուսաստանի դեմ պատերազմի դուրս բերելու համար Անգլիան այդ երկու երկրներին տրամադրում էր ռազմամթերք, զենքեր, վարժեցնում նրանց բանակները, դիվանագիտական եղանակներով խնդրիգներ սարքում նրանց հարաբերությունները Ռուսաստանի հետ քշնամական դարձնելու և այլն։ Անգլիական Ոսո-Հնդկական ընկերությունը պարսկական արքունիքին տարեկան 800 000 ռուբլի էր տալիս, հարկադրելով նրան անհապաղ պատերազմ սկսելու Ռուսաստանի դեմ[1]։

Գյուլիստանի պայմանագիրը վերջնական չէր կարող լինել նաև Ռուսաստանի համար։ Վերջինիս ռազմա-քաղաքական և տնտեսական շահերը պահանջում էին ամմանը Անդրկովկասում հասցնել Քուռ և Արաքս գետերին, միևնույն դրա համար անհրաժեշտ էր Ռուսաստանին միացնել նաև Երևանի ու Նախիջևանի խանությունները, որոնք տակավին գտնվում էին Պարսկաստանի տիրապետության տակ և դարձել էին Ռուսաստանի դեմ գործելու հենակետեր։

Կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար Երմոլովը դեռևս 1826 թ. վաղ գարնանից նկատում է, որ Պարսկաստանում Ռուսաստանի դեմ պատերազմի նախապատրաստություններ են տեսնում, որ վերջինս հարմար առիթի է սպասում՝ Ռուսաստանի դեմ հարձակվելու և Անդրկովկասում կորցրած իր տերիտորիաները վերագրավելու համար[2]։ Դեպքերի ընթացքը Երմոլովին բերում է այն համոզման, որ Պարսկաստանի հետ պատերազմն անխուսափելի է և անհրաժեշտ է ուժեղացնել Անդրկովկասում գտնվող ռուսական զորքը։ Սակայն նրան այդ հարցում լուրջ կերպով առարկում է արտաքին գործերի մինիստր Նեսելրոդը, հայտարարելով, թե Պարսկաստանի կողմից հարձակում չի սպասվում և անհրաժեշտ է նրա հետ խաղաղ հարաբերություններ պահպանել[3]։

Երմոլովը իր զեկուցագրում հաղորդում է, թե Երևանի սարդարի մոտիկ մարդկանցից լսել է, որ շահը, նրա որդի Աբաս-

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4290, лл. 153—154.

[2] В. Потто, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, т. II, изд. IV, издание второе, С. Петербург, 1888, էջ 141—143։

[3] Նույն տեղը։

Միրզան մեծ պատրաստություններ են տեսնում պատերազմի համար, և շահը՝ ինքը, 40 000 բանակի գլուխ անցած, արդեն գտնվում է Արդաբիլում և այլն[1]։ Պատերազմի էր պատրաստվում և Երևանի սարդարը, ամրացնելով Երևանի ու Սարդարաբադի բերդերը, ինչպես և հետախուզելով ռուսական սահմանամերձ գոտին։

1826 թ. հուլիսի 16-ին պարսիկները, առանց պատերազմ հայտարարելու, անակնկալ կերպով պատերազմ են սկսում Ռուսաստանի դեմ. Երևանի խանն իր զորքերով մտնում է Շարուր-Դամբակի շրջանը և սկսում ավերածություններ կատարել, իսկ թագաժառանգ Աբաս-Միրզան էլ, 40 հազարանոց բանակի գլուխ անցած, արշավում է Ղարաբաղի վրա[2]։ Պարսկական կառավարությունն իր այդ անակնկալ հարձակումը արդարացնելու համար, պաշտոնապես հաղորդում է, թե իբր պատերազմի պատճառը Ռուսաստանն է և ռուսական սահմանապահների գործողություններն հետևանքով է բռնկվել այն[3]։ Հուլիսի 25-ին պարսիկների հարձակման լուրը հասնում է Թիֆլիս, իսկ 26-ին այնտեղ հրապարակվում է կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար Երմոլովի հրամանը՝ ուղղված զորքերին[4]։

Եղած ուժերը պահպանելու և լրացուցիչ ուժեր ստանալուց հետո դրանք վերադասավորելու ու հակահարձակման անցնելու համար՝ Երմոլովը զորքերին հրամայում է նահանջել և կենտրոնանալ Թիֆլիսի մոտակայքում, որպեսզի միաժամանակ քաղաքը պաշտպանեն պարսիկների հարձակումներից։

Մինչև լրացուցիչ ուժերի ստացումը, իսկ թագավորն ու շտաբի պետը չէին շտապում ուղարկելու պահանջվող ուժերը, պարսիկները, որոնց միացել էին վրաց խռովարար արքայորդի Ալեքսանդրն ու մի քանի դավաճան խաներ, հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում գրեթե գրավում են այն բոլոր տերիտորիաները, որոնք Ռուսաստանին էին անցել Գյուլիստանի պայմանագրով։

Տեսնելով որ իր խնդրած օգնությունը ուշանում է, Երմոլովը այնուամենայնիվ, դիմում է վճռական գործողությունների։ Գալիս են և Ռուսաստանից ուղարկված օգնական զորքերը, որոնց թվում էին և գնկաբրիանների ապստամբությանը մասնակցած ու այդ պատճառով Կովկաս աքսորված դվարդիական զորամասերը։ Նա

[1] АКАК, т. VI, ч. II, էջ 367, № 667։

[2] ЦГВИА, ф. ВУА, д. 4290, л. 153.

[3] Նույն տեղը, д. 4291, лл. 52—57, д. 894, лл. 30—32.

[4] Հրամանի տեքստը հայերեն լեզվով տե՛ս ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ք. Կաթողիկոսական դիվան, Բղեշպանակ 53, վավերագիր 209 ա։

դասավորում է իր ուժերը՝ հակահարձակման անցնելու համար։ Առաջավոր ջոկատի հրամանատարությունը հանձնում է Պյատիդորսկից նոր ժամանած հայ նշանավոր գեներալ Մադաթովին, որը սեպտեմբերի 2-ին 2000 զինվորներից բաղկացած իր ջոկատով Շամխոր գետի վրա գլխովին ջարդում է Ամիր-խանի հրամանատարության տակ գտնվող 10 հազարանոց բանակը[1]։ Լսելով Շամխորի պարտության մասին, սեպտեմբերի 13-ին Աբաս-Միրզան, 16 500 մշտական հետևակայինների և 7000 հեծյալների գլուխ անցած, 24 հրանոթով դուրս է գալիս Կյուրակ-չայ գետի ափից և շտապում Ելիզավետապոլի մոտ՝ ռուսական զորքի վրա հարձակվելու։ Նրա բանակին են միանում նաև Ղարաբաղից, Շաքիից և Ելիզավետապոլից 1700 հեծյալներ։ Սակայն Շամխորի պարտությունը ճակատագրական նշանակություն ունեցավ պարսկական զորքի համար։ Ելիզավետապոլ քաղաքի մոտ, սեպտեմբերի 13-ին ռուսական զորքերը գլխովին ջարդում են Աբաս-Միրզայի այդ հրաշալի բանակը և փախուստի մատնում այն[2]։ Ելիզավետապոլի ճակատամարտից հետո (մի ճակատամարտ, որը թեև գլխավորում էր Անդրկովկաս եկած Պասկևիչը, սակայն այն ամբողջապես նախապատրաստված էր Երմոլովի ու նրա գեներալների կողմից և առանց Պասկևիչի էլ այն՝ ռուսների համար հաղթանակով պետք է վերջանար)[3], նույն թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում պարսկական զորքն ամբողջությամբ դուրս է շպրտվում այն բոլոր շրջաններից, որոնք Գյուլիստանի պայմանագրով ճանաչված էին Ռուսաստանին միացված[4]։ Ընդ որում, նրե Ղարաբաղում, Նուխիում, Շաքիում և Հյուսիսային Ադրբեջանի այլ մասերում գործում էին Երմոլովը, Պասկևիչը, Մադաթովը և ուրիշներ, ապա Երևանի խանության ուղղությամբ պարսիկների կողմից գրավված շրջանները՝ Շորագյալն ու Փամբակը, Երևանի խանի ավարառուական զորքերից մաքրեց 1812 թ. հայրենական պատերազմի մասնակից, հայտնի պարտիզան, բանաստեղծ և ռազմական գրող Դենիս Դավիդովը, որին բոլոր միջոցներով օգնում էին տեղի բնակիչները՝ հայերն ու ադրբեջանցիները։

1826 թվականի վերջերին Անդրկովկասում նախապատերազմյան սահմաններն ամբողջապես վերականգնված էին, Պասկևիչի

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4290, л. 153.
[2] Նույն տեղը, թթ. 153—154։
[3] В. Потто, Кавказская война..., т. II, вып. IV, гг. 747—748.
[4] ЦГВИА, ф. ВУА, д. 894, лл. 10—13, 18—19, 25—26, 30—31.

և Մադաթովի գլխավորած զորամասերը հասել էին Արաքսի ափը, իսկ Երևանի խանությանն սահմանագլխին կանգնած էր գեներալ Դավիդովի ջոկատը։ Այժմ արդեն ստեղծվել էին բոլոր պայմանները Երևանի ու Նախիջևանի խանությունները Ռուսաստանին միացնելու համար։ Սակայն, ցրտաշունչ ձմեռվա վրա հասնելը, հարձակման համար դեռևս բոլոր կողմերով ընդունելի, ընդհանուր և հաստատված պլանի բացակայությունը և, վերջապես, մի քանի ամիս շարունակ մղված մարտերից հետո ուժերի վերադասավորման, դրանց հանգստացնելու և նոր լրացուցիչ որոշ ուժեր ու ռազմամթերք ստանալու կարիքը հարկադրում են գլխավոր հրամանատար Երմոլովին, Պարսկաստանի դեմ նախատեսվող հարձակողական գործողությունները սկսել 1827 թ. գարնանը, երբ ամբողջովին տնօրինված կլինեն նշված հարցերը և ամեն ինչ ապահովված կլինի հաղթանակի համար։

Պարսկաստանի դեմ պատերազմը վարելու համար, Պետերբուրգում սկսում են պլաններ կազմել պատերազմը սկսելուց անմիջապես հետո։ 1826 թ. նոյեմբերի երկրորդ կեսին արդեն Երևան է գալիս Պարսկաստանի վրա հարձակվելու պլանը երկու վարիանտով[1]։ Ըստ առաջին վարիանտի՝ գլխավոր գործողությունները պետք է ծավալվեին Երևանի ուղղությամբ, իսկ երկրորդ վարիանտի համաձայն՝ հիմնական գործողությունները պետք է ծավալվեին ձախ թևի ուղղությամբ՝ Ղարադաղով դեպի Թավրիզ[2]։

Ըստ առաջին վարիանտի՝ գլխավոր ջոկատը, որն, ինչպես ասվեց, համարվելու էր աջ թևի ջոկատը և շարժվելու էր Երևանի վրայով դեպի Արփաչայ, էջմիածնում ստեղծելով մթերանոցներ ու հոսպիտալ և պաշարելով Երևանի բերդը, բաղկացած էր լինելու 19 գումարտակից, 24 էսկադրոնից, 8 կազակական գնդից և 84 հրանոթներից։ Գլխավոր ջոկատի համար հավաքակայան էր նշանակվում Լոռի բերդի մոտակայքը։ Այստեղ պետք է պահվեր մեկ ամսվա մթերապաշար և անասնակեր, կազմակերպվեր 500 հոգու համար մեկ հոսպիտալ և պահվեր բավարար քանակությամբ զենք ու զինամթերք[3]։

Նույն վարիանտով ձախ թևի ջոկատը պետք է սպառնար ու ձգտեր գրավել Ահար քաղաքը. մեծ ուժեր երևալու դեպքում նա պետք է մնար Արաքս և Բարդուշատ գետերի միջև։ Այս ջոկատը

[1] ЦГВИА, ф ВУА, д. 4289, лл. 7—8 и 15—16.
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը, թթ. 6—7։

բաղկացած էր լինելու 12 դումարտակից, 6 էսկադրոնից, 3 կազակական գնդից և 48 հրանոթներից։ Ջոկատի համար հավաքակայաններ էին նշանակվում Շուշու և Ելիզավետապոլի մոտ։ Շուշիում նա պետք է ունենար մեկ ամբողջ մթերապաշար և մեկ հոսպիտալ, իսկ մի այլ հոսպիտալ էլ պետք է լիներ Ելիզավետապոլում[1]։

Գլխավոր ուղերվը բաղկացած էր լինելու $11\frac{1}{4}$ դումարտակից, 3 կազակական գնդից և 6 հրանոթից։ Դա պետք է գտնվեր Թիֆլիսի մոտ, Լոռու մոտ, Ելիզավետապոլում, Շուշիում և Շամախում[2]։

Դրանցից բացի, նախատեսվում էր Կախեթիայում թողնել երկու դումարտակից և երկու կազակական գնդից բաղկացած մի ջոկատ, իսկ Դաղստանում թողնելիք մյուս ջոկատը բաղկացած էր լինելու 6 դումարտակից, 2 կազակական գնդից և 10 հրանոթից[3]։

Պաշարողական հրետանի պետք է լիներ Թիֆլիսում և Բաքվում[4]։

Ըստ երկրորդ վարիանտի՝ գլխավոր ջոկատը համարվում էր ձախ թևի ջոկատը, որը բաղկացած էր լինելու 18 դումարտակից, 24 էսկադրոնից, 5 կազակական գնդից և 60 հրանոթից։ Այս ջոկատը տեղադրված էր լինելու Ղարաբաղում և Ելիզավետապոլի շրջանում։ Գլխավոր ջոկատը վճռականապես պետք է առաջ շարժվեր դեպի Թավրիզ[5]։

Նույն վարիանտով նախատեսվում էր, որ աջ թևի ջոկատը արագ երթ կատարի դեպի Նախիջևան և Մարանդ, պաշարելով ու անցնելով Երևանի բերդը, դրանով իսկ օգնելով գլխավոր ջոկատին՝ կատարելու իր առաջադրանքը։ Աջ թևի ջոկատն, ըստ այդ վարիանտի, բաղկացած էր լինելու 13 դումարտակից, 6 էսկադրոնից, 6 կազակական գնդից և 60 հրանոթից։ Նրա համար տեղադրավայր էր նախատեսվում դարձյալ Լոռի բերդի մոտակայքը[6]։

Երկու վարիանտներում էլ մշտական զորամասերի հետ միասին նշվում էին նաև աշխարհազորային միավորներ[7]։

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 4289, лл. 6—7.
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը։
[4] Նույն տեղը։
[5] Նույն տեղը, թթ. 15—16։
[6] Նույն տեղը։
[7] Նույն տեղը, թթ. 6—7, 15—16։

Պլանի երկրորդ վարիանտով գլխավոր ուժերվը և Կախեթիայում ու Դաղստանում մնացող ջոկատների կազմը, բաշխումն ու տեղադրումը նախատեսվում էր այնպես, ինչպես առաջին վարիանտումն էր[1]։

Ահա այդպիսին էր ցարական մայրաքաղաքում մշակված պլանը Կովկասյան կորպուսով Պարսկաստանի դեմ ռազմական գործողությունները վարելու համար։

Պետերբուրգում գտնում էին, որ մշակված երկու վարիանտներն էլ ընդունելի և հեշտ իրագործելի են, որ դժվար թե անհրաժեշտ լինի դրանցում փոփոխություններ մտցնել[2]։ Սակայն այդ այդպիսին չէր՝ Կովկասը և Ռուսաստանի հակառակորդ Պարսկաստանը լավ իմացող, գործերին լավատեղյակ Երմոլովի աչքում։ Վերջինս, ստանալով գլխավոր շտաբի կողմից մշակված պլանները, դրանցից ոչ մեկը նույնությամբ կիրառելի չէր համարում։ Ակնհայտ է, առավելություններ տալով առաջին վարիանտին, նա 1827 թ. սկզբից, իր մի քանի դիտողություններով, որոնք շարադրված են զեկուցագրերի ձևով, փոփոխել է տալիս նրա մի շարք կետերը։ Երմոլովի արած առաջարկները վերաբերում էին զորքերի շարժման ուղղություններին, դրանց կազմին, քանակին, գործողություններին և այդ գործողությունները սկսելու ժամանակին (նա ամենահարմար ժամանակը համարում էր ապրիլի սկզբները)[3]։ Երմոլովը առաջարկում էր հիմնական ջոկատը համարել աջ թևինը, այն ուժեղացնել նոր, ըստ Պետերբուրգի պլանի, Ղարաբաղում նախատեսված ավելի մարզված զորամասերի հաշվին, գործողությունների ժամանակ մեծ միավորումները դուրս բերել ոչ թե ամբողջ կազմով միասին, ինչպես ասված էր շտաբի կազմած վերոհիշյալ նախագծերում, այլ մասերի բաժանելով, որը շատ հարմար էր Կովկասի պայմաններում։ Նա միանգամայն ժխտում էր գլխավոր հարձակումը Ղարաբաղով դեպի Թավրիզ կատարելու հնարավորությունը, գտնելով որ այդ աղքատիկ և ճանապարհազուրկ երկրով հարձակվելը կապված է մեծ դժվարությունների հետ և, բացի դրանից, գլխավոր ուժերը Երևանով հարձակվելու դեպքում, երբ Աբաս-Միրզան իր զորքերը փորձեր ուղղել նրա դեմ, Ղարաբաղի համեմատաբար փոքր ջոկատը կսպառնար նրա թի-

[1] АКАК, т. VI, ч. I, էջ 522, № 729.
[2] В. Потто, Кавказская война..., т. III, вып. II, էջ 275։
[3] Դրանց մասին մանրամասն տե՛ս АКАК, т. VI, ч. I, էջ 519—521, № 724, ч. II, էջ 391—392, № 710, էջ 394—396, № 713 և այլուր։

կունքին և նրան կատիպեր բավական ուժեր առանձնացնել այդ ջոկատի դեմ գործելու համար։ Դրանով իսկ մեծապես կթեթևանար գլխավոր ուժերի առաջադրանքը[1]։

Այդ դիտողությունների հիման վրա առաջին վարիանտում էական փոփոխություններ մտցնելուց հետո, Երմոլովը իր կազմած պլանը ներկայացնում է ցարի հաստատմանը։ Նիկոլայ I-ը այն հաստատում է 1827 թ. հունվարի 27-ին և հանձնարարում, որ ռազմական գործողությունները սկսվեն ապրիլի սկզբից ոչ ուշ[2]։

Սակայն գլխավոր շտաբի պետը գալով Կովկաս, առարկություններ է անում Երմոլովի նախագծով ենթադրվող ռազմական գործողությունների ընթացքի մասին[3]. նրանց միջև ծագած առարկությունները մնում են առանց լուծման՝ մինչև Երմոլովի փոխարեն Պասկևիչին նշանակելը։ Այդ առարկությունները էական չէին. Երմոլովի կազմած պլանը մնաց ուժի մեջ, բայց այն գործի դրվեց Պասկևիչի կողմից։

1827 թ. մարտի 28-ի հրամանագրով՝ Երմոլովի փոխարեն Կովկասյան կորպուսի հրամանատար, ինչպես նաև Վրաստանի, Ատրպատականի ու Կովկասի նահանգների քաղաքացիական մասի գլխավոր կառավարիչ է նշանակվում դեներալ-ադյուտանտ Պասկևիչը՝ այնպիսի իրավունքներով ու արտոնություններով, ինչպիսին ուներ նախորդը[4]։

1827 թ. մարտի վերջին հիմնական ջոկատի ավանգարդը դեներալ-ադյուտանտ Բենկենդորֆի գլխավորությամբ արդեն պատրաստ էր Երևանի խանությունն արշավելու։ Ջոկատի գլխավոր ուժերը առայժմ չէին կարող դուրս գալ, որովհետև տրանսպորտային միջոցների պակասության և անընդհատ տեղացող անձրևների պատճառով դեռևս չէր ապահովված պահանջվող պարենամթերքների կուտակումը ելման կետում, հակառակորդի մասին արժանահավատ տեղեկությունները բացակայում էին և այլն։ Պասկևիչին հաջողվում է Թիֆլիսից դուրս գալ միայն մայիսի 12-ին, իսկ Երևան հասնում է գլխավոր շտաբի պետ Դիբիչի կողմից նախատեսված ժամկետից շատ ուշ՝ հունիսի կեսին, երբ, նրա կարծիքով, արդեն գրավված պետք է լիներ նույնիսկ Թավրիզը[5]։

[1] В. Потто, Кавказская война..., т. III, вып. II, էջ 276—280։
[2] АКАК, т. VI, ч. I, էջ 522—526, № 729։
[3] Նույն տեղը, ч. II, էջ 394—396, № 713։
[4] Նույն տեղը, т. VII, էջ 1, № 2։
[5] В. Потто, Кавказская война..., т. III, вып. II, էջ 286—290։

Բենկենդորֆի ջոկատը ապրիլի 5-ին արդեն հավաքված էր Ջալալ-օղլի, որտեղ այն ստուգման ենթարկվելով Դիբիչի կողմից, պատրաստ էր Երևանի խանությունն մտնելու։ Եվ իրոք, ապրիլի 7-ին նրա ջոկատը իջնում է Փամբակի հովիտը, իսկ 9-ին, անցնելով Փամբակի լեռնաշղթան, մտնում Երևանի խանության տերիտորիան[1]։ Ժողովուրդն այստեղ ամենուրեք մեծ ընդունելություն է ցույց տալիս Բենկենդորֆի զորքերին, օգնելով նրան սննդամթերքներով և թշնամու մասին տեղեկություններ հաղորդելով։ Ներսես Աշտարակեցին հայ բնակչությանը դենքի ու պայքարի էր կոչում՝ պարսկական լծից ազատագրվելու համար։

Առաջավոր ջոկատի հիմնական առաջադրանքն ըստ պլանի կայանում էր նրանում, որ պետք է գրավեր էջմիածինը և այնտեղ հավաքեր սննդամթերքի պաշարներ, որ անհրաժեշտ էին և՛ իր՝ Բենկենդորֆի ջոկատի, և՛ հիմնական ուժերի համար։ Ջոկատը ոչ մի տեղ դիմադրության չի հանդիպում և մեծ արագությամբ առաջ է շարժվում դեպի էջմիածին, որի գրավումը մեծ նշանակություն էր ունենալու նաև հայ կամավորական խմբերի համար։ Տարվա այդ սեզոնում ռուսական զորքերի հարձակումը անսպասելի էր, պարսիկները Երևանի խանության հյուսիսային սահմանում ձգվող լեռները տարվա այդ շրջանում համարում էին անանցանելի ոչ միայն հրետանային, այլ նաև հետևազորային միավորների համար։ Էջմիածնի՝ մի քանի հարյուր դինվորից բաղկացած պարսկական կայազորը, լսելով ռուսական զորքի մոտենալը, թողնում հեռանում է Ապարանի շրջանը, որտեղ, ըստ լուրերի, հավաքված էր Երևանի խանությունում գտնվող պարսկական ամբողջ հեծելազորը[2]։

Ռուսական զորքերի մոտեցման մասին և նրանց պատշաճ ընդունելություն ցույց տալու համար՝ Ներսես Աշտարակեցին մի հատուկ հանձնարարականով ճանապարհից նախօրոք էջմիածին է ուղարկում Հովհաննես Ասլանյանցին, որը պարսիկների ձեռքն ընկնելուց և նրանց կողմից խոշտանգվելուց հետո, կիսամեռ վիճակում մի կերպ տեղ է հասնում և հոգևոր հայրերին հաղորդում ռուսական զորքերի գալստյան լուրը։ Ասլանյանցին, Բենկենդորֆի միջնորդությամբ, պարգևատրում են ոսկե մեդալով և նշանակում ցմահ թոշակ՝ տարեկան 100 ռուբլի[3]։

[1] В. Потто, Кавказская война..., т. III, вып. II, էջ 293—296։
[1] Նույն տեղը, էջ 296։
[2] Նույն տեղը, էջ 296—297։

Ներսես Աշտարակեցի (1770—1857) (Երևանի պատմության թանգարան)։

Բենկենդորֆի ջոկատը, առանց որևէ կռվի, ապրիլի 13-ին հասնում է Էջմիածին։ Այստեղ ջերմ ընդունելություն են ցույց տալիս նրան։

Ըստ նախագծի, նա Էջմիածինը գրավելուց և այնտեղ անհրաժեշտ քանակությամբ մթերապաշարներ ամբարելուց հետո, պետք է գործեր Երևանի ուղղությամբ։ Բենկենդորֆը այդ դիտեր, սակայն առայժմ սպասում էր Վրաստանից եկող բեռներին։

Ապրիլի 23-ին Բենկենդորֆի ջոկատը 10 օրվա պաշար է ստանում Վրաստանից, և նույն օրվա երեկոյան ջոկատը շարժվում է դեպի Երևան։ Վերջինս ոչ մի տեղից դեռևս օգնության ոչ մի հույս չուներ։ Բերդի պաշտպանությունն ամբողջապես ընկնում էր տեղական ուժերի վրա։ Բենկենդորֆի ջոկատն էլ իր հերթին մեծ չէր և կարող էր միայն պաշարել բերդը և այդ այդպես պահել մինչև գլխավոր ուժերի ժամանումը. նրա ջոկատը հազիվ թե կարողանար վերցնել բերդը գրոհով[1]։ Ապրիլի 24-ին Բենկենդորֆի ջոկատը շարժվում է դեպի բերդ։ Պարսկական հեծելազորը քաղաքից արևմուտք, այգիների շրջանում փորձում է կանգնեցնել ռուսական ջոկատի շարժումը, սակայն նա է շրջանցվում սվինամարտով։ Քաղաքի բնակիչների աչքի առջև Բենկենդորֆի ջոկատը նախ գրավում է բերդի հարավ-արևելյան անկյան դիմաց գտնվող Մուխանաթ-թափա բլուրը, ապա՝ թշնամու հեծելազորին վռնդելով դեպի նախիջևան, իսկ հետևակազորին՝ քաղաք, գրավում է քաղաքի այգիները[2]։ Որոշ միավորումներ թողնելով Մուխանաթ-թափայում և այգիներում, Բենկենդորֆը իր զորքերով ճամբար է գնում բերդից հարավ և այստեղից սկսում նրա պաշարումը[3]։ Ամսույս 25-ին երկու անգամ ամբ կռիվներ են տեղի ունենում, դրանցից մեկը բռնկվում է քաղաքից արևմուտք գտնվող Հերակլյան բարձրության շրջանում, մյուսը՝ այգիներում։ Բերդում հայտարարվում է տագնապ, Հերակլյան բլուրից ռուսական հրանոթները կրակում են բերդի պարիսպների և խանի պալատի վրա, սկսվում է փոխադարձ հրաձգություն։ Հերակլյան բլուրը գրաված ջոկատը մարտից հետո ճամբար է վերադառնում, այնտեղ իրեն դիտորդներ թողնելով երկու վաշտ, ինչպես և 4 հրանոթ[4]։ Ավելի արյունահեղ և համառ էր կնոջորից հետո այգիներում բռնկված մարտը, որին պարսիկների կողմից մասնակցում էր հետևակազորայիններից ու հեծյալներից բաղկացած

1 В. Потто, Кавказская война..., т. III, вып. II, էջ 306—308։
2 Նույն տեղը, էջ 308։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը, էջ 308—309։

ուժեղ ու բավական մարդաշատ ջոկատ՝ Երևանի պարետ Սավադ-Ղուլի խանի հրամանատարությամբ: Այդ ջոկատն անակնկալ հարձակվում է այգիներում դիրքավորված ռուսական վաշտի վրա, սակայն Բենկենդորֆի հրամանով Մուխանաթ-Քափալից գալիս ու պարսկական ջոկատի թիկունքն է մտնում կարաբինավորների մի վաշտ, որը և ճակատից կռվող վաշտի հետ միասին մեծ կորուստներ պատճառելով թշնամուն, նրան մատնում է փախուստի: Պարսիկներն այդ կռվում տալիս են 100, իսկ ռուսները՝ 18 սպանված[1]: Ամսույս 26-ին, հրանոթային ուժեղ կրակի տակ, մայոր Յուդինի գլխավորությամբ մի գումարտակ անցնելով բերդի արևելյան կողմով, գրավում է շուկան, Գյոյ-ջամին և դրանցից արևմուտք ու հյուսիս-արևմուտք ընկած մասերը՝ մինչև Զանգու: Նույն օրը Թափարաշի վրա արդեն պետեղված էր մի մարտկոց, որը կրակ է բացում բերդի վրա: 1827 թ. ապրիլի 27-ին Բենկենդորֆի ջոկատը Երևանի բերդն արդեն պաշարել էր բոլոր կողմերից[2], իսկ ջոկատի ճամբարը գտնվում էր նույն տեղում:

Բերդը պաշարելուց հետո՝ Բենկենդորֆը փորձում է բանակցությունների միջոցով համոզել սարդարին՝ հուժար կամքով այն հանձնելու, խոստանալով, որ նա Երևանի խանությունը Ռուսաստանին միացնելուց հետո մնալու է իր իրավունքների մեջ, հաշվի առնելով, որ նա զառամյալ հասակում է, շուտով կմահանա և ռուսական իշխանություններին դրանով իսկ կազատի իրենց վերցրած այդ պարտավորությունից[3]: Սակայն ո՛չ բանակցությունների այդ վարիանտը և ո՛չ էլ պարետ Սավադ-Ղուլի խանին կաշառելու միջոցով բերդը ձեռք գցելու ձգտումները ոչ մի արդյունքի չեն հասցրնում[4]:

Բենկենդորֆի ջոկատը Երևանի բերդը պաշարված դրությամբ պահում է մինչև Պասկևիչի զորքերի ժամանումը՝ մինչև հունիսի 15-ը: Այդ՝ ավելի քան մեկ ու կես ամսվա ընթացքում պաշարվածները մի քանի անգամ առանձին ջոկատներով փորձում են դուրս գալ օղակումից, որը նրանց չի հաջողվում: Անհաջողությամբ է վերջանում և պաշարումից ազատվելու համար սարդար Հուսեյն-Ղուլի խանի՝ հունիսի 6-ին կատարած փորձը: Սակայն, մինչև այդ, նա կարողացել էր քաղաքից հանել տալ և Պարսկաստան ուղարկել բոլոր թանկարժեք իրերը:

[1] В. Потто, Кавказская война..., т. III, вып. II, էջ 309—310:
[2] Նույն տեղը, էջ 210:
[3] Նույն տեղը, էջ 311—312:
[4] Նույն տեղը:

Բենկենդորֆի ջոկատին, որի երեք վաշտը մնացել էր էջմիածնում, լուրջ կերպով անհանգստացնում էր միայն սարդարի եղբայրը՝ Հասան խանը: Վերջինս, հեծյալներից և հետևազորից բաղկացած ջոկատի գլուխ անցած, հանկարծակի երևում էր մերթ այստեղ, մերթ այնտեղ և հարձակվում ռուսական զորքերի տարբեր միավորումների վրա, սակայն շուշափելի ոչինչ չէր ստանում, չնայած որ պաշարվածները, օղակից դուրս գալու պարբերական փորձեր կատարելով, աշխատում էին ռուսական ջոկատի ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել բերդի վրա և դրանով իսկ ապահովել Հասան խանի գործողությունների ազատությունն ու հաջողությունը[1]:

Պասկևիչը Թիֆլիսից դուրս է գալիս 1827 թ. մայիսի 12-ին, Շուլավերում իր գնդերը ստուգելուց հետո՝ ամսույս 13-ին դանդաղ կերպով շարժվում է առաջ: Նրա գործող բանակը ավելի էր ուժեղացել նոր զորքերի՝ Նալչիկից եկած երկու գումարտակի և մայիսի 15-ին Թիֆլիսում հանդիսավոր կերպով կազմակերպված հայկական հեծյալ ջոկատի միացմամբ: Վերջինս օրավուր դառնում էր ավելի բազմամարդ: Ճանապարհին նրան էին միանում բազմաթիվ հայեր[2]:

Հունիսի 8-ին Պասկևիչն արդեն գտնվում էր էջմիածնում, որտեղ անմիջապես ճամբար է դնում նրա զորքը, իսկ մարտկոցային ամբողջ հրետանին ուղարկվում Երևանի տակ, որպեսզի իր ներկայությամբ ահաբեկի ու հարկադրի սարդարին՝ հանձնելու բերդը[3]:

Այստեղ Պասկևիչին հայտնի է դառնում, որ Երևանի պարետ Սավադ-Ղուլի խանը (որի հետ Բենկենդորֆը մինչ այդ շփման մեջ մտնելով, համոզում էր նրան բերդը հանձնել, իսկ սա էլ պատասխանել էր, թե ինքը իբր համաձայն է և միայն սպասում է ռուսական գլխավոր զորքերի ժամանմանը) որևէ մաս չունի բերդի պաշտպանության մեջ, բերդի պաշտպանությունն ամբողջապես դնվում է սարդարի ձեռքին, որը առանց այլևայլության մերժում է բերդը հանձնելու բոլոր կարգի առաջարկները[4]:

Հունիսի 9-ին Պասկևիչը ինքը գալիս է Երևան՝ պաշարման պայմաններին ծանոթանալու և վճռելու այն հարցը, թե առկա պայմաններում հնարավո՞ր է արդյոք գրավել այն: Բերդի ամրու-

[1] В. Потто, Кавказская война..., т. III, вып. II, էջ 312—319:
[2] Նույն տեղը, էջ 319—324:
[3] Նույն տեղը, էջ 327—328:
[4] Նույն տեղը:

թյանը ծանոթանալուց հետո, նա գալիս է այն եզրակացության, որ իր ձեռքի տակ եղած միջոցներով հաղիվ թե հաջողվի բերդը գրավել գրոհով, քանի դեռ չի սկսել պաշարողական հրետանին և, բացի դրանից, իր մոտ եղած հրետանային ռազմամթերքը քիչ է և հազիվ կբավականացնի նախիջևանի կողմերում ենթադրվող գործողությունների համար։ Պասկևիչի կարծիքով, բերդի պաշարումը շարունակելու դեպքում ինքը նախիջևան կհասնի ուշ՝ ամենաշուտ օրերին և հնարավորություն չի ունենա ակտիվ գործողությունների դիմելու այնտեղ։ Այդ բոլորը, ինչպես և Բեննիգսենդորֆի ջոկատի դինվորների առողջական վատ վիճակը հաշվի առնելով, նա որոշում է. ա) ինքը գլխավոր ուժերով, առանց հապաղելու պետք է շարժվի Արաքսով ցած՝ դեպի Նախիջևան, որպեսզի գրավի այն և խափանի Պարսկաստանից Երևանի բերդին օգնություն ցույց տալու հնարավորությունը, բ) Երևանի բերդը պաշարող Բեննիգսենդորֆի ջոկատը պետք է փոխարինել մի այլ ջոկատով, իսկ նախորդը միացնել նախիջևան արշավող հիմնական ուժերին և գ) Բեննիգսենդորֆի ջոկատին փոխարինած զորքերը պետք է հսկեն և՛ Երևանի, և՛ Սարդարաբադի բերդերի վրա, թույլատրելով նրանց ուժեղ շոգերի ժամանակ թողնել Երևանի պաշարումը և ճամբար դնել բարձրադիր լեռներում։ Այդ ջոկատը Երևանի բերդը պետք է նորից պաշարի աշնանը, երբ եղանակները կմեղմանան և միաժամանակ կժամանի պաշարողական հրետանին[1]։

Բեննիգսենդորֆի ջոկատին փոխարինում է 20-րդ դիվիզիան, որի կազմում գտնվում էին Սևաստոպոլյան ու Ղրիմի հետևակային և 39 ու 40-րդ հրաձիգ գնդերը։ Նրան էին միացված 6-րդ պիոներական (ինժեներական) գումարտակը և 20-րդ հրետանային բրիգադից 38 հրանոթ։ Հուլիսի 15-ին այս կորպուսը՝ գեներալ Կրասովսկու հրամանատարությամբ փոխարինում է Բեննիգսենդորֆի ջոկատին, որը իր կազմով դիմում է դեպի գլխավոր ուժերի համար հավաքակայան նշանակված վայրը[2]։ Գլխավոր ուժերը Պասկևիչի գլխավորությամբ հունիսի 21-ին անցնում են Գառնի-Ջայ գետը և, մարտական կարգ կազմած, դիմում դեպի Նախիջևան։

Կրասովսկին շրջապատում է բերդը, սակայն շուտով ստիպված է լինում թողնել պաշարումը և ճամբար դնել Ապարանի սարահարթում, որովհետև վրա են հասնում ուժեղ շոգերը, կորպուսի մեջ տարածվում են հիվանդություններ, վերջանում է անասնակերը։ Ապարանի սարահարթից նրա կորպուսը կարող էր, անհրաժեշտության դեպքում, արագ կերպով իր հարվածն ուղղել և՛ Երևանի, և՛ Էջմիածնի, և՛ Սարդարաբադի կողմը։ Այդ բոլորի մասին դրելով Պասկևիչին, նա թույլտվություն է ստանում՝ մինչև հովերն ընկնելը կորպուսը զետեղել Ապարանի շրջանում[1]։ Հունիսի 21-ին նրա կորպուսը, առանց բերդցիների կողմից նկատվելու, թողնում է Երևանի պաշարումը և դիմում դեպի Էջմիածին, որտեղ 6 օրվա ընթացքում բավականաչափ պաշարեղեն է հավաքում։ Դրանից հետո՝ հունիսի 30-ին գեներալ Կրասովսկին իր զորքերով շարժվում է դեպի Ապարանի սարահարթը և հուլիսի 1-ին ճամբար դնում այնտեղ, Էջմիածնի վանքը պաշտպանելու համար Սևաստոպոլյան գնդից թողնելով մի փոմարտակ, 5 հրանոթ և 100 հոգուց բաղկացած հայկական հեծյալ ջոկատը[2]։

Հուսեյն-Ղուլի խանի համար միանգամայն պարզ էր, որ Կրասովսկու ջոկատի հեռանալը ժամանակավոր է, և հով եղանակները սկսվելուց ու պաշարողական հրետանի, օժանդակ ուժեր ստանալուց հետո նա նորից է գալու Երևանի վրա։ Ուստի հոգ է տանում Երևանի բերդն ավելի ուժեղացնելու, նրա պաշտպանունակությունն ավելի բարձրացնելու համար։

Երևանի բերդի ուժեղացման հարցով մտահոգվելը, ինչպես տեսանք, սարդարի համար նորություն չէր։ Նա Երևանի բերդն անառիկ դարձնելու համար օգտագործում էր ոչ միայն տեղական, այլև ֆրանսիական ու անգլիական համապատասխան մասնագետներին։ Ավելի քան երկու տասնամյակ տևած իր իշխանության շրջանում Հուսեյն-Ղուլի խանը մշտապես ավելացնում և բարեփոխում էր Երևանի բերդի ամրությունները՝ դրանք, ըստ հնարավորին, դարձնելով ավելի լուրջ պատվարներ ժամանակակից հրետանու համար։ Այնպես որ, 1816 թ. անգլիական դիվանագիտության ներկայացուցիչ Ջեմս Մորիերի մոտ նրա արած այն պարծենկոտ հայտարարությունը, թե՝ «Եթե ֆրանկի... երեք շորս թագավոր միանան՝ գրավելու համար այս ամրոցը, նրանք միայն նեղություն պիտի կրեն նա երթալու, որովհետև նրանց աշխատանքը իզուր պիտի անցնի»[3], միանգամայն զուրկ չէր հիմքից։ Սակայն ռազմական գործին լավատեղյակ սարդարն ու իր եղբայր Հասան խանը զգում էին, որ ժամանակակից պաշարողական հրետանու համար Երևանի բերդի պարիսպները հեռու են անառիկ

[1] В. Потто, Кавказская война..., т. III, вып. II, էջ 329—332։
[2] Նույն տեղը, էջ 332—340։

[1] В. Потто, Кавказская война..., т. III, вып. III, էջ 449—451։
[2] Նույն տեղը, էջ 451—453։
[3] Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Զ, էջ 322։

լինելուց։ Ուստի ռուս-պարսկական երկրորդ պատերազմի նախօրեին բերդի ամրացումը նորից է դառնում խան եղբայրների մտահոգության առարկան։ Ականատես մարդիկ վկայում են, որ նրանք, մինչև պատերազմի սկսվելը (իսկ պատերազմը սկսեցին հենց իրենք պարսիկները)՝ եռանդագին աշխատանքներ էին կատարում Երևանի և Սարդարաբադի բերդերի ամրացման ուղղությամբ[1]։

Ռուսական զորքերի կողմից Երևանի բերդի գրավման համար նոր հարձակում սպասող սարդար Հուսեյն-Ղուլի խանը, առանց ձեռքերը ծալելու, այն ամրացնում և նախապատրաստում է հակահարված տալու ենթադրվող գրոհներին ու հրետանային կրակին։ Բերդից պաշարողների գործողությունները տեսնելու, դրանք ապաքողարկելու և նրանց վրա ճշգրիտ կրակ բացելու նպատակով ոչնչացնում են բերդի պարիսպներից սկսած՝ հրացանային կրակի հեռավորության վրա եղած՝ քաղաքի կառուցվածքները, կտրում շրջակայքի այգիների, որոնց թվում և սարդարապատական նշանավոր այգու ծառերը։ Զգալի չափով բարձրացնում են շեղապատնեշը (гласис), որպեսզի ազատ գործելու համար բացվի բերդատափ (эспланда)[2]։

Ի դեպ է նկատել, որ սարդարն իր խանության և նրա կենտրոն Երևանի պաշտպանության ուժեղացման նպատակին հասնելու համար չէր բավականանում միայն Երևանի այգիները կտրելով ու բազմաթիվ շենքեր ավերելով։ Նա իր աթոռանիստին վտանգ սպառնալու դեպքերում հարկադրարար բերդի ներսն էր քշում քաղաքի բնակչությանը, որը, ինչպես տեսանք, մեծ համակրանք ուներ ռուսական զորքերի նկատմամբ։ Պարսից շահերի օրինակով սարդար Հուսեյն-Ղուլի խանն էլ իր հակառակորդի շարժումը արգելակելու համար ամայացնում էր խանության ճանապարհի վրա ընկած տարբեր շրջանները, իսկ նրա՝ ռուսներին համակրող բնակչությանը, քշում էր Պարսկաստանի խորքերը։ Ականատեսների պատմելով, 1826 թվականի վերջերին Երևանի խանությունում ավերվել, թալանվել ու քայքայվել էին բազմաթիվ գյուղեր, որոնց «անհավատարիմ» բնակիչներին քշել էին Պարսկաստանի ներքին շրջանները[3]։

Հենց այդ ժամանակներում հրապարակվում է սարդարի հրամանը՝ էջմիածնատափական բոլոր գյուղերի ամբողջ բնակչությանը, ինչպես և վանքի հոգևորականներին զենքի ուժով քշել Երևանի բերդը։ Իսկ նրա եղբայր Հասան խանը փորձում է իր սարդար եղբորից առաջ անցնել. նա մտադրվում է էջմիածինը մատնել հրի։ Սարդարը ետ է կանգնում իր այդ հրամանի կատարումից միայն մի քանի նշանավոր ադրբեջանցիների նախազգուշացումներից հետո, որոնք նրան մասնացույց են անում նաև հայ ու ադրբեջանցի բնակչության նկատմամբ ռուս պետական ու հրամանատարների համբերատար և բարեկամական վերաբերմունքը[1]։

Սարդար Հուսեյն-Ղուլի խանը, Կրասովսկու ջոկատի ժամանակավոր բացակայությունը իր բերդն ուժեղացնելու համար օգտագործելուց բացի, մտադրվում է գրավել թույլ պաշտպանված էջմիածինը, սակայն վանքապաշտպան փոքրիկ ջոկատը և Ապարանից նրան օգնության հասած զորամասը Հուսեյն-Ղուլի խանին հարկադրում են նորից փակվել իր սարդարական բերդում[2]։

Այդ անհաջող փորձից հետո, որ նա կատարել էր հունիսի սկզբներին, Հուսեյն-Ղուլի խանը հատուկ եռանդով Աբաս-Միրզային հաղորդում է, թե այժմ ամենահարմար պահն է «էջմիածինը գրավելու», Բղովդալով դեպի Երևան շարժվող «պաշարողական հրետանին ետ մղելու», «Կրասովսկու ջոկատը ոչնչացնելու» և «դեպի Վրաստան ճանապարհը» բաց անելու համար, պարծենալով, որ իբր ինքն է վերացրել բերդի պաշարումը[3]։ Սարդարի հաղորդած տեղեկությունների և իր մարդկանց միջոցով կատարած հետախուզությունների հիման վրա՝ Աբաս-Միրզան գալիս է այն եզրակացության, որ իրոք Հարավային Ադրբեջանի իր տիրապետությունները Պասկևիչի սպառնալիքից ազատելու և Երևանի բերդի պաշարումը թեկուզ մինչև մյուս գարուն հետաձգելու միակ ելքն է՝ էջմիածնի գրավումը, Կրասովսկու ջոկատի ոչնչացումը, պաշարողական հրետանու վանումը և դեպի Վրաստան ու Ղարաբաղ ավերիչ արշավանք կազմակերպելը[4]։

Աբաս-Միրզան 25 հազար հեծյալներով, հետևակազորայիններով ու 24 հրանոթով մտնում է Երևանի խանության սահմանները[5]։ Օգոստոսի 14-ին նրա զորքերի հիմնական մասը ճամբար

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 494, лл. 15—16, д. 894, лл, 10—13.
[2] В. Потто, Кавказская война..., т. III, вып. III, էջ 453—454։
[3] ЦГВИА, ф. ВУА, д. 894, л. 31.

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 894, л. 11—12։
[2] В. Потто, Кавказская война..., т. III, вып. III, էջ 454—455։
[3] Նույն տեղը, էջ 456։
[4] Նույն տեղը, էջ 456—457։
[5] Ըստ Լաչինովի հաղորդման, պարսկական այդ բանակի ամբողջ անձնակազմը բաղկացած էր 30 000 մարդուց (տե՛ս М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, Документы, էջ 336—337)։

է գնում Օշականի մոտ՝ Ճանապարհից ½ վերստ հեռավորության վրա գտնվող բարձրությունների վրա, իսկ 4000 զինվորներից բաղկացած մի ուժեղ ջոկատ շրջապատում է էջմիածնի վանքը և, հրանոթները ուղղելով նրա կողմը, սպառնում նրա գոյությանը[1]: Էջմիածնից մի կերպ ճամբար հասած մարդիկ Կրասովսկուն ծանոթացնում են գործերի դրությանը և հայտնում, որ էջմիածինը գտնվում է պրավման ու ավերման վտանգի տակ: Չնայած հակառակորդի բանակի համեմատությամբ իր ջոկատը մոտ 10 անգամ փոքր էր (բաղկացած էր ընդամենը 3000 մարդուց), այնուամենայնիվ, Կրասովսկին որոշում է փրկել էջմիածինը[2]: Աբաս-Միրզան էլ հենց այդ էր ուզում, որպեսզի Կրասովսկուն ճամբարից բաց դաշտ հանի և էջմիածին տանող ճանապարհի՝ Օշականի մոտ ընկած հատվածում, ծուղակի մեջ գցելով, ջախջախի ու ոչընչացնի նրա ջոկատը, իսկ հետագայում շարժվի դեպի պաշարողական հրետանին և ապա՝ Թիֆլիս:

Օգոստոսի 16-ին պարսկական հրետանին ուժեղ կրակի տակ է վերցնում էջմիածինը: Կրասովսկին սկզբում մտադրվել էր նրան օգնության հասնել պաշարողական հրետանու ժամանելուց հետո, որը սպասվում էր 17-ին կամ 18-ին, այսինքն՝ 1—2 օր հետո: Սակայն դեպքերի այդպիսի ընթացքը հաշվի առնելով, նա իր ջոկատով շտապում է էջմիածին[3]:

Կրասովսկու ջոկատի և Աբաս-Միրզայի բանակի միջև ճակատամարտը տեղի է ունենում օգոստոսի 17-ին՝ Օշական գյուղի մոտ, նրանից 2 վերստ հեռավորության վրա, էջմիածին տանող ճանապարհին[4]: Այդ ճակատամարտում մեծ զոհերի գնով ռուսական ջոկատը կարողացավ, սակայն, անհամեմատ ավելի մեծ զոհեր պատճառել թշնամուն և ստիպել նրան հրաժարվելու էջմիածինը գրավելու մտքից և մինչև անգամ չերազել դեպի Վրաստան արշավանք կատարելու մասին[5]:

Ամսույս 20-ին Կրասովսկու ճամբարն է հասնում պաշարողական հրետանին: Հենց նույն օրն էլ կարաբինավորների զնդի գլուխ անցած գեներալ-մայոր Լապտևը շարժվում է դեպի Օշական, ուր հակառակորդ չի գտնվում: Աբաս-Միրզան դեռևս շարունակում է ճամբար դնել մերթ այստեղ, մերթ այնտեղ, հետապնդել ռուսական ջոկատներին, փորձեր է կատարում կտրելու հաղորդակցությունը Թիֆլիսի հետ և այլն: Սակայն այդ բոլորը նրան որևէ արդյունքի չեն հասցնում:

Սեպտեմբերի սկզբներին Ապարանի շրջանում ճամբար դրած ռուսական զորքը, որը, ինչպես ասվեց, ստացել էր համալրում և պաշարողական հրետանի, պատրաստ էր մարտական նոր առաջադրանք կատարելու[1], այսինքն՝ նորից պաշարելու Երևանը:

Երբ Երևանի խանությունում տեղի էին ունենում նշված դեպքերը, Կովկասյան հատուկ կորպուսի գլխավոր ուժերը Պասկևիչի գլխավորությամբ նախ՝ առանց մարտի՝ հունիսի 26-ին գրավեցին Նախիջևանը, որի կայազորը Պասկևիչի բանակի մոտենման լուրը լսելով՝ թողել հեռացել էր, ապա՝ արյունալի ճակատամարտով գրավեցին անգլիական ճարտարապետ-զինվորականների ղեկավարությամբ կառուցված Աբասաբադ բերդը (հուլիսի 7-ին), որը գտնվում էր Նախիջևանից մի քանի վերստ հեռավորության վրա՝ Արաքսի ափին[2]:

Աբասաբադի գրավմանը նախորդել էր հուլիսի 5-ին՝ Ջևանբուլաղի (գտնվում է Արաքսի աջ կողմում) ճակատամարտը, որտեղ Պասկևիչը ջարդել էր Աբաս-Միրզայի բանակը, դրանով իսկ կանխելով Արաքսի աջ կողմից նրա հարձակման սպառնալիքը:

Օշականի ճակատամարտից հետո, երբ օգոստոսի 27-ին ստացվում է Կրասովսկու զեկուցագիրը, Պասկևիչը՝ տեսնելով, որ Աբաս-Միրզան մնալով իր թիկունքում և Երևանի ու Սարդարաբադի բերդերը ապաստարան դարձրած՝ կատարում է զանազան հարձակումներ, վճռում է նախքան Թավրիզի վրա գնալը ջախջախել Աբաս-Միրզայի բանակը և գրավել Սարդարաբադի ու Երևանի բերդերը: Մերժելով գլխավոր ուժերի գործողությունների համար Երևան եկած մյուս 2 պլանները, որոնցից մեկի համաձայն, ինչպես ասվեց, նախատեսվում էր գնալ ուղիղ Թավրիզի վրա, իսկ ըստ մյուսի՝ գլխավոր ուժերը պետք է շարժվեին դեպի Մակու կամ Խոյ, Պասկևիչը անմիջապես նախապատրաստվում է Աբաս-Միրզայի հետապնդմանը և Երևանի ամբողջ խանության գրավմանը, մանավանդ որ պատերազմ էր սպասվում Թուրքիայի դեմ: Երևանի գրավումով սա կդառնար կարևոր հենակետ և՛ Թուր-

[1] ЦГВИА, ф. 476, д. 14, лл. 1—3.
[2] Նույն տեղը, թ. 3:
[3] Նույն տեղը, թ. 3—4:
[4] Նույն տեղը, թ. 4—5:
[5] Նույն տեղը, թ. 1—9:

[1] ЦГВИА, ф. 476, д. 14, лл. 11—13.
[2] ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, ամլ. 114, տե՛ս նաև Н. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая. Документы, էջ 353:

քիայի, և՛ Պարսկաստանի դեմ գործողություններ ծավալելու համար[1]։

Օգոստոսի 3-ին Պասկևիչի զորամասերն արդեն Գառնի-չայի հովտում էին, երբ լուր ստացվեց, որ Աբաս-Միրզան իր ջոկատով նահանջել է Արաքսի մյուս ափը և ամրացել Սարդարաբադից 45 վերստ հեռավորության վրա գտնվող Կարա-կալա ամրոցում[2]։

Պասկևիչի ջոկատը սեպտեմբերի 5-ի երեկոյան տեղավորվում է Էջմիածնի պատերի մոտ։ Այստեղ նա շատ սառը վերաբերմունք է ցույց տալիս Ներսես Աշտարակեցուն և, մանավանդ, Կրասովսկուն, որը սեպտեմբերի 6-ին իր ջոկատով Էջմիածին է գալիս՝ գլխավոր ուժերին միանալու համար[3]։ Էջմիածնում շուտով լուր է ստացվում, որ Երևանի սարդարը թողել է բերդը և գաղտնի կերպով փախել թուրքական սահմանները։ Առաջին հայացքից թվում էր, թե Պասկևիչն անմիջապես պետք է հարձակվեր Երևանի վրա, որի գրավումն արդեն մեծ դժվարությունների հետ չէր կապված, մանավանդ որ բերդապահ զորքն այնքան էլ մտադիր չէր համառելու[4]։ Պասկևիչը մտադրվում է նախ գրավել Թիֆլիսի կողմից վտանգ սպառնացող նորաշեն Սարդարաբադ բերդը, ապա ուժերն ուղղել հիմնական նպատակին՝ Երևանի գրավմանը։

Ամենուրեք վխտում էին պարսկական լրտեսներ, սակայն Պասկևիչը խիստ գաղտնի էր պահում իր մտադրությունը։ Սարդարաբադի գրավման համար անհրաժեշտ էր զգուշավորություն։ Նրա պաշտպանությունը գտնվում էր Սարդարի եղբայր Հասան խանի ձեռքին, որը վճռել էր դիմադրել մինչև վերջ։ Բացի դրանից, Աբաս-Միրզայի բանակը շատ հեռու չէր գտնվում վտանգի ենթարկված բերդից և ամեն ժամ կարող էր անհանգստացնել Պասկևիչի զորքերին։ Սակայն անակնկալ ոչինչ տեղի չի ունենում։ Ռուսական զորքերը, սեպտեմբերի 12-ին շարժվելով դեպի Սարդարաբադ, վարպետորեն պաշարում են այն։ Սեպտեմբերի 19-ին, գիշերով՝ Հասան խանը հաղիվ կարողանում է ճողոպրել, իսկ 20-ին առավոտյան ռուսական զորքն արդեն մտնում է բերդը[5]։

Բերդի կայազորը բաղկացած էր ընդամենը 1500 մարդուց՝

[1] В. Потто, Кавказская война..., т. III, вып. III, էջ 488—490։
[2] Նույն տեղը, էջ 490—491։
[3] Նույն տեղը, էջ 491—492։
[4] Նույն տեղը, էջ 492։
[5] ЦГВИА, ф. ВУА, д. 4292, лл. 1—19, *Հայոց Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթ. 58, վավ. 133, տե՛ս նաև* В. Потто, Кавказская война..., т. III, вып. III, էջ 493—504։

հեծյալներից և երկու գումարտակ սարբազներից։ Կայազորը բերդի հյուսիսային մասից դուրս գալով, դիմում է փախուստի՝ դեպի Երևան, դեպի Թուրքիայի սահմանները և դեպի Արագած։ Սակայն սրանք հանդիպում են ռուսական զորքերին և տալիս մոտ 500 մարդու կորուստ, 200 գինվոր էլ գերվում են։ Սարդարաբադում ռուսական զորքը ավար է վերցնում 13 պղնձյա հրանոթներ,

Գեներալ Ի. Ֆ. Պասկևիչ (1782—1856) (Երևանի պատմության թանգարան)։

ցորենի մեկ պահեստ, նշանակալի քանակությամբ վառոդ, բամբակ և այլն[1]։

Այժմ Երևանի ազատագրումը պարսկական լծից դառնում է միանգամայն իրագործելի, օրերի հարց։ Գրավված էին Երևանի և Նախիջևանի խանությունները՝ իրենց բոլոր ամրացված կետերով

[1] АКАК, т. VII, էջ 563—564։

հանդերձ, բացառությամբ Արաքսի աջ ափին գտնվող մի քանի շրջանների, որտեղ յուրաքանչյուր պարտության և անհաջողության դեպքում սովոր էր իր գլուխը պահել թագաժառանգ Աբաս-Միրզան։

Սարդարաբադի գրավմամբ վրա է հասնում Երևանի հերթը, ճանապարհը դեպի Երևան բաց էր։ Պետերբուրգն էլ տվյալ պահին հենց այդ էր պահանջում Պասկևիչից, որովհետև Թուրքիայի հետ պատերազմ ծագելու բոլոր նշանները կային, և եթե Երևանը մնար պարսկական խանների ձեռքին, ապա լուրջ խոչընդոտ կհանդիսանար Թուրքիայի դեմ մղվող պատերազմում։

Պասկևիչը շտապում էր օգուտ քաղել Սարդարաբադի հաջողությունից։ Սեպտեմբերի 23-ին նա, իր զորքերի գլուխ անցած, ժամանում է Զանգվի ափը։ Այստեղ հաջորդ օրը հավաքում է ռազմական խորհուրդ, որը որոշում է անհապաղ սկսել բերդի պաշարումը։ Խորհուրդը գտնում է, որ հարձակումը պետք է կատարվի բերդի հարավ-արևելյան անկյունից[1], որն ավելի մատչելի է շրջակայքում և ունի մանևրելու համար հարմար տարածություններ։

Սեպտեմբերի 25-ին բերդից հարավ-արևելք գտնվող Մուխա-նաթ-թափա բարձրությունից մի քանի ռումբ քաղաք գցելուց հետո՝ սկսվում է պաշարումը։ Բերդը պաշտպանում էր ավելի քան 6000 հոգուց բաղկացած կայազորը, որի գլուխ կանգնած էր Սարդարաբադից մի կերպ իր գլուխն ազատած Հասան խանը։ Սա նախ փախել էր թուրքական սահմանները, ապա եկել ու Երևանի բերդի պաշտպանությունը վերցրել էր իր ձեռքը։ Սարդարաբադի անկումը բարոյալքել էր Երևանի կայազորին, սակայն սարդարի եղբայրը ամեն հնարանք գործադրելով կարողանում է որոշ չափով բարձրացնել նրա մարտական ոգին[2]։

Ամսույս 26-ին Գևորգիևյան բլրի վրա, որը գտնվում էր բերդից արևելք, նրանից 300 սաժեն հեռու, հաստատվում է մարտկոցային 6 հրանոթներից բաղկացած մի մարտկոց, որից աջ դրվում են 4 հրասանդներ (мортира)։ Արևելքից դեպի բերդ կրակելը շատ հարմար էր այն պատճառով, որ քաղաքի ու բերդի գրաված տերիտորիաները արևելքից արևմուտք աստիճանաբար բարձրանում են. հրանոթային կրակի բոլոր արդյունքները աչքի առ-

1 ЦГВИА, ф. ВУА, д. 4292, лл. 1—19, АКАК, т. VII, էջ 565։
2 Նույն տեղերը։

առջ էին և կարելի էր կրակը կանոնավորել առանց որևէ դժվարության[1]։

Ամսի 27-ին, գիշերով կատարվում են նոուն աշխատանքներ։ Բերդապահ կայազորը լուսնի լույսի տակ հրացանային կրակ է տեղում պաշարողների վրա։ Սակայն վերջիններս ամենայն սառնասրտությամբ շարունակում են իրենց աշխատանքը՝ մեկը մյուսի հետևից շարք մտցնելով նորանոր խրամատներ և դիրքավորելով նոր մարտկոցներ, որոնք հաստատվում են աջ ու ձախ թևերում[2]։

Սեպտեմբերի 27-ին հաստատված այդ մարտկոցները հենց նույն օրը սկսում են կրակել բերդի վրա։ Հաջորդ օրվա գիշերը կործանվող պարսպից 150 սաժեն հեռավորության վրա պաշարողական հրանոթների համար պատրաստում են հարմար դիրքեր, իսկ ձախ թևի վրա հաստատում են երկու հրասանդներ[3]։

28-ին գրեթե բոլոր մարտկոցները միաժամանակ կրակ են բացում բերդի վրա։ Ռուսական հրանոթները իրենց ճշգրիտ կրակով վնասվածքներ են պատճառում բերդի պարիսպներին, աշտարակներին, կրակային կետերին, բերդի ներսի կառուցվածքներին։ Նրանք շարքից հանում են հակառակորդի մի քանի հրանոթներ։ Հրանոթների հետ միաժամանակ՝ ռուսական զորքերը դեպի բերդ ռումբեր են նետում հրասանդներով։ Կրակը սկսվելով վաղ առավոտյան, տևում է մինչև երեկո[4]։

Այդ նույն օրը հայտնի է դառնում, որ պաշարված կայազորը գտնվում է վհատության մեջ։ Հասան խանը հարիվ է կարողանում զինվորներին հուսադրել, համոզելով, որ իբր ռուսները շուտով նահանջելու են, և Աբաս-Միրզայի օգնությունն էլ հեռու չէ[5]։ Բերդից ռուսների մոտ փախչողները պատմում են, որ հարկադրաբար այնտեղ քշված բնակչությունը անիծում է սարբազներին ու Հասան խանին, նրանց համարելով իր ոչնչացման պատճառը[6]։ Բնակչությունը, չնայած անզեն լինելուն, մեծ ուժ էր ներկայացնում, որովհետև բերդի պաշարման ժամանակ քաղաքի գրեթե ամբողջ բնակչությունը, որի մեծագույն մասը առանց այդ կռիվների էլ երազում էր խանական ծանր լծից ազատվելու մասին, դեռքի

1 ЦГВИА, ф. ВУА, д. 4292, лл. 1—19, АКАК, т. VII, էջ 565։
2 Նույն տեղերը։
3 АКАК, т. VII, էջ 565։
4 Նույն տեղը։
5 Նույն տեղը։
6 ЦГВИА, ф. ВУА, д. 4292, лл. 1—19, АКАК, т. VII, էջ 565։

ուժով լցված էր բերդը[1], իսկ նրանց անների մեծ մասն ու այգիները՝ ավերվել էին։

Սեպտեմբերի 29-ին հրետանային կրակով քանդվում են բերդի հարավ-արևելյան անկյունի աշտարակը և նրա շրջակայքի միջնապատնեշը։ Այդ օրը բավական աշխուժանում է նաև հակառակորդի հրետանին, որովհետև գիշերով վերականգնվել էին բերդի մի քանի կրակակետերը։ Սակայն պարսկական կայազորի վարած կրակը երկար չի տևում և այն, դիպուկ չլինելով, զգալի վնասներ չի պատճառում պաշարողներին։ Ռուսական հրետանին կրակում է անվրեպ։ Նրան հաջողվում է առանց երկար ժամանակ կորցնելու՝ լռեցնել բերդապաշտպան հրետանուն։

Հաշվի առնելով, որ ավերվածությունները արդեն բավական մեծ է, ռուսների գերակշռությունը ակնբախ, իսկ բերդը գրոհով վերցրնելն էլ՝ օրվա և ժամերի հարց, Պասկևիչը սեպտեմբերի 29-ին Հասան խանին առաջարկում է բերդը հանձնել՝ նրան և նրա հրամանատարության տակ գտնվող կայազորն ազատ արձակելու պայմանով։ Պատասխանի համար Պասկևիչը նրան տալիս է 6 ժամ ժամանակ[2]։ Բերդից և քաղաքից ռուսական զորքերի մոտ փախած երևանցի բնակիչներից Պասկևիչը տեղեկացել էր, որ պարսկական կայազորը հուսալքման մեջ է և նրա մի մասը նույնիսկ պատրաստ է անմիջապես հանձնվել։ Ուստի նա ենթադրում էր, որ Հասան խանը անխմաստ կհամարի հետագա դիմադրությունը և իր կյանքն ու կայազորը փրկելու համար կընդունի առաջարկը։ Քաղաք ու բերդ ելք ու մուտք ունեցող բնակիչների միջոցով Պասկևիչին հաջողվում է իր առաջարկի մասին տեղեկացնել պաշարված կայազորին ու բնակչությանը[3]։

Հրանոթների, հրասանդների, հրացանների կրակը չի լռում։ Քաղաքում մեկը մյուսի ետևից քանդվում են տները, պարիսպները, Երևանի ամբողջ երկինքը պատում է չանհետացող փոշու ամպով[4]։

Սեպտեմբերի 29-ի լույս 30-ի գիշերը և 30-ի ցերեկը փոխադարձ կրակը հասնում է առավելագույն չափի։ Պաշարման օղակը գնալով ավելի ու ավելի է նեղանում, ռուսական հրետանին և

[1] «Записки декабриста Е. Лачинова об Армении» М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, Документы, էջ 359).

[2] АКАК, т. VII, էջ 565։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը։

հրասանդները հարկադրում են հակառակորդին լռել, խրամատները ավելի ու ավելի էին մոտենում բերդի պարիսպներին[1]։

Ամսի 30-ին, կեսօրին Հասան խանի պատվիրակը Պասկևիչին է բերում նրա վերջնագրի պատասխանը։ Պատասխանի մեջ Հասան խանը նրան գրում է, որ ինքը համաձայն է հանձնելու բերդը, սակայն անհրաժեշտ է նախօրոք ստանալ Աբաս-Միրզայի կարծիքն ու համաձայնությունը։ Պասկևիչը այդպիսի երկդիմի և



Երևանի բերդի դրավումը գրոհով 1827 թ. հոկտեմբերի 1-ին, նկար՝ Մաշկովի (Երևանի պատմության թանգարան)։

ժամանակ շահող պատրվակներով լի պատասխանը չէր կարող ընդունելի համարել։ Նա նախ և առաջ գաղտնի ճանապարհով մի նոր կոչ է ուղարկում բերդում փակված բնակչությանը, ապա հրամայում ուժեղացնել կրակը։ Գիշերը ռուսական պաշարող զորքն ավելի է մոտենում բերդին, նրանց ինդանոթները արդեն գտնվում էին ուղղակի փոսի (խանդակի) մոտ[2]։ Այդ գիշեր երկուստեք իրար վրա կրակում են բոլոր զենքերով, և ամենաուժեղ հրաձգությունն է տեղի ունենում բերդի ամբողջ պաշարման ընթացքում[3]։

Հոկտեմբերի 1-ին արագ զարգացող դեպքերը ստանում են նոր ընթացք։ Առավոտյան ժամը 8-ին երկկողմանի հրկարատև

[1] АКАК, т. VII, էջ 565։

[2] Նույն տեղը, էջ 566։

[3] Նույն տեղը։



Երևանի բերդի և նրա շուրջի թաղերի հատակագիծը, կազմված ռուսական զորքերի կողմից 1827 թ. (ՀԱՀՊՄԻ, ՀՀ ԳԱԱ)

և ուժեղ հրաձգությունից հետո, երբ արդեն ճեղքվածքներ էին առաջացել բերդի երկու պարիսպներում և կործանվել աշտարակներից մի քանիսը, ժողովուրդն ու սարբազների մի մասը ցույց են տալիս հանձնվելու դրական նշաններ։ Բնակիչներից մի քանիսը, բարձրանալով բերդի արևելյան աշտարակն ու պարիսպը, թափահարում են իրենց սպիտակ թաշկինակները՝ իբրև հանձնվելու նշան։ Մի կերպ ռուսական խրամատներն ընկած բնակիչները պատմում են, որ սարբազների մի մասը որոշել է հանձնվել, իսկ մյուս մասը երդվել են կռվել մինչև վերջ[1]։

Պաշարվածները հարավային կողմից շարունակում էին կրակել ռուսների վրա։ Այնուամենայնիվ, բերդի գրավման ժամերը հաշվված էին։ Շուտով գրավվում է հարավ-արևելյան աշտարակը, մի ուժեղ ջոկատ է ուղարկվում դեպի հյուսիսային դարպաս, որպեսզի փակի թշնամու հավանական փախուստն այդ մասից։ Այդ դարպասի մոտ է գալիս նաև գեներալ-լեյտենանտ Կրասովսկին, որը բերդի գրավման ամենաակտիվ մասնակիցներից մեկն էր։ Հյուսիսային դարպասը ջարդելով՝ ռուսական ջոկատը մտնում է բերդ։ Իսկույն ևեթ դերի են հանձնվում այն երկու դումարտակների զինվորները, որոնք նախքան այդ արդեն տատանման մեջ էին։ Ռուսական զորքն այնուհետև բերդի ներսում մեկը մյուսի հետևից գրավում է թշնամու հրամանոցները, պահեստները։ Ինչպես Սարդարաբադում, այնպես էլ այստեղ Հասան խանը, մինչ այդ տեսնելով սարբազների մի մասի և ժողովրդի տրամադրությունը, փորձել էր 30-ի լույս 1-ի դիշերը գաղտագողի դուրս գալ օղակից և դիմել փախուստի, սակայն այդ նրան չէր հաջողվել, բոլոր ելքերն ու քաղաքը տանող փողոցները փակված էին ռուսական զորքերի կողմից։ Կարճ ժամանակամիջոցում գրավվեց ամբողջ բերդը՝ նրա կրակային բները, պահեստները, մզկիթները, խանի պալատը և այլն[2]։

Այսպիսով, ռուսական հաղթական զորքը, որի շարքերում հերոսաբար կռվում էին նաև հայ կամավորները, 5—6 օրվա պաշարումից հետո գրավեց արևելքում այնքան անուն հանած և անառիկ համարվող Երևանի բերդը։ Երևանը պարսկական լծից ազատագրված էր[3]։

---

1 АКАК, т. VII, էջ 566։

2 АКАК, т. VII, էջ 566—567, ЦГВИА, ф. ВУА, д. 4292, лл. 1—19։

3 Երևանի գրավումը նշված աշխատություններից ու արխիվային ֆոնդերից բացի՝ շատ մանրամասն նկարագրված է նաև Շչերբատովի, Պոտտոյի և ուրիշների գրքերում (В. Потто, Кавказская война..., т. III, вып. III, Щерба-

Ռուսական զորքերի կողմից Երևանի վրա կատարված գրոհը և նրա գրավումը հիանալի կերպով նկարագրված է այդ մարտերի մասնակից Ե. Լաշինովի կողմից: Նրա նկարագրությունը, իբրև առաջին ձեի վրա կռվող խելացի զինվորականի հուշ, լիովին համապատասխանում է դեպքերի ընթացքին և այդ պատճառով էլ ուշագրավ է իր օրիգինալությամբ: Ահա նրա նկարագրության համառոտագրությունը. Սեպտեմբերի 30-ին, երեկոյան «...աշխա-

Ռուսական զորքերի հաղթական մուտքը Երևանի բերդը և պարսկական կայազորի կապիտուլյացիան. ռնպրոդուկցիա նկարիչ Ռուբոյի նկարից (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո փաստաթղթերի կենտրոնական արխիվ):

տողները հողակողովներով (тур), ջախերով (фашина) և գործիքներով նկան դեպի փոսը: Ուժեղ հրաձգություններ լսելի եղան, որ մեզ նկատել են...: Պարսիկները ենթադրում էին, որ ռուսները գրոհի են գնում և մտադրվել էին կատաղի պաշտպանությամբ իրենց փրկել նրա սարսափներից...: Պարիսպների վրա ազդակով և լաց ու կոծով խռնվել էին բնակիչները: ...Պայթում էին հրանոթները, և հազարավոր հրացանների համազարկները խլանում էին նրանց որոտներից... Կամաց-կամաց բերդը սկսեց լռել, կրակոցներն

1 Տե՛ս М. Персиян, Из истории армяно-русских отношений, кн. первая, Документы, էջ 346—348:

2 Նույն տեղը, էջ 359:

3 Նույն տեղը, էջ 359—360:

4 Նույն տեղը:

ր о в, Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деят-ть, СПБ, 1888. գրանք բոլորն էլ օգտվել են Պասկևիչի հաշվեմատյաններից, որոնք պահպանված են արխիվում և մասամբ տպագրված են «АКАК»-ի VII հատորում:

ավելի ու ավելի հազվադեպ էին, ավելի ու ավելի լսելի դարձավ պաշարվածների աղմուկը: Շուտով ամեն ինչ լռեց... Հասան խանը իր յուրայիններով փորձեց այստեղից դուրս գալ, սակայն, ամենուրեք հանդիպելով արգելքների, ստիպված եղավ վերադառնալ...: Ժամը 8-ին պարիսպների վրա երևացին սարբազներ ու բնակիչներ և թափահարեցին թաշկինակները, ձեղքերով ընկան փոսը և, մեզ մոտ փախչելով, հայտարարեցին, որ բնակիչներն ու սարբազների մի գումարտակ հանձնվում են, բայց սարբազների մյուս երկու գումարտակը որոշել է դեռ դիմադրել: Մերոնք նետվեցին դեպի ճեղքը..., մագլցելով անցան պարիսպի վրայով, մտան մյուսը և նրանում դրեցին ժամապահներ: Մի քանի վաշտ մոտեցան շենպապանեղների վրայի դարպասներին և թարեր նետեցին դես ու դեն...»[1]:

Ռուսական բանակի և նրան միացած հայ կամավորական ջոկատի հաղթական մուտքը Երևան բնակչության կողմից ընդունվում է մեծագույն հրճվանքով ու տոնական տրամադրությամբ: Լաշինովը գրում է, որ «քաղաքի դրեթե ամբողջ բնակիչները փակված էին բերդում, և դրանից առաջացած նեղվածքը մեծապես օգնեց մեզ: Աննկարագրելի սրտառուչ էր ուրախության այն պատկերը, որով մեզ հանդիպեցին հայկական ընտանիքները, երբ մենք գրավեցինք այն»[2]:

Բերդը գրավելուց հետո անմիջապես կարգ ու կանոն է հաստատվում քաղաքում[3]: Ռուսական հրամանատարությունն իր օպերատիվ կարգադրություններով վերջ է տալիս բոլոր անկարգություններին: Կյանքը մտնում է իր խաղաղ հունի մեջ, բացվում են արհեստանոցներն ու խանութները, այդ ժամերում վերսկսվում է աշխատանքը: Երևանի բնակչության համար դա անսպասելի էր, նշում է Լաշինովը: Երևանի բնակչությունը միշտ տեսել էր իրենց քաղաքի գրավման համար մղվող թուրք-պարսկական կռիվներ, որոնք, առանց բացառության, ուղեկցվել են բռնություններով, թալանով ու կողոպուտներով: Այժմ ժողովուրդը տեսնելով ռուսական զորքի բարձր կարգապահությունը և նրա մարդկային վերաբերմունքը, երախտագիտության ու համակրանքի զգացմունքով է լցվում նրա նկատմամբ[4]:

«Քանի Հայաստանը իր փառքը կորցրել էր, քանի հայք իրենց գլուխն էին թրի տեղ թշնամու ձեռք գցել, է՛ս օրը, է՛ս ուրախությունը չէին տեսել, չէին վայելել»[1],— գրում է Խ. Աբովյանը Երևանի գրավման առթիվ, արտահայտելով ժողովրդի տրամադրությունը։

Բերդի գրավման ժամանակ գերի է վերցվում կայազորի կեսից ավելին՝ ավելի քան 3000 մարդ, որոնք անմիջապես ուղարկ-



Թնդանոթի արկեր գործածված 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում (Երևանի պատմության թանգարան)։

վում են Վրաստան[2]։ Գերիների թվում էին ինքը՝ կայազորի պետ Հասան խանը, բերդի պարետ Սուբխան-Ղուլի խանը, խաս կոչված (Աբաս-Միրզայի լավագույն զորքերից) զումարտակի հրամանատար Կասիմ խանը, Մարանդի Ջաֆար-Ղուլի խանը, Ակի-Մարդան խանը և այլ խաներ ու զինվորական պետեր[3]։

Պասկևիչի զեկուցագրից երևում է, որ Երևանի գրավման ժամանակ ռուսական զորքերի կորուստները չնչին են եղել։ Ըստ նրա հաղորդման, սպանվել են ընդամենը 5-ը՝ մեկ ավագ սպա (обер-офицер) և չորս զինվոր, իսկ վիրավորվել՝ 38 մարդ, որից ե-

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 179։

[2] ЦГВИА, ВУА, д. 4292, лл. 18—19; ЦГИА Грузинской ССР, ф. 16, д. 3546, л. 16; АКАК, т. VII, էջ 567։

[3] АКАК, т. VII, էջ 564, 566։

կուսը ավագ սպաներ, մնացած 36-ը ցածր աստիճանի զինվորականներ[1]։

Երևանի բերդի գրավման ժամանակ ավար էն վերցվել զրոշակներ, զանազան զենքեր, զինամթերք ու հանդերձանք, ցորենի հարուստ պաշարներ և այլն։ Ըստ պաշտոնական տվյալների, ավար



Զենքեր՝ գործածված 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում (Երևանի պատմության թանգարան)։



Երևանի բերդի բանալիները (Երևանի պատմության թանգարան)։

[1] ЦГИА Грузинской ССР, ф. 16, д. 3536, л. 16.

են վերցվել Թշնամու 4 դրոշակ, 37 հրանոթ[1], 2 հաուբից, 9 հրանանդ (мортира) և մինչև 50 ֆալկոնետներ[2]։

Երևանի ազատագրումը պարսկական լծից տոնական տրամադրություն է ստեղծում նրա բնակչության մեջ հենց այն պահից սկսած, երբ ռուսական քաջարի բանակը հայ կամավորների հետ միասին մուտք է գործում քաղաք։ Աբովյանը գրում է, որ «Սալդաթի տուրը հենց բերդը մտավ թե չէ՛, հազար տեղից, հազար փանջարից լայն արտասուքը էլ չէին թողնում, որ մարդի բերան բաց ըլի։ Բայց ով սիրտ ուներ, լավ էր տեսնում, որ է՛ն ձեռներն, է՛ն աչքերը որ քարացել, սառել երկնքին էին մտիկ տալիս, առանց խոսքի էլ՝ ասում էին, որ դժոխքի բանդվելը մեզավորների համար էս գինը չէր ոսնենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը Հայերի համար»[3], ապա շարունակելով բերդի գրավման նկարագրությունը, մեծ լուսավորիչը ավելացնում է. «Բերդի մեջն ու չորս կողմը ասեղ քցելիր, գետին չէ՛ր հասնիլ. աշխարքը իրարով էր դիպել։ Աչք էր՝ որ խնդրում էր ու լալիս, բերան էր՝ որ գովում էր՝ ու օրհնություն տալիս. ազգական-բարեկամք էին՝ որ իրար փաթաթված՝ մնացել էին փետացած։ Լեզվի տեղակ արտասուքն էին նրանց էրված սիրտը հովացնում։ Սար ու ձոր խնդացին, բաղ, բաղաստան ցնծացին, որ իրենց տերերն էլ եդ ճամփու էին ուզում բնկել, որ գնան՝ նրանց զվարթացնեն. բերդի դռներն ու բուչըր դմբդմբում էին ոտի ու ուրախության ձենիցը»[4]։

Բնակչության այդ տոնական տրամադրությունը շարունակվում է մի քանի օր։ Դրա հետ միասին 1827 թ. հոկտեմբերի 6-ին կատարվում է Երևանի գրավման պաշտոնական տոնակատարությունը, որը մանրամասնությամբ նկարագրված է դեներալ-լեյտենանտ Կրասովսկու կողմից Պասկևիչին ներկայացված զեկուցագրի մեջ[5]։ Այդ օրը կազմակերպվում են համդիսավոր արարողություններ, հայկական եկեղեցիներում և մահմեդական մզկիթներում բազմամարդ այցելուների ներկայությամբ կատարվում է աղոթք։ Երևանի հայ և ադրբեջանցի հասարակությունը ռուս զին-

[1] Ըստ «АКАК»-ում տեղադրված Պասկևիչի զեկուցագրի, ավար վերցված հրանոթների քիվը 37 է (տե՛ս հ. VII, էջ 565), իսկ ըստ Վրացական ՍՍՌ-ի Պետական պատմական արխիվում պահպանված զեկուցագրի՝ 35 (տե՛ս ЦГИА Грузинской ССР, ф. 16, д. 3546, л. 16)։

[2] ЦГИА Грузинской ССР, ф. 16, д. 3546, л. 16, АКАК, т. VII, էջ 565։

[3] Ա. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 179։

[4] Նույն տեղը, էջ 181։

[5] Տե՛ս АКАК, т. VII, էջ 482։

Պարսկական դրոշակ վերցված Երևանի գրավման ժամանակ՝ 1827 թ. հոկտեմբերի 1-ին (Երևանի պատմության թանգարան)։

Անգլիական դրոշակ վերցված Երևանի գրավման ժամանակ՝ 1827 թ. հոկտեմբերի 1-ին (Երևանի պատմության թանգարան)։

վորներին իբրև պարգև նվիրաբերում են 3000 ռուբլի արծաթ և այլն[1]: Ժամը 11-ին հրապարակում անց է կացվում շքեղ զորահանդես, որին մասնակցում են Սևաստոպոլի հետևակային, 39-րդ և 40-րդ եգերական ու կազակային գնդերը: Զորահանդեսին ներկա էր քաղաքի գրեթե ամբողջ բնակչությունը՝ ավելի քան 10000 հանդիսատես[2]: Այնտեղ կանոնավոր շարված զորքի առջև կարդացվում է Երևանի գրավման մասին հրամանը, որը կազմել էր ռուս նշանավոր զորագ Ա. Ս. Գրիբոյեդովը: Տոնակատարության սկիզբն ու ավարտը աղդարարվում է բերդի հրանոթներից 101 համազարկ տալով[3], որոնցից յուրաքանչյուրը ուղեկցվում էր բնակչության ուրախ աղաղակով և ուռաներով:

Երևանի գրավման ժամանակ առավել աչքի ընկած բազմաթիվ զինվորականներ պարգևատրվում են զանազան նշաններով: Ինքը՝ Պասկևիչը պարգևատրվում է սբ. Գեորգիևյան 2-րդ աստիճանի շքանշանով, ինչպես և նրան տալիս են «Երևանյան կոմս» տիտղոսը: Ինժեներական զորքերի գեներալ-մայոր Տրուզսոնին, հրետանու պետ գեներալ-մայոր Ունտիլիխին և կոմս Սուխտելինին պարգևատրում են նույն շքանշանի 3-րդ աստիճանով, գնդապետներ Գուրկոյին և Դոլգովու-Սաբուրովին՝ նույն շքանշանի 4-րդ աստիճանով, գեներալ-լեյտենանտ Կրասովսկուն՝ ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանի ադամանդի նշաններով և այլն[4]: Նախկին թուրքական մզկիթը վեր են ածում ռուսական եկեղեցու՝ հոկտեմբերի 1-ը հավերժ հիշելու համար[5]: Ի նշանավորումն այդ ամուր բերդի գրավման, հատում են հատուկ մեդալ, որի մի երեսին Մասիս լեռն էր պատկերված, մյուս երեսին՝ Երևանը:

Պարսկական լծից Երևանի ազատագրմանը ամենաակտիվ մասնակցություն են ցույց տվել իբրև պատիժ Կովկաս աքսորված դեկաբրիստ-զինվորականները, որոնց ստիճանը իջեցրել էին: Չնայած ցածր ստիճանին՝ դեկաբրիստները իրենց խորհուրդներով ու գործունեությամբ հաճախ վճռում էին մարտական ամենա-

[1] АКАК, т. VII, էջ 482: Երևանի բնակչության կողմից ռուսական բանակի ցածրաստիճան զինվորականներին ցույց տրված զրամական օգնության մասին հիշատակված է նաև այլ աղբյուրներում, տե՛ս, օրինակ՝ ЦГИА Грузинской ССР, ф. 16, Д. 3553, л. 1, ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 263ա:

[2] Նույն տեղը:

[3] Նույն տեղը:

[4] АКАК, т. VII, էջ 567; В. Потто. Кавказская война..., т. III, вып. III, էջ 519:

[5] АКАК, т. VII, էջ 481, № 433:

պատասխանատու հարցերը: Օրինակ, հայտնի է, որ Երևանի պաշարումն ամբողջապես կատարվել է շարքային զինվորի իջեցված դեկաբրիստ Մ. Պուշչինի պլանով և նրա անմիջական մասնակցությամբ: Նրա այդ արտակարգ ծառայությունը նույնիսկ չի ժխտում ինքը՝ ցարական ռեակցիոն գեներալ-ֆելդմարշալ Պասկևիչը, որն այնքան մեծատելությամբ էր տրամադրված ազնվականական ռևոլյուցիոներների՝ դեկաբրիստների նկատմամբ: Պուշչինի նման մյուս դեկաբրիստները ևս զարգացած ու քաջ զինվորականներ էին, որոնք ամենայն սիրով էին վերաբերվում տեղացիների նկատմամբ: Երևանի բերդի ազատագրմանը մասնակցած դեկաբրիստների թվում



Մեդալներ կտրված Երևանի գրավման առթիվ (Երևանի պատմության թանգարան):

էին՝ Մ. Պուշչինը, Պ. Կոճովնիցինը, Ի. Շիպովը, Վ. Վալխովսկին, Ա. Գանգեբլովը, Ե. Լաշինովը, Ն. Սեմիչովը և ուրիշներ[1]։ Երևանի գրավման համար պարգևատրվածների թվում կային մի շարք դեկաբրիստներ, որոնցից գնդապետ Ի. Շիպովը, որի հրամանատարության ներքո գտնվող գունդը առաջինն է մտել բերդ[2], պարգևատրվել է Ս. Աննայի 4-րդ աստիճանի շքանշանով, իսկ աստիճանավորված Պուշչինը շարքային մարտիկից բարձրացվել է Թասպայի աստիճանի[3]։ Շիպովի գնդի (որը կոչվում էր լեյբ-գվարդիական Հավաքական գունդ) վեց վաշտերից յուրաքանչյուրը պարգևատրվեց 8-ական խաչով[4], իսկ երևանյան 1827 թ. արշավանքին մասնակցող դեկաբրիստ զինվորների թիվը հասնում էր 2800-ի[5]։

Ա. Ս. Գրիբոյեդով (1795—1829), նկար՝ Ի. Ն. Կրամսկու, 1875 թ.

[1] М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, էջ 224 (տե՛ս նաև նույնի 181—188 էջերը)։

[2] С. Скрутковский, Лейб-гвардии сводный полк на Кавказе в персидскую войну с 1826 по 1828 года, СПБ, 1896, էջ 41։

[3] В. Потто, Кавказская война..., т. III, вып. III, էջ 519։

[4] ЦГИА Грузинской ССР. ф. 1137, д. 715, лл. 138—139.

[5] М. Нечкина, Движение декабристов. т. II, Москва, 1955, էջ 449։

Երևան արշաված ռուսական զորքերին ուղեկցում էր ռուս պրոզ Գրիբոյեդովը, որն այնքան խոշոր դեր է խաղացել Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու գործում։

Սակայն, ցարական պաշտոնական շրջաններում ամենից բարձր էր հնչում ճորատաւիրական կարգի ջերմ պաշտպան, ցարական ռեակցիոն գեներալ Պասկևիչի անունը։ Նշված պարգևներից բացի՝ նա Աբասաբադի գրավման համար ստացել էր Ս. Վլադիմիրի 2-րդ աստիճանի շքանշան, իսկ հետագայում՝ խաղաղության դաշինքի համար կոնտրիբուցիայից պարգև է ստանում մեկ միլիոն ռուբլի թղթադրամ։ Հենց այդ ժամանակ էլ Երևանի ու Նախիջևանի խանությունները Ռուսաստանին միացնելու համար նրան տրվում է «Երևանի կոմս» տիտղոսը[1], որի մասին ասվեց վերևում։ Նա մեծ գումարի հասնող նվերներ է ստանում նաև պարսկական շահից, որի ուղարկած միայն շքանշանը ուներ 60 հազար ռուբլու արժողություն և ժառանգաբար անցնելու էր Պասկևիչի սերունդներին[2]։ Պասկևիչի այդ շքմեղուցիչ հաջողությունը պայմանավորված էր հիմնականում ոչ թե նրա զորավարական տաղանդով կամ ռազմական տեսական պատրաստականությամբ, այլ այն ժամանակվա Կովկասյան կորպուսի զորամասերի սուվորովյան բարձր մարտունակությամբ, դեկաբրիստական՝ վերին աստիճանի կարգապահ ու քաջ զորքերի առկայությամբ և ռուսական զորքերի նկատմամբ տեղացի բնակիչների ջերմ վերաբերմունքով ու մարտերին անմիջականորեն մասնակցելով։ Ինքը՝ Պասկևիչը չի ունեցել «ո՛չ ոդու մի առանձին» կայունություն, «ո՛չ» պերճախոսություն, «ո՛չ թղթի վրա իր մտքերը շարադրելու» ընդունակություն, «ո՛չ սիրալիր վարմունքով սրտեր գրավելու» կարողություն և «ո՛չ էլ գիտության որևէ ճյուղից» բավարար տեղեկություններ ուներ[3]։ Նա այնքան թույլ է տիրապետել գրչին, որ «Գրիբոյեդովն ու ուրիշներ ոչ միայն շարադրել են հրամաններն ու ռազմական զեկուցագրերը, այլ նույնիսկ գրել են նրա անձնական նամակները»[4]։

Արևելյան Հայաստանի և նրա գլխավոր կենտրոն Երևանի պարսկական լծից ազատագրելուն ակտիվ մասնակցություն են ցույց տվել հայերը։ Ռուսական զորքի հետ միասին կռվել և անօրինակ քաջագործություններ է արել հայկական կամավորական հեծ-

[1] АКАК, т. VII, էջ 607, В. Потто, Кавказская война..., т. III, вып. IV, էջ 591։

[2] В. Потто, Кавказская война..., т. III, вып. III, էջ 591։

[3] Դ ե ն ի ս Դ ա վ ի դ ո վ, Ռազմական հուշեր, Երևան, 1942, էջ 528—529։

[4] АКАК, т. VII, էջ IV։

յալ ջոկատը, որն ուներ իր հատուկ կանոնադրությունն ու դրոշակը[1]: Այդ ջոկատը կազմվել է 1827 թ. մայիսին՝ Թիֆլիսում[2], իսկ հետագայում մեծացել ու բազմամարդ մի զորամաս է դարձել Երևանի վրա կատարված արշավանքի ընթացքում: Արևելյան Հայաստանի և Երևանի պարսկական լծից ազատագրելու համար մղվող մարտերում իրենց քաջագործություններով հայտնի են դառել մի շարք հայեր, որոնց թվում են Հակոբ Հարությունյանը, Աստվածատրյանը, Հովհաննես Ասլանյանցը[3], Երևանի կռիվներում զոհված, ժողովրդական հերոս Աղասին, որը դարձել է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի գլխավոր հերոսը, և ուրիշ շատերը: Այդ շրջանում իր գործունեությամբ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուն մեծապես նպաստել է նաև Ներսես Աշտարակեցին, որը ուղեկցել է ռուսական զորքերին և բնակչությանն ուղղված իր կոչերով նրանց ոտքի հանել պարսկական բռնապետության դեմ: Ժողովուրդը ռուսական բանակին օգնում էր նաև անդամքերքներով, անասնակերով, խմիչքով, դրամով, հակառակորդի մասին տեղեկություններ հաղորդելով և այլն[4]:

Պարսկական լծից Երևանի ազատագրմանը մասնակցած հայկական կամավորական ջոկատի դրոշակ (Հայկական ՍՍՌ պատմական թանգարան):

[1] ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 232:

[2] Նույն տեղը:

[3] АКАК, т. VII, էջ 491, № 440, էջ 492, № 443:

[4] XIX դ. առաջին երեք տասնամյակներին տեղի ունեցած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներում հայերի մասնակցության և օգնության մասին բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել ամենատարբեր տեսակի սկզբնաղբյուրներում: Այդ հարցը տարբեր ասպեկտներով և առիթներով շոշափել են XIX դ. առաջին կեսից մինչև մեր օրերը եղած պատմաբանները: Սակայն այն ամբողջական կերպով ուսումնասիրվել և ուսումնասիրվում է միայն մեր ժամանակներում՝ սովետական պատմաբանների կողմից: Այժմ հրապարակի վրա են Մ. Ներսիսյանի «Из истории русско-армянских отношений, кн. первая», Զ. Գրիգորյանի «Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դ. սկզբին» աշխատությունները և այլն:

Պասկևիչը երկար չէր կարող մնալ Երևանում: Անհրաժեշտ էր պատերազմը շարունակել՝ ռազմական գործողությունները, ըստ պլանի, ծավալելով Հարավային Ադրբեջանում (Ատրպատականում): Նա՝ Կրասովսկու հրամանատարությամբ Սարդարաբադում, Էջմիածնում և Երևանում թողնելով 20-րդ դիվիզիան՝ իր հրետանու հետ միասին, ինքը գլխավոր ուժերով հոկտեմբերի 7-ին շարժվում է դեպի Թավրիզ: Սակայն, նախքան այնտեղ հասնելը, հոկտեմբերի 13-ին Արաքսի աջ կողմում գտնվող գնեերալ-լեյտենանտ իշխան Էրիստովի զորքերը առանց կրակի գրավել էին այն[1], վերցնելով մեծ քանակությամբ ռազմական ավար: Պասկևիչի զորքը Թավրիզ է հասնում հոկտեմբերի 19-ին, որից հետո անմիջապես սկսվում են բավական երկար ժամանակ ձգձգված խաղաղության բանակցությունները կռվող երկու կողմերի միջև: Ռազմական գործողությունները շարունակվում են նաև 1828 թ. սկզբներին: Այդ թվականի հունվար ամսին ռուսական զորքերը գրավում են Մարաղան, Արդաբիլը և Ուրմիան: Նրանք հաղթական արշավանք սկսեցին դեպի Թեհրան, շահը ստիպված եղավ ընդունել ռուսների առաջարկած խաղաղության դաշինքի պայմանները:

Թավրիզի գրավումից հետո պարսկական կառավարությունը խնդրում է հաշտություն կնքել, համաձայնելով երկու պետությունների միջև Արաքս գետը սահման դարձնելու ռուսական առաջարկին, որն արվել էր դեռևս 1827 թ. հուլիսին՝ Գրիբոյեդովի կողմից Կարաղիաղինում Աբաս-Միրզայի հետ ունեցած բանակցությունների ժամանակ: Այդ բանակցություններից սկսած, ընդհուպ մինչև Թուրքմենչայի պայմանագրի կնքումը բավական ժամանակ է անցնում: Հաշտության բանակցությունների ամբողջ ընթացքը մեզ հայտնի է լավ պահպանված արխիվային նյութերով[2], որոնց մի մասը հրատարակվել է ակտերի մեծածավալ հատորներում:

Բանակցությունները սկսվում են Դեհկարխան վայրում, Թավրիզից 40 կմ հեռավորության վրա, որտեղ գտնվում էր և Պասկևիչի շտաբը: Առաջին նիստը տեղի է ունենում նոյեմբերի 12-ին: Ռուսական կողմից բանակցությունները վարվում էին երեք հոգուց բաղկացած դելեգացիայով, որին գլխավորում էր ինքը՝ Պասկևի-

[1] АКАК, т. VII, էջ 568—569, տե՛ս նաև М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, Документы, էջ 354:

[2] Այդ նյութերը կազմում են մի մեծ գործ, որը գտնվում է Վրացական ՍՍՌ Պետական կենտրոնական պատմական արխիվում (ЦГИА Грузинской ССР, ф. 11, д. 67) և կրում է «О заключении мира с Персию» վերնագիրը:

չը։ Ռուսական դեկտեմբրիստների հաշտության համար Պարսկաստանին առաջարկում է երեք հիմնական պայման. 1) Ռուսաստանին զիջել Երևանի ու Նախիջևանի խանությունները, 2) ազատել Թալիշի խանությունը պարսիկներից և 3) մուծել 15 կուրուր (30 միլիոն ռուբլի արծաթ) կոնտրիբուցիա։ Վերջինս մերժելու դեպքում, Պասկևիչը դրա փոխարեն պահանջում է Ռուսաստանին միացնել Հարավային Ադրբեջանը՝ Թավրիզ քաղաքով հանդերձ։ Անհամաձայնություններ են առաջանում միայն կոնտրիբուցիայի հարցում։ Շահական կառավարությունը խնդրում է կոնտրիբուցիան սահմանել ոչ թե 15, այլ 10 կուրուր (20 միլիոն ռուբլի), որը ռուսական դեկտեմբրիստական կողմից հարգվում է։ Սակայն, այս անգամ էլ պարսկական դեկտեմբրիստական շահի անունից հայտարարում է, որ կոնտրիբուցիայի առաջին մուծումը կկատարվի միայն այն ժամանակ, երբ ռուսական զորքերն ամբողջովին դուրս կգան Հարավային Ադրբեջանի սահմաններից։ Շուտով դրան գումարվում են և այլ պատրվակներ, բանակցությունները ձգձգելու և դրանք տապալելու համար։ Շահական Պարսկաստանը հույս ուներ Թուրքիայի խոստացած օգնությամբ շուտով ռազմական նոր գործողություններ ծավալել և փոխել դեպքերի այդպիսի ընթացքը։ Կոնտրիբուցիայի հարցում մեծ արգելքներ է հարուցում հատկապես շահի Հասան-Ալի-միրզա որդին, որը շահին ամեն կերպ համոզում է երկրից ոչ մի գումար դուրս չուղարկել։ Բանակցություններն այդ բոլորի հետևանքով կանգնում են փակուղու առաջ, և դեկտեմբերի երկրորդ կեսին դրանք միանգամից ընդհատվում են։

Ռուսական կողմի համար բանակցությունների ձգձգումը վնասակար և վտանգավոր էր։ Թուրքիայի հետ հարաբերությունները վատանում էին և շուտով պատերազմ էր սպասվում, անհրաժեշտ էր Պարսկաստանի հետ հաշիվները շուտափույթ վերջացնել։ Կովկասյան կորպուսի հրամանատարությունը՝ ռուսական դեկտեմբրիստների առաջարկած պայմաններն ընդունել տալու և դաշն կնքելու հիմնական օպերատիվ միջոցը համարում է ռազմական գործողությունների վերսկսումը։ Ուստի, չնայած ձմռան դաժան պայմաններին, հոկտեմբերին Հարավային Ադրբեջանում գտնվող ռուսական զորամասերը անցնում են հարձակման և մեկը մյուսի հետևից գրավում Արդաբիլը, Ուրմիան, Մարաղան և այլն, իսկ գլխավոր շարասյունը Պասկևիչի գլխավորությամբ դիմում է դեպի Թեհրան։ Ռուսական զորքերի շշմեցուցիչ հաջողությունները ծնկի են բերում շահական կառավարությանը։ Թեհրան տանող ճանապարհին Պասկևիչին ներկայանում անգլիական կառավարության լիազոր Մակդոնալդը,

հաղորդելով, որ շահը ընդունում է հաշտության բոլոր պայմանները[1]։

Բանակցությունները վերսկսվում են Թուրքմենչայ փոքրիկ գյուղում, որը գտնվում է Թավրիզից Թեհրան տանող ճանապարհին։ Կողմերը արագ կերպով գալիս են համաձայնության և հենց այդ փոքրիկ գյուղում էլ 1828 թ. փետրվարի 9-ի լույս 10-ի ուղիղ կես գիշերին պայմանագիրը ստորագրվում է, որը ազդարարվում է հրանոթային 101 համազարկով[2]։

Թուրքմենչայի պայմանագիրը Ռուսաստանի համար ուներ քաղաքական և տնտեսական խոշոր նշանակություն։ Այդ պայմանագրի շնորհիվ Ռուսաստանի դիրքերն Անդրկովկասում ամրացան, նրա տերիտորիան զգալի չափով լայնացավ՝ ի հաշիվ նախկին խանությունների, պայմաններ ստեղծվեցին Պարսկաստանի և արևելյան այլ երկրների հետ առևտրա-տնտեսական հարաբերությունները բարելավելու համար, Միջին Արևելքում Անգլիայի և Ֆրանսիայի դերը զգալի չափով թուլացավ և այլն[3]։ Թուրքմենչայի պայմանագիրը ռուսական դենքի և դիվանագիտության փայլուն Հաղթանակներից մեկն էր։ «Այդ պայմանագրով ձախողվեցին» արևմտյան պետությունների՝ «Ռուսաստանը Անդրկովկասից հեռու պահելու պլանները»[4]։

Թուրքմենչայի պայմանագիրը առանձնապես մեծ նշանակություն ունեցավ մեզ՝ հայերիս համար։ Այդ պայմանագրի երրորդ հոդվածով Ռուսաստանին անցան Երևանի և Նախիջևանի խանությունները[5]։ Շահն իր և իր ժառանգորդների ու հաջորդների անունից հայտարարում էր, որ Արաքսի, Կասպից ծովի և Կովկասյան լեռնաշղթայի միջև ընկած բոլոր հողերն ու կղզիները ճանաչում է իրրև ռուսական կայսրությանը հարատև պատկանող (V հոդված)[6]։ Պայմանագրի 6-րդ հոդվածով սահմանվում էր 10 կուրուր կամ

[1] Տե՛ս ЦГИА Грузинской ССР, ф. 11, д. 67, ինչպես նաև՝ Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 75, 78—80։ И. Ениколопов, Грибоедов и Восток, Ереван, 1954, էջ 105—108։

[2] В. Потто, Кавказская война..., т. III, вып. IV, էջ 579—581։

[3] И. Ениколопов, Грибоедов и Восток, Ереван, էջ 110։

[4] Զ. Տ. Գրիգորյան, Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը XIX դ. սկզբին, էջ 45։

[5] Տե՛ս Договоры России с Востоком, политические и торговые Собрал и издал Т. Юзефович, С. Петербург, 1869, հոդվ. III, էջ 215։

[6] Նույն տեղը, էջ 217, հոդվ. V։

20 միլիոն ռուբլի կոնտրիբուցիա, որը պարսկական կառավարությունը պետք է մուծեր պայմանագրային ուժ ունեցող հատուկ համաձայնագրի նախատեսած կարգի համաձայն, որոշակի ժամանակամիջոցում[1]:

Պայմանագրի 8-րդ և 10-րդ հոդվածները վերաբերում են երկու երկրների միջև առևտրա-տնտեսական հարաբերությունները զարգացնելուն, փոխադարձաբար առևտրական ներկայացուցչությունների կազմակերպմանը և դրանց անվտանգ ու անխափան գործունեության ապահովմանը[2]: Իսկ 12-րդ հոդվածով կողմերը պայմանավորվում են Արաքսի երկու կողմերում սեփականություն ունեցող մարդկանց, որոնք կցանկանան մի կողմից մյուսը գնալ, տալ երեք տարի ժամանակ՝ իրենց սեփականությունը վաճառելու և Արաքսն անցնելու ու բնակություն հաստատելու իր ցանկացած կողմում, բացառությամբ Երևանի սարդարի, նրա եղբոր ու Նախիջևանի խանի[3], որոնց ունեցվածքը ռուսների կողմից պետականացվեց:

Թուրքմենչայի պայմանագրում հատուկ հոդված է ընդունվում (հոդվ. XV) երկու կողմերի բնակիչներին դեպի ցանկացած կողմը գաղթ կատարելու ազատ իրավունք տալու մասին[4]:

Թուրքմենչայի պայմանագրի նշված հոդվածների մասին դեռևս հարկ կլինի խոսել ըստ դրանց բնագավառների, սակայն չի կարելի այստեղ չնշել, որ դրանցից հայ ժողովրդի համար հույժ կենսական նշանակություն ունեցան հատկապես երկուսը՝ III և XV հոդվածները, որոնցից մեկով Արևելյան Հայաստանի կենտրոնական նահանգ Երևանի խանությունը համարվեց վերջնականապես Ռուսաստանին միացված, իսկ մյուսով՝ Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Հարավային Ադրբեջանի տարբեր շրջաններում փոշիացած և ձուլման վտանգի առաջ կանգնած հայ բնակչության համար պայմաններ ստեղծվեցին գաղթելու ռուսական տիրապետության տակ անցած հայկական շրջանները, որտեղ նրանք տեղացի հայ բնակչության հետ միասին կազմեցին կոմպակտ զանգվածներ:

Հայ ժողովրդի պատմական բախտի համար այդքան կարևոր նշանակություն ունեցող այդ պայմանագրի կնքման գործում ամենամեծ դերը խաղացել է ռուս մեծ գրող, ռուս-պարսկական պատերազմում գործող կորպուսի մշտական ուղեկից Ա. Ս. Գրիբոյեդովը[1]: Նա այդ պայմանագիրը կնքելու համար երկար ժամանակ ստիպված է եղել համառ պայքար մղել օտարերկրյա դիվանագիտության հարուցած դժվարությունները և պարսկական շահի ու մյուս բարձրաստիճան պաշտոնյաների համառությունը կոտրելու համար: Այդ լավ հասկանում էին և՛ Պասկևիչը, և՛ արտաքին գործերի մինիստր Նեսելրոդը, և՛ ինքը՝ ցար Նիկոլայ Պալկինը, որոնք չնայած չէին կարող սիրել դեկաբրիստների գաղափարակից Գրիբոյեդովին, բայց, անուամենայնիվ, չէին էլ կարող վարձահատույց չինել նրա կատարած մեծ գործի համար: Ռուս-պարսկական պատերազմի ընթացքում կատարած ծառայությունների և նրան հաջորդած Թուրքմենչայի նպաստավոր պայմանագրի կնքման համար Գրիբոյեդովը պարգևատրվում է շքանշանով և 4 հազար չերվոնեցով: Բացի դրանից, նրա աստիճանի հերթական բարձրացում է կատարվում[2]: Գրիբոյեդովը Արևելքի, հատկապես Պարսկաստանի հարցերում համարվում էր իր ժամանակի ամենագիտակ անձնավորություններից մեկը: Սակայն, նրան չէր հրապուրում դիվանագիտական հետագա գործունեությունը, նա, «իմանալով աստիճանների և ցարական պարգևների դինը, պատրաստվում է հրաժարական տալ» և «իրեն ամբողջովին նվիրել գիտություններին ու դրականությանը»[3]: Սակայն այդ նրան չի հաջողվում:

Թուրքիայի հետ գործերը գնալով բարդանում էին, առկա էր ամեն րոպե պատերազմ ծագելու սպառնալիքը: Ուստի անհրաժեշտ էր Պարսկաստանում ունենալ գիտուն, խելացի և շրջահայաց դիվանագետ: Դրա առաջին և անփոխարինելի թեկնածուն համարվեց Գրիբոյեդովը: Նրան 1828 թ. ապրիլի 25-ին սենատի հրամանագրով նշանակեցին լիազոր-մինիստր Թեհրանում[4], նկատի ունենալով պարսկերենին լավ տիրապետելը, նախորդ բանակցությունների ժամանակ նրա ցուցաբերած դիվանագիտական բարձր ունակությունները և տեղի պայմաններին լավատեղյակությունը[5]:

---

[1] Договоры России с Востоком, политические и торговые. Собрал и издал Т. Юзефович, էջ 218, հոդվ. VI:

[2] Նույն տեղը, էջ 18—19, հոդվ. VIII և X:

[3] Նույն տեղը, էջ 220, հոդվ. XII:

[4] Նույն տեղը, էջ 221—222, հոդվ. XV:

[1] Անդրկովկասում, Հայաստանում և Պարսկաստանում Գրիբոյեդովի ծավալած գործունեության մասին մանրամասն տե՛ս Վ. Ա. Պարսամյանի «Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները» (Երևան, 1947) և Ի. Ենիկոլոպովի «Грибоедов и Восток» աշխատություններում:

[2] И. Ениколопов, Грибоедов и Восток, էջ 111:

[3] Նույն տեղը:

[4] АКАК, т. VII, էջ 622, № 591:

[5] Նույն տեղը:

Գրիբոյեդովը, որն այդ նոր նշանակումը իր համար համարել է «քաղաքական աքսոր», հույս չուներ որ Պարսկաստանից այլևս կվերադառնա։ Եվ իրոք, կատարվում է նրա կանխագուշակությունը։ Անգլիական դիվանագիտության ագենտների ու շահական Պարսկաստանի ռեակցիոն շրջանների հրահրմամբ՝ մոլեռանդ ամբոխը 1829 թ. հունվարի 30-ին հարձակվում և ոչնչացնում է Թեհրանի ռուսական դեսպանության աշխատողներին (թվով 54 մարդ), այդ թվում և մինչև վերջ խիզախորեն դիմադրող Ա. Ս. Գրիբոյեդովին։ Նրա դիակը հետո բերում և թաղում են Թիֆլիսում։

Գրիբոյեդովի՝ Անդրկովկասում և Պարսկաստանում ունեցած գործունեությունը, սերտորեն կապված լինելով հայ ժողովրդի պատմության հետ, հետաքրքրել և հետաքրքրում է սովետահայ պատմաբաններից շատերին։ Նրա այդ տարիների գործունեությունը հատկապես մեծ չափով առնչվում է Երևանի և՛ քաղաքական, և՛ կուլտուրական կյանքի հետ։ Գրիբոյեդովը մի քանի անգամ եղել է Երևանում և միշտ էլ լավ ընդունելություն գտել նրա բնակիչների կողմից։ Նա առաջին անգամ հենց Երևանում է դիտել իր հոշակավոր «Խելքից պատուհաս» կատակերգությունը, որի երևանյան բեմադրության մասին խոսք կլինի կուլտուրայի բաժնում։

Ռուս-թուրքական 1828—1829 թթ. պատերազմի ընթացքում Երևանը անմիջականորեն ոչնչով չէր առնչվում տեղի ունեցող քաղաքական դեպքերին։ Այս պատերազմը միայն այնքանով է կապված Երևանի հետ, որ Ադրիանապոլսի պայմանագիրը կնքելուց հետո՝ Թուրքիայի սիրապետության տակ գտնվող տերիտորիաներից դեպի Արևելյան Հայաստան գաղթ կատարած բնակիչներից որոշ թվով եկան ու հաստատվեցին Երևանում։

Այնպես որ, այդ ժամանակներում Արևելյան Հայաստանի ու նրա կենտրոն Երևանի համար շրջադարձային պահ է հանդիսանում միայն 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը։

Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին թե՛ ժամանակակիցների և թե՛ հետագա սերունդների ներկայացուցիչների կողմից դիտվել է որպես հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ամենակարևոր իրադարձություններից մեկը։ «Շատ պատերազմներ են եղել Հայաստանի հողի վրա,— գրում է ժողովրդական բանաստեղծ Հովհ. Թումանյանը,— բայց 1826—28 թվականների ռուս-պարսկական պատերազմը կմնա հայ ժողովրդի հիշողության ու պատմության մեջ երբևէ կատարված ամենամեծ պատերազմներից մեկը». այդ պատերազմով «հայ ժողովուրդը ազատվում էր մի դժոխքից,— շարունակում է բանաստեղծը,— որ նրա համար

ստեղծել էր պարսկական կոպիտ ու խավար բռնակալությունը, մի բռնակալություն, որի վայրագությունը ոչ մի սահման ու չափ չէր ճանաչում, ոչ օրենք, ոչ իրավունք, ոչ խնդիր, ոչ աղաչանք, ոչ կրոն, ոչ սրբություն, ոչ կայք, ոչ կին, ոչ պատիվ, ոչ ամոթ, ոչ խղճմտանք...։

Եվ այդ դժոխքի միջնաբերդը Երևանն էր»[1]։

Հովհ. Թումանյանից բերված այդ քաղվածքը փաստորեն Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու շուրջը՝ և՛ բուն Հայաստանում, և՛ Ասիայի ու Եվրոպայի հայկական գաղութներում առաջացած տրամադրությունների դիտական ամենաճշգրիտ ընդհանրացումն է։ Երևանի ու Նախիջևանի խանությունների և Երևան քաղաքի գրավումը, ինչպես տեսանք, ժողովուրդը դիմավորում էր մեծ ցնծությամբ։ Երևանի ազատագրման առթիվ բազմաթիվ շնորհավորական նամակներ են ստացվում Վրաստանից, Աստրախանից, Հնդկաստանից և այլ վայրերից ու երկրներից[2]։ Երևանի գրավմանը առանձնապես մեծ հրճվանքով է արձագանքել Աբովյանի ժամանակակից և լուսավորիչ Մեսրոպ Թաղիադյանը, որը Երևանի Զորագեղի կարբի թաղից էր և ռուս-պարսկական պատերազմի տարիներին (1826—1828 թթ.) գտնվում էր Կալկաթայում (Հնդկաստան)։ Լսելով Երևանի գրավման լուրը, նա այդ առթիվ մի սրտառուչ նամակով ի սրտե շնորհավորում է իր համաքաղաքացիներին[3]։

Սակայն ժողովրդի տրամադրությունները ամենից խոր և ամբողջական կերպով արտահայտված են Խ. Աբովյանի անմահ ստեղծագործության մեջ։ Աբովյանի մոտ ժողովրդի անունից քանի-քանի անգամ շնորհակալական խոսքեր են ուղղված ռուսական բանակին և առհասարակ ռուսներին՝ պարսկական դաժան լծից Հայաստանը փրկելու համար։ «Օրհնվի էն ահաթը,— գրում է Աբովյանը Երևանի գրավումից հետո,— որ Ռսի օրհնած ոտը հայոց լիս աշխարհը մտավ, ու ղզլբաշի անիծած չար շունչը մեր երկրիցը հալածեց։ Քանի

---

[1] Հովհ. Թումանյան, Ռուս-պարսկական պատերազմը և Աբովյանը («Սովետական գրականություն», հանդես, 1941, № 9—10, էջ 115։ Այս աշխատությունը Թումանյանը սկսել է գրել 1908 թվականից)։

[2] Տե՛ս ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, բզ-թաղանակ 55, վավերագիր 74, 105 և այլն, «Մասեաց Աղավնի» (երկշաբաթաթերթ), 1863, Հ. Ք. Մկրտչան, Կենսագրություն Մեսրոպ Դավթյան Թաղիադեանի, Թիֆլիս, 1866, էջ 133 և այլն։

[3] Տե՛ս Հ. Ք. Մկրտչան, Կենսագրություն Մեսրոպ Դավթյան Թաղիադեանի, էջ 133, կամ «Մասեաց Աղավնի», 1863, էջ 172—174։

որ մեր բերանումը շունչ կա, պետք է գիշեր-ցերեկ մեր քաշած օրերը մաքներս բերենք ու Ռսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խայ հանենք, Աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց...»[1]։

Պարսկական բռնապետության դեմ պայքարելու լավագույն միջոցը իր նախորդ և ժամանակակից հայ շատ ու շատ գործիչների նման Աբովյանն էլ համարել է Ռուսաստանի հետ հաստատվող բարեկամությունը։ Նա իր «Զանգի» աշխատության մեջ կոչ է անում հայ երիտասարդությանը զինվել և, թիկունք ունենալով հզոր Ռուսաստանը, մարտնչել պարսկական լծից ազատագրվելու համար։ Փոխաբերական իմաստ տալով իր գրվածքին, Աբովյանը քարոզում է հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունն և վերջինից ակնկալում իր ժողովրդի փրկությունը։ «Զանգի՛, Զանգի՛, հրաշագե՛ղդ Զանգի։ Դու զքոյդ սուրը նախանձ տակավին տածես, դու ահեղ թնդմամբ տակավին հերքես, դղրդաս յարձակմամբ, մեծաձայն գոչես. «եկէ՛ք Հայկազեան սերունդք քաջագործք, առէ՛ք զէն, զասպար զաւակք բարեսնունդք, հարէ՛ք, փշրեցէ՛ք զթշնամեաց ձեր գանդ, տո՛ւք հոգի հոգւոյ, թիկն ընդ թիկունս։ Ջախջախեցի՛ թող գազանն նկուն, Ռուսեա հզօր բազուկ եղիցի ձեզ նիզն, նմա՛ զոհ լինել լիցի ձեր միշտ ճիգն։ Վօլգայ իմ մեծ քեռ, ես իմ քոյր Երասխ՝ համբոյր մատուցուք ի կասպեանն կոհակ։ Նա զիւր բարութիւն, ես զիմ խերութիւն ի մի մեր մօր ծոց ընդ միմեանս խառնեսցուք։ Ես զիմ Սեանայ օրհնութեան մաղթանս, ես զիմ սուրբ Մասսայ ողջոյն հայրական տարայց, մատուցից սիրելոյն իմ քեռ, բերից ձեզ զողջոյն նրա աւետաբեր...։

Բացէ՛ք զձակատ ձեր, ցնծացէ՛ք յամայր. իմ քաղցր Վօլգայ քոյր հոգայ միշտ զձեր ճար»[2]։

Հայ ժողովուրդը պարսկա-թուրքական բռնակալության լծից ազատագրվելու համար դարեր շարունակ դիմել էր եվրոպական այս կամ այն պետության օգնությանը, սակայն միշտ էլ մերժում էր ստացել կամ սնամեջ խոստումներ։ Վերջ ի վերջո միակ ռեալ օգնությունը կարելի էր սպասել հզորացող Ռուսաստանից, որը իրոք, իր քաղաքական շահերից ելնելով, ոտքը դրեց Անդրկովկաս։

«Հայ ժողովուրդը [երկար դարերով] աչքը կթած արևմուտք օգնություն էր աղերսում մերթ մի, մերթ մյուս եվրոպական քրիս-

[1] Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 58։

[2] Նույն տեղը, Հավելված, Զանգի, էջ 199։

տոնյա պետությունից,— գրում է Հովհ. Թումանյանը։ Դարերի փորձը, պատմության ընթացքն ու ժամանակի մատը ցույց տվին, որ այդ հույսն ու ապավենը Ռուսաստանն էր լինելու, որ օրեցօր զորանալով ու իր ափերից դուրս հորդորելով իր դիվիզիաներով՝ հորձանք էր տալիս դեպի Արևելք։ Եվ Հնդկաստանից մինչև Կովկաս, ամենայն Հայոց կաթողիկոսից մինչև վերջին շինականը՝ հայ ժողովրդի հայացքը կենտրոնացավ Ռուսաստանի վրա։ Հիրավի, հզոր Ռուսաստանի արևելյան քաղաքականությունն ու տանջվող հայ ժողովրդի հույսերը բոնում էին իրար»[1]։

Մի ժամանակ, քանի դեռ ռուսական պետությունը Անդրկովկասից կտրված էր ռազմատենչ ժողովուրդներով բնակեցված լայնատարած տերիտորիաներով և նրա քաղաքական շահերն ուղղված էին դեպի այլ կողմեր, արևմտա-եվրոպական պետությունները՝ պարսկական և թուրքական լծից ազատվելու համար հայերի դիմումներին պատասխանում էին կամ դատարկ խոստումներով, կամ այդ միտքն կատարելու համար մատնացույց անում Ռուսաստանին։ Սակայն, երբ ռուսական պետության քաղաքական ու տնտեսական իրադրությունը սկսեց այնպես դասավորվել, որ նա ձգտում էր Անդրկովկասը խլել Պարսկաստանից և միացնել իր տերիտորիային, իսկ դրա հաջողության համար կային բոլոր ռեալ նախապայմանները, այս անգամ արդեն արևմտաեվրոպական պետությունները՝ Ֆրանսիան ու Անգլիան, ամեն կերպ ձգտում են Ռուսաստանը հեռու պահել Անդրկովկասից, ամեն միջոցի դիմելով, որպեսզի այն մնա պարսկա-թուրքական տիրապետության տակ, Ռուսաստանը չամրանա Անդրկովկասում, նրա հեղինակությունը Արևելքի երկրներում չբարձրանա, որպեսզի Ռուսաստանը չհզորանա ընդհանրապես։ Իրենց այդ նպատակին հասնելու համար, Ֆրանսիան և Անգլիան Պարսկաստանին ու Թուրքիային պատերազմների էին հրահրում Ռուսաստանի դեմ, նրանց օգնում էին մասնագետ զինվորականներով, զենքով, ռազմամթերքով, դիվանագիտական ամենաստոր եղանակներով[2] և այլն։

[1] Հովհ. Թումանյան, Ռուս-պարսկական պատերազմը և Աբովյանը («Սովետական գրականություն», Հանդես, 1941, № 9—10, էջ 115)։

[2] Տե՛ս Վ. Պարսամյան, Յարիզմի դաղութային քաղաքականությունը Հայաստանում, I մաս, Երևան, 1940, З. Григорян, Военные походы русской армии по присоединению Восточной Армении к России (տե՛ս «Известия» АН Арм. ССР, обществ. науки. Ереван, 1951, № 2). М. Нерсисян, Присоединение Армении к России и его историческое значение (նույն տեղը, 1953, № 7), Иоаннисян А. Р., Борьба Англии и Франции против присоединения Армении к России (նույն տեղը)։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելը հայ ժողովրդի շահերին այնքան էր համընկնում, որ ցարական կառավարությունը հայերի նկատմամբ այդ առիթից օգտվելով, հեշտությամբ «ազատագրողի դերը»[1] կարող էր ընդունել, չնայած իրականում նրա մղած պատերազմները իսկական նվաճողական էին։

Ֆ. Էնգելսը 1851 թ. Մարքսին ուղղած իր մի նամակի մեջ Ռուսաստանի՝ Արևելքում խաղացած դերը բնութագրում է որպես առաջադիմական։ Նա գրում է, որ «Ռուսաստանը իրոք որ առաջադիմական դեր է խաղում Արևելքի նկատմամբ»[2]։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու պատմական ամենակարևոր նշանակությունը կայանում է հատկապես նրանում, որ Հայաստանի այդ մասը հզոր Ռուսաստանի կազմի մեջ մտնելով նրա բնակչությունն էլ փրկվեց ֆիզիկական բնաջնջումից։ Նա դրանով խուսափեց պատմական այն դառը ճակատագրից, որին ենթարկվեց Հայաստանի խոշորագույն մասը՝ Արևմտյան Հայաստանը։

«Որպեսզի պարզ ու ակնառու կերպով պատկերացնել Հայաստանը Ռուսաստանին միացնելու հսկայական առաջադիմական նշանակությունը,— գրում է Մ. Ներսիսյանը,— հարկավոր է հիշել Արևմտյան Հայաստանի ողբերգական ճակատագիրը։ Այն ժամանակ, երբ Արևելյան Հայաստանը, մտնելով ռուսական պետության կազմի մեջ, կանգնեց անտեսական, կուլտուրական և քաղաքական զարգացման ուղու վրա, Արևմտյան Հայաստանը, գտնվելով թուրքական բռնակալության լծի տակ, ոչ միայն չզնաց զարգացման ուղիով, այլ և միանգամայն ամայացավ և քայքայվեց»[3]։ Թուրքական կառավարող շրջանների կազմակերպած ահավոր ջարդերի հետևանքով Հայաստանի այդ խոշորագույն մասը զրկվում է իր բնիկ բնակիչներից՝ հայերից, որոնց միայն չնչին փշրանքներն են ազատվում և ապաստան գտնում աշխարհի ամենատարբեր անկյուններում։

Ցարական վիճակագիր Օրեստ Եվեցկին՝ ուսումնասիրելով Անդրկովկասի XVIII դ. վերջերին ունեցած վիճակը և այն համեմատելով XIX դ. 30-ական թվականների հետ, երբ այնտեղ արդեն վերջնականապես հաստատված էին ցարական կարգերը, հանգում

[1] К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. XVI, ч. II, էջ 9։
[2] Նույն տեղը, հ. XXI, էջ 211։
[3] М. Нерсисян, Присоединение Армении к России и его историческое значение («Известия» АН Арм. ССР, 1953, № 7, էջ 11).

է միանգամայն ճիշտ մի քանի եզրակացությունների, որոնք ցույց են տալիս ռուսական պետության՝ Պարսկաստանի ու Թուրքիայի նկատմամբ ունեցած առավելությունները։ Այսպես, Օրեստ Եվեցկին մատնացույց է անում այն, որ Անդրկովկասը ռուսական պետությանը միացնելուց հետո այնտեղ ստեղծվեց արտաքին ու ներքին անվտանգություն, ստեղծվեցին ընդհանուր կարգ, կանոն և օրենքներ, քաղաքացին սկսեց օգտվել սեփականության և անձի անձեռնմխելիության օրենքից, կամայական բռնագանձումները փոխարինվեցին որոշակի չափ ունեցող և օրենքով հաստատված հարկերով, վերացան կրոնի համար նախկինում եղած հալածանքները, աստիճանաբար հիմք դրվեց «արդյունաբերության», հաղորդակցության ճանապարհները ապահովվեցին հարձակումներից և բարեկարգվեցին, առևտուրը աշխուժացավ, բացվեցին պետական դպրոցներ և այլն[1]։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պրոգրեսիվ նշանակության մասին խոսել են նաև այլ բազմաթիվ հեղինակներ, սակայն այդ հարցը իր բազմակողմանի լուսաբանումը ստացել է մեր օրերում, սովետահայ ուսումնասիրողների կողմից (Մ. Ներսիսյան, Վ. Պարսամյան, Զ. Գրիգորյան, Ա. Հովհաննիսյան, Հովհ. Թումանյան, Մ. Սանթրոսյան[2] և ուրիշներ)։ Նրանք արձանագրում են, որ Ռուսաստանը Պարսկաստանի և Թուրքիայի նկատմամբ ավելի առաջադիմական երկիր էր, որ եթե առաջինը ապրում էր ֆեոդալիզմի քայքայման շրջան, ապա վերջիններում իշխում էր ռազմա-ֆեոդալական կարգը՝ իր բոլոր կամայականություններով ու բռնություններով հանդերձ։ Հետևապես Ռուսաստանի կազմի մեջ մտնելը նախկին վիճակի համեմատությամբ հսկայական առաջընթաց էր Հայաստանի համար։ Ռուսաստանին միանալով՝ Հայաստանում ստեղծվեցին նորմալ, խաղաղ հարաբերություններ, հայերը փրկվեցին ֆիզիկական բնաջնջումից, որին ենթարկված էին պարսկա-թուրքական հարատև պատերազմների հետևանքով։ Ռուսական պետության կողմից իր հարավային սահմանները ամուր պահելու և այնտեղի շրջանները տնտեսապես յուրացնելու համար, սկսած Թուրքմենչայի պայմանագրի կնքումից, պարբերաբար կազմակերպվում է հայերի ներգաղթ, որի շնորհիվ

[1] Орест Евецкий, Статистическое описание Закавказского края, СПБ, 1835, էջ 243—245։
[2] Մ. Սանթրոսյանը Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի խաղացած պրոգրեսիվ դերի մասին խոսում է իր՝ «Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյանը» աշխատության մեջ (Երևան, 1953, էջ 8—9)։

ամբողջ հայության ապաստարան Արևելյան Հայաստանում հայերը կազմում են ավելի մեծ զանգվածներ և պահպանում իրենց ազգային կուլտուրան։ Պարսկական տիրապետության շրջանի հետ համեմատած՝ զարգանում է նրա տնտեսությունը, կուլտուրական և քաղաքական կյանքը։ Վերջապես, Արևելյան Հայաստանի միացմամբ հայ ժողովուրդն իր բախտը վերջնականապես կապում է ռուս ժողովրդի պատմական բախտի հետ։ Ռուսաստանի բաղկացուցիչ մասը կազմելով՝ Հայաստանը ևս վերջ ի վերջո թևակոխեց կապիտալիզմի շրջանը, ռուսական ռևոլյուցիոն շարժման ազդեցության տակ այստեղ էլ առաջացավ ռևոլյուցիոն շարժում, ռուսական կուլտուրան, գիտությունը սկսեց իր բարերար ազդեցությունը թողնել հայկական կուլտուրայի ու կյանքի մյուս բնագավառների վրա և այլն։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելով աստիճանաբար խոշոր փոփոխություններ են տեղի ունենում նաև Երևան քաղաքի կյանքում։ Առաջին տասնամյակների ընթացքում, ճիշտ է, այդ փոփոխությունները զգալի չէին, սակայն հետագայում դրանք դարձան նշանակալի։ Այսպես, պարսկական լծից ազատագրվելուց հետո Երևանը դադարեց Թուրքիայի և Պարսկաստանի միջև կռվածադիկ լինելուց, որի հետևանքով նա ավելի քան 14 անգամ ձեռքից ձեռք էր անցել և մի շարք անգամ ավերվել։ Երևանում բացվեցին պետական զանազան կարգի դպրոցներ, սկզբում գավառական դպրոց, ինչպես և թեմական հոգևոր դպրոցը, ապա հետագայում՝ գիմնազիաներ և այլ դպրոցներ, բարձրացավ Երևանի տնտեսական կյանքը՝ արհեստները, առևտուրը, 80-ական թվականներից այստեղ ստեղծվում են նաև ժամանակակից արդյունաբերական օբյեկտներ, առաջանում են նոր թաղեր, առաջին անգամ որոշ պլանավորման է ենթարկվում քաղաքը։ Նախկինում Վանի, Էրզրումի, Երզնկայի և Արևմտյան Հայաստանի այլ շատ քաղաքների համեմատությամբ խղճուկ Երևանը XX դարի սկզբներին նրանց արդեն գերազանցում էր մի շարք բնագավառներում։ Էլ չենք խոսում այն մասին, որ առաջինները հայկական ջարդերի պատճառով զրկվեցին հայ բնակչությունից և մինչև օրս էլ մնում են իբրև խղճուկ ու հետամնաց գավառական տիպի անբարեկարգ քաղաքներ։

Թե ինչպես է արտահայտվել Երևանի տնտեսական ու կուլտուրական առաջընթացը պարսկական ծանր լծից ազատագրվելուց հետո առաջին հինգամյակի ընթացքում, ավելի մանրամասն

կտեսնենք գրքիս հաջորդ գլուխներում շարադրվելիք նյութի հիման վրա։

Սակայն, այդ բոլորը դեռևս որևէ հիմք չեն տալիս ցարական տիրապետության տակ անցնելը Հայաստանի (ինչպես և Ռուսաստանի կազմի մեջ մտնող մյուս ազգային տերիտորիաների) համար ազատագրում համարել բառիս իսկական իմաստով։ Ցարական Ռուսաստանը ազգային փոքրամասնությունների, այդ թվում և հայերի նկատմամբ կիրառում էր ռուսականացման քաղաքականություն, նա Հայաստանը դիտում էր որպես իր գաղութը և ամեն կերպ արգելում նրա տնտեսական ու կուլտուրական զարգացումը։ Ցարական Ռուսաստանի քաղաքականության ռազմաֆեոդալական մեթոդները ամենայն խստությամբ էին կիրառվում ազգային փոքրամասնությունների, որոնց թվում և հայերի նկատմամբ։ Այդ նույն ցարական Ռուսաստանն էր, որ փակել էր տալիս հայկական դպրոցները, կազմակերպում հայկական ջարդեր։ Չէ՞ որ ցարական Ռուսաստանը ժողովուրդների բանտ էր, այնտեղ ազատ չէին ոչ միայն նրա կազմի մեջ մտնող մյուս ժողովուրդները, այլև ինքը՝ ռուս ժողովուրդը։ Հայաստանում և ազգային ծայրամասային նահանգներում նկատվող տնտեսական, քաղաքական ու կուլտուրական առաջընթացը տեղի էր ունենում ոչ թե ցարական կառավարության կամքով, այլ օբյեկտիվ դրդապատճառների շնորհիվ։ Ցարական կառավարությունը անկախ իր կամքից հարկադրված էր իր քաղաքականությամբ հանդուրժելու և, որոշ դեպքերում էլ, նույնիսկ մասամբ նպաստելու ծայրամասերի տնտեսական առաջընթացին։ Դրա լավագույն օրինակներից մեկը կարող է լինել Անդրկովկասի ճանապարհաշինությունը, որ ցարական կառավարությունը կատարում էր ռազմա-ստրատեգիական առումով, բայց նա միաժամանակ խթան հանդիսացավ Անդրկովկասի առևտրա-տնտեսական կյանքի զարգացման համար։ Ցարիզմին հետաքրքրում էր միայն իր գրաված ազգային ծայրամասային նահանգները, որոնց թվում և Հայաստանը, կատարյալ գաղութային վիճակում պահելը, և նրա ամբողջ տնտեսական, ազգային քաղաքականությունն էլ ենթում էր այդ նպատակին։ Ցարիզմը Հայաստանում վարում էր ռուսականացման-գաղութացման քաղաքականություն։

Հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների՝ Ռուսաստանին միանալը քաղաքական առումով կատարվեց 25—30 տարվա ընթացքում, իսկ տնտեսապես Անդրկովկասը Ռուսաստանի կողմից յուրացվեց բավական երկարատև պրոցեսի ընթացքում, մի պրո-

ցես, որը ձգձգվեց ընդհուպ մինչև XIX դարի վերջերը և XX դ. սկզբները։ Ահա այդ պրոցեսն է, որ «ունի երկու կողմ, երկու տենդենց,— ինչպես գրում է Լ. Մաքսիմովը,— մեկը համաոուսական կապիտալիստական սիստեմի շրջանակներում ժողովուրդների տնտեսական մերձեցման պրոգրեսիվ տենդենցն է, որը չի կարող չդարգացնել բուրժուական ազգերի ձևավորման պրոցեսը Ռուսաստանի ճնշված ժողովուրդների մոտ. այդ պրոցեսի մյուս կողմը... ցարիզմի ազգային-դաղութային քաղաքականության «ոազմաֆեոդալական» մեթոդներն են, ցարիզմի, որը կողմնորոշվում էր դեպի ֆեոդալական-ռեակցիոն տարրերը և արգելակում էր ծայրամասերի ճնշված ժողովուրդների արտադրողական ուժերի աճը, տնտեսական և կուլտուրական զարգացումը»[1]։

Այլ կերպ ասած, Արևելյան Հայաստանի համար Ռուսաստանին միանալը պրոգրեսիվ խոշոր նշանակություն ուներ, սակայն նա Ռուսաստանի մյուս ազգային տերիտորիաների նման ևս գտնվում էր կիսագաղութային վիճակում, իր հետամնաց տնտեսությամբ մնալով վերջին շարքերում։ Հայաստանն էլ՝ Անդրկովկասի մյուս երկրների և բովանդակ Ռուսաստանի հետ միասին ազատագրվեց միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ, որը մեկընդմիշտ վերջ տվեց բոլոր կարգի ու երանգի շահագործումներին, ազգային ստեղությանը, տնտեսական անիրավացի քաղաքականությանը, ազգային կուլտուրաների ու տնտեսական զարգացմանը խափանող բոլոր արգելքներին և Ռուսաստանի իրավահավասար բոլոր ժողովուրդների առջև բացեց սոցիալիզմի ուղին։

2. ԵՐԵՎԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԻ, ԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԱՌԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ

Քաղաքի վարչական կենտրոն լինելու նշանակությունը։ Հայկական մարզի ժամանակավոր վարչությունը և նրա անելիքները։ Հայկական մարզի մշտական վարչության կազմումը և նրա կանոնադրությունը։ Հայկական մարզի վարչածները։ Ցարական աստիճանավորների գործած անօրինականություններն ու կաշառակերությունները։ Երևան քաղաքի վարչական վիճակը որպես մարզի

[1] Л. Максимов, О журнале «Вопросы истории» («Большевик», журнал, 1952, № 13).

կենտրոնի, նրա կառավարման ձևը։ Երևանի բերդի նշանակությունը։ Երևանի գավառը։ Երևանը իբրև համանուն գավառի կենտրոն։ Երևանի նահանգի կազմումը 1849 թ. հունիսի 9-ի հրամանագրով և հետագա տասնամյակներին նրա կրած վարչական փոփոխությունները։ Երևանի նահանգի տերիտորիան և գավառները։ Նահանգական և գավառական հիմնարկներն ու դրանց պարտականությունները։ Երևանի կառավարման ձևը մինչև 1879 թվականը։

Ցարական տիրապետության շրջանում, մանավանդ մինչև արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը, շատ քիչ նշանակություն ունեին գերազանցապես միայն այն քաղաքները, որոնք հանդիսանում էին այս կամ այն կարգի վարչական միավորի (նահանգի, մարզի, գավառի և այլն) կենտրոն։ Տնտեսական առումով ոչ մեծ քաղաքները, մանավանդ ծայրամասերում, որոնց թվում էր և Անդրկովկասը, ֆեոդալական հարաբերությունների առկայության պայմաններում դեռևս քիչ էին տարբերվում գյուղական վայրերից։ Գյուղական վայրերից նրանց տարբերության հիմնական կողմերից մեկը հենց այն էր, որ նրանք մեծ մասամբ վարչական կենտրոններ էին, այստեղ էին կենտրոնացած տվյալ վարչական միավորի կառավարող օրգանները, այստեղ էր գտնվում, նայած տվյալ քաղաքի պաշտպանական նշանակության կարևորությանը, կայազորը և այլն։ Այն քաղաքները, որոնք վարչական կենտրոններ չէին, կոչվում էին արտաշատատային քաղաքներ։ Արտաշատատային քաղաքների վրա գրեթե ոչ մի ուշադրություն չէին դարձնում։ Դրանք իրենց տնտեսությամբ զբաղում էին տեղում, իսկ նշանակությամբ մնում՝ երրորդական, չորրորդական։

Այնպես որ խոշոր նշանակություն ուներ քաղաքի՝ վարչական կենտրոն լինելը։ Երևանն այդպիսին էր XV դարի քառասնական թվականներից և այդպիսին էլ մնաց ցարական տիրապետության շրջանում, մինչև որ դարձավ սովետական կարգերի հաստատումով ստեղծված Հայկական ՍՍՌ-ի մայրաքաղաքը։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, այն է՝ 1828—1879 թթ., Երևանը եղել է երեք կարգի վարչական միավորների կենտրոն, սկզբում Հայկական մարզի, ապա՝ Երևանի գավառի, իսկ 1850 թվականից՝ Երևանի նահանգի և այդպիսին էլ մնաց ցարական տիրապետության ամբողջ շրջանում։

Երևանը գրավելուց անմիջապես հետո, նախկին Երևանի և

Նախիջևանի խանությունների տերիտորիաներում կարգ ու կանոն հաստատելու և մինչև ռուս-պարսկական պատերազմի ավարտումը դրանց տնտեսական պոտենցիալը պատերազմի նպատակներին ծառայեցնելու համար՝ Պասկևիչը 1827 թ. հոկտեմբերի 6-ին Երևանում կազմակերպում է «ժամանակավոր վարչություն», նրան հանձնարարելով նշված նախկին խանությունների կառավարումը[1]։

Երևանում հաստատված այդ ժամանակավոր վարչությունը բաղկացած էր երեք մարդուց՝ այստեղ գտնվող զորքերի հրամանատար գեներալ-լեյտենանտ Կրասովսկուց, որը համարվում էր վարչության նախագահը, Ներսես Աշտարակեցուց, որը, իբրև տեղացի, բնակչության մեջ մեծ հեղինակություն ունեցող և երկրի պայմաններին լավ ծանոթ անձնավորություն, պետք է նպաստեր վարչության աշխատանքի հաջող ընթացքի ապահովմանը, և Երևանի բերդի պարետ փոխգնդապետ Բուդդինից[2]։ Ժամանակավոր վարչությունը ամբողջովին ենթարկվում էր Կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար Պասկևիչին և կառավարում նրա կարգադրությունների հիման վրա։ Նախկին Երևանի և Նախիջևանի խանությունների ներքին կյանքում ժամանակավոր վարչության գործունեության շրջանում փոփոխություններ չէին նախատեսված և այդպիսիները տեղի չունեցան. ուժի մեջ մնացին վարչական բաժանման մահալային սիստեմը և դրանց կառավարման նախկին-պարսկական ձևը։ Ավելին, Նախիջևանում իրենց պաշտոններում մնացին պարսկական տիրապետության շրջանի բոլոր պաշտոնյաները, որոնք ենթարկվում էին ժամանակավոր վարչությանը։

Ժամանակավոր վարչությունը, կազմված լինելով մարզի քաղաքացիական բոլոր գործերը վարելու համար, մեծ պարտականություններ ուներ իր վրա։ Դրանք հատուկ հրամանագրի ձևով կազմվել էին Պասկևիչի կողմից և տրվել ժամանակավոր վարչությանը՝ իր ղեկավարության։

Պասկևիչի այդ հրամանագրով ժամանակավոր վարչությանը հանձնարարվում էր՝ մարզում հաստատել խաղաղություն, ապահովել նրա անդորրը ներքին և արտաքին հարձակումներից, հաշվի առնել և հայտնաբերել պետական բոլոր կարդի ոմնեցվածքները, պարսկական տիրապետության շրջանի պետական բոլոր նկամուտները և դրանք տրամադրել հօգուտ ռուսական կառավարության, զորքերին մշտապես ապահովել պարենամթերքով, ռուսական իշխանությանը ենթարկել Արաքսի աջ կողմում գտնվող ցեղերին, որոնք ցանկանում են մտնել Ռուսաստանի հովանավորության ներքո, տեղական պաշտպանության նպատակներով տեղացիներից կազմակերպել զինված ջոկատներ, միջոցներ ձեռնարկել ժանտախտի տարածման դեմ, ապահովել Երևանի և Սարդարաբադի բերդերի կայազորների և բնակիչների մատակարարումը, տեղեկություններ հավաքել թուրքական փաշայություններում տեղի ունեցող զորքերի շարժման և նրանց զինվածության մասին, ապահովել Վրաստանի հետ մշտական կապը Ապարանով և Դիլիջանի կիրճով, հոգ տանել Երևանում և Սարդարաբադում բամբակի մշակությունը բարձրացնելու և ձեռնտու գներով բամբակ ձեռք բերելու համար, հովանավորել առևտուրը, Կողբի աղահանքերի արդյունահանությունը, քննել և ընթացք տալ եղած դիմումներին, պարզել արտոնյալ դասերի ներկայացուցիչների իրավական դրությունը[1] և այլն, և այլն։

Պասկևիչը իրոք որ «ծանր պարտավորություններ դրեց այդ վարչության վրա», ինչպես միանգամայն իրավացի կերպով նկատում է Ալ. Երիցյանցը[2]։ Նա ժամանակավոր վարչությունից պահանջում է լուծել պատերազմի և խաղաղ կյանքի հետ առնչվող այնպիսի հարցեր, որոնք կապված էին մեծ դժվարությունների հետ։ Քայքայված երկիրը ամենևին ի վիճակի չէր իր ողորմելի տնտեսությամբ հագուրդ տալ ցարական աստիճանավորի մեծ ախորժակին։ Ըստ երևույթին, Պասկևիչը ինքն էլ գիտեր, որ իր հանձնարարած գործերի մեծագույն մասը այն ժամանակվա պայմաններում անհնար էր կատարել և նրա կողմից այդ «մի որոշակի էր, որ լարված էր Կրասովսկուն տապալելու համար»[3]։

Պասկևիչը անշուշտ դժգոհ է մնում ժամանակավոր վարչության չորս ամիսների գործունեությունից։ Նա այդ մասին գլխավոր շտաբի պետ Դիբիչին 1828 թ. մարտի 3-ին գրած իր զեկուցագրում նշում է, որ Կրասովսկին իբր անտարբեր անցել է հույժ կարևոր հարցերի կողքով, ոտնահարել է պետական շահերը, հավա-

[1] АКАК, т. VII, էջ 480, № 432, Ա լ. Ե ր ի ց յ ա ն ց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա., էջ 338, В. И. Иваненко, Гражданское управление Закавказьем, էջ 241 և այլն։

[2] АКАК, т. VII, էջ 480—481, № 432։

[1] АКАК, т. VII, էջ 481, № 432։

[2] Ա լ. Ե ր ի ց յ ա ն ց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա., էջ 339։

[3] Նույն տեղը։

քած հացահատիկը փոխանակ զորքին տրամադրելու՝ գյուղացիներին է տվել իբրև սերմացու, նա առհասարակ անշնորհք է և իր ղեկավարությամբ կարող է միայն վնաս հասցնել տվյալ մարզին ու պետությանը և այլն[1]։ Պասկևիչը շատ անբավական էր նաև Ներսես Աշտարակեցուց[2]։

Առանց այդ բողոքի էլ արքունիքում վաղուց արդեն նախատիճ էր մշակվում Երևանի մարզի մնայուն վարչաձևի համար։ Ցար Նիկոլայ I-ը՝ նախքան Պասկևիչի նշված կարգադրության մասին իմանալը, դեռևս 1827 թ. հոկտեմբեր ամսին կարգադրել էր կազմել մի հանձնաժողով, որի միջոցով մշակել նոր նվաճված այդ երկրի կառավարության նախագիծ և այն ներկայացրել հաստատման։ Հանձնաժողովի կազմի մեջ մտան կոմս Դիբիչը, արտաքին գործերի մինիստր Նեսելրոդը, ֆինանսների մինիստր Կանկրինը, Զակրովսկին և Կովկասի պայմաններին լավ ծանոթ գեներալ Վեյմարնովը։ Հանձնաժողովի կազմած նախագիծը երևան է գալիս 1827 թ. վերջերին։ Դա երկրի վարչական, տնտեսական և ռազմական բնագավառներին վերաբերող մի ընդարձակ կանոնադրության նախագիծ էր, որը պիտավոր շտաբի պետ Դիբիչը 1827 թ. դեկտեմբերի 15-ին ուղարկում է Պասկևիչին՝ իր դիտողություններն անելու համար[3]։ Նախագծում ասված է, որ առաջին իսկ հնարավորության դեպքում Երևանի մարզում (провинция), այսինքն՝ Երևանի ու Նախիջևանի խանություններում, ինչպես և նոր միացված մյուս շրջաններում այժմյան ժամանակավոր կառավարության փոխարեն կազմել նոր վարչություն, որը պետք է լինի կամ Երևանում, կամ մի այլ հարմար տեղ։ Այդ վարչությունը ենթարկվելու է Պասկևիչի իշխանությանը և բաղկացած է լինելու հինգ հոգուց՝ տվյալ մարզի ռազմական պետից, երկու խորհրդականներից, որոնք լինելու են ռուս աստիճանավորներից, որոնցից մեկը պետք է լինի ոստիկանության գծով, իսկ մյուսը՝ ֆինանսական, և երկու ասեսորներից՝ խորհրդակցական ձայնով։ Ասեսորները երկուսն էլ լինելու էին բնակչության արտոնյալ խավերից, դրանցից մեկը լինելու էր հայ, մյուսը՝ ադրբեջանցի։ Վարչությունն ամենալու էր իր գրասենյակը և համապատասխան պաշտոնյաներ[4]։

Այնուհետև, նախագծում ասված է՝ Երևանում կամ մի այլ

[1] АКАК, т. VII, էջ 484—488։
[2] Նույն տեղը, էջ 489։
[3] Նույն տեղը, էջ 482։
[4] Նույն տեղը, էջ 482—483։

հարմար տեղ, և Նախիջևանում կամ Աբասաբադում կազմակերպել վարչություններ, այնպես անել, որ քրիստոնյաները ենթարկվեն քրիստոնյա կառավարիչներին, իսկ մահմեդականները՝ մահմեդական կառավարիչներին, մինչև դատական մասի վերջնական կազմումը թուլլատրել դատական գործերը քննելու հոգևոր դատարաններին և տանուտերներին, միաժամանակ իրավունք է տրվում քրեական գործեր քննելու քաղաքային վարչություններում։ Որոշակի ժամկետ է սահմանվում (2—5 տարի) Երևանից բացակայած անձնավորությունների համար՝ խաղաղության պայմանագիրը կնքելուց հետո, նորից իրենց տեղերը գալու դեպքում իրենց սեփական ունեցվածքները ետ ստանալու, այլ տեղերից Երևանի մարզը բնակության եկող մարդկանց որոշակի ժամանակով (մինչև 3 տարի) պետական հողը տրամադրել արտոնյալ կարգով՝ նրանց ազատելով հարկերից, որից հետո հարկադրումը կատարել ընդհանուր հիմունքներով։ Երևանի մարզի վարչությանը պարտավորեցվում է վերականգնել և պահպանել մարդկանց անդորրը և խաղաղ կյանքը՝ հետապնդելով բոլոր կասկածելի մարդկանց, հովանավորել ու զարգացնել առևտուրը, արդյունաբերությունը, առանձնապես հոգ տանել բամբակի արտադրության ընդարձակելու համար։ Հանձնարարվում է ամենակարճ ժամանակամիջոցում տեղեկություններ հավաքել քաղաքների, գյուղերի, պետական տների, առևտրի, ֆաբրիկանների ու ընդհանրապես արդյունաբերության, հացահատիկների մշակության, անասնապահության, շերամապահության, հարկերի, առանձին դասակարգերի մարդկանց իրավունքների, ջրազացների, այգիների, հողերի, լեռնային արդյունահանության և այլ ու այլ բնագավառների մասին[1]։ Նախագծով պարտավորեցվում է մարզային վարչությանը սկզբնական շրջանում պարսկական տիրապետության ժամանակաշրջանի հարկային սիստեմը նույնությամբ թողնել ուժի մեջ, միայն չեղյալ հայտարարելով հայերից դավանանքի համար վերցվող հարկը, ինչպես և հրաժարվել հարկադրման և հարկահավաքման ժամանակ պարսիկների կիրառած ամավայելուչ ու կամայական միջոցներից։ Խաղաղության պայմանագիրը կնքելուց հետո միայն մարզում կիրառել ռուսական կայսրության մեջ գործող հարկային սիստեմը[2]։ Եկամուտների ներքին դնկավարումը սկզբում վերապահվում է մարզային վարչությանը և կախված է նրանից, իսկ վերահսկողի

[1] АКАК, т. VII, էջ 483։
[2] Նույն տեղը։

դերը պատկանում է Վրաստանի պետական էքսպեդիցիային[1]։ Կանոնադրության նախագծում հատուկ կետով սահմանվում է գործերի լուծման կարգը, ըստ որի մարզում գործերը լուծվում են երկու խորհրդականների դեկուցման հիման վրա, անհրաժեշտ դեպքում լսելով ասեսորների կարծիքը։ Վճիռները հաստատվում են զինվորական պետի կողմից, որի անունով էլ հենց գրվում են պաշտոնական գրությունները, բացի տեղեկանքների և այս կամ այն հարցի իսկությունը հաստատող գրություններից, որոնք կարող էին տրվել խորհրդականների կողմից[2]։

Նշվածներից բացի, մարզային վարչության կանոնադրության նախագծում հատուկ հոդվածներով հանձնարարվում է վարչությանը զբաղվելու մարզի բնական հարստությունների հետազոտմամբ, հատուկ ուշադրություն դարձնելով հատկապես Կողբի աղահանքերի վրա, կազմակերպելու արտաքին ու տրանզիտային առևտուրը, կանոնավորելու մաքսատները, մաքսերի գանձման գործը, լավացնելու ու բարելավելու հաղորդակցությունը և այլն[3]։

Պետերբուրգում մշակված այդ կանոնների նախագիծը տրվում է Պասկևիչին իբրև դեկավարություն՝ Երևանի մարզի քաղաքացիական կառավարման սիստեմը մանրամասն մշակելու համար, պայմանով, որ նա յուրաքանչյուր նոր ձեռնարկման համար թույլտվություն պետք է ստանար ցարից՝ բարձրագույն հրամանագրի ձևով[4]։

Ինչպես տեսնում ենք, Երևանի մարզային վարչության համար նախատեսված կանոնների այդ նախագիծն իր բովանդակությամբ շատ տեղերում համընկնելով Պասկևիչի կողմից ժամանակավոր վարչությանը տրված կարգադրությանը, միաժամանակ նրանից զգալի տարբերություններ ուներ։ Այս նախագիծը չնչին փոփոխություններով կիրառվեց իբրև պարտադիր կանոնադրություն՝ մարզի վարչական ու կառավարական սիստեմը որոշելիս։ Նախագծի մեջ անհրաժեշտ փոփոխություններ մտցնելու մասին Պասկևիչը 1828 թ. ապրիլի 2-ին գրավոր զեկուցագիր է ներկայացնում Պետերբուրգ և խնդրում, որպեսզի դրանք հաստատվեն բարձրագույն հրամանագրով։ Մինչ այդ, դրանից 13 օր առաջ, Թուրքմենչայի պայմանագիրը մարտի 20-ին վավերացնելուց մի օր անց արդեն

[1] АКАК, т. VII, էջ 483։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 483—484, տե՛ս նաև Ա լ. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա., էջ 340։

[4] АКАК, т. VII, էջ 484։

հրապարակված էր ցարի հրամանագիրը՝ Հայկական մարզ կազմակերպելու մասին։

Դա ձևակերպված էր հետևյալ կերպ.

«Բարձրագույն հրամանագիր կառավարող սենատին, 21-ին մարտի 1828 թիվ, № 1888.

«Պարսկաստանի հետ կնքված այս պայմանագրով (Թուրքմենչայի պայմանագրով — Բ. Հ.) Պարսկաստանից Ռուսաստանին միացված Երևանի խանությունը և Նախիջևանի խանությունը բոլոր գործերում հրամանով այժմվանից կոչել Հայկական մարզ և այն մտցնել Մեր տիտղոսի մեջ։ Այս մարզի կառուցվածքի և նրա կառավարման կարգի մասին Կառավարող սենատը ժամանակին կատանա անհրաժեշտ հրամանները»

«Նիկոլայ»[1]։

Հայկական մարզի մշտական վարչության կազմակերպումը առիթ ծառայեցնելով, Պասկևիչը ղեկավարությունից հեռացրեց գեներալ Կրասովսկուն և Ներսես Աշտարակեցուն[2], որին, «վարձահատույց լինելու փոխարեն», «նրա (Պասկևիչի) սադրանքով ցարական կառավարությունը դատապարտեց 15-ամյա պատվավոր աքսորի»[3]։

Պաշտոնից հեռացված Կրասովսկու փոխարեն նոր կազմակերպված Հայկական մարզի պետ է նշանակվում գեներալ-մայոր Ալեքսանդր Ճավճավաձեն։ Վարչության կազմը համապատասխանում էր վերը նշված կանոնադրության պահանջներին, դա բաղկացած էր մարզի ռազմական պետից, որը նախատեսում էր վարչության նիստերին և հաստատում նրա որոշումները[4], երկու ռուս խորհրդականներից՝ մեկը ոստիկանության գծով, մյուսը՝ ֆինանսական, և խորհրդակցական ձայնով օգտվող երկու ասեսորներից՝

[1] АКАК, т. VII, էջ 487 . № 437, «Обозрение русских владений за Кавказом», ч IV, էջ 248, Հայկական մարզի վարչական կարգի և կառավարման մասին հրամանները տեղադրված են «Полн. собрание законов 1828 года»-ում, №№ 1794 և 1795-ի տակ։

[2] Ա լ. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա., էջ 344—381, В. Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, էջ 243—244։

[3] Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, էջ 42—43։

[4] Орест Евецкий, Статистическое описание Закавказского края, էջ 103։

մեկը հայ հասարակության կողմից, իսկ մյուսը՝ ադրբեջանական։ Մարզի կենտրոնը հաստատվեց Երևանը, որի ղեկավարման սիստեմի մասին խոսք կլինի քիչ հետո։

1828 թ. կազմված մարզային վարչության մեջ, ինչպես ասված էր նրա ղեկավարման համար մշակված կանոնների նախագծում, որը որոշ լրացումներով և փոփոխություններով հաստատվել էր բարձրագույն հրամանագրով և կիրառվել մարզի կյանքում, հարցերը լուծվում էին երկու խորհրդականների զեկուցումների հիման վրա և հաստատվում զինվորական պետի կողմից։ Եթե հարցն այնպիսի բնույթ ուներ, որ պահանջում էր՝ ավելի մանրամասն իմանալ նրա որոշիչությունը, և նրա լուծումը անմիջապես կապված էր տեղական պայմանների ու բնակչության հետ, ապա այդպիսի դեպքերում լսում էին երկու ասեսորների կարծիքը և, անհրաժեշտ գտնելու դեպքում, որոշման ժամանակ հաշվի առնում դրանք։

Շուտով ակնհայտ դարձավ, որ նմանօրինակ վարչաձևը անձեռնտու է և շատ հեռու է ցարական-միապետական վարչական կարգից։ Հայկական մարզում գործում էին տակավին խանական շրջանից մնացած վարչական կառավարման շատ ձևեր ու սովորություններ։ Հայկական մարզում մի տեսակ կոնգլոմերատ էին կազմում խանական-պարսկականն ու ցարական-ռուսականը։ Ինչպես մյուս բնագավառներում, այնպես և այստեղ՝ մարզի վարչական կառուցվածքը պետք է որ փոփոխեին և այն ավելի մոտեցնեին կայսրության մյուս մարզերում գոյություն ունեցող վարչաձևին։

Այդպիսի փոփոխություն կատարվեց 1830 թ. Ա. Ճավճավաձևին փոխարինած Բեհբութովի ժամանակ, 1833 թվականին։ Կովկասի գլխավոր կառավարիչ, զորքերի հրամանատար Ռոզենը՝ Բեհբութովի և Վրաստանի նահանգապետ Պալավանդովի հետ միասին (վերջինս Ռոզենի հրամանով որոշ ժամանակ շրջել էր Հայկական մարզում և զեկուցագիր ներկայացրել նրա արդի վիճակի և կատարվելիք անհրաժեշտ փոփոխությունների մասին, ընդ որում նա շատ դժգոհ է եղել գոյություն ունեցող վարչական վիճակից)[1] Հայկական մարզի կառավարման կառուցվածքի մասին ներկայացնում է մի նախագիծ[2], որը բարձրագույն հրամանով հաստատվում է 1833 թ. հունիսի 23-ին[3]։

[1] АКАК, т. VIII, էջ 505—506, 508։
[2] Նույն տեղը, № 389։
[3] 2-ое полное собрание законов, т. VIII, № 6282.

Հայկական մարզի կառավարիչ գեներալ Բեհբութով (Երևանի պատմության թանգարան)։

Այս նոր օրենքը մի քայլ ևս առաջ գնաց նախկին խանական «օրենքների» քաոսը վերացնելու և հաստատուն կարգ ու կանոն մտցնելու ուղղությամբ։ Սակայն դրա հետ միասին, նոր օրենքով նախկին մարզային վարչությունը, որը որոշ չափով կոլեգիալ օրգանի էր նման, վերածվեց սոսկ մարզի պետի դրասենյակի, և ավելի լայնացան վարչության պետի իրավունքները[1]։ Դրան համապատասխան, նախկին խորհրդականների փոխարեն ստեղծվում են ոստիկանական (կամ կատարողական), ֆինանսական-տնտեսական և դատական հատուկ բաժիններ։ Տնտեսական և ֆինանսական մասերը միացնելով կազմվեց մի հատուկ վարչություն, որը կոչ-

[1] В. Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, էջ 250։

վեց «Հայկական մարզի հարկերի և պարհակների հավաքման վարչություն»։ Քրեական գործերը քննելու իրավունքը, որը առաջ պատկանում էր վարչությանը, ըստ նոր վարչաձևի, տրվեց Երևանում գտնվող ռազմական դատարանին։ Այդ դատարանը գործում էր քաղաքի զինվորական պարետի նախագահությամբ։ Վերջինս քննելով քրեական գործերը, դրանք իր վճիռով հանդերձ, նայած գործի ծանրությանը, ուղարկել է մարզի պետին կամ Կովկասի գլխավոր կառավարչին՝ հաստատելու համար[1]։ Նախկինում գոյություն ունեցող քաղաքային դատարանների փոխարեն կազմվում են երկու պրովինցիալ դատարաններ՝ Երևանում և Նախիջևանում։ Պրովինցիալ դատարանը բաղկացած էր դատավորից, ատենակալից, որոնք երկուսն էլ նշանակվում էին ռուս աստիճանավորներից, և երկու տեղացի ատենակալներից[2]։ Այդ դատարաններին իրավունք էր վերապահվում քննելու միայն քաղաքացիական հայցերը՝ պետության ու մասնավոր մարդկանց և մասնավոր մարդկանց միջև եղած հայցերը[3]։ Պրովինցիալ դատարանները առաջին ինստանցիան էին համարվում, և դրանց վճիռը ենթակա էր բեկման։ Երբ հայցը վերաբերում էր ոչ ավելի քան 200 ռուբլու[4] գործերին, ապա դատարանի վճիռը հաստատվում կամ բեկանվում և նրա փոխարեն նոր վճիռ էր կայացնում մարզի պետը, իսկ եթե գործի արժեքը 200 ռուբլուց անցնում էր, ապա այն հաստատելու կամ բեկանելու իրավունք ուներ Կովկասի գլխավոր կառավարիչը, որը առհասարակ համարվում էր բոլոր կարգի հայցերի վերջնական լուծողը[5]։ Այդ դատական օրգանների հետ միասին նոր վարչաձևը ուժի մեջ է թողել նաև նախկին հոգևոր դատարանները (որոնք Հայկական մարզում երեքն էին՝ մեկը Երևանում, մեկը Նախիջևանում, մեկն էլ Օրդուբադում) և տանուտերների դատ ու դատաստան տեսնելու իրավունքը[6]։ Ոստիկանական վարչությունը Նախիջևանի և Օրդուբադի պրովինցիաներում մնում է էքսպանխանի և Շահ-Ալի-բեկի ձեռքին, իսկ Երևանի պրովինցիան բա-

[1] В. Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, էջ 250. տե՛ս նաև И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 460, АКАК, т. VIII, էջ 506—507։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 460։

[3] В. Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, էջ 251։

[4] Շոպենի հաղորդման համաձայն պրովինցիալ դատարանները քննում էին մինչև 500 ռուբլու արժողության հասնող հայցերը (տե՛ս И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 460)։

[5] В. Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, էջ 251։

[6] Նույն տեղը։

ժանվում է ոստիկանական չորս շրջանների՝ օկրուգների՝ Երևանի, Շարուրի, Սարդարաբադի և Սուրմալուի, որոնց գլուխ կանգնում են օկրուգային պետերը։ Օկրուգների պետերը նշանակվում էին քաղաքացիական ռուս աստիճանավորներից կամ զինվորականներից, նրանք ամբողջովին ենթարկվում էին մարզի պետին և տեղական բնակիչներից ունեին 2-ական օգնականներ[1]։ Նոր հաստատված այդ վարչաձևով նախկին մահալները մնացին նույնը և՛ իրենց տերիտորիալ սահմաններով, և՛ վարչական վիճակով, նույնը մնաց նաև գյուղական համայնքների կառավարման կարգը[2]։

Ինչպես ասվեց, մարզի կենտրոնը Երևանն էր։ Մարզային վարչության նստավայրը Երևանի բերդն էր, որը հետագայում էլ մնաց որպես նստավայր Երևանի գավառի, ապա նահանգական վարչության համար՝ ընդհուպ մինչև 60-ական թվականները, երբ Երևանի նահանգական վարչության համար նոր շենք կառուցվեց և բերդն իբրև վարչական նստավայր՝ լքվեց։

Հայկական մարզի կազմակերպումով ցարական կառավարությունը, կարելի է ասել, երկու նպատակ էր հետապնդում, առաջին՝ այն ծառայեցնել իբրև միջանկյալ վարչական օղակ խանական շրջանի վարչաձևը աստիճանաբար ոչնչացնելու և ցարական վարչաձևը արմատավորելու համար, իսկ երկրորդ՝ անունը դնելով «Հայկական մարզ», դրանով իսկ արտաքնապես ցույց տալ, որ իր վարչական բաժանման մեջ հաշվի են առնված տեղական-ազգային պայմանները և որ իբր նրա մեջ միավորված հայկական շրջաններին, որոնք կազմում էին Ռուսաստանին անցած Արևելյան Հայաստանի մեծ մասը, տրված են որոշ արտոնություններ։ Հայկական մարզի վարչաձևը այդպիսին ներկայացնելու փորձեր էին փաստորեն ժամանակավոր վարչության մեջ Ներսեսին մոտնելը, մարզի մշտական վարչությունը հաստատելիս հայ ու աղրբեջանցի երկու ասեսորների ներկայությունն այդ վարչություններում և, վերջապես, 1833 թ. մարզի վարչական վիճակը փոփոխության ենթարկելիս՝ նրա գերբի վրա ցարական երկգլխանի արծվի ու թագի հետ միասին Մասիսը, հայկական թագավորական թագը և էջմիածնի վանքը պատկերելը[3]։ Սակայն հենց նույն փաստերը գալիս են ասելու, որ եթե ցարական վարչաձևը սկզբում հանդուր-

[1] В. Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, էջ 251։

[2] Նույն տեղը։

[3] Հայկական մարզի 1833 թ. հաստատված գերբի նկարագրությունը տե՛ս И. Шопен, Исторический помятник Армянской области, էջ 461—462, կամ АКАК, т. VIII, էջ 961—962։

ժում էր մարզի վարչությունում լիակատար ձայն ունեցող մի հայի առկայությունը, ինչպես կար ժամանակավոր վարչության մեջ, հետագայում այն փոխարինվեց մյայն խորհրդակցական ձայն ունեցող ասեսորով, որը վարչությունում գործերը լուծելիս գրեթե ոչ մի նշանակություն չուներ, իսկ 1833 թվականից այդ էլ վերացվեց, և մարզային վարչությունն ամբողջապես դարձավ ռուսական՝ մարզի պետի ամենազոր իրավունքներով հանդերձ։

Որ ցարական կառավարությունը չէր հանդուրժելու որևէ ինքնավարություն կամ դրա նման մի բան, դա արդեն ցույց էր տվել Վրաստանի օրինակը, որը արդեն ավելի քան 30 տարի առաջ էր միացված Ռուսաստանին և չուներ որևէ ինքնավարության հետքն անգամ։ Վրացիները, ինչպես հայտնի է, սկզբնական շրջանում փորձել էին մտնել Ռուսաստանի կազմի մեջ՝ պահպանելով որոշ ինքնավարություն, սակայն դա նրանց չէր հաջողվել, ցարի հրամանով Վրաստանը ճանաչվել էր Ռուսաստանի անմիջական բաղկացուցիչ մասը։ Հայաստանը միացնելու ժամանակ հայկական հայրենասերների մի խումբ (Խ. Լազարյան, Ա. Խուդաբաշյան և ուրիշներ) ևս հատուկ նախագիծ են ներկայացնում Ռուսաստանի հովանավորությամբ Հայաստանում ինքնավար իշխանություն ստեղծելու համար, բայց մերժում են ստանում։

1833 թ. օրենքով չավարտվեցին Հայաստանի վարչաձևի փոփոխությունները։ Դեռևս վերջնական չէր համարվում նաև Անդրկովկասի մյուս մասերում տիրող վարչական կարգը։ Ցարական կառավարությունը ձգտում էր Անդրկովկասը լիովին և վերջնականորեն ենթարկել ռուսական պետության վարչաձևին, ամենուր ոչնչացնել տեղական և պարսից տիրապետության շրջանից մնացած բոլոր ձևերը և հաստատել ռուսական միասնական վարչաձև։ Ցարական պաշտոնյաներից ոմանք (Պասկևիչ, Մենշիկով, Գան և այլն) գտնում էին, որ առանց ձգձգելու անհրաժեշտ է անմիջապես և ամբողջովին Անդրկովկասը ենթարկել ռուսական միասնական վարչաձևին և պետության մեջ գործող ընդհանուր օրենքներին[1], իսկ ոմանք էլ գտնում էին, որ նույն նպատակին պետք է հասնել աստիճանաբար, այնտեղ ռուսական օրենքները մտցնելով ոչ թե միանգամից, այլ քայլ առ քայլ[2]։ Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի վարչական կարգը փոփոխելու համար նշանակվեց հատուկ հանձնաժողով, որի աշխատանքի արդյունքներին և դոր-

[1] АКАК, т. VII, էջ 35—39։

[2] *Հայ ժողովրդի պատմություն, երկրորդ մաս, էջ 46—47։*

ների հետագա ընթացքին կանդրադառնանք քիչ հետո, միայն պետք է նշել, որ Հայկական մարզը 1833 թ. վարչական ռեֆորմից հետո տերիտորիալ և վարչական առումով անփոփոխ է մնում մինչև 1840 թ.։

1829 թվականից Անդրկովկասը վարչականորեն բաժանված էր 6 տարբեր կարգի միավորների, դրանք էին.

1. Բուն Վրաստանը, որը բաղկացած էր 6 գավառից։

2. Հինգ դիստանցիա (շրջան)՝ Բորչալու, Ղազախ, Շամշադին, Փամբակ և Շորագյալ։

3. Յոթ պրովինցիա՝ Ղարաբաղ, Շաքի, Շիրվան, Բաքվի պրովինցիա, Կուբան, Դերբենդի պրովինցիա և Ախալցխա։

4. Չորս մարզ՝ Իմերեթիա, Մինգրելիա, Գուրիա և Հայկական մարզ։

5. Թալիշի խանությունը։

6. Լեռնային զանազան ժողովուրդների զբաղեցրած տերիտորիաները[1]։

Դրանք իրարից տարբերվում էին և՛ Ռուսաստանին միացվելու ժամանակով, և՛ իրենց վարչաձևով։ Մարզերը, որոնց թվում և Հայկականը վարչականորեն կիսառազմական, կիսաքաղաքացիական բնույթ ունեին։

Հայկական մարզը, ինչպես նշվեց, կազմված էր նախկին Երևանի ու Նախիջևանի խանություններից և Օրդուբադի (նախկինում՝ Ազաջիրան) շրջանից։ Հաշվի առնելով նախկինում գոյություն ունեցող այդ վարչակարգը, Հայկական մարզն էլ համապատասխան դրան բաժանվեց վարչական երկու միավորի՝ Երևանի ու Նախիջևանի պրովինցիաների, որոնք մասնատվեցին օկրուգների։ Երևանի պրովինցիան մասնատված էր 4 օկրուգների՝ Երևանի, Շարուրի, Սուրմալուի և Սարդարաբադի[2]։ Երևանի օկրուգն իր մեջ ընդգրկում էր նախկին Գյոգչայի, Դարալիշագի և Կըրխ-բուլաղի մահալները, Շարուրի օկրուգը՝ Շարուր, Վեդիբասար, Գառնիբասար և Զանգիբասար մահալները, Սուրմալուի օկրուգը՝ Սուրմալուի, Դարաքենդ-Փարչևնի մահալները և Գառնիբասար և Վեդիբասար մահալների այն մասերը, որոնք ընկած էին Արաքսի աջ ափին, իսկ Սարդարաբադի օկրուգը կազմված էր նախկին Սաթլինի, Թալինի,

[1] С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. I, Тифлис, 1907, էջ 65։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 448։ *Տե՛ս նաև* Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. I, Тифлис, 1890, էջ 12—14։

Սեիդլի-Ախտախլիի, Ապարանի, Կարբիբաւարի և Սարդարաբադի մահալներից[1]։

Նախիջևանի պրովինցիան կազմված էր երկու օկրուգից՝ Նախիջևանի և Օրդուբադի[2]։

Երևանի պրովինցիայի օկրուգների գլուխ էին կանգնած օկրուգային պետերը, իսկ Նախիջևանի ու Օրդուբադի օկրուգներում ուժի մեջ մնաց նախկին նայիբների իշխանությունը, ինչպես նաև կազմվեցին ոստիկանական վարչություններ, որոնց գլուխ ևս կանգնած էին նույն նայիբները։ Թե՛ Երևանի պրովինցիայի օկրուգների պետերը և թե՛ Նախիջևանի օկրուգների նայիբները նշանակված էին Հայկական մարզի վարչության։ Երկու պրովինցիաներում էլ մահալների ու գյուղական համայնքների վարչաձևը մնաց հինը՝ պարսկականը։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց և այնտեղ նոր օրենքներ ու վարչակարգ մուծելուց հետո խանական շրջանի կամայականությունները մեծ մասամբ վերանում են. այժմ շատ բնագավառներում սկսում է գործել օրենքը, որ պարսկական տիրապետության շրջանում իրեն այդպիսին բառիս բուն իմաստով գոյություն չուներ։ Սակայն ցարական աստիճանավորների համար ևս խորթ չէին անօրինականությունները և կամայականությունները։ Այդ տեսակետից առանձնապես աչքի է ընկել հայազգի գեներալ Իշխան Բեհբութովը։ Դեռևս 1826 թ. վերջերին Շաքիից, Թիֆլիսից, Ղարաբաղից, Կզլարից, Աստրախանից և Կուբայից ստացված տարբեր բնույթի տեղեկություններից բաղկացած մի փաստաթղթի մեջ Ղարաբաղից հաղորդում են նաև այն մասին, որ Բեհբութովը այնտեղ կատարել է շատ անօրինականություններ, անօրինական ճանապարհով այնտեղ տեր է դարձել մեծ կալվածքների և ճորտացրել բազմաթիվ բնակիչների[3]։

Ցարական աստիճանավորների, որոնց թվում գլխավորապես Հայկական մարզի պետ նույն գեներալ Բեհբութովի դեմ Նիկոլայ I-ին խիստ բողոքներ են ներկայացրել Երևանի բնակիչները, երբ 1837 թ. հոկտեմբերի սկզբներին ցարը եղել է Երևանում[4]։ Այստեղ բնակչությունը հավատ ընծայելով «հայր ցարի» «բարությանը», նրան գանգատվում է, որ աստիճանավորները իրենց ծանրաբեռնել են չափից ավելի հարկերով և բեգլարով, առանձնապես մեծ մեղադրանքներ ներկայացնելով Բեհբութովի դեմ։ Մինչ այդ, ցարը իր աստիճանավորների դեմ ուղղված բողոքներ էր լսել նաև Սարդարաբադում, որտեղ ժողովուրդը նրա առաջ փետրահան արած մի նիհար ու կենդանի աքաղաղ էր բերել, կամենալով նրան հասկացնել, որ ցարական աստիճանավորները իրենց այդ աքլորի վիճակին են հասցրել[1]։ Բնակչությունը բողոքել է նաև ցարական աստիճանավորների կաշառակերության դեմ, որը ևս մեծ չափեր էր ընդունել[2]։

Հայկական մարզում կային երեք քաղաքներ՝ Երևան, Նախիջևան և Օրդուբադ[3]։ Հետագայում, երբ կազմակերպվեց Երևանի նահանգը, նրա քաղաքների թիվը հասավ 5-ի, որովհետև նրա մեջ մտավ նաև Ալեքսանդրապոլը, որը մինչև 1837 թ. գյուղ էր և հայտնի էր Գյումրի (պատմական Կումայրի) անունով, իսկ այդ թվականից վերածվեց բերդի և կոչվեց Ալեքսանդրապոլ, 1840 թվականից սրդեն անցնելով քաղաքների շարքը։ Մյուս՝ 5-րդ քաղաքը Երևանի նահանգի Նոր Բայազետն էր, որն առաջացավ ներգաղթի շնորհիվ, նախկին Գավառ գյուղատեղում։ Նրա առաջացումը նպաստեցին տեղական առևտրի զարգացումը և գավառի (Նոր Բայազետի) կենտրոն լինելը։ Նշված բոլոր քաղաքների մեջ և՛ իր տնտեսությամբ, և՛ վարչական վիճակով ու խաղացած դերով այդ ժամանակներում ամենից նշանավորը Երևանն էր՝ Հայկական մարզի կենտրոնը։

Երևան քաղաքի վարչական ապարատն ու կառավարումը շատ պարզ էին։ Նրա կառավարող վարչական ապարատը բաղկացած էր միայն տարբեր դերք ու պարտականություններ ունեցող ռուսական մի քանի աստիճանավորներից և տեղացի բնակիչներից ճշտական նակվող պաշտոնյաներից։ Քաղաքի կառավարման ապարատը, այսպես կոչված վարչությունը բաժանված էր երկու մասի՝ ոստիկանական և դատական, որոնց առանձին-առանձին տրված էին գործելու կոնկրետ կանոններ[4]։ Դրանցից բացի, քաղաքն ուներ իր

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 448։
[2] Նույն տեղը։
[3] ЦГВИА, ф. ВУА, д. 894, л. 29.
[4] Ա լ. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Բ., էջ 444։

[1] Ա լ. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Բ., էջ 434։
[2] Տե՛ս նույն տեղը, էջ 446, ինչպես նաև՝ Մ. Վ ա գ ն ե ր, Ճանապարհորդութիւն ի Հայաստան, քաղելով Քարգմանեց Հ. Փիլիպպոս Ճամճեան, Վիեննա, 1851, էջ 36։
[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 463։
[4] АКАК, т. VII, էջ 489։

գանձապետը (казначей), որը ենթարկվում էր մարզային ֆինանսական վարչությանը։ Սկզբում՝ 1829 թ., երբ նոր էր կազմված Հայկական մարզը, Երևանի քաղաքային ոստիկանական վարչությունը բաղկացած էր ոստիկանապետից և նրա երկու օգնականներից, որոնցից մեկը նշանակվում էր հայերից, մյուսը՝ ադրբեջանցիներից[1]։ Քաղաքի կառավարմանը մասնակցող մյուս, ցածր պաշտոնյաները թաղամասերի ավագներն էին՝ յուզբաշիները կամ մելիքները, որոնք Երևանում չորս էին, յուրաքանչյուր թաղամասում՝ մեկ յուզբաշի կամ մելիք[2]։ Հետագայում, 1833 թվականին, երբ Հայկական մարզի համար սահմանվում է նոր վարչաձև, փոփոխության է ենթարկվում նաև Երևանի քաղաքային ոստիկանական վարչությունը։ Ըստ այդ նոր օրենքի, Երևանի քաղաքային ոստիկանությանը ոստիկանապետից բացի տրվում են և երկու ուրիշ ռուս աստիճանավորներ, որոնք պետք է ծառայեին իբրև կատարածուներ (пристав)[3]։ Երևանի ոստիկանական վարչությունը ենթարկվում էր մարզային կառավարչությանը։

Քաղաքի կառավարման ապարատի դատական մասի գծով ևս 1833 թ. փոփոխության ենթարկվեց 1829 թ. սահմանված օրենքը։ 1829 թ. Հայկական մարզի կազմակերպման ժամանակ ստեղծվել էր և Երևանի քաղաքային դատարան, որի նախագահը համարվում էր ոստիկանապետը, իսկ անդամները՝ քաղաքի գանձապետը և թաղամասային չորս յուզբաշիները կամ ավագները[4]։ Կովկասի կառավարչությունը դժգոհ էր այդ կարգի դատարանից։ Պալավադովը Կովկասի կառավարիչ Բարոն Ռոզենին 1833 թ. փետրվարի 3-ին գրած իր զեկուցագրի մեջ խոստովանում է, որ այդ դատարանում փաստորեն վճիռը կայացնում է միայն ոստիկանապետը, որը միաժամանակ և քննիչ է, իսկ գանձապետը՝ զրաղված լինելով իր պարտականությունների կատարմամբ, սովորաբար դատական նիստերին չի մասնակցում[5]։ 1833 թ. վարչական օրենքով, ինչպես տեսանք, վերացվում է Երևանի քաղաքային դատարանը և դրա փոխարեն կազմակերպվում պրովինցիալ դատարանը, որի մասին խոսվեց վերևում։

Նշված հիմնարկներից և պաշտոնական մարդկանցից բացի, առաջվա նման քաղաքի գեկավարմանը զգալի մասնակցություն

1 2-ое полное собрание законов, т. IV, № 3144.
2 Նույն տեղը։
3 АКАК, т. VIII, էջ 507, № 388։
4 Նույն տեղը, էջ 505։
5 Նույն տեղը, էջ 505—506։

էին ունենում նաև խոշոր վաճառականները, ինչպես և, մասամբ, համքարությունների ավագները, հոգևոր դատարանը և այլն։ Ռուսաստանի քաղաքներում XIX դ. առաջին կեսին գործող այսպես կոչված «վեցձայնավոր դուման», որը հաստատվել էր 1785 թ. Եկատերինա II-ի կողմից և ուներ դասային բնույթ[1], Երևանում (ինչպես և Ախալցխայի մյուս քաղաքներում) գոյություն չուներ, նրա կառավարման ապարատը սահմանափակված էր միայն նշված ծառներով։

Ռուս-պարսկական պատերազմը վերջանալուց հետո, ուշադրությունը ռուսական տեղական զինվորական պետերը և նրանց զեկուցագրերի հեղինակները՝ նաև մայրաքաղաքի բարձրաստիճան զինվորական ու քաղաքացիական պաշտոնյանները, ընդհուպ մինչև ինքը՝ Նիկոլայ I ցարը, մեծ նշանակություն են տալիս Երևանի ստրատեգիական դիրքին և անհրաժեշտ գտնում նրա բերդում կատարել վերանորոգումներ, պաշտպանական նոր կառուցումներ, դարձնելով այն ռուս-պարսկական և ռուս-թուրքական սահմանագլխի ամենակարևոր ստրատեգիական կետը։

Երևանի պաշտպանական նշանակության մասին Մոսկվայի Ռազմա-պատմական արխիվում պահվող բազմաթիվ փաստաթղթերից մեկի մեջ, որը վերաբերում է 1828 թվականի սկզբներին, հետևյալն է գրված. «Ստրատեգիական առումով այս կետը (Երևանը — Բ. Հ.) խիստ կարևոր է. (նա — Բ. Հ.) գտնվելով երկու վանը — Բ. Հ.) խիստ կարևոր է. (նա — Բ. Հ.) գտնվելով երկու սահմանների միջև ապահովում է մեր հարաբերությունները Հայկական մարզի հետ, պաշտպանում է Պարսկաստանից ու Բայազետից եկող ճանապարհները և թույլ տալիս Պարսկաստանի ու Թուրքիայի դեմ գործողությունների համար (այստեղ — Բ. Հ.) տեղադրել ռազմական և ուտելիքի պաշարների գլխավոր պահեստարանը (депо)»[2]։

Երևանի բերդը ամրացնելու համար Հայկական մարզի կառավարիչ Ալ. Ճավճավաձեն հատուկ զեկուցագրով դիմում է Պասկևիչին, իսկ վերջինս էլ՝ գլխավոր շտաբի պետ Դիբիչին[3], որպեսզի կևիչին, իսկ վերջինս էլ՝ գլխավոր շտաբի պետ Դիբիչին[3], որպեսզի կառավարությունը դրա վերանորոգման համար բաց թողնի 5000 ռուբլի։ 1828 թ. մայիսի 22-ին, Պասկևիչի զեկուցագրին տրվում է դրական պատասխան, կառավարությունը բաց է թողնում նրա խնդրած գումարը[4] և պահանջում, որպեսզի առանց հետաձգելու

1 История СССР, т. II, Москва, 1954, էջ 35։
2 ЦГВИА, ф. ВУА, д. 4518, л. 42.
3 Նույն տեղը, թ. 13։
4 Նույն տեղը, թ. 15։

համապատասխան կարգադրություններ անի Երևանի բերդը կարգի բերելու և նրա պաշտպանունակությունը ուժեղացնելու համար։

Երևանի բերդում կատարվելիք կառուցվածքները պետք է ղեկավարեր զինվորական պարետը, որի տրամադրության տակ էին դրել ինժեներական ծառայության շտաբս-կապիտան Վիդինիկոտվին և ինժեներ Սիկաշևին։ Ինժեներ գեներալ-մայոր Տրուզսոնի կողմից ցուցում է տրվում, որպեսզի սկզբնական շրջանում բերդը բերվի միայն նախնական վիճակին, այսինքն՝ այն վերականգնվի այնպիսի վիճակով, ինչպիսին ուներ պարսկական տիրապետության վերջին շրջանում[1]։ Տրուզսոնը նշում է, որ ժամանակակից ռազմական արվեստին համապատասխան ամրություն տալու համար՝ Երևանի բերդը պետք է հիմնովին վերակառուցվի, միայն պարսկական շրջանի պաշտպանական կառուցվածքների վերականգնմամբ այն չի կարող լիովին պիտանի լինել ժամանակակից պայմաններում, մանավանդ, որ բերդի շուրջը կան նրա վրա իշխող մի քանի բարձրություններ[2]։

Հաշվի առնելով կլիմայական պայմանները, Տրուզսոնը գրանում է, որ ամռանը Երևանի կայազորը բերդում միայն պահակ թողնելով, պետք է ճամբար գնա ոչ հեռու գտնվող բարձրադիր շրջանները[3]։ Դրա հետ միաժամանակ, նա նշում է, որ բերդը պարսիկների ժամանակ իր ջուրը ստանում էր Կրրխ-բուլաղից՝ ընդհատնյա խողովակներով, որոնց վիճակը իր համար ապահովիչ պարզ չէ[4]։

Կովկասյան կորպուսի հատուկ մասնագետ զինվորական-ինժեներների, Հայկական մարզի կառավարիչ Ալ. Ճավճավաձեի և զորքերի գլխավոր հրամանատար Պասկևիչի միջնորդությամբ կառավարության կողմից բերդի վերանորոգման համար պահանջվող գումարը բաց թողնելուց բացի՝ Երևանի բերդը դարձվում է առաջին կարգի բերդ, իսկ նրա կայազորը ըստ հրամանի պետք է բաղկացած լինի 3000 մարդուց։ Այնուհետև, կարգադրվում է խաղաղ ժամանակներում հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին անցանկալի հիվանդություններից զերծ պահելու նպատակով, բերդում եղած զորքերը տեղափոխել բարձրադիր շրջաններ, կայազորի վայրում թողնելով միայն հսկիչ պահակ[5]։

1 ЦГВИА, Ф. ВУА, д. 4518, л. 30.
2 Նույն տեղը, թ. 29—31։
3 Նույն տեղը, թ. 31։
4 Նույն տեղը։
5 Նույն տեղը, թ. 14 և 41—42։

Չպետք է կարծել, որ Անդրկովկասում ցարական կառավարության կողմից պաշտպանական առումով էր միայն Երևանը դարձել հոգատարության առարկա։ Ռուսաստանը Թուրքիայի և Պարսկաստանի, ինչպես և դրանց իր դեմ հրահրող արևմտաեվրոպական պետությունների՝ Անդրկովկասի նկատմամբ ունեցած զավթողական պլանները խափանելու համար այն ամրացնում էր բոլոր միջոցներով։ Այդ լայնածավալ երկրի պաշտպանությունը ապահովելու և այն՝ նոր սահմաններով Մերձավոր Արևելքում իր հավանական հակառակորդների դեմ ամրացրված ֆորպոստ դարձնելու նպատակով՝ այնտեղ վերակառուցում կամ վերանորոգում է հնից պահպանված բերդերը։

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի ավարտումից հետո շուտով մի մեծ հանձնաժողով է հավաքվում Թիֆլիսում[1]։ Այդ հանձնաժողովը որոշում է Անդրկովկասում կատարվելիք պաշտպանական աշխատանքների բնույթն ու ծավալը, այն կետերը, որտեղ պետք է կատարվեն այդպիսի աշխատանքներ, առաջարկելով այդ կետերի մի մասը դարձնել շտաբային բերդեր՝ նշանակելով սրանց կարգը, կայազորի անձնակազմի քանակը և դրանք սարքին վիճակում պահելու համար ամեն տարի բաց թողնվելիք անհրաժեշտ գումարի չափը[2]։

Հանձնաժողովը Անդրկովկասում ընդամենը նշում է 13 քաղաք կամ բնակավայր, որոնք պետք է մտցվեին կարգ ունեցող բերդերի ցուցակի մեջ։ Դրանց համար նշանակում է երեք կարգ՝ առաջին, երկրորդ և երրորդ կարգի բերդեր։ Առաջին կարգի մեջ մտցնում է երեք բերդ՝ Թիֆլիսը, Երևանն ու Շուշին, երկրորդ կարգի մեջ՝ Գյումրին ու Բաքուն, իսկ երրորդ կարգի մեջ՝ Ախալցխան, Աբասաբադը, Լենքորանը, Փոթին, Քութաիսը, Հին Շամախին, Նոր Ջակաթալան ու Դերբենդը. երրորդ կարգի այս բերդերից առաջին երեքը՝ Ախալցխան, Աբասաբադը և Լենքորանը գտնվում էին պաշտպանության առաջին գծի վրա, իսկ մյուս 5-ը՝ երկրորդ գծի[3]։ Շտաբային համարվող այդ 13 բերդերի կայազորների ամբողջ անձնակազմը նախատեսվում է բնդամենը 28000 մարդ, իսկ դրանց ամեն տարվա վերանորոգման համար՝ 25000 ռուբլի արծաթ դրամ[4]։

1 ЦГВИА, ф. ВУА, д. 4518, л. 38.
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը։
4 Նույն տեղը։

Ավելի պարզ պատկերացում կազմելու համար աղյուսակի ձևով ներկայացնենք Անդրկովկասի շտատային 13 բերդերը, նշելով նաև դրանց կարգերը, կայազորների անձնակազմի թիվը և վերանորոգման համար տրվող դումարների չափը։

Աղյուսակ 13

Անդրկովկասի շտատային բերդերը

№ կ/կ	Բերդի անուններ	Կարգը	Որ դծի վրա է գտնվում	Կայազորի մարդկանց թիվը	Ծուրքանչյուր տարվա նորոգման համար բաց թողնվող դումարը
1	Թիֆլիս	I	—	6000	4000 ռ. արծաթ
2	Երևան	I	—	3000	2500 »
3	Շուշի	I	—	4000	2500 »
4	Գյումրի	II	—	3000	2000 »
5	Բաքու	II	—	2000	2000 »
6	Ախալցխա	III	I դծի	2000	1500 »
7	Արաքսարտ	III	»	1500	1500 »
8	Լենքորան	III	»	1000	1500 »
9	Փոթի	III	II դծի	1000	1500 »
10	Ռուխթախ	III	»	1000	1500 »
11	Հին Շամախի	III	»	1000	1500 »
12	Նոր Ջակաթալա	III	»	1500	1500 »
13	Դերբենդ	III	»	1000	1500 »
	Ընդամենը			28000	25000 ռ. արծաթ[1]

Բերված փաստերը ցույց են տալիս, որ Երևանը պարսկական լծից ազատագրվելուց հետո կարևոր նշանակություն ուներ ոչ միայն վարչական առումով՝ լինելով Հայկական մարզի կենտրոնը, այլև ռազմա-ստրատեգիական տեսակետից։ Նա հանդիսանում էր ամբողջ Անդրկովկասում եղած առաջին կարգի բերդերից մեկը, չնայած գոռող Նիկոլայ Պալկինը 1837 թվականին Երևան այցելած ժամանակ այն կոչել է «կավե կճուճ» և ափսոսել՝ Պասկևիչին դրա գրավման համար «Երևանի կոմս» տիտղոս տալը[2]։

Ժամանակագրության որոշ խախտում կատարելով՝ պիտի ասել, որ Երևանի ստրատեգիական նշանակությունը մեծ մնաց նաև 50-ական թվականներին։ Սակայն այդ ժամանակներում հրետանային զենքը ավելի ու ավելի էր կատարելագործվել, իսկ պարսկական շրջանի Երևան բերդը, որտեղ Երևանի գրավելուց հետո ռուսական զինվորական իշխանություններն այնուամենայնիվ արմատական փոփոխություններ չէին կատարել, դնելով պաշտպանական տեսակետից ավելի ու ավելի է դառնում ոչ պիտանի։ Նրա արժեքը մեծապես ընկնում էր ոչ միայն այն բանի հետևանքով, որ պարիսպներն ու աշտարակները կավակերտ էին ու խարխուլ, այլև մոտակայքում նրա վրա իշխող բարձրությունների առկայությամբ և վատ կլիմայական պայմաններով։

Կովկասի փոխարքա իշխան Ա. Ի. Բարյատինսկին 1857—1859 թթ. համար գրված իր հաշվետվության մեջ, անդրադառնալով Անդրկովկասի Թուրքական սահմանագլխին եղած երեք բերդերի՝ Ալեքսանդրապոլի, Ախալցխայի և Երևանի վիճակին, նշում է, որ դրանք ներկա դրությամբ չեն կարող բավարարել ինքնուրույն բերդ լինելու պահանջներին, այսինքն՝ չեն կարող ժամանակակից զորքերի պաշարմանը դիմանալ[1]։ Երևանի բերդի վերաբերյալ նա մասնավորապես հետևյալն է գրում իր զեկուցագրի մեջ. «Երևանի բերդը՝ անդիմացկուն նյութի, որից նա պատրաստվել է, նրա վրա իշխող բարձրությունների առկայության, որոնք գտնվում են հրանոթային կրակի հեռահարությունից ավելի մոտ, և գրեթե ավերակ կլիմայի պատճառով ներկա վիճակում չի կարող մնալ։ Քանի որ նրա մեջ եղած ռազմական շատ շենքեր միանգամայն խարխլված լինելու պատճառով պետք է շուտով նորից կառուցել, ուստի ավելի հարմար է քաղաքի և Քանաքեռ գյուղի միջև, գոյություն ունեցող քաղաքի կենտրոնից 3 վերստ հեռավորության վրա, բարձր և բաց տեղում կառուցել մի նոր ավելի փոքր բերդ»[2]։

Միանգամայն տրամաբանական է փոխարքայի անհանգրստությունը։ Ղրիմի պատերազմի (1853—1856 թթ.) և նրան հաջորդած տարիների փորձը ցույց տվեց, որ Թուրքական սահմանագլխին գտնվող Անդրկովկասի բերդերը՝ Ախալցխան, Ալեքսանդրապոլը և Երևանը պետք է պահել ժամանակակից ռազմավետին համապատասխանող վիճակում։ Սակայն, այդ նույնը չի կարելի ասել հետագա շրջանի մասին։ 1877—1878 թթ. ռուս-Թուրքական պատերազմից հետո, երբ Ռուսաստանի սահմանը

[1] Կազմված է ըստ ЦГВИА, ф. ВУА, д. 4518, л. 38-ում բերված աղյուսակի։

[2] Տե՛ս Ա. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Բ., էջ 445։

[1] АКАК, т. XII, էջ 1303։

[2] Նույն տեղը։

հակայական չափով ընդարձակվեց Թուրքիայի հաշվին և Ալեքսանդրապոլն ու Ախալցխան դադարեցին սահմանային լինելուց։

Երևանի ուղղությամբ սահմանային փոփոխություններ տեղի չունեցան, սակայն քանի որ Թուրքիան ևս էր շպրտված Կարսից այն կողմ, իսկ Սուրմալուի կողմում, որտեղ թուրքական սահմանը համեմատաբար մոտ էր Երևանին, երկու պետությունների միջև սահմանագիծ էր անմատչելի Հայկական Պար լեռնաշղթան, Պարսկաստանի հետ էլ 1826—1828 թթ. պատերազմից հետո Ռուսաստանը ընդհարման շարժառիթներ չուներ, ուստի XIX դարի 50-ական թվականների վերջերից Երևանի բերդը միանգամայն կորցնում է իր նշանակությունը, և 1864 թվականին ընդհանրապես դադարում բերդ լինելուց։

Երևանի բերդի պատմության համար, իբրև ընդհանուր օրինաչափություն, կարելի է արձանագրել, որ այն Պարսկաստանից գրավելուց հետո սկզբնական շրջանում պահպանել է իր նախկին նշանակությունը, սակայն հետագայում աստիճանաբար կորցրել է իր դերը՝ ընդհուպ մինչև վերացումը։

Մենք տեսանք, որ 30-ական թվականներին Անդրկովկասում գոյություն ունեին 6 կարգի վարչական միավորներ, որոնք բոլորն իրարից տարբերվում էին իրենց կառավարման օրգաններով, վարչական և ռազմական կարգ ու կանոնով և այլն։ Ցարական կառավարությունը չէր հանդուրժելու այդպիսի զանազանակերպ վարչաձևեր, նրան անհրաժեշտ էր ամենուրեք կիրառել կայսրության ընդհանուր օրենքներն ու վարչական բաժանման սիստեմը։

1838 թ. բարձրագույն հրամանագրով ցարը հաստատում է սենատոր Դանի նախագահությամբ մի հանձնաժողով, որին հանձնարարվում է տեղում ծանոթանալ ու քննել Անդրկովկասի վարչական կառուցվածքի մասին եղած բոլոր առաջարկներն ու նախագծերը և կազմել մի կանոնադրություն, որի հիման վրա պետք է վարչական բաժանման ենթարկվի Անդրկովկասը և որոշվի նրա վարչական միավորների կառավարման ձևերը[1]։

Հանձնաժողովի կատարած աշխատանքների հիման վրա 1840 թ. ապրիլի 10-ին հրապարակվեց հատուկ օրենք[2], ապա բարձրագույն հրամանագիր՝ կառավարող սենատին[3] Անդրկովկասում նոր վարչական կառուցվածք մտցնելու մասին, դրանց հետ

[1] ԱԿԱԿ, т. IX, էջ I։

[2] 2-ое полное собрание законов, т. XV, № 13368.

[3] Նույն տեղը, № 13413։

միասին հրապարակվեց նաև բարձրագույն հրամանագիր՝ ըստ նոր օրենքի պետական պաշտոնատների բացման վերաբերյալ[1]։

Անդրկովկասն այդ, այսպես կոչված, գանյան վարչաձևի հիման վրա կազմեց մեկ նահանգ՝ Վիրա-Իմերեթյան նահանգ անունով և մեկ մարզ՝ Կասպիական մարզը՝ հատուկ ռազմա-օկրուգային կառավարչությամբ։ Վերացվեցին նախկին վեց կարգի վարչական բոլոր միավորները, որոնց թվում և Հայկական մարզը։

Վիրա-Իմերեթական նահանգը ընդգրկում էր Անդրկովկասի մեծ մասը և բաժանված էր 11 գավառների՝ Թիֆլիսի, Գորիի, Թելավի, Բելականի, Քութաիսիի, Ելիզավետապոլի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Նախիջևանի, Ախալցխայի և Գուրիայի։ Կասպիականի մարզը բաժանվեց 6 գավառի՝ Շիրվանի, Ղարաբաղի, Շաքիի, Թալիշի, Դերբենդի և Կուբայի։ Այսպիսով, նախկին Հայկական մարզի տերիտորիան վեր էր ածվել երկու գավառի՝ Երևանի և Նախիջևանի, և դրանք մտցվել Վիրա-Իմերեթյան նահանգի մեջ։

Երևանը դրանով դադարեց մարզի կենտրոն լինելուց և դարձավ համանուն գավառի կենտրոն։ Մոտ 10 տարի վարչական այդպիսի վիճակում մնալով՝ Երևանի, որպես վարչական կենտրոնի, նշանակությունը ընկնում է։ Այստեղ գավառական վարչությունից և կայազորի ինվորական հիմնարկներից բացի՝ պետական-կառավարական այլ հիմնարկներ գոյություն չունեին։

Գանի նախապատրաստած այդ օրենքի նպատակը՝ վարչականորեն Անդրկովկասի ձուլումն էր ռուսական կայսրության մեջ, նրա տեղական պայմանների՝ ազգային առանձնահատկությունների, պատմականորեն ձևավորված յուրահատկությունների ոտնահարումը։ Այդ օրենքով, երկրի կառավարման գործից հեռացվեցին տեղացի բարձրախավայինները՝ բեկերը, աղալարները, մելիքները։ Գավառներում, մահալներում և գյուղերում պաշտոնատար մարդիկ նշանակվեցին կայսրության մեջ ընդունված կարգով։ Ընդ որում, գավառներում և մահալներում կառավարչական ապարատը՝ գավառապետությունը, ոստիկանական շրջանի պետի պաշտոնը և այլն, բացառապես նշանակվում էին ռուս աստիճանավորներից, իսկ գյուղերի ավագները՝ տեղացիներից, ընտրության միջոցով։ Մահմեդական հոգևոր դատարանները զրկվեցին իրենց իրավունքներից, դրանց փոխարեն ստեղծվեցին գավառա-

[1] 2-ое полное собрание законов, т. XV, № 13863.

կան դատարաններ։ Հոգևոր դատարանները ամուսնության և ընտանեկան մանր հարցերից զատ այլևս այլ հայցեր ընդունելու և դրանց մասին վճիռ կայացնելու իրավունք չունեին։

1840 թ. ապրիլի 10-ի այդ օրենքը գնահատվում է որպես Անդրկովկասը ռուսականացման ենթարկելու ռեակցիոն փորձ։ Նրա կիրառումը մեծ անբավականություն է առաջացնում անդրկովկասյան շրջաններում՝ Ալեքսանդրապոլում, Նախիջևանում, Ախալցխայում, Գուրիայում, Բելոկանում և այլուր[1]։ Առանձնապես մեծ դժգոհություն է արտահայտում տեղական ազնվականությունը, որը նոր օրենքով կորցրել էր կառավարմանը մասնակցելու իր նախկին իրավունքները և հեռացված էր վարչական պաշտոններից։ Ցարական կառավարության համար դա անցանկալի էր։ Հասարակության այն խավը, որը տեղում իր համար հենարան պետք է ծառայեր մյուս՝ բնակչության մեծամասն մասը կազմող աշխատավոր զանգվածներին «հյու-հնազանդ» պահելու համար, ելույթի է դուրս եկել նոր վարչաձևի դեմ։ Հետագա բարդություններից խուսափելու և տեղում իր հենարանին որոշ զոհացում տալու նպատակով՝ Նիկոլայ I-ը՝ ռազմական մինիստր Չերնիշևի և պետական քարտուղար Պոզենի միջոցով Անդրկովկասում ծավալված դեպքերի ընթացքին ծանոթանալուց հետո, ստիպված է լինում նահանջել օրենքի որոշ դրույթներից, կամ դրանք կիրառել կրճատված ձևով։ Ամենանշանակալի զիջումն այն էր, որ ցարի կարգադրությամբ իրավունք տրվեց աղալարներին, բեկերին և մելիքներին դրաժել վարչական պաշտոններ։

1840 թվականի ռեֆորմով ցարական ինքնակալությունը ամրացնում է իր դիրքերը Անդրկովկասում։ Այդ ռեֆորմը Անդրկովկասում ցարական ինքնակալության վարած դաղութային քաղաքականության տիպիկ արտահայտություններից մեկն է։ Ճիշտ է՝ նա օբյեկտիվորեն որոշ առաջադիմական դեր խաղաց հին խանական շրջանի վարչաձևերի ու դրանց ուղեկցող կամայականությունների վերացման տեսակետից, ինչպես նկատում է Մ. Ա. Ադոնցը[2], սակայն դա ամենևին էլ չի նվազեցնում ռեֆորմի ռեակցիոն էությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ դրանով չվերացան և չէին էլ կարող վերանալ ցարական աստիճանավորների անօրինական գործարքներն ու կաշառակերությունը։

[1] В. Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, էջ 228—229։

[2] М. А. Адонц, Экономическое развитие Восточной Армении в XIX веке, էջ 104։

1844 թվականին Կովկասը դարձվում է փոխարքայություն, և այստեղ փոխարքա է նշանակվում Մ. Ս. Վորոնցովը։ Ցարական կառավարության կողմից 1840 թ. ապրիլի 10-ի օրենքից կատարած նահանջը և տեղական ազնվականությանը տրված որոշ արտոնությունները տակավին չէին կանխել և չէին էլ կարող կանխել Կովկասում ծավալված դժգոհությունները։ Ուստի, խորամանկ Վորոնցովը, իրեն ներկայացնելով որպես Կովկասի ժողովուրդների «բարեկամ», այստեղ ցարական ինքնակալության շահերը ջերմ կերպով պաշտպանում է զգույշ և արտաքնապես քողարկված քաղաքականությամբ։ Նա նշված օրենքով սահմանված միօրինակ վարչաձևը փոխարինում է Կովկասի տարբեր մասերում տարբեր վարչաձևեր հաստատելով։ 1846 թ. դեկտեմբերի 14-ին, Վորոնցովի ներկայացրած նախագծի հիման վրա հրապարակվում է մի օրենք, որով ամբողջ Անդրկովկասը բաժանվում է չորս նահանգների՝ Թիֆլիսի, Քութայիսիի, Շամախու և Դերբենդի[1]։ Նախկին Հայկական մարզի տերիտորիաները, որոնք 1840 թ. կազմել էին երկու գավառ և մտել Վիրա-Իմերեթյան նահանգի մեջ, այժմ էլ փաստորեն վարչականորեն մնացին նույնը, այսինքն՝ իրև երկու գավառներ՝ Երևանի և Նախիջևանի, որոնք մտան Թիֆլիսի նահանգի մեջ։ Թիֆլիսի նահանգի կազմում էր նաև Ալեքսանդրապոլի գավառը, որը կազմված էր նախկին Շորագյալի, Փամբակի և Ախալքալաքի շրջաններից[2]։

Անդրկովկասում տերիտորիալ-վարչական վերափոխությունները դրանցով ևս չավարտվեցին։ Նախկին Հայկական մարզի տերիտորիան իրև գավառներ այլ նահանգների մեջ մտցնելը աղաղակող հակասության մեջ էր գտնվում տեղական պայմանների նկատմամբ։ Անհրաժեշտ էր պատմականորեն և ժողովրդական տնտեսության առումով շատ թե քիչ մի ընդհանրություն կազմող այդ բայնատարած մարզը ճանաչել որպես մի ավելի մեծ վարչական միավոր՝ նահանգ, չնայած վերջինիս կազմելն էլ ելնում էր ոչ թե տեղացի ժողովուրդների սոցիալ-տնտեսական և երկրի բնապատմական պայմաններից, այլ ցարական ինքնակալության ռազմական, ստրատեգիական, ֆինանսական և գաղութատիրական շահերից։

[1] АКАК, т. X, էջ 875։ С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. I, էջ 86։

[2] Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. I, Тифлис, 1890, էջ 14—15։

1849 թ. հունիսի 9-ին բարձրագույն հրամանագրով կազմվում է Երևանի նահանգը։ Այդ օրենքը ուժի մեջ է մտնում 1850 թ. հունվարի 1-ից, երբ նախապատրաստական բոլոր գործերը կատարելուց հետո բացվում են նահանգական և գավառական կառավարչությունները։

Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովը իր 1849—1851 թթ. գործունեության մասին գրած հաշվետվության մեջ փորձում է բանն այնպես ներկայացնել, որ իբր Երևանի նահանգի կազմումը գլխում է միայն երկրի բնակչության տնտեսական շահերից և նրա բնապատմական առանձնահատկություններից[1], մինչդեռ հենց նույն զեկուցագրից պարզ երևում է, որ մյուս նահանգների նման Երևանի նահանգը ևս ստեղծվել էր վարչա-ոստիկանական և գաղութատիրական նպատակներից ելնելով։

Նահանգի կենտրոնը Երևանն էր։ Տերիտորիալ առումով նահանգն իր մեջ ընդգրկեց նախկին Հայկական մարզն ու Ալեքսանդրապոլի գավառը, որից անջատվեց Ախալքալաքի ոստիկանական շրջանը (участка)։ Նորաստեղծ Երևանի նահանգն իր կազմում ուներ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի և Օրդուբադի գավառները[2]։ 1862 թ. Ալեքսանդրապոլի գավառից անջատում և Թիֆլիսի նահանգին են միացնում Լոռին, որը նախկինում կազմում էր այդ գավառի Փամբակ ոստիկանական շրջանի հյուսիսային մեծագույն մասը։ 1867 թ. Երևանի նահանգի գավառաբաժանումը ենթարկվում է փոփոխության։ Օրդուբադի գավառը վերացվում է, նրա տերիտորիան միացվում է Նախիջևանի գավառին, իսկ Օրդուբադ քաղաքը դարձվում արտաշատատային։ Այդ օրենքով կազմվում է և մի նոր գավառ՝ Էջմիածնի գավառը։ Այսպիսով, 1867 թ. փոփոխմամբ Երևանի նահանգը դարձյալ կազմված էր 5 գավառներից՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Նոր Բայազետի և Էջմիածնի։ 1874 թվականին նոր փոփոխություն է մտցվում Երևանի նահանգի գավառների կազմի մեջ։ Նրա տերիտորիան նախկին 5-ի փոխարեն մասնատվում է 7 գավառի՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նախիջևանի, Նոր Բայազետի, Շարուր-Դարալագյազի և Սուրմալուի[3]։ Շարուր-Դարալա-

[1] АКАК, т. X, էջ 875—876։

[2] Նույն տեղը։ Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. I, էջ 14—15, «Обзор Эриванской губернии за 1886 год», էջ 1։

[3] Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. I, էջ 15—16։

գյազը կազմվել էր Նախիջևանի գավառի մի մասից, իսկ Սուրմալուն՝ Էջմիածնի գավառի Սուրմալուի ոստիկանական շրջանից, որն ընկած էր Արաքս գետի և Հայկական Պար լեռնաշղթայի միջև։

Այդպիսի կազմով Երևանի նահանգը գրեթե առանց որևէ փոփոխության մնաց մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Ռուսական պետության մյուս գավառների նման Երևանի նահանգի գավառները ևս բաժանված էին ոստիկանական շրջանների։ Սակայն այդ պաշտոնական, օրենքով հաստատված վարչա-տերիտորիալ միավորներից բացի՝ բնակչության մեջ գեռևս պահպանվել էր պարսկական տիրապետության շրջանի վարչական փոքր միավորների՝ մահալների հասկացողությունը, որը, սակայն, սոսկ աշխարհագրական բնույթ ուներ[1]։

Երևանի նահանգը տերիտորիալ առումով կազմակերպելու օրից մինչև վերջ փոփոխության չի ենթարկվել, միայն փոփոխվել է նրա ներքին գավառաբաժանումը, որի մասին արդեն խոսվեց։ Նրա տերիտորիան, ներառյալ և Սևանա լճի հայելին, կազմել է մոտ $24^1/_2$ հազար քառ. վերստ[2], իսկ բնակչության թիվը 1871 թ. հասնում էր 452.001-ի[3]։

Երևանի նահանգը կազմելիս նրա համար սահմանվեց ավելի պարզեցված կառավարման ձև[4], սակայն հետագայում նրա ձեռնարկությունների ու կառավարող ապարատների թիվը գնալով բազմացավ ու բարդացավ։

Նահանգի գլուխ իբրև գերագույն կառավարիչ կանգնած էր գեներալ-նահանգապետը, որը նշանակվում էր ցարական բարձրաստիճան զինվորականներից և հանդիսանում էր նահանգի և՛ քաղաքացիական գլխավոր կառավարիչը, և՛ ռազմական ամենաբարձր պետը, այլ կերպ ասած՝ նրա տնօրինությանն էին ենթարկված նահանգի քաղաքացիական և ռազմական գործերը։ Գեներալ-նահանգապետը ենթարկվում էր Կովկասի փոխարքային, իսկ քաղաքացիական գործերի գծով նրա անմիջական վերադիրը՝ պետը համարվում էր Կովկասի փոխարքայության քաղաքացիական

[1] Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. I, էջ 17։

[2] Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1886 г.» էջ 2, за 1893 г., էջ 1, «Кавказский календарь на 1870 г.», отд. II, էջ 402—403, на 1874 г. отд. II, էջ 66 («Кавказский календарь»-ի համարներում Երևանի նահանգի տերիտորիան տրված է առանց Սևանա լճի հայելին հաշվելու)։

[3] «Кавказский календарь на 1874 г.», отд. II, էջ 66։

[4] С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. I, էջ 86—87։

մասի գլխավոր կառավարիչը[1]։ Նահանգապետն ուներ մեկ գլխավոր օգնական, որը նրան կարող էր փոխարինել բոլոր գծերով։ Նրա օգնականը կոչվում էր փոխ-նահանգապետ, որը գործում էր նշանակվում էր բարձր կոչում ունեցող ցարական սպաներից։

Նահանգն ուներ մի շարք հիմնարկներ։ Դրանք բոլորն էլ ենթարկված էին գեներալ-նահանգապետին։ Նահանգական հիմնարկները հետևյալներն էին՝ նահանգապետի գրասենյակը, նահանգական վարչությունը, զինապարտության նահանգական տեղյակ (губернское по воинской повинности присутствие), գյուղացիական գործերի նահանգական տեղյակ և նահանգական վիճակագրական կոմիտեն[2]։

Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր բավական մարդաշատ ապարատը, որտեղ պաշտոններ էին վարում բացառապես ռուս սպաներ[3]։

Նահանգապետի գրասենյակը, որը բաղկացած էր կառավարչից, նրա երկու օգնականներից և վեց սպաներից, վարում էր բոլոր գրագրությունները, հատկապես գաղտնի գրագրություններն ու այն գործերի մասին եղած գրագրությունները, որոնք շտապ լուծում էին պահանջում անմիջապես նահանգապետից[4]։

Նահանգական վարչությունը բաղկացած էր երկու բաժնից՝ գրասենյակից և ընդհանուր տեղյակից։ Գրասենյակը ամբողջապես ենթարկվում էր փոխ-նահանգապետին և իր հերթին բաժանված էր չորս բաժանմունքների, որոնցից առաջին երկուսը կարգադիր բաժանմունքներ էին և յուրաքանչյուրը բաղկացած էր 3 հոգուց՝ խորհրդականից կամ բաժանմունքի կառավարչից, գործավարից և նրա օգնականից։ Նահանգական վարչության գրասենյակի մյուս երկու բաժանմունքներն էին բժշկականը և շինարարականը։ Բժշկական բաժանմունքի ապարատը բաղկացած էր նահանգական

[1] Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. I, էջ 18։

[2] Նույն տեղը։

[3] Ցարական Ռուսաստանում քաղաքացիական գծով կային 14 կարգի աստիճաններ (чины)։ Ամենաբարձր աստիճանը կանցլերն էր համարվում, իսկ ամենացածրը (XIV-ը)՝ կոլեժսկի ռեգիստրատորը (տե՛ս «Кавказский календарь на 1884 г.», отд. IV, էջ 223)։

[4] Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, էջ 18—19։

բժշկից, նրա օգնականից, երկու անասնաբույժից և մեկ գրագրից, իսկ շինարարական բաժանմունքը՝ նահանգական ինժեներից, նահանգական ճարտարապետից, երկու աշխղեկներից և մեկ գործավարից։ Բաժանմունքների մեջ մտնող նշված պաշտոնյաներից բացի՝ կային նաև մի շարք այլ պաշտոններ, որոնք ընդհանուր գրասենյակային էին համարվում։ Դրանք էին՝ ճարտուղարը, նաշվապահը, էկզեկուտորը, գրանցիչը (регистратор), արխիվարիուսը, ճողոպրափիր և թարգմանիչը[1]։

Նահանգական վարչության մեջ վարվող բոլոր գործերը ընդհանրապես երկու մասի էին բաժանվում՝ վարչական և դատական։ Վարչական գործերը լուծվում էին երկու հաստակով։ Դրանց մի մասը միանձնյա կերպով կարող էին տնօրինել նահանգապետը, փոխ-նահանգապետը և, եթե ոչ կարևոր գործ է, բաժանմունքի պետերը, իսկ վարչական գործերի մյուս մասը, ինչպես և դատական բոլոր գործերը լուծվում էին նահանգական վարչության ընդհանուր ատյանում՝ նահանգապետի կամ փոխ-նահանգապետի նախագահությամբ, որոնց կարծիքը վճռող նշանակություն ուներ։ Փաստորեն նահանգական վարչության ընդհանուր ատյանը վեր էր ածվում սովորական կատարողական հիմնարկի, ինչպես միանգամայն ճիշտ կերպով նկատում է Ի. Օզարովսկին[2]։

[1] Նահանգական զինապարտության ատյանը գործում էր նահանգապետի նախագահությամբ։ Այդ ատյանը բաղկացած էր տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչներից։ Նահանգական գործերի ատյանը նույնպես գործում էր նահանգապետի նախագահությամբ։ Այս ատյանը բաղկացած էր երեք անդամից, քարտուղարից և թարգմանչից։ Նա զբաղվում էր տիրակալական հողերում ապրող գյուղացիների և տերերի՝ աղալարների միջև եղած հարաբերությունների հարցով[3]։ Նահանգական գյուղացիական գործերի ատյանը իր պարտականությունները տեղերում կատարում էր, այսպես կոչված, հաշտարար միջնորդների միջոցով, որոնցից յուրաքանչյուրն իր տրամադրության տակ ուներ թարգմանիչ՝ տեղացի բնակիչների ասածները ռուսերեն թարգմանելու և իրեն հասկանալի դարձնելու համար[4]։

[1] Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. I, էջ 19։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 19—20։

[4] Նույն տեղը, էջ 20։

Տարբեր կարգի շատ անդամներ էր իր մեջ ընդգրկում նահանգական վիճակագրական վարչությունը, որը ևս գործում էր նահանգապետի նախագահությամբ: Բացի նախագահից և նրա օգնականից՝ վիճակագրական կոմիտեն ուներ անփոփոխ, իսկական ու պարտավոր անդամներ և խորհուրդներ:

Անփոփոխ անդամներ էին համարվում փոխ-նահանգապետը, նահանգի հատուկ գերատեսչությունների կառավարիչները և այլն: Իսկական անդամները ընտրովի էին, նրանք ընտրվում էին կոմիտեի կողմից: Իսկական անդամներ էին ընտրվում այն մարդկանցից, որոնք կարող էին իրենց գործունեությամբ օգուտ տալ և առաջ մղել կոմիտեի աշխատանքը: Վիճակագրական կոմիտեն աշխատում էր իբրև իսկական անդամներ իր կազմում ընդգրկել գիտական էքսպեդիցիաների ղեկավարներին և կառավարության հանձնարարությամբ նահանգում կատարվող այն գիտական աշխատանքների ղեկավարներին ու մասնակիցներին, որոնք անմիջականորեն կապված էին վիճակագրության հետ[1]: Պատվավոր անդամները ևս ընտրվում էին կոմիտեի կողմից: Պատվավոր անդամները կարող էին ընտրվել նահանգում ծնված, մեծացած կամ այնտեղ անշարժ գույք ունեցող այն անձնավորությունները, որոնք հայտնի էին դարձել իրենց վիճակագրական աշխատություններով, կամ նահանգում վիճակագրական աշխատանքներ կատարելու համար ցույց էին տվել նյութական մեծ օժանդակություն[2]:

Վիճակագրական կոմիտեի պարտականությունները շատ էին և պատասխանատու: Նա պետք է զբաղվեր նահանգի բնակչության, արհեստների, առևտրի, արդյունաբերության, հողային տարածությունների, կուլտուրական աշխատանքների և այլ բնագավառների վիճակագրությամբ: Նա ոչ միայն պետք է հավաքեր, այլև ստուգեր ու վերամշակման ենթարկեր տեղերից ստացված տվյալները: Վիճակագրական կոմիտեի պարտականությունների մեջ էին մտնում նաև նահանգի, նրա բաղկացուցիչ մասերի և առանձին օբյեկտների վերաբերյալ մանրամասն նկարագրություններ կազմելը: Այդպիսի նկարագրությունները սովորաբար լինում էին աշխարհագրական, պատմական և տնտեսագիտական բնույթի աշխատանքներ[3]: Նահանգական վիճակագրական կոմիտեն ենթարկվում էր Կովկասյան փոխարքայության վիճակագրական

[1] Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, էջ 20—21:

[2] Նույն տեղը, էջ 21:

[3] Նույն տեղը, էջ 20:

կոմիտեին, իսկ վերջինս էլ՝ Կենտրոնական վիճակագրական կոմիտեին: Ցարական վիճակագրությունը անշուշտ ունեցել է անուղղելի թերություններ ու սխալներ և անճիշտ մեթոդներ: Բայց և այնպես, Երևանի վիճակագրական կոմիտեի թողած ժառանգությունը, իր սխալներով հանդերձ, պատկառելի է և մեծապես օգնում է մոտավոր ճիշտ գաղափար կազմելու և՛ ամբողջ նահանգի, և՛ նրա մասերը կազմող գավառների, և՛ առանձին քաղաքների տնտեսական վիճակի վերաբերյալ: Նրա մշակած նյութերի հիման վրա վիճակագրական տեղեկություններ են հաղորդված առանձին գրքերում, պարբերականներում, ամփոփագրերում, արխիվային բազմաթիվ փաստաթղթերում:

Նշվածներից բացի, նահանգային վարչության տնօրինության մեջ էին մտնում երկրային պահեստազորի տեսուչը, գավառական ոստիկանական և Երևան քաղաքի ոստիկանական վարչությունները և այլն[1]:

Յուրաքանչյուր նահանգ ուներ իր նահանգական դատարանը, որը փոխարինում էր նախկին գավառական դատարաններին և մյուս դատական հիմնարկներին: Նահանգական դատարանը իրավասու էր վճիռ կայացնելու քաղաքացիական և քրեական բոլոր կարգի հայցերի նկատմամբ, որոնք հանվել էին ոստիկանական իշխանությունների իրավասությունից: Նահանգական դատարանը բաղկացած էր նախագահից, երկու խորհրդականից և չորս ատենակալից, որոնք տրված էին հասարակության բարձր դասերի և առևտրական խավի կողմից[2]: Քաղաքացիական և քրեական հայցերից բացի՝ նահանգական դատարանի իրավասությանն էին ենթակա նաև խնամակալական և նոտարական գործերը[3]:

Նահանգն ուներ իր դատախազը[4], որը գավառներում չուներ

[1] Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. I, էջ 21—22:

[2] С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. I, էջ 87:

[3] Նույն տեղը:

[4] Իվ. Օզարովսկու մոտ (տե՛ս նրա «Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. I» աշխատության էջ 29—30-ը) Երևանի նահանգի դատական և դատախազական հիմնարկների կառուցվածքը տրված է ռուս-թուրքական 1877—1878 թթ. պատերազմից հետո եղած դրությամբ, երբ Ղարսի մարզը միացված էր Ռուսաստանին: Ըստ դրա, Երևանի նահանգն ու Ղարսի մարզը միասին կազմում էին դատական մի օկրուգ, որի դատարանը կոչվում էր Երևանի օկրուգային դատարան: Վերջինս ենթարկվում էր Թիֆլիսի դատական պալատին: Օկրուգային դատարանը բաղկացած էր նախագահից, նրա օգնականից, 8 անդամից (որի թվում էր և սահմանածրագրի՝ межевой), երկու քննիչ-

իրեն ենթակա օգնականներ, ինչպես և տեղակալ կամ օգնական։

Երևանի նահանգը չուներ վերահսկիչ որևէ օրգան։ Նրա քաղաքացիական և զինվորական բարձրագույն օրգանները հաշվեստու էին Թիֆլիսի վերահսկիչ պալատին[2]։

Երևանի նահանգն ուներ և պահեստադրական վարչություն, որը գտնվում էր Երևան քաղաքում։ Դա բաղկացած էր վարչության պետից, նրա օգնականից, որը գործում էր Կարսում, և ադյուտանտից։ Երևանի պահեստադրական վարչությունը գործում էր ոչ միայն Երևանի նահանգում, այլև Կարսի մարզում[3]։

Նահանգական պաշտոնական ապարատները նշվածներով չէին ավարտվում։ Կային տարբեր մինիստրություններին ենթակա մի քանի այլ հիմնարկներ ևս, որոնք նույնպես տեղադրված էին Երևանում։ Այդպիսիներից էին, օրինակ՝ պետական ունեցվածքների կառավարման գրասենյակը, որը բաղկացած էր կառավարչից, դատական գործերի լիազորից ու նրա օգնականից և անտառները ստուգողներից (թվով երեք հոգի, որոնցից մեկը նահանգական անտառապահի իրավունքներով, մյուսը՝ Երևանի նահանգի անտառապահի իրավունքներով, երրորդը՝ Կարսի մարզի անտառապահի իրավունքներով)[4]։ Նրա իրավունքները տարածվում էին Երևանի նահանգի և Կարսի մարզի վրա։

Ռազմական առումով Երևանի նահանգը մտնում էր Կովկասի զինվորական շրջանի մեջ և ուներ տեղական ղեկավարման իր սիստեմը[5]։ Բազմամարդ ապարատ ունեին ռուսական ու հայկական եկեղեցիները ու մահմեդական մզկիթները։

Շատ ավելի պարզ կառուցվածք ուներ գավառների վարչական ապարատը։ Գավառի կառավարման գլուխ կանգնած էր գավառապետը, որը նույնպես, առանց բացառության, նշանակվում էր ռուսական աստիճանավորներից։ Նրա պարտականությունների մեջ, ոստիկանական ծառայությունից բացի, մտնում էին նաև՝ պե-

---

ներից, երկու քարտուղարից և արխիվարիուսից, դատարանին կից կային դատական պաշտոններ։ Դատարանին էր ենթարկվում ավագ նոտարը։ Դատախազական հսկողության կազմի մեջ էին մտնում դատախազը, նրա վեց օգնականները և քարտուղարը։

[1] С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. I, էջ 87։

[2] Նույն տեղը։

[3] Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. I, էջ 28—29։

[4] Նույն տեղը, էջ 31։

[5] Նույն տեղը, էջ 33։

տական ունեցվածքների ու անտառների պահպանությունը, գյուղացիական ամենազանազան գործերով զբաղվելը և դրանց ընթացք տալը, գավառի սահմաններում գործած հանցանքների համար գործ կազմելը և մեղավորներին նահանգական դատին տալը, ոչ կարևոր գործերի համար դատ ու դատաստան տեսնելը և այլն[1]։ Գավառը բաժանված էր ոստիկանական շրջանների, որոնցում կառավարում էին ոստիկանական շրջանի պետերը (участковые начальники)։ Վերջիններս օժտված էին դատական և ոստիկանական իրավունքներով։

Երևանում էր գտնվում Երևանի գավառի վարչական ապարատը։ Նշված պաշտոնյաներից բացի՝ կային և գավառական, Երևանի հաղթական բժիշկներ և այլն, որոնք նույնպես գտնվում էին Երևանում։

Նահանգի վարչական ցածրագույն օրգանները գյուղական համայնքները կառավարող օրգաններն էին։ Գյուղական հայկական համայնքների գլուխ կանգնած էին՝ մելիքները, իսկ ադրբեջանական համայնքներում՝ քեղխուդաները, քյոխվաններն ու յուզբաշիները[2]։

Հայկական մարզի, Երևանի նահանգի և գավառի պաշտոնաները, սկսած 1835 թվականից, ամռանը՝ հոկտեմբերի սկզբներից մինչև սեպտեմբերի սկզբները տեղափոխվում էին Դարաչիչագ (Ծաղկաձոր)։ Դրա շնորհիվ, ժամանակի ընթացքում այդտեղ կառուցվել էին պետական բազմաթիվ շենքեր և երբեմնի սակավաբնակ Դարաչիչագը վերածել ամառանոցային նահանգական կենտրոնի։ Գրասենյակների տեղափոխումը և դրա հետ կապված ծախսերը, ինչպես և Դարաչիչագում շենքեր կառուցելն ու դրանք բարեկարգ վիճակում պահելը պահանջում էին հսկայական ծախսեր[3]։ Սակայն ցարական աստիճանավորների ինչ հոգն էր. այդ բոլոր միջոցները վերջ ի վերջո քամվում էին ժողովրդից՝ հատկապես հարկադիր աշխատանքների ձևով։

Արխիվային պաշտոնական նյութերում և ժամանակին հրապարակի վրա եղած գրքերում հաճախ ենք հանդիպում այնպիսի պնդումների, թե ցարական օրենքները կիրառվում են անշեղորեն, և Անդրկովկասում ցարական միասնական վարչաձևի կիրառումը

---

[1] С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. I, էջ 87։

[2] Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, вып. I, էջ 23—24։

[3] С. Зелинский, Дарачичаг (Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. I, Тифлис, 1881, отдел I, էջ 58)։

միանգամից վերջ տվեց խանական շրջանում սովորական դարձած կամայականություններին, բռնություններին, կաշառակերությանը։ Տարակուսանքի ենթակա չէ, և չի կարող հերքվել որևէ մեկի կողմից, որ պարսկական տիրապետության շրջանի համեմատությամբ՝ Ռուսաստանին միացվելուց հետո Անդրկովկասում ստեղծվեցին կարգ ու կանոն, մշտական գործող օրենքներ, որոնք ունեին իրենց չափն ու սահմանը. չէ՞ որ նույնիսկ ամենախիստ օրենքը գերադասելի է կամայականությունից, իսկ ցարական ինքնակալությունը խիստ կենտրոնացած պետություն լինելով, ուներ և իր խիստ, ամենուրեք գործող օրենքները։ Մինչդեռ Պարսկաստանը ֆեոդալական ապակենտրոնացած պետություն էր, մասնատված բազմաթիվ մանր ու մեծ վարչա-քաղաքական միավորների՝ խանությունների, որոնցում անմրցակից իշխողը կամայականությունն էր՝ իր ուղեկիցներով՝ կաշառակերությամբ, բռնություններով և անօրինականություններով հանդերձ։ Սակայն, ցարական վարչաձևի պայմաններում ևս չէին բացառված կամայականությունները, իսկ կաշառակերության դեմ նրա ստեղծած պայմանները նույնիսկ կարող էին մրցել նախկին կարգերի հետ։ Այդ դեմ ցարական աստիճանավորները փաստորեն խանական պաշտոնյաների իսկական ժառանգորդները դարձան։ Ցարական աստիճանավորների գործած կամայականությունների և կաշառակերության մասին բազմաթիվ փաստաթղթեր են պահպանվել արխիվային ֆոնդերում։ Ահա՛ դրանցից մեկը. «Հավանաբար ոչ մի տեղ ասիական փեշքեշների սիստեմը այնպիսի խոր արմատներ չի ձգել, ինչպես Երևանի նահանգում,— գրում է նահանգական պահնորդական վարչության պետ Ռոմիչը 1875 թ. օգոստոսի 10-ին վերաբերող իր զեկուցման գրության մեջ,— քաղաքային և գավառական աստիճանության կազմը մինչև անհավատալի չափով է, նահանգական բարձրագույն վարչությանը լրիվ հայտնի են գոյություն ունեցող չարաշահումները, սակայն դրանք դադարեցնելու համար վճռական միջոցներ չեն ձեռնարկվում և դրանով իսկ ոչ միայն արմատախիլ չեն արվում, այլև ավելի շատ են քաջալերվում։ Բնակիչները իրենց կամայական և անպատիժ կեղեքման դեմ ոչ մի տեղ պաշտպանություն չգտնելով, բնականաբար, չեն կարող ունենալ որևէ համակրություն իրենց համար դեռևս նոր կառավարման նկատմամբ, որը կարող է ունենալ վատ հետևանքներ»[1]։

Դա Երևանի նահանգի ցարական պահնորդական վարչության

[1] АКАК, т. XII, էջ 404։

պետի դառն խոստովանությունն է, որով նա հարկադրաբար, չկարողանալով աչք փակել գոյություն ունեցող տխուր իրականության առաջ, այդպիսի դրության անփոփոխ շարունակելը համարում է վտանգավոր և եզրակացնում, որ այն վատ հետևանքներ կունենա։

60—70-ական թվականների դրությամբ (և դրանից հետո) Երևանի նահանգն ուներ 5 քաղաք՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ, Նախիջևան և Օրդուբադ, որը արտաշատային էր (այսինքն վարչական կենտրոն չէր) և մտնում էր Նախիջևանի գավառի մեջ[2]։ Անդրկովկասի մյուս նահանգների նման, Երևանի նահանգում ևս 50—60-ական թվականներին՝ աշխատանքի բաժանման խորացման և ընդհանրապես արտադրության առաջադիմության շնորհիվ՝ բնական փակ տնտեսությունը աստիճանաբար քայքայվում է, իսկ դա էլ նպաստում է քաղաքային կյանքի զարգացմանը, տնայնագործությունը իսկական քաղաքային արհեստագործությամբ փոխարինելուն[3], քաղաքային բնակչության թվի ավելացմանը և այլն։

Քաղաքային կյանքի զարգացման համար առանձնապես նպաստավոր պայմաններ ստեղծեցին 60—70-ական թվականների բուրժուական ռեֆորմները, որոնք ընդգրկեցին երկրի ներքին կյանքի կարևոր բոլոր բնագավառները[4]։ Այդ ռեֆորմներից մեզ առանձնապես հետաքրքրում է 1870 թ. հուլիսի 16-ին Ալեքսանդր II-ի կողմից հաստատված քաղաքային ռեֆորմը, որով քաղաքներում՝ նախկին եկատերինյան դասային դումային փոխարինեց ոչ դասային, ըստ ունեցվածքի ցենզի բնորոշած ձայնավորների դուման[5]։

Ցարական Ռուսաստանում քաղաքները բաժանվում էին չորս կարգի՝ բազմամարդ, միջին մեծության, սակավ բնակչություն ունեցող և արտաշատային քաղաքների[5]։ Դրանց կառավարման ապարատը և վարչական աշխատողների կազմը իրարից զգալի չափով տարբերվում էին։

Երևանը կառավարում էր **քաղաքային** ոստիկանական վարչությունը, որի կազմի մեջ մտնում էին ոստիկանապետը, քաղաքի բազմամասային պետերը (կամ կատարածուները), որոնք թվով

[1] «Обзор Эриванской губернии за 1893 год», էջ 1։

[2] О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, էջ 50—51։

[3] История СССР, т. II, էջ 462—483։

[4] Նույն տեղը, էջ 467—469։

[5] «Кавказский календарь на 1868 г.», отд. III, էջ 395։

երկուսն էին, և վերջիններիս երկուական օգնականները՝ թվով չորս հոգի։ Քաղաքային ոստիկանական վարչությունն ուներ նաև գրագիր, գրագրի օգնական, ռեգիստրատուրա։ Ոստիկանական վարչության առընթեր էին համարվում և քաղաքային բժշկի ու մանկաբարձուհու պաշտոնները[1]։

Քաղաքի վարչաձևի մեջ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո, ընդհուպ մինչև 1879 թվականը, այսինքն՝ մինչև այստեղ 1870 թ. քաղաքային կանոնադրության կիրառումը, էական ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել։ Ավելին, երևանի կառավարման ձևը մինչ այդ նմանության շատ գծեր ուներ խանական շրջանի կառավարման ձևի հետ, միայն այն տարբերությամբ, որ պարսկական պաշտոնները փոխարինվել էին ռուսական աստիճանավորներով։ Մյուս առումներով, անշուշտ, տարբերությունները կառավարման երկու սիստեմների՝ խանականի և ռուսականի, ավելի նշանակալից էին։ Քաղաքի ոստիկանական վարչության աստիճանավորների նշանակման համար գոյություն ուներ հետևյալ կարգը. ոստիկանապետը նշանակվում էր նահանգապետի, իսկ քաղաքամասերի պետերը՝ ոստիկանապետի կողմից, բայց նահանգապետի համաձայնությամբ։

1879 թվականը Երևանի պատմության ամենակարևոր տարեթվերից մեկն է համարվում։ Այդ թվականի հոկտեմբերի 1-ին 1870 թ. հունիսի 16-ի քաղաքային կանոնադրության (городовое положение) կիրառման հիման վրա Երևանում բացվում է քաղաքային դուման։ Արխիվներում պահպանված են քաղաքային դումայի բացմանը վերաբերող շատ փաստաթղթեր, որոնցից երևում է, որ քաղաքային բնակչությունը մեծ նշանակություն է տվել իր հարազատ քաղաքում բուրժուական ռեֆորմի կիրառմանը։ Ահա՛ թե ինչ է հեռագրում նահանգապետի պարտականությունը կատարող Չեխովսկին Կովկասի փոխարքային.

«Բորժոմ. Նորին կայսերական բարձրության Կովկասի փոխարքային.

Այսօր Երևանի գրավման արժանահիշատակ օրը Ձերդ բարձրության կամքով տեղի ունեցավ Երևանի քաղաքային դումայի բացումը։ ...Ամբողջ քաղաքային բնակչությունը ի դեմս իրենց ներկայացուցիչների՝ քաղաքագլխի և դումայի ձայնավորների, ուխտում է առ Ձերդ բարձրության անսահման հավատարմության

[1] Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, էջ 21—22։

զգացմունքներ հանուն ամենաողորմած թագավոր Կայսեր՝ իրեն նվիրած քաղաքային նոր վարչության համար։ Իսկականը ստորագրել է նահանգապետի պարտականությունը կատարող Չեխովսկին. Հեռագիրն ուղարկված է 1879 թ. հոկտեմբերի 1-ին.

Ճիշտ է (գործավար) (ստորագրություն)»[1]։

Քաղաքային բուրժուական ռեֆորմի կիրառումը Երևանում, նրա կիրառման պայմանները, քաղաքային դումայի ընտրությունների կարգը, նրա պարտականությունները, քաղաքային վարչությունն ու նրա գործունեության շրջանակներն ու բնույթը, ցարական կառավարության նահանջն այդ ռեֆորմից և 1892 թվականին ավելի ռեակցիոն քաղաքային կանոնադրության հրապարակումը և շատ ու շատ հարցեր, որոնք կապված են Երևանի պատմության հաջորդ ժամանակաշրջանի հետ, անհրաժեշտ չափով ուշադրության կարժանանան հետագայում, քաղաքի՝ 1879—1920 թթ. պատմությունը շարադրելիս։

3. ՔԱՂԱՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Ռուս-պարսկական՝ 1826—1828 թթ. և ռուս-թուրքական՝ 1828—1829 թթ. պատերազմներից հետո, պատերազմներ, որոնք վերջացան՝ առաջինը Պարսկաստանի հետ կնքված՝ Թուրքմենչայի (1828 թ.), երկրորդը՝ Թուրքիայի հետ կնքված (1829 թ.) Ադրիանապոլսի պայմանագրերով, Անդրկովկասը վերջնականապես միացվեց Ռուսաստանին։ Սակայն նրա տնտեսական յուրացումը, որը սկսվել էր Ռուսաստանին միացնելուց անմիջապես հետո, նույնիսկ XIX դարի վերջերին դեռևս չէր ավարտվել[2]։ Դրա հիմնական պատճառն այն էր, որ ռուսական բուրժուազիան համեմատաբար թույլ լինելով, ի վիճակի չէր կարճ ժամանակամիջոցում մի ընդհանուր տնտեսական սիստեմի մեջ ընդգրկելու և յուրացնելու հսկայածավալ կայսրությունը, մանավանդ նրա նորանվաճ ծայրաշրջանները։ Բացի դրանից, Անդրկովկասի և մյուս ծայրամասերի տնտեսական յուրացումը դժվարանում էր բարեկարգ ու հարմար ճանապարհների և համապատասխան հաղորդակցության միջոցների բացակայությամբ։ Ռուսական պետության կենտրոնական շրջաններում տրն-

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, ցուցակ 1/Բ, գործ 3, թ. 37։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 770։

տնտեսական կյանքը XVIII դարի վերջերի համեմատությամբ XIX դ. սկզբներին արդեն բավականաչափ առաջադիմել էր, քաղաքական դեպքերի հետ կապված՝ զարգանում էին մետաղաձուլությունն ու մետաղամշակումը, պետության տերիտորիայի լայնացման շնորհիվ ընդարձակվում էին «համառուսական շուկայի» շրջանակները, ժողովրդական տնտեսության, հատկապես արդյունաբերության մեջ առաջանում են նոր երևույթներ, որոնք «վկայում էին արդյունաբերության մեջ ճորտատիրական հարաբերությունների անկման և բուրժուական տիպի նոր հարաբերություններ ու կապեր գոյանալու մասին»[1]: Հետագա մի քանի տասնյակ տարիների ընթացքում Ռուսաստանի ժողովրդական տնտեսության մեջ կապիտալիստական արտադրության ձևերը և դրանց հետ կապված նոր՝ կապիտալիստական հարաբերությունները արդեն ձևավորվում և բավականաչափ առաջադիմում են: 1861 թ. ռեֆորմով Ռուսաստանում սկսվում է կապիտալիզմի դարաշրջանը: Հետռեֆորմյան շրջանում Ռուսաստանում կապիտալիզմը աստիճանաբար սկսում է զարգանալ, իսկ 90-ական թվականներին՝ ստանում մեծ թափ ու ծավալ: Այդ տեսակետից Անդրկովկասը շատ ու շատ ետ էր մնում Ռուսաստանի կենտրոնական նահանգներից: Այստեղ, ինչպես հայտնի է, բուրժուական ռեֆորմները անցկացվեցին 5—10 տարի ուշացումով և ավելի մեծ վերապահումներով, որի պատճառով էլ Անդրկովկասում ավելի շատ ճորտատիրական մնացորդներ պահպանվեցին, քան Ռուսաստանում: Մի խոսքով՝ և՛ տնտեսական վիճակով, և՛ հասարակական հարաբերությունների մակարդակով Անդրկովկասը Ռուսաստանից հսկայական չափով ետ էր մնում:

Այնուամենայնիվ, քաղաքական ներթափանցումից անմիջապես հետո՝ Ռուսաստանը XIX դ. առաջին կեսից սկսում է Անդրկովկաս ներթափանցել նաև տնտեսական առումով: Անդրկովկասը նա դիտում էր որպես գաղութ[2] և, իրրև այդպիսին, իր քաղաքականությամբ ձգտում էր այն վերածել իր համար հումքի բազայի: Դեռևս 30-ական թվականներին հրատարակված Անդրկովկասի բնական հարստությունների և դրանց օգտագործմանը նվիրված քառահատոր՝ «Обозрение Российских владений за Кавказом» աշխատության մեջ, արտահայտելով ցարական ինքնակալության՝ Անդրկովկասում վարող տնտեսական քաղաքականության բնորոշ կողմը, գրում են. «Ոչ առանց հիմքի Անդրկովկասի պրովինցիաները կարող են կոչվել մեր գաղութը, որը հարավային կլիմաների արտադրանքներով պետությանը պետք է բերի հույժ կարևոր օգուտներ»[1]: Անդրկովկասում ցարական ինքնակալության տնտեսական քաղաքականությունը ամբողջապես վարվում էր հենց այդ ուղղությամբ: Այդ քաղաքականությունը ելնում էր Անդրկովկասը ռուսականացնելու, այն Ռուսաստանի արդյունաբերության հումքի բազայի և նրա արտադրանքների վաճառահանման շուկայի վերածելու նպատակներից: Խոսելով Ռուսաստանի՝ Անդրկովկաս թափանցելու ձևերի և բնույթի մասին, Պ. Ի. Լյաշչենկոն գրում է. «Ռուսաստանի ինքնակալության գաղութային քաղաքականությունը և այդ շրջանների (Կովկասի — Ք. Հ.) գաղութային թափանցումը ընթանում էին սովորական ուղիներով և սովորական ուղեկիցներով՝ ուղարկվում էին զորքեր (իսկ որովհետև այդ սահմանամերձ շրջան էր, ապա առանձնապես ուժեղ թափով էր կատարվում նրա ռազմական օկուպացումը): Հետագայում զորքերի ետևից գնում էր աստիճանավորների բանակը, որի հիմնական խնդիրը ռուսիֆիկացիան էր, հիմնվում էին դպրոցներ, կառավարման և ժողովրդական կրթության մեջ մտցվում էր ռուսաց լեզու, ռուսիֆիկացիայի գործին մասնակցում էր եկեղեցին: Այլ խոսքով, տակա էր այդ «ծայրամասի» ենթարկման և ռուսիֆիկացիայի գաղութային քաղաքականության սովորական պատկերը...»[2]:

Տնտեսապես Անդրկովկաս ներթափանցելու ցարական ինքնակալության ձգտումները սկզբնական շրջանում իրագործվում էին այստեղ հաստուկ մաքսային քաղաքականություն վարելու և Ռուսաստանը՝ գետերով, ծովերով և, մասամբ, ցամաքային հաղորդակցության ճանապարհներով Անդրկովկասի հետ տնտեսապես սերտորեն կապելու միջոցով:

Սկզբնական շրջանում կայսրության մաքսային քաղաքականությունը, որը մայր երկրում հովանավորում էր հայրենական արդյունաբերության զարգացմանը, չտարածվեց Անդրկովկասի վրա: Վերջինս մինչև 30-ական թվականները օգտվում էր օտար երկրյա ապրանքների ներմուծման արտոնյալ պայմաններից:

1 Պ. Ի. Լյաշչենկո. ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պատմություն, հ. I, Երևան, 1949, էջ 481—482:

2 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 3, էջ 769—770:

1 Обозрение российских владений за Кавказом, т. I, էջ 12:

2 Պ. Ի. Լյաշչենկո. ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պատմություն, հ. I, էջ 512—513:

Կայսրության մաքսային տարիֆը Անդրկովկասում տարածվեց 30-ական թվականներին։ Ըստ այդ տարիֆի, ներմուծվող օտար-երկրյա ապրանքների վրա նշանակված էին մեծ չափերի մաքս, որով ապահովվում էր ռուսական արդյունաբերական ապրանքների հաջող մուտքը և վաճառքն Անդրկովկասում։ Այստեղ, վաճառվող արդյունաբերական ապրանքների դիմաց, Անդրկովկասը ակսեց աստիճանաբար որոշ տեսակի հումքեր մատակարարել Կենտրոնական Ռուսաստանին։ Կենտրոնական նահանգների և Անդրկովկասի միջև կապ է ստեղծվում լեռներով ու լեռնանցքներով անցնող ճանապարհներով և Սև ու Կասպից ծովերով[1]։ Նույնիսկ նավարկություն է կազմակերպվում Քուռ գետի վրա (Կասպից ծովից մինչև Մինգեչաուր և ավելի հեռու)։ Ստեղծվում են հատուկ ակցիոներական ընկերություններ («Կովկաս» և «Կասպիական ընկերություն»), որոնք նպատակ ունեին շոգենավային մշտական կապ պահպանել և առևտուր կատարել[2] Անդրկովկասի ու Պարսկաստանի հետ։

Ցարիզմի այդ քաղաքականության հետևանքով, մի կողմից, Անդրկովկասը դառնում է ռուսական արդյունաբերական ապրանքների վաճառահանման ամենաձեռնտու շուկաներից մեկը, մյուս կողմից, աստիճանաբար մասնագիտանում ռուսական արդյունաբերության համար որոշ հումքեր (բամբակ և այլն) արտադրելու ուղղությամբ։ Մոսկովյան արդյունաբերական ապրանքները ողողում են Անդրկովկասի շուկաները, տեղական «տնայնագործական» եղանակով արտադրված ապրանքները (հատկապես մետաքսյա գործվածքները, որոնք նախկինում այնքան հայտնի էին) դուրս են մղվում դրանց կողմից, քանի որ դրանք ավելի որակյալ և էժան էին։ Արդյունքն այն էր, որ տեղական տնայնագործական արհեստագործություններն սկսում են անկում ապրել։ Անդրկովկասն իր հումքը ուղարկում է ռուսական արդյունաբերական կենտրոնները, որտեղից արդյունաբերական ապրանքները անընդմեջ հոսում էին դեպի Անդրկովկաս, վերջինս այդ եղանակով ներգրավելով համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ։ «Հետռեֆորմյան դարաշրջանում,— գրում է Վ. Ի. Լենինը,— մի կողմից Կովկասը աստիճանական գաղութացման էր ենթարկվում, գաղութարարները մեծ չափերով հերկում էին հողերը..., արտադրելով վաճառքի համար ցորեն, ծխախոտ և այլն ու մեծ թվով պյուղական վարձու բանվորներ գրավելով Ռուսաստանից։ Մյուս կողմից տեղի էր ունենում բնիկ գարավոր «տնայնագործական» արհեստագործությունների արտամղումը, որոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկատների մրցման հետևանքով ընկնում էին... ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում»[1]։

1861 թ. ռեֆորմից հետո, երբ Ռուսաստանը թևակոխեց կապիտալիզմի ժամանակաշրջանը և այստեղ արդյունաբերության զարգացման բնագավառում ձեռք բերվեցին ավելի նշանակալի հաջողություններ, Անդրկովկասում դեռ կապիտալիստական հարաբերությունները թույլ էին արտահայտված։ Մետրոպոլիայի նկատմամբ՝ Անդրկովկասում ավելի շատ ճորտատիրական հարաբերությունների պահպանման, ցարիզմի վարած գաղութային քաղաքականության և մի շարք այլ պատճառների հետևանքով, այստեղ կապիտալիզմի զարգացումը մեծ չափով ուշացավ և զարգացման ավելի դանդաղ տեմպ ունեցավ[2]։

Չնայած այդ բոլորին, հետռեֆորմյան տասնամյակներում Անդրկովկասը ևս հասավ «կապիտալիզմի զարգացման որոշ մակարդակի»[3]։ Անդրկովկասի համար, սակայն, դա ընդհանուր երևույթ չէր։ Այստեղ կապիտալիստական զարգացումը տեղի էր ունենում միայն մի քանի կենտրոններում (Բաքու, Թիֆլիս) և առանձին հանքավայրերում (Ալավերդի, Ղափան և այլն)։ Երկրի մյուս մեծագույն մասը իր զարգացմամբ տակավին գտնվում էր նախակապիտալիստական զարգացման մակարդակին։ Այդ վիճակում էր գտնվում և Հայաստանը։ Հայաստանը, բացառությամբ նշված հանքավայրերում և Կողբի աղահանքերում ստեղծված արդյունաբերական օբյեկտների, 70-ական թվականներին դեռևս գտնվում էր արդյունաբերության զարգացման արհեստագործության մակարդակի վրա։ Ինչպես միանգամայն ճիշտ կերպով նկատում է Խ. Գ. Գուլանյանը, «70-ական թվականներին Հայաստանի վերամշակող արդյունաբերությունը լիովին դուրս չէր եկել

[1] Գ. Ի. Լյաշչենկո, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պատմություն, հ. I, էջ 513։

[2] Տե՛ս Մ. Գ. Ազայան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955, էջ 15—16։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 770—771։

[2] Վ. Բշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956, էջ 5։

[3] Նույն տեղը։

արհեստագործական արտադրության վիճակից։ Մանուֆակտուրաները նշանակալի չափով ավելի քիչ արտադրանք են տվել, քան արհեստավորները»[1]։

Թիֆլիսում հրատարակվող «Մեղու Հայաստանի» թերթի 1885 թ. համարներից մեկի «Ներքին տեսություն» բաժնում լույս տեսած Սեն Արծրունու հոդվածում, որը Հայաստանի տնտեսական վիճակի մասին եղած հասարակական հոսանքների քննարկման առնչությամբ վկայակոչված է Վ. Ռշտունու կողմից[2], ասված է այն մասին, որ Հայաստանում «չկա ոչ մի գործարան, ոչ մի արտադրություն արտաքին փոխանցումների համար»[3]։ Հոդվածագիրը նշում է, որ Անդրկովկասի հայաշատ քաղաքներից՝ այդ թվում և Երևանից՝ շատերը «իրենց քաղաքներում» թողնում են «այգեգործություններ, հողագործություններ... տեղական հարստության զարգացումն ու արտադրությունը, թափառում են Թիֆլիսի ճահիճների մեջ «կոմիսիոն» վաստակելու»[4]։ Ապա հետևյալ, հոդվածագիրը նկատում է, որ արդյունաբերության առհասարակ թույլ զարգացման և բոլորը իրենց կապիտալները դեպի Թիֆլիս տանելու հետևանքով՝ անկում է ապրում Նուխու, Ադուլիսի, Գանձակի ու Երևանի առևտուրը և այլն[5]։

Երևանի արտադրական ձեռնարկությունները ընդհուպ մինչև 80-ական թվականները դուրս չէին գալիս արհեստագործության շրջանակներից։ Այստեղ նշվող մի քանի «գործարաններն» ու «ֆաբրիկանները» բառիս տնտեսագիտական իմաստով այդպիսիք չէին, այլ սոսկ տնայնագործական բնույթի ձեռնարկություններ, որոնց արտադրական պրոցեսները բացառապես կատարվում էին ձեռքի աշխատանքով։ Ուրեմն, այս շրջանում ևս մենք գործ ունենք ոչ թե արդյունաբերական, այլ արհեստագործական, առևտրական և այգեգործական Երևանի հետ։ Երևանը արդյունաբերական կենտրոն դարձավ միայն մեր օրերում։ 80—90-ական թվականներից այստեղ հիմնվող կապիտալիստական արդյունաբերական մի քանի օբյեկտները, որոնք իրենց մեծությամբ և տեխնիկական զինվածությամբ չէին կարող որևէ նախանձ շարժել, քաղաքի ամբողջ տնտեսության մեջ գրավում էին երկրորդական

1 Х. Гуланян, Очерки истории армянской экономической мысли XIX века, Москва, 1955, էջ 53։

2 Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, էջ 45։

3 «Մեղու Հայաստանի» (լրագիր), 1885, Թիֆլիզ, № 6։

4 Նույն տեղը։

5 Նույն տեղը։

տեղ, երևանը մինչև սովետական կարգերի հաստատումը՝ դարձյալ գերազանցապես մնում էր իբրև արհեստագործության, առևտրի ու այգեգործության կենտրոն։

ա) ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Արհեստագործության թույլ զարգացումը։ Նոր երևույթներ Երևանի արհեստագործության բնագավառում 70-ական թվականներին։ Արհեստների տեսակները և արհեստավորների թիվը։ Արհեստավորների թիվը Երևանի նահանգի մյուս քաղաքներում։ Մեկ արհեստավորին ընկնող արտադրանքի քանակը։ Արհեստանոցների թիվը։ Արհեստով և առևտրով զբաղվելու համար նախատեսված 1865 թ. փետրվարի 25-ի Կանոնադրությունը։ Արհեստավորների վարպետության աստիճանը և արհեստավորական արտադրանքի որակը։ Երևանի արհեստագործության տարեկան արտադրանքի քանակը։ Արհեստավորների և առևտրականների կապիտալների քանակը։ Արհեստների տեղաբաշխումը քաղաքում։ Համքարությունները, նրանց կազմը, թիվը և այլն։ Համքարություններից դուրս գտնվող արհեստավորները։ Արդյունաբերությունը, նրա թույլ զարգացումը, արդյունաբերական օբյեկտների արհեստավորական ու տնայնագործական բնույթը։ Արդյունաբերական օբյեկտների տեսակները ու թիվը, դրանց տարեկան արտադրանքի քանակը։ Երևանի նահանգի «գործարանները ու ֆաբրիկանները», դրանցում աշխատող բանվորների թիվը, արտադրանքի քանակը։ Երևանի արդյունաբերության նումերային բազան։ Բանվորական օրվա տևողությունը, աշխատավարձի չափը, բանվորների աշխատանքային վատ պայմանները։

Երևանի տնտեսության ճյուղերի փոխհարաբերությունը՝ նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ այս ժամանակաշրջանում էական փոփոխության չէր ենթարկվել։ Առաջվա նման 1828—1879 թթ. ևս Երևանի էկոնոմիկայում արհեստագործության և առևտրի հետ միասին շարունակում էին կարևոր դեր խաղալ նաև գյուղատնտեսական զբաղմունքները, հատկապես՝ այգեգործությունը։ Փոփոխության չէր ենթարկվել նաև արհեստների հումքային բազան։ Առաջվա պես այժմ ևս Երևանի արհեստագործության համար հումք էին ծառայում տեղական բամբակը, ներկանյութը, կաշին ու մորթիները, որ եթե խանական շրջանում ստացվում էին նաև Մակուից ու այլ շրջաններից, ապա այժմ Երևան

վերամշակման էին գալիս գրեթե միայն տեղականները՝ բամբակը, բուրդը, կավը, գիպսը, փայտը և այլն։

Արհեստագործությունը ընդհանրապես թույլ էր զարգացած Անդրկովկասի նույնիսկ նահանգական քաղաքներում։ Նա գերազանցապես բավարարում էր միայն տեղական պահանջները[1]։ Քաղաքներում այդ պատճառով էլ արհեստավորների թիվն ու արհեստների կազմը սահմանափակ էր, կախված էր տեղական պահանջների չափից ու պայմաններից։ Արհեստը չի եղել արհեստավորի կերակրման միակ միջոցը, արհեստավորը միաժամանակ զբաղվել է նաև գյուղատնտեսական աշխատանքներով՝ այգեգործությամբ, բանջարաբուծությամբ և, նույնիսկ, երկրագործությամբ[2]։ Երևանի արհեստագործությունը այդպիսի թույլ զարգացած և գյուղատնտեսական աշխատանքների հետ միահյուսված վիճակում մնում է մինչև 60-ական թվականները։

1865 թ. վերաբերող արխիվային մի պաշտոնական փաստաթղթում՝ Երևանի քաղաքային ոստիկանապետի տեղակալի զեկուցագրում, որը վերաբերում է քաղաքային կյանքի բոլոր բնագավառներին, արհեստագործության մասին հետևյալն է ասված. «Երևան քաղաքի բնակիչների արդյունաբերությունը (դրա տակ հասկացվել է արհեստագործությունը — Ռ. Հ.) միանգամայն թույլ է զարգացած և բավարարում է միայն տեղական բնակչության ամենահրաժեշտ պահանջները»[3]։ Ոստիկանապետի պարտականություններ կատարող Սոկոլովը Երևանում արհեստի թույլ զարգացման պատճառներից մեկը փորձում է համարել այն, որ իր քաղաքի բնակչության մի հատվածը անհրաժեշտ աշխատահիրություն չի ցույցաբերում արտադրությունը բարելավելու ուղղությամբ[4]։ Արհեստագործության թույլ զարգացման մյուս երկու պատճառները նա համարում է քաղաքի՝ պետության առևտրական գործունեության կենտրոնացումից հեռու գտնվելը և հաղորդակցության ճանապարհների անբարեկարգ լինելը, որը, նրա կարծիքով, «զգալի չափով արգելակում է տեղական արհեստավորական արտադրության զարգացումը»[5]։ Վերջին երկու ազդակները իրոք

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 60։

[2] Տե՛ս «Сборник статистических свед. о Кавказе», т. I, отд. I и II, էջ 58—96։

[3] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 25։

[4] Նույն տեղը։

[5] Նույն տեղը։

որ զգալի չափով արգելակում էին Երևանի արհեստագործության զարգացմանը. պետության առևտրական կենտրոններից հեռու գտնվելը և հարմար հաղորդակցության ճանապարհների բացակայությունը Երևանը դարձնում էին որոշ չափով ինքնամփոփ քաղաք, իսկ նրա արհեստագործությանը տալիս սոսկ տեղական նշանակություն։ Այս պատճառով էլ, քաղաքի արհեստների մեջ գերիշխող դեր էին խաղում բնակչության առօրյա պահանջմունքները բավարարող արհեստները՝ կոշկակարությունը, դերձակությունը, ներկարարությունը, արծաթագործությունը, բամբակագործությունը և մի քանի ուրիշներ[1]։

Նշված ժամանակաշրջանում Անդրկովկասի նահանգական քաղաքների՝ այդ թվում և Երևանի համեմատությամբ արհեստագործությունն անհամեմատ ավելի բարձր զարգացման էր հասել Ալեքսանդրապոլում և Ախալցխայում։ Այս երկու քաղաքները փաստորեն ամբողջ Անդրկովկասում այդ տեսակետից բացառություն էին կազմում։ Ալեքսանդրապոլի և Ախալցխայի արհեստագործության զարգացումը բացատրվում է առևտրի և արդյունաբերական առումով դրանց ունեցած հարմար դիրքով։ Պատերազմների հետևանքով քայքայվում էր թուրքական սահմանամերձ քաղաքների արհեստագործությունը, դրանց արհեստավորները թողնում հեռանում էին դեպի Անդրկովկասի և Փոքր Ասիայի խորքերը։ Այդ եղանակով ամբողջական շրջաններ և վիլայեթներ զրկվում էին տեղական արհեստագործությունից։ Թուրքական սահմանին մոտ գտնվող Ալեքսանդրապոլն ու Ախալցխան սկսեցին իրենց արհեստավորական արտադրանքները մատակարարել թուրքական մոտակա վիլայեթների ու շրջանների բնակիչներին։ Այդպիսի հարմար պայմաններում գավառական նշված քաղաքների արհեստագործությունը հասնում է բարձր զարգացման[2]։ Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեի անդամ Ջերնոյարսկին մեծ հիացմունքով է խոսում Ալեքսանդրապոլի մի քանի արհեստների զարգացման և բարձր վարպետության մասին, նշելով, որ դրանց արտադրանքի զգալի մասը տարվում է Թուրքիա[3]։

70-ական թվականներից Երևանի արհեստագործության մեջ նկատվում է նոր երևույթ։ Նրա արհեստավորների մի մասը սկսում

[1] «Кавказский календарь на 1866 г.», отдел III, էջ 65։

[2] Տե՛ս С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские чехи, էջ 60—61։

[3] Տե՛ս «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отд. III, էջ 40։

է ավելի սերտորեն կապվել շուկայի հետ և պատվիրատուից բացի ապրանքներ արտադրել նաև շուկայի համար։ Այդ եղանակով, Երևանի արհեստավորների մի զգալի մասը դառնում է մանր ապրանքարտադրողներ, այսինքն՝ այնպիսի արհեստավորներ, որոնք աշխատում էին շուկայի համար։ Այդ պրոցեսը հետևանք էր շուկայական հարաբերությունների զարգացման։ Պրոֆ. Հովհ. Թումանյանը վկայակոչելով Վ. Ի. Լենինի ասույթներն այդ պրոցեսի մասին, Հայաստանի քաղաքներում նրա առաջացումը ժամանակագրական առումով կապում է 60—70-ական թվականների հետ[1]։

Արհեստագործության մասին հիմնավոր գաղափար կազմելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ներկայացնել արհեստների տեսակները, արհեստանոցների թիվը և ըստ արհեստի տեսակների՝ վարպետների, վարպետացուների, աշակերտների և բանվորների թիվը։ Քանի որ մեզ հետաքրքրում է կեսդարյա մի ժամանակաշրջան՝ 20-ական թվականների վերջից մինչև 70-ական թվականների վերջը, որի ընթացքում թե՛ թվական և թե՛ ըստ արհեստների տեսակների՝ հսկայական փոփոխություններ էին տեղի ունեցել Երևանի արհեստագործության մեջ, ուստի հարմար ենք համարում մեր ձեռքի տակ եղած պաշտոնական տվյալների հիման վրա տալ մի այնպիսի ընդհանուր պատկեր, որում արտահայտված լինեն նշված ժամանակաշրջանի սկզբին՝ 30-ական թվականներին, 50-ական թվականներին, 60-ական թվականներին և ժամանակաշրջանի վերջին՝ 80-ական թվականների սկզբին վերաբերվող տվյալները, որոնք տրված են տարբեր բնույթի, բայց համեմատաբար արժանահավատ աղբյուրներում։

Աղյուսակում տրված են՝ ա) բուն արհեստավորական խմբերը (վարպետներ, վարպետացուներ և աշակերտներ), բ) արհեստների հետ կապված և դրանց սպասարկող սեզոնային բանվորները, գ) արհեստների հետ կապ չունեցող սեզոնային բանվորների (աշխատողների) խմբերը՝ չրկիրներ, բարձողներ և այլն, դ) այնպիսի արհեստների ներկայացուցիչները, որոնք կարող են համարվել նաև «արվեստի» ներկայացուցիչներ (նկարիչներ, զուռնաչիներ, կենդանագիրներ և այլն) և ե) շավուշները, չարվադարները և նման մի քանի այլ զբաղմունքների ներկայացուցիչներ, որոնց ոչ արհեստավորներ և ոչ էլ սեզոնային բանվորներ կարելի է համարել։ Այլ կերպ ասած, աղյուսակում արհեստավորների ու բանվորների հետ միասին տեղ են գտել նաև այլ կարգի զբաղմունքների ներկայացու-

[1] О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, էջ 54։

Երևանի առևտրատոհմերի, վարպետների, վարպետացուների, աշակերտների և բանվորների թիվը

№ հ/հ	Արհեստավորների և արդյունաբերողների անվանումները	1829/32 թթ.[1]						1851 թ.[2]						1865 թ.[3]						1879/1880 թթ.[4]							
		արհեստանոցների քիվը	վարպետներ	վարպետացուներ	աշակերտներ	բանվորներ	վարպետների, վարպետացուների և աշակերտների ընդհանուր քիվը	արհեստանոցների քիվը	վարպետներ	վարպետացուներ	աշակերտներ	բանվորներ	վարպետների, վարպետացուների և աշակերտների ընդհանուր քիվը	արհեստանոցների քիվը	վարպետներ	վարպետացուներ	աշակերտներ	բանվորներ	վարպետների, վարպետացուների և աշակերտների ընդհանուր քիվը	արհեստանոցների քիվը	վարպետներ	վարպետացուներ	աշակերտներ	բանվորներ	վարպետների, վարպետացուների և աշակերտների ընդհանուր քիվը	ֆաբրիկատորներ և ֆաբրիկատորների օգնականներ	ֆաբրիկատորների, վարպետների, վարպետացուների և աշակերտների ընդհանուր քիվը
1	Թամբի վարպետներ պատրաստողներ	—	1	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
2	Բաղնիապաններ	—	—	—	—	—	12	—	—	—	—	—	5	—	4	—	—	21	25	—	—	—	—	—	—	—	—
3	Մաշկակարներ	—	—	—	—	—	131	—	—	—	—	—	38	—	12	—	24	6	42	57	60	—	139	—	—	—	199
4	Գարանագործներ	—	—	—	—	—	4	—	—	—	—	—	2	—	6	—	—	8	14	—	—	—	—	—	—	—	—
5	Դաշտղներ (չիթ տպողներ)	—	—	—	—	—	5	—	—	—	—	—	8	—	4	—	8	4	16	10	12	—	27	—	—	—	39
6	Բրուտներ	—	—	—	—	—	2	—	—	—	—	—	—	—	6	—	12	6	24	11	12	—	31	—	—	—	43
7	Նկարիչներ և նկարագարներ (маляры)	—	—	—	—	—	3	—	—	—	—	—	6	—	1	—	1	—	2	—	20	—	—	—	—	—	20
8	Ջուլհաներ և նրա ժիշտներ	—	—	—	—	—	12	—	—	—	—	—	5	—	4	—	16	—	20	—	8	—	10	—	—	—	18
9	Կրագործներ (կիր վառողներ)	—	—	—	—	—	2	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
10	Ոմնագիրներ	—	—	—	—	—	30	—	—	—	—	—	16	—	25	—	40	60	125	—	52	—	—	—	—	—	52
11	Կաշեգործներ	—	—	—	—	—	38	—	—	—	—	—	20	—	20	—	12	30	62	31	32	—	65	—	—	—	97
12	Դարբիններ, ձիարուժներ և վահանագործներ	—	—	—	—	—	55	—	—	—	—	—	37	—	32	—	49	—	81	22	22	—	60	—	—	—	82
13	Կոնֆետագործներ	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	5	—	2	—	4	—	6	—	—	—	—	—	—	—	—
14	Սրճագործներ	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
15	Ոսկրաուլմներ	—	—	—	—	—	2	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	5	—	—	—	—	—	5
16	Նկարարներ	—	—	—	—	—	4	—	—	—	—	—	33	—	31	—	31	51	113	13	14	—	18	—	—	—	32
17	Բուժողներ (лекари)	—	—	—	—	—	4	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	8	—	—	—	—	—	8
18	Կլայկոզներ	—	—	—	—	—	23	—	—	—	—	—	10	—	7	—	14	—	21	6	6	—	7	—	—	—	13
19	Ջրաղացպաններ	—	—	—	—	—	23	—	—	—	—	—	15	—	12	—	—	60	72	—	14	—	—	—	—	—	14
20	Դրամահատներ	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
21	Օճառագործներ	—	—	—	—	—	3	—	—	—	—	—	15	—	2	—	8	4	14	—	—	—	—	—	—	—	—
22	Գղնձագործներ	—	—	—	—	—	28	—	—	—	—	—	14	—	20	—	—	—	20	3	3	—	3	—	—	—	6
23	Մսագործներ	—	—	—	—	—	27	—	—	—	—	—	13	—	18	—	18	36	72	23	23	—	85	—	—	—	108
24	Ջինագործներ	—	—	—	—	—	38	—	—	—	—	—	15	—	24	—	24	24	72	24	24	—	23	—	—	—	47
25	Վրանագործներ (վրան պատրաստողներ)	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
26	Կոշիկներ պատրաստներ	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
27	Թաղիքագործներ	—	—	—	—	—	2	—	—	—	—	—	3	—	8	—	10	16	34	1	6	—	—	—	—	—	6
28	Դերձակներ	—	—	—	—	—	41	—	—	—	—	—	22	—	29	—	140	75	244	44	44	—	62	—	—	—	106
29	Մանածագործներ	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
30	Կոշկակարներ և Հնակարկատներ	—	—	—	—	—	3	—	—	—	—	—	25	—	60	—	120	60	240	29	29	—	48	—	—	—	77
31	Մոմագործներ	—	—	—	—	—	16	—	—	—	—	—	9	—	8	—	16	—	24	10	10	—	—	—	—	—	10
32	Աթաթագործներ	—	—	—	—	—	34	—	—	—	—	—	9	—	6	—	16	6	28	21	21	—	18	—	—	—	39
33	Մուշտակագործներ	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
34	Ջուլհակային դազգահներ պատրաստողներ	—	—	—	—	—	2	—	—	—	—	—	20	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
35	Աստղագործներ և հյուսներ	—	—	—	—	—	78	—	—	—	—	—	10	—	46	—	88	24	158	23	36	—	43	—	—	—	79
36	Թամբագործներ և Համեստագործներ	—	—	—	—	—	34	—	—	—	—	—	13	—	8	—	16	8	32	26	32	—	14	—	—	—	46
37	Ջուլհակներ	—	—	—	—	—	120	—	—	—	—	—	19	—	6	—	6	6	18	—	—	—	—	—	—	—	—
38	Աքսաններ	—	—	—	—	—	4	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	4	4	—	—	—	—	—	4
39																											

40	Հիմնագործներ	—	—	—	—	—	2	—	—	—	—	—	2	—	10	—	—	—	10	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
41	Հացագործներ	—	—	—	—	—	40	—	—	—	—	—	10	—	18	—	18	36	72	27	27	113	—	140								
42	Սափրիչներ	—	—	—	—	—	64	—	—	—	—	—	—	—	12	—	24	20	56	22	23	37	—	60								
43	Ժամագործներ	—	—	—	—	—	2	—	—	—	—	—	1	—	3	—	3	—	6	4	4	1	—	5								
44	Զարմագարներ, կառապաններ և սայլապաններ	—	—	—	—	—	87	—	—	—	—	—	40	—	55	—	—	6	61	—	4(?)	1(?)	—	31[b]								
45	Չիբուխիչներ	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	120	41	41	25	—	93								
46	Ճոներ	—	—	—	—	—	79	—	—	—	—	—	30	—	40	—	80	—	20	—	—	—	—	30								
47	Գզարներ	—	—	—	—	—	17	—	—	—	—	—	—	—	10	—	—	10	—	—	30	—	—	—								
48	Շիլաչիներ	—	—	—	—	—	22	—	—	—	—	—	22	—	—	—	—	—	24	—	—	—	—	—								
49	Աղյուսագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	2	—	4	—	—	20	—	—	—	—	—	—								
50	Մեսաբս ներկողներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	6	—	—	—	—	—	—	—	—	—	—	—								
51	Գդալագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	10	—	—	—	—	—	—	—	—	—	—	—								
52	Չիթագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	4	—	—	—	—	—								
53	Ջրաղացի վարպետներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	2	—	2	—	—	2	8	—	—	—	—	—								
54	Ղազյագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	10	—	8	—	—	—	—	—	—	—	—	—								
55	Խոշաբաղներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	7	—	—	—	—	—	—	—	—	—	—	—								
56	Խսիրագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	10	—	5	—	10	10	25	—	—	—	—	—								
57	Կնիքագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	2	—	3	—	—	—	3	—	—	—	—	—								
58	Փոկագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	5	—	16	—	32	—	48	—	—	—	—	—								
59	Մխախոտագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	3	—	18	—	36	18	72	—	—	—	—	—								
60	Չաուշներ (ուղեկցողներ)	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	2	—	12	—	—	—	12	—	—	—	—	—								
61	Բուկիագործներ և հրուշակագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	—	—	3	4	13	13	10	—	23								
															10	—	—	—	10	8	9	21	—	30								
62	Թխիլագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—								
63	Մաֆրաշագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	5	—	10	5	20	5	5	—	—	5								
64	Վառարանագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	10	—	10	—	20	—	—	—	—	—								
65	Տրեխագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	6	—	12	—	18	—	—	—	—	—								
66	Ժապավենագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	4	—	4	—	8	—	12	—	4	—	—	4								
67	Երիզաթելագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	2	—	—	2								
68	Դեղագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	2	2	—	—	2								
69	Տիճարագործներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	109	—	—	109								
70	Բարձողներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	60	—	—	60								
71	Քարտաշներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	24	24	—	—	24								
72	Հնակարկատներ (латочники)	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	11	—	—	11								
73	Գրատպիչներ և գրաշարներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	3	3	—	—	3								
74	Քրքրիչներ (трепальщики)	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	5	—	—	5								
75	Ջրկիրներ (քալուջի)	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	—	—	1								
76	Նկարիչներ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—								
	Ընդամենը	—	1	—	—	—	1115	—	—	—	—	—	559	—	653	—	916	635	2204	507	872	888	—	1786								

[1] 1829|32 թթ. ավյալները վերցված են Ի. Շոպենի «Исторический помятник Армянской области» աշխատությունից, էջ 843—844:

[2] 1851 թ. վերաբերող տվյալները՝ քաղ. Կ. Օլյովսկու «Эривань» հոդվածի («Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 450):

[3] 1865 թ. տվյալները՝ քաղ. ՀՍՍՌ ԳԿԳԱ-ի 125-րդ ֆոնդի (ցուցակ 1, գ. 14, թ. 34—35):

[4] 1879|80 թվականների տվյալները վերցված են Մ. Զելինսկու «Город Эривань» վիճակագրական աշխատությունից («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. I, Тифлис, 1881 отдел I):

[5] Քաղ. ազգային կազմի, տեսնում ենք, որ տրված 4 մարդկանց (կառապաններ և մեկ ևս թամբաքաշ, իսկ հանրագումարում ընդհանուր թիվը տրված է 31, որը այլ աղբյուրների հիման վրա համարել ենք ընդհանուր

Հիշատ թիվը:

ցիչներ։ Մեր օգտագործած սկզբնաղբյուրների մեջ միևնույն աղյուսակում նշվածներից բացի՝ տրված են նաև առևտրականներն ու գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվողները (այգեգործներ, բանջարաբույծներ և այլն)։

Մեր այս աղյուսակը կազմելիս այդ բոլորը նկատի ենք ունեցել և աշխատել նրանում արտահայտել միայն վերը նշված խմբերը, առևտրականներին ու գյուղատնտեսությամբ զբաղվողներին վերաբերող տվյալները թողնելով համապատասխան տեղերի համար։

Արդ, ինչպիսի՛ հիմնական դիտողություններ ու եզրակացություններ կարելի է անել աղյուսակի հիման վրա։

Առաջինը, որ անմիջապես աչքի է զարնվում, տարբեր ժամանակներում արհեստավորների (վարպետների, վարպետացուների ու աշակերտների) և բանվորների ընդհանուր թվերն են։ 1829/32 թթ. կամերալ ցուցակագրման ժամանակ նրանց թիվը եղել է 1115, 50-ական թվականների սկզբին՝ 559, 1865 թվականին՝ 2204, 80-ական թվականների սկզբին՝ 1786։ Այդ թվերը ցույց են տալիս, որ Երևանը՝ պարսկական լծից ազատագրվելուց հետո, իր արհեստագործությամբ մինչև 50-ական թվականների սկզբները դոփել է տեղում, իսկ 60-ական թվականների կեսերին արհեստագործությունն այնքան էր առաջադիմել, որ 1829/32 թթ. կամերալ ցուցակագրման տվյալների համեմատությամբ՝ արհեստավորների թիվը մոտ երկու անգամ ավելի էր (1865 թ.՝ 2204)։ Դա նշանակում է, որ 60-ական թվականներին, այսինքն՝ Երևանը պարսկական լծից ազատագրելուց հետո 35—37 տարի անց, նրա արհեստավորների թիվը էլ ավելի մեծ չափով էր տարբերվում խանական շրջանից, որովհետև վերջինիս համար օգտագործվել են 1829/32 թթ. կամերալ ցուցակագրման տվյալները, որոնք իրենց մեջ բնիկ արհեստավորներից բացի ընդգրկել են նաև Թուրքմենչայի ու Ադրիանապոլսի պայմանագրերով Երևան եկած մի քանի հարյուրի հասնող արհեստավորներին (տե՛ս աղյուսակ 1)։

Արհեստագործության բուռն զարգացումը, սակայն, երկար չի տևում։ 80-ական թվականների սկզբներին վերաբերող տվյալները ցույց են տալիս, որ այդ ժամանակ, 60-ական թվականների համեմատությամբ Երևանում արհեստավորների բացարձակ թիվը բավական նվազել էր (2204-ից՝ 1880 թ. իջնում է 1786-ի)։ Իհեցումը մի փոքր ավելի խիստ է արտահայտվում, երբ արհեստավորների թիվը համեմատում ենք քաղաքի ամբողջ բնակչության թվի հետ։

Այսպիսով, առաջին հայացքից արհեստավորների թվի երկու նվազում է նկատվում, մեկը, որն ավելի խիստ է արտահայտված, 1829/32 թթ. մինչև 50-ական թվականները, մյուսը՝ 1865—1880 թթ. ընթացքում: Որպեսզի պարզաբանենք այդ վայրէջքների բնույթն ու պատճառները, դրանք քննարկենք առանձին-առանձին:

1829/32 թթ. նկատմամբ մինչև 50-ական թվականները երկրի և Երևանի քաղաքական պայմանները չէին վատացել: Ընդհակառակը, այդ շրջանում Երևանի հետ որևէ չափով առնչվող քաղաքական դեպքեր տեղի չեն ունեցել, քաղաքում տիրել է խաղաղ կյանք: Ախտահետև, տնտեսական բնագավառում արհեստների զարգացման վրա ի հայտ չէին եկել բացասաբար ազդող նոր երևույթներ ու ազդակներ: Ճիշտ է՝ ամբողջ Անդրկովկասում, այդ թվում և Արևելյան Հայաստանում Ռուսաստանը սկզբնապես կիրառում էր հատուկ արտոնված մաքսային սիստեմ, որով հնարավորություն էր ստեղծված հեշտ եղանակով արտասահմանյան ապրանքների մասսայական մուտքը Անդրկովկաս, որը սակայն երկարատև չի լինում: 30-ական թվականներին արդեն Անդրկովկասում կիրառվում է կայսրության միասնական մաքսային սիստեմը, ըստ որի արտասահմանից ներմուծվող ապրանքների վրա նշանակվեցին բարձր մաքսեր: Անդրկովկասի քաղաքների արհեստները դրանով ազատվեցին արտասահմանյան ծագումի գործարանային էժան ու որակյալ արտադրանքների մրցակցությունից: Ցարական ինքնակալության նպատակը Անդրկովկասի արհեստները արտասահմանյան մրցակցությունից ազատելը չէր: Նա, մայր երկրի արդյունաբերությունը հովանավորող մաքսային սիստեմը կիրառելով Անդրկովկասում, դրանով իսկ այն դարձնում է ռուսական ապրանքների անմրցակից վաճառահանման շուկա: Բայց մինչև 50-ական թվականները, ընդհանուր առմամբ, ռուսական արդյունաբերական ապրանքները առանձնապես չէին նեղում Երևանի արհեստագործությանը, որովհետև այստեղ մուտք գործող ռուսական գործարանային ապրանքները թե՛ իրենց բացարձակ քանակներով և թե՛ ասորտիմենտով դեռևս համեստ չափեր ունեին: Պետք է նկատի ունենալ նաև այն, որ Անդրկովկասի մյուս քաղաքների արհեստագործությունների նման Երևանի արհեստները ևս հիմնականում կապված էին տեղական էժան հումքի առկայության հետ և բավարարում էին գերազանցապես բնակչության առօրյա պահանջները: Այլ կերպ ասած, նշված տասնամյակներում Երևանի արհեստագործության զարգացմանը արգելակող արտակարգ ազդակներ չկային:

Աշխատանքի արտադրողականությամբ և ընդհանուր զարգացման մակարդակով՝ նշված տարեթվերին Երևանի արհեստագործության հետադիմության մասին խոսք անգամ լինել չի կարող: Հարցը միայն արհեստավորների ընդհանուր թվի (հետևապես և արհեստավորական ամբողջ արտադրանքի) մասին է, որը 1829/32 թթ. եղել է 1115, ապա 50-ական թվականների սկզբին իջել է 559-ի[1]: Ուրեմն ինչով պետք է բացատրել այդ:

Առաջին, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո Երևանը զրկվեց կաշվի և մորթու այնպիսի հուսալի բազաներից, ինչպիսիք էին՝ Մակուն և մի քանի այլ շրջաններ, որտեղից, ինչպես տեսանք, տարվա ընթացքում Երևան էին բերվում բազմահազար մորթիներ ու կաշիներ և այստեղի արհեստավորների միջոցով ենթարկվում վերամշակման: Միանգամայն տրամաբանական է, որ այնուհետև Երևանի այն արհեստները, որոնք կապված էին մորթու կամ կաշվի մշակման հետ, պետք է հետադիմեին իրենց ընդգրկած արհեստավորների թվով և ընդհանուր արտադրանքով: Աղյուսակից պարզ երևում է, որ իրոք կաշվի ու մորթու հումքային բազայով աշխատող արհեստավորների՝ մաշկակարների, կաշեգործների ու ճոների թիվը 30-ից մինչև 50-ական թվականները խիստ նվազել են: Եթե 1829/32 թթ. համեմատել ցուցակագրմամբ Երևանում մաշկակարները եղել են 131 հոգի, կաշեգործները՝ 38, իսկ ճոները՝ 79, ապա 50-ական թվականների սկզբին դրանք կազմում էին՝ մաշկակարները՝ 38, կաշեգործները՝ 20, իսկ ճոները՝ 30 հոգի: Այլ կերպ ասած, հումքային բազայի կրճատման հետևանքով մաշկակարների, կաշեգործների և ճոների թիվը 248-ից իջնում է 88-ի:

Երկրորդ, Երևանը ռուսական պետության կազմի մեջ մտնելուց հետո նրա մի քանի արհեստները սկզբից ևեթ Մոսկվայից և ռուսական այլ քաղաքներից եկող գործարանային էժան ու բարձրորակ ապրանքների մրցակցությունից, այնուամենայնիվ, նեղվում են և մեծապես կրճատվում է դրանցում ընդգրկված արհեստավորների թիվը: Դրա համար օրինակ կարող են ծառայել դարբնությունը, անագաջրությունը, պղնձագործությունը, դինագործությունը, դերձակությունը, արծաթագործությունը, ջուլհակու-

[1] 50-ական թվականների սկզբներին Երևանի ունեցած տարբեր տեսակի արհեստավորների թվերը տե՛ս նաև «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, часть 6, Эриванская губерния, составил капитан Услар, С. Петербург, 1853, էջ 229, որի պարունակած տվյալները զգալի տարբերություն են տալիս մեր օգտագործածների նկատմամբ:

թյունը և այլն։ Նշված ժամանակներում դարբինների թիվը 55-ից իջել է 37-ի, անագագործողներինը՝ 23-ից 10-ի, պղնձագործներինը՝ 28-ից 14-ի, զինագործներինը՝ 38-ից 15-ի, դերձակներինը՝ 41-ից 22-ի, արծաթագործներինը՝ 34-ից 9-ի, ջուլհակներինը՝ 120-ից 19-ի և այլն։

Ներորդ, կային մի քանի արհեստներ (դրամահատություն, հերուխչիություն և այլն), որոնց կարիքը վերացավ պարսկական տիրապետության անկման հետ միասին։ Դրանք թեպետ թվով շատ քիչ արհեստավորներ էին ընդգրկում իրենց մեջ, բայց և այնպես որոշ ազդեցություն էին թողնում արհեստավորների ընդհանուր թվի նվազեցման վրա։

Չորրորդ, 1829/32 թթ. կամերալ ցուցակագրման և 1850-ական թվականների սկզբի տվյալների միջև տարբերությունը այդքան մեծ չէր լինի, եթե երկուսն էլ հաշվառումն անցկացրած լիներին միևնույն մեթոդներով ու սկզբունքներով։ Դրանցից առաջինը ավելի լիակատար է, քան երկրորդը։ Կ. Օռլովսկու օգտագործած տվյալները, ըստ երևույթին, զգալի պակասություններ ունեն։ Բավական է նկատել, որ դրանցում թվական տվ ալներ չկան մասսայական և ամենուրեք տարածված այնպիսի արհեստավորների վերաբերյալ, ինչպիսիք են՝ վարսավիրները, որոնք կազմել են հին Երևանի արհեստավորական ամենամեծ խմբերից մեկը (տե՛ս աղյուսակը)։ Օռլովսկու մոտ բացակայում են նաև գորգարների, բրուտների[1] և մի քանի այլ տեսակի արհեստավորների թվերը, որոնք նույնպես զգալի չափով փոքրացնում են 50-ական թվականներին Երևանի արհեստավորների ունեցած թիվը։ Այլ կերպ ասած, 1828—32 թթ. և 1850 թվականների սկզբի թվերի տարբերություններն իրականում այնքան մեծ չէին, ինչքան որ ցույց են տալիս մեզ հասած սկզբնաղբյուրները։

Արհեստավորների թիվը նախկինի համեմատությամբ փոքր է եղել 50-ական թվականների ոչ միայն սկզբում, այլ նաև հետագա տարիների ընթացքում։ Հայկական ՍՍՌ Պետական արխիվում պահպանված մի փաստաթղթի մեջ, որը վերաբերում է 50-ական թվականների երկրորդ կեսին, նշվում է, որ այդ ժամանակ Երևանի հացագործների թիվը (վարպետները, վարպետացուները և աշակերտները միասին վերցրած) եղել է 1, մսագործներինը՝ 10, հյուսներինը՝ 5, դերձակներինը՝ 21, կոշկագործներինն ու ջուլհակներինը՝ 4, պղնձագործներինը՝ 6, ներկարարներինը՝ 4, վարսավիրներինը՝ 10 և այլն[1]։

60-ական թվականներին, ինչպես ցույց են տալիս աղյուսակի թվերը, Երևանի արհեստները արագ կերպով զարգանում են։ 50-ական թվականների սկզբի հետ համեմատած՝ 1865 թվականին Երևանի արհեստավորների թիվն ավելացել էր մոտ 4 անգամ (1851 թ. 559-ի փոխարեն՝ 1865 թվականին այստեղ կար 2204 արհեստավոր)[2]։ Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում այդքան մեծ զարգացումը լուսաբանելը պետք է։ Հայտնի է, որ 60-ական թվականներին Արևելյան Հայաստանի քաղաքներում տեղի ունեցող արհեստների արագ զարգացումը հետևանք էր երկրի փակ նատուրալ տնտեսության քայքայման և արհեստները քաղաքներում կուտակվելուն, որոնք զգալի չափով արդեն խզել էին իրենց կապերը գյուղատնտեսության հետ։

70-ական թվականներին տեղի է ունենում Երևանի արհեստավորների ընդհանուր թվի երկրորդ նվազումը։ Այս նվազումն արդեն հիմնականում բացատրվում է ճորտատիրության վերացմամբ՝ արդյունաբերության ձեռք բերած հաջողություններով[3]։ Գաղութային վիճակում գտնվող Հայաստանի շուկան ողողվում է ռուսական և արևմտաեվրոպական ֆաբրիկանների և գործարանների ապրանքներով, որոնք պատճառ են դառնում մի շարք արհեստների՝ ներկարարության, օճառագործության, պղնձագործու-

[1] *Հայտնի է, որ նորք գյուղում հնուց ի վեր տարածված է եղել բրուտագործությունը։ Այդ գյուղը 30-ական թվականներին վարչականորեն միացվել է Երևանին։ Հետևապես նրա բրուտներն էլ պետք է դասվեին Երևանի արհեստավորների շարքում։ Մինչդեռ Կ. Օռլովսկու մոտ Երևանում ոչ մի բրուտ ցույց չի տրված։*

[1] *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 126, գ. 7։*

[2] «Сборник статистических сведений о Кавказе» գրքում (т. I, отдел I, кн. III, էջ 12) հետևյալ թվերն են տրված Երևանի համար. վարպետներ՝ 1697 հոգի, բանվորներ՝ 595 հոգի, աշակերտներ (և վարպետացուներ) 946 հոգի, ընդամենը՝ 3238 հոգի։ Ժողովածուի մեջ տեղավորված այս թվերը վերցված են Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեից։ Դրանց մեջ, բացի արհեստավորական խմբերից, մտել են առևտրականներն ու այգեգործները։ Վերջին երկու խմբերի ներկայացուցիչները, միասին վերցրած, բաղկացնում էին 1035 հոգի, որը հանելով 3238 ընդհանուր թվից, կստանանք 2203, այսինքն նույն թիվը, ինչ որ մենք նշել ենք (2204, միայն կա 1-ի տարբերություն, այն էլ մեր կամ նրանց բաց թողած սխալի արդյունք է), հետևապես վիճակագրական կոմիտեն էլ Երևանին վերաբերող թվերը վերցրել է ոստիկանական վարչության նույն զեկուցագրից, որը և համապատասխանում է նրան։

[3] *Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի տնտեսագրական պայքարը բուրժուական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 43,* Х. Г. Гуланян, очерки истории армянской экономической мысли XIX века, էջ 47—49։

քյան, դերձակության, մանածագործության անկմանը (տե՛ս աղյուսակը)։ Սակայն այս վայրէջքի ժամանակ թվերի տարբերությունն ավելի փոքր է (1865 թվականի 2204-ի դիմաց՝ 1880 թվականին՝ 1786, տե՛ս աղյուսակը), քան առաջինի ժամանակ, որի մասին խոսվեց վերևում՝։

Երևանի բնակչության թիվը Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո ընդհուպ մինչև 80—90-ական թվականները զգալի չափով փոփոխության չի ենթարկվել։ Ուստի, արհեստավորների մեր բերած բացարձակ թվերը եթե համեմատելու լինենք քաղաքի ամբողջ բնակչության թվի հետ և վերցնենք համեմատական ցուցանիշները, կստանանք գործնական նույն արդյունքը։ Հարաբերական թվերն, ըստ էության, հարցի նոր լուսաբանում չէին տա։ Միայն ավելի պարզ պատկերացնելու համար նշենք, որ խիստ մոտավոր կերպով 1829/32 թթ. Երևանի յուրաքանչյուր 10,3 բնակչին ընկնում էր մեկ արհեստավոր, 1851 թվականին՝ 21,3 բնակչին մի արհեստավոր (չհաշված վերը նշված այն բազմաթիվ արհեստավորներին, որոնք տեղ չեն գտել սկզբնաղբյուրների մեջ), 1865 թվականին՝ յուրաքանչյուր 5,4 բնակչին մի արհեստավոր, իսկ 1880 թվականին՝ 7,16 բնակչին մի արհեստավոր (տե՛ս աղյուսակը)։

Մեզ հետաքրքրող ժամանակներում Երևանի արհեստագործության բնագավառում տեղի ունեցած փոփոխությունները չէին վերաբերում միայն նրա ընդգրկած արհեստավորների թվին։ Այդ շրջանում, կապված երկրի ընդհանուր տնտեսական ու քաղաքական պայմանների հետ, զգալի փոփոխություն է կրում նաև քաղաքի արհեստների կազմը։ Ժամանակի ընթացքում վերանում են մի շարք այնպիսի արհեստներ, որոնք դադարել էին անհրաժեշտ լինելուց և, ընդհակառակը, նոր պայմաններով ստեղծված նոր պահանջների հիմքի վրա առաջանում են նոր արհեստներ։

Նշված չորս տարեթվերի (1828/32, 1851, 1865 և 1880 թթ.) տվյալների համաձայն, պարսկական տիրապետության վերջում՝ 1829/32 թթ., Երևանի արհեստների թիվը հասել է մոտավորապես

[1] Եթե 1865 թ. տվյալներում առանձին-առանձին են նշվում վարպետները, աշակերտները և բանվորները, աշակերտների տակ հասկանալով նաև վարպետուհիներին, ապա 1880 թ. տվյալներով էլ վարպետները, վարպետուհիները և բանվորները տրված են միայն երկու խմբով՝ վարպետների և վարպետուհիների ու աշակերտների խմբով, որի տակ հասկացվել է և բանվորությունը։

48-ի՝, 1851 թվականին՝ 46-ի, 1865 թ.՝ 47-ի, իսկ 1880 թ.՝ 42-ի (տե՛ս աղյուսակը)։ Ինչպես տեսնում ենք մեր կատարած հաշվումներով, արհեստների ընդհանուր թիվը գրեթե նույնն է մնացել, նրա բացարձակ տատանումը 6-ից չի անցել։ Այդ, մեր կարծիքով, հետևանք է այն բանի, որ նշված ժամանակներում Երևանի արհեստները լիովին կամ, համենայն դեպս, գրանց մեծագույն մասը կապված էին բնակչության առօրյա պահանջների բավարարման հետ։ Աղյուսակից պարզ կերպով երևում է, որ կարևոր տեղ են գրավել բնակչության ամենօրյա և այլ կարգի հույժ կարևոր պահանջները բավարարող արհեստները (բաղնիսապանություն, մաշկակարություն, բրուտագործություն, կաշեգործություն, ներկարարություն, դերձակություն, հացագործություն, սափրիչություն և այլն)։ Բայց և այնպես տնտեսական զարգացման պայմանների փոփոխման հետ միասին մի կողմից ռուսական գործարանային արտադրությունը փոխարինում է արհեստավորականին՝ մի շարք արհեստների մղելով հետին պլանի վրա, իսկ մյուս կողմից առաջանում են նոր արհեստներ, կամ նախկինում տնայնագործական բնույթի զբաղմունքը անջատվում է գյուղատնտեսությունից և դառնում քաղաքային տիպի արհեստ։ 1829/32 թթ. կամերալ ցուցակագրման տվյալների նկատմամբ իբրև նոր քաղաքային արհեստներ 1851 թվականին հիշատակված են՝ աղյուսագործությունը, մետաքսաներկությունը, գդալագործությունը, ձիթագործությունը, ջրաղացագործությունը, սղոցագործությունը, խսիրագործությունը, կնիքագործությունը, փականագործությունը, ծխախոտագործությունը, չաուշությունը և երիզաթելագործությունը, 1851 թվականին տրված արհեստների նկատմամբ՝ 1865 թվականին իբրև քաղաքային նոր արհեստներ են հիշատակվում՝ բուլկեգործությունն ու հրուշակագործությունը, թիթեղագործությունը, վառարանագործությունը, տրեխագործությունը և ժապավենագործությունը, իսկ 1865 թվականի նկատմամբ 1880 թվականին իբրև նոր արհեստներ են հիշատակված՝ դեղագործությունը, տկճորագործությունը, քարտաշությունը, հնակարկատությունը, գրատպիչությունն ու գրաշարությունը, նկարչությունը, ինչպես և սևագործ բանվորների մի քանի խմբեր՝ բարձողներ, քրքրիչներ և ջրկիրներ։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանում պահպանված մի փաստաթղթից երևում է, որ կային ինչպես Երևանի, այնպես

[1] Մեր հաշվումներով, խանական շրջանի Երևանում արհեստների թիվը 50-ից անցել է. այստեղ որոշ արհեստներ բաց են թողնված։

էլ Անդրկովկասի այլ քաղաքների զանազան տեսակի արհեստավորներ, որոնց համար իրենց արհեստը տարավայր զբաղմունք էր. սրանք տարվա որոշ ամիսներին, կամ մի քանի տարի անընդհատ թողնում էին իրենց հայրենի քաղաքը և վաստակի գնում այլ շրջաններ ու քաղաքներ։ Մատենադարանի այդ փաստաթուղթը, որը վերաբերում է 1837 թվականի հուլիսի 13-ին, իրենից ներկայացնում է էրզրումում եղած ախալցխացի, Թիֆլիսեցի, գյումրեցի, երևանցի վաճառականների ու արհեստավորների կողմից ստորագրված մի խնդիրք, որով նրանք Վրաստանի կառավարչին բողոքում են տեղական Թուրքական իշխանությունների՝ իրենց նկատմամբ գործադրած բռնություններ դեմ։ Խնդիրքի տակ ստորագրել են նշված քաղաքների 22 արհեստավորներ և առևտրականներ[1]։ Հավանական է, որ միայն ստորագրողներով չէին սահմանափակվում էրզրումում և Արևմտյան Հայաստանի այլ քաղաքներում եղած՝ Անդրկովկասից գաղթած արհեստավորներն ու առևտրականները։

Մատենադարանի՝ 1848 թ. վերաբերող մի այլ փաստաթղթում խոսվում է այն մասին, որ Երևանի գավառում և հենց Երևան քաղաքում գաղտնի կերպով պատրաստում են մեծ քանակությամբ վառոդ և գաղտնի ուղարկում Շամիլին[2]։

Երևանի արհեստների կազմի և արհեստավորների թիվն ավելի ճիշտ իմանալու համար պետք է այդ հանգամանքները ևս նկատի առնվեն։ Սակայն համապատասխան սկզբնաղբյուրները, այդ փաստերի ստույգ գոյության մասին հիշատակություն տալուց բացի, ոչինչ չեն հաղորդում տարավայր ու գաղտնի գործող արհեստավորների թվի և նրանց արհեստների տեսակների մասին, ինչպես և հնարավոր չէ իմանալ այն արհեստավորներին, որոնք արհեստի հետ միասին ունեին այլ, ավելի հիմնական զբաղմունք։

Այդ տեսակետից բացառություն է կազմում Երևանի վիճակագրական վարչության անդամ Չերնոյարսկու մի հիշատակությունը, որը վերաբերում է 1867 թվականին։ Սա իր այդ հիշատակության մեջ նշում է, որ ընդհանրապես Երևանի բնակիչները իրենց ապրուստի միջոցները վաստակում են հայրենի քաղաքում, բայց և այնպես այստեղից աշխատելու համար ուրիշ քաղաքներ

[1] ՀՍՍՌ Գիտական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 90, վավերագիր 58։

[2] Նույն տեղը, թղթապանակ 147, վավերագիր 478։

են գնում տարեկան մոտ 100 մարդ[1]։ Միանգամայն տրամաբանական է, որ այդ 100 հոգին բաղկացած էր գերազանցապես առևտրականներից և արհեստավորներից։

Երևանի արհեստավորների, բանվորների, առևտրականների և այգեգործների ընդհանուր թիվը ամենից բարձրն էր նահանգի բոլոր քաղաքների մեջ։ 1865 թ. վերաբերող տվյալներով, որ կազմել է Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեն և որը օգտագործվել է Կովկասի վիճակագրական ժողովածվի առաջին հատորում, Երևանի նահանգն ու նրա քաղաքները ունեցել են հետևյալ թվով վարպետ-արհեստավորներ, բանվորներ, աշակերտներ, առևտրականներ, այգեգործներ[2]։

Աղյուսակ 15

Հ/հ		Վարպետներ	Բանվորներ	Աշակերտներ	Ընդամենը
	Ամբողջ Երևանի նահանգում, որն իր մեջ քաղաքների բաշխված էր հետևյալ կերպ	3662	2117	2225	8004
1	Երևան քաղաքում	1697	595	946	3238
2	Ալեքսանդրապոլում	1015	945	735	2695
3	Նախիջևանում	407	158	375	940
4	Օրդուբադում	344	263	133	740
5	Նոր Բայազետում	199	156	36	391

Ինչպես տեսնում ենք, Երևանի արհեստավորների, բանվորների, առևտրականների և այգեգործների թիվը կազմում էր նահանգի նույն կարգի բոլոր աշխատողների թվի մոտավորապես 0,45 մասը։ Իսկ երկրորդ տեղը գրավում էր Ալեքսանդրապոլը, որի արհեստավորների, բանվորների, առևտրականների թիվը կազմում էր վերը նշված թվի մոտավորապես 0,34 մասը։ Սակայն դրանից ամենևին չի հետևում, որ Երևանը իր արհեստագործությամբ բարձր կամ հավասար է եղել Ալեքսանդրապոլին։ Նախ պետք է նկատի ունենալ, որ Երևանին վերաբերող ընդհանուր թվի

[1] «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отд. III, էջ 33, 42, 49։

[2] Նույն տեղը, отд. I, гл. III. Материалы для статистики Эриванской губернии. Тифлис, 1869. էջ 12։

մեջ են մտել մի քանի հարյուրի հասնող այգեգործներ, որպիսիք Ալեքսանդրապոլում չկային և, բացի դրանից, Երևանի առևտրականների թիվը Ալեքսանդրապոլի առևտրականների թվից ավելի մեծ է եղել։ Այնպես որ, եթե հաշվենք միայն բուն արհեստավորական խմբերի մեջ մտնող մարդկանց, ապա հարաբերությունը կստացվի հօգուտ Ալեքսանդրապոլի։ Վերջապես, հարցը միայն թվաբանական գումարը չէ։ Ալեքսանդրապոլի արհեստագործությունը գյուղատնտեսությունից իր կապերն ավելի էր խզել, քան Երևանի արհեստագործությունը, այնտեղի արհեստավորականն արտադրանքը տեղի բնակչության պահանջները բավարարելուց բացի՝ նշանակալի չափով ուղարկվել է Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական քաղաքներն ու շրջանները։

Մեկ արհեստավորի արտադրանքի քանակի մասին գաղափար կազմելու համար, բացի նրա աշխատանքային ժամի տևողությունից, աշխատանքային գործիքների կատարելագործության աստիճանից, տվյալ արհեստավորի վարպետության աստիճանից՝ կարեվոր նշանակություն ուներ և մեկ վարպետին ընկնող բանվորների, աշակերտների և վարպետացուների թիվը։ Աշակերտներ, վարպետացուներ և բանվորներ պահելը չուներ սահմանափակումներ, արհեստավորները կարող էին այդպիսիք պահել ազատ կերպով և ցանկացած թվով։ Սակայն արտադրության և վաճառքի պայմանները անուղղակի կերպով սահմանափակում էին աշակերտների, վարպետացուների և բանվորների թիվը[1]։ Աշակերտների, վարպետացուների ու բանվորների թիվը որքան մեծ լիներ, այնքան տվյալ արհեստավորի արտադրությունն էլ կունենար համեմատաբար ավելի մեծ մասշտաբներ, որովհետև նրանք բոլորն էլ այս կամ այն չափով մասնակցում էին արհեստավորական արտադրության պրոցեսներին։

Մեզ հետաքրքրող շրջանի ավելի վաղ տարիների աշակերտների, վարպետացուների և բանվորների թվի վերաբերյալ չկան աղբյուրներ։ 1829/32 թթ. կամերալ ցուցակագրման և 50-ական թվականների սկզբին վերաբերող սկզբնաղբյուրներում դրանք բոլորը տրված են միայն արհեստավորներ անվան տակ։ 1865 և 1880 թվականների աղբյուրների մեջ արդեն բանվորները, աշակերտներն ու վարպետացուները ցույց են տրված առանձին-առանձին և

[1] Տե՛ս С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 89—93։

հնարավոր է դառնում այդ ժամանակներին վերաբերող որոշ հաշիվներ կատարել։ Մեր կազմած աղյուսակի համաձայն, 1865 թվականին Երևանում մեկ արհեստավոր-վարպետին միջին հաշվով ընկնում էր մոտավորապես 1,4 աշակերտ ու վարպետացու և 0,97 բանվոր։ Նույն թվականին մեկ արհեստավոր-վարպետին ընկնում էր 2,37 վարպետացու, աշակերտ և բանվոր՝ միասին վերցրած[1]։ 1880 թվականի տվյալներով մեկ վարպետին ընկնում էր մոտավորապես 1 աշակերտ և վարպետացու, իսկ արհեստների ներսում եղած բանվորների թվի վերաբերյալ տվյալներ չկան։

Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում արհեստանոցների թիվը։ Մինչև 80-ական թվականների սկզբները Երևանի և առհասարակ Երևանի նահանգի բոլոր հինգ քաղաքների արհեստանոցների թվի վերաբերյալ չկան որևէ չափով արժանահավատ տեղեկություններ, իսկ արհեստավորների թվով անհնար է որոշել արհեստանոցների թիվը, որովհետև արհեստավորներից շատերը չունեին իրենց ձեռնարկությունները՝ արհեստանոցները, աշխատում էին տանը, կամ արհեստի հետ միասին զբաղվում էին և այլ գործերով, մշտական արհեստանոցի կարիքը չունեին[2]։

Կային նաև այնպիսի արհեստավորներ (քարտաշներ, որմնադիրներ, սղոցագործներ, ջրաղացագործներ, գղրարներ և այլն), որոնք իրենց արհեստի յուրահատկությունից ելնելով, գործը կատարում էին ոտքի վրա, քաղաքի տարբեր մասերում շրջելով։

Երևանի արհեստանոցների շատ թե քիչ արժանահավատ թիվը տրված է Ս. Զելինսկու աշխատությունում[3], որի տվյալները մեզ համար հիմք են ծառայել № 14 աղյուսակի 1880 թվականի բաժինը կազմելու։ Ըստ որում, Երևանի արհեստանոցների թիվը 1880 թ. հասել է 507-ի (տե՛ս աղյուսակը), այն դեպքում, երբ նույն ժամանակ վարպետների թիվը 872 էր (նույն տեղը)։ Այլ կերպ ասած, միջին հաշվով յուրաքանչյուր 1,32 վարպետին ընկել է մեկ արհեստանոց։ Իսկ դրանից հետևում է, որ արհեստանոցները, իբրև արտադրական ձեռնարկություններ, փոքր, շատ փոքր են եղել։

[1] Եղիազարովի մոտ ստացվել են քիչ տարբեր մեծություններ (տե՛ս Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 93)։

[2] «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отд. III, էջ 31, տե՛ս նաև С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 61։

[3] С. Зелинский, Город Эривань («Сбор. мат. для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 37)։

Պարսկական տիրապետության շրջանում Երևանում եղած տարբեր ախանութներն ու արհեստանոցները պետական մյուս ունեցվածքների պես՝ Երևանը պարսկական լծից ազատագրվելուց հետո դարձյալ մնացին իրրև պետական սեփականություն։ Շոպենի վկայությամբ, 1829/32 թթ. Երևանում պետական խանութների (և արհեստանոցների) թիվը հասնում էր 575-ի։ Դրանցից օգտվելու համար արհեստավորն ու առևտրականը պարտավոր էին տալ համապատասխան վարձ։

Արհեստանոցների մեջ հեղինակների և պաշտոնական անձանց ուշադրությունը ամենից շատ գրավել են ջրաղացներն ու բրնձի դինգերը, որովհետև դրանք մյուս բոլոր արհեստանոցների համեմատությամբ ավելի բարձր արժեք ունեին, «մեծ օբյեկտներ» էին և, առանց բացառության, կենտրոնացած էին մի տեղում՝ Զանգվի եզերքին։ Ցանկացած մարդն առանց դժվարության և ժամանակի կորստի՝ կարող էր ներկայացնել դրանց որպիսությունը։

Ռուս-պարսկական 1826—1828 թթ. պատերազմի հետևանքով, Երևանի պաշարման և գրավման ժամանակ ավերվում և շարքից դուրս են գալիս մի շարք ջրաղացներ ու դինգեր[1]։ Հետագայում դրանք վերականգնվում են, և Երևանի գործող ջրաղացների (աչքերի) թիվը դարձյալ հասնում է մի քանի տասնյակի։ Կ. Օռլովսկու հաղորդած տեղեկությունների համաձայն, 1851 թ. դրությամբ Երևանում միայն քաղաքացիներին պատկանող ջրաղացների թիվը հասել է 13-ի, որոնք ունեցել են 40 աչք[2]։ Առաջվա նման 1828—1879 թթ. ևս ջրաղացներն ու դինգերը պատկանել են պետությանը, քաղաքացիներին և էջմիածնի վանքին։ Պետական և վանքապատկան ջրաղացներն ու դինգերը տրվում էին կապալով[3]։

Արհեստներով, արդյունաբերությամբ և առևտրով զբաղվելու համար արհեստավորներն ու առևտրականները պարտավոր էին պետությանը տալ հատուկ հարկեր, որոնք երկու կարգի էին՝ հիմնական և լրացուցիչ։ Հիմնական հարկը վճարվում էր արհեստով, առևտրով կամ քաղաքային մի այլ զբաղմունքով պարապելու համար թուլլտվության հատուկ վկայական ստանալու ժամանակ։ Առանց այդպիսի վկայականի ոչ ոք իրավունք չուներ 14 օրից ավելի

[1] Իրար հետ համեմատել Ի. Շոպենի «Исторический памятник Армянской области» աշխատության 863—864 և 943—946 էջերի ազյուսակները։

[2] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отдел III, էջ 447).

[3] Տե՛ս ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 148, վավերագիր 653, թղթապանակ 221, վավերագիր 54 և այլուր։

զբաղվելու առևտրով, արդյունաբերությամբ կամ արհեստով։ Վկայականները տրվում էին մեկ տարի ժամանակով։ Պետական հատուկ արհեստանոցներն ու ձեռնարկությունները, քաղաքներում եղած որոշ ձեռնարկություններ՝ քաղաքի կոյուղու, լուսավորության, կանաչապատման, առողջապահության, գրադարանների, բներևույթաբանների ու բարեգործական նպատակներով հիմնված մի շարք ձեռնարկություններ ազատվում էին հիմնական հարկից, սակայն դրանց ազատվելու մասին դարձյալ պետք է տրվեին անվանական տեղեկանքներ[1]։ Հիմնական հարկի չափը որոշվում էր յուր ձեռնարկությունների կարգերի, որը սահմանված էր և՛ առևտրական, և՛ արհեստավորական ու արդյունաբերական ձեռնարկությունների համար առանձին-առանձին։

Առևտրական, արհեստավորական և արդյունաբերական ձեռնարկությունների վրա լրացուցիչ հարկ էր դրվում այն դեպքում, երբ այդպիսիները ունեին մեծ եկամուտներ։ Լրացուցիչ հարկերի համապետական ընդհանուր գումարը նշանակվում էր երեք տարին մեկ անգամ[2]։ Դրանցից բացի, շահույթից նույնպես տրվում էր որոշ հարկ, սակայն այդպիսի հարկ տալիս էին միայն շատ բարձր շահույթ ունեցող քիչ թվով ձեռնարկություններ[3]։

Արհեստով, առևտրով, արդյունաբերությամբ և այլ զբաղմունքով պարապելու իրավունքի վկայականներ տալը, հարկերի նշանակելն ու հավաքելը, ձեռնարկությունների վրա այդ կապակցությամբ անհրաժեշտ հսկողություն սահմանելը, մի խոսքով, օրենքի կիրառումը հետևելը այն քաղաքներում, որտեղ անց էր կացված 1870 թվականի ռեֆորմը, դրված էր քաղաքային վարչությունների վրա, իսկ այն քաղաքներում, որտեղ դեռևս այդ ռեֆորմը չէր անցկացված և քաղաքի գլխավարումն ամբողջապես գտնվում էր ոստիկանական վարչության ձեռքին, այդ պարտականությունները դրված էին վերջինիս վարչության վրա[4]։ Վերջինիս վրա էր դրված և Երևանի ձեռնարկությունների հսկողությունը։

Առևտրից, արհեստագործությունից, արդյունաբերությունից վերցվող հարկերին վերաբերող այդ Կանոնադրությունը, որը հաստատված էր 1865 թ. փետրվարի 25-ին, Անդրկովկասում անց է

[1] Տե՛ս «Свод законов Российской империи», составил и издал приисженный поверенный А. М. Нюренберг, кн. вторая, т. V, Москва, էջ 50—69։

[2] Նույն տեղը, էջ 70—76։

[3] Նույն տեղը, էջ 76—78։

[4] Նույն տեղը, Приложение к стат. 464.

կացվել 1875 թվականին, և ֆինանսների մինիստրի հետ որոշ համաձայնության գալուց հետո, Կովկասյան փոխարքայի կարգադրությամբ կազմվել է հատուկ հրահանգ՝ փոխարքայության սահմաններում նշված ձեռնարկություններից վերցվող հարկերի չափի, հավաքման կարգ ու կանոնի և թույլտվության վկայականներ տալու կարգի մասին[1]:

Եթե քանակական առումով, արտադրանքի չափերով և գործիքների կատարելագործման աստիճանով Երևանի արհեստագործությունը չի կարելի համարել զարգացած արհեստագործություն, ապա նույնը չի կարելի ասել նրա կատարողական վարպետության մասին: Առաջվա նման, 1828—1879 թթ. ևս Երևանի արհեստավորները իրենց վարպետությամբ գտնվում էին բավական բարձր աստիճանի վրա[2]: Դրան նպաստում էին երկու պատճառներ, մեկն այն էր, որ Երևանի արհեստագործությունը Հայաստանի մյուս քաղաքների արհեստագործությունների նման հարուստ ժառանգություն և տրադիցիաներ էր ստացել միջնադարյան հայկական զարգացած արհեստներից, իսկ երկրորդը՝ համքարական կազմակերպություններում գոյություն ունեցող արտադրական առողջ սովորություններն էին, որոնց համաձայն վարպետի կոչում կարող էր ստանալ միայն այն վարպետացուն կամ աշակերտը, որը լիովին ու անթերի տիրապետում էր տվյալ արհեստի կատարողական բոլոր ձևերին ու հնարանքներին: Համքարությունների կողմից արհեստները սովորելու համար սահմանված էր բավական երկար ժամանակամիջոց: Երևանի համքարություններում օրենքի ուժ ստացած՝ արհեստները սովորելու ժամկետների մասին եղած սովորությունները մեզ չեն հասել դրավոր կերպով: Սակայն այդ չի բացառում՝ Անդրկովկասի այլ քաղաքներում գոյություն ունեցող կարգի հիման վրա, որը մեզ է հասել պաշտոնական ու կիսապաշտոնական փաստաթղթերի միջոցով, գաղափար կազմել նաև Երևանում արհեստները սովորելու համար սահմանված կարգի և, մանավանդ, ժամկետների մասին: Մեզ հասած դրավոր աղբյուրների համաձայն, Թիֆլիսում և Ախալցխայում արհեստները սովորելու համար սահմանված էր երկու ժամկետ, որոնցից առավելագույնը

[1] С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. II, Тифлис, 1907, էջ 71:

[2] Х. Г. Гуланян, Очерки истории армянской экономической мысли XIX века, էջ 45:

հասնում էր 10, իսկ նվազագույնը՝ 2—3 տարվա[1]: Տարբեր արհեստներ սովորելու համար սահմանված են եղել տարբեր ժամանակամիջոցներ: Այսպես, Թիֆլիսում արհեստ սովորելու համար առավելագույն ժամկետը տասը տարի է եղել արծաթագործների (նվազագույն ժամկետը 7 տարի), գլխարկ կարողների (նվազագույնը դարձյալ 7 տարի), թամբագործների (նվազագույնը 6 տարի) և բրուտների (նվազագույնը 5 տարի) համքարություններում: Սովորելու ժամկետը ամենից կարճատև է եղել կոշկակարների (առավելագույն ժամկետը 5 տարի), դերձակների (առավելագույն ժամկետը 5 տարի, նվազագույնը՝ 4), ատաղձագործների (առավելագույնը 4 տարի, նվազագույնը՝ 2) և այլ համքարություններում: Ախալցխայի համքարություններում, ընդհանուր առմամբ, արհեստ սովորելու ժամկետները Թիֆլիսի համքարությունների հետ համեմատած մի փոքր ավելի կարճատև են եղել, միայն բացառություն է կազմել դարբինների համքարությունը: Ախալցխայում դարբնություն սովորելու համար սահմանված է եղել իբրև առավելագույն ժամանակամիջոց՝ 10 տարի (այս Ախալցխայի միակ համքարությունն էր, որում արհեստը սովորելու համար առավելագույն ժամկետը 10 տարվա էր հասնում, մնացած համքարություններում առավելագույն ժամկետը 8—9 տարուց ավելի չի եղել), իսկ նվազագույնը՝ 6 տարի, այն դեպքում, երբ Թիֆլիսի նույնատիպ համքարության մեջ արհեստը սովորելու համար սահմանված էր իբրև առավելագույն ժամկետ 6, իսկ նվազագույնը՝ 4 տարի[2]:

Թիֆլիսի և Ախալցխայի արհեստագործությունների զարգացման աստիճանը անշուշտ չէր համընկնում Երևանի արհեստագործության զարգացմանը: Ախալցխան իր արհեստագործությամբ Ալեքսանդրապոլի արհեստագործության նման հայտնի էր նույնիսկ Անդրկովկասի սահմաններից դուրս, իսկ Թիֆլիսը, որպես փոխարքայության կենտրոն և անհամեմատ ավելի բազմամարդ ու զարգացած քաղաք, ավելի էր հայտնի իր արհեստագործությամբ: Տարբերությունը դրանց և Երևանի արհեստագործությունների միջև զգալի էր, սակայն աղաղակող չէր: Ուրեմն պետք է ենթադրել, որ Երևանի համքարություններում ևս արհեստ սովորելու համար տրադիցիոն կարգով սահմանված են եղել բավական երկար ժամկետ-

[1] Տե՛ս С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, Приложение № 3, էջ 375:

[2] Նույն տեղը:

ներ, և արհեստներն իրենց արտադրանքների կատարելությամբ հետամնաց չեն եղել, ինչպես փորձում են ներկայացնել ցարական պաշտոնական շրջաններն ու առանձին հրատարակություններ։ Նույնիսկ 60-ական թվականներին, երբ Երևանի արհեստագործությունը ապրում էր բուռն զարգացման շրջան և, իր կապերը ասպիճանաբար կարելով գյուղատնտեսությունից, դարձել էր քաղաքային ավելի բարձրորակ զբաղմունք, դարձյալ որոշ հրատարակություններում այն համարված է հետամնաց[1]։ Եթե հարցը վերաբերվեր արհեստագործական գործիքների պրիմիտիվությանը, արհեստավորների աշխատանքի ցածր արտադրողականությանը և այլն, ապա այդպիսի տեսակետի հետ կարելի էր անվերապահորեն համաձայնվել, իսկ ինչ վերաբերում է արհեստավորների (նրանց մեծ մասի) արտադրանքի որակին, ապա այն, հակառակ գոյություն ունեցող տեսակետների, որոնք արդեն տրադիցիայի ուժ են ստացել, եղել է բավական բարձր։

1850 թ. մարտի 6-ին, առաջին անգամ Թիֆլիսում՝ բացվում է Անդրկովկասի բնական հումքերի և ֆաբրիկային ու արհեստավորական արտադրանքների նմուշների ցուցահանդես[2], որը որոշ չափով նպաստում է արհեստավորական արտադրանքների որակի հետագա բարձրացմանը։ Ցուցահանդեսի Երևանի նահանգի բաժնում ցուցադրվել են կապույտ կտավ, կապույտ, կարմիր և սև գույնի քաթան, սպիտակ կտավ, տղամարդկանց և կանանց մաշիկներ, երկարաճիտ կոշիկներ, խաղողի հյութ և մուրաբա, երկաթե ասպանդակներ, պղնձյա մատուցարան, արծաթյա նախշավոր զավաթներ, երաժշտական գործիքներ (թառ, գուռնա, դուդուկ), ապակե բաժակներ, պնակներ, նկարներ և այլն[3]։

Երևանի արհեստագործության տարեկան արտադրանքի վերաբերյալ մեզ չեն հասել որևէ չափով արժանահավատ տվյալներ։ 60-ական թվականներին, երբ Երևանի արհեստագործությունն ապրում էր զարգացման շրջան, Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեի կողմից պաշտոնական հաղորդագրություններ են կատարված արհեստների տեսակների, արհեստավորների թվի, համբարությունների թվի ու կազմի և արհեստագործության մի քանի այլ բնագավառների վերաբերյալ, որոնց օգնությամբ վերևում մենք կարողացանք եղած տվյալների սահմաններում ներկայացնել այդ

[1] Տե՛ս «Кавказский календарь на 1866 г.», отдел III, էջ 65։

[2] Տե՛ս նույն տեղը, на 1859 г., отдел III, էջ 233։

[3] «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, Эриванская губерния, էջ 229։

ժամանակվա Երևանի արհեստագործության զարգացման մի քանի առանձնահատկությունները։ Սկզբնաղբյուրները հաղորդում են, որ Երևանի առանձին արհեստների (և նրա ամբողջ արհեստագործության) տարեկան արտադրանքների նույնիսկ մոտավոր թիվը չի կարելի սահմանել, որովհետև նրանց արտադրանքի չափը անկայուն է եղել և ունեցել է շատ մեծ տատանումներ[1]։ Երևանի արհեստագործական տարեկան արտադրանքի չափը որոշումը հատկապես դժվարանում էր նրանով, որ նրա արհեստների մեծագույն մասը զբաղված էր տեղական բնակչության առօրյա պահանջների սպասարկումով[2], դրանց արտադրանքը քիչ էր դուրս գալիս շուկա, ուստի ոչ ոքի կողմից հաշվառման չէր ենթարկվում։

Երևանի նահանգի քաղաքների մեջ միայն հայտնի է՝ արհեստագործությամբ ամենատաչքի ընկնող քաղաքի՝ Ալեքսանդրապոլի 1863 թ. արհեստավորական արտադրանքի ընդհանուր գումարը։ Մոտավոր հաշվումներով այդ թվականին Ալեքսանդրապոլի բոլոր արհեստավորների տարեկան արտադրանքը կազմել է 160 հազար արծաթ ռուբլի[3]։ Այդ գումարը բաժանելով արհեստավորների թվի (2223) վրա, ստանում ենք մոտավորապես 72 ռուբլի, որը և միջին հաշվով կազմում է յուրաքանչյուր արհեստավորի տարեկան (տվյալ դեպքում՝ 1863 թվականի) արտադրանքը։

Երևանի արհեստավորների տարեկան արտադրանքը Ալեքսանդրապոլի արհեստավորների տարեկան արտադրանքից համեմատաբար ցածր է եղել։ Սայլային բանուկ ճանապարհներով Արևմտյան Հայաստանի բազմաթիվ շրջաններին արհեստավորական արտադրանքներ մատակարարող Ալեքսանդրապոլի զարգացած արհեստագործությունը ուներ մեծ օգուտներ[4]։ Նրա արհեստավորների արտադրանքը և՛ ավելի մեծ մասշտաբներ ուներ, և՛ ավելի որակյալ էր, և՛ ավելի բանկ էր վաճառվում, քան Երևանի արհեստավորական արտադրանքները։ Այդ բոլորը նկատի ունենալով, մոտավին կարելի է պատկերացնել, թե որքան համեստ չափեր ուներ Երևանի արհեստավորի արտադրանքը և թե որքան ցածր էր գոնե-վում նա իր նյութական մակարդակով։

Արհեստավորների (և առևտրականների) կապիտալը կազմել է միանգամայն չնչին գումար։ Ս. Զելինսկին, անդրադառնալով

[1] «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 68։

[2] Նույն տեղը։

[3] «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отд. III, էջ 42։

[4] Նույն տեղը, էջ 40։

80-ական թվականների սկզբին Երևանի առևտրի և արհեստագործության բնագավառում եղած կապիտալի չափին, գրում է. «Անծանոթ մարդը, տեսնելով Երևանի լայնարձակ շուկան՝ իր քարավանատներով, խանութներով, ախոռներով և այլն, ենթադրում է, որ այստեղ առևտուրն ու արհեստը ուժեղ զարգացած են, սակայն նա հարկադրված կլինի իր կարծիքը փոխել, երբ կտեսնի, որ հարյուրավոր խանութներ կանգնած են դատարկ, և կիմանա, որ այստեղ կան բազմաթիվ այնպիսի առևտրականներ ու արհեստավորներ, որոնց կապիտալը կազմում է ոչ թե առանձին ռուբլիներ, այլ միավոր, օրինակ՝ ճաշակրպակատերերը, թեյ ու կանաչի վաճառողները, հնակարկատները (латочники) և այլն»[1]:

Արհեստավորների կապիտալը բաղկացած էր պրիմիտիվ ու էժանագին գործիքներից և փոքրիկ կրպակից, եթե նրանք այդպիսիք ունեին և վարձակալությամբ չէին աշխատում պետական կամ վանքապատկան խանութներում: Կրպակների արժեքը չնչին էր, էլ ավելի չնչին արժեք ունեին արհեստավորական գործիքները: Կային որոշ արհեստներ, որոնց գործիքներն ունեին կոպեկների արժեք: Օրինակ՝ այդպիսին էր հնակարկատների կապիտալը, որի վերաբերյալ, ինչպես հաղորդում է Ս. Զելինսկին, ադրբեջանական բնակչությունը ստեղծել էր հետևյալ առածը՝ հնակարկատի միակ կապիտալն են ասեղն ու մախաթը[2]:

Իրենց խաղացած դերով, արհեստների միջև կային զգալի տարբերություններ: Երևանում ամենատարածված, համեմատաբար զարգացած և եկամտաբեր արհեստների թվին էին պատկանում կոշկակարությունը, դերձակությունը, դպակագործությունը, ներկարարությունը, արծաթագործությունը և այլն[3]; իսկ ավելի քիչ եկամտաբեր էին հյուսնությունը, ատաղձագործությունը, փականագործությունը և այլն[4]:

Արհեստանոցների տեղաբաշխումը քաղաքում մնացել էր այնպիսի որությամբ, ինչպիսին գոյություն ուներ պարսկական տիրապետության շրջանում: Դրանք, ըստ տեսակների, դասավորված էին շարքերով կամ առանձին խմբերով և մեծ մասամբ գտնվում էին շուկա-հրապարակներում: Առաջվա նման՝ կաշեգործները, ներկարարները և այլն, որոնց արհեստները պահանջում էին բա-

[1] С. Зелинский, Город Эривань (Сборник материалов для опис. местн. и племен Кавказа, вып. I, отд. I, էջ 34).

[2] Տե՛ս նույն տեղը, տողատակի ծանոթագրություն:

[3] «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 65:

[4] Նույն տեղը:

վական մեծ քանակությամբ ջուր, իրենց արհեստանոցները տեղադրել էին Զանգվի և մասամբ Գետառի եղերքին: Ամբողջապես Զանգվի ափին էին գտնվում դինգերը և ջրաղացները:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում համքարությունները շարունակում էին գոյություն ունենալ: Դրանք իրենց ներքին կառուցվածքով, կազմակերպական ձևերով, արտադրության դրվածքով, սովորություններով ու սովորույթներով դրեթե նույնն էին

Մաշկակարի արհեստանոց (Երևանի պատմության թանգարան):

մնացել: Բայց և այնպես, 60-ական թվականներից Անդրկովկասի քաղաքներում, այդ թվում և Երևանում համքարությունների կյանքում երևան են գալիս նոր երևույթներ, որոնք առաջացել էին կապիտալիստական արտադրության առաջընթաց շարժման հետևանքով:

Անդրկովկասի վարչական վերակազմության հետ միասին և դրանից հետո՝ տեղական կառավարիչները՝ նահանգապետները, ոստիկանապետները և մյուսները ձգտում էին իրենց կառավարչության ներքո գտնվող վարչա-տերիտորիալ միավորների և քաղաքների համբողջ կյանքը վերցնել իրենց ձեռքը: Այդ նպատակին հասնելու համար, օրինակ՝ Թիֆլիսի նահանգապետն ու քաղաքային կառավարչությունը բարձրադիր իշխանություններին զեկուցագիր զեկու-

ցապրի հետևից են ուղարկում՝ համքարութիւնները վերացնելու և արհեստն ու առևտուրը պետական իշխանութիւններին ենթարկելու համար։ Նրանք իրենց զեկուցագրերում համքարութիւնները ներկայացնում են իբրև մոնոպոլ կազմակերպութիւններ և դրանց համարում Թիֆլիսում պարբերաբար կրկնվող պարենային ապրանքների՝ հատկապես հացի թանկութեան պատճառը[1]։ Թիֆլիսի նահանգական և քաղաքային վարչութեան համառ պնդումները առաջ գալու և համքարութիւնների հետագա գոյութեան ու իրավունքների հարցը պետականորեն լուծելու նպատակով փոխարքայի կողմից կազմակերպվում են հանձնաժողովներ։ Չնայած այդ հանձնաժողովների անդամների միջև դոյութիւն ուներ տարաձայնութիւն, սակայն դրանք ընդհանուր առմամբ՝ համքարութիւնների գոյութիւնը չեն համարում Թիֆլիսում եղած թանկութեան իսկական նախապայմանը։ 1852 և 1859 թթ., այնուամենայնիվ, բարձրագոյն հրամանագրով որոշ փոփոխութիւններ են մտցվում Թիֆլիսի համքարութիւնների և քաղաքային ու նահանգական վարչութիւնների փոխհարաբերութիւնների մեջ՝ համքարութիւնների ներքին կյանքը թողնելով նախկինը[2]։

Հարցը դրանով չի լուծվում։ Պետական օրգանները Թիֆլիսում համառորեն պահանջում են լիկվիդացիայի ենթարկել համքարութիւնները, առևտուրն ու արհեստագործութիւնը ամբողջովին ենթարկել պետական օրգաններին։ Հակասութիւնները համքարութիւնների ու պետական ադմինիստրացիայի՝ քաղաքային ու նահանգական պաշտոնեութեան միջև գնալով սրվում են և 1865 թ. հասնում բացարձակ ընդհարման։

Ընդհարումը հակասութիւններին վերջ չտվեց։ Հարձակումները համքարութիւնների վրա շարունակվում էին, և այդ հարձակումներն անհետևանք չմնացին։ 1867 թ. ապրիլի 5-ին հրապարակվեց օրենք՝ Թիֆլիսի համքարութիւնները վերակառուցելու մասին։ Դրա կիրառմամբ վերացան առևտրական համքարութիւնները, իսկ արհեստավորական համքարութիւնները, որոնք իրենց ներքին կառուցվածքով զարձյալ մնացին նույնը, շատ կողմերով ենթարկվեցին քաղաքային ադմինիստրացիային։ Դրանցից բացի, այդ նոր

[1] Տե՛ս АКАК, т. XI, էջ 874—879, П. Шаншиев, Два слова об амкаре, էջ 1, 18, 28, С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 329—334։

[2] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, Городские цехи, էջ 334—335։

կանոնադրութեամբ ստեղծվեցին նաև բանվորական ցեխեր (համքարութիւններ)[1]։

Այդ կանոնադրութիւնը տարածվում էր միայն Թիֆլիսի համքարութիւնների վրա։ 1869 և 1886 թթ. Ախալցխայի քաղաքային հասարակութիւնը, որի մեծ մասը բաղկացած էր արհեստավորներից, և 1886 թ. Երևանի արհեստավորները նահանգապետների միջոցով միջնորդում են, որպեսզի իրենց մոտ ևս անցկացվի Թիֆլիսում կիրառված կանոնադրութիւնը, սակայն բոլոր դեպքերում էլ մերժում են ստանում[2]։

Ընդհանուր առմամբ, համքարութիւնները շատ հեռու էին մոնոպոլ կազմակերպութիւններ լինելուց։ Սակայն առևտրական որոշ համքարութիւններ, մեր կարծիքով, կարող էին որոշակի ազդեցութիւն թողնել այս կամ այն ապրանքի գնի բարձրացման կամ իջեցման վրա։ Այդ երևույթը նկատվում էր ոչ միայն Թիֆլիսում, այլև Երևանում։ Երևանում հրատարակվող «Պատկ» թերթի 1880 թ. ապրիլի 15-ի առաջնորդողում հաղորդվում է այն մասին, որ Երևանի հացագործութիւնն ու հացավաճառութիւնն ամբողջապես գտնվում են մի քանի հարուստ հացավաճառների ձեռքին։ Իսկ սրանք էլ, օգտվելով իրենց մենաշնորհ դրութիւնից, հացի գները նշանակում են այնպես, ինչպես իրենք են ցանկանում։ Թերթը գրում է, որ նրանց համար սկզբունք էր դարձել կամայականութիւնը. «ում կամենամ — կտամ, ինչ գնով կամենամ — կծախեմ», ասված է վերոհիշյալ հոդվածում[3]։ Հոդվածում նաև նշվում է այն մասին, որ Երևանի հարուստ հացավաճառները ունեն «ոչ թե մեկ, այլև երկու և երեք հացի խանութ»[4]։

Երևանում առևտրական և արհեստակցական համքարութիւնների և դրանցում ընդգրկված առևտրականների ու արհեստավորների թվի վերաբերյալ ամբողջական տվյալներ են հաղորդված Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեի կողմից։ Ըստ նահանգական վիճակագրական կոմիտեի տվյալների, որոնք Անդրկովկասի մյուս նահանգներին ու քաղաքներին վերաբերող տվյալների հետ միասին հրատարակված են մի քանի տեղերում, 1863 թ. դրութեամբ Երևանի առևտրական ու արհեստակցական համքարութիւնների կազմն ու նրանցում ընդգրկված վարպետ-

[1] С. А. Егиазаров, Исследование по истории учреждений в Закавказьи, ч. II, городские цехи, էջ 338—354։

[2] Նույն տեղը, էջ 355—358։

[3] «Պատկ» (լրագիր), Երևան, 1880, ապրիլի 12, № 5։

[4] Նույն տեղը։

ները, վարպետացուներն ու աշակերտները (և բանվորները) հետևյալ պատկերն էին ներկայացնում[1].

Աղյուսակ 16

№ կ/կ	Համքարության անունը	Վարպետներ	Վարպետների տներում աշխատող բանվորներ	Աշակերտներ	Ընդամենը
1	Բազազների	233	117	—	350
2	Դուքանչիների	63	45	—	108
3	Կաշեգործների	8	30	—	38
4	Գղնձագործների և անագազօծողների	27	—	—	27
5	Դարբինների	20	—	45	65
6	Հացահատիկ վաճառողների	6	42	—	48
7	Բրուսների	11	23	19	53
8	Արծաթագործների	6	8	21	35
9	Ատաղձագործների և հյուսների	49	90	150	289
10	Եվրոպական դերձակների	11	25	30	66
11	Ասիական դերձակների	18	55	20	93
12	Կոշկակարների	60	90	150	300
13	Մխախոտագործների	18	30	50	98
14	Մոմագործների	9	—	14	23
15	Երիզաթելագործների	4	—	9	13
16	Դեղակ կարողների	40	—	10	50
17	Փականագործների	40	—	3	43
18	Թամբագործների	8	12	19	39
19	Որմնադիրների	25	60	70	155
20	Մաշկակարների	10	5	15	30
21	Գայտարների	12	—	10	22
22	Վարսավիրների	12	—	25	37
23	Հացագործների	18	50	—	68
24	Քառ պատրաստողների	4	—	7	11
25	Գզրարների	10	10	—	30
26	Դեղապրանք և այլ նման ապրանքներ վաճառողների	52	—	—	52
27	Մրգավաճառների (բախկալ)	42	—	—	42
28	Կաուչագործների[2]	—	—	—	—
	Ընդամենը	816[3]	692	667	2175

[1] Աղյուսակը կազմված է քաո «Сборник статистических сведений о Кавказе» աշխատության (т. I, отдел I, гл. II, էջ 28—32) և «Кавказский календарь на 1866 год»-ի (отдел III, էջ 67)։ Ընդ որում, երկու համքարություններ (դեղապրանքներ վաճառողների և մրգավաճառների համքարությունները) «Кавказский календарь»-ում բացակայում են։

[2] Կաուչագործների (бязников) համքարության կազմի մասին աղյուսակում ոչ մի նշում չի կատարված, սակայն Երևանի համքարությունների վերաբերյալ արված ընդհանուր դիտողություններում այն նշվում է իբրև Երևանի ամենաթարմ համքարություններից մեկը (տե՛ս՝ «Кавказский календарь на 1866 г.», отд. III, էջ 66)։

[3] Ս. Ա. Եգիազարովի մոտ գրված է 722 (տե՛ս նրա՝ «Исследование

Այդ նույն ժամանակ Թիֆլիսի և Ալեքսանդրապոլի համքարություններում ընդգրկված արհեստավորները և առևտրականները կազմում էին հետևյալ թվերը, Թիֆլիսում՝ վարպետներ 1156, ենթավարպետներ կամ աշխատակիցներ՝ 344, իսկ Ալեքսանդրապոլում՝ վարպետներ՝ 750, ենթավարպետներ կամ աշխատակիցներ՝ 603 և աշակերտներ՝ 780[1]։ Թիֆլիսի համքարությունների թվերում չեն նշված աշակերտները, առանց որոնց վարպետներն ու ենթավարպետները, ինչպես տեսնում ենք, կազմում էին 1500 հոգի, իսկ Ալեքսանդրապոլում՝ վարպետները, ենթավարպետները և աշակերտները միասին վերցրած՝ 2133։ Երևանի համքարություններում ընդգրկված արհեստավորների և առևտրականների թվերը՝ Կովկասի փոխարքայության կենտրոն և այն ժամանակվա համեմատությամբ բազմամարդ Թիֆլիսի, ինչպես և Անդրկովկասում իր արհեստագործությամբ հայտնի Ալեքսանդրապոլի համքարություններում ընդգրկված արհեստավորների ու առևտրականների թվերի նկատմամբ՝ համեմատաբար բավական բարձր են, եթե նույնիսկ ընդունելու լինենք, որ Թիֆլիսի յուրաքանչյուր վարպետին ընկնում էր 1-ից ավելի աշակերտ, որոնց թիվը, ցավոք սրտի, նշված աղյուսակում ցույց չի տրված[2]։

60-ական թվականներին Երևանի համքարությունների մեջ ամենից բազմամարդը, նշանավորը և ազդեցիկը եղել է կատեղեն վաճառողների (բազազների) համքարությունը։ Դրանից հետո, քան

[1] «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отд. I, гл. II, էջ 38, 41, 42, гл. IV, էջ 90։

[2] Նույն տեղը, գլ. IV, էջ 90։

по истории учреждений в Закавказьи» աշխատությունը, ч. II, городские цехи, Приложение № 4, էջ 377—378), որովհետև նա համքարությունների մեջ մտնող վարպետների, ենթավարպետների ու աշակերտների թվերի ընդհանուր գումարները տալիս՝ դրանց մեջ չի հաշվել մրգավաճառների (42 հոգի) և դեղապրանքավաճառների (52 հոգի) թվերը, որոնք երկուսը միասին կազմում էին 94 հոգի, պատճառաբանելով, որ դրանց կազմի մեջ մտնող արհեստավորները տրված են միայն ընդհանուր թվով և հայտնի չէ՝ դրանից քանիսն էին վարպետ, քանիսը՝ ենթավարպետ և քանիսն էլ՝ աշակերտ (տե՛ս նրա նույն աշխատությունը, էջ 338, ծանոթագրությունը)։ Այդ սխալ թիվը նրանից նույնությամբ ընդօրինակել են այլ հեղինակներ՝ առանց նիստազարովի՝ նշված դիտողությունը հաշվի առնելու։ Այդ պատճառով էլ 1863 թ. Երևանի համքարություններում գտնվող արհեստավորների ու առևտրականների (վարպետներ, վարպետացուներ, աշակերտներ) ընդհանուր թիվը ոմանք համարել են ոչ թե 2175, ինչպես իրականում կար, այլ՝ 2081, որը խոկականից պակաս է 94-ով։

իրենց նշանակության, մյուս համքարությունները ունեին հետևյալ հաջորդականությունը՝ միկիտաննների, կաշեգործների, պղնձագործների, դարբինների, կառավագործների, հացահատիկ վաճառողների (ալաֆնների), բրուտների, արծաթագործների, ատաղձագործների ու հյուսնների, դերձակների, կոշկակարների համքարությունը և այլն[1]։

Համքարությունները պահպանել էին նախկին սովորությունները, արտադրական կանոններն ու իրենց ներքին ղեկավարման սիստեմը։ Աղբյուրները վկայում են, որ հայ արհեստավորներից ու առևտրականներից կազմված համքարությունները ավելի կազմակերպված և վերջնականապես ձևավորված էին, քան ադրբեջանական կազմ ունեցող համքարությունները[2]։ Այդ պատճառով, պաշտոնական փաստաթղթերում բերված համքարությունների թվերը[3] վերաբերում են միայն հայկական համքարություններին, որովհետև դրանցից մի քանիսը կազմակերպական առումով ադրբեջանական կազմ ունեցող արհեստակցական ընկերություններ իսկական համքարություններ չեն համարել[4], պատճառաբանելով, որ ադրբեջանական արհեստավորները, «չնայած ամեն տարի յուրաքանչյուր արհեստի և առևտրի տեսակի համար ընտրում են ուստաբաշի, սակայն նրա պարտականությունը սահմանափակվում է միայն մյուս ընտրվածների (համքարության մյուս ղեկավարների — Թ. Հ.) հետ միասին առևտրի իրավունքի համար... դրամի բաշխմամբ և հավաքմամբ»[5]։

Եթե ուստաբաշու և համքարության մյուս ընտրովի ղեկա-

[1] «Кавказский календарь на 1866 г.», отд. III, էջ 66։

[2] Նույն տեղը, էջ 65—66։

[3] Նահանգական վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա՝ «Кавказский календарь на 1866 г.»-ում մի տեղ ասվում է (отд. III, էջ 66), որ Երևանի հայկական համքարությունների թիվը 1863 թ. դրությամբ եղել է 26, սակայն դրանից քիչ հետո՝ նույն տեղում (էջ 66—67) բերված ապրուստակում ցույց է տրված միայն 25-ը, բաց թողնելով կառավագործների համքարությունը։ Բացի դրանից, այդտեղ չեն տրված նաև մրգավաճառների և դեղապրանքավաճառների (аттар) համքարությունները, որոնք, ինչպես տեսանք, տրված էին մի այլ աղբյուրում (տես «Статистические сведения о Кавказе, т. I, отд. I, էջ 28—32), որը գործել կազմված էր Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեի տվյալներով։ Եվ, այսպիսով, 1863 թ. դրությամբ Երևանի հայկական համքարությունների թիվը եղել է ոչ թե 26, այլ՝ 28 (տե՛ս ապրուստակ 16)։

[4] «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 66։

[5] Նույն տեղը, էջ 65—66։

վարների միակ պարտականությունը առևտրի և արհեստի իրավունքի համար վերցվող հարկի բաշխումն ու հավաքումն էր, ինչպես ասված է մեջբերման մեջ, ապա իրոք որ այդպիսի համքարությունները արտադրության և վաճառքի բնագավառներում չեն ունեցել արհեստակցական ընկերության այնպիսի կազմակերպված բնույթ, ինչպիսին ունեին մյուս՝ հայկական համքարությունները։ Սակայն հենց ուստաբաշու և համքարության բոլոր պաշտոնների տեսակների ընտրովի այլ ղեկավարների գոյությունն ու համքարության մասշտաբով նրանց գործունեությունը, անկախ նրանից, թե այդ գործունեությունն ինչպիսի խորություն ու ծավալ ունի, ցույց են տալիս, որ ադրբեջանական կազմ ունեցող արհեստներն ու առևտրի ճյուղերն ըստ տեսակների նույնպես կազմում էին համքարություններ, որոնք սակայն հանդես էին գալիս ավելի թույլ կազմակերպվածությամբ. նրանց միավորման հիմք է ծառայել միայն գլխավորապես հարկային սիստեմը, արտադրությունն ու վաճառքը համքարական մասշտաբով չէր կազմակերպված։

Հետևապես, 1863 թ. դրությամբ, ինչպես և դրանից առաջ ու հետո Երևանում եղել են ոչ թե 28/29 կամ 31 համքարություններ, այլ շատ ավելի, ինչպես մի քանի տվյալների հիման վրա մենք ենթադրել ենք սույն աշխատության առաջին բաժնում՝ Երևանի՝ XIX դ. առաջին երեք տասնամյակների արհեստագործության մասին խոսելիս։

Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեն ինքն էլ զգացել է, որ ադրբեջանցի առևտրականների ու արհեստավորների ընկերությունները համքարական բնույթ ունեն, այդ պատճառով էլ, եթե դրանք իրրև առանձին համքարություն չի թվարկել, ապա դրանց կազմում գտնվող արհեստավորներն ու առևտրականները չի էլ համարել համքարություններից ընդհանրապես դուրս գտնվողներ։ Վիճակագրական կոմիտեն նրանց բոլորին մտցրել է հայկական համքարությունների մեջ, ծանոթագրելով, որ «չնայած մուսուլմանները չեն գտնվում հայ արհեստավորների համքարությունների կազմում, բայց բերված թվերը (որոնց հիման վրա մենք կազմել ենք 16 ապրուստակը — Թ. Հ.) ընդգրկում են և մուսուլմանների թիվը»[1]։

[1] Տե՛ս «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 67։

80-ական թվականներից համքարութիւններն աստիճանաբար կորցնում են իրենց դիրքերը։ Ներքին շուկայի լայնացման և զարգացման շնորհիվ նրանք քայլ առ քայլ քայքայվում են[1] և XX դարի սկզբներին դադարում գոյութիւն ունենալուց։

Համքարութիւնները ամբողջութեամբ չէին ընդգրկում քաղաքի արհեստավորներին ու առևտրականներին։ 1860-ական թվականներին կային ավելի քան մեկ և կես տասնյակի հասնող արհեստավորական ու առևտրական զբաղմունքներ, որ համքարութիւններ չէին կազմում։ Այդ զբաղմունքների ներկայացուցիչները, որոնք համարվում էին համքարութիւնից դուրս գտնվող ազատ արհեստավորներ կամ առևտրականներ, նույնպես բաժանվում էին երեք կարգի՝ վարպետների, ենթավարպետների ու աշակերտների։ Ինչպես հաղորդում են աղբյուրները, երևանում՝ նշված ժամանակներում համքարութիւններ չկազմող արհեստներով զբաղված էին աղբրեջանցիները, բացառութեամբ բուլկեգործութեան և կառապանութեան, որոնցով մեծ մասամբ զբաղվում էին ռուսները (ռուս աղանդավորները)[2]։

Համքարութիւններ չկազմող զբաղմունքների և դրանց ներկայացուցիչների թվի վերաբերյալ դարձյալ ամբողջական տվյալներ են հաղորդված երևանի նահանգական վիճակագրական կոմիտեի կողմից։ Այդ տվյալները նույնպես վերաբերում են 1863 թվականին և զետեղված են Կովկասի մասին կազմված վիճակագրական ժողովածվում ու 1866 թվականի «Кавказский календарь»-ում։

Հիմք ընդունելով այդ երկուսի բովանդակած տվյալները՝ Երևան քաղաքում համքարութիւններ չկազմող արհեստների և դրանց անձնակազմի համար կարելի է կազմել հետևյալ ազյուսակը (1863 թ. դրութեամբ)[3]։

[1] О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, էջ 57։
[2] «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 68։
[3] Сборник статистических сведений о Кавказе», т. I, отдел I, гл. II, էջ 31—32, «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 67—68։

№ կ/կ	Զբաղմունքի (արհեստի) տեսակը	Վարպետ-ներ	Ենթավար-պետներ	Աշակերտ-ներ	Ընդամենը
1	Բուլկեգործներ	2	3	—	5
2	Մսագործներ	18	40	—	58
3	Մաֆրաշագործներ	3	—	—	3
4	Քապիքագործներ	8	18	10	36
5	Կոնֆետագործներ	2	—	—	2
6	Փախանակագործներ	26	—	25	51
7	Ասիական կենդանապիրներ	5	—	—	5
8	Կառապաններ	32	5	—	37
9	Ջիթուժներ (առանց կրթության)	10	—	—	10
10	Ժամագործներ	3	—	—	3
11	Գարանագործներ	6	8	—	14
12	Ջրաղացագործներ	2	—	—	2
13	Սղոցագործներ	8	—	—	8
14	Թափրագործներ	5	10	—	15
15	Կնիքագործներ	3	—	—	3
16	Հրթիռագործներ	10	—	8	18
	Ընդամենը	143	84	43	270

Համեմատելով համքարութիւնների մեջ գտնվող արհեստավորների ու առևտրականների թիվը համքարութիւններից դուրս եղածների հետ, տեսնում ենք, որ առաջիններն ավելի քան 8 անդամ բազմամարդ էին վերջիններից։ Բացի դրանից, զբաղմունքներն առանձին-առանձին վերցրած, համքարութիւններ կազմողներն ընդհանուր առմամբ ավելի բազմանդամ էին, քան համքարութիւններ չկազմող զբաղմունքների ներկայացուցիչները։ Իսկ մյուս բոլոր առումներով՝ կապիտալի մեծութեամբ, աշխատանքային գործիքների կատարելագործության վիճակով, վաստակի չափով, աշխատանքի արտադրողականութեամբ և այլն, համքարութեան մեջ մտնող և դրանից դուրս գտնվող միատեսակ արհեստավորները ոչնչով չէին տարբերվում իրարից։

1828—1879 թթ. Երևանի քաղաքային արտադրութիւնը չէր սահմանափակվում միայն արհեստագործութեամբ։ Քաղաքի որոշ արտադրական ձեռնարկութիւններ հիշատակվում են «ֆաբրիկաներ» ու «գործարաններ» անվան տակ, չնայած որ դրանք ո՛չ իրենց տեխնիկական վիճակով, ո՛չ էլ մեծութեամբ ու արտադրանքի չափերով արհեստանոցներից գրեթե չէին տարբերվում։

Վ. Ի. Լենինը խոսելով ցարական վիճակագրության բնույթի մասին, գրում է, որ «Ռուսաստանում բնդհուպ մինչև XIX դարի վերջերը՝ «ֆաբրիկա և գործարան» հասկացողության ոչ մի ստույգ բնորոշում չկա, ուստի և ադմինիստրացիայի նահանգական ու նույնիսկ գավառական մարմիններն այդ տերմինն ամենատարբեր ձևով են կիրառում։ Ոչ մի կենտրոնական մարմին չկար, որը դեկավարեր տեղեկությունների կանոնավոր ու միատեսակ հավաքումն ու նրանց ստուգումը»[1]. իսկ մի այլ տեղում, դարձյալ խոսելով նույն հարցի մասին, Վ. Ի. Լենինը ավելացնում է, որ «...նահանգապետական հաշվեհանձնությունները տասնյակ հազարավոր գյուղատնտեսական ու տնայնագործական մանր գործատներ «գործարանների» թվի մեջ են գցել։ Նման գործատները գործարանների թվի մեջ էին ընկնում, իհարկե, բոլորովին պատահաբար, բուռ առանձին արտադրությունների, բուռ առանձին նահանգների ու գավառների»[2]։

Ճիշտ նույնպիսի բնույթ ուներ նաև Երևանի նահանգի ու նրա կենտրոն Երևան քաղաքի արտադրական ձեռնարկությունների վիճակագրությունը։ Այստեղ էլ կամայական կերպով «գործարանների ու ֆաբրիկանների» մեջ են մտել սովորական արհեստավորական և տնայնագործական փոքր ձեռնարկություններ։ Ընդ որում, տարբեր ժամանակներում, տարբեր հիմնարկների ու անձնավորությունների կողմից կատարված ցուցակագրությունների մեջ իբրև «գործարաններ ու ֆաբրիկաններ» մտել են տարբեր մեծության ու բնույթի ձեռնարկություններ։

Այդպիսի «գործարաններ ու ֆաբրիկաններ», ինչպես տեսանք, Երևանում հիշատակվում են տակավին XIX դ. առաջին քառորդում։ Հետագայում, Երևանը պարսկական լծից ազատագրվելուց հետո, տասնյակ տարիներ շարունակ դրանց արտադրական կյանքում, այն է՝ ձեռնարկությունների խոշորացման, դրանց տեխնիկական առաջընթացի որևէ փոփոխություն տեղի չի ունենում։ Ե՛վ իրենց թվով, և՛ բնույթով 1829/32 թթ. կամերալ ցուցակագրման ժամանակ Երևանում եղած «գործարաններն ու ֆաբրիկանները» դրեթե անշարժ են մնում մինչև 50—60—70-ական թվականները։ Ուստի արդյունաբերության առումով մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում շատ քիչ ուշադրության արժանի է միայն նրա վերջին 25—30 տարին, որի ընթացքում, բուռ մեզ հասած վիճա-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 3, էջ 387։

[2] Նույն տեղը, էջ 389։

կագրական տվյալների, նշելու արժանի թվական ու արտադրական կարգի փոփոխություններ են նկատվում Երևանի «գործարանների ու ֆաբրիկանների» կյանքում։

Երևանում եղած «գործարանների ու ֆաբրիկանների» կազմի, դրանց թվի, դրանցում ընդգրկված բանվորների թվի և արտադրանքի չափի մասին գաղափար կազմելու համար սկզբնաղբյուրների հաղորդած տվյալների հիման վրա ներկայացնում ենք մի աղյուսակ, ժամանակագրական առումով նրա մեջ ընդգրկելով մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վերջին 30 տարին՝ 1851—1880 թթ.։

Աղյուսակ 18

Երևան քաղաքի «գործարաններն ու ֆաբրիկաները»

№№ կ/կ	Ձեռնարկության տեսակը	1851–52 թթ.[1]			1863 թ.			1865 թ.[3]			1880 թ.[4]		
		գործարանների քանակը	մեկ գործարանում միջին հաշվով բանվորների թիվը	գործարանների տարեկան արտադրանքի միջին արժեքը (ռուբլի)	գործարանների քանակը	մեկ գործարանում միջին հաշվով բանվորների թիվը	գործարանների տարեկան արտադրանքի միջին արժեքը (ռուբլի)	գործարանների քանակը	մեկ գործարանում միջին հաշվով բանվորների թիվը	գործարանների տարեկան արտադրանքի միջին արժեքը (ռուբլի)	գործարանների քանակը	մեկ գործարանում միջին հաշվով բանվորների թիվը	գործարանների տարեկան արտադրանքի միջին արժեքը (ռուբլի)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Կաշվի «գործարան»-ներ	12	—	—	29	—	—	25	—	11200	—	—	—
2	Ներկատներ	68	—	—	46	—	—	—	—	—	—	—	—
3	Բուտագործական և աղյուսի «գործարան»-ներ (1880 թ. տակ միայն աղյուսի)	13	—	—	4	—	—	12	—	4400	5	—	—
4	Գաջի «գործարան»-ներ	5	—	—	—	—	—	7	—	5700	7	—	—
5	Քարաղացներ	22	—	—	—	—	—	—	—	—	14	—	—
6	Ճարպահալարաններ	—	—	—	3	—	—	4	—	260	—	—	—

[1] «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, Эриванская губерния, էջ 229, К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 447).

[2] «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 68։

[3] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 48։

[4] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, էջ 38).

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
7	Օճառի «գործարան»-ներ	—	—	—	1	—	—	2	—	2600	—	—	—
8	Գինեգործարաններ և օղեթորման գործարաններ . .	—	—	—	3	—	—	2	—	8600	9	—	—
9	Մոմի «գործարաններ»	—	—	—	—	—	—	14	—	14000	—	—	—
10	Մախաոտի «ֆաբրիկա»	—	—	—	—	—	—	—	—	—	1	—	—
11	Հանքային ջրի գործարաններ . . .	—	—	—	—	—	—	—	—	—	2	—	—
12	Սառնարաններ . .	—	—	—	—	—	—	—	—	—	23	—	—
13	Բրնձի դինգեր . .	—	—	—	—	—	—	—	—	—	6	—	—
14	Տպարաններ . . .	—	—	—	—	—	—	—	—	—	3	—	—
15	Քարհանքեր . . .	—	—	—	—	—	—	—	—	—	19	—	—
	Ընդամենը	120	—	—	86	—	—	66	—	46760	89	—	—

Աղյուսակից նախ և առաջ երևում է, որ տարբեր ժամանակներում ու հեղինակների մոտ «գործարան ու ֆաբրիկա» հասկացողությունը տարբեր կերպ է հասկացվել։ Այսպես, կաշեմշակման արհեստանոցները և ներկատները գործարանների շարքում են դասված 1851, 1863 և 1865 թթ.՝ մեզ հասած սկզբնաղբյուրներում՝ մինչդեռ 1880 թվականի տակ դրանք չեն հիշատակվում իբրև գործարաններ, չնայած այդ ժամանակ ևս գոյություն ունեին և, թերևս, ավելի խոշոր էին, քան առաջներում։ Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում միշտ գոյություն են ունեցել և բրնձի դինգերը, օղու գործարանները, «գինեգործարան»-ները, օճառի արհեստանոցները («գործարան»-ները) և այլն, սակայն դրանք մերթ հիշատակվում են իբրև գործարաններ կամ ֆաբրիկաներ, մերթ էլ դասվում սովորական արհեստանոցների շարքը։ Այսինքն, հիմնարկություններն ու անհատ մարդիկ իրենց վիճակագրությունը կատարելիս վարվել են ճիշտ այնպես, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը։

Երկրորդ դիտողությունը այն է, որ չնայած տարբեր մոտեցումներին, այնուամենայնիվ, 1880 թ. Երևանում նշվում են արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ (տպարաններ, սառնարաններ, հանքային ջրի «գործարան»-ներ և ծխախոտի «ֆաբրիկա»), որոնք նորություն էին քաղաքի էկոնոմիկայի համար։

Հարցին ավելի մոտիկից ծանոթանալու համար չի կարելի

լության մասնել այն հիշատակությունները, որոնք կատարվել են քաղաքի արդյունաբերական օբյեկտների թվարկության հետ միասին։

50-ական թվականների սկզբում Երևանի «ֆաբրիկա-գործարանային» օբյեկտների բնույթն ու մեծությունը միանգամից ակնհայտ է դառնում երկու փոքրիկ հիշատակություններից, որոնցից մեկը կատարել է Կ. Օլովսկին, մյուսը՝ կապիտան Ուսլարը։ Նրանցից առաջինը նշելով, որ Երևանում կան 12 «կաշեգործարան»-ներ, 68 ներկատներ («գործարան»-ներ) և 13 «բրուտագործարան»-ներ ու աղյուսի «գործարան»-ներ, ավելացնում է, որ այդ «բոլորը պատկանում են մասնավոր անձանց, որոնք տարեկան մոտավորապես ստանում են՝ առաջինից՝ մինչև 1200, երկրորդից՝ մինչև երեք հազար, իսկ երրորդից՝ մինչև երկու հազար արծաթ ռուբլի եկամուտ։

Մանուֆակտուրային ֆաբրիկաներ գոյություն չունեն»[1]։

Կ. Օլովսկու այդ հիշատակությունից միանգամայն պարզ կերպով երևում է, որ 50-ական թվականների սկզբին Երևանի արդյունաբերական օբյեկտները իրենց մեծությամբ և արտադրանքի չափերով գրեթե ոչնչով չէին տարբերվում արհեստանոցներից։ Երկրորդ հիշատակությունը Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների մասին, որ կատարել է կապիտան Ուսլարը, ընդամենը մի քանի բառից է բաղկացած, սակայն ավելի բնորոշ է, քան Կ. Օլովսկու վերը բերված հիշատակությունը։ Նա գրում է՝ «Երևանում իսկական գործարաններ բոլորովին չկան», չնայած, ինքն էլ հետևելով տրադիցիային՝ դրանից հետո նշում է մի քանի «գործարան»-ներ[2]։

50-ական թվականների սկզբներին, երբ շինարարության համար թրծած աղյուսի փոխարեն սովորաբար օգտագործում էին ոչ թրծածը, Երևանի աղյուսի «գործարան»-ները գրեթե չէին գործում[3] կամ գործում էին մեծ ընդհատումներով։

Այդ ժամանակ մի աղբրեջանցու կողմից փորձ է կատարվում տեղական օբսիդիանի բազայի վրա Երևանում հիմնելու ապակե գործարան։ Նա, իրոք փորձ, արտադրում է տարբեր տեսակի շշեր, որոնք արժեին 10-ից մինչև 60 կոպեկ, բանկաներ՝ 10—25 կոպեկ

[1] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 г.», отд. III, էջ 447).

[2] «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, Эриванская губерния, էջ 229։

[3] Նույն տեղը։

արժողությամբ և գավաթներ՝ 10—25 կ. արժողությամբ[1]։ Չնայած արտադրանքի բանկությանը, այդ փորձը ժամանակին համարվել է հաջող և գինու, օղու արդյունաբերության զարգացման համար հույժ կարևոր։ Ապակյա ամանների տեղափոխումը հեռավոր վայրերից՝ այն ժամանակվա պայմաններում անձեռնտու էր և գրեթե անհնար։ Սակայն վերջ ի վերջո ադրբեջանցի ձեռնարկուն հրաժարվում է ապակու գործարան կառուցելու իր մտադրությունից[2]։ Տեղում պահանջի չլինելու պատճառով այն՝ ձեռնարկատիրոջը ոչ մի օգուտ չէր կարող բերել։

Դրանից ավելի քան 12 տարի անց, 1863 թ. Երևանի «գործարան»-ներին ու «ֆաբրիկա»-ներին դարձյալ նույնպիսի գնահատական է տրվում ժամանակակիցների կողմից, որոնք իրենց ձեռքի տակ եղած տվյալները վերցրել են Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեի հաշվետվություններից։ Ահա՛ թե ինչ է ասված այդ ժամանակվա Երևանի գործարանների թվի, բնույթի, մեծության և արտադրանքի չափի վերաբերյալ.

«Երևանում ֆաբրիկաներ գոյություն չունեն, գործարանային արդյունաբերությունը արտակարգ թույլ է զարգացած։ Չնայած բոլոր գործարանները հաշվվում են 86..., սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ բոլոր գործարանները, ինչպես չափազանց ճահճանափակ ծավալով... և արտադրությամբ, այնպես և տեխնիկական առումով գտնվում են ամենանախնական վիճակում, այնպես որ իսկական իմաստով Երևան քաղաքում գործարանային արդյունաբերություն գրեթե գոյություն չունի։

Այստեղի, այսպես կոչված, շատ գործարաններ ոչ ավելի են, քան բանվորական արհեստանոցներ, կառուցված բնակելի տներին կից»[3]։

Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեի հաշվետվությունից քաղված և նրա տվյալների հիման վրա ասված ժամանակակցի այդ խոսքերն այնքան պարզ, ճիշտ և դիպուկ են այն ժամանակվա Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների վերաբերյալ, որ չեն կարող առաջացնել որևէ կասկած կամ տարակուսանք։

60-ական թվականների Երևանի «գործարանային» արտադրու-

[1] «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, էջ 229, տե՛ս նաև К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 447)։

[2] Նույն տեղերը։

[3] Տե՛ս «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 68։

թյունների մեջ ամենակարևոր տեղը գրավում էին կտավի ներկումը (կապույտ, կարմիր և կանաչ գույներով), կաշվի մշակումը և օղեթորումը[1]։ Մեզ հասած տվյալներով, դրանցից առաջինը տարեկան յուրաքանչյուր արտադրողի տալիս էր 700 ռուբլուց ոչ պակաս եկամուտ, իսկ կաշեմշակումից յուրաքանչյուր արտադրողի տարեկան ստացած եկամուտը դրանից էլ ավելի պակաս էր։ Ըստ երևույթին, դրանց մեջ էլ բոլորից եկամտաբերը եղել է օղեթորումը։ 60-ական թվականներին «գործարանային» օղեթորումը Երևանի տնտեսության գրեթե այն միակ ճյուղն էր, որի արտադրության մի զգալի մասը վաճառքի էր տարվում նահանգի հեռավոր գավառները՝ Նոր Բայազետ և Ալեքսանդրապոլ[2]։ Այդ ժամանակներում Երևան քաղաքից դեպի Նոր Բայազետ և Ալեքսանդրապոլ վաճառքի համար տարեկան տարվում էր մինչև 10 հազար ռուբլու օղի[3]։

«Գործարան»-ների արտադրանքի չափի մասին համեմատաբար ավելի ամբողջական տվյալները վերաբերում են 1865 թվականին և հաղորդված են Երևանի քաղաքային ոստիկանապետի տեղակալի զեկուցագրում։ Ըստ այդ զեկուցագրի, Երևանում գոյություն ունեին 60 «գործարան ու ֆաբրիկա», որոնք բոլորը միասին տարեկան (տվյալ դեպքում 1865 թվականին) տալիս էին 46760 ռուբլու արտադրանք (հաշված արծաթ դրամով)[4]։ Այդ ամբողջ գումարը բաժանելով ձեռնարկությունների թվի վրա, ստանում ենք 779 ռ. 33 կ., որը և կազմում է մեկ գործարանի տարեկան միջին արտադրանքը։ Նշված 60 գործարանների մեջ բոլորից բարձր արտադրանքը տվել են գինու գործարանները։ Դրանք թվով եղել են երկուսը, որոնք միասին տվել են տարեկան 8600 ռուբլու արտադրանք (տե՛ս աղյուսակ 18), այսինքն՝ յուրաքանչյուրը տարեկան տալիս էր 4300 ռուբլու արտադրանք, որը 5,5 անգամ ավելի է, քան տվյալ ժամանակվա քաղաքի մեկ գործարանի միջին արտադրանքը (779 ռ. 33 կ.)։

Իրենց մեծությամբ, բանվորների թվով ու արտադրանքի չափով Երևան քաղաքի «գործարան»-ները քիչ էին տարբերվում Երևանի նահանգի մյուս քաղաքների ու գյուղական վայրերի «գործարան»-ներից։ Երևանի նահանգի «գործարանների ու ֆաբրիկանների» թվի, դրանցում աշխատող բանվորների քանակի և ար-

[1] Տե՛ս «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 68։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը։

[4] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 48։

տադրանքի չափի մասին համեմատաբար լիակատար տեղեկություններ է տվել նահանգական վիճակագրական կոմիտեն։ Մենք օրինակի համար վերցնում ենք նրա երկու տարվա հաշվետվությունների տվյալները՝ մեկը 1864 թվականի վերաբերյալ, որը պահվում է Հայկական ՍՍՌ ՊԿՊԱ-ի 125 ֆոնդում, մյուսը՝ 1873 թ., որը Անդրկովկասի մյուս նահանգների վերաբերյալ նույնատիպ տվյալների հետ միասին զետեղված է «Кавказский календарь»-ի 1875 թ. համարում՝ «Վիճակագրական տեղեկություններ Կուլիկասի և Անդրկովկասի ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության վիճակի մասին 1873 թվականին» վերնագրի տակ։

Երևանի նահանգի «գործարաններն ու ֆաբրիկաները», դրանցում աշխատող բանվորների թիվը և տարեկան արտադրանքի չափը

Աղյուսակ 19

№ կ/կ	Արդյունաբերության ճյուղերը	1864 թ.[1]			1873 թ.[2]		
		ձեռնարկությունների քիվը	բանվորների քիվը	արտադրանքի արժեքը ռուբլիով	ձեռնարկությունների քիվը	բանվորների քիվը	արտադրանքի արժեքը ռուբլիով
1	Ձկնորսություն (և գինեգործություն)	22	40	24000	30	63	21204
2	Բրուտագործություն	39	85	4000	46	192	20988
3	Մոմագործություն և ճարպահալություն	18	74	25000	44	68	8490
4	Կաշեգործություն	55	126	25000	36	139	9500
5	Նկրկագործություն	4	95	29000	80	131	9950
6	Կղմինգրագործություն	15	112	12000	—	—	—
7	Ծխախոտագործություն	16	64	22700	37	137	19240
8	Չիթհանություն	227	700	90000	258	666	44015
9	Կրագործություն	19	42	12000	16	61	8476
10	Մետաքսագործություն	—	—	—	1	60	50000
11	Մխախոտագործություն	—	—	—	1	7	20000
12	Աղյուսագործություն	—	—	—	13	57	20675
13	Աղի արդյունաբերություն	—	—	—	2	30	60000
14	Ջրաղացաքարի արտադրություն	—	—	—	3	30	1500
	Ընդամենը	415	1338	243700	567	1641	294038

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 7։

[2] «Кавказский календарь на 1875 год», отдел II, էջ 213։

Բերված թվերը խիստ մոտավոր են[1], հակառակ, բայց և այնպես, իբրև պաշտոնական թվեր, դրանց հիման վրա կարելի է մոտավոր գաղափար կազմել արդյունաբերական ձեռնարկությունների մեծության և տարեկան արտադրանքի քանակի մասին։ Ըստ բերված աղյուսակի, Երևանի նահանգում 1864 թ. արդյունաբերական («գործարանային և ֆաբրիկային») յուրաքանչյուր ձեռնարկության միջին հաշվով ընկնում էր մոտավորապես 3 բանվոր, իսկ տարեկան արտադրությունը կազմում էր մոտավորապես 587 ռուբլի։ 1873 թ. տվյալներով՝ նահանգի յուրաքանչյուր ձեռնարկությանը դարձյալ ընկնում էր մոտավորապես 3 բանվոր, իսկ տարեկան արտադրանքը՝ մոտ 519 ռուբլի, այսինքն՝ ավելի պակաս, քան 1864 թվականին։ Եթե նահանգի մասշտաբով հաշված յուրաքանչյուր գործարանի տարեկան արտադրանքի չափը՝ 519/587 ռուբլին համեմատենք նույն ժամանակներում Երևանի յուրաքանչյուր գործարանի տարեկան միջին արտադրանքի չափի հետ (779 ռուբլի), կտեսնենք, որ վերջինս և՛ մի փոքր մեծ է, և՛ նրա արտադրանքը զգալի չափով գերազանցում է առաջինին։

Երևանի «գործարան»-ների ու «ֆաբրիկա»-ների համար հումք էին ծառայում անասնապահական մթերքները, որոնց բազայի վրա աշխատում էին սալահալարանները, օճառագործարանները, կաշեմշակման, մոմի «գործարան»-ները և այլն։ Արդյունաբերական ձեռնարկությունների երկրորդ խմբի՝ գինեգործարանների ու օղեթորման գործարանների համար հումքը խաղողն էր, վերջինների համար հումք էր ծառայում նաև քիշմիշը։ Կային նաև ձեռնարկու-

[1] Երևանի նահանգական վիճակագրական տվյալների անճիշտ լինելը պարզ կերպով երևում է աղաղակող այն տարբերություններից, որ դրանցում գտնում ենք դրեթե միևնույն ժամանակվան վերաբերող հաշվետվություններում։ Այսպես, եթե բուն կոմիտեի հաշվետվության՝ 1864 թ. Երևանի նահանգի արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները եղել են 415, նրանցում աշխատող բանվորների քիվը՝ 1338, իսկ տարեկան արտադրությունը կազմել է 243.700 ռուբլի, 1873 թ. համար նույն կոմիտեի տված թվերն են՝ նահանգի ձեռնարկությունները՝ 567, բանվորների քիվը՝ 1641, արտադրանքը՝ 294.038 ռ. (տես աղյուսակը)։ Մինչդեռ այդ երկու տարեթվերի միջև գտնվող 1867 թվականի համար նահանգապետի հաշվետվության մեջ (իսկ այդ հաշվետվության անտեսական բաժնի ցուցանիշներն ամբողջապես վերցվում էին վիճակագրական կոմիտեի հաշվետվություններից) նահանգի արդյունաբերական ձեռնարկությունների ընդհանուր քիվը արված է 261, գրանցում աշխատող բանվորների քիվը՝ 2152, իսկ տարվա արտադրանքի արժեքը՝ 619.280 ռուբլի (տե՛ս ЦГИА Грузинской ССР, ф. 12, д. 2191)։ Այսպիսի ակներև հակասությունները նահանգական վիճակագրական կոմիտեի տվյալների մեջ տարածյալ արդյունք էին ոչ ճիշտ հաշվառման։

թյուններ, որոնք աշխատում էին բնական-հանքային բազայով։ Դրանցից էին՝ աղյուսի, գաջի, կրի և այլ «գործարան»-ները[1]։

60—70-ական թվականներին ռուսական պետության կենտրոնական նահանգները արդյունաբերական առումով ձեռք էին բերել նոր հաջողություններ[2] և Անդրկովկասի նկատմամբ ունեին անհամեմատ ավելի բարձր զարգացում։ Հետագա տասնամյակներում այդ տարբերությունը շարունակեց գոյություն ունենալ։



Գինու «գործարան» նախկին սարդարի այգում (Երևանի պատմության թանգարան)։

Անդրկովկասում և Հայաստանում արդյունաբերության թույլ զարգացման հիմնական պատճառը ցարիզմի գաղութային քաղաքականությունն էր, որից բխող բոլոր միջոցառումներով հանդերձ։ Սակայն, բացի այդ ընդհանուր և գլխավոր պատճառից, կային և այլ ազդակներ, որոնք բացասաբար էին ազդում Հայաստանի արդյունաբերության զարգացման վրա։ Դրանք էին՝ գյուղատնտեսական ռեֆորմը ուշացումով և ավելի կրճատված ձևերով անցկացնելը, որի շնորհիվ Հայաստանում ճորտատիրական մնացորդները ավելի շատ պահպանվեցին, Հայաստանի՝ ռուսական պետության կենտրոնական զարգացած շրջաններից հեռու գտնվելը,

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 48։

2 Պ. Ի. Լյաշչենկո, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության պատմություն, հ. II, Երևան, 1950, էջ 87 և 93։

երկրի ներսում և նրա ու հարևան շրջանների միջև բարեկարգ հաղորդակցության ճանապարհների և կատարելագործված հաղորդակցության միջոցների բացակայությունը և այլն։

Երևան քաղաքը Հայաստանում անցկացված և՛ գյուղացիական ռեֆորմը (1870 թ.), և՛ դրանից 9 տարի անց այնտեղ լիրառված բուրժուական քաղաքային ռեֆորմը (1879 թ.) դիմավորեց ձեռքի աշխատանքով գործող մի քանի տասնյակի հասնող «գործարան»-ներով ու «ֆաբրիկա»-ներով, որոնք ըստ էության իրենցից ներկայացնում էին սովորական տնայնագործական և արհեստավորական փոքրիկ ձեռնարկություններ, փոքրիկ և՛ իրենց բանվորների թվով, և՛ արտադրանքի չափերով։

Գոյություն ունեցող օրենքի համաձայն, ամբողջ պետության մեջ ֆաբրիկաներում, մանուֆակտուրային և այլ կարգի ձեռնարկություններում բանվորական օրվա տևողությունը սահմանված էր՝ ցերեկային աշխատանքի համար ոչ ավելի, քան $11\frac{1}{2}$, իսկ հերթափոխային աշխատանքի (գիշերային աշխատանքի) համար՝ մինչև 10 ժամ[1]։ Սակայն հենց նույն օրենքը ամենևին չէր արգելում բանվորների և հիմնարկի միջև «փոխադարձ համաձայնությամբ» արտաժամյա աշխատանք նշանակելը[2]։ Այդպիսի «փոխադարձ համաձայնություն»-ները փաստորեն իր չիք էին դարձնում օրենքը։ Պետության բոլոր մասերում և ձեռնարկություններում աշխատանքային օրվա տևողությունը փաստորեն շատ ավելի էր, քան օրենքով սահմանվածը։ Երևանի ձեռնարկություններում հերթափոխային կամ գիշերային աշխատանք[3] չի եղել։ Դրանցում աշխատող արհեստավորների և բանվորների աշխատանքային օրվա տևողությունը սովորաբար չէր սահմանափակված օրենքով։ Ըստ հին սովորության, նրանք ամբողջ ցերեկը գտնվում էին աշխատանքի մեջ։

Ձեռքի աշխատանքով զբաղվող ազատ վարձու արհեստավորների և բանվորների աշխատավարձը չնչին է եղել։ 1869 թ. բարձրագույն հրամանով ցարը հաստատել էր ազատ վարձու աշխատանքի վարձատրման համար հատուկ օրենք։ Օրենքով սահմանված դրույքները ոչ միայն շատ ցածր էին, այլև կյանքում գրեթե բոլորովին չէին էլ կիրառվում, յուրաքանչյուր ձեռնարկություն ու ձեռնարկատեր ուներ աշխատավարձի իր չափերը, որոնք որոշվում

1 Свод законов, кн. III, т. XI, էջ 506—507։

2 Նույն տեղը, էջ 507։

3 Հերթափոխային կամ գիշերային է կոչվել այն աշխատանքը, որը կատարվում էր երեկոյան ժամը 9-ից մինչև առավոտյան ժամը 4-ը։

էին միանգամայն կամայական կարգով։ Սևագործ բանվորների մեկ օրվա աշխատավարձը 70-ական թվականներին տատանվել է 30—50 կոպեկի սահմաններում[1]։

50-ական թվականի սկզբներին օրավարձով աշխատող բանվորը փաստորեն օրական ստանում էր հազիվ 20—25 կոպեկ[2]։ Վարպետ-արհեստավորների մեկ օրվա աշխատավարձը մի քիչ ավելի էր[3]։ Նրանց ռնալ աշխատավարձի աննախանձելի ցածր լինելը ակնհայտ է դառնում, երբ նայում ենք այն ժամանակվա ապրանքների, մանավանդ՝ արտադրական ապրանքների գներին, որոնք մեջ կբերվեն առևտրի բաժնում։ Սակայն չենք կարող չհիշեցնել, որ կային սևագործ բանվորներ, որոնց մեկ օրվա աշխատավարձով Երևանի պայմաններում նույնիսկ չէր կարելի մեկ դատարկ շիշ գնել։

Արհեստավորների ու բանվորների վատթարագույն պայմանները չէին պայմանավորված միայն անշափ երկարատև աշխատաժամով և ընչին աշխատավարձով։ Ձեռնարկություններում բացակայում էին նորմալ աշխատանքային ամենատարրական պայմանները։

բ) ԱՌԵՎՏՈՒՐԸ

Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կատարվող առևտրի նշանակությունը։ Երևանի առևտրի զարգացմանը խոչնդող և արգելակող ազդակները։ Երևանով անցնող առևտրի ճանապարհները, հաղորդակցության միջոցները և բեռնաշրջանառությունը։ Մախսային սիստեմը։ Երևանը որպես տարանցիկ և արտահին առևտրի կայան։ Երևանի արտահին առևտուրը։ Երևանի ներհին առևտուրը. ներհին առևտրի ապրանքները, առևտրի կազմակերպման ձևը (շուկաներ, կրպակներ, խանութներ, առևտրական տներ, պահեստներ, գրասենյակներ)։ Չափ ու կշռի միավորները։ Առևտրականների կազմը, թիվը, կարգերը, կապիտալների մանակը։ Երևանի առևտրի ծավալը համեմատած Ալեքսանդրապոլի և Անդրկովկասի այլ բաղաքների առևտրի հետ։ Առևտրից գանձվող հարկերը։ Ապրանքների գները։

Արևելքի երկրների, հատկապես Պարսկաստանի հետ կատարվող առևտուրը XIX դարում միշտ եղել է ռուսական դիվանագի-

[1] *Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 149, թ. 6, գ. 227, թ. 7 և այլուր։*

[2] «Кавказский календарь на 1852 годъ», отд. III, էջ 449։

[3] *ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 149, թ. 6, գ. 227, թ. 7։*

տության և պետական-տնտեսական օրգանների ուշադրության կենտրոնում։ Մենք տեսանք, թե Կովկասում ռուսական տնտեսական իշխանությունների միջնորդությամբ ինչպիսի համապետական ձեռնարկումներ էին կատարվում XIX դարի առաջին տասնամյակներին Պարսկաստանի հետ առևտուրը լայնացնելու և ղարգացնելու համար։ Նույն նպատակին ուղղված միջոցառումներ էին ձեռնարկվում նաև հետագայում՝ ռուս-պարսկական պատերազմից հետո։

Պարսկաստանի հետ հաշտության բանակցությունները գրի-թավորող Գրիբոյեդովին ցուցում էր տրված՝ միշտ նկատի ունենալ Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կատարվող առևտրի օգտակարությունը և ձգտել, որպեսզի պայմանագրով ձեռք բերվեն ամենալայն հնարավորություններ՝ երկու երկրների միջև առևտուրը հետագայում էլ ավելի ծավալելու համար[1]։ Բանակցությունների արդյունքը հանդիսացող Թուրքմենչայի պայմանագրում (1828 թ. փետրվարի 10) երկու հատուկ հոդված է ընդունվում (հոդվ. VIII և X)՝ պայմանագրվող պետությունների միջև առևտրական հարաբերությունները ծավալելու, առևտրական ներկայացուցչություններ ստեղծելու, վաճառականների համար անվտանգ երթևեկության ապահովման վերաբերյալ[2]։ Չբավականանալով միայն պայմանագրի ընդհանուր դրույթներով, դրա հետ միաժամանակ և դրա այդ դրույթներից ելնելով, 1828 թ. փետրվարի 10-ին, երկու երկրների միջև կատարվող առևտրի կոնկրետ պայմանների հիման վրա կազմվում է մի ակտ, որի I, III և IX հոդվածները անմիջապես վերաբերում են երկու երկրների միջև ազատ առևտրին[3]։

Թուրքմենչայի պայմանագրից հետո ռուսական կովկասյան իշխանությունները և առանձին պաշտոնական մարդիկ բարձրաղիր օրգաններին իրենց գրած հաշվետվություններում, զեկուցագրերում և առանձին գրություններում նորից ու նորից են անդրադառնում Պարսկաստանի հետ կատարվող արտաքին ու տարանցիկ առևտրի հարցերին և նոր տվյալներով հիմնավորում դրա զարգացման հույժ կարևորությունը Ռուսաստանի և նրա մասը

1 АКАК, т. VII, էջ 623—625։

2 *Տե՛ս* Договоры России с Востоком политические и торговые, էջ 218—219։

3 *Նույն տեղը, էջ 223, 224 և 227։*

կազմող Կովկասի համար[1]։ Զբաղվարարվելով միայն տեղական իշխանությունների զեկուցագրերով՝ պետերբուրգյան իշխանությունները մերթ ընդ մերթ հատուկ հանձնարարություններով Կովկաս էին ուղարկում իրենց աստիճանավորներից։ Այսպես, Կովկասի առևտրի պայմանները և մաքսային սիստեմը ուսումնասիրելու համար՝ 1828 թ. ֆինանսների մինիստրությունը այդտեղ է ուղարկում երկու աստիճանավոր՝ տեղում գործելու համար, նրանց տալով 16 կետից բաղկացած մի հրահանգ[2]։ Այդ հրահանգի համաձայն, նրանք մանրամասն ուսումնասիրում և քննարկում են Պարսկաստանի (և մասամբ Թուրքիայի) հետ կատարվող առևտրի պայմանները՝ ջրային և ցամաքային ճանապարհների վիճակը, հաղորդակցության միջոցների, պահեստների, դրամական չափերի, մաքսատների, արտահանվող և ներմուծվող ապրանքների կազմի, Պարսկաստանի (և Թուրքիայի) հետ ունեցած առևտրի բերած օգուտների և առևտրի հետ կապված մի շարք այլ հարցեր[3]։

Ֆինանսների մինիստրության կողմից ուղարկված այդ աստիճանավորները՝ Սալվատորին և Խրիպկովը տեղում կատարած իրենց ուսումնասիրությունների արդյունքները հատուկ զեկուցագրի ձևով հանձնում են Վրաստանի կառավարչին։ Նրանք իրենց զեկուցագրում Պարսկաստանի հետ կատարվող և կատարվելիք առևտրում Երևանին տվել են առանձնահատուկ տեղ։ Ահա՛ թե ինչ են նրանք գրում իրենց զեկուցագրում. «Պարսկաստանի հետ ցամաքով կատարվող արտաքին առևտուրը՝ Հայկական մարզի հարստության և նրա դիրքի հարմարության շնորհիվ, բնականաբար պետք է կենտրոնանա Երևանում, իսկ դրա համար անհրաժեշտ է այնտեղ որոշել ապրանքների պահեստը և հիմնել մաքսատուն, ուր, Պարսկաստանի համար եվրոպական ապրանքների տրանզիտ սահմաններու դեպքում, միանգամայն հարմար կլինի և դրանց ընթացք տալը»[4]։

Պարսկաստանի հետ արտաքին և տարանցիկ առևտուրը զարգացնելու այդ հետաքրքրությունը, որն ավելի ուժեղացավ XIX դարի հենց սկզբներից, նույն թափով շարունակվեց հետագայում։ Մենք հետաքրքրող ժամանակաշրջանի վերջերին ռուսական իշխանությունները Պարսկաստանի հետ կատարվող առևտուրը դարձյալ պահում էին ուշադրության կենտրոնում։ Սակայն դրա հետ միասին հարց է դրվում նաև հենց բուն Կովկասի առևտուրը զարգացնելու՝ այն դարձնելով ռուսական զարգացող արդյունաբերության հումքի աղբյուր և վաճառահանման շուկա։

1880 թվականի «Кавказский календарь»-ում, նրա խմբագրությունը, հաշվի առնելով այդ ժամանակվա ռուսական առևտրի շահերը՝ գրում է. «Մեզ մնում է ապասել, որ ծնվի ինչ-որ մի նոր Կոլումբոս, որը կարդալով բոլոր պաշտոնական տվյալները, որոնք տպագրվում են ֆինանսների և առևտրի մինիստրների կողմից, վերջապես բաց անի Կովկասի առևտրական նշանակությունը, ապացուցի մեր հայրենական արդյունաբերության և առևտրի նախանձախնդիրներին այն պարզ ու ճշգրիտ թվերից բխող ճշմարտությունը, որ մեզնից հեռու գտնվող Չինաստանի շուկան, Պարսկաստանի շուկան, Միջին-Ասիական շուկան ամեն մեկը առանձին և բոլորը միասին վերցրած՝ Ռուսաստանի համար ավելի քիչ կարևորություն ունեին, քան թե նրա քիչ տակն ընկած Կովկասի շուկան»[1]։

Խմբագրությունն իր ասածները հիմնավորելու համար վկայակոչում է այն փաստը, որ այդ ժամանակ Կովկասի բնակչությունը ավելի մեծ թիվ է կազմել (5.387.000), քան Պարսկաստանի բնակչությունը (5 միլիոն)[2]։ Այդ պատճառով էլ, խմբագրության կարծիքով, Կովկասը իրեն շուկա ավելի մեծ շրջանակներ ուներ, քան Պարսկաստանը։ Խմբագրության կարծիքով, Կովկասը սակ տարանցիկ երկրից պետք է վերածել վաճառահանման շուկայի[3]։

XIX դարի առաջին կեսում եղած դրության նկատմամբ «Кавказский календарь»-ի խմբագրության առաջ քաշած հարցը, այն է՝ Կովկասը տարանցիկ երկրից վաճառահանման շուկա դարձնելը, Կովկասի առևտրա-տնտեսական հնարավորությունների օգտագործման բնագավառում միանգամայն նոր մոտեցում էր, որը բխում էր Ռուսաստանի արդյունաբերության զարգացման շահերից։

Պետք է նշել, որ Կովկասի առևտրա-տնտեսական հնարավորությունների օգտագործման նկատմամբ հետաքրքրություն եղել է և XIX դարի առաջին կեսին, սակայն այդ ժամանակ Կովկասը

1 ЦГИАМ (Центральный государственный исторический архив Москвы), ф. III, I эксп., 1830, д. 389, лл. 1, 2—3, 4, 5—7.

2 АКАК, т. VII, էջ 125—126։

3 Նույն տեղը, էջ 126—132։

4 Նույն տեղը, էջ 131։

1 «Кавказский календарь на 1880 год», отдел II, էջ 45—46։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

գերազանցապես օգտագործվում էր ոչ թե որպես վաճառահանման շուկա, այլ տարանցիկ երկիր՝ Պարսկաստանի հետ կատարվող առևտրի մեջ։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո՝ նրա և նրա կենտրոն Երևանի առևտուրը խթանող մի քանի ազդակներ առաջացան։ Դրանցից էին՝ ռուս-պարսկական երկրորդ պատերազմից հետո հաստատված երկարատև խաղաղությունը, քարավանների անվտանգ երթևեկության ապահովումը, միասնական չափ ու կշռի միավորների գործադրումը, որը չնայած ավելի քան կես դար չկարողացավ միանգամից շրջանառությունից հանել հին բազմապիսի չափ ու կշռի անորոշ միավորները, ճանապարհաշինությունները, որը կատարվում էր ռազմա-ստրատեգիական և առևտրա-ստրատեգիական նպատակներով, միասնական մաքսային սիստեմի կիրառումը, դրամական տուրքին անցնելը և այլն։ Երևանի համար այդ բոլորի վրա գումարվում էր նրա հարմար դիրքը՝ Պարսկաստանի ու մասամբ Թուրքիայի տարանցիկ առևտրի կարևոր կետ լինելը։

Սակայն չպետք է չափազանցնել նշված ազդակների դերն ու նշանակությունը, Անդրկովկասի, այդ թվում և Արևելյան Հայաստանի ու նրա կենտրոն Երևանի առևտրի վրա թողած ազդեցությունը։ Դրանց ազդեցությունը մեծ մասամբ տարածվում էր արտաքին, այն էլ գրեթե բացառապես տարանցիկ առևտրի վրա։ Անդրկովկասում առևտրի միակ խոշոր կենտրոնը Թիֆլիսն էր, իսկ մյուս քաղաքների՝ Բաքվի, Դերբենդի, Շամախու, Շուշու, Նուխու, Երևանի, Նախիջևանի, Քութաիսի ներքին առևտուրը տնտեսական առումով մեծ մասշտաբներ չուներ։ Անդրկովկասի 30-ական թվականների առևտրա-տնտեսական վիճակի մասին խոսելիս, Օրեստ Եվեցկին գրում է, որ նրա «առևտրի կենտրոնը Թիֆլիսն է...։ Դրանից հետո երկրորդական առևտրական քաղաքներն... են՝ Բաքուն, Դերբենդը, Շամախին, Շուշին, Նուխին, Երևանը, Նախիջևանը, Ախալցխան և Քութաիսը»[1]։

Երկրում եղած առևտրի զարգացման վրա բացասաբար ազդող պայմանները մասնավորեցնելով Երևան քաղաքի նկատմամբ, 1866 թ. «Кавказский календарь»-ում հետևյալն է գրվում. «Երևանի քաղաքի՝ առևտրական գործունեության գլխավոր կայաններից ունեցած հեռավորությունը, հաղորդակցության ճանապարհների ծայրահեղ դժվարությունը, ֆաբրիկային ու գործարանային արտադրության բացակայությունը..., այս կամ այն տեսակի հում մթերքների մշակման ավելի լավ եղանակների ճախաձեռնության և նորամուծության նկատմամբ վճռականության պակասն ու երկյուղը, որոնք պայմանավորված են բնիկների կյանքի տեղական սովորությունների փակվածությամբ և բանվորական ուժի անշարժությամբ, վերջապես ամռան ամիսներին եղած ոռոգողական միջոցների մասնակի պակասությունը, որը խափանում է այգեգործական արտադրության լայն զարգացմանը, այդ բոլորը դեռևս երկար (ժամանակ) պետք է կազմեն առևտրի առումով տեղական ամենագլխավոր արգելակները, այնպես որ քաղաքային ամբողջ դասը, չնայած իրենից ներկայացնում է վճռական անցում երկրագործական կենցաղից դեպի քաղաքային զբաղմունքներին, բայց և այնպես քաղաքացիների առևտրական և առհասարակ արդյունաբերական գործունեությունը դեռևս հեռու է լրիվ զարգացումից և երկրագործական զբաղմունքների նկատմամբ գերիշխելուց»[1]։

Ներքին առևտրի թույլ զարգացման պատճառները միանգամայն ճիշտ են ըմբռնված և հազիվ թե հարկ կա ավելին ասելու։ Ներքին առևտրի թույլ զարգացման, արդյունաբերական արտադրության բացակայության, գյուղատնտեսության մեջ ապրանքային ճյուղերի ոչ բարձր մակարդակի, արհեստագործության համեստ չափերի և մի քանի այլ պատճառների հետևանքով, Անդրկովկասի վրայով կատարվող տարանցիկ առևտուրը Հայաստանում (ինչպես և անդրկովկասյան մյուս երկրներում) քիչ էր բեկվում, նա տեղի ժողովրդական տնտեսության վրա շատ քիչ ազդեցություն էր թողնում։

Ներքին առևտուրը տարանցիկ առևտրի համեմատությամբ չնչին էր և չուներ վերջինիս զարգացման թափը։ Չնայած այն բանին, որ ինչքան ծավալուն էր լինում եվրոպական ապրանքներով Ռուսաստանի և Անդրկովկասի վրայով՝ Պարսկաստանի հետ կատարվող առևտուրը, այնքան նեղվում էր ռուսական ապրանքներով Պարսկաստանի հետ կատարվող արտաքին առևտուրը, այնուամենայնիվ, սկսած Երմոլովի, Պասկևիչի, Վորոնցովի ժամանակներից՝ ընդհուպ մինչև 80-ական թվականները, որոշ ելևէջներով, միշտ էլ տարանցիկ առևտուրը խթանվել է[2]։

[1] Ор. Евецкий, Статистическое описание Закавказского края, էջ 81։

[1] «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 64—65։

[2] «Обзор производительных сил Кавказского наместничества» («Кавказский календарь на 1880 год», էջ 45).

Անդրկովկասի վրայով Պարսկաստանի հետ կատարվող տարանցիկ առևտրի համար արտակարգ կարևոր նշանակություն ուներ Երևանը։ Նա այդ առևտրի ամենակարևոր կայաններից մեկն էր, և իբրև Պարսկաստանի ու Թուրքիայի նկատմամբ սահմանամերձ գոտում գտնվող քաղաք, դարձել էր մի տեսակ բաշխիչ կետ դեպի երկու երկրները գնացող և այնտեղից եկող ապրանքների համար։

Որպես տարանցիկ առևտրի կայան, բերդ և նահանգի կենտրոն՝ առևտրա-տնտեսական, ռազմական և վարչական առումներով Երևանի համար կարևորագույն նշանակություն ունեին այն ճանապարհները, որոնք նրան կապում էին նահանգի տարբեր գավառների, Վրաստանի ու Ադրբեջանի և Պարսկաստանի ու Թուրքիայի հետ։

Երևանից սկսվող կամ Երևանով անցնող ճանապարհները, որոնք ավելի անբարեկարգ վիճակում գոյություն ունեին և նախորդ շրջանում, կազմում էին Անդրկովկասի ճանապարհային ցանցի բաղկացուցիչ մասը։

Անդրկովկասը Ռուսաստանին միացնելուց հետո, անմիջապես, տեղական իշխանությունները սկսում են հոգ տանել ճանապարհաշինության համար։ Նրանք զգում են, որ Հյուսիսային Կովկասի ու Անդրկովկասի ճանապարհները ունեն առաջնակարգ ռազմական նշանակություն և կարևոր դեր կարող են խաղալ նաև երկրի տնտեսական ու վարչական կյանքում։ Սակայն ցարական կառավարությունը Անդրկովկասի ճանապարհների վրա պատշաճ ուշադրություն է դարձնում ավելի ուշ՝ 50-ական թվականների վերջերից, Ղրիմի անհաջող պատերազմից հետո, երբ զգում է, որ անհրաժեշտ է Անդրկովկասը ռազմա-ստրատեգիական առումով դարձնել անխոցելի, իսկ դրա կարևոր նախապայմաններից մեկը համեմատաբար բարեկարգ ճանապարհների ցանցի ստեղծումն էր։

60-ական թվականների սկզբներից Անդրկովկասում ճանապարհաշինությունը նոր թափ է ստանում. խճապատում են հին ճանապարհների մի մասը, դրանք դարձնելով այն ժամանակվա պայմաններում առաջնակարգ խճուղիներ, կառուցվում են նոր ճանապարհներ, կամուրջներ, սրահներ և այլն։

Անդրկովկասի ամենակարևորագույն ճանապարհների շինարարությունը կանոնավորելու և ընդհանուր սիստեմի ենթարկելու նպատակով 1869 թ. փոխարքայության գլխավոր վարչության կից կազմվում է մի հանձնաժողով, որի մեջ վարչական աշխատողներից բացի մտնում են և համապատասխան մասնագետներ։

Սկզբնական շրջանում հանձնաժողովը նահանգապետների և ռազմական իշխանությունների միջոցով տեղեկություններ է հավաքում երկրում գոյություն ունեցող և ռազմական ու տնտեսական առումով անհրաժեշտ նոր կառուցվելիք ճանապարհների մասին, ապա իր նիստերում քննարկման ենթարկում հավաքած նյութերը։ Հավաքված նյութերի մանրակրկիտ քննարկումից հետո՝ հանձնաժողովը կազմում է գրավոր մի զեկուցագիր, որին կցելով ռազմական իշխանությունների գրավոր կարծիքները, ներկայացնում է փոխարքային՝ հաստատելու[1]։

Հանձնաժողովի ներկայացրած այդ զեկուցագիրը 1871 թ. հուլիսի 1-ին հաստատվում է փոխարքայի կողմից և դրվում գործի մեջ[2]։

Կովկասի ռազմական նշանակություն ունեցող բոլոր ճանապարհները գտնվում էին ճանապարհային հաղորդակցության վարչության իրավասության ներքո, իսկ մյուս բոլոր ճանապարհները՝ պետական միջոցներով կառուցվող տարանցիկն ու զեմստվայինը, գտնվում էին փոխարքայության գլխավոր վարչության ճանապարհաշինարարության Կոմիտեի իրավասության տակ[3]։

Անդրկովկասում տարանցիկ ճանապարհները երկուսն էին, որոնցից մեկը Թիֆլիս—Երևան—Ջուլֆան էր, իսկ մյուսը՝ Թիֆլիս—Ելիզավետապոլ—Բաքու[4]։ Այս երկուսը համարվում էին Անդրկովկասի ամենակարևոր տարանցիկ ճանապարհները, նրա գլխավոր զարկերակները։ Թիֆլիս—Երևան—Ջուլֆա և Թիֆլիս—Ելիզավետապոլ—Բաքու ճանապարհներից բացի, Անդրկովկասում տարանցիկ ճանապարհների թվին էին պատկանում նաև Երևան—Ալեքսանդրապոլ, Ախալցխա—Ախալքալաք—Քութաիսի և այլ ճանապարհներ[5], որոնք առաջին երկուսի համեմատությամբ ունեին ավելի սահմանափակ նշանակություն։

Ճանապարհային հաղորդակցության վարչության տրամադրության տակ էին դրված Քուռի ձախ կողմում գտնվող ճանապարհները՝ մինչև Թիֆլիս, իսկ ճանապարհաշինարարության կո-

[1] М. Герсеванов, Сеть Закавказских дорог, утвержденная Великим князем наместником 1 июля 1871 года («Кавказский календарь на 1872 год», отдел II, ч. III, էջ 22).

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 23։

[4] Նույն տեղը։

[5] Նույն տեղը։

միության տրամադրության տակ մնում էին մյուս բոլոր ճանապարհները, որոնք գտնվում էին Քուռի աջ կողմում և Ռազմա-Վիրական ճանապարհից արևելք։ Վերջինիս իրավասությանը ենթակա ճանապարհները կառուցում էին ինչպես պետական, այնպես էլ զեմստվային միջոցներով և պարհակային աշխատանքների կարգով[1]։ Այդ բոլոր կարգի միջոցները նպատակային և ավելի շահավետ ձևով ծախսելու համար, քաղաքացիական գերատեսչությանը ենթակա ճանապարհները բաժանված էին մի քանի կարգի։ Առաջին կարգի ճանապարհներ (կամ պետական ճանապարհներ) համարվեցին երկուսը՝ Թիֆլիս—Երևան ճանապարհը՝ Դիլիջան—Ալեքսանդրապոլ ճյուղով հանդերձ և Թիֆլիս—Բաքու ճանապարհը, որը փաստորեն սկսվում էր ոչ թե Թիֆլիսից, այլ Ագստաֆա գետից, որովհետև մինչև այդտեղ նա համընկնում էր Թիֆլիս—Երևան ուղու հետ[2]։

Թիֆլիս—Երևան ճանապարհը ռազմական առումով ճանաչվեց որպես առաջնակարգ նշանակություն ունեցող ուղի և առաջարկվեց այն խճապատել ամբողջ տարածության վրա։ Այդ պատճառով էլ, վերը նշված հանձնաժողովը վճիռ է կայացնում՝ պետությունից ապասվող բոլոր միջոցները գործադրել Թիֆլիս—Երևան ճանապարհի և նրա Դիլիջան—Ալեքսանդրապոլ ճյուղի ավարտման վրա, ինչպես և դեպի Բաքու տանող ճանապարհի Ագստաֆա—Մինգեչաուր հատվածը բարեկարգելու համար[3]։ Դրանով փաստորեն Թիֆլիս—Բաքու ճանապարհի վրա շատ ավելի քիչ ուշադրություն էր դարձվում, քան Թիֆլիս—Երևան—Ջուլֆա ուղու վրա։ Ժամանակակիցները դա բացատրում են նրանով, որ Թիֆլիսը Բաքվի հետ հնարավոր է կապել նաև գետային ճանապարհով, ինչպես և՝ ենթադրվում էր այդ ուղղությամբ հետագայում երկաթգծի կառուցում, մինչդեռ Թիֆլիսը Երևանի հետ կապելու միակ ճանապարհը, ելնելով տեղանքի լեռնային ռելիեֆի պայմաններից, համարել են խճուղին[4]։

Դիլիջանով անցնող Թիֆլիս—Երևան ճանապարհը, որը սկզբնապես ուղղակի զցված էր երթևեկող քարավանների կողմից, գոյություն ուներ վաղ ժամանակներից, սակայն այդպիսի վիճակում նա մատչելի էր միայն գրասայների համար, այն էլ

[1] М. Герсеванов. Сеть Закавказских дорог... («Кавказский календарь на 1872 год», отдел II. ч. III. էջ 23).

[2] Նույն տեղը, էջ 23—24։

[3] Նույն տեղը, էջ 24։

[4] Նույն տեղը, էջ 24—25։

տարվա ամառային եղանակներին։ Այնպես որ, դա չէր համարվում Թիֆլիսը Երևանի հետ միացնող ողջամիտ ճանապարհ։ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո շատ շուտով պահանջ զգացվեց Թիֆլիսը Երևանի հետ կապող նախկին ճանապարհների փոխարեն կառուցել ավելի կարճ ու հարմար ուղի։ Այդ նոր ճանապարհը նախատեսվեց կառուցել Ագստաֆա գետի հովտով և Դիլիջանով անցնող փոստային ճանապարհի ուղղությամբ։ Դրա շինարարությունը սկսվում է 1834 թ.։

Ժամանակակիցները մեծ նշանակություն են տալիս Թիֆլիս—Երևան խճուղու կառուցմանը։ Նրանցից ոմանք (օրինակ՝ Ի. Շոպենը) այդ նոր ճանապարհը համարում են այս նորանվաճ երկրում ռուսական իշխանության կատարած ամենամեծ գործերից մեկը։ Սակայն ճանապարհի շինարարությունը ձգձգվում է տասնյակ տարիներ և 60-ական թվականներին նույնիսկ առաջարկներ են լինում ճանապարհն անցկացնել մի այլ ուղղությամբ։ 1865 թվականին և դրան հաջորդած տարիներին՝ Վինչի զինավորությամբ վերջնականապես ուսումնասիրվում և ճշտվում է Թիֆլիս—Երևան խճուղու ուղղությունը[1]։ Նա պետք է դուրս գար Թիֆլիսից, ձգվեր դեպի հարավ-արևելք՝ մինչև Կարմիր կամուրջը, այստեղից էլ անցներ Ագստաֆա գետի ձախ ափը և այդ ափով՝ գետի հոսանքին հակառակ ուղղությամբ՝ մինչև Դիլիջան։ Խճուղին ոլորաններով Դիլիջանից պետք է բարձրանար Գյոդշայի լճանոցը (Սևանի լճանոցք), ապա Ջիրուխլուով, Ելենովկայով (Սևան), Ախտալով (Հրազդան) և էլարով հասներ Երևան[2]։ Հենց այդ ուղղությամբ էլ կառուցվեց ճանապարհը, որը համընկնում է այժմյան Երևան—Թիֆլիս խճուղու հետ։

Թիֆլիս—Երևան—Ջուլֆա տարանցիկ ճանապարհի իսկական կառուցումը փաստորեն սկսվում է միայն 1865 թվականին, երբ Կովկասի փոխարքայի միջնորդությամբ՝ Տրապիզոն-Թավրիզ ուղղությամբ կնստարվող տարանցիկ առևտուրը Անդրկովկաս տեղափոխելու նպատակով դումարներ են բաց թողնվում այդ ճանապարհի կառուցման համար։ Բարձրադույն հրամանով, 1865 թվականից սկսած, 5—6 տարվա համար յուրաքանչյուր տարին Կովկասի փոխարքայի տրամադրության տակ է դրվում 300 հազար ռուբլի (ընդամենը 1 800 000 ռուբլի)՝ ճանապարհային շինարարության նպատակով[3]։ 250 վերստ երկարությամբ Թիֆլիս—Երևան

[1] «Кавказский календарь на 1876 год», отдел II. ч. II, էջ 95—96։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, էջ 95։

խճուղու աշխատանքները սկսելով 1865 թ.՝ 70-ական թվականների սկզբներին արդեն ավարտում են։ Թիֆլիս—Երևան ճանապարհը ամբողջ Կովկասում ամենաերկար խճուղին էր համարվում։ Հետագայում այդ ճանապարհը շարունակվում է դեպի Ջուլֆա։ Սակայն ճանապարհի Երևան-Ջուլֆա հատվածը մինչև վերջ էլ մնաց անբարեկարգ վիճակում։ Արաքսը թափվող գետերի՝ Գառնի-չայի, Վեդի-չայի, Արևելյան Արփաչայի և մյուս գետերի վրա չէին գցվել հարմար կամուրջներ։ Դրանց գետաբերանների շրջանում առաջացել էին ընդարձակ ճահիճներ, որոնք դժվարացնում էին հրթիռկությունը։

Հետագայում, երբ անցկացվեց Երևան—Ջուլֆա երկաթգիծը, Երևան—Ջուլֆա խճուղին իր տնտեսական նշանակությունը կորցրեց, մինչդեռ Երևան—Թիֆլիս հատվածը պահպանում էր արտակարգ մեծ նշանակությունը և՛ տնտեսական, և՛ ռազմա-սարատեգիական առումով։

Ճանապարհի ուղղությամբ մի քանի տեղերում պատրաստել էին տնակներ, որտեղ ապաստանում էին ճանապարհի վրա հրթռկողներ։ Գյոգչայի լճանոցքի տակ, լճի կողմում պատրաստել էին սրահ՝ ձմռանը ձյան հոսքերից քարավանները փրկելու համար։ Թիֆլիս—Երևան ճանապարհը Երևան քաղաքի տնտեսական կյանքում արտակարգ մեծ դեր էր խաղում։ Նա իր նշանակությամբ այդ ժամանակներում խաղում էր այնպիսի դեր, ինչպիսին հետագայում սկսեց խաղալ Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Երևան երկաթգիծը, որն, այնուամենայնիվ, չկարողացավ լրիվ փոխարինել խճուղուն։

Երևանից դուրս եկող մյուս ճանապարհները՝ Երևան—Էջմիածին—Սարդարապատ—Ալեքսանդրապոլ—Նովոսուրիցկոյեն, որի Էջմիածին—Նովոսուրիցկոյե հատվածը հայտնի էր «Թագավորական ճանապարհ» անունով, Երևան—Մարգարա և մյուս ճանապարհները ունեին ավելի երկրորդական նշանակություն։ «Թագավորական ճանապարհի» Էջմիածին—Սարդարապատ—Ալեքսանդրապոլ հատվածը միանգամից կորցրել էր իր նախկին նշանակությունը և վերածվել սովորական գյուղամիջյան ուղու։ Գյուղացիները գերադասում էին Էջմիածնի և Երևանի շրջանից իրենց ապրանքները Ալեքսանդրապոլ տանել ոչ թե այդ ճանապարհով, որը ձգվում է անջուր կիսաանապատային շրջաններով, այլ Աշտարակով և Բաշ-Ապարանով, որը նրա նկատմամբ ուներ մի շարք առավելություններ։ Սակայն «Թագավորական ճանապարհի» այդ հատվածի նշանակության անկումը ավելի մեծ չափով կապված էր ոչ թե

դրա, այլ Դիլիջան—Ալեքսանդրապոլ խճուղու կառուցման հետ։ Այս վերջինը, որը կազմում էր Թիֆլիս—Երևան խճուղու գլխավոր ճյուղը, Երևանը (միաժամանակ և Թիֆլիսը) կապում էր Ալեքսանդրապոլի հետ։

Նշված ճանապարհներից շատ թե քիչ կանոնավոր կայաններ ուներ միայն նորակառույց Թիֆլիս—Երևան—Ջուլֆա խճուղին։ Այդ ճանապարհի Թիֆլիս—Երևան հատվածը Հայաստանի սահմաններում ուներ հետևյալ կայանները՝ Ելիզավետապոլի նահանգում Դիլիջանը, Երևանի նահանգում՝ Ջիբուխլուն (Ծովագյուղ), Ելենովկան (Սևան), Ներքին Ախտան, Սուխոյ-Ֆանտանը (Ֆանտան), Էլարը և Երևանը։ Իսկ ճանապարհի Երևան—Նախիջևան հատվածի կայաններն էին Դամարլուն (Արտաշատ), Դավալուն (Արարատ), Սադարակը, Բաշ-Նորաշենը, Կյուվրագը և Նախիջևանը[1]։ Այս բոլոր կայանները գոյություն ունեին և այն ժամանակներում, երբ դեռ ճանապարհը սովորական փոստային ճանապարհ էր և խճուղու չէր վերածված։

Հաղորդակցության միջոցների մեջ մինչև 60-ական թվականները որևէ տեղաշարժ չի նկատվում։ Երևանից դուրս եկող կամ Երևան մտնող բոլոր ճանապարհներում անմրցակից իշխում էին բեռնակիր անասունները՝ ուղտերը, ձիերը, ջորիները և լծկան անասունները՝ իրենց հնադարյան սայլերով։

1860-ական թվականներից Արևելյան Հայաստանում, մանավանդ նրա ամենից առաջնակարգ ճանապարհներում, ուղտին և մյուս բեռնակիրներին փոխարինում են մալականական փուրգոնները, որոնք դարեվերջին Երևան—Ախտափա ուղու վրա երթևեկող գրեթե միակ տրանսպորտային միջոցն էին դարձել։ Փուրգոնների բեռնատարողությունը բեռնակիր տրանսպորտի համեմատությամբ շատ մեծ էր, դա կազմում էր 80—120 փութ։ Անհամեմատ մեծ էր և նրա արագությունը։ Երևանից Ախտափա փուրգոնը սովորաբար գնում էր 5—7 օրում և այդքան օրում էլ վերադառնում իր ելման կետը։ Յուրաքանչյուր փուրգոնի տարեկան եկամուտը 60—70-ական թվականներին միջին հաշվով կազմում էր մոտ 100 ռուբլի[2]։

Թիֆլիս—Երևան խճուղին, իր Դիլիջան—Ալեքսանդրապոլ

[1] «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, Эриванская губерния, էջ 104։

[2] Ա. Հակոբյան, Անասնի տրանսպորտը նախասովետական Հայաստանում (Երևանի Պետական համալսարանի Գիտական աշխատություններ, հ. 43, Երևան, 1954, էջ 31—33)։

ճյուղով հանդերձ, ամբողջ Ռուսաստանում եղել է նույն տիպի ամենաշահավետ ճանապարհներից մեկը: Այնտեղով Երևանի նահանգից դեպի Թիֆլիս (և Ալեքսանդրապոլ) փոխադրվող բեռների մեջ ամենակարևոր տեղը գրավում էին՝ հացահատիկը, ալյուրը[1] և բամբակը: Սակայն անբերրի տարիներին ինքը՝ Երևանի նահանգն էր Թիֆլիսից ստանում հացահատիկներ և այլուր:

Այդ նույն ճանապարհով Թիֆլիսից Երևան էին բերվում ռուսական առևտրաճառագնացների (գլխավորապես Նիժնի Նովգորոդի) և արևմտաեվրոպական ծագման ապրանքներ:

Թիֆլիսից Երևան և հակառակ ուղղությամբ կատարվող բեռնաշրջանառության ծավալի մասին ստույգ տեղեկություններ չկան: Վիճակագրական և անտեսագիտական աշխատություններում դրա վերաբերյալ օգտագործված թվերը ամբողջապես վերցված են ճանապարհի կայաններում եղած ուղեկալների տվյալներից, որոնք անստույգ են և կարող են միայն մոտավոր պատկերացում տալ: Ուղեկալների տվյալների հիման վրա Թիֆլիս—Երևան և Երևան—Թիֆլիս 1874—1882 թթ. ընթացքում կատարված բեռնաշրջանառության մասին մի աղյուսակ է կազմել Ն. Ա. Գոլմսենը: Այդ աղյուսակում տրված են պետական կայանների միջև, երկու ուղղությամբ փոխադրված բեռների ծանրությունը արաբահայտված փթերով: Անհրաժեշտ ենք համարում բերել աղյուսակի այն մասը, որը վերաբերում է 1874—1880 թվականներին[2]:

Աղյուսակ 20

Բեռնաշրջանառություն Թիֆլիս—Երևան խճուղում

Թվերը	Թիֆլիսից կարմիր կամուրջ և հակառակ ուղղությամբ	Կարմիր կամրջից Նոր Ազատաֆա և հակառակ ուղղությամբ	Նոր Ազատաֆայից Դիլիջան և հակառակ ուղղությամբ	Դիլիջանից Ելենովկա և հակառակ ուղղությամբ	Ելենովկայից Երևան և հակառակ ուղղությամբ
1874	1378533	1224658	909504	1004645	803972
1875	1705684	1325797	837525	840381	711112
1876	1947570	1600186	1063494	1048146	717616
1877	2356794	2102401	1516411	938962	750013
1878	3145320	2902418	2375085	1274845	999040
1879	2201476	2014263	1331168	1177262	1050326
1880	2558031	2477886	1575310	1142344	1026930

[1] Н. А. Гольмсен, Прикаспийская долина и тифлисско-эриванская торговая дорога («Сборник сведений о Кавказе», т. IX, Тифлис, 1885, էջ 43):

[2] Նույն տեղը, էջ 45:

Ընդ որում, Երևանից դեպի Թիֆլիս տարվող բեռներն ավելի շատ են եղել, քան Թիֆլիսից բերվող ապրանքները[1]:

Բեռների տեղափոխումը շատ թանկ էր նստում: Մոտավոր հաշիվներով, մեկ փութը Երևանից տեղափոխելը արժեր 60 կոպեկ, նույնքան, կամ նույնիսկ մինչև 80 կոպեկ էլ յուրաքանչյուր փթին տրվում էր Արարատյան հարթության տարբեր մասերից Երևան տեղափոխելու համար: Այլ կերպ ասած, հացահատիկը Արարատյան հարթությունից Թիֆլիս տեղափոխելու համար յուրաքանչյուր փթի վրա ծախսվում էր մոտավորապես 1 ռ. 20-ից 1 ռ. 40 կոպեկ: Ինչպես վկայում է Ն. Ա. Գոլմսենը, միայն այդ փոխադրավարձը հավասարվում էր Եվրոպական Ռուսաստանից ներմուծված հացի արժեքին[2]: Խճուղով բեռներ տեղափոխելու համար ամեն մի լծած ձիուց 10 վերստի համար վերցվում է խճուղային հարկ 3 կոպեկի չափով, իսկ 4 ձիուց բաղկացած փուրգոնից յուրաքանչյուր 10 վերստի համար՝ 12 կոպեկ: Երևանից մինչև Թիֆլիս (250 վերստ) մեկ չորս ձիանոց փուրգոնից խճուղու տուրք էին պահանջում 3 ռուբլի, որը կազմում էր փուրգոնչու ստացած վարձի մոտավորապես 10%-ը[3]:

Թիֆլիս—Երևան խճուղու նշանակությունը ներքին առևտրի համար է՛լ ավելի է մեծանում, երբ կառուցվում է Թիֆլիս—Բաքու երկաթգիծը (1883 թ.):

Բեռնաշրջանառության արագության և տեհտասարակ կանոնավոր հաղորդակցության վրա բացասաբար էր ազդում Երևանի նահանգի ճանապարհների անբարեկարգ վիճակը: Ի. Օպարովսկին, խոսելով Երևանի նահանգի ճանապարհների վիճակի և հաղորդակցության միջոցների մասին, նշում է, որ երկրի տեղագրական պայմանները, գետերի ու ջրանցքների վրա մշտական կամուրջների բացակայությունը, ճանապարհների և դրանց շրջակայքի

[1] Н. А. Гольмсен, Прикаспийская долина и тифлисско-эриванская торговая дорога («Сборник сведений о Кавказе», т. IX, էջ 45):

[2] Նույն տեղը:

[3] «Сборник сведений о Кавказе», т. III, Тифлис, 1875, էջ 577:

Այս նույն աղբյուրի հաղորդած տեղեկությունների համաձայն, մինչև Թիֆլիս—Երևան խճուղու կառուցումը՝ Երևանից Թիֆլիս մեկ փութ բեռը տեղափոխելու արժեր 45 կոպեկ, իսկ խճուղու կառուցումից հետո իջել էր 30 կոպեկի: Բացի դրանից, բեռնատարողությունը մեծացել էր ավելի քան չորս անգամ, որովհետև եթե նախկինում մի ձին սովորաբար բարձած տանում էր 6 փութ, ապա խճուղու կառուցումից հետո՝ մեկ փուրգոնը 4 լծովի ձիով տանում էր միջին հաշվով 100 փութ (տե՛ս նույն տեղը, էջ 576—577):

դրունար, ոռոգողական առուները, բրնձի դաշտերը, որոշ տեղամասերի ամայությունը, հաղորդակցության միջոցների պակասը, ձմռանը բարձրադիր շրջաններում տեղի ունեցող բուք ու բորաններ և այլն մեծապես արգելակում են կանոնավոր հաղորդակցությունը[1]։

Հաղորդակցության համար կարևոր նշանակություն են ունենում նաև դիլիժանսային երթևեկությունը, հեռագրական կապի ստեղծումը և փոստային ծանրոցների (посылка) առաքման կազմակերպումը։

1864 թ. հունվարի 21-ին շահագործման է հանձնվում Թիֆլիս—Դիլիջան—Երևան—Նախիջևան—Ջուլֆա հեռագրագիծը[2]։ Դրանից մոտ երկու և կես տարի հետո, 1866 թ. հուլիսի 1-ին մշտական դիլիժանսային երթևեկություն է սկսվում Թիֆլիսի, Քութաիսի, Երևանի, Նախիջևանի և Ջուլֆայի միջև[3]։ Մարդիկ զրահով հնարավորություն ստացան դիլիժանսներով (մարդակառքեր) երթևեկելու Թիֆլիս—Երևան—Ջուլֆա խճուղով։

Թիֆլիսի և Երևանի միջև փոստային կապը ստեղծվել էր ավելի վաղ՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց անմիջապես հետո։ Մինչև 60-ական թվականները Երևանը փոստային առաքումներ ու նամակներ էր ստանում և այդպիսիները ուղարկում շաբաթը մեկ անգամ[4]։ Հեռագրի, նամակների և փոստային ծանրոցների առաքման համար սահմանված էին բարձր դներ։ 0-րինակ՝ 80-ական թվականների սկզբներին Երևանից Թիֆլիս փոստային ծանրոց ուղարկելու համար յուրաքանչյուր ֆունտից պահանջում էին 3 կոպեկ փոխադրավարձ[5]։

Մեզ հետաքրքրող կնսդարյա ժամանակաշրջանում ցարական կառավարությունը Անդրկովկասում, ելնելով իր գաղութային քաղաքականության սկզբունքներից, բոլ երկրի արդյունաբերության զարգացման շահերից և Մերձավոր Արևելքում արևմտաեվրոպական ազդեցության դեմ պայքար մղելու ու այնտեղ իր ազդեցությունն ուժեղացնելու ձգտումներից, մի քանի անգամ փոփոխության է ենթարկել մաքսային սիստեմը, յուրաքանչյուր դեպքում այն հարմարացնելով ժամանակի տնտեսական պահանջներին։

XIX դարի առաջին տասնամյակներին, երբ Անդրկովկասի երկրները մեկը մյուսի հետից միացվում էին Ռուսաստանին, ցարական կառավարությունը, իր շահերից ելնելով, աշխատում էր վերականգնել պարսկական ծանր լծի հետևանքով քայքայված դրանց տնտեսությունը և մայր երկրի արդյունաբերության համար այստեղ ստեղծել բազա։ Տնտեսության վերականգնման լավագույն միջոցներից մեկն այն ժամանակներում համարվում էր առևտուրը։ Ցարական Ռուսաստանը՝ իր թույլ զարգացած արդյունաբերությամբ և Կովկասի հետ կապող հարմար ճանապարհների բացակայության պատճառով, հարկադրված է լինում կատարել մեծ ղիջումներ՝ եվրոպական կապիտալին Անդրկովկասի առևտրի բնագավառում։

1821 թ. հրապարակվում է Անդրկովկասի համար հատուկ մաքսային տարիֆ, ըստ որի թույլատրվում էր այնտեղ ներմուծել եվրոպական զանազան տեսակի ապրանքներ, դրանց վրա դնելով մաքս, հայտարարված գնի 5%-ի չափով։ Դա վերին աստիճանի ձեռնտու էր եվրոպական առևտրական կապիտալի համար։ 5%-անոց մաքսային տարիֆը գործողության մեջ դնելուց հետո՝ Անդրկովկասի շուկաները ողողվում են եվրոպական ապրանքներով։ Եվրոպական ապրանքները Անդրկովկաս էին բերվում ինչպես եվրոպական, այնպես էլ Անդրկովկասի վաճառականների՝ գերազանցապես Թիֆլիսի, Երևանի և այլ քաղաքների հայ վաճառականների միջոցով։ Նույն օրենքով տեղական վաճառականներին տրվում են մի շարք արտոնություններ՝ բոլոր առևտրականներին ազատելով զինվորական ծառայությունից, անձնական հարկերից և այլն։

5%-անոց մաքսային տարիֆը ուժի մեջ է մնում միայն 10 տարի՝ 1821—1831 թվականներին։ Այդ տարիների ընթացքում եվրոպական ապրանքների մուտքն Անդրկովկաս մոտավորապես քառապատկվում է, ռուսական ապրանքները անդրկովկասյան շուկաներից դուրս են մղվում, արևմտաեվրոպական առևտրական կապիտալը նվաճում է դրանք։ Ռուսական առևտրական կապիտալի շահերը պահանջում էին արևմտաեվրոպական ապրանքների համար սահմանված այդ արտոնյալ մաքսային տարիֆի ոչնչացում և արտոնյալ պայմանների սահմանում Անդրկովկաս ու նրա սահմանամերձ երկրներ՝ հատկապես Պարսկաստան ռուսական ապրանքների արտահանման համար։ Հատուկ հանձնաժողովի կատարած

[1] Подъесаул Ив. Озаровский, Материалы для военного обозрения Эриванской губернии, ч. I, էջ 589—620։

[2] «Кавказский календарь на 1868 год», отд. II, էջ 134, на 1874 год, отд. II, էջ 252։

[3] Նույն տեղը, на 1868 год, отдел II, էջ 139։

[4] Նույն տեղը, на 1859 год, отдел II, էջ 130։

[5] Նույն տեղը, на 1881 год, отдел II, էջ 94։

ուսումնասիրությունից հետո՝ 1831 թ. հունիսի սկզբներին հրապարակվում է նոր օրենք՝ Անդրկովկասի մաքսային սիստեմի մասին։ Ըստ այդ օրենքի, Անդրկովկասում մտցվում է մաքսային մի տարիֆը, որը գործում էր Ռուսաստանում, իսկ վերջինս հանձնարարում էր ռուսական-հայրենական արդյունաբերությունն ու առևտուրը։ Ավելի ճիշտ, նոր օրենքով սահմանվում էին՝ 1) 5%-անոց մաքսը ուժի մեջ պահել ներմուծվող ասիական ապրանքների համար, 2) եվրոպական ապրանքների ներմուծումն Անդրկովկաս թույլատրել միայն սևծովյան նավահանգիստներով, դրանցից մաքս վերցնելով ըստ եվրոպական մաքսային տարիֆի, 3) արգելել եվրոպական այնպիսի ապրանքների ներմուծումը, որոնք կարող են ռուս արդյունաբերողներին և ռուսական արդյունաբերության զարգացմանը վնասել, 4) բոլորովին արգելել՝ եվրոպական ապրանքների ներմուծում Անդրկովկասից Ռուսաստան, ինչպես և եվրոպական ապրանքներով Անդրկովկասի վրայով կատարվող տարանցիկ առևտուրը, 5) թույլատրել առանց մաքսի արտահանել անդրկովկասյան և ռուսական ծագման ապրանքներ։

1831 թ. հրապարակված այդ օրենքը, որը գործի մեջ դրվեց 1832 թվականի սկզբից, բավականաչափ նեղեց և կրճատեց եվրոպական ապրանքների մուտքը Անդրկովկաս, սակայն չկարողացավ բոլորովին խափանել այն։ Նույնիսկ բարձր մաքս տալու պայմաններում, եվրոպական ապրանքները մուտք էին գործում Անդրկովկասի շուկաները, որովհետև դրանք էժան և որակյալ էին։ Մաքսային նոր օրենքի գործադրումից հետո եվրոպական ապրանքները շարունակում են Անդրկովկասի շուկաները թափանցել նաև մաքսանենգության ճանապարհով։

1831 թվականի օրենքը ևս երկար չգործեց։ Բացի այն, որ նա խախտում էր մաքսանենգության ճանապարհով, արգելական մաքսային այդ տարիֆը Անդրկովկասի վրայով կատարվող տարանցիկ առևտուրը հասցրեց անկման։ Ընդհակառակը, եվրոպական ապրանքներով կատարվող ամբողջ առևտուրը տեղափոխվեց Թուրքիայի և Պարսկաստանի տերիտորիաները։ Այժմ եվրոպական ապրանքները Տրապիզոնից Բայազետի վրայով տարվում էին դեպի Թավրիզ, իսկ այնտեղից էլ՝ Պարսկաստանի գանազան մասերը։ Պարսկաստանում և Թուրքիայում արևմտաեվրոպական առևտրական կապիտալը սկսեց անչափ ուժեղանալ, իսկ դա Ռուսաստանին բոլորովին ձեռնտու չէր։

Թե՛ Անդրկովկասում, և՛ Պետերբուրգում 40-ական թվականների առաջին կեսին արդեն գոնում էին, որ 1831 թ. օրենքը պետք է վերացնել, որանցից ոմանք ուղղակի առաջարկում էին վերադառնալ 1821 թ. մաքսային տարիֆը, ոմանք էլ առաջարկում էին նոր, ավելի արտոնյալ պայմաններ ստեղծել Անդրկովկասի վրայով կատարվող տարանցիկ առևտրի համար։

1846 թ. դեկտեմբերին հրապարակվում է հրամանագիր Անդրկովկասում նոր մաքսային տարիֆ մտցնելու մասին[1]։ Դրա համաձայն թույլ տրվեց Անդրկովկասի վրայով եվրոպական և ասիական ապրանքների տարանցիկ ազատ առևտուրը, իջեցրեց ներմուծվող եվրոպական ապրանքներից վերցվող մաքսի չափը և այլն։

1846 թվականի մաքսային սիստեմը, որը ուժի մեջ մտցվեց 1848 թվականից[2], բավականաչափ մեղմացրեց մինչ այդ գոյություն ունեցող արգելական մաքսային սիստեմը։ Հետագայում, 50—60-ական թվականներին պետության միանձնական մաքսային տարիֆի իջեցման հետ միասին իջեցվում են և Անդրկովկասի մաքսային դրույքները։ Բայց և այնպես, ո՛չ 1846 թվականի և ո՛չ էլ հետագայի միջոցառումները չկարողացան վերականգնել նախկին տրանզիտային առևտրի ծավալը։ Այդ առևտուրը մեծ հարված ստացավ Ղրիմի պատերազմի ժամանակ, երբ Անդրկովկասով կատարվող տարանցիկ առևտուրը ռազմական գործողությունների պատճառով մոտ երեք տարի գրեթե միանգամից ընդհատվել էր։

Ցարական կառավարությունը հետևողական կերպով՝ արտասահմանյան ապրանքների ներմուծման և դրանցով պետության տերիտորիայի վրայով, այդ թվում և Անդրկովկասի վրայով, կատարվող տարանցիկ առևտրի նկատմամբ արգելական քաղաքականություն է վարում 80-ական թվականների սկզբից, երբ մայր երկրի արդյունաբերությունը արդեն հասել էր զարգացման որոշակի բարձր մակարդակի և կառուցվել էին երկաթուղիներ[3]։

Պետք է նշել, որ եթե ցարական կառավարության կիրառած մաքսային քաղաքականությունը մեզ հետաքրքրող շրջանում մերթ նպաստել և մերթ էլ արգելակել կամ խափանել է տարանցիկ առևտուրը, ապա Անդրկովկասի արտաքին առևտուրն առհասարակ այդ 50-ամյակի ընթացքում անշեղորեն բարձրացել է, եթե

[1] Մաքսային տարիֆները տե՛ս «Свод законов», кн. II, т. VI, էջ 207—271։

[2] Е. А. Тихоцкий, Закавказский транзит и наша с ним конкуренция по торговле с Персией в 1862—81 гг., Киев, 1883, էջ 9—10։

[3] Նույն տեղը, էջ 10—11։

նկատի չունենանք փորրիկ ելևէջները, որոնք արդյունք էին ժամանակավոր գործող ազդակների (մաքսային տարիֆի, պատերազմների, անբերրիությունների և այլն):

1822 թ. մինչև 1876 թվականը արտասահմանյան երկրների ապրանքների ներմուծումն Անդրկովկաս 825985 ռուբլուց հասնում է 8310545 ռուբլու, այսինքն ավելանում է մոտ 10 անգամ[1]: Նույն ժամանակամիջոցում արտահանվող ապրանքների գումարը 463123 ռուբլուց բարձրանում է 6180453 ռուբլու, այսինքն՝ ավելանում է ավելի քան 13 անգամ[2]: Այնուամենայնիվ, ամբողջ հիշատակյալ ընթացքում ներմուծումը մեծ չափով գերակշռում էր արտահանմանը. Անդրկովկասը ի վիճակի չէր բալանսը ակտիվացնելու կամ նույնիսկ հավասարեցնելու:

Էլ ավելի մեծ տեմպերով էր զարգանում Անդրկովկասի և Ռուսաստանի միջև կատարվող առևտուրը: 70-ական թվականներից Անդրկովկասի և Ռուսաստանի միջև կատարվող առևտուրը սկսում է գերակշռել Անդրկովկասի արտաքին առևտրին[3] ընդհանրապես, և ինչքան գնում այնքան այդ տարբերությունն ավելի է մեծանում: Իսկ դա ցույց էր տալիս, որ Անդրկովկասի տնտեսական յուրացումը 70-ական թվականներից բավական հաջող կերպով առաջ էր ընթանում:

Անդրկովկասում և՛ եվրոպական, և՛ ռուսական ապրանքներով կատարվող առևտրի կետերից մեկն էլ Երևանն էր, որի դերը գերազանցապես սահմանափակվում էր տարանցիկ առևտրի կայան լինելով[4]: Ուստի այժմ մոտիկից տեսնենք՝ ինչպիսի բնույթ, ծավալ և աշխուժություն ուներ Երևանի վրայով կատարվող տարանցիկ առևտուրը 1828—1879 թվականներին:

Երևանի խոշոր վաճառականների մի մասը՝ նշանավոր սովդաքյարները, քաղաքը պարսկական լծից ազատագրվելուց հետո թողել հեռացել էր Պարսկաստան[5]: Նրանց հեռացումը, ըստ երևույթին, բացասաբար է ազդել Երևանի արտաքին առևտրի վրա, որովհետև դրանով քաղաքի առևտրական կապիտալը բավականաչափ պակասել է, իսկ Պարսկաստանից ներգաղթողները ազ-

1 «Обзор производительных сил Кавказского наместничества за 1880 год» («Кавказский календарь на 1881 год», էջ 60):

2 Նույն տեղը:

3 Նույն տեղը, էջ 59—61:

4 «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 65:

5 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 876:

բատ էին և իրենց հետ կապիտալներ չէին բերել[1]: Ի. Շոպենի հաշիվներով, 1829/32 թթ. կամերալ ցուցակագրման ժամանակ ամբողջ Հայկական մարզի առևտրական շրջանառությունը (և՛ ներքին, և՛ արտաքին)՝ հասել էր մոտավորապես չորս միլիոն ռուբլու, որից միայն Նախիջևանին, Օրդուբադին և Ազուլիսին բաժին էր ընկնում մոտավորապես 367000 ռուբլի[2]. մնացածը բաժին էր ընկնում մարզի մյուս բնակավայրերին ու Երևան քաղաքին: Դժվար է իմանալ, թե այդ ժամանակ ինչպիսի ծավալ ուներ Երևանի առևտրի ընդհանուր շրջանառությունը, որովհետև բերված թվերը արժանահավատ չեն, իսկ Երևանի հատուկ առևտրական կապիտալի շրջանառության մասին ընդհանրապես այդպիսի թվեր չեն տրված:

Երևանը պարսկական լծից ազատագրվելուց հետո, գեռ բավական երկար ժամանակ, նրա արտահանվող ապրանքների կազմը էական որևէ փոփոխություն չի կրում: 30-ական թվականների սկզբներին Հայկական մարզից և նրա կենտրոն Երևանով արտահանվում էին՝ բամբակ, չալթուկ, կաշի, քնջութի ձեթ, բուրդ, չորացրած մրգեր[3], ցորեն և այլն: Օրդուբադի շրջանից՝ Ղարաբաղի, կամ ավելի հաճախ Երևանի վրայով դեպի Մոսկվա էին արտահանում մետաքս: Օրդուբադի մետաքսի մի մասն էլ արտահանվում էր Թավրիզ: Մինչդեռ բամբակը, չալթուկը, կաշին, քնջութի ձեթը, բուրդը և այլն գրեթե բացառապես տարվում էին Թիֆլիս:

Ավելի բազմազան էին ներմուծվող ապրանքները: Դրանք ունեին ռուսական ու արևմտաեվրոպական ծագում և Երևան էին ներմուծվում անմիջապես Թիֆլիսից: Երևանը պարսկական լծից ազատագրվելուց հետո, սկզբնական շրջանում նրա ներմուծման ապրանքների կազմը ևս մնաց առանց էական փոփոխություն կրելու: 30-ական թվականների սկզբներին Թիֆլիսից Երևան էին ներմուծվում՝ բրդյա և բամբակյա զանազան կտորներ, ապակե և հախճապակե ամանեղեն, շաքար, թեյ, սուրճ, ռոմ, գինի, մետաղյա իրեր, իսկ Պարսկաստանից՝ մետաքսյա թանկարժեք գործվածքներ, թաշկինակներ, շալեր և այլն[4]: Պարսկաստանից բերված ապրանքների մի մասը մնում էր Երևանում, մյուս մեծ մասը, որը սովորաբար բաղկացած էր լինում ավելի բարձրորակ ապրանք-

1 И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 876:

2 Նույն տեղը:

3 Նույն տեղը:

4 Նույն տեղը, էջ 875:

ներից, Երևանի վրայով տարվում էր Թիֆլիս[1], իսկ Թիֆլիսից բերված ռուսական և եվրոպական ապրանքները, ընդհակառակը, տարվում էր դեպի Պարսկաստան։

Արտաքին առևտրի մեջ վաճառականների օգուտը սովորաբար կազմում էր 20%-ից ոչ պակաս[2], երբեմն հասնելով մինչև 50%-ի[3] և շատ դեպքերում այդ նրանց հաջողվում էր։

Երևանի վրայով կատարվող առևտրի ապրանքների ավելի մանրամասն ցուցակը տրված է 50—70-ական թվականներին վերաբերող աղբյուրներում և աշխատություններում։

Ըստ այդ աղբյուրների, 60-ական թվականներին Երևանից Թիֆլիս են արտահանվել բամբակ, որը, բացի Երևանի նահանգից, Երևան էր բերվում նաև Մակուի խանությունից, ցորեն, քնջութի ձեթ, բրինձ, կաշի և այլն[4]։ Երևանից դեպի Ալեքսանդրապոլ ու նոր Բայազետ էր ուղարկվում մեծ քանակությամբ օղի, որը սպառվում էր տեղում։ Երևան ներմուծվող և Երևանի վրայով դեպի Պարսկաստան (ու մասամբ Թուրքիա) արտածվող ապրանքները շատ ավելի բազմազան էին և մեծաքանակ։ Այդ ժամանակներին վերաբերող աղբյուրներում նախկինի նման զարձյալ հիշատակվում են բրդյա և բամբակի գործվածքներ, մետաքս և մետաքսյա գործվածքներ, բամբակ, անասուններ, կաշի և կաշվե ապրանքներ, պղինձ և պղնձյա ապրանքներ, ներկանյութեր, մորթիներ, ապակի և բյուրեղապակյա ամաններ, ինքնաեռ, տնային գործածության զանազան իրեր, փականագործական շինվածքներ, մոմ, խաղալիքներ, կոշկեղեն, ապակի, թուղթ, ալյուր, երկաթ և այլն, և այլն[5]։

Ներմուծվող և արտահանվող ապրանքների կազմի հետ միասին, թերևս դրանից էլ ավելի, հետաքրքրություն է ներկայացնում Երևանի արտաքին առևտրի ծավալը, այդ առևտրում շրջանառության մեջ գտնվող կապիտալի քանակը։ Երևանի արտաքին առևտուր հասկացողության տակ մենք նկատի ունենք այն ապրանքներով կատարվող առևտուրը, որոնք՝ Երևանի նահանգից Երևան

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 875—876։

[2] Նույն տեղը, էջ 876։

[3] Նույն տեղը։

[4] «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 64։

[5] Տե՛ս ЦГИА Грузинской ССР, ф. 12, д. 139, «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 64, Ф. А. Бакулин, Очерки торговли с Персией, СПБ, 1875, էջ 35—60 և այլուր։

քաղաք համակենտրոնացվելով, առաքվում էին Թիֆլիսի շուկան, Պարսկաստան կամ Թուրքիա։

Երևանից արտահանվող ապրանքների մեջ առաջին տեղը զբաղեցնում էր բամբակը, որը, ինչպես ասվեց, գրեթե բացառապես առաքվում էր Թիֆլիս, որտեղ նրա մի փոքր մասը մնում էր, իսկ մյուս մեծագույն մասը ուղարկվում Ռուսաստան, Կոստանդնուպոլիս, Մարսել։ Բամբակի մշակությունը և դրանով կատարվող առևտուրը հատկապես մեծ զարգացում են ստանում 60—70-ական թվականներին։ Եթե 1867 թ. Երևանի ճահանգից Երևան քաղաքի վրայով արտածվել է 115 840 ռուբլու բամբակ[1], ապա Ս. Զելինսկու տվյալներով, 70-ական թվականների վերջերին Երևանից տարեկան արտահանվում էր մոտավոր թվով 700 000 ռուբլու բամբակ (մոտ 95 000 փութ)[2]։ Երկրորդ տեղը՝ արտահանվող ապրանքների մեջ, գրավում էր բրինձը, որը Թիֆլիսից բացի առաքվում էր նաև Պարսկաստան ու Թուրքիա։ Ըստ եղած տեղեկությունների, ընդհուպ մինչև 1895 թվականը Ռուսաստանից Պարսկաստան արտածվող բրինձը բացառապես տալիս էր Երևանի նահանգը, որը միաժամանակ տալիս էր Թուրքիա արտահանվող բրնձի 50—60%-ը, իսկ որոշ տարիներում նույնիսկ դրանից էլ ավելին[3]։ Բրնձի արտահանումը, գումարով արտահայտված, 1867 թ. հավասար էր բամբակի արտահանությանը[4], սակայն 70-ական թվականների վերջերին՝ հարաբերակցությունը այդ երկու արտահանվող ապրանքների միջև խոշոր փոփոխություն է կրում։ Այդ տարիներին բամբակի արտահանությունը ավելի քան երկու անգամ գերազանցում էր (տարեկան 700 000 ռուբլու) բրնձի արտահանությունից, որը տարեկան կազմում էր 300 000 ռուբլի (150 000 փութ)[5]։

Բամբակից և բրնձից հետո ըստ հերթականության, դալիս էին քնջութի ձեթը, կաշվեղենը, օղին և այլն։

Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեի տվյալներով, 1863 թ. Երևանից առաքված բոլոր ապրանքները, միասին վերցրած, կազմել են ընդամենը մոտավորապես 280 000

[1] ЦГИА Грузинской ССР, ф. 12, д. 139.

[2] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 35—36)։

[3] Տե՛ս И. З. Андроников, Культура риса на Кавказе, Тифлис, 1900, էջ 129։

[4] ЦГИА Грузинской ССР, ф. 12, д. 139.

[5] С. Зелинский, Город Эривань («Сборник мат. для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 35—36).

[6] «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 64։

ռուբլի[6], այսինքն ավելի պակաս քան 70-ական թվականների վերջերին կազմում էր միայն բրինձը (300 000 ռուբլի)։ Ինչքան էլ մոտավոր լինեն թվերը, այնուամենայնիվ, դրանք Երևանի արտաքին առևտրի զարգացման մասին են վկայում։

Երևան ներմուծվող ապրանքների մեջ առաջին տեղը գրավում էին բամբակն գործվածքները, արդուզարդի ապրանքները, զանազան մրգեր և այլն։ Ս. Զելինսկու մեջբերած տվյալներով, 1878 թվականին Երևանի վաճառականները Մոսկվայից, Թիֆլիսից, Վարշավայից, Վիեննայից և այլ քաղաքներից ներմուծել են 600 հազար ռուբլու ապրանք[1]։ Հեղինակը այդպիսի մեծ քանակությամբ ապրանքների ներմուծումը բացատրում է նրանով, որ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հայ վաճառականների ձեռքին համեմատաբար մեծ կապիտալներ էին կենտրոնացել[2]։ Իսկ ընդհանրապես Երևանի վաճառականները 70-ական թվականներին, ինչպես վկայում է հենց ինքը՝ Ս. Զելինսկին, տարեկան ներմուծում էին ավելի քան 250 հազար ռուբլու ապրանքներ[3]։

Ըստ առանձին-առանձին ապրանքատեսակների՝ Երևան ներմուծվող ապրանքների կազմած դումարների վերաբերյալ համապատասխան տվյալներ չեն հասել մեր ձեռքը։ Միայն հայտնի է, որ 1869 թվականին Երևանում տեքստիլ ապրանքներով կատարվող առևտրի շրջանառությունը կազմել է 310 հազար ռուբլի, իսկ իր ծավալով երկրորդ տեղը գրավող արդուզարդի առևտրի շրջանառությունը՝ ոչ ավելի, քան 43 հազար ռուբլի[4]։

Վրաստանի ՍՍՌ Պետական Պատմական արխիվում պահպանված է մի գործ, որի մեջ ամենայն մանրամասնությամբ քվարկված են Երևանի նահանգից արտահանվող և այնտեղ ներմուծվող բոլոր ապրանքները և դրանց քանակը՝ արտահայտված ռուբլիներով։ Դրանց համաձայն՝ 1867 թվականին Երևանի նահանգ է ներմուծվել՝ եվրոպական երկրներից 258 035 ռուբլու ապրանք, իսկ ասիական երկրներից՝ 1 421 020 ռուբլու։ Ներմուծված ապրանքներից էին՝ բամբակյա գործվածքները (642 661 ռուբլու), զանազան մրգեր (299 272 ռուբլու), մետաքս և մետաքսյա գործվածքները (126 964 ռուբլու), բրդյա գործվածքներ (59 054 ռուբլու), խաշոր և մանր եղջյուրավոր անասուններ (53 080 ռուբլու), և այլն (ընդամենը 1 679 055 ռուբլու)[5]։

Նույն թվականին արտահանվել է տեղական, անդրկովկասյան և ռուսական ապրանքներ 550 017 ռուբլու 30 կոպեկի։ Արտահանվող ապրանքների մեջ կարևոր տեղ են գրավել՝ բամբակը (115 840 ռուբլու), բրինձը (նույնքան ռուբլու), պղինձը և պղնձյա իրերը (96 584 ռուբլու) և այլն[2]։ Բերված թվերը մոտավոր գաղափար են տալիս ամբողջ Երևանի նահանգի մասշտաբով կատարվող արտաքին առևտրի ապրանքների փոխհարաբերության և ընդհանուր շրջանառության վերաբերյալ։ Սակայն ինչպես մյուս, այնպես և այս թվերը չեն կարող արժանահավատ համարվել։ Դա շատ պարզ կերպով երևում է հենց այն աղաղակող տարբերությունից, որ գոյություն ունի բամբակի մասին 1865 թ. Երևանի ոստիկանական վարչության տված թվի և վերը նշվածի միջև։ Ըստ քաղաքի ոստիկանապետի զեկուցագրի, 1865 թ. Երևանի վաճառականները նահանգից (և այլ տեղերից) գնել ու արտահանել են 800 000 ռուբլու բամբակ[3], մինչդեռ ըստ վերը նշված փաստաթղթի՝ 1867 թ. Երևանի նահանգից իբր արտահանվել է միայն 115 840 ռուբլու բամբակ, այն դեպքում, երբ ինչպես տեսանք, այդ թվականներին բամբակի մշակումն արագ կերպով ընդարձակվում էր, իսկ արտահանումը՝ մեծանում[4]։

Նույն զեկուցագրի ոչ ճշտված տվյալներով, 1865 թ. Երևան քաղաքի ներքին ու արտաքին առևտրի բոլոր ճյուղերը, միասին վերցրած, ունեցել են մոտ 2 միլիոն ռուբլու շրջանառություն[5]։ Զեկուցագրի հեղինակը գրում է, որ Երևանի շատ թե քիչ նշանավոր վաճառականները հիմնականում զբաղված էին գյուղատնտե-

---

[1] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 35)։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը։

[4] «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отдел I, էջ 28։

[1] ЦГИА Грузинской ССР, ф. 12, д. 139.

[2] Նույն տեղը։

[3] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 25։

[4] 60-ական թվականներին ԱՄՆ-ի Հյուսիսի և Հարավի միջև տեղի ունեցող պատերազմի պատճառով ռուսական ֆաբրիկանտները սկսեցին էլ ավելի մեծ ուշադրություն դարձնել Երևանի նահանգի բամբակի հումքի վրա։ Դրանով նպաստավոր պայմաններ են ստեղծվում Երևանի նահանգի բամբակագործության զարգացման համար, որը շարունակվեց նաև հետագայում։ Ըստ Ստ. Գուլիշամբարովի հաշվումների (Ст. Гулишамбаров, Обзор фабрик и заводов Закавказского края, Тифлис, 1984, էջ 273), Երևանի նահանգում 1861 թ. ստացվել է 30 հազ., 1863 թ.՝ 150 հազար, 1870 թ.՝ 274 հազար, իսկ 1889 թ.՝ 600 հազար փութ բամբակ։

[5] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 25։

րից բամբակ գնելով, որը «վաճառահանում էին Մոսկվայում, Կոնստանդնուպոլսում, Մարսելում և մասամբ Թիֆլիսում»[1]։

Քաղաքի և նրա շրջակայքի տնտեսական կյանքի համար կարևոր նշանակություն ուներ ոչ թե տարանցիկ առևտուրը, որն ինչքան էլ մեծ չափեր ունենար, այնուամենայնիվ, տնտեսության վրա էական ազդեցություն չէր թողնում, այլ ներքին առևտուրը և արտաքին առևտրի այն հատվածը, որը կատարվում էր Երևանի նահանգի ապրանքներով և այն արտաքնածին ապրանքներով, որոնք սպառվում էին նահանգի ներսում և նրա կենտրոնում։

Տեղական առևտրի բնույթը և կազմակերպման ձևերը մեզ հետաքրքրող շրջանում պարսկական տիրապետության ժամանակների համեմատությամբ մեծ փոփոխություններ չէին կրել։ Խանական շրջանի նման 1828—1879 թթ. ևս Երևանում տեղական առևտուրը կատարվում էր ներմուծված ապրանքներով, նահանգի տարբեր գավառներից եկող գյուղատնտեսական մթերքներով և Երևանում արտադրված արհեստավորական իրերով, այժմ էլ, նախկինի նման, առևտուրը կենտրոնացված էր շուկա-հրապարակներում, որտեղ գտնվում էր քաղաքի խանութների մեծագույն մասը, քարավանատների շուրջը և մասամբ փողոցներում։ Ներքին առևտուրը Երևանը պարսկական լծից ազատագրվելուց հետո դարձյալ մնաց իրրև մանրածախ առևտուր և չնչին կապիտալներ էր գրավում դեպի իրեն։

Երևանի նահանգի «քաղաքների և գյուղերի շուկաներում,— ասված է 1877 թվականի «Кавказский календарь»-ում,— վաճառահանելու համար բերվում են տեղական արտադրանքները։ Մանուֆակտուրային, արդուզարդային և նպարեղենային ապրանքների առևտուրը, որոնք ձեռք են բերում Ռուսաստանից, ինչպես նաև Պարսկաստանից ու Թուրքիայից, կատարվում է քաղաքներում ու գյուղերում, խանութներում»[2]։

Առևտրի կազմակերպման բնագավառում նորությունն այն էր, որ 50-ական թվականների սկզբներից Երևանում թույլատրվել է կազմակերպել կիրակնօրյա շուկա[3]։ Այդ եղանակով, շաբաթը մեկ անգամ շրջակայքի գավառներից գյուղացիներն իրենց մթերքները բերել են քաղաք և նույն օրն էլ վաճառել ու նորից վերադարձել են իրենց տները։ Նահանգի մի քանի այլ կետերում նույնպես

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 25։

[2] «Кавказский календарь на 1877 год», отдел II, ч. 2, էջ 15։

[3] Նույն տեղը, на 1852 год, отдел III, էջ 449։

կազմակերպվում էին կիրակնօրյա շուկաներ[1], իսկ Ալեքսանդրապոլում 50-ական թվականներին կազմակերպվում էր առնավաճառ, որը տևում էր երկու շաբաթ[2]։ 60-ական թվականներին Երևանում կիրակնօրյա շուկաներ այլևս չէին կազմակերպվում[3]։ Այնպես որ, քաղաքի առևտուրը առաջվա նման շարունակվում է կատարվել շուկա-հրապարակներում և դրանցում եղած մշտական խանութ-



Շուկայի (Ղանթար) մի մասը 9-րդ դարի մոտ (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

ներում։ Երևանի գլխավոր շուկա-հրապարակն իր կառուցվածքով, առևտրի կազմակերպման ձևերով և մյուս բոլոր կողմերով հիշեցնում էր հին՝ խանական տիրապետության շրջանը։ Ահա՛ թե ինչպիսի նկարագիր է տալիս նրան Ս. Զելինսկին իր «Երևան քաղաք» փորրածավալ, բայց վերին աստիճանի արժեքավոր աշխատության մեջ.

«Իր արտաքին տեսքով Երևանի շուկան նման է ընդհանրապես ասիական շուկաներին։ Քառանկյունի քարավանատներ, որոնց

[1] «Кавказский календарь на 1851 год», отд. II, էջ 119։

[2] Նույն տեղը, на 1855 год, էջ 198 և 204։

[3] Նույն տեղը, на 1866 год, отдел III, էջ 65։

շուրջը դասավորված են դեպի վեր ու վար շարժական դռներ ունեցող փոքրիկ սենյակներ, չարսի կոչվող ծածկված և մութ սրահներ՝ ոչ մեծ խանութներով կամ արհեստավորների արհեստանոցներով, շարժական կրպակներ կամ, ավելի ճիշտ, արկղներ, որոնցում մրգավաճառները ցերեկով նստում են հրապարակում, իսկ երեկոյան փակում իրենց ապրանքը, ախոռներ, իջևաններ. ահա՛ և Երևանի ամբողջ շուկան։ Առևտրականները չունեն ո՛չ ելից ու մտից մատյաններ, ո՛չ կարգ ու կանոն. դեղապրանքներ վաճառողի մոտ կարելի է գտնել ճենապակե ամաններ, և նույնիսկ յուղով կճուճ, իսկ կավե ամաններ վաճառողի մոտ կարելի է գտնել և՛ գորգեր, և՛ կարպետներ, և՛ պարան, և՛ տարբեր սերմեր և այլն։ Երևան քաղաքում առևտրի սիստեմում իշխում է անշարժություն. վաճառողները, հազվագեպ բացառություններով, համեմատած հին ժամանակների հետ, չեն փոխում ո՛չ կազմը, ո՛չ իրենց ապրանքների քանակը, ո՛չ իրենց առևտրական գործառնությունների բնույթը...»[1]։ Քիչ հետո շարունակում է. «Այստեղ առևտրի բոլոր տեսակների մեջ ամենից զարգացածը գործվածքներով ու զարգրանքներով կամ, ինչպես այստեղ են ասում, վաճառականական ապրանքով կատարվող առևտուրն է։ Այդ ապրանքի վաճառողները արդեն որոշ չափով իրենց առևտրի ձևը փոխել են, հատկապես հայերը. նրանք արդեն պարսիկների... նման չեն նստում գորգերի վրա դարսված ապրանքի առաջ, նեղվածք կրպակների փոխարեն, նրանց մոտ արդեն երևան են գալիս կարգին խանութներ՝ վաճառասեղաններով..., հնարագետ ցուցանակներով և այլն»[2]։

Ինչպես տեսնում ենք, Ս. Զելինսկին Երևանի 70-ական թվականների առևտրի կազմակերպման ձևը առանց փոփոխության համարում է հնից եկած։ Նորությունը նրա կարծիքով այն էր, որ հայ առևտրականները սկսել էին պատրաստել համեմատաբար ավելի մեծ, բարեկարգ և հարմարավոր խանութներ։ Բացի դրանից, նա նշում է, որ ի տարբերություն նախկին ժամանակների, երբ բոլոր խանութները կենտրոնացած էին շուկայում, 70-ական թվականներին սկսեցին խանութներ երևան գալ և շուկայից դուրս գտնվող մասերում[3] բուն քաղաքի տարբեր կողմերում։

[1] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 34—35)։

[2] Նույն տեղը, էջ 35։

[3] Նույն տեղը, էջ 34։

Առևտրի կազմակերպման համար կարևոր նշանակություն ունեին քարավանատները, որոնք ոչ միայն իրենց ախոռները, հյուրասենյակները, խանութները, պահեստները, դանթարը 50-ական թվականի սկզբին Երևանն ուներ 6 քարավանատուն[1], այսինքն այնքան, ինչքան կար Երևանը՝ պարսկական լծից ազատագրվելուց հետո՝ 30-ական թվականների սկզբներին[2]։



Խանութներ Շահար քաղամասում, այժմյան «Մհան» հյուրանոցի տեղում (Հայկական ՍՍՌ Ցոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Բոլոր քարավանատները կենտրոնացած էին քաղաքի ընդհանուր շուկայի մոտ։ Դրանք սկզբում, իբրև սարդարական սեփականություն, պետականացվեցին, ապա տրվեցին անհատ մարդկանց՝ Խոսրովին (1 հատ), Քալանթարովին (1 հատ), Բոշնյաքովին (1 հատ) և այլն։

70-ական թվականներին, առևտրի զարգացման շնորհիվ, Երևանում իջևանատների թիվը հասել էր 20-ի[3], այսինքն 30—50-ական թվականների իջևանատների թվի նկատմամբ ավելացել էր ավելի քան երեք անգամ։

[1] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отдел III, էջ 445). Տե՛ս նաև Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, Эриванская губерния, էջ 256։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 943—946։

[3] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 34)։

Մեկ հետաքրքրող ժամանակների երևանի խանութների թվի մասին նշած աղբյուրները հաղորդում են հակասական տվյալներ։ Այսպես, օրինակ՝ կ. Օռլովսկու հիշատակության համաձայն, 1851 թվականին Երևանում կար 1051 խանութ, որոնցից քարավանատներում՝ 552, մյուս տեղերում և շուկայի շուրջը՝ 440, իսկ քաղաքի տարբեր մասերում՝ 59[1]։ Մինչդեռ, նույն ժամանակին վերաբերող մի այլ աղբյուրում, որտեղ ռազմա-վիճակագրական առումով բավական մանրամասնությամբ նկարագրված է Երևանի նահանգը, ասված է, որ Երևան քաղաքի խանութների թիվը հասնում է միայն 846-ի[2], իսկ, ըստ Ս. Զելինսկու, որի հաղորդած տվյալները վերաբերում են 70-ական թվականների վերջերին, Երևանի շուկայի (չհաշված քաղաքում եղածները) բոլոր կարգի խանութների թիվը հասնում էր 984-ի[3]։ Առաջին երկու աղբյուրների թվերի այդպիսի տարբերությունը ամենայն հավանականությամբ առաջացել է սխալ վիճակագրության հետևանքով։

Խանութների հաշվառման ժամանակ սխալվելու առիթներ շատ կային, որովհետև խանութ հասկացողության մեջ ոմանք մտցնում էին նույնիսկ առևտրական փոքրիկ արկղիկները, շարժական վրանները և այլն, իսկ ոմանք դրանք կարող էին խանութ չհամարել և դրանց հաշվի մեջ չմտցնել։ Ընդ որում, պետք է ասել, որ նշված թվերը իրենց մեջ ընդգրկում են և՛ առևտրի խանութներն ու կրպակները, և՛ արհեստանոցները։

Առևտրական ընկերություններ և խոշոր տներ Երևանում մեզ հետաքրքրող շրջանում՝ մինչև 60—70-ական թվականները չեն եղել։ Երևանի առևտրի զարգացմանը նպաստել է Թիֆլիսում 1847 թվականին մոսկովյան վաճառականների կողմից հիմնված առևտրական դեպոն, որը ապրանք էր մատակարարում ոչ միայն Թիֆլիսի, այլ նաև Անդրկովկասի մյուս քաղաքների, որոնց թվում Երևանի առևտրականներին։ Թիֆլիսի առևտրական դեպոն բաց էր թողնում և՛ ռուսական, և՛ արտասահմանյան ծագումի ապրանքներ[1]։ Դրանից անմիջապես հետո գործել Թիֆլիսում կազմակերպվեցին երեք ընկերություններ, որոնց նպատակը նույնպես մեծածախ առևտրի զարգացումն էր Անդրկովկասում[2]։

Ս. Զելինսկու հիշատակության համաձայն, 70-ական թվականների վերջերին Երևանում եղել են՝ աղի 3, հացահատիկի 1, կաշվի 3 և բամբակի 6 պահեստներ[3], 8 շոգեմարան[4] (հավանաբար բրնձի համար)։ Նույն հեղինակի ասելով, այդ ժամանակներում Երևանում կային առևտրական չորս գրասենյակներ և ոչ պաշտոնական բանկային հինգ գրասենյակ[5], որոնք սակայն արխիվային փաստաթղթերում չեն նշվում։

Առևտրի կանոնավորման և զարգացման համար կարևոր նշանակություն է ունենում նախկին պարսկական, թուրքական և տեղական ամենաբազմազան չափ ու կշիռների և դրամական միավորների փոխարեն՝ ռուսական միասնական չափ ու կշռի և դրամական միավորների գործածումը, որը նախորդներին պաշտոնապես փոխարինեց 1832 թվականի օգոստոսի 2-ին[6]։ Պարսկական տիրապետության շրջանի միավորները, սակայն, շատ երկար ժամանակ գործածության մեջ մնացին և տեղիք էին տալիս խառնաշփոթության[7]։

Ռուսաստանում գործող համապետական առևտրական կանոնադրությունը, ընդհուպ մինչև 60-ական թվականները ներառյալ, Երևանում չէր կիրառվում, այն կիրառվեց 70-ական թվականների կեսերից։ Սկզբնական շրջանում, ինչպես նշում է Ս. Զելինսկին, առևտրական կանոնադրության կիրառումը տեղացի առևտրականների մոտ շփոթություն է առաջ բերում և պատճառ դառնում մի շարք խանութների փակման, սակայն շատ չանցած ամեն ինչ հարթվում է և քաղաքի առևտուրը նորից մտնում է իր սովորական ընթացքի մեջ։

---

[1] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отдел III, էջ 445).

[2] «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, Эриванская губерния, составил капитан Услар, էջ 256։

[3] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 34). *Մի այլ աղբյուրի համաձայն՝ 1865 թ. Երևանի բոլոր խանութների (և արհեստանոցների) թիվը եղել է 1546* (տե՛ս «Сборник статистич. сведений о Кавказе», т. I, отдел I, гл. III, էջ 13)։

[1] «Кавказский календарь на 1851 год», отд. II, էջ 91։

[2] *Նույն տեղը, էջ 93—94։*

[3] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 38.

[4] *Նույն տեղը, էջ 34։*

[5] *Նույն տեղը, էջ 38։*

[6] Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 238։

[7] *Ռուսական ոսկե դրամի միավորներն էին՝ իմպերիալը, որը 10 ոսկի ռուբլի էր համարվում կամ 10 ռ. 30 կոպեկ արծաթ դրամ, կես իմպերիալը՝ 5 ռուբլի արժեղությամբ (արծաթ դրամով 5 ռ. 15 կ.)։ Իսկ արծաթե դրամի միավորը ռուբլին էր, իր բաղկացուցիչ մասերով հանդերձ (տե՛ս՝* «Кавказский календарь на 1859 год», отд. II, էջ 172)։

1828—1879 թթ. ընթացքում Երևանում առևտրի զարգացման և նրա բնույթի փոփոխման հետ միասին բավական փոփոխություններ էին կրել և առևտրականների կազմը, թիվը և առևտրի տեսակները: Ժամանակագրական կարգով այդ փոփոխությունները ցցուն կերպով արտահայտված են հետևյալ աղյուսակում, որը կազմում ենք համապատասխան սկզբնաղբյուրների հիման վրա.

Աղյուսակ 21

№ կ/կ	Առևտրականների տեսակները	1829/32 թթ.[1] հիմնական բնակչության	1829/32 թթ.[1] գերզոհ-քաղաքներից	1829/32 թթ.[1] ընդամենը	1850/51 թթ.[2]	1880/81 թթ.[3]
1	2	3	4	5	6	7
1	Բախկալներ (մրգավաճառներ)	97	—	97	46	62
2	Նպարավաճառներ	3	—	3	2	—
3	Փերեզակներ	10	—	10	4	—
4	Երկաթավաճառներ	7	—	7	3	—
5	Ադամանավաճառներ	1	—	1	—	—
6	Քերմոնավաճառներ	2	—	2	—	—
7	Կապայառուներ	1	1	2	2	—
8	Խաշած ճակնդեղ վաճառողներ	5	—	5	8	—
9	Վաճառականներ	183	36	219	123	—
10	Ալյուրավաճառներ	20	—	20	—	—
11	Մթերավաճառներ	22	1	23	26	—
12	Մանրավաճառ խանութպաններ	44	—	44	—	36
13	Ճաշակրպակատերեր	13	—	13	8	—
14	Չարչիներ	28	5	33	3	—
15	Մեսրոպավաճառներ	67	—	67	—	—
16	Դրամափոխներ	14	6	20	4	10
17	Հին շորեր վաճառողներ	2	—	2	6	—
18	Գործակատարներ	—	—	—	5	—

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 843—844:

[2] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отдел III, էջ 450):

[3] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 36):

1	2	3	4	5	6	7
19	Հացահատիկ, ձավարեղեն և աղ վաճառողներ (ալաֆներ)	—	—	—	—	77
20	Դեղապրանքներ վաճառողներ	—	—	—	—	56
21	Կտորեղեն վաճառողներ (բազազներ)	—	—	—	—	135
22	Հին իրեր վաճառողներ	—	—	—	—	8
23	Գինեվաճառներ	—	—	—	—	1
24	Գորգեր, կարպետներ, պարաններ և այլ ապրանքներ վաճառողներ	—	—	—	—	9
25	Հագնելու շորեր վաճառողներ	—	—	—	—	22
26	Մանր իրեր (ասեղ, թել և այլն) վաճառողներ	—	—	—	—	42
27	Մոմ վաճառողներ	—	—	—	—	1
28	Մետաղյա իրեր վաճառողներ	—	—	—	—	6
29	Շաքարավաճառներ	—	—	—	—	7
30	Կավե ամաններ վաճառողներ	—	—	—	—	10
31	Նավթ վաճառողներ	—	—	—	—	12
32	Կոշիկ վաճառողներ	—	—	—	—	5
33	Բանջարանոցային սերմեր վաճառողներ	—	—	—	—	2
34	Գրնձե ամաններ վաճառողներ	—	—	—	—	6
35	Միախոտ և գլանակ վաճառողներ	—	—	—	—	29
36	Մետաքսի թել, ժապավեն և այլն վաճառողներ	—	—	—	—	21
37	Կաշեվաճառներ	—	—	—	—	2
38	Կանեփի վաճառողներ	—	—	—	—	4
	Ընդամենը	519	49	568	240	563

Ընդհանուր թվական տվյալների հիման վրա հնարավոր չէ ճիշտ եզրակացության հանգել, որովհետև, ինչպես պարզ կերպով երևում է աղյուսակից, տարբեր թվականներին առևտրականների հաշվառումը կատարված է տարբեր սկզբունքներով ու նորմաներով: 1829/32 թթ. և 50-ական թվականների սկզբին վերաբերող ցուցակների մեջ մտած առևտրի տեսակների մեծագույն մասը՝ նպարավաճառություն, փերեզակություն, ալյուրավաճառություն, չարչիություն և այլն, 80-ական թվականի սկզբի ցուցակներում չկան: Այս պետք է բացատրել ոչ թե նրանով, որ այդ ապրանքներով կատարվող առևտուրն առհասարակ վերացել է, այլ նրանով, որ

առևտրականների հին խմբերի փոխարեն հանդես են եկել նոր խմբեր, որոնք ավելի մասնագիտացված էին։ Այսպես, օրինակ՝ 1829/32 ԹԹ. և 1851 թ. հիշվող վաճառականների փոխարեն 1880/81 ԹԹ. տակ հիշվում են՝ իբրև առանձին խմբեր՝ հացահատիկ, ձավարեղեն և աղ վաճառողներ, կտորեղեն վաճառողներ, հագնելու շորեր վաճառողներ, մանր իրեր վաճառողներ և այլն։ Այլ կերպ ասած, 70-ական թվականների վերջերին Երևանի առևտուրը շատ ավելի դիֆերենցված և մասնագիտացված էր, քան առաջ։

Ինչքան էլ մոտավոր լինեն թվերը և տարբեր ժամանակներում հաշվառումը կատարված լիներ տարբեր նորմաներով, այնուամենայնիվ, Երևանի առևտրականների թիվը 1829/32 ԹԹ. մինչև 50-ական թվականների սկիզբը նվազել է ավելի քան երկու անգամ (568-ից իջել է 240), այն դեպքում, երբ յուրաքանչյուր վաճառականի տրամադրության տակ եղած կապիտալը գրեթե ոչ մի փոփոխություն չէր կրել, մնացել էր նույն մեծությամբ։ Դա, մեր կարծիքով, պետք է բացատրել նրանով, որ Երևանը պարսկական լծից ազատագրելուց հետո՝ խանական հսկայական բյուրոկրատիայի, նրա հարեմի, մեծաթիվ կայազորի վերացմամբ քաղաքի վաճառահանման շուկան նեղացել էր, արդեն չկային ևս խանական շրջանի խոշոր վաճառականները՝ սովդաքյարները։ Խանական լծի խորտակմամբ վերացել էր և նրա մեծածախ առևտուրը, որը անմիջականորեն կատարվում էր սարդարի հսկողությամբ և նրա համար։ Սարդարական շրջանի այդ առևտուրը բնակչությանը վնաս բերելուց բացի որևէ օգուտ չէր տալիս։ Սարդարի մենաշնորհման տարածումը մի շարք ապրանքների վրա փաստորեն մեծագույն չարիք էր դարձել առևտրի զարգացման համար։ Բայց և այնպես, խանական բյուրոկրատիան, հարեմը և կայազորը իրենց մեծ պահանջներով ապահովում էին քաղաքի շուկայի բավական մեծ շրջանառությունը։ Դրա վերացմամբ նեղանում է և քաղաքի վաճառահանման շուկան։ Ուրեմն, 30-ից մինչև 50-ական թվականների Երևանի ներքին առևտրի նվազումը արդյունք էր ոչ թե նրա կամ Հայկական մարզի, Երևանի գավառի կամ թե Երևանի նահանգի տնտեսական անկման, որպիսին չի նկատվում, ընդհակառակը, բավական առաջադիմում է, այլ խանական վարչական ապարատի և մյուս մեծապահանջ սպառողների (դրանց թվում էին և մի շարք խաներ ու այլ կարգի բարձրաստիճան մարդիկ, որոնք Երևանը ռուսների կողմից գրավվելուց հետո հեռացան Պարսկաստան) անհետացմամբ։ Իսկական տնտեսական պայմաններից բխող և նրա արգա-

սիրը հանդիսացող ներքին առևտուրը Երևանում (և Երևանի նահանգում) սկսեց զարգանալ 60-ական թվականներից։ Այս զարգացման բնորոշ կողմը կայանում էր արդեն նրանում, որ նա տեղի էր ունենում փակ-նատուրալ տնտեսության աստիճանական քայքայման, արհեստների զարգացման և համատարած արդյունաբերության ու զարգացող առևտրի ազդեցության տակ։ Եվ չնայած 70-ական թվականների վերջին Երևանի վաճառականների ու առևտրականների թիվը հազիվ էր հավասարվել 1829/32 ԹԹ. նշած քանակին, բայց վերջինիս համեմատությամբ 70-ական թվականների վերջերին Երևանի առևտրական կապիտալը մեծացել էր մի քանի անգամ. այդ պարզ կերպով երևում է առևտրականներից մի քանիսի՝ ավելի քան տասնյակ հազար ռուբլու հասնող կապիտալներից։

Համեմատաբար խոշոր կապիտալ ունեցող վաճառականները համարվում էին բազազները՝ կտորեղեն վաճառողները, որոնց մի մասը զբաղվում էր միայն արտաքին առևտրով։ Բազազների մեջ Երևանում ամենահայտնի հարուստ վաճառականը այն ժամանակ համարվում էին Խուդաբաշևները, մի ընտանիք, որը սկսել էր հայտնի դառնալ տակավին 20-ական թվականներից։ Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեի տվյալներով Խուդաբաշևների առևտրական ընկերության (որն իբրև այդպիսին առաջինն էր Երևանում և կազմավորվել էր 50-ական թվականի վերջերին) տարեկան շրջանառությունը հասնում էր 80 000 ռուբլու[1]։

Խուդաբաշևից հետո իրենց կապիտալներով աչքի էին ընկնում ուրիշ հինգ բազազներ, որոնք ունեին 15/25 հազարից մինչև 40 հազար ռուբլու կապիտալ[2], իսկ ոչ ավելի՝ քան 10 բազազներ էլ ունեին 8—12 հազար ռուբլու կապիտալ[3]։ Մյուս կարգի վաճառականներից հայտնի էր Կ. Յա. Հարությունյանցի առևտրական տունը, որը սկսեց գոյություն ունենալ ավելի ուշ՝ 1874 թվականից[4]։ Այս վաճառականական տունը մեծ առևտուր էր կատարում կաշվեղենով, կոշկակարի գործիքներով, ձիասանձով ու կառքի պիտույքներով, կրկնակոշիկներով և այլն[5]։ Սկզբնաղբյուրները Հա-

---

[1] «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 64։

[2] «Сборник статистических сведений о Кавказе», под ред. Н. И. Воронова, т. I, Тифлис, 1869, отдел I, гл. III, էջ 28։ «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 64։

[3] «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 64։

[4] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 50, գ. 19, թ. 44, գ. 96, թ. 101։

[5] Նույն տեղերը։

բութքյունյանց առևտրական տան կապիտալի քանակի մասին լռում են, սակայն նրա ռեկլամներին նայելով, կարելի է ենթագրել, որ տարեկան շրջանառությունը հասել է մի քանի տասնյակ հազար ռուբլու։

Կապիտալի կենտրոնացումը վաճառականների ձեռքին 70-ական թվականներից, գյուղացիական ռեֆորմը Հայաստանում անցկացնելուց հետո, ավելի է մեծանում։

Ինչպես նախորդ տասնամյակներին, այնպես էլ 60—70-ական թվականներին բոլոր առևտրականները, ըստ իրենց առևտրի ապրանքների տեսակների, բաժանվում էին վեց կարգի, որոնք իրարից տարբերվում էին նաև կապիտալի քանակով։ Առևտրականների այդ խմբերից յուրաքանչյուրի առևտրի բնույթի, ծավալի, նրա կազմի մեջ մտնող առևտրականների թվի և կապիտալի քանակի մասին ամբողջական տեղեկություններ է տվել Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեն, որի հաղորդած պաշտոնական տվյալները վերաբերում են 1863 թվականին և առաջին անգամ տպագրված են 1886 թ. «Кавказский календарь»-ում, իսկ երկրորդ անգամ՝ Կովկասի մասին եղած վիճակագրական ժողովածուի առաջին հատորում, որը հրատարակվել է 1869 թվականին։

Ըստ այդ պաշտոնական փաստաթղթի[1], Երևանի առևտրականների վեց կարգերը հետևյալներն էին.

1) **Բազազներ**, որոնք զբաղվում էին կտորեղենի առևտրով։ Նրանք իրենց ապրանքները ձեռք էին բերում Մոսկվայից, Նիժնի Նովգորոդից (Գորկի), մասամբ և Պարսկաստանից ու չնչին քանակությամբ՝ Թուրքիայից։ Ռուսական ապրանքները նրանք առևտրում էին հիմնականում Թիֆլիսեցի վաճառականների միջոցով։ Սակայն, բացառված չէր նաև ապրանք բերելու նպատակով Երևանցի վաճառականների ուղևորությունը դեպի կենտրոնական Ռուսաստան և, նույնիսկ, Վարշավա, Վիեննա և ուրիշ տեղեր։ Բազազների թիվը Երևանում 1863 թ. հասել է 223-ի, որոնցից՝ 133-ը եղել են հայեր, իսկ 90-ը՝ ադրբեջանցիներ։ Բոլոր բազազների տարեկան առևտրի շրջանառությունը հասել է 310 հազար ռուբլու, այսինքն՝ միջին հաշվով յուրաքանչյուրին տարեկան ընկնում է 1390 ռուբլու շրջանառություն։ Ամենահարուստ բազազների առևտրի տարեկան շրջանառությունը հասել է 25-ից մինչև 40 հազար ռուբլու, իսկ ամենաաղքատներինը՝ 100—150 ռուբլու։

[1] Տե՛ս «Кавказский календарь на 1866 год», отдел III, կամ «Сборник сведений о Кавказе», т. I, отдел I, гл. III։

2) **Եվրոպական ծագումի արդուզարդի ապրանքներով առևտուր կատարողներ**։ Այս առևտուրը բացառապես հայերի ձեռքին էր գտնվում։ Նրանք թվով 30 էին, որոնցից 3-ն ունեին տարեկան մինչև տաք հազար ռուբլու շրջանառություն, իսկ մյուսների շրջանառությունը տատանվում էր 500-ից մինչև 1500 ռուբլու սահմաններում։ Բոլոր 30 առևտրականների տարեկան առևտրի շրջանառությունը հասնում էր ոչ ավելի՝ քան 43 հազար ռուբլու։

3) **Աբբարներ**, որոնք զբաղվում էին ասիական ծագումի արդուզարդի մանր առարկաների առևտրով։ Սրանց թիվը 52 էր, իսկ յուրաքանչյուրի առևտրի տարեկան շրջանառությունը կազմում էր 20—3000 ռուբլի։ Նրանց ավելի քան կեսը յուրաքանչյուրն ուներ 500—1000 ռուբլու շրջանառություն։ Բոլոր 52 աբբարները միասին տարեկան կատարում էին ընդամենը 20 հազար ռուբլու առևտուր։

4) **Ալաֆներ** էին կոչվում այն առևտրականները, որոնք առևտուր էին կատարում գյուղատնտեսական մթերքներով (հացահատիկներ և այլն)։ 1863 թ. տվյալներով ալաֆները Երևանում հասնում էին 67 հոգու։ Առևտրականների այս կարգի ներկայացուցիչներից յուրաքանչյուրի առևտրի տարեկան շրջանառությունը միջին հաշվով 500 ռուբլուց չի անցել։ Դրանցից միայն ոչ ավելի, քան չորս հոգի տարեկան ունեցել են 2000-ից մինչև 3000 ռուբլու շրջանառություն, իսկ բոլոր ալաֆների առևտրի տարեկան շրջանառությունը միասին կազմել է 16000 ռուբլի։

5) **Բախկալներ**։ Այսպես էր կոչվում առևտրականների այն խումբը, որը զբաղվում էր մրգավաճառությամբ։ Բախկալների առևտրի շրջանառությունն ուներ ավելի փոքր մասշտաբներ։ Երևանում բնդամենը կային 42 բախկալ (մրգավաճառ), որոնց բոլորի առևտրի շրջանառության տարեկան գումարը հասնում էր միայն 14 հազար ռուբլու։

6) **Երևանի առևտրականների վերջին խումբը կազմում էին խմիչք վաճառողները՝ դուխանչիները** (մի կիտաններ)։ 1863 թվականին Երևանի դուքանչիները 63 հոգի էին։ Նրանցից մոտ 20 հոգի յուրաքանչյուրը տարեկան ուներ 300 ռուբլու շրջանառություն, 35 դուքանչիներ ունեին 500-ական ռուբլու շրջանառություն և այլն։ Ամենամեծ շրջանառությունը, որը կազմում էր 1500 ռուբլի, ուներ միայն մի խանութ։ Իսկ բոլոր դուքանչիների առևտրի տարեկան շրջանառությունը հասնում էր մինչև 34 հազար ռուբլու։

Այսպիսով, ըստ նահանգական վիճակագրական կոմիտեի հաշվետվության, որի մեջ Երևանին վերաբերող թվերը վերցված են

քաղաքային ոստիկանապետի զեկուցագրերից, 1863 թվականին Երևան քաղաքի ամբողջ տեղական առևտուրը միջին հաշվով կազմել է 437 հազար ռուբլի, որը կատարվել է 480 առևտրականների կողմից։

Տարանցիկ առևտուրը չհաշված, Երևանն իր առևտրի չափերով (ինչպես նաև արհեստագործությամբ) 60—70-ական թվականներին Ալեքսանդրապոլից զգալի չափով ետ էր մնում։

Ե՛վ առևտրի ծավալով, և՛ նրանում կապիտալի կենտրոնացման աստիճանով, և՛ արհեստագործությամբ ու արդյունաբերությամբ Երևանը, գնալով, Անդրկովկասի մի քանի քաղաքներից ետ է ընկնում։ Սակայն, նախորդ ժամանակների համեմատությամբ նրա քաղաքային տնտեսությունը՝ առևտուրն ու արհեստագործությունը, խոշոր առաջադիմություն են կատարում։ Միայն 70-ական թվականներից Եվրոպական Ռուսաստանի արդյունաբերական ապրանքների մրցակցությունից քայքայվում են նրա որոշ արհեստներ (հատկապես տեքստիլ արհեստագործությունը)։ Դրա հետ միաժամանակ, 80-ական թվականներից Երևանում սկսում են երևան գալ կապիտալիստական արդյունաբերական օջախներ, որոնք, ճիշտ է, համեստ էին իրենց չափերով ու տեխնիկայով, բայց և նորություն էին քաղաքի տնտեսական կյանքում։

Անհրաժեշտ է նշել ևս մի հանգամանք։ Դա այն է, որ 70-ական թվականներին արհեստների և առևտրի բնագավառում իշխող համբարությունները խոչընդոտներ են դառնում այդ գրադարձությունների զարգացման բնագավառում, դրանք իրենց նորմաներով արդելակում են արհեստանոցների խոշորացմանը և առևտրական շրջանառության ծավալմանը։

Երևանի բոլոր կարգի առևտրականները երեք կատեգորիա էին հարկադրման։ «Երևանի տեղական առևտրականները պատկանում են քաղաքային պետական գյուղացիների դասին,— ասված է Երևանի նահանգական վիճակագրական հաշվետվության մեջ,— որոնք չեն կազմում նշված գիլդիական կարգերով հատուկ առևտրական դաս և բոլորը, ըստ տեղական սովորության, առևտուր են անում առանց կապիտալը հայտարարելու, և այդ պատճառով էլ առևտրի իրավունքի համար չեն վերցնում ոչ մի վկայական»[1]։

Յուրաքանչյուր առևտրականի կարողությունը և վճարունակությունը որոշվում էր մոտավորապես՝ ըստ տրված պատվիրակների միջոցով և այդ հիման վրա էլ գանձվում էին առևտրի իրավունքի համար սահմանված գումարները։ Այդ հարկը գանձվում էր միմիայն հօգուտ քաղաքի։ Յուրաքանչյուր տարվա սկզբում առևտրականները ըստ կարգերի (իսկ դրանք, ինչպես տեսանք, 6 կարգի էին բաժանված՝ բազաղներ, աթթարներ և այլն) առևտրի իրավունքի համար ենթարկվում էին որոշակի գումարի հատնող հարկադրման[1]։

Առևտրի իրավունքի համար 1863 թ. ընթացքում հօգուտ քաղաքի գանձվել է 1466 ռուբլի։ Սակայն կային և այնպիսի առևտրականներ, որոնք առևտրի իրավունքը ստանում էին ոչ թե մեկ տարվա, այլ յուրաքանչյուր վեց ամսվա համար (դրանք բացառապես խմիչք վաճառողներն էին)։ Վերջիններիս 1863 թ. տրված է եղել 128 վկայական, որի համար հօգուտ քաղաքի գանձվել է 824 ռ. 12½ կոպեկ։ Այսպիսով, 1863 թ. Երևանի բոլոր առևտրականներից առևտրի իրավունքի համար հօգուտ քաղաքի գանձվել է 2190 ռուբլի 12½ կ. հարկ[2]։

Առևտրի հետ կապված, քաղաքի մյուս եկամուտներից էին՝ կշռատուրքը, անասուններ մորթելուց սպանդանոցի համար վերցվող տուրքը, ակցիզները և այլն։ 1863 թ. կշռատուրքից և չափերի համար վերցվող տուրքից քաղաքը ստացել է 5500 ռուբլի, սպանդանոցից՝ 1080 ռուբլի[3], ընդամենը 6580 ռուբլի, չհաշված քաղաքապատկան խանութներից ստացվող եկամուտները, որոնք զարձյալ առևտրականներից էին վերցվում։

Նշանակալի գումարներ էին կազմում ակցիզները։ 1855 թ. տվյալներով, Երևանում խմիչքների ակցիզային հարկը եղել է 292 ռ. 85 կ.[4]։ Ակցիզային հարկը սահմանվում էր ներմուծված խմիչքներից դրանց կապալավարձի գումարի 20%-ի չափով, իսկ խմիչքային ձեռնարկություններից՝ դրանց օգուտի 25%-ի չափով[5]։ Մի փոքր այլ կարգ գոյություն ուներ Ռուսաստանի կենտրոնական նահանգներից Անդրկովկաս ուղարկվող խմիչքներից վերցվող ակցիզի չափի և գանձման բնագավառում[6]։ Անդրկովկաս ներմուծվող խմիչքների ակցիզի չափը սահմանված էր դեռևս 1834 թվականին[7], և դրա դրույքները հետագայում գրեթե չփոփոխվեցին։

---

1 Տե՛ս «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 65։

1 Տե՛ս «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 65։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը, էջ 70։

4 АКАК, т. XI, էջ 664։

5 Նույն տեղը։

6 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 124, գ. 2, թ. 56։

7 Նույն տեղը, ֆ. 90, գ. 703, թ. 2—8։

Առևտրականներից գանձվող հարկերի և նրանց սոցիալ-տնտեսական պայմանների մասին դեռևս հարկ կլինի անդրադառնալ և լրացնել մեր ասածները քաղաքի բնակչության և նրա հասարակական կյանքի մասին խոսելիս։

Առևտրի, ինչպես և քաղաքային բնակչության նյութական կացության վերաբերյալ անհնար է շատ թե քիչ ամբողջական գաղափար կազմել՝ առանց ապրանքների, առանձնապես լայն գործածական ապրանքների մոտավոր գներն իմանալու։ Մոտավոր ենք ասում, որովհետև ապրանքների ստույգ գներ ընդհանրապես գոյություն չունեին։ Օրինակ, նույն տեսակի խաղողը Երևանի գլխավոր շուկայում ուներ մի գին, Դալմայում մի այլ գին, Նորագեղում մի երրորդ գին և այլն[1]։ Նրա գինը կախված էր նաև տարվա ժամանակից, խաղողի տեսակից, շուկայի պայմաններից, բերքից և այլն, և այլն[2]։ Նույնպիսի մեծ տատանումներ էին տալիս և մյուս գյուղատնտեսական ապրանքների գները։ Արհեստավորական ապրանքների և ներմուծված ապրանքների գները համեմատաբար ավելի կայուն են եղել և որոշակի։

Ապրանքների գների կարգավորման հարցով, համքարություններից և քաղաքային ոստիկանական վարչությունից բացի, որևէ այլ հիմնարկ չէր զբաղվում։ Այդ հարցը հետագայում՝ բուրժուական ռեֆորմը քաղաքում կիրառելուց հետո, դարձավ քաղաքային վարչության ամենակարևոր պարտականություններից մեկը։ Այդ է պատճառը, որ եթե մինչև 1879 թվականը ապրանքների գների մասին եղած տեղեկությունները կցկտուր են ու ոչ մշտական, ապա դրանից հետո, քաղաքային վարչության շնորհիվ, մեզ հայտնի են ամեն տարվա (և ամսվա) համար ապրանքների և՛ շուկայական գները, և՛ այն գները, որոնք օրենսդիր կերպով սահմանված են եղել վարչության կողմից։

Գների մասին մոտավոր գաղափար կազմելու համար վերցնենք ամենատիպիկ և լայն տարածված արդյունաբերական ու արհեստավորական մի քանի արտադրանքներ, մանդամբերքներ ու գյուղատնտեսական այլ ապրանքներ։

Արհեստավորական ու արդյունաբերական ապրանքների գները մինչև 60—70-ական թվականները, ընդհանուր առմամբ, շատ ավելի բարձր են եղել, քան հետագայում, երբ Թուրքմանչայից մեծ քանակությամբ արդյունաբերական ապրանքներ են բերվում Անդրկովկասի քաղաքների, որոնց թվում և Երևանի շուկան։

Մենք տեսանք, որ Երևանում 50-ական թվականի սկզբին փորձարկման ենթարկվող ապակու «գործարան»-ի արտադրած մեկ շիշն ավելի մեծ արժեք ուներ, քան սևագործ բանվորի 2 և նույնիսկ 3 օրվա աշխատավարձը՝ միասին վերցրած։ Նույնպիսի պատկեր մենք տեսնում ենք մյուս արհեստավորական ապրանքների գների մեջ։ Այսպես, կապիտան Ուսլարի հաղորդած տեղեկությունների համաձայն, 50-ական թվականների սկզբներին տեղական մաշիկների մեկ զույգն արժեր 2 ռուբլի, թառի հատը 5 ռուբլի, հասարակ պնակի հատը՝ 40 կոպեկ, պղնձե մատուցարանը՝ 1 ո. 10 կ., կտավի մի կտորը՝ 60—75 կոպեկ և այլն[1]։

Մի փոքր այլ պատկեր են ներկայացրել գյուղատնտեսական ապրանքների գները։ Փակ-նատուրալ տնտեսության պայմաններում դրանց գները արտաքնապես հարաբերականորեն ցածր էին, որովհետև դրամական տնտեսությունը թույլ էր զարգացած, շրջանառության մեջ դրամ շատ քիչ կար և, ամենագլխավորը, թե՛ քաղաքում և թե՛ գյուղում բոլորը զբաղվում էին գյուղատնտեսությամբ։ Քաղաքային բնակչությունը, որը համարվում է վաճառվող գյուղատնտեսական մթերքների սպառողը, աննշան թիվ էր կազմում և ուներ ամենացածր գնողունակությունը։ Դրանց վրա գումարվում էր նաև այն, որ հաղորդակցության միջոցները թույլ էին զարգացած, ճանապարհները անբարեկարգ էին և հետու տարածությունների վրա մթերքների տեղափոխումը գրեթե անհնար էր ու անշահավետ։

Երևանի ոստիկանապետի հաղորդած տվյալների համաձայն, 1837 թ. հունվարին Երևանի շուկայում մեկ բաթմանի (12 ֆունտ) բամբակի միջին գինը 1 ո. 8 կոպեկ էր, մեկ բաթմանի ծխախոտի միջին գինը՝ 40 կ., նույնքան քանակությամբ ցորենի միջին գինը՝ 6 կ., չալթուկինը՝ 10 կ., կաղամբինը՝ 16 կ., խնձորինը՝ 36 կ., տանձինը՝ 32 կ., խաղողինը՝ 60 կ. և այլն[2]։ Նույն թվականին մսի ֆունտը վաճառվում էր 2 կոպեկով[3]։

50-ական թվականների սկզբներին ցորենի փութը Երևանի

[1] Տե՛ս И. З. Андроников, Очерк виноградарства и виноделия в Эриванской губернии («Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе», выпуск VI, Эриванская губерния, Тифлис, 1894, էջ 77).

[2] Նույն տեղը։

[1] «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, Эриванская губерния, сост. капитан Услар, էջ 229։

[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 90, գ. 217, թ. 2։

[3] Նույն տեղը, գ. 234, թ. 40։

շուկայում արդեն վաճառվում էր 1 ռուբլով[1], այսինքն 1837 թ. գնի նկատմամբ մոտ հինգ անգամ ավելի բարձր գնով: Նույն ժամանակամիջոցում մեծապես ավելացել էին և խաղողի ու մյուս մրգերի գները[2]:

Կ. Օռլովսկին, որը ավել է Երևանի շուկայում վաճառվող սննդամթերքների և դրանց գների մանրամասն ցանկը (ցորենի, մսի, յուղի, ձավարեղենի, բանջարեղենի և այլն, և այլն), նշում է, որ անբերրիության պատճառով 40-ական թվականների վերջերին առաջին անհրաժեշտության սննդամթերքների գները բարձրացել են, իսկ անբերրիությունն անցնելուց հետո՝ շատ քիչ են իջնում, և էլրակացնում է, որ 50-ական թվականների սկզբին «Երևանը առաջվա նման այլևս չի կարելի համարել» իր «էժանությամբ գերազանց» քաղաք[3]:

Հացի և մսի գները ավելի են բարձրանում 70-ական թվականներին, մանավանդ 1877/78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո: Երևանի նահանգապետի 1879 թ. սեպտեմբերի 8-ի № 3764 պաշտոնական գրության մեջ ասված է, որ «Երևան քաղաքում հացի և մսի գները շատ թանկ են: Բացի դրանից, միսը և հատկապես հացը վաճառելիս թույլ են տալիս անկարգություն և չարաշահումներ...»[4]:

Ասածներից կարելի է եզրակացնել, որ Երևանում մեզ հետաքրքրող ժամանակներում ապրանքները, հատկապես՝ արդյունաբերական ու արհեստավորական ապրանքները, ունեցել են բարձր գներ: Արդյունաբերական և արհեստավորական ապրանքների գները որոշ չափով իջնում են միայն 60-ական թվականների վերջերից, իսկ գյուղատնտեսական ապրանքների գները, ընդհակառակն, գնալով ավելի են բարձրանում: Հետևապես, հին Երևանի շուկայում տիրող «հեքիաթային էժանության» մասին արտահայտված կարծիքներն ու հաղորդումները նույնպես հեքիաթ են և չեն կարող ընդունվել իբրև պատմական ճշմարտություն: Երևանի շուկայում առանձնապես թանկ էին բանող անասունները, որոնց գնողները ավելի շատ էին: Այսպես, 50-ական թվականների սկզբին մեկ ուղտը վաճառվում էր 30—100 ռուբլով, եզը՝ 10—15 ռ., ձին՝ 10—40 ռ., էշը՝ 6—10 ռ., աքլ դեպքում, երբ բանվորը օրական աշխատելով 12 և ավելի ժամ, առանում էր 20—25 կոպեկ[1], այն էլ՝ եթե նրան հաջողվեր գործ գտնել:

[1] ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 198, վավերագիր 24:

[2] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 446):

[3] Նույն տեղը, էջ 448—449:

[4] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, ցուցակ 1/ա, գ. 3, թ. 80:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԸ

Դյուղատնտեսության ճյուղերը և դրանց զարգացման պայմանները: Քաղաքի հողային ֆոնդերը: Հողատիրության ձևերը և դրանց հարաբերակցությունը: Ոռոգման ցանցը և դրանից օգտվելու կանոնները: Այգեգործությունը. խաղողագործությունը, գինեգործությունը և մրգատու այգեգործությունը: Հացահատիկային տնտեսությունը: Բանջարաբուծությունը: Անասնապահությունը: Ներամասպահությունը:

Երևանի բնակչության համար գյուղատնտեսական ճյուղերը 1828—1879 թթ. շարունակում էին մնալ որպես կարևոր դեր խաղացող զբաղմունքներ և քաղաքի ամբողջ էկոնոմիկայում գրավում էին այքի ընկնող տեղ: Քաղաքի գյուղատնտեսական գլխավոր զբաղմունքները դարձյալ մնում էին այգեգործությունը, բանջարաբուծությունը[2] և մասամբ անասնապահությունը: Երկրագործությունը, որը խանական շրջանում քաղաքի կյանքում ամենամեծ ավելի աննշան դեր էր խաղում, 30-ական թվականների երկրորդ կեսից դարձավ քաղաքի գյուղատնտեսական ամենակարևոր զբաղմունքներից մեկը: Նրա գյուղատնտեսության ճյուղերի հարաբերակցության այդպիսի կտրուկ փոփոխությունը հետևանք էր այն բանի, որ Նորք (Զոլմաքշի) գյուղը համարվեց քաղաքի բաղկացուցիչ մասը և դարձավ նրա թաղերից մեկը: Իսկ դա, միանալով քաղաքին, չփոփոխեց իր տնտեսության նախկին բնույթը, հիմնականում մնաց իբրև երկրագործական բնակավայր: Նույնիսկ 60-ական թվականների վերջերին «Զոլմաքշի թաղամասի բոլոր բնակիչները (մոտ 700 ընտանիք)» զբաղվում էին «հացամշակությամբ», ինչպես ասված է Կովկասին վերաբերող վիճակագրական ժողովածուի առաջին հատորում՝ «նյութեր Երևանի նահանգի վիճակագրության հա-

[1] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отдел III, էջ 449):

[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 26:

մար» վերնագրի տակ[1]։ Նորքի միացմամբ՝ հացահատիկի մշակությունը քաղաքի էկոնոմիկայում վերջին տեղերից բարձրանում է և գրավում երկրորդ տեղը։ Առաջին տեղը քաղաքի գյուղատնտեսական զբաղմունքների մեջ առաջվա նման անմրցակից կերպով շարունակում էր գրավել այգեգործությունը, որի արտադրանքն ավելի մեծ էր, քան գյուղատնտեսության մյուս բոլոր ճյուղերի արտադրանքները՝ միասին վերցրած։ Այգեգործությամբ զբաղվում էր քաղաքի բոլոր թաղամասերի բնակչությունը, սակայն որոշ տեսության այդ ճյուղի գծով առանձնապես աչքի էր ընկնում Կոնդը (Թափաբաշ)։ Նրա բնակիչները բացառապես այգեգործներ և բանջարաբույծներ էին[2]։

Ըստ իրենց կարևորության ու արտադրանքի չափերի, 60—70-ական թվականներին Երևանի գյուղատնտեսական զբաղմունքները ունեին հետևյալ հաջորդականությունը՝ այգեգործություն, հացահատիկամշակություն, բանջարաբուծություն, անասնապահություն և այլն։ Երևանի ոստիկանապետի տեղակալի 1865 թ. զեկուցագրում ուշադրի արված է. «Երևան քաղաքի մի քանի բնակիչների գյուղատնտեսության ամենագլխավոր և գերակշիռ ատարկան է՝ այգեգործությունը, հացահատիկամշակությունը և բանջարաբուծությունը»[3]։

Երևանի գյուղատնտեսական զբաղմունքների դարգացման համար, Անդրկովկասի մյուս քաղաքների ու շրջանների հետ միասին, կարևոր նշանակություն ունեցավ «Անդրկովկասյան գյուղատնտեսական ընկերության» (1850 թ.) և «Ռուսական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքի» (1851 թ.) գործունեությունը։ Դրանցից առաջինը Անդրկովկասում սկսեց պարբերաբար կազմակերպել ցուցահանդեսներ, որոնցից առաջինը կազմակերպվել է Երևանում, 1850 թվականին։ Այս շրջանում գոյություն ունեին Երևանի գյուղատնտեսական զբաղմունքների դարգացմանը նպաստող և արդելակող ևս մի շարք ազդակներ, որոնք կնշվեն իրենց տեղերում։

Գյուղատնտեսական ճյուղերի ծավալի և զարգացման համար կարևոր նշանակություն ունեին քաղաքի հողային ֆոնդերը, հողերի բերրիությունը, ոռոգման պայմանները և այլն։ Երևանի հո-

1 «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отдел I, гл. III, էջ 11։

2 Նույն տեղը։

3 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 26։

ղերը արդավանդ էին՝ այգեգործության, բանջարաբուծության և հացահատիկային կուլտուրաների համար պիտանի։

Շոպենի հիշատակության համաձայն, ինչպես տեսանք, քաղաքի արտաքին շրջագիծը 30-ական թվականների սկզբներին ունեցել է մոտավորապես 28 վերստ երկարություն։ Նա նշում է, որ իբր այդ շրջագծի մեջ ամփոփված քաղաքի 99/100 մասը գրավում են այգիները։ Շոպենի այդ հիշատակության մեջ այգիների տարածությունը շատ է չափազանցված։ Հայտնի է, որ Երևանն ունեցել է մեծ տարածություններ գրավող անպտուղ հողեր, ամայացած այգիներ և համեմատաբար մեծ տարածություն է գրավել հենց ինքը՝ սակավամարդ, բայց ցրված քաղաքը։

Շոպենի ժամանակ քաղաքի գրաված տարածությունը հանույթի չէր ենթարկվել։ Նա, այդ պատճառով, չէր կարող ստույգ տեղեկություն հաղորդել քաղաքի ո՛չ արտաքին շրջագծի երկարության և ոչ էլ այգիների ու ցանքատարածությունների վերաբերյալ։ Վերջապես, Շոպենի կատարած նկարագրություններից հետո՝ 30-ական թվականների երկրորդ կեսին քաղաքը մեծապես ընդարձակվել էր Նորք գյուղի հաշվին։ Հետագայում նույնպես քաղաքն ու նրա հողային տարածությունները կրել են զգալի փոփոխություններ ինչպես ընդհանուր տարածությամբ, այնպես էլ տարբեր կարգի հողային տարածությունների փոխադարձ հարաբերությամբ։

Մեզ հետաքրքրող շրջանում, Երևան քաղաքի գրաված տարածության և նրա հողային ֆոնդերի համար ամենաարժանահավատ տվյալները պետք է համարել 1863 թ. վերջին կատարված հանույթի արդյունքները, որոնք զետեղված են 1866 թվականի «Кавказский календарь»-ում, Կովկասի վերաբերյալ վիճակագրական տեղեկությունների ժողովածուի առաջին հատորում[1] և միաժամանակ լույս են տեսել առանձին գրքույկով (Պետերբուրգում, 1867 թ.), որը սակայն տառապում է բազմաթիվ սխալներով ու վրիպակներով։ Ըստ այդ աղբյուրների, Երևանի քաղաքային շրջագծի մեջ ամփոփված տարածությունը կազմել է 4641 դեսյատին։ Քաղաքն այդ ժամանակ սահմանակցվել է Նոր Բայազետի գավառին պատկանող պետական՝ Քանաքեռ ու Ավան գյուղերին, նույն գավառի մեջ մտնող թիուլական Ջրվեժ գյուղին և Երե-

1 Черноярский, Городские поселения Эриванской губернии (տե՛ս «Кавказский календарь на 1866 год», отд. III կամ «Сборник статистич. сведений о Кавказе, т. I, отдел I, гл. III, подгл. II).

վանի գավառի մեջ մտնող պետական, ամայի Կղլար հողերին. հարավում նա սահմանակից էր նույն այդ հողերի շարունակությանը։ Արևմուտքում քաղաքը սահմանակից էր Նորագավիթ, Վերին Շենգավիթ (այժմ՝ Շահումյանի շրջանի Շենգավիթ ավան), Սարվանլար, Ներքին Շենգավիթ, Ջաֆարաբադ (այժմ՝ Էջմիածնի շրջանի Արգավանդ գյուղ), Շիրաբադ (այժմ՝ Էջմիածնի շրջանի Փարաքար գյուղ) և Եղվարդ գյուղերին[1]։ Այդպիսի սահմաններում քաղաքի ամբողջ շրջագծի երկարությունը հասել է 42 վերստ 69 սաժենի (մոտ 45 կմ)։ Այդ շրջագծի մեջ ամփոփված տարածության 1458 դեսյատինը զբաղել են բնակեցված քաղաքը՝ քաղաքի բուն մասերը, իրենց փոքրիկ այգիներով ու բանջարանոցներով հանդերձ, և բերդը[2]։ Քաղաքային շրջագծի ներսում ամփոփված մյուս տարածությունները բաղկացած էին ամայի ու անպտուղ հողերից և այգիներից ու հացահատիկային մշակույթների դաշտերից[3]։ 1865 թ. տվյալներով, երևանի այգիները (և՛ մրգատու, և՛ խաղողի), հացահատիկային մշակույթները, առվույտի ցանքսերը և բանջարանոցներն ու բոստանները ընդամենը զբաղել են 2840 դեսյատին տարածություն (մոտ 3103 հեկտար)[4]։

Ըստ մշակույթների, այդ ամբողջ տարածությունը բաշխված է եղել հետևյալ կերպ՝ խաղողի և մրգատու այգիներ—2500 դեսյատին, մշակված հացահատիկային դաշտեր՝ 300 դեսյատին, առվույտ՝ 10 դեսյատին և բանջարանոցներ ու բոստաններ՝ 30 դեսյատին[5]։ Այդ նույն թվականին քաղաքի գյուղատնտեսության չորս ճյուղերից ստացված օգուտները, հողի մշակման համար կատարված ծախսերն ու աշխատանքների արժեքը չհաշված, կազմել են 76 300 ռուբլի[6]։ Այդ ամբողջ գումարը ստացվել է հետևյալ հարաբերությամբ՝ այգիներից—65 000 ռուբլի, հացահատիկներից՝ 6700

[1] «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 60. «Сборник статистич. сведений о Кавказе», т. I, гл. III, էջ 25։

[2] Նույն տեղերը։

[3] Զ. Կորկոտյանը օրավարի ու խալվարի և դեսյատինի ու հեկտարի փոխհարաբերությունները սխալ պատկերացնելով, Շոպենի հաղորդած տեղեկություններից (տես «Исторический памятник Армянской области», էջ 944 և 291) եզրակացրել է, որ Երևանի կանաչ տարածությունը իբր 1830-ական թվականների սկզբներին եղել է 5425 հեկտար (տե՛ս նրա՝ «Երևան քաղաքի ժողովրդագրությունը», էջ 16—17)։

[4] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 26։

[5] Նույն տեղը։

[6] Նույն տեղը։

ռուբլի, առվույտից՝ 3200 ռուբլի, իսկ բանջարանոցներից՝ 1400 ռուբլի[1]։

Խանական սիրապետության շրջանի նման, բուն Երևանի և նրա շրջակայքի հողամասերն ունեին իրենց հատուկ անունները՝ Դալմա, Սավզի-երի և այլն։ Նորքի միացմամբ քաղաքի հողերին ավելացան նրա այգիներն ու դաշտերը, որոնք ունեին տարբեր անուններ՝ Պլպիաններ, Ջրթափ, Նորահան առու, Բախչատեղեր, Կարուտ, Ղայաբաշի և այլն[2]։

Երևանը պարսկական լծից ազատագրելուց հետո այնտեղ պահպանվեցին նախկին՝ տարդարական տիրապետության շրջանի հողատիրության ձևերը։ Իսկ դրանք երեք տեսակ էին՝ պետական, մասնավոր և վանքապատկան ու մզկիթապատկան։ Սակայն էապես փոփոխության ենթարկվեցին դրանց հարաբերակցությունն ու հողային հարաբերությունների որոշ կողմերը։ Որպեսզի մեր ասածները չդառնան սոսկ հայտարարություն, մի փոքր ավելի մանրամասն ներկայացնենք նշված հողատիրության ձևերն առանձին-առանձին և ջրատիրությունն ու նրանից օգտվելու կանոնները, աշխատելով խուսափել անցանկալի կրկնություններից։

Հողատիրության առաջին ձևը, որ պետք է ուշադրության արժանանա, պետական հողատիրությունն էր, որ բաժանվում էր երկու մասի՝ բուն պետական և քաղաքապատկան հողերի։

Պետական հողային ֆոնդը առեղծվեց Երևանը պարսկական լծից ազատագրելու պահից, երբ նախկին տարդարապատկան-պետական բոլոր հողերը զբաղեցրեցին պետական և մեխանիկորեն անցան ռուսական ռազմական իշխանությունների տնօրինության ներքո։ Շոպենի հաղորդած տեղեկությունների համաձայն, նախկին Երևանի ու Նախիջևանի խանությունները Ռուսաստանին միացնելու ժամանակ թվով 35 այգիներ համարվեցին պետական[3]։ Դրանցից 24-ը գտնվում էին Երևանում, 9-ը Զոլմաքչիում (Նորք) և միայն երկուսն էին գտնվում Երևան քաղաքի տերիտորիայից դուրս, մեկը՝ Սարդարաբադում, իսկ մյուսը՝ Գառնիբասարի մահալում[4]։ Այդ 35 այգիները միասին կազմել են 295·669 քառ. սաժեն, կամ 123 դեսյատին[5]։ Պետականացված այ-

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 26։

[2] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 22։

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 955—958։

[4] Նույն տեղը։

[5] Նույն տեղը։

գիներում եղել են և՛ մրգատու ու ոչ մրգատու ծառատեսակներ, և խաղողի այգիներ։ Դրանց մի մասը ամայացված է եղել, մի մասը կիսով չափ է բերք ավել, իսկ երրորդ մասը եղել է լիարժեք մրգատու ու խաղողի այգիներ[1]։ Երևանում պետականացված 33 այգին միասին կազմել են 255 342 քառ. սաժեն[2] կամ մոտավորապես 106 դեսյատին (մոտ 116 հեկտար)։ Պետականացված այգիների թվում էին՝ Նորագեղում Դելդուշի կամ Թալլար այգին (46 440 քառ. սաժեն տարածությամբ), Գյուլլի-բաղը (16 560 քառ. սաժեն), Կիրբաղը (14 070 քառ. սաժեն), Թոփչի-բաշ բաղը (19 625 քառ. սաժեն), Ղաշաբաղլարը (28 800 քառ. սաժեն տարածությամբ) և այլն[3]։ Ըստ քաղաքի մասերի, դրանք տեղադրված էին հետևյալ կերպ. 7 այգի գտնվում էր Շահարում, 2-ը՝ Թափաբաշում, 15-ը՝ Նորագեղում, իսկ 9-ը՝ Չոլմաքչիում[4]։

Պարսկական շրջանի պետական այգիներից բացի՝ Երևանը դրավելուց հետո պետական հայտարարվեցին նաև պարսկական այն բարձրաստիճան պաշտոնյաների, վաճառականների և ազնվականության ներկայացուցիչների այգիները, որոնք քաղաքը Ռուսաստանի ձեռքն անցնելուց հետո թողել փախել էին Պարսկաստան[5]։ Այդ եղանակով պետականացված այգիների թիվը Երևանում հասել է 46-ի, որոնք ըստ քաղաքի մասերի՝ բաշխված են եղել հետևյալ կերպ. Նորագեղում՝ 10, Դալմայում՝ 10, Թափաբաշում՝ 3, Շահարում՝ 13, Դամիրբուլաղում՝ 1[6], Արուհայթում՝ 6 և Քյոշակբուրում՝ 3[7]։ Այգիների հետ միասին պետական համարվեցին Պարսկաստան փախչողների տները և մյուս անշարժ ունեցվածքները, ինչպես նաև բաղնիքները, խանութները և այլն։

Պետական հայտարարված այգիներն ու բանջարանոցները քաղաքային շրջանում սարդարական տիրապետության ժամանակ վաճառվում էին գյուղացիների և մասամբ՝ Երևանի բնակիչների կողմից, հարկադիր՝ կոռային աշխատանքով։ Սակայն շատ շուտով պետական հողային տարածությունները Երևանում

[1] И. Шопен. Исторический памятник Армянской области, էջ 955—958։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը։

[5] Նույն տեղը, էջ 475։

[6] Դամիրբուլաղի այդ այգին հետագայում կոչվեց Անգլիական այգի (այժմյան 26 Կոմիսարների անվան այգին) և միշտ մնաց որպես պետական։

[7] И. Шопен. Исторический памятник Армянской области, էջ 475—476։

պակասում և նվազագույնի են հասնում, ինչպես նաև վերանում է կոռային կարգով պետական այգիների մշակումը քաղաքում։ Դա կատարվեց հետևյալ կերպ։ Ռուս-պարսկական երկրորդ պատերազմն ավարտվելուց հետո, շուտով Երևան է վերադառնում պատերազմի ժամանակ Պարսկաստան փախածների մեծագույն մասը և դիմում նորից ետ վերադարձնելու իրենց ունեցվածքները։ Ռուսական իշխանությունները, նրանց դիմումները ճանաչելով օրինական, վերադարձնում են պետականացված այն բոլոր այգիներն ու կալվածքները, որոնք պատերազմի ժամանակ, իբրև անտեր մնացած ունեցվածք, հայտարարված էին պետական[1], մանավանդ որ Թուրքմենչայի պայմանագրի 12-րդ հոդվածով երկու կողմերը պարտավորվել էին ճանաչել բոլորի սեփականատիրական իրավունքները և թույլ տալ, ովքեր ցանկանում են, վաճառելու իրենց անշարժ ունեցվածքն ու բնակվելու երկու պետություններից նրա տերիտորիայում, ուր իրենք կցանկանան[2]։ Պատերազմից հետո Պարսկաստանից վերադարձածները, առանց մեծ դժվարության, տեր են դառնում իրենց հողերին և մյուս անշարժ գույքին[3]։ Դրա հետևանքով, պետականացված այգիների թիվն ու դրանց զբաղած տարածությունները 30-ական թվականների սկզբներին հսկայական չափով կրճատվում են։ Սակայն դա Երևանում պետական կալվածքների բուն կրճատման միայն սկիզբն էր։

Պետական այգիները և բանջարանոցները կրճատվեցին և նվազագույնի հասան 1837 թվականից հետո, երբ Հայաստան այցելած Նիկոլայ ցարը կարգադրություն է անում Հայկական մարզում եղած բոլոր այգիները, բացառությամբ Զանգվի աջ ափին գտնվող նախկին սարդարապատական մեծ այգու, վաճառել։ Հայկական ՍՍՌ Պետական արխիվում այդ հարցի առթիվ պահպանված է մի արժեքավոր փաստաթուղթ, որն իրենից ներկայացնում է Հայկական մարզի կառավարչապետի պաշտոնական գրությունը՝ ուղղված Երևանի օկրուգի պետին՝ ցարի կարգադրությունը իրագործելու համար[4]։

Հարկ ենք համարում այն թարգմանաբար մեջ բերել որոշ համառոտագրություններով.

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 475։

[2] Договоры России с Востоком политические и торговые, собрал и издал Т. Юзефович, СПБ, 1869, էջ 220։

[3] Դրանց կալվածքների ու ունեցվածքի մասին մանրամասն տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 90, գ. գ. 57, 58, 61, 66, 69, 70, 73, 75, 83, 88, 97, 101, 103, 108, 111, 116, 120, 122, 133, 134, 135, 136 և այլ գործերում։

[4] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 90, գ. 866, թ. 1—2։

«Թագավոր կայսրը Երևան քաղաքում եղած ժամանակ, նորին կայսերական մեծությունը... բարեհաճեց կարգադրել Հայկական մարզում եղած պետական բոլոր այգիները, բացառելով մեկը, որը գտնվում է Երևանում, Զանգու գետից այն կողմ, սարդարի տան դիմաց, վաճառել, որպեսզի բնակիչներին ազատի դրանց մշակման համար բանվորներ ուղարկելուց։

Ի կատարումն այդպիսի բարձրագույն հրամանի..., ես կարգադրություն արեցի նշված այգիների վաճառքի մասին այն հաշվով, որպեսզի դրանց մշակման համար այժմվանից բնակիչներից ոչ մի դեպքում կարգադրումներ չարվեն, անգամ վերը նշված վաճառքի դուրս չբերվող այգու պահպանումը և մշակումը... պետք է «կատարել» դրանից ստացված եկամտի հաշվին, այդ մասին տեղեկացնում եմ ձերդ պղնվությանը ճշգրիտ... դեկավարության համար, հավասարապես ձեզ վստահված օկրուգում ամենուրեք հայտարարելու համար, ի լուր ամբողջ բնակիչներին՝ բարձրագույն բարեհաճության մասին...»[1] (ստորագրված է Հայկական մարզի կառավարչապետի կողմից, 1837 թ. նոյեմբերի 11)։

Ամենաչն հավանականությամբ՝ Նիկոլայ I-ին երեք հանգամանք կարող էին ստիպել այդ քայլին դիմելու։ Դրանցից առաջինը այն էր, որ նա իր այցելության ժամանակ ողջ Հայկական մարզի բնակչությանը հուզված է տեսել։ Նրանք թագավորին բողոքել էին ստիճանավորների կատարած անօրինականությունների դեմ։ Նիկոլայն է՛լ ավելի անկարդ վիճակում էր տեսել Երևանի վարչական գործերը։ Եվ ահա՛, որպեսզի որոշ չափով մեղմացնի ժողովրդական զանգվածների աճող անբավականությունը ցարական վարչաձևի նկատմամբ, անում է մի քանի կարգադրություններ, որոնց թվում և պետական այգիների վաճառման ու դրանց մշակման համար կոռային աշխատանքի հետագա արգելումը։ Այդ կարգադրության երկրորդ դրդապատճառը կարող էր լինել այն, որ պետական այգիները ցանկացած եկամուտները չէին տալիս։ Դրանց վրա նշանակված հսկիչները, ինչպես և կապալառուները իրենց չարաշահումներով ու ոչ սրտացավ վերաբերմունքով խիստ կրճատում էին պետության սպասելիք եկամուտները։ Վերջապես, կարգադրության երրորդ շարժառիթը, որն անմիջապես առնչվում է երկրորդի հետ, ընդհանրապես նոր գրավված տերիտորիաներում պետությանն անցած անշարժ գույքի վաճառքով պետական գանձարկղի հարստացման ընդհանուր տենդենցը կատրող էր լինել։

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 90, գ. 866, թ. 1—2։

Արխիվային նյութերը թրոթ ցույց են տալիս, որ Երևանի պետական այգիները հսկիչների ու կապալառուների ոչ սրտացավ վերաբերմունքի հետևանքով գտնվում էին անխնամ դրության մեջ։ Դրանցից շատերը շարքից դուրս էին եկել, իսկ մյուսները գտնվում էին կիսաամայի վիճակում։ Նույնիսկ նախկին սարդարական հռչակավոր Դալմայի այգին, որը մնաց որպես պետական ունեցվածք և առանձին ուշադրության առարկա էր, 60-ական թվականներին գտնվում էր ողորմելի դրության մեջ[1]։ Նրա եկամուտները 1868 թ. կազմում էին ընդամենը 1660 ռուբլի, մինչդեռ նրա պարիսպը, առուները և այլն վերականգնելու համար նույն թվականին կազմված նախահաշվով պահանջվում էր 1635 ռուբլի[2]։

Նիկոլայ I-ի կարգադրությունը սկսում է կենսագործվել։ Երևանի պետական այգիները աստիճանաբար անցնում են մասնավոր մարդկանց ձեռքը։ 1843 թվականի տվյալներով, նշված այգիներից պետության ձեռքին մնացել էին Դալմայի և Անգլիական այգիներից բացի՝ միայն 8—10 այգի, որոնք այդ թվականին, ինչպես և Դալման ու Անգլիական այգին, տրված էին կապալով[3]։ 50-ական թվականի սկզբին արդեն վաճառվել էին նաև վերջին 8—10 այգիները։ Նահանգական վիճակագրական կոմիտեի տվյալներով, այդ ժամանակ Երևանում պետական անշարժ գույքը կազմված էր միայն մեկ խանութից, չորս տներից, 2 այգիներից (Դալմա և Անգլիական այգիները) և երեք աշքից բաղկացած մեկ չրաղացից[4]։

Պետության ձեռքին մնացած այգիները՝ Դալման և Անգլիական այգին, անմիջապես գտնվում էին զինվորականների իրավասության ներքո[5] և մասնավոր մարդկանց էին տրվում կապալով։

Դրանք սովորաբար կապալով էին տրվում տարին մեկ անգամ, նահանգական վարչության կողմից լիազորված պաշտոնյաների միջոցով։ Կապալը ձևակերպվում էր հատուկ պայմանագրով, որտեղ նշվում էին երկու կողմերի բոլոր պարտականությունները, կապալադիրը, այգու վիճակը և այլն, և այլն[6]։

[1] Տե՛ս՝ ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 667, թ. 58—64։

[2] Նույն տեղը, թ. 63—64։

[3] Նույն տեղը, գ. 176, թ. 15 և 17։

[4] К. Орловский, Эривань. («Кавказский календарь на 1852 год» отдел III, էջ 447)։

[5] АКАК, т. X, էջ 884։

[6] Կապալի պայմանների և պայմանագրերի բնույթի մասին մանրամասն տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 120, թ. 104—105, գ. 667, թ. 22, 37—39, 50—51 և այլուր։

Պետական հողատիրության մյուս ձևը ֆաղֆապատկան հողերն էին, որոնց եկամուտներն անմիջապես պատկանում էին քաղաքին: Քաղաքին պատկանող հողերը նույնպես կապալով էին տրվում մասնավոր մարդկանց: Նահանգական վիճակագրական կոմիտեն իր 1863 թ. հաշվետվության մեջ հաղորդում է այն մասին, որ քաղաքային ունեցվածքները կազմում են հացահատիկների մշակության, բանջարանոցների և առվույտի ցանքսերի, աղյուս և կիր մշակելու, կանուխներ պատրաստելու և քար հանելու համար տրված հողային տարածություններից[1]: Այդ նույն թվականի տվյալներով, նշված ունեցվածքներից քաղաքը այդ տարին ստացել էր 2035 ռուբլի 1 կ. եկամուտ[2]: Հետագայում, բուրժուական ռեֆորմը քաղաքում անցկացնելուց հետո (1879 թ.), երբ կազմվում են քաղաքային դուման և վարչությունը, վերը նշված պետական ունեցվածքները՝ Դալմայի ու Անգլիական այգիները և մյուս ունեցվածքները ևս անցնում են քաղաքային վարչության տնօրինության ներքո: Այդպիսի փոքր դիջում անելով՝ ցարական կառավարությունը քաղաքի համար կատարվող ամբողջ ծախսերը դնում է քաղաքային վարչության վրա, ինքն իրեն այդ բոլորից աղատ համարելով:

Առաջին պահից թվում է, թե քաղաքապատկան հողերը գնալով պետք է ընդարձակվեին, որովհետև քաղաքին անցան նաև պետական այգիներն ու բանջարանոցները: Սակայն իրականում հակառակ երևույթն ենք նկատում: Քաղաքն իր համեստ պահանջների համար ստիպված է լինում վաճառել հողերի մեծագույն մասը, իսկ մյուս մասն էլ, որ տրվում էր կապալով, անբավարար ոռոգման պայմանների և կապալառուների անսրտացավ վերաբերմունքի պատճառով, դադարել էր եկամտի լուրջ աղբյուր լինելուց: Քաղաքապատկան հողեր են վաճառվել գրեթե ամեն տարի, սակայն հատկապես հայտնի է 1865 թվականին կազմակերպված մասսայական վաճառքը, երբ առանձին հողակտորներով մասնավոր մարդկանց ձեռքն անցան բերդի մոտակայքում ընկած հողային հսկայական տարածությունները: 70-ական թվականների վերջերին քաղաքապատկան հողերը հաղիվ կազմում էին մոտ 1000 դեսյատին, որի միայն մի մասն էր մշակվում, նրա մյուս մասը գրեթե ամայացել էր: Ահա թե ինչ է գրված այդ մասին Երևանում հրա-

[1] «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 70:
[2] Նույն տեղը:

տարակվող «Պսակ» թերթի 1880 թ. համարներից մեկում՝ անստորագիր, «Երևանից» մայիսի 8, վերնագրի տակ:

«Եթե Ռուսաստանում այնպիսի քաղաքներ կան, որոնք իրենց անցյալ կյանքի հանդամանքներից ընկել են աղքատության և պարտքի մեջ, այդպիսի քաղաքներից մեկն էլ կարելի է Երևանը հաշվել: Զրկվելով իր սեփական հողերից, որոնք ընկել են այս կամ այն մարդու ձեռը ամենաչնչին գներով և կամ ըստ մեծի մասին ձրի, Երևանը բացի մի հազար դեսյատին վարելահողերից չունի ոչ մեկ անշարժ կալված, որի արդյունքը կարող լիներ բավականացնել նրա կենսական պիտույքները: Մեր քաղաքի բարօրության և հառաջադիմության հույսը միայն այդ հողերի վրա է, այնուամենայնիվ դրանցից էլ մինչև հիմի քաղաքը չի կարողացել արժանապես շահվել. առաջինը այն պատճառով, որ ջրի սակավությունից այդ հողերի մի փոքր մասն է մշակվում. երկրորդ՝ որ այդ հողերը տրված են չոքը տարի ժամանակի կապալով մի անշան գնով և բացի այս, պայմանագրի զորությունով, թեև մեզ անհասկանալի կերպով, մի տարի ժամանակից ավելի պետք է մնան ձրիաբար կապալառուի շահեցողության տակ»[1]:

Կապալային սիստեմը այգիներն ու մշակովի տարածությունները անպետքացնում էր: Կապալառուն աշխատում էր իր տրամադրության տակ եղած հողից, ինչքան կարելի է, շատ եկամուտներ ստանալ, առանց հոգալու հետագայի մասին: Իսկ քաղաքը այդ հողերը մշակելու այլ մեթոդներ չուներ, բացի կապալով տալուց: Մյուս միջոցը հողերի վաճառքն էր, որը կատարվում էր հարկադրաբար՝ քաղաքի ամենաառօրյա հոգսերի համար միջոցներ չլինելու պատճառով: Հողերի վաճառքը քաղաքին կարող էր միջոցներով բավարարել միայն ժամանակավորապես: Շուտով քաղաքը նորից է ընկնում նյութական սուղ դրության մեջ, երբ կծրցնում է նաև իր ընտիր հողամասերը:

Հակառակ նշված ձևի հողատիրությունների, մեզ հետաքրքրող շրջանում, Երևանում եկեղեցապատկան ու վանքապատկան և մասնատիրական հողային տարածությունները շարունակում են դրանց հաշվին ընդարձակվել՝ ամենազանազան եղանակներով, առաջինները գլխավորապես նվիրատվությամբ, իսկ երկրորդը՝ գնման ճանապարհով:

Երևանի նահանգի վիճակագրական կոմիտեի պաշտոնական

[1] «Պսակ», գրական, պատմական և մանկավարժական լրագիր, Երևան, 1880, մայիսի 17:

հաշվեհավության համաձայն, 1863 թ. Երևանում եկեղեցապատկան և վանքապատկան այգիների թիվը հասել է 11-ի[1]։ Դրանցից 6-ը պատկանում էին Երևանի եկեղեցիներին, 5-ը՝ Էջմիածնի, Գեղարդա, Սևանի և Խորվիրապի վանքերին[2]։ Այդ վեց այգիներից բացի, Երևանի եկեղեցիներին էր պատկանում և մի խանութ, իսկ վանքերը, նշված 5 այգիներից զատ, ունեին նաև չորս ջրաղաց[3]։

Վանքապատկան հողերը, ինչպես ասվեց, ընդարձակվում էին երկու եղանակով՝ «նվիրատվությամբ» և գնման ճանապարհով։ Առաջվա նման, այս շրջանում ևս Երևանում զանազան հողակտորներ են անցնում վանքի ու եկեղեցիների ձեռքը։ Այդ մասին Հայկական ՍՍՌ Պետական Ջեռագրատունը (Մատենադարան) պահպանված են մի շարք վավերագրեր։ Երբեմն պատահում էին նույնիսկ դեպքեր, երբ վանքին կամ եկեղեցուն էին անցնում ոչ թե անժառանգ մնացած հողերն ու այգիները, այլ որբացած ընտանիքի միակ ապրուստի միջոցը կազմող հողակտորը։ Օրինակ՝ այդպիսի մի դեպքի մասին է պատմվում կաթողիկոսական դիվանի 1856 թվականին վերաբերող վավերագրերից մեկում[4]։

Անուղղակի ակնարկներից երևում է, որ վանքապատկան ու եկեղեցապատկան այգիները մշակվում էին հարկադիր աշխատանքի միջոցով, վանքի կամ եկեղեցու հաշվին՝ մշակներին տալով օրվա հաց։ Կաթողիկոսական դիվանի վավերագրերից մեկում, որը վերաբերում է 1832 թվականին, ուղղակի ասված է այն մասին, որ Երևանի վանքապատկան այգիներում նշանակված հսկիչը դրանք էտել է տվել 550 մշակների միջոցով, որոնցից 450-ը աշխատել են փորահացի («փորօրի») կարգով[5]։

Վանքապատկան՝ նշված 5 այգիներն ու 4 ջրաղացները միասին 60-ական թվականներին տարեկան մոտավորապես տալիս էին 954 ռուբլու եկամուտ, իսկ եկեղեցապատկան 6 այգիներն ու 1 խանութը՝ 435 ռուբլու[6]։

Հողերի և անշարժ այլ ունեցվածքների սեփականության եր-

[1] «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 70։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը։
[4] ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 181, վավերագիր 360։
[5] Նույն տեղը, թղթապանակ 74, վավերագիր 424։
[6] «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 70։

բորդ՝ վերջին ձևը մասնատիրականն էր, որն ամենից կենսունակն էր և արագ մեծացողը։

Մասնատիրական այգիներն ու այլ կարգի հողակտորները բազմաթիվ էին։ Նախորդ շրջանի նման 1828—1879 թթ. ևս քաղաքացիների մեծագույն մասն ուներ իր սեփական բանջարանոցն ու փոքրիկ այգին։ Հողի սեփականատերերը ունեին դասակարգային խառը կազմ։ Նրանք պատկանում էին հասարակության ամենատարբեր խավերին։ Սեփական հողեր ունեին և՛ առևտրականները ու արհեստավորները, և՛ մելիքներն ու աղալարները, և՛ հայ ու մահմեդական հոգևորականները, և՛ զինվորականներն ու պետական պաշտոնյաները։ Սակայն դրանցից յուրաքանչյուրի հողային տարածությունները տարբեր չափի էին ու որակի։

Մասնատիրական հողերի մեծագույն մասը ձեռք էր բերվել գնման եղանակով, որի համար հողատերերն ունեին իրենց համապատասխան մուրհակները՝ ձեռք բերված ամենատարբեր ժամանակներում[1]։ 1850-ական թվականների տվյալներով, Երևան քաղաքում մասնավոր սեփականություն կազմող միայն բանջարանոցների ու առվույտի ցանքսերով զբաղված հողակտորների թիվը հասնում էր 27-ի[2], այն դեպքում՝ երբ նույն կարգի պետական կալվածքները միայն երկուսն էին, մեկը՝ Խանրաղում, մյուսը՝ Յոնջալուղում[3]։

Երևանի բնակիչներին պատկանող անշարժ գույքը՝ այգիները, տները և այլն գրանցված էին հատուկ գրքերում՝ ռեեստրային մատյաններում։ Վերջիններում նշվում էին տվյալ այգու, բանջարանոցի կամ տան ճշգրիտ տեղը (թե որ քաղաքամասում, փողոցում և որ կետում էր գտնվում), դրանց սահմանակից տները, այգիներն ու բակերը, հողամասի մեծությունը, հաճախ նաև արժեքը՝ դրամով արտահայտված, սեփականատիրոջ անուն, ազգանուն և հայրանունը, հաճախ նաև՝ դասակարգային պատկանելությունը, նրա բնակության վայրը և այլն, և այլն[4]։ Ռեեստրային մատյանները պարբերաբար թարմացվում էին, հին մատյանների դրանցումները փոխադրելով նոր մատյանների մեջ՝ արձանագրելով տեղի ունեցած փոփոխությունները (վաճառքը, սեփականատիրական իրավունքի կորցնելը և այլ դեպքեր)[5]։

[1] ՀՍՍՌ ՓԿԳԱ, ֆ. 133, գ. 214, թ. 12—13։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը։
[4] Նույն տեղը, ֆ. 77, գ. 458 և այլուր։
[5] Նույն տեղը։

Մշտական և խիստ գործավարություն էր տարվում մանավանդ այգիների, տների և այլ անշարժ գույքերի առ ու վաճառքի համար, որը ամենատարածական երևույթն էր Երևանում։ Վաճառքը, գրավ դնելը և այլ գործարքներ ձևակերպվում էին նոտարի կողմից, որն այդ մասին ամենայն մանրամասնությամբ արձանագրում էր այսպես կոչված մուրհակագրքում («крепостная книга»)[1]։

Մուրհակագրքի մեջ՝ ռեեստրային մատյանի տվյալներից բացի, գրանցվում էին առ ու վաճառքի հետ կապված զանազան մանրամասնություններ[2]։

Տարբեր ժամանակներում խաղողի և մյուս այգիների վաճառման գինը եղել է տարբեր չափի։ 70-ական թվականներին, օրինակ՝ մեկ դեսյատին խաղողի այգին սովորաբար վաճառվել է 500—1000 ռուբլով[3]։ Նույնպիսի տատանումներ են ունեցել նաև մյուս հողային տարածությունների գները։

Երևանի բոլոր կարգի հողային տարածությունները կամայնային ու ոչնչի հավասարվելին, եթե չլիներ նրա ոռոգման ցանցը, որը ստեղծվել էր դարերի ընթացքում։ Մենք տեսանք, որ պարսկական վերջին խանի օրոք Երևանի ոռոգման ցանցը գտնվում էր բավական բարեկարգ վիճակում։ Քաղաքի ոռոգման առուները իրենց ջրերով բավարար չափով ապահովում էին այգիների, բանջարանոցների և մյուս կանաչ տարածությունների ոռոգումը։ Սակայն, Երևանի ոռոգման ցանցն այդպիսի դրությամբ չմնաց 1826—28 թթ. պատերազմի ընթացքում. մի պատերազմ, որի ամենագլխավոր օբյեկտն ու ճակատամարտի վայրերից մեկը հենց Երևան քաղաքն էր։ Պատերազմի հետևանքով մասնակի ավերման էին ենթարկվել նրա առուները, և դրանց վերականգնումը կատարվեց պատերազմն ավարտվելուց ավելի քան 12—15 տարի անց։ Պատերազմների հետևանքով հսկայական վնաս էր կրել ոչ միայն Երևանի, այլև ամբողջ Անդրկովկասի ոռոգման ցանցը։ Պատերազմից հետո, ընդհուպ մինչև 1840 թվականը, ընդհանրապես Անդրկովկասի ոռոգման ցանցի մասին տվյալներ չեն պահպանված։ Առաջին պաշտոնական հայտարարությունը Կովկասի ոռոգողական տնտեսության վերաբերյալ կատարել է պետական գույքերի նախկին մինիստր Կիսելևը։ Նա իր հայտարարության մեջ ուղղակի մատնանշում է, որ Անդրկովկասում խոշոցիոն տնտեսությունը անկում է ապրում[1]։ Անդրկովկասի պայմաններին և ոռոգման սիստեմին քաջատեղյակ Կ. Ն. Ֆրոլովը Երևանի ու Նախիջևանի խանություններում այդ անկման պատճառը համարում է՝ ա) պատերազմները, որոնց ժամանակ խափանվել են մի շարք առուներ և մինչև 40-ական թվականների սկզբները ու դրանից հետո չեն վերականգնվել, բ) ոռոգման ցանցի ղեկավարման թերությունները[2]։ Նա գտնում է, որ պարսկական տիրապետության շրջանում ոռոգման գործի ղեկավարության մեջ գոյություն ուներ կարգ ու կանոն, որոնք այդ խանությունները Ռուսաստանին միացնելուց հետո սկզբնական շրջանում՝ 16—18 տարի շարունակ ռուսական իշխանությունների կողմից հաշվի չէին առնվում։

Անդրկովկասի Կենտրոնական Ռուսաստանի արդյունաբերության հանար հումքային բազա ստեղծելը, որին ձգտում էր ցարական ինքնակալությունը, անհնար էր առանց նրա ոռոգման սիստեմի կանոնավորման։ 40-ական թվականներից սկսած Անդրկովկասի խափանված ջրանցքների վերականգնման և նոր ջրանցքներ անցկացնելու հարցը դառնում է քննարկման հարց, և զանազան միջոցառումներ են ձեռնարկվում այդ ուղղությամբ։ 1847 թ. Անդրկովկասում բնակեցման գծով գործող հատուկ հանձնաժողովը՝ երկրի ոռոգման ցանցի մասին եղած տվյալներն իր ձեռքի տակ հավաքելուց հետո, նրա բոլոր առուները բաժանում է երեք կարգի։ Առաջին կարգի մեջ է մտցվում 7 առու, երկրորդ կարգի են համարվում 1128 առուներ, իսկ երրորդ կարգի մեջ մտցվում են այն առուները, որոնք դադարել էին գործելուց և դրանց վերականգնումը պետության կողմից չէր նախատեսվում[3]։ Երևանի առուները մտնում էին առաջին և երկրորդ կարգերի մեջ, որոնց կոնսերվորման համար նախատեսվում էր ծախսել պետական որոշ գումար՝ աշխատանքները կատարելով տեխնիկի հսկողությամբ։ 40—50-ական թվականների ընթացքում Երևանի նախկին առուներն ամբողջովին կանոնավորվում են. սկսում են անխափան կերպով գործել նրա ոռոգման առուները՝ Աբուհայթը, Մամռին, Դալպով գործել նրա ոռոգման առուները՝ Աբուհայթը, Մամռին, Դալմանի և Նորագեղի առուն, որոնց երկարությունը իրենց ենթաճյուղերի հետ միասին հասնում էր մի քանի տասնյակ կիլոմետրի։

[1] ՏՀ՛ա ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 77, գ. 458, 675 և այլուր։

[2] Նույն տեղերում։

[3] «Сборник сведений о Кавказе», т. III, էջ 262 և 346։

[1] «О состоянии ирригации в Закавказском крае», по сообщению К. Н. Фролова («Записки Кавказского отделения русского технич. общества», т. IV, 1871—1872 гг., Тифлис, 1872, էջ 267—270).

[2] Նույն տեղը։

[3] «Записки Кавказск. отделения русского техническ. отщ.», т. IV, էջ 318։

Նախորդ ժամանակների նման՝ Կըրխ-բուլաղը և դրանից հանած առուները ևս ոռոգում են քաղաքի բազմաթիվ այգիներն ու բանջարանոցները։ Սակայն խանական շրջանի ոռոգման ցանցը այլևս անբավական էր Երևանի համար։

Թուրքմենչայի և Ադրիանապոլսի պայմանագրով Արևելյան Հայաստան եկած և Երևանում հաստատված բնակիչները նախկին խանրաղ կոչված վայրում և այլուր հողակտորներ էին ստացել տուն կառուցելու և իրենց համար փոքրիկ այգիներ ու բանջարանոցներ մշակելու համար։ Նախկինում այդ վայրերի մեծ մասը ոռոգման ջրի սակավության պատճառով վեր էր ածվել չոր ու անպտուղ տարածությունների։ Անհրաժեշտ էր ոչ միայն վերականգնել, այլև ավելի ջրառատ դարձնել հին առուները և մտածել նոր, ավելի մեծ ջրանցքների կառուցման մասին։

40—50-ական թվականներին ցարական կառավարությունը փորձում է Անդրկովկասում կառուցել երկու մեծ ջրանցքներ՝ Իորատի և Զանգվի ջրանցքները, որոնք երկուսն էլ մնացին առանց կառուցվելու՝ չնայած ծախսվեցին բավական միջոցներ[1]։

Ըստ նախագծի, ենթադրվում էր Զանգվից հանվող այդ առուն սկսել նրա ակունքի մոտից, անցկացնել 37 գյուղերով, ապա Սուխոյ Ֆանտան չհասած՝ ուղղել դեպի Կըրխ-բուլաղի աղբյուրները, որոնց հետ միացնելով ջրանցքի մնացած ջրերը, ուղղել դեպի Երևան ու նրա շրջակայքի հողերը։ Ջրանցքն ունենալու էր 56 վերստ երկարություն։ Դրա կառուցման համար նախատեսվում էր պարհակային կարգով բնակիչներից պահանջել 259572 մարդ և 1145 սայլ, իսկ դրամական միջոցները՝ 23837 ռուբլի ընդհանուր գումարով պետությունը վերցրել էր իր վրա[2]։ 1859 թ. գարնանը կառուցողական աշխատանքները սկսվում են, և երկու տարվա ընթացքում գյուղացիները տրամադրում են 75000 մարդ, իսկ պետությունը ծախսում է 5000 ռուբլի, 6 վերստի վրա ջրանցքը փորվում է։ Սակայն, շուտով աշխատանքները դադարեցվում են։ Հատուկ հանձնաժողովը Կովկասի փոխարքային զեկուցում է, թե իբր նախագիծը անրավարար է և չի կարող այն իրագործվել։ Կովկասի փոխարքայի պաշտոնակատար Օրբելիանին էլ հենց դրան էր սպասում։ Նա իր՝ 1861 թ. դեկտեմբերի 6-ի հրամանագրով վերջնականապես, ընդմիշտ դադարեցնել է տալիս կառուցողական բոլոր

[1] М. Герсеванов, Обзор производственных по ирригации в Кавказском и Закавказском крае до 1871 года («Сборник сведений о Кавказе», т. II, Тифлис, 1872, էջ 20—24).

[2] «Сборник сведений о Кавказе», т. II, Тифлис, 1872, էջ 22—23։

աշխատանքները[1]։ Դրանով տասնյակ գյուղերի հետ միասին երևանը ևս զրկվում է ոռոգման նոր ջրեր ունենալու բոլոր հույսերից։

Անդրկովկասի վարչաձևի փոփոխությունների հետ միասին փոփոխություններ մտցվեցին նաև ոռոգման ցանցի կառավարչության սիստեմի մեջ։ 1846 թ. հրապարակվում է հատուկ օրենք («Положение») միրաբների մասին։ Այդ օրենքով, միրաբները՝ ջուվարներն ու կարաջուվարները պահպանում էին իրենց նախկին պարտականությունները, միայն այն տարբերությամբ, որ եթե նախկինում միրաբները ինքնուրույն պետեր էին, ապա այժմ նրանք ստորադրվում էին գավառապետին, համարվում էին նրանց օգնականները ոռոգման ցանցի գծով և ենթարկվում նրանց[2]։ Միրաբն ու նրան ենթակա ջուվարներն ու կարաջուվարները, ըստ օրենքի, վարձատրվում էին համայնքների կողմից։

Շատ շուտով պարզվում է, որ 1846 թ. օրենքը ոչնչ պակասավոր շատ կողմեր։ Փորձը ցույց տվեց, որ խանական շրջանի միրաբների ու ջուվարների ֆունկցիաների վերականգնումով հնարավոր չէ կանոնավորել կամ առաջ մղել ոռոգման գործը, մանավանդ որ ոռոգման գործին շատ դեպքերում բոլորովին անծանոթ գավառապետները[3] այդ հարցի մեջ չէին կարող խորամուխ լինել և դրան տալ հաջող ընթացք։

1890 թվականին հրապարակվում է նոր օրենք Անդրկովկասում ոռոգողական ջրից օգտվելու մասին։ Այդ օրենքով, Թիֆլիսում կազմակերպվեց ջրային վարչություն, որին հանձնարարվեց օրենքը կիրառել երկրի կյանքում, առանց բացառություններ թույլատրելու։ Նոր օրենքով հաստատվեցին ոռոգման նոր վարչաշրջաններ և նոր սկզբունքներով կազմվեց ոռոգման ջրի վրա հսկող պաշտոնեություն[4]։

Նորից վերադառնալով Երևան քաղաքի ոռոգման սիստեմին և նրա կառավարմանը, պետք է ասել, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վերջերին նրա ոռոգման ցանցը, որը 40—50-ական թվականներին լիովին վերականգնված էր, բաղկացած էր անխափան գործող՝ վերը նշված չորս առուներից, որոնք հանված էին Զանգվից և Կըրխ-բուլաղի գետից ու դրանից հանված առուն-

[1] «Сборник сведений о Кавказе», т. II, Тифлис, 1872, էջ 22—23։

[2] «Записки Кавказского отделения русского технического общества», т. IV, էջ 270—271, С. А. Егиазаров, О водовладении в Закавказском крае, Киев, 1896, էջ 23—25.

[3] «Записки Кавказск. отд. русск. технич. общ.», т. IV, էջ 271—274։

[4] «Кавказ» (օրաթերթ), Թիֆլիս, 1894, № 345։

քից։ Առաջվա նման Երևանն ուներ իր միրաբը և ջուվարները։ Միրաբը ընտրվում էր հողատեր հասարակության կողմից, տարին մեկ անգամ և հսկում էր քաղաքի ոռոգման ամբողջ ցանցի վրա։ Նա փաստորեն ոռոգման առուները վերցնում էր կապալով և պարտավոր էր դրանք պահել կարգին վիճակում։ Դրա փոխարեն, միրաբը իր վարձատրությունը ստանում էր այգատեր և հողատեր հասարակությունից։ Օրինակ՝ Դալմայի առվից ոռոգվող հողամասերի յուրաքանչյուր 800 քառ. սաժենի համար միրաբը ստանում էր 60 կոպեկ վարձատրություն[1]։ Սակայն նա չէր բավականանում միայն օրինական վարձատրությամբ։ Օգտվելով ոռոգման ջրի աղբյուրից՝ միրաբը, կաշառք վերցնելով, կատարում էր զանազան անօրինականություններ, որի հետևանքով Երևանի այգիներում, բանջարանոցներում ու դաշտերում ամռանը հողամասերի միջև ջրի համար հաճախ ծագում էին վեճեր, կռիվներ[2]։

Քաղաքի հողային ֆոնդերի, հողատիրության ձևերի և ոռոգման ցանցի մասին նշվածներով բավականանալով, այժմ անցնենք նրա գյուղատնտեսության առանձին ճյուղերի բնութագրմանը։

Ինչպես արդեն ասվել է, նրա գյուղատնտեսական զբաղմունքների մեջ և՛ իր արտադրանքով, և՛ իր խաղացած դերով առաջին տեղը անմրցակից կերպով պատկանում էր այգեգործությանը։

1826—28 թթ. պատերազմի ժամանակ Երևանի այգիները մեծապես վնասվել էին։ Պաշարման ժամանակ ռմբակոծության հետևանքով ավերվել էին շատ այգիների պարիսպներ, տապալվել 100-ավոր ծառեր և վնասվել խաղողի այգիներ։ Այգիներին մեծ վնաս էր հասցրել, մանավանդ, հենց ինքը՝ Հուսեյն խան սարդարը, որի կարգադրությամբ կտրել էին շատ այգիներ ու ավերել բերդամերձ տներ՝ բերդում պաշարվածների տեսադաշտը «ավելորդ» արգելքներից մաքրելու և պաշարողների գործողությունները մանրամասնությամբ դիտելու համար։ Պատերազմից հետո, բավական երկար ժամանակ նրա պատճառած ավերումները մնում են առանց վերականգնվելու։ Պատերազմի հետևանքները վերացվում են միայն 15—20 տարվա ընթացքում։ Սակայն դրանից չպետք է ենթադրել, թե պարսկական լծից ազատագրվելուց հետո

[1] С. Зелинский, Город Эривань (Сборник мат. для опис. местн. и племен Кавказа», вып. 1, էջ 23).

[2] Նույն տեղը։

Երևանի այգեգործությունն իր ծավալով ու արտադրանքով նախկին ժամանակներից ետ է մնացել։ Ընդհակառակը, խանության կազմված վայրը, որը խանական շրջանում գրեթե ամբողջովին ամայի էր, ներգաղթողների շնորհիվ վեր է ածվում բնակեցված քաղաքամասի և կանաչ տարածության՝ այգիների ու բանջարանոցների։ Բացի դրանից, 1837 թ. Երևանին է միացվում Նորքն իր ընդարձակ դաշտերով և ընտիր այգիներով։ Ահա՛ դրանց շնորհիվ էլ Երևանի այգեգործությունը բավականաչափ ծավալվում է։ Սակայն կային և այնպիսի վայրեր, որոնք խանական շրջանում այգիներ էին, իսկ հետո ամայացել էին ոռոգման երկրորդական մի քանի առուների խափանման հետևանքով[1]։

1851 թվականի տվյալներով Երևանի այգեգործների թիվը հասել է 700-ի[2], իսկ 1829/32 թթ. վիմագրալ ցուցակագրման ժամանակ դրանց թիվը 671 էր[3]։ Սակայն սխալ մտածում կլիներ, եթե այգեգործությամբ զբաղվողներ համարեինք միայն այդ մի քանի հարյուր մարդկանց, որովհետև դրանցից բացի այգեգործությամբ զբաղվում էին նաև արհեստավորները, առևտրականները և ծառայողները։ «Երևանի բնակիչները,— գրում է Ս. Զելինսկին,— գլխավորապես զբաղվում են այգեգործությամբ և բանջարաբուծությամբ, բայց առևտուրն ու արհեստը ևս նրանց խորթ չեն։ Ընդհանրապես, Երևան քաղաքում աշխատանքի լիակատար բաժանում չի նկատվում, հաճախ միևնույն անձնավորությունը զբաղվում է և՛ այգեգործությամբ, և՛ արհեստագործությամբ, և՛, անգամ, ծառայությամբ. տեր-տալ տարանների առևտրականը, ծառայող աստիճանավորը, արհեստավորը և ուրիշներ միաժամանակ այգետերեր են կամ կալվածքների վարձակալներ, որոնք մշակում են կամ իրենք իրենց միջոցներով, կամ թե ամեն տարի կապալով տալիս են ուրիշներին»[4]։

Այգիները Երևանում սովորաբար բաժանվել են երեք տեսակի՝ խաղողի այգիների, մրգատու այգիների և պուրակների։ Չկար խաղողի այնպիսի այգի, որի մի անկյունը կամ մասը զբաղեցված չի-

[1] «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, էջ 210։

[2] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 450).

[3] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 843—844։

[4] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 23—24)։

ներ մրգատու ծառերով, սակայն կային և «մաքուր մրգատու այգիներ»։ Մրգատու այգիներ կային գրեթե բոլոր բակերում և կազմում էին վերջիններիս անբաժանելի մասը։ 50-ական թվականների սկզբներին Երևանի բոլոր այգիների թիվը հասել է մոտ 1500-ի, որի մոտավորապես կեսը կազմել են խաղողի այգիները, իսկ մյուս կեսը՝ մրգատու[1]։

Երևանի քաղաքային ռատիկանապետի տվյալներով, 1865 թ. քաղաքի բոլոր այգիների (թե՛ խաղողի, թե՛ մրգատու և թե՛ խառը տեսակի) ամբողջ տարածությունը եղել է 2500 դեսյատին[2]։ Սակայն Երևանում խաղողի և մրգատու այգիների զբաղած տարածությունները միշտ իրար հավասար չեն եղել։ Հետևապես, 2500 դեսյատինից մոտ 1200/1250 դեսյատինը կազմել են խաղողի այգիները, իսկ մնացածը՝ մրգատուները։ Դրանից մոտ 10 տարի անց՝ 1874/75 թթ. տվյալներով, Երևանի միայն խաղողի այգիները, որոնց թիվը հասել է 700-ի, բոլորը միասին ունեցել են մոտ 1200 դեսյատին տարածություն[3]։ Գրեթե նույքան էին զբաղեցնում տարածությունները նաև 90-ական թվականներին[4]։

Մի ոչ մեծ քաղաքի համար 1200 դեսյատին խաղողի այգիները բավական պետք է համարել։ Պետք է նկատի ունենալ, որ, օրինակ, 1874/76 թթ. Երևանի ամբողջ գավառի խաղողի այգիների տարածությունը (ներառյալ և Երևան քաղաքի այգիները) հասնում էր ընդամենը 2890 դեսյատինի[5]։ Հետևապես, խաղողագործական գավառի խաղողի այգիների մոտ 41,4%-ը բաժին էր ընկնում միայն Երևան քաղաքին։

Նախորդ շրջանի համեմատությամբ, քաղաքում խաղողի այգիների տեղաբաշխման մեջ զգալի փոփոխություններ չէին կատարվել։ Դրանք հիմնականում տարածված էին Դալմայում, Նորագեղում, Շահարում, Քյոշակլիում, Դարաբաղում և Սալվարդում[6]։ Այգիների մեջ և՛ իր օրինակելիությամբ, և՛ խաղողի ու

[1] «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, էջ 210։

[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 26։

[3] «Сборник сведений о Кавказе», т. III, Тифлис, 1875, էջ 262։

[4] Տե՛ս Агроном И. З. Андроников, Очерк виноградарства и виноделия в Эриванской губернии («Сборник по виноградарству и виноделию на Кавказе», вып. VI, Эриванская губерния. Тифлис, 1896, էջ 28)։

[5] «Сборник сведений о Кавказе», т. III, էջ 346։

[6] Նույն տեղը, էջ 260—261։

մրգերի տեսակներով, և՛ ոռոգման պայմաններով ամենաառաջնակարգը մնում էր պետական Դալմայի այգին, որը բաժանված էր 16 տարբեր մասերի և իրենից ներկայացնում էր խաղողի, մրգատու ծառատեսակների և դեկորատիվ ծառերի մի համադրություն, մի բարդ այգի[1]։

Նախորդ շրջանի համեմատությամբ՝ նորությունն այն էր, որ Նորքի միացմամբ նրա այգիները ևս կազմեցին քաղաքի այգիների մի առանձին խումբ։

Խաղողի այգիների մշակման ձևերի մեջ նույնպես էական փոփոխություններ չէին կատարվել։ Առաջվա նման, այգեգործական բոլոր աշխատանքները կատարվում էին ձեռքով՝ հնադարյան բահի ու բրիչի օգնությամբ։ Սովորաբար յուրաքանչյուրը ինքն էր մշակում իր այգին, իսկ բերքը հավաքում էին գրեթե ամբողջ ընտանիքով։ Խաղողի բերքահավաքը, մանավանդ նրա սկիզբը, տոնական տրամադրություն էր ստեղծում բոլորի մեջ։

Խաղողի ավելի մեծ այգիները, որոնք պատկանում էին հարուստ ընտանիքներին, վանքերին և այլոց, մշակելու համար՝ բնիկ հայերից ու ադրբեջանցիներից վարձում էին մշտական այգեպաններ։ Վերջիններիս վարձատրության չափը կախված էր այգու մեծությունից և բերքի քանակից։ Երևանի նահանգի տարբեր մասերում այգեպանի վարձատրությունը տարբեր չափերի էր։ Ագրոնոմ Ի. Զ. Անդրոնիկովի վկայությամբ, Երևան քաղաքում այգեպանը որպես վարձատրություն սովորաբար ստանում էր խաղողի բերքի $^1/_6$ կամ $^1/_5$ մասը, նույնքան էլ ստանում էր մրգատու այգիների բերքից, որոնք գտնվում էին ավյալ խաղողի այգում[2]։ Բացի դրանցից, այգեպանը ստանում էր այգուց վերցվող փայտի $^1/_3$ մասը, ինչպես և այգու որևէ անկյունում իր սեփական կարիքների համար մշակելու փոքրիկ բանջարանոց[3]։ Այդ բոլորի դիմաց, այգեպանը պարտավոր էր կատարել այգու բոլոր աշխատանքները՝ սկսած խաղողի որթերը բացելուց ու էտելուց, մինչև պահակությունն ու խաղողի համար կողովներ պատրաստելը։

[1] Դալմայի գրաված տարածության, մրգատու ծառատեսակների և դրանց քվի, խաղողի այգու տարածության և որթերի քվի, դեկորատիվ ծառերի դասավորության և դրանց քվի, այգու մշակման ձևերի և այլ հարցերի մասին մանրամասն տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 667, թ. 58—64։

[2] И. З. Андроников, Очерк виноградарства и виноделия в Эриванской губернии («Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе», вып. VI, էջ 68)։

[3] Նույն տեղը։

Ի. Զ. Անդրոնիկովի հաշիվներով՝ այգեպանը կատարում էր 13 տեսակի հիմնական աշխատանքներ[1]։

Ջնայած՝ այգիների մշակման բնագավառում շարունակվում էին հին ձևերն ու մեթոդները, սակայն 50-ական թվականներից արդեն որոշ ձեռնարկումներ են կատարվում այգիները բարելավելու և դրանց համապատասխան տնկիներ տրամադրելու ուղղությամբ։ Այդ տեսակետից շոշափելի արդյունքներ է տալիս Անդրկովկասի մի քանի քաղաքներում (Շամախում, Ելիզավետապոլում, Դերբենդում, Քութաիսում, Օզուրգետում), որոնց թվում և Երևանում տնկարանների ստեղծումը։ Վերջիններիս վրա պետությունը տաս տարվա ընթացքում (1846—1855 թթ.) ծախսում է մոտ 52 հազար ռուբլի։ Երևանի տնկարանը տնկիներ և խաղողի մատներ էր մատակարարում և՛ քաղաքին, և՛ ամբողջ նահանգին։ 1852 թվականից պետությունը հրաժարվում է տնկարանին առանձին միջոցներ տրամադրելուց և կարգադրում է դրա պահպանման ամբողջ ծախսերը հոգալ քաղաքի եկամուտների հաշվին։ Ըստ երևույթին, տնկարանը, այնուամենայնիվ, այգեգործության բնագավառում չի կարողանում մեծ փոփոխություններ մտցնել։ Ս. Զելինսկին, խոսելով 70-ական թվականի վերջերի Երևանի այգեգործության մասին, նշում է, որ նրա մշակումը պրիմիտիվ է, նոր ծառատեսակներ չեն ներմուծվում, և որ Երևանի այգեգործությունը մեծապես կշտհեր ու կվերափոխվեր արմատապես. «Եթե այստեղ (Երևանում — Ի. Հ.) կազմակերպվեր օրինակելի այգի՝ ոչ միայն տեղական, այլև բերովի բույսերի օրինակելի, ռացիոնալ մշակությամբ, ապա, առանց տարակուսանքի, մի քանի տարուց հետո այստեղի այգեգործությունը կրնդուներ միանգամայն այլ բնույթ»[2],— գրում է նա։

Խաղողի և մրգատու այգիները մեծապես տուժում էին զանազան հիվանդություններից, որոնց դեմ շատ քիչ քիչ գործնական նշանակություն ունեցող միջոցառումներ չէին կիրառվում։ Առանձնապես տարածված հիվանդություններ էին՝ խաղողի այգիներում շուտ կոչված (սև ցավ) հիվանդությունը[3], իսկ մրգատու այգինե-

[1] И. З. Андроников, Очерк виноградарства и виноделия в Эриванской губернии («Сборник сведений по виноградарству и виноделию на Кавказе», вып. VI, էջ 68—69)։

[2] С. Зелинский, Город Эривань («Сборник мат. для опис. мест. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 24).

[3] «Сборник сведений о Кавказе», т. III, էջ 262, С. Зелинский, Город Эривань («Сборник мат. для опис. мест. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 27).

րում՝ բրթուրը, որը հատկապես մեծ վնասներ էր տալիս խնձորենիներին ու սալորենիներին[1]։

Հիվանդությունները, ջրի պակասը, որը հաճախ լինում էր հեղեղների հետևանքով առուների խափանումից, կարկուտը, ցրտահարությունները, որ Երևանի պայմաններում սովորական երևույթ էին գարնան ու աշնան ամիսներին, խաղողի, դեղձի և մասամբ մյուս մրգերի բերքատվությունը իջեցնում էին մեծ չափերով, իսկ երբեմն էլ պատճառ դառնում բավական երկար ժամանակով՝ այգու շարքից դուրս գալու։ Այդ պատահում էր մանավանդ տևական ցրտահարության ժամանակ։

Մշակում էին մի քանի տասնյակի հասնող խաղողատեսակներ՝ խարջի, ասկյարի, քիշմիշի, եզանդարա, հաշարաշ և այլն[2]։

Խաղողի այգիների բերքատվություն ուներ մեծ տատանումներ՝ կախված տարվա օդերևութաբանական և այլ պայմաններից, ինչպես նաև ավյալ այգու տեղից, խաղողի տեսակներից և մի շարք ուրիշ պայմաններից։ Մեր ձեռքի տակ եղած աղբյուրների համաձայն, Երևան քաղաքում 70-ական թվականներին խաղողի բերքը մոտավորապես կազմել է մեկ դեսյատինից՝ 300—350 փութ[3]։ Դա դգալի չափով ավելի բարձր բերք էր, քան պարսկական տիրապետության շրջանի միջին բերքատվությունը։ Միջին բերքատվությունը դեսյատինից՝ համարելով 325 փութ և խաղողի բերքատու այգիների տարածությունն էլ մոտավորապես ընդունելով 1200 դեսյատին, 70-ական թվականների Երևանի խաղողի այգիների յուրաքանչյուր տարվա միջին բերքը՝ շատ մոտավոր կերպով հաշված, կլինի 390 000 փութ։ Ստացված խաղողի մոտ $^3/_4$-ը օգտագործվում էր գինի պատրաստելու, իսկ $^1/_4$-ը՝ թարմ վիճակում վաճառելու և զանազան ուտելիքներ ստանալու համար[4]։

[1] «Сборник сведений о Кавказе», т. III, էջ 262, С. Зелинский, Город Эривань («Сборник мат. для опис. мест. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 27).

[2] «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, էջ 210, С. Зелинский, Город Эривань («Сборник мат. для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 25).

[3] Տե՛ս С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 25)։ Իսկ «Сборник сведений о Кавказе»-ի (т. III էջ 262 և 264) համաձայն նույն թվականներին Երևանի խաղողի այգիների մեկ դեսյատինից բերքը տարեկան ստացվել է 360—450 փութ, որը չափազանցված է և ոչ արժանահավատ։

[4] «Сборник сведений о Кавказе», т. III, էջ 262։

Սկզբնաղբյուրները հաղորդում են, որ մեկ դեսյատին խաղողի այգի մշակելու համար 70-ական թվականներին տարեկան ծախսվում էր 80—100 ռուբլի[1]։ Այգիներում օրավարձով աշխատողներին օրական տրվում էր մի քանի տասնյակ կոպեկ վարձ[2], բայց նրանք պարտավոր էին աշխատել 15—16 ժամ։

Քաղաքում մեծ քանակությամբ խաղողի առկայության պայմաններում, երբ դրա հետ միասին տրանսպորտային և այլ հնարավորություններ չկային՝ այն ավելի հեռավոր շուկաներ տանելու, շուկայում նրա գինը համեմատաբար ցածր էր։ Ս. Զելինսկու վկայությամբ, 70-ական թվականներին Երևանում ընտիր խաղողի փութը վաճառվում էր 70 կոպեկից մինչև 1 ռուբլու սահմաններում, իսկ այն խաղողը, որը օգտագործվում էր գինի պատրաստելու համար, փութը վաճառվում էր 30—45 կոպեկով, մի դեպքում, երբ մեկ դասարկ շիշն արժեր 12—25 կոպեկ[3]։

Եթե խաղողի միջին գինը հաշվենք փութը 61 կոպեկ և վերը նշված թվերի հիման վրա կատարենք համապատասխան հաշվումներ, ապա կտեսնենք, որ մեկ դեսյատին խաղողի այգին երեվանում, 70-ական թվականներին, միջին թվով տարեկան տվել է մոտ 200 ռուբլու բերք, որից հանելով նրա մշակման գինը՝ 80—100 ռուբլի, մաքուր եկամուտ կմնա միայն 100—120 ռուբլի, իսկ ամբողջ այգիների մաքուր եկամուտը՝ 120 000—144 000 ռուբլի։ Դարձյալ չմոռանանք, որ այդ բոլոր թվերը միայն մոտավոր են։

Ինչպես ասվեց, խաղողի մեծագույն մասը օգտագործվում էր գինի, ինչպես և օղի ու քացախ պատրաստելու համար։ 50-ական թվականների սկզբներին Երևանում տարեկան պատրաստում էին մոտավորապես 1000 կարաս գինի (մեկ կարասը հավասար էր 20 բաթմանի կամ 10 փթի, իսկ ոմանք էլ մեկ կարասը 26 բաթմանի կամ 13 փթի են հավասարեցնում), 500 կարաս օղի և մինչև 60 կարաս քացախ[4]։

70-ական թվականների վերաբերյալ տվյալներից երևում է, որ այդ ժամանակներում և՛ գինու, և՛ օղու արտադրությունը բավական ընդարձակվել էր[5]։ Այդ թվականներին Երևանում արտա-

[1] «Сборник сведений о Кавказе», т. III, էջ 262 և 345։
[2] Նույն տեղը, էջ 262։
[3] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для описания местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 25)։
[4] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 446)։
[5] «Сборник сведений о Кавказе», т. III, էջ 264 և 345։

դրված գինու քանակի մասին չափազանցրած թվեր են հաղորդված «Сборник сведений о Кавказе»-ի III հատորում (էջ 264)։ Ըստ այդմ՝ Երևանի բոլոր այգիներից 1870 թ. մոտավորապես ստացվել է 1 000 000 դույլ շիրա, 1781 թ.՝ 800 000 դույլ, 1872 թ.՝ 650 000, իսկ 1873 թ.՝ 400 000 դույլ։ Դրանցից ոչ մեկը արժանահավատ լինել չի կարող, ինչպես եզրակացվում է նաև նշված աղբյուրում[1]։

Գինու և օղու պատրաստման եղանակների մեջ փոփոխությունները զգալի չէին։ Նախկինի նման այժմ ևս խաղողը տրորում էին ոտքերով, իսկ մյուս աշխատանքները՝ բացառապես ձեռքով։ Գինու և օղու գործարանային մշակումը սկսվեց ուշ, 80-ական թվականներից։ Մեզ հետաքրքրող շրջանում գրեթե բոլոր այգիներն ունեին իրենց մառանները, որոնց կառուցման արժեքը տատանվում էր 100-ից մինչև 1000 ռուբլու սահմաններում։ Պատահում էին դեպքեր, երբ մառանները վարձով տրվում էին այլ մարդկանց[2]։

Երևանի այգեհարերի մեծագույն մասը գինին սովորաբար չի պահել մի քանի տարի։ Միայն հարուստներից ոմանք (Մելիք-Ադամալովները, Խուդաբաշևները և ուրիշներ) իրենց մառաններում պահում էին մի քանի տարվա գինիներ[3]։ Պատրաստված գինու մի մասը սպառում էին հենց իրենք՝ այգեհարերը, իսկ մյուս մասը վաճառքի էր հանվում կամ Երևանի և կամ նոր Բայազետի, Դիլիջանի, Ալեքսանդրապոլի, Թիֆլիսի և այլ վայրերի ու քաղաքների շուկաներում[4]։ Երևանի գինին տարբեր տեղերում վաճառվում էր տարբեր գներով։ Երևանի շուկայում մեկ դույլ գինին վաճառվում էր՝ 1870 թվականին 1 ռ. 50 կոպեկով, 1871 թ.՝ 1 ռ. 60 կոպեկով, 1872 թ.՝ 1 ռ. 50 կ., իսկ 1873 թ.՝ 1 ռ. 40 կոպեկով[5]։

Նախկինի նման այս շրջանում ևս Երևանի գինու բացառական կողմը մնում էին նրա գույնի անմաքրությունն ու ավելորդ համերը, որոնք արդյունք էին ոչ թե մշակողների վարպետության պակասի, քանի որ Երևանի այգեգործները միաժամանակ և լավ գինեգործներ էին, այլ մառանների խոնավության, կարասների ու

[1] «Сборник сведений о Кавказе», т. III, էջ 264։
[2] Նույն տեղը, էջ 263։
[3] Նույն տեղը։
[4] Նույն տեղը, էջ 264
[5] Նույն տեղը։

այլ գիննատար ամանների անմաքրության և մի քանի ուրիշ անհարմար պայմանների[1]։

Այգեգործության մյուս ճյուղը՝ մրգատու այգեգործությունը ևս երևանի տնտեսության կյանքում գրավում էր կարևոր տեղ։ Իրենց տարածությամբ մրգատու այգիները միասին վերցրած՝ խաղողի այգիներին հավասար կամ նույնիսկ դրանցից ավելի մեծ տեղ էին գրավում։ Բերքատվությունն էլ դրանք ուներ այն չափերը, ինչ որ խաղողի այգիները։ Նախկին ժամանակների նման երևանում տարածված էին՝ ծիրանին, խնձորենին, տանձենին, սերկևիլին, ամենատարբեր տեսակի սալորենիներ, բալենին, կեռասենին, ընկուզենին, դեղձենին, փշատենին և այլն, և այլն[2]։ Դրանցից յուրաքանչյուրն ուներ իր մի շարք տարատեսակները, որոնք իրարից տարբերվում էին պտղի համով, գույնով, մեծությամբ, դիմացկունությամբ, մսալիությամբ և ուրիշ հատկանիշներով։ Ս. Զելինսկու վկայությամբ, միայն դեղձ երևանում ուներ 50 տարատեսակներ[3]։ Երևանի ամենահայտնի մրգերն էին՝ դեղձը, ծիրանը, խնձորը, տանձը, սալորները և այլն։

Այգեգործությունը կատարելագործելու և մրգատու այգիները նոր ծառատեսակներով հարստացնելու նպատակով՝ Կովկասի փոխարքայի միջամտությամբ 40-ական թվականների վերջերին ամեն տարի Ղրիմից ստանում էին լավորակ տարբեր ծառատեսակների պատրաստներ, որոնք լրացնում և բարելավում էին տեղական այգիների կազմը[4]։

Եթե իրենց գրաված տարածությամբ և բերքի բացարձակ քանակով պտղատու այգիները ոչ միայն չէին զիջում, այլ նույնիսկ որոշ չափով գերազանցում էին խաղողի այգիներին, ապա նույնը չի կարելի ասել եկամտաբերության մասին։ Մրգատու այգեգործությունը խաղողագործության համեմատ շատ ավելի քիչ եկամուտներ էր տալիս։ Մրգատու այգիների առանձնահատուկ կողմը կայանում էր նրանում, որ դրանք խաղողի այգիների նման յայնատարած այգիներ չէին, այլ համեմատաբար փոքր էին, բայց ավելի բազմաթիվ։ Դրանք գտնվում էին և՛ տների բակերում, և՛ խաղողի այգիների տարբեր անկյուններում ու շարքերում։

Երևանի գյուղատնտեսական ճյուղերի մեջ իր բացարձակ եկամուտով երկրորդ տեղում գտնվում էր հացահատիկային տնտեսությունը, որը առանձնապես ընդարձակ տարածություն էր գրավում նախկին Զոլմաքշի գյուղի տերիտորիայում։ Հացահատիկների ցանքսերով զբաղված հողերը 60-ական թվականներին գրավում էին մոտավորապես մինչև 300 դեսյատին տարածություն[1], իսկ դրանց քաղաքին տված հասույթը նույն թվականին ավելի մեծ է եղել, քան բանջարաբուծության ու խոտացանքսերի տված հասույթները՝ միասին վերցրած[2]։

Երկրագործական գործիքները մնացել էին նախկինը։ Երևանում վարելու համար օգտագործում էին գութանը, իսկ կալսելու համար՝ կամը[3], որոնք առանց էական փոփոխություն կրելու, եկան էլ գալիս էին շատ հին ժամանակներից։ Յուրաքանչյուր դեսյատին հող վարելու և ցանելու համար պահանջվում էր մինչև 3 ռ. 50 կ.—4 ռուբլի, հշված մաճկալներին և մյուս բանվորներին տրվող սնունդը, որը հոգում էր ինքը հողատերը[4]։ Արհեստական ոռոգման պատճառով բերքը համեմատաբար կայուն էր։ Սովորաբար, ցանած սերմի և ստացված բերքի հարաբերությունը լինում էր 1:7, 1:7,5 կամ 1:8[5]։ Մեծ մասամբ ցանել են աշնանացան ցորեն և փոքր քանակությամբ էլ՝ գարի։

1865 թ. Երևանում ընդամենը ցանվել է 320 չետվերտ (1 չետվերտը հավասար էր 209,91 լիտրի) աշնանացան ցորեն (գարնանացան ցորեն և գարի չի ցանվել), որի դիմաց հավաքվել է 2400 չետվերտ բերք[6], 1886 թ. ցանվել է՝ աշնանացան ցորեն 520 չետվերտ, իսկ գարի՝ 20 չետվերտ, որոնց դիմաց հավաքվել է 4680 չետվերտ ցորենի բերք, իսկ գարու բերք 300 չետվերտ[7]։

[1] «Сборник сведений о Кавказе», т. III, С. Зелинский, Город Эривань («Сборник мат. для опис. местностей и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 25).

[2] Նույն տեղը, էջ 26։

[3] С. Зелинский, Город Эривань («Сборник мат. для опис. местностей и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 26).

[4] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отдел III, էջ 446).

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 26։

[2] Նույն տեղը։

[3] Н. Спасский, Сельскохозяйственно-статистические сведения об Эриванской губернии за 1870 год («Сборник сведений о Кавказе», т. II, Тифлис, 1872, էջ 170—171).

[4] Նույն տեղը, էջ 190։

[5] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 26 և 34, Н. Спасский, Сельскохозяйственно-статистические сведения об Эриванской губернии за 1870 год («Сборник сведений о Кавказе», т. II, էջ 172)։

[6] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 34։

[7] «Обзор Эриванской губернии за 1886 год», таблица № 1.

Երևանի ցորենը քանակությամբ քիչ էր, բայց ընտիր էր և դրանից պատրաստում էին լավագույն լավաշ։

Բանջարաբուծությունը, որը հնուց ի վեր կազմում էր Երևանի գյուղատնտեսական ամենակարևոր ճյուղերից մեկը, Երևանը պարսկական լծից ազատագրվելուց հետո որոշ ժամանակ ոչ միայն չի առաջադիմում, այլև իր արտադրանքի քանակով նախկինից բավական ետ է մնում։ Դա մասամբ բացատրվում է քաղաքի ոռոգման ցանցի ժամանակավոր անկանոն վիճակով, որ հետևանք էր պատերազմի, և մասամբ էլ նրանով, որ բանջարա-բոստանային մշակույթների ապառողները պակասել էին։ Այժմ չկային Երևանի խանը, նրա հարեմը, պալատական բազմաթիվ ծառայողներ, բարձրաստիճան շատ պարսիկներ, պարսկական մարդաշատ կայազորը, որոնք բոլորն էլ բանջարեղենի սիրահարներ էին և այն ապառում էին մեծ քանակությամբ։

Սակայն ոռոգման ցանցի կանոնավորմամբ և առևտրի ու արհեստագործության զարգացմամբ բարձրանում է նաև բանջարաբուծությունը։ Պաշտոնական տվյալներով, 1865 թվականին Երևանի բանջարանոցների ու բոստանների ընդհանուր տարածությունը հասնում էր 30 դեսյատինի, իսկ քաղաքին տված հասույթը՝ 1400 ռուբլու[1]։ Նա այդ ժամանակներում իր արտադրանքով քաղաքի գյուղատնտեսական ճյուղերի մեջ զբավում էր երրորդ տեղը՝ առաջին և երկրորդ տեղերը զիջելով այգեգործությանն ու հացահատիկային տնտեսությանը։

«Բանջարաբուծությունը (Երևան քաղաքում — Ք. Հ.),— գրում է Ս. Զելինսկին,— ևս բնիկների կյանքում խաղում է կարևոր տեղ։ Ոչ հայերը, ոչ թաթարները (ադրբեջանցիները — Ք. Հ.) չեն կարող ապրել առանց բանջարանոցային կանաչու, առանց սեխի, ձմերուկի և այլն։ Հայերը գրեթե երբեք չեն նստում նույնիսկ նախաճաշի՝ առանց բանջարեղենների... Կանաչիների նկատմամբ հայերի սերը թաթարների մոտ տեղիք է տվել մի առածի. «Վարդի արժեքը ծիծեռնակը գիտե, իսկ կանաչու արժեքը՝ հայը»... Բանջարանոցային բույսերը Երևանի բնակիչների համար անհրաժեշտություն են կազմում, դրանցից վերջիններս պատրաստում են զանազան ուտելիքներ և դրանք օգտագործում որպես համեմունք»[2]։

Բանջարա-բոստանային մշակույթների մեջ շարունակում էր

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 26։

[2] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 28)։

կարևոր դեր խաղալ սեխն իր չորս հիմնական տեսակներով՝ շաքար, դոստիջան, ջարջար և դուբմա, որոնցից վերջինիս, որին կարելի է համարել սեխերի թագուհի, մշակման համար պահանջվում էր մեծ հմտություն և առանձնահատուկ խնամք։ Ս. Զելինսկին բավական մանրամասնությամբ նկարագրում է դուբմայի մշակման եղանակը և մեծ գովեստով խոսում նրա որակի մասին[1]։ Երևանում մշակվող ձմերուկը հիմնականում երկու տարատեսակ ուներ՝ ձմեռային՝ ավելի հաստ կեղևով, և ամառայինը։ Դրանք երկուսն էլ բավական խոշոր տեսակի են եղել։ Բանջարա-բոստանային մյուս մշակույթներն էին՝ կաղամբը, լոբին, բակլան, որը 70-ական թվականներից աստիճանաբար դուրս է եկել մշակությունից[2], բադրիջանը, գետնախնձորը, զանազան կանաչիներ և այլն, և այլն։

Բանջարա-բոստանային մշակույթների կազմը և՛ Երևանի նահանգում, և՛ նրա կենտրոն Երևան քաղաքում՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո բավական փոփոխության է ենթարկվում։ Ս. Զելինսկին վկայում է, որ 70-ական թվականների սկզբներին Երևանում սկսում են մշակել և նրա շուկայում արդեն երևում են ծաղկավոր և կարմիր կաղամբը[3]։ Այստեղ բանջարա-բոստանային մշակույթների մեջ նորություն էր նաև կարտոֆիլը։ Դա Արևելյան Հայաստան էր բերվել ռուս մալականների միջոցով 40—50-ական թվականներին, սակայն Ս. Զելինսկին նշում է, որ այն նույնիսկ 70-ական թվականների վերջին դեռևս Երևան քաղաքում ու Երևանի նահանգում շատ քիչ էր տարածված[4]։ Դա միանգամայն հասկանալի է. Երևանի հողա-կլիմայական պայմանները կարտոֆիլի համար նպաստավոր չեն համարվում, այստեղ կարտոֆիլից մեծ բերք չէր կարելի սպասել և այդ պատճառով էլ նրա մշակույթը քաղաքում շատ դանդաղ էր արմատավորվում։

Երևանում վայրի վիճակում՝ բանջարանոցներում և առվույտի դաշտերում աճել են նաև ներկաբույսեր, որոնցից մեկ-երկուսը ունեցել են գործնական նշանակություն[5]։

Ներկաբույսերից բացի՝ Երևանի շուկայում վաճառվել են մոտ

[1] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 28—30).

[2] Նույն տեղը, էջ 31։

[3] Նույն տեղը, էջ 30—31։

[4] Նույն տեղը, էջ 31։

[5] Նույն տեղը։

20 տեսակի վայրի վիճակում աճող այլ բույսեր, որոնք օգտագործվել են սննդի մեջ (բոխի, դանդուռ, փիփերտ, սիբեխ, քրքընջուկ, ծնեփակ և այլն), կամ իբրև դեղորայք (ճարճատուկ, լվածաղիկ և այլն)[1]։

Բանջարանոցներն ու բոստանները տարածված էին քաղաքով և նրա արվարձաններով մեկ։ Մեծ կամ փոքր բանջարանոցներ կային խաղողի և մրգատու ծառերի բոլոր այգիներում, տների բակերում։ Նախկին Սավղի-երի խանական հայտնի բանջարանոցի մի մասը բաժան-բաժան էր եղել բազմաթիվ ավելի մանր բանջարանոցների, որոնք պատկանում էին տարբեր մարդկանց, իսկ մյուս մասը վեր էր ածվել հացահատիկային ու առվույտի ցանքատարածության։

Իր արտադրանքով և նշանակությամբ Երևանի գյուղատնտեսական հաջորդ ճյուղը եղել է անասնապահությունը, որի համար կերային բազա են ծառայել այգիների ազատ տարածությունները դրավող խոտհարքները, բանջարեղենի մնացորդները և, հատկապես, առվույտի ցանքսերը։

1865 թ. տվյալներով, Երևանի առվույտի ցանքսերը դրավել են 10 դեսյատին տարածություն[2], սակայն, բացի այդ, մանր հողակտորներով առվույտի ցանքսեր կային նաև տների բակերում և փոքր այգիներում, որոնք հավանաբար չեն մտել հաշվառման մեջ։ 70-ական թվականների առվույտի ցանքատարածության մասին պաշտոնական տվյալներ չկան։ Պետք է ենթադրել, որ այդ տարիներին առվույտի ցանքսերը չեն ընդարձակվել, որովհետև քաղաքի անասունների գլխաքանակը ոչ միայն չէր ավելացել, այլ ընդհակառակը՝ նվազել էր։

Նախկին ժամանակների նման 1828—1879 թթ. ևս Երևանի անասունների մեջ իրենց գլխաքանակով առաջին տեղը գրավում էին բեռնակիր ու քաշող, իսկ երկրորդը՝ կաթնատու անասունները։ Ընդ որում, 70-ական թվականներին այդ տարբերությունն ավելի մեծ էր, քան 50—60-ական թվականներին։

Անդրկովկասի անասնապահության բարելավման համար բավական մեծ նշանակություն է ունենում անդրկովկասյան մասշտաբով առաջին անգամ 1869 թ. կազմակերպված՝ ընտանի կենդանիների և դրանց մթերքների ցուցահանդեսը, որի դոյությունը տրադիցիոն կարգով շարունակվեց նաև հետագայում։ Այդ ցուցահան-

[1] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для описи, местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 31—32)։

[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 26։

դեսին իր էքսպոնատներով մասնակցել էր նաև Երևանի նահանգն ու նրա կենտրոն Երևան քաղաքը։

50—60—70-ական թվականների Երևանի անասունների գլխաքանակի մասին գաղափար կազմելու համար, եղած աղբյուրների հիման վրա կարելի է ընթերցողին առաջադրել հետևյալ պարզ աղյուսակը.

Աղյուսակ 22

№ կ/կ	Անասունի տեսակը	Անասունների գլխաքանակը		
		1851 թ.[1]	1865 թ.[2]	1879—80 թթ.[3]
1	Ուղտեր	45	110	85
2	Գովեր	340		
3	Հորթեր	150		
4	Ոչխարներ և այծեր	300	105	
5	Ձիեր	800	324	400
6	Ջորիներ	59	1415	200
7	Էշեր	465		350
8	Գոմեշներ	5		
9	Եզներ և ցուլեր	10		
10	Խոշոր եղջերավոր անասուններ[4]		262	
11	Խոզեր		52	
12	Գովեր, եզներ և գոմեշներ			250
	Ընդամենը	2174	2268	1285

Անասունները, բացառությամբ հեծնելու համար պահվող մի քանի տասնյակի հասնող արաբական ու Ղարաբաղի տեսակի ձիերի, բոլորը տեղական տեսակներից էին։ Երևանի բուն թաղամասերում թռչնապահությամբ դրեթե ոչ ոք չէր զբաղվում։ Քաղաքացիներն իրենց անհրաժեշտ հավկիթն ու հավը գնում էին շուկայից։ Թռչնապահությամբ մեծ մասամբ զբաղվում էին միայն Նորք թաղամասի բնակիչները, որոնք պահում էին նաև հնդկահավեր[5]։

[1] Տե՛ս К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 447)։

[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 47։

[3] Տե՛ս С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для описи. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 33)։

[4] Անասնատեսակների խմբերը թվարկված են բուն սկզբնաղբյուրների, որոնց մեջ դրանք տրված են տարբեր խմբավորմամբ։

[5] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для описи. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 32—33)։

Քաղաքի տնտեսական կյանքում շերամապահությունը նշանակալի դեր չի խաղացել։ Կ. Օռլովսկին խոսելով Երևանի տնտեսության վերաբերյալ, գրում է, թե «Երևան քաղաքի բնակիչները շերամապահությամբ... չեն զբաղվում»[1], չնայած մի այլ տեղում հենց ինքը նշում է իբր՝ քաղաքում 18 հոգի զբաղվում են շերամապահությամբ[2]։ Պետք է ենթադրել, որ միևնույն հեղինակի միևնույն հոդվածում եղած իրարամերժ այդ երկու հիշատակությունը արդյունք էր նրան, որ Երևանի շերամապահությունն իր արտադրանքով շատ աննշան էր, ուստի կարելի էր և ասել՝ այստեղ շերամապահություն չկա, և միաժամանակ նշել, որ, համենայն դեպս, այսքան մարդ զբաղվում է շերամապահությամբ։

Շերամապահության համեմատությամբ, քաղաքի տնտեսական կյանքում մեղվաբուծությունը ավելի կարևոր դեր էր խաղում։ Ըստ եղած աղբյուրների, 50-ական թվականների սկզբին Երևանում եղել է մոտ 1000 փեթակ, որոնք ամռան ամիսներին բարձրացվել են լեռնային հով ու ծաղկաշատ շրջանները[3], որովհետև այդ եղանակին Երևանի շոգը, փոշին ու քամին սպանիչ էին մեղուների համար։ Երևանի մեղրն ունեցել է գովելի որակ և վաճառքի է դուրս բերվել քաղաքի շուկայում[4]։

Զկնորսությունը իբրև տնտեսական ճյուղ գոյություն չուներ։ Դրանով Զանգվում կոմունակի կերպով զբաղվում էին մի քանի մարդիկ, որոնք չէին կարողանում նույնիսկ վաստակել իրենց օրվա հացը։ Կային նաև ձկնորսություն սիրողներ։ Վերջիններիս համար դա ծառայում էր իբրև ժամանակ անցկացնելու և հանգստի միջոց։

4. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Հայերի ներգաղթը Թուրքմենչայի և Ադրիանապոլսի պայմանագրերով։ Քաղաքի բնակչության թիվը։ Բնակչության տեղաբաշխումն ըստ հաղամամասերի։ Բնակչության կազմն ըստ սեռի, ազգությունների և հաղամի բնտանիքների թիվը։ Բնակչության ասք։ Հասարակության դասակարգային կազմը և դասակարգային հարաբերությունները։ Հարկերն ու պարհակները։ Երևանի բնակչության ազատագրական պայքարը։

[1] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 446)։

[2] Նույն տեղը, էջ 450։

[3] Նույն տեղը, էջ 446։

[4] Նույն տեղը։

Ավելի քան մեկ հիսնամյակ տևած այս շրջանում Երևանի բնակչության ազգային կազմը կրել է հսկայական փոփոխություն։ Դա հետևանք էր, մի կողմից, Արևմտյան Հայաստանից ու Պարսկաստանից հայերի՝ պարբերաբար Արևելյան Հայաստան գաղթելուն, իսկ, մյուս կողմից, Հայաստանում ռուսական ազանդավորներ բնակեցնելուն։ Դրանք երկուսն էլ իրենց ազդեցությունն էին թողնում Երևանի բնակչության ազգային կազմի վրա, որովհետև Արևելյան Հայաստան եկող հայերն ու ռուս աղանդավորները բնակություն էին հաստատում նաև նրա կենտրոն Երևանում։ Քաղաքի բնակչության ազգային կազմը փոփոխության էր ենթարկվել նաև վարչական ու ռազմական ապարատի փոփոխմամբ։ Երևանը պարսկական լծից ազատագրելուց հետո դուրս վտարված նախկին խանական բյուրոկրատիայի և պարսկական կայազորի փոխարեն քաղաքում հաստատվում են ռուսական տասիճանավորներն ու կայազորը։ Բացի դրանից, խանական իշխանության վերացումից հետո, ինչպես նշվել է, բարձրաստիճան շատ պարսիկներ՝ վաճառականներ, ագնվականներ և այլն թողել էին Երևանը և իրենց ընտանիքներով տեղափոխվել Պարսկաստան։

Երևան քաղաքի հայ բնակչության ավելացման համար առանձնահատուկ նշանակություն է ունեցել Թուրքմենչայի պայմանագիրը։ Այդ պայմանագրով, որը ամբողջովին նախապատրաստվել էր Գրիբոյեդովի ջանքերով, ադատ կերպով Հարավային Ադրբեջանի հայերին թույլատրվում է տեղափոխվել և բնակություն հաստատել Արևելյան Հայաստանում՝ գլխավորապես նորատեղծ Հայկական մարզում։ Պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն, ներգաղթ կատարողներին տրված էր մեկ տարի ժամանակ, որի ընթացքում նրանք իրենց ընտանիքներով ու շարժական ամբողջ գույքով, անարգել կերպով, առանց մաքս կամ այլ կարգի որևէ հարկ վճարելու, կարող էին տեղափոխվել Ռուսաստանին միացված հայկական շրջանները[1]։ Ինչ վերաբերում է նրանց անշարժ գույքին, առանց որի՝ ներգաղթողները նյութապես կարող էին ողորմելի դրության մեջ ընկնել, ապա պայմանագրի նույն հոդվածով ներգաղթողներին իրավունք էր վերապահված հինգ տարվա ընթացքում այն անօրինել իրենց հայեցողությամբ[2] վաճառել, ժառանգել, փոխանակել և այլն։

[1] Տե՛ս Договоры России с Востоком политические и торговые, էջ 221—222։

[2] Նույն տեղը, էջ 222։

Ներգաղթի կազմակերպումը այնուամենայնիվ մեծ դժվարությունների հետ էր կապված: Ներգաղթողները աղքատ էին, զուրկ նյութական նվազագույն միջոցներից, չկային տրանսպորտային համապատասխան միջոցներ, պարսկական կառավարությունը ներգաղթը արգելակելու համար հարուցում էր զանազան արգելքներ[1], որպեսզի չզրկվի իր բազմահազար հարկատուներից: Մեծ դժվարություններ կային նաև ներգաղթողներին Արևելյան Հայաստանի շրջաններում տեղավորելու, նրանց հող տրամադրելու, նյութապես օգնելու, բնակարանային հարցը լուծելու և այլ հարցերում: Ցարական կառավարությունն ու Անդրկովկասի նրա բարձրաստիճան պաշտոնյաները ամենևին էլ մտադիր չէին ներգաղթողներին նյութական մեծ միջոցներ տալու: Բայց և այնպես, ներգաղթողներին տրամադրվեցին որոշ միջոցներ և արտոնություններ, որոնցից նրանք պետք է օգտվեին նոր բնակավայրերում հաստատվելուց հետո: Ներգաղթի կազմակերպման ամենաջերմ պաշտպանը և այդ գործում ամենամեծ ծառայություն մատուցողը համարվում է Ա. Ս. Գրիբոյեդովը[2]: Այդ գործում ընդգրկվել են Հայկական մարզի ժամանակավոր կառավարչությունը, հատկապես նրա անդամներից մեկը՝ Ներսես Աշտարակեցին, գնդապետ Լազարևը, որը Պասկևիչի տված ցուցումներով[3] իր մի շարք օգնականների հետ կազմակերպում և Հարավային Ադրբեջանից խումբ առ խումբ Արևելյան Հայաստան էր ուղարկում հազարավոր հայերի: Վերջիններս՝ թողնելով իրենց տուն ու տեղը, հայրենի գյուղը, մեծ ուրախությամբ բռնում են գաղթի ուղին: Նրանք Արևելյան Հայաստան գաղթելու համար ցանկություն էին հայտնել և դիմել ռուսական զորահրամանատարներին տակավին մինչև պատերազմի ավարտումը՝ Հարավային Ադրբեջանը ռուսական զորքերի կողմից գրավելուց անմիջապես հետո[4]:

Հարավային Ադրբեջանից Արևելյան Հայաստան կատարվող հայերի ներգաղթը սկսվում է Թուրքմենչայի պայմանագրի կնքումից անմիջապես հետո: 1828 և 1829 թթ. ընթացքում Պարսկաստանից ներգաղթ են կատարում և Անդրկովկասի հայաբնակ շրջաններում հաստատվում 40—45 հազար հայեր[1]: Դրանք բոլորը կազմում էին 8249 ընտանիք[2], որոնցից 700—800 ընտանիքը բնակվեց Երևան, Նախիջևան և Օրդուբադ քաղաքներում, իսկ մնացածը՝ Հայկական մարզի շրջաններում՝ Գառնիբասարում, Գարաքիշաղում (Ծաղկաձոր), Նախիջևանի շրջանում, Դարալագյազում (Հայոց ձոր), Կարբիբասարում, Զանգիբասարում, Ապարանում, Սուրմալուում և այլն[3]:

1829/32 թթ. կատարված կամերալ ցուցակագրման ժամանակ պարզվում է, որ Պարսկաստանից ներգաղթած 8249 ընտանիքից մնացել է 6946 ընտանիք (պակասել էր 1303 ընտանիք), իսկ բնակիչների թիվը 45 հազարից իջել էր մոտ 35 հազարի (ավելի ճիշտ՝ 35 560)[4]: Նրանք, նույն ցուցակագրման համաձայն, Հայկական մարզի բազաքներում ու մահալներում բաշխված էին հետևյալ կերպ.

Աղյուսակ 23

№ կ/կ	Այն վայրերը, որտեղ հաստատվել էին Պարսկաստանից ներգաղթողները	Ներգաղթած ընտանիքների թիվը	Ներգաղթած բնակիչների թիվը
1	Երևանում	366	1715
2	Նախկին Երևանի խանության 10 մահալներում	4193	21853
3	Նախիջևանում	265	1110
4	Նախկին Նախիջևանի խանության 4 մահալներում	1872	9542
5	Օրդուբադում	36	182
6	Օրդուբադի շրջանում	214	1158
	Ընդամենը	6946	35560[5]

[1] ЦГВИА, ф. ВУА, д. 978, лл. 12—16 и 22—26, տե՛ս նաև՝ Ա. Ի. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա., էջ 330—333:

[2] Տե՛ս Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, էջ 102—103: И. Ениколопов, Грибоедов и Восток, էջ 128—145:

[3] ЦГВИА, ф. ВУА, д. 978, лл. 3—9.

[4] Նույն տեղը, թ. 1—2:

[1] Տե՛ս С. Глинка, Описание переселения армян аддербаджанских в пределы России, Москва, 1831, АКАК, т. VII, էջ 845—851, Ա. Ի. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա., էջ 333—336:

[2] АКАК, т. VII, էջ III: Ա. Ի. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա., էջ 333:

[3] Ա. Ի. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա., էջ 333:

[4] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 540, Ա. Ի. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա., էջ 333:

[5] Ա. Ի. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայք XIX դարում, մաս Ա., էջ 337:

Ազգուսակի մեջ մտածներից բացի, ներգաղթողների մի փոքր մասը՝ ընդամենը մի քանի հարյուր ընտանիքներ, բնակություն հաստատեցին Դարաբաղի կոմսերում, իսկ մի քանիսն էլ ցրվեցին այլ և այլ քաղաքներում[1]: Նրանցից ոմանք նույնիսկ հասան Թիֆլիս և այնտեղ էլ մշտական բնակություն հաստատեցին:

Ռուսական բյուրոկրատիայի ու կալվածքների վտարման և պարտկական ազնվականությանը պատկանող մարդկանց ու պարսիկ խոշոր վաճառականների փախուստով՝ Երևանում պարսկական տարբը գրեթե դադարում է գոյություն ունենալուց, կամ, համենայն դեպս, այնքան աննշան է դառնում, որ տոկոս չի կազմում: Դրա փոխարեն Պարսկաստանից կատարված ներգաղթի շնորհիվ քաղաքում հայերի թիվը մեծանում է ավելի քան 1700-ով:

Ավելի մեծ մասշտաբների ներգաղթ կազմակերպվեց Արևմտյան Հայաստանից՝ ռուս-թուրքական 1828—1829 թթ. պատերազմից հետո: Երկու պետությունների միջև 1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում կնքված պայմանագրի 13-րդ հոդվածով յուրաքանչյուր մարդու թույլատրվում էր իր կամքով 18 ամսվա ընթացքում վաճառելու ունեցվածքը և բնակություն հաստատելու ցանկացած երկու պետություններից որևէ մեկի տերիտորիայում[2]: Այդ հիման վրա էրզրումի, Կարսի և Բայազետի փաշայություններից, Արդահանի, Մուշի, Վանի և այլ շրջաններից բազմահազար հայեր և որոշ թվով հույներ՝ սուլթանական Թուրքիայի ծանր լծից ազատվելու և ֆիզիկապես փրկվելու համար՝ ցանկություն են հայտնում գաղթել Արևելյան Հայաստան, որը արդեն միացված էր Ռուսաստանին: Պասկևիչի միջնորդությամբ, ցարական կառավարությունից իրավունք է ստացվում ստեղծելու հատուկ հանձնաժողով և ներգաղթ կատարելու Արևմտյան Հայաստանից: 1829 թ. աշնանը սկսվում է ներգաղթը: Վրաստանի կառավարչապետի նախագահությամբ գործող ներգաղթը կազմակերպող հանձնաժողովին ցուցում էր տրված եկվորներին բնակության տեղ տալ, հաշվի առնելով նրանց նախկին բնակեցրած շրջանների բնա-կլիմայական պայմանները, այսինքն՝ դաշտային շրջաններից եկածներին խմբերով բնակեցնել դաշտային մասերում[3], լեռնային շրջաններից եկածներին՝ լեռնային մասերում այնպես, ինչպես վարվել էին Հարավային Ադրբեջանից ներգաղթածների նկատմամբ:

Արևմտյան Հայաստանից ներգաղթողների թիվը հասնում էր ավելի քան 90 000-ի: Նրանք բնակություն հաստատեցին Լոռում, Շիրակում, Ախալցխայում և նրա շրջակայքում, Ախալքալաքում և նրա շրջակայքում, Ծալկայում, Արագածի լանջերին, Սևանա լճի ավազանում, Դարաչիչագում, Սուրմալուում և այլուր[1]: Արևմտյան Հայաստանից ներգաղթել էին ընդամենը 14 հազար բնտանիք, որոնց մի փոքր մասը հունական էր[2]: 1829/32 թթ. կամերալ ցուցակագրման տվյալներով, Արևմտյան Հայաստանից եկած գաղթականները Հայկական մարզում եղել են 21 666 (դրանցից իգական սեռին պատկանում էին 10 249 հոգի, իսկ արական սեռին՝ 11 417 հոգի), որոնք կազմել են 3682 բնտանիք[3]: Արևմտյան Հայաստանից եկած գաղթականներից Երևանում շատ քիչ են բնակվում: Նշված կամերալ ցուցակագրման ժամանակ Երևանում նրանցից ընդամենը եղել են 48 հոգի, որոնք կազմել են 11 բնտանիք[4]:

Երվանդ Շահազիզը, օգտվելով համապատասխան սկզբնաղբյուրների և աշխատությունների, հատկապես՝ Ի. Շոպենի և Հովհ. Շահխաթունյանցի մեր կողմից բազմիցս վկայակոչված աշխատություններում հաղորդված տվյալներից, կազմել է Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից 1828—1830 թթ. Երևան ներգաղթած և այնտեղ հաստատված հայերի և նրանց ընտանիքների թվին վերաբերող մի պարզ աղյուսակ, որը անհրաժեշտ ենք համարում մեջ բերել որոշ փոփոխություններով, ճշտումներով և լրացումներով (տե՛ս 520 էջը):

Կամերալ ցուցակագրման տվյալներով, Երևանի ամբողջ բնակչությունը 1829/32 թթ. եղել է 11 463 հոգի, որից հիմնական բնակչությունը կազմել է 9700 հոգի, իսկ ներգաղթողները՝ 1763 հոգի:

Երևանի բնակչության ընդհանուր թիվն իմանալու համար 1828—1879 թթ. անցակցված բոլոր ցուցակագրումներն ու ստուգումները՝ ներառյալ և 1829/32 թթ. կամերալ ցուցակագրումը իրենց մեջ ընդգրկել են քաղաքի և՛ հիմնական, և՛ եկվոր բնակչու-

[1] Ա. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մաս II., էջ 337:

[2] Договоры России с Востоком политические и торговые, էջ 79:

[3] Ա. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մաս II., էջ 331—336:

[1] Ա. Երիցյանց, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մաս II., էջ 442:

[2] АКАК, т. VII, էջ III:

[3] Տե՛ս И. Шопенъ, Исторический памятник Армянской области, էջ 539—540:

[4] Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 234:

Գառնիգառանից և Աբեմյան Հայաստանից 1828—30 թթ. Երևան գաղթած բնակիչներ և նրանց բաշխումը քառ հազարի բաղամասերի

Բաղամասեր	Ներգաղթողներ											
	Գառնիգառանից ներգաղթածներ				Աբեմյան Հայաստանից ներգաղթածներ				Ընդամենը			
	ընտանիքների քիվը	բնակիչների քիվը			ընտանիքների քիվը	բնակիչների քիվը			ընտանիքների քիվը	բնակիչների քիվը		
		ար.	իգ.	ընդամենը		ար.	իգ.	ընդամենը		ար.	իգ.	ընդամենը
Շահար բաղամասում	231	598	513	1111	8	14	16	30	239	612	529	1141
Կոնդ բաղամասում	87	187	187	374	3	11	7	18	90	198	194	392
Դամիրբուլաղում	48	118	112	230	—	—	—	—	48	118	112	230
	366	903	812	1715	11	25	23	48	377	928	835	1763

թյունը։ Ուստի հարկ չկա այսուհետև դրանք անջատել իրարից և ներկայացնել առանձին ցուցակներով։

Ռուսական առաջին աշխարհագիրը (կամերալ ցուցակագրումը) Անդրկովկասում անցկացվում է 1827—1834 թթ. ընթացքում։

Երևանի մի հայկական բնատնիք (Երևանի պատմության թանգարան)։

1835 թ. սկզբներին աշխարհագրի արդյունքների մասին լսում են մի շարք զեկուցումներ և ապա դրանք հրատարակվում են «Обозрение Российских владений за Кавказом» վերնագիրը կրող քառահատոր աշխատության մեջ (1836 թ.)։

Հայկական մարզում 1829 թ. ապրիլից մինչև 1832 թ. մայիս ամբողջ անցկացված աշխարհագիրը կազմում էր Անդրկովկասի նշված աշխարհագրի բազկացուցիչ մասը։ Հայկական մարզի 1829 32 թթ. աշխարհագիրը զեկավարել է Ի. Շոպենը՝ մարզի ֆինանսական մասի կառավարիչը։

Երևանի մանկահասակ աղբրեջանուհիներ (Երևանի պատմության թանգարան)։

Պատերազմի պատճառած ավերածությունների և ամբողջ մարզով մեկ մոլեգնող համաճարակ հիվանդությունների պատճառով՝ աշխարհագիրը տևել է շատ երկար և ունեցել է մեծ ընդմիջումներ։ Ուստի նրա արդյունքները բավական հեռու են իրական դրությունից։ Աշխարհագրի արդյունքները ամփոփված են Շոպենի «Исторический памятник Армянской области» աշխատության մեջ, որը ժամանակին արժանացել է մրցանակի։

Ինչպես ճիշտ կերպով նկատում է Ջ. Կորկոտյանը, հայտնի

չէ, թե ովքեր աշխարհագրի ժամանակ որ տարում և որ ամսում են կատարվել Երևանի բնակչության[1] և նրա տնտեսական կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող ցուցակագրումները: Ուստի, եթե նա պայմանական կերպով Երևանին վերաբերող աշխարհագրի տվյալները վերագրում է 1830 թվականին[2], ապա մենք դրանք ուղղակի համարում ենք 1829/32 թթ. համար իբրև միջին ցուցանիշներ այդ տարեթվերից յուրաքանչյուրի համար:

Հետագայում, պետության մյուս մասերի հետ միասին, կամ իբրև առանձին աշխարհագրեր, Անդրկովկասի փոխարքայությունում կամ միայն Երևանի նահանգում ու Երևան քաղաքում կատարվել են մի շարք այլ առուգումներ: Երևանի նահանգում և Երևան քաղաքում այդպիսի աշխարհագրեր են կատարվել 1850, 1859, 1863, 1873 թթ. և այլն: Սակայն, ինչպես 1829/32 թվերի, այնպես էլ դրան հաջորդած մյուս աշխարհագրերը ունեցել են շատ թերություններ ու անճշտություններ. դրանց արդյունքները կարելի է ընդունել ոչ թե որպես ճշգրիտ, այլ տոկ որպես կոմնորոշող թվեր: Այդ թերություններն ու անճշտություններն ունեին ոչ միայն Անդրկովկասի ու Հայաստանի, այլև ամբողջ կայսրության մեջ կատարված աշխարհագրերը և նույնիսկ 1897 թվականի համառուսական առաջին մարդահամարը, որի արդյունքները ընդհանրապես մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության եղած նույնատիպ հաշվառումների համեմատությամբ համարվում են բոլորից ճիշտն ու իրականությանը մոտը:

Երևանի բնակչության թիվը մեզ հետաքրքրող ավելի քան կեսդարյա այդ ժամանակաշրջանում, ինչպես ասվեց, գրեթե մնացել է նույնը: Բայց և այնպես նրա բնակչության թիվը խիստ ատատիկ վիճակ չի ունեցել, նա ժամանակի ընթացքում ենթարկվել է որոշ փոփոխության: Մեր ձեռքի տակ են գտնվում քաղաքի բնակչության ընդհանուր թվի վերաբերյալ բազմաթիվ տվյալներ, որոնք հաղորդված են տարբեր ժամանակներում և տարբեր աղբյուրների կողմից: Այդ աղբյուրների հիման վրա կարելի է առաջադրել 1829/32—1880 թթ. Երևանի բնակչության ընդհանուր քանակի փոփոխման վերաբերյալ հետևյալ աղյուսակը:

[1] Զ. Կորկոտյան, Երևան քաղաքի ժողովրդագրությունը, էջ 19:
[2] Նույն տեղը:

Երևանի բնակչության թիվը տարբեր ժամանակներում

Ժանրագրություն	1829/32 թթ.	1837 թ.[1]	1851 թ.[2]	1852 թ.[3]	1859 թ.[4]	1863 թ.[5]	1865 թ.[6]	1873 թ.[7]	1880 թ.[8]
1886 թվականին Երևանի բնակչության թվի հաշվառման համար կազմված «Կարճ ցուցակ» (տե՛ս «Кавказский календарь на 1887 год», отд. V, էջ 56—57, իսկ 1897 թ.՝ 39 023:	11 463	11 467	12 603	12 850	12 267	12 515	14 070	12 505	12 449

Ինչպես տեսնում ենք, մեզ հետաքրքրող շրջանում՝ 1829/32 թվականներից մինչև 1851 թվականը Երևանի բնակչությունը ավելացել էր ընդամենը 1140 հոգով, այն էլ գլխավորապես նորքի (Զոլմաքլի) միացման շնորհիվ, իսկ դրանից հետո՝ 1851—1880 թթ. ընթացքում նրա թիվը գրեթե մնացել է նույնը, այն է՝ 12 հազար և մի քանի հարյուրի սահմաններում: Այդ թվից դուրս են շեղում են տալիս միայն 1865 թվականի տվյալները, որոնք վերցված են Երևանի նահանգական վիճակագրական կոմիտեից: Ըստ որում 1865 թ. Երևանի բնակչությունը կազմել է 14 070 հոգի:

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 31, թ. 9:
[2] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 439 և 441):
[3] Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, Эриванская губерния, էջ 186:
[4] Ըստ 1859 թ. կամերալ ցուցակագրման (տե՛ս՝ «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 62):
[5] Ըստ Երևան քաղաքի ոստիկանապետի հաշվառության (տե՛ս՝ ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 33):
[6] Ըստ նահանգական վիճակագրական կոմիտեի տվյալների (տե՛ս՝ «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отдел I, гл. III, էջ 5 և 7):
[7] Ըստ 1873 թ. կամերալ ցուցակագրման (տե՛ս՝ «Сборник сведений о Кавказе», т. VI կամ «Кавказский календарь на 1884 год», отдел III, էջ 280):
[8] С. Зелинский, Город Эривань («Сборник мат. для опис. мести. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 40—41), «Кавказский календарь на 1885 год», отдел III, էջ 218:

Առաջին հայացքից թվում է, թե դա միայն վրիպակ կարող է լինել, որովհետև դրանից երկու տարի առաջ տրված քաղաքային ստատիկանության զեկուցագրի համաձայն նրա բնակչության թիվը 12 515 էր, իսկ 8 տարի հետո (1873 թ.) կատարված աշխարհագրի տվյալներով՝ 12 505։ Սակայն այդ թիվը (14070) կրկնված է մի քանի տեղ և մեր պրպտումները ցույց տվեցին, որ նա վրիպակ չէ։

Մեր կարծիքով, քաղաքի բնակչության համեմատաբար այդպիսի մեծ թիվ ստացվել էր այն պատճառով, որ նրա մեջ հաշվված էր նաև Երևանի կայազորի անձնակազմը, որը մյուս աշխարհագրերի ու հաշվառումների ժամանակ սովորաբար քաղաքի բնակչության մեջ չէր դասվել։ Մեր այդ ենթադրության հավանականությունը երևում է հենց նրանից, որ նույն աղբյուրի մեջ Երևանի բնակչության ընդհանուր թիվը 14 070 հոգի համարվելու հետ միասին նշվում է, որ այնտեղ հայերի թիվը հասնում էր 5770 հոգու, ադրբեջանցիներինը՝ 6900, որոնք երկուսը միասին կազմում են ընդամենը 12 670 հոգի, մինչդեռ հայտնի է, որ Երևանի բնակչության ավելի քան 97—98%-ը կազմում էին հայերն ու ադրբեջանցիները։ Ռուսներն ու վրացիները, միասին վերցրած, Երևանում նույնիսկ 80-ական թվականի սկզբներին չէին հասնում 200 հոգու[1]։ Եթե այս վերջին թիվը ավելացնենք 12 670-ի վրա, կստանանք՝ 12 870։ Երևանում այլ ազգությունների պատկանողներ չկային, ավելի ճիշտ՝ նրանք այնքան չնչին էին, որ հաճախ առանձին չէին նշվում։ Բայց հիշատակված ընդհանուր թվի (14 070) և բուն ազգային կազմի ստացված թվի (մոտավորապես 12 870) միջև դարձյալ մնում է 1200 հոգու տարբերություն, որոնց ազգային պատկանելությունը բաց է մնում։ Հետևապես, շատ հավանական է, որ այդ 1200 հոգին եղել են կայազորի կազմը և Երևան եկած ժամանակավոր այն բնակիչները, որոնց ներկայությունը քաղաքում զուգադիպել է աշխարհագրին կամ սովորական հաշվառմանը։ Իսկ զինվորականներն ու ժամանակավոր բնակիչները Երևանում կազմել են մեծ թիվ։ Այսպես, օրինակ՝ 1865 թ. տվյալներով, Երևան քաղաքում գտնվող զորքի թիվը հասել է 1147, իսկ արտասահմանից Երևան եկած ժամանակավոր բնակիչների թիվը՝ 350 հոգու (սրանք բացառապես պարսիկներ էին), ընդամենը մոտ 1500 հոգի[2], որոնք սովորական

[1] Տե՛ս С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. мест. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 40—41)։

[2] Տե՛ս ՀՍՌՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 40։

աշխարհագրերների ժամանակ չեն մտել քաղաքի բնակչության կազմի մեջ։ 60-ական թվականներին քաղաքի հիմնական բնակչության թիվը ևս կարող էր ավելանալ արհեստագործության և մասամբ առևտրի զարգացման շնորհիվ։ Մենք տեսանք, որ 1829/32 թթ. համեմատությամբ 1865 թվականին Երևանի արհեստավորների թիվը մոտավորապես կրկնապատկվել էր։ Սակայն տվյալները ցույց են տալիս, որ այդ ավելացումը կատարվում էր ոչ թե քաղաքի բնակչության մեխանիկական (չհաշված ժամանակավոր բնակիչներին) կամ բացարձակ աճի հաշվին, որը Երևանում այնքան չնչին էր, այլ առկա հղած բնակչության, որն ավելի ու ավելի է դառնում արհեստավորական ու առևտրական։

Թվերի այդպիսի աղաղակող տարբերության պատճառը դարձյալ հաշվառման սկզբունքների ու ձևրմանների տարբերությունն էր, որը տեղ էր գտնում ոչ միայն տնտեսական ցուցանիշների հաշվառման, այլև բնակչության աշխարհագրերն անցկացնելիս։ Որպեսզի մեր ասածները տարակուսանքի տեղիք չտան, բերենք նաև մի այլ օրինակ, որն ավելի ցցուն է։ Հայտնի է, որ 1873 թվականին Երևանի նահանգում և նրա կենտրոն Երևան քաղաքում նահանգական վիճակագրական վարչության կողմից անց է կացվել ընդհանուր աշխարհագիր։ Ըստ այդ աշխարհագրի, Երևանի բնակչության թիվը եղել է 12 505[1], որը և մեր կողմից օգտագործվել է վերը զետեղված № 25 աղյուսակը կազմելիս։ Սակայն մի այլ աղբյուրի համաձայն, այդ թվականին Երևանը ունեցել է ոչ թե 12 505 բնակիչ, այլ՝ 15 040[2]։ Անկասկած այստեղ դարձյալ մենք գործ ունենք միանգամայն տարբեր սկզբունքներով և մեթոդներով կատարված հաշվառումների հետ։ Բայց դրանցից պաշտոնական աշխարհագիրը գերադասելի է, որովհետև այն կատարվել է որոշակի պլանով, մինչդեռ մյուս տվյալները կարող էին տրված լինել միայն առանձին պաշտոնական մարդկանց զեկուցագրերի կամ այլ՝ ավելի քիչ արժանահավատ աղբյուրների հիման վրա։

Երևանի բնակչության թիվը սկսում է աճել միայն 80-ական թվականներից, իսկ 90-ական թվականներին այդ աճը արտահայտվում է էլ ավելի մեծ թվերով։ 80—90-ական թվականների աճն արդեն կապված էր կապիտալիզմի զարգացման և գյուղի քայքայման հետ։

[1] Տե՛ս «Сборник сведений о Кавказе», т. VI, կամ «Кавказский календарь на 1884 год», отдел III, էջ 280։

[2] «Кавказский календарь на 1874 год», отд. II, էջ 172։

Մինչև 60-ական թվականները՝ Հայկական մարզում, ապա Երևանի նահանգում իր բնակչության թվով՝ քաղաքների մեջ առաջին տեղը դրավում էր նրա կենտրոն Երևանը: Սակայն 30-ական թվականների վերջերին բերդ դարձած Ալեքսանդրապոլը 50-ական թվականների վերջերից՝ առևտրի ու արհեստագործության զարգացման շնորհիվ, համեմատաբար արագ կերպով առաջադիմում է և ինչպես բուն քաղաքային անհատների թվով, այնպես էլ բնակչության թվով 60-ական թվականներին նահանգում գրավում առաջին՝ Երևանը մղելով երկրորդ տեղը: 1865 թ. տվյալներով Երևանի նահանգի 5 քաղաքների բնակիչների թվերը հետևյալ պատկերն էին կազմում[1]:

Աղյուսակ 26

№ կ/կ	Քաղաքի անունը	Բնակչության թիվը՝		
		արական	իգական	բնդամենը
1	Երևան	8249	5821	14070
2	Ալեքսանդրապոլ	8920	7894	16814
3	Նախիջևան	3253	2713	5966
4	Օրդուբադ	2405	1955	4360
5	Նոր Բայազետ	2313	2205	4518
	Ընդամենը	25140	20·588	45·728

Քաղաքային բնակչությունն ընդհանուր առմամբ Երևանի նահանգում շատ փոքր տոկոս էր կազմում: Օրինակ՝ 1865 թվականին վերաբերող տվյալներով Երևանի նահանգն ունեցել է բնդամենը 437 719 բնակիչ[2], որոնցից քաղաքային բնակչությունը եղել է ընդամենը միայն 45 728 հոգի, այսինքն՝ նահանգի ամբողջ բնակչության 10%-ից մի փոքր ավելին: Ընդ որում, ինչպես ասվեց, այդ թվականի հաշվառման ժամանակ քաղաքային բնակչության մեջ են դասվել նաև քաղաքներում եղած կայազորների կազմը: 1871 թվականի տվյալներով, Երևանի նահանգն ունեցել է 452 001 բնակիչ, որից քաղաքայինը 53 299[4], կամ մոտ 12%-ը: Ընդամենը 5—6 տարվա ընթացքում և՛ նահանգի ամբողջ բնակ-

[1] Կազմված է բուա «Сборник статистических сведений о Кавказе»-ի տվյալների (т. I, отдел I, гл. III, էջ 7):

[2] Քաղաքների բնակչության մեջ է դասված նաև դրանց կայազորների անձնակազմը:

[3] Տե՛ս «Сборник статистических сведений о Кавказе», т. I, отдел I, гл. II, էջ 5:

[4] Տե՛ս «Кавказский календарь на 1874 год», отдел II, էջ 66:

չությունը, և՛ նրա քաղաքների բնակչությունը զգալի չափով ավելացել են, սակայն քաղաքային բնակչությունը, այնուամենայնիվ, շարունակում էր շատ փոքր տոկոս կազմել:

Տեղին է հիշել, որ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց հետո նրա բնակչությունն ընդհանրապես մեծ չափերով ավելացել է շնորհիվ պարբերաբար եղած ներգաղթների և այլ պայմանների: Դրանց հետևանքով 1835 թվից մինչև 1871 թվականը բնակչության թաուրյունը մեծացել է ավելի քան երկու և կես անգամ: Այսպես, եթե 1835 թվականին Հայկական մարզի մեկ քառակուսի վերստին լինում էր ընդամենը 7 մարդ[1], ապա նույն տերիտորիայում եղած Երևանի նահանգում 1871 թ. մեկ քառակուսի վերստի վրա միջին թվով ապրում էր 18,8 մարդ[2]:

Երևանի բնակչության ավելացման դանդաղ տեմպերն ավելի են ցցուն դառնում, երբ այն համեմատում ենք Անդրկովկասի երկու կարևորագույն քաղաքների՝ Թիֆլիսի և Բաքվի բնակչության աճի հետ: Այսպես, եթե Երևանը 1865 թ. ուներ 14 070, 1886 թվականին՝ 17 738, 1897 թ. մարդահամարով՝ 29 023 բնակիչ, ապա Թիֆլիսի բնակչության թիվը 1875 թ. 67 770 էր, 1897 թ.՝ 160 645, իսկ Բաքվի բնակչությունը՝ 1865 թ. 14 715, 1897 թ.՝ 112 252 հոգի:

Եթե իր բնակչության թվով Երևանը 1830-ական թվականներին Անդրկովկասում գրավում էր 3-րդ տեղը, առաջին և երկրորդ տեղերը զիջելով Թիֆլիսին ու Նուխուն, ապա 80-ական թվականների սկզբներին նա էր մղվել 8-րդ տեղը: Առաջին 7 տեղերում 1882 թ. տվյալներով, ըստ իրենց բնակչության թվի՝ գտնվում էին հետևյալ քաղաքները. Թիֆլիսը (89 551 բնակիչ), Շուշին (24 552 բնակիչ), Նուխին (20 917), Ալեքսանդրապոլը (19 976), Ելիզավետապոլը (18 505), Բաքուն (15 105) և Քութաիսը (12 741 բնակիչ)[3]:

Երևանի բնակչության ավելացման թույլ տեմպերը արդյունք էին նրանում կապիտալիստական զարգացման անհամեմատ դանդաղ ընթացքին: Այն քաղաքներում, որտեղ կապիտալիզմը զարգացել էր արագ ու ավելի մեծ մասշտաբներով (Բաքու, Թիֆլիս), այնտեղ բնակչությունն էլ ավելացել էր արագ տեմպերով:

Բնակչության թիվն ու ազգային կազմն ըստ քաղաքի առան-

[1] Ор. Евецкий, Статистическое описание Закавказского края, էջ 27:

[2] Տե՛ս «Кавказский календарь на 1874 год», отдел II, էջ 66:

[3] Տե՛ս նույն տեղը, на 1883 год, отдел I, էջ 251—253:

Հին մասերի տրված են միայն 30-ական թվականների աղբյուրներում, հետագա ժամանակին վերաբերող նյութերն ու աղբյուրները բավականացել են ամբողջ քաղաքի բնակչության թվի ու նրանց ազգային, դասակարգային կազմի մասին նշելով։ Քաղաքի թաղամասերի մեջ ամենից բազմամարդը Շահարն էր, որին միացավ նաև Նոր թաղը, որն առաջացել էր նախկին Համբարդի տեղում՝ Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Պարսկաստանից եկած գաղթականների բնակեցմամբ։ Երկրորդ տեղը իր բնակիչների թվով գրավում էր Կոնդը (Զորագեղի հետ միասին), իսկ երրորդը՝ Դամիրբուլաղը։ Նորքը քաղաքին միանալուց հետո կազմեց նրա չորրորդ թաղամասը և բնակչության թվով էլ մնաց չորրորդը։ Հետագա ամբողջ ժամանակաշրջանում քաղաքի բնակչության թվերի հարաբերակցությունն ըստ թաղամասերի գրեթե մնաց նույնը։ Ուստի հարմար ենք համարում մի շատ պարզ աղյուսակով ներկայացնել Երևանի բնակչության բաշխումն ըստ թաղամասերի՝ 1830-ական թվականների դրությամբ, Նորքը նույնպես համարելով քաղաքի թաղամասերից մեկը։

Աղյուսակ 27

Թաղերը	Բնիկ և նկվոր բնակչություն	Ըստ 1829/32 թթ. կամերալ դուրակագրման[1]		Ըստ Շահխաթունյանցի հաղորդած ավյալների[2]	
		տների թիվը	բնակչության հոգիների թիվը	տների թիվը	բնակչության թիվը
1. Շահար (Նոր թաղի հետ միասին)	Բնիկներ	1046	4197	933	3928
	նկվորներ	239	1141	352	1684
	Ընդամենը	1285	5338	1285	5612
2. Կոնդ (Զորագեղի հետ միասին)	Բնիկներ	917	3908	760	3444
	նկվորներ	90	392	11	40
	Ընդամենը	1007	4300	771	3484
3. Դամիրբուլաղ	Բնիկներ	411	1595	409	1705
	նկվորներ	48	230	50	242
	Ընդամենը	459	1825	459	1947
4. Նորք	Բնիկներ	80	378	84	528
	նկվորներ	16	79	19	105
	Ընդամենը	96	457	103	633
Ընդամենը ամբողջ քաղաքում	Բնիկներ	2454	10078	2186	9605
	նկվորներ	393	1842	432	2071
	Ընդամենը	2847	11920	2618	11676

[1] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 643—646։

[2] Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հին գաւառացն Արարատայ, հ. I, էջ 156։

Երևան քաղաքի բնակչության վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները ավելի լիակատար դարձնելու նպատակով՝ տալիս ենք մի ավելի մանրամասն աղյուսակ, որն իր մեջ բովանդակում է 1829/32 թթ. և 1879/80 թթ., այսինքն՝ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի սահմանային տարեթվերում քաղաքի ունեցած տների ու բնակչության քանակը, նրա բնակչության կազմն ըստ ազգության և ըստ սեռի, իսկ բնակչության բնական աճի, մահացության, դասակարգային ու դասային կազմին վերաբերող տվյալները կարտահայտենք այլ աղյուսակներում։

Աղյուսակ 28

1829/1832 թվականներին

Ընտանիքների թիվը				Բնակչության թիվը							
ռուսական	հայկական	ազգերևթական	վրացական	ռուսներ		հայեր		ազգերևթյանցիներ		վրացիներ	
				արբ.	իգ.	արբ.	իգ.	արբ.	իգ.	արբ.	իգ.
—	944	1807	—	—	—	2148	1984	3749	3582	—	—
2751				—		4132		7331		—	
				11·463							

1879/1880 թվականներին[1]

Ընտանիքների թիվը				Բնակչության թիվը							
ռուսական	հայկական	ազգերևթական	վրացական	ռուսներ		հայեր		ազգերևթյանցիներ		վրացիներ	
				արբ.	իգ.	արբ.	իգ.	արբ.	իգ.	արբ.	իգ.
46	1509	1318	7	79	76	3216	2759	3252	3041	18	8
2880				155		5975		6293		26	
				12·449							

[1] Աղյուսակը կազմված է ըստ Ս. Զելինսկու «Երևան քաղաքը» աշխատության (տե՛ս «Сборник материалов для описания местностей и племен

Բերված աղյուսակից երևում է, որ՝ ա) 50 տարվա ընթացքում քաղաքի բնակչությունն ավելացել է միայն 986 մարդով, այսինքն՝ տարեկան միջին աճը (և՛ մեխանիկականը, և՛ բնականը՝ միասին վերցրած) կազմել է մոտավորապես 0,09%, այնքան չնչին մի աճ, որը նույնիսկ կարելի է նկատի չունենալ: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ Երևանի բնակչության միայն իրական բնական աճը, որին կանդրադառնանք քիչ հետո, այնուամենայնիվ, այդ թվից անհամեմատ մեծ է եղել: Սակայն 50 տարվա ընթացքում քաղաքի բնակչության ընդհանուր թիվը գրեթե նույնն է մնացել, որովհետև արտադրողական ուժերի զարգացման համապատասխան տեմպի և այլ պայմանների բացակայության հետևանքով նրա բնակիչներից շատերը տարբեր ժամանակներում, իրենց հայրենի քաղաքը թողնելով, բնակություն են հաստատել այլ քաղաքներում ու վայրերում: Մեր ձեռքի տակ եղած տվյալների համաձայն, եթե Երևանից արտագաղթեր չլինեին, ապա նշված 50 տարվա ընթացքում միայն բնական աճի շնորհիվ նրա բնակչությունը մոտավորապես պետք է կրկնապատկվեր: Էլ չենք խոսում այն մասին, որ նրա բնակչությունն ունեցել է նաև մեխանիկական աճ: բ) Այդ նույն կեսդարյա ժամանակաշրջանում քաղաքի բնտանիքների թիվն ավելացել էր էլ ավելի փոքր չափերով (ընդամենը 129 բնտանիքով, կամ տարեկան՝ մոտավորապես 2,4 բնտանիքով, որը կազմում է մոտ 0,08%): Թվում է, թե բնակչության թվի դանդաղ ավելացման հակառակ, բնտանիքների թիվը անհամեմատ ավելի արագ պետք է մեծանար, որովհետև 60—70-ական թվականներին բավական մեծ արագությամբ էին քայքայվում քաղաքի նահապետական կյանքի մնացորդները: Սակայն բնտանիքների թվի ավելացման տեմպերը նույնիսկ բնակչության թվի ավելացման տեմպերից ցածր էին: Այդ էլ պետք է բացատրել նրանով, որ 40-ական թվականներից նոր մտցված հարկային սիստեմի հիման վրա, որին կանդրադառնանք հետո, հարկային միավոր ճանաչվեց տունը՝ ծուխը: Հարկային այդպիսի սիստեմի ազդեցության տակ, որի ծանրությունը համեմատաբար մեղմացնելու ձգտումով, այդ ժամանակվանից սկսած քաղաքի բնտանիքները ավելի հաղվադեպ են բաժանվում ու մանատավում նոր բնտանիքների, դրանք մնում են

Кавказа», вып. I, отдел I, էջ 40—41), որի տվյալները ճշտել ենք Ի. Շոպենի ու Հովհ. Շահխաթունյանցի նշված աշխատությունների և 1880 ու 1881 թթ. «Кавказский календарь»-ի նյութերով:

ավելի բազմանդամ: Դրա պատճառով էլ, եթե 1829/32 թթ., երբ նահապետական կյանքի մնացորդներն անհամեմատ ավելի շատ էին պահպանվել, Երևանի մեկ բնտանիքին միջին հաշվով բնակնում էր 4,17 շունչ, ապա 1879/80 թթ., երբ չնայած նահապետական կյանքի մնացորդների մեծագույն մասն արդեն վերացել էր, այնուամենայնիվ, քաղաքի մեկ բնտանիքին միջին հաշվով բնակնում էր 4,32 շունչ, այսինքն՝ ամեն մի բնտանիք միջին հաշվով 0,15 շունչ ավելին ուներ, քան 1829/32 թվականներին: գ) Աղյուսակը ցույց է տալիս, որ 50 տարվա ընթացքում փոխվել է քաղաքի բնակչության ազգային կազմի հարաբերակցությունը: Այդ ժամանակաընթացքում, պարբերաբար կազմակերպվող ներգաղթի շնորհիվ՝ հայ բնակչության թիվը Երևանում ավելանալով՝ 4132-ից (1828/29 թթ.) հասնում է 5975-ի (1879/80 թթ.), այն դեպքում, երբ նույն ժամանակամիջոցում ադրբեջանցիների թիվը 7331 հոգուց իջել է 6293 հոգու (ըստ երևույթին Երևանում եղած փոքրաթիվ պարսիկներն ու թուրքերը ևս վիճակագրական երկիրում հաճախ տրվել են ադրբեջանցիների հետ միասին՝ վերջիններիս անվան տակ): դ) Վերջապես, Երևանը պարսկական լծից ազատագրելուց հետո, երբ նա Արևելյան Հայաստանի հետ միասին մտնում է ռուսական պետության կազմի մեջ, փոխվում է նաև նրա բնակչության ազգային կազմը: Ինչպես ցույց է տրված աղյուսակում, 1879/1880 թթ. եղել են 155 ռուսներ և 26 վրացիներ, չհաշված կայազորի անձնակազմը: Դրանք ռուս պաշտոնավորներ էին (մայականներ) և ռուս ու վրացի վարչական աշխատողներ և հոգևորականներ, որոնք Երևանի նահանգում վարում էին քաղաքացիական և հոգևոր գանազան պաշտոններ: Երևանում ապրել են նաև այլ ազգությունների ներկայացուցիչներ, բայց դրանք աննշան թիվ են կազմել և այդ պատճառով էլ արդվել են մեր թվարկած այս կամ այն ազգության հետ միասին:

Քաղաքի բնակչության բնական աճի մասին կարելի է գաղափար կազմել հետևյալ աղյուսակով, որը վերաբերում է նրա միայն հայ ու ռուս բնակչությանը (ադրբեջանական բնակչության մահացողների և ծնվողների հաշվառումը կատարվում էր անճիշտ, ուստի այդ տվյալների հիման վրա էլ չի կարելի հանդել ճիշտ եզրակացության) և որը կազմում ենք մեր ձեռքի տակ եղած համեմատաբար ավելի ստույգ տվյալների հիման վրա[illegible]

Երևան քաղաքում ծնվածների ու մահացողների թիվը
1865, 1870, 1875 և 1879 թվականներին

1865 թ.[1]				1870 թ.				1875 թ.				1879 թ.[2]			
Ծնվածների թիվը		Մահացածների թիվը		Ծնվածների թիվը		Մահացածների թիվը		Ծնվածների թիվը		Մահացածների թիվը		Ծնվածների թիվը		Մահացածների թիվը	
հայեր	ռուսներ	հայեր	ռուսներ	հայեր	ռուսներ	հայեր	ռուսներ	հայեր	ռուսներ	հայեր	ռուսներ	հայեր	ռուսներ	հայեր	ռուսներ
533	36	286	22	330	14	194	34	294	42	199	25	394	37	218	17
569		308		344		228		336		224		431		235	

Աղյուսակում նշված չորս տարիների ընթացքում քաղաքում ընդամենը ծնվել են հայեր և ռուսներ 1680 հոգի, այսինքն՝ միջին թվով, տարեկան 420 հոգի, իսկ չորս տարվա ընթացքում մահացել են 995 հոգի, կամ տարեկան մոտավորապես 226 հոգի, այսինքն՝ մահացողները կազմել են ծնվածների կեսից ավելին։ Ընդ որում 1870—1879 թթ. ընթացքում մահացողների ավելի քան 50%-ը բաժին է ընկել միայն 1-ից մինչև 10 տարեկան մանուկներին[3]։ Մահացության նույնպիսի բարձր տոկոս ուներ նաև քաղաքի ադրբեջանական բնակչությունը։ Կ. Օռլովսկու հաշիվներով, Երևան քաղաքում սովորական տարիներին, երբ համաճարակներ ու այլ արտակարգ վարակիչ հիվանդություններ չէին լինում, մահացողների թիվը յուրաքանչյուր տարի հասնում էր 800-ի[4]։ Համա-

[1] Կազմված է ըստ ՀՍՍՌ ՊԿՊԱ-ի տվյալների (տե՛ս՝ ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 41—44)։

[2] 1870, 1875 և 1879 թթ. տվյալները վերցված են Ս. Զելինսկու՝ արդեն հիշատակված աշխատությունից։

[3] Տե՛ս С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 18-ի աղյուսակի տվյալները։

[4] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 439)։

ճարակների դեպքում, որոնք այնքան էլ հազվադեպ ու պատահական չէին Երևանի համար, մահացությունը հասնում էր ավելի մեծ չափերի։

Երևանի բնակչության բնական ցածր աճը և նրա մահացության բարձր տոկոսը պայմանավորված էին բնակչության սոցիալ-տնտեսական պայմաններով, հակառակ XIX դարի հեղինակների այն պնդումներին, թե իբր Երևանի բնակչության մահացության մեծ տոկոսը արդյունք է միայն նրա բնա-կլիմայական պայմանների։ Օրինակ՝ Ղ. Ալիշանը Երևանի բնակչության թվի պակաս լինելը ուղղակի փորձում է բացատրել միայն նրա կլիմայական վատ պայմաններով. «Յայս սակս (այսինքն՝ կլիմայական վատ պայմանների պատճառով — Թ. Հ.) սակաւաթիւ են բնակիչք Երեւանայ»,— գրում է նա[1]։

Պատմության համար հույժ կարևոր նշանակություն ունեն բնակչության դասակարգային ու դասային կազմը, նրա շերտերից ու խմբերից յուրաքանչյուրի տեղն ու իրավունքները տվյալ հասարակության մեջ, դրանց միջև եղած նյութական ու իրավական հարաբերությունները, հարկատու դասակարգի սոցիալ-տնտեսական դրությունը, նրա վրին փաթաթվող հարկային սիստեմը, դասակարգային ու ազատագրական շարժումները և այլն, և այլն։ Մեծ հետաքրքրություն կարող են ներկայացնել նաև Երևանի բնակչության ազգագրական սովորությունները։ Աշխատության բնույթը մեզ թույլ չի տալիս ներկայացնելու քաղաքի բնակչության ազգագրական սովորությունները՝ թեկուզ և համառոտակի կերպով։ Սակայն պատմական այս կամ այն հարցի առնչությամբ հարկ է եղել նշել դրանցից շատերը՝ տալով և որոշ բացատրություններ, ինչպես և աշխատության մեջ այլ կարգի նկարների հետ միասին դնտեղել նաև բնակչության կենցաղին ու ազգագրական սովորություններին վերաբերող մի շարք նկարներ։

Բնակչության դասակարգային կազմը և յուրաքանչյուր դասակարգի մեջ մտնող խմբերը՝ ըստ 1837, 1859, 1863, 1865 և 1879/80 թթ. վերաբերող տվյալների, ներկայացնում էին հետևյալ պատկերը.

[1] Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 319։

1837 թ.[1]			1859 թ.[2]			1863 թ.[3]			1865 թ.[4]			1879 80 թթ.[5]		
Բնակչության թիվն ըստ խմբերի			Բնակչության թիվն ըստ խմբերի			Բնակչության թիվն ըստ խմբերի			Բնակչության թիվն ըստ խմբերի			Բնակչության թիվն ըստ խմբերի		
ոչ հարկատուներ		հարկատուներ	ոչ հարկատուներ		հարկատուներ	ոչ հարկատուներ		հարկատուներ	ոչ հարկատուներ		հարկատուներ	ոչ հարկատուներ		հարկատուներ
արհեստական կանայք	հոգևորական կանայք		արհեստական կանայք	հոգևորական կանայք		արհեստական կանայք	հոգևորական կանայք		արհեստական կանայք	հոգևորական կանայք		արհեստական կանայք	հոգևորական կանայք	
322	488	9770	444	206	11617	699	257	11945	610	243	11662	553	216	11564
810		9770	650		11617	956		11945	853		11662	769		11564

Քաղաքի հասարակությունը բաժանված էր երկու խմբի՝ շահագործողների և շահագործվողների: Դրանցից առաջիններն ազատ էին հարկերից, իսկ վերջիններս կազմում էին հարկատու դասը: Նույնությամբ պահպանվել էին նախկին շրջանի և՛ արտոնյալ, և՛ հարկատուների ենթախմբերը:

Հասարակության արտոնյալ, ոչ հարկատու, շահագործող խումբը բաժանված էր երկու ենթախմբի՝ աշխարհիկ և հոգևոր շահագործողների, որոնք իրենց հերթին դասակարգման էին ենթարկված ավելի փոքր խմբերի: Այսպես, աշխարհիկ շահագործողների կամ ազնվականության դասը բաղկացած էր ժառանգական ազնվականներից, անձնական ազնվականներից, խանական ծագում ունեցողներից, բեկերից, մելիքներից և միրզաներից:

1 Կազմված է ըստ ՀՍՍՌ ՊԿՊԱ տվյալների (ֆ. 1, ցուցակ 1, գ. 31, թ. 9):

2 Ըստ 1859 թ. կամերալ ցուցակագրման տվյալների (տե՛ս՝ «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 62):

3 Ըստ Նահանգական վիճակագրական կոմիտեի տվյալների (տե՛ս՝ «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 61):

4 Ըստ Երևան քաղաքի ռատիկանապետի տեղակալի դեկուցագրի (տե՛ս՝ ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 32—33):

5 Ըստ Ս. Զելինսկու «Город Эривань» աշխատության տվյալների (տե՛ս՝ «Сборник материалов для опис. мести. и племен Кавказа», вып. I, отд. 1, էջ 40—41):

Տարբեր ժամանակներում կատարված աշխարհագրերը ցույց են տվել տարբեր հորջորջումներ ունեցող աշխարհիկ ֆեոդալների հետևյալ թվերը.

Աղյուսակ 31

Հ/հ	Ազնվականության խմբերը	1849/51 թթ.[1]			1859 թ.[2]			1863 թ.[3]			1865 թ.[4]		
		տ.	կ.	ընդամենը	տ.	կ.	ընդամենը	տ.	կ.	ընդամենը	տ.	կ.	ընդամենը
1	Խաներ	6	7	13	—	—	—	—	—	—	—	—	—
2	Բեկեր	60	54	114	111	75	186	120	95	215	215	—	215
3	Միրզաներ[5]	22	—	22	—	—	—	—	—	—	—	—	—
4	Մելիքներ	2	—	2	11	11	22	11	11	22	24	—	24
5	Ժառանգական ազնվականներ	—	—	—	7	7	14	14	10	24	63	—	63
6	Անձնական ազնվականներ	—	—	—	108	89	197	198	115	313	253	—	253
7	Խանական ծագում ունեցողներ	—	—	—	13	12	25	13	12	25	25	—	25
	Ընդամենը	90	61	151	250	194	444	356	243	599	580	—	580

Աղյուսակից դժվար չէ տեսնել, որ 1849/51 թվականներին գեռևս պահպանվել էին տիրող դասերի պարսկական տիրապետության շրջանի անվանումները՝ խաներ, բեկեր, միրզաներ և մելիքներ: Սակայն հաջորդ աշխարհագրերի և պաշտոնական այլ փաստաթղթերի մեջ արդեն մտել են այն բաժանումները, որոնք հաստատված էին տեղական ազնվականության իրավունքներին ու արտոնություններին վերաբերող 1846 թվականի օրենքով: Ըստ որում պարսկական տիրապետության ժամանակաշրջանի ազնվականության բոլոր ներկայացուցիչները բաժանվում էին ժառանգական ազնվականների, անձնական ազնվականների, խանական ծագում ունեցողների և բեկերի, մելիքների ու աղայարների, որոնք բոլորն էլ ազնվական դասին էին պատկանում:

1 «Кавказский календарь на 1852 год», отдел III, էջ 441:

2 Նույն տեղը, на 1866 год, отдел III, էջ 62:

3 Նույն տեղը, էջ 61:

4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 32 և 40:

5 Խաներն ու բեկերը տրված են իրենց ընտանիքի անդամների հետ միասին, իսկ միրզաներն ու մելիքները՝ առանց ընտանիքի անդամների:

Ալյոշինով, պարսկական շրջանում գործածվող բեկ, մելիք և աղալար տիտղոսները պահպանվեցին նաև այս շրջանում, իսկ և միրզա տիտղոսները վերացան ընդհանրապես, իսկ նախկինում այդ տիտղոսներն ունեցողները 1846 թվականի օրենքով մտցվեցին նշված համապատասխան խմբերի մեջ։

Անդրկովկասում պարսկական տիրապետության շրջանի վարչակարգը վերացնելու հետ միասին, ցարական կառավարությունը Կովկասի կառավարչապետ Վորոնցովի միջնորդությամբ հոդ է տանում նոր գրավված երկրների շահագործող դասակարգի ներկայացուցիչների՝ խանների, բեկերի, աղալարների և մելիքների տիրակալական իրավունքներն ու արտոնությունները որոշակիորեն սահմանելու և օրենքով ճանաչելու համար։ Կովկասի կառավարչապետի և ցարական կառավարության այդ մտահոգությունը միանգամայն տրամաբանական է։ Նրանց անհրաժեշտ էր Կովկասում ամրանալ, աստիճանաբար այն վերածել կատարյալ գաղութի և ժողովրդին պահել հլու-հնազանդ վիճակում։ Ցարական կառավարության գաղութային այդպիսի քաղաքականության անցկացման համար տեղում հենարան կարող էին լինել միայն շահագործող դասակարգի նշված ներկայացուցիչները։ Այդ լավ գիտեր և՛ Վորոնցովը, և՛ Պետերբուրգը։

Տեղական ազնվականության ծագման, արտոնությունների և իրավունքների հետ կապված հարցերը հատուկ հանձնաժողովով ուսումնասիրելուց հետո՝ Վորոնցովը ցարի հաստատությանն է ներկայացնում խանների, բեկերի, մելիքների, աղալարների և ազնվականության դասին պատկանող մյուս խմբերի ժառանգական-տիրակալական իրավունքներին վերաբերող մի նախագիծ, որը 1846 թվականի դեկտեմբերի 6-ին Նիկոլայ I-ի կողմից հաստատվում է հատուկ հրովարտակով և ստանում օրենքի ուժ[1]։ Ըստ այդ հրովարտակի, խանները, բեկերը, մելիքներն ու աղալարները ճանաչվեցին իրենց տրամադրության տակ եղած հողերի ժառանգական տերերը, ինչպիսին նրանք իրականում կային։

Բացի դրանից, հրովարտակով նրանց իրավունքներն ու արտոնությունները նախատեսվում է հավասարեցնել ռուս ազնվականության արտոնություններին ու իրավունքներին[2]։ Հրովարտակի այդ կետն իրականացնելու համար, Անդրկովկասի մի շարք քաղաքներում, այդ թվում և Երևանում կազմակերպվում են ազնվականական հատուկ հանձնաժողովներ, որոնք պետք է ուսումնասիրեին խանների, բեկերի, մելիքների, աղալարների իրավունքները։ Երևանում այդ այսպես կոչված «բեկական հանձնաժողովը» կազմակերպվում է 1865 թ. հունվարին[3], որը պարտավոր էր քննել Երևանի նահանգի՝ նշված խմբերին պատկանողների իրավունքները, դրանք հաստատման ներկայացնելու համար։ Ինչպես Թիֆլիսում, Շուշիում և Բաքվում, այնպես էլ Երևանում շատ-շատերը ազնվականության շարքերն անցնելու համար դիմում էին ամենաստոր միջոցների՝ փաստաթղթերի կեղծման, սուտ վկայություններ հավաքելուն և այլն։

Դրանք համահավասար չափով վերաբերում էին նաև Երևան քաղաքի խաներին, բեկերին ու մելիքներին[4]։ Երևանի ազնվականները խանական շրջանում հողային տիրույթներ ունեին ոչ միայն քաղաքում՝ գերազանցապես այգիների ու բանջարանոցների ձևով (հիշենք և ջրաղացներ, խանութներ, բաղնիքներ)[5], այլև թիուլական կամ մյուլքադարական իրավունքներով հսկայական կալվածքներ ունեին մահալներում։ Ցարական կառավարությունը այսպիսով օրինականացնում է նրանց հողային սեփականությունը և արտոնություններն ու իրավունքները։

1865 թ. հոկտեմբերի 28-ի օրենքի համաձայն, Կովկասի փոխարքան վերացնում է բեկերի, աղալարների ու մելիքների ոստիկանական ու դատական իրավունքները. սրան հաջորդում է 1870 թ. մայիսի 14-ի օրենքը, որով վերացվում է ճորտատիրական իրավունքը Ադրբեջանում և Հայաստանում։ Սակայն քանի որ ռեֆորմն Անդրկովկասում անցկացվեց գյուղացիների համար ավելի անձեռնտու, իսկ ազնվականության համար ավելի շահավետ պայմաններով, ուստի այստեղի ազնվականության արտոնությունները ռեֆորմից հետո էլ մնացին բավական լայն[6]։

Բնակչության շահագործող խմբի մյուս դասը՝ հոգևորակա-

---

[1] Դրա լրիվ տեքստը տե՛ս «Полное собр. законов...», изд. 2-е, т. XXI, № 20672, СПБ, 1847, էջ 617—619։

[2] Նույն տեղը։

[3] Տե՛ս «Кавказский календарь на 1868 год», отдел III, էջ 136։

[4] Երևան քաղաքում «աղալար»-ներ չեն հիշատակվում։ «Աղա» նշանակում է «տեր»։ «Խան»-ը, «բեկ»-ը, «մելիք»-ը և «աղա»-ն իրրև ֆեոդալ-հողատերեր իրարից ոչնչով չէին տարբերվում, իսկ իրրև իշխաններ կարող էին տարբերվել իրարից։

[5] Տե՛ս «Кавказский календарь на 1886 год», отдел III, էջ 62։

[6] Տե՛ս В. Р ш т у н и, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947, տե՛ս նաև Ծ. Պ. Ա ղ ա յ ա ն, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955, էջ 30—32։

նութիւնը ևս օժտված էր մի շարք արտոնութիւններով: Նա ազատված էր հարկերից ու հարկադիր աշխատանքներից և ապրում էր աշխատավոր բնակչութեան հաշվին: Երևանի հոգևորականները բավական բազմամարդ էին: 1859 թ. դրանց թիվը հասնում էր 206-ի, 1863 թ.՝ 257-ի, իսկ 1879 թ.՝ 216-ի[1]: Հոգևորականութիւնը բաժանված էր երեք խմբի՝ լուսավորչականի, ուղղափառի և մահմեդականի: Յուրաքանչյուր խումբ ուներ իր աստիճանավորութիւնը: Ոչ միայն եկեղեցիներն ու վանքերն, այլև բազմաթիվ հոգևորականներ քաղաքում ունեին իրենց սեփական հողերն ու այլ կարգի անշարժ գույքը[2]:

Աղնվականութեանն ու հոգևորականութեանը հակադրվում էր բնակչութեան հարկատու խումբը՝ քաղաքային դասը, որը բաղկացած էր առևտրականներից ու արհեստավորներից, և գյուղատնտեսութեամբ զբաղվողները: Քաղաքային դասը իր անտեսական և իրավական վիճակով հավասարեցված էր պետական գյուղացիութեանը: Նա տալիս էր այն հարկերն ու տուրքերը և կատարում այն հարկադիր աշխատանքները, ինչ որ տալիս և կատարում էին պետական գյուղացիները: Այդ է պատճառը, որ պաշտոնական փաստաթղթերում և վիճակագրական նյութերում քաղաքային դասի առջև գրեթե միշտ փակագծերում դրվում է «պետական գյուղացիներ» արտահայտութիւնը, որպես հավասարութեան նշան[3]: Սկսյալ 1837 թվականից սկսած, ինչպես տեսանք, ցարի կարգադրութեամբ պետական այգիները վաճառում են մասնավոր մարդկանց և քաղաքի բնակչութիւնն էլ ազատվում է պետութեան հողերում ու այգիներում կոռային աշխատանք կատարելուց: Եթե կրոր այդ եղանակով վերացավ Երևանում, ապա մյուս հարկադիր աշխատանքները՝ պարհակները, որոնց մասին կխոսենք հարկերի հետ միասին, մնացին ուժի մեջ:

Քաղաքային դասի ներկայացուցիչները նույնպես իրենց անտեսական դրութեամբ զանվում էին տարբեր աստիճանի վրա: Քաղաքային դասի մեջ էին մտնում ամենաազդեցիկ արհեստավորներից մինչև խոշոր բազաղները: Դրանք բոլորը մի խումբ էին կազմում պարզապես ոչ թե անտեսական միատեսակ դրութեամբ, այլ

[1] Տե՛ս «Кавказский календарь на 1866 год», էջ 61, 62 և С. Зеленский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 40—41):

[2] Տե՛ս «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 62:

[3] Տե՛ս, օրինակ՝ ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 10, «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 61, 62 և այլուր:

ասակ իրավական առումով: Նրանք բոլորն ունեին միևնույն իրավական վիճակը՝ պետական գյուղացիներին հավասար իրավունքներ:

Հարկատու դասը կազմում էր քաղաքի բնակչութեան մեծագույն մասը: Նրա տնտեսական և իրավական վիճակի մասին անհնար է թեկուզ շատ մոտավոր կերպով գաղափար կազմել, առանց ներկայացնելու այն բարդ հարկային սիստեմը, որը ամբողջովին ծանրացած էր քաղաքային դասի վրա:

Երևանը պարսկական լծից ազատագրելուց հետո, սկզբնական շրջանում Հայկական մարզի հետ միասին նրա հարկային սիստեմն էլ մնաց հինը՝ պարսկականը[1]: Քաղաքի հարկատու բնակչութիւնը, բացառութեամբ ներգաղթածների, որոնք հարկերից ազատված էին վեց տարի ժամանակով, իսկ պարհակներից՝ երեք տարով, տալիս էր գրեթե այն բոլոր հարկերն ու տուրքերը և կատարում այն կոռային աշխատանքն ու պարհակները, որոնք սահմանված էին սարդարի կողմից: Այդ պատճառով էլ, Հայկական մարզի վարչութիւնը կազմակերպելով, Պասկևիչը նրան առաջագրանք է տալիս առաջին հերթին զբաղվելու խանական շրջանի հարկերի ու պարհակների ուսումնասիրութեամբ և դրանց չափի ու բնույթի որոշմանդրմամբ, որպեսզի դրանք ուժի մեջ պահվեն նաև այժմ՝ նախկին Երևանի ու Նախիջևանի խանութիւնները Ռուսաստանին միացնելուց հետո:

Պարսկական տիրապետութեան վերջին շրջանում գոյութիւն ունեցող հարկային ու պարհակային սիստեմի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկութիւնները հավաքելուց հետո՝ Հայկական մարզի վարչութիւնը դրանք ներկայացնում է Պասկևիչին, որը ծանոթանալով իրեն ներկայացրած այդ նյութերին, 1829 թ. հունվարի 19-ին Դիբիչին ուղղված իր պաշտոնական գրութեան մեջ հայտնում է այն կարծիքը, որ սարդարական շրջանի հարկային սիստեմը այլևս չի կարող գոյութիւն ունենալ, որ սարդարը ինքը հանդես էր գալիս որպես մի խոշոր մոնոպոլիստ և՛ հարկահանութեան, և՛ առևտրի բնագավառում: Հետևապես նրա հարկային սիստեմն էլ պիտանի չի կարող լինել նոր պայմանների համար: Նա Դիբիչին գրում է. «Հայկական մարզի վարչութիւնը ինձ տեղեկութիւններ է ներկայացրել նախկին երևանյան սարդարի օրոք Երևանի պրովինցիայում գործող բնդհանրապես բոլոր հարկերի

[1] С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом. т. II, Тифлис, 1907, էջ 90:

մասին։ Այդ տուրքերը կարող են գոյություն ունենալ միայն սարդարի ժամանակ, որովհետև նա գործում էր որպես մոնոպոլիստ և որպես կապալառու, և իր ձեռքում ուներ ոչ միայն ամբողջ առևտուրը, այլև գնում էր հողի բոլոր արդյունքները, դրանք հետագայում անհամեմատ ավելի թանկ վաճառելով։ Եթե (սարդարը— Ի. Հ.) մտնում էր բնակչության դրության մեջ, ապա նրա համար, որպեսզի նրանցից հեռացնի հնարավոր օգուտը, նրանց թողնելով միայն գոյության համար ամենակարևոր միջոցները և նրանց երբեք թույլ չտալով լավացնելու իրենց բարեկեցությունը նրանց զանազան օժանդակություն էր ցույց տալիս, որպեսզի նրանցից հետո անհամեմատ ավելին վերցնի. նրանց հետ պայմաններ էր կնքում և տնտեսավարությամբ հաշվեհարդար էր տեսնում միշտ իր օգտի համար։ Սակայն եվրոպական կառավարության ժամանակ հարկերի հավաքման մեջ այդպիսի կարգը ոչ միայն անչափ ծանր է բնակչության համար, այլև հարկերից մի քանիսը ռուսական պետության մեջ չեն կարող գոյություն ունենալ. ընդհանրապես այն նախկին դրությամբ թողնել անհնար է»[1]։

Չի կարելի տարակուսել, որ ցարական դիվանագիտական հետաքրքրում էր ոչ թե ժողովրդի աղքատիկ վիճակը կամ նրա հարկային սիստեմի թուլացումը, ինչպես նա հայտարարում է իր պաշտոնական գրության մեջ, այլ միայն սարդարական հարկային սիստեմը ռուսական վարչաձևի համար նույնությամբ անընդունելի լինելը։ Եվ իրոք, նույն ինքը՝ Պասկևիչը իր նախաձեռնությամբ որոշ փոփոխություններ մտցնելով պարսկական տիրապետության շրջանի հարկային սիստեմում[2] (որոշ հարկերի վերացում, հարկերի հավաքման կարգի որոշ փոփոխում, մի քանի հարկերի դրույքների կանոնավորում և այլն), այն թողեց ուժի մեջ։

Ի. Շոպենի վկայությամբ, Պասկևիչը սկզբից ևեթ կարգադրություն է արել Հայկական մարզի հիմնական բնակիչներից հարկեր վերցնել պարսկական տիրապետության շրջանի բոլոր հարկերի ընդհանուր գումարի կեսի չափով, և նրա այդ կարգադրությունը ուժի մեջ է մնացել մինչև 1834 թվականը[3]։ Նա միաժամանակ նշում է, որ Պասկևիչի այդ կարգադրությունը հնարավոր չի եղել նույնությամբ կիրառել՝ իբր հիվանդություններից, սահմանային անհանգստություններից և մի քանի այլ պատ-

[1] АКАК, т. VII, էջ 493։

[2] Նույն տեղը, էջ 493—494։

[3] И. Шопен. Исторический памятник Армянской области, էջ 1217—1218։

ճառներով, և նախկին խանական հարկային սիստեմը, հատկապես Նախիջևանի պրովինցիայում և Օրդուբադի օկրուգում[1], փաստորեն նույնությամբ ուժի մեջ է մնում մինչև 1834 թվականը։

1834 թ. Հայկական մարզի ֆինանսական վարչությունը ենթարկվում է վերափոխման, որի հետ միասին փոփոխության ենթարկվեց նաև հարկային սիստեմը։ Ըստ նոր դրության, մարզի բոլոր մահալներում և քաղաքներում մտցվեց միահավասար բնաուրք բոլոր մշակույթների բերքի 1/10-ի չափով[2]։ Մարզի տաս օկրուգների և նրա կենտրոն Երևան քաղաքի հարկերը հավաքելու համար նշանակվում են 11 հարկահավաքներ, որոնցից մեկը Երևանի, իսկ մյուս 10-ը՝ օկրուգների համար։ Հարկային սիստեմն այդպիսի ոչ էական վերափոխված ձևով իր գոյությունը պահպանում է երկու տարուց մի փոքր ավելի։

1836 թ. հարց է հարուցվում Կովկասում հարկային սիստեմը վերջնականապես վերափոխելու՝ պարսկական տիրապետության շրջանում գոյություն ունեցող հարկային սիստեմը նորով փոխարինելու մասին։ Այդ թվականից Հայկական մարզում փորձի կարգով վեց տարվա համար մտցվում է նոր հարկադրույք, նրա չափը որոշելով բնիկ բնակիչներից նրանց 8 տարվա համախառն եկամտի հիման վրա, իսկ եկվորներից՝ երկու տարվա[3]։ Դրա հետ միասին, 1837 թ. մարտի 30-ին կազմվում է մի հատուկ հանձնաժողով, որին հանձնարարվում է մշակել Կովկասի համար նոր հարկային մի այնպիսի սիստեմ, որը հաշվի առներ տեղական պայմանների առանձնահատկությունները։ Բոլոր օղակներն անցնելուց հետո՝ հանձնաժողովի կազմած նախագիծը հաստատվում է բարձրագույն հրամանագրով (1843 թ. հունվարի 26-ին) և այն վերջնականապես դրվում է գործի մեջ։

«Թխահարկի մասին» կոչված այդ օրենքով բնամթերային տուրքը փոխարինվեց դրամականով։ Ամբողջ գյուղացիությունը այդ նույն օրենքով ճանաչվեց պետական և հարկադրվեց համահավասար հիմունքներով։ Քաղաքային հարկատու բնակչությունը ևս համարվեց գյուղացիության համահավասար դաս։ Չնայած այն բանին, որ օրենքը հայտարարում էր, թե թխահարկի չափը որոշվում է տվյալ շրջանի կամ քաղաքի հողի որակի, բերքի չափի, բերքերի տեսակների, արհեստավորական արտադրանքների, առև-

[1] И. Шопен. Исторический памятник Армянской области, էջ 1218։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը։

տրի բնույթի ու չափի և այլ պայմանների հիման վրա, սակայն իրականում, ինչպես միանգամայն ճիշտ կերպով նկատում է պրոֆ. Հովհ. Թումանյանը, «ծխահարկը բոլորովին չէր համապատասխանում տվյալ նահանգի կամ գավառի տնտեսությանը, քանի որ հարկադրույքները սահմանվում էին առանց հիմնավոր տվյալների և առանց տեղերի յուրահատուկ պայմանները նկատի ունենալու»[1]։

Այնուամենայնիվ, ծխահարկի տարբեր դրույքներ որոշելու համար կազմված էին հատուկ հանձնաժողովներ։ Թիֆլիսի նահանգում գյուղացիության և քաղաքային բնակիչների համար հանձնաժողովը սահմանել էր ծխահարկի 25 տեսակի հարկադրույքներ՝ մեկ ծխից 50 կոպեկից մինչև 10 ռուբլու սահմաններում[2], Քութաիսի նահանգում 5 հարկադրույք՝ 1 ռուբլուց մինչև 5 ռուբլի, Բաքվի նահանգում՝ 25 կարգի հարկադրույք՝ 1-ից մինչև 14 ռուբլու սահմաններում, Ելիզավետապոլի նահանգում՝ 28 կարգի հարկադրույք՝ յուրաքանչյուր ծխից 50 կոպեկից մինչև 13 ռուբլու սահմաններում, իսկ Երևանի նահանգում սահմանվեց 49 կարգի ծխային հարկադրույք՝ 1 ռուբլի 75 կոպեկից մինչև 10 ռուբլու սահմաններում[3]։

Միևնույն նահանգում ծխահարկի այդքան բազմապանությունն ու դրա դրույքների այդքան մեծ տարբերությունները նպաստավոր պայմաններ էին ստեղծում՝ առանց դժվարության հաստատ պետության փոփոխության ենթարկելու տվյալ վայրի կամ գավառի հարկադրույքները։ Ակնհայտ որ, տվյալ տերիտորիալ միավորի, վայրի համար մեկընդմիշտ սահմանված ծխահարկի կայուն դրույք գոյություն չուներ։ Այդպիսի անկայուն չափ ուներ և Երևան քաղաքի ծխահարկի դրույքը։ Ընդհանրապես, ժամանակի ընթացքում նշված դրույքները փոխարբայի կամքով ենթարկվել են փոփոխության՝ «հաշվի առնելով» երկրի տնտեսական դրության մեջ տեղի ունեցած փոփոխությունները[4]։ Սակայն, ըստ էության, այդ հարկատեսակը մնաց ուժի մեջ մինչև XIX դարի վերջերը։

Ծխահարկի բաշխումն ըստ տների՝ գյուղական վայրերում կատարվում էր համայնքների կողմից; իսկ քաղաքային վայրե-

[1] Проф. О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, էջ 44։

[2] С. Эсадзе, Историческая записка об управлении Кавказом, т. II, էջ 92։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը, էջ 92—93։

րում, նրա քաղաքում չէր գործում քաղաքային կանոնադրությունը և այն չուներ իր վարչությունը, այլ կառավարվում էր ոստիկանության կողմից, այդ բաշխումը կատարվում էր ընտրովի ներկայացուցիչների միջոցով։ Երևանը պատկանում էր վերջին տիպի քաղաքների շարքին, այստեղ մինչև 1879 թվականը քաղաքային վարչություն գոյություն չուներ, և ծխահարկը ըստ բնտանիքների բաշխվում էր ընտրովի հանձնաժողովի կողմից, որին գործուն օգնություն էին ցույց տալիս արհեստավորական ու առևտրական համքարությունները։

Չպետք է կարծել, որ պետական ծխահարկը մտցնելուց հետո վերացան մյուս կարգի բազմաթիվ հարկերն ու տուրքերը, որոնց մեծագույն մասը, մի շարք այլ կարգի հարկերի ու հարկադիր աշխատանքների հետ միասին, գոյություն ուներ նաև նախորդ շրջանում՝ պարսկական տիրապետության օրոք։ Այսպես, մեզ հետաքրքրող շրջանում Երևան քաղաքում ծխահարկից բացի կային նաև դրամական և բնաուրքային այսպես կոչված գավառական պանազան տուրքեր (земские сборы или повинности) և քաղաքային ամենատարբեր տեսակի հարկեր (городские доходы), որոնք վերցվում էին քաղաքային տնտեսության բոլոր ճյուղերից՝ արհեստագործությունից, առևտրից, գյուղատնտեսական ըրազմունքներից և անուղղակի մի շարք աղբյուրներից։ Պետական ծխահարկի հետ միասին հաստատվում էին նաև դրանց դրույքները։

Մի քանի խոսք դրանց մասին առանձին-առանձին։

40-ական թվականների սկզբներից մտցված ծխահարկը համարվում էր պետական հիմնական հարկը։ Ինչպես ցույց է տալիս հենց ինքը՝ բառը, դրա հարկային միավորը համարվում էր տունը՝ ծուխը, անկախ նրա անդամների ու աշխատողների թվից։ Բնակչությունից գանձվող հարկերի մեջ համեմատաբար ամենակայունը հենց ծխահարկն էր, սակայն դա էլ երբեմն տալիս էր զգալի տարբերություններ։ Ըստ սահմանված դրույքի, Երևանի հարկատու յուրաքանչյուր բնտանիքի ծխահարկը տարեկան կազմում էր ավելի քան երկու ռուբլի։ Քաղաքային ոստիկանական վարչության տվյալներով, 1865 թ. Երևանի ամբողջ ծխահարկը կազմում էր 4851 ռուբլի[1]. Երևանի քաղաքային ոստիկանական վարչության մի այլ պեկուցագրի համաձայն, ծխահարկը կազմել է 6534 ռուբլի[2], իսկ 40—50-ական թվականներին բնտանիքների

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 26—27։

[2] Նույն տեղը, ֆ. 90, գ. 234, թ. 37—41։

Քվի (օրինակ՝ 1852 թ. Երևանի հարկատու ծխերի քանակը եղել է 2278, տե՛ս՝ «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, էջ 186) և այլ պայմանների հետ կապված՝ այն զգալի չափով փոքր է եղել։ Միահարկը հավաքել են երկու նվագով։ Հոկտեմբերի 1-ից սկսած՝ նույն տարվա ծխահարկի չմուծված մասը համարվել է ապառք և յուրաքանչյուր հետաձգվող ամսվա համար իբրև տուգանք պահանջվել է լրացուցիչ գումար, իսկ բոլոր տեսակի հարկերի գծով անցած ժամանակներից տվոքրաբար լինում էին մեծ գումարներ կազմող ապառքներ։

Իրենց ծանրությամբ երկրորդ տեղը հարկերի մեջ բռնում են զավառական կամ երկրային կոչված հարկերն ու պարհակները։ Դրանք կազմում էին զանազան նպատակներով՝ կամուրջների, ճանապարհների, առուների և այլն վերանորոգելու կամ նորերը կառուցելու համար քաղաքի հարկատու բնակչությունից կատարվող դանձումների և զանազան պարհակների ձևով կատարվող հարկադիր աշխատանքների (զանազան նպատակների համար սայլերի տրամադրում, բեռնակիր անասունների տրամադրում, իրենց սայլերով ու գրասոներով՝ բանտարկյալներին կամ ցածրաստիճան զինվորականներին ուղեկցելը և այլն) մի մեծ խումբ։ Դրամով արտահայտված երկրային կամ զավառական կոչված հարկերն ու պարհակները քաղաքային բնակչությունից տարեկան խլում էին մոտ 3000 ռուբլի։ Այսպես, օրինակ՝ 1865 թվականի համար սահմանված երկրային հարկերն ու պարհակները դրամի վերածած՝ կազմել էին 2842 ռուբլի 40 կոպ.[1]։ Քաղաքային ոստիկանապետի զեկուցագրի համաձայն, այդ թվականի երկրային հարկերի ու պարհակների հաշվին առ 1-ը հոկտեմբերի քաղաքային բնակչությունից վերցրել են 20 սայլ, 140 գրասո և 570 ուղեկցող, որոնց արժեքը դրամով արտահայտված կազմել է 600 ռուբլի[2]։ Բացի դրանից, գանձվել են մի քանի հարյուր ռուբլի՝ կամուրջների, ճանապարհների և այլնի վերանորոգման համար[3]։ Միահարկի և քաղաքային հարկերի պես երկրային հարկերի ու պարհակների՝ մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 1-ը չմուծված կամ չկատարված մասը նույնպես համարվել է ապառք և դրանց վրա ավելացվել համապատասխան տոկոսներ։

Երկար, շատ երկար ցուցակ են կազմել այսպես կոչված ֆա-

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 27—28։
2 Նույն տեղը, թ. 36։
3 Նույն տեղը։

կտային հարկերը կամ հասույթները (доходы), ինչպես սովորաբար դրանք կոչված են պաշտոնական փաստաթղթերում։ Տարական կառավարությունը ռազմա-ստրատեգիական և վարչա-քաղաքական նպատակներով կատարվող որոշ աշխատանքներից բացի՝ նահանգական և գավառական քաղաքներում պետական դանձարանի հաշվին ոչ մի կառուցում կամ միջոցառում չէր թույլատրում։ Քաղաքային ոստիկանության վարձատրությունը, քաղաքի առողջան ցանցի պահպանումը և վերանորոգումը, նոր ջրանցքների անցկացումը, քաղաքի կոմունալ ձեռնարկումները, պարբերաբար կազմակերպվող զանազան ցուցահանդեսների ամբողջ հոգսը, լուսավորչական-դպրոցական հիմնարկներին դրամական օգնություն ցույց տալը և այլն ամբողջովին կատարվում էր քաղաքի հարկատու դասի հաշվին՝ նրանից գանձվող զանազան տուրքերից կազմված գումարներով։ Քաղաքային ուղղակի և անուղղակի հարկերի ու տուրքերի թիվը հասնում էր ավելի քան 20-ի[1]։ Քաղաքի եկամուտները կազմվում էին քաղաքապատկան ունեցվածքի՝ հողերի, այգիների, խանութների և այլնի կապալով տալուց և հարկատու դասին պատկանող այգիներից, բանջարանոցներից ու այլ օբյեկտներից, առևտրից, արհեստներից և այլ զբաղմունքներից գանձվող հարկերի գումարներից։ Քաղաքի ամբողջ հասույթները կարելի է բաժանել յոթ խմբի՝ 1) քաղաքի համայնական ունեցվածքից ստացվող եկամուտների, 2) մասնավոր սեփականությունից ստացվող հարկերի, 3) արդյունաբերական, առևտրական և արհեստավորական օբյեկտներից ստացվող հարկերի, 4) արհեստավորներից ու առևտրականներից գանձվող հարկերի, 5) զանազան գործարքների ակտերից և աճուրդներից ստացվող հարկերի, 6) կողմնակի հասույթների և 7) պատահական հասույթների[2]։

1) Այսպես, քաղաքի համայնական ունեցվածքից հասույթներ էին ստացվում՝ ա) Սոգուլու կոչված վայրի կապալով տալուց. դա բաժանված էր բազմաթիվ հողակտորների, որոնք օգտագործում էին մասնավոր անձնավորությունները. վերջիններս դրանք դարձրել էին բանջարանոցներ։ 1843 թ. նոյեմբերից սկսած, երբ հաստատվեց պետական ծխահարկի և մյուս հարկերի կանոնադրությունը, դադարեցվեց Սոգուլու վայրի օգտագործման համար քաղաքացիներից հատուկ գումար վերցնելը[3]։ բ) Հասույթի

1 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 225ա, թ. 33—44։
2 Նույն տեղը։
3 Նույն տեղը, թ. 33։

կարևոր աղբյուր էր հանդիսանում քաղաքային սպանդանոցը, որը տրվում էր կապալով։ Անասունների մորթումից քաղաքը տարեկան ստանում էր մի քանի հարյուր ռուբլու հասույթ։ գ) Քաղաքի եկամուտների ամենահուսալի ու կարևոր աղբյուրներից մեկը կշեռքներ և չափ ու կշիռներն էին, որոնք կապալով տալով՝ քաղաքը միջին հաշվով տարեկան ստանում էր ավելի քան երկու և կես հազար ռուբլի։

2) Բնակիչների մասնավոր ունեցվածքից[1] քաղաքի օգտին վերցնում էին հետևյալ հարկերը. ա) տնահարկ, որը վերցվում էր հատուկ հանձնաժողովի կողմից տվյալ տան համար սահմանված գնի $^3/_4$ տոկոսի չափով։ Այս հարկի չափը որոշելու համար պարբերաբար անց էին կացվում տների ցուցակագրումներ և գնահատումներ[2]։ Համաքաղաքային մասշտաբով տնահարկի հաստատուն չափ գոյություն չուներ, դա ամեն տարի ենթարկվում էր փոփոխության՝ տների թվերի ու դրանց գնահատումների փոփոխության պատճառով։ Պետական, վանքապատական, եկեղեցական, մահմեդական կրոնական բնույթի կառուցվածքները, ինչպես և զորոցական շենքերը, բարեգործական նպատակի ծառայող շենքերը և այլն ազատ էին այդ հարկից։ բ) Խանութահարկ և կարասվաճառահարկ, որը վերցվում էր մասնավոր խանութներից ու քարավանատներից՝ նրանց տարեկան եկամտի 10 տոկոսի չափով։ Դրանց եկամուտների որոշումը կապված էր մեծ դժվարությունների հետ։ Եթե խանութի եկամուտը սովորաբար սահմանում էին շրջանառության մեջ գտնվող կապիտալի 20 տոկոսի չափով, ապա քարավանատների եկամուտների որոշման համար հաստատուն որևէ սկզբունք գոյություն չուներ։ գ) Ներկատնային հարկը դարձյալ սահմանվում էր նրա մաքուր եկամտի 10 տոկոսի չափով։ Խանութներից և քարավանատներից, միասին վերցրած, քաղաքը մի քանի անգամ ավելի մեծ գումար էր ստանում, քան ներկատներից։ դ) Խաղողի ու մրգատու այգիներից և բանջարանոցներից հոգուտ քաղաքի վերցվող հարկը նույնպես սահմանված էր դրանց մաքուր եկամտի 10 տոկոսի չափով։ Ժամանակ առ ժամանակ կատարվող ցուցակագրումների միջոցով, եղած գրության համաձայն, փոփոխության էր ենթարկվում այգիներից ու բանջարանոցներից վերցվող հարկի չափը[3]։

[1] Մանրամասն տե՛ս «Свод законов Российской империи», книга вторая, т. V, Москва, 1910, էջ 13—19։
[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 225ա, թ. 33—44։
[3] Նույն տեղը։

3) Արդյունաբերական, առևտրական և արհեստավորական ձեռնարկություններից վերցվող հարկերը հետևյալներն էին. ա) գինի և օղի վաճառող յուրաքանչյուր խանութից (դուքան, միկիտան) տարեկան 10 ռուբլի. բ) մանրածախ փոքրիկ կրպակներից վերցնում էին դրանից ավելի պակաս։ Քաղաքի փոքրիկ կրպակներից վերցվող ամբողջ հարկը հասնում էր միայն տասնյակ ռուբլիների։ գ) Բաղնիքներից նույնպես վերցվում էր հատուկ հարկ, որը դարձյալ կազմում էր տասնյակ ռուբլիներ։ դ) Վարսավիրաճոցներից յուրաքանչյուրից տարեկան վերցվում էր 2 ռուբլի[1]։

4) Արհեստավորներից և առևտրականներից վերցնում էին հետևյալ հարկերը. ա) առևտրով զբաղվող քաղաքային բնակիչներից առևտրի իրավունքի համար, բ) արտասահմանյան վաճառականներից ու այլ կարգի մարդկանցից, որոնք քաղաքում մշտապես զբաղվում էին առևտրով, գ) ժամանակավորապես եկած վաճառականներից ու այլ կարգի մարդկանցից՝ իրենց ապրանքներով առևտուր կատարելու համար, դ) կոնֆետագործներից՝ յուրաքանչյուր վարպետից մեկ ռուբլի, իսկ աշխատողից (յուրաքանչյուր բանվորից, վարպետացուից կամ աշակերտից)՝ 50-ական կոպեկ, ե) արհեստավոր վարպետներից՝ յուրաքանչյուրից մեկ ռուբլի, իսկ նրա ձեռքի տակ եղած բանվորներից, ենթավարպետներից և աշակերտներից՝ յուրաքանչյուրից 50 կոպեկ[2]։

5) Ձանազան գործարանների ակտերից ու աճուրդներից ստացվում էր՝ ա) մուրհակների մասին եղած բողոքներից ու այլ ակտերի կազմումից տվյալ փաստաթղթի արժողության $^1/_4$—$^1/_2$ տոկոսի չափով, բ) պայմանագրերի կնքումից դրանց արժողության 2 տոկոսի չափով և գ) աճուրդային վաճառքից վաճառվող իրի գնի 2 տոկոսի չափով[3]։

6) Օժանդակ հասույթներ էին ստացվում. ա) 20 տոկոս ակցիզային հարկից և բ) բաղարային եկամուտներից աշխատավարձ ստացող բաղարային աստիճանավորներից, որոնցից վերցվող հարկով կազմվում էր նույն խմբի մարդկանց թոշակի ֆոնդը[4]։

7) Պատահական եկամուտներ։ Դրանց մեջ մտնում էին զանազան տուգանքները, որոնք նշանակվում էին քաղաքի հարկերն ու տուգանքները ժամանակին չտալու, քաղաք ժամանող և քաղաքից մեկնող հարկադրման ենթակա առևտրականների ու այլ կար-

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 225ա, թ. 33—34։
[2] Նույն տեղը։
[3] Նույն տեղը։
[4] Նույն տեղը։

զի մարդկանց մասին ժամանակին ոստիկանական վարչության տեղեկացնելու և այլ առիթներով[1]։

Ինչպես ասվեց, նշված հարկերի ու տուրքերի, պարհակների և մյուս հասույթների մեջ համեմատաբար կայունը միայն ծխահարկն էր, մյուսները տարբեր ժամանակներում կազմել են տարբեր գումարներ։ Վերջիններիս այդ փոփոխությունները արդյունք էին գլխավորապես ոչ թե հարկադրույքի փոփոխման, որը մեզ հետաքրքրող ժամանակներում, 40-ական թվականներից սկսած՝ մնացել էր գրեթե հաստատուն, այլ հարկադրվող օբյեկտների վիճակի փոփոխման։ Ընդ որում, իբրև կանոն, գնալով աճել են և՛ քաղաքի հասույթները, և՛ պետական հարկերն ու տուրքերը։

Այս կամ այն եղանակով բնակչությունից գանձվող քաղաքային եկամուտների մասին ամբողջական գաղափար կազմելու համար՝ սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների հիման վրա, կարելի է առաջադրել հետևյալ աղյուսակը։

Աղյուսակ 32

Երևան քաղաքի հասույթները ըստ նախահաշիվների

Հ/Հ	Հասույթի կամ հարկի անվանումը	1844 թ.[2]		1863 թ.[3]		1880 թ.[4]	
		ռուբլի	կոպ.	ռուբլի	կոպ.	ռուբլի	կոպ.
1	2	3	4	5	6	7	8
1	Սոգուքլու վայրից սպասվող հասույթը	25	—	—	—	—	—
2	Քաղաքային սպանդանոցից վերցվող տուրքը	700	—	—	—	—	—
3	Քաղաքային կշեռքներից և չափ ու կշիռներից	2610	—	—	—	—	—
4	Քաղաքային բնակիչների մասնավոր տներից	1059	—	—	—	—	—
5	Քաղաքի բնակիչների մասնավոր խանութներից և քարավանատներից	400	—	—	—	—	—
6	Քաղաքի բնակիչների ներկատներից	50	—	—	—	—	—
7	Քաղաքի բնակիչներին պատկանող խաղողի ու մրգատու այգիներից և բանջարանոցներից	1000	—	—	—	—	—
8	Ամիլքի (գինու և օղու) խանութներից	130	—	360	—	—	—
9	Փոքր կրպակներից	40	—	40	—	—	—
10	Առևտրական բաղնիքներից	75	20	—	—	—	—
11	Վարսավիրանոցներից	30	—	32	—	—	—
12	Առևտրով զբաղվող քաղաքային բնակիչներից՝ առևտրի իրավունքի համար	500	—	500	—	—	—
13	Ուրիշ քաղաքների վաճառականներից և այլ մարդկանցից, որոնք մշտապես առևտուր են անում քաղաքում	200	—	566	—	—	—
14	Ուրիշ քաղաքներից ժամանակավորապես Երևան եկած վաճառականներից և այլ կարգի մարդկանցից՝ իրենց ապրանքներով առևտուր կատարելու համար	300	—	—	—	—	—
15	Կոնֆետագործներից և նրանց աշխատակիցներից	5	—	5	—	—	—
16	Վարպետ արհեստավորներից, նրանց ենթավարպետներից, աշակերտներից ու բանվորներից	600	—	461	—	—	—
17	Մուրհակներից և դրանց հետ կապված ակտերից	60	—	—	—	—	—
18	Գայմանագրերից	2	—	—	—	—	—
19	Ահուրդներից	3	—	95	—	—	—
20	Ակցիզային հարկից	154	—	184	62	—	—
21	Քաղաքային աստիճանավորների աշխատավարձից	83	—	95	40	—	—
22	Տուգանքներից	50	—	28	50	—	—
23	Քաղաքային ունեցվածքից ու կապալներից	—	—	8630	1	—	—
24	Քաղաքացիներին պատկանող անշարժ գույքից	—	—	12044	64	—	—
25	Արդյունաբերողներից և արհեստավորներից	—	—	360	—	—	—
26	Թրոզապաններից (дрожечник)	—	—	60	—	—	—
27	Ժառանգաբար կապալ տրված քաղաքային հողերից	—	—	—	—	341	—
28	Կապալով տրված քաղաքապատական խոտհարքներից և հերկվող հողերից	—	—	—	—	4800	—
29	Կապալով տրված քաղաքապետական բանջարանոցային հողերից	—	—	—	—	385	—
30	Արտատեղերից	—	—	—	—	334	—
31	Քաղաքային հողում անասունների կանգառման համար վերցվող հարկերից	—	—	—	—	2060	—
32	Քաղաքային հրապարակում առևտրի համար տրված տեղերից	—	—	—	—	1290	—
33	Աղյուսի գործարաններից	—	—	—	—	250	—
34	Քարահանքերից	—	—	—	—	100	—
35	Կառապաններից	—	—	—	—	165	—
36	Դաշի գործարաններից	—	—	—	—	200	—
37	Հյուրանոցներից, հրուշակի խանութներից, ձաշարաններից և այլն	—	—	—	—	800	—
38	Քաղաքային կշեռքներից	—	—	—	—	10300	—
39	Քարավանատներից	—	—	—	—	1000	—
40	Ջրսայգիներից	—	—	—	—	556	—

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 225 ա, թ. 33—34։

[2] Կազմված է ըստ ոստիկանապետի ներկայացրած տեղեկագրի տվյալների (ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 225ա, թ. 33—44)։

[3] Կազմված է ըստ Երևանի նահանգի վիճակագրական կոմիտեի տվյալների (տե՛ս «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 69)։

[4] տե՛ս С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для описс. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 38—39).

1	2	3	4	5	6	7	8
41	Քաղաքային բնակիչների ունեցվածքների 10 տոկոսանոց հարկից						
42	Նոտարներից	—	—	—	—	25475	40
43	Առևարի իրավունքի համար տրվող փաստաթղթերից	—	—	—	—	1500	—
44	Քարավանների կանգառման համար վերցվող մաքսատուրքից[1]	—	—	—	—	3500	—
	Ընդամենը	—	—	—	—	180	—
		8076	20	23462	17	53246	40

Ինչպես տեսնում ենք, քաղաքի եկամուտները 35—36 տարվա ընթացքում ավելացել են ավելի քան վեց և կես անգամ, իսկ դա միաժամանակ նշանակում է, որ մեծապես ավելացել էին քաղաքային ուղղակի և անուղղակի հարկերն ու տուրքերը։ Արխիվային փաստաթղթերից երևում է, որ Երևանի հարկատու բնակչությունը ի վիճակի չի եղել տարվա ընթացքում մուծելու նախատեսված հարկերը տակավին 1844—45 թվականներին, երբ դրանք համեմատաբար ավելի քիչ էին։ Այդ պատճառով էլ, յուրաքանչյուր տարի քաղաքային հարկերն ու տուրքերը փակվել են հսկայական գումարներ կազմող ապառքներով, որոնք գումարվել են հաջորդ տարվա համապատասխան հարկերի վրա։ Բանն այնտեղ է հասնում, որ Վիրա-Իմերեթյան նահանգի վարչությունը միջնորդում է Կովկասի գլխավոր վարչությանը պակասեցնելու 1845 թ. համար նախատեսված՝ Երևանի քաղաքային որոշ հարկեր ու հասույթներ, պատճառաբանելով, որ ապառքներ շատ կան և որոշ տուրքեր ու հասույթներ սահմանված են իրականությունից ավելի մեծ չափերով[2]։

Սակայն, քաղաքի հարկատու բնակչությունը չէր «փրկվում» միայն ծխահարկով, գավառական հարկերով ու պարհակներով և

[1] Պահպանված են սկզբնաղբյուրների մեջ գործածված անվանակոչումները։ Այն դեպքում, երբ տարբեր սկզբնաղբյուրների մեջ գործ են ածվել կատարյալ միանման հասկացողություններ, այդպիսի դեպքում նույնի տակ լրացրել ենք տարբեր թվականների տվյալները, իսկ եթե հասկացողությունները կատարյալ միանման չեն եղել, այն դեպքում յուրաքանչյուր թվականի համար գրել ենք այն բոլոր հարկատեսակներն ու հասույթները, որոնք նշված են եղել տվյալ սկզբնաղբյուրի մեջ։ Այդ տեսակետից 1844 և 1863 թթ. վերաբերողները իրար բավական նման են, իսկ 1880 թ. շատ ավելի խիստ է տարբերվում դրանցից։

[2] ՀՍՍՌ ՊԿՊՄ, ֆ. 133, գ. 225ա, թ. 30—32 և 65—66։

քաղաքային բազմաթիվ հարկերով, նրա վրա ծանրացած էին նաև եկեղեցուն տրվող հարկերն ու ամենագանագան գանձումները։ Կաթողիկոսական դիվանում պահպանված 1833—34 թթ. վերաբերող պաշտոնական փաստաթղթից երևում է, որ Երևանի առաջնորդարանը համանուն վիճակից հավաքում էր և՛ դրամական միջոցներ, և՛ ամենագանագան իրեր՝ սկսած պղինձներից, շորերից, գդակներից, վերջացրած՝ մատաղի մորթիներով։ Երևանի թեմի գործակալները, նրա վիճակներում գյուղից գյուղ շրջելով, հավաքում էին առաջնորդարանի հարկերն ու հոգեբաժինը։ Նույն արխիվի այլ վավերագրում խոսվում է այն մասին, որ քահանա Հարությունը Գյոդչայի գյուղերից իբրև հոգեբաժին հավաքել է խոշոր ու մանր եղջյուրավոր մի քանի անասուններ, նույն վիճակի մի այլ քահանա՝ տեր Հակոբը նույնպես զրաղված է հոգեբաժին հավաքելով[2]։

Էջմիածնի հոգևոր խորհրդի պաշտոնական հայտարարության համաձայն, միայն Երևանի վիճակից հավաքվող եկեղեցական տուրքի գումարը հասել է 20 հազար ռուբլու (արծաթ)[3]։ Հոգևոր խորհուրդը տրտնջում է, որ 40-ական թվականներին Երևանի վիճակից ստացվող հասույթները բավական իջել են և մայր աթոռի մուտքը իբր գնալով նվազում է[4]։

Եկեղեցական հարկերն ու մյուս հասույթները հավասար չափով վերաբերում էին նաև Երևանի բնակչությանը, որտեղ կային մի շարք եկեղեցիներ՝ տասնյակների հասնող հոգևորական սպասարկուներով։

Նշված հարկերն ու տուրքերը, պարհակներն ու տարբեր անուններով հավաքվող գանձումները՝ անչափ ծանր են նստել քաղաքի բնակչության վրա, որի եկամուտները եղել են աննախանձելի փոքր։ Բավական է ասել, որ մեկ նամակի դրոշմանիշը արժեր մինչև 30 կոպեկ[5], այն դեպքում, երբ օրավարձով աշխատող բանվորը 70-ական թվականներին օրական ստացել է 40—60 կոպեկ[6]։

[1] ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. կաթողիկոսական դիվան, քղթապանակ 84, վավերագիր 248։

[2] Նույն տեղը, քղթապանակ 91, վավերագիր 99, թ. 1։

[3] Նույն տեղը, քղթապանակ 195, վավերագիր 66։

[4] Նույն տեղը։

[5] «Кавказский календарь на 1868 год», отдел III, էջ 179։

[6] Նույն տեղը, на 1875 год, отдел II, ч. 2, էջ 13։

Այդ բոլորի վրա գումարվում էին ցարական աստիճանավորների կաշառակերությունն ու անօրինական գործողությունները, որոնց անդրադարձանք Հայկական մարզի և Երևանի նահանգի վարչական վիճակի մասին խոսելիս։

Երևանում մեզ հետաքրքրող շրջանում արդյունաբերական պրոլետարիատ դեռևս չէր կազմակերպվել։ Բնակչության հակացարական դժգոհությունները արտահայտվում էին ոչ կազմակերպված և սովորաբար անուղղակի ձևերով, որոնց մասին նշվեց իր տեղում։

Արևելյան Հայաստանի ամբողջ հայության հետ միասին Երևանի բնակչությունը ևս իր սրտին շատ մոտ էր զգում թուրքական լծից Արևմտյան Հայաստանի հայության ազատագրման գործը։ Նա իր արժեքավոր լուման է մտցրել ռուս-թուրքական 1853—56 ԹԹ. (Ղրիմի կամ Արևելյան) և 1877—78 ԹԹ. պատերազմներում, երբ իրենց արևմտյան արյունակիցները ձգտում էին ազատագրվել թուրքական լծից։ Այդ պատերազմների ընթացքում Երևանի բնակչությունը ռուսական զորքերին օգնել է մի հատուկ դինված ջոկատ տալով[1], ինչպես և՝ մեծ քանակությամբ զանազան պաշարմունքներ տրամադրելով[2]։ Երևանի ջոկատը փայլուն մարտունակություն է ցույց տալիս Ղրիմի պատերազմի և 1877—1878 ԹԹ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ՝ կատարելով մեծ քաջագործություններ[3]։

5. ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՆՐԱ ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔԸ

Քաղաքի գրաված տարածությունը։ Քաղաքի շենքերը։ Քաղաքի ընդհանուր տեսքը։ Քաղաքի պլանավորման փորձեր։ Նոր փողոցների կառուցումը և հին մի քանի փողոցների բարեկարգումը։ Պետական նոր շենքերի, Անգլիական այգու, խանութների և մասնավոր նոր շենքերի կառուցումը։ Քաղաքի բարեկարգման և հին կառուցվածքների վերաձորոգման վրա ծախսվող միջոցները։ Օգտագործվող շինանյութերը։ Երևանի հրապարակները, այգիները։ Քաղաքի լուսավորությունը։ Քաղաքային տրանսպորտի բացակայությունը։ Խմելու ջուրը։ Համաճարակ և այլ հիվանդություններ քաղաքում։ Առողջապահական հիմնարկները և աշխատողները։ Բնական աղետները և դրանց պատճառած վնասները։ Կամուրջները։ Քաղաքի թաղերը և ոստիկանական տեղամասերը։ Նորը և Նոր թաղը։ Բերդը։

Այս շրջանում հսկայական փոփոխություն է կրում քաղաքի արտաքին շրջագիծը։ Եթե պարսկական տիրապետության վերջին տասնամյակներին նրա շրջագծի երկարությունը ընդամենը կազմում էր 28—30 վերստ, ապա 1837—38 թվականներից այդ շրջագիծը (որը մոտավոր կերպով չափվել է 1863 թվականին) լայնացած հասնում է 43 վերստի[1]։ Արտաքին շրջագծի այդ լայնացումը կատարվել էր Նորքի միացմամբ, որի շնորհիվ վերջինիս ընդարձակ այգիները, խոտհարքներն ու ցանքատարածությունները համարվեցին քաղաքի շրջագծի մեջ եղած տարածություններ։ Նորքը պաշտոնապես քաղաքին է միացվել 1837 թ.։ 1835—1840 ԹԹ. գրված Հովհ. Շահխաթունյանցի՝ մեր կողմից բազմիցս վկայակոչված աշխատության մեջ Նորքը ցույց է տրված արդեն որպես քաղաքի բաղկացուցիչ մասերից մեկը։ Իր աշխատության մի քանի տեղերում՝ Ի. Շոպենը նույնպես Նորքը համարում է արդեն քաղաքին միացած[2]։ Քաղաքն իր այդպիսի շրջագծով սահմանակցվում էր հյուսիսից և արևելքից՝ Քանաքեռ, Ավան, Ջրվեժ գյուղերի հողերին և Կզլար կոչված անպտուղ ու ամայի տարածությանը, արևմուտքից՝ Նորագավիթ, Վ. Շենգավիթ, Ն. Շենգավիթ, Սարվանլար, Ջաֆարաբադ, Շիրաբադ և Եղվարդ գյուղերի հողերին, իսկ հարավից՝ Կզլարի շարունակությանը, որը մտնում էր Զանգիբասարի մեջ[3]։ 1863 թ. հաշիվներով, նկարագրված սահմաններում Երևանը՝ իր բնակելի թաղամասերով, գյուղատնտեսական տարածություններով, ճանապարհներով, դետերով, կամուրջներով,

[1] Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 ԹԹ., էջ 155, 200, և այլուր։

[2] Նույն տեղը, էջ 205։

[3] Տե՛ս Генерал-майор М. Лихутин, Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах. Из записок о военных действиях Эриванского отряда, Санкт-Петербург, 1863. С. О. Кишмишев, ген-майор. Война в Турецкой Армении 1877—1878 гг., С. Петербург, 1884.

[1] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 9)։

[2] И. Шопен, Исторический памятник Армянской области, էջ 955։

[3] С. Зелинский, Город Эривань («Сборник мат. для опис. местн. и племен Кавказа, вып. I, отд. I, էջ 9)։

անպտուղ մասերով հանդերձ գրավում էր մոտավորապես 4641 դես. 1137 քառ. սաժեն տարածություն[1]։ Քաղաքի շրջագծում ամփոփված այդ ամբողջ տերիտորիան ըստ 1863 թ. հաշվումների՝ կազմված էր տասի հասնող տարբեր կատեգորիայի մասերից՝ հերկվող տարածություններից, այգիներից, բանջարանոցներից, տների գրաված տարածություններից (որոնք բոլորը միասին կազմում էին 2656 դես. 1327 քառ. սաժեն), աղյուսի և կրի գործարանների գրաված շրջանից (1 դես.), արոտավայրերից (1146 դես. 1249 քառ. սաժեն), քարքարոտ և ավազոտ տարածություններից (573 դես. 2361 քառ. սաժեն), ժայռոտ տարածություններից ու խորխորատներից (175 դես. 565 քառ. սաժեն), Ջանդու ու Կրիա-բուլաղ գետերի և ջրանցքների գրաված տարածությունից (33 դես. 359 քառ. սաժեն), ինչպես և միջգյուղյա ու փոստային ճանապարհներից (15 դես. 1183 քառ. սաժեն[2], ընդ որում փոստային ճանապարհների ընդհանուր երկարությունը քաղաքային շրջանում հասնում էր 17 վերստի)[3]։

Քաղաքային ստատիկանական վարչության հաղորդած տեղեկությունների համաձայն, 1865 թվականին Երևան քաղաքի բոլոր կարգի շենքերի թիվը հասել է ավելի քան 4500-ի։ Այդ բոլոր շենքերը բաժանվում էին հետևյալ խմբերի ու կարգերի[4].

[1] «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 448։ Քաղաքային ստատիկանական վարչության 1865 թ. գեկուցագրում քաղաքի արտաքին շրջագծի մեջ ամփոփված ամբողջ տերիտորիան ցույց է տրված 4514 դես. 868 քառ. սաժեն (տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 24), որից 153 դեսյատին 1584 քառ. սաժենը գրավում էին բերդն ու քաղաքը, 29 դեսյատին 2299 քառ. սաժենը՝ գետերն ու ջրանցքները, 1648 դեսյատին 1641 քառ. սաժենը՝ ճանապարհներն ու գերեզմանոցները, իսկ մոտավորապես 3641 դեսյատինը՝ պիտանի զանազան տարածություններն (նույն տեղը)՝ այգիները, բանջարանոցները, հերկվող տարածությունները, արոտավայրերը, ինչպես և ոչ պիտանի տեղերը՝ քարքարոտ ու ավազոտ տարածությունները։

[2] Տե՛ս С. Зелинский, Город Эривань («Сборник мат. для опис. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 9—10)։

[3] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 28—29։ Ակս տվյալներից որոշ չափով տարբերվում են այն թվերից, որոնք մեր կողմից վկայակոչված են գյուղատնտեսական զբաղմունքների մասին խոսելիս։

[4] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 45—47։

1. Բնակելի տներ.

ա) Պետական	40	հատ[1]
բ) Մասնավոր	2904	»
գ) Եկեղեցապատկան և վանքապատկան	6	»
Ընդամենը	2950	հատ

2. Ոչ բնակելի շենքեր.

ա) Մասնավոր պահեստների և քարավանատների շենքեր	7	»
բ) Եկեղեցապատկան և վանքապատկան խանութներ	5	»
գ) Մասնավոր խանութներ	1533	»
Ընդամենը	1545	»

3. Բաղնիքներ.

ա) Մասնավոր	7	»
Ընդամենը	7	»

4. Եկեղեցիներ.

ա) Ռուսական	1	»
բ) Հայկական	6	»
Ընդամենը	7	»

5. Մզկիթներ 7 »

Ընդամենը 7 »

Իսկ ամբողջ քաղաքի բոլոր կարգի շենքերը միասին եղել են 4516 հատ։

Բացառությամբ եկեղեցիների, մզկիթների, բերդում եղած մի քանի շենքերի, մի շարք հարուստների տների և նոր կառուցված պետական պաշտոնական շենքերի, քաղաքի մյուս հազարավոր տները, խանութները, բաղնիքները և այլ կարգի շենքերը շատ

[1] Պետական շենքերի մեծ մասը պատկանում էր ռազմական գերատեսչությանը (տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 28—29)։

խղճուկ տպավորություն էին թողնում դիտողի վրա։ Դրանք կառուցված էին հում աղյուսից կամ ուղղակի կավի ցեխից մանր քարակտորների և դարմանի խառնուրդով։ Դրանք տիրապետող շինություններ էին ոչ միայն Երևանում, այլ նաև Երևանի նահանգի մյուս բոլոր քաղաքներում, բացառությամբ Ալեքսանդրապոլի, որտեղ ամենից վաղ սկսեցին շենքերը կառուցել Հայաստանի շինությունների պարծանքը կազմող տուֆով[1], որն աչքքան մեծ հաջողությամբ մշակվում էր գյումրեցի քարտաշ վարպետների ձեռքով։ Երևանի ավագ նոտարի կողմից արձանագրված և հաստատված առուծախսերին վերաբերող գործարքներից երևում է, որ հին Երևանի տների մեծագույն մասը եղել են խղճուկ հյուղեր, յուրաքանչյուրը 100/150—500/1000 ռուբլի արժողությամբ[2], իսկ խանութները ունեցել են էլ ավելի փոքր արժեք։

Քաղաքի արտաքին ընդհանուր տեսքը մնացել էր հինը։ Անփոփոխ էին մնացել նրա կեղտոտ, նեղլիկ և ծուռումուռ փողոցների մեծագույն մասը, ավերված տների փլատակները, ճահճապատ ու ապականված տարածությունները, փոշին, ցեխը, շենքերի արտաքին անհրապույր տեսքը և այլն, և այլն[3]։ Մի խոսքով, Երևանը շատ բաներով մնացել էր նաղաշ Հովնաթանի (XVII դարի երկրորդ կես, XVIII դարի առաջին քառորդ) «գովերգած» Երևանը։

Բայց և այնպես, պարսկական լծից ազատագրվելուց հետո, Երևանը զգալի փոփոխություններ է կրել և՛ իր արտաքին տեսքով, և՛ ներքին կառուցվածքով, և՛ թաղերի կազմով։ Այդ փոփոխությունները այժմյան աստիճանով հազքան էլ չնչին թվան, այնուամենայնիվ, իրենց ժամանակին որոշ դեր են խաղացել պարսկական ծանր տիրապետությունից ժառանգություն ստացած խղճուկ Երևանի բարեփոխման կյանքում։ Ուստի դրանք չեն կարող ուշադրության չարժանանալ։

Պարսկական տիրապետության շրջանում Երևան քաղաքի կառուցումներն ու նրա փողոցները պլանավորման չեն ենթարկ-

[1] «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, Эриванская губерния, էջ 192։

[2] Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ-ի 77-րդ ֆոնդի բազմաթիվ գործերը։

[3] Տե՛ս «Военно-статистическое обозрение Российской империи», т. XVI, ч. 6, Эриванская губерния, էջ 253—255, «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 71, С. Зелинский, Город Ериван («Сборник мат. для опис. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 8—9). Гр. Уварова. Кавказ, путевые заметки, էջ 192 և այլուր։



Երևան քաղաքի հատակագիծը, 1843 թ. (Հայկական ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 94)։

վել։ Այստեղ շինարարական գրեթե բոլոր աշխատանքները կատարվել են կամայական կերպով, առանց պլանի ու սիստեմի։ Քաղաքում գոյություն չեն ունեցել տեխնիկներ, ճարտարապետներ կամ քաղաքի ընդհանուր շինարարության վրա հսկող այլ պաշտոնյաներ։ Պարսկական լծից ազատագրվելուց հետո սկզբնական շրջանում՝ ավելի քան երկու տասնյակ տարի, քաղաքի պլանավորման և կատարվող շինարարություններն այդ պլանին հարմա-

բնակելու գծով ոչինչ չի կատարվում, հինը՝ պարսկականը, նույնությամբ շարունակվում է։ 50-ական թվականների սկզբներից, երբ Երևանը արդեն դարձել էր նահանգական քաղաք, որոշ հոդ է տարվում այն մի ընդհանուր պլանի ենթարկելու և նոր կառույցների այդ պլանով կատարելու համար։ Քաղաքի պլանավորման փորձերը սերտորեն կապված էին այն բանի հետ, որ նա 40-ական թվականների վերջերից դարձել էր նահանգական քա-



Երևան քաղաքի առաջին՝ գործող կամ հեռանկարային հատակագիծը, 1856 թ. (Երևանի պատմության թանգարան)։

դաք։ Ցարական պետության նահանգական քաղաքները, իբրև վարչական կենտրոններ, մյուս՝ ավելի ցածր կարգի վարչական կենտրոնների ու արտաշատատային քաղաքների նկատմամբ շինարարության և այլ առումներով՝ մի փոքր ավելի արտոնություններ ունեին։

Երևանի վերաշինման առաջին հատակագիծը կազմվել է 50-ական թվականներին և հաստատվել 1856 թ. դեկտեմբերի 23-ին[1]։

[1] Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 273, 274 և ուրիշ տեղերում։

Այդ պլանը մասնակի փոփոխություններով հետագայում արտացծվել է մի շարք անգամ, սակայն հիմնականում մնացել է նույնը։ Դրա հիման վրա հետագայում՝ մասնավորապես 90-ական թվականներին, երբ համեմատաբար արագ կերպով զարգանում էր քաղաքի տնտեսական ու կուլտուրական կյանքը, անց են կացվում նոր փողոցներ։ Յուրաքանչյուր դեպքում պլանի մեջ մասնավոր կամ ավելի ընդհանուր կարգի փոփոխություններ մտցնելու համար՝ անհրաժեշտ էր նահանգապետի միջոցով հատուկ թույլտվություն վերցնել՝ կովկասի փոխարքայության համապատասխան վարչությունից[1]։ Քաղաքի հեռանկարային (գործող) հատակագիծը կազմելու հետ միասին սկսեցին աստիճանաբար որոշ չափով այդ պլանին հարմարեցնել քաղաքի կենտրոնական մասը։ Հետագայում, հատկապես 90-ական թվականներին, երբ կառուցողական աշխատանքները համեմատաբար ավելի լայն թափ ունեին, և քաղաքի եկամուտները կազմում էին ավելի մեծ գումարներ, նոր հատակագծով նոր ուղիղ փողոցներ անցկացնելու համար գոյալի միջոցներ էին ծախսվում պլանի տակ ընկնող այգիներն ու տները մեջտեղից հանելու համար[2]։ Հատակագծի մեջ նշված էին փողոցների ուղղությունները, լայնությունները, հրապարակները, զբոսայգիները և այլն։ Եթե նախորդ ժամանակների համեմատությամբ քաղաքի նախագծի երևան գալը պետք է դիտել իբրև առաջադիմական քայլ քաղաքի բարեկարգման ու կանոնավորման բնագավառում, ապա դրա հետ միաժամանակ չպետք է մոռանալ, որ այդ հատակագծի լրիվ իրականացումը կարող էր տալ ոչ ավելի ոչ պակաս՝ ցարական գավառական, անշուք և կոմունալ տարրական հարմարություններից զուրկ մի քաղաք։ Սակայն նույնիսկ այդ համեստ հատակագիծն էլ իրականացվեց ոչ լիովին։ Նոր կառուցումներ կատարելիս՝ շատ դեպքերում կամայական կերպով արհամարհվում էին քաղաքի գլխավոր հատակագծի պահանջները՝ ինչպես նոր կառուցվող շենքի տեղի, այնպես էլ նրա արտաքին ձևավորման հարցում։

50—70-ական թվականներին Երևանում, այնուամենայնիվ, հաստատված ընդհանուր հատակագծի հիման վրա անց են կացվում մի քանի տասնյակի հասնող նեղլիկ, բայց համեմատաբար ուղիղ փողոցներ։ Երևանի նահանգի վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների համաձայն՝ 1863 թ. Երևանում երկայ-

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 273, 274 և ուրիշ տեղերում։

[2] Նույն տեղերը։



Երևան քաղաքի հատակագիծը, 1865 թ. (Երևանի պատմության թանգարան)։

նակի ու լայնակի ուղղությամբ ձգվող փողոցների թիվը հասնում էր 34-ի, գլխավոր հրապարակում ստեղծվել էր համեմատաբար լավ հարմարանքներով այգի, կառուցվել էին զգալի քանակությամբ մասնավոր տներ, որոնք իրենց արտաքին տեսքով հներից մեծապես տարբերվում էին, շարունակվում էր քաղաքի հետագա պլանավորումը, կառուցվել էին մի քանի շատրվաններ, ջրավազան[1] և այլն, և այլն։ Բայց այդ բոլորը շատ չնչին էին, ինչպես խոստովանում է հենց ինքը՝ նահանգական վիճակագրական կոմիտեն, քաղաքի մեծագույն մասը մնացել էր վաղեմի վիճակում[2]։

Առաջին փողոցը, որն անցկացվեց 1856 թ. հաստատված՝ քաղաքի գլխավոր պլանով, դա Աստաֆևյան (Երևանի նախկին նահանգապետ Աստաֆևի անունով, որը հայերի կողմից սովորաբար կոչվել է Աստաֆյան, այժմ՝ Աբովյան) փողոցն է[3]։ Այդ փողոցը անց է կացվել քաղաքի ամենաանբարեկարգ և դժվար անցանելի մասով, որտեղ քաղաքի մյուս մասերի նման բարդ հյուսվածք էին կազմում նեղ, ծուռտումուռ նրբանցքներն ու ոռոգման առուները՝ դժվարացնելով երթևեկությունը նույնիսկ հետիոտն

[1] «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 71։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը, на 1874 год, отд. II, էջ 172։ Տե՛ս նաև Ю. Яралов, Ереван, Москва, 1948, էջ 9։

մարդու համար։ Փողոցի երկարությունը եղել է մեկ վերստից մի փոքր ավելի[1], շաբաթը՝ մինչև 10—12 մետր։ Փողոցի տակ ընկնող մասնավոր տների դիմաց հատուցել են կամ դրամով և կամ տնատերերին հողեր հատկացնելով բերդի շրջանում՝ նրա բուն տերիտորիայում և արևելյան պարսպի մոտակայքում։ Փողոցի կառուցմամբ քաղաքի այդ մասը համեմատաբար բարեկարգվում է և երթևեկության համար դառնում հարմար[2]։ Փողոցն անց է կացվել ոչ միանգամից կամ կարճ ժամանակամիջոցում։ Նրա աշխատանքները, սկսելով 50-ական թվականներին, շարունակվել են մինչև 70-ական թվականների կեսերը։ Մոտ 20 տարի տևած ժամանակամիջոցում Աստաֆևյան փողոցի երկու կողմերում կառուցվում են մի շարք նոր շենքեր, որոնք հների համեմատությամբ ավելի հարմարավոր և լավ էին։ Սակայն այդ «նոր ու լավ» շենքերը նույնիսկ գրավիչ ոչինչ չունեին, բացի երկու ուղիղ շարքով դասավորված լինելը. դրանք մեծ մասամբ միհարկանի, ցածրիկ և անշնորհք շարված պատերով շենքեր էին, որոնք ժամանակակից քաղաքային տիպի շենքեր չէին կարող համարվել։

Դեպի Դիլիջան և Քիֆլիս տանող խճուղու սկիզբը Երևանի հյուսիսային ծայրամասում (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

[1] «Кавказский календарь на 1874 год», отд. II, էջ 172։

[2] Նույն տեղը։

70-ական թվականներից, ըստ նշված հատակագծի, որոշ աշխատանքներ են սկսվում նաև Բեհբութովի (այժմ՝ Սվերդլովի), Նահանգական (այժմ՝ Ալավերդյան), Թարխանովի (այժմ՝ Կնունյանցի և Պուշկինի փողոցներ), Ցարական (այժմ՝ Սպանդարյան) փողոցների ուղղությամբ և Տեր-Ղուկասով (այժմ՝ Նալբանդյան) ու Թարխանով փողոցների հատման կետում:

Հողաշափ ոմն Վեյտկոյի կողմից 1870 թ. քաղաքի գլխավոր հատակագծի հիման վրա կազմված է նշված փողոցների և մի հրապարակի մասնակի հատակագիծը, որն, ըստ նրա հայտարա-



Բնակելի տներ Շահար Քաղամասում (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ):

թության, ենթակա էր իրականացման[1]: Սակայն արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ ինչպես դրանք, նույնպես և ուրիշ մի շարք փողոցներ այն ժամանակվա իմաստով բարեկարգվել են ավելի ուշ՝ 90-ական թվականներին և XX դարի սկզբներին: Այնպես որ, դրանք այդ ժամանակներում միայն անունով էին փողոցներ, իսկ իրականում՝ նեղ ու դժվարանցանելի նրբանցքներ էին: Քաղաքի համեմատաբար բարեկարգ փողոցները երկուսն էին՝ Ատաֆլյանը և Նահանգականը:

[1] ՀՍՍՌ ՓԿՊԱ, ֆ. 117, գ. 274, թ. 96:

Քաղաքում կատարվող նոր կառուցումները կարելի է բաժանել երեք խմբի՝ պետական, եկեղեցական և մասնավոր: Մեզ հետաքրքրող այդ շրջանում եկեղեցական շինարարություն գրեթե չի լինում: Քաղաքի նոր եկեղեցու շինարարությունը, որ սկսվել էր 70-ական թվականներին, ավարտվեց շատ ուշ՝ 1900-ական թվականներին: Սակայն ծավալուն չէին և մյուս կարգի՝ պետական ու մասնավոր շինարարությունները: 30—40-ական թվականներին բերդում կատարված պաշտպանական բնույթի և զորանոցների կառուցումներից հետո, ընդհուպ մինչև Երևանի նահանգի կազմակերպումը, քաղաքում պետական միջոցներով շինարարություն չի կատարվում: Պետական շենքեր կառուցելու համար առաջին անդամ հարց է հարուցվում 50-ական թվականների սկզբներից, երբ հարկ է լինում նոր կազմված Երևանի նահանգի նահանգապետին, նահանգական վարչությանն ու դատարանին, քաղաքային ոստիկանական վարչությանը և գավառական վարչությանը ապահովելու վարչական հարմար շենքերով: 1851 թվականին այդ շենքերի կառուցման համար նահանգական վարչության և մասնավոր մարդկանց միջև պայմանագրեր են կնքվում, և վերջիններիս տրամադրելով նոր կառուցվող շենքերի հատակագծերը, պարտավորեցվում է նրանց՝ դրանք շահագործման հանձնել սահմանված ժամկետներում: Նահանգական վարչությունը, Կովկասի փոխարքայի հանձնարարությամբ, պարտավորվում է կատարվող շինարարության գիմաց շինարար կապալառուներին 25 տարվա ընթացքում յուրաքանչյուր տարին տրամադրել 2400 ռուբլի[2]: Կովկասի փոխարքա Մ. Ս. Վորոնցովի միջնորդությամբ՝ քաղաքում նոր կառուցվող վարչական շենքերի համար տրամադրվում է 1119 քառ. սաժեն հողային տարածություն, իսկ իր տրամադրության տակ եղած միջոցների հաշվին նա վարկավորում է կառուցողներին[3]:

50-ական թվականներին պետական-շինարարական մյուս ձեռնարկումը Անգլիական կոչված այգու տնկումն էր: Այդ այգին (այժմ՝ 26 Կոմիսարների անվան այգի) ընկնում էր քաղաքի Դամիրբուլաղ թաղամասում: Նրա տեղում նախկինում տարածված էր մի հսկայական ճահիճ, որն իր գոյությամբ ապականում էր շրջապատը և բացասաբար ազդում բնակչության առողջապահական վիճակի վրա: Առուներ անցկացնելու և փոսեր փորելու միջո-

[1] ԱԿԱԿ, т. X, էջ 883:
[2] Նույն տեղը:
[3] Նույն տեղը:

ցով ցամաքեցնում են Ճահճի մեծագույն մասը և վերածում այգու։ Ժամանակակիցների նկարագրություններից երևում է, որ պետական Անգլիական այգին, որը կապալով էր տրվում մասնավոր մարդկանց, գտնվում էր խիստ անբարեկարգ ու անմաքուր վիճակում։ Նույն այդ տասնամյակում շուկա-հրապարակում կառուցվում են մի քանի խանութներ, որոնք գտնվում էին Անգլիական այգու դիմաց, նրա և բերդի միջև։ Թե՛ այդ խանութների և թե՛ Անգլիական այգու հատակագծերը նույնպես հաստատված էին Կովկասի փոխարքայի կողմից[1]։ Ընդհանրապես, առանց փոխարքայի թույլտվության ոչ ոք իրավունք չուներ պետական միջոցների հաշվին սկսելու թեկուզ և ամենաանշնչին շինարարական աշխատանք։

Վերջին օբյեկտը, որը նախատեսված էր կառուցել մեզ հետաքրքրող շրջանում, պետական միջոցներով, եղել է բանտը։ Ըստ աղբյուրների տվյալների, 1873 թ. Երևանում բանտ կառուցելու համար նախատեսվում է բաց թողնել ավելի քան 13 800 ռուբլի[2]։

Ահա այն բոլորը, ինչ կատարվել է Երևանում՝ պետական միջոցներով ավելի քան 50 տարվա ժամանակամիջոցում։ Իսկ այդ բոլորը, միասին վերցրած, ներառյալ և 30—40-ական թվականներին բերդում կատարված կառուցումները, ցարական դանձարանի վրա նույնիսկ 100 000 ռուբլի չի նստել, այսինքն՝ միջին հաշվով յուրաքանչյուր տարվա համար 2000 ռուբլուց էլ պակաս։ Ընդորում նշված բոլոր կառուցումները՝ բացառությամբ նոր փողոցների անցկացնելն ու Անգլիական այգու կառուցումը, կատարվել են ստրատեգիական և վարչա-քաղաքական նպատակներով։

Քաղաքի բարեկարգման և նրա հին կառուցվածքների վերանորոգման վրա ծախսվող միջոցները անհավատալի չնչին էին։ Քաղաքային ոստիկանական վարչության տեղեկագրի համաձայն, 1844 թվականին քաղաքի բարեկարգման համար բնդամենը ծախսվել է 100 ռուբլի, այն էլ միայն քաղաքային շրջագծի մեջ եղած կամուրջների և ճանապարհների վրա[3]։ 1863 թ., երբ ըստ նահանգի՝ քաղաքի եկամուտները կազմել են 25 583 ռուբլի, քաղաքի արտաքին բարեկարգման վրա դրանից ծախսվել է

[1] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 442)։

[2] «Кавказский календарь на 1874 год», отд. II, էջ 172։

[3] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 225ա, թ. 33—34։

միայն 1115 ռուբլի՝, իսկ 1880 թվականին՝ 4793 ռուբլի, այն դեպքում, երբ այդ նույն թվականին միայն ոստիկանական վարչության և քաղաքային վարչության վրա կատարված ծախսերը՝ աշխատավարձ, վառելիք և այլն, կազմել են ավելի քան 34 420 ռուբլի[2]։

Երևանում խիստ սահմանափակ են եղել ոչ միայն պետական քաղաքային շինարարության և քաղաքի բարեկարգման աշխատանքները, այլև մասնավոր շինարարությունները։ Ժողովրդի մեծագույն մասի ծայր աղքատությունը մեծապես արգելակում էր շինարարությանը։ Ականատեսների վկայությամբ, քաղաքի բնակչության ճնշող մասի տները ապրելու համար պիտանի չէին՝ բառիս իսկական իմաստով։ Քաղաքային ոստիկանական վարչության զեկուցագրի համաձայն, օրինակ՝ 1865 թվականի ընթացքում Երևանում բնդամենը կառուցվել է մասնավոր չորս տուն[3], այն էլ հում աղյուսով և անկանոն մաներ քարերով։ Մասնավոր շինարարությունը դրանից ավելին չի եղել նաև 1865 թ. նախորդած և հաջորդած տարիներին, եթե բացառելու լինենք Խանբադում և քաղաքի այլ մասերում Թուրքմենչայի պայմանագրին հաջորդած տարիներին ներգաղթողների կողմից կատարված համեմատաբար արագ ու լայն թափի շինարարությունը, որը կատարվում էր կարիքից ելնելով՝ հարկադրաբար։

Մասնավոր մաներ շենքերի համար հատուկ նախագծեր ու հատակագծեր չէին կազմվում։ Դրանք անմիջականորեն կառուցվում էին որմնադիրների, իսկ երբեմն էլ շինարարական արվեստից ընդհանրապես շատ քիչ գաղափար կազմող մարդկանց կողմից։

Պետական և հարուստ մարդկանց շենքերի վրա որպես շինանյութ սովորաբար օգտագործվում էին քարը, թրծած աղյուսը և կիրը, իսկ մյուս բոլոր շենքերը կառուցվում էին անկանոն մաներ բարակտորների ու ցեխի խառնուրդով, հում աղյուսով և կավով։

Կովկասի փոխարքայությունում 1863 թվականին հաշվվում էին 34 տարբեր կարգի՝ նահանգական, գավառական, նավահան-

[1] «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 69։

[2] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 39)։

[3] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 28—29։

գրատային և արտաշատատային քաղաքներ[1]։ Տասը տարվա ընթացքում (1863—1873 թթ.) վարչական փոփոխությունների հետևանքով փոխարքայության քաղաքների թիվը ավելանում է 7-ով և հասնում 41-ի[2]։ Տարբեր կարգի քաղաքներում շինարարություններ տարբեր ծավալ։ Նահանգական քաղաքների շինարարությունն իր բնույթով և ծավալով նշված ժամանակաշրջանում շատ քիչ էր տարբերվում Երևանի շինարարությունից։

Կովկասյան փոխարքայության մեջ ամենամեծ թափի շինարարություններ կատարվում էր նրա կենտրոնում՝ Թիֆլիսում։ 60—70-ական թվականներին Թիֆլիսը հարստանում է նորանոր շենքերով։ Այդ ժամանակների Թիֆլիսի կառուցվածքներից հայտնի են փոխարքայի զբաղեցրած շենքը, դասական գիմնազիայի, հիվանդանոցի, բուժակների դպրոցի և այլ շենքեր։ 1862 թ. Թիֆլիսում մասնավոր կառուցվածքների թիվը եղել է 7895, իսկ 1872 թ. հասել է 9047-ի։ Այդ տարիներին Քուռ գետի վրա կառուցվել են երկաթե երկու կամուրջ, քաղաքի փողոցներում և հրապարակներում խճապատվել է 95 753 քառ. սաժեն տարածություն, պարսպապատվել են կանոնավոր մայթեր և այլն[3]։ Այնպես որ, թե՛ Երևանի և թե՛ Կովկասի մյուս նահանգական քաղաքների շինարարությունը, համեմատելով փոխարքայության կենտրոնում կատարվող շինարարության հետ, էլ ավելի խղճուկ տպավորություն է թողնում։

Երևանում հասարակական վայրերը՝ հրապարակները, այգիները, ինչպես և բաղնիքները գտնվում էին անմխիթար վիճակում։ Դրանք ոչնչով չէին բարեփոխվել պարսկական տիրապետության ժամանակաշրջանի համեմատությամբ։ Բոլոր կարգի հրապարակների թիվը հասնում էր 6-ի, որոնցից մեկը՝ Նոր հրապարակը, ձևավորվել էր 50—60-ական թվականներին՝ քաղաքի 1856 թվականի նախագծման համաձայն։ Մյուս հրապարակները՝ գլխավոր շուկա-հրապարակը, Ֆախի մզկիթը և այլն[4] ժառանգություն էին մնացել նախորդ ժամանակներից և մեզ հետաքրքրող շրջանում դրանցից միայն մի քանիսը (օրինակ՝ գլխավոր շուկա-հրապարակը) ենթարկվել էին բարեփոխման, մնացածները մնացել էին նախկին վիճակում։

[1] «Кавказский календарь на 1874 год», отд. III, էջ 161։
[2] Նույն տեղը, էջ 161—163։
[3] Նույն տեղը, էջ 166—168։
[4] «Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 465, на 1866 год. отд. III, էջ 71 և այլուր։

Քաղաքը 70-ական թվականների վերջերին ունեցել է երեք գրոսայգի, որոնցից մեկը եղել է նորաստեղծ Անգլիական այգին։ Վերջինս համարվում էր քաղաքի ամենաօրինակելի գրոսայգին։ Սակայն արխիվային նյութերը ցույց են տալիս, որ նա օրինակելի ոչինչ չուներ։ 1891 թ. վերաբերող մի փաստաթղթում ասված է այն մասին, որ Անգլիական այգին գտնվում է բարձիթող ու



Ֆախի մեչետի ընդհանուր տեսքը (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

գեղատես վիճակում, որ կապալառուն ոչ մի հոգ չի տանում գոնե նվազագույն չափով այն կանոնավորելու ուղղությամբ[1]։ Գրոսայգիներում տնկված ևս եղել չինարիներ, բարդիներ, հացենիներ և այլն։

Նախորդ ժամանակների նման, բնակչության համար զբոսատեղի և հանգստի վայրերը շարունակել են մնալ մզկիթների ու եկեղեցիների բակերը, որոնք գրոսայգիներին ոչնչով չէին զիջում։

30-ական թվականներին քաղաքում կային հասարակական 9 բաղնիք[2], իսկ 1863 թվականին՝ 7 բաղնիք[3]։ Դրանք բոլորն էլ ժառանգություն էին մնացել պարսկական տիրապետության շրջանից

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 260, թ. 18։
[2] Обозрение российских владений за Кавказом, ч. IV, էջ 291։
[3] «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 62։

և գտնվում էին սանիտարական ամենավատ պայմաններում։ Պարադոքսային չպետք է համարել այն երևույթը, որ դրանք ժողովրդի մաքրության ու առողջության նպատակներին ծառայելու փոխարեն դարձել էին կեղտի ու հիվանդությունների տարածման օջախներ։

Չնայած՝ պարսկական տիրապետության շրջանի հետ համեմատած՝ քաղաքում մտցվել էր որոշ կարգ ու կանոն, և ոստիկանությունը պայքարում էր լոքինների վերացնելու համար, այնուամենայնիվ, քաղաքացիները մշտապես գտնվում էին անապահով վիճակում։ Մթնելուց հետո քաղաքն ամբողջովին սուզվում էր խոր խավարի մեջ։ Ողորմելի վիճակում էր գտնվում քաղաքի լուսավորման գործը, որը կապալով տրվում էր մասնավոր մարդկանց։ Ըստ ավյալների, 1863 թ. քաղաքի փողոցներում և հրապարակներում կար ընդամենը 41 լապտեր[1], իսկ 1880 թվականին դրանց թիվը հասնում է 100-ի[2]։ Բնական է, որ մի քանի տասնյակ լապտերներով հնարավոր չէր լուսավորել մեծ տարածության վրա փռված և այգիների մեջ թաղված քաղաքը։ Այդ լապտերները նվազագույն չափով չէին կարող լուսավորել նույնիսկ քաղաքի կենտրոնական մի փոքր մասը։ Էլ չենք խոսում այն մասին, որ կապալառուի անհոգության և քաղաքում վխտացող քրեական տարրերի խուլիգանական արարքների պատճառով լապտերների մի մասը շարունակ չէր գործում։

Քաղաքում գոյություն չունեին հասարակական օգտագործման համար գործող փոխադրական միջոցներ։ Մի թաղից մյուս թաղը, քաղաքի մի ծայրից մյուսը մարդիկ ստիպված էին գնալ կամ ձիով, եթե այդպիսին կար, կամ հետիոտն։ Քաղաքում ոտքով շարժվելը, մանավանդ գիշերները, կապված էր մեծ դժվարությունների ու վտանգների հետ։ Փողոցներում ճահճացած ջրերը, խիտ ցանց կազմող առուները, որոնք ամեն քայլափոխում կտրում էին փողոցները և անցնում մյուս կողմը, մայթերի բացակայությունը մի-մի արգելքներ էին ոտքով շարժվող մարդկանց համար, իսկ գիշերվա պահին, երբ մութն իջնում էր քաղաքի վրա, երթևեկությունն առհասարակ մեծ վտանգների հետ էր կապված, որովհետև նշվածներին գումարվում էր նաև լոքինների հարձակման վտանգը։

Պարսկական լծից ազատագրվելուց հետո, Արևելյան Հայաս-

[1] «Кавказский календарь на 1866 год», отдел III, էջ 71։

[2] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 38)։



«Ջանտաղիա» բաղնիքի արտաքին տեսքը, ս. Սարգիս եկեղեցու մոտ (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

տանի ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող չեզոնանգքների շրջանում ցարական կառավարության նախաձեռնությամբ բնակեցվում են ազանդավորներ՝ մալականներ, դոխոբուրներ և այլն։ Մալականներից մի շարք ընտանիքներ էլ բնակություն հաստատում Երևանում։ Այստեղ նրանք հաստատվում են բերդի և Դամիրբուլաղ թաղամասի միջև մի առանձին փողոցում, որը նրանց անունով սկսեց կոչվել Մալականների փողոց (այժմ՝ Կարմիր Բանակի)։ Մալականները հիմնականում կառապաններ էին։ Նրանք ունեին իրենց սեփական ձիերն ու կառքերը, որոնցով քաղաքում և քաղաքից դուրս բեռներ փոխադրելուց բացի, զբաղվում էին նաև քաղաքի ներսում մարդկանց տեղից տեղ տանելով։ Քաղաքում մալականների կառքերի երթևեկությունը սկսվել էր 50-ական թվականների վերջերից[2] և ամբողջովին պատահական բնույթ էր կրում։ Քաղաքում նրանց համար գոյություն չունեին ո՛չ սահմանված երթուղիներ, ո՛չ որոշակի ժամեր, ո՛չ քաղաքի որևէ հիմնարկի ու նրանում միտև փոխադարձ պայմանավորվածություն։ Մալականների կառքերը քաղաքի այս կամ այն մասում

[1] Յ. Գ. Մրվանձտյանց Աշակերտ ժ. վ. Վարագա, Երևան քաղաք («Արարատ» ամսագիր, Վաղարշ, 1861 հ. 4)։

[2] Նույն տեղը։

երևում էին միանգամայն պատահական կերպով, միայն պատեհ առիթներով։ Այնուամենայնիվ, դրանց ակտիվությունը որոշ չափով մեղմացնում էր հասարակական օգտագործման համար փոխադրամիջոցների բացակայությունն ու հույժ կարիքը։

Երևանի խմելու ջրի հարցը այս ժամանակաշրջանում նույնպես մնում էր լուծված։ Առաջվա նման քաղաքի բնակչության խմելու ջրի աղբյուրները մնում էին Զանգու և Կըրխ-բուլաղ գետերը, Սոգութլուի աղբյուրները և ջրհորները, որոնց թիվը 1851 թ. 196 էր[1], իսկ 1880 թ.՝ 30[2]։ Դրանց ջրերը խմելու համար համարվում էին ոչ բարձր որակի։ Դրանք պարունակում էին օրգանական մնացորդներ և բացասաբար էին ազդում առողջության վրա։

Քաղաքի բնակչությունը, ինչպես նախորդ ժամանակներում, այնպես էլ այժմ, շարունակ մտահոգվում է խմելու համար պիտանի ջուր ունենալու հարցով։ Սակայն նրա նյութական միջոցների սղությունը թույլ չէր տալիս այն ժամանակվա համար այդքան մեծ մի պրոբլեմի լուծումը, իսկ ցարական իշխանությունները շահագրգռված չէին գաղութային Հայաստանի նահանգական կենտրոն Երևանը ո՛չ բարեկարգելու և ո՛չ էլ նրա բնակչության առողջական վիճակի մասին անհանգստանալու։ Այնուամենայնիվ, բնակչության կարիքների ճնշման տակ և տեղում եղած ցարական աստիճանավորների առողջական վատ վիճակը, որը մասնավորապես պայմանավորված էր նաև խմելու ջրի անորակությամբ, նահանգական վարչությանը հարկադրում են մի փոքր ավելի մտահոգվելու՝ խմելու ջրի հարցը լուծելու համար։ Նահանգական վարչության միջնորդությամբ Կովկասի փոխարքա Ա. Ի. Բարյատինսկին 1857 թ. թույլատրում է քաղաքային եկամուտներից 8 հազար ռուբլի հատկացնել Կըրխ-բուլաղ գետից խողովակներով բերված ջուրը քաղաքի որոշ մասերին մատակարարելու համար՝ հատուկ շատրվան կառուցելու քաղաքային այգում[3]։ Նոր կառուցված այդ շատրվանը, որը 1857—1859 թթ. ընթացքում լիովին փակում է իր վրա ծախսված միջոցների հաշիվները, ջուր է մատակարարում գլխավորապես Դամիրբուլաղ թաղամասին։

Քաղաքային այգու նորակառույց շատրվանը հարցը չէր լուծում ոչ միայն այն պատճառով, որ նրա ջուրը, վերցված լինելով

[1] «Кавказский календарь на 1852 год», отдел III, էջ 438։

[2] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, էջ 15 և 38)։

[3] АКАК, т. XII, էջ 1323։



Բնակելի տներ Շահար թաղամասում, այժմյան Լենինի հրապարակի տեղում (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

տասնյակ կիլոմետրերի վրա գետնի մակերեսով հոսող Կըրխ-բուլաղ գետից, իր որակով այնքան էլ չէր տարբերվում քաղաքի մյուս ջրերից, այլ նաև նրանով, որ այդ և նախորդ շրջանում Կըրխ-բուլաղից հանված առուները հոսիվ էին բավարարում քաղաքի կենտրոնական մի քանի թաղերի։

Այս բոլորը դեռ ոչինչ, մի կերպ կարելի էր հանդուրժել, եթե խմելու համար նշված ջրերը քաղաքի փողոցներում չապականվին և տեղ հասնեին իրենց բնական վիճակով։ Խմելու և ոռոգելու ջրերը՝ բաց առուներով քաղաքի փողոցներով անցնելիս, ինչպես և ջրհորների ջրերը, բնակչության կողմից կեղտոտվում էին և դառնում վարակի աղբյուրներ։ Երևանի քաղաքային բժիշկ Լևոն Տիգրանյանցը, որը անցյալ դարի հայ բժշկության աչքի ընկնող գործիչներից մեկն էր, 1881 թ. փետրվարի 28-ին Երևանի Գայանյան օրիորդաց ուսումնարանի դահլիճում, հասարակության համար՝ «Երևանը առողջապահական կետից» թեմայով կարդացած դասախոսության մեջ բազմաթիվ փաստեր է բերում այն մասին, թե ինչպես քաղաքի բնակչությունն ինքն իր ձեռքով անհոդորեն ապականում է իր խմելու ջուրը և այն դարձնում վարակի բույն[1]։

[1] «Առողջապահական թերթ» (միամսյա հանդես), Երևան, 1881, օգոստոս-№ 2, էջ 47—63։

«Ես աչքովս տեսել եմ,— գրում է բժիշկ Լ. Տիգրանյանցը,— ինչպես պղինձներ, հիվանդների կեղտոտ, ապականված շորերը, զօրօրինակ սիֆով հիվանդի մուրտառած շորերը, հարինք կամ լուծ ունեցող երեխի տակի շորերը լվանում են ասվի մեջ։ Կանայք եթե լվացքը ասվի մեջ չեն լվանում, օրենք են արել, լվացքի ապանաջուրը անպատճառ ասվի մեջ ածել։ Ես տեսել եմ Երևանա առուների մեջ սատկած կատու, մուկ, շուն, որոնց մարմինը ջրի մեջ արդեն քրքրվել՝ մաշվել էր։ Պ.պ. կզարմանաք, եթե ասեմ, որ ինձ շատ անգամ պատահել է նաև տեսնել, որ արտաքնոցի կեղտատուփյունը թափել են ասվի մեջ։ Էլ ի՞նչ եք ուզում, էլ ինչպե՞ս ապացուցեմ ձեզ, որ Երևանա ջուրը բոլորովին ապականված է»[1]։

Բնակելի տներ Նազարովակի (այժմ՝ Ամիրյան) փողոցի վրա (Երևանի պատմության թանգարան)։

Այնուհետև, քաղաքային բժիշկը շարունակում է. «Քննենք մեր ջրհորները, և տեսնենք, թե դրանք ի՞նչ ջուր են տալիս քաղաքացուց... Ձեզ հայտնի է, որ ջրհորները ավելի խորն են, քան թե արտաքնոցները։ Ի՞նչ եք կարծում՝ արտաքնոցների շրջիկ և լուծվող մասերը ո՞ւր են գնում, ...խառնվում են ձեր ջրհորների ջրի հետ, որովհետև ձեր արտաքնոցները և ձեր ջրհորները շատ մոտ

[1] «Ազդարարական թերթ» (միամսյա հանդես), Երևան, 1881, օգոստոս, № 2, էջ 50։

են միմյանց, եթե նաև հեռու լինեին, այնուամենայնիվ արտաքնոցներից հոսում պետք է լինի դեպի ջրհորները»[1]։

Եթե վարակի այլ աղբյուրներ չլինեին էլ, Երևանի մեկյալ առուները բավական էին, որպեսզի քաղաքում հաճախակի տարածվեին վարակիչ հիվանդություններ։ Սակայն, Երևանում գանազան հիվանդությունների համար կային և այլ նպաստավոր պայմաններ, դրանք էին՝ բնակչության կենսամակարդակի անշափ ցածր լինելը, նրա հետամնաց կենցաղը, հիվանդանոցների բացակայությունը, քաղաքի անմաքրությունը, փոշու, մոծակի և ճանճի առատությունը, եղանակների սուր տատանումները և այլն, և այլն։ Երևանում և Անդրկովկասի մյուս քաղաքներում հաճախ մահաբեր համաճարակներ էին տարածվում հարևան Թուրքիայից և Պարսկաստանից, որտեղ խոլերան, ժանտախտը և մի քանի այլ հիվանդություններ միշտ անպակաս էին։

1828/29 թթ. սկսած մինչև 70-ական թվականները Երևանում 7—8 անգամ տարածվել է խոլերան (1830 թ., 1842 թ., 1845 թ., 1855 թ., 1865 թ. և այլն)։ Դրանք քաղաքից մեծ թվով զոհեր էին խլում և նույնիսկ պատճառ դառնում քաղաքի տնտեսական ու վարչական կյանքի ընդհատմանը մի քանի ամսով։ Նշված տասնամյակներում, Երևանում մի քանի անգամ տարածվել է նաև ժանտախտը, որն ավելի մեծ ահ ու սարսափի մեջ է դրել բնակչությանը։ Ուսումնասիրողները ենթադրում են, որ միայն 1829/30 թթ. Հայկական մարզում համաճարակ հիվանդությունների հետևանքով ոչնչացել է բնակչության մոտ 10%-ը[2]։ Իսկ տենդը, ծաղիկը, կարմրուկը, կոկորդացավերը և այլ հիվանդություններ անպակաս էին Երևանից։ Դրանք ևս պատճառ էին դառնում մեծ զոհերի։

Երևանի բնակչությունը ընդհանրապես երկարակյաց չի եղել։ Փոքր է եղել կյանքի միջին տևողությունը։ Սկզբնաղբյուրները

[1] «Ազդարարական թերթ» (միամսյա հանդես), Երևան, 1881, օգոստոս, № 2, էջ 51։

[2] Անդրկովկասում և Երևանում պարբերաբար կրկնվող համաճարակ հիվանդությունների (հատկապես խոլերայի և ժանտախտի) մասին տե՛ս АКАК, т. VII, էջ 226—230, 493, 495—496, т. IX, էջ 95—96, Военно-статистическое обозрение российской империи, т. XVI, ч. 6, է 191, «Кавказ» (թերթ), 1892, №№ 112 и 113, «Ազդարարական թերթ», 1881, օգոստոս, № 2, էջ 51—53, А. Д. Ерицов, История холерных эпемий в Закавказье, Тифлис, 1892, էջ 23—26, 37—39, 40—41, 81—86, 92—98, 104—105 և այլուր։ В Н. Иваненко, Гражданское управление Закавказьем, էջ 248 և այլուր։

վկայում են, որ Երևանում պառամյալ հասակի մարդիկ հազվադեպ էին պատահում։

Պարսկական տիրապետության շրջանում, ինչպես տեսանք, քաղաքում առողջապահական ոչ մի ձեռնարկություն չի եղել՝ ո՛չ հիվանդանոց, ո՛չ հոսպիտալ և ոչ էլ նույնիսկ դեղատուն։ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո, հատկապես 1829/30 թթ. համաճարակ հիվանդությունների ժամանակ, կովկասի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը հայտնի դարձավ, որ Հայկական մարզում տեղավորված զորամասերը և վարչական աշխատողները չեն կարող յոլա գնալ առանց դեղատնի։ 1830 թ. Պասկևիչը պաշտոնական հատուկ գրությամբ ներքին գործերի մինիստրին համոզում է Անդրկովկասի մի շարք քաղաքներում զինվորական դեղատներ բացելու անհրաժեշտությունը։ Նրա նախագծով մեկ դեղատուն էլ տրվում է Երևանին[1]։ Այդ դեղատունը, որը բացվում է 1830 թ. վերջերին, զինվորականներից բացի սպասարկում է նաև քաղաքացիներին[2], մանավանդ համաճարակների ժամանակ։

Երևանում քաղաքացիական դեղատուն բացվում է շատ ուշ, 70-ական թվականների սկզբներին, իսկ նույնատիպ երկրորդ դեղատունը բացվում է 80-ական թվականներին[3]։

Երևանի առաջին հիվանդանոցը եղել է զինվորական հոսպիտալը, որը կազմակերպվել է Երևանը պարսկական լծից ազատագրելուց անմիջապես հետո։ Այդ հոսպիտալը գտնվում էր բերդում և զբաղեցնում էր Հուսեյն խանի նախկին հարեմի շենքը։ Նրանում կարող էին տեղավորվել 250—300 մարդ։ Հոսպիտալն ուներ համապատասխան բժշկական աշխատողներ և հարմարություններ[4]։ Ամառվա շոգ ամիսներին՝ հուլիսի կեսերից մինչև հոկտեմբեր, հոսպիտալը տեղափոխվում էր Քանաքեռ գյուղը, մի մասնավորի տուն, որը մշտապես վերանորոգման էր ենթարկվում Երևանի կայազորի ինժեներական զորամասի կողմից[5]։ Յուրաքանչյուր տարի հոսպիտալը միջին հաշվով ընդունում և բուժ էր թող-

[1] АКАК, т. VII, էջ 224—225։

[2] «Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 440։

[3] Նույն տեղը, на 1874 год, отд. III, էջ 117, на 1877 год., отд. III, էջ 100, на 1883 год, отд. II, էջ 24։

[4] Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, էջ 295։

[5] Նույն տեղը։

նում ավելի քան մեկ ու կես հազար հիվանդ զինվորականներ։ Երևանի զինվորական հոսպիտալը շարունակում է գործել մինչև 60-ական թվականները։ Բերդի լիկվիդացումից հետո Երևանում հոսպիտալ այլևս չի հիշատակվում։ Երևանի նահանգում այդ ժամանակվանից հիշատակվում են Ալեքսանդրապոլի և Նախիջևանի հոսպիտալները[1]։

Երևանն ուներ իր քաղաքային բժիշկը, որից բացի՝ քաղաքում էին գտնվում նաև նահանգական բժիշկը, նրա օգնականը, Երևանի գավառական բժիշկը, ծաղիկ ծեծող երկու բուժքույրեր և այլն[2]։ Դրանցից բացի, քաղաքում շարունակում էին գոյություն ունենալ և անպաշտոն ու հատուկ կրթություն չունեցող զանազան կարգի բուժողները՝ բժիշկներ (лекарь), սափրիչներ (цырюльник), ակրաբուժներ, տատամներ[3]։

Անդրկովկասում առողջապահական հարցերի լուծումը խթան տացավ 1864 թ. ապրիլի 4-ին՝ Կովկասի բժշկական ընկերության կազմակերպմամբ։ Ընկերությունն իր առաջ նպատակ էր դրել՝ ա) ամեն կերպ օգնել բժիշկներին՝ կատարելագործվելու մասնագիտության մեջ և բարձրացնելու իրենց գիտական մակարդակը, բ) մշակել Կովկասի բժշկությանը վերաբերող հարցերը և գ) օգնել Կովկասում բժշկական գիտելիքների լայն տարածման և դրանք տեղացիների մոտ կիրառելու գործին[4]։ Ընկերությունը լուրջ ձեռնարկումներ է կատարում սիֆիլիսի, խոլերայի և այլ հիվանդությունների դեմ։ Ընկերության ձեռնարկումները, սակայն, շոշափելի արդյունքներ էին տալիս միայն Թիֆլիսում, որտեղ կենտրոնացած էին ընկերության ավելի մեծ թվով անդամներ։

Հիշատակված առողջապահական հիմնարկներն ու աշխատողները այնքան չնչին թիվ էին կազմում և միջոցներից այնքան զուրկ էին, որ ի վիճակի չէին նույնիսկ նվազագույն չափով բավարարելու բնակչության պահանջները։ Բնակչության բուժսպասարկման գործը Երևանում փաստորեն մնում էր չլուծված։ Քաղաքի առողջապահական վիճակը որոշ չափով բարելավելու համար 1880 թվականից եռանդուն գործունեություն է ծավալում

[1] Տե՛ս «Кавказский календарь на 1852 год», отд. V, էջ 659, на 1868 год, отд. IV, էջ 72—74։

[2] Տե՛ս «Кавказский календарь на 1851 год», отд. V, էջ 60, на 1852 год, отд. III, էջ 440, на 1877 год, отд. III, էջ 97։

[3] Նույն տեղը, на 1852 год, отд. III, էջ 440։

[4] Նույն տեղը, на 1868 год, отд. III, էջ 473։

քաղաքային բժիշկ Լևոն Տիգրանյանցը։ Նրա առաջարկով 1880 թ. սեպտեմբերի 19-ին Երևանում հիմնվում է «առողջապահական մշտական հանձնաժողով», որին հանձնարարվում է զբաղվել քաղաքի առողջապահական պայմանների բարելավմամբ։ Հանձնաժողովը սկսում է գործել 1881 թ. հունվարից։ Նա բաղկացած էր հինգ հոգուց՝ նախագահից (քաղաքային բժիշկ Լևոն Տիգրանյանց) և չորս անդամներից, որոնք նշանակված են քաղաքային դումայի ձայնավորներից։ Նախագահին և անդամներին տրված էին հատուկ ցուցումներ, որոնց հիման վրա էլ նրանք պետք է գործեին։ Հանձնաժողովի տրամադրության տակ էին համապատասխան աշխատողներ՝ ասնիտարներ, բանվորներ, սայլապաններ՝ իրենց սայլերով հանդերձ և այլն։ Հանձնաժողովի ու նրա տրամադրության տակ եղած անձնակազմի հիմնական պարտականությունը քաղաքի մաքրության գործի կազմակերպումն էր։ Գործը հաջող կերպով կազմակերպելու համար քաղաքը բաժանվում է առողջապահական երեք շրջանների (մասերի), յուրաքանչյուրի վրա նշանակելով հանձնաժողովի տրամադրության տակ եղած մարդկանցից համապատասխան աշխատողներ[1]։

Հայկական լեռնաշխարհի գրեթե բոլոր շրջաններում անձրևները լինում են տեղատարափ բնույթի, հաճախակի պատահում են կարկուտներ։ Այն շրջաններում, որոնց մակերևույթն ավելի լեռնային է, բուսածածկը համեմատաբար աղքատիկ, գարնանն ու աշնանը տեղատարափ անձրևի և կարկուտի պատճառով, մանավանդ այն դեպքում, երբ դրանք տեղում են միանգամայն չոր գետնի վրա, առաջանում են հեղեղներ, որոնք հսկայական վնաս են պատճառում և՛ գյուղատնտեսությանը, և՛ բնակավայրերին։ Երևանն էլ Հայաստանի այն բնակավայրերից մեկն էր, որը միշտ ենթակա էր Կըրխ-բուլաղի (Գետառի) հեղեղներին, որոնք երբեմն ունեցել են ահավոր հետևանքներ։ Մեզ հետաքրքրող շրջանում Երևանում եղած հեղեղներից երկուսը հսկայական վնասներ են պատճառել քաղաքին։ Դրանցից առաջինը, որի ընթացքն ու պատճառած վնասները բավական մանրամասնությամբ նկարագրված են «Կովկաս» թերթի համարներից մեկում[2], եղել է 1860 թ. հուլիսի 19-ին՝ ուժեղ անձրևի և կարկուտի պատճառով։ Թերթը հաղորդում է, որ հորդացած Կըրխ-բուլաղը, իր հետ բերելով հսկայական քարեր և ցեխ, ավերել է շատ տներ, ծածկել բազմաթիվ այգիներ ու բանջարանոցներ, քանդել այգիների պատերը և ահավոր գոռում-գոչումով իր բերվածքի մի մասը տարել հասցրել Զանգու։ Թերթի ասելով, քաղաքի ծերունիները այդպիսի ավերիչ այլ հեղեղ երեվանում չէին հիշում։ Նահանգական վարչության կողմից նշանակված հանձնաժողովի ամենահամեստ հաշիվներով, հեղեղի պատճառած վնասները հասել են մոտ 14.000 ռուբլու, որի մեծագույն մասը բաժին էր ընկնում Դամիրբուլաղ թաղամասին[3]։ Առանձնապես մեծ է եղել այգիներին ու բանջարանոցներին պատճառած վնասը։ Հեղեղի բերվածքներից դրանք մաքրելու և նորից բերքատու դարձնելու համար պահանջվում էին «շատ աշխատանք և ծախսեր», ինչպես ասված է Թերթի հաղորդագրության մեջ[3]։ Երկրորդ մեծ հեղեղը եղել է 1873 թ. օգոստոսի 14-ին։ Այս հեղեղը նույնպես իր բերվածքները լցրել է մի շարք այգիներ ու բնակարաններ՝ մեծ վնասներ պատճառելով դրանց, քանդել է պարիսպներ, տներ, քշել տարել է անասուններ, պատճառել մարդկային զոհեր[3]։

Հեղեղները Երևանում տարբեր պարբերականությամբ կրկնվել են բազմաթիվ անգամ։ Քաղաքի մեծագույն մասը տեղադրված է Կըրխ-բուլաղի հեղեղի բերած լիցքերի վրա։ Այնպես որ, մեր հիշատակած հեղեղները նրա ոչ թե շատ ուժեղ, այլ սովորականներից էին։ Հայկական ՍՍՌ Պետական Կենտրոնական արխիվի մի սովալ փորձի[4] բովանդակությունից երևում է, որ XIX դարում և XX դարի սկզբներին Երևանի բնակչությունը ձգտել է կանխել կամ մեղմացնել Կըրխ-բուլաղի հեղեղների պատճառած վնասները՝ նրա հունի ուղղությամբ որոշ կառուցումներ կատարելու միջոցով։ Սակայն այդ ձեռնարկումներից ոչ մեկը գործնական նշանակություն չի ունեցել։ Նահանգական վարչության և քաղաքային դումայի խոստումները մնացել են լոկ խոստումներ, իսկ աղքատ քաղաքացիներն էլ չէին կարող իրենց սուղ միջոցներով այդ ուղղությամբ որևէ գործ կատարել։

Երևանի համար մյուս բնական աղետը, որը զարձյալ մեծ վնասներ էր հասցնում նրա տներին ու այլ կառուցումներին, պարբերաբար կրկնվող երկրաշարժներն էին։ Պատմության ընթացքում Երևանում տեղի են ունեցել բազմաթիվ երկրաշարժներ, որոնցից

[1] «Առողջապահական թերթ», 1881, հուլիս, № 2, էջ 21—23։
[2] «Кавказ» (լրագիր), 1860, № 54։

[1] «Кавказ» (լրագիր), 1860, № 54։
[2] Նույն տեղը։
[3] Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. I, էջ 709։
[4] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, գ. 829։

մի քանիսը արտահայտվել են մեծ ուժով և քաղաքի համար ունեցել են աղետաբեր հետևանքներ։ Հայտնի է, օրինակ՝ 1679 թ. ուժեղ երկրաշարժը, որը սովորաբար կոչում են Երևանի երկրաշարժ և որի հետևանքով փլատակների է վերածվել քաղաքի մեծ մասը՝ նրա բնակելի տները, եկեղեցիներից ու մզկիթներից շատերը, կամուրջների մի մասը, քաղաքի մոտ գտնվող Նորք գյուղը և այլն։ Մեզ հետաքրքրող շրջանում արձանագրված երկրաշարժների մեջ համեմատաբար ուժեղ են եղել 1840 թ. հունիսի 20-ին տեղի ունեցած երկրաշարժը, որը մի քանի համեմատաբար թույլ ցնցումների ձևով արտահայտվել է նաև հաջորդ օրվա ընթացքում[1], և 1846 թ. հոկտեմբերի 19-ի երկրաշարժը, որի ուժի և պատճառած վնասների մասին որոշակի հիշատակություններ չեն արված[2]։ 1840 թ. երկրաշարժի հետևանքով քաղաքը կրել է նշանակալի վնասներ։ Սակայն նրա կենտրոնը Մասիսների շրջանն էր, որտեղ երկրաշարժի հետևանքով Մեծ Մասիսից մեծ քանակությամբ հող, քար և սառցե կտորներ՝ միախառնված և մի ցեխային ահռելի զանգված կազմած՝ իջնում է դեպի վար՝ դեպի լեռան ստորոտ։ Շարժվող այդ զանգվածը ամբողջովին ծածկում է Մասիսի ստորոտում գտնվող պատմական Ակոռի գյուղը՝ իր տակ թաղելով նաև նրա 1000 շնչից բաղկացած բնակիչներին[3]։

Կըրխ-բուլաղի հեղեղներն ու երկրաշարժները իրենց ավերիչ գործունեությամբ հին Երևանին մեծ վնասներ են պատճառել, առաջինները՝ քաղաքում և դեմի հոսանքի ուղղությամբ համապատասխան պաշտպանական կառուցվածքներ չունենալու, իսկ երկրորդները՝ քաղաքի տներն ու մյուս կառուցվածքները խախտուտ լինելու հետևանքով։ Առանձնապես շատ են տուժել Զանգվի և Կըրխ-բուլաղի վրայի եղած կամուրջները։

Քաղաքում եղել են մի քանի համեմատաբար մեծ և մի շարք փոքր կամուրջներ։ 1852 թ. քաղաքում ընդամենը հաշվվում էր 18 կամուրջ, որոնցից մեկը՝ ամենից նշանավորը, Զանգվի վրայի կամուրջն էր՝ կառուցված նախորդ ժամանակաշրջանում, իսկ մյուս 17-ը գտնվում էին Կըրխ-բուլաղի և ջրանցքների վրա՝ քաղաքի տարբեր մասերում։ Վերջիններից երկուսը համեմատաբար մեծ կամուրջներ էին և Թափաբաշ թաղամասը կապում էին Շահարի

[1] АКАК, т. IX, էջ 579։

[2] «Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 243, на 1859 год, отд. III, էջ 230։

[3] АКАК, т. IX, էջ 579։

հետ[1], իսկ մյուսները՝ էժանագին ու աննշան կառուցվածքներ։ 1865 թ. քաղաքում հիշատակվում են 23 կամուրջներ[2], որոնցից նշանավոր էին դարձյալ միայն 3—4-ը։

Ի տարբերություն պարսկական տիրապետության շրջանի, երբ Երևանը՝ խանության կենտրոն լինելով, վարչականորեն մի առանձին միավոր էր, այս շրջանում Երևանը համարվում էր միաժամանակ և՛ գավառի, և՛ Երևանի ՏահՀանգի կենտրոնը։ Քաղաքը, ինչպես ասվեց, կառավարվում էր ոստիկանական վարչության կողմից։ Վարչական առումով այն բաժանված էր երկու ոստիկանական տեղամասի կամ շրջանի, որոնցից առաջինը կոչվել է Շա-

Զանգու (Հրազդան) գետի շրջակայքը (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

հար, իսկ երկրորդը՝ Դամիրբուլաղ։ Դրանք իրենց հերթին մասնատվել են չորս թաղամասերի՝ Շահարի, Դամիրբուլաղի, Թափաբաշի և Ջոլմաքլիի[3], որոնք գոյություն ունեին և վարչական հասկացողություններ էին նաև խանական տիրապետության շրջանում։ Բնակչությունը սակայն տրադիցիոն կարգով քաղաքում առանձնացնում էր 7 թաղեր[4], որոնցից չորսը՝ Թափաբաշը, Շահարը, Դամիրբուլաղը և Դարաքենդ կամ Ջորագեղը գոյություն ունեին նաև

[1] «Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 448։

[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 28—29։

[3] К. Орловский, Эривань («Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 437)։

[4] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 10),

նախորդ շրջանում, իսկ մյուս երեքը՝ Նոր թաղը (Խանթաղը). Մալականի թաղը և Չոլմաքչին առաջացել էին Երևանը պարսկական լծից ազատագրվելուց հետո, առաջին երկուսը հայ և ռուս եկվոր բնակիչների շնորհիվ, իսկ երրորդը՝ նույնանուն գյուղը քաղաքին միացնելով։ Մալականների թաղը փաստորեն առանձին այնպիսի թաղ չէր, ինչպիսին մյուսներն են եղել, որոնք առանձին-առանձին բավական մեծ տարածություններ են զբաղել և քաղաքի ուրիշ մասերից բաժանվել են որոշակի սահմաններով։

Մի անսարան Կոնդ թաղամասից (Հայկական ՍՍՌ Ֆոտո-ֆոնո-կինո արխիվ)։

Ուստի երկու խոսք քաղաքի միայն երկու նոր թաղերի՝ Չոլմաքչիի կամ Նորքի և Նոր թաղի մասին։

Քաղաքում Չոլմաքչի թաղը եղել է ամենից բարձրադիրը։ Նա սահմանակցում էր հյուսիսում՝ Քանաքեռ և Ավան գյուղերի հողերին, արևելքում՝ Ջրվեժի հանդերին, հարավում քաղաքի Դամիրբուլաղ թաղամասին, իսկ արևմուտքում՝ Շահարին[1]։ Ընդարձակ էին գյուղի և նրա հանդերի զբաղած տարածությունները։ Նրա զբաղած տարածության շրջագծի երկարությունը հասել է մոտ 13 վերստի։ Գյուղի տեղում բնակավայր է եղել հնագույն ժամանակ-

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 51, թ. 40։

ներից, սակայն հետագայում այն՝ պատերազմների հետևանքով մի քանի անգամ ենթարկվել է ավերման։ Վերջին անգամ նա հիմնահատակ ավերման է ենթարկվել 1679 թ. երկրաշարժով, բայց նորից վերաշինվել է և բնակիչների կողմից անվանվել «Նորք»[2]։ Նորքի հողերը արգավանդ են, ջուրն՝ առատ և խմելու համար համեմատաբար պիտանի, որովհետև այն բերված է Կրբխ-բուլաղից։ Նրա բնակիչների մի մասը տեղացի էր, մի մասը՝ եկվոր։ Վերջիններս այնտեղ էին եկել Նախիջևանից, Գանձակից, Միղրուց, Ինչպես և Խոյի շրջանից[3]։ Նորքը, ինչպես ասվեց, քաղաքին է միաց-

Կոնդ թաղամասի բնդհանուր տեսքը (Երևանի պատմության թանգարան)։

վել 1837 թվականին[4]։ Աղբյուրների վկայություններից երևում է, որ այդ միացումը կատարվել է գյուղի աշխատավոր բնակիչների համառ պահանջներով, որոնք ձգտել են դրանով մի փոքր թեթևացնել իրենց վրա ընկած հարկային ծանր լուծը[4]։

Նորքում նշմարվում են ամենատարբեր ժամանակներին վերաբերող զանազան կառուցվածքների ավերակներ և նյութական

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 51, թ. 40։

[2] Նույն տեղը։

[3] Ս. Զելինսկին Նորքի միացումը քաղաքին դնում է ոչ թե 1837, այլ 1843 թվականին («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа» вып. I, отд. I, էջ 33)։

[4] Նորքի մասին տե՛ս նաև՝ Հովհ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջ 150; Մ. Լիփրանդ, Այրարատ, էջ 293; Ն. Շահոդիդ, Հին Երևանը, էջ 215—219։

կուլտուրայի մնացորդներ, որոնց մասին հավանաբար ավելի կլինի խոսել հետագայում։

Նոր քաղը ամբողջովին կառուցվել է Երևանը պարսկական լծից ազատագրվելուց հետո, Թուրքմենչայի պայմանագրով Պարսկաստանից ներգաղթած հայերի միջոցով։ Այս թաղը կառուցվել է նախկին խանբաղի տեղում, որը շրջապատված էր քաղաքի Շահար ու Կոնդ թաղամասերով և շուկայով[1]։ Հովհաննես Շահխաթունյանցը հաղորդում է, որ խանբաղը, նախքան գաղթականների գալը, ավելի քան 30 տարի գտնվում էր ամայի վիճակում։ 1828 թ. գաղթականները գալուց հետո՝ այն բաժանում են առանձին հողակտորների և տրամադրում նկվորներին, որպեսզի նրանք այդտեղ և՛ կառուցեն տներ, և՛ իրենց համար դնեն փոքրիկ այգիներ ու բանջարանոցներ։ Շուտով խանբաղը ամայի տարածությունից վեր է ածվում քաղաքի բնակեցված թաղի՝ իր այգիներով ու բանջարանոցներով հանդերձ։ Խանբաղի տեղում կառուցված այդ թաղը հետագայում հայտնի է դառնում Նոր թաղ անունով[2], որը վարչական առումով անմիջականորեն մտնում էր Շահարի կամ Հին թաղի մեջ՝ կազմելով նրա բաղկացուցիչ մասերից մեկը։

Քաղաքի հին թաղերի սահմաններն ու ընդհանուր կառուցվածքը մնացել էին նույնը։ Նրանցում եղած փոփոխությունները գրեթե բացառապես վերաբերում էին մի շարք փողոցների, որոնց մասին նշեցինք քաղաքի հատակագծման առնչությամբ և նոր կառուցված շենքերի մասին խոսելիս։ Մեզ հետաքրքրող շրջանում փոփոխությունները մեծ էին հատկապես քաղաքի հինավուրց բերդում, որի մասին անհրաժեշտ է ասել մի քանի խոսք։

Երևանի հինավուրց բերդը, ինչպես տեսանք, 30-ական թվականներին համարվում էր Անդրկովկասի առաջին կարգի բերդերից մեկը և իբրև այդպիսին՝ այստեղ պաշտպանական նպատակներով կատարում էին վերանորոգումներ ու նոր կառուցումներ։ Երևանը պարսկական լծից ազատագրվելուց հետո նրա բերդն ամբողջությամբ պետականացվեց։ 30-ական թվականների սկզբներին նրանում կային պետական 122 զանազան կառուցվածքներ՝ նախկին սարդարի հայելապատ դահլիճը, պահեստներ, զորանոցներ, բնակելի տներ, խանութներ և այլն, և այլն[3]։ Այստեղ զանազան կա-

[1] Հովհ. Շահխաթունյանց, Ատրպատականի կաթուղիկե էջմածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. երկրորդ, էջ 142։

[2] Նույն տեղը, էջ 142—146։

[3] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 133, գ. 8ա, թ. 59—72։

Երևանի բերդի գլխավոր նախագիծը, նախատեսվող նոր կառուցումների վերաբերյալ նշումներով հանդերձ (ՊԳՎԻԱ, ֆ. 349 (ո), օпись, 44, գ. 1546)։

ռուցումներ և վերանորոգումներ էին կատարվում և 50-ական թվականներին[1]։ 1852/53 թվականներին, ըստ բերդում անցկացված հաշվագրման, այնտեղ կային մեկ ռուսական եկեղեցի, ռազմական հոսպիտալ, որը զբաղեցնում էր երկհարկանի մի շենք՝ նախկին սարդարի հարեմի շենքը, ռազմական մեկ դեղատուն, նախկին սարդարի տուներ, ախոռներ՝ ձիերի համար, մի քանի

[1] Տե՛ս «Кавказский вестник» (լրագիր), 1853, февраль 12, № 7, էջ 3, 1854, апрель 15, № 15, էջ 3 և այլուր։

պինանոցներ, վառոդի մի քանի պահեստներ, զորանոցներ, հացահատիկի և այլ սննդամթերքների պահեստներ, բաղնիք, խանութներ և այլն[1]։ Այդ շենքերի մեծագույն մասը դադարել էր պարսկական տիրապետության շրջանից և այժմ պարբերաբար նորոգումների էր ենթարկվում[2]։ Բերդում էին տեղադրված մի քանի զորամասեր և մի քանի տասնյակի հասնող տարբեր տեսակի հրանոթներ[3]։



Զորանոցներ Երևանի բերդում, կառուցված՝ բաղաքը պարսկական լծից ազատագրելուց հետո (Երևանի պատմության թանգարան)։

Երևանի բերդը իր գոյությունը պահպանում է մինչև 1864 թվականը։ Այդ թվի մարտի 12-ին պաշտոնապես ենթարկվում է լիկվիդացիայի[4], որից հետո բնակիչներն աստիճանաբար քանդում են նրա պաշտպանական կառուցվածքները՝ պարիսպները, աշտարակները և այլն։ 1880-ական թվականներին մեկը մյուսի հետևից արդեն չքանում էին նախկին բերդի պաշտպանական կառուցվածք-

[1] Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, Эриванская губерния, էջ 286—288։

[2] Նույն տեղը, էջ 288։

[3] Նույն տեղը։

[4] «Кавказский календарь на 1868 год», отд. II, էջ 134, на 1874 год, отд. II, էջ 252 և այլուր։

ներից շատերը և սարգարի մոտյալ տիրապետությունը հիշեցնող շատ շենքեր[1]։ Բերդի գրաված շրջանը աստիճանաբար ձուլվում է քաղաքի հետ և դառնում նրա բաղկացուցիչ մասերից մեկը։

Երևանի բերդի պարիսպների մնացորդներից, բերդը լիկվիդացիայի ենթարկվելուց հետո (Երևանի պատմության թանգարան)։

6. ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Քաղաքի կուլտուրայի զարգացման նախադրյալներն ու առանձնահատկությունները։ Դպրոցները։ Գավառական դպրոցը (1868 թվից պրոգիմնազիա)։ Հոգևոր թեմական դպրոցը։ Սբ. Հռիփսիմեի օրիորդաց դպրոցը։ Գավառական դպրոցի վերակազմումը դասական պրոգիմնազիայի։ Գայանյան օրիորդաց ուսումնարանը։ Նորի ծխական երկսեռ («Շողակաթ» կոչված) դպրոցը։ Սոֆիա Ստասյուլևիչի պանսիոնը։ Քաղաքային դպրոցը, մզկիթներին և եկեղեցիներին կից եղած դպրոցները, խալֆայական դպրոցները։ Մասնավոր դպրոց բացելու կարգը։ Քաղաքի բոլոր դպրոցների, աշակերտների և ուսուցիչների թիվը։ Մեսրոպ Թաղիադյանը։ Խաչատուր Աբովյանի և Դազարոս Աղայանի գործունեությունը Երևանում։ Հանրային գրադարան հիմնելու փորձ։ Ընթերցարանը։ Քանդակագործությունը։ Ճարտարապետությունը, նկարչությունը։ Թատրոնը. Երևանի բերդի սպաների թատերական խումբը և Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կատակերգության առաջին բեմադրությունը, «Ազատյան ընկերություն» թատրոնի կրկնատ-թատերական ներկայացումները Երևանում, Ջմշկյանի խմբի գաստրոլային ներկայացումները, հոգևոր թեմական դպրոցի ուսուցիչների և «Խեղճ ընկերություն» կոչված թատերական խմբերը։

[1] Гр. Уварова, Кавказ, էջ 192—194։

Նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ այս շրջանում Երևանի կուլտուրան զգալի չափով առաջադիմում է։ Այստեղ առաջին անգամ, ռուսական դպրոցի օրինակով, ստեղծվում են աշխարհիկ դպրոցներ, որոնց նմանները Ռուսաստանում հիմնվել էին տակավին Պետրոս I-ի ժամանակ։ Երևանում բացվում է հոգևոր թեմական դպրոց, առաջին անգամ ստեղծվում են օրիորդաց դպրոցներ, մասնավոր մարդկանց նախաձեռնությամբ քաղաքում կազմակերպվում են ընթերցարան, կազմակերպվում է Երևանի առաջին հայ թատրոնը, ամեն ինչում միջնադարը հիշեցնող պարսկական կուլտուրայի փոխարեն Հայաստանի և Երևանի կուլտուրայի բոլոր բնագավառների վրա սկսում են իրենց բարերար ազդեցությունը թողնել ռուսական՝ անհամեմատ ավելի առաջավոր կուլտուրան ու արվեստը։

Սակայն այդ բոլորը դեռևս շատ քիչ էին։ Դպրոցների թիվը չնչին էր, նրանցում ընդգրկված աշակերտները քաղաքի բնակչության նկատմամբ շատ փոքր տոկոս էին կազմում, բարձր տիպի դպրոցներ ընդհանրապես չկային, մասնավոր մարդկանց նախաձեռնությամբ քաղաքում բացվող հասարակական-կուլտուրական օբյեկտները շատ դեպքերում միայն գոյություն ունեին անունով, իրականում դրանք չէին գործում և կամ իրենց խղճուկ վիճակով հազիվ էին զգացնել տալիս իրենց գոյությունը։ Պետք է նկատել նաև, որ եթե, մի կողմից, ռուսական առաջավոր կուլտուրայի ազդեցությունը դրականորեն է ազդում տեղի կուլտուրայի զարգացման վրա, ապա, մյուս կողմից, ցարական ինքնակալությունը իր գաղութային, ռուսականացման և մեծապետական շովինիստական քաղաքականությամբ արգելակում էր ազգային կուլտուրայի զարգացմանը, բոլոր բնագավառներում ոտնահարելով տեղականը՝ անց էր կացնում ռուսականացում։ Այնպես որ, իրարից պետք է տարբերել ռուսական դեմոկրատական, առաջավոր կուլտուրան ռեակցիոն ազնվականական, ցարական կուլտուրայից։ Առաջինը նպաստում էր տեղական կուլտուրայի զարգացմանը, իսկ երկրորդը դեկրետներով և վարչական միջոցներով դուրս էր մղում տեղական կուլտուրան, ձգտում ոչնչացնել այն և գրավել նրա տեղը։ Վ. Ի. Լենինը գրում է. «...կա երկու ազգ ժամանակակից յուրաքանչյուր ազգի մեջ...։ Կա երկու ազգային կուլտուրա յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ»[1], դրանցից

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, Երևան, 1956, էջ 20։

մեկը առաջավոր էր, դեմոկրատական, իսկ մյուսը՝ պահպանողական ու ռեակցիոն։

1828—1879 թթ. Երևանի կուլտուրայի բնագավառում համեմատաբար ամենախոշոր քայլը կատարվում է դպրոցական կյանքում։

Ռուսաստանին միացված Անդրկովկասի և Հայաստանի դպրոցական-լուսավորական գործը՝ համապատասխան համապետական մասշտաբով այդ բնագավառում տեղի ունեցող փոփոխությունների՝ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ունեցել է իր արժանահիշատակ տարեթվերը, և առանց դրանք նշելու անհնար է ամբողջական գաղափար կազմել Երևանի դպրոցների մասին։ Խոսքը վերաբերում է կառավարական հատուկ դեկրետներով տարբեր ժամանակներում դպրոցական կյանքի մեջ մտցված փոփոխություններին, որոնք, նայած ժամանակի քաղաքական և սոցիալ-տնտեսական պայմաններին, եղել են կամ առաջադիմական, կամ էլ հետադիմական բնույթի։

Առաջին արժանահիշատակ իրադարձությունը, որը տեղի է ունեցել ռուսական ժամանակակից դպրոցի կյանքում, ֆրանսիական ռևոլյուցիայի ճնշման տակ հարկադրաբար անցկացված բարեփոխությունների հետ միասին՝ հանդիսացավ 1804 թվականի՝ «Համալսարանների կանոնադրության» և «Համալսարաններին ենթակա ուսումնական հիմնարկների կանոնադրության» հրապարակումը։ Իր սահմանափակվածությամբ, կյանքում կիսատ-պռատ կիրառումով հանդերձ, 1804 թ. դպրոցական ռեֆորմը, որոշ դրական դեր է խաղում Ռուսաստանի դպրոցական գործի բարելավման բնագավառում[1]։ Այս ռեֆորմն իր ազդեցությունն է թողնում այդ ժամանակներում Անդրկովկասում գոյություն ունեցող պետական միակ դպրոցի՝ Թիֆլիսի ազնվականական ուսումնարանի վրա, որը բացվել էր 1802 թվականին։ Ռեֆորմի ազդեցության տակ ազնվականական ուսումնարանի պլաններում սկսում է աչքի զարնվել ուսման գործնական-ռեալական բնույթը[2]։

Անդրկովկասի դպրոցական կյանքի համար էլ ավելի կարևոր նշանակություն են ունենում այդտեղի գիմնազիաների և դավառա-

[1] Մ. Սանթրոսյան, Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյանը, Երևան, 1953, էջ 13—16։

[2] Նույն տեղը, էջ 19։

կան ուսումնարանների համար հրատարակված 1829, 1835[1] և 1848 թթ. կանոնադրությունները։ Սրանցով նախատեսված ուսումնական պլանները թեպետև 1804 թ. կանոնադրությամբ կենսագործվող պլաններից ավելի սահմանափակ էին, սակայն դրանք անմիջապես վերաբերում էին Անդրկովկասի դպրոցներին և այդ իմաստով էլ կարող են մեզ ավելի հետաքրքրել։

Անդրկովկասի 2-րդ պետական դպրոցը դարձյալ բացվում է Թիֆլիսում 1817 թվականին՝ հոգևորականների որդիների համար։ 1824 թ. այստեղ հիմնվում է Անդրկովկասի հայկական առաջին բարեկարգ՝ ներսիսյան դպրոցը, որն այնքան խոշոր դեր է խաղացել հայկական կուլտուրական կյանքում։ Երևանում առաջին պետական դպրոցը բացվում է ուշ՝ 1832 թ. հունվարին։ Դա 1829 թ. կանոնադրության հիմունքներով բացված գավառական դպրոց էր, նման Անդրկովկասի մյուս գավառական դպրոցներին (Թելավի, Գորիի, Քութաիսի, Նախիջևանի, Թիֆլիսի և այլն)։ Նույն կանոնադրության հիմունքներով էր բացվել և Անդրկովկասի առաջին գիմնազիան Թիֆլիսում (1830 թ. մարտ)։

1829 թ. կանոնադրությունը ուժի մեջ է մնում մինչև 1835 թվականը, իսկ այդ տարվա նոր կանոնադրությունը՝ մինչև 1848 թվականը։ 1835 և 1848 թթ. կանոնադրությունները 1829 թ. կանոնադրության նկատմամբ էական տարբերություններ չունեին։ Դպրոցական և համալսարանական կյանքում ամբողջ Ռուսաստանի մասշտաբով խոշոր փոփոխություններ են կատարվում 60—70-ական թվականներին՝ կապված 1864 թ. հրապարակված համեմատաբար առաջադիմական «Ժողովրդական տարրական ուսումնարանների կանոնադրության», «Գիմնազիաների նոր կանոնադրության», ինչպես և 1866 թվականից՝ ժողովրդական կրթության ռեակցիոն միտումով Ա. Վ. Տոլստոյի ռեակցիոն ձեռնարկումների հետ[2]։

Մեզ հետաքրքրող շրջանում Երևանում գոյություն են ունեցել տարբեր տիպի մի շարք դպրոցներ՝ պետական, հոգևոր, ծխական, խալֆայական և այլն։ Այստեղ կային և՛ ժամանակակից դպրոցներ (գավառական դպրոցը, որը հետո դարձավ պրոգիմնազիա, ապա գիմնազիա, քաղաքային ուսումնարանը, սբ. Հռիփսիմեի անվան

[1] Անդրկովկասի դպրոցների 1829 և 1835 թթ. կանոնադրությունների մասին տե՛ս Մ. Գասպարյան, Երևանի գավառական դպրոցը XIX դարի II կիսում («Պատմական մանկավարժ» (ժամագիր), Երևան, 1941, № 3 (մարտ))։ Տե՛ս նաև «Кавказский календарь на 1868 год», отд. III, էջ 399—401։

[2] Մանրամասն տե՛ս «История СССР», т. II, под ред. чл. корр. АН СССР М. В. Нечкиной, Москва, 1954, էջ 477—481։

«բիորդաց դպրոցը։ Գայանյան ուսումնարանը, Նորքի ծխական դպրոցը և մասնավոր ու գիշերօթիկ դպրոցներ, (Սահականուշի օբիորդաց ուսումնարանը, Սոֆիա Ստասյուլևիչի պանսիոնը և այլն), և՛ հոգևոր դպրոցներ (թեմական ուսումնարանը, եկեղեցիներին կից դպրոցները, մզկիթներին կից դպրոցները)։ Այլ կերպ ասած՝ կային և՛ ժամանակակից աշխարհիկ ու ռեալական դպրոցներ, և՛ հոգևորական, սխոլաստիկ միջնադարյան դպրոցներ, որոնք գալիս էին պարսկական տիրապետության շրջանից և բոլորովին չէին համապատասխանում ժամանակի պահանջներին, չնայած այդ տեսակետից առաջիններն էլ չէին գտնվում իրենց կոչման բարձրության վրա։ Երևանի նշված դպրոցները բացվել են ոչ միանգամից, այլ տարբեր ժամանակներում։ Երևանի դպրոցական կյանքն ամբողջական կերպով ներկայացնելու համար անհրաժեշտ է նախ և առաջ ծանոթանալ նրա դպրոցներին առանձին-առանձին, ապա դրանք բերել մի հանրագումարի։

Ինչպես ասվեց, Երևանի առաջին պետական և ժամանակակից իմաստով կանոնավոր դպրոցը եղել է գավառական դպրոցը, որը բացվել է 1832 թ. հունվարի 14-ին, Հայկական մարզի կառավարչապետ Բեհբութովի օրոք։ Նրա առաջին կազմակերպիչն ու տեսուչը Մոսկվայի համալսարանի իսկական ուսանող Ֆ. Զուբովն էր։ Սկզբում դպրոցը տեղադրվում է բերդում, սակայն այդտեղի շենքի անհարմարության, խոնավության և քաղաքից հեռու լինելու պատճառով, գեներալ Բեհբութովի կարգադրությամբ, բացվելուց մի ամիս անց այն տեղափոխվում է ս. Սարգիս եկեղեցու բակը։ Այստեղ դպրոցը զբաղեցնում էր երկու համեմատաբար փոքր և մութ սենյակներ, այն դեպքում, երբ նրա աշակերտների թիվը հասնում էր 70-ի։ Այդ «նոր» շենքը ևս պիտանի չէր դպրոցի համար։ Բացի դրանից, հոգևոր կոնսիստորիան իր պետքերի համար պահանջում է շուտափույթ ազատել այն։ 1835 թ. ամառը դպրոցը տեղափոխվում է Պողոս-Պետրոս եկեղեցու մոտ գտնվող Ստեփան Վեքիլովի վարձած տունը, որը բաղկացած էր 3 սենյակից։ Դպրոցի աշակերտների թիվը գնալով ավելանում է, իսկ շենքի հարմարությունները մնում են նույնը։ 30-ական թվականների վերջերին հարց է հարուցվում դպրոցի համար կառուցելու հատուկ շենք։ Անդրկովկասի դպրոցների դիրեկցիան այդ նպատակի համար 1838 թ. բաց է թողնում հատկացման համար. նախագծվում է դպրոցի շինարարությունը անմիջապես սկսել և ավարտել երկու տարվա ընթացքում։ Շենքը կառուցվում է Ներկայիս Սպայի տան (նախկին կինո «Ջվեղդա») մոտ։ Սակայն նրա շինարարությունը ավարտվում է ոչ թե երկու,

այլ շորս տարում՝ 1842 թվականի ամռանը[1]։ Նոր կառուցված շենքն էլ երևելի հարմարություններ չուներ։ Նա ընդամենը բաղկացած էր մեկ կենտրոնական կորպուսից և նրա թևերին կառուցված երկու այլ փոքրիկ շենքերից։ Կենտրոնական կորպուսն ուներ շորս սենյակ, որոնցից 3-ը ծառայում էին իբրև դասասենյակներ, մեկը, որը իրենից ներկայացնում էր բավական ընդարձակ մի սրահ, տրամադրված էր դպրոցական գրադարանին։ Կենտրոնական կորպուսին կից, նրա թևերում կառուցված փոքրիկ շենքերը տրամադրված էին տնտեսուհին և ուսուցիչներին։

Դպրոցը մինչև 1844 թվականը ուներ երկու դասարան՝ եղել է երկամյա։ Նա չի ղեկավարվել Անդրկովկասի դպրոցների դիրեկցիայից տրված ուսման պլանով, ուսումնական կայուն պլան չի ունեցել, պարապմունքները եղել են երկու հերթով, մեկ դասը տևել է մեկից մինչև երեք ժամ։ Նրա գրադարանը աղքատիկ էր, բաղկացած ընդամենը մի քանի տասնյակ կտոր գրքերից, աշակերտները չեն ունեցել նվազագույն չափի դասագրքեր ու դրենական պիտույքներ, քննությունները ընդունվում էին աշնանը՝ հրապարակորեն, ծնողների և հրավիրված մարդկանց ներկայությամբ։ Դպրոցի վարիչը կոչվում էր տեսուչ։ Դպրոցը (ինչպես և մյուս գավառական դպրոցները), ուներ պատվավոր տեսուչ, որը նշանակվում էր «վրատահելի» մարդկանցից, դպրոցի վրա հսկելու համար։ Վերջինս չուներ որոշակի պարտականություններ և չէր ստանում աշխատավարձ։ Տեսուչը միաժամանակ և դասատու էր։ Նա դպրոցի շենքում ուներում էր ձրի բնակարան։

Քաղաքի բնակչության համեմատությամբ, գավառական դպրոցի աշակերտների թիվը շատ փոքր էր։ 1834 թ. նա ուներ 37[2], 1836 թ.՝ 88[3], 1837 թ.՝ 50[4], 1840 թ.՝ 97[5] աշակերտ։ Գյուղացիների որդիները դպրոց չէին ընդունվում։ Դա արական դպրոց էր։ Համեմատական կարգով աշակերտների մեջ մեծ թիվ էին կազմում ազնվականների, հոգևորականների և ցարական աստիճանավորների որդիները[6]։

Ուսուցիչներն իրենց գիտելիքներով շատ ցածր էին, հաճախ

[1] Տե՛ս Մ. Գասպարյան, Երևանի գավառական դպրոցը XIX դարի II կեսում («Սովետական մանկավարժ», 1941, № 3, էջ 84—85)։

[2] АКАК, т. VIII, էջ 97։

[3] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 25, թ. 3։

[4] Նույն տեղը, ֆ. 9, գ. 234, թ. 40։

[5] Նույն տեղը, ֆ. 1, ցուցակ 1, գ. 46, թ. 2։

[6] Նույն տեղը։

չէին տիրապետում առարկայի ամենատարրական գիտելիքներին։ Ըստ հաստատված կանոնադրության, գավառական դպրոցում պետք է ավանդվեին կրոն, ռուսաց լեզու՝ ռուսաց քերականության որոշ տարրերով հանդերձ, տեղական լեզուները՝ հայերեն, ադրբեջաներեն և պարսկերեն, թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն, գեղագրություն, նկարչություն և գծագրություն[1]։ Սակայն դրանցից պատմությունը, գծագրությունը, նկարչությունը և աշխարհագրությունը չեն ավանդվել։ Առաջադիմությունը շատ ցածր էր, սրբեխաները խուսափում էին դպրոց գնալուց։

Այդպիսին էր գավառական դպրոցի դրությունը մինչև Խաչատուր Աբովյանի տեսուչ նշանակվելը։

Երևանի գավառական դպրոցի կյանքում զգալի փոփոխություններ են տեղի ունենում 1843—1848 թվականներին, երբ այստեղ որպես տեսուչ և ուսուցիչ էր աշխատում մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը։ Նա՝ ստանձնելով գավառական դպրոցի տեսուչի պարտականությունները՝ նախ և առաջ ջանք է գործադրում դուրս բերելու դպրոցը խղճուկ և ծանր դրությունից։ Առաջավոր գաղափարներով և կայուն գիտելիքներով զինված մեծ հայրենասերի առջև մեծ դժվարություններ էին կանգնած. ազգաբնակչության զգալի մասը և տեղական իշխանությունները անտարբեր վերաբերմունք ունեին դպրոցների նկատմամբ, խոշոր թերություններ ունեին ուսումնական պլանները, ծրագրերը, դասագրքերը, որակյալ ուսուցիչներ չկային[2] և այլն։ Երևանի գավառական դպրոցում իր անելիքի մասին մեծ մանկավարժը գրում է. «Ընթացիկ տարում օգոստոսի 10-ին պատրաստվել եմ դուրս գալ այստեղից (Թիֆլիսից—Բ. Հ.), ստացած լինելով Երևանի գավառական դպրոցի տեսչի պաշտոնը, բայց քե ովքեր պիտի լինեն իմ պաշտոնակիցները, հայտնի չէ ինձ, այնինչ այստեղ մինչև իսկ համբարձները նշանակվում են կրոնագիտության և դժբախտ հայոց լեզվի դասատու, ստանալով տարին 200 մանեթ արծաթ, որոնք չեն տալիս աշակերտներին, դոնե, այնքան ուտում, որ արժենար 100 կոպեկ։ Սակայն ես ուզում եմ, եթե տերը հաջողի, Երևանի դպրոցը բարձրացնել բարեփոխության աստիճանին և ճիգ թափել այնպիսի կատարելագործության հասցնել այն,

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 26, թ. 3, АКАК, т. VIII, էջ 97, Военно-статистическое обозрение Российской империи, т. XVI, ч. 6, էջ 252։

[2] Մ. Մանթրոսյան, Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյանը, էջ 82—85, 91—92, տե՛ս նաև՝ ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, գ. 73 և 74, «Դիվան Խ. Աբովյանի», Երևան, 1940, էջ 63—64 և 80։

որ հավասարվի ամեն մի բարեկարգ ուսումնարանի, բայց ինչով, եթե իմ պաշտոնակիցները լինեն «որթի բիւրք», ինչպես ասում են մեր ռամիկները»[1]։

Աբովյանին հաջողվում է գավառական դպրոցում բացել հարյուրդասարան, որը սակայն գոյություն է ունենում միայն երեք ուսումնական տարի (1843—1847 թթ.). աշակերտներ չլինելու պատճառով այն փակվում է։ Աշակերտների հոսունությունը վերացնելու համար՝ Աբովյանը մշակում է մի շարք միջոցառումներ։ Նա առաջարկում է դպրոց ընդունել ոչ թե 15—20 տարեկան երիտասարդներին, այլ 8 տարեկան երեխաներին, դպրոցը լավագույն կերպով ավարտողներին ուղարկել բարձր կրթության՝ անկախ նրանց դասակարգային պատկանելությունից, աշակերտին հարկադրել սովորելու մինչև դպրոցն ավարտելը, տուգանել այն ծնողներին, որոնք իրենց երեխաներին թույլ չեն տալիս լրիվ ավարտելու դպրոցական կուրսը և այլն[2]։

Ս. Աբովյանը մերժում էր ծեծը, անհրաժեշտ էր գտնում ամուր կապ ստեղծել դպրոցի և հասարակության միջև, ձգտել է դպրոցի համար ունենալ փորձադաշտ, բարելավել դպրոցական շենքը, երեխաներին կապել այգեգործական ու բանջարաբուծական աշխատանքների հետ և այլն[3]։ Ուսուց լեզվի ավանդման բարելավման հետ միասին՝ Ս. Աբովյանը մեծ տեղ է տվել հայոց և ազգբնջանական լեզուներին։ Նա առաջարկել է ավելացնել այդ լեզուների ժամերի թիվը։ Ընդ որում, ազգբնջանական կենդանի լեզվի ժամերի ավելացումը, նրա կարծիքով, պետք է կատարվեր պարսկերենի և արաբերենի հաշվին[4]։

Ս. Աբովյանն իր մանկավարժական երկերում առաջ է քաշել կրթական նոր մեթոդներ, մայրենի լեզվի ուսուցման հույժ կարևորությունը, մանկավարժական բազմաթիվ ու բազմապիսի դիտողություններ, հին դարերի պատմության ավանդման, երեխաների դաստիարակության առաջավոր մեթոդներ։ Դպրոցական կյանքի տեսակետից առանձնապես նշանավոր է նրա «Նախաշավիղ կրթության ի պէտս նորավարժից» աշխատությունը, որը հեղինակի օրոք հրատարակված միակ գործն էր։ «Նախաշավիղում» շարադրված են մեծ լուսավորչի մանկավարժական հայացքները ուսման բնագավառում։ Այն մեծ դեր է խաղացել Երևանի գավառական դպրոցի ուսման կյանքում[1]։

Սակայն Ս. Աբովյանին չի հաջողվում իրագործել իր ձգտումները նույնիսկ նվազագույն չափով։ Կղերականությունը, տգետ ու խավարամոլ ուսուցիչները, ցարական ռեակցիոն աստիճանավորները անելանելի դժվարություններ են հարուցում նրա դեմ, մերժելով նրա յուրաքանչյուր առաջարկն ու նորամուծությունը։ Աբովյանը շարունակում է անհավասար պայքարը, մի պայքար, որը մղվում էր ներքին, առաջավորի և հնի, հետադիմականի միջև։ Նոր գաղափարների դրոշակակիր Աբովյանին ժամանակի մռայլ պայմանները հասցնում են հուսահատության աստիճանին, և նա այլևս չի կարողանում տանել ստեղծված ծանր պայմանները։ 1848 թ. ապրիլի 2-ին նա դուրս է գալիս տնից և այլևս չի վերադառնում. մեծ լուսավորիչը կորչում է անհետ, իսկ նրա գերեզմանը՝ որբանում։

Նորից պետք է նշել, որ ուսուցման դրվածքն ու որակը մեծապես կախված էին ուսուցիչներից։ Այդ շատ լավ գիտեր Ս. Աբովյանը և սկզբնական շրջանում Երևան գալով նույնիսկ փորձ է կատարում այստեղ ուսուցչական պաշտոնի կանչել Ստ. Նազարյանին, որը սակայն հայոց լեզվի պրոֆեսորի պաշտոն էր ստանձնել Կազանի համալսարանում և մերժում է նրա առաջարկած ուսուցչի հաճախ պաշտոնը։

Լավ ուսուցիչ ունենալու հարցով երբեմն մտահոգվում էին նաև տեղի բնակիչները։ Այսպես, օրինակ՝ Երևան քաղաքի նշանավոր 11 անձնավորություններ՝ գավառական դպրոցը բացվելուց հետո, դիմում են կաթողիկոսին, որպեսզի նա միջամտի Հայկական մարզի կառավարչապետի առջև՝ Մեսրոպ Թաղիադյանին Երևանի գավառական դպրոցում նշանակելու ուսուցիչ, «Զի որովհետև յայսմ տեղիս մանկունք Հայոց որդիք են սրբոյ աթոռոյն,—ասված է կաթողիկոսին ուղղված նրանց նամակի մեջ,— ու զարգացեալքն նովաւ աստի ոչ սակաւ պարծանք լինին սրբոյ աթոռոյն և ձեր վեհափառութեան սրբազանութեէնէ։ ...աղաչեմք զանց չառնել, ապա թէ ո՛չ գնայ սա և մանկունք մեր մնան զուրկ յուսմանց մայրենի լեզուին մերոյ, առանց որոյ անհնար է նրանց յառաջանալ հիմնաւոր այլևայլ լեզուաց»[2]։

[1] Տե՛ս «Դիվան Ս. Աբովյանի», էջ 80։

[2] Մ. Գասպարյան, Հաշառուր Աբովյանը որպես Երևանի գավառական դպրոցի տեսուչ («Սովետական մանկավարժ» ամսագիր, 1941, № 5, էջ 59-ի 73—74)։

[3] Նույն տեղը, էջ 59—75։

[4] «Դիվան Ս. Աբովյանի», էջ 190—191։

[1] Տե՛ս Ս. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. հինգերորդ, Երևան, 1950։

[2] ՀՍՍՌ Գետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 73, վավերագիր 75։

Սակայն նրանց չի հաջողվում Թաղիադյանին գավառական դպրոցում հայոց լեզվի ուսուցիչ դարձնել։ Այնպես որ, երբ Աբովյանը նշանակվել էր գավառական դպրոցի տեսուչ, մայրենի լեզվի դրվածքն այնտեղ գտնվում էր ամենախղճուկ վիճակում, որովհետև այն դասավանդում էին անգրագետ կամ կիսագրագետ քահանաները։

50-ական թվականներից Երևանի գավառական դպրոցը արդեն դառնում է երեքդասյա, իսկ ուսուցիչների թիվը՝ 3-ի փոխարեն հասնում է 6-ի։ 1853 թ. հոկտեմբերի 29-ին Նիկոլայ I-ը հաստատում է Կովկասի ուսումնական օկրուգի և դրա տրամադրության տակ եղած ուսումնական հաստատությունների կանոնադրությունը, որն իր նախորդների նկատմամբ նոր ու առաջադիմական ոչինչ չէր պարունակում։ Ըստ այդ կանոնադրության, ձևականորեն գավառական դպրոցում թույլատրվում էր սովորելու բոլոր դասակարգերի երեխաներին՝ անկախ նրանց դրությունից, սակայն իրականում դարձյալ սովորում էին միայն նյութապես ավելի ապահովվածները։ Գավառական դպրոցի շրջանավարտներին իրավունք էր տրված իրենց ուսումը շարունակել գիմնազիաներում[1]։ Վերջինս որոշ խթան է դառնում Երևանի գավառական դպրոցի աշակերտների թվի ավելացման համար։

Երևանի գավառական դպրոցի աշակերտների քանակը 1853 թ. հունվարի 1-ին հասնում է 153-ի[2], իսկ 1855 թ. մարտին՝ 143-ի[3]։ Հետագա տարիների ընթացքում, ընդհուպ մինչև պրոգիմնազիա դառնալը, նրա աշակերտների թիվը տատանվում էր 140—180-ի սահմաններում, առանց ուսման բնագավառում նշանակալից որևէ փոփոխության։

1868 թ. սեպտեմբերի 1-ից Երևանի գավառական դպրոցը վերակազմվում է պրոգիմնազիայի[4], որի մասին առաջարկ էր արված տակավին 1867 թ. օգոստոսի 13-ին[5]։

Երկրորդ դպրոցը Երևանում բացվել է եկեղեցական կանոնադրությունը (պոլոժենիե) հրապարակվելուց մոտ մեկ տարի 5 ամիս անց՝ 1837 թ. սեպտեմբերի 2-ին։ Ի տարբերություն գավառական դպրոցի, այս երկրորդը հոգևոր դպրոց էր և կոչվում էր

[1] «Положение о Кавказском Учебном округе и учебных заведениях о нему под ведомостенных», СПБ, 1853, էջ 26—27։
[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 113, թ. 11։
[3] АКАК, т. XI, էջ 772։
[4] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 227, թ. 1 և 2։
[5] Նույն տեղը, գ. 215, թ.5։

Երևանի հայոց հոգևոր թեմական դպրոց, «ճեմարան» կամ «սեմինարիա», ինչպես հաճախ գործ էին ածում արխիվային պաշտոնական փաստաթղթերում։ Եկեղեցական կանոնադրությամբ Ռուսաստանում սահմանվում են հայ եկեղեցական վեց առաջնորդական թեմեր, որոնցից յուրաքանչյուրում նախատեսվում է բացել և թեմական դպրոց։ Այդ թեմերից մեկը Երևանի թեմն էր, որի կոնսիստորիան բացվելուց և կազմակերպվելուց հետո՝ թեմակալի փոխանորդ արքեպիսկոպոս Ստեփանոս Արղությանի նախաձեռնությամբ բացվում է նաև հոգևոր թեմական դպրոցը[1]։ Դպրոցի բացման մասին սինոդի հրամանը տրվել էր օգոստոսի 14-ին և բացվելիք դպրոցի համար իշխանությունների թույլտվությամբ կազմակերպվել էր հանգանակություն[2]։

Սկզբում դպրոցը տեղադրված էր ս. Սարգիս եկեղեցու բակի հարավ-արևմտյան կողմում գտնված շինության մեջ։ Նա զբաղեցնում էր ընդամենը երկու սենյակ և մի նախասենյակ, հետագայում՝ 1849—56 թթ. փակվելուց հետո, երկրորդ անգամ այն բացվում է առաջնորդարանի շենքերից մեկում, որի վերանորոգման համար տրամադրվում է 529 ռուբլի։ Սակայն այդ շենքն էլ չէր կարող թեկուզ նվազագույն չափով բավարարել դպրոցի պահանջները։ 1858 թ. Ղուկաս արքեպիսկոպոս Արագածունու հանձնարարությամբ Երևանի փոխանորդ վարդապետ Ստեփանոս Բաղալյանը ձեռնարկում է դպրոցի նոր շենքի կառուցմանը։ Շենքի կառուցումը ավարտվում է 1859 թ. և նույն թվականի աշնանը դպրոցի պարապմունքներն արդեն սկսվում են նորակառույց շենքում[3]։

Երևանի հայոց հոգևոր թեմական դպրոցի առաջին 50 տարվա պատմությունը կազմվել է նրա ուսուցիչների կողմից, դպրոցի հիսնամյակի առթիվ (1837—1887 թթ.)։ Ըստ այդ աշխատության (որը տպագրված է Թիֆլիսում՝ «1837—1887. Յիսնամեակ Հայոց հոգևոր թեմական դպրանոցի Երեւանայ» վերտառությամբ) դպրոցի պատմությունը բաժանված է երկու շրջանի, որոնցից առաջինը ընդգրկում է 1837—1849, երկրորդը՝ 1857—1887 թթ.։

Հոգևոր դպրոցի ուսուցիչների կազմած այդ գրքի հրատարակումը և դպրոցի հիսնամյակը մեծ արձագանք են գտնում ժամանա-

[1] «1837—1887. Յիսնամեակ Հայոց հոգեւոր թեմական դպրոցի Երեւանայ», Թիֆլիս, 1888, էջ 1, տե՛ս նաև՝ Էնո, Պատմություն Հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1837—1912, Թիֆլիս, 1914, էջ 115—135։
[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 90, գ. 54, թ. 1։
[3] «1837—1887. Յիսնամեակ Հայոց հոգեւոր թեմական դպրանոցի Երեւանայ», էջ 261։

կակից մամուլի էջերում։ «Մուրճ» ամսագիրը և «Արձագանք» թերթը հատուկ հոդվածներ են նվիրում դպրոցի 50-ամյակին և նրա կեսդարյա պատմությանը[1]։ Սակայն Երևանի թեմական հոգևոր դպրոցի ժամանակագրական առումով ամբողջական պատմությունը գրվել է ավելի ուշ՝ 1914 թ.՝ բազմավաստակ հայագետ Լեոի կողմից։ Ի տարբերություն նշված աշխատության, որը սկզբնաղբյուր է և հասկանալի պատճառով ընդգրկել է դպրոցի միայն 50 տարվա պատմությունը ու իրենից ներկայացնում է ժամանակագրություն, Լեոի աշխատությունը ընդգրկում է 1837—1912 թթ. և իրենից ներկայացնում է բազմաթիվ աղբյուրների հիման վրա գրված արժեքավոր մենագրություն[2]։

1849—1856 թթ. դպրոցը չի գործել, այդ թվականներին այն փակված է եղել Ներսես կաթողիկոսի հատուկ կոնդակով։ Կաթողիկոսն այդ կոնդակում դպրոցի փակումը պատճառաբանում է նրանով, որ այն իր բարձրության վրա չի գտնվում և իրեն չի արդարացնում[3]։

Դպրոցը կրկին վերաբացվում է 1857 թ. և այլևս առանց փակվելու շարունակում է գործել։

Թեմական հոգևոր դպրոցները, ինչպես ասվեց, բացվել էին հոգևորականների որդիների համար։ Իր գոյության առաջին շրջանում Երևանի հոգևոր թեմական դպրոցը «ոչնչով չէր տարբերվում մի հասարակ, աղքատիկ ծխական դպրոցից»[4]։ Մինչև 1876 թվականը դպրոցն ուներ երեք նախապատրաստական և միայն մեկ հիմնական դասարան։ Դրանից հետո աստիճանաբար բացվում են 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, իսկ 1887 թ.՝ 6-րդ դասարանը, ինչպես և շարունակում են գոյություն ունենալ նախապատրաստական երեք դասարանները։

Ավանդվող առարկաների մեջ ամենահիմնականը համարվում էր կրոնը։ Առաջին դասարանում ավանդվում էին կրոն, հայոց լեզու, ռուսաց լեզու, թվաբանություն, հայերեն ու ռուսերեն վայելչագեղություն և եկեղեցական երգեցողություն։ Երկրորդ դասարանում դրանց վրա ավելանում էին աղբբեջաներեն և պարսկերեն լեզուները, նկարչությունը և աշխարհագրությունը, երրորդ դասարանում՝ ընդհանուր պատմությունը, հայոց պատմությունը, ֆրանսերենը, չորրորդ դասարանում՝ լատիներեն, ֆիզիկա, արաբերեն, իսկ թվաբանության տեղը գրավում է մաթեմատիկան[1]։ Առարկաների կազմի նմանօրինակ փոփոխություններ կատարվում էին նաև հինգերորդ և վեցերորդ դասարաններում[2]։ Այլ կերպ ասած, դպրոցը համարվում էր միջնակարգ։ Դասավանդումը կատարվում էր սխոլաստիկ մեթոդներով, ամենուրեք իշխում էր մեխանիկորեն անգիր անելու՝ կրոնի սրբագործած մեթոդը, թուքակային դաստիարակությունը, հարգի մեջ էր պատժի գաժան ձևը՝ ծեծը։

Մինչև 1860 թ. դպրոցը գտնվում էր անմիջապես հոգևոր կոնսիստորիայի, իսկ դրանից հետո՝ հոգաբարձական հաստատության տակ, վերջինս նույնպես ամբողջովին հետևում էր հոգևոր խորհրդի ցուցումներին և դեկավարվում դրանցով։

Դպրոցի նյութական միջոցները գումարվում էին դանազան աղբյուրներից։ Յուրաքանչյուր քահանա պարտավոր էր իրեն ենթակա ամեն մի ծխից հօգուտ դպրոցի՝ տալ 5 կոպեկ, Երևանի մոմի վաճառքից ստացվող գումարներն ամբողջությամբ տրվում էին դպրոցին, նրան էին տրվում տուգանքի ձևով ժողովված գումարները և, վերջապես, դպրոցի կարիքները հոգալու համար մշտապես անց էին կացնում հանդանակություն[3]։ 1860 թ. մշակված կանոնադրությամբ ավելի են մեծանում դպրոցի նյութական միջոցները։ Հոգաբարձություն (որը բաղկացած էր 6 հոգուց) ստեղծելու հետ միասին որոշվում է դպրոցի նյութական կարիքները հոգալու համար նրան տրամադրել՝ Երևանի եկեղեցիների գումարների կես տոկոսը, աշխարհականների որդիներից վերցվող ուսման վարձը (յուրաքանչյուրից տարեկան 25 ռուբլի), մոմի վաճառքից ստացվող գումարը, կտակների և նվիրատվությունների ձևով տրվող միջոցները և վիճակային գանձարանից որոշ տոկոսներ, ինչպես և ծննդյան վկայականների համար վերցվող 5-ական ռուբլիները[4]։

Դպրոցի գործերին անմիջականորեն հսկում էր «վերատեսուչը», որը ընտրվում էր հոգաբարձուներից և հաստատվում փոխանորդի կողմից։

Դպրոցի նպատակը հոգևորականներ պատրաստելն էր, իսկ

[1] Տե՛ս «Մուրճ» (ամսագիր), Թիֆլիս, 1889, № 3, էջ 500—504, «Արձագանք» (շաբաթաթերթ), Թիֆլիս, 1889, №№ 11, 14, և 17։

[2] Լ ե ո, Պատմություն Երևանի Հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1837—1912, Թիֆլիս, 1914։

[3] «1837—1887. Յիսնամեակ Հայոց հոգևոր թեմական դպրանոցի Երեւանայ», էջ 261։

[4] «Մուրճ» (ամսագիր), 1889, № 3։

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 158, թ. 20—22։

[2] Նույն տեղը։

[3] «1837—1887. Յիսնամեակ Հայոց հոգևոր թեմական դպրանոցի Երեւանայ», էջ 32։

[4] «Արձագանք» (լրագիր), 1889, № 14։

1860 թվականի կանոնադրությամբ, երբ դպրոց էին ընդունվում նաև աշխարհականների որդիներ, դպրոցի շրջանավարտները կարող էին և հոգևորականներ չդառնալ, այլ զբաղվել աշխարհական աշխատանքներով։ Հետագայում դպրոցի կանոնադրության մեջ դարձյալ փոփոխություններ են մտցվում, սակայն դրանք արմատական բնույթ չունեին, և ըստ էության դպրոցի նպատակը, կարգ ու կանոնը և ուսման ծրագրերը մնում էին նույնը։

Առաջին անգամ իր բացման ժամանակ (1837 թ.) թեմական դպրոցն ունեցել է 26 աշակերտ, 1875 թ. նրա աշակերտների թիվը հասնում է 105-ի, իսկ 1880 թ.՝ 175-ի, նույն թվականներին ուսուցիչների թիվը 2—3-ից հասել է 11-ի[1]։ Այստեղ աշակերտների հոսունությունն ավելի ուժեղ է արտահայտվել, քան դավառական դպրոցում։ Աշակերտներից շատ-շատերը միայն անվանական էին, իրականում նրանք դպրոց չէին հաճախում։ Մնողները դժգոհ էին հոգևոր դպրոցի ուսման որակից, հատկապես մայրենի լեզվի ուսուցման վատ դրվածքից։ Ինքը Երևանի թեմի փոխանորդ վարդապետ Մեսրոպ Սմբատյանցը 1870 թ. վերաբերող, ժողովրդին ուղղված իր գրության մեջ նշում է, որ թեմական դպրոցի ուսման ցածր որակի մասին ժողովրդի արտահայտած դժգոհությունն ու արտունչը միանգամայն տեղին և ճիշտ է, «թեպետ շատ ծանր է և անախորժ»՝ լսել այն[2]։ Փոխանորդ վարդապետը փորձում է դպրոցի ուսման ցածրորակությունը բացատրել միայն բնակչության անտարբերությամբ և հատկապես նրա նյութական սուղ պայմաններով[3]։

Հոգևոր դպրոցն անշուշտ նյութապես ապահովված չէր, սակայն չի կարելի ուսման որակի ցածրությունը բացատրել միայն նյութական միջոցների պակասությամբ, մանավանդ որ այն ժամանակվա դպրոցների մեջ հոգևոր դպրոցը նյութապես համեմատաբար ավելի լավ էր ապահովված։ Ուսման որակը մեծապես իջնում էր դասատուների ցածր պատրաստականության, սխոլաստիկ մեթոդների, ուսման ընթացքում կիրառվող դաժան պատիժների, տեսուչի ու հոգաբարձության անհոգության, ուսման ծրագրերի միանգամայն

[1] ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 91, վավերագիր 136, «Դպրոց» (ամսագիր), Վաղարշապատ, 1875, հոկտեմբեր, № 14, էջ 131, С Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, Приложение)։

[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 158, թ. 14։

[3] Նույն տեղը, թ. 14—15։

ոչ պիտանի, կրոնական բնույթի նյութերով ծանրաբեռնված լինելու, դասագրքերի բացակայության և այլ պատճառներով։ Դպրոցն ուներ իր կանոնները՝ ուսման վարձի, աշակերտների ընդունելության, հեռացման, քննությունների, հաճախման, դասագրքերի և այլնի մասին[1], սակայն հաճախ դրանք անտեսվում էին, և դպրոցի առօրյան ենթակա էր վիրակացուի կամքին։

Մեզ հետաքրքրող շրջանում դպրոցի կանոնադրությունը փոխվել է մի քանի անգամ։ Նրա առաջին կանոնադրությունը հանդես է գալիս 1843 թ., որը մնում է առանց իրագործվելու՝ մինչև դպրոցի փակումը։ 1857 թ. բացման ժամանակ Սինոդի կողմից տրվում է մի նոր հապճեպ կանոնադրություն՝ 10 կետից բաղկացած, 1860 թ. հրապարակվում է երրորդ կանոնադրությունը, 1864 թ.՝ չորրորդը, իսկ 1865 թ.՝ հինգերորդը, որը չնչին փոփոխություններով ուժի մեջ է մնում մինչև վերջ[2]։

Երևանի հոգևոր թեմական դպրոցում եղել են և անուն հանած մի քանի ուսուցիչներ ու տեսուչներ[3]։ Ուսուցիչներից հատկապես հայտնի է մեծ մանկավարժ Ղազարոս Աղայանը, որն իր առաջադիմական հայացքներով հանդիսացավ Խաչատուր Աբովյանի մանկավարժական հայացքների արժանավոր ժառանգորդն ու շարունակողը։ Սակայն և՛ Աղայանը, և՛ նրա մյուս կուսակիցները այն ժամանակվա կղերականության, թեմական դպրոցի տգետ ուսուցիչների ու ռեակցիոն տեսուչների միջոցառում շատ քիչ բանով կարող էին բարեփոխել ուսման գործը։

Դպրոցի տեսուչներից մի քանիսը ևս առավել կամ պակաս չափով աչքի են ընկնում իրենց գործունեությամբ։ Ժամանակակիցները տեսուչներից առավել նշանավոր են համարում Հովհաննես Ղորղանյանին, որը դպրոցը ղեկավարել է 1861—1863 և 1865—1867 թվականներին[4]։

Տեսուչները, մանավանդ 70-ական թվականներից սկսած, դպրոցում գործել են միանգամայն կամայականորեն։ Դա երևում է դպրոցի ուսուցիչների՝ 1878—1879 թթ. վերաբերող մի բողոքագրից, որը հասցեագրված է հոգաբարձությանը և ուղղված այդ ժամանակվա դպրոցի տեսուչ Ս. Բեգնազարյանցի դեմ։ Իրենց բողոքագրում թեմական դպրոցի ուսուցիչները գրում են, որ տեսուչը

[1] Կանոնները տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 158, թ. 16։

[2] «1837—1887. Յիսնամեակ Հայոց հոգեւոր թեմական դպրոցների Երեւանայ», էջ 262—263։

[3] «Մուրճ» (ամսագիր), 1889, № 3։

[4] Նույն տեղը։

վայրենաբար ծեծում է աշակերտներին, արհամարհում է մանկավարժական խորհրդին և ամեն ինչ (աշակերտի ընդունելությունը, հեռացումը և այլն) անօրինում իր հայեցողությամբ, աշակերտների նկատմամբ կիրառում անտանելի պատիժներ, ուսուցիչներին աշակերտների ներկայությամբ վարկաբեկում է, անհարգելի պատճառով բաց թողնում իր դասերը, անգրագետ է, աշակերտներին զրգռում է ուսուցիչների դեմ և այլն, և այլն[1]։

1840-ական թվականների վերջերին Կովկասի մի քանի այլ քաղաքների հետ միասին Երևանում նույնպես ձգտում է առաջանում օրիորդաց դպրոց հիմնելու։ Մինչ այդ Երևանում գոյություն չուներ օրիորդաց ոչ մի դպրոց։ Օրիորդաց առաջին դպրոցն այստեղ բացվում է տիկնաց բարեգործական ընկերության (որի անդամները 1852 թ. 58 հոգի էին, իսկ հետո ավելացան) ջանքերով 1850 թ. հունվարի 2-ին[2]։ Այդ բարեգործական ընկերությունը Երևանում կազմակերպվել էր Կովկասի փոխարքա Վորոնցովի կնոջ առաջարկով, որը ս. Նինայի անվան նույնօրինակ բարեգործական ընկերություն էր հիմնել Թիֆլիսում և, իր ամուսնու մահվանից հետո, ի հիշատակ նրան, Կովկասում (Թիֆլիսում, Քութայիսում և Շամախիում ս. Նինայի անվան, Սառավրոպոլում՝ ս. Ալեքսանդրայի անվան, իսկ Երևանում՝ ս. Հռիփսիմեի) իգական դպրոցներ հիմնելու համար տրամադրում է 200 հազար ռուբլի[3]։

Երևանում բացված դպրոցը կոչվում է ս. Հռիփսիմեի անվան։ Նրա նյութական միջոցների հիմնական մասը հավաքվում է բարեգործական ընկերության անդամներից, իսկ մյուս մասը աշակերտներից ուսման վարձի և պանսիոնի վարձի ձևով, ինչպես նաև զանազան նվիրատվությունների միջոցով։ Դրամական միջոցները հավաքում էին ոչ միայն Երևան քաղաքից, այլև Երևանի ամբողջ նահանգից[4]։ Դպրոցին հսկելու պարտականությունը դրվում է գեներալ-ադյուտանտ Ի. Ի. Նազարովի վրա[5]։ Դպրոցը անմիջականորեն վարում էր վերակացուհին, որն ուներ իր տեղակալը։ Ուսուցիչների թիվը հասնում էր 4—5 հոգու[6]։ Դպրոցում սովորում էին հայ, ռուս և ազգությանցի օրիորդներ։ Աշակերտների ճնշող մասը գիշերօթիկ էր։ Դիշերօթիկներից տարեկան վերցնում էին 100 — 120 ռուբլի և 30 ռուբլի էլ սկզբից վերցնում էին հանդերձավորելու համար, կես դիշերօթիկներից՝ 50—60 ռուբլի, իսկ իրենց տանն ապրող և դասերին այցելող աշակերտուհիներից՝ ամսական 2 — 3 ռուբլի[7]։

Սբ. Հռիփսիմեի օրիորդաց դպրոցը բացման օրից ուներ երեք դասարան, որոնցից յուրաքանչյուրը բաժանվում էր երկու բաժնի։ Այստեղ ավանդվում էին կրոն, ռուսաց և հայոց լեզուներ, թվաբա-

Սբ. Հռիփսիմեի անվան օրիորդաց ուսումնարանի (պրոգիմնազիայի, գիմնազիայի) շենքը (Երևանի պատմության թանգարան)։

նություն, աշխարհագրություն և ձեռագործություն[8]։ 1866 թվականին բացվում է նախապատրաստական դասարան և նշված առարկաների վրա ավելանում են գեղագրությունը, նկարչությունը, կենդանաբանության, բուսաբանության և հանքաբանության հիմնական սկզբունքները, ընդհանուր և ռուսաց պատմությունը, ֆրանսերեն լեզուն և երաժշտությունն ու պարը, որոնք սովորում էին ցանկությամբ, իրենց հաշվին[9]։

---

1 «Մուրճ» (ամսագիր), 1889, № 3։ Տե՛ս նաև «Արձագանք» (շաբաթաթերթ), 1889, № 17։

2 «Кавказский календарь на 1852 год», отд. III, էջ 248։

3 АКАК, т. XII, էջ 1326, ՀՍՍՌ ԿԿՊԱ, ֆ. 4, ցուցակ 1, գ. 53, թ. 1։

4 ՀՍՍՌ ԿԿՊԱ, ֆ. 4, ցուցակ 1, գ. 53, թ. 1։

5 Նույն տեղը։

6 «Кавказский календарь на 1851 год», отд. V, էջ 55։

1 «Кавказский календарь на 1866 год», отд. IV, էջ 32, на 1880 год, Адрес календарь, էջ 98։

2 ՀՍՍՌ ԿԿՊԱ, ֆ. 4, ցուցակ 1, գ. 53, թ. 2։

3 Նույն տեղը։

1874 թ. մարտի 14-ին կարգադրվում է ս. Նինայի անվան բարեգործական ընկերության ուսումնական հաստատությունները վերակառուցել պրոգիմնազիաների։ Դրա հիման վրա առաջարկվում է Օրևանի ս. Հռիփսիմեի օրիորդաց դպրոցում ևս դասավանդումը կատարել Ժողովրդական կրթության մինիստրության գերատեսչությանը ենթակա պրոգիմնազիաների ծրագրով, ըստ որի՝ դպրոցը պետք է ունենար մեկ նախապատրաստական և չորս պրոգիմնազիական դասարաններ։ Սակայն նյութական միջոցների պակասության և մի քանի այլ պատճառներով ս. Հռիփսիմեի դպրոցը պաշտոնապես պրոգիմնազիայի է վերածվում դրանից տաս տարի հետո՝ 1884 թվականին, իսկ 1898 թ. այն վեր է ածվում գիմնազիայի՝ ունենալով նույն ծրագրերն ու ուսումնական պլանները, որոնք նախատեսված էին 1870 թ. մայիսի 24-ի կանոնադրությամբ[1]։

Դպրոցում ընդգրկված սանների թիվը շատ փոքր էր։ 1851 թվականին դրանք ընդամենը 21 հոգի էին, որոնցից 20-ը գիշերօթիկներ[2], իսկ 1867 թվականին՝ 37[3]։ Դպրոցում ընդգրկված էին բացառապես միայն հասարակության ամենաբարձր շերտերին պատկանող մարդկանց դուստրերը, որովհետև նրա ուսման վարձը շատ բարձր էր և սովորական քաղաքացիների համար՝ անմատչելի։ Դա վերաբերում է ոչ միայն Երևանի Հռիփսիմեի օրիորդաց դպրոցին, այլև Կովկասի նուիաատիպ բոլոր դպրոցներին։ 1874 թ. «Кавказский календарь»-ում բարեգործական ընկերության կազմակերպած դպրոցների մասին ասված է, որ դրանք որոշ չափով բավարարում են Կովկասի կին բնակչության դաստիարակության պահանջները, սակայն «այդ հաստատությունները մատչելի են միայն բարձրագույն դասերի մարդկանց դուստրերին», նրանք միջոցներ չեն տվել «մյուս շերտերի տարրական կրթության համար»[4]։

Ինչպես նշվեց, Երևանի գավառական դպրոցը 1868 թվականին վերակազմվում է դասական (կլասիկ) պրոգիմնազիայի, իսկ հետո՝ դասական գիմնազիայի, որի պատմությունը արդեն վերաբերում է քաղաքի պատմության հաջորդ ժամանակաշրջանին։ Պրոգիմնազիան ուներ իր պանսիոնը[5]։ Պրոգիմնազիան վարում էր տեսուչը, կար նաև պատվավոր հոգաբարձու[6]։ Պրոգիմնազիայում ավանդվում

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 4, ցուցակ 1, գ. 53, թ. 2, տե՛ս նաև ֆ. 1, ցուցակ 1, գ. 334, թ. 7—10։
2 «Кавказский календарь на 1852 год», отд. V, էջ 604։
3 Նույն տեղը, на 1868 год, отд. II, էջ 378։
4 Նույն տեղը, на 1874 год, отд. II, էջ 183։
5 Նույն տեղը, էջ 172։
6 Նույն տեղը, отд. III, էջ 90։

էին կրոն, հայոց լեզու, աղբբենարեն, լատիներեն, ֆրանսերեն, պատմություն և աշխարհագրություն, մաթեմատիկա և բնական պատմություն։ Պրոգիմնազիան հիմնական դասարանների հետ միասին ուներ նախապատրաստական դասարան, որտեղ անցնում էին նաև երգեցողություն ու մարմնամարզություն[1]։ Հետագայում, 1870 թ. գիմնազիաների նոր կանոնադրությունը հրապարակվելուց հետո՝ պրոգիմնազիայի հիմնական դասարաններում ավանդվող նշված առարկաների թվին ավելացան գծագրություն ու գեղագրություն[2]։

Նրա աշակերտները մեծաթիվ չեն եղել։ 1868 թվականին, երբ գավառական դպրոցը վերակազմվեց պրոգիմնազիայի, վերջինս ուներ 174 աշակերտ[3], իսկ 1882—83 ուս. տարում, երբ արդեն վերակառուցված էր գիմնազիայի, աշակերտների թիվը հասնում էր 230-ի[4]։ Պրոգիմնազիայում սովորում էին հայեր, ռուսներ, աղբբեջանցիներ, վրացիներ և այլն։ Թվական տեսակետից հայերը կազմում էին բացարձակ մեծամասնություն[5]։

Աշակերտներից վերցվել է ուսման վարձ։ Հիմնական դասարանների աշակերտներից յուրաքանչյուրից մեկ ուսումնական տարվա համար վերցվում էր 10 ռուբլի, իսկ նախապատրաստական դասարանի յուրաքանչյուր աշակերտից 3 ռուբլի ուսման վարձ[6]։ Ուսման վարձի և այլ արդելակող պայմանների հետևանքով դպրոցը գերազանցապես մատչելի էր միայն բարձր խավերին պատկանող աշակերտների համար։ 1882—83 ուսումնական տարում, երբ այն արդեն վերակառուցվել էր գիմնազիայի, դպրոցի աշակերտները ըստ դասակարգային պատկանելության ներկայացնում էին հետևյալ պատկերը[7].

1) Ազնվականների որդիներ	28։
2) Մելիքների, խաների և բեկերի որդիներ	50
3) Հոգևորականների որդիներ	30
4) Քաղաքային դասին պատկանողներ	69
5) Գյուղացիների որդիներ	52

Ինչպես տեսնում ենք, բնակչության շատ չնչին մասը կազմող

1 «Кавказский календарь на 1870 год», отд. III, էջ 68—69։
2 Նույն տեղը, на 1874 год, отд. III, էջ 90։
3 Նույն տեղը, на 1868 год, отд. II, էջ 377։
4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 331, թ. 4։
5 Նույն տեղը։
6 Նույն տեղը, գ. 244, թ. 1—18։
7 Նույն տեղը, գ. 331, թ. 4։

ազնվականների, մելիքների, խաների, բեկերի և հոգևորականների որդիները դպրոցի աշակերտության մոտ 47 %-ն էին։ Պետք է նկատի ունենալ նաև այն, որ հասարակության մյուս խմբերից՝ քաղաքային դասից և գյուղացիությունից նույնպես սովորում էին հարուստների որդիները։ Վերջին հաշվով, գիմնազիայում սովորում էին միայն հարուստների որդիները, անկախ նրանից՝ թե դրանք հասարակության ո՛ր խմբին էին պատկանում։

Աշակերտների համար պրոգիմնազիայում հաստատված էր կարգապահական ծանր ռեժիմ։ Ուսման մեթոդները չոր էին, մեծ տեղ էր գրավում մեխանիկորեն անգիր անելու մեթոդը։ Չնայած կանոնադրությամբ ծեծն ու հայհոյանքը արգելված էր, սակայն դրանք տեսուչների և ուսուցիչների համար անհնազանդ աշակերտներին «դաստիարակելու» միակ «հուսալի» միջոցներն էին։

Երկու հիմնական և մեկ նախապատրաստական դասարան ունեցող Երևանի պրոգիմնազիայի ուսուցիչների, տեսուչի և մյուս աշխատակիցների աշխատավարձի, ինչպես և մյուս բոլոր ծախսերի համար 1868 թ. տրամադրվել է մոտ 10 000 ռուբլի[1]։

Պրոգիմնազիայի գրադարանը մյուս ուսումնական հաստատությունների գրադարանների համեմատությամբ մի փոքր ավելի լավ դրության մեջ էր գտնվում։ Սակայն նա ևս իր ունեցած գրքերի ու այլ նյութերի ֆոնդերով շատ աղքատիկ էր։ 1868 թ. պրոգիմնազիայի գրադարանը ունեցել է ընդամենը 697 անուն գիրք, որից 474 անունը ֆունդամենտալ, իսկ 223-ը՝ դասագրքեր և ձեռնարկներ. այդ բոլոր անունները բաղկացած են եղել 1686 կտորից (հատորից, ինչպես սովորաբար գործ է ածվել այդ ժամանակներում), որից՝ 1316-ը ֆունդամենտալ, իսկ՝ 370-ը ձեռնարկներ ու դասագրքեր[2]։ Գրադարանն ունեցել է նաև հանքաբանական հավաքածո և աշխարհագրական զանազան քարտեզներ[3]։

Երևանում մեզ հետաքրքրող շրջանի դպրոցներից ուշադրության արժանի են նաև՝ Գայանյան օրիորդաց ուսումնարանը, Սոֆիա Ստասյուլևիչի պանսիոնը և Նորքի ծխական դպրոցը։

Երևանի Գայանյան օրիորդաց ծխական հոգևոր ուսումնարանը մի խումբ երիտասարդների նախաձեռնությամբ բացվել է սինոդի հրամանագրով՝ 1866 թ. ապրիլի 10-ին[4]։ Նրա բացումը, որպես հայ

1 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 227, թ. 9։

2 «Кавказский календарь на 1870 год», отд. II, էջ 385։

3 Նույն տեղը։

4 ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 6, գ. 66, թ. 49, ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 227, վավերագիր 163։

օրիորդաց առաջին դպրոցը Երևանում, ուղեկցվել է մարդաշատ տոնակատարությամբ, ճառերով և մեծ խոստումներով, որոնց մասին այնքան մանրամասնությամբ պատմում է Պերճ Պռոշյանը[1]։ Դպրոցն իր նյութական միջոցները ստանում էր հանգանակությունների, նվիրատվությունների, ուսման վարձի և ուսուցչական ուժերով ներկայացումներ տալու միջոցով։

Գայանյան ուսումնարանը հոգևոր ծխական դպրոց էր։ Դպրոցի բացման հետ միասին սինոդի կողմից հրապարակվում է Երևանի օրիորդաց ծխական ուսումնարանների կանոնադրությունը («Կանոնադրութիւն Երևանայ օրիորդաց ծխական ուսումնարանների համար»), որի մեջ այդ տիպի դպրոցի բնույթի ու նպատակների մասին ասված է.

«Ուսումնարանի նպատակն է տալ Երևանայ քաղաքի և շրջակայ տեղեաց Հայոց օրիորդներին բարոյական կրթութիւն, ուսուցանելով նորանց մեր Լուսաւորչական ուղղափառ եկեղեցւոյ դաւանութիւնը և զարգացնելով նրանց սրտումը առաքինութեան ազնիւ ըզգացմունքներն, տալ նորանց միջոց եթէ կամենան մտնել ի կուսակրօնութիւն»[2]։

Այստեղից միանգամից պարզ է, որ ուսումնարանի հիմնական նպատակը եղել է ոչ թե իսկական ու կայուն գիտելիքների ավանդումը և հայ օրիորդների ընդհանուր կրթական մակարդակի բարձրացումը, այլ գլխավորապես՝ կրոնա-բարոյախոսության սերմանումը մատաղահաս հայ օրիորդների շրջանում։

Ըստ նույն կանոնադրության՝ ուսումնարանը ենթակա էր հոգևոր առաջնորդին, և այն անմիջականորեն վարում էր տեսուչը։ Ուսումնարանն ուներ երկու վերակացուհիներ, հոգաբարձուհիներ, որոնք ուսումնարանին մշտապես ցույց էին տալիս նյութական օժանդակություն[3]։

Ուսումնարանը, որը ծխական տիպի էր, բաղկացած՝ երկու դասարանից, կարող էին ընդունվել 8—14 տարեկան աղջիկները[4]։

Ավանդվող առարկաների մեջ ամենակարևոր տեղը գրավում էին կրոնագիտությունը, հայոց լեզուն և ռուսաց լեզուն։ Առաջին դասարանում ավանդվում էին կրոնագիտություն, հայոց լեզու, հայոց պատմություն, ռուսաց լեզու (ընթերցանություն և թարգմա-

1 Պ ե ր ճ Պ ռ ո շ յ ա ն, Գայանյան օրիորդաց ուսումնարան Երևանումը («Մեղու Հայաստանի» (լրագիր), Թիֆլիս, 1866, № 19)։

2 «Մեղու Հայաստանի» (լրագիր), 1866, № 19, էջ 150։

3 Նույն տեղը, էջ 151։

4 Նույն տեղը, էջ 152։

նություն), հայոց և ռուսաց վայելչագրություն, ձեռագործություն և նկարչություն (շաբաթական 24 դաս)։ Երկրորդ դասարանում վայելչագրությունների և նկարչության փոխարեն ավանդվում էին ընդհանուր պատմություն, աշխարհագրություն և թվաբանություն[1]։ Ուսումնարանում իշխող մեթոդը սխոլաստիկականն էր, ամենուրեք զգացվում էր հայկական եկեղեցու հսկողությունն ու ազդեցությունը թե՛ ուսման և թե՛ դաստիարակության բնագավառում։

Գայանյան օրիորդաց ուսումնարանի նյութական միջոցները համեմատաբար բավարար էին։ Գնալով ավելանում է նրա սանների թիվը։ Դպրոցական վարչությունը հարց է հարուցում ավելացնելու դասատուների թիվը և դպրոցը ծխականից վերակազմելու միջնակարգի։ Երևանի փոխանորդի միջոցով այդ մասին 1879 թ. հունիսի 8-ին հարց է հարուցվում կաթողիկոսի առաջ դպրոցը միջնակարգ դարձնելու համար։ Խնդիրքը հարգվում է, 1879 թ. օգոստոսի 31-ին սինոդի կարգադրությամբ Գայանյան ուսումնարանը համարվում է միջնակարգ և նրան թույլատրվում է նյութական միջոցները ներելու դեպքում, բաց անելու երրորդ դասարան[2], ինչպես նաև նախապատրաստական դասարան։ Դպրոցի աստիճանի փոփոխմամբ ընդարձակվում են նրա ուսումնական պլաններն ու ծրագրերը, ավելանում է ավանդվող առարկաների թիվը[3]։

Գայանյան դպրոցն իր բացման պահին ուներ 12 աշակերտ[4], 1871 թ. նրա աշակերտների թիվը հասնում է 35-ի, 1879 թ., երբ դարձվեց միջնակարգ, աշակերտների թիվը հասել էր 103-ի, իսկ 1880 թվականին՝ 123-ի[5]։

Դպրոցը սկզբնական շրջանում, ավելի քան 11 տարի շարունակ, չուներ իր սեփական շենքը և տեղափոխվում էր տեղից տեղ։ Նրա այդ աստանդական կյանքին վերջ է տրվում 1877 թ., երբ Ղևոնդ Ղազարյանի միջոցներով Պողոս-Պետրոս եկեղեցու բակում նրա համար կառուցվում է նոր և համեմատաբար հարմար շենք, որից հետո այդ շենքին կից՝ դպրոցական վարչությունը թատրոնի

[1] «Մեղու Հայաստանի» (լրագիր), 1866, № 19, էջ 152։

[2] ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 227, վավերագիր 163։

[3] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 52).

[4] «Մեղու Հայաստանի» (լրագիր), 1866, № 19, էջ 148։

[5] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 52).

համար կառուցել է տալիս երեք սենյակներից բաղկացած մի շենք և բեմ, դրանք կահավորելով թատերական ներկայացումներին հարմար կերպով[1]։

Մխական դպրոցի բացվելուց առաջ, Նորքում տղա երեխաները գրել-կարդալ են սովորել մասնավոր մարդկանց տներում՝ խալֆայական դպրոցներում[2]։ Երևանի ուսումնական գործի հառաջադիմության հետ միասին նրա թաղերից մեկը կազմող Նորքում ևս մի շարք անձնավորություններ ձգտում են իրենց թաղում ունենալ սեփական դպրոց։ Այստեղ, 1860 թվականին, ավագ քահանա Պողոս Տեր-Ավետիսյանի նախաձեռնությամբ, ս. Սիմեոն եկեղեցու գավթի հարավային կողմում կառուցվում է տղաների ուսումնարանը, մասամբ ժողովրդից հավաքված միջոցներով, մասամբ էլ՝ եկեղեցու տրամադրած գումարներով[3]։ Ութ տարի անց՝ 1866 թ. Նորքում բացվում է իգական դպրոց ևս, որը գտնվում էր նույն եկեղեցու արևմտյան կողմում։ 1877 թ. Նորքեցի Հարություն Մովսես Հարությունյանը՝ ի հիշատակ իր կնոջ, գավթի հյուսիսային կողմում կառուցել է տալիս օրիորդաց դպրոցի նոր շենք։ Այդ դպրոցը կոչվեց «ս. Շողակաթի» անվամբ[4] և 1880 թ. իր մեջ միավորեց նաև տղաների դպրոցը։ Այսպիսով, Նորքի ծխական դպրոցը դառնում է երկսեռ դպրոց։ Նախկինում էլ օրիորդաց ու տղաների դպրոցների կառավարությունը մեկ է եղել, սակայն դրանց վերջնական միացումը կատարվում է 1880 թվականին և այն ժամանակավորապես դառնում պետական[5]։ Հետագայում Նորքի դպրոցի կյանքում, ինչպես և հայկական մյուս բոլոր դպրոցներում, տեղի են ունենում շատ դեպքեր։

Նորքի դպրոցը մեզ հետաքրքրող շրջանում չուներ կանոնադրություն, ավանդվող առարկաների ծրագրեր։ Ուսուցիչները ավանդել են՝ ինչպես և ինչ իրենք են ցանկացել։ Դպրոցը գտնվում էր խղճալի դրության մեջ՝ չէին նշված սահմանված կայուն ժամեր,

[1] ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 227, վավերագիր 163, տե՛ս նաև վավերագիր 153։

[2] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 58, թ. 129։

[3] Նույն տեղը։ ՀՍՍՌ ՊԿՊԱ մի այլ ֆոնդում (ֆ. 197 ս/514, գ. 315, թ. 24), որը վերաբերում է XX դարի երկրորդ տասնամյակի վերջերին, ասված է այն մասին, որ Նորքի դպրոցի հիմնադրման տարին տուրգ հայտնի չէ, միայն հայտնի է, որ 1870 թ. նա դոյություն է ունեցել, և այլն։ Մինչդեռ ավելի հին ժամանակներին վերաբերող մեր վկայակոչած ֆոնդում ասված է, որ Նորքի դպրոցի շենքը կառուցվել և բացվել է 1860 թվականին։

[4] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 58, թ. 129—130։

[5] Նույն տեղը, ֆ. 197 ս/514, գ. 315, թ. 24։

կանոնավոր արձակուրդներ, չկային դասատախտակներ, դասագրքեր, դասավանդման մեթոդները մեծ մասամբ խալֆայական էին։ 70-ական թվականներին փորձեր են կատարվում վերացնելու դրպրոցի նշված բացերը[1], սակայն շատ դեպքերում այդ փորձերը անհաջողությամբ են վերջանում։

Դպրոցն ուներ իր հոգաբարձուները։ Նրա նյութական միջոցները հավաքվում էին նվիրատվություններից, ուսման վարձից և Նորքի ս. Աստվածածին ուխտատեղի եկամուտներից[2]։ Աշակերտների թիվը ավելի քան 100 էր, որոնց մեծ մասը սովորաբար կազմել են տղաները։ 1880 թ. նրա աշակերտների թիվը հասել է 110-ի, որից 73-ը տղաներ, իսկ 37-ը՝ աղջիկներ էին[3]։

Դպրոցն ուներ իր գրադարանը, ուր 80-ական թվականների վերջերին կար մինչև 2000 կտոր գիրք[4]։ Դպրոցը մեկդասյան, ապա երկդասյան է եղել։ Ավանդվել են կրոն, լեզուներ, պատմություն, աշխարհագրություն, նկարչություն և այլն։

Գերմանուհի Սոֆիա Ստասյուլևիչի պանսիոնը բացվել է 1877 թվականին։ Նա, նախքան Երևանում պանսիոն բաց անելը, դասնրվում էր Նախիջևանում և զբաղվում էր մանուկների դաստիարակությամբ։ Նախիջևանցի Քյալբալի-խանի խորհրդով, որի երեխաները նույնպես դաստիարակություն էին ստացել նրա մոտ, Ս. Ստասյուլևիչը գալիս է Երևան և իրեն նվիրում ազգրեջանցի, հայ և ռուս մանուկների դաստիարակությանը։ Նրան Երևանում օգնություն է ցույց տալիս Շաֆի-բեկը և, վարձելով մի տուն, նա սկսում է իր շուրջը համախմբել փոքրիկ ազգրեջանցիներին։ Շուտով նրա աշակերտների թիվը նախ հասնում է 15-ի, ապա՝ 45-ի։ Գերմանուհին փորձված, համակրելի դաստիարակչուհի էր և կարողանում էր առանց մեծ դժվարությունների՝ գրավել մանուկներին[5]։ Նրա պանսիոնը, ինչպես վկայում է Ս. Զելինսկին, մասնավոր դպրոցների մեջ եղել է ամենաօրինակելին, իսկ նրա՝ պրոգիմնազիա մտնող ասները եղել են ամենաառաջավոր աշակերտները։ 1877—1880 թթ. Ս. Ստասյուլևիչի պանսիոնում եղել է 105 աշակերտ, որոնցից 58-ը՝

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 7, գ. 58, թ. 129—130։

[2] Նույն տեղը։

[3] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, Приложение).

[4] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 197 ս/514, գ. 315, թ. 24։

[5] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 53)։

ադրբեջանցիներ, 43-ը՝ հայեր, 4-ը՝ ռուսներ։ 1880 թվականին նրա պանսիոնում կային 45 աշակերտ, որոնցից 15-ը գիշերօթիկներ[1]։

Նշվածներից բացի՝ Երևանում մեզ հետաքրքրող շրջանում գործում էին նաև նոր բացված Ա. Ս. Պուշկինի անվան հազարային ուսումնարանը, եկեղեցիներին ու մզկիթներին կից եղած դպրոցները և մասնավոր խալֆայական տիպի դպրոցներ, որոնք իրենց բնույթով և մեթոդներով մնացել էին նախկինը։

Այս շրջանում բացվում են և այնպիսի մասնավոր դպրոցներ, որոնք իրենց ուսման դրվածքով, ծրագրերով ու պլաններով մոտենում էին պետական դպրոցներին։ Այդ բնույթի էր, օրինակ, վերը նշված Սոֆյա Ստասյուլևիչի պանսիոնը, որը տարրական կրթություն էր տալիս մանուկներին։

50—60-ական թվականներին և հետո Երևանում բացվում են մասնավոր մի քանի դպրոցներ։ Մասնավոր դպրոց բացելու համար անհրաժեշտ էր Երևանի գավառական դպրոցի (իսկ 1868 թ.՝ պրոգիմնազիայի) տեսուչի միջնորդությամբ՝ հատուկ թույլտվություն ստանալ Կովկասի ուսումնական օկրուգից։ 50-ական թվականներին գավառական դպրոցի տեսուչի միջոցով Երևանում 25 պատանիների համար մասնավոր դպրոց բացելու հայց են ներկայացրել Երևանի բնակիչ Զաքարիա Տեր-Զաքարովը և Կորգանովը, որոնք երկուսն էլ ունեին բավարար կրթություն։ Տեսուչի հարուցած միջնորդություններ հարգվում է և Կովկասյան ուսումնական օկրուգը Զաքարիա Տեր-Զաքարովին և Կորգանովին թույլատրում է (1856 թ. սկզբներին) Երևանում բացելու իրենց մասնավոր դպրոցը, յուրաքանչյուրը 25 տղաների համար[2]։ Սակայն, հայտնի չէ, թե արդյոք նրանք բացեցին դպրոցներ, թե՝ ոչ, իսկ եթե բացեցին, ապա ինչքան ժամանակ գոյություն ունեցան դրանք։

Կովկասի մասնավոր դպրոցները որոշ հսկողության տակ վերցնելու և դրանք իրենց կարգ ու կանոնով, բնույթով և այլն պետական դպրոցներին մոտեցնելու նպատակով՝ փոխարքայի կողմից 1879 թ. ապրիլի 13-ին հրապարակվում է մասնավոր ուսումնարանների համար մի հատուկ կանոնադրություն։ Ըստ դրա, մասնավոր դպրոցներ կարող են լինել բաց, երբ միայն ավանդվում են առարկաները, և փակ, երբ դպրոցն ուներ նաև պանսիոն։ Թույլատրվում է երկսեռ ուսուցում միայն այն դեպքում, երբ աշակերտները 11 տարեկանից մեծ չեն։ Ուսումնական առումով՝ կանոնա-

[1] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 53).

[2] Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 1, ցուցակ 1, գ. 129, թ. 4, գ. 134, թ. 4։

դրությունը մասնավոր ուսումնական հաստատությունները բաժանում է երեք կարգի՝ բարձրագույն կամ առաջին կարգի ուսումնարանների, որոնք ունեին 6 դասարան, երկրորդ կարգի ուսումնարանների, որոնք ունեին երեք դասարանից ոչ պակաս և երրորդ կարգի՝ երկու կամ մեկ դասարանով[1]:

Կանոնադրությունը յուրաքանչյուր մասնավոր դպրոցում ավանդվելիք առարկաների ընտրությունը թողնելով դրա տնօրինողների հայեցողությանը, միաժամանակ բոլոր այդպիսի դպրոցների համար պարտադիր էր համարում կրոնը և ռուսաց լեզուն, իսկ դպրոցում աշխարհագրության և պատմության ավանդվելու դեպքում՝ նաև Ռուսաստանի աշխարհագրությունն ու ռուսաց պատմությունը[2]: Եթե մասնավոր դպրոցները իրենց ուսումնական պլաններով ու ծրագրերով մոտենում էին պետական դպրոցներին, ապա կանոնադրությունը թույլ էր տալիս դրանց տալ պետական դպրոցների անվանակոչումներ՝ գիմնազիա, պրոգիմնազիա, քաղաքային, ռեալական ուսումնարաններ, և օգտվելու դրանց համար սահմանված արտոնություններից: Ըստ կանոնադրության, մասնավոր դպրոցներ կարող են հիմնել միայն ռուսական քաղաքացիները, որոնք ունեն համապատասխան կրթություն և հատուկ թույլտվություն՝ Կովկասի ուսումնական օկրուգից[3]:

Այսպիսով, մասնավոր դպրոցները մեզ հետաքրքրող շրջանում երկու տեսակ էին, մեկը հնուց պահպանված խալֆայական տիպի, որոնց բնույթի մասին ասված է իր տեղում, իսկ մյուսը՝ նոր բացվող մասնավոր դպրոցները, որոնք իրենց ուսումնական ծրագրերով ու պլաններով մոտենում էին պետական դպրոցներին:

Երևանի ծխական և մասնավոր դպրոցների թիվը արագ կերպով փոփոխվել է: 1863 թ. քաղաքում կային ծխական երեք դպրոց[4], 1875 թ.՝ 5, որոնցից երեքը արական, երկուսը իգական[5], իսկ 70-ական թվականների վերջերին դրանց թիվը ավելի քան կրկնապատկվել էր: Էլ ավելի մեծ փոփոխություններ էր կրում մասնավոր դպրոցների թիվը, սակայն ի տարբերություն ծխական դպրոցների, որոնք գնալով բազմացել են, մասնավոր դպրոցները մերթ ավելացել են, մերթ էլ պակասել: 1863 թ. հայկական և ազգրիջանական

---

[1] Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 117, ց. 127, թ. 14:

[2] Նույն տեղը:

[3] Նույն տեղը, թ. 14—16:

[4] «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 71:

[5] «Դպրոց» (ամսագիր), Վաղարշապատ, 1875, հոկտեմբեր, № 4:

մասնավոր բոլոր դպրոցները եղել են 13[1], իսկ 70-ական թվականների վերջերին իջնում են 12-ի։

Մշտապես գործող պետական, հոգևոր և մասնավոր դպրոցների (առանց խալֆայական տիպի և մզկիթներին կից եղած դպրոցների) աշակերտների թվի, ազգային կազմի, դպրոցների նյութական միջոցների քանակի և ուսման վարձի մասին՝ 1880 թվականի դրությամբ Ս. Զելինսկին տվել է մի ընդարձակ աղյուսակ[2], որից օգտվելով, հարկ ենք համարում ընթերցողի ուշադրությանը արժանացնել մի ավելի պարզը (աղյուսակ 33)։

Ինչպես տեսնում ենք, պետական, մասնավոր և հոգևոր դպրոցների թիվը 11 էր, որտեղում սովորողները 1880 թ. ընդամենը եղել են 858, իսկ ուսուցիչները՝ 60 հոգի, չհաշված խալֆայական դպրոցներն ու մզկիթներին կից եղած դպրոցները, որոնք, ըստ էության, ժամանակակից իմաստով դպրոց կամ ուսումնարան համարել չի կարելի։ 1865 թվականին Երևանում սովորողների թիվը՝ ներառյալ և մզկիթներին կից եղած դպրոցների սանները, հասնում էր ընդամենը 596-ի, իսկ առանց վերջիններիս՝ 373[3]։ Այլ կերպ ասած, ժամանակակից դպրոցների աշակերտների թիվը 15 տարվա ընթացքում (1865 թվականից մինչև 1880 թիվը) ավելացել էր ավելի քան 3,3 անգամ։ Սակայն, 1880 թվականի Երևանի բնակչության ուսման դործը գտնվում էր անմխիթար վիճակում։ Երևանում այդ ժամանակ ամենաբարձր տիպի դպրոցը միակ պրոգիմնազիան էր։ Սովորողների թիվը բնակչության ընդհանուր թվի նկատմամբ չնչին էր։ Նրա 7 արական, 3 իգական և 1 երկսեռ դպրոցներում սովորողների քանակը 1880 թվականին հասնում էր ընդամենը 858 հոգու, այսինքն մոտավորապես յուրաքանչյուր 100 մարդուց միայն 6-ն էր սովորում (6%-ը)։ Դեռ ավելին, 858 աշակերտներից 93-ը եկել էին գյուղերից և քաղաքացիներ չէին համարվում[4]։ Շատ-շատերը դպրոցը թողնում էին առանց ավարտելու, շատերն էլ բոլորովին չէին կարող դպրոց ընդունվել նյութական ծանր պայմանների պատճառով։ Այնպես որ, դպրոցների շրջանավարտները չնչին թիվ էին կազմում, քաղաքի բնակչության միայն մի չնչին տոկոսն

---

[1] «Кавказский календарь на 1866 год», отд. III, էջ 71։

[2] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отдел I, Приложение).

[3] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 125, ցուցակ 1, գ. 14, թ. 31—32։

[4] С. Зелинский, Город Эривань («Сборник материалов для опис. местн. и племен Кавказа», вып. I, отд. I, էջ 54).

Երևան նահանգի ուսուցիչների և սովորողների թիվը 1880 թվականին՝ ըստ սեռի և ազգային կ

№№ քր.	Ուսումնական հաստատության անունը	Ուսուցիչներ														Սովորողներ									
																Տղաներ						Աղջիկներ			
		Տեր		Տիկ		Ամբարձյալներ		Վարդապետներ		Լեհեր		Գերմանացիներ		Ֆրանսիացիներ		Ազնվա-կաններ		Հոգևոր-կաններ		Հարկատու-ներ		Ազնվա-կաններ		Հոգևոր-կաններ	
		ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	
1·	Գրգիմնազիա	6	—	3	—	1	—	1	—	1	—	—	—	1	—	17	—	—	—	2	—	35	—	6	
2·	Հայկական թեմական հոգևոր դպրոց	—	—	11	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	11	—	16	
3·	Քաղաքային ուսումնարան	—	—	2	—	1	—	1	—	—	—	—	—	—	—	3	—	—	—	2	—	12	—	2	
4·	Գագռս-Գնարոս եկեղեցու դպրոց	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	4	
5·	Նորքի երկսեռ ուսումնարան	—	—	3	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	2	1	3	
6·	Սոֆիա Մատայուկեչի պանսիոն	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	
7·	Կամամրականի մանկավոր դպրոց	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	2	—	—	
8·	Շահումի մանկավոր դպրոց	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	3	—	2	
9·	ս. Հռիփսիմեի ուսումնարան	—	—	1	1	—	—	1	2	—	1	—	—	—	—	—	17	—	—	—	6	—	25	—	
10·	ս. Գայանյան օրիորդաց ուսումնարան	—	—	9	6	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	12	—	
11·	Աշհականուշի օրիորդաց ուսումնարան	—	—	2	2	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	11	—	
	Ընդամենը	6	—	33	10	2	—	3	2	1	1	—	1	1	—	21	17	—	—	4	6	65	49	34	

Ա ն վ ա ն ա կ ա ն ք

Ա ն ա ձ ն ա գ ր ու թ յ ու ն

Անուններ		Հայեր		Ազգերէֆանգիներ		Վրացիներ		Լեհեր		Գերմանացիներ		Ֆրանսիացիներ		Թուրքեր		Հայեր						Ազգերէֆանգիներ						Այլք					
														Ազնվա-կանների		Հոգևորա-կանների		Հարկատու-ներ		Ազնվա-կանների		Հոգևորա-կանների		Հարկատու-ներ		Ազնվա-կանների		Հոգևորա-կանների		Հարկատու-ներ	
	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
	—	3	—	1	—	1	—	1	—	—	—	1	—	17	—	—	—	2	—	35	—	6	—	85	—	27	—	—	—	1	—	—	—	3	—	3	—	
	—	11	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	11	—	16	—	148	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
	—	2	—	1	—	1	—	—	—	—	—	—	—	1	—	—	—	2	—	12	—	2	—	17	—	11	—	—	—	—	—	—	—	1	—	—	—	
	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	4	—	37	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
	—	3	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	2	1	3	—	73	37	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	—	22	—	15	—	—	—	5	—	—	—	—	—	—	—	
	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	2	—	—	—	2	—	2	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	2	—	—	—	2	—	2	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	3	—	2	—	5	—	4	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	
	—	1	1	—	—	1	2	—	1	—	—	—	—	—	—	17	—	—	—	6	—	25	—	—	—	6	—	—	—	—	—	—	—	3	—	—	—	2
	—	9	6	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	98	—	13	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
	—	2	2	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	39	—	2	—	11	—	—	—	—	—	—	—	—	—	—	1	—	—	
	—	33	10	2	—	3	2	1	1	—	1	1	—	21	17	—	—	4	6	65	49	34	15	389	180	59	—	—	—	6	—	—	3	4	1	3	2	

60

858

Ծանոթագրություն

Գրագիմնազիայի ուսման վարձը մեկ տարվա համար մեկ աշակերտից կազմում էր 10—16 ռուբլի, նորչի գպրոցի ուսման վարձը՝ 6—12 ռուբլի, Ռոֆիա Առաքելիչի գաճառների ուսման և գիշերօթիկի վարձը՝ 200 ռուբլի, Գամառալակի վանական գպրոցում՝ ամսական 8 ռուբլի, Շահումի վանական գպրոցում տաքսական ուսման վարձը՝ 60—120 ռուբլի, Հոխթամեի ուսումնարանում 36 ռուբլի, իսկ Ամշենական ուսումնարանում՝ 19—24 ռուբլի։

էր գրագետ։ Գրագետների թիվը Երևանում հարյուրներից չէր անցնում։

Բացարձակ թվերով արտահայտված, սովորողների մեջ առաջին տեղը գրավել են հայերը, երկրորդը՝ ադրբեջանցիները, իսկ երրորդը՝ ռուսները։ Պատանի սովորողների թիվը աղջիկ սովորողների թվից մեծ էր մոտ երկու անգամ։ Այդ բոլորը դեռ ոչինչ։ 80-ական թվականներից սկսած, ցարական կառավարությունը վարում էր հայկական դպրոցները փակելու և իսպառ վերացնելու քաղաքականություն, որն այնքան մեծ դժգոհությունների տեղիք տվեց Հայաստանի բոլոր շրջաններում, որոնց թվում և Երևան քաղաքում։

Երևանի՝ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի պատմության հետ սերտորեն առնչվում է Մեսրոպ Թաղիադյանի, Խաչատուր Աբովյանի և Դազարոս Ագայանի գործունեությունը։

Մեսրոպ Թաղիադյանը *(1803—1858)* ծնվել է Երևան քաղաքի Կարբի թաղամասում, այդ պատճառով էլ երբեմն կոչվել է Կարբեցի։ Նա Երևանում քիչ է ապրել. պատանեկական հասակից սկսած՝ Մ. Թաղիադյանը ճանապարհորդություններ է կատարում Հայաստանում, Ղնդկաստանում, Փոքր Ասիայում, Աֆրիկայում և այլուր։ Նա համարվում է մեծ Աբովյանի ամենանշանավոր ժամանակակիցը։ Չնայած էջմիածնի հայածանքներին և խավարամոլ հոգևորականների դավերին, Մ. Թաղիադյանը ունեցել է եռանդուն գործունեություն և բեղմնավոր գրիչ։ Նա հայտնի մանկավարժ է, դասագրքերի, պատմական ուսումնասիրությունների, մանկավարժական-մեթոդական երկերի, բանաստեղծությունների, վեպերի հեղինակ, մանուկ եռանդուն գործիչ, կրքոտ հրապարակախոս։ Թաղիադյանը անշահախնդիր հայրենասեր էր, բազմակողմանիորեն կրթված անձնավորություն, որի աշխարհայացքը եղել է բուրժուական-լուսավորական։ Բնական Մ. Թաղիադյանին բախտ չի վիճակվել գործելու հայրենի՝ Երևան քաղաքում, սակայն նա միշտ ապրել է ծննդավայրի առօրյայով, սգացել է նրա դառն վիճակը պարսից տիրապետության շրջանում և ուրախացել նրա ազատագրմամբ։ Երևանի՝ պարսկական լծից ազատագրումը Թաղիադյանի համար աչքալուսյա էր։ Նա դրանում տեսնում էր իր հայրենիքի, իր ժողովրդի և իր ծննդավայրի փրկությունը «պարսից դառն չարչարանքից»[1]։

Երևանի մտավոր կյանքի, ժողովրդական ազատագրական

[1] Մեսրոպ Թաղիադյանի կյանքի և գործունեության մասին տե՛ս Հ. Մկրտչյան, Կենսագրութիւն Մեսրովբայ Թաւթեան Թաղիադեանց երեւանցւոյ, Թիֆլիս, 1866, Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 247—248, Ռ. Նաումյան, Մեսրոպ Թա-

շարժման, դպրոցների պատմության, մի խոսքով՝ նրա հոգևոր և քաղաքական կյանքի հետ են կապված մեր մեծ լուսավորիչ, հայ նոր գրականության հիմնադիր, ժամանակակից աշխարհաբար լեզվի մեծ պրոպագանդիստ, աննման մանկավարժ Խաչատուր Աբովյանի *(1805—1848)* կյանքի և գործունեության վերջին 5—6 տարին, երբ նա իրերի բերումով նշանակված էր Երևանի գավառական դպրոցի տեսուչ և ուսուցիչ։

Երբ Խ. Աբովյանը նշանակվեց Երևանի գավառական դպրոցի տեսուչ, արդեն ճանաչված մանկավարժ էր, ժամանակակից բարձր բագուն կրթություն ստացած, բազմակողմանիորեն զարգացած մեծ հայրենասեր, որն իր առաջադիմական-լուսավորական հայացքներով պայքարի էր ելել տիրող խավարամոլության դեմ։ «Աբովյանը այն ազնիվ, ողջամիտ և ճշմարտասեր մարդերից մինն էր, որոնց նմաններուն շատ սակավ ենք պատահում կյանքի մեջ... Աբովյանը լի էր վառված հայրենասիրությամբ դեպի յուր հայրենիքը»[1],— գրում է գերմանացի ճանապարհորդ Բ. Օ. Հաքսթհաուզենը, որին, Երևանում եղած ժամանակ, ուղեկցել և Հայաստանի ու Երևանի վերաբերյալ բազմաթիվ ու բազմատեսակ տեղեկություններ է տվել Աբովյանը։

Երևանում եղած տարիներին Աբովյանը, լինելով գավառական դպրոցի տեսուչ, ապրել ու գործել է քաղաքի հասարակության մեջ, հետաքրքրվել նրա առօրյայով, զարկ տվել քաղաքի բնակչության մտավոր զարգացմանը։ Նրա լուսավորական-մանկավարժական գործունեությունը չէր սահմանափակվում միայն գավառական դպրոցով կամ Երևանով։ Նա իր մանկավարժական նորամուծությունները ձգտում էր կիրառել և՛ գավառական, և՛ քաղաքի մյուս դպրոցներում, և՛ Երևանի նահանգի գյուղական դպրոցներում ընդհանրապես։

Խ. Աբովյանը իր ժամանակաշրջանի քաղաքական, մտավոր և տնտեսական իրադարձություններին արձագանքել է ծանրաչափական զգայությամբ։ Նա հայկական կյանքի ամենախոշոր երևույթներից մեկն է՝ «մի մեծ դարագլխի հուշարձան», ինչպես միանգամայն ճիշտ կերպով նրան բնութագրում է Լևոն[2]։

դիոսյան, Երևան, 1947, Մ. Մանթրոսյան, Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյանը, էջ 42—43, Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Երևան, 1956, էջ 266—372։

[1] Տե՛ս «Կովկազ Հայոց աշխարհին» (ամսագիր), Թիֆլիս, 1862, № 1, էջ 20—22։

[2] Լևոն, Պատմություն Երևանի Հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1837—1912, էջ 101։

Հաչատուր Աբովյան (1805—1848) (Երևանի պատմության թանգարան)։

Աբովյանը իր ստեղծագործություններում արտահայտել է ազատության, կուլտուրական առաջադիմության, ազգերի համերաշխության, հայ և ռուս ժողովուրդների բարեկամության գաղափարը, պայքար է մղել խավարամտության և ստրկամտության դեմ։

Աբովյանի բեղմնավոր գրչին պատկանող գրվածքներից մի քանիսը լույս աշխարհ են եկել Երևանում և անմիջականորեն առնչվում են քաղաքի կյանքի հետ։ Երևանի հետ է կապված «Վերք Հայաստանի» վեպի այուժեն, մի վեպ, որը արտահայտում է հայ ժողովրդի պատմության ամենակարևոր շրջադարձային ժամանակաշրջաններից մեկը՝ Արևելյան Հայաստանը պարսկական ծանր լծից ազատագրվելու ժամանակաշրջանը։ Այդ առումով էլ «Վերք Հայաստանի»-ն, պատմավեպ լինելու հետ միասին, այդ ժամանակաշրջանի ամենատուժ պատմական աղբյուրներից մեկն է[1]։

Ականավոր գրող և մեծ մանկավարժ Ղազարոս Աղայանը (1840—1911) Երևանում ապրել է 70-ական թվականների երկրորդ կեսին, երբ այստեղ աշխատում էր որպես թեմական հոգևոր դպրոցի ուսուցիչ։ Աղայանը մինչ այդ ուներ մանկավարժական աշխատանքի վեց տարվա փորձ (1870—1876 թթ.), որը ձեռք էր բերել նախ Ավետարանդրապոլում, ապա Ախալցխայում։ Ինչպես մյուս տեղերում, այնպես էլ Երևանում Աղայանը իր մեծ նախորդի՝ Խաչատուր Աբովյանի օրինակով ձգտում է բարեփոխություններ մտցնել քաղաքի դպրոցների կյանքում։ Նա իր պաշտոնավարության ամբողջ ընթացքում պայքարում է դպրոցում իշխող կղերական-սխոլաստիկական մեթոդների և խալֆայական դպրոցի արատների դեմ։ Աղայանին բախտ չէր վիճակված մինչև վերջ մնալու մի տեղում։ Նա Երևանից տեղափոխվում է Շուշի, այստեղից էլ Թիֆլիս, ապա՝ Վաղարշապատ, միշտ զբաղվելով իր սիրած աշխատանքով՝ մանուկների դաստիարակությամբ։ Աղայանը մեր մայրենի լեզվի ամենափորձված ուսուցիչներից մեկն է, լեզվի մի

[1] Խ. Աբովյանի կյանքի և գործունեության մասին տե՛ս Барон Август фон-Гакстгаузен, Закавказский край, ч. I, «Դիվան Խ. Աբովյանի», Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 248—249, էնս, Պատմություն Երևանի Հայոց թեմական հոգևոր դպրոցի, Մ. Ստեփանյան, Հայ մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյանը, Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, էջ 210—211, Г. А. Абов, Хачатур Абовян. Жизнь и творчество, Ереван, 1848, Агасов Г., Пламенное сердце (Хачатур Абовян), Ереван, 1941, Հ. Մուրադյան, Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին, Երևան, 1941, և այլ տեղերում։

Ղազարոս Ագայան (1840—1911) (Հայկական ՍՍՌ գրական թանգարան)։

շարք դասագրքերի հեղինակ, դասագրքեր, որոնցով սովորել են մի քանի սերունդներ։ Դեմոկրատ մանկավարժ և ժողովրդի կյանքի երգիչ Ղազարոս Ագայանի երևանյան մի քանի տարվա գործունեությունը նրան կապում է մեր մայրաքաղաքի պատմության հետ[1]։

Երևանի դպրոցներից մի քանիսը (պրոգիմնազիան, հոգևոր թեմական դպրոցը և այլն) ունեին իրենց գրադարանները, յուրաքանչյուրը մի քանի հարյուր կտոր գրքերով։ Համեմատաբար ամենից հարուստ գրադարանը պրոգիմնազիայի գրադարանն էր, որը, ինչպես տեսանք, 1868 թվականին ուներ 1686 կտոր գիրք։ Մյուս

1 Ղազարոս Ագայանի կյանքի և գործունեության մասին տե՛ս պրոֆ. Ա. Շավարշյան, Վ. Աստվածատրյան, Ա. Աստրյան, Ղ. Ագայանը — մանկավարժ, Երևան, 1941, Աստրյան, Ղ. Ագայան, Կյանքն ու գործունեությունը, Երևան, 1940, Հր. Մուրադյան, Ղազարոս Ագայան, Երևան, 1941, Արտեն Տերտերյան, Հայոց նոր գրականության պատմություն XIX—XX դդ., պրակ 3, Երևան, 1930։

դպրոցների գրադարաններն ավելի աղքատիկ էին։ Դրանցից բացի, ինչպես հիշատակված է մի պաշտոնական փաստաթղթի մեջ, 1856—1859 թթ. (հավանաբար հենց 1859 թ.) Երևանում փորձ է կատարվել հիմնելու հայկական հանրային գրադարան։ «Երևան քաղաքում կազմակերպվում է հայկական հասարակական գրադարան»,— ասված է Կովկասի փոխարքա Ա. Ի. Բարյատինսկու 1856—1862 թթ. գործունեության մասին եղած զեկուցագրում[1]։ Սակայն դեպքերի հետագա ընթացքը ցույց է տալիս, որ Երևանում հանրային գրադարանի կազմակերպումը միայն ձևական բնույթ էր կրում, իրականում այդպիսին գոյություն չուներ։ Այդ պաշտոնական փաստաթուղթը թերևս վերաբերում է ոչ թե գրադարանին, այլ ընթերցարանին, որը իրոք կազմակերպվել է այդ ժամանակներում։

60-ական թվականներին Երևանի երիտասարդության և ինտելիգենցիայի շրջաններում, Թիֆլիսում և այլ քաղաքներում հայկական կուլտուրայի ձեռք բերած հաջողությունների ազդեցության տակ, ձգտում է առաջանում քաղաքում կազմակերպելու մի ընդհանուր ընթերցարան, որպեսզի նրա միջոցով ժողովրդին ծանոթացնեն ժամանակակից հայկական մամուլին և լույս ընծայվող գրականությանը, զանազան գրքերով բավարարեն ընթերցող հասարակությանը։ Անուղղակի փաստերը ցույց են տալիս, որ մինչ այդ՝ ընթերցարան կազմակերպելու մի քանի փորձեր կատարվել էին, բայց բոլորն էլ վերջացել էին անհաջողությամբ, որովհետև ինտելիգենցիան, նրա առաջավոր ներկայացուցիչները չեն ցուցաբերել բավական եռանդ ու ցանկություն։

60-ական թվականներին դեպքերը սառնում են ավելի բարենպաստ ընթացք։ Ընթերցարանը կազմակերպելու համար սկզբնական շրջանում դրամական միջոցներ տրամադրելու ցանկություն են հայտնում ընդամենը 32 քաղաքացիներ (յուրաքանչյուրը 6 ռուբլու սահմաններում)[2]։ Սակայն, նվիրատվությունները ընդունում են անհամեմատ ավելի լայն մասշտաբներ։ Քաղաքի բնակիչներից շատերը ընթերցարանի օգտին տրամադրում են դրամ, զանազան իրեր, գրքեր և այլն։ 1865 թվականի վերջերին արդեն համալրված էին ընթերցարանի բացման համար անհրաժեշտ նվազագույն միջոցներ։ Նա ուներ 30 անդամներ, որոնցից 24-ը մուծել

1 ԱԿԱԿ, տ. XII, էջ 1386։
2 Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 8, գ. 3, թ. 1—3։

էին իրենց անդամավճարները (յուրաքանչյուրը 6 ռուբլի)[1]: Ընթերցարանի օգտին տրված դումարները և այլ միջոցները 1865 թ. վերջերին հասնում էին ընդամենը 233 ռուբլու[2]: Մի քանի երիտասարդների գործադրած ջանքերի համեմատությամբ ստացված արդյունքները աննշան էին: Ընթերցարան կազմակերպելու միտքն առաջին անգամ հղացել էր Երևանցի Ներսես Հովհաննիսյանը տակավին 50-ական թվականի սկզբներին, սակայն այդ ուղղությամբ նրա գործադրած բոլոր ջանքերն անհեղի էին անցել, քաղաքի հարուստներն ու «լուսավորյալ» երիտասարդությունն անտարբեր էին մնացել և չէին օգնել հանրօգուտ այդ գործին: Հետագայում նոր փորձ էին կատարել՝ մի քանի հոգով կազմելու մասնավոր մի ընկերություն և նրա միջոցների հաշվին բացելու փոքրիկ ընթերցարան: Այս անգամ գործի մեջ է ներգրավվում երիտասարդ Նահապետ Աթանասյանը, որը կարողանում է այդ ընթերցասիրության ընկերության մեջ ներգրավել նաև իր մի քանի ընկերներին: Երիտասարդների այդ ձեռներեցությանը օգնում է փոխանորդը՝ Ստեփանոս արքեպիսկոպոսը, որը նոր բացվող ընթերցարանի օգտին տրամադրում է 25 ռուբլի և հատուկ ժողով գումարելով՝ ընտրել է տալիս չորս հոգուց բաղկացած մի հանձնաժողով: Հանձնաժողովը Զաքարիա Տեր-Զաքարյանցի գլխավորությամբ պետք է հոգար ընթերցարանի բացման և նրա աշխատանքի կարգավորման բոլոր գործերը[3]:

Սկզբնական շրջանում ընթերցարանին հոգևոր թեմական դպրոցում տրամադրվում է մի սենյակ՝ մի քանի աթոռներով ու սեղաններով հանդերձ: Սակայն հետագայում ընթերցասիրները տրտնջում են, թե ընթերցարանը քաղաքի կենտրոնում չէ և անհնար է այնտեղ հաճախել երեկոները: Հանձնաժողովը, ընթերցողների այդ պահանջը բավարարելու համար, վարձում է այրի Աղամալյանցի կիսավարտ սենյակն ու նախասենյակը և դրանց շինարարությունն ավարտելով՝ ընթերցարանը հոգևոր դպրոցի շենքից տեղափոխում է այդտեղ: Դրանից հետո նույնպես ընթերցարանը կանոնավոր չի գործում, ընթերցողներից շատերը, փոխանակ ընթերցարան հաճախելու, ստորագրությամբ իրենց տուն էին տանում ընթերցվելիք գրքերն ու թերթերը[4]: Մասամբ այդ էր պատճառը,

[1] Տե՛ս ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 8, գ. 3, թ. 1—3:

[2] «Մեղու Հայաստանի» (լրագիր), Թիֆլիս, 1866, № 6, Զաքարիա Տեր-Հովհաննիսյան Տեր-Զաքարեանց, Ազգային ընթերցարան Երևան բաղաքի:

[3] «Մեղու Հայաստանի» (լրագիր), Թիֆլիս, 1866, № 6:

[4] Նույն տեղը:

որ ընթերցարանը մնում է խղճուկ վիճակում, և օրերով նրա դռները չէին բացվում:

Մեզ հետաքրքրող շրջանում, երբ Թիֆլիսում, Պոլսում և այլ քաղաքներում հրատարակվում էին հայերեն բազմաթիվ թերթեր ու ամսագրեր, Երևանում լույս չի տեսել և ոչ մի թերթ: Առաջին հայերեն թերթը Երևանում եղել է «Պատկ» դրական, պատմական և մանկավարժական շաբաթաթերթը, որը հրատարակվել է 1880 թվականից սկսած (մինչև 1884 թվականը): Իսկ Երևանի հայերեն առաջին ամսագիրը, որը կոչվում էր «Առողջապահական թերթ», հրատարակվել է 1881—1884 թթ.[1]: Ինչպես տեսնում ենք, այդ երկուսն էլ վերաբերում են Երևանի պատմության հաջորդ ժամանակաշրջանին և կարող են ուշադրության արժանանալ հետագայում:

Դպրոցական և ընդհանրապես լուսավորական բնագավառի համեմատությամբ էլ ավելի խղճուկ վիճակում էր գտնվում արվեստը: Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ նախկին ժամանակների պես այն ժամանակաշրջանի Երևանում ազգային նկարչության նշույլն անգամ գոյություն չուներ. քանդակագործությունը սահմանափակվում էր վարչական մի քանի շենքերի (նահանգական վարչության, ոստիկանական վարչության շենքեր և այլն) ճակատային մասերում, շքամուտքերի մոտ և կարնիզների ուղղությամբ կատարված զանազան քանդակներով, որոնք բավականաչափ բարձրաճաշակ են և կատարված են ռուսական ու միջնադարյան հայկական քանդակագործական արվեստների ոճերի հարատկման եղանակով: Այդ քանդակները, առանց բացառության, կատարված են սև կամ գորշ տուֆի վրա և իրենց արվեստով մինչև օրս էլ մնացել են շինարարական-քանդակագործական արվեստի ուշադրության արժանի նմուշներ: Պետք է նկատել, որ ինչպես այս, այնպես էլ հետագա շրջանում Երևանի շինարարական-ճարտարապետական արվեստը միշտ պարունակում էր երկու՝ հայ և ռուս ժողովուրդների արվեստի տարրերը:

Քանդակագործության մեջ արձանագործության ճյուղը իսպառ բացակայում էր այդ ժամանակաշրջանի Երևանում: Քանդակագործությունն ամբողջապես կապված էր ճարտարապետության հետ: Իսկ մեզ հետաքրքրող շրջանի Երևանում ճարտարապետական առումով գլուխ-գործոցներ չեն ստեղծվել: Ճարտարապետական առումով շատ թե քիչ ուշադրության արժանի կառուցվածք-

[1] Հով. Պետրոսյան, Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա (1794—1900), Երևան, 1956, էջ 380—381 և 386:

նները միայն նշված շենքերն էին: Դրանք մեկ կամ երկու հարկանի շենքեր են, որոնց պատերը շարված են մեծ խնամքով մշակված սրբատաշ տուֆով՝ կրաշաղախի օգտագործումով: Թեպետ փոքր են այդ շենքերը, սակայն հարմարավոր և գեղեցիկ: Դրանց թիվն այնքան աննշան էր, որ հին Երևանի գորշ ֆոնի վրա ամենևին նկատելի չէր դրանց գոյությունը:

Ինչպես նշվեց, մեզ հետաքրքրող շրջանի Երևանում տեղական-ազգային նկարչությունը իսպառ բացակայում էր, սակայն չի կարելի ասել, թե այստեղ նկարչություն ընդհանրապես գոյություն չուներ: Ռուս-պարսկական երկրորդ պատերազմի տարիներին Պասկևիչի արշավող զորքերի հետ միասին Հայաստանում և Հարավային Ադրբեջանում շրջում էր ռուս հայտնի նկարիչ Վ. Մաշկովը, որը Կովկաս էր ուղարկված Գիտությունների և արվեստների ակադեմիայի կողմից տակավին 1816 թվականին[1]: Պատերազմական գործողությունների ընթացքում, ամենածանր զրկանքների և դժվարությունների գնով՝ Վ. Մաշկովը նկարում է շուրջ 15 նկար, որոնցից 13-ի վիմագրություններից ժամանակին կազմվել է պարսկական պատերազմին նվիրված մի սքանչելի ալբոմ: Նրա վրձինին պատկանող այդ նկարներն են՝ 1) «Պարսիկների պարտությունը Ելիզավետապոլի տակ», 2) «Ջևանբուլաղի ճակատամարտը», 3) «Հաղթողների և պարտվողների դրությունը Ջևանբուլաղի ճակատամարտի վերջում», 4) «Աբասաբադ բերդի հանձնումը», 5) «Սարդարաբադի դրավումը», 6) «Երևանի բերդի գրավումը դրոհով», 7) «Ռուսական զորքերի անցումը Արաքսով», 8) «Հաղթական մուտքը Թավրիզ», 9) «Արշավանք դեպի Թավրիզ», 10) «Կոմս Պասկևիչի առաջին հանդիպումը Աբբաս-Միրզայի հետ», 11) «Հաշտության կնքումը Թուրքմենչայում», 12) «Պարսկական զումակը ոսկի բարձած անցնում է լեռան վրայով», 13) «Կոնստրիբուցիոն ոսկու ընդունումը Թավրիզում», 14) «Ռուսական զորքերի հանդիսավոր հանդիպումը Ներսես արքեպիսկոպոսի հետ Էջմիածնում» և 15) «40.000 հայերի գաղթը Պարսկաստանից դեպի ռուսական սահմանները գնդապետ Լ. Ե. Լազարևի անմիջական կարգադրությամբ 1828 թվականին»[2]: Այդ նկարներից 6-ը իրենց բնագիր վիճակում (նկատի պետք է ունենալ, որ յուրաքանչյուր նկարը կարող էր ունենալ բազմաթիվ բնագրեր, որովհետև դրանք ունեին իրենց

[1] В. Потто, Кавказская война, изд. 2-е, т. III, вып. IV. С. Петербург, 1888, էջ 597:

[2] Նույն տեղը, էջ 597—598:

վիմագրությունները, որոնց միջոցով կարելի էր բազմացնել համազոր բնագրեր) այժմ գտնվում են Երևանի պատմության (կամ կոմունալ, ինչպես ոմանք են ասում) թանգարանում: Դրանք են՝ «Ջևանբուլաղի ճակատամարտը», «Աբասաբադի հանձնումը», «Սարդարաբադի գրավումը», «Երևանի բերդի գրավումը դրոհով», «Ռուսական զորքերի անցումը Արաքսով» և «40.000 հայերի գաղթը Պարսկաստանից դեպի ռուսական սահմանները գնդապետ Լ. Ե. Լազարևի անմիջական կարգադրությամբ 1828 թվականին»:

Մաշկովի այդ նկարները, բարձրարվեստ լինելու հետ միասին, ունեն պատմական մեծ նշանակություն: Դրանք նկարված են իրական դեպքերի հիման վրա, ընտրելով նշված պատերազմի ամենահույժ կարևոր պահերը, որոնք նրա վրձինի տակ անմահացել են և դարձել հետագա սերունդների սեփականություն:

Նրա նկարները առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում մեզ՝ հայերիս համար, որովհետև դրանք պատկերում են Արևելյան Հայաստանի ազատագրման ամենակարևոր պահերը:

Երևանի պատմության թանգարանում պահպանվող Մաշկովի նկարների նշված հավաքածուն կազմում է թանգարանի ամենաարժեքավոր էքսպոնատներից մեկը: Այդ հավաքածուի նշանակությունը չի սահմանափակվում միայն տեղական և նույնիսկ միութենական մասշտաբով:

Այս շրջանում, ինչպես և Երևանի պատմության հետագա տասնամյակներին քաղաքում մշտական և պրոֆեսիոնալ թատրոն չի ստեղծվում, բայց 1827 թվականից սկսած՝ որոշ ընդմիջումներով, Երևանն ունենում է իր թատերական կյանքը:

Երևանում առաջին ներկայացումը կազմակերպվել է 1827 թ. վերջերին՝ նոյեմբեր կամ դեկտեմբեր ամսում, Պասկևիչի կողմից Երևանի բերդը գրավելուց հետո այնտեղ թողած կայազորի թատերասեր սպաների կողմից, որոնց, ըստ երևույթին, օգնել է նաև Հայկական մարզի ժամանակավոր վարչության պետ գեներալ Կրասովսկին: Կայազորի թատերական ինքնագործ խմբի ռեպերտուարը բաղկացած էր միայն մի պիեսից, այդ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» անմահ կատակերգությունն էր: Սրա մեջ հեղինակը իր գլխավոր հերոսի՝ Չացկու բերանով քննադատության է ենթարկել տիրող կարգերը: Քանի որ պինվորականների շրջանում փոքր թիվ չէին կազմում դեկաբրիստները, որոնք մեծ մասամբ բարձր զարգացած մարդիկ էին՝ իրենց գործունեությամբ ուղղված ցարական կարգերի դեմ, ուստի պրոֆ. Վ. Պարսամյանը միանգամայն ճիշտ կերպով ենթադրում է, որ ««Խելքից պատու-

Ա. Ս. Գրիբոյեդով, Ա. Ա. Ժանդր (Վիկտոր Հյուգոյի դիմանկարի փորագրությունից)

հաս»-ի բեմադրությունը Երևանում կապված է եղել ոչ միայն տեղի զորամասերի կուլտուրական սպասարկման կամ Գրիբոյեդովի տաղանդի սիրահարների կողմից նրան ուրախություն պատճառելու հետ, այլև դեկաբրիստների գործունեության, նրանց ձգտումների ու ցանկությունների հետ»[1]:

Ժամանակակիցները հիշողություններ են թողել «Խելքից պատուհաս»-ի երևանյան ներկայացման մասին, որը համարվում է դրա առաջին ներկայացումն ընդհանրապես:

Ըստ այդ հիշատակությունների, կատակերգության առաջին բեմադրությունը, ինչպես ասվեց, կազմակերպվել է 1827 թ. վերջերին: Ներկայացումը տրվել է նախկին սարդարի հայելապատ դահլիճում, որի տեղում այժմ կառուցված բազմահարկ բազալտյա շենքի վրա փակցված է համապատասխան ցուցատախտակ: Ներկայացմանը ներկա է եղել և ինքը՝ Գրիբոյեդովը: Նա անշուշտ դեռ չէր կարող լինել ոչ պրոֆեսիոնալ ու անփորձ դերասանների խաղից[2], սակայն թեկուզ և միայն բեմադրման փաստը, անկախ կատարման արվեստի վարպետությունից, պետք է որ զոհացուցիչ լիներ տաղանդավոր դրողի համար: Ներկայացումները շարունակվել են բավական ժամանակ, մինչև որ կոմս Պասկևիչը կարգադրել է դադարեցնել:

Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս»-ի բեմադրությունը Երևանի կյանքում ժամանակակից առաջին ներկայացումն է: Դրանից առաջ Երևանում իսկական թատերական ներկայացումներ չեն եղել: Այլ կերպ ասած, դա և՛ «Խելքից պատուհաս»-ի առաջին բեմադրությունն է, և՛ միաժամանակ Երևանի առաջին ներկայացումը:

Հայ թատրոնը անտարբեր չէր կարող մնալ տաղանդավոր

---

[1] Վ. Ա. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, էջ 66—67:

[2] «Խելքից պատուհաս»-ի առաջին երևանյան ներկայացման մասին տե՛ս «Тифлисские ведомости» (լրագիր), 1832, № 3, «Вестник Европы» (ամսագիր), 1875, № 7, В. Потто, Кавказская война... т. III, вып. IV, էջ 610, «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. IV, 1884, «Գրական թերթ», Երևան, 1945, № 2, Վ. Պարսամյան, Ա. Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, էջ 65—74, Ե. Շահազիզ, Հին Երևանը, էջ 237, И. Ениколопов, Грибоедов и Восток, էջ 46—47 և 104—105, М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, кн. первая, էջ 198—199, «Записки декабриста» Е. Лачинова об Армении, և ուրիշ տեղերում:

դրողի անմահ պիեսի նկատմամբ։ Հետաքրքրական է, որ Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս»-ը առաջին անգամ թարգմանվել է հայերեն և խաղացվել Թիֆլիսի հայկական թատրոնում 1881 թ. հունվարի 8-ին։ Ահա թե ինչ է հաղորդվում այդ ներկայացման մասին Թիֆլիսում հրատարակվող «Փորձ» ամսագրում, ««Խելքից պատուհաս» կոմ. հայկական բեմի վրա» վերնագրի տակ.

«Այս տարվա հունվարի 8-ը նշանավոր օր պետք է համարվի այն ամենքի համար, որոնց սիրելի է արվեստը։ Այդ երեկո հայ դերասանների մշտական խումբը ներկայացրեց Գրիբոյեդով ռուս բանաստեղծի անմահ կոմեդիան։ Այդ գործածքի ներկայացնելը մեծ պատիվ է բերում հայկական թատրոնի վարչության, քանի որում մինչև այժմ աշխարհիս և ոչ մի բեմի վրա ներկայացրած չէ այդ կոմեդիայի թարգմանությունը»[1]։

Եթե Թիֆլիսի հայկական թատրոնը կարող է պարծենալ, որ «Խելքից պատուհաս»-ը թարգմանաբար առաջին անգամ բեմադրել է ինքը, ապա Երևանի բնակչությունն էլ ամենայն իրավամբ պետք է հպարտանա, որ նրա առաջին բեմադրությունը (բնագրով) եղել է իր հայրենի քաղաքում։ Երևանի հասարակությանը սրբությամբ է պահպանում մեծ գրողի հիշատակը։

Երևան քաղաքի պատմության թանգարանում հատուկ տեղ է հատկացված Ա. Ս. Գրիբոյեդովի անվան հետ կապված նյութերին։ Մի հատուկ ցուցափեղկում ցուցադրված է «Խելքից պատուհաս» կատակերգության առաջին բեմադրությունը պատկերող՝ բանդակագործ Ո. Բեջանյանի պատրաստած մակետը, որը միանգամայն ճիշտ կերպով է արտահայտում այն ժամանակվա պայմաններն ու ոգին։

Սպարական ինքնագործ խմբի ներկայացումներն ընդհատվելուց հետո Երևանում մինչև 50-ական թվականների սկիզբն ընդհանրապես թատերական կյանքն է ընդհատվում, եթե չհաշվենք դրսից եկող առանձին լարախաղացների ելույթները։ Առաջին հայերեն ներկայացումը Երևանում տրվում է 1850 թվականի ամռանը՝ Կ. Պոլսից Թիֆլիս, ապա այստեղ դաստրոլների եկած «Արամյան ընկերություն» կոչված թատրոնի կողմից[2]։

«Արամյան ընկերություն» թատրոնը կազմակերպվել էր Կ. Պոլսում 1847 թվականին Հովհաննես Դասպարյանի անմիջական նախաձեռնությամբ և ղեկավարությամբ։ Վերջինս, որ ծնվել էր Կ. Պոլսում, բանվորի ընտանիքում, այդ ժամանակ ընդամենը 20—21 տարեկան էր։ Նա իր առաջին ելույթն ունեցել էր 1846 թ.՝ իր մի քանի ընկերներով և մեծ ազմուկ էր հանել մեծ քաղաքում։

Ընկերությունը կազմակերպելուց հետո անմիջապես հիմնում են թատրոն-կրկեսի փայտյա մի շենք, լրացնում դերասանական խումբն ու օժանդակ կազմը և սկսում մշտական ներկայացումները։ «Արամյան ընկերություն» թատրոն-կրկեսը գրավում է թուրքական մայրաքաղաքի հասարակության մեծագույն մասին, այդտեղ գործող իտալական և ֆրանսիական կրկեսներին մղելով հետին պլանի վրա։ «Վերջը բանն այնտեղ է հասնում, որ այդ երկու եվրոպական կրկեսները մեկը մյուսի հետևից փակվում են, և հրապարակը մնում է միայն Արամյան թատրոնին»[3]։

«Արամյան ընկերություն» թատրոնը Կ. Պոլսում շշմեցուցիչ հաջողության է հասնում հատկապես 1848 թ. աշնանը կազմակերպված օլիմպիական խաղահանդեսում, որտեղ սովորական համարներից հետո, մոտ 100.000 հանդիսատեսի առաջ, Դասպարյանի մասնակցությամբ, 20 մետր բարձրություն և 100 մետր երկարություն ունեցող լարի վրա խմբով ցուցադրվում է հրդեհի տեսարան։ Հայկական կրկեսի այդ սրամիտ ու բարդագույն համարը վերջնականապես սովերի տակ է ձգում իր բոլոր մրցակիցներին՝ եվրոպացից, Պարսկաստանից և այլ տեղերից եկած խմբերին[4]։

«Արամյան ընկերություն» թատրոնը ըստ իր բնույթի՝ թատրոն-կրկես էր։ Նրա ներկայացումները և՛ թատերական էին, և՛ կրկեսային։ Հայ թատրոնի պատմության ականավոր մասնագետ Գ. Լևոնյանը Արամյան թատրոնի սովորական ներկայացումները բաժանում է չորս մասի՝ պարանի խաղերի, մարմնամարզական և ուժի խաղերի, ներկայացում բեմի վրա և պարերի ու մնջախաղի[5]։ Նրա դերասանական խումբը պրոֆեսիոնալ էր, լավ կազմակերպված և «ուներ տարբեր ամպուլայի մշտական կատարողներ, սեփական երաժշտախումբ և սպասարկող անձնակազմ»[6]։ Գաս-

1 «Փորձ» (միամսյա հանդես), Տփխիս, 1881, փետրվար, № 2, էջ 142։

2 Գ. Լևոնյան, Արամյան ընկերություն թատրոնը կամ առաջին հայերեն ներկայացումը Երևանում 1850 թվին («Վէմ» (ամսագիր), Երևան, 1933, հոկտեմբեր, № 4, էջ 112)։

1 Գ. Լևոնյան, Արամյան ընկերություն թատրոնը կամ առաջին հայերեն ներկայացումը Երևանում 1850 թվին («Վէմ» (ամսագիր), 1933, № 4, էջ 112)։

2 Նույն տեղը, էջ 112—113։

3 Նույն տեղը, էջ 113։

4 Նույն տեղը։

5 Գևորգ Գոյան, Հայկական կրկեսի ազգային տրադիցիաները («Սովետական արվեստ», ամսագիր, Երևան, 1958, ապրիլ, № 4, էջ 58)։

պարյանի ղեկավարած այդ թատրոնին 20 տարի շարունակ (1846—1866 թթ.) միշտ տուղեկցել են հաջողություններ ինչպես տեղում՝ Կ. Պոլսում, այնպես էլ ուրիշ մի շարք հայաշատ քաղաքներում, որտեղ նա ժամանակավոր շրջագայության էր դուրս եկել ներկայացումներ տալու նպատակներով:

Թատրոնի դերասանների համար, առանց ձևոքերին հավասարակշռության ձողեր ունենալու, պարանների վրա պարելը, վազելը, նստելը, հարբած ձևանալը, զանազան շարժումներ ու խաղեր անելը ամենասովորական համարներն էին և նրանցից մեծ ջանքեր չէին պահանջում: Առանձնապես փայլում էր ինքը՝ թատրոնի հիմնադիրն ու նրա ղեկավարը՝ Հովհաննես Գասպարյանը, որին, գերմարդկային ուժ ունենալու համար, տվել էին «Նոր Հերկուլես» մականունը: Խմբի մյուս՝ առավել աչքի ընկնող դերասաններից էին Միքայել Բամբուկչյանը, Ալեքսան Սվաճյանը և ուրիշներ[1]:

Ահա այդ թատրոնն էր, որը, Կ. Պոլսում գտնվող երևանցի հարուստ վաճառական Հակոբ աղայի հետ 1849 թ. պայման կապելով և Կովկասի փոխարքայի թույլտվությունը առանձնով, գալիս է Թիֆլիս ներկայացումներ տալու: Թիֆլիսում խումբը կատուցել է տալիս թատրոնի շենք՝ 1500 հանդիսատեսի համար, ապա մեծ հաջողությամբ սկսում իր ներկայացումները: 1849—1850 թթ. թատերաշրջանում Արամյան թատրոնը Թիֆլիսի հասարակության համար տալիս է մի շարք ներկայացումներ: 1850 թ. ամառը, երբ Թիֆլիսի թատերասեր բնակչության մեծագույն մասը գնացել էր ամառանոց, իսկ ներկայացումները ընդհատվել էին, Հովհաննես Գասպարյանը որոշում է իր խմբով շրջագայել հայաշատ քաղաքներում՝ Երևանում, Նախիջևանում ու Թավրիզում և տալ կրկեսային ու թատերական ներկայացումներ[2]:

Փոխարքայի թույլտվությունն առանալուց հետո՝ Հով. Գասպարյանի խումբը թատերական բոլոր պարագաները ֆուրգոնների վրա բարձած, հիշյալ Հակոբ աղայի ուղեկցությամբ, 1850 թ. հունիսի վերջերին ժամանում է Երևան: Քաղաքացիների համար թատերական խմբի ժամանումը արտակարգ մեծ նորություն էր: Նրանք իրենց հայրենի քաղաքում առաջին անգամ էին տեսնում թատերական խումբ: Շուտով քաղաքում տարածվում են խմբի աֆիշները, որոնք ազդարարում էին մոտալուտ ներկայացումների մասին: Աֆիշներում գրված էր. «Արամյան ընկերություն Հովհաննես Գասպարյան. Հայ թատրոն-կրկես Կ. Պոլսի»[1]:

Թատրոնի ժամանակավոր շենք կառուցելու համար տեղ է հատկացվում Ձախի մեյդանում, Գյուրջի քարավանատնից ոչ հեռու: Մի քանի օրվա ընթացքում այդտեղ շտապ կերպով պատրաստում են ամֆիթատրոնի տեսք ունեցող փայտյա մի շենք, առանց առաստաղի: Շենքն ուներ երկու դուռ, բեմ և տախտակյա հասարակ նստարաններ[2]:

Առաջին ներկայացումը նշանակված էր ամառային մի ուրբաթ օր: Ներկայացումը պետք է տեղի ունենար ցերեկով և, չնայած շոգին, քաղաքում տոնական տրամադրություն էր: Ավանդական կուռնայի նվագի տակ թատրոնը լցվում է հադիսականներով, իսկ թատրոնի շուրջը, կառուների վրա նույնպես հավաքվում են բազմաթիվ մարդիկ՝ կրկեսային համարները դիտելու համար: Ներկայացումը սկսվում է կրկեսային համարներով: Հովհաննես Գասպարյանի շնորհալի խումբը մի քանի դժվարին փորձերից հետո կատարում է հրդեհի տեսարանը, որը անչափ մեծ տպավորություն է թողնում հասարակության վրա, մի հասարակություն, որը մինչ այդ տեսել էր միայն լարախաղացների սովորական համարներ: Բամբուկչյանի ու Սվաճյանի անկաշկանդ գործողությունները պարանի վրա, Հովհաննես Գասպարյանի անօրինակ և զարմանահրաշ փորձերը հիացմունք են պատճառում դիտողներին: Նույնպիսի շշմեցուցիչ հաջողությամբ են անցնում նաև ներկայացման մյուս բաժինները՝ բեմի վրա կատարվող գործողությունները: Դրանցում Հովհաննես Գասպարյանի շնորհքն ու ուժի ցուցադրումը հասնում են զգալիորեն ակնկալվածին[3]: «Զարմանքը և հիացմունքը,— գրում է Գ. Լևոնյանը, վկայակոչելով ժամանակակից աղբյուրները,— սիրում է հանդիսականների մեջ: «Ապրի՛ս», «կեցցե՛», «սա՛ղ-օլ», «ամա՛լլա» գոռում են ամեն կողմից»[4]: Ներկայացման վերջին բաժինը բաղկացած էր պարից, մնջկատակից և զավեշտից, որոնք ևս անցնում են մեծ հաջողությամբ:

Առաջին այդ ներկայացումը տեղի է ունեցել հուլիսի առաջին

[1] Գ. Լևոնյան, Արամյան ընկերություն թատրոնը կամ առաջին հայերեն ներկայացումը Երևանում 1850 թվին («Վերելք» (ամսագիր), 1933 թ., № 4, էջ 114—115:

[2] Նույն տեղը, էջ 115—116:

[1] Գ. Լևոնյան, Արամյան ընկերություն թատրոնը կամ առաջին հայերեն ներկայացումը Երևանում 1850 թվին, «Վերելք» (ամսագիր), 1933 թ., № 4, էջ 116:

[2] Նույն տեղը:

[3] Նույն տեղը:

[4] Նույն տեղը:

տասնօրյակի վերջերին։ Դրան հետևում են մի շարք այլ ներկայացումներ՝ մինչև ամսվա վերջը։ Արամյան թատրոնը Երևանում մնում է մի քանի շաբաթ, ներկայացում տալով շաբաթական երկու անգամ՝ ուրբաթ և կիրակի օրերը։ Երևանի առաջին այդ ներկայացումները եղել են «գերազանցորեն պարզ, պրիմիտիվ, ժողովրդական»— ինչպես դրանք բնութագրում է Գ. Լևոնյանը[1]։

Արամյան թատրոնը Երևանում մեծ հետաքրքրություն է առաջացնում թատրոն-կրկեսի նկատմամբ։ Երևանի բնակչությունը Հովհաննես Գասպարյանի խմբի թատերական-կրկեսային ներկայացումները դիտելուց հետո՝ արդեն լավ գաղափար է կազմում թատրոնի մասին և չի կարող անտարբեր մնալ նրա նկատմամբ։ Սակայն Արամյան խմբի մեկնելուց հետո երկար ժամանակ բացարձակ մնաց առանց ներկայացումների։

Արամյան թատրոնի խումբը Երևանից մեկնում է Նախիջևան, այնտեղից էլ՝ Թավրիզ։ 1850 թ. աշնանը խումբը վերադառնում է Թիֆլիս, որտեղ 1850—1851 թթ. թատերաշրջանն անցկացնելուց հետո՝ 1851 թ. մարտ ամսին վերադառնում է Կ. Պոլիս։ Առանց ժամանակ կորցնելու՝ Հովհ. Գասպարյանը մի հարմարավոր տեղ կառուցում է ամառային թատրոն և շարունակում ներկայացումները։ Արամյանների թատերական գործունեությունը թևակոխում է մի նոր շրջան, նա ունենում է ավելի մեծ հաջողություններ։ Թատրոնի ներկայացումները հաջողությամբ ընթանում են մինչև 1866 թ. աշնան սկզբները, երբ նրա ղեկավար Հովհաննես Գասպարյանը՝ ծանր հիվանդանալով, անկողին է ընկնում և հինգ ամիս տառապելուց հետո՝ 1867 թ. մարտի 7-ին մահանում[2], որ թողնելով իր ստեղծած թատրոնի կոլեկտիվին։ Հայ թատերական-կրկեսային արվեստի՝ ժողովրդի ծոցից դուրս եկած այդ վարպետը փայլուն հետք է թողել հայ կրկեսային արվեստի պատմության մեջ։ Նա թաղված է Կ. Պոլսում։ Տապանաքարի վրա նա քանդակված է կանգնած վիճակում՝ «ավանդական մահակը ձեռին բռնած»[3]։

«Արամյան ընկերություն» թատրոնի գաստրոլային ներկայացումներից հետո Երևանում թատերական կյանքը զարթնում է։ Հովհաննես Գասպարյանի խմբի մեկնումից հետո քաղաքի ուսուցիչների շրջանում սկսում են խոսել ու արծարծել

[1] Գ. Լևոնյան, Արամյան ընկերություն թատրոնը կամ առաջին հայերեն ներկայացումը Երևանում 1850 թվին, «Վերելք» (ամսագիր), 1933 թ., № 4, էջ 117։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը։

ինքնագործ թատերական խմբակ կազմելու մասին։ Սակայն ավելի քան 15 տարի այդ ուղղությամբ գործնական ոչինչ չի կատարվում։ Թատրոն հիմնելու համար, դերակատարներից բացի, անհրաժեշտ էին նաև շատ թե քիչ հարմարավոր շենք, կահավորված բեմ ու դահլիճ, դեկորացիաներ, հագուստներ և այլն։ Այնպես որ, թատրոն հիմնելու համար միայն ցանկություն ունենալը շատ քիչ էր. անհրաժեշտ էին նյութական միջոցներ։

XIX դարի 50-ական թվականներից սկսած՝ հայկական թատերական խմբակներ են երևան գալիս Մոսկվայում, Թիֆլիսում, Կոստանդնուպոլսում։ Թատերասեր հայ ուսուցիչներն ու ուսանողները իրենց ինքնագործ խմբակների ջանքերով սկսում են տալ ներկայացումներ։ Որոշ խմբակներ աճելով հետզհետե վեր են ածվում պրոֆեսիոնալ թատերական կոլեկտիվների։ Հայկական պրոֆեսիոնալ թատրոնը առաջին անգամ ձևավորվում է Կոստանդնուպոլսում և Թիֆլիսում, որտեղ կային մեծ թվով հայ մտավորական աշխատողներ։ Թիֆլիսում 1851 թ. հիմնված Թամամշյանի թատրոնը գնալով հետզհետե լայնացնում է իր գործունեությունը։ Բնական է, որ այդպիսի պայմաններում Երևանում ևս պետք է հանգես գար եթե ոչ պրոֆեսիոնալ, ապա գոնե ինքնագործ թատերական խմբակ։ Այդ ուղղությամբ տեղի ուսուցիչների մեջ ցանկություն ու ձգտումներ կային, միայն անհրաժեշտ էր դրսի ուժերի որոշ օգնություն ու օժանդակություն։ Այդպիսի օգնություն Երևանի մտավորականները ակնկալում էին միայն Թիֆլիսի հայկական թատրոնից։

1865 թ. աշնան սկզբներին, ներկայացումներ տալու համար, Թիֆլիսից Երևան են գալիս իրենց բեմական գործունեությամբ այն ժամանակ արդեն հայտնի դարձած Ջմշկյանը, Ամերիկյանը և Մանդինյանը։ Նրանք Երևանի թեմական հոգևոր դպրոցի ուսուցիչ Նահապետ Աթանասյանի միջոցով, որի հետ նոր էին ծանոթացել, և Երևանյան ներկայացումների ժամանակ վերջինս պետք է բնակեցներ իրենց խմբին, դպրոցի դահլիճը թեմակալից վերցնում են ներկայացումների համար։ Դահլիճը կարգի է բերվում և պատրաստվում բեմադրություններին։ Քաղաքում տարածում են խմբի աֆիշները։ Հայտարարվում է, որ պետք է խաղացվեն «Շուշանիկ» և «Արշակ II» պիեսները։ Շուտով բաժանվում են «Շուշանիկ»-ի դերերը՝ եկվոր դերասանների և Երևանի մի շարք ուսուցիչների վրա. վերջիններս մեծ ուրախությամբ են մասնակցում Թիֆլիսից եկած պրոֆեսիոնալ դերասանների տված ներկայացումներին։ Նույն թվականի հոկտեմբերին տրվում է առաջին ներկայացումը՝

Գևորգ Չմշկյան (1837—1916) (Հայկական ՍՍՌ գրական թանգարան)։

«Շուշանիկ»-ը, որը հանդիսականների կողմից ընդունվում է մեծ ջերմությամբ։ Դրան, շատ չանցած, հաջորդում են «Արշակ II-ը», «Միհրդատ»-ը, «Վարդանանց պատերազմը» և «երկուսս էլ քաղցած ենք, երկուսս էլ փող չունենք», «Դալալ Ղազո» ու «Վայ իմ կորած 50 ռուբլին» վոդևիլները[1]։ Ամենից հաջող անցնում է «Շուշանիկ»-ի բեմադրությունը, որը հասարակության պահանջով կրկնվում է երկրորդ և երրորդ անգամ[2]։

Չմշկյանի խումբը մի քանի ներկայացումներ տալուց հետո վերադառնում է Թիֆլիս։ Սակայն նրա այդ ներկայացումներն էլ հենց կյանք տվեցին Երևանի թատերական առաջին խմբին։

Հոգևոր թեմական դպրոցի ուսուցիչները 1866 թ. կազմում են իրենց ինքնուրույն թատերական խումբը, որը օգտվելով հասարակության, հատկապես երիտասարդության մեջ՝ թատրոնի նկատմամբ եղած մեծ հետաքրքրությունից, հաջողությամբ կարողանում է թատրոնի համար ձեռք բերել անհրաժեշտ պարագաներ՝ հանդերձանք, կահավորում, նկարիչ պահելու միջոցներ և այլն։ Այդ նույն թվականի աշնանը սկսվում են ինքնագործ խմբի ներկայացումները, որոնք նախորդ տարվա համեմատությամբ անցնում էին ավելի լավ պայմաններում և ունեին ավելի լավ տեսարաններ, բեմական արդուզարդ ու շքեղ հանդերձանք[3]։

Ինքնագործ թատրոնի ռեպերտուարը դնալով ավելի է հարըստանում։ Նշված պիեսներից բացի՝ խաղացվում են նաև «Սանդուխտ կույսը» և «Կոռնակ և Ներսես»-ը։ Ներկայացումները բավական բազմամարդ էին, դահլիճը միշտ լի էր հանդիսականներով։ Ներկայացումները տրվում էին բարեգործական նպատակներով։ Տոմսերը սովորաբար ուղարկվում էին տները։ Սկզբնական շրջանում հարուստ ընտանիքները իրենց հեռու էին պահում ինքնագործ խմբի ներկայացումներից, սակայն աստիճանաբար նրանք ևս սկսում են մասնակցել դրանց։

70-ական թվականներին քաղաքի հայ հարուստ ընտանիքների՝ Մելիք-Ադամալյանների, Գեղամյանների, Ղորղանյանների և այլոց ընտանիքների անդամները դարձել էին թատրոնի ակտիվ մասնակիցներ[2]։

Մինչև 1874 թվականը թատրոնի ռեպերտուարը սահմանափակվում էր նշված կեղծ կլասիկ պիեսներով և վոդևիլներով, ինչպես և էմին Տեր-Գրիգորյանցի «Խեչոյի թուզը» պիեսով, որը խումբը սկսել էր բեմադրել հեղինակի մասնակցությամբ, 1873 թվականից։ 1874 թվականից ինքնագործ խմբի ռեպերտուարը լայնանում է։ Նրանում ընդգրկվում են ռեալիստական պիեսներ՝ Գաբրիել Սունդուկյանի «Պեպո»-ն, «Խաթաբալա»-ն և «Գիշերվա սաբրը խեր է», ինչպես նաև մի քանի թարգմանական պիեսներ՝ Շեքսպիրից և ուրիշներից[3]։

70-ական թվականների սկզբներից, քաղաքի հասարակության՝ թատրոնի նկատմամբ ունեցած ջերմ վերաբերմունքի հովերով, քաղաքում կազմակերպվում է թատերասերների մի նոր ընկերություն կամ խումբ, որը կոչվում էր «Խեղճ ընկերություն» և «աշխատում իր ներկայացումներով մրցել թեմական թատերասերների խմբի հետ»[4]։ Մինչև այդ նոր խմբի երևան գալը, թեմական հոգևոր դպրոցի ուսուցիչների թատերական խումբը տարեկան տալիս էր 3—5 ներկայացումներ։ «Խեղճ ընկերությունը» կազմակերպվելուց հետո նա ևս իր հերթին սկսում է ներկայացումներ

1 Էմին Տեր-Գրիգորյանց, Երևանի հայկական թատրոնի սկզբնավորությունը, «Հուշարար» (երկշաբաթաթերթ), Թիֆլիս, 1907 թ., դեկտեմբերի 30, № 12։

2 Նույն տեղը։

3 Նույն տեղը։

4 Նույն տեղը։

նալ։ Որքան հաճախակի են դառնում ներկայացումները, այնքան պակասում է թուրաքանչյուր ներկայացման հանդիսականների թիվը, բայց և այնպես թատրոնը շարունակում է գոյություն ունենալ որպես ինքնագործ խումբ։

Թատերական խմբի գոյության առաջին տարիներին դերակատարներից աչքի են ընկել հոգևոր թեմական դպրոցի ուսուցիչներ Նաճապետ Աբաճասյանը, Սիմեոն վարժապետ Հովակիմյանը, Առաքել Հակոբյանը, որն ունեցել է ձայնական լավ տվյալներ, էմին Տեր-Գրիգորյանցը։ Ուսուցիչներից բացի՝ խմբի աշխատանքներին մասնակցել են քաղաքի մի շարք երիտասարդներ և պատանիներ։ Նրանցից աչքի են ընկել Վաղարշակ Նաճխաթունյանցը, Մարգար Նահնազարյանը, Նաճապետ Տեր-Հակոբյանը և պատանի Ռոստոմ Մադաթյանը, որը գրեթե միշտ հանդես է եկել կանանց դերերում[1]։ Մինչև 1869 թվականը խմբում ոչ մի կին չէր ընդգրկված։ Այդ ժամանակվա Երևանի բարքերի առումով, օրիորդների և կանանց մասնակցությունը թատերական ներկայացումներին համարվում է անթույլատրելի։ Սակայն, շուտով այդ խոչընդոտն էլ է վերանում։ 1869 թվականից Երևանի հոգևոր թեմական դպրոցի թատերական խմբի վրա ևրևում է Երևանի առաջին կին դերասանը՝ օրիորդ Եղիսաբեթ Ղուղանյանը, որը փետրվարի 16-ին առաջին անգամ հաջողությամբ հանդես է գալիս Շուշանիկի պատասխանատու դերում[2]։ Օրիորդ Ղորղանյանից հետո, 70-ական թվականների սկզբներին թատերական խմբում արդեն սկսում են մասնակցել մի քանի կանայք ու օրիորդներ՝ տիկին Աննա Բայարդիևյանը, տիկին Սոնա Մադաթյանը, որը վերը նշված պատանի Ռոստոմի մայրն էր և ուսուցչություն էր անում օրիորդաց ուսումնարանում, օրիորդներ Չավաճիր ու Մագթաղ Գեղամյաններ և ուրիշներ[3]։

1873 թ. թատերական խմբի մեջ է մտնում էմին Տեր-Գրիգորյանցը։ Նա թատրոնի ռեպերտուարի մեջ է մտցնում իր գրչին պատկանող «Խնշոյի թուղթ» պիեսը, որի մեջ Խնշոյի դերը կատարում է հենց ինքը։ 1875 թ. խմբի մեջ է մտնում նաև Սմբատ Սարգսյանը, որը հարուստ վաճառական էր և դերակատարներին

[1] Էմին Տեր-Գրիգորյանց, Երևանի հայկական թատրոնի սկզբնավորությունը, «Հուշարար» (երկշաբաթաթերթ), 1907 թ., № 12։ Տե՛ս նաև «Արարատ» (ամսագիր), Էջմիածին, 1869, ապրիլ, № 4, էջ 172։

[2] Տե՛ս «Արարատ» (ամսագիր), 1869, ապրիլ, № 4, էջ 172։

[3] Էմին Տեր-Գրիգորյանց, Երևանի հայկական թատրոնի սկզբնավորությունը, «Հուշարար» (երկշաբաթաթերթ), 1907 թ., № 12։

նյութական որոշ օգնություն ցույց տալու հետ միասին, ինքը ևս կատարում էր պատասխանատու դերեր։ Սակայն էմին Տեր-Գրիգորյանցը թատերական խմբում երկար չի մնում։ Խմբի անդամների և նրա միջև առաջանում են տարաձայնություններ և վերջինս 1876 թ. գարնանը հրաժարվում է խմբից։ Այդ տարաձայնությունների պատճառներից մեկը ինքը՝ էմին Տեր-Գրիգորյանցը համարում է այն, որ խմբի բոլոր անդամները, բացառությամբ իր և Արտաշեսի, ողբերգություններ խաղալիս բառերը և նախադասությունները «համարյա երգելով կամ ծոր տալով» էին «արտասանում», որի դեմ ինքը լուրջ կերպով առարկում էր[1]։ Նա հաղորդում է, որ իր ու խմբի անդամների միջև կային և այլ կարգի տարաձայնություններ, որոնք ևս առաջացել էին թատրոնում իր առաջարկած նորամուծությունների հետևանքով[2]։

Ըստ երևույթին, էմին Տեր-Գրիգորյանցի այս վերջին հաղորդումների մեջ կան որոշ չափազանցություններ։ Օրինակ՝ նա գրում է, որ իր հեռանալուց հետո, իբր, թատրոնի շենք չլինելու պատճառով, ներկայացումներն ընդմիշտ ընդհատվել են, և թատրոնի բոլոր պարագաներն ու գույքը՝ անխնամ կերպով լցվել թեմական հոգևոր դպրոցի ցախատներից մեկը[3]։ Քիչ հետո մենք կտեսնենք, որ նրա այդ հաղորդումը անճիշտ է, քանի որ նրա հրաժարականից հետո էլ թատերական խումբը շարունակել գոյություն ունենալ և, շենքի բացակայության պատճառով, որոշ ընդհատումից հետո վերսկսել իր ներկայացումները նոր շենքում։ Թե իրականում ինչ է տեղի ունեցել թատերական խմբի և է. Տեր-Գրիգորյանցի միջև և թե ինչպիսին էր վերջինիս նորամուծությունների բնույթը, մեզ համար մնում են անորոշ, որովհետև մեզ հասած աղբյուրները այդ մասին լռում են։ Միայն այսքանը կարելի է ասել, որ թատերական խմբի անդամների կողմից էմին Տեր-Գրիգորյանցը ստացել էր «վայրահաչ կրիտիկոսի և խենթ ռեֆորմատորի անուն»,— ինչպես գրում է ինքը՝ Տեր-Գրիգորյանցը[4]։

Թատերական խմբակի գոյության ամենահիմնական նախապայմաններից մեկը շենքի հարցն էր։ Սկզբնական շրջանում թատերական խմբակին իր ներկայացումները տալիս է 1869 թվին կառուցված թեմական հոգևոր դպրոցի դահլիճում, որին կից եղած

[1] Էմին Տեր-Գրիգորյանց, Երևանի հայկական թատրոնի սկզբնավորությունը, «Հուշարար» (երկշաբաթաթերթ), 1907, № 12։

[2] Նույն տեղը։

[3] Նույն տեղը։

[4] Նույն տեղը։

սենյակի միջնորմը վերցնելով[1], դարձրել են երկարավուն մի քառանկյունի հանդիսասրահ՝ իր բեմով հանդերձ։ Ինչպես տեսանք, թեմական հոգևոր դպրոցի շենքը գտնվում էր առաջնորդարանի մոտ, և նրա դահլիճը առաջին անգամ թատերական ներկայացումների համար հարմարեցրել էին Ջմշկյանի խումբը՝ Երևանում եղած ժամանակ՝ 1865 թվականին։ Այնուհետև ավելի քան տասը տարի այդ դահլիճն ու նրան միացրած սենյակը, ժողովարան լինելու հետ միասին, ծառայել են իբրև թատրոնի հանդիսասրահ։

1876 թվականին, Սարգիս Ռեգնաղարյանի տեսչության օրոք հարկ է լինում ավելացնելու հոգևոր թեմական դպրոցի դասարանների թիվը։ Դպրոցի հոգաբարձությունը որոշում է թատերական խմբակի ձեռքից վերցնել նրա զբաղեցրած դահլիճն ու դրան կից եղած սենյակը՝ դասարանների վերածելու համար[2]։ Դրանից հետո իրոք որ թատրոնը մնում է առանց շենքի։ Եվ դա տևում է մեկ ու կես, երկու տարի, մինչև որ 1877 թվականին կառուցված Գայանյան դպրոցին կից՝ թատրոնի համար կառուցվում է երեք սենյակից բաղկացած մի շենք[3]։ Այդ շենքի կառուցումը հավանաբար ավարտվել է 1878 թվականին, և անմիջապես այնտեղ է տեղափոխվել թատրոնը՝ իր ունեցվածքով։ Այսպիսով, թատրոնը ընդմիշտ չի դադարեցրել իր ներկայացումները, ինչպես գրում է էմին Տեր-Գրիգորյանցը, այլ որոշ ընդհատումից հետո, նոր շենքում սկսում է իր ներկայացումները, դարձյալ մնալով ինքնագործ խմբի մակարդակի վրա։

ԵՋՐԱՓԱԿՈՒՄ

Պարսկական տիրապետության տակ գտնվող Երևանի խանության կենտրոն Երևանը XIX դարի առաջին քառորդում իրենից ներկայացնում էր ասիական հետամնաց մի քաղաք։ Նա համարվում էր սարդարի աթոռանիստը և մի առանձին վարչական միավոր։ Նրա տնտեսությունը թույլ էր զարգացած։ Քաղաքի տնտեսական կյանքում արհեստագործության և առևտրի հետ միասին

[1] «1837—1887. Յիսնամեակ Հայոց հոգևոր թեմական դպրոցի Երեւանայ», էջ 261։

[2] «Հուշարար» (երկշաբաթաթերթ), 1907, № 12։

[3] ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 227, վավերագիր 163 և 153, «1837—1887. Յիսնամեակ Հայոց հոգեւոր դպրանոցի Երեւանայ», էջ 261—262։

խոշոր դեր էին խաղում գյուղատնտեսական ճյուղերը՝ այգեգործությունը, բանջարաբուծությունը և նույնիսկ երկրագործությունը։ Արհեստները, որ հասնում էին մի քանի տասնյակի, հետամնաց էին, սերտորեն կապված գյուղատնտեսության հետ և գրեթե բացառապես աշխատում էին ոչ թե շուկայի, այլ պատվիրատուի համար։ Սահմանափակ էր նաև ներքին ու արտաքին առևտուրը։ Փակ նատուրալ տնտեսության, ֆեոդալական մասնատվածության, միասնական մաքսային սիստեմի բացակայության, քարավանների վրա պարբերաբար կրկնվող ավազակային հարձակումների և այլ պայմանների հետևանքով, ներքին և արտաքին առևտուրը շարունակ մնում էր նույն մակարդակին, չնայած վերջին սարդարը իր գանձարանի շահերից ելնելով, վարում էր առևտուրը հովանավորելու քաղաքականություն։

Քաղաքի բնակչությունը, որի թիվը չէր հասնում նույնիսկ 12 000-ի, բաղկացած էր հայերից, ադրբեջանցիներից և մասամբ պարսիկներից ու թուրքերից։ Քաղաքային դասը՝ արհեստավորներն ու մանր առևտրականները, ինչպես և այգեգործները կազմում էին բնակչության հարկատու խումբը, որի վրա ընկած էր սարդարի հարկային ծանր լուծը։ Ուղղակի և անուղղակի հարկերը, որոնք հասնում էին մի քանի տասնյակի, զանազան հարկադիր աշխատանքները, բռնություններն, կաշառքը, անօրինականությունները աշխատավոր բնակչությանը հասցրել էին վաճառագույն պայմանների։ Դրան հակառակ՝ ոչ հարկատու, շահագործող դասակարգը, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները՝ խաները, բեկերը, մելիքները, բարձր հոգևորականությունը ուրիշի աշխատանքի հաշվին ապրում էին արևելյան ճոխությամբ և ունեին հսկայական հարստություններ։ Քաղաքի և ամբողջ խանության ամենամեծ ֆեոդալը հենց ինքը՝ ամենազոր սարդարն էր, որի խոսքը օրենք էր բոլորի համար։

Երևանը ցրված էր մեծ տարածության վրա։ Նրա տները կավակերտ էին, մի հարկանի և շատ դեպքերում իրենցից ներկայացնում էին ուղղակի գետնափոր հյուղեր։ Փողոցները նեղլիկ էին, ծուռումուռ, կեղտոտ, և քամի լինելու պահերին ամբողջ քաղաքը կորչում էր փոշու ամպի մեջ։ Քաղաքը չուներ կոմունալ նվազագույն հարմարություններ, խմելու համար պիտանի ջուր, հաճախ տարածվում էին համաճարակ հիվանդություններ, չկային բժշկություն, հիվանդանոցներ, դեղատներ։ Քաղաքի տնկավարումը գրտնըվում էր ոստիկանության ձեռքին, որին ստորադրված էին քաղաքային կառավարիչները։ Քաղաքը չուներ լուսավորություն, լոթի-

ները, բանդաներ կազմած, ահ ու սարսափի մեջ էին պահում քաղաքացիներին։

Քաղաքը չուներ պլանավորում, ով որտեղ և ինչ ձևով ցանկանում էր, կառարում էր կառուցումներ։ Այդ եղանակով քաղաքը վեր էր ածվել անկանոն կառուցված քսենոֆոբյան խրճիթների մի հսկայական քաոսի։ Նրա ճարտարապետական կոթողները բաղկացած էին հայկական մի քանի եկեղեցիներից, մահմեդական մզկիթներից, խանի ապարանքից, Զանգվի վրա եղած միակ քարակերտ կամուրջից և մի քանի այլ կառուցվածքներից, որոնցից և ոչ մեկը ճարտարապետական առումով նորություն չէր, այլ անցյալի ոճերի ու կառուցողական հնարանքների կրկնություն։

Վերին աստիճանի հետամնաց էր Երևանի կուլտուրան։ Նրա ամբողջ կուլտուրան ու արվեստը սահմանափակվում էին մզկիթներին ու եկեղեցիներին կից եղած և մասնավոր խալֆայական մի քանի ողորմելի դպրոցներով, մի քանի զուռնաչիներով և պարբերաբար քաղաքում երևացող աշուղներով ու լարախաղացներով։

XIX դարի սկզբից Անդրկովկասի երկրները աստիճանաբար ազատագրվում են թուրք-պարսկական ծանր լծից և միանում ռուսական պետությանը, դրանով իսկ իրենց պատմական բախտը կապելով մեծ Ռուսաստանի և ռուս մեծ ժողովրդի պատմական բախտի հետ։ Ռուս-պարսկական երկու պատերազմների ընթացքում երեք արշավանք է կազմակերպվում Երևանը Պարսկաստանի տիրապետությունից ազատելու համար։ Այդ արշավանքներից վերջինի շնորհիվ, որը տեղի ունեցավ երկրորդ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ՝ 1827 թվականին, Երևանը վերջնականապես ազատագրվում է պարսկական լծից և, դառնալով Հայկական մարզի կենտրոն, մտնում է Ռուսաստանի կազմի մեջ։ Հետագա տարիներին վարչական փոփոխությունների պատճառով Երևանը նախ դառնում է համանուն գավառի, ապա Երևանի նահանգի կենտրոնը։

Երևանի ազատագրումը պարսկական լծից և՛ ժամանակակիցների, և՛ հետագա սերունդների ներկայացուցիչների մեծագույն մասի կողմից դիտվել է որպես առաջադիմական մեծ քայլ։ Դրանով Արևելյան Հայաստանի հետ միասին Երևանը փրկվում է թուրք-պարսկական հարատև պատերազմների օբյեկտը լինելուց, նրա բնակչությունը ձեռք է բերում խաղաղ կյանք, գույքի ու սեփականության ապահովություն։ Պարսկաստանի նկատմամբ թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական ու կուլտուրական առումով մեծ առավելություններ ունեցող Ռուսաստանը՝ անկախ ցարական ինք-

նակալության կամքից (ինքնակալություն, որը Անդրկովկասը դիտում էր որպես գաղութ և շարունակ արգելակում էր նրա տնտեսական ու կուլտուրական զարգացումը), բարերար ազդեցություն է թողնում նրա կյանքի բոլոր բնագավառների վրա։

Պարսկական ծանր տիրապետությունից ազատագրված Երևանի կյանքում 1828—1879 թթ. տեղի են ունենում զգալի փոփոխություններ։ Սկզբում շատ դանդաղ, իսկ 60-ական թվականներին նշանակալից զարգացման են հասնում տասնյակների հասնող արհեստները, որոնց կապը գյուղատնտեսության հետ գնալով ավելի է կորվում։ Առաջվա նման այս շրջանում ևս արհեստավորներն ու առևտրականները, ըստ իրենց առանձին տեսակների, համախմբված էին արհեստավորական ու առևտրական համքարությունների մեջ, որոնք ունեին ազգայով սահմանված իրենց ներքին կյանքի անխախտ կանոնները։ 70-ական թվականներից ռուսական զարգացող արդյունաբերության ազդեցության հետևանքով Երևանում մի քանի արհեստներ (ջուլհակություն, մոտաքսագործություն և այլն) քայքայվում են։ Հաջորդ տասնամյակում Երևանում դինեգործության մեջ սկսում են հանդես գալ շատ թե քիչ ժամանակակից արդյունաբերության օբյեկտներ, որոնք սակայն իրենց մեծությամբ, արտադրանքի չափերով ու աշխատանքային պրոցեսների կազմակերպման բնույթով տնայնագործական ձեռնարկություններից դեռևս քիչ էին տարբերվում։ Նոսրիպսի տեղաշարժեր նկատվում են նաև առևտրի մեջ։ Երկարատև խաղաղություն հաստատվելու, կայուն և համապետական միասնական մաքսային դրույքներ սահմանելու, Պարսկաստանի հետ կատարվող առևտուրը խրախուսելու քաղաքականություն վարելու, ռուսական և Անդրկովկասի քաղաքների, որոնց թվում և Երևանի տնտեսական հարաբերությունների զարգացման, ճանապարհաշինության և մի շարք այլ ազդակների շնորհիվ՝ 50—60-ական թվականներից Երևանի ներքին և արտաքին առևտուրը, որը պարսկական լծից ազատագրվելուց հետո առաջին տասնամյակներում դոփում էր տեղում, գնալով ավելի ու ավելի է ծավալվում։ Երկրի փակ-նատուրալ տնտեսության քայքայմամբ աշխուժանում է նրա ներքին առևտուրը, և արտաքին առևտրի մեջ քաղաքը պասսիվ տարանցիկ առևտրի կայան լինելուց վերածվում է այդ առևտրին իր սեփական արտադրանքներով մասնակցողի։ Այդ բոլորի հետ միասին, նախորդ ժամանակների նման Երևանի համար այգեգործությունը մնում է որպես նրա տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկը։ Գյուղատնտեսական ճյուղերի մեջ երկրորդ տեղը՝

բանջարաբուծության փոխարեն, նորք գյուղը քաղաքին միացնելու շնորհիվ, գրավում է երկրագործությունը՝ հացահատիկների մշակությունը, որոշ չափով բարձրանում է այգիների և հացահատիկների բերքատվությունը։

Բնակչության աճը նախկին ժամանակաշրջանի պես շատ ցածը էր։ 50 տարվա ընթացքում նրա բնակչության ընդհանուր թիվը գրեթե մնացել էր նույնը։ Քաղաքի հարկատու բնակչությունը իր իրավական դրությամբ հավասար էր պետական գյուղացիությանը, ծանրաբեռնված էր ուղղակի և անուղղակի բազմազան հարկերով, իսկ ոչ հարկատու դասերը հավասարեցված էին ռուսական պետության մեջ եղած համապատասխան դասերին։

50-ական թվականներից, երբ Երևանը դարձել էր նահանգի կենտրոն, քաղաքը պլանավորելու փորձեր են կատարվում։ Քաղաքի համար գծվում է մի հեռանկարային գլխավոր հատակագիծ և համապատասխան պաշտոնյաների հանձնարարվում է հսկելու, որպեսզի այսուհետև բոլոր կարգի կառուցումները կատարվեն այդ հատակագծի շահերից ելնելով։ Դեռևս 30-ական թվականներից՝ Երևանում սկսում են իրագործել պետական կառուցումներ։ Այդ աշխատանքները սկզբում կատարվում էին միայն բերդում և այն էլ սոսկ պաշտպանական նպատակներով, սակայն 50—60-ական թվականներին շինարարությունը համեմատաբար ավելի լայն ծավալ է ստանում։ Այդ ժամանակներում, նշված պլանի հիման վրա, բաց են արվում մի քանի համեմատաբար ուղիղ փողոցներ, կառուցվում են պետական և մասնավոր մի շարք շենքեր (նահանգական վարչության, ոստիկանական վարչության շենքերը և այլն), որոնք իրենց ճարտարապետությամբ ու հարմարություններով (Երանք չարված էին սրբատաշ տուֆով, ունեին զանազան քանդակներ, մեկ կամ երկու հարկանի էին, լուսավոր, բարձր առաստաղներով ու գեղեցիկ կարնիզներով) խիստ կերպով տարբերվում էին նախկին կավակերտ շենքերից։ Քաղաքի կառավարումը գտնվում էր քաղաքային ոստիկանական վարչության ձեռքին և բաժանված էր երկու ոստիկանական շրջանի։ Ներքաղթի և Նորքը քաղաքին միացնելու շնորհիվ՝ ավելանում է բուն քաղաքի գրաված տարածությունը, Նորքը դառնում է նրա քաղաքամասերից մեկը։ Թուրքմենչայի պայմանագրով ներգաղթած հայերը շենացնում են սարդարական շրջանում ամայացած Խանբաղը, իսկ Ռուսաստանից եկած ռուս աղանդավորականները բերդից արևելք ընկած շրջանում ստեղծում են իրենց՝ Մալականների թաղը։ Երևանը պարսկական լծից ազատագրվելուց հետո անմիջապես նրա բերդում ստեղծվում է ռազ-

մական հոսպիտալ և դեղատուն, հետագայում բաց է արվում նաև քաղաքացիական դեղատուն։ Քաղաքն ուներ իր բժիշկը, որոշ քայլեր էին կատարվում քաղաքի սանիտարական վիճակը լավացնելու ուղղությամբ։

Փոփոխությունները ավելի զգալի էին կուլտուրայի ու արվեստի բնագավառում։ Եթե պարսկական տիրապետության շրջանում ժամանակակից տիպի ոչ մի դպրոց չկար, ապա 1828—1879 թթ. ընթացքում Երևանում աստիճանաբար բացվում են աշխարհիկ և հոգևոր մի շարք դպրոցներ՝ գավառական դպրոցը, որը հետագայում դարձավ նախ պրոգիմնազիա, ապա՝ դասական գիմնազիա, հոգևոր թեմական դպրոցը, որը հետագայում ևս կրեց զգալի փոփոխություններ, Հռիփսիմեի դպրոցը, Գայանյան դպրոցը, Նորքի ծխական երկսեռ դպրոցը, մասնավոր մի քանի դպրոցներ, որոնք զգալի տարբերություններ ունեին խալիֆայական տիպի դպրոցներից, և այլն։ Երևանի դպրոցական-լուսավորական և հասարակական կյանքում անգնահատելի ծառայություններ ունի հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը, ժամանակակից հայոց գրական լեզվի մեծ պրոպագանդիստն ու հայ գրականության հիմնադիրը։ Աբովյանից հետո, Երևանում իր կարճատև պաշտոնավարելու ժամանակ, քաղաքի դպրոցների առաջընթացի համար պայքարի դրոշ է բարձրացնում նրա արժանավոր հետնորդ Ղազարոս Աղայանը։ Երևանի կյանքով է ապրում և Մեսրոպ Թաղիադյանը, չնայած և իրերի բերումով մանուկ հասակից նա ընդմիշտ բացակայում էր իր սիրելի ծննդավայրից։

Երևանը պարսկական լծից ազատագրվելուց հետո անմիջապես բերդի կայազորի սպաների ուժերով առաջին անգամ ներկայացվում է Ա. Ս. Գրիբոյեդովի տաղանդավոր գրչին պատկանող «Խելքից պատուհաս» կատակերգությունը։ Սպայական թատերասերների խմբի ներկայացումները ընդհատվելուց հետո՝ քաղաքի թատերական կյանքը 50-ական թվականներից նորից է աշխուժանում, երբ այստեղ ելույթի է գալիս Կ. Պոլսի «Արամյան ընկերություն» թատրոնը՝ հայկական կրկեսի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկի՝ Հովհաննես Գասպարյանի («Նոր Հերկուլես») գլխավորությամբ։ 1865 թվականին գաստրոլային ներկայացումների համար Թիֆլիսից Երևան է գալիս Ջմշկյանի խումբը։ Նրա վերադարձից հետո հոգևոր թեմական դպրոցի ուսուցիչների խումբը կազմակերպում է իր ինքնուրույն թատրոնը, որը տարին մի քանի ներկայացումներ է տալիս քաղաքի բնակչության համար։ Այս շրջանում մասնավոր մարդկանց ջանքերով քաղաքում կազմա-

կերպվում է մի անշուք և փոքրիկ ընթերցարան, նույնիսկ փորձեր են կատարվում ստեղծելու համերային դրադարան։

Սակայն այդ բոլորը շատ չնչին էին քաղաքի ընդհանուր դերությունը փոփոխելու համար։ Երևանը մնում էր որպես հետամնաց գավառական քաղաք, թույլ զարգացած արհեստագործության և վերին աստիճանի սահմանափակ ծավալ ունեցող առևտրի քաղաք, մեկ տասնյակ հազարից մի փոքր ավելի բնակիչներով։ Նա մնում էր մոտ երկու և կես հազար քսենոֆոնյան տներից բազկացած մի հսկայական կույտ։ Այդ կույտի տարբեր մասերում նոր կառուցված տները միայն չնչին բծեր էին, որոնք կորչում էին համընդհանուր խղճուկ տեսարանի մեջ։ Նրա դպրոցները փոքրաթիվ էին, ցածր տիպի, սովորողների թիվը՝ չնչին։ Ցարական ինքնակալությունը իր մեծապետական, նացիոնալիստական և զաղութային քաղաքականությամբ ամեն կերպ խափանում էր՝ ինչպես Անդրկովկասի տասնյակ քաղաքների, այնպես էլ Երևանի՝ տնտեսական ու կուլտուրական զարգացումը։

Т. Х. АКОПЯН

ИСТОРИЯ ЕРЕВАНА
(1801—1879 гг.)

РЕЗЮМЕ

Ереван при персидском владычестве являлся центром Ереванского ханства, но представлял собой отсталый азиатский город. Город был постоянным местом пребывания сардара. Экономика была слабо развита. В его экономике наряду с ремеслами и торговлей крупную роль играли отрасли сельского хозяйства — садоводство, овощеводство и даже земледелие. Ремесла, число которых достигало нескольких десятков, были очень отсталыми. Будучи тесно связанными с земледелием, они почти исключительно работали на заказчиков, а не на рынок. Ограничены были также как внешняя, так и внутренняя торговля. В результате феодальной раздробленности, замкнутого натурального хозяйства страны, отсутствия единой пошлинной системы, периодически повторяющихся разбойничьих нападений на караваны и ряда других причин, внешняя и внутренняя торговля оставались всегда на одном и том же уровне, несмотря на то, что последний сардар, исходя из интересов своей казны, вел политику покровительства торговле.

Население города, численность которого не доходила даже до 12 000, состояло из армян, азербайджанцев и, частично, персов и турков. Городское население — ремесленники и мелкие торговцы, как и садоводы, составляли группу налогоплательщиков, на которую ложились тяжелым бременем налоги сардара. Прямые и косвенные налоги, различные принуди-

тельные работы, насилия, взяточничество довели трудовое население до нищенского состояния. В противовес нищете народа, эксплуатирующий класс, светские и духовные феодалы — ханы, беки, мелики, высшее духовенство за счет чужого труда жили в восточной роскоши и обладали огромнейшим богатством.

Самым крупным феодалом города и всего ханства был всемогучий сардар, слова которого являлись законом для всех.

Ереван занимал обширную территорию. Его дома были глиняными, одноэтажными, а во многих случаях это были просто землянки. Улицы были узкие, кривые, грязные, при наличии ветра весь город окутывался облаком пыли. Город не имел минимальных коммунальных удобств, питьевой воды, часто распространялись эпидемии различных болезней, не было врачей, больниц, аптек. Власть в городе находилась в руках полиции, которой подчинялись участковые. Город не имел освещения, своего плана, кто где хотел, там и строился. В результате этого город превратился в огромный хаос ксенофонтских хижин. Архитектуру Еревана представляли несколько армянских церквей, магометанских мечетей, дворец хана, единственный каменный мост через Зангу и несколько других сооружений, ни одно из которых с архитектурной точки зрения не представляло собой ничего нового. В высшей степени отсталой была культура Еревана. Вся культура и искусство города ограничивались школами при мечетях и церквах, а также частными халифскими школами, несколькими музыкантами (зурначи) и периодически появляющимися в городе ашугами и канатоходцами.

В начале XIX века Закавказье постепенно освобождается от тяжелого турецко-персидского ига и присоединяется к русскому государству, тем самым связывает свою историческую судьбу с судьбой России, с судьбой великого русского народа. В течение двух русско-персидских войн было организовано три похода с целью освобождения Еревана от персидского господства.

Благодаря последнему из них, который имел место во время второй русско-персидской войны в 1827 г., Ереван окончательно освобождается от персидского ига и, став центром Армянской области, входит в состав России. В дальней-

шем, в результате административных изменений Ереван сначала становится центром одноименного уезда, затем и центром Ереванской губернии.

Освобождение Еревана от персидского ига рассматривалось как современниками, так и представителями будущих поколений, как прогрессивное явление. Итак вместе с восточной Арменией Ереван перестает быть объектом длительных турецко-персидских войн. Для населения наступает период мирной жизни. Россия, имеющая большие преимущества перед Персией, как в экономическом, так и политическом и культурном отношениях, против воли царского самодержавия (самодержавие смотрело на Закавказье как на колонию и всячески тормозило его экономическое и культурное развитие), оказала положительное влияние на жизнь всего населения. В жизни Еревана, освобожденного от тяжелого персидского ига, в период за 1828—1879 г. г. происходят значительные изменения. Вначале очень медленно, а с 60-х годов исключительного развития достигают насчитывающиеся десятками ремесла, связь которых с с/хоз, все более ослабляется.

В этот период, также как и раньше, ремесленники и купцы по своим отдельным профессиям группируются в купеческие и ремесленные цехи (амкары), которые имели свои установленные традиции (адаты), законы внутренней жизни. Под влиянием развития русской промышленности, начиная с 70-х годов, некоторые ремесла (ткачество, шелководство и др.) разлагаются. В следующем десятилетии в винодельческой отрасли Еревана появляются более или менее современные предприятия, которые все же по своим размерам организации производства мало чем отличались от кустарных предприятий. Аналогичные сдвиги наблюдаются также и в торговле. Благодаря установившемуся длительному миру, утверждению твердой общегосударственной единой пошлинной системы, поддержке торговли с Персией, развитию экономических сношений с русскими городами, строительству дорог и ряду др. причин, с 50—60 г. г. внешняя и внутренняя торговля Еревана с течением времени все более развертывается. С разложением замкнутого натурального хозяйства страны оживляется его внутренняя торговля и город из пассивного пункта транзитной торговли превращается в активного участника торгов-

ли собственными товарами. Но все же садоводство для Еревана остается важнейшей отраслью с/хозяйства, хотя земледелие и овощеводство продолжают играть важную роль в экономическом развитии города.

Прирост населения как и в предыдущий период был незначителен. В течение 50 лет общая численность населения города почти оставалась одна и та же. Налогоплательщики города по своему юридическому положению приравнивались к государственному крестьянству, а другие, освобожденные от налогов сословия, приравнивались соответствующим классам русского государства. Экономико-земельные отношения до проведения в Армении крестьянской реформы (1870 г.) имели феодальный характер.

С 50-годов, когда Ереван стал центром губернии, делались попытки составления плана города. Для города составляется перспективный генеральный план и принимается решение, по которому строительство в городе должно придерживаться этого плана. Государственное строительство в Ереване началось еще с 30-годов. Сначала эти работы велись только в крепости, а с 50—60 г. г. они приобретают более широкие масштабы. К этому времени относится открытие некоторых, сравнительно прямых улиц, строительство государственных зданий, губернской администрации, полицейской администрации и др., а также частных зданий, которые по своей архитектуре (они были построены из тесаного туфа, имели архитектурные украшения, высокие потолки и т. д.) резко отличались от зданий, построенных раньше. Город управлялся городским полицейским управлением. Он делился на 2 полицейских участка. Площадь города расширяется в результате присоединения к нему с. Норк. Репатриация армян после Туркменчайского договора оживляет новый район — Ханбах, а приехавшие из России малокане создают восточнее крепости свой район — Малоканский. После освобождения Еревана от персидского ига в крепости создается военный госпиталь и аптека, впоследствие создается также гражданская аптека. Город имел своего врача, делались попытки для улучшения санитарного состояния города.

Наиболее значительные изменения произошли в области культуры и искусства. Если в период персидского господства

не было единой современной школы, то уже в течение 1828—1879 г. г. в Ереване постепенно открывается ряд светских и духовных школ: уездное училище, впоследствие ставшее прогимназией, а потом и классической гимназией, духовное приходское училище, школы Рипсиме, Гаяне и др. В Ереване впервые после освобождения от персидского ига силами офицеров гарнизона города ставится пьеса Грибоедова «Горе от ума». Театральная жизнь города возобновляется в 50-х годах, когда сюда приезжает из Константинополя театральная труппа «Общество Арамян» под руководством Оганеса Гаспаряна, одного из талантливых представителей армянского цирка. В 1865 г. в Ереван на гастроли приезжает из Тбилиси труппа Чмшкяна. После этого группа учителей духовного училища организует свою театральную труппу, которая давала представления также для населения города. В это время усилиями частных лиц в городе организуется небольшая читальня, делаются даже попытки создания публичной библиотеки.

Несмотря на все это, Ереван оставался отсталым провинциальным городом, городом слаборазвитого ремесла и крайне ограниченной торговли. Его население немного превышало один десяток тысяч человек. Он представлял собой скопление двух с половиной тысяч ксенофонтских хижин. Новые дома являлись незначительными пятнами, которые терялись на общем неприглядном фоне лачуг. Его школы были малочисленны, начального типа, а число учеников — незначительное. Царское самодержавие великодержавной национальной и колониальной политикой наряду с другими городами Закавказья тормозило экономическое и культурное развитие Еревана.

T. KH. HAKOPIAN

A HISTORY OF YEREVAN (1801—1879)

SUMMARY

During the first quarter of the nineteenth century Yerevan, the centre of the Yerevanian khanate under Persian rule, was a backward Asiatic city. It was claimed to be the sardar's residence, and represented a seperate administrative unit. The economy was underdeveloped, but various branches of agriculture, such as viniculture and vegetable-growing, together with the crafts and trade, played an important role in the development of the city's economy. Over a score of various crafts were in their initial stages of development. The manufactured goods were not meant to be sold to the general public, but to private individuals who ordered them. Both home and foreign trades were limited. Due to the lack of unity in the feudal closed-natural economy, the absence of a uniform system of taxation, the frequent attacks on caravans, and other circumstances, domestic and foreign trade stagnated in spite of the fact that the last sardar, prompted by his own personal profit, proclaimed himself a protector of trade.

The city population, not exceeding 12,000, consisted of Armenians, Azerbaijanians, and partly of Persians and Turks. The civic class, e. g. craftsmen and petty tradesmen, as well as vinturists, formed the tax-paying group that bore the whole burden of the sardar's taxes. Over a score of direct and indirect assessments, various kinds of forced labour, compulsion, corruption and illegal procedure, had reduced the working population to the worst living conditions. On the other hand, the tax-free exploiting class, both civil and clerical feudals, the khans, beks, meliks, high clerical officials, who are known to have owned invaluable riches, led a life of sheer oriental luxury at the expense of the toiling masses. The greatest feudal of them all, both in the city and the whole of the khanate, was the almighty sardar himself.

Yerevan spread over a vast area. Its one-storied huts were built of clay, and you could come across many a hut built underground. The streets were narrow, crooked, dirty, and a mere wind would cover the entire city with a huge cloud of dust. Yerevan was not provided with the most elementary conveniences to meet the needs of the community; there was no potable water, frequent epideimics raged in the city which lacked medical service, hospitals and medicaments. Prefectural governors, carrying out the orders of a police organization, were responsible for rule and order in the city. There was no lighting system, and the population was constantly under the threat of nomad attacks.

The building of the city was not planned, and the citizens were free to build where and how they pleased. Consequently the city had taken the form of a huge chaotic agglomeration of straggling mud huts. The only buildings of architectural value were a few Armenian churches, a small number of mosques, the khan's palace, the only stone bridge over the Zangu, and a few other constructions, none of which presented any novelty in architectural style, being rather imitations of earlier styles and building devices.

Art and culture in Yerevan were also of the utmost backwardness. They were limited to a few insignificant private schools appertaining to the churches and mosques, a few zurnachi* and bards, and equilibrists, who appeared in the city from time to time.

From the beginning of the nineteenth century the Transcaucasian countries were, one after the other, liberated from the Turkish-Persian yoke, and they subsequently joined Russia, thus binding the fate of their country to that of Great Russia and the Russian people. During the two campaigns between Russia and Persia three invasions were planned by the Russians for the conquest of Yerevan. In 1827, during the second of these campaigns, the third invasion of Yerevan libe-

* Musicians who play a kind of primitive flute called «zurna».

rated the city from the Persian rule, and it became a constituent part of Russia and the centre of the Armenian region. In later-years, due to changes in its administrative system, Yerevan became first the centre of the Yerevan province, then that o the Yerevan state.

Both contemporaries and the great majority of the representatives of later generations looked upon the liberation of Yerevan from the Persian rule as a progressive step. Eastern Armenia and Yerevan ceased to be the apple of discord between the Turkish and Persian forces; the population got at last a chance to live in peace and security.

Russia's beneficent influence on life in Yerevan as a whole can be explained by the economical, political and cultural advantages Russia had indisputably over Persia, and this in spite of the tsar who looked upon Transcaucasia as a colony, and persistently prevented its economic and cultural development.

From 1828 to 1829 big changes occurred in the life of Yerevan. Over a score of crafts, gradually becoming independent of agriculture, began to develop slowly at first, then, from 1860, at a greater pace. During this period, as previously, craftsmen and traders were grouped in guild corporations according to their crafts and trades. These guilds had their own particular law system outlined in the "adat". Beginning from 1870, weaving and sericulture deteriorated due to the development of industry in Russia. During the following decade, more or less modern industrial objects began to take shape in viniculture, but the means of production, as well as the quantity of the output, left much to be desired. Similar changes have also been noted in trade. Though trade was stagnant during the decade that followed Yerevan's liberation from the Persians, both home and foreign trade began to flourish in Yere van in the 1850's and 1860's. This fact can be accounted for by the establishment of a durable peace, the creation of a general and uniform taxation system, the policy of strengthening trade relations with Persia, the development of economic relations between Russia and the Transcaucasian cities, the building of communication routes, and by some other factors. Following the decay of closed-natural economy in the country, home trade began to develop, and as to foreign trade, instead of being a mere commercial centre for foreign traders, Yere-

van began to trade with the outside world with goods of its own production. Viniculture still occupied first place in Yerevan's economy. Second place of importance was held by agriculture—which had replaced vegetable-growing— due to the joining of Nork village to the city. A slight increase is noted in vine crops and cereal yields at that time.

Compared with the preceding period, no noticeable change is noted in the population increase. In fifty years, the total number of the population seems to have remained practically the same. The tax-paying section of the city population and the state peasantry were equal in the eyes of the law. A great number of both direct and indirect taxes were imposed on them, whereas the non-tax-paying classes were identified with the corresponding classes of Russia. Economic and agrarian relations in Armenia had a feudal nature until the decree of the acricultural reform in 1870.

Beginning from the 1850's, when Yerevan had already become the centre of the state, attempts were made to plan the city. A prospective plan was drawn up and officials were assigned the task of supervising all kinds of construction according to that plan. Even as far back as the 1830's, constructions were undertaken which were supervised by the state. This construction work was carried on within the fort for only defense purposes. However, beginning from the 1850's and 1860's housing construction proceeded on a comparatively vaster scale. According to the plan drawn out in those days, new broad streets were opened, buildings erected (state buildings— that of the state administration, of the police, etc. and a number of private ones, strictly contrasting with the former straggling mud houses: they were built of dressed "toof", bore various carvings, were one or two storeys high; the rooms were bright and their ceilings high, adorned with beautifu cornices).

The police administration, divided into two sections, was responsible for the order in the city. Yerevan began to expand due to repatriation and the joining of Nork to the city. By virtue of the treaty with Turkmenia, Armenians returned to their homeland and settled in Khanbagh, a deserted region in the city outskirts. On the other hand, Russians of the malakan religious sect built their own settlement east of the fort and

named it the Malakan District. As soon as Yerevan was freed from Persian rule, it built within the fortress its own military hospital and chemist's shop, and later a chemist's shop for civilians. The city had its physician and certain measures were taken to improve the city's sanitary conditions. Noticeable changes occurred in the city's cultural and artistic life. If contemporary schools were non-existent under Persian rule, the period between 1828 and 1879 saw the opening of a number of laic and religious schools: the provincial school which, in later years, became first a pro-gymnasium then a classical gymnasium, the religious school, Hripsimeh school, Gayaneh school, the parish mixed school ot Nork and a few private schools.

Soon after liberation, Gribayedov's comedy "The Mischief of Beeing Clever" was staged by the officers of the army unit garrisoned in the fort. These performances continued for some time. Later, in the 1850's, Yerevan's theatrical life was resumed with the performances of the "Aramian Company", a theatrical troop from Constantinople touring the country, headed by a talented representative of the Armenian circus, Hovhannes Gasparian ("The New Hercules"). In 1865, the Chemeshkyan theatrical company of Tiflis performed in Yerevan. Later the teachers of the religious school organized their own amateur theatrical company that gave several performances annually. During this period, thanks to the efforts of a few individuals, an unpretentious small public reading-room was opened, and attempts were made to create a public library.

But in spite of all this, Yerevan still remained a backward provincial town with underdeveloped crafts and extremely limited trade, and with a population of a mere 10.000. Newly built houses passed unnoted in the pitiful agglomeration of 2,500 mud huts. It had a limited number of schools of a very low standard, with a very small number of pupils. Tsarist autocracy, with its imperialistic, nationalistic and colonial policy hampered by every possible means the economic and cultural development of a dozen Transcaucasian cities, including Yerevan.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՅԱՆԿ[1]

Ա.

Աբաս-Միրզա *16, 243, 283, 287, 296, 302, 303, 308—310, 313, 323, 326, 328, 329, 331, 336, 345:*
Աբդուլլա, *փաշա, 297:*
Աբովյան Խ. *21, 23, 161, 167, 217, 239, 255, 275, 276, 280, 336, 338, 351, 352, 585, 591, 594, 599, 612, 615, 639:*
Աբրահամ, *մելիք, 292:*
Աբրահամյան Հար. *152:*
Աղոնց Մ. Ա. *145, 282:*
Աբանասյան Ն. *618, 629, 632:*
Աղամալյան Մելիք-Սահակ *260:*
Աղամալյանց *618:*
Ակերսանդր *309:*
Ակերսանդր II *393:*
Ալի-խան *229:*
Ալի-Մուրադ խան *336:*
Ալլահ-Վերդի-բեկ *108:*
Ամիրա-խան Մարաղացի *14:*
Ադայան Դ. *585, 599, 612, 615, 616, 635:*
Ադասի *344:*
Ամերիկյան *629:*
Ամիրգանա խան *250:*
Անանիա *250:*
Անդրոնիկով Ի. Զ. *503, 504:*
Առաքել Դավրիժեցի *248, 250:*
Ասլանյանց Ա. Վ. *55, 56:*
Ասլանյանց Հովհ.[*] *315, 344:*
Աստաֆև, *նահանգապետ, 560:*
Աստվածատրյան *344:*
Ավետիք Երից *248:*
Արագածունի, *եպիսկոպոս, 595:*
Արզումբեկ *366:*
Արծրունի Ս. *400:*
Արզության Ստ. *595:*
Ալիշան Ղ. *176, 255, 533:*

Բ.

Բաբա-խան *283, 286, 288, 290, 291:*
Բադալյան Ստ. *595:*
Բամբուկչյան Մ. *626, 627:*
Բայարդինյան Ա. *632:*
Բաբյատինսկի Ա. Ի. *379, 570, 617:*
Բեգնազարյանց Ս. *599, 634:*
Բենբութով *366, 367, 372, 373, 589:*
Բենկենդորֆ *307, 314, 315, 317, 319, 320:*
Բեչանյան Օ. *624:*
Բարշչև *299:*
Բարոդին, *փոխդնգապետ, 360:*
Բոլգակով, *գնդապետ, 304:*
Բոխվոստով, *մայոր, 299:*
Բունիաթով *469:*

Գ.

Գաբրիել, *հարյուրապետ, 292:*
Գագարին *20:*
Գալուստ *151:*
Գալուստով Ստ. *151—153:*
Գան *370, 380, 381:*
Գանգնելով Ա. *342:*
Գասպարյան Հ. *625, 626—628, 639:*
Գեղամյան Բարսեղ *215:*

1 *Տոպառակների ծանոթագրություններում նշած անձնանուններն ու տեղանուններ չեն մտցված ցանկերի մեջ:*

Գեղամյաններ 213, 631։
Գեղամյան Մ. 632։
Գեղամյան Ջ. 632։
Գեղամյան Ստեփաննոս, արքեպիսկոպոս, 245։
Գևորգյան Կ. 153, 154։
Գոլմսեն Ն. Ա. 454, 455։
Գրիբոյեդով Ա. Ս. 15, 111, 219—221, 240, 340, 342, 343, 345, 349, 350, 443, 515, 561, 585, 621—624, 639։
Գրիգորյան Զ. 355։
Գուդովիչ Վ. 234, 237, 238, 298, 300, 202—306։
Գուլանյան Խ. Գ. 399։
Գուրկո, գնդապետ, 340։

Դ

Դանիել, կաթողիկոս, 283, 286։
Դավիդով Դ. 310, 311։
Դավիթ, կաթողիկոս, 283, 286։
Դավիթ, մարգարե, 62։
Դիքիչ 314, 315, 361, 362, 375, 539։
Դյուբուա 176։
Դոլգովո-Սաբուրով 340։

Ե

Եկատերինա II 375։
Եղիազարով Ս. Ա. 40, 44, 53, 56, 63, 69, 79, 207։
Եճիկոլոպով Ի. 111։
Եվեցկի Օ. 116, 354, 355։
Երիցյանց Ալ. 174, 361։
Երմոլով 30, 307, 310, 314, 447։
Երվանդ Շահազիզ 178։
Եփրեմ, եպիսկոպոս, 154։
Եփրեմ, կաթողիկոս, 245։

Զ

Զագուրսկի Լ. 55, 56։
Զալ-խան 235։
Զակրովսկի 362։
Զելինսկի Ս. 415, 421, 422, 463, 464, 467, 468, 470, 471, 501, 504, 506, 508, 510, 511, 608, 611։
Զուրոև Ֆ. 589։

Է

Էնգելս Ֆ. 113, 354։
Էրիսթով 345։
Էմամ-խան 368։

Թ

Թադիադյան Մ. 88, 155, 317, 231, 276, 280, 351, 585, 593, 594, 612, 639։
Թամամշյան 629։
Թեյմուրազ 293։
Թորամանյան Թ. 228։
Թումանյան Հ. Ե. 54, 113, 355, 404, 542։
Թումանյան Հովհ. 350, 351, 353։

Ժ

Ժիլինսկի, մայոր, 304։

Լ

Լազարև, գնդապետ, 516։
Լազարյան Խ. 370։
Լաժար 303, 304։
Լալիեով Լ. 88, 124, 125, 220, 222, 255, 334, 335, 342։
Լապտև 334։
Լենին Վ. Ի. 7, 398, 432, 434, 586։
Լեո 28, 596։
Լեոնտև 290։
Լեոնյան Գ. 625, 627, 628։
Լինչ 220, 223, 242, 255։
Լիսանևիչ 109։
Լյաշչենկո Պ. Ի. 397։

Խ

Խոջա Փանոս 251։
Խոջա-փլավ 259։
Խոսրև 469։
Խրիպկով 44։
Խուդաբաշյան Ա. 370։
Խուդաբաշևներ 475, 507։

Կ

Կանկրին 362։
Կասիմ-խան 336։
Կարապետ, արհեստավոր, 88։
Կարապետյան Վ. 247։
Կարբեցի, տե՛ս Թադիադյան Մ.։
Կելբ-Ալի-խան 293։
Կիսելյով 495։
Կլոդ-ֆոն-Յուրգենսբուրգ 290։
Կոլումբոս 445։
Կոնովցին Պ. 342։
Կորզանով 609։
Կորկոտյան Ջ. 184, 185, 186, 521։
Կոցեբու Մորիս ֆոն 19, 20։
Կրամսկի Ն. Ի. 342։
Կրասովսկի 307, 320—326, 333, 338, 345, 360, 365, 391։
Կուրաիկյան Սա. 32։

Հ

Հակոբ ագա 626։
Հակոբյան Ա. 632, 633։
Հակոբ, քահանա, 551։
Հաջի-Բաբա 87։
Հաջի Բեգում 203։
Հաջի Նովրուզալի 151, 152, 153։
Հախվերդով Յու. Պ. 55, 56։
Հասան-Ալի-Միրզա 346։
Հասան-խան 23, 24, 167, 241, 279, 299, 319, 321, 323, 326, 328, 329, 331, 333, 335։
Հարությունյանց Կ. Յա. 475, 476։
Հարությունյան Հ. 344։
Հարությունյան Մ. 607։
Համստեուզեն Բ. Օ. 159, 161, 162, 166, 215, 255, 275, 613։
Հովակիմյան Ս. 632։
Հովհաննիսյան Ա. 355։
Հովհաննես Կոզեռն, վարդապետ, 251, 260։
Հովհաննիսյան Մ. 618։
Հովսեփ ատովածանայր 62։
Հոիփսիմե 585, 588։
Հուսեյն-Ալի-խան 240, 268։
Հուսեյն-խան Ղաջար 14, տե՛ս Հուսեյն խան։
Հուսեյն խան 12, 15, 16, 146, 148, 150, 157, 160, 161, 167, 173, 186, 187, 230, 500—574։
Հուսեյն-Նալի խան 17, 19, 22, 29, 30, 109, 113, 114, 139, 195, 213, 235, 241, 243, 257, 279, 298, 299, 300, 302, 318, 321, 322, տե՛ս Հուսեյն խան։

Ղ

Ղազարյան Ի. 606։
Ղարիբյան Ս. 49։
Ղարդաճյաններ 631։
Ղարդաճյան Ե. 632։
Ղարդաճյան Ղ. 599։
Ղուկաս, կաթողիկոս, 151։

Ճ

Ճավճավաձե Ալ. 289, 365, 366, 375, 376։

Մ

Մադաթյան Ի. 632։
Մադաթով 310, 311։
Մակդոնալդ 346։
Մամմադ-խան 217, 240։
Մամեդ-խան 284, 286, 291։
Մայնով, գնդապետ, 290։
Մանդինյան 629։
Մաշկով Վ. 620, 621, 622։
Մառանկոզյան Խ. 55, 56։
Մարկս Կ. 354։
Մահսիմով Լ. 358։
Մենսի-Նալի խան 14, 292, 293։
Մելիք-Ադամալյաններ 214, 631։
Մելիք-Ադամալյան Մելիք-Սահակ 196, 215, 507։
Մելիք-Ադամալովներ, տե՛ս Մելիք-Ադամալյաններ։
Մելիմսեթեկ 62։
Մելիմսեթ, կաթողիկոս, 248։

Մեչեիկով 370։
Միանսարյան 27։
Միրզա Բեզյուրկ 303։
Միրզա Շեֆի 303։
Մյասնիկյան Ա. Ֆ. 7։
Մոծակ (խոջա) Գրիգոր 266։
Մովսես Սյունեցի 248, 250, 251, 260։
Մորիեր Ջեմս 15, 17, 19, 87, 88, 113, 220, 279, 321։
Մուրավևի Ալլահշուքուր 151։
Մուհամեդ 24։
Մուրադ, սուլթան, 235։

Յ

Յարալով Յու. 184, 185։
Յուզբաշի Բարսեղ Գեղամով 196։
Յուսուֆ, փաշա, 296։

Ն

Նադիր Շահ 275։
Նազարյան Ստ. 593։
Նազարով Ի. Ի. 600։
Նաղաշ Հովնաթան 556։
Նեթոլսին, գեներալ-մայոր, 297, 300, 303, 306։
Նեսելրոդ 308, 349, 362։
Նեսվեսան 294, 296։
Ներսես Աշտարակեցի 273, 315, 316, 326, 344, 360, 362, 365, 396, 516։
Ներսիսյան 5, 354, 355։
Նիկոլայ I (Պալկին) 125, 149, 314, 362, 365, 372, 375, 378, 382, 489, 490, 491, 536։
Նովիցկի 304։

Շ

Շահ-Ալի-բեկ 368։
Շահազիզ Երվանդ 22, 42, 56, 62, 79, 80, 83, 155, 184, 186, 256, 213, 217, 218, 260, 271, 279, 280, 519։
Շահխաթունյանց Հովն. 247, 248, 255, 260, 519, 528, 553, 582։
Շահխաթունյանց Վ. 632։
Շահնազարյան Մ. 632։
Շամիլ 89, 412։
Շանշիև Պ. 55, 56։
Շարդեն 220։
Շաֆի-Բեկ 608։
Շեհսպիր Վ. 631։
Շիպով Ի. 342։
Շոպեն Ի. 10, 12, 18, 24, 27, 33, 35, 39, 41, 42, 44, 45, 49, 52, 54, 56, 72, 79, 81, 85, 86, 90, 93, 94, 98, 100, 112, 117, 118, 120, 122, 124, 125, 128, 129, 137, 140, 142, 143, 147, 148, 155, 162, 168, 170—173, 176, 178—186, 188—191, 195—197, 201, 204, 208, 211, 216, 220, 223, 224, 227, 244, 259, 263, 266, 270, 271, 279, 416, 451, 461, 485, 487, 519, 521, 540, 553։
Շուշանիկ 632։

Չ

Չացկի 691։
Չլիյչև 304։
Չեխովսկի 394, 395։
Չերնին 388։
Չերնոյարսկի 403, 412։
Չմշկյան Գ. 585, 629, 630, 634, 639։

Պ

Պալավադով, նահանգապետ, 366, 374։
Պասկևիչ Ի. Ֆ. 307, 310, 314, 318, 319—321, 323, 325—328, 330, 331, 336, 338, 340, 341, 343, 345, 346, 349, 360—362, 364, 365, 370, 375, 376, 378, 447, 516, 518, 539, 540, 574, 620, 621, 623։
Պարսամյան Վ. 355, 621։
Պեչերսկի 304։
Պետրոս I 281, 586։
Պողուցկի 300։
Պոզեն 382։
Պարոնյազին 288, 290, 298, 300։
Պոդոչյան Պ. 605։
Պուշչին Մ. 341, 342։

Ջ

Ջալալյանց Ստ. 247։
Ջաֆար-Ղուլի Խան 286, 336։
Ջեմելի 220։

Ռ

Ռշտունի Վ. Հ. 400։
Ռոզեն 302, 304, 366, 374։
Ռոխլև 109։
Ռուբո 334։
Ռունիչ 392։
Ռումյանցև 302։
Ռուստամ 241։

Ս

Սաֆականուշ 589։
Սաճակ, կաթողիկոս, 248։
Սալվատար 444։
Սանթրոսյան Մ. 355։
Սավադ-Ղուլի խան 318, 319։
Սարգսյան Ս. 632։
Սեմիշով Ն. 342։
Սիկաշև 376։
Սիմեոն, կաթողիկոս, 245։
Սիմեոն Սերոնի 62։
Սիմոնովիչ 290, 299, 304։
Սմբատյանց Մ. 598։
Սմիթ Ադամ 92։
Սոկոլով 402։
Սվանյան Ա. 629, 627։
Ստասյուլևիչ Ս. 585, 589, 604, 608, 609։
Ստեփանոս Նախավկա 247։
Ստեփանոս, արքեպիսկոպոս, 618։
Ստեֆանովիչ Ֆ. Օ. 270։
Սուրխան-Ղուլի խան 336։
Սուխտելին 341։
Սուճդուկյան Գ. 631։

Վ

Վագներ Մ. 250։
Վալխովսկի Վ. 342։
Վարդան, քահանա, 247։
Վելիամինով 362։
Վյեսկո, հոդաշափ, 562։
Վերիլով Ստ. 589։
Վիդինկտով, շտաբս-կապիտան, 376։
Վինչ 451։
Վորոնցով Մ. Ս. 383, 384, 447, 536, 600։

Տ

Տեր-Ավետիսյան Պ. 607։
Տեր-Գրիգորյան նկարչներ 266։
Տեր-Գրիգորյանց Է. 632, 633, 634։
Տեր-Զաքարով Զ. 609, 618։
Տեր-Կարապետյան Գ. 270։
Տեր-Հակոբյան Ն. 632։
Տիգրանյան Լ. 571, 572, 575, 576։
Տոլստոյ Ա. Պ. 588։
Տորմասով 304։
Տրուզսոն 340, 376։
Տուշկով 290։
Տուրնեֆոր 176։

Ր

Բաֆֆի 132։

Ց

Ցիցիանով 186, 187, 237, 283—291, 293, 295։

Ու

Ումիլիե, գեներալ-մայոր, 340։
Ուլար 265, 435, 481։
Ուվարովա Գր. 174, 220, 252, 258։

Փ

Փանահ-խան 229։
Փիլիպոս, կաթողիկոս, 251։

Ք

Քալանթարով 469։
Քյալբալի-խան 608։

Օ

Օգարովսկի Ի. *387, 455:*
Օլովսկի Կ. *179, 408, 416, 435, 470, 485, 514, 532:*
Օսման, *փաշա, 297:*
Օսմերման-Տոլստոյ, *կոմս, 302:*
Օրբելիանի, *իշխան, 300, 498:*

Ֆ

Ֆար-Ալի-խան *287:*
Ֆար-Ալի-Շահ *16, 241, 279:*
Ֆահրադ, *փաշա, 235:*
Ֆարադ-Ղուլի-խան *300:*
Ֆորաբր Ռոբերտ Կեր *9, 12, 14, 30, 32:*
Ֆրեյգան Մ. *15, 29, 30, 238:*
Ֆրոլով Կ. Ն. *497:*

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա.

Աբասաբադ *363, 377, 378:*
Աբասաբադ բերդ *325, 343:*
Աբբաս-դարա *169, 231, 259:*
Աբբաս-դարայի այգիներ *157, 175:*
Աբուհայաթ *169, 231, 488:*
Աբովյան փողոց *230:*
Աբուհայաթի այգիներ *175:*
Աբուհայաթի առու *157, 265, 497:*
Ագուլիս *400, 461:*
Ադրբեջան *181, 227, 282, 448, 537:*
Ադրիանապոլիս *186, 350, 395, 405, 498, 514, 518:*
Ազաֆիրան, *տե՛ս Օրդուբադ:*
Ալավերդի *399:*
Ալավերդյան փողոց *230:*
Ալեքսանդրապոլ *72, 123, 124, 126, 284, 296, 373, 374, 378, 379, 380, 381, 382, 383, 384, 393, 404, 413, 414, 419, 421, 427, 437, 450, 452, 453, 454, 466, 478, 507, 526, 527, 615:*
Ախալցխա *54, 56, 59, 124, 126, 371, 377, 378, 379, 380, 381, 382, 403, 418, 419, 425, 446, 449, 519, 615:*
Ախալխալաք *72, 124, 383, 449, 519:*
Ախտա *(այժմ Հրազդան) 451:*
Ակոռի, *դյուղ, 578:*
Ակար, *քաղաք, 311:*
Աղմաղանի *(Գեղամա)* լեռներ *10:*
Աղստաֆա *450, 453:*
Աղստաֆա, *գետ, 451:*
Աղրի-դաղ *(Հայկական պար)* լեռնաշղթա *9, 10:*
Անգլիա *282, 306, 308, 347, 353:*
Անգլիական այգի *491, 492, 552, 563, 564, 567:*
Անդրկովկաս *5, 15, 39, 40, 43, 51, 53, 55, 56, 57, 60, 63, 72, 74, 80, 82, 84, 86, 87, 114, 116, 131, 132, 133, 136, 137, 142, 149, 164, 186, 188, 262, 270, 281, 294, 302, 307, 308, 310, 347, 350, 352, 353, 354, 355, 357, 358, 359, 370, 371, 375, 377, 378, 379, 380, 381, 382, 383, 392, 393, 395—403, 406, 412, 407—420, 423, 425, 427, 438, 440, 447, 448, 449, 451, 456—460, 470, 471, 478, 479, 481, 482, 484, 495, 497, 499, 504, 516, 517, 520—522, 527, 536, 572, 574, 575, 582, 587, 588, 589, 590, 636, 637, 640:*
Անի *5, 233:*
Աչաբակ, *դյուղ, 127, 147, 151, 258, 259, 298, 452:*
Ապարան *315, 320, 323, 325, 360:*
Ապարանի մաճալ *11, 12, 284, 297, 305, 321, 372:*
Ապարան-չայ, *գետ 284:*
Ասիա *228, 351:*
Աստաֆյան փողոց *(այժմ՝ Աբովյան) 560, 561:*
Աստրախան *314, 351, 372:*
Ավան, *դյուղ ,485, 553, 580:*
Աստրաստական *345:*
Արագած *9, 11, 327, 519:*
Արագածոտն, *գավառ, 231:*
Արարատ *9, 187, 223:*
Արարատյան աշխարհ *233:*

Առարատյան դաշտ 11, 123, 181, 220, 455։
Առարատյան նահրությունն, տե՛ս Արտաշատյան դաշտ։
Արաքս 9, 10, 11, 34, 45, 284, 285, 294, 297, 299, 300, 303, 308, 311, 320, 325, 226, 228, 345, 347, 348, 352, 361, 385, 452։
Արզաբիլ 309, 345, 346։
Արդանան 518։
Արևելյան Արփաչայ 10, 452։
Արևելյան Հայաստան 5, 6, 8, 12, 32, 33, 39, 44, 47, 54, 57, 95, 184, 216, 233, 270, 282, 307, 343, 344, 348, 350, 351, 354—356, 369, 372, 394, 406, 407, 409, 410, 446, 451, 453, 456, 498, 511, 515, 516, 527, 531, 552, 568, 574, 615, 621, 636։
Արևելյան Վրաստան 282, 307։
Արևմտյան Արփաչայ (Ախուրյան) 9, 11, 286։
Արևմտյան Հայաստան 58, 354, 356, 412, 421, 515, 518—520, 552։
Արզամյանց (Արզական), գյուղ, 215։
Արին բերդ 232։
Արմավիր 174։
Արտաշատ 124։
Արփաչայ 111, 311։

Բ

Բաբի-շիրվան 236։
Բազումի լեռնաշղթա 126։
Բալըդ-գյոլ, լիճ, 9։
Բալիանյան թեռակղզի 136։
Բաղշատեղեր 487։
Բադդադ 228։
Բաղկայի այգիներ 146, 147։
Բաղչա-բաղի այգիներ 201։
Բայազետ 34, 45, 294, 375, 458, 518։
Բայազետի բերդ 247։
Բաշ-Ապարան 126, 452։
Բաշ-Նորաշեն 453։
Բասարգեչար 126։
Բարզուշատ, գետ, 311։
Բահվի նահանգ 542։
Բահու 54, 312, 371, 377, 378, 399, 446, 449, 450, 455, 527, 537։
Բելական 381, 382։
Բենբութովի (այժմ՝ Ավետյովի) փոդոց 562։
Բեյուկ-Դյուզ (Նախիջևանի դաշտ) 9։
Բեյուկ-խան-բաղի այգիներ 201։
Բեսարաբիա 306։
Բզովդալի լեռնանցք (այժմ՝ Պուշկինի լեռնանցք) 126, 323։
Բորժոմի կիրճ 124, 394։
Բորչալուի գավառ 9, 371։
Բջնի, գյուղ, 215։
Բուխարեստ 306։

Գ

Գանձակ (այժմ՝ Կիրովաբադ) 164, 400, 581։
Գառնի (Ազատ), գետ, 10։
Գառնիբասարի մաճալ 10, 44, 45, 47, 106, 164, 166, 200, 218, 288, 371, 487, 517։
Գառնի-յարխ (Արայի), լեռ, 11։
Գառնի-չայ (Ազատ), գետ, 285, 286, 298, 299, 300, 320, 326, 452։
Գավառ (Նոր-Բայազետ, Կամո) 126, 373։
Գարդման 302, 303։
Գեղամայի մատուռ 62, 260, 261։
Գեղարդավանք 149, 151, 152, 494։
Գեորգևսկ 295։
Գեորգիևյան բլուր 328։
Գետառ, տե՛ս Կըրխ-Բուլաղ։
Գիլան 15։
Գիվրախ 124։
Գլխավոր կամ Մեծ նրապարակ 97։
Գյանջա, քաղաք, 283, 307, տե՛ս Գանձակ։
Գյանջայի խանություն 283։
Գյոյ-ջամի կամ Գեոգ-ջամի մզկիթ, տե՛ս Հուսեյն-Ալի խանի մզկիթ։
Գյոզչայի մաճալ 12, 47, 126, 127, 147, 371, 551։
Գյոզչայի (Սևանի) լեռնանցք 451։

Գյոզալդարայի (Վարդենիսի) լեռնաշղթա 9։
Գյուլլի-բաղի այգիներ 146, 147, 201, 448։
Գյումշ, գյուղ, 215։
Գյումրի, տե՛ս Ալեքսանդրապոլ։
Գյուլիստան 30, 108, 110, 111, 117, 122, 238, 306, 307, 308, 309, 310։
Գյուրջի (վրացական) Բարավանատուն 98, 100, 102, 203, 286, 627։
Գոռի 381, 588։
Գուրիա 371, 381, 382։

Դ

Դալմա 146, 169, 172, 232, 244, 480, 487, 488, 502։
Դալմայի այգիներ 146, 149, 157, 170, 173, 174, 175, 176, 187, 244, 491, 492, 503։
Դալմայի առու 146, 149, 157, 158, 161, 265, 497, 500։
Դալմայի ջրանցք 148, տե՛ս Դալմայի առու։
Դալլար, գյուղ, 215։
Դաղստան 215, 312, 313։
Դամիրբուլաղ աղբյուր 157, 161, 264։
Դամիրբուլաղի այգիներ 157, 175։
Դամիրբուլաղ բաղամաս 102, 156, 160, 162, 169, 172, 175, 180, 156, 226, 229, 232, 238, 252, 253, 259, 265, 267, 269, 520, 528, 569, 570, 577, 579, 580։
Դամուր-բուլաղ, տե՛ս Դամիրբուլաղ բաղամաս։
Դավալու (այժմ՝ Արաքատ) 451։
Դարաբաղ 169, 172, 232։
Դարաբաղի այգիներ 157, 175, 231, 502։
Դարալագյազ (Հայոց ձոր) 517։
Դարահինդի այգիներ 157, 175։
Դարաշիչակի (Ծաղկաձոր) մաճալ 11, 47, 92, 126, 127, 391, 517, 519։
Դարահինդ (Ջորագյուղ), բաղամաս, 41, 45, 128, 158, 202, 230, 231, 257։
Դարհենդ-Փարշենի մահալ 11, 351, 371, 528։
Դել-դուլի այգիներ 146, 147, 201, 244, 488։
Դերբենդ 307, 371, 377, 378, 381, 383, 446, 504։
Դիլիջան 126, 284, 360, 450, 451, 453, 454, 456, 488, 561։
Դվին 5, 233։

Ե

Ելենովկա, գյուղ, 451, 453։
Ելիզավետպոլ 306, 310, 312, 381, 449, 504, 527։
Ելիզավետպոլի նահանգ 453, 542։
Ելդուան 126։
Եղվարդ 284, 486, 553։
Եղվարդի սարաճարք 220։
Եվրոպա 50, 351։
Երասխ, տե՛ս Արաքս։
Երևան 3—21, 23, 27, 29—45, 47—51, 56—63, 68, 72, 74, 78—86, 89—92, 95—100, 103, 106, 109, 112—117, 120, 123—128, 130, 131, 133, 135, 137—141, 143—150, 150—168, 170—192, 194—209, 211—220, 222—237, 239—244, 247, 249—251, 253—255, 257—294, 296—298, 302, 305—311, 313, 314, 316—323, 325—327, 330, 331, 334—341, 343—348, 350, 351, 356—359, 361, 363, 366, 368, 369, 372—381, 383, 384, 389, 391, 393—395, 400—405, 407—418, 420—423, 425, 427, 429, 430—442, 444, 446, 448—457, 460, 462—472, 474—483, 485—496, 498—515, 517, 519, 520, 522—527, 529—533, 537—539, 541, 543, 548, 550, 551—554, 556—560, 563—566, 570—572, 574, 575, 577, 579, 580—587, 589, 591, 593, 594, 596—602, 604—617, 619—624, 628—630, 632, 634, 636—640։
Երևանի բերդ 87, 88, 97, 102, 138, 146, 157, 181, 228, 232—240, 244, 283, 285, 292—295, 297, 298, 300—

303, 305, 307, 309, 311, 312, 318—323, 325, 326, 329, 330, 332, 333, 335—341, 344, 361, 369, 375, 376, 379, 380, 533, 574, 575, 583—585։
Երևանի գավառ 5, 359, 369, 371, 372, 391, 474։
Երևանի խանություն 8, 9, 11—13, 16, 18, 22—24, 30, 31, 34, 44—46, 90, 106—108, 111, 112, 116, 122—124, 127, 128, 131, 133, 135, 141—145, 162, 164, 165, 172, 177, 179, 194, 195, 197, 207, 214, 271, 273, 292, 294, 297, 302, 303, 305—308, 310, 311, 314, 315, 318, 322, 323, 325, 327, 343, 344, 346, 347, 359, 360, 362, 365, 487, 497, 517, 539։
Երևանի մարզ 362, 364։
Երևանի եռաձեզ 5, 12, 14, 20, 373—384, 385, 390—393, 401, 413, 415, 420, 432, 438, 439, 453, 454, 462, 463, 465, 466, 475, 483, 522, 525, 526, 542, 552, 559, 563, 579։
Երզնկա 356։
Երկաբերանի սուրբ Նշան եկեղեցի 253։

Չ

Չալ-խանի մզկիթ 245, 253։
Չալ-խանի մեյդան (շուկա-հրապարակ) 97, 268։
Չախաբալա 377, 378։
Չանգիզուր 293։
Չանգիզուրի լեռներ 9։
Չանգիբասարի մաճալ 10, 11, 47, 106, 167, 218, 220, 229։
Չանգիբասար 147, 517, 553։
Չանգվի ձոր 175։
Չանգվի ջրանցք 498։
Չանգու (Հրազդան) 10, 27, 41, 42, 45, 49, 50, 61, 68, 125, 146, 149, 151, 156, 157, 158, 170, 175, 182, 183, 202, 230, 231, 232, 234, 235, 236, 237, 239, 252, 257, 258, 259, 264, 265, 285, 298, 299, 302, 318, 328, 352, 423, 489, 498, 499, 514, 554, 570, 577, 579, 636։
Չեկար 124։
Չող 123, 126, 127։
Չորավոր եկեղեցի 246, 250, 280։

Ց

Ցլար 451, 453։
Ցղմիածին 20, 34, 123, 124, 125, 127, 149, 150, 153, 154, 232, 242, 245, 258, 260, 273, 280, 284, 289, 298, 311, 315, 317, 319, 321, 323, 324, 345, 369, 384, 452, 493, 551, 612։
Ցղմիածնի մաճալ 166։
Ցղմիածնի վանք 34, 125, 149, 158, 212, 324։
Ցրզռում 56, 72, 297, 356, 412, 518։

Թ

Թալինի մաճալ 11, 371։
Թալիշ 307, 381։
Թալիշի խանություն 346, 371։
Թալլարի այգիներ, տե՛ս Դիլ-զուշի այգիներ։
Թավրիզ 116, 287, 311, 312, 313, 314, 345, 346, 347, 451, 461, 628, 629։
Թավրիզ-գափուսի 236։
Թարխանովի փողոց (այժմ՝ Կոնյակյանցի և Պուշկինի փողոցներ) 562։
Թափաբաշի այգիներ 146, 148, 175։
Թափաբաշ (Կոնդ), Թաղամաս, 42, 97, 102, 158, 172, 180, 188, 196, 209, 211, 213, 218, 226, 229, 230, 231, 238, 252, 260, 266, 483, 488, 520, 528, 578, 579, 582։
Թելավ 381, 588։
Թեհրան 345, 347, 349, 350։
Թիֆլիս 54, 55, 56, 72, 84, 100, 109, 113, 114, 115, 116, 124, 126, 137, 152, 186, 187, 265, 283, 289, 291, 292, 294, 309, 312, 319, 324, 325, 344, 350, 372, 377, 378, 381, 383, 384, 390, 399, 400, 418, 419, 420, 423, 424, 425, 427, 446, 449, 450, 451, 452, 453, 454, 455, 456, 457, 458, 461, 462, 463, 464, 470, 471, 499, 507, 518, 527, 537, 561, 566, 575, 581, 587, 588, 591, 595, 600, 615, 617, 619, 624, 626, 628, 629, 630, 639։
Թոխմախան-գյոլ (այժմ՝ Կոմսոմոլի լիճ) 157, 161, 220։
Թոփչի-բաշի-բաղի այգիներ 146, 147, 148, 201, 488։
Թուրքիա 8, 16, 91, 107, 112, 115, 117, 119, 120, 121, 122, 136, 180, 186, 187, 281, 282, 295, 306, 307, 325, 326, 327, 328, 346, 349, 353, 355, 356, 375, 377, 380, 395, 403, 414, 444, 448, 462, 463, 466, 476, 518, 573։
Թուրմենչայ 81, 97, 110, 184, 186, 307, 345, 347, 348, 355, 364, 365, 395, 405, 443, 489, 498, 514, 515, 516, 528, 565, 582, 638։

Ի

Իմերեթիա 371։
Իջևան 326։
Իրաոյի ջրանցք 498։
Իրիրունի 232։

Լ

Լայպցիգ 315։
Լենինի հրապարակ 571։
Լենինական 377, 378։
Լոռի 284, 307, 311, 312, 384, 519։
Լոռվա բերդ 312։

Խ

Խանբաղի մեյդան (շուկա-հրապարակ) 97, 498, 501։
Խանբաղի կամ Խանլըղ-բաղի այգիներ 230, 250, 268, 495, 528, 582, 638։
Խնկելու ձոր, տե՛ս Դարաքինդ թաղամաս։
Խոյ 264, 286, 288, 325, 581։
«Խոջափլավի» կամուրջ 258, 259։
Խոսրովաբադ 169, 232։
Խոսրովաբադի այգիներ 157, 175։
Խոտվիրապի վանք 494։

Ծ

Ծալկա 519։
Ծիծեռնակաբերդ 232, 260։
Ծիրանի բաղ 231։

Կ

Կազան 593։
Կալկաթա 351։
Կաթուղիկե եկեղեցի 245, 246, 249, 252, 266, 280։
Կախեթիա 312, 313։
Կասպիական մարզ 381։
Կասպից ծով 281, 347, 352, 398։
Կարազիադին 345։
Կարա-Կալա 326։
Կարա-սու (Մև ջուր) 11։
Կարբի գյուղ 231։
Կարբիբասարի մաճալ 106, 147, 200, 372, 517։
Կարբիի թաղ 321, 351, 612։
Կարմիր բլուր 232, 260։
«Կարմիր» կամուրջ 258։
Կարմիր կամուրջ 451, 454։
Կարս, տե՛ս Ղարս։
Կարուտ, դաշտեր, 487։
Կենգեն 169։
Կզըլ-կալա 169, 157, 158, 196, 231։
Կզըլ-կալայի այգիներ 157, 175, 263։
Կզըլ-Քիլիսա 127։
Կզլար 372, 486, 553։
Կըրխ-Բուլաղ (Գետառ) 42, 156, 157, 158, 159, 160, 175, 230, 326, 259, 264, 265, 266, 285, 376, 452, 498, 499, 554, 570, 571, 576, 581։
Կըրխ-Բուլաղի աղբյուրներ 498։
Կըրխ-Բուլաղի կամուրջ 259։
Կըրխ-Բուլաղի մաճալ 10, 12, 106, 371։
Կոզեռն բլուր 230, 260։
Կոզեռն գերեզմանոց 260, 261։
Կոզեռն մատուռ 260, 261։
Կողբ 92։
Կողբի ազաճաճխեր 17, 30, 200, 361, 364, 399։
Կոնդ, կամ՝ Թափաբաշ։

Կոստանդնուպոլիս 115, 296, 463, 466, 619, 624, 625, 626, 627, 628, 629, 639։
Կովկաս 84, 109, 294, 309, 313, 314, 340, 353, 362, 366, 368, 374, 379, 383, 384, 385, 390, 394, 397, 398, 399, 413, 427, 430, 438, 443, 444, 445, 449, 451, 452, 457, 476, 485, 495, 498, 508, 536, 537, 541, 550, 559, 563, 564, 565, 570, 574, 575 594, 600, 602, 609, 610, 617, 620, 626։
Կովկասյան լեռնաշղթա 347։
Կուբա 307, 372, 381։
Կուբան 371։
Կուլ-դարասի 169։
Կումայրի, տե՛ս Գյումրի։

Հ

Հաղբաճակի կամուրջ 252, 258։
Հայաստան 5, 8, 52, 53, 58, 80, 123, 125, 152, 227, 228, 233, 258, 350, 351, 355, 356, 357, 370, 399, 400, 404, 409, 418, 440, 441, 447, 453, 476, 489, 522, 537, 570, 576, 586, 587, 612, 613, 690։
Հայկական մարզ 5, 12, 33, 35, 45, 49, 52, 54, 81, 94, 117, 135, 141, 142, 144, 168, 172, 189, 192, 194, 226, 228, 235, 359, 365, 366, 368, 369, 371, 372, 373, 374, 375, 376, 378, 381, 383, 384, 390, 444, 461, 474, 489, 515, 517, 521, 526, 527, 539, 540, 541, 573, 574, 589, 593, 621, 636։
Հայկական Պար 380, 385։
Հայկական ՍՍՌ 7, 11, 48, 99, 100, 117, 145, 159, 226, 229, 246, 248, 253, 254, 259, 269, 334, 344, 359, 408, 411, 467, 469, 489, 490, 494, 552, 557, 561, 562, 567, 569, 571, 577, 579, 580, 616, 630։
Հաշա-Գավառ առու 160։
Հաջի Բաբա-բաղի այգիներ 146, 147, 148, 201։
Հաջիբայրամլու գյուղ 9։
Հաջի-Բեգում-բաղի այգիներ 147, 148։
Հաջի-Իմամ-վերդիի մզկիթ 245։
Հաջի-Նովրուզ-Ալի-բեկի մզկիթ 253։
Հաջի-Ջաֆար-բեկի մզկիթ 245։
Հարավային Ադրբեջան 115, 323, 345, 346, 348, 515, 516, 520։
Հերակլի բյուր 237, 317։
Հյուսիսային Ադրբեջան 293, 310։
Հյուսիսային Կովկաս 448։
Հնդկաստան 173, 351, 353, 612։
Հոկտեմբերյանի դաշտ 11։

Ձ

Ձորագեղ, տե՛ս Դարաքենդ թաղամաս։
Ձորի բաղ, տե՛ս Նիգրբին Բաղ։

Ղ

Ղազախ 289, 307, 371։
Ղազախի գավառ 9։
Ղամարլու (այժմ՝ Արտաշատ) 453։
Ղայա-բաշի այգիներ 146, 147, 148, 201, 487։
Ղարաբաբա գյուղ 303։
Ղարաբաղ 116, 123, 127, 129, 227, 307, 309, 310, 312, 313, 323, 371, 372, 381, 461, 513, 518։
Ղարադաղ 311։
Ղարս 23, 56, 72, 123, 127, 297, 380, 390, 518։
Ղարսի մարզ 390։
Ղարաֆիլիսա 292։
Ղարսի փաշայություն 11, 127։
Ղափան 399։
Ղոշա-բաղի այգիներ 146, 147, 148, 488։
Ղոշավանք 127։
Ղրիմ 320, 379, 448, 459, 508, 552։

Մ

Մալականի բաղ 550, 638։
Մալականների փողոց (այժմ՝ Կարմիր Բանակի) 569։
Մակու 12, 34, 45, 325, 401, 407։
Մակուի խանություն 116, 462։
Մամոխի առու 157, 158, 160, 265, 497։
Մասիս 9, 34, 340, 352, 369, 578։
Մատաղաս 124, 125, 126։
Մարաղա 345, 346։
Մարանդ 312, 336։
Մարգարա 452։
Մարսել 463, 466։
Մեղինա 192։
Մեծ և Փոքր Մասիս, տե՛ս Արարատ։
Միջիղի հրապարակ, տե՛ս Հուսեյն-Ալի-խանի մեյդան։
Մերձավոր Արևելք 308, 456։
Մեհրա 192։
Մզկիթի մեյդան, տե՛ս Հուսեյն-Ալի-խանի մեյդան։
Մինգեչաուր 398, 450։
Մինգրելիա 371։
Միջին Արևելք 347։
Միսխանա (Հանքավան), գետ, 12։
Միրզա-Ռաթիի-բաղի այգիներ 146, 147, 201։
«Մլեր» գերեզմանոց 260։
Մոլդավիա 136։
Մոսկվա 7, 115, 234, 375, 399, 407, 464, 466, 476, 622։
Մուգալի բաղատեղ 151։
Մուխանաթ-բափա, բարձունք, 237, 299, 302, 317, 318, 328։
Մուշ 518։

Յ

Յայջի 124։
Յոնջալըղ 495։
Յուզբաշի Քյազիմի այգիներ 146, 147, 201։

Ն

Նազարավակի (այժմ՝ Ամիրյան) փողոց 571։
Նալբանդյան փողոց։
Նալչիկ 319։
Նախիջևան 46, 92, 123, 124, 126, 286, 290, 294, 297, 299, 300, 303, 306, 307, 312, 320, 325, 343, 348, 363, 368, 373, 381, 382, 383, 384, 393, 413, 446, 453, 456, 461, 517, 526, 541, 581, 588, 608, 626, 628։
Նախիջևանի բերդ 303։
Նախիջևանի գավառ 372, 385։
Նախիջևանի խանություն 33, 116, 122, 141, 164, 172, 194, 214, 273, 293, 294, 297, 303, 306, 308, 311, 327, 346, 347, 360, 362, 365, 371, 487, 497, 539։
Նախիջևանի մաճալ 10։
Նահանգական (այժմ՝ Ալավերդյան) փողոց 562։
Նապոլեոն Բոնապարտ 308։
Ներմին Ախտա 453։
Ներմին կամ Ձորի բաղ 231։
Ներմին Ղարաքուղ 126։
Ներմին Շենգավիթ 486, 553։
Նիժնի Նովգորոդ (այժմ՝ Գորկի) 456, 476։
Նովրուզ Ալիխանի մզկիթ 245։
Նովոռոսիյսկոյե 452։
Նորագավիթ 232, 486, 553։
Նորագավիթի առու 157, 158։
Նորագեղի այգիներ 175։
Նորագեղի առու 157, 497։
Նորաշեն առու 487։
Նորագյուղ 157, 158, 169, 232, 265, 480, 488, 502։
Նորաշեն 124։
Նոր Բայազետ (այժմ՝ Կամո) 373, 384, 393, 413, 437, 462, 485, 507, 526։
Նոր բաղ 158, 230, 528, 553, 580, 582։
Նոր հրապարակ 566։
Նորք, տե՛ս Ջոլմաթլիք։
Նորքաձոր, տե՛ս Աբբաս-դարա։
Նորք գյուղ 211, 231։
Նուխի 54, 400, 446, 527։

Շ

Շահաֆիզ 169։
Շահար բաղամաս 42, 62, 97, 102, 160, 169, 172, 180, 188, 211, 226, 227, 228, 230, 231, 245, 247, 253, 260,

265, 269, 286, 469, 488, 502, 520, 528, 562, 571, 578, 580, 582։
Նահարի այգիներ 157, 175։
Նահ-դաղի լեռներ 9։
Նամախի 54, 312, 377, 378, 383, 446, 504, 600։
Նամխոր 310։
Նամշադին 300, 307, 371։
Նարուր 117, 200, 369, 371, 384։
Նարուրի դաշտ 9։
Նարուրի մաճալ 10, 288, 309։
Նաֆի 116, 307, 310, 371, 372, 381։
Նեյխ-Ջադալի գյուղ 44։
Նենգավիր գյուղ 181, 232, 486։
Նենքաղ 231։
Նիլաչի մաճկա (թաղ) 41, 61, 231։
Նիրաբաղ (այժմ՝ էջմիածնի շրջանի Փարաքար գյուղ) 147, 486, 553։
Նիրակ 228, 519։
Նիրվան 116, 307, 371, 381։
Նոլոու վայր 150։
Նորագյալ (Նիրակ) 9, 109, 126, 284, 294, 296, 297, 310, 371, 383։
Նուլավեր 319։
Նուշի 132, 294, 312, 377, 378, 446, 527, 537, 615։
Նուրագյալ. տե՛ս Նորագյալ։

Շ

Շարախ 298։
Շոլմաֆչի (Նորք), գյուղ, 147, 160, 175, 185, 230, 231, 259, 265, 280, 483, 484, 485, 487, 501, 503։
Շոլմաֆչիի առու 160, 161։
Շիրուխլու (այժմ՝ Ծովագյուղ) 451, 453։

Պ

Պարսկաստան 8, 14, 15, 30, 35, 47, 83, 87, 89, 90, 91, 95, 97, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 115, 116, 117, 118, 121, 122, 126, 130, 131, 137, 138, 139, 166, 173, 180, 181, 186, 187, 189, 197, 199, 207, 209, 227, 230, 262, 264, 268, 270, 272, 281, 282, 292, 293, 295, 297, 302, 306, 307, 308, 311, 313, 318, 320, 322, 326, 346, 349, 350, 353, 355, 356, 365, 375, 377, 380, 392, 395, 398, 442, 443, 444, 445, 446, 447, 448, 457, 458, 460, 461, 462, 463, 466, 474, 476, 488, 489, 515, 516, 519, 520, 573, 582, 625, 636, 637։
Պետերբուրգ 124, 311, 313, 328, 364, 458, 485, 536։
Պլպթաններ 487։
Պյատիգորսկ 310։
Պողոս-Պետրոս եկեղեցի 245, 246, 247, 248, 252, 280, 289, 606։

Ջ

Ջալալօղլի 123, 314։
Ջաֆարաբադ (այժմ՝ էջմիածնի շրջանի Արզամանդ գյուղ) 486, 553։
Ջուլֆա 126, 181, 449, 450, 451, 452, 453, 456։
Ջուղա 98։
Ջուլֆայի Ղարավանատուն 102։
Ջումաբենց թաղ 231։
Ջրբափ 487։
Ջրվեժ գյուղ 485, 553, 580։

Ռ

Ռուսիա, տես Ռուսաստան։
Ռուսաստան 5, 8, 12, 16, 30, 35, 39, 47, 54, 57, 84, 88, 89, 101, 108, 109, 110, 111, 112, 115, 116, 122, 124, 139, 216, 235, 238, 270, 281, 282, 283, 286, 292, 293, 294, 295, 297, 302, 306, 307, 309, 310, 311, 313, 318, 343, 346, 347, 348, 350, 351, 352, 353, 354, 355, 356, 357, 358, 361, 365, 369, 370, 371, 372, 375, 377, 379, 380, 392, 393, 394, 395, 396, 397, 398, 399, 406, 407, 410, 432, 442, 443, 445, 446, 447, 451, 454, 574, 586, 587, 588, 595, 610, 636, 638։

Ս

Սաքզիֆ-երի, տե՛ս Սավզի-երի։
Սադարակ 124, 453։
Սաոբլիճի մաճալ 11, 371։
Սավզի-երի, ջրառատ վայր, 146, 157, 169, 172, 188, 204, 205, 208, 232, 487, 502, 512։
Սարդարաբադ 124, 307, 326, 327, 328, 333, 345, 369, 371, 373, 452, 487։
Սարդարաբադի բերդ 30, 309, 320, 321, 322, 325, 326, 360։
Սարդարաբադի մաճալ 11, 200, 361, 372։
Սարդար-բուլաղ աղբյուր 187։
Սարվանլար գյուղ 486, 553։
Սարտիպ-խանի մզկիթ 245։
Սեհղլի-Ախսախլիի մաճալ 11, 372։
Սևան 9, 200, 451, 453։
Սևաճա լիճ 12, 183, 352, 385, 519։
Սևաճա վանք 149, 494։
Սևաստոպոլ, 340։
Սև ծով 281, 398։
Սիճակ 9։
Սպանացոց թաղ 231։
ՍՍՌՄ 7։
Սուխոյ-Ֆանտան (Ֆանտան) 453, 498։
Սուրբ Անանիա անապատ եկեղեցի 248, 251, 252։
Սուրբ Աստվածածին 608։
Սուրբ Գևորգի եկեղեցի 252։
Սուրբ Հովհաննէսի առու 266։
Սուրբ Հովհաննեսի եկեղեցի 245, 252, 266, 280։
Սուրբ Սարգսի եկեղեցի 245, 252, 280, 569, 589։
Սուրբ Սիմեոն եկեղեցի 607։
Սուրմալու 385, 517, 519։
Սուրմալուի մաճալ 10, 11, 147, 384։
Սուրմալուի նահանգ 11, 369, 371, 380։

Վ

Վալախիա 136։
Վաղարշապատ 5, 233, 615։
Վան 356, 518։
Վարշավա 464, 476։
Վեդիբասարի մաճալ 10, 47, 147, 200, 371։
Վեդի-շայ գետ 452։
Վեզիր-բաղի այգիներ 147, 201։
Վերին Նենգավիր 386, 553։ 550։
Վիճնա 464, 476։
Վիրա-իմերեթյան նահանգ 381, 383, 550։
Վոլգա 352։
Վրաստան 5, 16, 91, 108, 109, 111, 114, 115, 117, 119, 120, 121, 122, 125, 126, 181, 279, 283, 284, 289, 290, 296, 299, 305, 314, 317, 323, 324, 336, 351, 361, 363, 366, 370, 371, 412, 444, 448, 518։
Վրացական ՍՍՌ 7, 464։

Տ

Տեր-Ղևոնդյան (այժմ՝ Նալբանդյան) փողոց 562։
Տիրամոր եկեղեցի 243։
Տրապիզոն 451, 458։

Ց

Ցախի մեյդան 567, 627։
Ցարական (այժմ՝ Սպանդարյան) փողոց 562։

Ու

Ուրմիա 345, 346։

Փ

Փամբ գյուղ 297։
Փամբակ 109, 289, 294, 297, 300, 305, 309, 310, 315, 371, 383, 384։
Փամբակի գավառ 9, 284։
Փամբակի լեռնաշղթա 11, 12, 315։
Փամբակի լեռներ 9։
Փամբակի ձոր 126։
Փաշալըխ-արխ առու 160։
Փոքի 124, 126, 377, 378։
Փոքր Ասիա 403, 612։

Ք

Քանաքեռ գյուղ *126, 147, 157, 158, 175, 220, 223, 231, 257, 285, 379, 485, 553, 574, 580*։
Քարաճաճ տեղամաս, *տե՛ս* Դամիրքուլաղ թաղամաս։
Քարվանսարա գյուղ *284*։
Քարկոպի թաղ *231*։
Քարհանք թաղամաս, *տե՛ս* Դամիրքուլաղ թաղամաս։
Քեշաղալիի այգիներ *175*։
Քեշաղլի *168*։
Քերբալա *192*։
Քիո-բաղի այգիներ *146, 201, 288*։
«Քյաւեբզի» առու *266*։
Քյավթառու գյուղ *(այժմ՝ Փանիկ՝ Արթիկի շրջանում) 289*։
Քոչակլի թաղ *321, 488, 502*։
Քսանվեց Կոմիսարների անվան այգի *264, 563*։
Քուրթիս *124, 126, 377, 378, 381, 383, 446, 449, 504, 527, 588, 600*։
Քուրթիսի նահանգ *542*։
Քուռ *294, 297, 449, 450, 566*։

Օ

Օզուրգետ *504*։
Օշական *307, 324*։
Օղոլբաղ *46, 123, 124, 294, 297, 368, 371, 372, 373, 393, 413, 461, 517, 526, 541*։

Ֆ

Ֆանյա-բազարի *(շուկա-հրապարակ)* մեյդան *97, 265, 268*։
Ֆրանսիա *282, 295, 302, 347, 353*։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից 5

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆԸ 1801—1828 ԹԹ.

1. Երևանի խանության և նրա կենտրոն Երևան քաղաքի վարչական կարգը . 8

Երևանի խանության սահմաններն ու տերիտորիան։ Նրա վարչական բաժանումը և մահալների կառավարման սիստեմը։ Երևանի խանը որպես ինքնուրույն բռնակալ։ Խանի նկամուտները և նրա գործադրած բռնություններ։ Խանական վարչա-դատական ապարատը և դրա գործունեությունը։ Խանության դինված ուժերը։ Խանության կենտրոն Երևանը որպես մի առանձին վարչական միավոր

2. Քաղաքի տնտեսական կյանքը 32

Ա) Արհեստագործությունը և արդյունաբերությունը 33

Արհեստագործության ու արդյունաբերության հումքային բազան։ Արհեստների տեսակներն ու արհեստավորների թիվը։ Արհեստավորական արտադրանքների չափը։ Օճառագործություն, կաշեգործություն, ներկարարություն։ Ջրաղացներն ու դինգերը։ Վարսավիրություն, ջուրհաություն, մանածագործություն։ Արհեստների կառարելության աստիճանը։ Արհեստավորական գործիքները։ Աշխատանքի բաժանումը։ Համքարությունները. դրանց կազմը, բնույթը, սովորությունները, եղբայրական հիմունքները, դեկավարումը, պատժի միջոցները, համքարություն ընդունվելու կարգը, վարպետները, *վարպետացուները ու աշակերտները, արտադրության ու վաճառքի կազմակերպումը։ Համքարությունների թիվը։ Համքարություններից դուրս գտնվող արհեստավորները ու առևտրականները։ Արդյունարերությունը, նրա բնույթն ու օբյեկտները (ապակու «գործարան»-ը, քնգանոթաձուլական «գործարան»-ը և վառոդարանը)։*

Բ) Առևտուրը 89

*Առևտուրը խափանող և նրա զարգացմանը նպաստող ազդակները։ Երևանի սարգարի վարած առևտրական քաղաքականության բնույթը։ Առևտրի ապրանքները։ Ապրանքների գները։ Վաճառականների կարգը։ Շուկա-հրապարակները։ Քարավանատները։ Կրպակները ու խանութները, դրանց թիվը, բնույթը և տեղաբաշխումն ըստ քաղաքի առանձին մասերի։ Ներքին առևտրի կազմակերպման ձևը և նրանից խանի ստացած եկամուտները։ Արտաքին առևտրի պայմանները։ Սարդարի արտաքին առևտուրը հովանավորող քաղաքականությունը։ Ռուսաստանի և Պարսկաստանի առևտրական փոխհարաբերությունները։ Արտաքին առև-

որի զարգացումը խոչընդոտող պատճառները։ Երևանը որպես ռուս-պարսկական առևտրի ամենախոշոր կայաններից մեկը։ Երևանի վրայով կատարվող տարանցիկ առևտրի բնույթը, ապրանքների կազմը և ծավալը։ Մաքսային սիստեմը։ Երևանով անցնող հաղորդակցության ճանապարհները։ Դրամի, կշռի և չափի միավորները։ Արտաքին և ներքին առևտրի անկումը 1826—1828 թթ.։

Գ) Գյուղատնտեսական զրաղմունքները . . . 139

Երևան քաղաքի հողային տարածությունները։ Խալվարն ու օրավարը որպես մակերևույթի միավորներ։ Հողատիրության ձևերն ու հողային հարաբերությունները։ Արհեստական ոռոգման սիստեմը և դրանից օգտվելու կանոնները։ Սկզբնաղբյուրների հաղորդումները Հուսեյն-Ղուլի խանի տնտեսական քաղաքականության մասին։ Այգեգործություն։ Բանջարաբուծություն։ Անասնապահություն, շերամապահություն և մեղվաբուծություն։

3) Բնակչությունը և նրա հասարակական կյանքը 183

Բնակչության թիվը։ Բնակչության շարժումը։ Բնակչության ազգային կազմը։ Դասակարգային կազմը։ Հարկատու բնակչություն։ Ուղղակի և անուղղակի հարկերն ու պարհակները։ Բնակչության արտոնյալ խավերը և նրանց իրավունքները։ Դասակարգային և ազատագրական պայքարը։

4. Քաղաքի բնդհանուր նկարագիրը և նրա ներքին կյանքը . . . 218

Քաղաքի զրաված տարածությունը։ Նրա արտաքին տեսքի նկարագրությունը։ Տների կառուցվածքը, թիվը։ Քաղաքի կառուցվածքների ճարտարապետական առանձնահատկությունները։ Թաղերը և դրանց նկարագրությունը։ Քաղաքի ճարտարապետական կոթողները (բերդը, խանի ագարանքը, նկեղեցիները, մզկիթները, ծածկած շուկան, կամուրջները, գերեզմանոցները)։ Քաղաքի անվտանգության օրգանները։ Կոմունալ և սանիտարական պայմանները։ Բնակչության առողջապահական վիճակը և ազը։

5. Կուլտուրան 272

Կուլտուրայի բնդհանուր բնութագիրը։ Դպրոցները։ Ջուռնալիստներն ու աշուղները։ Նկարչությունը։ Ամանդույնները։ Զեռագրերը։ Երևանցի նշանավոր գործիչները։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ԵՐԵՎԱՆԸ 1828—1879 ԹԹ.

1. Երևանի ազատագրումը պարսկական լծից 281

Ա) Ռուսական զորքերի առաջին արշավանքը դեպի Երևան 283

Արշավանքի ընթացքը։ Երևանի բերդի պաշարումը։ Բերդի կայազորի կազմը։ Ճակատամարտ Բարա-խանի և նրա որդի Աբաս-Միրզայի միացյալ բանակի դեմ։ Ռուսական զորքի զրությունը։ Բերդի պաշարման վերացումը և ռուսական զորքի վերադարձը Թիֆլիս։

Բ) Ռուսական զորքերի երկրորդ արշավանքը դեպի Երևան 294

Գուդովիչի արշավանքը դեպի Երևան։ Երևանի բերդի պաշարումը։ Ֆրանսիական դեսպանության հակառուսական ձեռնարկումները։ Երևանի ու Նախիջևանի խանությունների տերիտորիաների զրավումը։ Գրոհը Երևանի բերդի վրա և դրա անհաջող վախճանը։ Զմռան վրա հանելը Երևանի բերդի վրա և Գուդովիչի բանակի վերադարձը Թիֆլիս։

Գ) Ռուսական զորքերի երրորդ արշավանքը դեպի Երևան և նրա ազատագրումը պարսկական լծից 307

Պարսիկների կողմից ռուս-պարսկական երկրորդ պատերազմի սկսելը։ Սրմոլովի ծավալած գործողությունները։ Երկու վարիանտով պլան Սրմոլովի պատերազմը վարելու համար։ Արշավանք դեպի Պարսկաստանի դեմ պատերազմը վարելու համար։ Կռիվներ Երևան։ Էջմիածնի զրավումը Բենկենդորֆի ջոկատի կողմից։ Կռիվներ Երևանի այգիներում և բերդի պաշարումը Բենկենդորֆի ջոկատի կողմից։ Գլխավոր ուժերի ժամանումը Պասկևիչի հրամանատարությամբ։ Բենկենդորֆի ջոկատի փոխարինումը 20-րդ դիվիզիայով՝ գնդապետ Կրասովսկու հրամանատարությամբ։ Բերդի պաշարումը ժամանակավորապես վերացնելը։ Երևանի բերդի նոր ամրացումը։ Օշականի ճակատամարտը։ Գլխավոր ուժերի գործողությունները Նախիջևանի կողմերում։ Գլխավոր ուժերի վերադարձը Երևանի խանությունը։ Սարդարաբադի զրավումը։ Երևանի բերդի երկրորդ պաշարումը։ Գրոհ բերդի վրա և նրա զրավումը։ Բերդի զրավման ժամանակ վերցված գերիներն ու ավարը։ Բնակչության ցնծությունը բերդի զրավման առթիվ։ Պարգևատրումներ բերդի զրավման ժամանակ աչքի ընկած պետական ներին։ Հաղթական զորահանդես բերդի զրավման առթիվ։ Հայերի մասնակցությունը Երևանի զրավմանը։ Թուրքմենչայի հաշտությունը։ Արևելյան Հայաստանի և Երևան քաղաքի պարսկական լծից ազատագրելու պատմական առաջադիմական նշանակությունը։

2. Երևանը Հայկական մարզի, Երևանի գավառի և Երևանի նահանգի կենտրոն 358

Քաղաքի վարչական կենտրոն լինելու նշանակությունը։ Հայկական մարզի ժամանակավոր վարչությունը և նրա անելիքները։ Հայկական մարզի մշտական վարչության կազմումը և նրա կանոնադրությունը։ Հայկական մարզի վարչածևը։ Ցարական աստիճանավորների գործած անօրինականությունները և կաշառակերությունները։ Երևան քաղաքի վարչական վիճակը որպես մարզի կենտրոնի, նրա կառավարման ձևը։ Երևանի բերդի նշանակությունը։ Երևանի գավառը։ Երևանը իբրև համանուն գավառի կենտրոն։ Երևանի նահանգի կազմումը 1849 թ. հունիսի 9-ի հրամանագրով և հետագա տասնամյակներին նրա կրած

վարչական փոփոխությունները։ Երևանի նահանգի տերիտորիան և գավառները։ Նահանգական և գավառական հիմնարկներն ու դրանց պարտականությունները։ Երևանի կառավարման ձևը մինչև 1879 թվականը։

3. Քաղաքի տնտեսական կյանքը 395

Ա) Արհեստագործությունն ու արդյունաբերությունը 403

Արհեստագործության թույլ զարգացումը։ Նոր երևույթներ Երևանի արհեստագործության բնագավառում 70-ական թվականներին։ Արհեստների տեսակները և արհեստավորների թիվը։ Արհեստավորների թիվը Երևանի նահանգի մյուս քաղաքներում։ Մեկ արհեստավորին ընկնող արտադրանքի քանակը։ Արհեստանոցների թիվը։ Արհեստով և առևտրով զբաղվելու համար հատատավճար 1865 թ. փետրվարի 25-ի կանոնադրությունը։ Արհեստավորների վարպետության ատիճանը և արհեստավորական արտադրանքի որակը։ Երևանի արհեստագործության տարեկան արտադրանքի քանակը։ Արհեստավորների և առևտրականների կապիտալների քանակը։ Արհեստների տեղաբաշխումը քաղաքում։ Համքարությունները, նրանց կազմը, թիվը և այլն։ Համքարություններից դուրս գտնվող արհեստավորները։ Արդյունաբերությունը, նրա թույլ զարգացումը, արդյունաբերական օբյեկտների արհեստավորական ու տնայնագործական բնույթը։ Արդյունաբերական օբյեկտների տեսակները ու թիվը, դրանց տարեկան արտադրանքի քանակը։ Երևանի նահանգի օգտակար հանածոները և ֆաբրիկաները, դրանցում աշխատող բանվորների թիվը, արտադրանքի քանակը։ Երևանի արդյունաբերության հումքային բազան։ Բանվորական օրվա տևողությունը, աշխատավարձի չափը, բանվորների աշխատանքային վատ պայմանները։

Բ) Առևտուրը 442

Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կատարվող առևտրի նշանակությունը։ Երևանի առևտրի զարգացմանը խոչնդող և արգելակող պատճառները։ Երևանով անցնող առևտրի ճանապարհները, հաղորդակցության միջոցները և բնութագրությունը։ Մաքսային սիստեմը։ Երևանը որպես տարանցիկ և արտաքին առևտրի կարևոր կայան։ Երևանի արտաքին առևտուրը։ Երևանի ներքին առևտուրը։ Ներքին առևտրի ապրանքները, առևտրի կազմակերպման ձևը (շուկաներ, կրպակներ, խանութներ, առևտրական տներ, պահեստներ, դրասենյակներ)։ Չափ ու կշռի միավորները։ Առևտրականների կազմը, թիվը, կարգերը, կապիտալների քանակը։ Երևանի առևտրի ծավալը համեմատած Ալեքսանդրապոլի և Անդրկովկասի այլ քաղաքների առևտրի հետ։ Առևտրից գանձվող հարկերը։ Ապրանքների գները։

Գ) Գյուղատնտեսական զբաղմունքները . . 483

Գյուղատնտեսության ճյուղերը և դրանց զարգացման պայմանները։ Քաղաքի հողային ֆոնդերը։ Հողաբերության ձևերը և դրանց հարաբերակցությունը։ Ոռոգման ցանցը և դրանից օգտվելու կանոնները։ Այգեգործությունը, խաղողագործությունը, գինեգործությունը և մրգատու այգեգործությունը։ Հացահատիկային տնտեսությունը։ Բանջարաբուծությունը։ Անասնապահությունը։ Շերամապահությունը։

4. Բնակչությունը և նրա նատուրակական կյանքը 514

Հայերի ներգաղթը Թուրքմենչայի և Ադրիանապոլսի պայմանագրերով։ Քաղաքի բնակչության թիվը։ Բնակչության տեղաբաշխումն ըստ քաղամասերի։ Բնակչության կազմն ըստ սեռի, ազգությունների և քաղաքի ընտանիքների թիվը։ Բնակչության աճը։ Հասարակության դասակարգային կազմը և դասակարգային հարաբերությունները։ Հարկերն ու պարհակները։ Երևանի բնակչության ազատագրական պայքարը։

5. Քաղաքի ընդհանուր նկարագիրն ու նրա ներկին կյանքը . . . 552

Քաղաքի գրաված տարածությունը։ Քաղաքի շենքերը։ Քաղաքի ընդհանուր տեսքը։ Քաղաքի պլանավորման փորձեր։ Նոր փողոցների կառուցումը և հին մի քանի փողոցների բարեկարգումը։ Պետական նոր շենքերի, Անգլիական այգու, խանութների և մասնավոր նոր շենքերի կառուցումը։ Քաղաքի բարեկարգման և հին կառուցվածքների վերանորոգման վրա ծախսվող միջոցները։ Օգտագործվող շինանյութերը։ Երևանի հրապարակները, այգիները, բաղնիքները։ Քաղաքի լուսավորությունը։ Քաղաքային տրանսպորտի բացակայությունը։ Խմելու ջուրը։ Համաճարակ և այլ հիվանդությունները քաղաքում։ Առողջապահական հիմնարկները և աշխատողները։ Բնական պայմանները և դրանց պատճառած վնասները։ Կամուրջները։ Քաղաքի թաղերը և ոստիկանական տեղամասերը։ Նորքը և Նոր Քաղբ։ Բերդը։

6. Կուլտուրան 585

Քաղաքի կուլտուրայի զարգացման նախադրյալներն ու առանձնահատկությունները։ Դպրոցները։ Դավառական դպրոցը (1868 թվից պրոգիմնազիա)։ Հոգևոր թեմական դպրոցը։ Սբ. Հռիփսիմեի օրիորդաց դպրոցը։ Դավառական դպրոցի վերակազմումը դասական պրոգիմնազիայի։ Գայանյան օրիորդաց ուսումնարանը։ Նորքի ծխական երկսեռ («Շողակաթ» կոչված) դպրոցը։ Սոֆիա Ստասյուլևիչի պանսիոնը։ Քաղաքային դպրոցը, մզկիթներին և եկեղեցիներին կից եղած դպրոցները, խալֆայական դպրոցները։ Մասնավոր դպրոց բացելու կարգը։ Քաղաքի բոլոր դպրոցների, աշակերտների և ուսուցիչների թիվը։ Մեսրոպ Թաղիադյանը։ Խաչատուր Աբովյանի և Հազարոս Աղայանի գործունեությունը Երևանում։ Հանրային գրադարան հիմնելու փորձ։ Ընթերցարանը։ Քանդակագործությունը, նկարչությունը։ Թատրոնը. Երևանի բերդի սպանների Քաոեբական խումբը և Ա. Ս. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» կատակերգության առաջին բեմադրությունը, «Արամյան ընկերություն» թատրոնի կրկեսա-թատերական ներկայացումները Երևանում, Ջմշկյանի խմբի գաստրոլային ներկայացումները, հորևոր թեմական դպրոցի ուսուցիչ-

Ների և «Հանգիստ բնակարան» կոչված թատերական խմբերը
Եզրափակում 634
Резюме 641
Summary 646
Հատուկ անունների ցանկ 651

ԹԱԴԵՎՈՍ ԱԼԶԱՏՈՒՐԻ
ՀԱԿՈԲՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
(1801—1879 ԹԹ.)

Հրատ. խմբագիր՝ Աւետ. Հ. Պապոյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովասափյան
Վերատեսուչ սրբագրիչ՝ Ե. Հ. Թասուրմաչյան

Վ/Ձ 08110։ *Պատվեր 710։* *Տիրաժ 5000։*

Ամբ.-հրատ. խորհրդի որոշում № 4, 29/VI 1959 թ.։
Հանձնված է արտադրության 23/III 1959 թ.։
Տպագրված է տպագրության 25/XI 1959 թ.։
Թուղթ 60×92¹/₁₆։ Տպագր. 42 մամուլ+5 ներդիր։ Հրատ. 37,3 մամուլ։
Գինը՝ 24 ռ. 35 կ.։

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների և պոլիգրաֆարդյունաբերության Գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փ. № 65։

ՀՍՍՌ ԳԱ Արվ. ՀՀ

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	*Տող*	*Տպված է*	*Պետք է լինի*
80	*3 վ.*	*այնպեսի բազմամարդ*	*բազմամարդ*
88	*14 վ.*	*Մարդաբյան*	*Մարդաբակաև*
97	*12 ն.*	*մ[illegible]րդանք*	*մեզանք*
124	*7 վ.*	*Աբաուշատ*	*Ղամարլու.*
141	*4 ն.*	Готистический	Статистический
146	*20 ն.*	*Քեռ-բազ,*	*Քեռ-բազ, Վեդիբ-բազ,*
153	*13 վ.*	*հինգերորդ՝*	*չորրորդ՝*
205	*4 ն.*	*ուղղակի*	*անուղղակի*
234	*15 ն.*	*Ղ. Ինճիկևան*	*Ղ. Ինճիճևան*
239	*9 վ.*	*Թաբեզ,*	*Թաբեզ։*
309	*7—8 վ.*	*Շարուբ-Փամբակի*	*Շորագյալ-Փամբակի*
394	*12 վ.*	*պաշտոնները*	*պաշտոնյանները*
549	*20 ն.*	*կապալ*	*կապալով*
632	*19 վ.*	*խմբի վրա*	*խմբի բնժի վրա*

710 267-րդ էջի նկարը (Զբաղմ.) շրջել 180°։